Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

Ե. Ղ. ՍԱՐԳՍՅԱՆ

ԹՈՒՐՔԻԱՆ ԵՎ ՆՐԱ ՆՎԱՃՈՂԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԳՐԿՈՎԿԱՍՈՒՄ

1914-1918

„ՀԱՅԱՍՏԱՆ"
հրատարակչություն
ԵՐԵՎԱՆ 1964

9 (И) 32
С 25

Մենագրությունում արխիվային բազմաթիվ փաստաթղթերի, շտաբ աղբյուրների և, հատկապես, թուրքերեն լեզվով լույս տեսած գրականության հիման վրա լուսաբանվում է Օսմանյան կայսրության ներքին դրությունը առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին, վեր է հանվում պանիսլամիզմի ու պանթուրքիզմի գաղափարախոսության ագրեսիվ բնույթը։

Գրքում ցույց են տրվում կենտրոնական տերությունների կողմում Օսմանյան կայսրության պատերազմին մասնակցելու բուն դրդապատճառները։ Ուսումնասիրությունում մեծ տեղ է հատկացված Օսմանյան կայսրության ներքին դրությունը պատերազմի տարիներին։ Այստեղ տրված է հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջման երիտթուրքական քաղաքականության անմիջական կապը նրա պանթուրքական զավթողական ծրագրերի հետ։

Գրքում զգալի տեղ է հատկացված 1918 թվականին Անդրկովկաս կատարած թուրքական արշավանքին, առաջին համաշխարհային պատերազմում Օսմանյան կայսրության կրած պարտության պատճառներին և թուրք զավթիչների դեմ Անդրկովկասի ժողովուրդների մղած պայքարի պատմությանը։

Աշխատությունն առաջին անգամ լույս է տեսել 1962 թվականին Երևանում, ռուսերեն լեզվով, Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի հրատարակությամբ։ Սույն հրատարկության մեջ հեղինակը կատարել է նշանակալի լրացումներ, պահպանելով բուն տեքստը։

САРКИСЯН ЕРВАНД КАЗАРОВИЧ
ТУРЦИЯ И ЕЁ ЗАХВАТНИЧЕСКАЯ ПОЛИТИКА
В ЗАКАВКАЗЬЕ (1914—1918)
(На армянском языке)
Издательство «Айастан»
Ереван, 1964

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Անդրկովկասը միշտ էլ կարևոր տեղ է գրավել ռուս-թուրքական հարաբերություններում։ Վրաստանի, Ադրբեջանի ու Հայաստանի ժողովուրդների բազմադարյան պայքարի և Օսմանյան պետության ու Իրանի դեմ ռուսական զենքի փայլուն հաղթանակների շնորհիվ XIX դարի 30-ական թվականներին Անդրկովկասն ամբողջովին արդեն միացվել էր Ռուսաստանին։ Թուրքական կառավարող շրջանները, սակայն, մտադիր չէին հաշտվել իրենց կողմից նախկինում նվաճված այդ հարուստ երկրամասի կորստի հետ և բազմիցս փորձում էին կրկին իրականացնել Անդրկովկասի նկատմամբ իրենց զավթողական ծրագրերը։

Ռուսաստանի ու Իրանի դեմ Օսմանյան կայսրության մղած բոլոր պատերազմների հիմնական նպատակներից մեկն է եղել Անդրկովկասի նվաճումը։ Այդ մասին ներկայումս բացեիբաց գրում են թուրք ռազմական պատմաբանները։ Այսպես, Անդրկովկասում 1918 թվականին թուրքական ինտերվենցիայի մասնակիցներից մեկը՝ գնդապետ Բերքուքը, նշում է, որ «այդ արշավանքը Օսմանյան կայսրության ձեռնարկած կովկասյան առաջին արշավանքը չէր»։ Խոսելով թուրք զորավար Բաթալ-փաշայի 1789 թվականի արշավանքի մասին (1787—1791 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ), Բերքուքը շեշտում է, որ դրա նպատակը ևս Կովկասի նվաճումն էր[1]։

1 Miralay Berkuk, Büyük harpte (334) Şimali Kafkasyadaki faaliyetlerimiz ve 15 firkanın harekiti ve muharebeleri, Istanbul, 1934, s. I-2. (Sk'« „Askeri mecmuanın tarih kısmı", sayı 35).

Օսմանյան կայսրության դեմ մղած պատերազմներում Ռուսաստանը ձգտում էր ձեռք բերել Թուրքիայի կողմից գրավված Մերձսևծովյան մարզերը՝ իր հարավային սահմանների անվտանգությունն ապահովելու և դեպի Սև ծովը ելք ունենալու համար։ 1735—1739 թվականների ռուս-թուրքական պատերազմի հետևանքով Ազովն անցավ Ռուսաստանին։ 1768—1774 թվականների նոր ռուս-թուրքական պատերազմի հետևանքով կնքված Քյուչուկ-Կայնարջայի դաշնագրով Ռուսաստանին անցան Կերչը, Ենիկալեն, իսկ Ղրիմի խանությունը Թուրքիայից անկախ հայտարարվեց։ Ռուսաստանին վերջնականապես միացվեցին Մեծ և Փոքր Կաբարդան, ռուսական առևտրական նավատորմը իրավունք ստացավ ազատ նավարկելու Սև ծովում և անցնելու Բոսֆորի ու Դարդանելի նեղուցներով։ Այսպիսով, Ռուսաստանը դարձավ սևծովյան տերություն՝ ցնդմիշտ վերջ դնելով թուրք-թաթարական ոտնձգություններին Ղրիմում, որն արդեն 1783 թվականին միացվեց Ռուսաստանին։ Չհաշտվելով այդ տերիտորիաների կորստի, ինչպես նաև Անդրկովկասում, հատկապես Վրաստանում, ռուսական ազդեցության ուժեղացման հետ, Օսմանյան կայսրությունը 1787 թվականին Ռուսաստանի դեմ ռևանշիստական պատերազմ ձեռնարկեց, որը դարձյալ պսակվեց Ռուսաստանի հաղթանակով։ 1791 թվականի Յասիի հաշտության պայմանագրով ռուս-թուրքական նոր սահմանն անցնում էր հարավ-արևմուտքում՝ Դնեպրով, իսկ Կովկասում՝ Կուբան գետով։ Ռուսաստանն ամրապնդեց իր գերիշխանությունը Սև ծովում։

Ուժերի այդ փոփոխությունը՝ հօգուտ ռուսական կայսրության, հակայական նշանակություն ունեցավ թուրքական լծից ազատագրվելու համար մարտնչող անդրկովկասյան ժողովուրդների դարավոր պայքարի հետագա ընթացքի համար։ Վրաստանի, Ադրբեջանի ու Հայաստանի ժողովուրդները ի դեմս Ռուսաստանի տեսնում էին սուլթանական բռնապետության լծից իրենց միակ փրկարարին։ 1801 թվականին Ռուսաստանին միացավ Արևելյան Վրաստանը, 1803 թվականին՝ Մենգրելիան, իսկ 1804 թվականին՝ Իմերթիան ու Գուրիան։

1806 թվականին սկսելով նոր պատերազմ Ռուսաստանի դեմ, Թուրքիան նորից փորձեց վերականգնել իր տիրապետությունը Սև ծովում և Անդրկովկասում կորցրած տերիտորիաների նկատմամբ։ Վրացական, հայկական, աբխազական ու ադրբեջանական աշխարհազորակների օգնությամբ ռուսական բանակը դուրս քշեց Անդրկովկաս ներխուժած թուրք ագրեսորներին։ Նույն ժամանակ, 1804—1813 թվականներին) ռուսական զորքերը Ադրբեջանից վռնդեցին իրանական զավթիչներին։ Այդ պատերազմների ընթացքում թուրքական ու իրանական լծից ազատագրվեցին ու Ռուսաստանին միացվեցին Վրաստանը, Լոռի-Փամբակը, Շիրակը, Ղարաբաղի, Շաքիի, Գանձակի, Շիրվանի, Դերբենտի, Ղուբայի, Բաքվի և Թալիշի խանությունները։

1826—1828 թվականների ռուս-իրանական և 1828—1829 թվականների ռուս-թուրքական պատերազմների հետևանքով Ռուսաստանին միացվեցին Երևանի ու Նախիջևանի խանությունները, Սև ծովի արևելյան ափի մեծ մասը, ինչպես նաև Ախալցխան ու Ախալքալաքը։ Դրանով իսկ ավարտվեց Անդրկովկասի ազատագրումը թուրք և իրանական ասիմիլյատորների դաժան լծից. իրագործվեց Անդրկովկասի ժողովուրդների դարավոր ձգտումը՝ Ռուսաստանին միանալու ճանապարհով վերացնել իրենց սպառնացող ֆիզիկական բնաջնջման մշտական վտանգը։ Անդրկովկասի ժողովուրդներն իրենց բախտը կապելով ռուս մեծ ժողովրդի հետ, հնարավորություն ստացան զարգանալու ավելի առաջադեմ սոցիալ-տնտեսական պայմաններում։

Դրանում էր Անդրկովկասի՝ Ռուսաստանին միանալու, նրա ժողովուրդների հետագա պատմական զարգացման օբյեկտիվորեն պրոգրեսիվ նշանակությունը։

Սակայն ցարիզմը Անդրկովկասից դուրս մղելով թուրքական և իրանական զավթիչներին և այն միացնելով ռուսական կայսրությանը, հետապնդում էր զուտ իր քաղաքական, տնտեսական և ռազմա-ստրատեգիական նպատակները, բոլորովին հաշվի չառնելով հայերի, վրացիների և ադրբեջանցիների շահերը, որոնք ցարիզմի կողմից ենթարկվում էին ազգային ճնշման, զրկված էին ազգային ինքնավար իրավունքներից։ Անդրկովկասը ցարական իշխանությունների կողմից դիտվում էր որպես մի ծայրամասային գաղութ՝ մետրոպոլիայի համար հումքի աղբյուր։

Ռուս-թուրքական հետագա պատերազմների ընթացքում (1853—1856, 1877—1878 թթ.) Օսմանյան կայսրությունը առաջվա պես ձգտում էր ետ նվաճել Անդրկովկասն ու Հյուսիսային Կովկասը։ Այդ նպատակով Թուրքիայի կառավարող շրջանները փորձում էին օգտագործել ցարական լծի դեմ Հյուսիսային Կովկասի ժողովուրդների պայքարը, որը լայն թափ ստացավ XIX դարի 40—50-ական թվականներին։

Ղրիմի պատերազմի ժամանակ Արևելյան Հայաստան ու Վրաստան ներխուժած թուրքական զորքերը, շարժվելով դեպի Անդրկովկասի խորքը, ձգտում էին միանալ Հյուսիսային Կովկասի լեռնականների հետ։ Ստանալով վրացական ու հայկական կամա-

վորական ջոկատների աջակցությունը, ռուսական զորքերը հակահարձակման անցան, ջախջախեցին թուրք զավթիչներին և դուրս քշեցին նրանց Մենգրելիայից, Գուրիայից, Աբխազիայից ու Ալեքսանդրապոլից։ Ռուսական զորքերի այդ հաղթանակների շնորհիվ լրիվ ձախողվեցին Անդրկովկասի նկատմամբ Թուրքիայի նվաճողական պլանները։ Դրա հիմնական պատճառներից մեկը Անդրկովկասի ժողովուրդների ուժեղ դիմադրությունն էր։ Բնութագրելով Ղրիմի պատերազմի ժամանակ Կովկասի ժողովուրդների գրաված դիրքը, Մարքսն ու Էնգելսը նշել են, որ «Թուրքիային միացվելու հեռանկարը, ըստ երևույթին, նրանց մեջ խանդավառություն առաջ չի բերում»[1]։

Չնայած պատմական այդ դառը փորձին, թուրքական ղեկավար շրջանները հետագայում էլ չհրաժարվեցին իրենց նվաճողական ծրագրերից։ Սովետական Միության տարբեր արխիվներում պահվող բազմաթիվ փաստաթղթերը վկայում են այն մասին, որ սուլթանական կառավարությունը պարբերաբար իր գործակալներն էր ուղարկում Անդրկովկաս, ինչպես նաև մահմեդական ժողովուրդներով բնակեցված Ռուսաստանի այլ շրջանները։ Անդրկովկասը մշտապես գտնվում էր թուրքական հետախուզության լրտեսական ու դիվերսիոն գործունեության կենտրոնում։

Թուրք էքսպանսիոնիստների կարծիքով նախկինում իրենց տիրապետության տակ գտնված Անդրկովկասը Թուրքիային է պատկանում «իրավունքի համաձայն» և վաղ թե ուշ նորից պետք է վերադարձվի նրան։ Իրենց պանթուրքական և պանիսլամական նպատակներին հասնելու համար իթթիհատականները[2] տակավին առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին ձգտում էին վերացնել քրիստոնեական տարրը Փոքր Ասիայում և, առաջին հերթին, հայերին, որոնք, նրանց կարծիքով, խանգարում էին, որ թուրքերը միավորվեն Անդրկովկասի ու Հյուսիսային Կովկասի մահմեդական ժողովուրդների հետ։ Այդ քաղաքականությունը, ըստ էության, նպատակ ուներ նախապատրաստել ողջ Կովկասի նվաճումը Օսմանյան կայսրության կողմից։ Պատմական փաստաթղթերը համոզիչ կերպով վկայում են, որ մասնակցելով առաջին համաշխարհային պատերազմին, Թուրքիան նպատակադրվել էր իրագործել իր սեփական զավթողական պլանները, որոնց հիմքում ընկած էր նաև Անդրկովկասի նվաճումը։

***

Սույն ուսումնասիրության նպատակն է լուսաբանել Անդրկովկասի նկատմամբ Օսմանյան կայսրության նվաճողական քաղաքականությունը առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և, հատկապես, պատերազմի տարիներին։ Այս խնդիրն ակտուալ նշանակություն ունի և մեր օրերում, երբ Թուրքիայի հետադիմական ուժերը ԱՄՆ-ի իմպերիալիստական շրջանների աջակցությամբ պատրաստվում են իրագործել երիտթուրքերի ձախողված ծրագրերը։

Սովետական պատմագրության մեջ մեր կողմից հետազոտվող թեմային վերաբերող հատուկ աշխատություններ չկան, սակայն առաջին համաշխարհային պատերազմի ծագմանը, նախապատրաստմանն ու բուն պատերազմի պատմությանը նվիրված մենագրություններում ու հոդվածներում հարևանցիորեն շոշափվում են սույն աշխատության մեջ բարձրացվող հարցերը։

Արխիվային նորահայտ փաստաթղթերի և այլ աղբյուրների հիման վրա գրքում ցույց է տրվում մի շարք պատմաբանների սխալ տեսակետը՝ Լիման ֆոն Սանդերսի գլխավորած գերմանական ռազմական միսիան Թուրքիա ուղարկելու և առաջին համաշխարհային պատերազմին Օսմանյան կայսրության՝ գերմանա-ավստրիական խմբավորմանը հարելու դրդապատճառների լուսաբանման հարցում։ Միաժամանակ պարզաբանվում են այն շարժառիթները, որոնցից ելնում էին երիտթուրքերը, կազմակերպելով հայերի մասսայական ջարդերն ու տեղահանումը նրանց հայրենիքից՝ Արևմտյան Հայաստանից։ Աշխատության մեջ բնութագրվում է նաև մեծ տերությունների քաղաքականությունն ու վարքագիծը Թուրքիայի նախկին կառավարողների արյունալի գործողությունների նկատմամբ։

Սովետական որոշ պատմաբաններ (Մ. Պավլովիչ, Ա. Միլլեր և այլն), փաստորեն նսեմացնում են երիտթուրքական պարագլուխների ինքնուրույն դերը 1914—1918 թվականների պատերազմում սուլթանական Թուրքիայի մասնակցության հարցում և անտեսում են Անդրկովկասի նկատմամբ երիտթուրքերի սեփական զավթողական ծրագրերի առկայությունը։

Անդրկովկասում թուրքական ագրեսիայի մասին խոսվում է

---

1 Маркс и Энгельс, Соч., т. II, стр. 522.

2 «Ittihat ve terakki» («Միասնություն և առաջադիմություն») կուսակցությունը հիմնվել է 1894 թվականին։ Այդ կուսակցության անդամները անվանվում էին «իթթիհատականներ» կամ, ավելի լայն հասկացողությամբ, «Jön türkler» («երիտթուրքեր»)։ Դա մոլի շովինիստական բուրժուա-կալվածատիրական կուսակցություն էր, որը պայքարում էր արդուլհամիդյան միապետության դեմ՝ բուրժուա-սահմանադրական կարգեր ստեղծելու համար։

մի շարք մենագրություններում, որոնց մենք կանդրադառնանք ստորև։ Նրանց հեղինակներն ուղղակի կապ չեն տեսնում դեպի Անդրկովկաս թուրքական զորքերի ձեռնարկած 1914 և 1918 թվականների արշավանքների միջև։

Անդրկովկասում 1918 թվականի օտարերկրյա ինտերվենցիայի պատմությամբ զբաղվողները սահմանափակվում են սոսկ Հայաստանի, Վրաստանի կամ Ադրբեջանի շրջանակներով։ Մինչդեռ գերմանա-թուրքական խմբավորումը և Անտանտի տերությունները Անդրկովկասը դիտում էին որպես մի ամբողջություն և նրա նվաճման միջոցով ձգտում էին ստեղծել Սովետական Ռուսաստանի դեմ ուղղված խոշոր ռազմա-ստրատեգիական պլացդարմ և, միաժամանակ, մի պատնեշ՝ կասեցնելու Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության ազդեցությունը Մերձավոր ու Միջին արևելքում։

Մեր կողմից հետազոտվող պրոբլեմն ակտուալ նշանակություն ունի նաև այն տեսակետից, որ ժամանակակից թուրք, արևմտագերմանական ու ամերիկյան պատմաբանները առանձին հետաքրքրություն են հանդես բերում Անդրկովկասի՝ առաջին համաշխարհային պատերազմի տարիների պատմության նկատմամբ։

Հրապարակի վրա են թուրք հեղինակների, 1914—1918 թվականներին կովկասյան ռազմաճակատի գործողությունների մասնակից՝ Ֆոի, ինչպես նաև երիտթուրքական կուսակցության հայտնի պարագլուխների բազմաթիվ «ուսումնասիրություններն» ու հուշերը, որոնք գերազանցապես վերաբերում են առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանին։ Յուսուֆ Հիքմեթ Բայուրը [1], Էսատ Ուրասը [2], Ահմեդ Էմին Յալմանը [3], Քյազըմ Կարաբեքիր-փաշան [4], Բերքուքը [5], Ալի Ֆուադ Ջեբեսոյը [6], Ռյուշտյուն [7],

1 Bayur Yusuf Hikmet, Türk inkılabı Tarihi, Cilt III, Kıs. III Ankara, 1957. նույնի, Türkiye Devletinin dış siyasası, Istanbul, 1933.

2 Esat Uras, Tarihte Ermeniler ve Ermeni meselesi, Ankara, 1950.

3 Emin Ahmed, Turkey in the World War, London, 1930.

4 Karabekir Kâzım, Cihan harbine neden girdik, nasıl girdik, nasıl idare etdik?, Istanbul, 1937. նույնի, Birinci Kafkas Kolordusunun 334 senesindeki harekati ve meşhudatı hakkında general Harbord riyasetindeki Amerika heyetine takdim edilen rapor sureti. Erzurum, 1335 (1919).

5 Berkuk, Büyük Harpte (:34 Şimali Kafkasyadaki faaliyetlerimiz ve 15 fırkanın hareketi ve muharebeleri. տե՛ս „Askeri mecmuanın tarih kısımı", Istanbul, 1934, Sayı 35.

6 Ali Fuad Cebesoy, „Syası hatıralar", տե՛ս „Vatan" թերթի 1954 թվականի համարները։

7 Rüştü, Büyük harpte Bakû yollarında 5 Kafkas piyade fırkası, տե՛ս „Askeri mecmuanın tarih ksımı", Istanbul, 1934, sayı 34.

Ջեմալ-փաշան [1], Թալեաթ-փաշան [2] և մյուսները երիտթուրքերի պանթուրքական նվաճողական քաղաքականությունն արդարացնելու նպատակով ամեն կերպ նենգափոխում են փաստերը, պատմական իրականությունը։ Նշված հեղինակների աշխատությունների հիմքում ընկած են պանթուրքիզմի ու թուրքիզմի (türkçülük) հետադիմական դոկտրինները։ Պանթուրքիզմը խեղաթյուրում է թուրք ժողովրդի իրական պատմությունը, քարոզում թուրքերի գերազանցությունը մյուս ժողովուրդների նկատմամբ։ Նա փորձում է «հիմնավորել» թուրք ազգի առանձնահատուկ դերը մարդկության պատմության մեջ և արդարացնել թուրքիայի կողմից քրիստոնեա ժողովուրդների ազգային բիրտ ճնշումն ու ֆիզիկական բնաջնջումը։ Պանթուրքիզմի տեսությունը Անդրկովկասի և Հյուսիսային Կովկասի նկատմամբ երիտթուրքական «եռյակի»՝ Էնվերի, Թալեաթի ու Ջեմալի, վարած ագրեսիվ արտաքին քաղաքականության գաղափարական հիմքն էր։

Չնայած թուրք բուրժուական պատմաբանների կոնցեպցիաների բացահայտ արատավորությանը, նրանց աշխատություններում պարունակվում է զգալի չափով կոնկրետ նյութ, որն օգնում է բացահայտելու 1918 թվականին դեպի Անդրկովկաս ձեռնարկած թուրքական զորքերի արշավանքի իրական հանգամանքները, լուսաբանելու Օսմանյան կայսրության ներքին վիճակը պատերազմի տարիներին, ինչպես նաև թուրք-գերմանական ու թուրք-սովետական հարաբերությունները, Ադրբեջանի մուսավաթական իշխանությունների վերաբերմունքը թուրք օկուպացիոն զորքերի նկատմամբ և այլն։ Նկարագրելով Անդրկովկաս ներխուժելու ժամանակ թուրքական զորքերի հանդիպած դժվարությունները, թուրք պատմաբանները ստիպված են գրել նաև օտարերկրյա ինտերվենցիայի դեմ երկրամասի ժողովուրդների մղած պայքարի մասին։

Իրենց հուշերում Լլոյդ-Ջորջը, Պուանկարեն, պատմաբաններ Սիդնեյ Ֆեյը, Լիդդել-Հարտը, Կայզերը և ուրիշներ փորձում են Անգլիայի, ԱՄՆ-ի ու Ֆրանսիայի իմպերիալիստներին ներկայացնել խաղաղության ջատագովների ու փոքր ժողովուրդների շահերի պաշտպանների դերում։ Կեղծելով առաջին համաշխարհային պատերազմի նախապատրաստման պատմությունը, նրանք պատերազմի սանձազերծման ամբողջ մեղքը բարդում են Ռուսաստանի վրա։ Այսպես, անգլիական հայտնի ռազմական պատմաբան Լիդդել-Հարտը «Ճշմարտություն պատերազմի մասին» խորագիրը կրող գրքում պնդում է, որ Օսմանյան կայսրությունը պատերազմի մեջ

1 Джемаль-паша, Записки 1913—1919 гг., Тифлис, 1923.

2 Talât Paşanın Hatıraları, Istanbul, 1946.

մտավ Գերմանիայի կողմում՝ Ռուսաստանի մեղքով։ Նրա կարծիքով, հենց ցարական Ռուսաստանն էր, որ Կոստանդնուպոլսի ու նեղուցների նկատմամբ իր նվաճողական պլաններն իրագործելու ձգտումով Թուրքիային վանեց դեպի կենտրոնական պետությունների խմբավորումը [1]։ Ֆրանսիական պատմաբան Ժորժ Կայզերը, արդարացնելով երիտթուրքերի արտաքին քաղաքական կուրսը, Ռուսաստանին նույնպես մեղադրում է այն բանի համար, որ վերջինս հարկ եղած չափով զիջողականություն հանդես չբերեց և մերժեց թուրքական կառավարության պահանջները։ Ամեն կերպ արդարացնելով Անգլիայի ու Ֆրանսիայի կառավարող շրջանների քաղաքականությունը պատերազմին Թուրքիայի մասնակցության հարցում, այս հեղինակն ուղղակի գրում է, որ «Թուրքիան դաշնակիցների դեմ պատերազմի մեջ մտավ Ռուսաստանի կամքով» [2]։ Այդ նույն տեսակետն է պաշտպանում անգլո-ֆրանսիական իմպերիալիզմի մյուս ջատագովը՝ անգլիական պատմաբան Մարիոտը [3]։

Վերջին ժամանակներս, ինչպես նշվեց, բուրժուական գիտնականները մեծ հետաքրքրություն են հանդես բերում Անդրկովկասի առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանի պատմության նկատմամբ։ Արդի միջազգային իրադրության պայմաններում ամերիկյան իմպերիալիզմը կարևորագույն նշանակություն է տալիս Մերձավոր արևելքի հատկապես այն երկրներին, որոնք սահմանակից են Անդրկովկասին։ ՆԱՏՕ-ի ագրեսիվ բլոկի ղեկավարների հաշվումներով, մերձավոր արևելյան ճակատը գալիք պատերազմի հիմնական թատերաբեմերից մեկն է դառնալու։ Պատահական չէ, որ ԱՄՆ-ի խոշոր ռազմա-օդային ու հրթիռային բազաները տեղավորված են հենց Մերձավոր արևելքում։ ԱՄՆ-ի ու Անգլիայի ռազմամոլ շրջանների հակասովետական պլաններում Անդրկովկասն առաջվա պես նկատելի տեղ է գրավում։ Դրանով, մասնավորապես, պետք է բացատրել այն փաստը, որ Ամերիկայի Միացյալ Նահանգներում լույս են տեսնում Անդրկովկասի պատմությանը նվիրված հատուկ հետազոտություններ, որոնցում նշանակալից տեղ է տրված առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանի իրադարձություններին։ Նման «հետազոտություններից» են՝ Ալլենի և Մուրատովի «Կովկասյան ճակատը» [4],

[1] Лиддель-Гарт Б. Г., Правда о войне 1914—1918 гг., М., 1935, стр. 120—121.

[2] Кайзер Ж., Европа и новая Турция, М., 1925, стр. 8—10.

[3] Marriott I. A. K. A historical study in European diplomacy, Oxford, 1951, p. 488.

[4] Allen and Muratoff, Caucasian Battlefilds. A History of the Wars on the Turko-Caucasian Border 1828—1921. Cambridge, 1953.

Փիրուզ Կազեմզադեի «Պայքար Անդրկովկասի համար 1917—1921 թվականներին» [1] և այլ գործեր, որոնք նվիրված են Անդրկովկասի համար օտարերկրյա պետությունների պայքարի պատմությանը։

Փիրուզ Կազեմզադեի գրքի առաջաբանում պարզորոշ կերպով ընդգծվում է այն միտքը, որ սպասվող իրադարձությունների պայմաններում Անդրկովկասի հետ կապված հարցերը նորից կարող են կարևոր դեր խաղալ միջազգային կյանքում [2]։

Պատմության կեղծարարները խեղաթյուրում են Անդրկովկասում 1918 թվականի թուրքական ինտերվենցիայի իրական պատկերը։ Անգլիական զորքերի ներխուժումն Ադրբեջան նրանց կողմից հրամցվում է որպես «օգնություն» անդրկովկասյան ժողովուրդներին՝ «կայուն կարգեր» հաստատելու համար։ Լռության մատնելով հանրահայտ պատմական փաստերը, իմպերիալիզմի ջատագով պատմաբանները փաստազուրկ պնդումներով փորձում են ժխտել Անդրկովկասի նկատմամբ թուրքական ու անգլո-ամերիկյան իմպերիալիստների նվաճողական ծրագրերի առկայությունը։ Այսպես, օրինակ, Ալլենն ու Մուրատովը ուղղակի գրում են, որ առաջին համաշխարհային պատերազմի մեջ ներգրավվելու նախօրյակին թուրքերը Ռուսաստանի հանդեպ ոչ մի ագրեսիվ մտադրություն չունեին [3]։ Միաժամանակ, բուրժուական պատմաբանները գիտակցորեն անտեսում են Անդրկովկասի ժողովրդական զանգվածների պայքարը օտարերկրյա զավթիչների ու հակահեղափոխական կուսակցությունների՝ մենշևիկների, դաշնակների, մուսավաթականների դեմ։

Հարկ է նշել անգլիական առաջադեմ պատմաբան Վ. Վ. Գոտլիբի «Գաղտնի դիվանագիտությունը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին» խորագիրը կրող մենագրությունը [3], որի հեղինակը, ի տարբերություն արևմուտքի գրեթե բոլոր հետազոտողների, իր աշխատության մեջ լայնորեն օգտագործել է դիվանագիտական փաստաթղթերի սովետական հրատարակությունները։ Ղեկավարվելով առաջին համաշխարհային պատերազմին Լենինի տված գնահատականով, Գոտլիբը բացահայտում է ինչպես Անտանտի երկրների, այնպես էլ Եռյակ միության զավթողական նպատակները, Քննելով Անտանտի տերությունների միջև գոյություն ունե-

[1] Firuz Kazemzadeh, The Struggle for Transcaucasia 1917—1921, New York, 1951.

[2] Firuz Kazemzadeh, p. 2

[3] Allen and Muratoff, p. 222.

[4] Готлиб В. В., Секретная дипломатия во время первой мировой войны. Пер. с английского, М., 1960.

ցող հակասությունները, հեղինակն ապացուցում է, որ Ռուսաստանն այդ խմբավորման մեջ երկրորդական դեր էր խաղում, քանի որ քաղաքականությունն այնտեղ որոշում էին առաջին հերթին Անգլիան և հետո՝ Ֆրանսիան։ Գոտլիբը ճիշտ դիրքերից է շարադրում իմպերիալիստական այդ երկու խմբավորումների դիվանագիտական պայքարը՝ Թուրքիային ու Իտալիային համաշխարհային պատերազմի մեջ ներգրավելու խնդրում։

Կեղծ, աղավաղված տեսքով են ներկայացնում Անդրկովկասում օտարերկրյա ինտերվենցիայի պատմությունը գերմանական ու ավստրիական պետական գործիչները, բուրժուական պատմաբաններն ու հրապարակախոսները։ Այսպես, Լյուդենդորֆը [1], Բյուլովը [2], Լիման ֆոն Սանդերսը [3], Մյուլմանը [4], Պոմյանկովսկին [5], Էրցբերգերը [6], Լիրաուն [7], Նաումանը [8] և ուրիշներ պնդում են, թե իբր Գերմանիան Մերձավոր արևելքում հարձակողական նպատակներ չէր հետապնդում, այլ միայն ընդառաջելով բանակը վերակազմելու երիտթուրքական կառավարության ցանկությանը, ձգտում էր ուժեղացնել Թուրքիայի ռազմական հզորությունը՝ Անտանտի, և, առաջին հերթին, Ռուսաստանի կողմից նրա ամբողջականությանը սպառնացող վտանգից պաշտպանելու համար։ Դրա հետ մեկտեղ գերմանական պատմաբանները ժխտում են Անդրկովկասի նկատմամբ կայսերական Գերմանիայի նվաճողական պլանների առկայությունը և ճգնում են «ապացուցել», որ գերմանական ռազմամոլներն ու դիվանագետները մասնակցություն չեն ունեցել պատերազմի տարիներին երիտթուրքերի կողմից երկրի հայ բնակչության նկատմամբ կատարած արյունոտ չարագործություններին։ Դեռ ավելին, գերմանական որոշ ռազմական ու քաղաքական գործիչներ, ինչպես, օրինակ, Լիման ֆոն Սանդերսը, Լյուդենդորֆը,

[1] Людендорф, Мои Воспоминания о войне 1914—1918 гг., т. II, М., 1924.

[2] *Бюлов Б.*, Воспоминания, М., 1935.

[3] Liman von Sanders O., Fünf Jahre Türkei, Berlin, 1919.

[4] Mühlmann Carl, Deutschland und die Türkei (1913—1914). Berlin, 1929, նույնի Das Deutsche-Türkische Waffenbündnis im Weltkriege, Leipzig, 1940.

[5] Pomiankowski I., Der Zusammenbruch des Ottomanischen Reiches. Erinnerungen an die Türkei aus der Zeit des Weltkrieges, Zürich-Leipzig—Wien, 1928.

[6] Эрцбергер М., Германия и Антанта, Мемуары, М., 1934.

[7] Лирау Вальтер, Новая Турция. Состояние и виды на будущее, М.—Л., 1924.

[8] Naumann F., Mitteleuropa, Berlin, 1915.

Էրցբերգերը և ուրիշներ նույնիսկ փորձում են արդարացնել հայ ժողովրդի իսպառ ոչնչացման երիտթուրքական կուսակցության քաղաքականությունը։

Այնուհանդերձ, խիստ քննադատական մոտեցման դեպքում վերոհիշյալ աշխատություններից կարելի է քաղել Անդրկովկասում թուրք-գերմանական հակասություններին, պանթուրքական ծրագրերին, Օսմանյան կայսրության ներքին դրությանը և այլ հարցերին վերաբերող մեծ քանակությամբ փաստական ու վավերագրական նյութ։

Բացի նշված աշխատություններից, մեր կողմից օգտագործվել են դիվանագիտական փաստաթղթերի գերմանական հրատարակությունները՝ «Die grosse Politik der Europäischen Kabinette 1871—1914», «Die deutschen Dokumente zum Kriegsausbruch» և այլն։

Մեր հետազոտության հիմնական նյութ են ծառայել սովետական արխիվներում պահվող փաստաթղթերը. Պետական ռազմա-պատմական արխիվում (ЦГВИА), Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվում (АВПР), Հոկտեմբերյան ռևոլյուցիայի ու սոցիալիստական շինարարության կենտրոնական պետական արխիվում (ЦГАОРСС) և Մոսկվայի կենտրոնական պետական պատմական արխիվում (ЦГИАМ)։ Հիշյալ արխիվների համապատասխան ֆոնդերում պահպանվել են Օսմանյան կայսրությունում ու եվրոպական երկրներում Ռուսաստանի դիվանագիտական ու ռազմական ներկայացուցիչների զեկուցագրեր, գործակալական զանազան տվյալներ, օպերատիվ ամփոփագրեր և այլ նյութեր, որոնցում պարունակվում են ներկա աշխատության թեմային վերաբերող խիստ արժեքավոր տեղեկություններ։

Օգտագործվել են նաև ՍՄԿՊ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի կենտրոնական պարտիական արխիվի այն նյութերը, որոնք վերաբերում են առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանին, մասնավորապես, 1918 թվականին Անդրկովկասում թուրքական ու գերմանական ինտերվենցիայի հետ առնչվող իրադարձություններին, այդ շրջանում հակահեղափոխական կուսակցությունների՝ վրացական մենշևիկների, դաշնակների ու մուսավաթականների գործունեությանը։

Հետաքրքիր փաստաթղթեր են հայտնաբերվել Ռազմա-ծովային նավատորմի կենտրոնական պետական արխիվում (ЦГАВМФ) և Լենինգրադի կենտրոնական պետական պատմական արխիվում (ЦГИАЛ)։ Դրանք գերազանցապես լուսաբանում են թուրքական ու գերմանական ռազմա-ծովային ուժերի ավազակային հարձա-

կումը Ռուսաստանի սևծովյան նավահանգիստների վրա, ռազմական գործողությունները կովկասյան ճակատում և երիտթուրքական էմիսարների քայքայիչ գործունեությունն Անդրկովկասում առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին ու պատերազմի տարիներին։

Մեր կողմից բարձրացվող պրոբլեմի հետազոտությունն անհնարին կլիներ առանց Ադրբեջանի, Վրաստանի ու Հայաստանի արխիվների փաստաթղթերի։ Ադրբեջանական ՍՍՌ կենտրոնական պատմական արխիվում և Հոկտեմբերյան ռևոլյուցիայի կենտրոնական պետական արխիվում գտնվել են արժեքավոր փաստաթղթեր, որոնք բնութագրում են թուրքական օկուպանտների կողմից Ադրբեջանում հաստատած գաղութային-ոստիկանական ռեժիմը, և ադրբեջանական աշխատավոր ժողովրդի համառ պայքարը օտարերկրյա զավթիչների ու նրանց գործակալների՝ մուսավաթականների դեմ։ Այդ արխիվներում, հատկապես պատմական արխիվում, նույնպես պահպանվել են զգալի քանակությամբ փաստաթղթեր, որոնք մերկացնում են թուրքական գործակալների լրտեսական-դիվերսիոն աշխատանքն Անդրկովկասում առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին ու պատերազմի տարիներին։

ՍՄԿՊ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի ադրբեջանական ֆիլիալի արխիվից օգտագործվել են փաստաթղթեր, որոնք ցույց են տալիս Ադրբեջանի բոլշևիկների ղեկավար դերը թուրք օկուպանտների դեմ մղվող պայքարում։

Շատ արժեքավոր փաստաթղթեր են պահվում Վրացական ՍՍՌ կենտրոնական պետական պատմական արխիվում և Հոկտեմբերյան ռևոլյուցիայի կենտրոնական պետական արխիվում։ Դրանք վեր են հանում թուրքական ռազմամոլ շրջանների դիվանագիտական հնարամտությունները Տրապիզոնի և Բաթումի «հաշտության» կոնֆերանսներում, բացահայտում են գերմանա-թուրքական օկուպանտների նվաճողական ծրագրերը։ Այդ արխիվներում մեզ հաջողվեց հայտնաբերել Անդրկովկասի մահմեդական ազգաբնակչությանն ուղղված երիտթուրքական կոմիտեի թռուցիկները՝ Ռուսաստանի դեմ ապստամբելու կոչով։

Աշխատության մեջ օգտագործվել են նաև համապատասխան նյութեր՝ ՍՄԿՊ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի վրացական ֆիլիալի արխիվից։

Լայնորեն օգտագործվել են Հայկական ՍՍՌ պետական պատմական արխիվի և ՍՄԿՊ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի արխիվի փաստաթղթերը։ Հիշյալ արխիվներում կան նյութեր, որոնք բնութագրում են Օսմանյան կայսրության նվաճողական քաղաքականությունն Անդրկովկասում առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին ու պատերազմի տարիներին, ինչպես նաև նույն շրջանում թուրքական գործակալության լրտեսական քայքայիչ աշխատանքը։ Այդ արխիվների ֆոնդերում պահվում են հայկական հարցին վերաբերող նյութեր։ Բազմաթիվ փաստաթղթերում խոսվում է 1915—1916 թվականներին հայերի տեղահանման ու զանգվածային ջարդերի, 1914—1917 թվականներին կովկասյան ճակատում տիրող դրության, Անդրկովկասում 1918 թվականին թուրքական ինտերվենցիայի և այլ հարցերի մասին։ Մեծ հետաքրքրություն են ներկայացնում այն փաստաթղթերը, որոնք պատմում են թուրք զավթիչների դեմ Հայաստանի ժողովրդական զանգվածների մղած հերոսական պայքարի մասին։ Քիչ չեն նաև այն փաստաթղթերը, որոնցում մերկացվում է անդրկովկասյան հակահեղափոխականների դավաճանական քաղաքականությունը, որը հեշտացրեց երկրամասի գրավումը թուրքական զորքերի կողմից։

Արխիվային փաստաթղթերի վրա աշխատելու ընթացքում մեզ հարկ էր լինում բազմազան տվյալների համադրման ու վերլուծության միջոցով առանձնացնել ամենահավաստի և իրականությանը մոտ փաստերը, մի բան, որ հատկապես կարևոր է այն տեսակետից, որ միևնույն իրադարձության մասին հաճախակի հանդիպում ենք միանգամայն հակասական տեղեկությունների։

Բացի վերոհիշյալ արխիվային նյութերից, օգտագործվել է նաև «Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии» ժողովածուն, որը կարևոր տվյալներ է պարունակում անդրկովկասյան կոմիսարիատի ու սեյմի գործունեության, Տրապիզոնի և Բաթումի կոնֆերանսների մասին։

Լիման ֆոն Սանդերսի գերմանական ռազմական միսիայի և առաջին համաշխարհային պատերազմին Օսմանյան կայսրության մասնակցության լուսաբանման համար օգտագործվել են Սովետական Միությունում հրատարակված փաստաթղթերը՝ «Международные отношения в эпоху империализма» (серия III), «Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях», «Раздел Азиатской Турции», «Константинополь и проливы», «Документы внешней политики СССР» և այլն։

Անդրկովկասում ու կովկասյան ճակատում ծավալված հեղափոխական շարժման և վրացական մենշևիկների, դաշնակների ու մուսավաթականների հակահեղափոխական գործունեության մասին արժեքավոր փաստաթղթեր են պարունակում մեր կողմից օգ-

տագործված արխիվային փաստաթղթերի ժողովածուները՝ «Борьба за победу Советской власти в Грузии», «Большевики в борьбе за победу социалистической революции в 1917—1918 гг. в Азербайджане», «Великая Октябрьская социалистическая революция и победа Советской власти в Армении» *և այլն։*

***

Հեղինակը շնորհակալություն է հայտնում Ա. Խ. Սաֆրաստյանին սույն աշխատության համար արաբատառ թուրքերենից նրա կատարած թարգմանությունների համար։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

Օսմանյան կայսրությունում մինչև XIX դարի 80—90-ական թվականները գերիշխող դիրք էին գրավում Անգլիայի ու Ֆրանսիայի կապիտալիստները։ Իմպերիալիզմի դարաշրջանում գերմանական կապիտալի բուռն ներխուժումը Մերձավոր արևելք զգալիորեն սրեց մեծ տերությունների մրցակցային պայքարը երկրագնդի այդ մասում։ XIX դարի վերջին ավարտվում է Թուրքիան Եվրոպայի կապիտալիստական երկրների կիսագաղութի վերածման պրոցեսը։

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Ֆրանսիայի կապիտալ ներդրումները Թուրքիայում կազմում էին 2 մլրդ. 240 մլն. ֆրանկ, Գերմանիայինը՝ 1 մլրդ. 280 մլն. ֆրանկ[1]*, Անգլիայինը՝ 750 մլն. ֆրանկ*[2]*։ Այսպիսով, Մերձավոր արևելքում կապիտալ ներդրումներով Ֆրանսիան գերազանցում էր իր մրցակիցներին՝ Գերմանիային ու Անգլիային։*

Թուրքական տվյալներով, ֆրանսիական կապիտալի բաժինը Օսմանյան կայսրությունում կազմում էր 59 տոկոս, գերմանականը՝ 22 տոկոս, անգլիականը՝ 6,8 տոկոս[3]*։ «Ֆրանսիան կարծես թե*

---

[1] ЦГИАЛ, ф. 543, оп. 1, д. 751, л. 213. *Հ. Գրոթի տվյալների համաձայն գերմանական ներդրումները Թուրքիայում պատերազմի նախօրյակին՝ 1913 թվականին, կազմում էին 1 մլրդ. մարկ. տե՛ս,* Grothe H., History of Modern Europe *1878—1919*, London, *1923*, p. *13*.

[2] ЦГАВМФ, ф 858, оп. 1, д. 34, л. 102.

[3] Hüsrev Ismail, Turkiye köy iktisadiyatı, Ankara, 1934, s. 132.

Թուրքիայի բանկիրը լինի և այդ պատճառով էլ թուրքական ֆինանսների գլուխ է կանգնած Թուրքիայի բյուջեն կազմող ֆրանսիացի Լորանը»,— Ստամբուլից հաղորդում էր պատերազմի նախօրյակին Ռուսաստանի ծովային գործակալը [1]։ Երկաթուղային տրանսպորտում ներդրված ֆրանսիական կապիտալը կազմում էր 445 մլն. ֆրանկ՝ [2] զիջելով միայն գերմանականին։

Գերմանական իմպերիալիստներն ամուր կերպով իրենց ձեռքում էին պահում գերակշռությունը Թուրքիայի երկաթուղային շինարարության բնագավառում։ Թուրքիայի արդյունահանող արդյունաբերության մեջ ֆրանսիական կապիտալին էր պատկանում բոլոր ներդրումների 76,5 տոկոսը, անգլիական կապիտալին՝ 6,6 տոկոսը, գերմանականին՝ ընդամենը 4,4 տոկոսը։

Այս թվերը համոզիչ կերպով վկայում են այն մասին, որ ֆրանսիական իմպերիալիստներն առաջնակարգ դիրք էին գրավում Օսմանյան կայսրության էկոնոմիկայում։

Փաստորեն ողջ Օսմանյան կայսրությունը բաժանված էր իմպերիալիստական պետությունների ազդեցության ոլորտների։ Ֆրանսիան դեռ շատ վաղուց հասել էր գերիշխող դիրքի Սիրիայում և Լիբանանում, Անգլիան՝ Միջագետքում և Արաբական թերակղզում, իսկ Ռուսաստանը՝ Արևմտյան Հայաստանում և Քուրդստանում։ Տարածելով իր ազդեցությունը Թուրքիայի նշված շրջաններում, այդ տերություններից յուրաքանչյուրը ձգտում էր հասնել ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական ու ստրատեգիական նպատակների իրականացմանը։

Օգտագործելով Թուրքիայի էկոնոմիկայում ու ֆինանսների վրա իր ազդեցությունը, Ֆրանսիան ամեն ինչ անում էր Սիրիան ու Լիբանանը վերջնականապես գրավելու համար։ Դամասկոսի, Հալեպի, Բեյրութի ֆրանսիական հյուպատոսները փաստորեն ամեն տեսակի գործերի տնօրինողներն էին։ Թուրքական տեղական իշխանությունները ոչինչ չէին կարող ձեռնարկել առանց Ֆրանսիայի ներկայացուցիչների նախնական համաձայնության։ Վերջիններս, օգտագործելով թուրքական ծանր լծից արաբական ազգաբնակչության դժգոհությունը, տեղի բուրժուա-կոմպրադորական շրջաններից հավաքագրում էին գործակալներ, որոնց միջոցով այդ մարզերում ֆրանսանպաստ պրոպագանդա էին մղում։ Ֆրանսիական կառավարությունը գաղտնի կերպով ֆինանսավորում և զենք էր մատակարարում սուլթանական իշխանությունների դեմ պայքարող

1 ЦГАВМФ, ф. 418, оп. 1, д. 10071, л. 23—25.
2 Նույն տեղում։

Սիրիայի ու Լիբանանի արաբներին, որն, ինչ խոսք, արվում էր բացառապես այդ երկրները ֆրանսիական գաղութի վերածելու նպատակով։

Նման քաղաքականություն էր վարում Անգլիան Միջագետքում և Արաբիայում։ Օսմանյան կայսրության այդ նահանգներում Անգլիան տարածել էր իր գործակալների խիտ ցանցը։ Անգլիական իմպերիալիստները ջանք և միջոցներ չէին խնայում արաբական ազգային-ազատագրական շարժման գործիչներին ու արաբական ցեղերի վերնախավին իրենց կողմը գրավելու համար։ Բասրայի, Կուվեյտի, Բաղդադի բրիտանական հյուպատոսները գործուն կապեր էին պաշտպանում Նեջդի էմիր Իբն—Սաուդի, Կուվեյտի շեյխ Մուբարրաք Իբն—Սաբախի և Բասրայի շեյխ Սեյիդ Թալիբի հետ [1]։ Այդ նահանգներում գործող անգլիական լրտեսները սերտորեն կապված էին արաբական ազգայնական կազմակերպությունների հետ։ Անգլիայի քաղաքական շրջաններում չէին կասկածում, որ Օսմանյան կայսրության մասնատման ժամանակ Միջագետքն ու Արաբիան կկազմեն «թուրքական ժառանգության» անգլիական բաժինը։

Գերմանական իմպերիալիզմը, մյուսներից ավելի ուշ հանդես գալով մերձավոր արևելյան քաղաքականության ասպարեզում, ղեկավարվում էր Օսմանյան կայսրությունն ամբողջությամբ իր գաղութը դարձնելու ձգտումով։ Այդ նպատակն էր հետապնդում, մասնավորապես, Բաղդադի երկաթուղու կառուցումը, որը պետք է կտրեր Փոքր Ասիան ու Միջագետքը՝ անցնելով այն շրջաններով, որոնց վրա վաղուց աչք էին դրել այլ տերությունները։ Դա է՛լ ավելի սրեց իմպերիալիստական տերությունների, հատկապես Գերմանիայի ու Անգլիայի միջև գոյություն ունեցող պայքարը։

«Բաղդադի երկաթուղու կառուցումը,— գրում է գերմանական հայտնի ժուռնալիստ Ալբերտ Նորդենը,— պետք է որ ծայրահեղորեն սրեր Գերմանիայի հարաբերությունները մեծ տերությունների հետ։ Չէ՞ որ Բաղդադի երկաթուղին կտրեց անգլիական իմպերիալիզմի կենսականորեն կարևոր ուղին, որը տանում էր դեպի նրա ասիական տիրապետություններն ու ազդեցության ոլորտները։ Գերմանիայի ամրապնդումը Դարդանելի շրջանում ու Սև ծովում միևնույն ժամանակ սրեց նրա հարաբերությունները Ռուսաստանի հետ, որոնք առանց այն էլ բավականին լարված էին Բալկաններում Հաբսբուրգների հակառուսական քաղաքականությանը Գերմանիայի ցույց տրված աջակցության պատճառով։ Դրա հետ մեկտեղ Լոն-

1 ЦГВИА, ф. 2000/с, оп. 1, д. 991, л. 427—430.

դոնում և այլուր չէին կարող լսել պանգերմանացիների և իրենց չափավոր համարող գերմանական շովինիստների հաղթական ճիչերը, որոնց թվում էր, թե ողջ առաջավոր Ասիան արդեն պատկանում է գերմանացիներին»[1]։

Բաղդադի երկաթուղու շինարարությամբ գերմանական իմպերիալիստները ձգտում էին ներթափանցել թուրքական այն մարզերը, որտեղ Անգլիան իրացնում էր իր ապրանքները և արդյունաբերության համար հումք էր հայթայթում։ Անգլիայի ու Ֆրանսիայի կապիտալիստները փորձում էին իրենց ազդեցության ոլորտները Թուրքիայում պաշտպանել գերմանացիների մրցակցությունից։ Այդ նպատակով նրանք ամեն կերպ աշխատում էին ուժեղացնել իրենց դիրքերը Օսմանյան կայսրությունում և, հատկապես, նրա արաբական նահանգներում։

Իմպերիալիստական տերությունների էքսպանսիայի կարևոր ուղիներից մեկը Թուրքիայում առևտուրն էր, որտեղ գերակշռող դիրք էին գրավում անգլիական կապիտալիստները։

Գերմանիան, որը մյուս երկրներից ավելի ուշ էր հաստատել իր առևտրական կապերը Թուրքիայի հետ, XX դարի սկզբին դարձավ Անգլիայի ու Ֆրանսիայի վտանգավոր ախոյանը։ 1913—1914 թվականներին Գերմանիան Թուրքիայում ապրանքների ներմուծությամբ առաջ անցավ Ֆրանսիայից, Ռուսաստանից ու Իտալիայից և դուրս եկավ երկրորդ տեղը՝ Անգլիայից հետո[2]։

Գերմանական տվյալներով ապրանքների արտահանումը Գերմանիայից Թուրքիա 1913 թվականին կազմեց 74 մլն. մարկ, իսկ ներմուծումը՝ 30 մլն. մարկ[3]։ Գերմանիան Մերձավոր արևելք էր արտահանում գերազանցապես գյուղատնտեսական մեքենաներ, մետաղյա, էլեկտրատեխնիկական ու քիմիական ապրանքներ, իսկ արտահանում էր այնտեղից հաց, ծխախոտ, մետաքսի հումք, թարմ և չորացրած մրգեր և այլն։

Թուրքիայի արտաքին առևտուրը կրում էր որոշակիորեն ընդգծված գաղութային բնույթ։ Օտարերկրյա վաճառականները Թուրքիայում մեծ արտոնություններ ունեին, որոնք սահմանված էին այսպես կոչված կապիտուլյացիաների ռեժիմով։ Նրանց Օսմանյան կայսրության ամբողջ տերիտորիայում ազատ առևտրի իրավունք

1 Норден Альберт, Уроки германской истории, М., 1948, стр. 14—15.

2 *Зурабов А.*, Германский империализм в Турции, «Летопись», 1917, № 5—6, стр. 286.

3 Müller K. H., Die Wirtschaftliche Bedeutung der Bagdadbahn, Hamburg, 1927, S. 161—162.

էր տրված, ինչից զրկված էին նույնիսկ իրենք Թուրքերը։ Թուրքիայի արտաքին առևտրի նկատմամբ օտարերկրյա կապիտալի հաստատած վերահսկողությունը վերջինիս ձեռքին մի միջոց էր՝ թուրքական էկոնոմիկան իրեն ենթարկելու։

Օսմանյան կայսրության ժողովուրդների համար չափազանց ծանր էր Թուրքիայի եվրոպական պարտատերերի կողմից 1881 թվականին հիմնված «Օտտոմանյան պարտքի վարչության» լուծը։ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին հիշյալ վարչությունում հաշվվում էին շուրջ 9 հազար ծառայողներ, որոնց պահելու համար թուրքական գանձարանը տարեկան ծախսում էր ավելի քան 400 հազար լիրա[1]։

Գերազանցորեն անգլո-ֆրանսիական կապիտալի գործիքը հանդիսացող օտարերկրյա այս կազմակերպությանն էին հանձնված Թուրքիայի պետական եկամտի կարևորագույն աղբյուրները՝ աղից, մետաքսից, սպիրտից, ձկնորսությունից, ոչխարաբուծությունից գանձվող հարկերը, աշարը (տասանորդ), դրոշմատուրքը և այլն։ Լլոյդ Ջորջը նշում էր, որ «Ֆրանսիան ավելի մեծ ֆինանսական շահ ուներ Թուրքիայում, քան որևէ այլ երկիր։ Ֆրանսիական ավանդատուներին էր պատկանում Օտտոմանյան պարտքի արժեթղթերի 80 տոկոսը, որի ընդհանուր գումարը հասնում էր 144 մլն. ֆունտ ստեռլինգի»[2]։

Թուրք ծխախոտագործ գյուղացիների համար անտանելի էր ֆրանսիական «Ռեժի» կոնցեսիան։ Օտարերկրյա այս մոնոպոլիան էր թույլատրում ու վերահսկում ծխախոտի արտադրությունն ու գնավաքը։ «Ռեժի»-ին էր պատկանում նաև ծխախոտի գնման նախապատվության իրավունքը։ Ծխախոտի ամբողջ վաճառքը ևս նրա ձեռքում էր գտնվում։ «Ռեժի» կոմպանիան հսկայական շահույթ էր ստանում ծխախոտագործության մեջ զբաղված 150—250 հազար ընտանիքների դաժան շահագործման միջոցով։ Նա գյուղացիներից մեկ կիլոգրամ ծխախոտը գնում էր 4,3 ղուրուշով, իսկ համաշխարհային շուկայում վաճառում 31 ղուրուշով։

Օտարերկրյա կապիտալի կողմից Թուրքիային ստրկացնելու մյուս միջոցը Օտտոմանյան կայսերական բանկն էր, որն օժտված էր անսահմանափակ արտոնություններով և իր հսկողության տակ

1 Хусейн Авни, Как Турция стала полуколонией, Литограф. изд., Л., 1934, стр. 46.

2 Ллойд Джордж, Правда о мирных договорах, т. 2, М. 1957, стр. 402.

էր պահում Թուրքիայի պետական ֆինանսները։ Այդ բանկը հիմնականում գտնվում էր ֆրանսիական ու անգլիական դրամատերերի ձեռքում։

Անգլո-ֆրանսիական ֆինանսական կապիտալի հետ Օսմանյան կայսրությունում մրցում էր հզոր գերմանական բանկը, որը XX դարի սկզբին սուլթանական կառավարությանը մի քանի անգամ վարկ տրամադրեց։

Օտարերկրյա տերություններն իրենց տիրապետությունն էին հաստատել Թուրքիայի էկոնոմիկայի ու ֆինանսների վրա։ Թուրքիայի թույլ ու հետամնաց արդյունաբերությունը ի վիճակի չէր մրցելու օտարերկրացիների արտադրանքի հետ։ Վերջիններս Թուրքիայի ներքին շուկան ողողել էին եվրոպական երկրների արդյունաբերական ապրանքներով, որի հետևանքով բամբակեղենի, բրդի և մետաքսագործական արդյունաբերությունը վերջնական անկում ապրեց։

Օտարերկրյա կապիտալը լայնորեն ներթափանցում էր Թուրքիայի արդյունահանող արդյունաբերության մեջ, գլխավորապես նրա այն ճյուղերը, որոնք զբաղված էին էքսպորտային կուլտուրաների՝ ծխախոտի, բամբակի, չամիչի, թզի և այլ մթերքների նախնական վերամշակմամբ։

Երկիրը կողոպտելու իրենց քաղաքականության մեջ իմպերիալիստները հենվում էին սուլթանական Թուրքիայում հաստատված ինքնակալական ռեժիմի վրա, որը «նախանձախնդրությամբ հսկում էր երկրում իշխող ֆեոդալական-բյուրոկրատական կամայականությունը, համքարական կորպորացիաները, ներքին մաքսային արգելքները, խեղդելով հայրենական արդյունաբերության ու առևտրի զարգացման ամեն տեսակի հնարավորությունները, որոնց ներկայացուցիչների մեջ նա տեսնում էր իր բնական թշնամիներին» [1]։

Օսմանյան կայսրությունում ծայրահեղ հետամնաց վիճակում էր գտնվում գյուղատնտեսությունը։ Ապրանքա-դրամային հարաբերությունների զարգացման հետևանքով կապիտալիզմի ծիլերը ներթափանցեցին թուրքական գյուղը։ Օտարերկրյա կապիտալի ներգործության պայմաններում գյուղատնտեսության մեջ, հատկապես երկրի մերձափնյա շրջաններում, զարգանում էր տեխնիկական և այգեգործական կուլտուրաների մշակումը, որոնց արտադրության պրոցեսը պահանջում էր կիսաֆեոդալական հարաբերություններից անցնել կապիտալիստականի։

Թուրք գյուղացիության ճնշող մեծամասնությունը հողազուրկ էր։ Մշակվող բոլոր հողերի 66 տոկոսը պատկանում էր խոշոր հողատերերին, որոնք կազմում էին գյուղական բնակչության 5 տոկոսը։ Գյուղական բնակչության մնացած 95 տոկոսին բաժին էր ընկնում մշակվող հողերի ընդամենը 34 տոկոսը։ Գյուղացիական տնտեսությունների 8 տոկոսը բոլորովին հող չուներ։

Թուրքիայի գյուղացիությունը տառապում էր ուժից վեր ծանր հարկերից։ Կալվածատերերի ու վաշխառուների կամայականությունները և գյուղացիների լրիվ իրավազուրկ վիճակը վերջիններիս մղում էր պայքարի՝ ֆեոդալական ճնշման դեմ։

Օսմանյան կայսրությունում առանձնապես ծանր վիճակում էին գտնվում ոչ-թուրքական ծագում ունեցող աշխատավոր զանգվածները՝ հայերը, արաբները, մակեդոնացիները, քրդերը և այլն։ Նրանք շահագործվում էին ինչպես սեփական կապիտալիստների ու կալվածատերերի, այնպես էլ թուրք հողատերերի, չինովնիկների ու օտարերկրյա իմպերիալիստների կողմից։ Բացի դրանից, ոչ-թուրք ազգությունները զրկված էին տարրական մարդկային իրավունքներից։ Քաղաքական իրավազուրկ վիճակը, ազգային ու դասակարգային ճնշումը նրանց ստիպում էին պայքարի ելնել Արդուլ Համիդի արյունոտ ռեժիմի դեմ։ Այդ պայքարը կրում էր ազգային-ազատագրական բնույթ և այն խարխլում էր սուլթանական բռնապետության հիմքերը։

***

Թուրքական բիրտ լծի տակ դարեր շարունակ հեծող հայ ժողովուրդը, չհաշտվելով օտար տիրապետության հետ, պայքարում էր իր ազգային ազատագրության համար։ Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարն առանձնապես ուժեղացավ XIX դարի երկրորդ կեսին, երբ թուրք կեղեքիչների լուծը այլևս անտանելի դարձավ։ Բալկանյան դեպքերի հնարավոր կրկնությունը կայսրության այլ շրջաններում կանխելու նպատակով, սուլթանական կառավարությունը գնալով ավելի էր սաստկացնում հալածանքների ու բռնի թուրքացման իր վաղեմի քաղաքականությունը։ Նա դաժան միջոցներ էր ձեռնարկում հայ և իրեն հպատակ ուրիշ ժողովուրդների ազատագրական շարժումները ճնշելու համար։

Թուրքական բռնակալական կարգերի պայմաններում կայսրու-

[1] «Пробуждение Азии, 1905 год и революции на Востоке», Сборник статей, Л., 1935, стр. 3.

թյան քրիստոնյա հպատակները համարվում էին իրավազուրկ ռայաներ, որոնց կյանքն ու ունեցվածքը օրենքի կողմից չէին պաշտպանվում։

Անհամեմատ դաժան և չափազանց ծանր էր Արևմտյան Հայաստանում թուրքական բռնապետության կողմից հետևողականորեն անցկացվող ազգային ճնշման, հալածանքների ու կողոպուտի քաղաքականությունը։ Արևմտահայ ժողովրդական զանգվածները մշտապես համառ պայքար էին մղում հանուն իրենց ազգային ազատագրման։ Հայտնի են հայերի հերոսական ապստամբությունները Լեռնային Կիլիկիայում, Զեյթունում ու Վանում 1862 թվականին, Մուշում՝ 1863 թվականին և Զարսանջաքում՝ 1865 թվականին[1]։

Զինված ապստամբություններ տեղի ունեցան նաև 1872, 1875, 1878, 1884 և այլ թվականներին։ Զեյթունի 1875 թվականի ապստամբությունը լայն արձագանք գտավ Լեռնային Կիլիկիայում։ Ապստամբած զեյթունցիներին միացան Ալբիստանի, Մարաշի ու այլ վայրերի հայերն ու քրդական ցեղերը։ Նրանք միացյալ ուժերով գրոհեցին Մարաշում կենտրոնացած կառավարական զորքերի վրա և գլխովին ջարդեցին նրանց։ Թուրքական կառավարությունն անզոր գտնվեց ճնշելու լեռնցիների այդ հզոր ապստամբությունը։

1853—1856 և 1877—1878 թվականների ռուս-թուրքական պատերազմների ժամանակ հազարավոր հայեր զենքը ձեռքներին պայքարում էին թուրքական զորքերի դեմ ինչպես ռուսական կանոնավոր բանակի շարքերում, այնպես էլ կամավորական ջոկատներում ու պարտիզանական խմբերում։ Հանձինս ռուս զինվորների, արևմտահայերը տեսնում էին թուրքական լծից իրենց ազատարարներին, ուստի ուժ ու միջոց չէին խնայում նրանց օգնելու համար։ 1877—1878 թվականների ռուս-թուրքական պատերազմի անմիջական մասնակիցներից մեկը՝ գեներալ-մայոր Ս. Քիշմիշևը, «1877—1878 թվականների պատերազմը Արևմտյան Հայաստանում» վերնագրով իր գրքում, գրում է. «Պատերազմի ժամանակ արևմտահայերը ցուցաբերում էին մեծ անձնազոհություն ու անշահախնդիր համակրանք ռուսական զորքերի նկատմամբ և նրանց զգալի օգնություն էին ցույց տալիս»[2]։

---

1 Զեյթունի ապստամբության մասին մանրամասն տե՛ս. Մելիքսետյան Վ., «Զեյթունի 1862 թ. ապստամբությունը» (Հայաստանի պետական պատմական թանգարանի «Աշխատություններ», 1950, հատոր 2)։ Nalbandian Louise, The Armenian Revolutionary Movement. The Development of Armenian Political Parties through the Nineteenth Century. Berkeley and Los Angelos, 1963, pp. 67—90.

2 Кишмишев С. О., Война в Турецкой Армении 1877—1878 гг., СПб, 1884, стр. 127.

Հետագա տարիներին ևս արևմտահայերը շարունակում էին պայքարել իրենց հայրենիքի ազատագրության համար։

Թուրքիայի հայկական վիլայեթներում կազմակերպվել էին ապստամբների հետ կապ պահպանող գաղտնի ընկերություններ, որոնցից ամենից ավելի հայտնի էին 1872 թվականին Վանում հիմնված «Միություն ի փրկություն» գաղտնի խմբակը և 1881 թվականին Էրզրումում (Կարինում) կազմակերպված «Պաշտպան հայրենյաց» ընկերությունը։ Վերջինիս գործունեության մասին Կարինի ռուսական հյուպատոս Ա. Դեննետը 1882 թվականի իր զեկուցագրերից մեկում գրում էր, որ «Պաշտպան հայրենյաց»-ը ձգտում էր «թուրքական կառավարության դեմ զինված ապստամբություն բարձրացնել», որ նա «ունեցել է զինվորական կազմակերպություն և խուզարկության ժամանակ հայտնաբերվել են թուղթիկներ ու զենք»։ Նույն զեկուցագրում Դեննետը նշում էր, որ գաղտնի ընկերությունն ունեցել է իր հեկտոգրաֆը, որի միջոցով տպագրվում էին անդամատոմսերը։ Ընկերության յուրաքանչյուր անդամ երդում էր տալիս «մինչև իր արյան վերջին կաթիլը զենքը ձեռքին պաշտպանել հայրենիքի շահերը»[1]։

Գաղտնի ընկերությունը մեկուսացված չէր գործում, նա բավականին լայն կապեր ուներ ինչպես Արևմտյան, այնպես էլ Արևելյան Հայաստանի ու Անդրկովկասի այլ մարզերում։

XIX դարի 90-ական թվականներին ամբողջ Թուրքահայաստանով մեկ ծավալված հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումը ճնշելու և այդպիսով թուրքական գործերին մեծ տերությունների միջամտության պատրվակները վերացնելու համար սուլթանական կառավարությունը մշակեց հայ ազգաբնակչության ոչնչացման հրեշավոր ծրագիր[2]։

Բազմաթիվ աղբյուրները վկայում են այն մասին, որ Աբդուլ-Համիդի կողմից կազմակերպվող ջարդերը հայ ժողովրդի նկատմամբ տարվող նրա քաղաքականության դրսևորման ձևերից մեկն էին և ոչ թե նրա հետադիմական ներքին քաղաքականության պատահական հետևանքը, ինչպես այդ փորձում են ապացուցել որոշ հեղինակներ։

---

1 Մեջբերվում է Մ. Գ. Ներսիսյանի «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850—1870 թթ.» գրքից, Երևան, 1955, էջ 189, «Միություն ի փրկություն» խմբակի և «Պաշտպան հայրենյաց» ընկերության մասին մանրամասն տե՛ս Nalbandian L., The Armenian Revolutionary Movement..., pp. 80—89.

2 Այդ մասին մանրամասն տե՛ս Е. К. Саркисян, Аграрная политика Османского правительства в западной Армении во второй половине XIX века, Ереван, 1957.

Սուլթանական քաղաքականությունն Արևմտյան Հայաստանում իր ժամանակին բավականաչափ հստակ կերպով բնորոշել է խոշոր հողատեր, անգլոֆիլ Քյամիլ փաշան, որն Աբդուլ-Համիդի օրոք երկար ժամանակ կառավարության գլուխ էր կանգնած.

«Եթե Եվրոպիոյ մասին մեջ մեր ծոցը օձ սնուցինք, պետք չէ որ նույն հիմարությունն ընենք մեր Ասիական Տաճկաստանի մեջ. խելոքությունը չնչել վերցնելն է այն ամեն տարերքը, որ օր մը կրնան մեզ նույն վտանգը ծնանիլ և օտարին ձեռնամխության առիթ ու գործիք լինիլ։

Հիմա, այս օր գոնե, Անգլիոյ շահերն կը պահանջեն, որ Փոքր Ասիոյ (մենք և Անգլիա Հայաստան բառը ոչ միայն չենք ճանչեր, այլ այդ անունը հնչող կզակները պետք է ջախջախենք) մեր ունեցած երկիրները ազատ մնան օտարին միջամտութենեն և միջամտության ամեն առիթներեն, ուստի այդ սուրբ նպատակին համար պետք է և պետական իրավունքը կպահանջե, որ որևիցէ կասկածելի տարր անհետ ընենք, որպեսզի ապագայն ապահովենք. ուրեմն այդ հայ ազգը վերցնելու, անհետ և անճետ ընելու ենք։ Եվ այդ ի գլուխ հանելու համար բան չի պակսիլ մեզ. ամեն գործիք պատրաստ ունինք՝ քուրդ, չերքեզ, կուսակալ, դատավոր, հարկահան, ոստիկան, վերջապես ամենայն ինչ. կրոնական պատերազմը մը կը հրատարակենք, և դյուրին պատերազմ այնպիսի ազգի մը դեմ, որ ո՛չ զենք ունի, ո՛չ զինվորություն և ո՛չ պաշտպան. երբ ընդհակառակն, մենք զենք էլ ունինք, զինվորություն էլ, աշխարհիս ամենամեծ տերության մեկը (Անգլիան— Ե. Ս.) և ամենեն հարուստը մեզ զինակից է և մեր Ասիական աշխարքին երաշխավոր։ Եվ եթե այդ հայ ազգը բնաջինջ լինի և քրիստոնյա Եվրոպա կրոնակից մը փնթրե և չի գտնե Տաճկական Ասիոյ մեջ, կը թողու զմեզ հանգիստ և այն ատեն կը զբաղինք ներքին գործերով և բարեկարգութեամբ» [1]։

Անգլիացի Մաք-Կոլն այդ կապակցությամբ գրում է, որ XIX դարի վերջին «Թուրքիայում պարբերաբար կազմակերպվող հայկական ջարդերը տեղական ֆանատիզմի պոռթկումներ չէին, այլ որոշակի սիստեմի հետ առնչվող քաղաքական գործողություններ, որոնք կատարվում էին մշտապես՝ սուլթանի ու նրա խորհրդատուների հրամանով կամ ներշնչմամբ» [2]։

---

1 Տե՛ս «Փորձ», Ազգային և գրականական միամսեայ հանդես, № 7—8, Տփխիս, 1879, էջ 204—205։

2 Кан-Мельколын Мак-Коль, Ответственность Англии перед Арменией (տե՛ս «Положение армян в Турции», 1896, стр. 173).

Մյուս հեղինակը, ֆրանսիական հայտնի դիվանագետ Ժյուլ Կամբոնը, խոսելով 1894—1896 թվականների հայկական ջարդերի մասին, նշում է. «Անկարգություններն այնտեղ (Արևմտահայաստանում— Ե. Ս.) երբեք չէին դադարում, իսկ 1895 և 1896 թվականներին հասան չտեսնված չափերի։ Ողջ կայսրության մեջ մոլեռանդ հրոսակները հարձակվում էին հայ ազգաբնակչության վրա, սպանում, թալանում, առևանգում կանանց և վաճառում շուկայում, ինչպես ստրկուհիների... Հարց էր ծագում, արդյո՞ք մարդասպաններն ու կառավարությունը համատեղ հանդես չեն գալիս և վերևում (սուլթանական արքունիքում— Ե. Ս.), չե՞ն մտադրվել արդյոք ոչնչացնել ամբողջ հայ ազգը։

Դիարբեքիրում, Էրզրումում, Սվազում, Տրապիզոնում և նույնիսկ Կոստանդնուպոլսում տեղական քրիստոնյաները ապրում էին մշտական սարսափի պայմաններում...» [1]։ (Ընդգծումը մերն է— Ե. Ս.)։

Կոստանդնուպոլսում Ռուսաստանի զինվորական գործակալ Ն. Պեշկովը 1896 թ. սեպտեմբերի 22-ի իր զեկույցում հաղորդում էր «Երիտասարդ Թուրքիա» ընկերության գործիչների հետ ունեցած իր զրույցի մասին, որոնք Պեշկովի այն հարցին, թե ինչպե՞ս վերաբերվեց Թուրք հասարակայնությունը հայկական ջարդերի հրեշավոր իրադարձություններին, հետևյալ պատասխանն էին տվել.

«Կոստանդնուպոլսի հայերի կոտորածը օգոստոսի 14, 15 և 16-ին, նախորդ բոլոր ջարդերի նման, մահմեդական ֆանատիզմի պոռթկման արդյունք չէր, ինչպես կարծում են Եվրոպայում. մահմեդական Թուրքերը հայերի նկատմամբ որևէ թշնամական զգացմունք չեն տածել և չեն տածում։ Այդ ջարդերը սուլթանի կողմից հայերին մշտապես հալածելու քաղաքականության արտահայտությունն էին... Սիստեմատիկ զանգվածային ջարդերի միջոցով Աբդուլ-Համիդը հույս ունի վերացնել հայ ազգի ազդեցությունը երկրում...

Ընդհանրապես մահմեդական ազգաբնակչությունը... խորապես զայրացած էր ոստիկանության գործողություններից և սուլթանի ու նրա պաշտոնյաների վարվելակերպից» [2]։

Մի այլ փաստաթղթում կարդում ենք, որ հայկական վիլայեթներում «մարդիկ կոտորվում են, տնտեսությունները ոչնչանում, իրագործվում է նրանց բնաջնջման պլանը... Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածն ընդունելու ժամանակներից Թուրքական կառավա-

---

1 Жюль Камбон, Дипломат, М., 1946, стр. 49.

2 ЦГВИА, ф. 450, д. 113, л. 54—70.

ությունը, իր գաղտնի մեթոդները կիրառելով, բոլոր ջանքերն ուղղում է՝ ոչնչացնելու համար հայ ազգին իր սեփական հայրենիքում» [1]։

Մարզվանի հայ ազգաբնակչությունը 1895 թվականի նոյեմբերի 9-ին քաղաքի ռուս հյուպատոսին հղած իր նամակում մանրամասն նկարագրելով հայերի ջարդը, մատնանշում էր, որ թուրքական կառավարությունն իրեն հատուկ անամոթությամբ «կփորձի ժխտել իր մեղքը և այդ ծանր դեպքերի ողջ մեղքն ու պատասխանատվությունը բարդել հայերի վրա, սակայն բոլոր պարագաներում մենք պատրաստ ենք ապացուցել, որ այդ ջարդի կազմակերպիչը կառավարությունն է։

Մեր տրամադրության տակ են բազմաթիվ արժանահավատ փաստեր և անհերքելի ապացույցներ, որոնք նույնքան պարզ, ինչպես արևը, կարող են հաստատել, որ այդ ջարդը կանխամտածված գործողությունների հետևանք էր» [2]։

Վերը բերված կարծիքները, ինչպես և բազմաթիվ այլ պատմական փաստաթղթերը վկայում են այն մասին, որ սուլթանական քաղաքականությունը նպատակ ուներ իսպառ բնաջնջել հայերին՝ նրանց սեփական հայրենիքում։

Ժամանակակից թուրք պատմաբանները, նենգափոխելով Արևմտյան Հայաստանի պատմությունը, պնդում են, թե իբր հայերը Թուրքիայում, սկսած Մահմեդ Ֆաթիհի ժամանակներից, մշտապես ապրել են լավագույն պայմաններում։ Այդ միտքը կարմիր թելի պես անցնում է, օրինակ, Էսադ Ուրասի [3] *և Չարկի* [4] *աշխատություններում։*

Էսադ Ուրասի ստվարածավալ «Հայերը պատմության մեջ և հայկական հարցը» գրքի 428—429-րդ էջերում կարդում ենք, որ հայերը Թուրքիայում ապրում էին հանգիստ, երջանիկ կյանքով, հարստություն էին կուտակում և այլն։ Գրքի հաջորդ էջերում հեղինակը գրում է, որ հայերի տանջանքներն ու հալածանքները Թուրքիայում՝ այս բոլորը մտացածին բաներ են [5]։

---

1 *Հայկ. ՍՍՌ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի արխիվ, գ. «Հայերի ոչնչացման թուրքական քաղաքականությունը», փաստաթղթերի ու նյութերի ժողովածու (ռուսերեն), թ. 9։ Կազմեց ու խմբագրեց պրոֆ. Մ. Գ. Ներսիսյանը։ Այսուհետև՝* «Документы и материалы».

2 *Նույն տեղում, թ. 92։*

3 Esat Uras, Tarihte Ermenilar ve Ermeni meselesi, Ankara, 1950, 783 s.

4 Çark I., Türk Devleti hizmtinde Ermeniler (1453—1953), Istanbul, 1953.

5 Esat Uras, ss. 434—441, 442—445.

Չարկն իր «Հայերը Թուրքիայի պետական ծառայության մեջ» վերնագրով գրքում (որը լույս է տեսել Թուրքիայում 1953 թվականին՝ Թուրքերի կողմից Կոստանդնուպոլսի գրավման 500-ամյակի տոնակատարության օրերին), հայ ամիրաների, սարաֆների և Թուրքիայի պետական ասպարեզում բարձր պաշտոններ գրաված հայերի օրինակով, որոնք, ինչ խոսք, անհամեմատ ավելի բարեկեցիկ վիճակում էին գտնվում, փորձում է ընթերցողի մոտ այն տպավորությունն ստեղծել, թե իբր Արևմտյան Հայաստանում բնակվող հայերն ընդհանրապես ապահովված կյանք էին վարում։ Նրա ասելով, հայերը սոցիալ-տնտեսական լավ պայմաններում էին գտնվում, լայն իրավունքներ ունեին և օգտվում էին մի շարք արտոնություններից։ Դրանով իսկ Էսադ Ուրասը, Չարկը և պատմության մյուս կեղծարարները փորձում են ներշնչել այն միտքը, թե հայերի համար անհրաժեշտություն չկար պայքարելու հանուն իրենց վիճակի բարելավման և հայկական վիլայեթներում ռեֆորմների անցկացման։

Ջանալով արդարացնել թուրքական դահիճների գազանությունները, այդ հեղինակները փորձում են հենվել մի այլ կեղծիքի վրա՝ պնդելով, թե իբր հայերի մեծամասնությունը միշտ էլ հավատարիմ է մնացել թուրքական կառավարությանը և որ միայն նրանց մի աննշան մասն է հեռացել «իրենց թուրք հովանավորներին ավանդական նվիրվածությունից»։

Այսպես, Էսադ Ուրասի կարծիքով, «այդ աննշան մասը կազմում էին այն հայերը, որոնք գործում էին ի վնաս Թուրքիայի անկախության։ Նրանք դիմում էին արտաքին միջամտությանը, հրապարակ բերելով ինչ-որ հայկական հարց... Այդ հայերը (կաթողիկոսը, պատրիարքը, վարդապետները և հնչակյան ու դաշնակցական կուսակցությունների ղեկավարները), օգտագործելով հայ ժողովրդի վրա ունեցած իրենց ազդեցությունը, նրա բոլոր դժբախտությունների պատճառը դարձան» [1]։

Ակնհայտ է, որ Էսադ Ուրասն ու Չարկը Թուրքական լծից ազատագրվելու համար հայ ժողովրդի մղած պայքարը վերագրում են Կոստանդնուպոլսի մի խումբ հայ հարուստներին, դաշնակցական ու հնչակյան կոմիտեներին։ Այդպիսով նրանք խեղաթյուրում ու ժխտում են Արևմտահայաստանի աշխատավոր զանգվածների անհաշտ պայքարը Թուրքական արյունոտ տիրապետության դեմ՝ հանուն իրենց ազատագրման։

Ի՞նչ նպատակ են հետապնդում Էսադ Ուրասը, Չարկը և այլ

1 Esat Uras, s. IV.

կեղծարարներ։ Նպատակը պարզ է. ցույց տալ, թե իբր Թուրքիայում չկար և չէր էլ կարող լինել ազգային-ազատագրական որևէ շարժում, որ հայկական հարց գոյություն չուներ, որ հայ ժողովրդի ճնշող մեծամասնությունը «նվիրված» էր Թուրքիային և, վերջապես, որ ազգային-ազատագրական շարժման համար համապատասխան հիմք չկար, քանի որ հայերը Թուրքիայում լայնորեն օգտվում էին բոլոր իրավունքներից և արտոնություններից։ Դա հայ ժողովրդի պատմության Թուրք կեղծարարների ծեծված տեսակետն է, որը պաշտպանում են նաև Հիքմեթ Բայուրը, Շեմսեդդին Գյունալթայը, Զեքի Վելեդի Դողանը, Ֆուադ Քյոփրյուլյուն, Սադրի Մաքսուդի Արսալը և ուրիշներ։

Ո՞ւմ հայտնի չէ Թուրքական սուլթանների ֆեոդալա-բռնապետական, ասիմիլյատորական ռեժիմը, նրանց կողմից սիստեմատիկ կերպով անցկացվող՝ հայերի զանգվածային կոտորածները, որոնց հետևանքով, ի վերջո, հաջողվեց Արևմտյան Հայաստանը «մաքրել» դարեր շարունակ այնտեղ բնակվող միլիոնավոր հայ ազգաբնակչությունից։

Այս բոլորը Թուրք կեղծարարներին չի խանգարում գրելու այն մասին, թե «Թուրքական քաղաքականությունը կենարար քաղաքականություն էր... Թուրքերն ամբողջ մի ազգի նկատմամբ երբեք բռնություն չեն գործադրել»։

Պատմական փաստերի անօրինակ նենգափոխումներից հետո Թուրք պատմաբանները դեռ փորձում են ընդգծել Թուրք բռնակալների «առանձնահատուկ» դերը։ «Աշխարհի բոլոր քաղաքակիրթ մարդիկ,— գրում է պրոֆեսոր Արսալը,— որոնք ընդունում են պատմական ճշմարտությունը, պարտավոր են հարգանքով իրենց գլուխը խոնարհել Թուրքի հոյակապ ու փառահեղ պատմական դերի առջև» [1]։

Հայերի նկատմամբ Թուրքական կառավարող շրջանների չարագործություններն արդարացնելու համար էսադ Ուրասը հարյուրավոր էջեր է հատկացնում դաշնակցական, հնչակյան ու ռամկավար կոմիտեների գործունեությանը։ Ուստի պատահական չէ, որ հեղինակը նենգափոխելով Թուրքական արյունոտ լծի դեմ հայ ժողովրդական զանգվածների մղած երկարատև պայքարի հանրահայտ փաստերը, դրանք կամայականորեն կապում է վերոհիշյալ կոմիտեների գործունեության հետ [2]։

1 Տե՛ս Ikinci Türk Tarih Kongresi, Konferanslar, müzakere zabıtları Ankara, 1943, s. 1062, 1074, 1092.

2 Այդ մասին մանրամասն տե՛ս Ե. Ղ. Սարգսյան, Ա. Խ. Սաֆրաստյան, Պատմության հակագիտական լուսաբանման մի քանի փաստերի մասին։ «Արևելագի-

էսադ Ուրասն այն աստիճան հմտացել է փաստերի կոպիտ աղավաղման մեջ, որ նույնիսկ հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի փառահեղ էջեր կազմող 60—80-ական թվականների ապստամբությունները, որոնց մասին խոսվեց վերևում, վերագրում է հնչակյան և դաշնակցական կոմիտեներին, որոնք, ինչպես հայտնի է, հանդես են եկել ավելի ուշ։

Անհերքելի փաստ է, որ նախքան հնչակյան և դաշնակցական կուսակցությունների հանդես գալը (1887 և 1890 թթ.), XIX դարի 60—80-ական թվականներին արևմտահայերի ազատագրական շարժումը համազգային բնույթ ընդունեց և վերածվեց ազգային-ազատագրական պայքարի։ Այս երևույթն անմիջականորեն առնչվում էր հայ բուրժուական ազգի կազմավորման պրոցեսի հետ, որն իր հերթին հայ ժողովրդի տնտեսական ու քաղաքական կոնսոլիդացիայի հետևանքն էր։

Արևմտահայերի ազգային-ազատագրական շարժման ընթացքում դաշնակցության վարած քաղաքականությունը, ինչ խոսք, բացասական դեր խաղաց։ Այդ կուսակցությունը Թուրքական լծից Արևմտյան Հայաստանի ազատագրումը կապում էր իմպերիալիստական տերությունների «փրկարար» միսիայի հետ, պետություններ, որոնք բազմիցս փորձել են հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարն օգտագործել Օսմանյան կայսրությունում իրենց դիրքերն ամրապնդելու համար։

Դիտակցորեն լռության մատնելով արևմտահայերի ազգային-ազատագրական շարժումը, Թուրք պատմաբանները խոսում են միայն դաշնակների ավանտյուրիստական ելույթների մասին։ Նրանց կարծիքով, եթե դաշնակները չլինեին, Թուրքական կառավարությունը իբր կանցկացներ «հայերին հովանավորելու և նրանց խաղաղ կյանքն ապահովելու» քաղաքականություն։ Մինչդեռ քաջ հայտնի է, որ հնչակյան ու դաշնակցական կուսակցությունների հրապարակ գալուց դեռ շատ առաջ սուլթանական կառավարությունը մշակել էր ողջ արևմտահայության ֆիզիկական ոչնչացման հրեշավոր պլանը՝ նպատակադրվելով վերջ տալ հայերի ազգային-ազատագրական շարժմանը և այդպիսով վերացնել Թուրքական գործերին մեծ տերությունների միջամտության պատրվակները։

Ազգային ու դասակարգային ճնշման և մշտական հալածանքների ծանր պայմաններում ազատագրական շարժումն Արևմտյան Հայաստանում շարունակվում էր և հետագա տարիներին։

տական ժողովածու», I։ Հայկ. ՍՍՌ գիտ. ակադ. հրատարակչություն, Երևան, 1960, էջ 379—392։

Թուրքական բռնակալներին չենթարկվող լեռնային Սասունը 1904 թվականին նորից ապստամբեց։ Սուլթանական կառավարությունը վաղուց երազում էր վերջնականապես հնազանդեցնել Սասունը և այդ նպատակով լայնորեն կիրառում էր ամեն տեսակի ինտրիգների, կաշառելու, լրտեսներ հավաքագրելու, հայտնի գործիչների սպանության և այլ մեթոդներ։ Սասունի հայերին հայտնի էր, որ թուրքական կառավարությունը տակավին 1903 թվականին պատրաստվում էր մեծ ուժեր կենտրոնացնել Սասունում՝ այդ շրջանն ընդմիշտ իրեն ենթարկելու համար։ Այդ նպատակով նա 1904 թվականի հունվարին սկսեց Սասուն փոխադրել զինվորական զորամասեր՝ ամբողջ շրջանը օղակելու համար։ Թուրքական զորքերի թիվը հասնում էր 18 հազարի, մոտավորապես նույնքան էլ ավազակային խմբեր կային, որոնք գործում էին կանոնավոր զորքերի հետ համաձայնեցված։

Մարտի վերջին թուրքական բանակն անցավ հարձակման։ Սասունի և նրա շրջակայքի գյուղացիությունը պատահած զենքը վերցնելով պաշտպանության ելավ։ Մինչև ապրիլի կեսերը սասունցիներն ուժեղ դիմադրություն էին ցույց տալիս՝ թուրքական զորքերին հաճախ փախուստի մատնելով։ Սուլթանը սասունցիներին վերջնագիր ուղարկեց՝ առաջարկելով զենքը վայր դնել ու ենթարկվել, սակայն վերջիններս ծանոթ լինելով Աբդուլ-Համիդի խարդախությանը, մերժեցին այն և շարունակեցին իրենց համառ դիմադրությունը։

Ապրիլի երկրորդ կեսին սասունցիների ռազմամթերքը վերջանալու վրա էր։ Տեղի տալով թշնամու գերազանցող ուժերին, գյուղացիական ջոկատները սկսեցին նահանջել, իրենց ճանապարհին կրակի մատնելով հայրենի գյուղերը՝ ոչինչ չթողնելով վայրագ թշնամուն։ Նահանջի դիմելով, գյուղացիների զինված ջոկատները կանանց, երեխաների և ծերունիների հետ միասին բարձրացան Երկարթ Փըշփուշ լեռը և սասունցիների գլխավոր պաշտպանական կետ հանդիսացող Գելիեգուզանը։ Թուրքական զորքերը շրջապատեցին Գելիեգուզանը, ապրիլի 19-ի լուսաբացին անցան հարձակման։ Սասունցիների ռազմամթերքը և պարենը սպառվել էին, հետագա դիմադրությունն անօգուտ էր։ Թողնելով իրենց օջախները, Սասունի 45 գյուղերից մոտ 20 հազար մարդ կիսաքաղց ու կիսամերկ վիճակում երկար ժամանակ թափառում էին Սասնա սարերում, որտեղ առանձին զինված խմբեր մինչև վերջին մարդը շարունակում էին իրենց պայքարը թշնամու դեմ։

1904 թվականի օգոստոսի 11-ին (հին տոմարով հուլիսի 29-ին) Շամիրամում թվով 300 թուրքական զինվորների հետ մարտ բռնվեցին 70 սասունցիներ՝ զգալի կորուստներ պատճառելով նրանց։ Անհավասար մարտեր տեղի ունեցան նաև Սասունի այլ վայրերում։

Գրավելով Սասունը, թուրքական հրոսակախմբերը հողին հավասարեցրին 42 հայկական գյուղեր՝ ոչնչացնելով 7 հազար մարդ։ Սուլթանական կառավարության գազանությունները, սակայն, չընկճեցին սասունցիների ազատաշունչ ոգին։ Սասունը շարունակում էր պայքարել։

Ազգային-ազատագրական շարժումն Արևմտյան Հայաստանում առանձնապես ուժեղացավ 1905—1907 թվականների ռուսական առաջին հեղափոխության տարիներին։

Ռուսական հեղափոխության ազդեցության ներքո մի շարք ապստամբություններ տեղի ունեցան Արևմտյան Հայաստանում ու Անատոլիայում։ Արևմտյան Հայաստանի՝ Անդրկովկասին սահմանակից շրջաններում Ռուսաստանի հեղափոխական շարժման ազդեցության մասին Ստամբուլում ցարական կառավարության դեսպան Զինովևը 1907 թվականի մայիսի 11-ին հաղորդում էր հետևյալը.

«Կովկասում ծագած ռևոլյուցիոն շարժումը,— գրում էր նա,— անցյալ տարի խոշոր ազդեցություն ունեցավ Կարինի վիլայեթում, որտեղ բնակչության տարբեր խավերից կազմվել էր «Ջան-վերիր» անունով մի կոմիտե, որն անմիջապես պայքարի ելավ տեղական իշխանությունների ու Օսմանյան կառավարության դեմ՝ նրանց չարաշահումներին վերջ դնելու և բնակչությանը քայքայող ծանր հարկերը վերացնելու նպատակով։ Բնակչության մեծամասնությունը հավաքվել էր այդ կոմիտեի շուրջը և վերջինիս պրոպագանդան թափանցում էր նույնիսկ թուրքական բանակի շարքերը»[1]։

Զինովևի կողմից բերված փաստերը վերաբերում են 1906 թվականի Կարինի ապստամբությանը, որի ժամանակ տեղի ունեցավ թուրք և հայ ազգաբնակչության համատեղ ելույթ։ Ապստամբները գրավեցին հեռագրատունը և հեռագրով սուլթանից պահանջեցին վերացնել 1906 թվականի սկզբին կառավարության կողմից մտցված նոր «անձնական հարկը» («շախսի վերգի»), նվազեցնել մյուս հարկերը և պաշտոնից ազատել Կարինի նահանգապետ Նազիմ-փաշային։ Երկյուղելով ապստամբության հետագա ծավալումից, սուլթանը ստիպված էր հեռացնել Նազիմ-փաշային և ժամանակավորապես դադարեցնել «անձնական հարկի» գանձումը չքավոր բնակչությունից։

[1] АВПР, ф. «Политархив», д. 1025, л. 235.

Կարինի Վիլայեթում 1905—1906 թվականներին ձեռնարկված միջոցառումների հետևանքով (Կարինի բերդի ամրացումը և նորոգումը, Հասան ղալայից մինչև Քյոթեկ՝ ռուսական սահմանը խճուղու կառուցումը) հիշյալ վիլայեթի ֆինանսական դրությունը բավականին ծանրացավ։ Դեֆիցիտը 1905 թվականի հոկտեմբերին հասավ 860 հազար ռուբլու։ Քաղաքացիական ու զինվորական պաշտոնյաների աշխատավարձն ապահովելու նպատակով սուլթան Աբդուլ-Համիդի հրամանով բաց թողնվեց 500 հազար ռուբլի՝ Կարինի, Տրապիզոնի, Սըվազի, Դիարբեքիրի և Խարբերդի վիլայեթների դրամարկղային պակասորդը լրացնելու համար։ Բացի դրանից, վիլայեթներին էր հատկացվում պետական գանձարանը մուծվելու ենթակա նախորդ տարիների ապառքի 20 տոկոսը, «անձնական հարկից» և առևտրական տարբեր գործերից ստացվող եկամուտները։

«Մշտական ֆինանսական դժվարությունների և ռազմական առանձին բյուջեի բացակայության հետևանքով,— ասված է հաղորդումներից մեկում,— թուրքական բանակի զորամասերը ամբողջ ամիսներ իրենց հասանելիք գումարը չեն ստանում։ Այդ պատճառով զինվորների մեջ տարածված է ավազակությունը, կողոպուտը՝և, ընդհանրապես, կարգապահությունը ընկած է... Դա երևում է, օրինակ, այն բանից, որ սուվարիների (հեծյալ) 19-րդ գունդը մինչև 1905 թվականի հոկտեմբերը, շուրջ 16 ամիս, ռոճիկ չի ստացել... Թուրքական զինվորական ղեկավարությունը հաշտվել է այդպիսի վիճակի հետ և ստիպված է մատների արանքից նայել զինվորների մարդայորությանը» [1]։

Նման ելույթներ տեղի ունեցան Կաստամոնուի, Տրապիզոնի, Բիթլիսի, Վանի, Սամսունի և այլ վիլայեթներում։

Կաստամոնուի իրադարձությունների մասին «Մշակ» թերթի Կահիրեի թղթակիցը հաղորդում էր, որ Կաստամոնուի նահանգապետ Էնիս-փաշան 1906 թվականի մարտի սկզբին կարգադրեց մունիցիպալ ընտրություններ անցկացնել։ Քաղաքի և նրա շրջակայքի բնակչությունը՝ թուրքերը, հայերը և հույները այդ ընտրությունները բոյկոտի ենթարկեցին այն հիման վրա, որ մունիցիպալիտետի անդամները իրավունք չունեին միջամտելու վիլայեթի ներքին ու ֆինանսական գործերին, քանի որ նրանք առաջ զբաղված էին նահանգապետի չարաշահումների ու նկրտումների պաշտպանությամբ, մանավանդ որ վերջինիս գործունեությունը ոչ մի վերահսկողության չէր ենթարկվում։ Ուստի, ցուցարարների կարծիքով,

1 ЦГВИА, ф. 450, д. 142, л. 126.

նման պայմաններում անցկացվող ընտրությունները կնմանվեին կոմեդիայի։ Ընտրությունների օրը ցուցարարները շրջապատեցին քաղաքի զինվորական պետի տունը։ Ցուցարարների պատվիրակությանը հաջողվեց ընդունվել նրա կողմից և բացատրել մունիցիպալ ընտրությունները բոյկոտելու պատճառները։ Օգտվելով այդ առիթից, պատվիրակությունը միաժամանակ բողոք հայտնեց «անձնական հարկի» գանձման դեմ, որն իբր հատկացվում էր ռազմական ծախսերի համար։ Պատվիրակությունը բողոքում էր նաև այն բանի համար, որ նշված հարկը, չգիտես ինչու, վճարում են միայն չքավորները, մինչդեռ հարուստները և հոգևոր հիմնարկները լրիվ ազատված են դրանից։ Ապստամբները կտրուկ բողոք հայտնեցին նահանգապետի չարաշահումների դեմ, որ նա յուրացրել էր քաղաքի եկամտի զգալի մասը և զինվորական պետին ստիպեցին բոլոր ապստամբների անունից հեռագրով տեղեկացնել սուլթանին իրենց պահանջների մասին։ Զինվորական պետը սուլթանին հաղորդեց նաև այն մասին, որ շարժումը բավականին լուրջ բնույթ է ընդունում, իսկ ավելի վտանգավոր է այն, որ «մահմեդականների հետ մեկտեղ այդ շարժմանը մասնակցում են նաև հայերը և հույները» (ընդգծումը մերն է — Ն. Ս.)։

Սուլթանից պատասխան չստանալով, ապստամբները գրավեցին փոստի շենքը և անձամբ հեռագրով հաղորդեցին սուլթանին իրենց պահանջների մասին։ Վախենալով հետագա բարդություններից, սուլթանը մասամբ բավարարեց ապստամբների պահանջը [1]։

Կարինի ու Կաստամոնուի բնակիչների օրինակով ապստամբեցին նաև տրապիզոնցիները, որոնք քշեցին ատելի նահանգապետ Իբրահիմ-փաշային։ Տրապիզոնցիների ելույթի առթիվ ողջունելով ապստամբներին, Բաքվի «Դրոշակ» թերթը գրում էր. «Առանց արյան, առանց ռևոլյուցիոն ելույթների հնարավոր չէ ազատություն ձեռք բերել» [2]։

Կարինի ապստամբությունը նոր ուժով բռնկվեց 1906 թվականի հոկտեմբերին։ Կարինում Ռուսաստանի գլխավոր հյուպատոս Սկրյաբինը այդ մասին հաղորդում էր հետևյալը. «Կարինում հոկտեմբեր ամսին տեղի ունեցած անկարգությունները, որոնք ուղեկցվեցին նահանգապետին գերելով և ոստիկանական կոմիսարների սպանությամբ, խռովարարների համար բոլորովին անպատիժ

1 Տե՛ս Х. М. Цовикян, Влияние русской революции 1905 г. на революционное движение в Турции. «Советское востоковедение», т. III 1945, стр. 30.

2 Նույն տեղում, էջ 31։

անցան այն պատճառով, որ ո՛չ նահանգապետը, և ո՛չ էլ զորքերի հրամանատարը այդ գործը քննելու ուղղությամբ միջոցներ ձեռք չառան։

Իշխանությունների անգործունեությունից ոգևորված մահմեդական կոմիտեն հունվարի սկզբին դիմեց զորքին ու ժողովրդին՝ կոչ անելով, ոտքի կանգնել հայրենիքի ու հավատի պաշտպանության համար։ Մի քանի շաբաթ անց նույն կոմիտեն հանդես եկավ նոր, ավելի համարձակ դիմումով, որտեղ նա կոչ էր անում բոլոր ջանքերը գործադրել Թուրքիայում միապետական կարգերը տապալելու և սահմանադրական ռեժիմ հաստատելու համար։

Միևնույն ժամանակ կոմիտեն ակտիվ կերպով զբաղվեց մահմեդականներին՝ ինչպես տղամարդկանց, այնպես էլ հիշյալ շարժմանը աշխույժ մասնակցություն ունեցած կանանց զինելու գործով» [1]։

1906 թվականի հոկտեմբերի ապստամբության ժամանակ, ինչպես նույն թվականի մարտին, թուրքերի հետ համատեղ հանդես եկան հայերը և հույները։ Երիտթուրքական կոմիտեն ամեն կերպ ձգտում էր հայերին ու այլ ազգություններին հեռու պահել թուրքերի շարժումից, սակայն նրան այդպես էլ չհաջողվեց խանգարել այդ ժողովուրդների համատեղ պայքարը։

Սուլթանական կառավարությունը բոլոր միջոցները ձեռք առավ ապստամբությունը ճնշելու համար [2]։

Ապստամբների դեմ դուրս բերված զորքերը, չնայած հրամանատարի բազմիցս կարգադրություններին, հրաժարվեցին կրակել նրանց վրա, հայտարարելով, որ իրենք «պատրաստ են կյանքի գնով պաշտպանելու հայրենիքը, բայց իրենց եղբայրների վրա չեն կարող զենք բարձրացնել» [3]։

Համոզվելով, որ զինվորները հանդես են գալիս ապստամբների կողմում, սուլթանական կառավարությունը որոշեց թուրք ժողովրդական զանգվածների ուշադրությունը շեղել հեղափոխական ելույթներից՝ նրանց, ինչպես և քրդերին գրգռելով հայերի դեմ։ Ի վիճակի չլինելով ճնշել ապստամբությունը, կառավարական շրջանները լուրեր տարածեցին, թե իբր արևելյան վիլայեթներում ծագած խռովություններում մեղավոր են հայերը, որոնք ցանկանում են անջատվել Թուրքիայից։ «Հեղափոխական դիտավորությունների համար հայերի դեմ հարուցված մեղադրանքը,— հաղորդում էր Ստամբուլից ռուսական դեսպան Զինովևը, 1907 թվականի մայիսի 11-ին իր հեռագրում,— հորինված է Կարինի ներկա նահանգապետ Նուրի-բեյի կողմից բացառապես այն հաշվով, որպեսզի մահմեդականների մեջ ծագած խռովությունների ողջ պատասխանատվությունը տեղական իշխանությունների վրայից վերցնելով բարդի հայերի վրա» [1]։

Ապստամբության պատճառները քննելու նպատակով Կոստանդնուպոլսից Կարին ժամանած կառավարական հանձնաժողովը «փորձեց դրանք վերագրել տեղի հայերի ինտրիգներին, սակայն այդ նրան չհաջողվեց, քանի որ հանձնաժողովի կողմից առանձին հարցաքննված բոլոր մահմեդականները միաբերան հայտարարեցին, որ իրենք գործել են միանգամայն ինքնուրույն՝ ղեկավարվելով բացառապես իրենց ճնշված հավատակիցներին պաշտպանելու անհրաժեշտության գիտակցությամբ»։ Հեռագրում այնուհետև ասվում էր, որ 1906 թվականի հոկտեմբերին Կոստանդնուպոլսից հրաման էր ստացվել ձերբակալել և Կարինից վտարել, որպես շարժման նախաձեռնողների, մուֆտիին և մահմեդական կոմիտեի հինգ անդամներին։ Այդ կարգադրությունը քաղաքում մեծ անկարգություններ առաջ բերեց։ Ապստամբները սպանեցին ոստիկանապետին, հոշոտեցին նրա որդուն և ոստիկանական կոմիսար Գանի-բեյին։ Զորքերը հրաժարվեցին դուրս գալ ապստամբների դեմ։ Կոմիտեն դիմեց ինչպես զորքերին, այնպես էլ ժողովրդին՝ բռնապետության դեմ պայքարելու կոչով, որն ամենուրեք համակրանքով ընդունվեց։

Համոզվելով, որ անհնարին է կասեցնել ժողովրդական շարժումը, սուլթանը ստիպված էր փետրվար ամսին վերացնել «անձնական հարկը և խոշոր եղջերավոր անասունների դիմաց գանձվող հարկը, որոնց դեմ բնակչությունը վաղուց էր բողոքում»։ Այդ միջոցառումը հանգստացրեց բնակչությանը, սակայն նահանգապետ Նուրի-բեյի բոլոր ջանքերը՝ մահմեդականներին համոզելու՝ իրենց երախտագիտությունը հայտնելու սուլթանին, ապարդյուն անցան։ Այդ ժամանակ, Կոստանդնուպոլսից ստացված հրահանգի համաձայն, Կարինի իշխանությունները «որոշեցին դիմել իրենց կողմից արդեն բազմիցս կիրառված միջոցին, այն է՝ մահմեդականներին գրգռելով հայերի դեմ, վերջիններիս վրա բարդել հեղափոխական ելույթներին մասնակցելու մեղքը» [2]։

Սուլթանական կառավարությանը, այնուամենայնիվ, չհաջող-

---

1 АВПР, ф. «Политархив», д. 1025, л. 231.

2 Կարինի ապստամբության մասին մանրամասն տե՛ս «Երկրի ձայնը» ամսագրի 1906 թվականի համարները։

3 Մեջ է բերվում ըստ «Советское востоковедение», т. III, 1945, стр. 32.

1 АВПР, ф. «Политархив», д. 1025, л. 237.

2 Նույն տեղում, թ. 235։

վեց հասնել իր նպատակին, քանի որ թուրք և քուրդ ազգաբնակչությունը չենթարկվեց նրա պրովոկացիաներին։

Սուլթանական կարգերի դեմ ուղղված ելույթներ տեղի ունեցան նաև Բաղեշում, որտեղ ապստամբությանը մասնակցեց մոտ 5 հազար մարդ. նրանք նահանգապետ Ֆերիդ-փաշայից պահանջեցին հեռանալ վիլայեթից [1]։ Ընդհարման ժամանակ գլխից վիրավորված նահանգապետը թաքնվեց հովտում։ Ամբոխը սպանեց ոստիկանական կոմիսարին և հեռախոսով կապվելով սուլթանի հետ, պահանջեց պաշտոնից հեռացնել Ֆերիդ-փաշային։ Սուլթանը ստիպված էր ընդունել ապստամբների այդ պահանջը։ Նոր նահանգապետ նշանակվեց Ջելալ-փաշան [2]։ Սակայն ապստամբությունը շարունակվում էր։ Ապստամբները գրավեցին հեռագրատունն ու փոստի գրասենյակը։ Նրանց ձեռքն ընկան կենտրոնից ուղարկված հեռագրերը և կառավարական տարբեր կարգադրություններ։ Բաղեշի գլխավոր հյուպատոսի հեռագրում ասված էր. «Սուլուկով գյուղում սպանել են բինբաշուն, սպանված և վիրավորված է 105 զինվոր։ Անիշխանությունը Բաղեշում շարունակվում է» [3]։

Հայ և քուրդ գյուղացիները թուրք և քուրդ կեղեքիչների դեմ հաճախ հանդես էին գալիս միասին։ Նրանց համատեղ պայքարի մասին են վկայում բազմաթիվ արխիվային փաստաթղթեր։ Այսպես, մի փաստաթղթում ասվում է այն մասին, որ 1907 թվին հայ գյուղացիները 48 ժամ անընդհատ պայքարելով Վանի նահանգի Շատախի շրջանի Տզիտզուտ գյուղի մոտ մեծ թվով անասուններ փախցրած քուրդ ավազակների դեմ, ետ խլեցին անասունները ու վերադարձրին նրանց տերերին՝ քուրդ գյուղացիներին [4]։

Այսպիսով, վերը բերված բոլոր փաստերը վկայում են այն մասին, որ տակավին 1905 թվականի ռուսական հեղափոխությունից առաջ սկսված թուրք և ոչ-թուրք ժողովուրդների, հատկապես հայերի ,պայքարը սուլթանական բռնապետության դեմ ռուսական առաջին հեղափոխության ազդեցության տակ ծավալվեց նոր ուժով։

***

Թուրքական ֆեոդալա-բռնակալական տիրապետության դեմ բիչ չեն ապստամբել նաև արաբական երկրների ժողովուրդները։

[1] АВПР, «Политархив», д. 1026, л. 69—70.

[2] Նույն տեղում, թ. 81—83, Բաղեշի ռուսական հյուպատոսի 10/23 հունիսի 1907 թ. ճեպագիրը։

[3] Նույն տեղում, թ. 82—83։

[4] Տե՛ս ЦГВИА, ф. 200, оп. 1, д. 991, л. 557

Արաբների ազգային-ազատագրական պայքարի առաջին ծիլերը երևան եկան տակավին XIX դարի կեսերին, իսկ 1857 թվականին արդեն կազմակերպվել էր, այսպես կոչված, «Սիրիայի գիտական ընկերությունը»։ Այդ ընկերության մեջ էին մտնում արաբական ազգաբնակչության գրեթե բոլոր խավերի ներկայացուցիչները։ Նա իր առաջ խնդիր էր դրել արաբական երկրներն ազատագրել թուրքական ծանր լծից։ Ընկերության գաղտնի ժողովներից մեկում որոշում էր ընդունվել արաբական ժողովրդական զանգվածներին կոչ անել պայքար ծավալելու սուլթանական արյունոտ տիրապետության դեմ։

1857—1860 թվականներին Լիբանանում ծավալված գյուղացիական խոշոր շարժման ժամանակ հիշյալ ընկերությունը մեծ աշխատանք էր տանում արաբ ապստամբ գյուղացիների մեջ։

Հետագա տարիներին պայքարը թուրքական տիրապետության դեմ արաբական երկրներում է՛լ ավելի է ծավալվում։ Սկսեցին լույս տեսնել արաբերեն լեզվով թերթեր, հիմնվեցին դպրոցներ, որտեղ պրոպագանդվում էին ազգային գաղափարներ և ատելություն՝ դեպի թուրք կեղեքիչները։ Այդ բոլորի հետևանքով զգալիորեն աճեց արաբների մեջ արթնացած ազգային ինքնագիտակցությունը։

Արաբական երկրներում շրջագայած եվրոպական ճանապարհորդները խոսում են թուրք հարստահարողների նկատմամբ արաբ ժողովուրդների տածած ատելության մասին։ Այսպես, ֆրանսիացի ճանապարհորդներից մեկը , խոսելով թուրքական իշխանությունների հանդեպ արաբական երկրներում ծայր առած դժգոհության ու ատելության մասին, մատնանշում է, որ «ամենուրեք նա հանդիպել է այդ նույն համընդհանուր ատելությանը նրանց նկատմամբ։ Բոլորի կողմից ատելի այդ թուրքական լուծը տապալելու համար արաբները համակել է համատեղ պայքարի անհրաժեշտությունը» [1]։

1875 թվականին Բեյրութում կազմակերպվեց արաբական գաղտնի ընկերություն, որի մեջ մտան սոցիալական տարբեր խմբերի ու դավանանքի պատկանող արաբ մտավորականության ներկայացուցիչները։ Այդ ընկերությունն իր մասնաճյուղերն ուներ Դամասկոսում, Տրիպոլիում, Սայդոնում և այլ տեղերում։ Ընկերությունը գործում էր խոր ընդհատակում։ Գաղտնի ընկերության գործունեությունն այնպիսի լայն չափեր ընդունեց, որ սուլթանական կառավարությունը լրջորեն անհանգստացավ և նրա դեմ ամենադաժան միջոցներ ձեռնարկեց։ Արաբական ընկերության գործիչ-

[1] Denis de Rivoyer, Les vrais Arabes et leur pays. Paris, p. 494—495.

ների մեծ մասը ձերբակալվեց Աբդուլ Համիդի կառավարության կողմից և աքսորվեց կայսրության սահմաններից դուրս։

Հետագա տարիներին արաբների ազատագրական շարժումն ավելի ուժեղացավ։ Այդ մասին են վկայում ռուսական հյուպատոսների ու զինվորական գործակալների բազմաթիվ հաղորդումները, ինչպես նաև Կոստանդնուպոլսի ռուսական դեսպանի զեկուցագրերը։ Այսպես, օրինակ, Բաղդադի ռուսական հյուպատոս Ռ. Կրուգլովը 1900 թվականի դեկտեմբերի 10-ին Կոստանդնուպոլսում ռուսական դեսպան Ռ. Զինովևին ուղարկած իր զեկուցում գրում էր, որ անկարգությունները Բասրայի վիլայեթում «իրենց վիթխարությամբ և, առանձնապես, նշանակությամբ, սովորական երևույթների շարքը չի կարելի դասել։ Թուրքական կառավարությունն անհանգստացած է այդ նոր երևույթից, այդպիսի մեծ, նշանավոր խմբում արաբական ցեղերի միավորվելու փորձը կատաղեցնում է նրան» [1]։

Նույն հյուպատոսը մի այլ զեկուցագրում հաղորդում էր, որ Բասրայի վիլայեթի գրեթե ամբողջ հարավային մասը՝ Խայլեից մինչև Ռիազա, միայն ձևականորեն է գտնվում թուրքական սուլթանի տիրապետության տակ, իսկ իրականում բոլոր ցեղերն այնտեղ օգտվում են համարյա լիակատար ազատությամբ։ «Թուրքական ողջ կայազորի ոչնչացումը Էլ-Կատրիում... իրադարձությունները Կուվեյտում և Էլ-Խասայում, պարբերաբար կրկնվող անկարգությունները հաստատում են ասվածը... Եփրատից վերև, Բասրայի վիլայեթից դեպի հյուսիս՝ աֆեջ, դաղարա և խազիլ անունով ցեղերը երբեք առանց կանոնավոր զորքերի միջամտության, կամավոր կերպով տուրքեր չեն վճարել» [2]։

Թուրքական լծի դեմ հաճախ էին ապստամբում նաև Եմենի, Կուվեյտի, Իրաքի, Նեջդի և Հեջազի արաբները։ 1900 թվականին թուրքական զորքերը լուրջ պարտություն կրեցին Եմենի արաբներից։ Եմենի վիլայեթի գլխավոր քաղաք Սանան, որտեղ տեղավորված էր թուրքական կայազորը, գրավվեց ապստամբ արաբների կողմից։ Սուլթանական կառավարությունը ռազմական արշավախումբ ուղարկեց Եմեն, սակայն նրան այդպես էլ չհաջողվեց կոտրել եմենցիների դիմադրությունը, որոնք շարունակեցին իրենց պայքարը նաև հետագա տարիներին։ «Իմ զեկուցագրերից հայտնի է,— գրում էր Զինովևը ցարական արտաքին գործերի մինիստր Լամզդորֆին,— որ արդեն մի քանի տարի առաջ, արաբական ցեղերով բնակեցված Եմենում խռովություններ ծագեցին, որոնց պատճառը արաբների դժգոհությունն էր տեղի թուրքական իշխանությունների գործողություններից։ Այդ խռովություններն աստիճանաբար բարդանում էին և անցած տարի (1902 թ.—Ն. Ս.) բավականին տագնապալից չափեր ընդունեցին... Եմենը բռնկված է ապստամբությամբ։ Արաբների մեծամասնությունը զինված է, հաղորդակցության ճանապարհները կտրված են... թուրքերը դրության տերն են միայն քաղաքներում ու ամրոցներում, սակայն քաղաքի բնակչությունը ևս ծայր աստիճան լարված է Օսմանյան կառավարության դեմ» [1]։ Այնուհետև ասվում էր, որ այլ վայրերից Եմեն ուղարկված զորքերը էական օգուտ չբերեցին, և դրությունը Եմենում օրեցօր վատթարանում է։

Եմենի ապստամբության ժամանակ սուլթանական կառավարությունը ստիպված էր արշավախումբ ուղարկել նաև Կենտրոնական Արաբիա, սակայն խռովարարներին հնազանդեցնելու նպատակով Բաղդադի նահանգից ուղարկված թուրքական ջոկատը պարտություն կրեց։

Բավականին խախուտ էր թուրքական իշխանությունների դիրքը նաև Կուվեյտում։ Բասրայի ռուսական հյուպատոսի 1901 թվականի մայիսի 27-ի զեկույցից երևում է, որ Կուվեյտին հպատակեցնելու համար թուրքական կառավարությունը դիմում էր ամեն տեսակի միջոցների՝ սկսած կաշառքից և վերջացրած ռազմական արշավանքով [2]։

Կուվեյտի արաբների շարժումը ճնշելու նպատակով սուլթանական կառավարության ձեռնարկած բազմապիսի միջոցառումները, սակայն, ապարդյուն անցան։ «Ներկայումս,— կարդում ենք Բաղդադի ռուսական հյուպատոս Վ. Մեշկովի 1904 թվականի սեպտեմբերի 7-ի զեկուցագրում,— Կուվեյտի շեյխ Մուբարեք Սաբախը թուրքական կառավարությունից անկախ է։ Դրան զուգահեռ, Նեջդում խոշոր իրադարձություններ են տեղի ունենում, որոնք սպառնում են խախտել թուրքերի դրությունն Արաբիայում» [3]։

Եմենի ու Կուվեյտի օրինակով ապստամբեցին նաև արաբական մյուս ցեղերը։ Այսպես, մունթեֆիկների անհանգիստ ու զորեղ ցեղի շեյխ Սուադուն-փաշան, իր իշխանությունը տարածելով ամբողջ ներքին Միջագետքի վրա, ձգտում էր անջատվել Թուրքիայից [4]։

---

1 АВПР, ф. «Посольство в Константинополе», 1900, д. 1244, л. 264—267.

Նույն տեղում, գ. 354, թ. 128—129։

1 АВПР, ф. «Канцелярия», 1903, д. 25, л. 292—297.

2 АВПР, ф. «Посольство в Константинополе», д. 1245, л. 166—184.

3 Նույն տեղում, գ. 1248, թ. 55—56.

4 Տե՛ս նույն տեղում, ф. «Политархив», д. 357, л. 26—27.

Արաբների դեմ ուղարկված թուրքական զորքերը ապահովված չէին սննդամթերքներով ու ռազմական հանդերձանքով, նրանց մարտունակությունը խիստ ցածր էր։ Արաբիա ուղարկված զորքերի մշտական պարտությունները բարոյապես ընկճել էին զինվորներին, և նրանք հաճախ դիմում էին դասալքության։

Թուրքիայում զինվորական գործակալի զեկուցագրում՝ Միջագետքում գտնվող 4-րդ կորպուսի վիճակի մասին, ասված էր, որ, իրավասու անձանց կարծիքով, թուրքական զորքերը շատ վատ վիճակում են գտնվում. «Ամենուրեք նկատվում է լրիվ բարոյալքում. արշավանքի տխուր վախճանում համոզված զինվորները պատրաստվում են զանգվածներով դասալքել, իսկ սպաները հրաժարական են տալիս։ Արշավանքի համար անհրաժեշտ զորք հավաքելը գրեթե անհնարին է դարձել։ Ձիեր քիչ կան, իսկ այն արաբները, որոնցից կարելի էր բեռնակիր ուղտեր ու ձիեր վերցնել, հեռացել են անապատ։ Արշավախմբի ծախսերի համար անհրաժեշտ միջոցները վիլայեթում միանգամայն անբավարար են։ Վերջապես, անապատի միջով 25 օրյա արշավանքն, ինքնին, կապված է հսկայական դժվարությունների ու զրկանքների հետ»[1]։

«Արաբները հիանալի գիտեին այդ մասին և այժմ տեսնում ենք, որ նրանց շեյխերը Միջագետքում ու Արաբիայում ձգտում են դուրս պրծնել թուրքական ռեժիմի տակից»[2]։

Նույն Մեշկովը արաբական քոչվոր ցեղերի մասին հաղորդում էր, որ «նրանց ենթարկումը Կոստանդնուպոլսին երբեք լրիվ չի եղել»[3]։

1905—1907 թվականներին ռուսական հեղափոխության անմիջական ազդեցության տակ արաբների ազգային-ազատագրական շարժումը նոր թափ ստացավ։ Այդ մասին Զինովևի 1906 թվականի ապրիլի 13-ի հեռագրում ասված էր հետևյալը. «Պարսկական հյուպատոսի հեռագիրը Բասրայից վկայում է այն մասին, որ հուզումներն արաբական ցեղերի մեջ հասել են ծայրահեղ չափերի»[4]։ Արաբ ժողովրդի ապստամբությունն ընդգրկել էր ամբողջ Արաբական թերակղզին, Միջագետքը, Սիրիան և այլ երկրներ։ Արաբների պայքարն այնպիսի հզոր բնույթ էր ընդունել, որ Զինովևն իր 1906 թվականի մայիսի 24-ի հեռագրում երկյուղածությամբ նշում էր, որ պայքարն արաբների ու թուրքերի միջև «կարող է ունենալ շատ

1 ЦГВИА, ф. 444, д. 23, л. 7—12.
2 АВПР, ф. «Посольство в Константинополе», д. 1248, л. 55—56
3 Նույն տեղում։
4 Նույն տեղում, ф. «Политархив», д. 1024, л. 188.

ցավալի հետևանքներ Թուրքիայի վիճակի համար Ասիայում»[1]։ Նույն հեռագրում Զինովևը տեղեկացնում էր, որ Բասրայի վիլայեթում թուրքական բանակի հրամանատար Սուլեյման-փաշան հաղորդել էր սուլթանական կառավարությանը, որ իր հրամանատարության տակ գտնվող ուժերով ինքը ի վիճակի չէ ոչինչ ձեռնարկել «խռովարար» արաբների դեմ, որ սկսում են դավաճանել նույնիսկ այն ցեղերը, որոնց հավատարմության վրա էին դրել իրենց հույսը թուրքական իշխանությունները և որ երկրամասում կարգ ու կանոնը վերականգնելու համար անհրաժեշտ է ուղարկել առնվազն երեք գունդ։

Բացի Բաղդադի ու Բասրայի վիլայեթներից, արաբական ապստամբություններն ընդգրկել էին նաև արաբական թերակղզու կենտրոնում ընկած մարզերը։ «Թուրքական բանակն ի վիճակի չէ խռովությունը ճնշելու»[2]։

Թուրքական տիրապետության դեմ մղվող պայքարը Բասրայի վիլայեթում տևեց մի քանի տարի։ Այդ պայքարն օգտագործեց Անգլիան՝ Օսմանյան կայսրությունից արաբական նահանգներն անջատելու և այնտեղ իր գերիշխանությունը հաստատելու նպատակով։ Թուրքական իշխանությունների անհաջողությունների պատճառը Զինովևը բացատրում էր նրանով, որ ապստամբած արաբների թիկունքին կանգնած էր Անգլիան[3]։

Ավելի հուժկու էր ապստամբությունը Եմենում, որտեղ տակավին 1905—1906 թվականների ապստամբությունից առաջ արաբները բազմիցս ոտքի են ելել թուրքական բռնակալության դեմ։ Եմենի ապստամբությունը, ինչպես նշվեց վերևում, սկսվեց անցյալ դարի 90-ական թվականներին։ Ապստամբների գլուխն անցավ շեյխ Մուհամմեդ Յահյա իբն-Համիդը, որի շուրջ համախմբվեցին թուրքական կարգերից դժգոհ բոլոր տարրերը։ Ամբողջ վիլայեթով մեկ ծավալված ապստամբությունները տեղական բնակչության մեջ համընդհանուր ոգևորություն առաջ բերեցին, որը շեյխին հնարավորություն տվեց զգալի ուժեր համախմբել և անցնել հարձակման։ Արդեն 1904 թվականի վերջին արաբների ապստամբությունը տարածվեց-հասավ մինչև Սանա՝ Եմենի գլխավոր քաղաքը, իսկ 1905 թվականի մարտին այն ընդգրկեց նաև հարավում ընկած Անես ու Յարիմ կազաները և Թաիզի սանջակը։ Վախենալով ընդմիշտ կորցնել Եմենը, սուլթանական կառավարությունն այնտեղ

1 АВПР, ф. «Политархив», л. 219—220.
2 Նույն տեղում։
3 Նույն տեղում։

ուղարկեց 5-րդ կորպուսի չորս բրիգադները և երեք մարտկոց։ Մեծ կորուստներ կրելով, թուրքական զորքերը 1906 թվականի մարտի 31-ին գրավեցին Սանան, սակայն ապրիլին ապստամբները քաղաքը նորից ազատագրեցին թուրքական զորքերից։ Օգոստոսի 19-ին թուրքական բանակին հաջողվեց կրկին գրավել Սանա քաղաքը, սակայն այս անգամ էլ նրա հաջողությունն անցողիկ էր։

Հոկտեմբերին Ահմեդ Ֆեյզի-փաշայի զորքերը շրջապատվեցին ապստամբների կողմից և վախենալով կտրվել ծովից, ստիպված եղան թողնել Սանան, որը նորից անցավ ապստամբների ձեռքը։ Մինչև հոկտեմբերի վերջը, քաղաքը ետ գրավելու թուրքական գլխավոր հրամանատարի բոլոր փորձերը հաջողություն չունեցան։

Կոստանդնուպոլսի զինվորական գործակալը, հենվելով հավաստի աղբյուրների վրա, հաղորդում էր, որ Եմենի ռազմական արշավանքի հետևանքով մինչև 1906 թվականի նոյեմբերը Թուրքիան տվեց մոտ 80 հազար զոհ [1]։

Սանայի անկումն ազդանշան ծառայեց ապստամբության տարածման համար Եմենին հարավից սահմանակից Ասիրի մարզում։ Ապստամբներն արագ կերպով գրավեցին Ասիրի վարչական կենտրոն Աբխա քաղաքը և նրանից հարավ ընկած Ջեբել-Հեջազը՝ այնտեղից քշելով նահանգապետին, որն իր կայազորի մնացորդների հետ ապաստան գտավ ծովափնյա Կունֆուդա քաղաքում։

Այսպիսով, ապստամբ արաբների ձեռքն անցավ մի տերիտորիա, որը ձգվում էր հարավից՝ Ադենից (ապստամբների գլխավոր հենակետը) մինչև Հեջազ կայարանը՝ հյուսիսում, իսկ արևելքում անապատն էր, որը երբեք էլ չէր ճանաչել թուրքական տիրապետությունը։ Թուրքերի իշխանության տակ էր մնում միայն մի նեղ առափնյա գոտի՝ Խոդեյդայից դեպի երկրի խորքը գնացող կիսաճանապարհից մինչև Միշախ քաղաքը (որը նույնպես գրավված էր ապստամբների կողմից), իսկ դեպի հյուսիս՝ մինչև Կունֆուդան [2]։

«Եմենի բոլոր արաբական ցեղերը,— գրում էր իր հեռագրում Զինովևը,— սկսած Ասիրի հարավային սահմանից մինչև Թաիզի սանջակի հյուսիսային սահմանները, ապստամբել են»։ Խոսելով այդ ապստամբության մասին, Զինովևը ցարական արքունիքին տեղյակ էր պահում այն մասին, որ «իրադարձությունները Եմենում վերջին շրջանում ընդունեցին Թուրքիայի համար ծայր աստիճան վտանգավոր բնույթ։ Հեջազի արաբական ցեղերը ոչ մի տեսակի տուրքեր չեն վճարում և ճանաչում են միայն Մեքքայի շերիֆի իշխանությունը» [1]։

Ապստամբությունը ճնշելու համար սուլթանական կառավարությունը ռազմական մեծ ուժեր փոխադրեց Եմեն։ «Թուրքական կառավարության բոլոր ջանքերն ուղղված են ամենաարագ կերպով ճնշելու խռովությունը Եմենում, որտեղ ուղարկված է 50 հազարից ավելի զորք»,— գրում էր Զինովևը 1905 թվականի օգոստոսի 21-ին [2]։ Զորքերի այդ տեղափոխումը, սակայն, հաղթանակ չբերեց թուրքերին։ Արաբները երբեք խոշոր ուժերով բաց և վճռական կռվի չէին բռնվում։ Կովկասյան ռազմական օկրուգի շտաբի գաղտնի զեկույցում ապստամբների մասին ասվում էր, որ «նրանց տակտիկան զուտ պարտիզանական տակտիկա է. դարաններ, ցերեկային ու գիշերային հանկարծակի հարձակումներ, թևային հետապնդումներ... տրանսպորտի բռնագրավում, հարձակում շարասյան պոչի վրա, մշտական մարտական տագնապներ՝ ցերեկով ու գիշերով— ահա ապստամբների ստրատեգիայի ու տակտիկայի գլխավոր տարրերը, որոնք նրանց թույլ են տալիս մշտապես խանգարել թուրքերին հասնելու վճռական հաղթանակի և հնարավորություն են ընձեռում որոշ ժամանակ անց նորից ապստամբելու... Չնայած Եմենում թուրքերի շուրջ կես դար տևող տիրապետությանը, իրականում կենտրոնական կառավարության ուժն այնտեղ երեվան է եկել շատ թույլ, հատկապես նրա հյուսիս-արևելյան նահանգներում՝ Սաադա գլխավոր քաղաքի հետ միասին, որտեղ պահպանվում էր Եմենի ժառանգական իմամների օրինական իշխանությունը» [3]։ Այդ պատճառով սուլթանի տիրապետությունները Եմենում սահմանափակվում էին Լահյա, Կունֆուդա, Խոդեյդա նավահանգիստներով ու Թաիզի սանջակի մի մասով։ «Եմենից ստացված տագնապալի լուրերի տպավորության տակ,— գրում էր Զինովևը,— թուրքական կառավարության կողմից կարգադրություն է արվում այդ երկրամասը նոր համալրումներ ուղարկելու մասին, և քանի որ սիրիական արաբներից հավաքագրվող 5-րդ կորպուսի զինվորների հուսալիությանը չի կարելի հավատալ, ուստի որոշված է Եմեն ուղարկել մի քանի գումարտակ Փոքր Ասիայից, ինչպես

1 ЦГВИА, ф. 2000, оп. I, д. 11, л. 90—91.

2 ЦГВИА, ф. 450, д. 142, л. 93—101.

1 АВПР, ф. «Политархив», д. 1026, л. 46—49.

2 Նույն տեղում, գ. 1020, թ. 210։ Այդ մասին ավելի մանրամասն խոսվում է Կոստանդնուպոլսի զինվորական գործակալի զեկույցում (տե՛ս ЦГВИА, ф. 444. л. 23, л. 20—21):

3 ЦГВИА, ф. 2000 (ГУГШ), оп. I, д. 3827, л. 101—105.

նաև Յանինայի և Սկութարիի վիլայեթներից»[1]։ Սակայն այս նոր համալրումներն էլ հաղթանակ չբերին սուլթանական կառավարությանը։ Եմեն կատարված արշավանքը զորքերի մեջ ոչ մի համակրանք չէր առաջացնում, «զորքերը չեն համակրում իրենց անկախությունը պաշտպանող արաբների դեմ պայքարի գաղափարին»[2]։

1904 թվականից սկսած Եմենի ապստամբությունը շարունակվում էր մինչև 1908 թվականի երիտթուրքական հեղափոխությունը։ Չնայած այն բանին, որ սուլթանական կառավարությունը ուժ ու միջոց չէր խնայում այդ խոշոր ապստամբությունը ճնշելու համար, նրան այդպես էլ չհաջողվեց վերջնականապես խեղդել արաբների ազատագրական շարժումը։ Իրենց պայքարում եմենցիները նյութական ու բարոյական աջակցություն էին ստանում արաբական մյուս երկրներից։ Այդ մասին 1906 թվականի մարտի 11-ի հեռագրում Զինովևը հաղորդում էր, որ ապստամբ արաբներին Եգիպտոսից զգալի քանակությամբ զենք է ուղարկվում. «Եգիպտական իշխանությունների օժանդակությամբ Խեդիվի կառավարությունը խոշոր գումար ուղարկեց Եմենի ապստամբների ղեկավար շեյխ Յահյային»[3]։ Արաբական վիլայեթներում ապստամբությանն աջակցելու նպատակով Կահիրեից՝ Սիրիայի վրայով, ամբողջ Օսմանյան կայսրությունում թուրքերեն լեզվով հակակառավարական թռուցիկներ էին տարածվում։

Արաբների ապստամբությունը ճնշելու նպատակով սուլթանական կառավարության կողմից ուղարկված զինվորները հաճախ անցնում էին ապստամբների կողմը։ Այդ մասին ռուսական դեսպանի զեկուցագրերից մեկում ասված էր, որ 5-րդ և 6-րդ կորպուսի զորքերն արդեն թուլացվել էին Եմենի, Հեջազի և հարավային Միջագետքի ապստամբ արաբական ցեղերի դեմ ձեռնարկված մի ամբողջ շարք անհաջող արշավանքների հետևանքով։ Բացի դրանից, հիմնականում արաբներից բաղկացած այդ գնդերը հեշտությամբ անցնում էին իրենց խռովարար ցեղակիցների կողմը։ Այդ պատճառով թուրքական հրամանատարությունը ստիպված էր Արաբիա ուղարկել միայն թուրքերից ու քրդերից կազմված զորամասեր։ Սակայն վերջիններիս տանող նավերից երկուսի վրա, Իզմիրի մոտ, հուզումներ առաջ եկան այն բանից հետո, երբ զինվորներն իմացան, որ Մակեդոնիայի փոխարեն, ինչպես ասված էր, իրենց տա-

[1] АВПР, ф. «Политархив», ед. хр. 358, л. 8—9. Զինովևի 1905 թ. ապրիլի 21-ի (մայիսի 4-ի) ճեպագիրը։

[2] ЦГВИА, ф. 444, д. 23, л. 42—43.

[3] АВПР, ф. «Политархив», д. 1020, л. 210.

նում են Եմեն։ «Այդ փաստը,— եզրակացնում էր զեկուցագրի հեղինակը,— ակնառու կերպով ցույց է տալիս, թե որքան դժվար է Թուրքիայի համար արաբական շարժման հախից գալ և որ մահմեդականության կենտրոնում նրա տիրապետության արդեն սկսված անկումն ավելի, քան մնացած բոլոր բարդությունները, սպառնում է նրա գոյությանը»[1]։

Օգտվելով արաբների ապստամբությունը ճնշելու թուրքական կառավարության անկարողությունից, Անգլիան այս անգամ ևս որոշեց այդ ապստամբություններն օգտագործել Եմենում իր դիրքերն ամրապնդելու համար։ «Անգլիան սկսում է երկյուղել ասիական խնամակալությունը կազմող իր տիրապետությունների անվտանգության համար,— գրում էր Զինովևը։ Անգլիան հայտարարել է, որ եթե Թուրքիան ի վիճակի չէ ճնշել արաբների ապստամբությունը, ապա ինքը ստիպված կլինի զորքեր ուղարկել Եմեն»[2]։ Արաբական ազատագրական շարժումը թուրքական լծի դեմ ուներ իր գաղափարական ղեկավարությունը՝ ի դեմս Ժնևում ու Փարիզում ստեղծված արաբական հեղափոխական կազմակերպությունների, որոնք իրենց ձգտումներով ու թուրքական ռեժիմի հանդեպ տածած ատելությամբ մոտ էին կանգնած հայկական ու երիտթուրքական կոմիտեներին և հարեցին նրանց։

Փարիզում հիմնված այդպիսի մի հակաթուրքական արաբական ընկերության գլուխ էր կանգնած Երուսաղեմի մութեսարիֆաթի (նահանգի) նախկին փոխ-նահանգապետ Նաջիբ Ազուրի-բեյը, որը 1907 թվականից սկսեց ֆրանսերեն լեզվով հրատարակել «Արաբների անկախությունը» ամսագիրը («Indépendance des arabes»)։ Նույն ինքը Ազուրի-բեյը ֆրանսերեն լեզվով լույս ընծայեց «Արաբական ազգի զարթոնքը» վերնագիրը կրող գիրքը («Le reveil de la nation arabe»)։ Իր գրքում նա ապացուցում էր Արաբական թերակղզում, Սիրիայում ու Միջագետքում բնակվող շուրջ 12 միլիոն արաբների շահերի ընդհանրությունը՝ անկախ նրանց դավանանքից։ Գրքում ընդգծվում էր, որ բոլոր արաբները հավասարապես տառապում են թուրքական կառավարությունից ու տեղական իշխանություններից։ Մատնանշելով Լիբանանին, որը մեծ տերությունների միջամտության շնորհիվ 1860 թվականին վարչական ինքնավարություն էր ստացել, հեղինակը եզրակացնում էր, որ սուլթանը կամավոր կերպով բարենորոգումներ չի անցկացնի, ուստի պետք է զենքի դիմել և հրավիրել Եվրոպայի ուշադրությունը։

[1] АВПР, ф. «Политархив», д. 1022, л. 31.

[2] Նույն տեղում, գ. 1026, թ. 46—49։

Գրքում վառ կերպով երկու թեզ էր անցկացվում. զինված ապըստամբության անհրաժեշտությունը և արաբական ինքնուրույն պետության կազմավորումը՝ արաբական ծագում ունեցող իսկական խալիֆի հոգևոր գլխավորությամբ, սակայն Անգլիայի աշխարհիկ խնամակալության ներքո։ Այնուհետև, Ազուրի-բեյը հանգում էր այն մտքին, որ Եմենում ծավալված շարժումը, որին մասնակցում էին բոլոր արաբները (Եմենի արաբները՝ բացահայտ ապստամբության միջոցով, սիրիական արաբ զինվորները՝ հրաժարվելով զենք բարձրացնել իրենց ցեղակիցների դեմ, իսկ Սիրիայի քրիստոնյաները՝ բարոյական աջակցությամբ ու դրամական նվիրատվություններով), պետք է համարել նշված ծրագրի իրականացման սկիզբը [1]։

Եմենում, Բասրայում, Կուվեյտում, Կենտրոնական Արաբիայում ազգային-ազատագրական պայքարի եռուն շրջանում Արաբիայի ազգային զարթոնքի ղեկավարները Եվրոպայից տեղափոխվեցին Եգիպտոս, ուր նրանք ապաստան գտան Խեդիվի և անգլիական իշխանությունների մոտ։

Արխիվային մի փաստաթղթում ասված է, որ «Նրանց Եգիպտոս գալու նպատակն էր հնարավորություն ստանալ այնտեղից հետևելու թուրքական զորքերի անցնելուն։ Տեղում հարմար էր նաև կազմակերպել ապստամբներին մաքսանենգ ճանապարհով զենք ու զինամթերք մատակարարելու գործը՝ Ադենի վրայով» [2]։

Բերված փաստերը ցույց են տալիս, որ արաբ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումը քննարկվող ժամանակաշրջանում ընդգրկել էր Օսմանյան կայսրության բոլոր արաբական մարզերը, և սուլթանական կառավարությունն ի վիճակի չէր այն ճնշել։ Արաբների վերջնական հաղթանակին խանգարում էին շարժումը գլխավորող ցեղային առանձին շեյխերի միջև գոյություն ունեցող տարաձայնություններն ու երկպառակությունները։ Յուրաքանչյուր շեյխ ձգտում էր իր գերիշխանությունը հաստատել մյուսի վրա։ Այդ անմիաբանությունը թուրքական կառավարությունը բավականին ճարպիկ կերպով օգտագործեց՝ լայնորեն կիրառելով կաշառելու մեթոդները։

Արաբական շարժման հաջողությանը խանգարում էր նաև Անգլիայի ու Ֆրանսիայի միջամտությունը, որոնք օգնության դիմակի տակ, ամեն կերպ ձգտում էին արաբական երկրները ենթարկել իրենց տիրապետությանը։

1 Տե՛ս ЦГВИА, ф. 450, д. 142, л. 93—101.
2 Նույն տեղում։

❊❊❊

Թուրքական ֆեոդալա-բռնակալական կարգերի դեմ համառ պայքար էին մղում նաև բալկանյան ժողովուրդները, հատկապես մակեդոնացիները։ Հերոսական պայքարի և ռուս ժողովրդի օգնության շնորհիվ բալկանյան ժողովուրդներին տակավին անցյալ դարի 80-ական թվականներին հաջողվել էր թոթափել սուլթանական լուծը։ Բալկանյան երկրներից թուրքական լծի տակ էր շարունակում մնալ Մակեդոնիան, որտեղ ապրում էին բուլղարներ, սերբեր, ալբանացիներ, հույներ և այլն։ Մակեդոնիայի բազմազգ կազմը որոշ չափով դժվարացնում էր երկրի ժողովուրդների պայքարը թուրքական տիրապետությունից ազատագրվելու համար։ Մակեդոնիայի գյուղացիական զանգվածները գտնվում էին կրկնակի ճնշման տակ՝ ֆեոդալական և ազգային։ «Մակեդոնիան, ինչպես և բալկանյան բոլոր երկրները, տնտեսապես շատ է ետ մնացել։ Այնտեղ դեռ մնացել են ճորտատիրական իրավունքի ուժեղ մնացորդները, գյուղացիների միջնադարյան կախումը կալվածատեր-ֆեոդալներից» [1]։

Թուրքական բռնակալական կարգերն անտանելի էին։ «Մակեդոնիայում,— գրում էր Վ. Ի. Լենինը,— կալվածատերերը (այսպես կոչված սպահիներ) թուրքեր և մահմեդականներ են, իսկ գյուղացիները՝ սլավոններ ու քրիստոնյաներ։ Դրա համար էլ դասակարգային հակասությունները սրվում են կրոնական ու ազգային հակասություններով» [2]։ Մակեդոնական գյուղացիները, անկախ իրենց ազգային պատկանելիությունից, զենքը ձեռքին հարձակվում էին թուրքական կալվածքների վրա, կռվի բռնվում սուլթանական կանոնավոր զորքերի հետ։ Չետնիկների շարժումն ընդգրկել էր ամբողջ Մակեդոնիան, առանձնապես նրա լեռնային շրջանները, որտեղ գործող չետնիկական (պարտիզանական) ջոկատների թիվը XX դարի սկզբին հասնում էր հարյուրի։ Մակեդոնիայի պարտիզանական ջոկատների հետ կապ էր պաշտպանում 1893 թվականին ստեղծված «Ներմակեդոնական հեղափոխական կազմակերպությունը»։

Մակեդոնական գյուղացիների պայքարին միջամտում էին Բուլղարիայի, Հունաստանի ու Սերբիայի բուրժուա-միապետական կառավարությունները՝ մի կողմից և իմպերիալիստական տերությունները՝ Անգլիան, Ավստրո-Հունգարիան ու Գերմանիան՝ մյուս

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 18, էջ 502։
2 Նույն տեղում, էջ 503։

կողմից։ Հիշյալ պետություններից յուրաքանչյուրը մակեդոնացի-ների պայքարն օգտագործում էր Մակեդոնիայում իր նվաճողական պլաններն իրագործելու համար։ Բալկանյան պետությունները մի ժողովրդին հրահրում էին մյուսի դեմ և այսպիսով թուլացնում ու կազմալուծում թուրք ասիմիլյատորների դեմ Մակեդոնիայում ծավալված ազգային-ազատագրական շարժումը։ «Գործը հասնում էր արյունալի ընդհարումների,— նշում էր ռուս հրապարակախոս ու ճանապարհորդ Գոլոբորոդկոն։ Հունական հրոսակները մերձավոր շրջաններում սրի էին քաշում բուլղար գյուղացիներին, որոնք ձգտում էին հասնել այն բանին, որ Մակեդոնիան միացվեր Բուլղարիային։ Նույն հիման վրա բուլղարական ավազակախմբերը կոտորում էին հույներին։ Բարձր Դուռն ամեն կերպ բորբոքում էր ազգային թշնամանքը Մակեդոնիայում՝ ճնշված բնակչության ուշադրությունը կենտրոնական կառավարությունից շեղելու համար... Վերջին տարիներին ազգային թշնամանքը սկսեց տեղի տալ՝ հեղափոխական շարժման աճի հետևանքով»[1]։

Մակեդոնիայի աշխատավոր գյուղացիությունը, ղեկավարվելով «Ներմակեդոնական հեղափոխական կազմակերպության» կողմից, հերոսական պայքար էր մղում թուրք բաշիբոզուկների դեմ։ 1898 թվականից մինչև 1903 թվականը հիշյալ կազմակերպության ջոկատները Մակեդոնիան ամայացնող թուրքական պատժիչ զորքերի դեմ շուրջ 130 ճակատամարտ տվեցին։ 1903 թվականին մակեդոնացի գյուղացիների նոր հուժկու ապստամբություն բռնկեց։ Թուրքական հորդաները արյան մեջ խեղդեցին ապստամբությունը, կողոպտեցին ու ավերեցին երկրի տերիտորիայի մոտ 1/3 մասը։

Մեծ տերություններն այս անգամ ևս միջամտեցին՝ իրենց օգտին թուրքական կառավարության վրա ճնշում գործադրելու նպատակով։ Ամենաակտիվ միջամտությունն ունեցավ Ավստրո-Հունգարիան, որը ցանկանում էր ապստամբության տոհմն օգտագործել Սալոնիկը գրավելու համար։ Ցարական Ռուսաստանը չէր կարող հանդուրժել Ավստրո-Հունգարիայի դիրքերի ամրապնդումը՝ Դարդանելին մոտ շրջանում։ Երկար բանակցություններից հետո 1903 թվականի սեպտեմբերի 20-ին Մյուրցշտեգի որսորդական ամրոցում Ռուսաստանի և Ավստրո-Հունգարիայի միջև կնքվեց համաձայնագիր, որով երկու տերությունները թուրքական կառավարությանը պարտավորեցնում էին «ռեֆորմներ» անցկացնել Մակեդոնիայում։ Հիշյալ համաձայնագրի հետևանքն այն եղավ, որ Մակեդոնիան ընկավ Ռուսաստանի ու Ավստրո-Հունգարիայի ազդե-

[1] Голобородько И., Турция, II-д, 1909, стр. 270.

ցության տակ։ Մակեդոնական գյուղացիությունը այդ բարենորոգումներից ոչինչ չստացավ և շարունակում էր իր պայքարը, որը 1905—1907 թվականներին ռուսական հեղափոխության ազդեցության շնորհիվ մեծ թափ ստացավ՝ միախառնվելով սուլթանական ռեժիմի դեմ ուղղված համաթուրքական շարժմանը։

Պետերբուրգում հեղափոխական շարժման առաջին պոռթկումից հետո (1905 թվականի հունվարի 9-ը), ամբողջ Օսմանյան կայսրությունում, այդ թվում և Մակեդոնիայում, հեղափոխական շարժումն այն աստիճան ուժեղացավ, որ ցարական կառավարությունն սկսեց լրջորեն մտահոգվել Բալկաններում հեղափոխության հրդեհի տարածումից։ Այդ մասին է վկայում Լամզդորֆի 1905 թվականի հունվարի 15-ի հեռագիրը Աթենքի ու Բելգրադի ռուսական դեսպանորդներին և Կոստանդնուպոլսի ռուսական դեսպանին։ Այդ հեռագրում Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրությունը նախազգուշացնում էր, որ մակեդոնական վիլայեթների հեղափոխական շարժման ներկայացուցիչների ու բալկանյան պետությունների տեղական գործակալների միջև կապ գոյություն ունի, որ «ապստամբ հրոսակախմբերի» գործունեությունը գնալով ուժեղանում է և «մոտ ապագայում, անկասկած, սպառնում է բարդություններ առաջ բերել»։ Այնուհետև հեռագրում ասվում էր, որ ցարի պահանջով թուրքական կառավարությունը միջոցներ ձեռք առավ երկրում հանգստությունն ապահովելու համար, սակայն, «այնուամենայնիվ, ի վիճակի չէ չարին վերջ դնել, եթե բալկանյան պետությունները անկեղծորեն չմոտենան մակեդոնական վիլայեթներում կարգ ու կանոն հաստատելու գործին»[1]։ Ռուսաստանի դիվանագիտական ներկայացուցիչները Թուրքիայում ու բալկանյան երկրներում ցարական արքունիքին կանոնավոր կերպով տեղյակ էին պահում Բալկաններում տեղի ունեցող իրադարձությունների և Մակեդոնիայում հեղափոխական շարժումը ճնշելու համար թուրքական իշխանությունների ձեռնարկած միջոցառումների մասին։

Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրությունն իր դիվանագիտական ներկայացուցիչներին հրամանագրում էր նախազգուշացնել բալկանյան երկրների կառավարություններին, որպեսզի նրանք աջակցություն ցույց չտան ապստամբներին։ Լամզդորֆը Կոստանդնուպոլսի ռուսական դեսպան Զինովևին հղած հեռագրում, 1905 թվականի հունվարի 15-ին, գրում էր. «Անկասկած է, որ հրոսակների հեղափոխական գործունեության հարցում ծանրության կենտրոնը այն համակրանքն է, որին արժանանում է նման գործու-

[1] АВПР. ф. «Политархив», д. 1019, л. 8.

նեությունը բալկանյան պետությունների կողմից։ Այդ հանգամանքը կայսերական կառավարությանը մշտապես դրդել է հիշյալ պետություններին նախազգուշացնել ապստամբական շարժումներով տարվելու վտանգավոր հետևանքների մասին... Այդ իմաստով, անհրաժեշտ խիստ զգուշացումները կրկնվել են Աթենքում, Բելգրադում և Սոֆիայում։ Ձեր կողմից հաղորդված տեղեկությունները հնարավոր... մեծ բարդացումների մասին ստիպեցին մեզ հիշյալ երեք կետերում գտնվող գործակալներին լրացուցիչ ցուցումներ տալ»։

Այնուհետև ասվում էր, որ հարկավոր է հետևել թուրքական իշխանությունների գործելակերպին և այն միջոցառումների իրականացմանը, «որոնք ձեռնարկված են Բարձր Դռան կողմից շարժումը ճնշելու համար» [1]։

1905 թվականի հունվարի 27-ի հեռագրում Լամզդորֆը Զինովևին հաղորդեց հետևյալը. «Ուսքյուբի հյուպատոսի վեկույցից Ձեզ հայտնի է Ալբանիայում տիրող սպառնալից դրության և առնառատների միջև հնարավոր հուզումների պոռթկման հանդեպ թուրքերի անհոգ վերաբերմունքի մասին... Հրավիրե՞լ եք արդյոք Բարձր Դռան ուշադրությունը Ֆերիկ-փաշայի արագաշարժ դիվիզիայի կազմն ուժեղացնելու անհրաժեշտության վրա... հակառակ դեպքում, համապատասխան դիմումով հանդես եկե՛ք» [2]։

Այս բոլորը վկայում է այն մասին, որ 1905—1907 թվականների ռուսական հեղափոխության ազդեցության տակ ազգային-ազատագրական շարժումը Բալկաններում, մասնավորապես Մակեդոնիայում ու Ալբանիայում, այնպիսի լայն թափ ստացավ, որ ցարական կառավարությունը ռուսական հեղափոխությունը ճնշելու հետ մեկտեղ ցանկանում էր խեղդել նաև հեղափոխական շարժումները այլ երկրներում, որոնք սպառնում էին միապետական կարգերի գոյությանը ռուսական կայսրությունում, ինչպես և ողջ Եվրոպայում ու Արևելքում։

Ելնելով այն կոնկրետ իրադարձություններից, որոնց ինքն անձամբ ականատես էր լինում, Վ. Ի. Լենինը բացահայտել է այն վախի պատճառները, որ ցարիզմը տածում էր թուրքական ու իրանական հեղափոխությունների հանդեպ։

«Բոլորը... վախենում են թուրքական ռևոլյուցիայի հաջողությունից, որովհետև այդ հաջողությունը անխուսափելիորեն պետք է նշանակեր մի կողմից՝ ավտոնոմիայի ու իսկական դեմոկրատիայի ձգտման զարգացում բալկանյան բոլոր ժողովուրդների մեջ, մյուս կողմից՝ պարսկական ռևոլյուցիայի հաղթանակ, դեմոկրատական շարժման նոր խթան Ասիայում, ինքնուրույնության համար պայքարի ուժեղացում Հնդկաստանում, ազատ կարգերի ստեղծում ռուսական սահմանի մի հսկայական տարածության վրա— հետևապես նոր պայմանների ստեղծում, որոնք կդժվարացնեն սահարյուրակային ցարիզմի քաղաքականությունը և կհեշտացնեն ռևոլյուցիայի վերելքը Ռուսաստանում, և այլն» [1]։ Որոշ հետազոտողներ սխալ են մեկնաբանում ցարական ինքնակալության վերաբերմունքը դեպի թուրքական ու իրանական հեղափոխությունները։ Այսպես, օրինակ, Ա. Ալիմովն իր «1908 թվականի հեղափոխությունը Թուրքիայում» վերնագիրը կրող հոդվածում գրում է, որ Ռուսաստանն ու Անգլիան համակրանքով էին նայում «Թուրքիայում հասունացող հեղափոխական շարժմանը» [2]։ Դա լրիվ հակասում է երիտթուրքական հեղափոխության վերը բերված լենինյան գնահատականին։ Հայտնի է, որ հեղափոխության ճնշման գործում ռուսական ցարն ու թուրքական սուլթանը ընդհանուր լեզու գտան։ Բանակի ու ժողովրդի մեջ իր հենարանը կորցրած ցարական կառավարությունը դիմեց Ռումինիային ու Թուրքիային «...ապստամբած նավաստիների դեմ ուժիկանական օգնություն ցույց տալու խրնդրանքով»,— գրում էր Լենինը «Ռուսական ցարը իր ժողովրդից պաշտպանություն է փնտրում թուրքական սուլթանի մոտ» հոդվածում [3]։

Մահու չափ վախենալով կայսրությունում հետզհետե աճող հեղափոխական շարժումից, Աբդուլ Համիդն ամեն ինչ արեց այդ շարժումը կասեցնելու և իր տիրապետությունը երկարաձգելու համար։ Նա սարսափով ընդունեց ռուսական հեղափոխության մասին լուրը։ Սուլթանն առանձնապես վախենում էր Ռուսաստանի սևծովյան նավատորմի ապստամբությունից, երկյուղելով, որ նրա ալիքները կարող են հասնել մինչև իր կայսրության սահմանները։ «Ռազմանավի նավաստիների ապստամբությունը այն հարցերից մեկն էր, որն ամենից ավելի էր անհանգստացնում սուլթանին,— գրում էր Աբդուլ-Համիդի անձնական բարտուղար Թահսին-փաշան։ Եթե Ստամբուլում հայտնի դառնար, որ խռովարար նավը (խոսքը «Պոտյոմկին» զրահանավի մասին է— Ն. Ս.) տարվել է իր անձնակազմի կողմից, առանց թույլատրության, և նույնիսկ այն պայմա-

1 АВПР, ф. «Политархив», л. 12.
2 Նույն տեղում, թ. 43։

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 15, էջ 267։
2 Տե՛ս Сб. «Пробуждение Азии», стр. 37.
3 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 8, էջ 734։

նով, որ վարակի ու խռովահույզ զգացմունքների ներթափանցման հնարավորությունը Ստամբուլի զորքերի մեջ աննշան կլինի, ապա միայն այդքանը բավական էր, որպեսզի Սուլթան-Համիդն անքուն գիշերներ անցկացներ։ Ռուսական կառավարությունը,— շարունակում է Թահսին-փաշան,— որևէ ազդեցություն չունեցավ խռովարար «Պոտյոմկին» զրահանավի վրա, որը մոտենում էր նեղուցներին։ Ի՞նչ կլիներ, եթե զրահանավը փորձեր անցնել նեղուցներով... Սուլթան-Համիդն անհապաղ գործողությունների դիմեց։ Զինանոցի ղեկավարությանն անմիջապես հրաման տրվեց սևծովյան պլանն ի կատար ածելու և ծանր հրետանին պատրաստի վիճակում պահելու մասին» [1]։

Այսպիսով, սուլթանական կառավարությունը սարսափում էր Թուրքիայում ռուսական հեղափոխության ազդեցության տարածման հնարավորությունից։ Հենց այդ բանը երկու բռնակալներին՝ ռուս և թուրք, ստիպեց ընդհանուր համաձայնության գալ։ Ռուսական հեղափոխության ազդեցությունը կասեցնելու ուղղությամբ Աբդուլ-Համիդի կառավարության ձեռք առած միջոցառումներն ապարդյուն անցան։

***

Վերը խոսվեց հայերի, արաբների, մակեդոնացիների և Օսմանյան կայսրության լծի տակ հեծող մյուս ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի ուժեղացման մասին, որը սուլթանական կառավարությունն ի վիճակի չեղավ ճնշելու։ Երիտթուրքական «Միասնություն և առաջադիմություն» կուսակցությունը որոշեց երկրի ներսում առկա հակամիապետական այդ ուժերն օգտագործել Աբդուլ-Համիդի ռեժիմը տապալելու և սահմանադրական կարգեր հաստատելու համար։ Այդ նպատակով էլ 1907 թվականի դեկտեմբերին Փարիզում գումարվեց կոնգրես, որին մասնակցում էին «Միասնություն և առաջադիմություն» կոմիտեն, դաշնակցական կուսակցությունը, «Ապակենտրոնացման և մասնավոր նախաձեռնության լիգան», արաբական «Հայֆեթ» կազմակերպությունը, ազգային առանձին խմբեր և այլն։

Հետագայում կոնգրեսի որոշումներին միացան «Մակեդոնական ներքին հեղափոխական կազմակերպությունը» և «Մահմեդա-

1 Tahsin Paşa, Abdul Hamid ve yıldız hatıraları, Istanbul, 1931, s. 174.

կան ֆեդերացիա» կուսակցությունը [1]։ Կոնգրեսում որոշումներ ընդունվեցին սուլթան Աբդուլ-Համիդին գահընկեց անելու, գոյություն ունեցող ռեժիմն արմատապես վերափոխելու և կառավարման ներկայացուցչական ձև ընդունելու մասին։ Նշված որոշումներն իրագործելու համար կոնգրեսի մասնակիցները հրաժարվեցին իրենց անջատողական ձգտումներից ու կուսակցական գժտություններից։ Որպես համիդյան ռեժիմը կործանելու միջոց կոնգրեսը ճանաչեց համընդհանուր զինված ապստամբությունը։ Այդ վճռական քայլին Թուրքիայի հեղափոխական ու ընդդիմադիր ուժերը միանգամից չեկան։ Դեպքերի ողջ ընթացքը և, հատկապես, ժողովրդական զանգվածների հեղափոխական շարժման ծավալումը 1905—1907 թվականներին նույնիսկ լիբերալ բուրժուազիայի ու կալվածատերերի ներկայացուցիչներին՝ երիտթուրքերին, ստիպեցին դիմել զինված ապստամբության։ Այսպիսով, այդ վճռական քայլը ոչ թե երիտթուրքական կուսակցության ծառայությունն էր, որը երբեք հետևողականորեն հանդես չի եկել սուլթանական կարգերի դեմ, այլ ինչպես թուրք, այնպես էլ այլազգի աշխատավոր զանգվածների, որոնք ռուսական հեղափոխության ազդեցության ներքո տարեբայնորեն, առանց հատուկ ղեկավարության, ուժեղացրին իրենց պայքարը Թուրքիայում իշխող ֆեոդալա-բռնապետական կարգերի դեմ։ Սակայն, ինչպես կտեսնենք ստորև, երիտթուրքերը համատեղ գործողությունների դիմեցին սոսկ սուլթանական ատելի ռեժիմը ընդհանուր ուժերով տապալելու և սահմանադրական միապետություն հաստատելու նպատակով, որպեսզի ապահովեն թուրքական ազգային բուրժուազիայի գերիշխանությունը երկրի քաղաքական ու տնտեսական կյանքում և հետին դիրքերը մղեն այլազգի՝ հայ, հույն ու արաբական բուրժուազիային։

Միավորված ճակատ ստեղծելու գործում վճռական նշանակություն ունեցավ ինչպես թուրքական, այնպես էլ հայկական, արաբական ու մակեդոնական մասսայական հեղափոխական՝ հիմնականում գյուղացիական, շարժումների ծավալումը։

Այդ իրադարձությունների ժամանակակից Վ. Տոտոմյանցը գրում էր. «Թուրքիայում, ինչպես և այլ երկրներում, բնակչության հեղափոխականացումը կատարվում էր ներքևից՝ շահագործման ու տնտեսական ծանր պայմանների հողի վրա։ Բոլորին հայտնի են Հայաստանում, Մակեդոնիայում և Թուրքիայի այլ ծայրամասերում

1 Մանրամասն տե՛ս Голобородько, նշվ. աշխ., էջ 217; сб. «Пробуждение Азии», էջ 31, Ernest Edmondson Ramsaur, The young Turks. Prelude to the Revolution of 1908, London, 1957, pp. 123—129.

տարեցտարի կրկնվող հուզումները։ Բոլոր այդպիսի դեպքերում դժգոհություն արտահայտողը ժողովրդական զանգվածն էր՝ ի դեմս գյուղացիական բնակչության և մանր բուրժուազիայի» [1]։

Հակամիապետական այդ շարժման ղեկավարությունն իր ձեռքը վերցնելու նպատակով երիտթուրքական կուսակցությունը դիմեց ժողովրդական զանգվածներին՝ «ռուս ժողովրդից» օրինակ վերցնելու լոզունգով։ 1907 թվականի կեսերին վերաբերող իր կոչերից մեկում երիտթուրքերն Օսմանյան կայսրության բոլոր ժողովուրդներին կոչ էին անում տապալել բռնապետությունը և ազատություն ձեռք բերել։

«Մինչև ե՞րբ,— ասվում էր այդ կոչում,— դուք կհանդուրժեք այդ ճնշումն ու կեղեքումները։ Մինչև ե՞րբ դուք ականատես կլինեք ձեր հայրենիքի քայքայմանը։ Այն վիճակը, որում դուք գտնվում եք, ոչ այլ ինչ է, եթե ոչ անզգայացում, որը կաշկանդել է ձեզ՝ կառավարության կողմից ձեռնարկած միջոցառումների ազդեցության տակ։ Գիտցե՛ք, որ ժողովրդի ուժը զգալիորեն հզոր է ամենադաժան բռնակալությունից իսկ։ Գիտցե՛ք, որ ամենահզոր ու հրպարտ առագաստներն անգամ ջուրը կշպրտվեն։ Եվ բռնակալներից ամենաարյունարբուն ինքը ստիպված կլինի այդ ուժի առջև ծնկի գալու և գթություն հայցելու։ Սակայն այդ ուժը կարող է ստեղծվել ժողովրդի միասնության, համերաշխության ու փոխադարձ օգնության շնորհիվ...» [2]։

Մի այլ թռուցիկում, որպես օրինակ, բերվում էին ռուս, իրանական ու պորտուգալական ժողովուրդները, «որոնք միասնության ճանապարհով հասան երջանկության... Իրար միջև համաձայնության գալով, նրանք ապստամբեցին և զենքի դիմեցին, քանի որ ազգի իրավունքները չեն կարող զոհաբերվել տիրակալի հաճույքի և ժողովրդի արյունը՝ կառավարության հաճույքի համար։ Նրանք պահանջում էին և ուժով ձեռք բերեցին ազգային ժողով» [3]։

Այս փաստաթղթերը վկայում են այն մասին, որ ռուսական առաջին հեղափոխությունը և հեղափոխական ելույթները մյուս երկրներում մեծ ազդեցություն ունեցան Օսմանյան կայսրությունում զանգվածային շարժման վերելքի վրա։

---

1 Тотомианц В., Экономическая почва турецкой революции. «Современный мир», 1908, октябрь, раздел 2, стр. 15—16.

2 ЦГВИА, ф. 200, оп. I, д. 1002, л. 156—157, տե՛ս Е. К. Саркисян Влияние русской революции 1905—1907 гг. на развитие революционного движения в Турции, «Известия АН Арм. ССР», серия общ. наук, 1955. № 12, стр. 73.

3 «Красный архив», 1931, т. 43, стр. 19.

1905—1907 թվականներին Թուրքիայում մեծ ծավալ ընդունեց ընդդիմադիր շարժումը։ Մի շարք ամսագրերում ու թերթերում տպագրվեցին հոդվածներ, որոնցում լուսաբանվում էին հեղափոխական իրադարձությունները Ռուսաստանում, կոչ էր արվում հետևել ռուս ժողովրդի օրինակին և պայքարի դուրս գալ սուլթանի միահեծան իշխանության դեմ։

Ռուսական հեղափոխության ընթացքի մասին ամենից ավելի լավ էր տեղեկացված արևելյան վիլայեթների հայ ազգաբնակչությունը, որի շրջանում գաղտնի կերպով տարածվում էին Անդրկովկասում հրատարակվող հեղափոխական թերթերը։ Անդրկովկասի առաջադիմական մամուլի էջերում լայնորեն լուսաբանվում էին Հայաստանում, Ադրբեջանում ու Վրաստանում տեղի ունեցող իրադարձությունները։

Անդրկովկասի ժողովուրդների հերոսական պայքարը ցարական ինքնակալության դեմ օրինակ էր ծառայում Օսմանյան կայսրության աշխատավոր զանգվածների համար, որոնք տառապում էին թուրքական բիրտ կարգերից։

Հեղափոխական գաղափարները Ռուսաստանից ներթափանցում էին նաև թուրքական բանակն ու նավատորմը։ Քաջ հայտնի է թուրքական 28 ծովային սպաների նամակը ցարական դահիճների կողմից մահապատժի ենթարկված լեյտենանտ Շմիդտի քրոջը, որտեղ նրանք իրենց հիացմունքն էին արտահայտում ինքնակալության դեմ ռուսական նավատորմի նավաստիների հերոսական պայքարի նկատմամբ և երդվում էին քաղաքացիական ազատությունների համար մղվող պայքարում հետևել նրանց օրինակին [1]։

Ստամբուլում Ռուսաստանի դեսպան Զինովևը բազմիցս հաղորդում էր հեղափոխական ելույթների մասին մայրաքաղաքի կայազորի այնպիսի զորամասերում, որոնք, թվում էր, ամենից ավելի պիտի հավատարիմ լինեին սուլթանին։ Այսպես, 1907 թվականի հունվարի 5-ի (1906 թ. դեկտեմբերի 23-ի) հեռագրում նա գրում էր, որ «վերջին օրերը նշանավորվեցին Կոստանդնուպոլսում տեղավորված զորքերի շրջանում տեղի ունեցած անկարգություններով։ Յըլդըզը (սուլթան Աբդուլ-Համիդի նստավայրը, Ստամբուլի մերձակայքում — Ե. Ս.) պաշտպանող առաջին գվարդիական դիվիզիայում, գերակետիկ կրտսեր հրամանատարները հրաժարվեցին դուրս գալ պարապմունքի։ Վախենալով, որ գործը կարող է բարդանալ, սուլթանը կարգադրություն արեց նրանց անհապաղ արձակելու մասին»։

---

1 Տե՛ս «Красный архив», т. 9, 1925, стр. 52.

Առաջին դիվիզիայի օրինակին,— տեղեկացնում էր այնուհետև Զինովևը,— հետևեց ծովային հետևակազորը։ «Այդ զորամասից մոտ 450 մարդ, որոնք նույնպես գերագետիկ են բանակում, ընդորում բավարարված չեն ոռճիկով, դեկտեմբերի 20-ին իրենց զորանոցներում աղմուկ բարձրացրին և այնուհետև շարժվեցին դեպի ծովային շտաբի պետ Ահմեդ-փաշայի տունը։ Վերջինս հրաժարվեց ընդունել նրանց և ընդառաջ եկավ միայն այն ժամանակ, երբ նրանք տուն ներխուժեցին։

Անկարգությունները դադարեցվեցին միայն այն բանից հետո, երբ սուլթանի կողմից ուղարկված համհարզը խոստացավ զինվորներին հայտարարեց, որ նրանց խնդիրը կբավարարվի»[1]։ Այս բոլոր փաստերը խոսում են այն մասին, որ թուրքական ռազմա-ֆեոդալական բռնապետության հիմնական հենարանը՝ բանակը, դադարում էր սուլթանի հլու զենքը լինելուց։

Վերը նշվեց, որ հակամիապետական ելույթների ուժեղացման պայմաններում երիտթուրքական կուսակցությունը ստիպված էր համաձայնվել համատեղ գործողություններով հանդես գալ սուլթանական ռեժիմի դեմ թշնամաբար տրամադրված քաղաքական մյուս կազմակերպությունների հետ։

Մեր խնդիրը չէ լուսաբանել երիտթուրքական հեղափոխության ընթացքը։ Նշենք միայն, որ երիտթուրքերը 1908 թվականին իշխանությունն իրենց ձեռքը գցեցին ժողովրդական զանգվածների շարժումն օգտագործելու շնորհիվ։

1909 թվականի մարտին Աբդուլ-Համիդի համախոհների ձեռնարկած հեղաշրջման փորձը ճնշելով, երիտթուրքերը նույն թվականի ապրիլին իշխանության գլուխ անցան, պահպանելով միաժամանակ սուլթանական միապետությունը (Աբդուլ-Համիդը գահընկեց արվեց և սուլթան կարգվեց թագաժառանգ Ռեշադը՝ Մեխմեդ 5-րդ անունով)։ Հաստատելով իր տիրապետությունը, երիտթուրքական կուսակցությունը հրաժարվեց հեղափոխության նախօրյակին տրված իր խոստումներից։ Ելնելով թուրքական բուրժուազիայի, լիբերալ կալվածատերերի ու գերազանցապես զինվորական վերնախավի շահերից, որոնք հանդիսանում էին երիտթուրքերի սոցիալական հիմքը, վերջիններս կանգնեցին հակաժողովրդական, հետադեմ քաղաքականության ուղու վրա։

Երիտթուրքական կառավարությունը ոչինչ չձեռնարկեց երկրի ներքին կյանքի ամենասուր հարցը՝ հողային հարցը լուծելու համար։ Երիտթուրքական հեղափոխության հաղթանակից հետո, երբ

1 АВПР, ф. «Политархив», д. 1024, л. 592.

մեջլիսի պատգամավոր սոցիալիստ Վլախովը ակնարկեց ագրարային բարեփոխումների անհրաժեշտության մասին՝ գյուղացիական հողօգտագործումը ընդլայնելու նպատակով, խոշոր կալվածատեր պատգամավորները կատաղի կերպով հանդես եկան այդ առաջարկի դեմ։ Ներքին գործերի մինիստրը շտապեց բացատրելու, որ «պետության միջամտությունը բեկերի մասնավոր հարաբերություններին՝ իրենց գյուղացիների հետ՝ անթույլատրելի է, քանի որ դա կհակասեր շարիաթին»[1]։

Աշխատավոր գյուղացիությունը, ինչպես և նախկինում, զրկված էր հողից։ Շատ գյուղացիներ, որոնք մշակում էին սակավ պիտանի, չնչին հողակտորներ՝ մեկից մինչև 10 դեցնում (1 դեցնումը հավասար է 913,3 քառ. մետրի) ի վիճակի չէին անգամ իրենց կերակրելու։ 1912 թվականին սակավահող գյուղացիական տնտեսությունների թիվը (մինչև 10 դեցնում հող ունեցող) Թուրքիայի առավել զարգացած՝ եվրոպական մասում կազմում էր բոլոր տնտեսությունների 55 տոկոսը, իսկ ասիական մասում՝ 70 տոկոսը[2]։

Ծանր բնատուրքը՝ աշարը, այդպես էլ չփոխարինվեց դրամական հարկով, թեև նման խոստում տրվում էր երիտթուրքական կուսակցության 1908 թվականին ընդունված ծրագրում։ 1911 թվականին ընդունված նոր ծրագրով աշարի վերացումը հետաձգվում էր անորոշ ժամանակով։

Չվերացվեց նաև հարկերի գանձման կապալային սիստեմը, որը չարաշահումների լայն հնարավորություններ էր ստեղծում և լրացուցիչ բեռ դառնում աշխատավոր գյուղացիության վրա։

Երիտթուրքերի կողմից 1913 թվականին անցկացված ագրարային նոր օրենքները նպաստում էին կալվածատիրական ու կուլակային տնտեսությունների ընդարձակմանը։ Նույն ժամանակ ընդունված հողային կադաստրը վերջնականապես ամրապնդեց կալվածատերերի ու կուլակների իրավունքը գյուղացիներից խլված հողերի նկատմամբ։

Ավելի վատթարացավ ոչ-թուրք ազգության պատկանող աշխատավոր գյուղացիության վիճակը։ Նախքան հեղափոխությունը, երիտթուրքերը խոստանում էին հայ գյուղացիներին վերադարձնել թուրք և քուրդ ֆեոդալների կողմից սեփականացրած հողերը։ Իրականում, սակայն, երիտթուրքերի տիրապետության շրջա-

1 Горцев, Младотурки и рабочий вопрос («Современник», 1912, кн. IV, стр. 249).

2 Նույն տեղում, էջ 256։

նում հայկական հողերի զանգվածային բռնագրավումն ավելի մեծ չափեր ընդունեց։

Երիտթուրքական կառավարությունը լիովին արհամարհում էր բանվոր դասակարգի կարիքները, որն ավելի ու ավելի համառորեն էր պահանջում դրանց բավարարումը։ Այդ բանի համոզիչ վկայությունն էր այն, որ բանվորական հարցը բազմիցս առաջ էր քաշվում մեջլիսի նիստերում՝ սոցիալիստ-պատգամավորների կողմից։

Պատգամավոր Վլախովը, որը երկար ժամանակ զբաղվել էր Թուրքիայում բանվորների դրության ուսումնասիրությամբ, գրում էր, որ նրանք հիմնականում կենտրոնացած են ծովեզրյա մեծ քաղաքներում՝ Սև, Մարմարի, Էգեյան ծովերի և Բոսֆորի ափին։

«Արդյունաբերական կենտրոններ էին համարվում Կոստանդնուպոլիսը, Սալոնիկը, Զմյուռնիան, Սրվազը, Բեյրութը, Տրապիզոնը և այլն։ Խոշոր արտադրության մեջ (ջրաղացներ, գարեջրի գործարաններ և այլն) զբաղված են 35—40 հազար բանվորներ, իսկ մանր ձեռնարկություններում՝ 20 հազարից ավելի։ Եթե դրանց թվին միացնենք բեռնակիրներին (7 հազար), ծխախոտագործներին (3 հազար), հացթուխներին (5 հազար), մեծ թվով տպագրիչ-բանվորներին ու գործակատարներին, կստացվի բավականին պատկառելի թիվ՝ 100 հազարից ոչ պակաս» [1]։

Բանվորական աշխատանքային օրվա տևողությունը Թուրքիայի արդյունաբերական ձեռնարկություններում հասնում էր միջին հաշվով 14 ժամի։ Աշխատավարձը չնչին էր։ Վլախովի տվյալների համաձայն, այն տատանվում էր՝ 6-ից մինչև 28 ղուրուշի, երբեմն իջնում էր մինչև 2,5 ղուրուշի [2]։

Թուրքիայի բանվոր դասակարգը պայքարի էր ելնում իր քաղաքական ու տնտեսական իրավունքների համար։ Երիտթուրքական կառավարության կողմից բանվորական շարժման դեմ ձեռնարկվող ռեպրեսիաները, որոնք հետևեցին 1910—1912 թվականներին, ի վիճակի չէին ընկճելու աշխատավորների ըմբոստ ու մարտական ոգին։ Գործադուլները տարերայնորեն մի ձեռնարկությունից մյուսն էին անցնում։ Բազմաթիվ գործարաններ փակվում էին, իսկ բանվորները՝ փողոց շպրտվում։ Քաղաքներում գործադուրկների հսկայական մի բազմություն էր կուտակվել։ 1911 թվականի սկզբին ծխախոտագործների գործադուլ բռնկվեց միաժամանակ Ստամբուլում և Սալոնիկում։ Մայրաքաղաքում այն շարունակվեց 50 օր, իսկ Սալոնիկում՝ 20 օր։ Գործադուլավորները պահանջում էին աշխատավարձի բարձրացում 30 տոկոսով, 8-ժամյա բանվորական օրվա սահմանում և այլն [1]։

Բանվորների բոլոր այս ելույթները վերջ ի վերջո պարտություն կրեցին, սակայն, դրանք ակներևորեն ցույց տվեցին, որ Թուրքիայում առաջ է եկել մի նոր դասակարգ, որը ոտքի է ելնում պայքարի իր իրավունքների համար և բացորոշ կերպով թշնամի է երիտթուրքերի տիրապետությանը։

Պրոֆմիությունների հանդես գալն ու լեգալացումը 1908 թվականին և Թուրքիայի սոցիալիստական կուսակցության առաջացումը 1909 թվականին նույնպես վկայում էին երկրի քաղաքական կյանքում բանվոր դասակարգի աճող դերի մասին։ Այդ բանից երկյուղ կրելով, երիտթուրքերը չհամարձակվեցին միանգամից վերացնել բանվորական բոլոր կազմակերպությունները։ Պատեհ ափիթը վրա հասավ 1913 թվականի ամռանը, երբ ծայրահեղ հեռադիմականները սպանեցին երիտթուրքական կուսակցության ականավոր ղեկավարներից մեկին՝ մեծ վեզիր Մահմուդ Շևքեթ-փաշային։ Օգտվելով դրանից, երիտթուրքական կառավարությունը սկսեց հետապնդել և ճնշում գործադրել ոչ միայն տեռորիստական այդ ակտի կազմակերպիչների ու մասնակիցների, այլև պրոֆմիությունների ու սոցիալիստական կուսակցության նկատմամբ։

Թուրքիայի կոմունիստական կուսակցության հիմնադիր Մուստաֆա Սուբհին 1918 թվականին կայացած ձախ սոցիալիստների կոնֆերանսում արտասանած իր ճառում, բնութագրելով երիտթուրքական հեղափոխությունը, նշել է, որ «նա բացի միապետական սահմանադրությունից, որևէ այլ արդյունք չտվեց։ Նա ժողովրդին ոչ մի օգուտ չբերեց։ Դրամի մոբիլիզացումը և բանկերի միջոցով դրա անցումը մասնավոր սեփականատերերի ձեռքը չքավոր դասակարգի շահագործելու մի նոր եղանակ ստեղծեց... չքավոր դասակարգերը հանձնվեցին բուրժուազիայի ու կապիտալի տիրապետությանը» [2]։

Նույնիսկ այնպիսի չափավոր լիբերալ լրագրող, որպիսին էր Ստամբուլում լույս տեսնող «Թանին» թերթի թղթակից Ահմեդ Շերիֆը, որը երիտթուրքական հեղափոխությունից հետո եղել էր երկրի տարբեր շրջաններում, ստիպված էր խոստովանել, որ Թուրք գյուղացիությունը ծանր, իրավազուրկ վիճակում է գտնվում։

1 Горцев, Младотурки и рабочий вопрос («Современник», 1912, кн. IV, стр. 256).

2 Նույն տեղում, էջ 259։

1 Горцев, Младотурки и рабочий вопрос («Современник», 1912, кн. IV, стр. 259).

2 Архив ИМЛ при ЦК КПСС, ф. 17, оп. I, д. 90, л. 16.

«Գավառում,— գրում էր նա,— սահմանադրական ռեժիմը լոկ ձևական բնույթ էր կրում։ Կալվածատերերը, վաշխառուներն ու հարկահավաքները առաջվա պես կողոպտում էին գյուղացիներին. ոչ մի արդարադատություն չկա, իշխանությունների կամայականությունը խեղճ մարդկանց նկատմամբ գրեթե անսահմանափակ է»։ «Այդ տեղերում,— վկայում էր այնուհետև Ահմեդ Շերիֆը,— այնպիսի բաներ, ինչպիսիք են՝ «վարչության նորացում», «սահմանադրություն», միանգամայն անիմաստ են։ Ոչ մի բանում բացարձակապես փոփոխություն չկա։ Ամեն ինչ մնում է հնի պես»[1]։

Մի այլ թուրք հրապարակախոս՝ Մահմեդ Էսադը, Փարիզում հրատարակված իր «Մեծն ասված» վերնագրով գրքում մատնանշում էր, որ լինելով քաղաքական վտարանդիներ, երիտթուրքերը իրենց համարում էին հետադիմական ու բռնակալական կարգերի դեմ պայքարող ամենաառաջավոր ինտերնացիոնալ մարտիկներ։ Բայց հենց որ նրանք իշխանության գլուխ անցան, արմատապես փոխվեցին։ Այդ կեղծ հեղափոխականները, Մահմեդ Էսադի խոսքերով, հաստատեցին այնպիսի ռեժիմ, որի համեմատությամբ նույնիսկ Աբդուլ-Համիդի միահեծան իշխանությունը թվում էր նվազ հետադիմական և Թուրքիայի ժողովրդական զանգվածների կողմից պակաս ատելի[2]։

Ռուսաստանի ծովային գործակալը Ստամբուլում 1909 թվականի ամռանը գրում էր, որ «երիտթուրքական կառավարությունը արտաքուստ սահմանադրական տեսք ունի, իսկ իրականում ոչ մի սահմանադրություն չկա... չկան և մարդասիրական սաղմերի հետքեր... Աբդուլ-Համիդի բռնապետությունը փոխարինված է բանակի վրա հենվող երիտթուրքական կուսակցության բռնապետությամբ...»[3]։

Ստամբուլում լույս տեսնող «Neva» թերթը, խոսելով թուրքական մեջլիսի կողմից ընդունված սահմանադրության մասին, ընդգծում էր, որ «չնայած այն բանին, որ Թուրքիայում սահմանադրություն է ընդունվել, կայսրության տարբեր շրջաններում շարունակվում են անօրինակությունները, հալածանքները և ամենուրեք բնակչությունը տառապում է հարկային ծանր լծից։ Ժողովրդի համար ոչ մի թեթևացում չկա»[1]։ Այդ պատճառով էլ գավառներում,— ինչպես տեղեկացնում էր ռուսական դեսպանը,— հատկապես փոքրասիական շրջաններում, «Թուրքերը մեծ մասամբ անտարբերությամբ մոտեցան սահմանադրության հռչակմանը»[2]։

Այսպիսով, 1908—1909 թվականներին երիտթուրքական հեղափոխությունը բուրժուա-դեմոկրատական հեղափոխության և ոչ մի խնդիր չկարողացավ լուծել։ Բացահայտելով երիտթուրքական հեղափոխության վերնախավային բնույթը, Վ. Ի. Լենինը գրում էր. «Եթե օրինակի համար վերցնենք XX դարի ռևոլյուցիաները, ապա հարկ կլինի, իհարկե, պորտուգալական ու թուրքական ռևոլյուցիաներն էլ բուրժուական համարել։ Բայց նրանցից ո՛չ մեկը, ո՛չ էլ մյուսը «ժողովրդական» չեն, որովհետև ժողովրդի մասսան, նրա վիթխարի մեծամասնությունը ակտիվ, ինքնուրույնորեն, իր սեփական տնտեսական ու քաղաքական պահանջներով նկատելի կերպով հանդես չի եկել այդ ռևոլյուցիաներից և ոչ մեկի մեջ»[3]։

Հենց դրանով էր բացատրվում այն փաստը, որ իմպերիալիստական տերությունները փոխեցին իրենց տակտիկան երիտթուրքական հեղափոխության և «Միասնություն ու առաջադիմություն» կուսակցության նկատմամբ։ Եթե «Թուրքական ռևոլյուցիան մի անգամից դեմ հանդիման կանգնեց պետությունների կոնտրռևոլյուցիոն կոալիցիային՝ Ռուսաստանի գլխավորությամբ»[4], ապա շատ չանցած իմպերիալիստական քաղաքագետներն ու բուրժուական մամուլը կանգնեցին երիտթուրքերի հետ սիրախաղ անելու ու մերձենալու ուղու վրա։

«Երիտասարդ թուրքերին գովում են չափավորության և զբսպվածության համար,— նշում էր այդ կապակցությամբ Լենինը,— այսինքն՝ գովում են թուրքական ռևոլյուցիան այն բանի համար, որ նա թույլ է, նրա համար, որ նա չի արթնացնում ժողովրդի ստորին խավերը, չի հարուցում մասսաների իսկական ինքնուրույնություն, նրա համար, որ այդ ռևոլյուցիան թշնամի է Օսմանյան կայսրության մեջ սկսվող պրոլետարական պայքարին...»[5]։ Երիտթուրքական կառավարությունը ոչինչ չձեռնարկեց երկիրն օտարերկրյա կապիտալի ճնշումից ազատելու համար։ Թեև մեջլիսը 1913 թվականին հաստատել էր «արդյունաբերության խթանման մասին»

---

[1] ЦГВИА, ф. 2000с, оп. I, д. 400, л. 15.

[2] Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին պանթուրքիստների գործունեության աշխուժացման կապակցությամբ «Eni sabah» թերթը 1914 թվականի մայիսի 10—21-ի համարներում տպագրել էր պանթուրքիզմի ծագմանը նվիրված մի հոդվածաշար։ Հոդվածներում մեջբերումներ էին արված նաև Մահմեդ Էսադի վերոհիշյալ գրքից։

[3] ЦГАМФ, ф. 418, оп. 1, д. 160, л. 15—20.

[1] «Neva, 1910, № 7 (արաբատառ թուրքերեն)։

[2] АВПР, ф. «Политархив», д. 1031, л. 41—43.

[3] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 25, էջ 537։

[4] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 15, էջ 266։

[5] Նույն տեղում, էջ 268—269։

օրենքը, որն արդյունաբերական ձեռնարկություններին որոշ արտոնություններ էր տալիս, սակայն դրանից հավասարապես կարող էին օգտվել նաև Օսմանյան կայսրության տերիտորիայի վրա գտնվող օտարերկրյա ձեռնարկությունները։ Եվ քանի որ արդյունաբերության մեջ թուրքական կապիտալի տոկոսը շատ չնչին էր (ընդամենը 10%), ապա այդ օրենքն ավելի ձեռնտու էր օտարերկրյա կոնցեսիաներին, քան թուրքական ազգային բուրժուազիային։ Թուրքական արդյունաբերությունը առաջվա պես ամբողջովին կախված էր օտարերկրյա կապիտալից։

1913 թվականին հինգից ավելի բանվոր ունեցող ձեռնարկությունների թիվը Թուրքիայում հասնում էր 268-ի, որից 78-ը՝ սնունդի, 28-ը՝ շինանյութերի, 13-ը՝ կաշվի, 24-ը՝ փայտամշակման, 70-ը՝ տեքստիլ, 55-ը՝ պոլիգրաֆիական ձեռնարկություններ էին։ Դրանց 55 տոկոսը գտնվում էր Ստամբուլում [1]։

Բերված տվյալները վկայում են թուրքական արդյունաբերության ծայրահեղ հետամնացության մասին։

Երիտթուրքական կառավարության պարագլուխները նախքան հեղափոխությունը աղմկոտ հայտարարություններ էին անում Թուրքիայում օտարերկրյա կապիտալի տիրապետությանը վերջ դնելու իրենց վճռականության մասին։ Սակայն իշխանության գլուխ անցնելով, երիտթուրքերը, երկրի ներսում իրենց դիրքերն ամրապնդելու համար, հաճախ դիմում էին եվրոպական կապիտալի աջակցությանը, որի դիմաց երիտթուրքերը օտարերկրացիներին շնորհեցին նոր արտոնություններ և բազմաթիվ զիջումներ արեցին, որոնք բացահայտորեն սահմանափակում էին Թուրքիայի ազգային սուվերենությունը և ուժեղացնում նրա կախումը իմպերիալիստական տերություններից։

Երիտթուրքական կառավարության հակաժողովրդական այդ կուրսը երևան եկավ նաև այն բանում, որ նա սկսեց հաճախ դիմել օտարերկրյա պետություններին՝ նորանոր փոխառություններ ստանալու խնդրանքով։ Վեց տարվա ընթացքում (1908—1913 թթ.) Թուրքիայի ստացած փոխառությունների ընդհանուր գումարը կազմում էր 58,6 մլն. թուրքական լիրա, այն դեպքում, երբ իր երեսնամյա գահակալության տարիներին Աբդուլ Համիդը ստացել էր ընդամենը 45 մլն. թուրքական լիրա փոխառություն։

Դա հանգեցրեց այն բանին, որ Թուրքիայի պետական պարտքը համաշխարհային պատերազմի մեջ մտնելու նախօրյակին (1914 թ. հոկտեմբերի 29) [1] հասավ 148,5 մլն. թուրքական լիրայի։ Այդ գումարի 60,8 տոկոսը բաժին էր ընկնում ֆրանսիական փոխառություններին, 14,46 տոկոսը՝ անգլիական և 25,42 տոկոսը՝ գերմանական փոխառություններին [2]։

Երիտթուրքերի ֆինանսական քաղաքականությունը ըստ էության գրեթե չէր տարբերվում Աբդուլ Համիդի կառավարության քաղաքականությունից։ Ծախսերը, և առաջին հերթին ռազմական կարիքների համար արվող ծախսերը, երիտթուրքերի օրոք տարեցտարի աճում էին։ Այդ կապակցությամբ խիստ աճեցին երկրի պետական բյուջեի գծով կատարվող ծախսերը։ Այդ մասին համոզիչ կերպով վկայում են հետևյալ թվերը [3]։

Տարիներ	մուտք	ելք	դեֆիցիտ
1908—1909	21.000.000	27.000.000	6.000.000
1909—1910	25.078.962	30.539.545	5.460.583
1910—1911	29.163.418	35.994.584	6.816.166
1911—1912	31.645.708	41.161.729	9.516.021
1912—1913	33.682.475	36.891.366	3.208.891
1913—1914	31.000.000	34.000.000	3.100.000

Այս տվյալները ցույց են տալիս Թուրքիայի պետական բյուջեի մշտական դեֆիցիտը առաջին համաշխարհային պատերազմին նախորդող տարիներին։ 1910—1913 թվականների բյուջեներն արտացոլում են ծախսերի խիստ աճը, որը կապված էր իտալա-թուրքական և բալկանյան պատերազմների հետ։

Երկրի ֆինանսական դրությունն ավելի էր սաստկանում պետական ահռելի պարտքը մարելու և նրա տոկոսները վճարելու անհրաժեշտության հետևանքով։ Պարտքի դիմաց մուծվող տարեկան գումարը կազմում էր 8.576 հազար թուրքական լիրա։ Այդ թվին պետք է ավելացնել 1910 թվականի ավստրո-գերմանական փոխառության դիմաց տարեկան մուծվող 320 հազար լիրան և երկաթուղային կոնցեսիաների օտարերկրյա տերերին որպես կիլոմետրային երաշխիք վճարվող 944 լիրա գումարը [4]։ Ի վերջո,

---

[1] Emin Ahmed, Turkey in the World War, New Haven, 1930, p. 91—92.

[1] ЦГВИА, ф. 200, оп. 1, д. 3859, л. 1—6. Ռուսաստանի դեսպանը Ստամբուլում Թուրքիայի ընդհանուր պարտքը 1913 թվականի վերջին հաշվում էր 140 մլն. թուրքական լիրա։ Տե՛ս АВПР, ф. «Канцелярия», 1913 г., д. 115, л. 342։ Այդ թիվը նշել է իր ելույթներից մեկում նաև Թուրքիայի նախկին պրեզիդենտ Իսմեթ Ինենյուն։ Տե՛ս İnönü diyor ki. Nutuk, Hitabe, Beyanat, Hasbihaller, Istanbul. 1944, s. 40.

[2] Mears, E. G., Modern Turkey, New—York., 1924, p. 357.

[3] Emin Ahmed, p. 94: Süreyya Şevket, Cihan iktisadiyatında Türkiye, Ankara, 1931, s. 154—158.

[4] ЦГАВМФ, ф. 898, оп. 1, д. 32, л. 20.

ստացվում էր, որ Թուրքիան տարեկան պետք է վճարեր 9.840 հազար թուրքական լիրա, որը կազմում էր 1913—1914 թվականների բյուջեի ծախսերի գումարի 34,55 տոկոսը։

Բյուջետային հատկացումների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանցում առաջին տեղը գրավում էին ռազմական նպատակով կատարվող ծախսերը։ Այսպես, նույն տարիներին այդ գումարը կազմում էր 14.570 թուրքական լիրա, այսինքն՝ Թուրքիայի պետական բյուջեի գծով կատարվող բոլոր ծախսերի մոտ 38 տոկոսը։ «Երիտթուրքական կառավարության բոլոր հոգսերը,— վկայում էր թուրքական իրականությունը լավ ճանաչող ժուռնալիստներից մեկը,— ուղղված էին պետության ռազմական հզորության ուժեղացմանը։ Ոչ մի պետություն ռազմական կարիքներին այդքան մեծ տոկոս չի հատկացնում, ինչպես Թուրքիան։ Ֆրանսիայի ռազմական ծախսերը կազմում են նրա բյուջեի 29 տոկոսը, Անգլիայինը՝ 33,34 տոկոսը, Գերմանիայինը՝ 36,8, իսկ Թուրքիայինը՝ 38 տոկոսը»[1]։ Բանակին ու նավատորմին հատկացվող և օտարերկրյա փոխառություններն ու դրանց տոկոսները մարող, ինչպես նաև կիլոմետրային երաշխիքների դիմաց վճարվող գումարները միասին վերցրած կազմում էին բոլոր ծախսերի 2/3-ից ավելին։ Երկրի արտադրողական կարիքների համար երիտթուրքական կառավարությունը ծախսում էր, այդպիսով, բյուջեի ընդամենը 1/3 մասը։ Նրանց կողմից անցկացվող երկրի ռազմականացման քաղաքականությունը և Օսմանյան կայսրության ժողովուրդների օրըստօրե աճող ազգային-ազատագրական շարժման նկատմամբ կիրառվող բռնությունները հսկայական միջոցներ էին պահանջում։ Դրանց աղբյուրները, ինչպես և Աբդուլ Համիդի ժամանակներում, արտաքին պարտքերն ու բնակչության հարկումն էին։

Երիտթուրքերի տիրապետության տարիներին հարկային մամլիչը գնալով ավելի էր սեղմում։ Իրենց դիկտատուրան հաստատելու առաջին իսկ տարում երիտթուրքերը յուրաքանչյուր շնչից գանձվող հարկի ընդհանուր գումարը 40 ղուրուշից հասցրեցին 70 ղուրուշի։ Իսկ 1914 թվականին այդ թիվը հասավ մինչև 103 ղուրուշի[2]։ Հարկերի հիմնական վճարողը, առաջվա պես, աշխատավոր գյուղացիությունն էր[3]։

---

1 Горцев, стр. 252.

2 Süreyya Şevket, s. 154-1 58.

3 Այսպես, Թուրքիայի պետական բյուջեով 1912—1913 թվականներին գյուղատնտեսական հարկերից ստացվող եկամուտները կազմում էին երկրի ֆինանսական բոլոր մուտքերի 40 տոկոսը։ Տե՛ս И. Флеровский, Армения («Современник», ноябрь 1914 г., стр. 138).

***

Ազգային հարցում ևս երիտթուրքական կառավարությունը ընթանում էր Աբդուլ Համիդի շովինիստական քաղաքականության տրորված ճանապարհով և ձգտում էր բռնի կերպով թուրքացնել Օսմանյան կայսրության այլազգի բոլոր ժողովուրդներին։ Երիտթուրքերը դեմագոգիկ կերպով պնդում էին, թե իբր երկրում, բացի օսմանյան ազգից, ուրիշ ազգություններ չկան։ Դրանով երիտթուրքական ասիմիլյատորները ցանկանում էին ոչ-թուրք ժողովուրդներին ստիպել հաշտվելու իրենց իրավազուրկ վիճակի հետ, ձգտում էին բռնի միջոցներով կասեցնել արաբների, հայերի, Բալկանյան թերակղզու սլավոնական ժողովուրդների, հույների, ալբանացիների ու քրդերի ազգային-ազատագրական շարժումը։

Բնութագրելով երիտթուրքերի մոլի շովինիստական քաղաքականությունը, ակադեմիկոս Ե. Վ. Տարլեն ընդգծում էր, որ նրանք «ազգային հարցերը վճռում էին բոլոր ազգությունների ֆիզիկական բնաջնջմամբ՝ բացի թուրքերից և նրանցից, ովքեր անմիջապես կհամաձայնվեին թուրք դառնալու։ Երբ երիտթուրքերի պարագլուխներից մեկը՝ Էնվեր փաշան, հեղափոխությունից անմիջապես հետո բացականչում էր, որ այսուհետև բուլղարացի «չկա», հույն «չկա», մակեդոնացի «չկա», արաբ «չկա» և որ բոլորը «հավասար» են և բոլորը «օսմանցիներ են», ապա նա, ի հակակշիռ եվրոպական լիբերալների սենտիմենտալ, անհիմն ենթադրությունների, հենց այդպես էլ հասկանում էր գործը. կամ Թուրքիայում բնակվող բոլոր այդ ցեղերը թուրքեր կդառնան և այդպիսով բոլորը «հավասար» կլինեն, կամ նրանք «չկան», այսինքն՝ մենք նրանց սրի կքաշենք, և այդ պատճառով նրանք «չեն լինի»[1]։

Երիտթուրքական «Միասնություն և առաջադիմություն» կոմիտեն իր շրջաբերականներից մեկում գրում էր. «Մենք պետք է ամենից առաջ բուն երկրի ներսում ոչնչացնենք մեր բազմաթիվ և վտանգավոր թշնամիներին։ Միայն այն ժամանակ մենք կմաքրենք հին հաշիվները մեր հարևանների հետ»[2]։

Իթթիհատականների շովինիստական, բռնի թուրքացման քաղաքականությունը վերջնականապես ձևակերպվեց 1911 թվականին՝ հոկտեմբերին գումարված նրանց կուսակցության համագումարում։ Համագումարի որոշման մեջ ասված էր, որ կայսրության բնույթը պետք է լինի մահմեդական։ Ուրիշ ազգերին պետք է զրկել կազ-

---

1 Е. В. Тарле, Соч., т. V, М., 1958, стр. 199.

2 Տե՛ս П. Семенют, Турция сегодня, вып. II, СПб, стр. 15.

մակերպվելու իրավունքից, քանի որ ապակենտրոնացումն ու ինքնավարությունը թուրքական կայսրության նկատմամբ դավաճանություն են։ Ազգային փոքրամասնությունները կարող են պահպանել կրոնը, սակայն ոչ լեզուն։ Թուրքերեն լեզվի տարածումը հանդիսանում է մահմեդականության գերիշխանության ստեղծման և ուրիշ ազգերի ասիմիլյացիայի ամենաբարձրագույն միջոցը [1]։

Տասնամյա տիրապետության ընթացքում երիտթուրքերը հավատարիմ մնացին իրենց այդ արյունոտ քաղաքականությանը։ Սակայն ինչքան նրանք ուժեղացնում էին ազգային ճնշումը, այնքան ավելի մեծ թափ էր ստանում ազգային-ազատագրական շարժումը եվրոպական և ասիական Թուրքիայում, որի դեմ պայքարելու համար երիտթուրքական կառավարությունը հսկայական ուժեր ու միջոցներ էր ծախսում՝ առանց շոշափելի հաջողության։

Համոզվելով օսմանիզմի դոկտրինայի սնանկության և կայսրությունը փլուզումից փրկելու նրա անընդունակության մեջ, երիտթուրքերը դիմեցին պանիսլամիզմի աբդուլ-համիդյան հնացած լոզունգին։ Հետադիմական այդ տեսությունը, պանթուրքիզմի հետ մեկտեղ, կազմում էր երիտթուրքերի ներքին ու արտաքին քաղաքականության գաղափարական առանցքը։

Պանիսլամիզմի գաղափարախոսությունը երիտթուրքերը փորձում էին օգտագործել Թուրքիայի մահմեդական ժողովուրդների և, առաջին հերթին, այդ տարիներին լայն թափ ստացած, արաբական ազգային-ազատագրական շարժումները կանխելու ու դրանք ճընշելու նպատակով։

Պանիսլամիզմի գաղափարախոսությունը սքողում էր թուրքական ազգային բուրժուազիայի շահերն արտահայտող իթթիհատական կուսակցության ձգտումը՝ վերջնականապես հաստատել իր գերիշխանությունը իսլամ դավանող բոլոր ժողովուրդների՝ արաբների, քրդերի, ալբանացիների և ուրիշների նկատմամբ։ Պանիսլամիզմի տարածման միջոցով երիտթուրքերը ձգտում էին իրար դեմ հրահրել թուրքական լծի դեմ հանդես եկող ժողովուրդներին և նրանց ազգային-ազատագրական պայքարը փոխարինել կրոնական պայքարով։ Պանիսլամիզմը բոլորովին չէր ճանաչում ազգերը և ազգային ակնկալությունները, ժխտում էր յուրաքանչյուր ազգի ներսում դասակարգերի ու դասակարգային պայքարի առկայությունը, բորբոքում էր ատելություն Օսմանյան կայսրության՝ ուրիշ դավանանքի պատկանող ժողովուրդների նկատմամբ, հրահրում էր նրանց իրար դեմ, դրանով փորձելով արաբներին, քրդերին ու ալ-

1 Տե՛ս Бутаев, Проблемы Турции, Л-д, 1925, стр. 114.

բանացիներին շեղել իրենց ազատագրական պայքարից, իսկ մահմեդական աշխատավորությանը՝ իր դասակարգային շահերի համար մղվող պայքարի խնդիրներից։

Պանիսլամիզմի գլխավոր խոսափողը երիտթուրքերի օրոք «Ճշմարիտ ուղի» ամսագիրն էր, որը հիմնադրվել էր 1908 թվականին, իսկ 1911 թվականի փետրվարից լույս էր տեսնում «Ճշմարտացի ուղղություն» անվան տակ։ Սերմանելով երիտթուրքական կուսակցության կրոնա-քաղաքական գաղափարախոսությունը, ամսագիրը պնդում էր, որ «մահմեդականները ո՛չ արաբներ են, ո՛չ թուրք, ո՛չ ալբանացի, ո՛չ քուրդ, ո՛չ լազ, ո՛չ չերքեզ, այլ միայն մահմեդական միասնական համայնքի մասերը»։ «Ղուրանի անունից» նա Թուրքիայի մահմեդական ժողովուրդներից պահանջում էր հրաժարվել իրենց ազգային ձգտումներից, սպառնալով, որ անհնազանդության դեպքում նրանց վրա կտեղան «ալլահի սարսափելի պատիժները» [1]։

Պանիսլամիզմի դոկտրինան պրոպագանդելու և այն երկրի ներսում տարածելու նպատակով երիտթուրքերը «կուլտուրական» հատուկ ընկերություններ ու դպրոցներ էին հիմնում, հրատարակում այլազան գրականություն։ Երիտթուրքերի տիրապետության շրջանում պանիսլամիզմի աչքի ընկնող գաղափարախոսներից մեկը՝ պատմաբան, գրող և հրապարակախոս Ջելալ Նուրին էր, որը պանիսլամիզմի ու պանթուրքիզմի թույնով լի բազմաթիվ գրքեր լույս ընծայեց։ Դրանցից ամենամեծ ճանաչում գտավ նրա «Իսլամի միություն»[2] աշխատությունը, որը լույս տեսավ բալկանյան պատերազմի ավարտից անմիջապես հետո։ Ջելալ Նուրիի գիրքը մահմեդական մոլեռանդություն ու ատելություն էր սերմանում Օսմանյան կայսրության քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ։ Գրքի առաջաբանում հեղինակը խոստովանում է, որ իրեն հետաքրքրում է պանիսլամիզմի ոչ թե կրոնական, այլ քաղաքական կողմը և պնդում, որ իսլամ դավանող ժողովուրդները կազմում են միասնական մի ազգ, որը հաշվում է մոտ 300 մլն. մարդ [3]։

Այնուհետև Ջելալ Նուրին փորձում էր համոզել, որ մահմեդական կրոնը ստեղծվել է տարբեր ժողովուրդների ու ցեղերի միջև

1 Տե՛ս Тверитинова А. С., Младотурки и пантюркизм, «Краткие сообщения Института востоковедения АН СССР», т. XXII, 1956, стр. 67.

2 Celal Nuri, Ittihat-i islam, Istanbul, 1331 (1912—1913), s. 11—13 (արաբատառ)։

3 Նույն տեղում։

եղբայրական կապ հաստատելու նպատակով, ուստի ըստ ազգությունների բաժանումը մահմեդականների համար միանգամայն անընդունելի է։ «Այսօր մահմեդականությունը չափազանց կարևոր ուժ է,— գրում էր Ջելալ Նուրին,— և հետագայում էլ նա ընդունակ է շատ կարևոր դեր խաղալու» [1]։

Ջելալ Նուրին հանդես էր գալիս եվրոպական քաղաքակրթության դեմ և կոչ անում նրանից հեռու պահել Ասիայի մահմեդականներին։ Նա իդեալականացնում էր մահմեդական ժողովուրդների նահապետական հետամնացությունը և քարոզում վերադարձ դեպի հին սովորույթներն ու օրենքները։ «Դա ոչ թե հետադիմություն կլինի,— պնդում էր Ջելալ Նուրին,— այլ զարգացում։ Մահմեդական պետությունների կառավարությունները ոչնչով չեն տարբերվում սահմանադրական կառավարություններից» [2]։

Գունազարդելով մահմեդական կրոնը, Ջելալ Նուրին փորձում էր ապացուցել, որ այն մյուս բոլոր կրոններից բարձր է, քանի որ նա միաժամանակ բարոյականության օրենսգիրք ու կառավարման ձև է, մի խոսքով, ամբողջ մի փիլիսոփայություն» [3]։

Ջելալ Նուրիի «ապացույցների» հիմնական իմաստը հանգում էր այն բանին, որ իսլամը ամենաառաջավոր կրոնն է, աշխարհի և, հատկապես, Օսմանյան կայսրության մահմեդականների համար պարտադիր կառավարման միակ ձևը։ Այստեղից էլ հետևություն է արվում, որ քրդերը, արաբները, ալբանացիները չպետք է պայքարեն իրենց ազատագրության համար, քանի որ Թուրքիայում տիրապետող կարգերը, որոնք հիմնված են մահմեդական կրոնի կանոնների ու նորմերի վրա, իդեալական են ու ամենաառաջավորը։

Նույն գրքի հատուկ գլխում (որը վերնագրված է «Թուրքեր»), խոսելով իսլամ դավանող տարբեր ժողովուրդների մասին, Ջելալ Նուրին սմեն կերպ գովաբանում էր թուրքերին, նրանց դնելով առաջին տեղում։ «Չնայած այն բանին,— գրում էր հեղինակը,— որ թուրքերն իրենց թվով մեծամասնություն չեն կազմում, նրանք իրենց հատկանիշներով մահմեդական աշխարհի ամենակարևոր մասն են հանդիսանում։ Եթե թուրքերը Թուրանից չգային Ռումի երկիրը և... սուրբ վայրերը չպաշտպանեին, մահմեդականությունը քաղաքական տեսակետից կանհայտանար» [4]։

---

1 Celal Nuri, Ittihat-i islam, Istanbul, 1331 (1912—1913), s. 21.

2 Նույն տեղում, էջ 55։

3 Նույն տեղում, էջ 46։

4 Նույն տեղում, էջ 107—108։

Թուրքերեն լեզուն Ջելալ Նուրին հռչակում էր, որպես «մահմեդական աշխարհի քաղաքական լեզու» [1]։

Բոլոր այս նացիոնալիստական պնդումները նպատակ ունեին հիմնավորել թուրքերի «գերազանցությունը» և արդարացնել նրանց տիրապետությունը արաբների, քրդերի, ալբանացիների նկատմամբ։

Եթե իրենց ներքին քաղաքականության մեջ երիտթուրքերը փորձում էին պանիսլամիզմի գաղափարախոսությունն օգտագործել Օսմանյան կայսրության մահմեդական ժողովուրդների վրա իրենց իշխանությունն ամրապնդելու համար, ապա նոր գաղափարախոսությունը՝ պանթուրքիզմը կոչված էր հեշտացնելու նրանց քաղաքականությունը Թուրքիայի քրիստոնեական ազգաբնակչության բռնի թուրքացման գործում։ Պանթուրքիզմը դառնում էր թուրքական շովինիզմի նոր ձևը, երիտթուրքերի ասիմիլյատորական քաղաքականության գլխավոր զենքերից մեկը։

Պանթուրքիզմի ամենից ավելի աչքի ընկնող ներկայացուցիչներն էին՝ Զիյա Գյոքալփը, Յուսուֆ Ակչուրան, Ահմեդ Աղաևը, Ֆուադ Քյոփրյուլյուն, Իսմայիլ-բեյ Գասպրինսկին և այլն։ Նրանց գրչին են պատկանում պանթուրքիզմին նվիրված մի շարք գրքեր։ Նրանք հրատարակում էին բազմաթիվ թերթեր ու ամսագրեր, որոնցում պրոպագանդվում էին պանթուրքական գաղափարներ։ Պանթուրքիզմի լայն տարածման նպատակով երիտթուրքական կառավարությունը Ստամբուլում և գավառական կենտրոններում 1911 թվականին հատուկ ակումբներ բացեց, այսպես կոչված, «թուրքական օջախներ» և «Թյուրք յուրդու»[2], որոնց օգնությամբ երիտթուրքերն ուզում էին երիտասարդությանը դաստիարակել ամենամոլի նացիոնալիզմի, ռասայականության ոգով։

Քրդական ազգային-ազատագրական շարժման գործիչներից մեկը՝ Ջիլադեթ-Ալի Բեդրխանը Մուստաֆա Քեմալին ուղղված 1933 թվականի դեկտեմբերի իր նամակում Թուրքիայի հանրապետական կառավարությանը մեղադրում էր այն բանում, որ վերջինս շարունակում էր երիտթուրքերի կողմից անցկացվող պանթուրքիզմի քաղաքականությունը։ Այդ կապակցությամբ նա նամակում վերհիշում էր ուսանող ժամանակ, 1909 թվականին, իր լսած դասախոսություններից մեկը, որի ժամանակ պանթուրքիզմի ջատագով Իսմայիլ Գասպրինսկին ասել էր հետևյալը. «Թուրքիայում թուրքերից

---

1 Celal Nuri, s. 70—71։

2 Տե՛ս „The Middle East Journal", volume 17, № 162, 1913, p. 55—63.

բացի չկա և չպետք է լինի որևէ այլ ազգություն»[1]։ Նման դասախոսություններով և գրքերով,— շարունակում էր Բեդրխանը,— հանդես էին գալիս Օսմանյան կայսրությունում բնակվող ոչ-թուրք ազգությունների դեմ, ցանկանալով այդպիսով կառուցել նոր թուրք ազգի հիմքը։ Շովինիստական այդ ծրագիրը երիտթուրքերը ձգտում էին իրականացնել ուրիշ ազգությունների արյան գնով։ Այնուհետև նա դիպուկ կերպով ընդգծում էր, որ երիտթուրքերի կողմից հիմնված «Թուրքական օջախները» որքան պանթուրքիստ, նույնքան էլ պանքուրդիստներ էին պատրաստում, քանի որ երիտթուրքերի ասիմիլյատորական քաղաքականության ուժեղացմանը զուգընթաց ավելի էր ուժեղանում Օսմանյան կայսրության ոչ-թուրք ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը[2]։

Եթե մահմեդական ժողովուրդների նկատմամբ երիտթուրքերը ասիմիլյատորական քաղաքականություն էին վարում, ապա քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ, շարունակելով արյունոտ սուլթան Աբդուլ Համիդի գործը, ուղղակի կիրառում էին ֆիզիկական բնաջնջման տակտիկա։ Դա բացատրվում էր նրանով, որ երիտթուրքերը վստահ չէին, որ հնարավոր է թուրքացնել սլավոնական ժողովուրդներին, հայերին ու հույներին։ Այդ կապակցությամբ Բեդրբխանը վկայում է, որ «երիտթուրքերի մշակած պլանի համաձայն, քրդերը գտնվում էին ոչ թե ոչնչացման, այլ ասիմիլյացիայի ենթակա ժողովուրդների շարքում»[3]։

Օսմանյան կայսրության քրիստոնյա ժողովուրդներին ոչնչացնելու երիտթուրքական քաղաքականության համոզիչ վկայություններից էր 1909 թվականի գարնանը Ադանայում և Կիլիկիայի այլ շրջաններում կազմակերպված զանգվածային կոտորածը, որի զոհը դարձավ խաղաղ հայ ազգաբնակչությունը։

Այդ արյունոտ իրադարձությունները սկիզբ առան Ադանայում ապրիլի 14—16-ին՝ Ստամբուլում տեղի ունեցած հետադիմական հեղաշրջման օրերին, երբ երիտթուրքերը հեռացվեցին իշխանությունից։ Նոր ջարդերը սկսվեցին ապրիլի 25-ին, այսինքն՝ երիտթուրքերի կողմից գլխավորվող զորքերի մայրաքաղաք մտնելու հաջորդ օրն իսկ։ «Այս երկրորդ կոտորածն ավելի սարսափելի էր, քան առաջինը,— հաղորդում էր Ստամբուլի ռուսական դեսպանության թարգման Մանդելշտամը։ Երիտթուրքերի կառավարությունը

1 Ciladet Bedirhan, Türkiye Cümhuriyet reisi Mustafa Kemal paşa hazretlerine açık mektup, 1933, s. 3 (արաբատառ)։

2 Նույն տեղում, էջ 4։

3 Նույն տեղում։

փորձում էր իր վրայից գցել պատասխանատվությունը՝ հորինելով հայերի հեղափոխության մասին հեքիաթը։ Սակայն փաստերի առջև նա ստիպված էր տեղի տալ և հրաժարվել այդ վերսիայից»[1]։ Ռուսական դեսպան Զինովևը 1909 թվականի մայիսի 1-ին Ստամբուլից հեռագրում էր. «...Ադանայի վիլայեթում մահմեդականների կատաղությունը հրեշավոր չափերի է հասել։ Նրանց ձեռքով զոհված քրիստոնյաների, առանձնապես հայերի թիվը հասնում է 15 հազարի»։ Կառավարության կողմից ուղարկված զորքերը մահմեդական մոլեռանդ ամբոխի հետ մեկտեղ կոտորում էին քրիստոնյաներին, «առանց սեռը և տարիքը հաշվի առնելու, կողոպտում և հրկիզում էին նրանց տները... Ադանա քաղաքը,— հաղորդում էր ցարական դեսպանը,— այլևս գոյություն չունի, իսկ ջարդերից փրկված բնակչությունը իր ունեցվածքի ու պաշարի թալանման հետևանքով սկսում է սովի մատնվել»[2]։

Ադանայի իշխանությունների օրինակին հետևեցին և Թարսուսի տեղական իշխանությունները, որտեղ մայիսի 3-ին հրդեհներ բռնկվեցին, սկսվեցին կողոպուտներն ու սպանությունները։ Քրիստոնյաների ջարդը տարածվեց նաև Ալեքսանդրետում ու մերձակայքի գյուղերում։ «Հայերի ջարդը,— տեղեկացնում էր ռուսական դեսպանը,— տարածվեց նաև Հալեպում, Զեյթունում, Մարաշում, Անտիոքում և Բիլեջիկում»[3]։

Ադանայի դեպքերի ականատեսներից մեկը՝ Հելեն Գիբոնսը գրում էր, որ հայերին անողոքաբար կոտորում և գնդակահարում էին փողոցներում, կենդանի այրում այն տներում, որտեղ նրանք պատսպարվում էին։ Չէին խնայում ո՛չ ծերերին, ո՛չ կանանց, ո՛չ էլ երեխաներին։ Այդ ջարդն ավելի սարսափելի էր, քան Աբդուլ Համիդի ժամանակներում,— եզրակացնում էր հեղինակը[4]։

Մի ուրիշ ականատես վկայում էր, որ ապրիլի 16-ին Թարսուսի տեղական իշխանությունները զենք բաժանեցին հատուկ գնացքով ժամանած մոլեռանդ մահմեդականներին, որոնք, ներխուժելով քաղաքի հայաբնակ թաղամասերը, այնտեղ արյունալի ջարդ կազմակերպեցին։ «Թարսուսի հայկական տները կրակի մատնվեցին... երկինքը լուսավորվեց հրդեհի բոցերից... Այրվեց 800 տուն։ Այրվող տները լքող բնակիչները գնդակոծվում էին։ Շատ քիչ հայեր կեն-

1 Mandelstam A., „Le sort de l'Empire Ottoman", Paris, 1917, p. 205.

2 АВПР, ф. «Политархив», д. 1034, л. 130.

3 Նույն տեղում։

4 Gibbons Helen Davenport, The Red Rugs of Tarsus, Paris, 1919, p. 101.

դանի մնացին»[1]։ Հելեն Գիբոնսը մատնանշում էր, որ Ադանա ուղարկված կանոնավոր զորքերը ապրիլի 29-ի գիշերը սարսափելի ջարդ կազմակերպեցին։ Ջարդի նախօրյակին, հանգստություն ապահովելու պատրվակի տակ, Թուրքական իշխանությունները զինաթափ արեցին Ադանայի ու Կիլիկիայի մյուս քաղաքների հայ ազգաբնակչությանը։ Ըստ որում հայերը զենքը հանձնեցին Մերսինի ծովածոցում կանգնած անգլիական ու ֆրանսիական ռազմանավերի հրամանատարության խորհրդով։ «Այն հայերը, որոնք փրկվել էին առաջին ջարդի ժամանակ, այժմ սրի քաշվեցին։ Ադանան դժոխք է դարձել»,— գրում էր Գիբոնսը[2]։ Եվ այս բոլորը տեղի էր ունենում եվրոպական պետությունների ռազմանավերի հրամանատարության աչքի առջև։ «Եվրոպական դիվանագետները անսիրտ ու ցինիկ են։ Նրանք Թուրքերի հետ հավասար չափով մեղավոր են ջարդերի մեջ»,— եզրակացնում էր Գիբոնսը[3]։

Նույնիսկ տեղական իշխանությունների տեղեկությունների համաձայն, այդ գազանությունների հետևանքով միայն Ադանայի վիլայեթում սպանվեցին մոտ 20 հազար քրիստոնյաներ, գերազանցապես հայեր։ Հալեպի վիլայեթում զոհվեց 3 հազար մարդ[4]։

Ջանալով արդարացնել երիտթուրքերի քաղաքականությունը, ժամանակակից Թուրք պատմաբանները շարամիտ կերպով նենգափոխում են պատմական փաստերը, այդ թվում նաև Ադանայի 1909 թվականի արյունոտ իրադարձությունները։ Այսպես, պանթուրքիստ պատմաբան Էսատ Ուրասը «Հայերը պատմության մեջ և հայկական հարցը» վերնագրով գրքում, Ադանայի ջարդի մասին խոսելիս, անհիմն կերպով պնդում է, որ դրա պատասխանատվությունն ընկնում էր հայերի վրա, որոնք իբր թե տանջում էին մահմեդականներին։ «Երիտթուրքական կառավարությունն այստեղ մեղք չունի»,— հայտարարում է նա։ Էսատ Ուրասը գիտակցորեն նվազեցնում է Ադանայի ջարդի զոհերի թիվը, պնդելով, որ իբր սպանվել է ընդամենը 1000 մարդ[5]։

Երիտթուրքական կառավարությունը հետագայում ևս շարունակում էր ճնշել ու հալածել հայերին։ Խոսելով Ադանայի կոտորածից հետո հայերի նկատմամբ երիտթուրքերի վարած քաղաքականության մասին, Մանդելշտամը գրում էր, որ նրանց ոչնչացումը

1 „La voix de l'Armenie", 15 I. 1918, No 2, p. 67.
2 Gibbons, p. 122.
3 *Նույն տեղում, էջ 132։*
4 ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 100, л. 253—254.
5 Esat Uras, Tarihte Ermeniler ve Ermeni meselesi, Ankara, 1950 s. 575.

շարունակվում էր դանդաղ, բայց անշեղորեն[1]։ Ռազմական կարիքների համար կատարվող ծախսերը ծածկելու նպատակով կառավարությունը բարձրացնում էր քրիստոնյա ազգաբնակչությունից գանձվող հարկերը, առանձնապես զինվորական հարկը (33 տոկոսով)[2]։ Թուրքիայի կողոպտված ու քայքայված հայ ազգաբնակչության համար այդ հարկը չափազանց ծանր էր։

Միաժամանակ, տեղական իշխանությունները շարունակում էին խրախուսել Թուրք և քուրդ կալվածատերերի կողմից հայերի հողերի բռնագրավումը, որը 1912—1913 թվականներին Բալկանյան պատերազմի տարիներին զանգվածային բնույթ ընդունեց։ Ստամբուլում ցարական Ռուսաստանի դեսպան Գիրսը այն ժամանակ հաղորդում էր, որ «ագրարային հարցը օրեցօր սրվում է. հողերի մեծ մասը զավթվել է քրդերի կողմից և իշխանությունները ոչ միայն չեն խոչընդոտում, այլ նույնիսկ հովանավորում ու նպաստում են այդ զավթումներին»[3]։

Թուրք պաշտոնյաները հայերին ստիպում էին ստորագրել այնպիսի փաստաթղթեր, որոնցով նրանք իբր իրենց հողերը «զիջում էին» Բալկանյան թերակղզուց գաղթած մահմեդականներին (մուհաջիրներին), նպատակադրվելով այդ եղանակով ուժեղացնել մահմեդական տարրը Փոքր Ասիայի արևելյան վիլայեթներում։ Թուրքական իշխանություններն ամենայն անողոքությամբ գանձում էին ապառքները հայկական տնտեսություններից։ Դրանք մարելու համար աճուրդով վաճառվում էին հայ գյուղացիների հողամասերը, անասունները և անձնական գույքը[4]։ Հայ գյուղացիության զանգվածային ունեզրկումն ընթանում էր ոչ այնպես հարթ, ինչպես կցանկանային երիտթուրքերը։ Այդ կապակցությամբ առաջացած հուզումները, որոնք ընդգրկեցին Արևելյան Անատոլիայի վիլայեթները, լուրջ մտահոգություն պատճառեցին սուլթանական կառավարությանը։ Ներքին գործերի մինիստր Գազի Մուխթարը 1912 թվականին հաստատում էր, որ «հարցը մանրաղնին կերպով քննելուց հետո մինիստրների խորհուրդը եկավ այն եզրակացության, որ խռովությունը ծագել է գլխավորապես հողային վեճերի պատճառով»[5]։

1 Mandelstam, p. 212.
2 ЦГВИА, ф. 444, д. 23, л. 48—49.
3 «Реформы в Армении», 26 XI 1912 г.—10 V 1914 г. Сборник дипломатических документов МИД, Пб, 1915, № 9, *այսուհետև՝* «Реформы в Армении».
4 ЦГИА Груз. ССР, ф. 85 с, д 58, л. 18—20.
5 АВПР, ф. «Политархив», д. 1044, л. 233.

Բալկանյան առաջին պատերազմում Թուրքիայի կրած պարտությունը և դրա հետևանքով թուրքական լծից բալկանյան սլավոնների վերջնական ազատագրումը հայերի մեջ հույս էր ներշնչում, որ իրենք ևս շուտով կհասնեն ազգային անկախության։ Այդ պատճառով էլ արևելյան վիլայեթների հայ ազգաբնակչությունը ուժեղացրեց իր պայքարը թուրք հարստահարողների դեմ։

Հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման նոր վերելքը, ինչպես այդ արվում էր նախկինում, իմպերիալիստական տերությունները փորձեցին օգտագործել իրենց նպատակներին հասնելու համար։ Հայկական հարցում առավել շահագրգռված էր ցարական Ռուսաստանը, որը վաղուց ի վեր ձգտում էր իր տիրապետություններն ընդարձակել Թուրքիայի կազմի մեջ մտնող Արևմտահայաստանը Արևելյան Հայաստանին միացնելու ճանապարհով։

Իտալա-թուրքական և, հատկապես, բալկանյան առաջին պատերազմի հետևանքով Օսմանյան կայսրության ծայրահեղ թուլացումը ձեռնտու էր ցարիզմին, որը հույս ուներ Արևմտյան Հայաստանի տերիտորիան օգտագործել որպես հարմար հենակետ Մերձավոր արևելքում իր հետագա էքսպանսիայի համար։ Բացի այդ, Արևմտյան Հայաստանը ցարական Ռուսաստանին հետաքրքրում էր նաև տնտեսական տեսակետից։ Օսմանյան կայսրության արևելյան վիլայեթների հետ կատարվող առևտրում Ռուսաստանը գրավում էր առաջին տեղը։ Դրանով էլ հենց բացատրվում էր այն ուժեղ հակազդեցությունը, որ ցարական կառավարությունը ցույց էր տալիս եվրոպական կապիտալի ներթափանցմանը Արևմտյան Հայաստան, որը ռուսական ապրանքների վաճառահանման մենաշնորհ շուկան էր հանդիսանում։

Ահա սրանք էին ակունքներն ու արմատները բացառիկ այն համառության, որը հանդես էր բերում ցարական դիվանագիտությունը հայկական հարցում՝ առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին։

Թուրքական ասիմիլյատորների տիրապետության տակ գտնվող Արևմտահայաստանի ազգաբնակչությունը սուլթանական լծից ազատագրվելու գործում վաղուց ի վեր իր հույսը կապում էր Ռուսաստանի աջակցության հետ։ 1913 թվականի իր զեկուցագրերից մեկում Գիրսը նշում էր, որ անկախ իրենց կուսակցական պատկանելիությունից, բոլոր հայերը Ռուսաստանի կողմն են, անկեղծորեն ցանկանում են ռուսական զորքերի գալը և ռեֆորմներ՝ ռուսական վերահսկողության ներքո[1]։ Այդ մասին է վկայում նաև Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ 5-րդի ուղերձը, որտեղ նա, դիմելով Ռուսաստանին, որպես «Արևելքի քրիստոնյա ժողովուրդների վաղեմի պաշտպանի», խնդրում էր իր հովանավորության տակ վերցնել Թուրքահայաստանում բնակվող բազմաչարչար հայ ժողովրդին[1]։

Նույնանման խնդրանքով Գևորգ 5-րդը դիմեց նաև եվրոպական այլ տերությունների։ Սակայն այդ դիմումներին, ելնելով իր շահերից, արձագանքեց միայն ցարական Ռուսաստանը, որն իր դիվանագիտական ներկայացուցիչների միջոցով սկսեց ճնշում գործադրել երիտթուրքական կառավարության վրա։

Պետերբուրգում երկյուղ էին կրում, որ օգտվելով Թուրքիայի թուլությունից, հայերը կարող են զենքի դիմել, իսկ դա սպառնում էր խիստ բարդացնել արևելյան հարցը, որից ցարիզմը տվյալ մոմենտին ցանկանում էր խուսափել։ Բացի այդ, ռուսական կառավարությունը վախենում էր, որ արևմտահայ ազգաբնակչության զինված ապստամբության հաջողությունը կարող է վարակիչ օրինակ ծառայել Անդրկովկասում բնակվող հայերի համար։ Ահա թե ինչու ցարական դիվանագետները Արևմտյան Հայաստանի քաղաքական ղեկավար գործիչներին համոզում էին հեռու մնալ նման գործողություններից։

Այսպես, դաշնակցության նշանավոր գործիչներից մեկի՝ դոկտոր Ջավրիևի հետ ունեցած զրույցի ժամանակ Գիրսը նրան խորհուրդ էր տալիս, որ «հայերն ամբողջ Եվրոպայի աչքում երևան որպես թուրքական բռնակալության զոհեր և ոչ թե դառնան քաղաքական հեղափոխականներ, որոնք ուզում են թուրքական ռազմական անհաջողություններից օգտվել՝ իրենց ազգային ձգտումներն իրականացնելու համար։ Ուստի պետք չէ, որ հայերը դիպչեն Թուրքիային և, առավել ևս՝ ապստամբություն բարձրացնեն»[2]։

Չնայած հայ ազգաբնակչության բազմաթիվ խնդրանքներին, ցարական կառավարությունը չէր համաձայնվում իր զորքերը մտցնել Արևմտյան Հայաստան։ Այդպիսի քայլը եվրոպական քաղաքականության օրակարգում առաջ կքաշեր Ասիական Թուրքիայի բաժանման հարցը։ Այնինչ, անպատրաստ լինելու պատճառով, ցարիզմը այդ շրջանում գտնում էր, որ դեռևս ժամանակը չէ սրել արևելյան հարցը։ Ուստի Պետերբուրգում գտան, որ հարկավոր է սահմանափակվել ռեֆորմների պահանջով, որոնք որոշ չափով կթեթևացնեին արևմտահայերի վիճակը և, այդպիսով, է՛լ ավելի

1 «Реформы в Армении», № 1.

1 «Реформы в Армении», док. № 1.

2 Նույն տեղում, № 7։

կուժեղացնեին Ռուսաստանի դիրքերն Արևմտյան Հայաստանում ու ինչ-որ չափով կթուլացնեին հեղափոխական շարժումներն Անդրկովկասում։ Այդ մասին Գուլկևիչը ուղղակի ասում էր, որ «Հունվարի 26-ի համաձայնագիրը էլ ավելի կգրավի ռուսահայերի համակրանքը դեպի ռուսական կառավարությունը և նրանց հեռու կպահի մեր ձախ կուսակցությունների համալրումից» [1]։

Այդ ռեֆորմների նախագիծը, որը Դիրսի հանձնարարությամբ կազմել էր դեսպանության առաջին թարգման Մանդելշտամը, սուլթանական կառավարությանն ուղարկվեց 1913 թվականի հուլիսին և այն նույն ամսի 24-ին քննարկվեց Ստամբուլում կայացած եվրոպական վեց տերությունների ներկայացուցիչների խորհրդակցությունում։

Այդ նախագծի համաձայն, նախատեսվում էր վեց վիլայեթներից (Կարինի, Վանի, Բաղեշի, Դիարբեքիրի, Խարբերդի և Սեբաստիայի) կազմել հայկական մարզ, որի գլուխ պետք է կանգներ տերությունների համաձայնությամբ սուլթանի կողմից նշանակված գեներալ-նահանգապետը։

Գեներալ-նահանգապետի իրավասության մեջ էր մտնում տեղական ադմինիստրացիայի ու դատավորների նշանակումն ու արձակումը։ Հենց նրան էլ պետք է անմիջականորեն ենթարկվեին ոստիկանությունն ու ժանդարմերիան։ Գեներալ-նահանգապետի պահանջով նրա տրամադրության տակ պետք է դրվեին զինված ուժեր՝ մարզում կարգ ու կանոնը պաշտպանելու համար։ Գեներալ-նահանգապետը կարող էր հրավիրել մարզային ժողով, որը կոչված էր տեղական օրենքներ մշակելու։ Այդ ժողովում մահմեդականներին ու ոչ-մահմեդականներին հավասար տեղեր էին տրվում։ Հայկական մարզում լեզուների հավասարություն էր հաստատվում։ Մարզը բնակեցնող բոլոր ազգությունները դպրոցական կրթության ազատություն էին ստանում։ Հայերից ապօրինի կերպով խլված հողերը պետք է ետ վերադարձվեին։ Մարզի տերիտորիայում արգելվում էր մուհաջիրներին բնակեցնել։ Վերացվում էր քրդական անկանոն հեծելազորը՝ «Համիդիեն», որը երկար տարիների ընթացքում թուրքական իշխանությունների ձեռքում հիմնական զենք էր ծառայում հայ ազգաբնակչության ֆիզիկական ոչնչացման գործում։

Ստամբուլի խորհրդակցությունում ռեֆորմների ռուսական նախագիծը հանդիպեց համառ դիմադրության՝ եռյակ միության ներկայացուցիչների կողմից, որոնք առաջարկում էին Արևմտյան Հայաստանում նախատեսվող բարեփոխումների հիմքում դնել Բեռլինի խորհրդով թուրքական կառավարության հապճեպ կազմած նախագիծը։ Այդ նախագծով Արևմտահայաստանը բաժանվում էր երկու հատվածի, որոնց գլուխ էին կանգնելու, առանց տերությունների հավանության, սուլթանի կողմից նշանակված օտարերկրացի «գլխավոր տեսուչները»։ Ընդ որում լրիվ պահպանվում էր վիլայեթների գոյություն ունեցող կառուցվածքը, իսկ տեսուչներին միայն իրավունք էր տրվում վերահսկել տեղական թուրք պաշտոնյաների գործունեությունը։

Ըստ էության, թուրքական նախագիծը մերժում էր Ռուսաստանի կողմից առաջ քաշվող ռեֆորմները։ Դրությունն Արևմտյան Հայաստանում պետք է մնար անփոփոխ, առաջվա պես։ Գերմանիայի արտաքին գործերի մինիստրության պետական քարտուղար Յագովն ուղղակի հայտարարեց, որ «սկսելով Հայաստանում բարեփոխումների հարցի քննարկումը, անհրաժեշտ է խստորեն պաշտպանել թուրքական կայսրության տերիտորիալ ամբողջականության սկզբունքը»։ Դրանով Յագովը հասկացնել էր տալիս, որ Գերմանիան դեմ է Ռուսաստանի դիրքերի ուժեղացմանը Փոքր Ասիայում, որի վրա աչք էին դրել իրենք՝ գերմանական իմպերիալիստները։

Գերմանական կառավարության կարծիքով, ռեֆորմների ռուսական նախագծի իրականացման դեպքում Անատոլիայի կեսից կստեղծվեր Հայաստան, որը միայն շատ թույլ կապով կապված կլիներ Թուրքիայի հետ։ «Դժվար կլիներ Թուրքիայի մնացած մասերին մերժել այն, ինչ որ կտրվեր Հայաստանին,— ասվում էր Պետերբուրգի գերմանական դեսպանության հուշագրում։ Նման դրությունը փաստորեն կհանդիսանար Թուրքիայի բաժանման սկիզբը, ինչից կայսերական կառավարությունը, անկասկած, ձգտում է խուսափել» [1]։ Իրեն ձևացնելով Թուրքիայի ամբողջականության պաշտպան, գերմանական կառավարությունն իրականում առաջնորդվում էր օսմանյան ողջ կայսրությունն իր գաղութը դարձնելու ձգտումով։

Եթե Գերմանիան ու նրա դաշնակիցները՝ Ավստրո-Հունգարիան ու Իտալիան բացորոշ հանդես էին գալիս Հայաստանում որևէ կարգի ռեֆորմներ անցկացնելու հակառակորդների դերում, ապա Անգլիան ու Ֆրանսիան, նույնպես չցանկանալով Ռուսաստանի ազդեցության ուժեղացումը Փոքր Ասիայում, այդ բանն անում էին քողարկված ձևով։ Ստամբուլի հիշյալ խորհրդակցությունում Անգ-

1 МОЭИ, серия III, т. I, стр. 259, док. № 210.

1 «Реформы в Армении», № 58.

լիայի ու Ֆրանսիայի դեսպանները ձևականորեն պաշտպանում էին ռեֆորմների ռուսական նախագիծը և ըստ էության չէին մերժում գերմանական դեսպանի առաջարկները։ Դրանով էլ հենց բացատրվում է ռուսական նախագծի ձախողումը։

Միայնակ մնալով, ռուսական դիվանագիտությունը ստիպված էր կոմպրոմիսի գնալ գերմանական կառավարության հետ, որը 1913 թվականի սեպտեմբերին առաջ քաշեց Հայաստանում անցկացվելիք ռեֆորմների նոր ծրագիր։ Վերջինիս հիմքում ընկած էին ռեֆորմների թուրքական ու ռուսական նախագծերը։ Գերմանիայի առաջարկի համաձայն, Արևմտահայաստանը պետք է բաժանվեր երկու հատվածի։ Առաջին հատվածի մեջ ընդգրկվելու էին Տրապիզոնի, Սրվազի, Կարինի, երկրորդի մեջ՝ Խարբերդի, Բաղեշի, Վանի և Դիարբեքիրի շրջանները։ Յուրաքանչյուր հատվածի գլուխ էր կանգնելու տերությունների հանձնարարականով թուրքական կառավարության կողմից նշանակվող գլխավոր տեսուչը։ Տեսուչներին իրավունք էր վերապահվում արձակել ու նշանակել ցածրաստիճան պաշտոնյաներին և բարձրաստիճան պաշտոնյաների ու դատավորների թեկնածություններ առաջադրել՝ սուլթանի հաստատմանը։ Նախատեսվում էր յուրաքանչյուր հատվածում ժողովներ (օրենսդրական մարմիններ) ստեղծել՝ մահմեդականների ու քրիստոնյաների հավասար ներկայացուցչությամբ և նրանց միջև բոլոր պաշտոնների հավասար բաշխումով։ Եվրոպական տերություններին, Ստամբուլի իրենց դեսպանների, ինչպես նաև հյուպատոսների, միջոցով իրավունք էր վերապահվում վերահսկել այդ ռեֆորմների կիրառումը կյանքում։

Հիշյալ նախագիծը ներկայացնելով թուրքական կառավարությանը, Ստամբուլում գերմանական դեսպան Վանգենհայմը ընդգծում էր, որ «Եվրոպան չի ցանկանում Թուրքիայի դեմ հարկադրական միջոցներ կիրառել, ուստի հարկավոր է վերջինիս առաջարկել միայն այն ռեֆորմները, որոնք նա կամավոր կերպով կընդունի»[1]։ Դրանով գերմանական կառավարությունը սուլթանական կառավարությանը դրդում էր մերժելու Հայաստանում անցկացվելիք ռեֆորմների նույնիսկ այդ խիստ չափավոր նախագիծը։

Օգտվելով Գերմանիայի աջակցությունից և Անգլիայի ու Ֆրանսիայի անգործունեությունից, թուրքական կառավարությունը անմիջապես մերժեց ռեֆորմների վերջին նախագծի բոլոր հիմնական հոդվածները։ Ռուսաստանը ստիպված էր միայնակ երկարատև դիվանագիտական պայքարի մեջ մտնել սուլթանական կառավարության

1 «Реформы в Армении», № 73.

հետ, որի հետևանքով 1914 թվականի հունվարի 26-ին հաստատված ռեֆորմներն արմատապես տարբերվում էին ռուսական նախագծում առաջ քաշված ռեֆորմներից։ Այս վերջին գործողությանը իր գնահատականը տալով, Ստամբուլում գործերի հավատարմատար Գուլկևիչը (որը Թուրքիայի ներկայացուցչի հետ ստորագրել էր Հայաստանում անցկացվելիք ռեֆորմների մասին համաձայնագիրը) գրում էր հետևյալը. «...Հարկավոր է, իհարկե, ընդունել, որ նա հայերին չի տալիս ինքնավարության այն ընդարձակ իրավունքները, որոնք ապահովված կլինեին ռուսական նախնական նախագծով։ Հայերով բնակեցված բոլոր վայրերը մեկ գեներալ-նահանգապետի գլխավորությամբ մեկ նահանգում միավորելու փոխարեն, որը նախատեսվում էր մեր նախագծով, հարկ եղավ բավարարվելու երկու հատվածների կազմակերպումով՝ երկու գլխավոր տեսուչների վերահսկողության ներքո, այդ հատվածների մեջ մտցնելով վիլայեթների այն մասերը, որոնք բնակեցված են բացառապես մահմեդականներով»[1]։

Ռուս-թուրքական համաձայնագրով, գլխավոր տեսուչները նշանակվում էին թուրքական կառավարության կողմից՝ տերությունների հանձնարարականով, իսկ ամբողջ Արևմտյան Հայաստանի համար մեկ ընդհանուր մարզային ժողով չէր նախատեսվում։ «Համիդիե» գնդերը չէին ցրվելու, ինչպես այդ նախատեսվում էր ռուսական նախագծով, այլ միայն պետք է վերակազմվեին որպես հեծելազոր՝ ենթարկված «բանակային կորպուսների այն հրամանատարներին, որոնց օկրուգներում նրանք տեղադրված էին»[2]։ Դրանով թուրքական կառավարությունը հնարավորություն էր ստանում, ինչպես այդ լինում էր առաջներում, ցանկացած ժամանակ «համիդիեներն» օգտագործել հայերի նոր ջարդեր կազմակերպելու համար։

Նոր ծրագրով նախատեսվող ռեֆորմները չէին երաշխավորում Թուրքիայի հայ ազգաբնակչության ո՛չ անձնական անվտանգությունը, ո՛չ նրանց բնակավայրերի ու ունեցվածքի պահպանումը, և հայերը առաջվա նման մշտապես պետք է գտնվեին հալածանքների ու ջարդերի վտանգի տակ։

Նույնիսկ այն պոչատ ռեֆորմները, որոնք երիտթուրքական կառավարությունը «պարտավորվել» էր անցկացնել Արևմտյան Հայաստանում, տարբեր պատրվակներով ձգձգում էր, թեև Ռուսաստանը (որի վրա էր դրված դրանց կենսագործման ընդհանուր վերա-

1 «Реформы в Армении», № 148.
2 Նույն տեղում, № 147։

հսկողությունը) անընդհատ ճնշում էր գործադրում Բարձր Դռան վրա։

Թուրքական կառավարության վերաբերմունքը դեպի հիշյալ համաձայնագիրը պարզորոշ երևում է Ջեմալ-փաշայի հետևյալ խոսքերից. «Հայկական նահանգներում վերանորոգումներ մտցնելու վերաբերյալ համաձայնագիրը, որը մեր վզին փաթաթվեց մեր դարավոր թշնամու (Ռուսաստանի) կողմից, մեզ համար էական ոչ մի նշանակություն չուներ»[1]։

Հետագայում, օգտվելով համաշխարհային պատերազմի բռնկվելուց, երիտթուրքերը չեղյալ հայտարարեցին Հայաստանում ռեֆորմների վերաբերյալ Ռուսաստանի հետ կնքած համաձայնագիրը։ Դեռ ավելին, նրանք որոշեցին վերջնականապես «լուծել» հայկական հարցը՝ հայերին իրենց պատմական հայրենիքից՝ Արևմտյան Հայաստանից արտաքսելու և գաղանաբար բնաջնջելու միջոցով։

***

Իրենց շովինիստական քաղաքականությունն ազգային հարցում երիտթուրքերը անց էին կացնում նաև քուրդ ազգաբնակչության նկատմամբ, որը, բնականաբար, խիստ բողոքներ էր առաջ բերում։ Երիտթուրքական հեղափոխության պայմաններում քուրդ հասարակական գործիչները 1908 թվականի աշնանը Ստամբուլում հիմնեցին ակումբ, որտեղ պրոպագանդվում էր քրդերի կոնսոլիդացիայի գաղափարը, առաջ էր քաշվում նրանց համատեղ գործողությունների անհրաժեշտությունը՝ քաղաքական իրավունքներ ձեռք բերելու ու տնտեսական վիճակի բարելավման հասնելու համար։

Նման ակումբներ հիմնվեցին նաև Բաղդադում, Մոսուլում և Դիարբեքիրում։ Մայրաքաղաքում թուրքերեն լեզվով սկսեց լույս տեսնել «Քրդական փոխադարձ օգնության և առաջադիմության թերթ» («Kürd taavun ve terakki gazetesi»), որի առաջին համարներում հոդվածներով հանդես եկան քրդական ազգային շարժման նշանավոր ներկայացուցիչներ Բաբան-զադե Իսմայիլ Հաքքը, Սայիդ Խուրդինը, շեյխ Կադերը և ուրիշներ։ Նրանք քարոզում էին քրդական լեզվի զարգացման անհրաժեշտությունը, գտնելով, որ այն պետք է դառնա քրդերի ազգային միասնության հիմքը, քրդերին կոչ էին անում թուրքերենի փոխարեն ուսումնասիրել իրենց մայրենի լեզուն։ Միաժամանակ, քրդական շարժման առաջնորդները պահանջում էին կազմակերպել քրդական առանձին բանակային զորամասեր։

Երիտթուրքական հեղափոխությունից հետո, սկզբնական շրջանում, քրդական հասարակական գործիչներն ու քուրդ մտավորականությունը հաճախ հանդես էին գալիս բոլոր թուրքահպատակների համատեղ գործողությունների օգտին՝ առանց հաշվի առնելու ազգային պատկանելիությունը։ Թուրքական մեջլիսում քուրդ և հայ պատգամավորները մի շարք հարցերում պաշտպանում էին ընդհանուր տեսակետներ[1]։

Քրդերի և հայերի համատեղ գործողությունները երիտթուրքական կառավարությունը դիտում էր որպես լուրջ խոչընդոտ իր ասիմիլյատորական քաղաքականությունն իրականացնելու ճանապարհին։ Քրդերի ու հայերի միջև ազգային թշնամանք բորբոքելու նպատակով երիտթուրքական կոմիտեն, 1909 թվականի ամռանից սկսած, իր գործակալներն էր ուղարկում քրդաբնակ ու հայաբնակ շրջանները[2]։

Երիտթուրքական կառավարությունը խիստ մեծացրեց գոյություն ունեցող հարկերը և, միաժամանակ, նոր հարկեր մտցրեց։ Եթե քրդերն առաջ 40 ոչխարից միայն մեկն էին որպես հարկ վճարում, ապա «ներկայումս,— հաղորդում էր Ռուսաստանի զինվորական գործակալը Ստամբուլում,— կառավարությունը նրանցից վերցնում է 3 և կես դուրուշ՝ յուրաքանչյուր ոչխարի դիմաց և 100 դուրուշ՝ յայլաղից... Այժմ որոշվել է հարկերը ավելացնել ևս 25 տոկոսով...»։ Այնուհետև նա գրում էր, որ «քրդերը որոշել են պայքարել հարկերի բարձրացման դեմ, հրաժարվում են հարկ վճարել և պատրաստվում են կառավրությանը դիմադրություն ցույց տալ»[3]։

Ռուսաստանի ներկայացուցիչները Թուրքիայում 1913—1914 թվականների ընթացքում բազմիցս տեղեկացնում էին քրդական ապստամբությունների մասին։ Այսպես, 1913 թվականի մայիսի 2-ի իր դեկուցագրում զինվորական գործակալը Ստամբուլից հաղորդում էր, որ «Երզնկայի շրջակայքում քրդերը սկսել են թուրքական իշխանությունների նկատմամբ իրենց հանդուգն պահել. հրաժարվեցին նորակոչիկներ ուղարկել բանակ, քշեցին հարկահավաքներին։ Ջեզիրեի շրջանում (Դիարբեքիրի վիլայեթ) քրդերն ապստամբություն են բարձրացրել թուրքական կառավարության դեմ»[4]։

---

1 Джемаль-паша, стр. 233.

1 Arshak Safrastian, Kurds and Kurdistan, London, 1948, p.71

2 Նույն տեղում, էջ 71։ Այդ մասին էր հաղորդում նաև Ռուսաստանի զինվորական գործակալը Ստամբուլից։ Տե՛ս ЦГВИА, ф. 2000/с. оп. 1, д. 991, л. 427—430.

3 ЦГВИА, ф. 2000/с, оп. 1, д. 991, л. 565—566.

4 Նույն տեղում, թ. 503։

Փոքր Ասիայի ազգաբնակչության դժգոհությունը երիտթուրքական ռեժիմից արտահայտվեց 1913 թվականի գարնանը Բաղեշի վիլայեթում բռնկած քրդական խոշոր ապստամբությամբ։ Ապստամբության գլխավոր պատճառը հարկերի խիստ ավելացումն էր, իսկ անմիջական առիթ ծառայեցին Բաղեշի վալիի պահանջները՝ անհապաղ վճարել հարկերից մնացած պարտքը և քուրդ նորակոչիկներ ուղարկել թուրքական բանակ։ Տեղի քրդական շեյխ Սայիդը հրաժարվեց այդ պահանջները բավարարել։ Վալին, այն ժամանակ, անհնազանդ շեյխի դեմ ոստիկանական մի ջոկատ ուղարկեց։ Դիարբեքիրի վիլայեթի հազարավոր քրդեր անմիջապես հանդես եկան շեյխ Սայիդի կողմում։ Ոստիկանները ցաքուցրիվ փախան՝ նույնիսկ չընդհարվելով ապստամբ քրդերի հետ։ Ապստամբները գրավեցին Բաղեշը և իրենց վերահսկողությունը հաստատեցին նրա մերձակա շրջանների վրա։ Բաղեշի վալին և թուրքական բոլոր պաշտոնյաները փախան քաղաքից [1]։

Հիշյալ դեպքերի ականատեսներից մեկի՝ Բաղեշում գտնվող ավստրոհպատակ Վոլֆարտի վկայությամբ, թուրքական կառավարությունը հանդես բերեց իր կատարյալ սնանկությունն ու երկչոտությունը։ Չնայած այն բանին, որ թուրքական զորքերի տրամադրության տակ էին գտնվում հրանոթներ ու գնդացիրներ, իսկ նրանց դեմ՝ վատ զինված քրդերը, Բաղեշի տակ թուրքերը պարտություն կրեցին և, անկանոն նահանջելով դեպի քաղաք, փակվեցին միջնաբերդում, դիմելով այնուհետև լոկ պասսիվ պաշտպանության [2]։

Այդ իրադարձությունների մյուս վկաները նշում էին, որ թուրքական իշխանությունների դեմ մղված պայքարի ընթացքում քրդերն ու հայերը ձգտում էին իրար հետ կապ հաստատել՝ ընդհանուր թշնամու դեմ համատեղ գործողություններ կազմակերպելու նպատակով։ Այսպես, Վանում ռուսական փոխ-հյուպատոս Օլֆերևը հաղորդում էր, որ տեղացի հայերի ներկայացուցիչները բարեկամական հանդիպում էին ունեցել քրդական շեյխ Սայիդի հետ. հայերը գտնում էին, որ կարելի է շեյխի հետ համաձայնության գալ համատեղ ելույթների հարցում։ Իսկ Բաղեշի ռուսական փոխ-հյուպատոս Շիրկովը հաղորդում էր, որ շեյխ Բեդրխանին ենթակա քրդերը խոստացել են իրենց աջակցությունը ցույց տալ Սիիրթի ու Դիարբեքիրի հայերին՝ թուրքական իշխանությունների դեմ նրանց պայքարում [3]։

1 Arshak Safrastian, p. 73։
2 Տե՛ս ЦГВИА, ф. 2000/с, оп. 1, д. 991, л. 525.
3 Նույն տեղում, թ. 417—430։

Բաղեշի վիլայեթում ծավալված քրդական ապստամբության թափը Ստամբուլի կառավարական շրջաններում մեծ տագնապ առաջ բերեց, որը ցայտուն կերպով արտացոլվեց պաշտոնական մամուլի էջերում։

Քրդական ապստամբության հաջողությունները վեր հանեցին Արևելյան Անատոլիայում կառավարական ապարատի թուլությունը և տեղական քուրդ ազգաբնակչության վրա ունեցած թուրքական ազդեցության անկայունությունը։

Ապստամբությունը ճնշելու համար երիտթուրքական կառավարությունը ստիպված էր զորամասեր բերել Մուշից, Դիարբեքիրից ու Վանից։ Թվական զգալի գերազանցություն ունեցող թուրքական զորքերը ապստամբներին ստիպեցին նահանջել։ Ի վերջո, նրանց հաջողվեց ճնշել քրդերի ապստամբությունը։ 1914 թվականի ապրիլ-մայիսի ընթացքում թուրքական իշխանությունները ապստամբության մասնակիցների նկատմամբ դաժան պատիժներ կիրառեցին։ Հարյուրավոր քրդեր ռազմական դատարանների կողմից մահվան դատապարտվեցին։ Ապստամբության ղեկավար շեյխ Սայիդն ու նրա որդի Սյուլխեդդինը իրենց մերձավորագույն զինակիցների հետ միասին կախաղան բարձրացվեցին։ Ապստամբությանը մասնակցած քրդերի մի մասը դատապարտվեց տաժանակիր աշխատանքների, մնացածները՝ բանտարկության։ Հողին հավասարեցվեցին քրդական այն գյուղերը, որոնց բնակչությունը մասնակցություն էր ունեցել ապստամբությանը [1]։

Թուրքական իշխանությունների գաղանությունների մասին է վկայում 1914 թվականի ապրիլի 27-ին Մուշում տրված հրամանը։ Հիշյալ հրամանն ազդարարում էր, որ եթե մինչև 1914 թվականի հունիսի 1-ը հեռակա կարգով բանտարկության դատապարտված անձինք, ինչպես նաև դասալիքները, չհանձնվեն իշխանություններին, ապա նրանք բոլորը մահապատժի կենթարկվեն։ Նույն պատիժն էր սպառնում նաև «հանցագործներին» ապաստարան տված բնակիչներին։ Ականատեսի վկայությամբ, ապստամբ քրդերի նկատմամբ այդ արյունոտ հաշվեհարդարը «ուժեղ ազդեցություն գործեց տեղի թուրք բնակչության վրա նույնպես» [2]։

Թեև թուրքական իշխանություններին հաջողվեց ճնշել Բաղեշի ապստամբությունը, դրությունը, սակայն, մնում էր լարված։ Քրդերի զինված ելույթներ եղան նաև Արևելյան Անատոլիայի մի շարք այլ վայրերում։

1 ЦГИА Груз. ССР, ф. 85, д. 149, л. 63—64.
2 Նույն տեղում, թ. 115։

Քրդական ամենախոշոր ապստամբություններից մեկը շեյխ Բարզանի ղեկավարությամբ Աքրայում բռնկված ապստամբությունն էր։ Շեյխ Բարզանի (որը վաղուց արդեն դադարել էր ենթարկվել թուրքական իշխանություններին) շարժմանը հարեցին մոտ 500 քրդական գյուղեր։

1914 թվականի սկզբին Բարզանը քրդերին կոչ արեց հրաժարվել հարկեր վճարել և զինվորական պարտավորությունը կատարել։ Կանոնավոր զորքերին հակահարված տալու համար նա հավաքեց մոտ 3 հազար զինված ապստամբների։

Այն ժամանակ թուրքական կառավարությունը Բարզանին առաջարկեց փոխադրվել Մեդինա կամ Մոսուլ, սակայն վերջինս հրաժարվեց դրանից ու ավելի եռանդուն կերպով սկսեց պատրաստվել զինված ելույթի։ 1914 թվականի մարտի 20-ին քրդերի ապրստամբ ջոկատները Բարզանիի գլխավորությամբ Ջաբ գետի մոտ հարձակվեցին թուրքերի վրա։ Քրդերին միացան տեղի ասորիները։ Երկարատև արյունահեղ ճակատամարտից հետո քրդերը հակառակորդի գերակշռող ուժերի կողմից պարտության մատնվեցին։ Ապստամբ քրդերի մի մասը շեյխ Բարզանիի հետ միասին ապրիլի 2-ին անցան իրանական սահմանը [1]։

Քրդերի ապստամբությունները նրանց ազգային ինքնագիտակցության աճի ու թուրքական լծից ազատագրվելու ձգտման վառ վկայություններն էին։ Թեև այդ ելույթները գլխավորվում էին շեյխերի կողմից, որոնք փորձում էին դրանք ծառայեցնել իրենց նեղ դասակարգային շահերին, այնուամենայնիվ, ինքնուրույնության և թուրքական իշխանությունների հնազանդությունից դուրս գալու շեյխերի ձգտումը համընկնում էր թուրքական ազգային ճնշումից ազատագրվելու համար քուրդ ժողովրդական զանգվածների մղվող պայքարին։ Ուստի քուրդ աշխատավորությունը, չունենալով՝ ո՛չ իր քաղաքական կուսակցությունը, ո՛չ էլ սեփական ղեկավարներին, գնում էր շեյխերի ետևից՝ նրանց դիտելով, որպես երիտթուրքերի կողմից հալածված հետադիմական, իրենց համար ատելի կարգերի հակառակորդների։

***

Երիտթուրքական կառավարությունը շովինիստական քաղաքականություն էր վարում նաև Օսմանյան կայսրության արաբական նահանգներում, որտեղ նա ձգտում էր խեղդել արաբների ազատագրական պայքարը։

1 ЦГИА Груз. ССР, ф. 85, д. 153, л. 45—50.

Երիտթուրքերի իշխանության գլուխ անցնելուց հետո արաբների դրությունն ավելի վատթարացավ։ Տեղական պաշտոնյաները (ազգությամբ բացառապես թուրքեր), ինչպես և Աբդուլ-Համիդի ժամանակներում, ամենուրեք դատ ու դատաստան էին տեսնում նրանց հետ։ Կայսրության ծայրամասի գավառները նրանք դիտում էին որպես մի ոսկու հանք, որտեղից հարկավոր է հանել որքան կարելի է շատ։ Միևնույն տուրքերը գանձվում էին մի քանի անգամ։ Ընդ որում, բնակչությանը տրվում էին կեղծ անդորրագրեր, որոնք շուտով չեղյալ էին հայտարարվում։ Հարկերը չվճարելու դեպքում վաճառքի էին հանվում քոչվոր արաբներին պատկանող անասունները, հնչեցվում էին արմավենու և սուրճի պլանտացիաները, տրորվում բրնձի դաշտերը։

Բաղդադի ռուսական հյուպատոսը իր զեկուցագրերում հաճախ տեղեկացնում էր, որ Միջագետքի արաբական ցեղերը հրաժարվում են հարկ վճարել, և թուրք իշխանությունները բռնի ուժով են գանձում հարկերը։ Այսպես, 1910 թվականի վերջին, էլբու-սուլթան ցեղից հարկեր գանձելու համար ուղարկված հարկահավաքներին պահակախումբ էր ուղեկցում։ Արաբները հարձակվեցին նրանց վրա, սպանեցին ու վիրավորեցին մի քանի զինվորների ու ոստիկանների։ Այդ ցեղին պատժելու համար թուրքական կառավարությունը նրանց դեմ երկու թնդանոթով հեծյալ գունդ ուղարկեց [1]։

1914 թվականի մայիսին 150 ձիավորներից ու 100 ոստիկաններից բաղկացած հեծյալ ջոկատը, որը Բաղդադից ուղարկվել էր Աբու-Խունտայի շրջանը հարկեր գանձելու նպատակով, շամարների ցեղից բռնագանձեց 200 ոչխար, էլ-գուրզիր ցեղից՝ 250 ոչխար ու 6 ձի, իսկ էլ-բուեշ ցեղից՝ 60 ուղտ [2]։

Շատ հաճախ հարկահավաքների ու արաբների միջև արյունահեղ ընդհարումներ էին տեղի ունենում։

Ոչ գովելի հռչակ էր ձեռք բերել այդ շրջանում Նազիմ-փաշան, որը երիտթուրքական կառավարության կողմից նշանակվել էր վալի և Միջագետքում տեղաբաշխված կորպուսի հրամանատար։ Նա արգելեց պաշտոնական փաստաթղթերում արաբերեն լեզուն օգտագործել, ամեն կերպ հետապնդում էր տեղական մամուլի ներկայացուցիչներին։ Ամենափոքր իսկ քննադատության համար տեղական թերթերը փակվում էին։ Նազիմ-փաշան բոլորովին հաշվի չէր նստում վարչական խորհրդի որոշումների հետ [3]։ Նազիմ-փաշայի գործունեության կապակցությամբ արաբական թերթերից մեկը

1 ЦГВИА, ф. 2000с, оп. 1, д. 991, л. 117.

2 Նույն տեղում, թ. 565—566։

3 Նույն տեղում, թ. 135—137։

գրում էր. «Մինչև այժմ մենք պայքարում էինք միայն Աբդուլ-Համիդի դեմ, իսկ ներկայումս կան շատ նահանգապետներ, որոնք նրան ոչ մի բանում չեն զիջում»[1]։

Թուրքիայի արաբաբնակ շրջաններում տիրող ծանր դրության մասին հաղորդում էին նաև օտարերկրյա ներկայացուցիչները։ Այսպես, Դամասկոսում թուրքական ծառայության մեջ գտնվող գերմանական զինվորական, մայոր ֆոն Խոխվեխտերը 1913 թվականի մայիսին գրում էր, որ կյանքի ծանր պայմանների ու թուրքական իշխանությունների կամայականության պատճառով հազարավոր մարդիկ փախչում են Սիրիայից, Լիբանանից, Միջագետքից։ Դրա հետևանքով Դամասկոսում հարյուրավոր ընտանիքներ զրկվել են ամուսիններից ու հայրերից և տառապում են քաղցից ու աղքատությունից։ Սիրիայի ու Լիբանանի շատ շրջաններում տղամարդիկ գրեթե չեն մնացել։ Բանակում զորակոչվելուց ու բալկանյան պատերազմի ճակատներն ուղարկվելուց խուսափելու համար երիտասարդությունը մեկնում էր արտասահման։

Նույն այդ ականատեսը նշում էր. «Պատերազմի փորձը ցույց տվեց, թե ինչքան քիչ հոգս էին տանում հասարակ զինվորի մասին, որը քաղցից մահանում էր արշավանքների ժամանակ՝ դեռ հակառակորդին չհասած։ Զոհվածների ընտանիքները չէին կարող որևէ տեղեկություն ստանալ իրենց ապրուստ տվողների ճակատագրի մասին։ Բնակչությունն ընտելացել է այն մտքին, որ զինվորական ծառայության մեջ գտնվելը հավասարազոր է մահվան դատավճռին։ Արաբական նահանգների անելանելի դրության հետևանքով քաղաքական երկպառակությունը արաբների ու թուրքերի միջև գնալով ուժեղանում է։ Հարկ է լինում ուժի միջոցով գանձել տուրքերը և զորակոչիկներ հավաքել, որովհետև իշխանությունները ո՛չ մի հեղինակություն չունեն։ Քանի որ ոստիկանական ջոկատներն անբավարար են, նրանց մշտապես օգնության են կանչվում զինվորական զորամասեր... Բոլորը գալիս են այն համոզմունքին,— եզրակացնում էր Խոխվեխտերը,— որ դրությունը բարելավելու միակ հույսն այն է, որ արմատապես վերափոխվի պետական կառավարման ողջ սիստեմը»[2]։

Երիտթուրքական հեղափոխությունից հետո արաբական աշխատավոր զանգվածների վիճակի վատթարացումը նրանց ազգային-ազատագրական պայքարի նոր վերելք առաջ բերեց։ Մի դիտորդի վկայությամբ, նախկինում «արաբները բաժանված էին, պայքարում էին իրար դեմ և կառավարությանը համեմատաբար հեշտ էր հնազանդեցնել նրանց, իսկ ներկայումս բոլոր ցեղերը միավորվել են կառավարության դեմ»[1]։ Բնութագրելով արաբների տրամադրությունները, Բեյրութի ռուսական հյուպատոս Դագարինը գրում էր, որ «բոլոր մահմեդական-արաբները համակված են մի գաղափարով՝ անջատվել Թուրքիայից և արաբական խալիֆաթի դրոշի ներքո միավորել բոլոր այն հողերը, որտեղ խոսում են արաբերեն»[2]։

Առաջին համաշխարհային պատերազմին նախորդող տարիներին, արաբական բոլոր նահանգներում տեղի ունեցան հակակառավարական խոշոր ելույթներ, որոնք ավելի սպառնալից ու համառ էին, քան Աբդուլ-Համիդի ժամանակներում։

1909 թվականի փետրվարին Եմենի իմամ Սայիդ Յահյան վերսկսեց ռազմական գործողությունները թուրքերի դեմ։ Եմենում տիրող դրությունը բազմիցս քննարկվել է թուրքական մեջլիսում։ Մեջլիսի նիստերից մեկի ժամանակ,— ինչպես գրում էր իր հուշերում «Միասնություն և առաջադիմություն» կուսակցության ղեկավարներից մեկը՝ Մեվլան-զադե Ռիֆաթը,— ներքին գործերի մինիստր Թալեաթ-փաշան պարծենկոտ կերպով հայտարարել էր, որ ապստամբությունը Եմենում կճնշվի երեք ամսվա ընթացքում։ Այդ նպատակով Թալեաթը Տրիպոլիից Եմեն տեղափոխեց շուրջ 18 հազար զինվոր, այնտեղ թողնելով ընդամենը 3 հազար մարդ, որոնք գրեթե անզեն էին[3]։ Դրանից էլ օգտվելով հենց Իտալիան 1911 թվականի աշնանը գրավեց Տրիպոլիտանիան ու Կիրենաիկան։

Իտալա-թուրքական ու բալկանյան առաջին պատերազմում Օսմանյան կայսրության կրած պարտությունը նոր թափ հաղորդեց արաբների ազատագրական շարժմանը։ Եմենի ապստամբությունը բռնկվեց ավելի մեծ ուժով։

Զենք վերցրեցին նաև Մոսուլի վիլայեթի արաբները։ Շարունակվում էր զինված պայքարը Հեջազում և Նեջդում։ Արաբների ապստամբությունները ավելի ու ավելի մեծ թափ էին ստանում։

1913 թվականի ապրիլին Բաղդադում Ռուսաստանի գլխավոր հյուպատոս Օոլովը հաղորդում էր արաբական ազգային կազմակերպությունների մի քանի ծրագրային փաստաթղթերի մասին, որոնցում կոչ էր արվում հայերի հետ միասին համատեղ պայքարի ելնել թուրքական ճնշման դեմ՝ Օսմանյան կայսրության ապակենտրոնացման նպատակով[4]։

1 ЦГВИА, ф. 2000/с, оп. I, д. 991, л. 135—137.
2 ЦГАОР Груз. ССР, ф. 4, д. 433, л. 2—7.

1 ЦГВИА, ф. 2000/с, оп. 1, д. 991, л. 135—137.
2 АВПР, ф. «Посольство в Константинополе», д. 2729, л. 246.
3 Մեվլան-զադե Ռիֆաթ, Թուրքական հեղափոխության մութ ծալքերը։ Թարգմ. թուրքերենից, Բեյրութ, 1938, էջ 68—71։
4 АВПР, ф. «Политархив», д. 363, л. 2—8.

1913 թվականի ապրիլին էլ-Խասայի շրջանում ծագած խոշոր ապստամբության հետևանքով թուրքական զորքերը ստիպված էին թողնել այդ շրջանը, որը միացվեց Նեջդի էմիր Իբն-Սաուդի տիրապետություններին։ Իբն-Սաուդը գլխավորում էր հակաթուրքական շարժումը Արաբական թերակղզու կենտրոնական մասում։ Այժմ, դեպի ծովը ելք ստանալու շնորհիվ, Իբն-Սաուդի հզորությունը խիստ աճեց։ Ուժեղացավ նրա ազդեցությունը թուրքերի նկատմամբ թշնամաբար տրամադրված վահաբիթների ցեղերի մեջ։ Իբն-Սաուդի այս հաջողությունների շնորհիվ, ընդհանուր թշնամու՝ սուլթանական Թուրքիայի դեմ պայքարելու նպատակով բոլոր արաբների միավորման օգտին Նեջդում լայն պրոպագանդա ծավալվեց։ Հակաթուրքական շարժման գլխավոր կենտրոնը դարձավ Նեջդի էլ-Արտավիա քաղաքը։ Վերը հիշված Օոլովի վկայությամբ, արաբական ազգաբնակչությանը, թուրքական իշխանությունների դեմ պայքարի կոչելու նպատակով՝ 1913 թվականի գարնանը այդ քաղաքից հարավային Արաբիայի բոլոր ծայրերն ուղարկվեցին Իբն-Սաուդի էմիսարները [1]։

Արաբական բնակչության մեջ Միջագետքում տարվող հակակառավարական պրոպագանդան ղեկավարվում էր Բաղդադից՝ հատուկ կազմակերպությունների՝ «Հայրենիքում գիտելիքներ տարածելու կոմիտեի» և «Գաղտնի զինվորական կոմիտեի» կողմից։ Դրանցից առաջինը, որը քողարկվում էր լուսավորչական գործունեությամբ, կապված էր Սիրիայի արաբական ազգային կազմակերպությունների, ինչպես նաև Կահիրեում ու Փարիզում գտնվող արաբական կոմիտեների հետ։

Այդ կոմիտեների գործունեության շնորհիվ Միջագետքում ավելի լայն ծավալ էր ստանում տեղական ինքնավարության պահանջը։ Տեղի ազգաբնակչությանը հանգստացնելու նպատակով կառավարությունը հայտարարեց, որ մոտ ապագայում ինքը մտադիր է արաբական վիլայեթներում ռեֆորմներ անցկացնել [2]։

Սակայն երիտթուրքական կառավարության այդ խոստումը ևս անկատար մնաց, որի հետևանքով 1914 թվականի սկզբին արաբական ազգային շարժումը բռնկվեց նոր ուժով։ Շարժումը գլխավորվում էր Կահիրեում գտնվող ապակենտրոնացման արաբական ազգային կուսակցության կողմից, որի հրապարակած փաստաթղթերից մեկում նշված էր, որ կայսրության արաբական վիլայեթներում ռեֆորմներ անցկացնելու վերաբերյալ սուլթանական կառավարության տված խոստումները մեռած տառ մնացին։ «Ուստի,—

[1] ЦГВИА, ф. 2000/с, оп. 1, д. 991, л. 511—514.
[2] АВПР, ф. «Посольство в Константинополе», д. 1252, л. 53—58.

ասվում էր այնուհետև փաստաթղթում,— նշելով Կոստանդնուպոլսի կառավարող շրջանների կեղծավորությունը և ձգտելով Օսմանյան կայսրության սահմաններում արաբական ազգի վերածնությունը՝ գավառներին տեղական լայն ինքնավարություն շնորհելու ճանապարհով, ռեֆորմների արաբական կուսակցությունը... Սիրիայի, Պաղեստինի, Արաբիայի, Եվրոպայի ու Ամերիկայի արաբներին կոչ է անում համառ հեռագրերով դիմել Կոստանդնուպոլսին, կառավարությանը հարկադրելու համար անհապաղ իրագործել իր կողմից խոստացված ռեֆորմները»։ Հիշյալ կոչում արաբներին առաջարկվում էր «հրաժարվել հարկեր վճարել թուրքական կառավարությանը» [1]։

Միաժամանակ Ստամբուլ էին ուղարկվում կոլեկտիվ հեռագրեր, որոնցում պահանջվում էր արաբական վիլայեթներում ամենակարճ ժամանակում ռեֆորմներ անցկացնել, մասնավորապես արաբերենը Միջագետքում ճանաչել որպես պաշտոնական լեզու, իսկ թուրք պաշտոնյաներին փոխարինել արաբներով կամ արաբերեն իմացող անձանցով։ Մեծ հաջողություն ունեին արաբական ընդդիմադիր թերթերը, որոնք արագ տարածվում էին սրճարաններում ու հասարակական այլ վայրերում։

Ի պատասխան արաբների շարժման ծավալմանը, թուրքական կառավարությունն ու «Միասնություն և առաջադիմություն» կոմիտեն ռեպրեսիաների ուղին բռնեցին։ Կոմիտեն որոշել էր առաջին հերթին սանձահարել հակակառավարական մամուլը։ Մի քանի խմբագիրներ դատի տրվեցին, իսկ ընդդիմադիր թերթերը փակվեցին [2]։

Երիտթուրքերը, սակայն, շուտով համոզվեցին, որ միայն պատժիչ միջոցներով անհնարին է ճնշել արաբ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը։ Ուստի նրանք փորձեցին օգտագործել նաև ներգործության դիվանագիտական մեթոդները։ Այդ նպատակով կառավարությունը 1914 թվականի մայիսին բանակցություններ սկսեց Նեջդի էմիր Իբն-Սաուդի հետ։ Վերջինիս առաջարկվեց Նեջդի նահանգապետի պաշտոնը։

Դրա փոխարեն Իբն-Սաուդը պետք է համաձայնվեր, որ թուրքական զորքեր մտցվեին Նեջդ, երկրում ստեղծվեր թուրքական ադմինիստրացիա և սուլթանական կառավարությանը ամենամյա տուրք վճարվեր։ Սակայն բանակցությունները ոչ մի արդյունք

[1] АВПР, ф. «Политархив», д. 768, л. 148.
[2] АВПР, ф. «Посольство в Константинополе», д. 1253, л. 10—15.

չտվեցին, քանի որ Իբն-Սաուդը մերժեց իրեն առաջադրված պայմանները [1]։

Այսպես, ուրեմն, առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Օսմանյան կայսրության արաբաբնակ նահանգներից մի քանիսը փաստորեն չէին ենթարկվում երիտթուրքական իշխանություններին։ Արաբ ժողովուրդը, մերժելով պանիսլամիզմի ու պանօսմանիզմի հետադիմական քարոզները, սկսեց ավելի ակտիվ պայքարել իր ազգային-ազատագրության համար։

Թեև արաբ ժողովրդական զանգվածների շարժումը, որպես կանոն, գլխավորում էին խոշոր ֆեոդալ-ցեղապետները, որոնք աջակցություն էին ստանում Անգլիայի ու Ֆրանսիայի ներկայացուցիչների կողմից, այնուհանդերձ, թուրքական տիրապետության դեմ արաբների մղած պայքարն առաջադիմական բնույթ էր կրում, քանի որ այն խարխլում էր Օսմանյան կայսրության ֆեոդալաբռնապետական կարգերի հիմքը։ Այդ տարիներին գրեթե անընդհատ կրկնվող արաբական ապստամբությունները, կաշկանդելով թուրքական զորքերի զգալի ուժեր, նպաստեցին 1912—1913 թվականներին Թուրքիայի դեմ մղած պատերազմում բալկանյան դաշնակիցների հաղթանակին։

***

Երիտթուրքական «Միասնություն և առաջադիմություն» կուսակցության հետադիմական կառավարման դեմ հանդես էին գալիս ոչ միայն ոչ-թուրք ժողովուրդները։ Թուրք ազգաբնակչության մի զգալի մասը նույնպես թշնամաբար էր տրամադրված Օսմանյան կայսրության բախտի նոր տնօրինողների նկատմամբ։

Գոյություն ունեցող գրականության մեջ այս հարցը գրեթե չի լուսաբանվել, եթե չհաշվենք առանձին աշխատություններում հանդիպող ընդհանուր դատողությունները երկրի ներսում երիտթուրքական կարգերից դժգոհ լինելու մասին։ Մինչդեռ, այդ մասին առկա են բազմաթիվ համոզիչ տվյալներ։

Արդեն 1908 թվականի նոյեմբերին, այսինքն՝ երիտթուրքերի հաղթանակից չորս ամիս հետո, ցարական Ռուսաստանի դեսպան Զինովևը հաղորդում էր այն մասին, որ նոր ռեժիմի դեմ տրտունջներ են լսվում Թուրքիայի ինչպես եվրոպական, այնպես էլ ասիական մարզերում։

1 ЦГИА Груз. ССР, ф. 85, д. 149, л. 135—136.

«Չնայած երիտթուրքական հռետորների բոլոր ջանքերին, որոնք պրոպագանդում էին նոր կարգերի բարիքները,— գրում էր ցարական դեսպանը,— տեղի մահմեդական ազգաբնակչությունը նրանց ճառերին վերաբերվում էր այնպիսի բութ անտարբերությամբ, որ հռետորների ձեռքերը ուղղակի թուլանում էին»։ Այնուհետև Զինովևը տեղեկացնում էր հակակառավարական խոշոր ցույցի մասին, որին մասնակցություն էին ունեցել Ադրիանապոլսի վիլայեթի Գյումյուլջան քաղաքի մոտ 10 հազար մահմեդական բնակիչներ։ Ցուցարարներն ուղղվեցին քաղաքային մունիցիպալիտետի շենքը և իրենց բողոքը հայտնեցին մեջլիսի ընտրությունների ժամանակ կատարված ապօրինությունների դեմ, որի հետևանքով մեջլիս էին ընտրվել ժողովրդին բոլորովին անծանոթ անձինք։ Զբավարարվելով դրանով, ցուցարարները ներխուժեցին մունիցիպալիտետի շենքը, ծեծեցին կայազորի պետին և պահանջեցին փոխարինել սահմանադրության հռչակումից հետո նշանակված տեղական պաշտոնյաներին։ Քաղաքում կարգ ու կանոնը վերականգնելու համար Ադրիանապոլսից զորքեր ուղարկվեցին Գյումյուլջան [1]։

««Միասնություն և առաջադիմություն» կուսակցությունը,— նշում էր Բեյրութի ռուսական գլխավոր հյուպատոսը 1911 թվականի հուլիսի 19-ին,— բոլորովին հեղինակազրկվել է... Բնակչության մեջ շատ ուժեղ է դժգոհությունը կառավարության ու տեղական իշխանությունների հանդեպ» [2]։ Երիտթուրքական կուսակցությունը ավելի ու ավելի էր կորցնում իր ոտքի տակի հողը։ «Նրանց համար հաջող անցկացված հեղափոխությունից հետո ստեղծված հմայքը,— գրում էր Թուրքիայում Ռուսաստանի զինվորական գործակալը 1912 թվականի հունվարի 15-ին,— աստիճանաբար կորչում է նրանց ռեժիմի օրոք երկրի կրած դժբախտությունների տպավորության տակ» [3]։

Այսպիսով, երիտթուրքերը չկարողացան լուծել երկրի ներքին կյանքի ամենակենսական հարցը՝ հողային հարցը։ Միաժամանակ նրանք արտակարգ չափով ուժեղացրին մեծապետական շովինիստական քաղաքականությունը։ Երիտթուրքերի օրոք ժողովրդական զանգվածների աղքատությունն ու զրկանքներն ավելի շատացան, զայրույթն ու ատելությունը համակել էին թուրք ազգաբնակչության տարբեր խավերին։

Նման իրավիճակից օգտվեցին երիտթուրքերին ընդդիմադիր քաղաքական կուսակցությունները, որոնք արտահայտում էին տի-

1 АВПР, ф. «Политархив», д. 1031, л. 48—51.
2 Նույն տեղում, գ. 420, թ. 59—60։
3 ЦГВИА, ф. 2000/с, оп. 1, д. 991, л. 301—302.

ղող դասակարգերի ամենահետադիմական խմբերի շահերը։ «Միասնություն և առաջադիմություն» կուսակցությանը հեղինակազրկելու նպատակով նրանք բնակչության շրջանում և, հատկապես, զինվորական զորամասերում, եռանդուն ագիտացիա ծավալեցին։

Երիտթուրքերի քաղաքական հակառակորդները մատնանշում էին, որ նոր կառավարության կողմից երկրի ներսում տարվող կենտրոնացման քաղաքականությունը հանգեցրեց «եղբայրասպան» ընդհարումների՝ մահմեդականների միջև, և թուրքական բանակը իր սեփական դավանակիցների ապստամբությունները ճնշելով է զբաղված միայն։

Բանակը, այն հիմնական ուժը, որի շնորհիվ երիտթուրքերն իշխանությունն իրենց ձեռքը վերցրին, դառնում էր անհուսալի։ Հեղափոխության արդյունքներից դժգոհ լինելու պատճառով, սուլթանական բանակում արագ կերպով հասունանում էին հակակառավարական տրամադրությունները։

Կառավարության անօգնականությունն ու շփոթված վիճակը տեսնելով, նոր ռեժիմից դժգոհ կամ վերջինիս կողմից շրջանցված սպաներն ստեղծեցին, այսպես կոչված, սպայական լիգա, որը գնալով աճում էր։ Հիշյալ լիգայի հիմնական լոզունգը երիտթուրքական կուսակցության ականավոր պարագլուխներից մեկի՝ ռազմական մինիստր Մահմուդ Շեվքեթ-փաշայի, հեռացումն ու «Միասնություն և առաջադիմություն» կոմիտեին իշխանությունից զրկելն էր[1]*։ Երիտթուրքերն ստիպված էին 1912 թվականի ամռանը Մահմուդ Շեվքեթ-փաշային դուրս բերել կառավարության կազմից։ Սակայն հուզումները բանակում դրանից հետո էլ չէին հանդարտվում։ Երկրում աճող դժգոհությանը զուգընթաց, ընդդիմադիր խմբակցություններն ավելի համարձակորեն էին սկսում հանդես գալ երիտթուրքերի դեմ։ Մինչդեռ երիտթուրքական կուսակցության անդամների թիվը օրըստօրե նոսրանում էր։ Նույնիսկ կուսակցության հայտնի համախոհները լքում էին նրա շարքերը։*

«Միասնություն և առաջադիմություն» կուսակցության դրությունն ավելի կրիտիկական դարձավ 1911—1912 թվականների իտալա-թուրքական պատերազմում՝ Թուրքիայի կրած պարտությունների հետևանքով։ Օգտվելով դրանից, «Ազատություն և համաձայնություն» ընդդիմադիր կուսակցությունը 1912 թվականի հուլիսին տապալեց երիտթուրքերին։ Կազմվեց նոր կառավարություն՝ այդ կուսակցության ներկայացուցիչներից և մասամբ էլ սուլթանական նախկին բարձրաստիճան պաշտոնյաներից։ Սակայն կառավարության փոփոխումը դրությունը չփրկեց։ Բալկանյան պետությունների հետ նոր զինված ընդհարման հասունացման պայմաններում Թուրքիան ստիպված էր ճանաչել իր պարտությունը և Իտալիայի օգտին հրաժարվել Տրիպոլիտանիայից ու Կիրենաիկայից։

Թուրքական կառավարությունը տակավին չէր հասցրել հաշտության պայմանագիր կնքել Իտալիայի հետ, երբ 1912 թվականի հոկտեմբերին սկսվեց բալկանյան առաջին պատերազմը՝ մի կողմից Թուրքիայի և մյուս կողմից՝ դաշնակիցների (Բուլղարիա, Սերբիա, Հունաստան և Չեռնոգորիա) միջև։ Այդ պատերազմն ավարտվեց Օսմանյան բանակի ջախջախումով։ Թուրքիան զրկվեց եվրոպական մասում ունեցած գրեթե բոլոր իր տիրույթներից։ Բալկանյան ժողովուրդներն ընդմիշտ թոթափեցին թուրք ֆեոդալների լուծը։

Խոսելով բալկանյան ժողովուրդների ազատագրման մասին, Լենինը գրում էր, որ «խոշոր քայլ է արված կործանելու միջնադարի մնացորդները ամբողջ արևելյան Եվրոպայում»[1]*։*

Նոր կառավարության իշխանությունը տևեց ընդամենը վեց ամիս։ Օգտվելով թուրքական բանակի կործանարար պարտություններից, որոնք վեր հանեցին իրենց քաղաքական ախոյանների կատարյալ սնանկությունը, երիտթուրքերը 1913 թվականի հունվարի 23-ին պետական հեղաշրջում կատարեցին։ Սակայն երիտթուրքերի իշխանության վերադառնալը Թուրքիային չփրկեց պարտությունից՝ բալկանյան պատերազմում։ Ներքին խոր հակասություններից ծվատված զառամյալ Օսմանյան կայսրությունը չէր կարող դիմանալ ոչ միայն իտալական իմպերիալիզմի հետ զոտեմարտին, այլև փոքր, բայց իրենց զարգացման աստիճանով Թուրքիայից անցած, պետությունների (որպիսիք էին բալկանյան միության մասնակիցները) հետ բախմանը։

Թուրք բուրժուական պատմաբանները իտալա-թուրքական և բալկանյան առաջին պատերազմում Օսմանյան կայսրության կրած պարտության պատճառները տեսնում են ոչ թե վերջինիս սոցիալ-տնտեսական կառուցվածքի նեխվածության ու հետամնացության մեջ, այլ միջկուսակցական պայքարում։ Այսպես, խոսելով Թուրքիայի ջախջախման պատճառների մասին, երիտթուրքական հեղափոխության մասնակիցներից մեկը, հետագայում «Ազատություն և համաձայնություն» կուսակցության անդամ Ահմեդ Բեդևի Կուրանը նշում է, որ ինչպես տրիպոլիտանական, այնպես էլ բալկանյան պատերազմները նախապատրաստվում էին նախքան երիտթուրքա-

[1] ЦГВИА, ф. 2000/с, оп. 1, д. 991, л. 321—322.

[1] *Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 18, էջ 468։*

կան հեղափոխությունը, սակայն «տարված լինելով միջկուսակցական պայքարով, մենք չկարողացանք իմանալ, որ մեր դեմ բալկանյան երկրների դաշինք էր ստեղծվում։ Համաշխարհային իրադարձություններին անտեղյակ իթթիհատականներն զբաղված էին իրենց հակառակորդներին ոչնչացնելով» [1]։ Ահմեդ Բեդևի Կուրանը առանձնակի ատելությամբ է խոսում երիտթուրքերի մասին, որովհետև ինքը գտնվում էր նրանց թշնամիների շարքերում և բազմիցս հալածանքների էր ենթարկվել վերջիններիս կողմից։

Թուրքիայի պաշտոնական պատմության՝ «Թարիհի», հեղինակները ևս գտնում են, որ 1908—1914 թվականների ժամանակաշրջանում երկրի ներքին կյանքի ամենաբնորոշ երևույթը գոյություն ունեցող տարբեր կուսակցությունների պայքարի ծայրահեղ սրումն էր մեջլիսում և հասարակական այլ հիմնարկներում [2]։

1913 թվականի հունվարի 13-ի հեղաշրջման հետևանքով երիտթուրքերի իշխանության վերադառնալը է՛լ ավելի սրեց քաղաքական տարաձայնությունները բանակում, իսկ առանձին զորամասերում նույնիսկ առաջ բերեց ուղղակի անհնազանդություն կառավարական հրահանգներին։ Ստամբուլում Ռուսաստանի զինվորական գործակալ գեներալ-մայոր Լեոնտևը 1913 թվականի ամռանը հաղորդում էր նման կարգի բազմաթիվ փաստերի մասին։

Այսպես, օրինակ, անկարգություններ առաջ եկան Չաթալջայի ամրացված դիրքերում տեղաբաշխված զորքերի մեջ։ Զինվորները պահանջում էին անհապաղ զորացրել իրենց։ Վերջիններիս հանգստացնելու համար գլխավոր շտաբի պետ Իզզեթ-փաշան հայտարարեց, որ նրանց պահանջը մոտիկ ապագայում կբավարարվի։ Սակայն դրանից անմիջապես հետո դաշտային ժանդարմերիան ձերբակալեց դժգոհություն արտահայտած մի քանի սպաների։ Այդ բանը առաջ բերեց զինված դիմադրություն, որի ժամանակ սպանվեց չորս ժանդարմ։

1913 թվականի հունիսին Չաթալջայի զորքերի հրամանատարները ռազմական մինիստրությունից պահանջեցին ազատ արձակել ձերբակալված սպաներին և պատասխանատվության կանչել ռազմական մինիստր Նազըմ-փաշայի սպանության մեջ հանցավորներին։ Այդ պահանջը վերաբերում էր «Միասնություն և առաջադիմություն» կուսակցության ամենաականավոր պարագլուխներին՝ Թալեաթին ու Էնվերին, որոնք անմիջականորեն ղեկավարել էին 1913 թվականի հունվարի 13-ի դեպքերը։

[1] Ahmed Bedevi Kuran, Inkilâp tarihimiz va Jön Türkler. Istanbul, 1945, s. 308.

[2] „Tarih", c. III, Istanbul, 1935, s. 294.

«Չաթալջայի բանակում իշխող մտքերը,— գրում էր Լեոնտևը իր զեկույցի վերջում,— բնական է, կառավարությանը շատ լուրջ երկյուղ են ներշնչում» [1]։

Ռեպրեսիաների քաղաքականությունը երիտթուրքերն առանձնապես ուժեղացրին 1913 թվականի հունիսից հետո, երբ, ի պատասխան ռազմական մինիստր Նազըմ-փաշայի սպանության, «Ազատություն և համաձայնություն» կուսակցության գործակալների կողմից սպանվեց մեծ վեզիր Մահմուդ Շևքեթ-փաշան։ Վերջինիս սպանության մեջ մեղադրվող 12 հոգու երիտթուրքերը կախեցին։ Ձերբակալվեցին և աքսորվեցին «Ազատություն և համաձայնություն» կուսակցության շատ անդամներ։

Դաժան միջոցառումները, որոնց շնորհիվ երիտթուրքական կուսակցության պարագլուխները ձգտում էին ամրապնդել իրենց տիրապետությունը, ի վիճակի չէին սանձելու բանակում տիրող դժգոհությունը։ 1913 թվականի սեպտեմբերին Լեոնտևը հաղորդում էր, որ երիտթուրքական ռեժիմից դժգոհ մարդկանց թիվը բանակում չափազանց մեծ է, իսկ զինվորների ու սպաների տրամադրությունը գնալով (կառավարության հանդեպ) ավելի վտանգավոր է դառնում [2]։ Նույն ինքը Լեոնտևը 1913 թվականի նոյեմբերին տեղեկացնում էր այն մասին, որ բանակում նկատելի է շատ ուժեղ շարժում երիտթուրքերի դեմ, որոնց «բռնատիրությունը շատ կողմերով ավելի ուժեղ է, քան Աբդուլ-Համիդինը... Գավաթը լցվում է և երկպառակությունն արդեն տարածվում է բնակչության ավելի խոր շերտերի մեջ» [3]։

«Երիտթուրքերը զգում են,— գրում էր Լեոնտևը մի այլ զեկուցագրում,— որ իրենք մեծ չափով կորցրել են համակրանքը երկրի ներսում» [4]։

1914 թվականի սկզբին, Էնվերին ռազմական մինիստր նշանակելուց անմիջապես հետո, երիտթուրքերը վճռականորեն ձեռնամուխ եղան բանակի սպայական կազմի զտմանը։ Նրանց հակառակորդների վրա ռեպրեսիաների նոր ալիք իջավ։

«Ռազմական դատարանը,— գրում էր Լեոնտևը 1914 թվականի հունվարի 23-ին,— անընդհատ զբաղված է քաղաքական գործերով, ըստ որում ժամանակ առ ժամանակ մահվան դատավճիռներ են կայացվում։ Այդպիսի վերջին դատավճիռը վերաբերում է խոշոր քաղաքական գործիչ Մուխտար-բեյին՝ նախկին շեյհ-ուլ-իսլամի

[1] ЦГВИА, ф. 2000/с, оп. 1, д. 715, л. 4—5.

[2] Նույն տեղում, թ. 18—19։

[3] Նույն տեղում, գ. 991, թ. 288—289։

[4] ЦГВИА, ф. 2000/с, оп. 1, д. 715, л. 321—322.

որդուն։ Ինչպես ասված է պաշտոնական հայտարարության մեջ, նա մահվան է դատապարտված «բրոշյուրներ տպագրելու ու տարածելու միջոցով բնակչության մեջ հուզումներ առաջ բերելու փաստերի համար»։

Ռուսական զինվորական գործակալը վկայում էր նաև այն մասին, որ իրենց թշնամիներին հետապնդելու գործում երիտթուրքերը «հակված չէին սենտիմենտալություն հանդես բերելու և կաշկանդվելու իրավական կամ նույնիսկ միջազգային որևիցե պայմանականություններով»։

«Բարոյական ճնշումը,— կարդում ենք այնուհետև հիշյալ զեկուցագրում,— տարածվում է բոլոր բնագավառների, այդ թվում մամուլի, և նույնիսկ այն թերթերի վրա, որոնք ընդհանուր առմամբ լավ են տրամադրված երիտթուրքական կոմիտեի նկատմամբ։ Արգելումները հետևում են մեկը մյուսին» [1]։

1914 թվականի սկզբներին Թուրքիայում հաստատվեց երիտթուրքական կուսակցության երեք պարագլուխների՝ Էնվերի, Թալեաթի ու Ջեմալի դիկտատուրան։ Ամբողջ իշխանությունը կենտրոնացվեց այդ եռյակի ձեռքում։ Նա էր վճռում Օսմանյան պետության ներքին ու արտաքին քաղաքականության բոլոր հիմնական հարցերը։

***

Ամփոփելով բերված նյութը, պետք է նշել, որ կապիտալիզմի՝ իմպերիալիստական զարգացման փուլը թևակոխելու ժամանակաշրջանում Օսմանյան կայսրությունը վերածվեց արևմտյան տերությունների կիսագաղութի։ Նրա էկոնոմիկան ամբողջովին գտնվում էր օտարերկրյա կապիտալիստների ձեռքում։

Լինելով կախյալ երկիր, որտեղ գերիշխում էր ֆեոդալա-բռնապետական ռեժիմը, Օսմանյան կայսրությունը չէր կարող ազատ զարգանալ կապիտալիստական ուղիով։ Սակայն թուրքական ֆեոդալիզմի ընդերքում սկսել էին սաղմնավորվել կապիտալիստական հարաբերությունները։ XIX դարի վերջին, XX դարի սկզբին հանդես եկավ թուրքական ազգային բուրժուազիան, որը պայքար ծավալեց ինչպես սուլթանական կարգերի, այնպես էլ օտարերկրյա կապիտալի ճնշման դեմ։

1905—1907 թվականների ռուսական առաջին հեղափոխությունն արագացրեց բուրժուական հեղափոխության բռնկումը Թուրքիայում։ Առաջներում մեկուսացված գործող երիտթուրքական «Միասնություն և առաջադիմություն» կուսակցությունը այժմ, հակամիապետական պայքարի ուժեղացման պայմաններում, որոշեց ազգային փոքրամասնությունների և թուրք ժողովրդական զանգվածների պայքարն օգտագործել Աբդուլ-Համիդի կառավարությունը տապալելու և իր տիրապետությունը հաստատելու համար։

Երիտթուրքերի իշխանության գլուխ գտնվելու ժամանակաշրջանում Օսմանյան կայսրության կախումն օտարերկրյա կապիտալից ավելի ուժեղացավ։ Զգալիորեն ամրապնդվեցին այստեղ կայսերական Գերմանիայի դիրքերը։ Գերմանական իմպերիալիստները լիակատար գերակշռություն ձեռք բերեցին Մերձավոր արևելքում երկաթուղիների շինարարության մեջ։ Թուրքիային ֆինանսավորելու գործում գերմանական բանկերը դուրս եկան երկրորդ տեղը՝ Ֆրանսիայից հետո։ Սակայն այդ չէր նշանակում, թե Օսմանյան կայսրությունն ամբողջովին կախված էր գերմանական իմպերիալիզմից։

1908—1909 թվականների հեղափոխության հետևանքով անցնելով իշխանության գլուխ, երիտթուրքերը հրաժարվեցին իրենց կողմից մինչև այդ արված խոստումներից, այն է՝ ճանաչել ազգային փոքրամասնությունների իրավահավասար վիճակը և նրանց ինքնավարական որոշ իրավունքներ շնորհել։ Իր գոյության առաջին իսկ օրերից երիտթուրքական կառավարությունը կանգնեց Օսմանյան կայսրության այլազգի բոլոր ժողովուրդներին բռնի կերպով թուրքացնելու ավանդական քաղաքականության ուղու վրա, որը երիտթուրքերի կողմից անց էր կացվում պանիսլամիզմի և պանթուրքիզմի լոզունգների տակ։ Շովինիստական, կրոնական ու ռասայական այդ քարոզների օգնությամբ երիտթուրքերը ձգտում էին իրարից բաժանել թուրքական լծի դեմ պայքարող ժողովուրդներին, նրանց մեջ թշնամանք սերմանել և, միաժամանակ, թուրք աշխատավորներին շեղել դասակարգային պայքարից՝ նրանց գրգռելով Օսմանյան կայսրության բազմաթիվ ազգային փոքրամասնությունների դեմ։

Երիտթուրքական կառավարության մեծապետական քաղաքականությունը վերջին հաշվով պարտություն կրեց։ Այդ մասին էին վառ կերպով վկայում 1909—1914 թվականներին մեծ թափ ստացած արաբների, քրդերի, հայերի և մյուս ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները։ Ինչպես միշտ, երիտթուրքերի օրոք էլ մեծ տերություններն այլազգի ժողովուրդների ազատագրական պայքարն օգտագործում էին Օսմանյան կայսրությունում և,

[1] ЦГИА Груз. ССР, ф. 85, д. 449, л. 6—7.

հատկապես, նրա ծայրամասային նահանգներում իրենց դիրքերն ամրապնդելու համար։

Եթե մահմեդական ժողովուրդների նկատմամբ երիտթուրքերն ասիմիլյատորական գիծ էին վարում, ապա երկրի քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ նրանք կիրառում էին բացահայտ ֆիզիկական բնաջնջման քաղաքականություն, որը, բնական է, դիմադրության էր հանդիպում հայերի, մակեդոնացիների և հույների կողմից։

Երիտթուրքական կարգերը շատ ուժեղ դժգոհություն առաջ բերեցին նաև թուրք ժողովրդի լայն խավերի մեջ և, նույնիսկ, բանակում, մի հանգամանք, որն անդրադարձավ իտալա-թուրքական և բալկանյան պատերազմների ելքի վրա։ Այդ պատերազմներում կրած տերիտորիալ կորուստները հատուցելու նպատակով երիտթուրքական կլիկը սկսեց տենդորեն նախապատրաստվել տերիտորիալ հափշտակումների՝ Արևելքում։ Հարձակողական այդ պատրաստություններն անց էին կացվում պանիսլամիզմի և պանթուրքիզմի դրոշի ներքո։ Հետադիմական տեսությունների օգնությամբ երիտթուրքերը ջանում էին գաղափարապես հիմնավորել իրենց նվաճողական ծրագրերը, որոնք առաջին հերթին, նպատակ ունեին գրավել ողջ Կովկասը։

«Մենք,— ասվում էր «Միասնություն և առաջադիմություն» կոմիտեի հայտարարության մեջ,— պետք է ձգտենք նոր ձեռքբերումների և փոխհատուցման Արևելքում՝ Արարատի ուղղությամբ...» [1]։

1 ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 991, л. 143.

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԹՈՒՐՔԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

Վերը նշվեց, որ երիտթուրքերի նացիոնալիստական ներքին քաղաքականության հիմքում ընկած էին պանթուրքիզմի ու պանիսլամիզմի գաղափարները։ Երիտթուրքական պարագլուխները այդ հետադիմական դոկտրինաներն օգտագործեցին նաև արտաքին քաղաքականության ասպարեզում՝ թուրքալեզու և իսլամ դավանող ժողովուրդների նկատմամբ իրենց ագրեսիվ պլանները քողարկելու համար։

Պանթուրքիստներն ու պանիսլամիստները փորձում էին հիմնավորել այն թեզը, թե իբր թուրքերը թուրքալեզու և, ընդհանրապես, մահմեդական բոլոր ժողովուրդների մեջ ամենաառաջավորներն են։ Պանթուրքիստների խոսքերով «թուրքերը կազմում են բարձրագույն ռասա», որովհետև նրանք մյուս բոլոր ազգերից «ավելի քաջ», «ավելի գիտուն» և «ավելի ընդունակ» են։

Միևնույն ժամանակ պանթուրքիստները ձգտում էին ատելություն ու արհամարհանք ներշնչել ուրիշ ժողովուրդների նկատմամբ։ Նրանք պնդում էին, որ «ատելությունը ազգի համար ուժի օգտակար աղբյուր է, իսկ վրիժառությունը՝ այդ ուժի շարժիչը։ Մեծ գործերը կատարում է միայն ատող և վրիժառու ազգը»։ Ուստի թուրքերի ներկայիս սերունդը պետք է «վրիժառության զգացմունքը փոխանցի հաջորդ սերնդին... Թուրքն անբաժանելի է վրիժառության զգացմունքից, որն ազգային միասնությանը հասնելու և ազգային նպատակներն իրագործելու միջոց է։ Ահա թե ինչու

երիտասարդությանը պետք է դաստիարակել վրիժառության ու ատելության ոգով»[1]։

Այս ամբողջ ցնդաբանությունը պրոպագանդվում էր ուրիշ ժողովուրդների նկատմամբ թուրքական ռեակցիայի ագրեսիվ պլաններն արդարացնելու նպատակով։

Պանթուրքիստները պատերազմը դիտում էին որպես իրենց մեծապետական զավթողական նպատակներին հասնելու միակ միջոց։ Պատերազմի գաղափարը նրանք պրոպագանդում էին որպես թուրք ազգի գոյության անհրաժեշտ պայման։ Այսպես, երիտթուրքերի հայտնի գաղափարախոս Զիյա Գյոքալպը պնդում էր, որ իբր «բոլոր թուրքերը մի բանակ են կազմում»։ Թուրանի ստեղծումը նա հնարավոր էր համարում միայն երկարատև պատերազմների միջոցով, ըստ որում այդ պատերազմներն իրենց մասշտաբներով ու արյունահեղությամբ աննախադեպ էին լինելու, մի տեսակ նոր չինգիզխանության դարաշրջան (Yeniçingizlik)։ Իսկ Թեքին Ալփի խոսքերով «Մեծ թուրանը կստեղծվի հրով ու սրով»[2]։ Վերջիններին հետևելով, մյուս թուրք ռասիստները ևս բացականչում էին. «Աղգն աճում է պատերազմի ժամանակ», «Ռասաների պայքարն անխուսափելի է»։ «Մեր ռասայի բարօրության համար մենք ստիպված կլինենք երկար պատերազմել»։ «Մեր ազգի ամենափոքր իսկ բարօրության համար կարելի է զոհաբերել ամբողջ աշխարհի շահերը։ Մի մտածեք մարդկության մասին, ի՞նչ ունենք մենք նրա հետ...»։

Պանթուրքիզմի գաղափարախոսներ՝ Թեքին Ալփի, Զիյա Գյոքալպի, Յուսուֆ Աքչուրա-օղլուի, Ահմեդ Աղաևի, Ֆուաթ Քյոփրյուլյուի, Հալիդե Էդիպի, Մեհմեդ Էմինի և մյուսների (որոնց մասին խոսվեց նախորդ գլխում) նման ասույթները բավականաչափ վառ կերպով վկայում են թուրք հետադիմականների ծայրահեղ խավարամտության մասին։

Երիթուրքական տեսաբանները գտնում էին, որ նացիոնալիզմի վերացական ու ուտոպիական գաղափարները չեն կարողանա իրենց հետևից տանել աշխատավորների «հետամնաց ու խավարամիտ» զանգվածներին, ուստի անհամեմատ ավելի հարմար է այդ բանին հասնել կրոնական դրոշի ներքո[3]։ Այդ պատճառով էլ «Միասնություն և առաջադիմություն» կուսակցության առաջնորդներն իրենց շովինիստական ագիտացիայի ու պրոպագանդայի մեջ լայնորեն օգտվում էին պանիսլամիզմի ու պանթուրքիզմի լոզունգներից։ Կրոնական միավորման տակ նրանք հասկանում էին մահմեդական ու թուրքալեզու ժողովուրդների քաղաքական միավորումը՝ թուրքերի գլխավորությամբ։ Արհեստականորեն բարձրացնելով թուրքերի դերը, պանիսլամիստները և պանթուրքիստները ձգտում էին նախ արդարացնել թուրքական տիրապետությունը Օսմանյան կայսրության մահմեդական ժողովուրդների նկատմամբ, և, երկրորդ, հիմնավորել թուրքալեզու՝ ու իսլամ դավանող ժողովուրդների տերիտորիաների նվաճման իրավունքը։

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին պանիսլամական ու պանթուրքական պրոպագանդան շատ լայն թափ ստացավ հատկապես մայրաքաղաքի ու գավառական մամուլի խոշորագույն օրգանների էջերում։ Այդ պրոպագանդային ակտիվորեն աջակցում էր Ստամբուլի գերմանական դեսպանության խոսափողը հանդիսացող «Օսմանիշե լլոյդ» թերթը։ Այդ կապակցությամբ ռուսական դեսպան Զարրկովը 1912 թվականին թուրքական կառավարությանը բողոք հայտնեց այն կուրսի դեմ, որ ընդունել էին Ստամբուլի մի շարք թերթեր ու ամսագրեր, «սիստեմատիկորեն մղելով պանիսլամական պրոպագանդա, որը Ռուսաստանի դեմ բացահայտ թշնամական նպատակներ էր հետապնդում»[1]։ Պատահական չէր, որ այդ թերթերից ու ամսագրերից շատերը երիտթուրքական գործակալության կողմից տարածվում էին Ռուսաստանում բնակվող մահմեդականների շրջանում[2]։

Պանթուրքիստներն ու պանիսլամիստները հատուկ կոնֆերանսներ ու համաժողովներ էին կազմակերպում։ Նրանք Ռուսաստան և Եվրոպայի ու Ասիայի երկրներն էին ուղարկում հարյուրավոր էմիսարների, որոնք մատակարարված էին պրոպագանդիստական գրականությամբ։

«Թյուրք օջաղը» և «Թյուրք յուրդու» քաղաքական ակումբները (որոնց մասին խոսվեց առաջին գլխում) պանթուրքիստներին համախմբող կենտրոններն էին։ Այդ ակումբները ամբողջ երկրում իրենց հարյուրավոր բաժանմունքներն ունեին[3]։ Թուրքական «օջախների» կուլտուր-լուսավորչական գործունեությունը լոկ մի վարագույր էր, որը պետք է քողարկեր երիտթուրքական կառավարողների նվաճողական պլանները։

---

1 Մեջ է բերվում ըստ А. Х. Бабаходжаев, Пантюркизм—орудие идеологической диверсии империализма, «Труды Института востоковедения АН Узбекской ССР», вып. II, Ташкент, 1954, стр. 25.

2 Մեջ է բերվում ըստ А. С. Тверстинова, Младотурки и пантюркизм, «Краткие сообщения Института востоковедения АН СССР, XXII», стр. 68—69.

3 Ryan, Sira, The Last of Dragomans, London, 1951, p. 89.

1 АВПР, ф. «Политархив», д. 1041, л. 39—41.

2 ЦГИАЛ, ф. 821, оп. 133, д. 469, л. 152.

3 „Tarih", c. IV, s. 182.

Պանթուրքիստների տպագիր օրգաններն էին Սալոնիկում լույս տեսնող «Գենչ կալեմլեր» (երիտասարդ գրիչներ) և Ստամբուլում հրատարակվող «Թյուրք յուրդու» ամսագիրը։ Հիշյալ ամսագրերի էջերում տարվող պանթուրքական պրոպագանդան կոչված էր արդարացնելու «Միասնություն և առաջադիմություն» կոմիտեի էքսպանսիոնիստական արտաքին քաղաքականությունը։

Պանթուրքական ու պանիսլամական կազմակերպությունները բացահայտորեն աջակցություն էին ստանում կառավարական հիմնարկների կողմից։ Ներքին գործերի և եկեղեցական գույքի (վակուֆների) մինիստրությունները, շեյխ-ուլ-իսլամը պրոպագանդիստական նպատակների համար նրանց էին տրամադրում շատ խոշոր գումարներ [1]։

Պանթուրքական ու պանիսլամական պրոպագանդան ակտիվորեն խրախուսվում էր կայսերական Գերմանիայի կողմից, որն այդ պրոպագանդան դիտում էր, որպես ուժեղագույն զենքերից մեկը Անգլիայի ու Ռուսաստանի դեմ հասունացող պատերազմում։ Հայտնի պանթուրքիստ Յուսուֆ Աքչուրան իր «Քաղաքականության երեք ձևերը» գրքում գրում էր, որ թուրքալեզու բոլոր ժողովուրդների միավորմանն աջակցում է Բեռլինը, քանի որ այն ուղղված է Ռուսաստանի դեմ [2]։

Արևելքում իրենց նվաճողական նպատակներն ու աշխարհի վերաբաժանման իրենց ձգտումը գերմանական իմպերիալիստները քողարկում էին Ռուսական կայսրության իսլամ դավանող ժողովուրդների և անգլիական ու ֆրանսիական գաղութների բազմամիլիոն մահմեդական ազգաբնակչության «պաշտպանությամբ»։

«Պանթուրքիզմը,— իր զեկուցման մեջ ասաց Կոմինտերնի IV կոնգրեսի պատվիրակ Ջեվադը,— անպայմանորեն առաջ է բերում բախում Թուրքիայի ու Ռուսաստանի միջև, այն դեպքում, երբ պանիսլամիզմը ստեղծեց սուր հակասություններ նրա (Թուրքիայի—Ե. Ս.) և անգլիական ու ֆրանսիական իմպերիալիզմի միջև» [3]։

Երիտթուրքական մամուլը Ռուսաստանի դեմ պատերազմի բացահայտ կոչ էր անում։ Այսպես, 1910 թվականի փետրվարյան համարներից մեկում «Ժոն թուրք» («Երիտասարդ թուրք») թերթը նշում էր, որ «ազգը երբեք չի համաձայնվի հրաժարվել նրանից, ինչը իրեն է պատկանել, Օսմանյան այն հողերից, որոնք նվաճ-

1 Архив Груз. филиала ИМЛ при ЦК КПСС, ф. 11, д. 29, л. 668—670.
2 Տե՛ս Бабаходжаев А. Х., стр. 27.
3 Տե՛ս Архив Груз. фил. ИМЛ при ЦК КПСС, ф. 11, д. 29, л. 402—405.

վել էին մեր նախնիների արյունով և կորսվել մեր հայրենիքի կողմից» [1]։ Իսկ «Սիլյահ» («Զենք») թերթը 1911 թվականի մայիսի համարներից մեկում ուղղակի կոչ էր անում պատերազմ սկսել Ռուսաստանի դեմ։ «Մենք կզոհաբերենք Անատոլիայի բոլոր գումարտակները Ռուսաստանը խորտակելու համար,— գրում էր թերթը։ Օսմանիզմը հաղթանակում է... Ռուսները մեր թշնամիներն են՝ իսլամի հանդես գալու ժամանակներից» [2]։

Այդ կոչերը վկայում էին այն մասին, որ տակավին 1910 թվականին առկա էին երիտթուրքական կառավարության զավթողական պլանները Ռուսաստանի նկատմամբ։ Այդ պլանների կապակցությամբ «Միասնություն և առաջադիմություն» կուսակցության Վանի կոմիտեի անդամներից մեկը ասել է. «Թուրքիայի քաղաքականությունը պետք է կայանա այն բանում, որ Փոքր Ասիայում ստեղծվի հզոր տերություն... Թուրքիան կարող է երազել, որ ֆեդերատիվ ու ինքնավար կառավարում շնորհվի ոչ միայն Անդրկովկասին, այլև Կովկասյան լեռնաշղթայից շատ ավելի հյուսիս ընկած Դոնին և Վոլգային սահմանակից վայրերին... Ռուսները պետք է շպրտվեն բնական այս սահմանից այն կողմը» [3]։

Նախապատրաստվելով իրականացնել իրենց մեծապետական, նվաճողական ծրագրերը, երիտթուրքերը Ռուսաստանի մահմեդականներով բնակեցված շրջաններն էին ուղարկում մեծ թվով գործակալներ ու լրտեսներ, որոնք գերազանցապես հոգևոր անձինք կամ սպաներ էին։ Երիտթուրքական գործակալության քայքայիչ այս գործունեության հիմնական օբյեկտներից մեկը Անդրկովկասն էր։

Պանիսլամիստների մասին զեկույցում, որը կազմվել էր Պետերբուրգում՝ առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին, ընդգծվում էր, որ պանիսլամիստները գլխավոր ուշադրությունը դարձնում են Կովկասի, իսկ այնուհետև Իրանի, Ռուսաստանի ներքին մարզերի, Աֆղանստանի, Հնդկաստանի, Չինաստանի, Եգիպտոսի և Հյուսիսային Աֆրիկայի վրա։

«Հարավային Կովկասը,— ասված է այդ փաստաթղթում,— կհանդիսանա մի շատ կարևոր կենտրոն, որի միջոցով կարելի կլինի ազդել ամբողջ Միջին Ասիայի, Չինաստանի վրա... Հատկապես

1 ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 991, л. 6.
2 Նույն տեղում, թ. 246։
3 Նույն տեղում, թ. 228։ Այս փաստաթուղթն օգտագործել է Յու. Մ. Մարուսնովը, «Երիտթուրքերի պանթուրքիզմն ու պանիսլամիզմը (1908—1918 թթ.)» հոդվածում։ Տե՛ս «Краткие сообщения Института народов Азии», XV, Международные вопросы, Арабские страны, М., 1961, стр. 48.

մահմեդականների շրջանում պանիսլամական գաղափարների պրոպագանդմանը երիտթուրքերը առաջնակարգ նշանակություն են տալիս»[1]։ Հիմնականում Ռուսաստանի դեմ ուղղված պանիսլամական ու պանթուրքական այս ամբողջ գործունեությունն անմիջականորեն ղեկավարում էր «Միասնություն և առաջադիմություն» կոմիտեն, որը ժառանգել էր աբդուլհամիդյան կարգերի ավանդությունները։

Պանթուրքական ու պանիսլամական պրոպագանդան ծավալելու նպատակով երիտթուրքական կոմիտեն 1913 թվականին, իր գաղտնի նիստերից մեկում, որոշում կայացրեց արդեն գոյություն ունեցող պանիսլամական Սահմանադիր կոմիտեից բացի, տեղական մի շարք կոմիտեներ ստեղծելու մասին։ Դրանցից յոթը նախատեսվում էր հիմնել Ռուսաստանի սահմաններում[2]։

Այդ կոմիտեները գաղտնի կերպով ստեղծվեցին այն շրջաններում, որտեղ կենտրոնացված էր մահմեդական ազգաբնակչությունը՝ Անդրկովկասում, Հյուսիսային Կովկասում, Միջին Ասիայում և Ղրիմում։ Անդրկովկասում դրանք հիմնվեցին Թիֆլիսում, Բաքվում, Դերբենդում, Նուխիում և Դաղստանի մարզի Սամուրի օկրուգի Ախտը վայրում։ Գյոքչայում, Աղդաշում և Քյուրդամիր կայարանում ստեղծվեցին կոմիտեների բաժանմունքներ։

Հիշյալ վայրերում հիմնված կոմիտեները զբաղվում էին Թուրքիայից անլեգալ կերպով ստացված պանիսլամական ու պանթուրքական գրականության տարածմամբ, մահմեդական ազգաբնակչության միջից գործակալներ հավաքագրելով և այլն։

Պանիսլամիզմի հիմնադիր կոմիտեն, որը «Միասնություն և առաջադիմություն» կուսակցությունից և կառավարական գաղտնի ֆոնդերից խոշոր դրամական միջոցներ էր ստանում, շռայլորեն ֆինանսավորում էր իր տեղական մարմիններին՝թուրքանպաստ պրոպագանդա մղելու և հակառուսական զանազան գործողություններ կազմակերպելու համար։

Դիվերսիոն այդ գործունեությունը ուժեղացնելու նպատակով երիտթուրքական կառավարությունը Անդրկովկասում գտնվող թուրքական հյուպատոսական հիմնարկները ենթարկեց պանիսլամիզմի հիմնադիր կոմիտեին[3]։

Պանիսլամիզմի ու պանթուրքիզմի գաղափարները Կովկասի մահմեդական ազգաբնակչության մեջ պրոպագանդելու համար երիտթուրքերն ու նրանց հովանավորողները՝ գերմանական իմպերիալիստները, լայնորեն օգտագործում էին ադրբեջանական, չերքեզ, չեչեն, Դաղստանի և թուրքիայում բնակվող այլ գաղթականների հետադիմական վերնախավին։ Այդ գաղթականները Թուրքիա էին գաղթել Շամիլի ղեկավարած շարժումը ճնշելուց և 1878—1879 թվականներին Չեչենիայում ու Դաղստանում բռնկված ապստամբությունների պարտությունից հետո։ Դրանցից շատերը աչքի ընկնող պաշտոններ էին զբաղեցնում Օսմանյան կայսրության պետական մարմիններում և հրամանատարական բարձր դիրքեր՝ թուրքական բանակում[1]։

Պանթուրքական շարժումն աջակցություն էր ստանում նաև ադրբեջանական բուրժուա-նացիոնալիստական «մուսավաթ» կուսակցության գործիչների, Դաղստանի նացիոնալիստների, ինչպես նաև Հյուսիսային Կովկասի ազգությունների բուրժուական տարբեր խմբավորումների կողմից[2]։

Նախքան երիտթուրքերի իշխանության գլուխ անցնելը, թուրք պանիսլամիստների հետ էր կապված պանիսլամիզմի գաղափարախոսներից մեկը՝ լեռնային ղարաբաղցի Ահմեդ Աղաևը։ Վերջինս ադրբեջանական միլիոնատեր Թաղիևի միջոցներով Բաքվում հրատարակում էր պանիսլամական ուղղություն ունեցող թերթ։ Ռուսական առաջին հեղափոխության տարիներին փոխադրվելով Ստամբուլ, Աղաևն այնտեղ գլխավորեց (նույնպես ադրբեջանական ծագում ունեցող Մահմեդ էմինի հետ) «Միասնություն և առաջադիմություն» կուսակցության մեջ առկա պանթուրքական հոսանքը։ Նրանց հարեց Ռուսաստանից գաղթած Յուսուֆ Աքչուրան, թուրքական նախկին լրտեսը և Կազանում թաթարերեն լեզվով հրատարակվող «Կազանի լրաբեր» թերթի նախկին քարտուղարը։ Յուսուֆ Աքչուրան երկար ժամանակ նամակագրություն ուներ Եգիպտոսում ու Ստամբուլում հաստատված պանթուրքիստների հետ[3]։

Տեղափոխվելով Թուրքիա, Ահմեդ Աղաևը, Մահմեդ էմինը, Յուսուֆ Աքչուրան և Ռուսաստանից գնացած մյուս վտարանդիները Ստամբուլում կազմակերպեցին «Ռուսական մահմեդական ընկերությունը», որի միջոցով նրանք մշտական կապ հաստատեցին Անդրկովկասում գտնվող պանթուրքական գործակալների հետ։ Վերջիններիս օգնությամբ նրանք ղեկավարում էին տեղական ազգաբնակչությունից լրտեսական տեղեկություններ ձեռք բերելու աշխատանքը[4]։

1 ЦГИАМ, ф. 102, оп. 15, д. 74, л. 109—120.
2 Նույն տեղում, գ. 34, թ. 119։
3 ЦГИАМ, ф 102, оп. 15, д. 74, л. 109—120.

1 Տե՛ս Н. Эмиров, Установление Советской власти в Дагестане и борьба с германо-турецкими интервентами, М., 1949, стр. 83.
2 Նույն տեղում։
3 ЦГИАЛ, ф. 821, оп. 133, д. 469, л. 1.
4 Նույն տեղում, գ. 472, թ. 204, 207։

Հյուսիսային Կովկասում պանիսլամիստներին ու պանթուրքիստներին գլխավորում էին բուրժուական նացիոնալիստներ Նեջմեդդին Գոցինսկին և Ուզուն-Հաջի Սալթընսկին։

Պանիսլամական ու պանթուրքական պրոպագանդայի հիմնական կենտրոնն Անդրկովկասում Բաքուն էր։ Պանթուրքիզմի տարածման մասին զեկույցում, որը կազմվել էր Կովկասի փոխարքայի գրասենյակում 1913 թվականին, նշվում էր, որ «Անդրկովկասյան մահմեդականության կենտրոնը հանդիսացող Բաքուն տեղական թաթարական մամուլի միջոցով պանիսլամական գաղափարների բացահայտ պրոպագանդման օջախն է։ Այնտեղ լույս տեսնող մի ամբողջ շարք թերթերի էջերում պանիսլամիզմի բացահայտ քարոզ են տանում... Այդ ուղղությամբ էին աշխատում մահմեդական հայտնի հրապարակախոսները, ինչպես, օրինակ, Գասպրինսկին, Դեվլյաթ-Կիլդեևը, Բայազիդովը, առանձնապես մամուլի օրգանները՝ Բաքվում հրատարակվող «Կասպին» և Ղրիմում լույս տեսնող «Թարջումանը» («Թարգման»)։ Այս երկու թերթերն էլ պրոպագանդում էին պանիսլամիզմի հողի վրա բոլոր ռուսական մահմեդականների միավորումը»։

Նույն այդ փաստաթղթում հաղորդվում էր, որ Բաքվում գտնվել է «Մահմեդական ընկերության» կողմից տարածվող ռուսերեն և թաթարերեն լեզուներով գրված թռուցիկ, որը Անդրկովկասի իսլամ դավանող ժողովուրդներին կոչ էր անում միավորվելու[1]։

Կովկասում թուրքական գործակալության լայն ցանց ստեղծելու աշխատանքը սկսվել էր տակավին Աբդուլ-Համիդի օրոք[2], բայց այն առանձնապես լայն թափ ստացավ երիտթուրքերի իշխանության գալուց հետո[3]։

Բազմաթիվ փաստաթղթեր վկայում են այն մասին, որ երիտթուրքերն Անդրկովկաս ու Հյուսիսային Կովկաս էին ուղարկում փորձված պանթուրքական ու պանիսլամական էմիսարներ։ Նրանք Ռուսաստան էին ներթափանցում վաճառականների ու ուխտավորների, միսիոներների ու գիտնականների անվան տակ։ Այսպես, 1910 թվականին վերաբերող զեկուցագրերից մեկում մատնանշվում էր, որ Մեքքայից Անդրկովկաս վերադարձող ուխտագնացների

1 ЦГИАЛ, ф. 821, оп. 133, д. 469, л. 331.

2 Այսպես, 1905 թվականի հոկտեմբերի 9-ին Զինովևը հաղորդում էր, որ Սևաստոպոլ, Օդեսա և Բաքու են մեկնել թուրքական էմիսարներ, որոնք «ուղարկված են կովկասյան մահմեդականների մեջ ագիտացիա տանելու նպատակով»։ Տե՛ս АВПР, ф. «Политархив», д. 1020, л. 261.

3 ЦГИАЛ, ф. 821, оп. 133, д. 469, л. 3.

անվան տակ Անդրկովկաս են ուղարկվել «կարդացած և նոր գաղափարներին նվիրված մի քանի տասնյակ խոջաներ՝ մահմեդականների մեջ ամբողջ մահմեդական աշխարհի համերաշխությունը քարոզելու համար՝ ի հակադրություն քրիստոնեական աշխարհի»[1]։

Կովկասյան ռազմական օկրուգի շտաբի հետախուզական բաժինը 1909—1914 թվականներին շատ հաճախ հաղորդում էր այն մասին, որ պանթուրքական պրոպագանդիստ-լրտեսներ են ուղարկվում Անդրկովկաս՝ տեղական իշխանությունների դեմ մահմեդական ազգաբնակչության ելույթները նախապատրաստելու համար։ Նման բնույթի զեկուցագրերից մեկում, 1911 թվականի նոյեմբերի 15-ին, նշվում էր, որ Կարինից մեկնել են 12 զգեստափոխված սպաներ։ «Նրանք բոլորը,— ասվում էր այդ փաստաթղթում,—մեկնեցին Անդրկովկաս և Կովկասի մահմեդական բնակչություն ունեցող այլ շրջանները, որպես էմիսարներ՝ Ռուսաստանի դեմ հնարավոր պատերազմի դեպքում մահմեդական ազգաբնակչությանը ապստամբության նախապատրաստելու համար։ Թուրք էմիսարների այդպիսի մի ուրիշ խումբ Տրապիզոնից մեկնեց Բաթումի մարզը»[2]։

Անդրկովկասում ստեղծված պանթուրքական պրոպագանդայի կենտրոնները միաժամանակ զբաղվում էին լրտեսական ակտիվ գործունեությամբ։ Այդպիսի կենտրոններից մեկն էր թուրք-իրանական «բարեգործական ընկերությունը», որը կազմակերպվել էր Թիֆլիսում՝ Ստամբուլի ցուցումով։ Այդ «ընկերության» գլուխ էր կանգնած հայտնի պանթուրքիստ Ախմեդ Հասան Մոլլա-զադեն։ «Բարեգործական ընկերությունն» իր բաժանմունքներն ուներ Բաքվում, Երևանում, Գանձակում և Բաթումում։ Նա գործակալների լայն ցանց էր պահում, որոնց միջոցով թուրքական գլխավոր շտաբի համար տեղեկություններ էր հավաքում։ Գործակալները շրջագայում էին Անդրկովկասում՝ մահմեդական դերասանների անվան տակ[3]։ Թուրքիայի օգտին լրտեսությամբ էին զբաղվում նաև Բաքվում, Բաթումում, Թիֆլիսում և Անդրկովկասի այլ քաղաքներում ստեղծված մահմեդական «բարեգործական» և «հոգևոր» ընկերությունները։

Թուրքիայից գալով Անդրկովկաս, պանթուրքիստները փորձում էին իրենց համար գործակիցներ փնտրել մահմեդական հոգևորականության ու մտավորականների շրջանում, ինչպես նաև հյուրա-

1 ЦГИАЛ, ф. 821, оп. 133, д. 469, л. 5—6.

2 ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 3827, л. 435—436.

3 Архив Азерб. филиала ИМЛ при ЦК КПСС, ф. 58, д. 32, л. 59—60.

նոցների, ռեստորանների, սրճարանների, չայխանաների սեփականատերերի մեջ և այլն։ Բերենք մի քանի օրինակ։

Պանթուրքական գործունեությամբ էին զբաղված Իսմայիլ Սամուսողլու Հասան-զադեն և Մահմեդ Ալի Մաշադի Թաղին, որոնց պատկանում էր Թիֆլիսի «Շարք» տպարանը [1]։ Բաթումում բնակվող թուրքահպատակներ Ամիր Լյութֆին և Հասան Իբրահիմը, որոնցից առաջինը սրճարանատեր էր, իսկ երկրորդը՝ վարսավիր, մոլի պանթուրքիստներ էին։ Նրանք կասկածվում էին նաև լրտեսության մեջ [2]։

1914 թվականի սկզբին Բաթումում թուրքական հյուպատոսի ղեկավարությամբ ստեղծվեց մի խմբակ, որն իր առջև նպատակ էր դրել մահմեդական ազգաբնակչության մեջ պանթուրքական պրոպագանդա ծավալել։ Այդ պրոպագանդան անց էր կացվում գլխավորապես թուրքահպատակներին պատկանող Բաթումի սրճարաններում [3]։ Անդրկովկասի մյուս քաղաքներում՝ Թիֆլիսում, Կարսում և այլուր, որտեղ կային թուրքական հյուպատոսություններ, վերջիններս նույնպես սերտ կապ էին հաստատել տեղական պանթուրքիստների հետ և ուղղություն էին տալիս նրանց գործունեությանը։

Պանթուրքիստներն ու պանիսլամիստները մեծ ուշադրություն էին դարձնում իրենց հետադիմական գաղափարները սովորողների շրջանում պրոպագանդելու խնդրին։ Բաքվի, Ելիզավետպոլի և Թիֆլիսի որոշ դպրոցներում աշակերտներն աշխատում էին սերտել պանիսլամական երգերն ու հիմները։ Պանթուրքիստ-ուսուցիչները ուսումնական հաստատություններում հակառուսական բովանդակություն պարունակող գրականություն էին տարածում։ Դրանով էին, օրինակ, զբաղվում Ելիզավետպոլի դպրոցի դասատու Միրզա Հուսեյն Ռաֆֆի-զադեն [4] և վերը հիշատակված Ախունդ-Հասան-Մոլլա-զադեն՝ Թիֆլիսի պանթուրքիստների պարագլուխը։ «Իթթիֆաք» ուսումնարանում, որի հոգաբարձուն էր Մոլլա-զադեն, ուսուցումն ընթանում էր Թուրքիայից ուղարկված պանթուրքական ոգով գրված դասագրքերով [5]։

Այսպես, դասագրքերից մեկում («Էդիպ») տպագրված էին քառյակներ, որոնցում ռուսները մեղադրվում էին «դաժանության» մեջ, որը, իբր թե, Թուրքիայի անկման պատճառն էր հանդիսացել։

[1] Архив Азерб. филиала ИМЛ при ЦК КПСС, ф. 58, д. 80, л. 8.
[2] ЦГИА Груз. ССР, ф. 85, оп. 1, д. 155, л. 3.
[3] Նույն տեղում, թ. 25։
[4] Архив Азерб. филиала ИМЛ при ЦК КПСС, ф. 58, д. 80, л. 12—12 об.
[5] Նույն տեղում։

Նույն դասագրքում ամեն կերպ փառաբանվում էին երիտթուրքական առաջնորդներ Էնվերի ու Նիյազի-բեյի «քաջագործությունները», մանրամասն նկարագրվում էր պանիսլամիստների գործունեությունը Թուրքիայում [1]։

Ռուսաստանի մահմեդական երիտասարդությանն իր ազդեցությանը ենթարկելու և հակառուսական ոգով դաստիարակելու ձգտումը, որով ղեկավարվում էր թուրքական գործակալությունն Անդրկովկասում, բնական է, գրավեց ցարական իշխանությունների ուշադրությունը։ Ռուսաստանի ներքին գործերի մինիստրության կողմից 1911 թվականի հունվարին կազմված «Մահմեդական ազգաբնակչության շրջանում պանիսլամական ու պանթուրքական ազդեցությունը խոչընդոտելու միջոցառումների մասին» զեկույցում ասվում էր, որ «ներքին և արտաքին իրադարձությունների ազդեցության տակ... ռուսական մահմեդականության մեջ ծայր առած շարժումը, որը ղեկավարվում է Թուրքիայից՝ այնտեղ գաղթած մեր հպատակների, գերազանցապես թաթարների, կողմից, որոնք հենվում են Ռուսաստանում բնակվող իրենց համախոհների վրա, վերջին ժամանակներս ընդունեց առանձնապես լարված և նույնիսկ ռուսական պետականության պատմական խնդիրներին սպառնացող բնույթ» [2]։

Կովկասի իշխանությունների անհանգստությունն ավելի մեծացավ իտալա-թուրքական և բալկանյան պատերազմներից հետո, երբ պանիսլամական ու պանթուրքական պրոպագանդան Անդրկովկասում, մահմեդական ազգաբնակչություն ունեցող Ռուսաստանի մարզերում է՛լ ավելի ուժեղացավ։ Այդ կապակցությամբ Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովը, պատասխանելով արտաքին գործերի մինիստրության հարցմանը՝ Բաքվում թուրքական հյուպատոսություն հիմնելու նպատակահարմարության մասին, հայտարարեց, որ այդ «միջոցառումը, ըստ էության, հավասարազոր է Բաքվում՝ Կովկասի մահմեդականության այդ կենտրոնում, պաշտոնական թուրքական լրտեսության կազմակերպմանը»։

«Հյուպատոսությունը,— գրում էր այնուհետև Վորոնցով-Դաշկովը,— կդառնա թուրքական քաղաքական պրոպագանդայի ու պանիսլամական շարժման կենտրոնը Կովկասի մահմեդական նահանգներում, ուր ներկայումս նկատելի է պանիսլամական գաղափարների լայն պրոպագանդա, որը մահմեդականների հոգևոր հայացքի առջև վերակենդանացնում է իսլամի մեծ անցյալը և նրանց գայթակղեցնում վերանորոգված Թուրքիայի հովանավորության

[1] Архив Азерб. филиала ИМЛ при ЦК КПСС, ф. 58, д. 80, л. 12—12 об.
[2] ЦГИАЛ, ф. 821, оп. 133, д. 472, л. 92.

տակ մահմեդական ժողովուրդների երբեմնի հզորությունը վերածնելու հույսերով։ Դրա հետ մեկտեղ, թուրքական գաղտնի էմիսարները Կովկասի մահմեդական ազգաբնակչությանը հրահրում են Ռուսաստանի դեմ և պաշտպանում մեր դեմ ուղղված ագիտացիան՝ ձգտելով այդ նպատակներով օգտագործել պանիսլամիստների ագրեսիվ մտահղացումները...»։ Պանիսլամիստները,— եզրակացնում էր Կովկասի փոխարքան,— երազում են «իրենց վերադարձնել Կովկասը և Ռուսաստանի կողմից խլված մնացած բոլոր մարզերը...»[1]։

Ռուսաստանում և, հատկապես, Անդրկովկասում, պանիսլամական ու պանթուրքական պրոպագանդայի ծավալման մասին էր խոսվում նաև Ռուսաստանի ներքին գործերի մինիստրության 1913 թվականի հոկտեմբերի 28-ի շրջաբերականում։ Հիշյալ փաստաթուղթը կովկասյան իշխանություններին մատնանշում էր Թուրքիայից տեղափոխված անձանց նկատմամբ անդուլ հսկողություն սահմանելու անհրաժեշտությունը և կոչ էր անում «հատուկ ուշադրություն դարձնել նահանգի սահմաններում հրատարակվող կամ տարածվող մահմեդական ամսագրերի ու թերթերի վրա, ինչպես նաև ձեռք առնել բոլոր հնարավոր միջոցները՝ մահմեդական ազգաբնակչության շրջանում անպայմանորեն արգելելու Թուրքիայի օգտին տարվող ագիտացիան, որը պանիսլամական բնույթ է կրում»[2]։

Կովկասյան իշխանությունների ձեռքն ընկած փաստաթղթերը վկայում են, որ այդ նախազգուշացումը միանգամայն տեղին էր։

Այսպես, Ստամբուլում սարքված կոչը Ռուսաստանի «մահմեդական համախոհներին» առաջարկում էր անհապաղ միավորվել թուրքերի հետ։ Այնտեղ ասվում էր հետևյալը. «Մենք պետք է համախմբվենք և պայքարենք, մենք պետք է զոհաբերենք ոչ միայն մեր ունեցվածքը, այլև կյանքը՝ Թուրքիայի հեղինակությունը բարձրացնելու համար։

Մահմեդական աշխարհի գլխով անցած բոլոր դժբախտությունների մեջ մեղավոր է Ռուսաստանի բռնակալական կառավարությունը... Ռուսաստանում մահմեդականների հետ վերաբերվում են, ինչպես անշունչ առարկաների... այն մահմեդականները, որոնք ունեն ինքնասիրություն և ազգային ինքնագիտակցություն, պետք է ոտքի կանգնեն պաշտպանելու համար իրենց կրոնը և իրենց ազգը, չխնայելով ոչ միայն իրենց գույքը, այլև կյանքը։ Այդ բանին է ներկայումս մեզ կոչում նաև Ղուրանը»։ Այնուհետև, հիշյալ

[1] ЦГВИА, ф. 2000/с, оп. 1, д. 991, л. 163—165.
[2] ЦГАОР Аз. ССР, ф. 498, оп. 1, д. 806, л. 58.

կոչը բալկանյան պատերազմում Օսմանյան կայսրության կրած պարտությունների ողջ պատասխանատվությունը բարդում էր Ռուսաստանի վրա. «Ամբողջ աշխարհը գիտե, որ Թուրքիայի դեմ բալկանյան տերությունները չէ, որ կռվում են։ Այդ բոլոր աղետներն ու դժբախտությունները թափվում են Թուրքիայի գլխին համայն մարդկության ու մահմեդականության թշնամի Ռուսաստանի կողմից»[1]։

Նույնպիսի բնույթ էր կրում բալկանյան պատերազմի ժամանակ «Միասնություն և առաջադիմություն» կուսակցության կողմից կազմված դիմումը՝ Ռուսաստանի մահմեդականներին, որտեղ պարունակվում էին մարդատյաց կոչեր՝ ոչնչացնելու բոլոր «անհավատներին»՝ «գյաֆիրներին»։

Ինչպես երևում էր այդ փաստաթղթից, կառավարող երիտթուրքական կլիկը ճգնում էր գործն այնպես ներկայացնել, թե իբր բալկանյան պատերազմներն ուղղված են մահմեդական բոլոր ժողովուրդների դեմ։ Կրոնական մոլեռանդություն բորբոքելու ճանապարհով երիտթուրքերը ձգտում էին ձեռք բերել աշխարհի մահմեդական բոլոր ժողովուրդների աջակցությունը՝ իրենց բռնապետական իշխանությունը բալկանյան թերակղզու ժողովուրդների նկատմամբ պահպանելու համար։ Հիշյալ կոչը հսկայական թիվ կազմող օրինակներով ուղարկվեց Անդրկովկաս, Միջին Ասիա, Հնդկաստան, Եգիպտոս, Ալժիր, Մարոկկո և Աֆղանստան[2]։

Համաշխարհային առաջին պատերազմին անմիջականորեն նախորդող ժամանակաշրջանում Ստամբուլի կառավարող շրջանները իրենց կողմից Կովկաս ուղարկված գործակալներին ուղղակի ցուցում էին տվել զինված ելույթներ նախապատրաստել ռուսական բանակի թիկունքում։ Պատերազմի մոտալուտ վտանգը է՛լ ավելի ուժեղացրեց թուրքական էմիսարների լրտեսական գործունեությունն Անդրկովկասում։ Այդ մասին են վկայում բազմաթիվ արխիվային փաստաթղթերը։

Այսպես, Կարինի նախկին քարոզիչ Ահմեդ-էխսան էֆենդին՝ Արաբ խոջա մականունով, որը մզկիթներում Ռուսաստանի դեմ հրահրիչ ճառեր էր արտասանում, 1913 թվականի ամռանը փոխադրվեց Բաքու, ուր նա ագիտացիա էր մղում մահմեդականների շրջանում։ Կարինի ռուսական հյուպատոս Ադամովի կարծիքով, Արաբ խոջայի սերտ կապը Կարինի զինվորական իշխանությունների հետ հիմք է տալիս մտածելու, որ նա Անդրկովկաս էր ու-

[1] Архив Азерб. филиала ИМЛ при ЦК КПСС, ф. 58, д. 32, л. 123.
[2] Նույն տեղում, ֆ. 53, գ. 238, թ. 151։

8 — 2423

զարկվել լրտեսական հատուկ հանձնարարություններ կատարելու նպատակով[1]։

1913 թվականի օգոստոսին, ռազմական լրտեսության նպատակով, Կարս, Երևան ու Թիֆլիս ուղարկվեցին քրդական տարազ հագած քաղաքական գլխավոր շտաբի սպաներ՝ կապիտան (յուզբաշի) Մահմուդ էֆենդին և պորուչիկ (մուլյազիմ) Ռիզա էֆենդին[2]։ 1914 թվականի մարտին խախտելով ռուսական սահմանը, լազերի հագուստով Կարս անցան ծպտված թուրքական լրտեսներ՝ կադրային սպաներ կապիտան Իսմայիլ Ջելյալ-բեյը և պորուչիկ Խալիլ էֆենդին։ Նույն թվականի մայիսին Կովկաս ուղարկվեցին գլխավոր շտաբի սպաներ Իսմայիլ Հաքքը և պորուչիկ Իբրահիմ էդհեմը[3]։ Կարսում նրանք պետք է հանդիպեին թուրքական հյուպատոսի հետ[4]։ 1914 թվականի սկզբին «Միասնություն և առաջադիմություն» կուսակցության Կարինի կազմակերպությունը Կովկաս ուղարկեց Աբդուրահիմ էֆենդուն և Իբրահիմ էֆենդուն՝ թուրքական նավատորմի օգտին մահմեդական ազգաբնակչությունից նվիրատվությունների հանգանակություն անցկացնելու համար։ Այդ նպատակով նրանք շրջում էին մահմեդական գյուղերը՝ ոչխարների մեծագնորդների անվան տակ և միաժամանակ լրտեսական տեղեկություններ հավաքում, որոնք, ինչպես և ձեռք բերված դրամը, Կարին էին ուղարկվում Կարսի ու Թիֆլիսի թուրքական հյուպատոսների միջոցով[5]։

Նույն այդ ժամանակ վերոհիշյալ անձնավորությունների հետ Անդրկովկաս մեկնեց խոշոր պաշտոնյա Թահիր-բեյը, որը համարվում էր երիտթուրքական կուսակցության սյուներից մեկը՝ Կարինի վիլայեթում։ Թուրքական գործակալները շրջագայում էին Անդրկովկասի գյուղերն ու քաղաքները և մահմեդական ազգաբնակչության շրջանում պրոթուրքական պրոպագանդա էին մղում։ Մասնավորապես, նրանք մուսավաթականներին համոզում էին Ադրբեջանում հակառուսական ելույթներ նախապատրաստել։

Սարիղամիշում, Կարսում և Թիֆլիսում գտնվելու ժամանակ Թահիր բեյը կանգ էր առնում թուրքական հյուպատոսությունում, որտեղ և հանդիպումներ էր ունենում տեղի մահմեդական ազգաբնակչության ներկայացուցիչների հետ[6]։ Վերջինիս միսիայի արդյունքների վրա մենք կանգ կառնենք ստորև։

1 ЦГАОР Аз. ССР, ф. 498, оп. 1, д. 923, л. 88.
2 Նույն տեղում, գ. 106։
3 Նույն տեղում, գ. 577, թ. 68։
4 ЦГВИА, ф. 200, оп. 1, д. 3792, л. 58.
5 ЦГИА Груз. ССР, ф. 2с, д. 3265, л. 6.
6 ЦГАОР Аз. ССР, ф. 498, оп. 1, д. 977, л. 30—32.

1914 թվականի ապրիլին Կարսում ու Թիֆլիսում եղավ թուրքական լրտես Սելիմ Փուլադը։ Նույն ամսվա վերջին նա վերադարձավ Թուրքիա և, Կարինում Ռուսաստանի հյուպատոս Ադամովի տեղեկությունների համաձայն, «իր հետ բերեց Ալեքսանդրապոլի շրջանում, Կարսում ու Սարիղամիշում գտնվող բոլոր բերդային ամրությունների, ամրոցների, զորանոցային շենքերի, ռազմական նպատակներով կատարվող զանազան կառույցների, խճուղային ճանապարհների և այլ օբյեկտների պլանները, որոնք Կարսի թուրքական հյուպատոսին հասցվեցին Կարսի մահմեդական բնակիչ, ոմն Ասրֆ բեյի կողմից»[1]։

Նույն Ադամովը 1914 թվականի մայիսին հաղորդում էր, որ հակառուսական պրոպագանդա տանելու նպատակով երիտթուրքերը Կարսի մարզը ուղարկեցին Կարինի բնակիչներ Սաբրի-բեյին և Իբրահիմ էֆենդի Դալ-զադեին[2]։

Պատերազմի նախօրյակին Հուսեյն Քերամովի անունով ռուսական կեղծ անձնագրով Ռուսաստան եկավ «Միասնություն և առաջադիմություն» կուսակցության կոմիտեի անդամ, հայտնի պանիսլամիստ Մահմեդ Ռահիմ բեյը, որին հանձնարարված էր մահմեդական ազգաբնակչության մեջ տարածել մահմեդականության հոգևոր գլուխ՝ շեյհ-ուլ-իսլամի ուղերձը՝ ֆե՛թվան[3]։

Թուրքական իշխանությունների կողմից ուղարկված լրտեսները իրենց հետ դրամական խոշոր միջոցներ էին տանում՝ Անդրկովկասի մահմեդական ազգաբնակչության հետադիմական խավերից իրենց համար գործակալներ հավաքագրելու և զինված ելույթներ կազմակերպելու նպատակով։ Թուրքիայի՝ պատերազմի մեջ մտնելուց քիչ առաջ Գիրսը հեռագրում էր, որ Կարինից Անդրկովկաս են մեկնել Թավրիզի նախկին կառավարող Էմիր Հիշմալը՝ իր չորս եղբայրների հետ և նրա օգնական Միրզա աղա Բագուրին, որոնց թուրքական կառավարությունը մեծ գումարներ էր տրամադրել և հանձնարարել էր ապստամբություն բարձրացնել Ադրբեջանում[4]։

Երիտթուրքերն իրենց գործակալների միջոցով եռանդուն կերպով թռուցիկներ էին տարածում, հատկապես Թուրքիային սահմանակից Բաթումի մարզում։ Այդ թռուցիկներում կոչ էր արվում

1 ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 3792, л. 58.
2 ЦГИА Груз. ССР, ф. 20, д. 3265,, л. 100.
3 ЦГИАМ, ф. 102, оп. 15, д. 74, л. 89.
4 ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 3757, л. 75.

ապստամբել Ռուսաստանի տիրապետության դեմ և պայքարել՝ այդ շրջանն Օսմանյան կայսրությանը միացնելու համար [1]։

Վերոհիշյալ բնույթի թուրքական փաստաթղթեր հաճախ էին գտնվում Աջարիայում, այն անձանց մոտ, որոնք կասկածվում էին պանթուրքական պրոպագանդա մղելու մեջ։ Այսպես, աջարացի Սուլեյման Ծիթելաձեի տան զետնահարկում գտնվել էին Աջարիայի բնակիչներին ուղղված մեծ թվով թռուցիկներ՝ թուրքերեն լեզվով։ Դրանցում համաշխարհային պատերազմի սանձազերծման ամբողջ մեղքը բարդվում էր Ռուսաստանի վրա և, միևնույն ժամանակ, փառաբանվում գերմանական զենքի հաղթանակը [2]։

Բերված փաստերը վկայում են, որ իրենց հակառուսական քաղաքականության մեջ երիտթուրքերը մեծ հույսեր էին կապում Կովկասի մահմեդականների հետ։ Ստամբուլում հույս ունեին, որ զանգվածային ապստամբությունը ռուսական բանակի թիկունքում կհեշտացնի թուրքական զորքերի ներխուժումն Անդրկովկաս, ապա և ամբողջ Կովկասի գրավումը։

Սակայն թուրքական գործակալությանը չհաջողվեց Կովկասի մահմեդական ժողովուրդներին ստիպել շեղվելու այն ճշմարիտ ուղուց, որով նրանք ընթանում էին դարերից ի վեր։ Չնայած ցարիզմի կողմից տարվող գաղութային ճնշման քաղաքականությանը, մահմեդական աշխատավորությունն իր բախտը կապել էր Ռուսաստանի հետ, որտեղ իշխող սոցիալ-տնտեսական պայմանները, Թուրքիայի համեմատ, շատ ավելի առաջավոր էին։ Նրանք չենթարկվեցին պանթուրքական ու պանիսլամական խավարամոլների կեղծ փաստարկներին, որոնք ձգտում էին Անդրկովկասն անջատել Ռուսաստանից և այն մտցնել հետամնաց, կիսաֆեոդալական Օսմանյան կայսրության կազմի մեջ։ Անդրկովկասի ժողովուրդներին հնուց ի վեր քաջածանոթ էր սուլթանական իշխանությունների ասիմիլյատորական արյունոտ քաղաքականությունը։

Ցարական պաշտոնյաները ևս նշում էին Կովկասում պանթուրքական ու պանիսլամական պրոպագանդայի ձախողման մասին։ Բաքվի քաղաքագլուխը հաստատում էր, որ պանիսլամիստների գործունեությունը՝ «Թուրքիայի նկատմամբ Անդրկովկասի մահմեդականների մեջ հետաքրքրություն առաջ բերելու և նրան բարոյապես ու նյութապես օգնելու ուղղությամբ՝ ոչ մի հաջողություն չունեցավ» [3]։ Ավելի համոզիչ վկայություն էր պարունակվում 1913

1 ЦГИА Груз. ССР, ф. 2с, д. 3265, л. 90—91.
2 Նույն տեղում, թ. 89։
3 ЦГАОР Аз. ССР, ф. 498, оп. 1, д. 806, л. 60.

թվականին հրապարակված Կովկասի փոխարքայի հաշվետվության մեջ, որտեղ մատնանշվում էր հետևյալը. «Բարեբախտաբար, մահմեդական... զանգվածների մեջ ոչ մի անջատողական գաղափարներ առաջ գալ չեն կարող, այդ պատճառով էլ պանիսլամիզմի ու պանթուրքիզմի քարոզի առանձին փորձերը Կովկասում ոչ մի հաջողություն չունեն։ Դրա ապացույցն է հանդիսանում, ի միջի այլոց, Կովկասի մահմեդականների բոլորովին սառը վերաբերմունքը Բալկանյան թերակղզում տեղի ունեցած վերջին իրադարձությունների նկատմամբ» [1]։

Երևանի նահանգային ժանդարմական վարչությունը 1914 թվականի ապրիլին հաղորդում էր, որ տեղի մահմեդական ազգաբնակչությունը ոչ միայն չի կարեկցում երիտթուրքերին, այլև թշնամաբար է տրամադրված Թուրքիայում տիրապետող նոր ռեժիմի հանդեպ։ Այդ նույն փաստաթղթում մատնանշվում էր, որ վերը հիշատակված երիտթուրքական էմիսար Թահիր-բեյի միսիան, որը նպատակ ուներ «Անդրկովկասում գործակալներ գտնել, տեղական մահմեդականների շրջանում պանիսլամական պրոպագանդա մղելու համար, կատարյալ անհաջողության է մատնվել» [2]։

Կարինից ստացված տեղեկություններում ևս նշվում էր, որ Անդրկովկասի մահմեդական ազգաբնակչությունը պանթուրքական ագիտացիայից հեռու է մնում և քաղաքականության մեջ չի խառնվում [3]։

Պանիսլամիստներն իրենք ստիպված էին խոստովանել Կովկասի մահմեդական ազգաբնակչության մեջ տարած իրենց քայքայիչ աշխատանքի անհաջողության մասին։ 1914 թվականի մայիսի 14-ին վերաբերող զեկուցագրերից մեկում, որը կազմվել էր Պետերբուրգում՝ ոստիկանական դեպարտամենտում, ասվում էր, որ պանիսլամական ագիտացիայի ձախողման պատճառները բացահայտելու նպատակով պանիսլամական կոմիտեի կողմից մահմեդական բոլոր երկրները և Ռուսաստան ուղարկված էմիսարները եկան այն եզրակացության, որ մահմեդական ազգաբնակչության «ստորին խավերը» Թուրքիայի հանդեպ ոչ մի համակրանք չեն տածում [4]։

Այդ մասին էր խոսվում նաև Ստամբուլից ստացված զեկուցման մեջ, որտեղ ընդգծվում էր, որ «թուրք պանիսլամիստները

1 Всеподданнейший отчет за 8 лет управления Кавказом генерал-адъютанта графа Воронцова-Дашкова, СПб, 1913, стр. 9—10.
2 ЦГИА Груз. ССР, ф. 2с, д. 3265. л. 55.
3 ՍԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 392, թ. 1—2։
4 ЦГИАМ, ф. 102, оп. 15, д. 74, л. 106.

գժգոհություն են հայտնում Կովկասում իրենց համախոհների կատարյալ անգործունեության առթիվ»։ Այնուհետև ասվում էր, որ «Թուրքիայի շահերը Անդրկովկասի մահմեդականներին բոլորովին խորթ են թվում։ Բացառությամբ առանձին անձանց, որոնք համակրանքով են վերաբերվում դեպի Թուրքիան, պանիսլամական ուղղությանը և նվիրատվություններ են անում, մնացած ամբողջ զանգվածը սկսում է գիտակցել, որ Թուրքիայի ներքին ծանր դրության ու նրա գյուղական բնակչության նյութական վիճակի անկման վերջը չի երևում, որը և ստիպում է գնահատել Ռուսաստանի դրությունը»[1]։

Անդրկովկասում երիտթուրքական գործակալության ծավալած աշխատանքի կարևոր տարրերից մեկը դրամական միջոցների հավաքումն էր՝ Օսմանյան նավատորմի շինարարության նպատակների համար։

Թուրքիայի մեծապետական պլաններն արագ իրականացնելու մոլուցքով տարված, երիտթուրքական կոմիտեն ձգտում էր ամրապնդել պետության ռազմական հզորությունը։ Երկրի ռազմականացման կուրսն անցկացնելու գործում երիտթուրքերը մեծ նշանակություն էին տալիս նրա ռազմա-ծովային ուժերի վերականգնմանը։ Այդ պատճառով էլ այն ժամանակ ընդունված նավային շինարարության ծրագիրը Թուրքիայի կառավարող շրջաններն առաջ էին քաշում որպես համազգային կարևորություն ունեցող խնդիր։

Խոշոր մարտական նավատորմի ստեղծմանն օժանդակելու նպատակով 1910 թվականին կազմավորվեց «Օսմանյան նավատորմի օգնության ազգային կոմիտե», որը բուն Թուրքիայում դրամական միջոցներ հավաքելու հետ մեկտեղ, իր լիազորների միջոցով նվիրատվությունների հավաքումը կազմակերպում էր նաև ուրիշ երկրների, այդ թվում և Ռուսաստանի մահմեդական ազգաբնակչության շրջանում։

Այսպես, մի զեկուցագրի համաձայն, Կովկաս էին ուղարկված երիտթուրքական էմիսարներ Մեզար Արքալի Մեվլյուդ աղան և Ռիզան, որոնք անասունների մեծագնորդների անվան տակ շրջագայում էին աուլներն ու քաղաքները, «քրիստոնեության դեմ իսլամի մղած պայքարի սրբազան գործի համար նվիրատվություններ հավաքելու նպատակով»[2]։ Այդ գործով էր զբաղվում նաև ոմն Սամի էֆենդին, որն Անդրկովկաս էր թափանցել Յակուբ-էֆենդու անունը կրող անձնագրով[3]։

1 ЦГИАМ, ф. 102, оп. 15, д. 74, л. 5—8.
2 ЦГАОР, Аз. ССР, ф. 498, оп. 1, д. 923, л. 30
3 ЦГИА Груз. ССР, ф. 2с, д. 3265, л. 133.

Կարսի մարզի Դալովեր գյուղում օսմանյան նավատորմի օգտին պրոպագանդա տանելու և դրամ հավաքելու մեջ բռնվեցին թուրքական մի սպա և Կարինի բնակիչ Աբդուլլա Սահիբ-օղլին։ Նույն տեղում հայտնաբերվեց մի ցուցակ, որից երևում էր, որ գյուղի ունևոր բնակիչները միջոցներ էին հատկացնում թուրքական նավատորմի շինարարության համար։ Այդ ցուցակով, բոլոր նվիրատվությունների ընդհանուր գումարը կազմում էր 7 հազար ռուբլուց ավելի[1]։ Բաթումի շրջանում, որտեղ մեծ թվով թուրքահպատակներ էին բնակվում, օսմանյան նավատորմի կառուցման օգտին դրամական միջոցների հավաքումն ավելի հաջող էր ընթանում։ Այսպես, 1914 թվականի հունիսի վերջին Բաթումի մարզի Վերին-աջարական տեղամասում ձերբակալվեցին երեք թուրքահպատակներ, որոնց մոտ հայտնաբերվեցին թուրքերեն լեզվով կոչեր՝ օսմանյան ռազմա-ծովային նավատորմի օգտին զոհաբերություններ կատարելու մասին[2]։ Բաթումի սրճարաններից մեկում գտնվեցին թուրքերեն լեզվով պլակատներ՝ որոնց վրա նկարված էին թուրքական դրեդնոուտներ ու զրահանավեր և գրված՝ «Մահմեդական ողջ աշխարհն արթնացնելու համար»։ Հիշյալ կոչի տակ դրված էր «Օսմանյան նավատորմի ազգային օգնության կոմիտեի» ստորագրությունը և կնիքը[3]։

Նավատորմի օգտին «նվիրատվությունները» թուրքական գործակալները հավաքում էին մահմեդական ազդեցիկ հոգևորականության և ունևոր անձանց օգնության շնորհիվ։ Հավաքված գումարները Կարսի, Բաթումի և Թիֆլիսի թուրքական հյուպատոսների միջոցով ուղարկվում էին Ստամբուլ։ Այսպես, մի զեկուցագրում նշվում էր, որ թուրքական հյուպատոսի աշակցության շնորհիվ Թիֆլիսից Թուրքիա փոխադրվեց 2 հազար ռուբլի[4]։

Բացի վերոհիշյալ անձնավորություններից, որոնք հավաքագրվում էին Անդրկովկասում, ինչպես նաև Թուրքիայից ուղարկվում հատկապես օսմանյան նավատորմի շինարարության համար դրամական միջոցներ հավաքելու նպատակով, դրանով զբաղվում էին նաև պանթուրքական ու պանիսլամական գործակալները։ Կովկասյան իշխանությունները հանցանքի մեջ բռնեցին վերը հիշատակված պանթուրքիստներ՝ Կարինի պաշտոնյա Թահիր բեյին[5] և Թիֆլիսի բնակիչ Մոլլա-զադեին։

1 ЦГИА, Груз. ССР, ф. 2с, д. 3265, л. 66—69; ЦГВИА, ф. 2000с, оп. 1, д. 991, л. 472.
2 Նույն տեղում, ֆ. 85գ, ց. 1, գ. 121, թ. 68։
3 ЦГИАМ, ф. 102, оп. 15, д. 74, часть 39, литер Ь, л. 13.
4 ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 392, թ. 1—2։
5 ЦГАОР Груз. ССР, ф. 3с, д. 163, л. 122—123.

1914 թվականի սկզբին Անդրկովկասի մերձափնյա քաղաքներում գրքույկների ձևով լայնորեն տարածվում էր թուրքական արտադրության ծխախոտի թուղթ։ Այդ գրքույկները բաց էր թողնում «Օսմանյան նավատորմի ազգային օգնության կոմիտեն»։ Դրանք գաղտնի կերպով բերվում էին թուրքահպատակների կողմից և վաճառվում արժեքից կրկնակի բարձր գնով։ Գրքույկների կազմի վրա տպագրված էին ռազմանավերի նկարները և թուրքերեն լեզվով տեքստ, որն «ուղղահավատ մահմեդականներին» կոչ էր անում դրամ նվիրաբերել օսմանյան նավատորմի ստեղծմանը [1]։ Հիշյալ տեքստում ասվում էր. «Հայրենակից, եթե դու ցանկանում ես ծխախոտի բարձր տեսակի թղթից պատրաստված ծխախոտ ծխելով պահպանել քո առողջությունը և դրա հետ մեկտեղ, թղթի համար վճարվող գումարով օգնություն ցույց տալ սիրելի նավատորմին, որը տվյալ րոպեին ամենաանհրաժեշտն է քո երկրի և հայրենիքի համար, գնիր այս թուղթը... Նավատորմը օսմանների հարազատ զավակն է...» [2]։

Երիտթուրքական գործակալության կողմից Անդրկովկասում անցկացվող օսմանյան նավատորմի օգտին նվիրատվություններ հավաքելու կամպանիան անհաջողություն կրեց, ինչպես և պանթուրքական ու պանիսլամական պրոպագանդան՝ ամբողջությամբ վերցրած։ Եթե թուրք էմիսարներին հաջողվեց որոշ գումար հավաքել, ապա այդ էլ քաղաքի մեծահարուստների, գյուղական բեկերի ու խաների, ինչպես նաև մահմեդական առանձին ֆանատիկոսների, միջոցով։ Կովկասի փոխարքայի գրասենյակում ստացվող տեղեկությունները անհերքելիորեն վկայում էին այն մասին, որ մահմեդական աշխատավորական զանգվածները չպաշտպանեցին երիտթուրքական շովինիստների դիտավորությունները՝ կառուցելու մարտական նավատորմ [3]։

***

Երիտթուրքական գործակալներն Անդրկովկասում ու Հյուսիսային Կովկասում գործում էին գերմանական հետախուզության հետ սերտ կապի մեջ։ Գերմանական ռազմամոլները հույս ունեին, որ Գերմանիայի ու Ռուսաստանի միջև հարաբերությունների բարդացման դեպքում վերջինս Կովկասում կաշկանդված կլինի թուր-

1 ЦГИА Груз. ССР, ф. 2 с. д. 3265, л. 41.
2 Նույն տեղում, թ. 48։
3 Նույն տեղում, թ. 55։

քական դիվերսիայով։ Այդ էր պատճառը, որ առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Գերմանիայի ու Թուրքիայի գլխավոր շտաբները համագործակցում էին Կովկասում լրտեսական գործունեության կազմակերպման ու անցկացման գործում։ Թուրքական ու գերմանական ռազմամոլ շրջանների հարձակողական պլանների համաձայն, լավ կազմակերպված լրտեսությունը պետք է դյուրացներ Անդրկովկասի ու Հյուսիսային Կովկասի գրավումը։

Այդ նպատակով Անդրկովկասում բնակվող գերմանական կոլոնիստները, ինչպես նաև գերմանական ֆիրմաները, տուրիստական կազմակերպությունները, տպագիր օրգանները, դիվանագիտական միսիաները և լյութերական հոգևորականության ներկայացուցիչները, ներգրավված էին հետախուզական գործունեության մեջ։

Գերմանական հետախուզության ղեկավար կենտրոնն Անդրկովկասում Թիֆլիսի գերմանական հյուպատոսությունն էր, որին գլխավորում էր կոմս ֆոն Շուլենբուրգը։ Այդ գործում երկրորդ ջութակի դերն էր կատարում Կարինի գերմանական հյուպատոս Էդգարդ Անդերսը։

Կարինում Ռուսաստանի գլխավոր հյուպատոս Ադամովը 1914 թվականի մայիսի 5-ի զեկուցագրում հաղորդում էր հետևյալը. «Գերմանական հյուպատոս Անդերսը Կարին գալու հենց սկզբից՝ 1913 թվականի սեպտեմբերից, հատուկ ուշադրություն դարձրեց մեր Կովկասի վրա և... բոլոր ջանքերը գործադրեց, որպեսզի այս կամ այն ճանապարհով ձեռք բերի Կովկասյան բանակի մոբիլիզացիոն պլանները, Կարսի մեր բերդային ամրությունների ու ամրոցների պլանները, մի խոսքով, ամեն տեսակի գաղտնի փաստաթղթեր, որոնք վերաբերում են Կովկասի պաշտպանությանը, զորքերի դիսլոկացիային և այլն»։ Համոզվելով այն բանում, որ տեղում անհնարին է ձեռք բերել այդ տեղեկությունները, «Անդերսը տեղական շտաբի ու երիտթուրքերի կողմից Կովկաս ուղարկված թուրքական լրտեսների միջոցով հարաբերությունների մեջ մտավ Թիֆլիսի ու Կարսի թուրքական հյուպատոսների հետ և սկսեց նրանց գործունեությունն ուղղել իրենց ցանկալի ոգով՝ օգտվելով հենց Թիֆլիսում գերմանական գլխավոր հյուպատոս կոմս Շուլենբուրգի աջակցությունից։

Թե ինչպիսի հաջողություն ունեցան այս ուղղությամբ գործադրված Անդերսի ջանքերը, երևում է թեկուզ այն փաստից, որ փետրվարին Կովկաս այցելած Փասինի կայմակամ Թահիր-բեյը այնտեղից ետ տարավ ռազմական և մեր մինիստրական ծածկագիրը։ Գերմանական հյուպատոս Անդերսը, չբավարարվելով Թա-

հիր-բեյին հանձնարարված միսիայի այդքան հաջող վախճանով, ինքը փետրվարի 22-ին մեկնեց Կովկաս, ուր նա մնաց երկու շաբաթ»[1]։

Թիֆլիսի ժանդարմական վարչության տեղեկությունների համաձայն, որոնք վերաբերում են 1914 թվականի փետրվար-մարտ ամիսներին, «Կարինում գերմանական հյուպատոս Էդգարդ Անդերսը եռանդուն մասնակցություն էր ունենում երիտթուրքական կոմիտեի գործունեությանը Կովկասում։ Այդ նպատակով էր, որ Անդերսը խիստ գաղտնի կերպով մեկնեց Կարինից Կովկաս, որտեղ նա հաճախակի էր այցելում գերմանական, ավստրիական ու թուրքական հյուպատոսությունները։ Մարտի 6-ին Անդերսը մեկնեց Կարս, ուր նույնպես նա հաճախ էր լինում թուրքական հյուպատոսությունում։ Քաղաքում շրջագայելու ժամանակ նա հետաքրքրվում էր բերդային ամրություններով, իսկ Սարիղամիշում, որտեղ մնաց մեկ օր, նա զննում էր զինվորական գերատեսչության պետական նոր կառույցները»[2]։

Պատերազմի հենց նախօրյակին՝ 1914 թվականի հուլիսին, Անդերսը նորից մեկնեց Անդրկովկաս՝ տեղի մահմեդական ազգաբնակչության ապստամբությունը կազմակերպելու համար։ Այս անգամ նրան ուղեկցում էին երիտթուրքական էմիսարներ Հիլմի-բեյը և Իբրահիմ բեյը[3]։

Բերենք ուրիշ փաստեր, որոնք նույնպես բնութագրում են գերմանական հետախուզության այն ժամանակվա գործունեությունն Անդրկովկասում։ Ադամովի 1914 թվականի մայիսի 15-ի զեկուցագրում նշվում էր, որ Կարինից մեկնեց «իրեն լսրող-վարպետ ներկայացնող գերմանական լրտես Կառլ Ավգուստ Լենները։ Լենները... առանձնապես շահագրգռված է ռազմական գաղտնիքներ ստանալու մեջ... Կարինի գերմանական հյուպատոսի կողմից նրան հանձնարարվել է շփման մեջ մտնել Թիֆլիսի ու Կարսի թուրքական հյուպատոսների հետ։ Լենները տիրապետում է եվրոպական լեզուներին, այդ թվում բուլղարերենին, ինչպես նաև հայերենին ու թուրքերենին»[4]։

1914 թվականին լրտեսական հանձնարարություններով Անդրկովկաս այցելեց գերմանահպատակ, բուսաբանության պրոֆեսոր Դինգլերը, որը շրջագայեց Թուրքիային սահմանակից շրջանները։ Կովկասյան իշխանություններին հայտնի դարձավ նրա ուղևորության նպատակը և Կովկասի փոխարքայի հրամանով Դինգլերի նկատմամբ խիստ հսկողություն սահմանվեց, թույլ չտալու նրան նկարահանել ռազմական օբյեկտները[1]։

1 ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 3792, л. 134—136.
2 ЦГАОР Груз. ССР, ф. 3, д. 157, л. 7.
3 ЦГИА Груз. ССР, ф. 85, д. 155, л. 131.
4 ЦГАОР Аз. ССР, ф. 498, оп. 1, д. 923, л. 112.

Նույնպիսի բնույթ էին կրում գերմանական ուսուցիչներ Ֆրից Միլերտի ու Իոսիֆ Դերտմանի «շրջագայությունները» Անդրկովկասում։ 1913 թվականին նրանք այցելեցին Սվանեթիան, Արարատը և Սևանա լճի շրջանը[2]։

Պատերազմի նախօրյակին Անդրկովկասն այցելած գերմանական հետախույզների թիվն այնքան մեծ էր և նրանց գործունեությունն այնպիսի լայն չափեր ընդունեց, որ այդ մասին սկսեցին գրել նույնիսկ տեղական «Մշակ», «Գոլոս Կավկազա» և «Զակավկազսկայա ռեչ» թերթերը։ Այդ թերթերից մեկն, օրինակ, Անդերսի մասին գրում էր հետևյալը. «...Բացի պաշտոնական պարտականություններից, Անդերսը ձեռնարկում էր գիտական էքսկուրսիաներ մեզ մոտ, Կովկաս, ծանոթանում էր տեղի գերմանացիների հետ, հավաքում բզեզներ, թիթեռներ, բույսեր, ճանապարհին նկարահանում հետաքրքիր, գերազանցապես ստրատեգիական տեղերն ու արհեստական կառույցները... Նա, օրինակ, հիանում էր Կարսի ճյուղում գտնվող Շահալիի կամրջով, նրա համարձակ երեք աչքերով՝ բարձր ու բարակ նեցուկների վրա։ Նա... երկար դիտում էր իսկապես գեղեցիկ կամուրջը և մտածում՝ «Ուժանակի մի փոք լիցք և միակ արագ հաղորդակցությունը թուրքական սահմանի հետ՝ երկար ժամանակով կանջատվի»։ Եվ ծոցատետրում նշում էր այդ կետը՝ կրկնակի խաչանիշով, նոտաբենե։ Նա Բաթումում էլ եղավ՝ մեղուզաների հատուկ տեսակն ու Բաթումի ամրություններն ուսումնասիրելու համար։ Նրա նախագծով որոշված էր պայթեցնել Շահալի-Էլիարի երկաթուղային կամուրջը, «դժվարացնելու համար ռուսական զորքերի ու ռազմամթերքի տեղափոխումը պատերազմի ժամանակ»[3]։

Սակայն Անդերսի մտահղացումներին վիճակված չէր իրականանալ։ 1914 թվականի օգոստոսի 6-ին՝ Ռուսաստանի ու Գերմանիայի միջև ծագած պատերազմի վեցերորդ օրը, նա բռնվեց Թիֆլիսում՝ հրետանու կապիտան Վիլհելմ ֆոն Վեյկմանի հետ միասին։ Գերմանական հետախույզները Կովկասի փոխարքայի հրամա-

1 ЦГАОР Аз. ССР, ф. 498, оп. 1, д. 977, л. 70.
2 Նույն տեղում, թ. 73։
3 «Германские оккупанты в Грузии в 1918 году», сб. документов и материалов. Тбилиси, 1942, стр. 10—11.

նով արտաքսվեցին «Ռուսաստանի հյուսիսային նահանգներից մեկը»[1]։

Հետախուզական տվյալներ հավաքելով էին զբաղված նաև «Զինգեր և Կ°» գերմանական ակցիոներական ընկերության ծառայողները։ Հիշյալ ընկերությունն իր բաժանմունքներն ուներ Ռուսաստանի տերիտորիայում։ Այդ մասին քաջատեղյակ էին ցարական դիվանագետները, հակահետախուզական օրգանները, կենտրոնական ու տեղական մամուլը։ Թե ինչպիսի մեծ մասշտաբներով էր այդ ընկերությունը ներկայացված Ռուսաստանում, երևում է թեկուզ այն բանից, որ նրա ծառայողների թիվը հասնում էր 20 հազարի։ «Զինգեր» ընկերությունը Ռուսաստանում ուներ 52 բաժանմունք, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած էր 7—10 ենթաբաժանմունքներից, որոնք իրենց ձեռքի տակ ունեին մեծ թվով գործակալներ[2]։

Պատերազմի տարիներին «Զինգեր» ընկերության կողմից Կովկասում ծավալած լրտեսական գործունեության մասին հաճախ էր գրում տեղական մամուլը։ Այսպես, «Ուտրո յուգա» թերթում նշվում էր, որ «Զինգեր» ընկերությունը գերմանական լրտեսության բունն է։ «Երեք տարի առաջ բաժանմունքների դիրեկտորներ, վարիչներ, հսկիչներ սկսեցին նշանակել բացառապես գերմանացիներին,— գրում էր հիշյալ թերթի թղթակիցը։ Լեհերին ու ռուսներին հեռացրին։ Նշանակվածների թվում կային շատ սպաներ, որոնք տեղեկություններ էին հաղորդում Բեռլին»[3]։

«Կավկազ» թերթը հաղորդում էր, որ պատերազմից առաջ «Զինգեր» ընկերության կենտրոնական վարչությունը պահանջել էր տեղեկություններ՝ Կովկասում զինվորական ստորաբաժանումների դիսլոկացիայի մասին։ Բացի այդ տվյալներից, Գերմանիա ուղարկվեցին ռուսական գլխավոր շտաբի 400 քարտեզներ, որոնց վրա ֆիրմայի կովկասյան բաժանմունքների աշխատողները ռազմաստրատեգիական բնույթի զանազան նշումներ էին արել[4]։

Գերմանական հետախուզության գլխավոր խնդիրներից մեկն Անդրկովկասում հայկական, վրացական ու ադրբեջանական ազգաբնակչության բուրժուա-կալվածատիրական վերնախավի միջից Գերմանիայի կողմնակիցների հավաքագրումն էր։ Այդ նպատակի համար գերմանական գործակալները ձգտում էին կապեր հաստատել վրացական մենշևիկների, դաշնակների ու մուսավաթականների հետ։ Վերջիններիս օգնությամբ գերմանական իմպերիալիստները հույս ունեին հասնել Անդրկովկասի անջատմանը Ռուսաստանից։ Նրանք սիրախաղ էին անում անդրկովկասյան բուրժուա-ազգայնական կազմակերպությունների գործիչների հետ, ջանալով Գերմանիային ներկայացնել որպես Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի անկախության պաշտպանի։

Այսպես, օրինակ, Անդրկովկասի վերաբերյալ ռազմա-ստրատեգիական բնույթի տեղեկություններ հավաքելու հետ մեկտեղ, Անդերսին հանձնարարված էր հատուկ ուշադրություն դարձնել ռուսական իշխանությունների հանդեպ հայկական, վրացական ու ադրբեջանական բնակչության վերաբերմունքին, շահել նրանց համակրանքը՝ ցանկացած մոմենտին նրանց Ռուսաստանի դեմ հանելու համար։ Հակառուսական պրոպագանդայի կազմակերպման համար նրան մեծ գումարներ էին տրամադրված[1]։ Անդերսի գործակալների մեջ կային բուրժուա-ազգայնական կուսակցությունների մի շարք գործիչներ, որոնք կաշառված էին նրա կողմից[2]։

Ամբողջությամբ վերցրած, Անդրկովկասում, հիմնականում հայերի ու վրացիների շրջանում տարվող պրոգերմանական պրոպագանդան հաջողություն չունեցավ, թեև գերմանական գործակալները բազմապիսի ջանքեր էին գործադրում և այդ նպատակի համար հսկայական դրամական միջոցներ ծախսում։

Թուրքական ու գերմանական հետախույզների ու լրտեսների ներթափանցմանն Անդրկովկաս, որն առանձնապես ուժեղացավ առաջին համաշխարհային պատերազմին անմիջապես նախորդող ժամանակաշրջանում, նպաստում էր ցարական պաշտոնյաների անգործունեությունը։ Կովկասյան իշխանությունները պատշաճ նշանակություն չէին տալիս թուրքական ու գերմանական գործակալության անլեգալ գործունեության վերաբերյալ բազմաթիվ հաղորդումներին։

Դիվանագետներից ոմանք, այն ժամանակ, ուշադրություն էին դարձրել այն փաստին, որ ռուս-թուրքական պետական սահմանի վրա բացակայում է անհրաժեշտ վերահսկողությունը։ Այսպես, ռուսական հյուպատոսը Կարինում տեղեկացնում էր, որ գերմանական ու թուրքական լրտեսները անցնում են կովկասյան սահմանը, սակայն տեղական իշխանությունները համապատասխան միջոցներ չէին ձեռնարկում։ Իր զեկուցագրերից մեկում նա գրում էր. «Զարմանք է պատճառում ոչ այնքան ռազմական բնույթ ունեցող

1 ЦГАОР Груз. ССР, ф. 3с, д. 165, л. 462.
2 ЦГИА Груз. ССР, ф. 2с, оп. 1, д. 3658, л. 1—6.
3 Газ. «Утро Юга», от 14.VIII—1915.
4 Газ. «Кавказ», от 30.VII 1915, № 172.

1 ЦГАОР Груз. ССР, ф. 3с, д. 165, л. 462.
2 ЦГИА Груз. ССР, ф. 2 с, д. 3265, л. 96—97.

գաղտնի փաստաթղթերի հափշտակումն ու վաճառումը (խոսքը թուրքական հետախույզի կողմից գողացված ռուսական փաստաթղթերի մասին էր— Ե. Ս.), որքան մեր սահմանի վրայով թուրքական զանազան լրտեսների ու էմիսարների անարգելք տեղափոխումները։ Նրանք առանց որևէ խոչընդոտի գալիս են մեզ մոտ, Կովկաս՝ նույնիսկ առանց անձնագրերի, ինչպես այդ պատահեց Սելիմ Փուլադի հետ, և ոչ պակաս անարգելք ձևով ետ վերադառնում»[1]։

Այսպիսով, նախապատրաստվելով իրականացնել Անդրկովկասի ու Հյուսիսային Կովկասի նկատմամբ իրենց նվաճողական պլանները, երիտթուրքական կուսակցության ղեկավարները ամեն կերպ աշխատում էին իրենց գործակալությունը հաստատել Կովկասի մահմեդական ազգաբնակչության շրջանում և եռանդուն կերպով հետախույզներ էին ուղարկում՝ Թուրքիային սահմանակից Ռուսաստանի շրջաններում գտնվող ռուսական զորքերի դիսլոկացիայի, պաշտպանական բնույթի կառույցների վերաբերյալ տվյալներ հավաքելու համար։ Թուրքական գործակալության այս ամբողջ քայքայիչ գործունեությունը նպատակ ուներ Թուրքիայի ու Ռուսաստանի միջև պատերազմի ծագման դեպքում, Կովկասի մահմեդական ժողովուրդներին նախապատրաստել ապստամբության, որը պետք է հեշտացներ երիտթուրքական զավթիչների ներխուժումն Անդրկովկաս։

Երիտթուրքական գործակալների կողմից Անդրկովկասում անցկացվող պանիսլամական ու պանթուրքական պրոպագանդան նպատակ էր հետապնդում կրոնական հողի վրա բորբոքել երկրամասի մահմեդական ազգաբնակչության մոլեռանդ զգացմունքները և ատելություն առաջ բերել Ռուսաստանի ու ռուս ժողովրդի նկատմամբ։

Սակայն այդ ուղղությամբ երիտթուրքերի գործադրած ջանքերն ապարդյուն անցան։

Անդրկովկասի մահմեդական ժողովրդական զանգվածները, բացառությամբ շովինիստորեն տրամադրված, մոլեռանդ ու հետամնաց տարրերի, չենթարկվեցին պանթուրքական ու պանիսլամական պրոպագանդայի ազդեցությանը։ Թուրքական հետախույզներին հաջողվեց իրենց համար գործակիցներ հավաքագրել հիմնականում բուրժուա-կալվածատիրական խավերի, բեկերի ու խանների շրջանում։

1914—1918 թվականների համաշխարհային պատերազմի ընթացքը կովկասյան ճակատում համոզիչ կերպով ցույց տվեց, որ ձախողվեցին երիտթուրքական կառավարողների հույսերը՝ իրենց ինտերվենցիայի ժամանակ հենվել տեղի մահմեդական ազգաբնակչության օգնության ու աջակցության վրա։

[1] ЦГАОР Груз. ССР, ф. 3с, д. 158, л. 103—106.

ԳԼՈՒԽ ԵՐԲՈՐԴ

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՄՈՒՏՔԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԵՋ

Իտալա-թուրքական ու բալկանյան առաջին պատերազմում կրած պարտությունները ծայրահեղորեն թուլացրին Օսմանյան կայսրությանը։ Այդ բանը նպաստեց արաբների, հայերի ու ճնշված մյուս ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման նոր վերելքին։ Գնալով աճում էր նաև թուրք ազգաբնակչության դժգոհությունը երկրում գոյություն ունեցող բռնապետական կարգերից։

Նման իրադրության պայմաններում երիտթուրքերը ձգտում էին ակտիվ արտաքին քաղաքականության ու տերիտորիալ հափշտակումների ճանապարհով ամրապնդել իրենց երերուն վիճակը երկրի ներսում։ Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ էր վերականգնել բալկանյան առաջին պատերազմի ժամանակ ջախջախված թուրքական բանակի հզորությունը։ Սակայն Թուրքիան ի վիճակի չէր իր սեփական ուժերով վճռել այդ դժվարին ու բարդ խնդիրը։ Այդ պատճառով էլ սուլթանական կառավարությունը 1913 թվականին որոշում ընդունեց բանակի արմատական վերակառուցում ու վերազինում անցկացնել՝ գերմանական ռազմական մասնագետների օգնությամբ։

Ինչպես հայտնի է, տակավին 1882 թվականին, Աբդուլ-Համիդի օրոք, 1877—1878 թվականների ռուս-թուրքական պատերազմում Թուրքիայի կրած պարտությունից հետո, սուլթանական կառավարությունը Ստամբուլ հրավիրեց գերմանական ռազմական միսիա, որը 1885 թվականից գլխավորեց ֆոն դեր Գոլցը [1]։ Հիշյալ միսիան բարենորոգումներ մացրեց թուրքական բանակում՝ իր տիրապետող ազդեցությունը հաստատելով օսմանյան զինված ուժերի վրա։ Միաժամանակ, ֆոն դեր Գոլցի և նրա միսիայի անդամների ակտիվ աջակցությամբ, գերմանական ռազմական արդյունաբերությունն իր ձեռքը վերցրեց օսմանյան բանակի սպառազինության համար արված գրեթե բոլոր պատվերները։

Թուրքիա գերմանական ռազմական նոր միսիա ուղարկելու մասին պաշտոնական հրավերը երիտթուրքական կառավարությունը Գերմանիային ուղարկեց 1913 թվականի մայիսի 22-ին [1]։ Ինչպես և Բիսմարկի ժամանակներում, Բեռլինում որոշեցին այդ հրավերն օգտագործել գերմանական ազդեցությունը Թուրքիայում ուժեղացնելու նպատակով։ Թուրքական բանակի նկատմամբ վերահսկողությունը գերմանական իմպերիալիստների ձեռքում ուժեղագույն լծակ կդառնար՝ Բարձր Դռան քաղաքականության վրա ազդելու համար։ Այդ բանը շատ լավ գիտակցում էին իրենք երիտթուրքական ղեկավարները։ Մեծ վեզիր Մահմուդ Շեվքեթ-փաշան բացորոշ կերպով գայթակղեցնում էր գերմանական դեսպան Վանգենհայմին նման հեռանկարով։ «Այն տերությունը, որը վերահսկում է բանակը, ուժեղագույնը կլինի Թուրքիայում» [2],—ասում էր երիտթուրքական առաջնորդողը։

Անկասկած է, որ կայզերի կառավարությունը ձգտում էր Եվրոպայում զինված ընդհարման դեպքում թուրքական բանակն օգտագործել Մերձավոր արևելքում իր գաղութարարական պլաններն իրականացնելու, ինչպես նաև Գերմանիայի ստրատեգիական դիրքերն ամրապնդելու համար։

Ելնելով դրանից, սովետական որոշ պատմաբաններ գերմանական ռազմական միսիա Թուրքիա ուղարկելու նախաձեռնությունը վերագրում են միայն Գերմանիային, ակամայից արդարացնելով երիտթուրքերի քաղաքականությունը։ Այսպես, օրինակ, Ա. Ա. Մոզիլևիչը և Մ. Է. Հայրապետյանը պնդում են, որ «Լիմանի միսիայի ուղարկումը ոչ թե Թուրքիայի պահանջով էր, այլ թուրքական կառավարության վզին էր փաթաթվել Գերմանիայի կողմից, որը ձգտում էր հիմնավորվել Թուրքիայում և վերջինս դարձնել իր գաղութն

---

1 ֆոն դեր Գոլցի գլխավորությամբ գերմանական ռազմական միսիայի, Թուրքիայում գտնվելու և նրա գործունեության մասին մանրամասն տե՛ս А. Силин, Германская военная миссия фон дер Гольца в Труции в 1882—1895 гг., «Ученые записки по новой и новейшей истории», вып. II, М., 1956, стр. 318—398.

1 Die grosse Politik der Europäischen Kabinette, 1871—1914. Sammlung der diplomatischen Akten des Auswärtigen Amtes. Berlin, 1922—1927 (այնուհետև—G. P.) Bd. 38, № 15440.

2 Նույն տեղում, № 15439։

ու հենակետը՝ Ռուսաստանի, Անգլիայի ու Ֆրանսիայի դեմ ապագա պատերազմի դեպքում»[1]։

Ստացվում է, որ երիտթուրքերն իրենք ակտիվորեն չէին նպաստում Գերմանիայի ներթափանցմանը Օսմանյան կայսրություն և այն աստիճան կախում ունեին գերմանական իմպերիալիստներից, որ իրենց կամքից անկախ պետք է ընդունեին «իրենց վզին փաթաթված» ռազմական միսիան։ Նման պարագայում՝ բնականաբար, հարց է ծագում. ինչո՞ւ Անգլիան ու Ֆրանսիան, որոնց դիրքերը Թուրքիայում ավելի ամուր էին, քան Գերմանիայինը, չկարողացան Թուրքական կառավարությանը «պարտադրել» իրենց ռազմական միսիաները։ Չէ՞ որ անգլո-ֆրանսիական իմպերիալիստները ոչ պակաս չափով, քան գերմանական իմպերիալիստները, ձգտում էին Թուրքիան ենթարկել իրենց գերիշխանությանը։

Այն փաստը, որ հենց Գերմանիան իր ռազմական միսիան ուղարկեց Թուրքիա, ինչպես համոզիչ կերպով վկայում են փաստաթղթերը, բացատրվում է ամենից առաջ կառավարող երիտթուրքական կլիկի քաղաքականությամբ, որը գտնում էր, որ հենվելով գերմանական իմպերիալիզմի վրա, ավելի հեշտ կլինի հասնել սեփական ագրեսիվ նպատակների իրականացմանը։ Դրա համար էլ երիտթուրքերը երկրի զինված ուժերն անվերապահորեն ենթարկեցին գերմանական ռազմամոլներին։

Այդ կապակցությամբ երիտթուրքական «տրիումվիրատի» անդամներից մեկը՝ Ջեմալ-փաշան, իր հուշերում բերում է Մահմուդ Շեվքեթ-փաշայի հետևյալ խոսքերը. «Մենք պետք է առանց տատանվելու ընդունենք գերմանական սիստեմը։ Բանը նրանումն է, որ ահա 30 տարուց ավելի է, ինչ գերմանական տեսուչներն աշխատում են մեր բանակում, մեր հրամանատարական կազմը ստացել է զուտ գերմանական կրթություն և ամբողջ բանակը համակված է գերմանական ռազմական ոգով։ Այս բոլորն այժմ անհնարին է փոխել։ Այդ պատճառով ես մտադրություն ունեմ այստեղ հրավիրել գերմանական ռազմական մեծ միսիա և, եթե դա անհրաժեշտ լինի, գերմանական գեներալներին զորաբանակի հրամանատարներ կնշանակեմ, յուրաքանչյուր ռազմական միավորին գերմանական ապա կհատկացնեմ և, այդպիսով, օրինակելի բանակ կստեղծեմ...

Իմ կողմից հրավիրված գերմանական միսիայի մեջ պետք է լինեն նաև ռազմական մինիստրության առանձին դեպարտամենտների, գլխավոր շտաբի ու զինվորական ուսումնարանների վերակառուցման մասնագետներ... Հիմա ես տեղեկություններ եմ հավաքում, թե ինչպիսի պայմաններով Գերմանիան կհամաձայնվեր այդպիսի միսիա ուղարկել Թուրքիա և կարծում եմ, որ այդ հարցը պետք է թողնել իրեն՝ Գերմանիային»[1]։

Այնուհետև Ջեմալ փաշան գրում է. «Մենք ցանկանում էինք վերակառուցել մեր բանակը և այդ նպատակով դիմեցինք Գերմանիային»[2]։ «Մենք լիովին համոզված էինք նրանց (գերմանացիների— Ե. Ս.) կազմակերպչական ընդունակություններում, ուստի և ընտրեցինք հատկապես նրանց»[3]։

Վիեննայում Թուրքական դեսպան Հիլմի-փաշան նույնպես նշում էր, որ գերմանական ռազմական միսիա հրավիրելու գործում «նախաձեռնությունը պատկանում էր բացառապես Թուրքիային»[4]։ Այդ մասին է վկայում նաև Քյազիմ Կարաբեքիրը։ Նա նշում է, որ բալկանյան առաջին պատերազմում Թուրքիայի կրած ծանր պարտությունից հետո, Մահմուդ Շեվքեթ-փաշան գտնում էր, որ ռազմական ռեֆորմն անցկացնելու այլ ճանապարհ չկար, քան բանակն ու գլխավոր շտաբը գերմանացիների տրամադրության տակ դնելը[5]։

Ահա թե ինչ էր գրում այդ մասին Ստամբուլում այն ժամանակվա ավստրիական զինվորական կցորդ Պոմիանկովսկին. «Ինչպես ես հենց նոր իմացա Թուրքական արժանահավատ աղբյուրից, այդ վերակառուցման պլանը (Թուրքական բանակի— Ե. Ս.) կապված չէ բարոն Վանգենհայմի հետ, այլ գալիս է Փարիզում Թուրքիայի նախկին դեսպան Մունիր-փաշայից։ Վերջինս իր հայացքները շարադրեց մի գրության մեջ, որը նա առաջարկեց իր բարեկամների, ինչպես նաև Մահմուդ Շեվքեթ-փաշայի քննարկմանը»[6]։ Այդ գրությունը հիմք կազմեց Օսմանյան կայսրության վե-

1 Могилевич А. А., Айрапетян М. Э., На путях к мировой войне 1914—1918 гг., Л., 1940, стр. 215.

1 Джемаль-паша, Записки, стр. 55—56.

2 Նույն տեղում, էջ 57։

3 Նույն տեղում, էջ 58։

4 G. P. Bd. 38, N 15460.

5 Karabekir Kâzım, Cihan harbine neden girdik, nasıl idare ettik? Kit. I, Istanbul, 1938, s. 66. *1916 թ. սեպտեմբերի 28-ին Ստամբուլում կայացած «Միասնություն և առաջադիմություն» կուսակցության համագումարի հաշվետու զեկուցման մեջ նշվում էր, որ Թուրքական կառավարությունն իր սեփական դրդմամբ դիմեց Բեռլին՝ ռազմական միսիա ուղարկելու խնդրանքով։ Այդ բանը մատնանշում է նաև ամերիկյան հայտնի պատմաբան Սիդնեյ Ֆեյը (*Сидней Фей, Происхождение мировой войны, т. I, М.—Л., 1934, стр. 345—347*) և իտալացի Ալբերտինին՝ I համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանի խոշոր հրապարակախոս և քաղաքական գործիչ* L. Albertini, The Origins of the War of 1914, v. I. London—New-Vork—Toronto 1952, p. 540.

6 Pomiankowski J., S. 53.

բափոխման ծրագրի, որ նախագծել էր Մահմուդ Շեվքեթ-փաշան 1913 թվականի ապրիլին։

Այդ կապակցությամբ Վանգենհայմը Բեռլին հաղորդեց Մահմուդ Շեվքեթ-փաշայի կողմից իրեն արված հետևյալ հայտարարությունը. «Բանակի վերակառուցման գործում ես հույսս դնում եմ Գերմանիայի վրա,— ասել էր մեծ վեզիրը դեսպանին։ Դա իմ ծրագրի կարևորագույն կետն է։ Բանակը պետք է հիմնովին բարենորոգվի» [1]։

Սակայն այն հանգամանքը, որ երիտթուրքերը ձգտում էին բանակն ուժեղացնել Գերմանիայի օգնությամբ, բնավ չի նշանակում, թե իբր Գերմանիան Մերձավոր արևելքում ագրեսիվ նպատակներ չէր հետապնդում և իր ռազմական միսիան ուղարկելով Ստամբուլ, միայն ընդառաջում էր թուրքական կառավարության ցանկությանը, ինչպես պնդում են մի շարք բուրժուական, առաջին հերթին գերմանական, պատմաբաններ [2]։

Փաստաթղթերը հակառակն են վկայում։ Կայսերական Գերմանիան թուրքական կառավարության առաջարկն օգտագործեց օսմանյան բանակի գլուխ գերմանական գեներալներ ու սպաներ դնելու և Թուրքիան իր քաղաքական ազդեցությանը ենթարկելու համար։ Գերմանական ռազմական պատմաբան Մյուլմանը, որը երկար տարիներ Թուրքիայում էր գտնվում, որպես ռազմական միսիայի ղեկավար գեներալ Լիման ֆոն Սանդերսի համհարզ, հետագայում նշել է, որ թուրքական բանակում գերմանական գերիշխանությունը ուժեղացնում էր Գերմանիայի քաղաքական ազդեցությունը Բոսֆորում [3]։

Միանգամայն բնական է, որ Մերձավոր արևելքում հետապնդելով ռազմա-քաղաքական ու տնտեսական նպատակներ, գերմանական իմպերիալիստներն անմիջապես կառչեցին թուրքական կառավարության հրավերից՝ ռազմական միսիա ուղարկելու վերաբերյալ։

Այդ միսիան ուղարկելու շուրջ երկու կառավարությունների միջև սկսված բանակցություններն ընթանում էին խիստ գաղտնի պայմաններում։ Այդ պատճառով էլ Անտանտի երկրների դիվանագետներն ու ռազմական գործիչները այդ մասին տեղեկացան մեծ ուշացումով։

[1] G. P., Bd. 38, N 15439.

[2] Տե՛ս Herzfeld H., Die Limankrise und der Politik der Grossmächte in der Yahreswende 1913/14, „Berliner Monotohefte", 1933, № 9, S. 837—858; № 10, S. 973—993.

[3] Mühlmann C., Deutschland und die Türkei 1913—1914, Berlin, 1928, S. 4.

1913 թվականի նոյեմբերին գերմանական միսիայի ղեկավար գեներալ-լեյտենանտ Լիման ֆոն Սանդերսի և թուրքական ռազմական մինիստրության ներկայացուցչի միջև կնքվեց հատուկ պայմանագիր, որով որոշվեցին գերմանական սպաների ֆունկցիաներն ու նրանց գործունեության պայմանները Թուրքիայում։ Գերմանական ռազմական միսիայի կազմի մեջ էին մտնում 42 սպաներ, որոնք, պայմանագրի համաձայն, անցնելով թուրքական ծառայության, օգտվելու էին լայն իրավունքներից։ Մտնելով թուրքական բանակի շարքերը, գերմանական միսիայի բոլոր անդամների զինվորական կոչումը մեկ աստիճանով բարձրանում էր։

1913 թվականի դեկտեմբերի 14-ին Լիման ֆոն Սանդերսը իր միսիայի մեջ մտնող սպաների հետ միասին ժամանեց Ստամբուլ։ Ռազմական միսիայի շտաբի պետն էր Թուրքիայում Գերմանիայի նախկին զինվորական կցորդ մայոր Շտրեմպելը, որն այդ պաշտոնում մնաց յոթ տարի։

Դեկտեմբերի 17-ին Լիման ֆոն Սանդերսը ստանձնեց Ստամբուլի շրջանում տեղաբաշխված բանակային 1-ին կորպուսի հրամանատարությունը։ Միաժամանակ նա նշանակվեց զինվորական դպրոցների գլխավոր տեսուչ և գերագույն ռազմական խորհրդի անդամ։ Միսիայի մյուս անդամները գրավեցին հետևյալ պաշտոնները. գեներալ-մայոր Վեբերը՝ թուրքական բերդերի տեսուչ՝ ինժեներական գծով, գեներալ-մայոր Բրոնսարտ ֆոն Շելենդորֆը՝ գլխավոր շտաբի պետի ավագ օգնական (շտաբի պետի պաշտոնը համատեղությամբ գրավում էր ռազմական մինիստր Էնվեր-փաշան), գեներալ-մայոր Բեկը՝ Պանկալդիում (Ստամբուլի արվարձանը) գտնվող հետևակային ու հեծելազորային ուսումնարանի պետ, գեներալ-մայոր Պրոսելտը՝ բերդային հրետանու տեսուչ, գնդապետ Նիկոլաին՝ Սկութարիի 3-րդ դիվիզիայի հրամանատար, գնդապետ ֆոն Ֆրանկենբերգը՝ 1-ին կորպուսի շտաբի պետ, գնդապետ ֆոն Սոդենշտեռնը՝ Մալթեփեի (Ստամբուլի մոտ) սպայական հրաձգային դպրոցի պետ [1]։ Գերմանական մնացած սպաները ևս հրամանատարական ու շտաբային կարևոր պաշտոնների նշանակվեցին։ Այսպիսով, գերմանական ռազմական միսիան օսմանյան բանակում գրավեց կարևորագույն բոլոր դիրքերը։ Թուրքական կառավարությունը, իր տրամադրության տակ չունենալով բանակին խիստ անհրաժեշտ տեխնիկապես ուսուցված անձնակազմ, գերմանական ռազմամոլներին հանձնեց բոլոր կարևոր ֆունկցիաները

[1] ЦГВИА, ф. 2000/с, оп. 1, д. 718, л. 6—9 об.

ռազմական մինիստրության գլխավոր շտաբում, հրետանում և տեխնիկական զորքերում։

Գերմանական ռազմական միսիայի կազմն անընդհատ ավելանում էր։

1914 թվականի օգոստոսին այն հաշվում էր 70 սպա, իսկ համաշխարհային պատերազմի վերջին՝ մոտ 800 մարդ [1]։

Գերմանական ռազմական միսիայի հակառուսական լինելը ոչ ոքի համար գաղտնիք չէր։ Այդ միսիայի վրա խնդիր էր դրված թուրքական բանակը նախապատրաստել պատերազմին Գերմանիայի կողմում՝ Ռուսաստանի դեմ։

Լիման ֆոն Սանդերսի միսիայի մերձավորագույն նպատակն այն էր, որպեսզի նախքան պատերազմի սկսվելը, խաղաղ ժամանակներում, թուրքական բանակի խոշոր ուժեր կենտրոնացվեն կովկասյան սահմանի վրա՝ Եվրոպայում պատերազմի ծագման դեպքում ռուսական բանակի մի զգալի մասը տեղում գամելու և արևմտյան ճակատից (Գերմանիայի դեմ) շեղելու համար։

Ստամբուլում Ռուսաստանի ռազմական գործակալ գեներալ մայոր Լեոնտևը 1914 թվականի ապրիլին գրում էր. «Գերմանական քաղաքագետների կարծիքով, եթե ճակատագրական ժամը վրա է հասել կամ մոտիկ է, ապա, բնական է, որ նրանք չեն սպասի այնքան, մինչև թուրքական բանակը կարգի բերվի, այլ կաշխատեն այն առաջ շարժել նույնիսկ անպատրաստ վիճակում, ելնելով ընդհանուր դաշնակցային նպատակներից։ Եվ այդ առավել ևս այն պատճառով, որ թուրքական բանակի խնդիրը կարող է լինել միայն երկրորդական՝ շեղել կամ ցրել գլխավոր հակառակորդի ուշադրությունը պատերազմի հենց սկզբին... Թուրքական կողմը հետագայում հաջողություն կունենա, թե անկազմակերպ ու թերավարժ թուրքական բանակը կջախջախվի մեր փառապանծ կովկասյան զորքերի կողմից, այս հարցը գերմանացիների համար լուրջ նշանակություն չի ունենալու, քանի որ ռազմական գործողությունները կովկասյան թատերաբեմում կարող են ամենանվազ չափով անդրադառնալ պատերազմի ընթացքի վրա՝ գլխավոր թատերաբեմում... Միայն թե այդ կովկասյան զորքերը և նրանց անմիջական ռեզերվները զբաղված լինեն տեղում, իրենց վրա ուշադրություն գրավեն և ընդհանուր թիկունքից մարդկային ու նյութական ռեզերվներ շեղեն՝ ի վնաս մեր արևմտյան բանակների»։ Այնուհետև ռազմական գործակալը նշում էր, որ «գերմանական ռազմական միսիան գուցե չի հասցնի լրիվ վերակառուցել թուրքական

[1] Liman von Sanders, S. 32.

բանակը և հաղթահարել իր առջև դրված մյուս խնդիրները՝ թուրքական տեսանկյունից, սակայն դա չէ նրա գլխավոր նպատակը։ Դրա փոխարեն այդ միսիան, հավանական է, կկարողանա մշակել զորահավաքը և թուրքական բանակի կենտրոնացումը՝ մեր ուղղությամբ և, որ գլխավորն է, ապահովել նրա իրագործումը ընդհանուր պատերազմի սկզբից։

Որպես երաշխիք կարող է ծառայել այն հանգամանքը, որ բոլոր ամենագլխավոր շտաբային, ինչպես և հրամանատարական պատասխանատու պաշտոնները, կզբաղեցվեն գերմանական սպաների կողմից։ Ինչպես ինձ թվում է,— եզրակացնում էր Լեոնտևը,— հենց դրանում է կայանում գերմանական միսիայի գլխավոր վտանգը, որն օրեցօր ավելի որոշակի է դառնում» [1]։

Ռազմական գործակալի զեկույցից բերված այս քաղվածքները խոսում են ոչ միայն այն մասին, որ գերմանական ռազմական միսիան պետք է նպաստեր թուրքական բանակի օգտագործմանը հօգուտ Գերմանիայի՝ Ռուսաստանի դեմ։ Դրանք վկայում են նաև, որ գերմանական գլխավոր շտաբն անտարբեր չէր Անդրկովկասի նկատմամբ երիտթուրքերի նվաճողական պլաններին։ Մինչդեռ հենց այդ պլաններով էր հիմնականում բացատրվում Թուրքիայի կառավարող շրջանների ձգտումը՝ Գերմանիայի օգնությամբ հնարավորին չափ կարճ ժամկետում բարձրացնել թուրքական բանակի մարտունակությունը։

Միանգամայն հասկանալի է, որ գերմանական ռազմական միսիայի ժամանումը Ստամբուլ սուր տագնապ առաջ բերեց ամենից առաջ Ռուսաստանում։ Ցարական կառավարության կողմից 1914 թվականի հունվարի 13-ին հրավիրված հատուկ խորհրդակցությունում, ռազմական մինիստր Սուխոմլինովը նշեց, որ «Թուրքական բանակի վերակառուցմանը եռանդուն կերպով ձեռնարկած Գերմանիայի մտահղացումն ակներև է։ Թուրքական զորքերը, որոնց մարտունակությունը բարձրացնելու գործը հանձնարարված է գերմանական ռազմական միսիային, կերևան կովկասյան մեր սահմանի վրա՝ բնականաբար, Ռուսաստանի դեմ հանդես գալու համար» [2]։

Բացի ապագա ռազմական գործողությունների կովկասյան թատերաբեմն ամրացնելուց՝ նրա ինժեներական նախապատրաստման միջոցով, երկաթուղագծերի ու խճուղային ճանապարհների կառուցման աշխատանքներից և Ռուսաստանի սահմանի մոտ թուր-

[1] ЦГВИА, ф. 2000/с, оп. 1, д. 719, л. 66—68.
[2] АВПР, д. С. А., № 313.

քական զորքերն ուժեղացնելուց, գերմանական ռազմական միսիան միևնույն ժամանակ զբաղված էր այլ գործունեությամբ։ Նա Անդրկովկասի ու Միջին Ասիայի սահմաններն էր ուղարկում գաղտնի գործակալների ու հետախույզների, որոնց հանձնարարում էր տեղեկություններ հավաքել այնտեղ տեղաբաշխված ռուսական զորքերի վիճակի ու ընդհանուր թվի վերաբերյալ [1]։

Այսպիսով, Լիման ֆոն Սանդերսի միսիան զբաղված էր ոչ միայն Թուրքական բանակի վերակառուցմամբ ու վարժեցումով, այլև ուղղություն էր տալիս գերմանական հետախուզությանը Մերձավոր արևելքում, Անդրկովկասում ու Միջին Ասիայում։

Կայսերական Գերմանիան ամեն կերպ ձգտում էր իր դիրքերն ամրապնդել ասիական Թուրքիայում և, հատկապես, Ռուսաստանին, (Անդրկովկասին) սահմանակից շրջաններում։ Այդ էր պատճառը, որ բացի վերոհիշյալ ռազմական միջոցառումներից, գերմանական իմպերիալիստները ջանք չէին խնայում Թուրքիայում բնակվող հայ և քուրդ ազգաբնակչությանը իրենց ազդեցությանը ենթարկելու համար։ Այդ նպատակով գերմանական գործակալությունը հայերի ու քրդերի մեջ հակառուսական պրոպագանդա էր ծավալում։

Նույն ուղղությամբ մեծ ակտիվություն էր հանդես բերում «Գերմանա-ասիական ընկերությունը», որն իր առջև խնդիր էր դրել ամրապնդել ու պաշտպանել գերմանական շահերը Ասիայում։ Հիշյալ ընկերության նախագահն էր Թուրքական բանակի հայտնի վերակառուցող ֆոն դեր Գոլցը [2]։

«Գերմանա-ասիական ընկերության» գործունեության մեջ խոշոր դեր էր խաղում Մերձավոր արևելքում գերմանական էքսպանսիայի շատագով պրոֆեսոր Պաուլ Ռորբախը, որը ծագումով մերձբալթյան երկրներից էր, սակայն Գերմանիա տեղափոխվելուց հետո դարձավ մոլի ռուսատյաց։ Ռորբախը թերթերում ու ամսագրերում տպագրում էր բազմաթիվ հոդվածներ, որոնք լի էին ատելությամբ դեպի Ռուսաստանը։ Հետագայում նա իրեն նվիրեց Մերձավոր արևելքի ուսումնասիրությանը, և 1900—1910 թվականների ընթացքում մի քանի ճանապարհորդություն կատարեց Բալկանյան երկրներում ու Ասիական Թուրքիայում, նպատակ ունենալով պարզել Օսմանյան կայսրության փոքրասիական տերությունների ռազմա-քաղաքական ու կուլտուր-տնտեսական նշանակությունը՝ Գերմանիայի շահերի տեսակետից։ 1913 թվականին «Գերմանա-ասիական ընկերության» նիստում Ռորբախը հանգամանորեն զեկուցեց իր դիտողությունների արդյունքների մասին։ Իր զեկուցման

[1] ЦГИА Груз. ССР, ф. 85с, д. 137, л. 16—19.

[2] ЦГВИА, ф. 2000/с, оп. 1, д. 991, л. 581—587.

մեջ Ռորբախը մատնանշում էր հետևյալը. քանի որ Գերմանիան Օսմանյան կայսրությունից հեռու է գտնվում, նրան դժվար կլինի «ձեռքերը երկարել»՝ Մերձավոր արևելքի որևէ շրջանին տիրանալու նպատակով։ Ուստի, գերմանական քաղաքականությունն, ամենից առաջ, պետք է ձգտի այն բանին, որպեսզի Թուրքիան շարունակի գոյություն ունենալ, որպես անկախ պետություն, և հակազդի մյուս տերությունների ամեն տեսակի ոտնձգություններին, որոնք ուղղված կլինեն Օսմանյան կայսրության մասնատման ու Թուրքական տերիտորիաներից որևէ մեկի գրավմանը։ Ռորբախի կարծիքով, միայն Թուրքիայի անձեռնմխելիությունը պահպանելու դեպքում Գերմանիան կկարողանա այնտեղ լայնորեն ծավալել իր տնտեսական նախաձեռնությունն ու գաղութացումը [1]։

Ըստ Ռորբախի, Օսմանյան կայսրության ամբողջականությունը «պաշտպանելու» նպատակը կայանում էր բացառապես նրանում, որպեսզի Գերմանիայի համար ապահովվեր Թուրքիայի բնական հարստությունների խաղաղ շահագործումը և վերջինս աստիճանաբար վերածվեր գերմանական գաղութի [2]։ Նման տեսակետը համապատասխանում էր առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Գերմանիայի կողմից Մերձավոր արևելքում անցկացվող քաղաքականության ընդհանուր գծին։

Գերմանիայի արտաքին գործերի մինիստրության պետական քարտուղար Յագովը ուղղակի հայտարարում էր, որ Գերմանիան նման քաղաքականություն կվարի այնքան ժամանակ, «մինչև մենք կամրանանք մեր գոտիներում (հասկացվում էին Գերմանիայի ազդեցության ոլորտները Թուրքիայում— Ե. Ս.) և պատրաստ կլինենք նվաճումների» [3]։

Ռորբախի խոսքերով, գիտակցելով Օսմանյան կայսրության ամբողջականությունը պահպանելու անհրաժեշտությունը, Գերմանիան հոգ էր տանում, որպեսզի Թուրքիան բավականաչափ ուժեղ լինի՝ արտաքին սպառնալիքները ետ մղելու և փոքրասիական տիրություններում ներքին կարգ ու կանոն պահպանելու համար։ «Դրանով է, ի միջի այլոց,— ասում էր այնուհետև գերմանական

[1] ЦГВИА, ф. 2000/с, оп. 1, д. 937, л. 110—115.

[2] Ավստրո-Հունգարիայի զինվորական կցորդը Ստամբուլում՝ գնդապետ Պոմիանկովսկին, որը մի շարք տարիների ընթացքում մոտիկից հետևում էր գերմանական իմպերիալիստների գործունեությանը Մերձավոր արևելքում, գրում էր, որ «գերմանացիները ձգտում են աստիճանաբար իրենց խնամակալությունը հաստատել ամբողջ Օսմանյան կայսրության վրա»։ Տե՛ս Pomiankowski, S. 51.

[3] Տե՛ս Brandenburg E., Von Bismark zum Weltkriege. Die deutsche Politik in den Jahrzehnten vor dem Krieg. Berlin, 1924, S. 393.

էքսպանսիոնիստը,—բացատրվում լավ կազմակերպված ռազմական միսիայի ուղարկումը Կոստանդնուպոլիս, Թուրքիայում, հատկապես նրա փոքրասիական տիրություններում»[1], կայուն վարչական իշխանություն հաստատելու նպատակով, որոնց բնակչությունը ձգտում էր ազատվել թուրքական տիրապետությունից։

Այդ կապակցությամբ Ռորբախն ընդգծում էր Հայաստանի կարևոր դերը Թուրքիայի համար։ Նա նշում էր, որ աշխարհագրական տեսակետից Հայաստանն իրենից ներկայացնում է մի բնական և գրեթե անառիկ բերդ։ Մի կողմից նա սահմանակից է Ռուսաստանին, մյուս կողմից՝ տիրապետում է համաշխարհային ուղիներին, որոնք անցնելով Փոքր Ասիայի միջով, իրար են կապում Ասիայի ու Եվրոպայի ամենահարուստ երկրները։ Թուրքերի կողմից այդ բնական ամրոցի կորուստը սպառնում է Օսմանյան կայսրության քաղաքական բուն գոյությանը։ Ուստի Թուրքիայի համար նույնիսկ նեղուցներին տիրապետելն այն աստիճան կարևոր չէ, որքան Հայաստանը կայուն կերպով իր ձեռքում պահելը։ «Թուրքիայի համար գլխավոր վտանգը,— նշում էր Ռորբախը,— կայանում է նրանում, որ Հայաստանը ներկայումս ծառայում է, որպես ամենավտանգավոր ու գրեթե միակ օջախը, որտեղ միշտ էլ կարող են առաջ գալ ներքին լուրջ անկարգություններ, ըստ որում հրդեհը հեշտությամբ կարող է տարածվել թուրքական կայսրության մյուս շրջանների վրա։ Հայաստանում ամեն մի ապստամբություն, բացի նրա դեմ պայքարելու դժվարություններից՝ լեռնային, վայրի երկրում, միաժամանակ առիթ կծառայի Ռուսաստանի անխուսափելի միջամտության համար»։

Գտնելով, որ ձեռնտու չէ Հայաստանում դեպքերի զարգացումը հասցնել հայերի բացահայտ ապստամբության, որը անխուսափելիորեն առաջ կբերեր Գերմանիային այնքան անցանկալի «Ռուսաստանի միջամտությունը», Ռորբախը միաժամանակ նշում էր, որ Հայաստանի լրիվ «խաղաղեցումը» արտակարգ դժվարին մի գործ է, որը հաղիվ թե օգուտ բերի Թուրքական կառավարությանը։ Հայաստանի տերիտորիան բնակեցնող երկու ժողովուրդների՝ հայերի ու քրդերի, հակամարտությունը երբեք չի վերանա, իսկ օրինականության լրիվ բացակայությունը հանգեցնում է ուժեղի անսահմանափակ իրավունքներին։ Քրդերն ավելի ուժեղ են, ուստի և անպատիժ կերպով կողոպտում են հայ ազգաբնակչությանը։ 1909 թվականին, մի քանի օրվա ընթացքում, կոտորվեց մոտ 30 հազար հայ։ «Այժմ այդպիսի զանգվածային ջարդեր չեն լինում, սակայն

1 ЦГВИА, ф. 2000/с, оп. 1, д. 973, л. 110—115.

ամեն տարի սպանվող հայերի թիվը դժվար թե զիջի վերը բերված թվին։ Թուրքիայի ամենակարևոր նահանգներից մեկում ներկայությունն իսկ քրիստոնեական ազգաբնակչության, որը հասցվել էր այնպիսի վիճակի, որ իր կյանքը փրկելու համար պատրաստ էր «նույնիսկ ռուսական հպատակություն» ընդունել, ծայրահեղ չափով անհաճո էր թուրքական կառավարությանը, ուստի և վերջինիս ձեռնտու է պահպանել այնպիսի մի իրավիճակ, որը կհանգեցնի Արևմտյան Հայաստանում հայերի աստիճանաբար բնաջնջմանը՝ հասցնելով այն բացահայտ ապստամբության»[1]։ (ընդգծումը մերն է— Ե. Ս.)։

Ռազմամոլ և հայատյաց Ռորբախի կարծիքով, գերմանական շահերն այստեղ ևս համընկնում էին թուրքականի հետ՝ երկու պատճառներով. առաջին, Գերմանիայի համար կարևոր է, որ թուրքական տիրապետությունն Արևմտահայաստանում ամրապնդվի, երկրորդ, հայերի ծանր վիճակը նրանց ստիպում է գաղթել Միջագետք, ուր նրանք «գերմանական ձեռներեցության համար միանգամայն նպաստավոր բնակչության տարր են ներկայացնում»։

«Այսպիսով,— եզրակացնում էր Ռորբախը,— Հայաստանում որևէ կարգի վճռական ռեֆորմների անցկացումը, որոնք կարող էին հանգեցնել տեղի քրիստոնեական ազգաբնակչության վիճակի բարելավմանը, Գերմանիայի շահերին դեմ է։ Եթե նույնիսկ նրան հարկ է որոշ աջակցություն ցույց տալ ռեֆորմներին, ապա այն չափով, որչափով դա կարող է կանխել Հայաստանում հասունացող ապստամբությունը»[2]։

Ռորբախի ելույթը բացահայտում է Օսմանյան կայսրությունում գերմանական իմպերիալիստների վարած քաղաքականության գաղութարարական բուն էությունը, մասնավորապես հայերի նկատմամբ նրանց ունեցած թշնամական վերաբերմունքը։ Ռորբախի վերը բերված դատողությունների ու հաշվումների լույսի տակ միանգամայն ակնհայտ է դառնում, թե ինչ նպատակներով այն ժամանակ ստեղծվեց «Գերմանա-հայկական ընկերությունը»։

Հիշյալ ընկերության հիմնադիր ժողովը տեղի ունեցավ Բեռլինում, 1914 թվականի հունիսի 16-ին։ Ժողովը բացվեց դոկտոր Լեպսիուսի ներածական խոսքով։ Հանդես գալով այդ ժողովում ընդարձակ մի ճառով, Ռորբախը փարիսեցիորեն ընդգծում էր հայերի նշանակությունը, որպես «պատմության մեջ կուլտուրական գործոնի»։ Քողարկելով Մերձավոր արևելքի շրջանում Գերմանիայի

1 ЦГВИА, ф. 2000/с, оп. 1, д. 991, л. 581—587.

2 Նույն տեղում։

հետապնդած գաղութարարական նպատակները, հռետորը փորձում էր համոզել, որ նորաստեղծ ընկերությունն իր առջև որևէ քաղաքական խնդիր չի դնում, այլ պարզապես ձգտում է գերմանացիներին ծանոթացնել հայերի մշակութային կյանքին, վերջիններիս մերձեցնել գերմանացիների հետ։ Միաժամանակ Ռորբախը խոստովանում էր, որ Գերմանիան շահագրգռված է իր արդյունաբերական արտադրանքը Հայաստանում սպառելու հարցում [1]։

«Գերմանա-հայկական ընկերության» նախագահ ընտրվեց դոկտոր Լեպսիուսը, իսկ նրա տեղակալ՝ Ռորբախը։ Հայերից ընկերության ղեկավարության մեջ մտան ռուսահպատակ, դոկտոր Մուրատովը և թուրքահպատակներ՝ դոկտոր Շահբազյանը և դոկտոր Հայրապետյանը [2]։ Ընկերության տպագիր օրգանն էր «Գերմանա-հայկական արձագանք» հանդեսը, որը լույս էր տեսնում գերմաներեն և հայերեն լեզուներով։

Հատկանշական է, որ «Գերմանա-հայկական ընկերության» աշխատանքին գործոն մասնակցություն էին ցույց տալիս գերմանական հյուպատոսները. Թիֆլիսում՝ կոմս Շուլենբուրգը, Թավրիզում՝ Լիտտոնը և Կարինում՝ Անդերսը [3]։ Սրանք բոլորը սերտ կապ էին պահպանում Լիման ֆոն Սանդերսի միսիայի հետ, որը «Գերմանա-ասիական» ու «Գերմանա-հայկական» ընկերությունների աջակցությամբ բուռն գործունեություն էր ծավալել Ասիական Թուրքիայում։

Այսպես, 1914 թվականի հունիսին վերաբերող մի զեկուցագրում հաղորդվում էր, որ Անդերսը շրջագայում է Արևմտահայաստանի գլխավոր ստրատեգիական կետերում՝ ամենուրեք հանդես գալով ոչ թե հյուպատոսի, այլ ռազմական տեսուչի կամ ուղղակի տեսչական ստուգում անցկացնող պետի դերում։ Երզնկայում, ուր նա ժամանեց... մայիսի 21-ին... այնտեղ գտնվելու երեք օրվա ընթացքում նա մշտապես զբաղված էր զորանոցները, զորքերը, կամրջանավերը, զինվորական պահեստները և այնպիսի կառուցումներ զննելով, ինչպիսիք էին զինվորական մահուդի պատրաստման ֆաբրիկան և ռազմական կարիքների համար նախատեսվող ալրաղացը։

Գալով Երզնկա, գերմանական հյուպատոսն այնտեղ ընդունվեց

[1] ЦГВИА, ф. 2000с, оп. I, д. 991, л. 580

[2] Նույն տեղում, թ. 569—579։

[3] Կարինում գերմանական հյուպատոսության հիմնումը 1913 թվականին կապված էր Հայաստանում գերմանացիների գործունեության ակտիվացման հետ։ Այդ հյուպատոսությունը բացվեց Վանգենհայմի առաջարկով։ Տե՛ս G. P., Bd. 38, № 15128.

ոչ որպես սովորական ճանապարհորդ, այլ ավելի շուտ որպես թուրք պաշտոնյա, որին քաղաքից դուրս դիմավորելու էր եկել տեղի քաղաքագլուխ Ռեֆիկ բեյը՝ ժանդարմների ու ոստիկանների ուղեկցությամբ [1]։

Մի այլ զեկուցագրում նշվում էր, որ Արևմտահայաստանում գտնվող թուրքական զորքերի ոչ մի զորախաղ կամ վարժություն չի անցնում առանց Անդերսի մասնակցության։ Նա հաճախ էր այցելում ամրոցներն ու զորանոցները, զննում զորամասերը։ «Անդերսի աջակցությամբ,— հաղորդվում էր այդ փաստաթղթում,— 3-րդ բանակային տեսչության կողմից մշակվում է Ռուսաստանի դեմ սկզբնական շրջանում տարվելիք ռազմական գործողությունների պլանը, որով, ի միջի այլոց, նախատեսվում է պայթեցնել Շահալիի երկաթուղային կամուրջը՝ Կարսն ու նրա մերձակայքում տեղաբաշխված զորքերը Անդրկովկասի մյուս շրջաններից կտրելու նպատակով» [2]։

«Վերջին տարիների ընթացքում,— գրում էր Կարինից Ադամովը,— Տրապիզոնի ու Մոսուլի գերմանական հյուպատոսները մի շարք ուղևորություններ կատարեցին Կարինի, Վանի, Բաղեշի ու Դիարբեքիրի վիլայեթներում՝ Ասիական Թուրքիայի Անդրկովկասին սահմանակից շրջանն ուսումնասիրելու նպատակով»։ Այնուհետև նա նշում էր, որ գերմանական կապիտալիստները Կարինի շրջակայքում ձեռք են բերել նավթով հարուստ մի քանի հողամաս և տեղեկություններ են հավաքում ածխի հանքավայրերի մասին [3]։

Գերմանական ներթափանցումն Արևմտյան Հայաստան տեղի էր ունենում տարբեր ճանապարհներով։ Դրանցից մեկը գերմանական կրոնական ու կուլտուրական միսիաների կողմից տեղի հայ ազգաբնակչության շրջանում տարվող «բարեգործական» աշխատանքն էր։ Պատերազմի նախօրյակին այդպիսի միսիաներ կային Կարինում, Խարբերդում, Մուշում, Մալաթիայում ու Վանում։ Նրանք պահում էին դպրոցներ և, այսպես կոչված, հիվանդների ընդունարաններ։ Արևմտահայաստանում այդ տարիներին հաշվվում էին շուրջ 80 գերմանական միսիոներներ [4]։

Փոքր Ասիայում Գերմանիայի ծավալած այդ բազմաբնույթ ու համառ էքսպանսիայի կապակցությամբ ռուսական բանակի գլխավոր շտաբը 1914 թվականի սկզբին հաստատում էր հետևյալը.

[1] ЦГИА Груз. ССР, ф. 85с, д. 137, л. 76.

[2] ЦГВИА, ф. 2000/с, оп. 1, д. 991, л. 581—587.

[3] Նույն տեղում։

[4] Նույն տեղում։

«Վերջին շրջանում Թուրքիայի վերաբերյալ ստացվող տեղեկություններն ուրվագծում են Ասիական Թուրքիայի նահանգներում գերմանական ազդեցության խիստ ուժեղացումը, որը հանգեցնում է ռուսական ազդեցության թուլացման, հատկապես Անդրկովկասին հարող Թուրքահայաստանի և Քուրդստանի շրջաններում [1]։

Սակայն Փոքր Ասիայի արևելյան վիլայեթները գերմանացիների ներթափանցելուց ավելի վտանգավոր էր թվում ցարիզմին Լիման ֆոն Սանդերսի նշանակումը նեղուցների ու Ստամբուլի շրջանում տեղաբաշխված բանակային 1-ին կորպուսի հրամանատարի պաշտոնում։ Դա նշանակում էր գերմանական վերահսկողության հաստատումը Բոսֆորի ու Դարդանելի վրա, մի բան, որ շոշափելիորեն հարվածում էր Ռուսաստանի տիրող դասակարգերի շահերին. ցանկացած մոմենտին գերմանացիները կարող էին փակել նեղուցները ռուսական նավերի առաջ և արգելել նրանց անցնելու Միջերկրական ծովը։

«Նեղուցները ուժեղ պետության ձեռքին,— զեկուցում էր ցարին 1914 թվականի հունվարին արտաքին գործերի մինիստր Սազոնովը,— դա նշանակում է Ռուսաստանի հարավի տնտեսական զարգացումն ամբողջովին ենթարկել այդ պետությանը» [2] (Սազոնովն ի նկատի ուներ Գերմանիային— Ե. Ս.)։

Գերմանական նախկին կանցլեր Բյուլովը հետագայում գրում էր, որ «գերմանական կառավարությունը Կոստանդնուպոլիս ուղարկեց գերմանական լավագույն սպաներից մեկին՝ գեներալ Լիման ֆոն Սանդերսին, և ոչ որպես հրահանգիչ, այլ Դարդանելում կանգնած թուրքական կորպուսի հրամանատար։ Դա նշանակում էր իր բարեկամի (այսինքն՝ Ռուսաստանի—Ե. Ս.) ամենազգայուն կոշտուկը տրորել» [3]։

Բնական է, որ երբ նոյեմբերի սկզբներին Պետերբուրգում լուր ստացվեց այն մասին, որ գերմանական ռազմական միսիա է ուղարկվել Թուրքիա, ցարական կառավարությունն այդ փաստը գնահատեց որպես Ռուսաստանի շահերի դեմ ուղղված մի քայլ։ Սազոնովն անմիջապես Բեռլինին հասկացնել տվեց, որ «գերմանական ռազմական միսիան... չի կարող ռուսական հասարակական կարծիքում ուժեղ զայրույթ առաջ չբերել և, իհարկե, այն կգնահատվի որպես մեր հանդեպ բացահայտորեն ոչ-բարեկամական մի գործողություն։ Հատկապես, Կոստանդնուպոլսի թուրքական զորքերը գերմանական գեներալին ենթարկելը պետք է մեր մեջ լուրջ երկյուղ և կասկածներ առաջ բերի» [1]։

Ռուսական կառավարությանը հանգստացնելու համար գերմանական դիվանագետները ամեն կերպ աշխատում էին քողարկել Լիման ֆոն Սանդերսի միսիայի բուն նպատակները։ 1913 թվականի նոյեմբերի 21-ի իր զեկուցագրում Լեոնտևը հաղորդում էր, որ Ստամբուլում գերմանական դեսպան Վանգենհայմը իրեն փորձում էր համոզել, թե իբր Գերմանիայի մտադրությունները միանգամայն անվտանգ են, իսկ Լիման ֆոն Սանդերսի միսիայի կապակցությամբ Ռուսաստանի պաշտոնական շրջաններում բարձրացված տագնապը՝ չհիմնավորված։ «Հրահանգիչներ ուղարկելով, մենք ոչ մի հատուկ նպատակ չենք հետապնդում,—հայտարարեց գերմանական դիվանագետը։ Թուրքերն այդ խնդրանքով դիմեցին մեզ և մենք ոչ առանց տատանվելու համաձայնվեցինք կատարել նրանց ցանկությունը, քանի որ գերմանական սպաների գործուղումը գերմանական բանակից խլում էր զգալի թվով ընտիր սպաներ։ Ի վերջո, տալով մեր համաձայնությունը, մենք ելնում էինք այն բանից, որ մեր մերժումը կհանգեցներ թուրքական կառավարության դիմումին՝ մի այլ տերությանը, ինչը կարող էր զգալիորեն նվազեցնել մեր հեղինակությունը Թուրքիայում» [2]։

Պետերբուրգի կառավարական ոլորտները, իհարկե, չէին հավատում գերմանական կողմի բացատրություններին և շարունակում էին Գերմանիայի վրա դիվանագիտական ճնշում գործադրել։

Մինիստրների խորհրդի նախագահ Կոկովցևը Լիման ֆոն Սանդերսի միսիան Թուրքիա ուղարկելու մասին տեղեկացավ Փարիզում գտնված ժամանակ։ Վերադարձի ճանապարհին կանգ առնելով Բեռլինում, նա հանդիպումներ ունեցավ Վիլհելմ II-ի և կանցլեր Բեթման-Հոլվեգի հետ։ Կոկովցևը նրանց հայտնեց իր զայրույթը այն բանի դեմ, որ գերմանական կառավարությունը ռազմական միսիա է ուղարկել Ստամբուլ՝ նախապես չխորհրդակցելով տերությունների, մասնավորապես Ռուսաստանի հետ։ Նիկոլայ II-ին ներկայացրած իր հաշվետվության մեջ Կոկովցևը գրում էր, որ Վիլհելմ II-ի ու Բեթման-Հոլվեգի հետ ունեցած զրույցների ժամանակ պարզվեց, որ Լիման ֆոն Սանդերսի միսիայի հարցը ծագել է տակավին ընթացիկ տարվա գարնանը, երբ «Օսմանյան կառավարությունը դիմեց Գերմանիային, առաջարկելով իր վրա վերցնել թուրքական բանակի հրահանգումը... Այդ

---

1 ЦГВИА, ф. 2000/с, оп. 1, д. 991, л. 581—587.

2 Տե՛ս Адамов Е. А., Константинополь и проливы, т. I, стр. 71.

3 Бюлов Б. Воспоминания, М., 1935, стр. 421—422.

1 Մեջ է բերվում ըստ Тарле Е. В., Соч., т. V, стр. 259.

2 ЦГВИА, ф. 2000с, оп. 1, д. 718, л. 51—53.

հարցին գերմանական կայսրն անդրադարձել էր Ձերդ կայսերական մեծության հետ ունեցած անձնական զրույցի ժամանակ՝ ընթացիկ տարվա մայիս ամսին Բեռլինում Ձեր գտնվելու օրերին... այդ ենթադրության առթիվ Ձերդ մեծության կողմից ըստ էության որևէ կասկած չէր հայտնվել, քանի որ թուրքական բանակում գերմանական սպաների հրահանգչական աշխատանքը շարունակվում էր անընդմեջ ավելի քան 20 տարվա ընթացքում»[1]։ Կոկովցևը փորձում էր համոզել Վիլհելմ II-ին, որ ռուսական ցարը չէր կարող ենթադրել, որ գերմանական միսիայի անդամներին այդքան մեծ լիազորություններ կտրվեն և, որ գլխավորն է, նրանց ձեռքը կանցնի թուրքական զորքերի հրամանատարությունը Բոսֆորի, Դարդանելի ու Ստամբուլի գոտում։ Սակայն ռուսական կառավարության ղեկավարի ջանքերը՝ Վիլհելմ II-ին ու Բեթման-Հոլվեգին ապացուցելու, որ Ռուսաստանը չի կարող հաշտվել իրերի նման վիճակի հետ, ապարդյուն անցան։ Վիլհելմ II-ն ու կանցլերը Կոկովցևին հասկացնել տվեցին, որ Գերմանիան չի հրաժարվի Թուրքիա ռազմական միսիա ուղարկելու իր մտադրությունից։

Ցարական կառավարությունը շարունակում էր կտրուկ կերպով բողոքել այն բանի դեմ, որ Լիման ֆոն Սանդերսին էր հանձնարարվել Ստամբուլում գտնվող թուրքական կորպուսի հրամանատարությունը։ Աջակցություն ստանալու համար նա դիմեց իր դաշնակիցներին, սակայն Անգլիան այդ հարցում խուսափողական դիրք գրավեց, իսկ «Ֆրանսիան, թեև ոչ հաճույքով, բայց այնուամենայնիվ պատրաստակամություն հայտնեց օգնելու Ռուսաստանին»[2]։

Ռուս-գերմանական ընդհարման ժամանակ բրիտանական կառավարության գրաված դիրքը հետևանք էր հենց դաշնակիցների՝ Անգլիայի ու Ռուսաստանի միջև առկա սուր հակասությունների։

«Ռուսաստանի և Գերմանիայի ավազակային «շահերի» ընդհարման կողքին,—գրում էր այդ կապակցությամբ Վ. Ի. Լենինը,—գոյություն ունի ոչ պակաս—եթե ոչ ավելի—խոր ընդհարում Ռուսաստանի և Անգլիայի միջև»[3]։

Դա բացատրվում էր նրանով, որ «...Ռուսաստանը սպառնում էր խախտել Անգլիայի տիրապետությունը մի շարք օտար ժողովուրդների վրա»[4]։

Օգտվելով Անտանտի լագերում համերաշխության բացակայությունից և, առաջին հերթին, այդ ընդհարման նկատմամբ անգլիական կառավարության ունեցած զուսպ վերաբերմունքից, գերմանական կառավարությունը համառորեն ետ էր մղում Պետերբուրգի կտրուկ բողոքները՝ չհրաժարվելով Թուրքիա ռազմական միսիա ուղարկելու իր մտադրությունից։

Ստանալով անգլիական կառավարության՝ իրեն այնքան անհրաժեշտ աջակցությունը, ցարական կառավարությունը ստիպված էր նահանջել՝ բավարարվելով Գերմանիայի կողմից արված զուտ ձևական զիջումով։ 1914 թվականի հունվարի 16-ին Լիման ֆոն Սանդերսը կայզերի կողմից արտահերթ կերպով բարձրացվեց իր զինվորական աստիճանում, որը սուլթանական կառավարության հետ Գերմանիայի կնքված համաձայնագրի պայմաններով անհրաժեշտություն էր ստեղծում համապատասխանորեն բարձրացնել նրա աստիճանը՝ թուրքական ծառայության մեջ։ Այդ ժամանակ էլ Լիման ֆոն Սանդերսին շնորհվեց մարշալի (մուշիրի) կոչում, ձևականորեն նրան ազատելով բանակային 1-ին կորպուսի հրամանատարությունից և նշանակելով նրան ամբողջ թուրքական բանակի գեներալ-հրահանգչի պաշտոնում։ Նոր պաշտոնը գերմանական գեներալին ավելի լայն իրավունքներ ու լիազորություններ էր տալիս օսմանյան զորքերի ղեկավարման գործում։

Ահա թե ինչ էր գրում այդ կապակցությամբ Բեռլինում ռուսական դեսպան Սվերբեևը. «Գեներալ Լիմանի ազատումն առաջին կորպուսի հրամանատարի պաշտոնից զուտ ձևական մի զիջում է, որը երբեք էլ վերջինիս չի զրկում Թուրքիայի ռազմական գործերի վրա նրա վճռական ազդեցությունից»[1]։

Գերմանիայի հետ ունեցած ընդհարման մեջ ցարիզմի կրած պարտությունը բացատրվում էր նրանով, որ չստանալով Անգլիայի աջակցությունը, Ռուսաստանը որոշեց գործը չհասցնել պատերազմի՝ կենտրոնական բլոկի տերությունների դեմ։ Այդ մասին է համոզիչ կերպով վկայում Լիման ֆոն Սանդերսի միսիայի հետ կապված բախման առթիվ հրավիրված հատուկ խորհրդակցության արձանագրությունը։

Ելույթ ունենալով հիշյալ խորհրդակցությունում, Կոկովցևը, գգաստորեն գնահատելով իրադրությունը, այն կարծիքը հայտնեց, որ «տվյալ պահին պատերազմը Ռուսաստանի համար մեծագույն աղետ է», ուստի և խորհրդակցությունը հանգեց հետևյալ եզրակացության. «Ռուսաստանի հետ համատեղ գործողություններում ինչ-

---

1 «Материалы по истории франко-русских отношений за 1910—1914 гг. М., 1922, стр. 624.

2 «История дипломатии», т. II, М., 1945, стр. 237.

3 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 23, էջ 159։

4 Նույն տեղում, էջ 160։

1 Материалы по истории франко-русских отношений за 1910—1914 гг., М., 1922, стр. 690.

պես Ֆրանսիայի, այնպես էլ Անգլիայի գործուն մասնակցությունն ապահովված չլինելու պայմաններում հնարավոր չի նկատվում դիմելու ճնշման այնպիսի միջոցների, որոնք կարող են հանգեցնել պատերազմի Գերմանիայի հետ»[1]։ Իրականում այդպես էլ եղավ։

Գերմանիայի հետ պատերազմի դեպքում Ռուսաստանին անվերապահորեն աջակցելուց Անգլիայի ձեռնպահ մնալը ցարական կառավարությանը ստիպեց հրաժարվել այդ խորհրդակցությունում մշակված ներգործության միջոցներից[2], որովհետև միայն Ֆրանսիայի աջակցությունը խիստ անբավարար էր Կենտրոնական Եվրոպայի պետությունների հետ գոտեմարտի բռնվելու համար։ Ինչ վերաբերում է Գերմանիային, վերջինս իրեն ավելի լավ էր զգում նախապատրաստված պատերազմին, քան նրա հակառակորդները։ Ուստի և չէր վախենում նման հեռանկարից։

Սակայն վերը հիշատակված ամերիկյան պատմաբան Սիդնեյ Ֆեյը, իր գերմանանպաստ դիրքորոշումից ելնելով, փորձում է արդարացնել կայսերական կառավարության վարքագիծը Լիման ֆոն Սանդերսի միսիայի հետ կապված ընդհարման ժամանակ։ Հակառակ պատմական փաստերի, նա գրում է «Գերմանիայի բացառիկ չափավոր ու կոմպրոմիսային դիրքի» մասին[3]։ Նրա կարծիքով, ոչ թե Ռուսաստանը, վախենալով պատերազմից, ետ քաշվեց, այլ Գերմանիան էր, որ հանդես բերեց «խաղաղասիրություն»։ Կեղծելով 1914—1918 թվականների պատերազմի դիվանագիտական նախապատրաստության պատմությունը, Ֆեյը պնդում է, որ հենց Ռուսաստանն էր ցանկանում սանձազերծել համաշխարհային հրդեհը[4]։

«1914 թվականի հունվարին,— գրում է հեղինակը,— պատերազմը չբռնկվեց Գերմանիայի շնորհիվ, որը Լիման ֆոն Սանդերսի հարցում ժամանակին համաձայնվեց զիջում անել...»[5]։ Ֆեյը անտեսում է այն փաստը, որ 1-ին կորպուսի հրամանատարությունից Լիման ֆոն Սանդերսի ազատումը զուտ ձևական բնույթ էր կրում։

Հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ Լիման ֆոն Սանդերսի գերմանական ռազմական միսիան, Թուրքական բանակի գլուխն անցնելով, խոշոր դեր խաղաց Կենտրոնական տերությունների կազմում Օսմանյան կայսրությանը պատերազմի մեջ ներգրավելու գործում և անմիջականորեն նպաստեց Թուրքիայի հարձակմանը Ռուսաստանի վրա։ Այդ միսիայի գործունեությունը մեծ նշանակություն ունեցավ նաև Թուրքական բանակը կովկասյան ճակատում ռազմական գործողություններին նախապատրաստելու համար։

1 Адамов Е. А., т. 1, стр. 15.
2 Могилевич А. А., Айрапетян М. Э., стр. 232.
3 Фей С., Происхождение мировой войны, т. I, М., 1934, стр. 344
4 Նույն տեղում, էջ 367—368։
5 Նույն տեղում։

***

Գտնվելով Ստամբուլում, գերմանական ռազմական միսիային հաջողվեց իր վերահսկողությունը հաստատել Թուրքական ողջ բանակի վրա, մի հանգամանք, որը կայսերական Գերմանիային անվիճելի գերազանցություն էր ապահովում իմպերիալիստական մյուս տերությունների նկատմամբ՝ Մերձավոր արևելքում տիրապետություն հաստատելու համար մղվող պայքարում։ Ամբողջ աշխարհի համար պարզ էր դառնում, որ գերմանական զինվորականները Օսմանյան կայսրության ռազմական ուժերը նախապատրաստում են Անտանտի տերությունների դեմ պայքարելու և, առաջին հերթին, փորձում են դրանք դուրս բերել Ռուսաստանի դեմ։ Մյուս կողմից, Լիման ֆոն Սանդերսի միսիային Թուրքիա հրավիրելը վկայում էր այն մասին, որ իր գլխավոր հենարանը՝ բանակը դնելով գերմանական գլխավոր շտաբի տրամադրության տակ, երիտթուրքական կլիկը ավելի ուժեղ էր թեքվում դեպի դաշինքը՝ գերմանական իմպերիալիզմի հետ։ Դա բացատրվում էր նրանով, որ Գերմանիայի օգնությամբ երիտթուրքերը հույս ունեին ոչ միայն ամրապնդել իրենց դրությունը երկրի ներսում, այլև հասնել իրենց զավթողական պլանների իրականացմանը։

Ուստի զարմանալի չէ, որ Թուրքական կառավարությունը հենց սկզբից փորձեց 1914 թվականի հուլիսյան ճգնաժամը (որն առաջ եկավ Սարաևոյում ավստրիական գահաժառանգ էրցհերցոգ Ֆրանց-Ֆերդինանդի սպանության հետևանքով) օգտագործել Կենտրոնական տերությունների հետ ռազմական դաշինք կնքելու նպատակով։ Վստահ լինելով, որ Եռյակ դաշինքը ռազմական գերազանցություն ունի Անտանտի նկատմամբ, երիտթուրքական ղեկավարները ձգտում էին ապահովել Թուրքիայի մասնակցությունը հասունացող համաշխարհային պատերազմին՝ Կենտրոնական Եվրոպայի պետությունների կազմում։

Մենք այստեղ խնդիր չենք դնում հանգամանորեն լուսաբանել Թուրքիայի համար մղվող այն պայքարը, որը համաշխարհային պատերազմի առաջին ամիսներին ուժգին կերպով ծավալվել էր եվրոպական տերությունների երկու խմբավորումների միջև։ Մենք

չենք կարող նաև մանրամասնորեն կանգ առնել այդ հարցում Անտանտի երկրների միջև առկա հակասությունների վրա։ Մեր հիմնական նպատակն է պարզաբանել Թուրքիայի կառավարող շրջանների քաղաքականությունը և այն շարժառիթները, որոնցով ղեկավարվում էին նրանք՝ պատերազմի մեջ մտնելով Գերմանիայի ու Ավստրո-Հունգարիայի կողմում։

Սուլթանական կառավարությունն ինքն առաջինը սկսեց հող նախապատրաստել կայսերական Գերմանիայի հետ ռազմական դաշինք կնքելու համար։ Ինչպես գրում էր Քյազըմ Կարաբեքիրը, տակավին հուլիսի 20-ի խորհրդակցությունում, որին մասնակցում էին մեծ վեզիր Սաիդ Հալիմ-փաշան, ներքին գործերի մինիստր Թալեաթը և ռազմական մինիստր Էնվեր-փաշան, որոշում ընդունվեց ամեն կերպ աշխատել մտնել Եոյակ դաշինքի մեջ։

Նույն դիշերը Էնվերն ու Թալեաթը եղան գերմանական դեսպանությունում և Վանգենհայմին հայտնեցին Թուրքիայի ցանկությունը՝ միանալ Կենտրոնական Եվրոպայի պետությունների խմբավորմանը։ Դեսպանը պատասխանեց, որ ինքը այդ մասին կտեղեկացնի Բեռլին և խոստացավ անհապաղ հայտնել գերմանական կառավարության պատասխանը [1]։

Վիլհելմ II-ը գտնում էր, որ քանի որ Սերբիայի վրա Ավստրո-Հունգարիայի հարձակման պահը մոտենում է, ուստի պետք է Գերմանիայի գլխավոր դաշնակցի կողմը ներգրավել ցանկացած բալկանյան պետությունը, որը պատրաստ կլիներ հանդես գալու սլավոնների դեմ [2]։

Շատ շուտով, Բեռլինից «բարեհաջող» պատասխան ստանալով, Թուրքական կառավարությունն անմիջապես դիմեց Գերմանիային՝ Ռուսաստանի դեմ պաշտպանողական ու հարձակողական դաշինք կնքելու պաշտոնական առաջարկով։ Այդ առաջարկը մեծ վեզիրի միջոցով հասցվեց գերմանական դեսպանին հուլիսի 28-ի դիշերը։ Նրանում համաձայնություն էր հայտնվում պատերազմի ժամանակ գերմանական ռազմական միսիային ենթարկել Թուրքական բանակի մեկ քառորդը [3]։

Հուլիսի 28-ին, ժամը 21-ն անց 30 րոպեին Վանգենհայմին հանձնվեց կայզերի պատասխանը, այն է, որ Բարձր Դռան առաջարկությունն ընդունվում է [4]։ Նույն դիրքն էր գրավել նաև Ավստրո-Հունգարիայի կառավարությունը։ Ստամբուլում ավստրիական դեսպան Պալավիչինին լրիվ տեղյակ էր այդ բանակցություններին։

Գերմանա-թուրքական դաշինքի ստորագրումից անմիջապես հետո Ավստրո-Հունգարիան ևս պետք է նույնանման պայմանագիր ստորագրեր երիտթուրքական կառավարության հետ [1]։

Մինչդեռ հուլիսի 28-ին Ավստրո-Հունգարիան հարձակվեց Սերբիայի վրա։ Օգոստոսի 1-ին Գերմանիան պատերազմ հայտարարեց Ռուսաստանին, իսկ օգոստոսի 3-ին՝ Ֆրանսիային։ Հաջորդ օրն իսկ Բրիտանական կայսրությունը Գերմանիայի հետ իրեն պատերազմական վիճակի մեջ համարեց։ Թշնամական երկու խմբավորումների տերություններն էլ սկսեցին եռանդուն կերպով իրենց հսմար նոր դաշնակիցներ հավաքագրել։ Նման պայմաններում, երիտթուրքական ղեկավարների ձգտումը՝ Թուրքիան միացնել գերմանա-ավստրիական խմբավորմանը, ամբողջովին համապատասխանում էր Գերմանիայի շահերին։

Թուրք-գերմանական բանակցությունների հետևանքով, 1914 թվականի օգոստոսի 2-ին, ցերեկվա ժ. 4-ին, Ստամբուլում, խիստ գաղտնի իրադրության պայմաններում, երկու երկրների միջև դաշնակցային պայմանագիր կնքվեց։ Թուրքական կողմից այն ստորագրեց մեծ վեզիր Սաիդ Հալիմ-փաշան, գերմանական կողմից՝ Վանգենհայմը։ Պայմանագրի ստորագրման ժամանակ ներկա էին Էնվերը և Թալեաթը։ Պայմանագիրը բաղկացած էր հետևյալ հոդվածներից։

«1. Պայմանավորվող կողմերը Ավստրո-Հունգարիայի ու Սերբիայի միջև գոյություն ունեցող կոնֆլիկտում չեզոքություն կպահպանեն։

2. Այն դեպքում, եթե Ռուսաստանը միջամտի կոնֆլիկտին իսկապես ռազմական միջոցառումների օգնությամբ և, այդպիսով, Գերմանիայի համար անհրաժեշտ դարձնի իր պարտքն ու պարտականությունների կատարումը իր դաշնակցի՝ Ավստրո-Հունգարիայի նկատմամբ, ապա այդ պարտքն ու այդ պարտականությունները ենթակա են կատարվելու նաև Թուրքիայի կողմից։

3. Պատերազմի դեպքում գերմանական ռազմական միսիան կմնա Օսմանյան կառավարության տրամադրության տակ։ Օսմանյան կառավարությունը կապահովի այդ միսիայի իրական ազդեցությունն ու իրական իշխանությունը Թուրքական բանակի ընդհանուր գործողությունների վրա։

---

1 Kazım Karabekir, s. 68.

2 Die deutschen Dokumente zum Kriegsausbruch 1914 (այսուհետև՝ D. D.). Bd. I, Berlin, 1927, S. 123.

3 D. D., № 285, տես նաև L. Albertini, p. 613—614.

4 D. D., Bd. 2, S. 320.

1 Нотович Ф. И., Дипломатическая борьба в годы первой мировой войны, М.—Л., 1947, стр. 100.

4. Եթե օսմանյան տերիտորիաները սպառնալիքի ենթարկվեն Ռուսաստանի կողմից, Գերմանիան կպաշտպանի Թուրքիային, հարկ եղած դեպքում՝ զենքի ուժով։

5. Հիշյալ համաձայնագիրը, որը կնքված է երկու պետություններին պաշտպանելու միջազգային այն բարդություններից, որոնք կարող են առաջ գալ ներկա կոնֆլիկտից, ուժի մեջ կմտնի նրա ստորագրման օրից և ուժի մեջ կլինի մինչև 1918 թվականի դեկտեմբերի 31-ը։

6. Եթե պայմանավորվող երկու կողմերից ոչ մեկը նրանից չհրաժարվի ժամկետը լրանալուց վեց ամիս առաջ, ապա ներկա համաձայնագիրը առաջվա պես ենթակա է կատարման հաջորդ հինգ տարիների ընթացքում։

8. Ներկա համաձայնագիրը կմնա գաղտնի և կարող է հրապարակվել պայմանավորվող երկու կողմերի միջև գոյացած համաձայնությունից հետո միայն» [1]։

Յոթերորդ հոդվածով նախատեսվում էր պայմանագիրը վավերացնել նրա ստորագրումից հետո՝ մեկ ամսվա ընթացքում [2]։

Պայմանագրի 1-ին, 2-րդ, 3-րդ և 5-րդ հոդվածների բովանդակությունից երևում է, որ այն կազմվել էր տակավին ավստրո-կերբական ընդհարման ժամանակ։ Մինչդեռ նրա ստորագրման պահին պատերազմը Գերմանիայի ու Ռուսաստանի միջև արդեն իրական փաստ էր, ուստի և կնքելով այդ դաշնակցային պայմանագիրը Գերմանիայի հետ պատերազմը սկսվելուց հետո, Թուրքիան իր վրա պարտավորություն էր վերցնում անհապաղ պատերազմի մեջ մտնել Կենտրոնական տերությունների կողմում։

Օգոստոսի 3-ին գերմանա-թուրքական դաշինքին միացավ նաև Ավստրո-Հունգարիան։

Գերմանիայի ու Թուրքիայի միջև կնքված պայմանագրի տեքստը վկայում էր այն մասին, որ պայմանագիրն առաջին հերթին ուղղված էր Ռուսաստանի դեմ։ Այդ հանգամանքը խոստովանում էին հենց իրենք՝ երիտթուրքական կուսակցության գործիչները։ Այսպես, խոսելով օգոստոսի 2-ի պայմանագրի մասին, Քյազըմ Կարաբեքիրն ընդգծում էր. «3-րդ հոդվածի համաձայն... մենք Գերմանիային օգնելու համար պետք է ոչ միայն փակեինք նեղուցները, այլև պատերազմի մեջ մտնեինք» [3]։

---

1 Проф. Ключников Ю. В. и Андрей Сабанин, Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, ч. II, М., 1926, № 4.

2 Պայմանագրի լրիվ տեքստը տե՛ս G. G. Bd. *111*, № *733*։

3 Kâzım Karabekir, s. 83—85.

Այս բոլորը ցույց է տալիս, որ Թուրքիան ներգրավելով պատերազմի մեջ, սուլթանական կառավարությունը ղեկավարվում էր Ռուսաստանի հանդեպ ունեցած իր հարձակողական պլաններով։ Ինչպես պայմանագրի տեքստը, այնպես էլ թուրքական կողմի վկայությունները իրավունք են տալիս պնդելու, որ 1914 թվականի օգոստոսի 2-ից Օսմանյան կայսրությունը փաստորեն արդեն վրճռել էր մասնակցել համաշխարհային պատերազմին, թեև ռազմական գործողությունները նա սկսեց հոկտեմբերի վերջին միայն նման ուշացումը բացատրվում էր նրանով, որ երկրի գինված ուժերը տակավին նախապատրաստված չէին։

Ահմեդ Բեդևի Կուրանը ուղղակի գրում է. «Մենք համաշխարհային պատերազմի մեջ մտանք ոչ թե որևէ մեկի պահանջով կամ հրավերով, այլ պարզապես սեփական ցանկության ու համառության հետևանքով» [1]։

Թուրք ժուռնալիստ Ահմեդ Էմինը (Յալման), որը զբաղվում է նաև պատմության հարցերով, հատկապես առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում, նշում է, որ ռազմական մինիստր Էնվերը և ներքին գործերի մինիստր Թալեաթը գիտակցորեն վտանգի էին ենթարկում Թուրքիայի ճակատագիրը՝ «Ռուսաստանին կործանիչ հարված հասցնելու և իրենց պանթուրքական ու պանիսլամական պլանների իրագործմանը հասնելու համար» [2]։

Վերջին ժամանակներս այդ մասին բացեիբաց գրում են ամերիկյան ու անգլիական հեղինակները՝ ցանկանալով հուսադրել Թուրքիային այն բանում, որ այս անգամ նա կարող է հենվել ԱՄՆ-ի ու Անգլիայի օգնության վրա՝ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում ձախողված երիտթուրքական զառամյալ պլաններն իրականացնելու ձգտումներում։ Այսպես, Թուրքիայում ամերիկյան ռազմական միսիայի (1948—1950) անդամ Չարլզ Հոստլերը իր «Թուրքիզմն ու սովետները» վերնագրով գրքում գրում է. «Հենց երիտթուրքերի պանիսլամական ու պանթուրքական գաղափարները վճռական դեր խաղացին առաջին համաշխարհային պատերազմին Թուրքիայի մասնակցության հարցում, երբ երիտթուրքերը Գերմանիայի օգնությամբ մտադրվել էին իրագործել իրենց նվաճողական պլանները» [3]։

Անգլիական հեղինակ, Օքսֆորդի համալսարանի դասախոս Լյուիսը Թուրքիային նվիրված իր գրքում նշում է հետևյալը. «Հենց

---

1 Ahmed Bedevi Kuran, s. 342—343.

2 Ahmed Emin, p. 68.

3 Hostler Ch. W. Turkism and the Soviets. London, 1957, p. 146—147.

որ սկսվեց պատերազմը, Էնվերն առաջարկեց, որ Թուրքիան մասնակցի Կենտրոնական տերությունների խմբավորմանը»[1]։

Գերմանա-ավստրիական խմբավորման մեջ մտնելը քողարկելու և Էնվերի կողմից 1914 թվականի օգոստոսի 2-ին նշանակված զորահավաքն անցկացնելու նպատակով[2], Բարձր Դուռը օգոստոսի 3-ին հրապարակեց դեկլարացիա Օսմանյան կայսրության չեզոքության մասին։ «Տրիումվիրատի» անդամներից մեկը՝ Ջեմալ-փաշան, հետագայում խոստովանել է. «...Մենք մեզ չեզոք հայտարարեցինք միայն ժամանակ շահելու համար. մենք սպասում էինք այն պահին, երբ մեր զորահավաքը կավարտվի և մենք կկարողանանք մասնակցություն ունենալ պատերազմին»[3]։

Բռնկված համաշխարհային պատերազմում Թուրքիայի հայտարարած չեզոքությունը բացահայտ խաբեություն էր։ Ահմեդ Բեդևի Կուրանը խոստովանում է, որ «Միասնություն և առաջադիմություն» կուսակցությունը պատերազմի առաջին իսկ օրերին որոշեց, որ Թուրքիան պետք է նրանում մասնակցություն ունենա[4]։

Անդրադառնալով այդ հարցին, Մանդելշտամը գրում էր, որ պատերազմի առաջին երեք ամիսներին Թուրքական երևակայական չեզոքությունը իրականում չեզոքության բոլոր օրենքների ցինիկ խախտում էր՝ հօգուտ Գերմանիայի և ի վնաս Անտանտի պետությունների։ Որպես ապացույց, նա բերում է այնպիսի փաստեր, ինչպես զորահավաքի հայտարարումը, օգոստոսի 11-ին գերմանական ռազմանավերի՝ «Գյոբենի» և «Բրեսլաուի» ժամանումը Ստամբուլ, Թուրքիայի ողողումը գերմանական սպաներով, զինվորներով, նավաստիներով, ինչպես և զենքով ու զինամթերքով, որոնք Թուրքիա էին ուղարկվում նույնպես «չեզոք» պետություններ՝ Բուլղարիայի ու Ռումինիայի, տերիտորիայի վրայով։ Գերմանական հրամանատարության կողմից Դարդանելի ամրացումը, Ստամբուլի վերածումը Գերմանիայի ռազմա-ծովային բազայի, Բոսֆորում գերմանական առևտրական նավերի վրա գտնվող ռուսական,

1 Lewis, G. L., Turkey, London, 1957, p. 45.

2 «Զորահավաքի մասին հրամանը,— գրում է Ահմեդ Էմին Յալմանը,— ստորագրվեց կառավարության անդամների կողմից առանձին-առանձին, և ոչ ոք չհամարձակվեց դրա դեմ դուրս գալ... ռազմական միջոցառումները քննարկվել էին մի քանի մինիստրներից բաղկացած նեղ շրջանում։ Այն ռազմական կաբինետի նմանություն ուներ, որի մեջ մտնում էին մեծ վեզիրը և ներքին գործերի, ռազմական, ծովային, ֆինանսների ու արդարադատության մինիստրները։ Այդ նեղ կաբինետի գոյության մասին մյուս մինիստրները ոչինչ չգիտեին»։ Տե՛ս Ahmed Emin, p. 72—73.

3 Джемаль-паша, стр. 101—102.

4 Ahmed Bedevi Kuran, s. 342—343.

ֆրանսիական ու անգլիական ապրանքների բռնագրավումը Թուրքերի կողմից, Անդրկովկասի և Ռուսաստանի այլ շրջանները, ինչպես և մահմեդականներով բնակեցված՝ Անգլիայի գաղութները պանիսլամական ու պանթուրքական գործակալների ուղարկումը, զորքերի կենտրոնացումը Արևմտյան Հայաստանում՝ ռուսական սահմանների մոտ, Սիրիայում ու Պաղեստինում՝ Եգիպտոսին և, առաջին հերթին, Սուեզի ջրանցքին սպառնալու համար, այս բոլորը վկայում էր այն մասին, որ Թուրքիան կոպիտ կերպով և բացահայտորեն խախտում էր իր կողմից հայտարարված չեզոքությունը[1]։

Անտանտի երկրների բողոքները ցույց են տալիս, որ սուլթանական կառավարության գործողությունները հակասում էին պաշտոնապես չեզոք նրա դիրքին։ Դաշնակիցների բողոքի նոտաները և Անգլիայի, Ֆրանսիայի ու Ռուսաստանի դեսպանների թղթակցությունը թուրքական կառավարության հետ խոսում են այն մասին, որ Անտանտը ձգտում էր հասնել Թուրքիայի կողմից իսկական չեզոքության պահպանմանը։ Թուրքիայի պատասխանները Անտանտի տերությունների հայտարարություններին նպատակ ունեին չեզոքության քողի տակ նախապատրաստել երկրի մասնակցությունը պատերազմին՝ գերմանա-ավստրիական խմբավորման հետ դաշինք կնքած։

Որոշ հետազոտողներ, ինչպես արտասահմանյան, այնպես էլ սովետական, Օսմանյան կայսրության այդ «չեզոքությանը» էական նշանակություն են տալիս։ Նրանց կարծիքով, Անտանտի քաղաքագետները չէին ցանկանում օգտվել Թուրքիայի չեզոքությունից նրան իրենց կողմը ներքաշելու համար։ Անգլո-ամերիկյան պատմաբանները, մասնավորապես, այդ բանում մեղադրում են ցարական կառավարությանը, դրանով իսկ փորձելով Գերմանիայի ու Ավստրո-Հունգարիայի կողմում Թուրքիայի հանդես գալու ամբողջ մեղքը բարդել Ռուսաստանի վրա։ Այսպես, Լիդել-Գարտը, խոսելով Ռուսաստանի հետ Թուրքիայի վարած բանակցությունների մասին, որոնք սկսվել էին վերջինիս նախաձեռնությամբ՝ Գերմանիայի հետ ռազմական դաշինքի վերաբերյալ պայմանագիր կնքելուց և չեզոքությունը հայտարարելուց հետո, նշում է, որ «Ռուսաստանն իր արժանապատվությունից ցածր էր համարում» համաձայնվել Թուրքիայի առաջարկությանը, «թեև դա նրան միակ հնարավորությունն էր տալիս իրեն ապահովելու մի սողանցք, որի

1 Mandelstam, p. 7.

2 Նույն տեղում,

միջով կարող էին Ռուսաստան ներհոսել հրանոթներ և հանդերձանք՝ նրա արևմտյան դաշնակիցներից։ Ռուսաստանը գերադասեց մեկուսացումը՝ չցանկանալով զոհաբերել Կոստանդնուպոլիսն ու նեղուցները գրավելու իր երազանքը...»[1]։

Անգլիական ռազմական պատմաբանն օգտագործելով այստեղ Մ. Ն. Պոկրովսկու աշխատությունները, հետևում է վերջինիս տեսակետին։ Պոկրովսկին 1914 թվականի օգոստոսի 5-ին էնվեր-փաշայի կողմից ռազմական դաշինքի վերաբերյալ Ռուսաստանին արված առաջարկի կապակցությամբ գրում էր. «Պետրոգրադում ցանկանում էին ստանալ թուրքական մայրաքաղաքը, մինչդեռ նրանց առաջարկում էին թուրքական բանակը»[2]։

«Պետրոգրադում,— շարունակում էր Պոկրովսկին,— Թուրքիան հարկավոր էր բոլորովին ոչ դաշնակցի դերում, թեկուզ ամենախոնարհ ու հնազանդ։ Այնտեղ, ընդհանրապես, հարկավոր էր ոչ թե Թուրքիան, այլ Կոստանդնուպոլիսը, իսկ այն գրավելու լավագույն պատրվակը կլիներ պատերազմը Թուրքիայի հետ»[3]։

Այդ, մեր կարծիքով սխալ, տեսակետն էր պաշտպանում նաև Ե. Վ. Տարլեն։ Նա գրում է. «Թուրքերը ոչ մի կերպ չէին կարող և չէին ցանկանում չեզոք մնալ. չէ՞ որ նրանց երկարացրած ձեռքը չվերցնելը Ռուսաստանի կողմից կարող էր նշանավորել մի բան միայն՝ Թուրքիայի մասնատումը պատերազմից հետո, անկախ նրանից, Թուրքիան չեզո՞ք կլիներ, թե ոչ (այդ տեսակետից էնվերը բոլորովին չէր հավատում Անտանտի այն հավաստիացումներին, որ ապագայում Թուրքիան անձեռնմխելի կմնա)։ Եվ, ամենից առաջ, այսուհետև նրանք միայն Գերմանիայի հետ դաշինքից կարող էին սպասել իրենց տիրապետությունների ցանկալի ընդարձակում։ Այդպիսով, ռուսական դիվանագիտության ղեկավարների նվաճողական ֆանտազյորությունն ու ստեղծված դրության կատարյալ անըմբռնողությունը արագացրին կովկասյան սահմանի վրա Ռուսաստանի դեմ նոր հեռավոր ճակատի ստեղծումը և Գերմանիային ապահովեցին կարևոր դաշնակցով։ Ֆրանսիան ու Անգլիան ամբողջ ուժով աշխատում էին Թուրքիային ետ պահել հանդես գալուց»[4]։

Մինչդեռ, ժամանակակիցների վկայություններն ու հրապարակված փաստաթղթերը ցույց են տալիս, որ էնվեր-փաշան Ստամբուլում ռուսական զինվորական գործակալ Լեոնտևի հետ բանակցությունների մեջ մտավ օգոստոսի 5-ին միայն, այսինքն՝ Գերմանիայի հետ գաղտնի դաշինք կնքելուց հետո՝ ընդսմին քողարկվելով Թուրքիայի հենց նոր հայտարարված չեզոքությամբ։ Ջեմալ-փաշան գրում է, որ մինիստրների խորհրդի նիստերից մեկում նրան հանձնարարեցին մոտիկից կապվել անգլիական դեսպան Մալետի, իսկ Ջավիդ-բեյին՝ ֆրանսիական դեսպան Բոմպարի հետ՝ «ցրելու համար նրանց կասկածները Գերմանիայի հետ մեր դաշինքի վերաբերյալ»[1]։

Ըստ երևույթին, ռազմական մինիստր էնվեր փաշան իր կողմից հանձն էր առել «ցրել» Ռուսաստանի դեսպանի կասկածները։ Հենց այդ նպատակով էլ նա ձեռնարկեց վերը հիշատակված բանակցություններին՝ Լեոնտևի հետ։ Էնվեր փաշայի հետ օգոստոսի 5-ին և 9-ին տեղի ունեցած Լեոնտևի զրույցների մասին Գիրսը մանրամասն հաղորդում էր իր զեկուցագրում[2]։ Դրանցից պարզորոշ երևում է էնվերի առաջարկի իսկական իմաստը։

Անտանտի տերություններին շփոթության մեջ գցելու համար, էնվերն իրեն հատուկ նենգությամբ ու կեղծավորությամբ Ռուսաստանին առաջարկում էր Օսմանյան կայսրության հետ ռազմական դաշինք կնքել։ Ընդ որում, նա հավաստիացնում էր, որ Թուրքիան իր հյուսիսային հարևանի հանդեպ ոչ մի հարձակողական մտադրություն չունի և Ռուսաստանին դրանում համոզելու համար նա պատրաստ է իր զորքերը հեռացնել ռուսական սահմանից։ Էնվերը փորձում էր «ապացուցել», որ թուրքական բանակի զորահավաքը ուղղված չէ Ռուսաստանի դեմ։ Վճռականորեն մերժելով Գերմա-

---

[1] Лиддель-Гарт, стр. 121.

[2] Покровский М. Н., Империалистическая война, Сб. статей. 1915—1930. Изд. II, дополненное, М., 1931, стр. 158.

[3] Նույն տեղում, էջ 160։

[4] Тарле Е. В., Соч., т. V, стр. 326—327.

[1] Джемаль-паша, стр. 102։ Այդ մասին տե՛ս նաև Ahmed Emin, p 72—73։ Ա. Ֆ. Միլլերը պնդում է, որ երիտթուրքական կառավարության կողմից չեզոքություն հայտարարելը տակավին չէր նշանակում, թե իբր նա ձգտում է միայն ժամանակ շահել և չեզոքության քողի տակ նախապատրաստվել պատերազմի՝ Գերմանիայի կողմում։ Նա գրում է. «Գործն ավելի բարդ էր։ Բանակի մոբիլիզացման միջոցառումներին ձեռնարկելով, երիտթուրքական պարագլուխները հույս ունեին հասնել այնպիսի մի իրավիճակի, որի պայմաններում ուժեղացած ու լիովին պատերազմի պատրաստ Թուրքիան կկարողանար ընտրել իրեն առավել ձեռնտու վարիանտը. հանդես գալ արդյոք Գերմանիայի կողմում և եթե հանդես գալ, ապա ե՞րբ և ի՞նչ պայմաններով, կամ հանդես չգալ և առաջվա պես զինված չեզոքություն պահպանել՝ դրա փոխարեն փոխհատուցում ստանալով Անտանտի տերություններից»։ Տե՛ս А. Ф. Миллер, Вступление Турции в первую мировую войну, «Известия АН СССР», серия Истории и философии, т. III, 1946, № 4, стр. 325.

[2] «Международные отношения эпохи империализма» (այսուհետև՝ МОЭИ), серия III, т. VI, ч. I, № 8, стр. 48.

նիայի հետ դաշինքի առկայությունը, նա հայտարարեց, որ «Թուրքիան կապված չէ Եռյակ դաշինքի» և, մասնավորապես, Գերմանիայի հետ [1]։ Ուստի, եթե Ռուսաստանը ցանկանար, Թուրքիայի հետ համաձայնությունը միանգամայն հնարավոր է, միայն թե ռուսական դիվանագիտությունը իրական հողի վրա կանգներ և հաշվի առներ թուրքական շահերն ու ցանկությունները, որոնք, ամենից առաջ, վերաբերում են տերիտորիալ ձեռքբերումներին։ Էնվերը պահանջում էր վերադարձնել էգեյան կղզիներն ու Արևմտյան Թրակիան։

«Այդ բոլորի փոխարեն,— հայտարարեց այնուհետև Էնվերը,— Թուրքիան կարող էր, ամենից առաջ, ռազմական աջակցություն ցույց տալ Ռուսաստանին ընթացիկ պատերազմում՝ նրա տրամադրության տակ դնելով 150—200 հազար սվիններ։ Դա Ռուսաստանի գործն է, թե նա ուր կուղարկի այդ բանակը» [2]։ Էնվերն ընդգծում էր, որ Թուրքիայի ու Ռուսաստանի միջև դաշինքի կնքումը Ռումինիային, Հունաստանին և նույնիսկ Բուլղարիային կստիպի միանալ Ռուսաստանին։ Իսկ եթե բալկանյան պետություններից որևէ մեկը Ռուսաստանի դեմ հանդես գա, ապա Թուրքիան նրա դեմ կելնի և զենքի ուժով կխանգարի վնաս հասցնելու ռուսական շահերին։

«Ռուսաստանի հետ համաձայնությունը,— եզրակացնում էր Էնվերը,— Թուրքիային ու Ռուսաստանին հանգստություն կբերի, քանի որ այդ պայմաններում մահմեդականների հուզումները Կովկասում և հայերինը՝ Թուրքահայաստանում անհնարին կլինեն, իսկ

1 Նույն տեղում, № 48։ Այն մասին, որ Լեոնտևի հետ Էնվերի ձեռնարկած բանակցությունները մինչև վերջը կեղծ էին, վկայում է օգոստոսի 6-ին Գերմանիայի ու Թուրքիայի միջև Ստամբուլում կնքված երկրորդ՝ լրացուցիչ համաձայնագիրը, որով Գերմանիան խոստանում էր. «1) Իր օգնությունը՝ կապիտուլյացիաները վերացնելու գործում. 2) Իր աջակցությունը՝ Ռումինիայի ու Բուլղարիայի հետ Թուրքական կառավարության ձեռնարկվելիք բանակցություններում, բացի դրանից, Գերմանիան իր բարի ծառայությունները կմատուցի Բուլղարիային, որպեսզի նրա և Թուրքիայի միջև ձեռք բերվի համաձայնություն, որը կհամապատասխանի «Օսմանյան շահերին՝ այն տերիտորիաների բաժանման ժամանակ, որոնք կնվաճվեն Բալկաններում.... 4) Եթե Հունաստանը, միջամտելով մեր դեմ պատերազմին, պարտություն կրի, Գերմանիան ջանքեր կգործադրի, որպեսզի Արշիպելագի կղզիներն անցնեն Թուրքիային. 5) Գերմանիան կստիպի Օսմանյան կայսրության արևելյան սահմանները շտկել այնպիսի ձևով, որ Թուրքիայի համար ապահովվի անմիջական շփում Ռուսաստանում բնակվող մահմեդական ազգաբնակչության հետ. 6) Գերմանիան իր ազդեցությունը կօգտագործի, որպեսզի Թուրքիան իր կորուստների դիմաց պատշաճ հատուցում ստանա»։ (Ю. В. Ключников и А. Сабанин, ч. II, № 10).

2 ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 3850, л. 98—104.

դա երկու կողմերին թույլ կտա հիշված շրջաններում կարգ ու կանոնի պահպանման համար սահմանափակվել զորքերի ամենաանհրաժեշտ թվով, այն ամենը, ինչ որ հնարավոր է, կենտրոնացնելով ավելի կարևոր ու սպառնալից կետերում» [1]։

Մեծ վեզիր Սաիդ Հալիմը նույնպիսի կեղծավորությամբ, ինչպես Էնվերը, հավաստիացնում էր Գիրսին, որ ինքը ևս Ռուսաստանի հետ դաշինք կնքելու կողմնակից է, ուստի և պաշտպանում է Լեոնտևի հետ զրույցի ժամանակ ռազմական մինիստրի առաջ քաշած պայմանները [2]։

Ինչպես սովետական, այնպես էլ արտասահմանյան մի շարք պատմաբաններ, Լեոնտևի հետ Էնվերի ունեցած զրույցի փաստից այն անհիմն հետևությունն են անում, թե իբր այն դեպքում, եթե Ռուսաստանը համաձայնվեր ընդունել Թուրքիայի առաջարկը, վերջինս կհարեր Անտանտին [3]։

Հավատալով Էնվերի խոսքերի անկեղծությանը, ակադեմիկոս Տարլեն գտնում է, որ «իզուր էր դեսպանը (Գիրսը) ամբողջ ուժով շտապեցնում Սազոնովին՝ պատասխանելու այդ առաջարկին, հասկանալով նրա ծայրահեղ կարևորությունը Ռուսաստանի համար։ Սազոնովն այդ հարցում ոչինչ չէր ուզում հասկանալ... Իրենց կրկնած առաջարկի պատասխանը չստանալով, մեծ վեզիրն ու Էնվերը, իհարկե, կտրուկ կերպով շրջվեցին դեպի մյուս կողմը...» [4]։

Տարլեն, ինչպես և վերը նշված պատմաբանները, այս հետևությանն են հանգում մասամբ այն պատճառով, որ նրանք արտակարգ մեծ նշանակություն են տալիս Գիրսի ու Լեոնտևի թախանձագին դիմումներին Սազոնովին՝ ընդունելու Էնվերի առաջարկը և անհապաղ դաշինք կնքելու Թուրքիայի հետ, քանի որ,— ինչպես

1 ЦГВИА, ф. 2000, оп. I, д. 3850, л. 98—104.

2 Նույն տեղում, թ. 10։

3 Покровский М. Н. Империалистическая война, стр. 160. L. Albertini, v. III, p. 611—617. Մ. Պավլովիչը պնդում է, որ «Նեղուցները գրավելու իր ձգտումով ցարիզմը երիտթուրքերին հրեց իմպերիալիստական Գերմանիայի գիրկը»։ Դրանով իսկ նա, ըստ էության, արդարացնում է երիտթուրքերին, չտեսնելով վերջիններիս սեփական նվաճողական պլանները Ռուսաստանի դեմ մղվող պատերազմում (տե՛ս նրա Борьба за Азию и Африку, М., 1923, стр. 67 և Революционная Турция, М., 1921, стр. 52—53)։ Այդ նույն տեսակետին է և Վ. Ա. Գուրկո-Կրյաժինը (տե՛ս նրա «История революции в Турции», М., 1923, стр. 83)։ Ժ. Կայդերը, արդարացնելով Անգլիայի ու Ֆրանսիայի այն ժամանակվա քաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ, հայտարարում է, որ վերջինս, դաշնակիցների դեմ պատերազմի մեջ մտավ Ռուսաստանի կամքով... (տե՛ս նրա Европа и новая Турция, М., 1925, стр. 10)։ Տես նաև I. A. K. Marriott, The Eastern Question. A historical Study in European Diplomacy, 4 ed. Oxford, 1951. p. 482։

4 Тарле Е. В. Соч., т. V, стр. 326.

գրում էին նրանք,— «մեր մերժումը անպայման և անվերադարձ կերպով Թուրքիային կնեցի մեր թշնամիների գիրկը»[1]։ Ռուսական ներկայացուցիչները Ստամբուլում թուրքական ռազմական մինիստրի հավաստիացումները հալած յուղի տեղ էին ընդունում։

Սովետական պատմաբան Նոտովիչը շատ ճիշտ նկատում է, որ «պնդելով ընդունել Էնվերի առաջարկը, Գիրսը և Լեոնտևը «դաշինք» տերմինին առանձնահատուկ իմաստ էին տալիս։ Այդ «դաշինքը» նրանք հասկանում էին յուրովի՝ որպես Թուրքիայի ենթարկումը Ռուսաստանին»[2]։

Այդ մասին է վկայում 1914 թ. օգոստոսի 10-ի Գիրսի հեռագիրը, որտեղ դեսպանը պնդում էր. «Ես խորապես համոզված եմ, որ վրա է հասել պատմական այն պահը, երբ մենք հնարավորություն ունենք Թուրքիային վերջնականապես ենթարկել մեզ և նրա միջոցով կասեցնել Բալկանյան թերակղզում առկա թշնամական այն ուժերը, որոնք պատրաստվում են հանդես գալու մեր դեմ»[3]։

Թեև ցարական կառավարությունը չէր հավատում Էնվերի կեղծ հայտարարություններին, նա այնուամենայնիվ Գիրսին առաջարկեց երկարաձգել բանակցությունները Թուրքերի հետ՝ մինչև որ վերջնականապես պարզ կդառնա Բուլղարիայի դիրքը և գերմանա-ավստրիական բլոկի դեմ ուղղված բալկանյան երկրների դաշինք կստեղծվի։ Օգոստոսի 10-ին Սազոնովը հեռագրում էր Գիրսին. «Մինչև Սոֆիայից պատասխան չստանանք, Էնվերի հետ բանակցություններում հաշվի առեք ժամանակ շահելու անհրաժեշտությունը»[4]։ Վերջին հաշվով, Պետրոգրադում պատրաստ էին ընդունել Ռուսաստանի հետ դաշինք կնքելու վերաբերյալ թուրքական կառավարության առաջարկները, միայն թե Թուրքիային ետ պահել Գերմանիայի կողմում հանդես գալուց[5]։ Այդ մասին է վկայում նաև Սազոնովի հետևյալ արտահայտությունը. «Թուրքիայի անցումն Ավստրո-Հունգարիայի կողմը,— գրում է նա իր հիշողություններում,— Ռուսաստանին սպառնում էր առանձնապես վտանգավոր

1 МОЭИ, серия III, т. VI, ч. 1. № 49.

2 Нотович Ф. И., Дипломатическая борьба в годы первой мировой войны, М.,—Л., 1947, т. I, стр. 284.

3 МОЭИ, серия III, т. VI, ч. I, № 49.

4 Նույն տեղում, № 50։

5 Օգոստոսի 12-ին Սազոնովը Գիրսին հանձնարարեց հաղորդել Բարձր Դռանը, որ ռուսական կառավարությունը Օսմանյան կայսրության շեզոքության դիմաց պատրաստ է երաշխավորելու նրա ամբողջականությունը և համաձայն է, որ նրան անցնեն գերմանական բոլոր կոնցեսիաները Փոքր Ասիայում։ Օգոստոսի 16-ին Սազոնովը համաձայնվում էր Թուրքիային զիջել հույների կողմից գրավված Լեմնոս կղզին (Моэи, серия III, т. VI, ч. I, № 72. Տե՛ս նաև № 100)։

հետևանքներով, որովհետև, առաջինը, թշնամու ծովային ուժերի առջև բացում էր մուտքը դեպի Սև ծովը և մեր բանակի մի զգալի մասը պահելով թուրքական սահմանի վրա՝ այսպիսով խանգարելու նրան, մասնակցելու պատերազմին՝ գլխավոր ճակատում և երկրորդ, փակելով մեզ Սև ծովում, կտրում էր մեզ դաշնակիցների հետ ուղիղ կապից և կաշկանդում արտաքին աշխարհի հետ մեր ունեցած տնտեսական հարաբերությունները, հանգեցնելով ծովային միակ ելքի՝ հեռավոր և ամեն տեսակետից անբավարար Արխանգելսկի նավահանգստի միջոցով»[1]։

Որ Ռուսաստանն իսկապես երկյուղ էր կրում Անտանտի հակառակորդների խմբավորմանը Թուրքիայի միանալուց, դա երևում է նաև Գիրսի հետևյալ հաղորդումից. «...Մեր խնդիրը՝ Թուրքիայի նկատմամբ ներկայումս գործադրվող ջանքերի մեջ, պետք է լինի մեր ճակատի ապահովումը ամեն տեսակի դեպքերից, այդ թվում նաև այն դեպքում, եթե երրորդ պետության՝ Թուրքիայի միջամտությունը մեզ համար վտանգավոր դառնա։ Այդ վտանգն արտասովոր չափեր կընդունի, եթե Թուրքիան հանդես գա Բուլղարիայի և տակավին իրենց դիրքը չորոշած բալկանյան պետությունների հետ մեկտեղ»[2]։

Ցարական կառավարությունը, տակտիկական նկատառումներից ելնելով, այդ շրջանում իրոք ձգտում էր համաձայնության գալ Թուրքիայի հետ։ Օգոստոսի 13-ին Պետրոգրադում թուրքական գործերի հավատարմատար Ֆահրեդինին հայտարարվեց հետևյալը. «Եթե Թուրքիան անկեղծորեն ձգտում է համաձայնության հասնել մեզ հետ, մենք պատրաստ ենք նրան ընդառաջ գնալ»[3]։

Սակայն ռուս-թուրքական այս բանակցություններից էլ ոչինչ չստացվեց, քանի որ երիտթուրքերը դրանք սկսեցին միայն ժամանակ շահելու նպատակով։ Այդ բանը մատնանշում են հենց իրենք՝ թուրք պատմաբանները[4]։

Բերված փաստաթղթերը խոսում են այն մասին, որ Ռուսաստանը, տակտիկական նկատառումներով, չէր ցանկանում Թուրքիային տեսնել կենտրոնական տերությունների խմբավորման մեջ։ Դրանով էր բացատրվում ցարական կառավարության ձգտումը՝ Էնվերի հետ տարվող բանակցություններն օգտագործել Թուրքիայի իրական չեզոքությանը հասնելու համար։ Սակայն դա ամենևին չէր նշանակում, թե ցարական կառավարությունը հրաժարվում էր

1 Сазонов С. Д., Воспоминания, Берлин, 1928, стр. 277.

2 МОЭИ, серия III, т. VI, ч. 1, № 136.

3 «Царская Россия в мировой войне», т. 1, Л.. 1926, № 34.

4 Տե՛ս Ahmed Emin, p. 69.

Կոստանդնուպոլսի, նեղուցների ու Արևմտահայաստանի նկատմամբ իր նվաճողական պլաններից։ Այդ միայն տակտիկական մանևր էր, որով ցարական արքունիքը ձգտում էր Թուրքիային ետ պահել Ռուսաստանի դեմ հանդես գալուց։ Ռուսաստանի համար, որը Գերմանիայի դեմ պատերազմ էր մղում ռազմական գործողությունների եվրոպական թատերաբեմում, ձեռնտու չէր Կովկասում նոր ճակատ բացել, որը բնական է, նոր դժվարություններ կհարուցեր հիմնական՝ Արևմտյան ճակատում։ Ցարական կառավարության ձգտումը՝ էնվերի հետ բանակցություններն օգտագործել Ռուսաստանի դեմ Թուրքիայի հանդես գալուն խոչընդոտելու նպատակով, պատերազմի օրակարգից չէր հանում Ռուսաստանի նվաճողական պլանները Թուրքիայի նկատմամբ։

Ինչ վերաբերում է Անգլիայի ու Ֆրանսիայի վերաբերմունքին պատերազմում Թուրքիայի մասնակցության հարցին, ապա նրանք, Օսմանյան կայսրության տնտեսության մեջ ու ֆինանսներում ունեցած իրենց դիրքից կառչելով, չէին ցանկանում ընդառաջ գնալ սուլթանական կառավարությանը, որը պահանջում էր Թուրքիայի երևակայական չեզոքության դիմաց զիջումներ անել։

Անգլիայի արտաքին գործերի մինիստր Գրեյը օգոստոսի երկրորդ կեսին Ռուսաստանի ու Ֆրանսիայի դեսպանների հետ ունեցած զրույցի ժամանակ նրանց ասել էր, որ ինքը Ստամբուլում Անգլիայի դեսպան Մալետին լիազորել է Թուրքիային հայտարարելու հետևյալը. «Թուրքական կառավարությունն, անկասկած, գիտի, որ ռազմական դրությունը, ինչպես որ այն զարգանում էր վերջին շաբաթվա ընթացքում Բելգիայում ու Ֆրանսիայում, խիստ տարբերվում է այն դրությունից, որին սպասում էր Գերմանիան... Դրանի որ վերջինս Բելգիայում հապաղեց ավելի երկար, քան հաշվի էր առել գերմանական գլխավոր շտաբը, և նրա շանսերը զգալիորեն նվազեցին... Բացի դրանից, Ռուսաստանն արևելքում կարող է կարճատև ժամանակում Գերմանիային սարսափելի հարվածներ հասցնել... Համենայն դեպս, Ռուսաստանը, Անգլիան ու Ֆրանսիան պատրաստ են նրա չեզոքության դիմաց առաջարկել նրա տերիտորիայի լրիվ անվտանգությունն ու երաշխավորումը, բայց եթե Թուրքիան դաշինք կնքի Գերմանիայի հետ և Գերմանիան անհաջողություններ կրի, որոնք ներկայումս ավելի հավանական են թվում, քան երկու շաբաթ առաջ, հետևանքները Թուրքիայի համար անսահման մեծ կլինեն»։

Այնուհետև Գրեյը ընդգծեց, որ ինքը դեմ է Թուրքիային տերիտորիալ որևէ փոխհատուցում, օրինակ, Լեմնոսն առաջարկելուն։ Դա, նրա կարծիքով, հավանաբար կհանգեցներ այն բանին,

որ Հունաստանը կարող էր տատանվել որպես դաշնակից հանդես գալու խնդրում։ «Գրեյը ամուր կանգնած է այն տեսակետին,— հաղորդում էր այնուհետև Լոնդոնում ռուսական դեսպան Բենկենդորֆը,— որ Թուրքիայի հետ հարաբերությունները խզվելու դեպքում Անգլիան ի դեմս Հունաստանի կգտնի ուղղակի և հուսալի դաշնակցի։ Տերիտորիալ առուծախը, չհամոզելով Թուրքիային, դժգոհություն առաջ կբերի բալկանյան երկրներում... Ֆրանսիական դեսպանն ասաց, որ լիովին բաժանում է Գրեյի տեսակետը»[1]։

Ֆրանսիական դեսպանի կարծիքը հաստատեց Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Դելկասեն՝ Փարիզում ռուսական դեսպան Իզվոլսկու հետ ունեցած զրույցի ժամանակ։ Դելկասեն ուղղակի հայտարարեց, որ ինքը չի կարծում, թե բանակցությունները Թուրքիայի հետ կարող են որևէ բանի հանգեցնել, ուստի և «նպատակահարմար է գտնում առանց ժամանակ կորցնելու ապահովել բալկանյան բլոկի վերականգնումը՝ ուղղելով նրան Թուրքիայի դեմ»։

«Դելկասեն գտնում է,— գրում էր այնուհետև Իզվոլսկին,— որ հարկավոր էր Բուլղարիային հնարավորություն տալ Հունաստանի օգնությամբ նվաճելու մինչև Էնոս-Միդիա գիծն ընկած հատվածը։ Դրա համար Հունաստանին կարելի է խոստանալ Էպիրը՝ բացի Վալոնայից[2]։

Պետրոգրադում չէին համաձայնվում անգլիական ու ֆրանսիական դիվանագետների տեսակետներին։ Այդ պատճառով էլ Սազոնովը Բենկենդորֆի միջոցով մեկ անգամ ևս նշեց անգլիական դիվանագիտության օժանդակության անհրաժեշտությունը՝ սերբո-հունա-բուլղարական համաձայնագիր կնքելու և այդ նպատակով Աթենքի վրա ճնշում գործադրելու, որովհետև «Գերմանիայի ու Ավստրիայի դեմ պատերազմի առկայության պայմաններում, Հունաստանի անմտության պատճառով, որը հենվում է անգլիացիների թողտվության վրա», մենք չենք կարողանա խուսափել Թուրքիայի ու Բուլղարիայի հետ ընդհարումից[3]։

Այսպիսով, Պետրոգրադի, Լոնդոնի ու Փարիզի միջև գոյություն ուներ ակնհայտ անհամաձայնություն՝ պատերազմին Թուրքիայի մասնակցության կամ չեզոքություն պահպանելու համար նրան «վարձատրելու» հարցում։ Ռուսաստանը ձգտում էր հասնել այն բանին, որպեսզի Թուրքիան իսկապես չեզոքություն պահպանի, մինչդեռ Անգլիան ու Ֆրանսիան իրենց դիվանագիտական հնարամտություններով ու քաշքշուկով իրենցից վանում էին երիտթուր-

1 МОЭИ, серия III, т. VI, ч. I, № 118.
2 Նույն տեղում, № 120։
3 Նույն տեղում, № 226։

քական կոմիտեի այն գործիչներին, որոնք կողմնակից էին Թուրքիայի մասնակցությանը պատերազմին՝ Անտանտի տերությունների կողմում։

Մինչև կավարտվեին դիվանագիտական երկարատև բանակցությունները Ռուսաստանի, Անգլիայի ու Ֆրանսիայի միջև, Թուրքիայում վերջնականապես ամրապնդվեց Էնվեր փաշայի կողմից գլխավորվող գերմանասիրական խմբավորման դիրքը, որը վաղուց էր որոշել երկիրը ներգրավել պատերազմի մեջ՝ կենտրոնական տերությունների կողմում։ Թեև Էնվերի կողմնակիցները կառավարության մեջ փոքրամասնություն էին կազմում, պետական կառավարման հիմնական լծակները նրանց ձեռքում էին գտնվում։ Ռազմական մինիստրի հետ չհամաձայնվողները չէին կարող դիմադրել նրա ճնշմանը։ «Հենց նրա գիտությամբ, — վկայում է Քյազըմ Կարաբեքիրը,— գերմանական «Գյոբեն» և «Բրեսլաու» հածանավերը բաց թողնվեցին Դարդանել»[1]։ «Դրանով,— գրում է այնուհետև Կարաբեքիրը,— մենք ձգտում էինք հասնել այն բանին, որ Ստամբուլում գտնվի մի նավատորմ, որը գերազանցի Ռուսաստանի սևծովյան նավատորմին»[2]։

Սակայն ինչպե՞ս պատահեց, որ «Գյոբենն» ու «Բրեսլաուն» սողոսկեցին նեղուցները այն պայմաններում, երբ ամբողջ Միջերկրական ծովը գտնվում էր Անգլիայի ու Ֆրանսիայի ռազմածովային ուժերի վերահսկողության տակ։ Արևմտաեվրոպական որոշ պատմաբաններ փորձում են Միջերկրական ծովում անգլիական ու ֆրանսիական ուժերի հրամանատարության վրայից վերցնել գերմանական ռազմանավերը թուրքական ջրերը բաց թողնելու պատասխանատվությունը։ Այսպես, օրինակ, Կայզերը պնդում է, որ «Գյոբենն» ու «Բրեսլաուն» անգլիացիների կողմից Միջերկրական ծովից բաց թողնվեցին «անզգուշաբար»[3]։

Անգլիական ռազմական պատմաբան Լիդել-Հարտը գրում է, որ «օգոստոսի 10-ին «Գյոբենը» «Բրեսլաու» հածանավի ուղեկցությամբ, աննկատելի անցնելով Սիցիլիայի մոտ կանգնած բրիտանական նավատորմիկի կողքով, երևաց Դարդանելում»[4]։ Նույնն է կրկնում Մարիոտտը[5]։

---

1 Kâzım Karabekir s. 78. «Գյոբեն» և «Բրեսլաու» նավերով Թուրքիա ժամանեցին մոտ 450 գերմանական սպաներ ու զինվորներ (որպես ծովային հրահանգիչներ)՝ կոնտր-ադմիրալ Սուշոնի գլխավորությամբ։ Лиддель-Гарт, стр. 122.

2 Նույն տեղում, էջ 186։

3 *Кайзер*, стр 11.

4 *Лиддель-Гарт*. стр. 121.

5 Marriott I. A., p. 488.

Փաստաթղթերը, սակայն, համոզում են մեզ այն բանում, որ բրիտանական կառավարությունը դիտավորյալ կերպով չարգելակեց գերմանական հածանավերին մտնելու նեղուցները։

Գրեյը ուղղակի հայտարարեց Բենկենդորֆին, որ ինքը «կգերադասեր այդ նավերը տեսնել թուրքերի ձեռքում, քան թե գերմանացիների ձեռքում՝ Միջերկրական ծովում»[1]։

Անգլիական առաջադեմ պատմաբան Գոտլիբը բազմահարուստ փաստական նյութի վերլուծության հիման վրա համոզիչ կերպով ցույց է տալիս, որ անգլիական ռազմածովային ուժերը սկզբում հետապնդում էին «Գյոբեն» և «Բրեսլաու» ռազմանավերին։ Բայց քանի որ բրիտանական ծովակալությունը նախքան Անգլիայի պատերազմի մեջ մտնելը արգելել էր հարձակումներ գործել գերմանական հածանավերի վրա, վերջիններս կարողացան փրկվել խորտակումից և աննկատելի հեռանալ իրենց հետապնդողներից[2]։ Գոտլիբը բերում է հունական թագավորի քարտուղարի այն կարծիքը, որ «եթե անգլիացիները ցանկանային, նրանք կարող էին խանգարել այդ երկու նավերին մտնել Դարդանել»[3]

Նույն կարծիքն են պաշտպանում այդ իրադարձության թուրք ժամանակակիցները՝ Քյազըմ Կարաբեքիրը[4] և Թուրքիայի այն ժամանակվա դեսպանը Բեռլինում՝ ծովային նախկին մինիստր Մահմուդ Մուխտար-փաշան։ Վերջինս 1914 թվականի հոկտեմբերի 17-ին հեռագրում էր Ստամբուլ, որ, իր կարծիքով, բրիտանական կառավարությունն ուզում էր ամեն կերպ խանգարել Ռուսաստանին գրավելու նեղուցները և այդ նպատակով անգլիական միջերկրածովյան էսկադրան «գերմանական նավերին հնարավորություն տվեց փրկվել և թաքնվել Մարմարի ծովում»[5]։

Այս բոլոր փաստերն ու վկայությունները խոսում են այն մասին, որ Անգլիայի կառավարող շրջանները գերադասում էին նեղուցները տեսնել ավելի շուտ Թուրքիայի ձեռքում՝ նույնիսկ Գերմանիայի վերահսկողության տակ, քան Ռուսաստանի ձեռքում։

Երիտթուրքերի գերմանասիրական կլիկը Էնվերի ու Թալեաթի գլխավորությամբ, ինչպես և Գերմանիայի ներկայացուցիչները Թուրքիայում, Անտանտի լագերում գոյություն ունեցող հակասություններն օգտագործեցին, որպեսզի արագացնեն Օսմանյան կայս-

---

1 МОЭИ, серия III, т. VI, ч. I, № 76.

2 Готлиб В. В., Тайная дипломатия во время первой мировой войны, М., 1960, стр. 62—63.

3 Նույն տեղում, էջ 65։

4 Kâzım Karabekir, s. 77.

5 Адамов Е. А., Константинополь и проливы, т. I, стр. XVI.

ության մասնակցությունը պատերազմին՝ կենտրոնական տերությունների կողմում։

Պետրոգրադում հասկանում էին, որ Թուրքիայի հանդես գալու դեպքում գերմանա-թուրքական նավատորմի ու օսմանյան բանակի հիմնական հարվածը կուղղվի Ռուսաստանի սևծովյան շրջանի ու Անդրկովկասի դեմ։ Ուստի և ցարական դիվանագետներն աշխատում էին հասնել այն բանին, որպեսզի սուլթանական կառավարությունը իսկապես չեզոք քաղաքականություն վարի։ Ցարական կառավարությունը երիտթուրքական ղեկավարներից պահանջում էր «Գյոբենն» ու «Բրեսլաուն» անհապաղ դուրս բերել տալ թուրքական ջրերից։ Ընդ որում Ռուսաստանը, ինչպես Լիման ֆոն Սանդերսի միսիայի առթիվ ծագած դիվանագիտական ընդհարման ժամանակ, մեծ հույսեր ուներ, որ իր այդ դիվանագիտական ելույթը աջակցություն կստանա Անգլիայի ու Ֆրանսիայի կողմից։ Սակայն վերջիններս այս անգամ էլ թուրքական կառավարությանը զուտ ձևական հայտարարություններ անելուց դենը չգնացին, որոնց վրա երիտթուրքերը ոչ մի ուշադրություն չդարձրեցին։

Ստամբուլի անգլիական ու ֆրանսիական դեսպանները պահանջում էին գերմանական նավերի անձնակազմը փոխարինել թուրք նավաստիներով, մինչդեռ Ռուսաստանը պահանջում էր այդ նավերն իսկ հեռացնել թուրքական ջրերից։ Միջազգային իրավունքի համաձայն, պատերազմող տերության ռազմանավերն իրավունք չունեին չեզոք երկրի նավահանգստում մնալու ավելի քան 24 ժամ։ Այդ պատճառով էլ թուրքական կառավարությունը պատասխանեց, որ ինքը «գնել» է այդ նավերը։ Միաժամանակ նա խոստացավ դրանց անձնակազմը փոխարինել թուրքականով։ Ի պատասխան Գիրսի բողոքին, մեծ վեզիրը հայտարարեց, որ իբր Թուրքիան դրանից որոշ ժամանակ առաջ տվել էր իր համաձայնությունը՝ ձեռք բերելու «Գյոբենը» և «Բրեսլաուն», սակայն նա տակավին հո՞ւյս չուներ, որ այդ բանը իսկապես տեղի կունենա, որովհետև գտնում էր, որ հազիվ թե գերմանական նավերին հաջողվի հասնել մինչև Դարդանել [1]։

Թալեաթը, Գերմանիայի կողմում Թուրքիայի հանդես գալու ամենամոլեռանդ ջատագովը՝ Էնվերից հետո, իր հուշերում տալիս է «Գյոբենի» «գնման» իրական պատմությունը։ Նա գրում է, որ ինքը արդարադատության մինիստր Խալիլ-բեյի հետ միասին գնաց Վանգենհայմի մոտ և այնտեղ «Խալիլ-բեյի մոտ հղացավ նավերը

---

[1] *МОЭИ*, серия III, т. VI, ч. I, стр. 49. *Այդ մասին տե՛ս նաև Մեվլանզադե Ռիֆաթ, Թուրքական հեղափոխության մութ ծալքերը, էջ 19—21։*

գնելու գաղափարը։ Նա այդ մասին հայտնեց Վանգենհայմին։ Ակներև էր, որ նավերի գնումը ձևական բնույթ էր կրելու» [1]։

Այդ մասին խոստովանում է նաև «տրիումվիրատի» երրորդ անդամը՝ Ջեմալ-փաշան, նշելով, որ «գործարքը, ինչ խոսք, ձևական էր։ Կառավարությունը (գերմանական—Ե. Ս.) հաղորդում էր, որ կայզերը, առանց ռայխստագի համաձայնության, իրավունք չունի ոչ մի նավ վաճառելու, ուստի և «Գյոբենն» ու «Բրեսլաուն» մեզ կարող են իսկականից վաճառվել պատերազմից հետո միայն» [2]։

Անտանտի երկրների դիվանագետները, իհարկե, չհավատացին գերմանական նավերը գնելու վերաբերյալ Թուրքիայի հայտարարությանը։ Իզվոլսկին օգոստոսի 13-ին Փարիզից հեռագրում էր, որ «նավերի ֆիկտիվ գնումը, որին դիմեց Թուրքիան, ապացուցում է, ըստ երևույթին, Ռուսաստանի դեմ... ուղղված համաձայնագրի առկայությունը» [3]։

Ի դեպ, այդ գործարքի կեղծ լինելը հենց այն ժամանակ հաստատեց Գերմանիայի արտաքին գործերի մինիստրության պետական քարտուղար Յագովը՝ Բեռլինում Հունաստանի դեսպանորդուն հայտարարելով հետևյալը. «Այդ վաճառքն իրականում երբեք տեղի չի ունեցել» [4]։

Օգոստոսի 18-ին «Գյոբենի» ու «Բրեսլաուի» վրա թուրքական դրոշակներ բարձրացվեցին։ Հածանավերը վերանվանվեցին՝ «Գյոբենը»՝ «Յավուզ սուլթան Սելիմ», «Բրեսլաուն»՝ «Միդիլլի»։ Գերմանական ողջ անձնակազմը՝ թուրքական համազգեստ հագած, մնաց նավերի վրա։ Նավաստիներն ու սպաները գլխներին ֆես դրեցին [5]։

Ծովակալ Սուշոնը նշանակվեց թուրքական նավատորմի հրամանատար։ Դրան հետևեց ծովակալ Լիմպուսի գլխավորած անգլիական ծովային միսիայի սպաների հեռացումը թուրքական ռազմանավերից։ Շուտով անգլիական կառավարությունը ստիպված էր այդ միսիան ետ կանչել Ստամբուլից։ Թուրքիայի ռազմա-ծովա-

---

1 Ta'ât paşanın hatıraları, s 27.

2 *Джемаль-паша*, стр. 100.

3 МОЭИ, Серия III, т. VI, ч. I, № 90.

4 «Вторая оранжевая книга». Дипломатическая переписка России, предшествовавшая войне с Турцией. Дипломатич. архив, т. VI, П-д, 1915, док. № 27.

5 *Այդ հանգամանքը մեծ վեզիրին չէր շփոթեցնում։ Ի պատասխան Ռուսաստանի շարունակվող բողոքների, նա փորձում էր հավաստիացնել Գիրսին, որ «Գյոբենն» ու «Բրեսլաուն» գնվել են Թուրքիայի կողմից և որ դրանց գերմանական անձնակազմերը կուղարկվեն Գերմանիա և կփոխարինվեն թուրքականով։ Տե՛ս* МОЭИ, серия III, т. VI, ч .I, № 14.

յին ուժերն ամբողջովին անցան գերմանական հրամանատարության ձեռքը։

Օգոստոսի 12-ին Գիրսը հաղորդեց Սազոնովին, որ «Գյոբենի» և «Բրեսլաուի» ժամանումը և դրանց գնումը «խիստ ոգևորեց Թուրքերին և կարող է նրանց համարձակություն ներշնչել՝ դիմելու ամենավճռական ելույթների»[1]։

Թուրքիան անմիջապես չմտավ պատերազմի մեջ, թեև Գերմանիան շտապեցնում էր նրան՝ մատնանշելով դաշնակցային համաձայնագիրը։ Դա բացատրվում էր նրանով, որ բալկանյան պետությունների դիրքը տակավին պարզ չէր։

«Մեզ հարկավոր էր ապահովել Բուլղարիայի մասնակցությունը պատերազմին՝ մեզ հետ դաշինք կնքած,—վկայում է Ջեմալ-փաշան»[2]։

«Երիտթուրքերն անմիջապես պատերազմի մեջ չմտան բալկանյան հարևանների կասկածելի դիրքի պատճառով,— գրում է Ահմեդ Էմին Յալմանը»[3]։ Թուրքական դիվանագիտությունն այն ժամանակ փորձում էր կենտրոնական տերությունների կողմը ներքաշել Բուլղարիային ու Ռումինիային։ Փորձեր արվեցին նաև Հունաստանին ներգրավվելու՝ Անտանտի դեմ ուղղված չորս երկրներից բալկանյան լիգա ստեղծելու համար[4]։

Ստամբուլի քաղաքագետները բավականին եռանդուն էին գործում հատկապես այս վերջին ուղղությամբ։ Բուլղարիային իրենց կողմը գրավելու համար Թալեաթն ու Խալիլը ուղարկվեցին Սոֆիա։ Թալեաթը գրում է, որ երբ նրանք ժամանեցին բուլղարական մայրաքաղաքը և համոզվեցին, որ Ռադոսլավովի կառավարությունը հակված է դաշինք կնքելու Թուրքիայի հետ, «թուրքական դեսպանությունում բանակցություններ սկսվեցին, և մենք ստորագրեցինք պայմանագիր... Այսպիսով, հաստատվեց, որ Բուլղարիան պատրաստվում է մասնակցել պատերազմին»[5]։

Վաղուց որոշած լինելով հանդես գալու գերմանա-ավստրիական խմբավորման կողմում և իրեն համար նոր դաշնակիցներ փնտրելով, թուրքական կառավարությունը շարունակում էր բանակցությունները ցարական դիվանագետների հետ, վերջիններիս մշտապես հավաստիացնելով Ռուսաստանի հետ դաշինք կնքելու Թուրքիայի պատրաստակամության մեջ։ Մեծ վեզիրը շարունակում էր կեղծավոր կերպով հայտարարել Գիրսին, թե իբր Թալեաթն ու Խալիլը Սոֆիայում բանակցություններ են վարում՝ Բուլղարիային կենտրոնական տերությունների խմբավորման դեմ հանելու համար։

Երիտթուրքերը փորձում էին Անտանտի տերությունների ներկայացուցիչներին հավատացնել, որ իբր Թուրքիան չեզոքություն է պահպանում։ Մինչդեռ, քողարկվելով հենց այդ չեզոքությամբ, Թուրքիան տենդորեն նախապատրաստվում էր պատերազմի[1]։

Համընդհանուր զորահավաքի հայտարարումը, որի մասին վերը հիշատակվեց, և դրա հետ կապված ամբողջ երկրի վերածումը ռազմական ճամբարի, հանգեցրին քաղաքացիական իշխանությունների ենթարկմանը ռազմական իշխանություններին և Էնվեր-փաշայի գլխավորությամբ գերմանասերների լիակատար գերազանցությանը։ Վերջինս նշանակվեց Թուրքիայի ռազմական ուժերի վիցեգեներալիսսիմուսի պաշտոնում և փաստորեն իր ձեռքում անսահմանափակ իշխանություն կենտրոնացրեց։

Գերմանացիները չհապաղեցին Ստամբուլում ստեղծված այդ նոր իրավիճակն օգտագործել Օսմանյան կայսրությունում իրենց ազդեցությունն է՛լ ավելի ամրապնդելու և թուրքական բանակի հետ մեկտեղ նավատորմն էլ իրենց ձեռքը վերցնելու համար։ Գերմանիայից սկսեցին մեծ խմբերով գերմանական սպաներ ու զինվորներ, զենքով, զինամթերքով ու հանդերձանքով բեռնված գնացքներ ժամանել Թուրքիա։ Գերմանական մասնագետների ղեկավարությամբ ամրացվում էին նեղուցները։

Ինչպես հաղորդում էր Գիրսը 1914 թվականի հոկտեմբերի սկզբին, թուրքական կառավարության մեջ ավելի ու ավելի էր բորբոքվում «պայքարը ռազմատենչ կուսակցության և Ջավիդ-բեյի ու Խալիլ-բեյի գլխավորած չափավորների կուսակցության միջև, որոնք ջանում էին Թուրքիային ետ պահել պատերազմին անմիջապես ներգրավվելուց։ Այդ չափավոր կուսակցությունը, ոչ առանց հիմքի, մինչև ռազմական գործողությունների թատերաբեմում ստեղծված ընդհանուր վիճակի պարզվելը Թուրքիայի հանդես գալը վտանգավոր է համարում»[2]։ Երբ Մառնայի վրա գերմանական զորքերի կրած պարտության և ռուսական բանակի հաջող առաջխաղացման հետևանքով Գալիցիայի զգալի մասը գրավվեց, գերմանական գլխավոր հրամանատար Մոլտկեն, սեպտեմբերի սկզբներից սկսած, Լիման ֆոն Սանդերսից պահանջում էր, որ

1 *МОЭИ*, серия III, т. VI, ч. I, № 84.
2 *Джемаль-паша*, стр. 105.
3 Ahmed Emin, p. 74.
4 Briggs Davenport, p. 454.
5 Talât paşanın hatıraları, s. 27.

1 Տե՛ս МОЭИ, серия III, т. VI, ч. I, № 136, 363.
2 МОЭИ, серия III, т. VI, ч .I, № 363.

Թուրքիան անհապաղ հանդես գա Կովկասում, Սև ծովում և Սուեզի ջրանցքի շրջանում [1]։

Դրանից հետո Վանգենհայմը, Լիման ֆոն Սանդերսն ու ծովակալ Սուշոնը սկսեցին ուժեղ ճնշում գործադրել երիտթուրքական ղեկավարների վրա։

Սեպտեմբերի 27-ին թուրքական կառավարությունը փակեց նեղուցները։ Ականները ջրարկվեցին և ականափակոցներ դրվեցին, փարոսների ջահերը հանգցրին և նշաններով նավերին հասկացրին, որ անցում չկա։ Այս միջոցառումը ևս վկայում էր, որ մոտենում է պատերազմին Թուրքիայի մասնակցության պահը։

Հոկտեմբերի 11-ին, գերմանական դեսպանությունում տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ, Վանգենհայմի միջև, մի կողմից, և Էնվերի, Թալեաթի ու Ջեմալի միջև՝ մյուս կողմից, կնքվեց համաձայնագիր, որով Թուրքիան պարտավորվում էր հանդես գալ Գերմանիայից 100 միլիոն մարկ գումարի [2] չափով դրամական օգնություն [3] ստանալուց անմիջապես հետո։

Հաջորդ օրը,— ինչպես գրում է Ջեմալ-փաշան,— մինիստրների խորհրդի նեղ կազմով կայացած նիստում, բոլոր ներկա գտնվողները, բացի Ջավիդ-բեյից, պնդում էին, որպեսզի Թուրքիան «անհապաղ միջամտի համաշխարհային պատերազմին» [4]։

Այդ բանը առանձնապես համառորեն պնդում էր ռազմական մինիստր Էնվեր-փաշան։ «Միասնություն և առաջադիմություն» կուսակցության նշանավոր գործիչներից մեկը՝ Մեվլան-զադե Ռիֆաթը, հիշյալ նիստում Էնվերի ունեցած ելույթի մասին իր հուշերում գրում է, որ Էնվերը, ապացուցելու համար, որ Թուրքիային անհրաժեշտ է մասնակցել պատերազմին Գերմանիայի կողմում, մատնանշում էր հետևյալը. «Գերմանիան համաձայն է, որպեսզի մենք գրավենք Եգիպտոսը, Կովկասը և նույնիսկ Պարսկաստանը... Այսպիսով, կասկած չկա, որ մենք կկարողանանք ճանապարհ բացել դեպի Թուրան և իրականացնել թուրքերի միավորումը» [5]։

Հոկտեմբերի 26-ին երիտթուրքական կառավարությունը Գերմանիայից ստացավ վարկի մի մասը՝ ոսկով։ Դրանից հետո, Վանգենհայմը և Ստամբուլում Ավստրո-Հունգարիայի դեսպան Պալավիչինին պահանջեցին, որ Թուրքիան անմիջապես հանդես գա Ռուսաստանի դեմ։ Սակայն Թալեաթն ու Խալիլը տատանվեցին։ Նրանք ավստրիական դեսպանին հայտարարեցին, որ իրենք դեռ դասում են «սպասել մինչև գարուն, երբ Թուրքիան... կվերջացնի իր պատրաստությունները Պարսկաստանում, Կովկասում ու Եգիպտոսում»։ Սակայն Էնվերը հանգստացրեց Պալավիչինիին, հավաստիացնելով նրան, որ անձամբ ինքը «ամուր կանգնած է ռազմական ելույթի օգտին։ Նավատորմը մոտակա օրերին կտրուկ հրաման կստանա...» [1]։ Այդ խոսքերն արտասանվեցին հոկտեմբերի 22-ին։ Հենց նույն օրը Սուշոնը Թուրքիայի ռազմական մինիստրից գաղտնի հրաման ստացավ, որտեղ ասված էր հետևյալը. «Թուրքական նավատորմը պետք է գերիշխող դիրքի հասնի Սև ծովում։ Գտե՛ք ռուսական նավատորմը և հարձակվե՛ք նրա վրա՝ առանց պատերազմ հայտարարելու, ուր էլ որ նրան հայտնաբերեք» [2]։

Այս բոլոր փաստերը խոսում են այն մասին, որ Սուշոնի կողմից գլխավորվող թուրքական նավատորմի ուխտադրուժ հարձակումը Թեոդոսիայի, Սևաստոպոլի, Օդեսայի, Նովորոսիյսկի և ռուսական այլ քաղաքների վրա ոչ միայն գերմանական հրամանատարության գործն էր, ինչպես փորձում են ներկայացնել երիտթուրքական կուսակցության որոշ գործիչներ և մի շարք թուրք պատմաբաններ [3], այլ այդ հանցավոր քայլն արվեց «Միասնություն և առաջադիմություն» կուսակցության պարագլուխների հավանությամբ և ուղղակի մասնակցությամբ [4]։

Հոկտեմբերի 29-ին, սկսելով ռազմական գործողությունները Սև ծովում, Թուրքիան ամբողջ աշխարհին ցույց տվեց, որ ավելի քան երեք ամիս տևող «չեզոքության» քաղաքականությունը, որ նա պաշտոնապես հռչակել էր, մինչև վերջը կեղծ ու փարիսեցիական էր։ Նույնիսկ ռուսական սևծովյան նավահանգիստները թուրքական նավատորմի կողմից ռմբակոծելուց հետո երիտթուրքերը փորձում էին շարունակել քաղաքական նախկին գիծը, որն ամբողջովին հիմնված էր կեղծ հավաստիացումների վրա։ Երիտթուրքական կառավարությունն անմիջապես հանդես եկավ մի հայտարարությամբ, որտեղ ցինիկ կերպով Սև ծովում ռազմական գործողությունները

1 Лорей Г., Операция германо-турецких морских сил в 1914—1918 гг., М., 1937, стр. 67.

2 МОЭИ, серия III, т. VI, ч. I, стр. 413. 1., Davenport, p. 54. *Ջեմալ-փաշան ժխտում է այդ համաձայնագրի ստորագրման փաստը։ Տե՛ս* Джемаль паша, стр. 107.

3 *Նույն տեղում, № 413, ծանոթութ. 1։*

4 Джемаль-паша, стр. 107.

5 *Մեվլան-զադե Ռիֆաթ, էջ 12։*

1 МОЭИ, серия III, т. VI, ч. I, № 414.

2 *Лорей Г.*, стр. 68.

3 Talât paşanın hatıraları, s. 29.

4 *Գոտլիբը նշում է, որ «թեև Թալեաթն ու Ջեմալը ժխտում էին այդ բանը, նրանք հաղորդակից էին կամ, առնվազն նախօրոք գիտեին Էնվերի, գեներալ ֆոն Սանդերսի և ծովակալ Սուշոնի կողմից սառնասրտորեն մշակված պլանի մասին»։ Տե՛ս* Готлиб, стр. 85.

սկսելու մեղքը բարդվում էր ռուսական նավատորմի վրա։ Միաժամանակ, Ստամբուլում «պատրաստակամություն» հայտնեցին Ռուսաստանի հետ կարգավորել այդ միջադեպը։ Մեծ վեզիր Սայիդ Հալիմը, որը պատերազմի հենց սկզբից ճարպկորեն իրեն ձևացնում էր չեզոքության կողմնակից, հայտնեց իր «խոր ցավակցությունը թուրքական նավատորմի հարձակման կապակցությամբ» և ջանում էր Գիրսին համոզել, թե իբր «այն տեղի էր ունեցել Բարձր Դռան հրամանին հակառակ» [1]։

Պետրոգրադում Թուրքիայի գործերի ժամանակավոր հավատարմատարը Սազոնովին հանձնեց թուրքական կառավարության հայտարարությունը, որտեղ ասվում էր, որ «Բարձր Դուռը... կձեռնարկի միջոցներ, որոնք կկարողանան կանխել նման փաստերի կրկնումը։ Մենք որոշել ենք կայսերական նավատորմին այլևս չթույլատրել դուրս գալու Սև ծովը և հույս ունենք, որ ռուսական նավատորմն, իր հերթին, նույնպես չի լողա մեր ջրերում» [2]։

Սազոնովը կատեգորիկ կերպով հերքեց Սև ծովում ռազմական գործողություններ ծավալելու մեջ ռուսական նավատորմի հանդես բերած նախաձեռնության փաստը և հայտարարեց, որ Ռուսաստանը կարող է շարունակել բանակցությունները միայն այն դեպքում, եթե Թուրքիան համաձայնվի ընդունել Ստամբուլում Ռուսաստանի, Անգլիայի ու Ֆրանսիայի դեսպանների կողմից հոկտեմբերի 30-ին Բարձր Դռանը հանձնված վերջնագիրը, այն է՝ 24 ժամվա ընթացքում թուրքական ծառայությունից հեռացնել գերմանական ռազմական միսիան, ինչպես նաև գերմանական ծովային սպաներին ու նավաստիներին, որոնք ծառայության մեջ են օսմանյան նավատորմում, և հրաժարվել գերմանական ռազմանավերին որևէ ձևով ապաստարան կամ հանդերձանք տրամադրելուց [3]։

Նոր բանակցությունները, որ երիտթուրքերը փորձում էին ձեռնարկել, հերթական խաբեություն էին։ Թուրքական կառավարությունը չպատասխանեց Անտանտի տերությունների վերջնագրին։ Հոկտեմբերի 31-ին Գիրսը թողեց Ստամբուլը։ Նոյեմբերի 1-ին նրա օրինակով Ստամբուլից հեռացան Անգլիայի ու Ֆրանսիայի դեսպանները։ Նույն օրը, ինչպես գրում է Ահմեդ Էմինը, պատերազմի կողմնակիցների խումբը, որը բաղկացած էր մի քանի մինիստրներից և երիտթուրքական ազդեցիկ ներկայացուցիչներից, հավաքվեց նիստի, որտեղ ճառեր էին արտասանվում այն «մեծ հնարավորությունների» մասին, որ պատերազմը ընձեռում է Թուրքիային՝

[1] МОЭИ, серия III, т. VI, ч. I, стр. 434., Прим. I.

[2] Նույն տեղում, № 445։

[3] Նույն տեղում, № 427։

Եգիպտոսը, Թունիսը, Ալժիրը, Տրիպոլին և մահմեդականներով բնակեցված Ռուսաստանի շրջանները գրավելու համար։ Կառավարության երեք անդամներ, որոնք դեմ էին Թուրքիայի մասնակցությանը պատերազմին, հրաժարական տվեցին։ Նրանց մասին խոսում էին որպես դավաճանների [1]։

Օսմանյան կայսրության ռազմական ջախջախումից հետո թուրք ժողովուրդը պահանջեց, որպեսզի Թուրքիային պատերազմում ներգրավվելու մեջ հանցավոր գործիչները պատժվեն։ Երիտթուրքական կուսակցության մի քանի նախկին ղեկավարներ դատի տրվեցին։ 1926 թվականի օգոստոսի 26-ին Անկարայի զինվորական ատյանի գլխավոր դատախազի արտասանած ճառից երևում է, որ նա հասարակայնությունից թաքցրել էր երիտթուրքական պարագլուխների զավթողական նպատակները, որով ղեկավարվելով նրանք երկիրը ներգրավել էին իմպերիալիստական պատերազմի մեջ։ Հիմնական մեղադրանքը դատախազը ներկայացրեց այլևս գոյություն չունեցող կայսերական Գերմանիայի դեմ, ոչ մի խոսք չասելով 1914—1918 թվականների պատերազմում Թուրքիայի կառավարող շրջանների հետապնդած հանցավոր մտադրությունների մասին։

«Ամբողջ թուրք ազգը,— ասել էր դատախազը,— պատերազմի մեջ ներգրավվեց «կատարված փաստի» հետևանքով, որն արվել էր գերմանական ծովակալի կողմից՝ կայզերի հրամանով։ Այլ կերպ ասած, պատմական մեծ կայսրությունը խաղալիք դարձավ գերմանական այդ ծովակալի ձեռքում, որի անունն իսկ հայտնի չէր թուրք ժողովրդին» [2]։

Դատախազի բնութագրումով, «թուրքական մինիստրներն ավելի շատ նմանվում էին կայզերի հլու ծառաների, քան մինիստրների...» [3]։ Սակայն դատավարության ժամանակ չպարզվեց այն հարցը, թե ինչո՞ւ և հանուն ինչի՞ երիտթուրքական առաջնորդները կայզերի «ծառաներ» դարձան և Թուրքիան վերածեցին գերմանական իմպերիալիզմի ռազմական վասալի։ Եվ դա պատահական չէ, որովհետև անկասկած է, որ շատ բան երիտթուրքական կուսակցության արտաքին ծրագրից համապատասխանում էր նաև հանրապետական Թուրքիայի որոշակի շրջանների ձգտումներին։

[1] Ahmed Emin, p. 76. Հրաժարական տվեցին փոստի և հեռագրատան մինիստր Օսկան-էֆենդին, հողագործության և առևտրի մինիստր Սուլեյման-էֆենդի էլ-Բուստամը, հասարակական աշխատանքների մինիստր Ջարուկ Սուլու Մահմուդ-փաշան։ Տե՛ս Джемаль-паша, стр. 110. Այդ մասին տե՛ս նաև Մեվլան-զադե Դրֆաթ, էջ 34—37։

[2] Տե՛ս Ahmed Emin, p. 75։

[3] Նույն տեղում։

***

Այսպիսով, մենք տեսանք, որ Լիման ֆոն Սանդերսի գլխավորած գերմանական ռազմական միսիան Ստամբուլ ուղարկվեց երիտթուրքական կառավարության նախաձեռնությամբ, որը ձգտում էր հնարավորին չափ կարճ ժամկետում վերակառուցել ու վերազինել օսմանյան բանակը։ Երիտթուրքերի այդ դիմումը Բեռլինին արտացոլում էր գրեթե քառասուն տարվա ընթացքում Թուրքիայի զինված ուժերում արմատացած գերմանական ազդեցությունը։

Կայսերական Գերմանիայի օժանդակության շնորհիվ երիտթուրքերի կողմից անցկացրած ռազմական բարեփոխումները նպատակ ունեին ագրեսիա նախապատրաստել արևելքում՝ ուղղված հիմնականում Ռուսաստանի և, առաջին հերթին, Անդրկովկասի դեմ։ Միլիոնավոր մահմեդականներով բնակեցված Անգլիայի ու Ֆրանսիայի գաղութային տիրապետությունները ևս թուրք պանիսլամիստները դիտում էին որպես իրենց նվաճողական քաղաքականության օբյեկտներ։ Թուրքիայի կառավարող շրջանների ագրեսիվ ձգտումները համապատասխանում էին գերմանական ռազմամոլների շահերին, որոնք հույս ունեին, որ թուրքական բանակի հանդես գալու շնորհիվ ռուսական ուժերի մի ելգալի մասը գամված կմնա Կովկասյան ճակատում և, դրանով իսկ, էապես կթեթևանա գերմանական բանակի վիճակը Արևմտյան ճակատում։ Վերջապես, Անտանտի դեմ մղվող պատերազմին Օսմանյան կայսրության մասնակցությունը, ինչպես հույս ունեին Բեռլինում, նպաստելու էր այն բանին, որպեսզի անգլիական ու ֆրանսիական գաղութների մահմեդական հոծ ազգաբնակչությունը ևս համակրեր կենտրոնական տերությունների քաղաքականությանը։

Գերմանական ռազմական միսիայի Թուրքիա ուղարկումը, որն իր ձեռքը վերցրեց թուրքական բանակի վերահսկողությունը և Ստամբուլի ու նեղուցների շրջանում գտնվող զորքերի հրամանատարությունը, Ռուսաստանի կողմից կտրուկ բողոք առաջ բերեց և հանգեցրեց միջազգային սուր բախման։ Սակայն ցարական կառավարությունը ստիպված էր նահանջել, գտնելով որ Ռուսաստանը տակավին պատրաստ չէ եվրոպական պատերազմին։ Այն գլխավոր հանգամանքը, որը կանխորոշեց ցարիզմի այդ զիջողականությունը, դա աջակցության բացակայությունն էր Անգլիայի կողմից, որի շահերը Մերձավոր արևելքում, մի շարք հարցերում, բաժանվում էին Ռուսաստանի իշխող դասակարգերի շահերից։

Լիման ֆոն Սանդերսի միսիայի գործունեությունը պատերազմի նախօրյակին գերազանցապես նպատակ ուներ նախապատրաստել ռազմական գործողությունները կովկասյան ապագա թատերաբեմում՝ Ռուսաստանի սահմանի մոտ հնարավորին չափ մեծ քանակությամբ թուրքական զորքեր կենտրոնացնել և Անդրկովկասում ու Միջին Ասիայում լրտեսական ու դիվերսիոն աշխատանքն ուժեղացնել։

Թուրքական կառավարության ու Գերմանիայի միջև 1914 թվականի Օգոստոսի 2-ին կնքված ռազմական գաղտնի պայմանագիրը կասկած չէր թողնում, որ երիտթուրքերը հաստատուն կերպով նպատակադրվել էին մասնակցելու համաշխարհային բախմանը՝ կենտրոնական Եվրոպայի պետությունների կողմում, որ գերմանա-թուրքական դաշինքն ուղղված էր Ռուսաստանի դեմ և այն նախատեսում էր Գերմանիայի աջակցությունը թուրքերին՝ Անդրկովկասում նրանց ծրագրած տերիտորիալ նվաճումներում։

Օգոստոսի սկզբներին Թուրքիայի հայտարարած չեզոքությունը և նույն ժամանակ Էնվերի նախաձեռնությամբ Ռուսաստանի ներկայացուցիչների հետ սկսված բանակցություններն, անշուշտ, մինչև վերջը խաբեություն էին. դրանք անհրաժեշտ էին երիտթուրքական կառավարությանը բանակի զորահավաքն ավարտելու և նախապատրաստական այլ միջոցառումներ անցկացնելու համար։

«Գյոբենի» և «Բրեսլաուի» ժամանումը Ստամբուլ և գերմանական հածանավերի ձևական գնումը թուրքական կառավարության կողմից, վերջնականապես կանխորոշեց Օսմանյան կայսրության ապագա դիրքը համաշխարհային պատերազմում։ Գերմանա-թուրքական նավատորմի ուխտադրուժ հարձակումը Ռուսաստանի սևծովյան նավահանգիստների վրա՝ 1914 թվականի հոկտեմբերի 29—30-ին, նշանակում էր, որ Թուրքիան մտնում է պատերազմի մեջ՝ գերմանա-ավստրիական խմբավորման կողմում։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԿՈՎԿԱՍՅԱՆ ՃԱԿԱՏԸ 1914—1917 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Համաշխարհային պատերազմի մեջ մտնելով, Օսմանյան կայսրությունը, ինչպես և պատերազմող մյուս երկրները, հետապնդում էր իր սեփական նպատակները։ 1914—1918 թվականների պատերազմի պատմությանը նվիրված մի շարք աշխատություններում Թուրքիան ներկայացվում է որպես մի պետություն, որին գերմանական իմպերիալիստները կարծես թե բռնի կերպով էին ներգրավել զինված բախման մեջ։ Նման մեկնաբանությամբ ժխտվում է այն անհերքելի փաստը, որ երիտթուրքական իշխող վերնախավն ուներ իր զավթողական ծրագրերը, որոնց իրագործման համար էլ նա ձգտում էր մասնակցելու համաշխարհային պատերազմին։

Վերը նշվեց, որ տակավին պատերազմը սկսվելուց առաջ, երիտթուրքական առաջնորդներն ու տեսաբանները համառորեն տարածում էին պանիսլամիզմի ու պանթուրքիզմի հետադիմական գաղափարները, կոչ անելով ետ գրավել Օսմանյան կայսրության կողմից առաջներում կորցրած տիրապետությունները։ Այսպես, մեջլիսի նախագահ Խալիլ-բեյը իր մարտաշունչ ճառերից մեկում հիշեցնում էր «թուրքական բանակի դերի, նրա մարտական ծառայությունների ու երբեմնի փառքի» մասին և գրողներից, բանաստեղծներից, ուսուցիչներից ու բոլոր մտավորականներից պահանջում իրենց աշխատություններով, բանաստեղծություններով, իրենց մտավոր ողջ ազդեցությամբ արթնացնել «մեր ապագա սերունդների մեջ այն գաղափարը, որ սահմանի այն կողմում մնացել են մեր եղբայրները, որոնք փրկության կարիք ունեն, մնացել են մեր հողի առանձին կտորներ, որոնք ազատություն են պահանջում»[1]։

Երիտթուրքական կլիկի նվաճողական ձգտումների մասին իթթիհատական կուսակցության մեջ արդեն ծանոթ գործիչ Մեվլանզադե Ռիֆաթը գրում էր, որ կուսակցության պարագլուխների խորհրդակցություններից մեկի ժամանակ, որին մասնակցում էին Էնվերը, Թալեաթը, Ջեմալը, Սայիդ Հալիմը, Ջավիդը և ուրիշներ, քննարկվում էր պատերազմին գերմանական խմբավորման կողմում Օսմանյան կայսրության մասնակցության հարցը։ Հիշյալ խորհրդակցությունում, ինչպես նշում է Մեվլան-զադե Ռիֆաթը,—Էնվերն ասել էր. «Հզոր Գերմանիայի օգնությամբ մենք կկարողանանք նվաճել ոչ միայն Մակեդոնիան, այլև Կովկասը, Եգիպտոսը և «Միասնություն և առաջադիմություն» կուսակցության իշխանությունը կվերածենք աշխարհի ամենահզոր կայսրության»[2]։ Այդ խորհրդակցությունից անմիջապես հետո երիտթուրքական կառավարությունը կոչ արձակեց, որտեղ ասված էր հետևյալը. «Մեր մասնակցությունը համաշխարհային պատերազմին արդարացվում է մեր ազգային իդեալով։ Մեր ազգի իդեալը... առաջնորդում է մեզ դեպի մեր մոսկովյան թշնամու ոչնչացումը, որպեսզի դրա հետևանքով ստեղծվեն մեր կայսրության բնական սահմանները, որոնք իրենց կազմում կունենան և կմիավորեն մեր ռասայի բոլոր ճյուղավորումները»[3]։

Պատերազմի մեջ մտնելուց հետո, ագրեսիայի այդ անզուսպ պրոպագանդան Թուրքիայում հսկայական թափ ընդունեց։ Այլևս ոչնչով չկաշկանդվելով, երիտթուրքերը ցինիկաբար ճչում էին, որ «ազգական նվաճումների միջոցով նրանք կհասնեն Կովկասի, Միջին Ասիայի, Պովոլժիեի, Ղրիմի, ինչպես նաև Հյուսիսային Աֆրիկայի, Աֆղանստանի, Հնդկաստանի ու Չինաստանի այն տերիտորիաների միացմանը Օսմանյան կայսրությանը, որոնք բնակեցված են իսլամ դավանող ժողովուրդներով և, այդպիսով, կվերաստեղծեն Թուրանի վաղեմի պետությունը։ Շովինիզմի ու կողոպուտի այս քարոզը Թուրքիայում ուղեկցվում էր դեպի Ռուսաստանը ատելության բորբոքմամբ։ Թերթերի ու ամսագրերի էջերում առանձնապես մեծ ջանասիրություն էին հանդես բերում այդ ուղղությամբ պանթուրքիզմի ու պանիսլամիզմի գաղափարախոսները։ Այսպես, մեզ հայտնի Թեքին Ալփը թուրքերին կոչում էր անհապաղ «փրկել թուրքական ժողովուրդները ռուսական ստրկությունից» և Ռուսաս-

1 ЦГВИА. ф. 2000с. оп. I ,д. 752, л. 343—345.

2 Մեվլան-զադե Ռիֆաթ, էջ 12։

3 Տե՛ս В. В. Готлиб, стр. 86.

տանից ետ նվաճել ու Թուրքիային միացնել մահմեդականներով բնակեցված հողերը։ «Եթե ռուսական բռնապետությունը ոչնչացվի Գերմանիայի, Ավստրիայի ու Թուրքիայի փառապանծ բանակների կողմից,— հայտարարում էր Թեքին Ալփը,— 30—40 միլիոն Թուրքեր իրենց անկախությունը ձեռք կբերեն»[1]։

Թուրքիայի այն ժամանակվա կառավարողները՝ տխրահռչակ «տրիումվիրատի» գլխավորությամբ, գտնում էին, որ հասել է ժամանակը իրագործելու Թուրանի ստեղծման իրենց զառանցական պլանները։ Այդ բանը հետագայում ուղղակի խոստովանել են հենց իրենք՝ «Միասնություն և առաջադիմություն» կուսակցության գործիչները։ Դրանց թվին է պատկանում նաև տխրահռչակ Քյազըմ Կարաբեքիր-փաշան։ Վերջինս էնվերի մերձավորագույն զինակիցներից մեկն էր և նրա օրոք զինվորական բարձր պաշտոններ էր զբաղեցնում։ Հայտնի է, որ Քյազըմ Կարաբեքիրն էնվերի նվաճողական քաղաքականության եռանդուն կենսագործողներից մեկն էր և նրա հետ մեկտեղ պատասխանատու՝ պատերազմում Թուրքիայի կրած պարտության համար։

Քյազըմ Կարաբեքիրը հրապարակ է հանում այն «գաղտնիքները», որ իրեն վստահել էր էնվեր-փաշան[2], նպատակ ունենալով իր վրայից գցել Օսմանյան կայսրության պարտության մեղքը։ Որո՞նք են, սակայն, այն «գաղտնիքները», որ Կարաբեքիրը որոշել էր հրապարակել 1914—1918 թվականների պատերազմում Օսմանյան կայսրության ջախջախումից շատ տարիներ անց։

Քյազըմ Կարաբեքիրը պատմում է այն մասին, թե ի՞նչ հեռանցացող հաշիվներով էր ղեկավարվում էնվերը, երբ նա 1914 թվականի աշնանը իրեն՝ Կարաբեքիրին նշանակեց այն դիվիզիայի հրամանատար, որը պետք է ներխուժեր Իրան։ Էնվերն ընդգծում էր, գրում է Կարաբեքիրը, որ այդ արշավանքի խնդիրը ոչ միայն «Պարսկաստանի ազատագրումն էր ռուսական ազդեցությունից», այլև հետագա ներթափանցումը Աֆղանստան և Թուրքեստան, ուր իրեն՝ Կարաբեքիրին հանձնարարված էր տեղական ազգարնակչությանը զինված պայքարի կոչել՝ ռուսական զորքերի դեմ։ Միաժամանակ էնվերը պատրաստվում էր մի այլ դիվիզիա Թավրիզի միջով ուղարկել Դաղստան՝ Կովկասի մահմեդական ժողովուրդներին ապստամբության մղելու և Թուրքական սահմանի մոտ կանգնած ռուսական զորքերին թիկունքից հարվածելու համար[3]։

1 Տե՛ս Toynbee, p. 35—36։
2 Kâzım Karabekir, K. II, s. 285.
3 Նույն տեղում, էջ 487, 491։

«Ես այդ արշավանքին մեծ նշանակություն եմ տալիս,— ասում էր էնվերը։ Միայն դրա շնորհիվ մենք կկարողանանք շարժման մեջ դնել ողջ մահմեդական աշխարհն Ասիայում»[1]։

Քյազըմ Կարաբեքիրը գրում է, որ էնվերը «մշտապես կլանված էր մի մտքով, մի ձգտումով՝ ստեղծել «Թուրան»[2]։ Ըստ որում, նա պնդում է, թե իբր ինքը միշտ էնվերին մատնանշել է Թուրքիայի համար այդ ուղիով ընթանալու վտանգավորությունը։ «Ես նույնպես աշխատում էի... դրանում համոզել նաև ներքին գործերի մինիստր Թալեաթ-բեյին... Պատերազմի ժամանակ ես իմ պետերին ապացուցում էի, որ պայքարը Թուրանի համար վտանգավոր է, սակայն իմ բոլոր ջանքերն ապարդյուն անցան»[3]։

«Իմ պաշտոնական դիմումներին,— գրում է այնուհետև Քյազըմ Կարաբեքիրը,— պատասխանում էին, որ հայրենիքի ապագայի համար ծայրահեղորեն անհրաժեշտ է, որպեսզի Թուրքիային միացվի Կովկասյան Ադրբեջանը՝ Նախիջևանի հետ միասին»[4]։

1914—1918 թվականների պատերազմի մի այլ մասնակից՝ զնդապետ Բերքուքը, թուրքական 15-րդ դիվիզիայի դեպի Կովկաս ձեռնարկած արշավանքին նվիրված իր գրքի առաջաբանում գրում է, որ երիտթուրքերի նվիրական իղձն էր գրավել Անդրկովկասը, Հյուսիսային Կովկասն ու Ղրիմը[5]։

Երիտթուրքական կլիկի նվաճողական այդ պլանների մասին պատերազմի սկզբից բացեիբաց գրում էր թուրքական մամուլը։ Այսպես, շարադրելով Թուրքիայի նպատակները բռնկված համաշխարհային պատերազմում, «Աթի» թերթը մատնանշում էր, որ ամբողջ Սև ծովը պետք է անցնի թուրքերի տիրապետության տակ, մերձափնյա տերություններն առնվեն Օսմանյան կայսրության խնամակալության տակ, իսկ Ղրիմը, Ադրբեջանն ու Կովկասը վերադարձվեն սուլթանի իշխանությանը։ Բացի դրանից, թերթը գտնում էր, որ պետք է վերականգնվի թուրքական տիրապետությունը Եգիպտոսի նկատմամբ և Թուրքիային ետ վերադարձվեն Տրիպոլին, Կիրենաիկան, Դոդեկանեզը և Կրետե կղզին[6]։ Մի այլ

1 Kâzım Karabekir, k. II s. 489։ Անդրկովկասի և Ռուսաստանի այլ շրջանների նկատմամբ էնվերի զավթողական պլանների մասին տե՛ս նաև Price Ph. A. History of the Turkey from Empire to Republic. London, New-York' 1956 p. 113. Toynbee. Turkey, p. 31.
2 Նույն տեղում, էջ 285։
3 Նույն տեղում, էջ 284։
4 Նույն տեղում, էջ 286։
5 Berkuk, Büyük harpte (334) Şimali Kafkasyadaki faaliyetlerimiz ve 15 fırkanın hareketâti ve muharebeleri, Istanbul, 1934, s. 1—2.
6 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 53ա, թ. 59։

թերթ՝ «Ծնի գյունը» տպագրել էր Օսմանյան կայսրության քարտեզը, որի կազմի մեջ էր մտցված ամբողջ Անդրկովկասը [1]։

Ամբողջովին կառավարության ձեռքում գտնվող թուրքական մամուլի կողմից անցկացվող ագրեսիայի այդ պրոպագանդայի վրա ուշադրություն է դարձրել հանգուցյալ ակադեմիկոս Գորդլևսկին։ Պատերազմի առաջին ամիսներին տպագրված մի հոդվածում նա դեպի Ռուսաստան ագրեսիա կատարելու քարոզի բազմաթիվ օրինակներ էր բերում։

«Երիտթուրքական կուսակցության հռչակավոր առաջնորդը,— գրում էր Գորդլևսկին էնվերի մասին,— ցանկանում է իր բախտը փորձել Կովկասում։ Այդպիսով, նա վերջին օղակն է անցկացնում երիտթուրքերի գաղափարախոսության մեջ, որոնց համար Կովկասը այսպես կոչված թուրքական «Իրիդենտան» է» [2]։

Երիտթուրքական կուսակցության զավթողական այդ պլանների մասին է վկայում նաև նրա նշանավոր գործիչներից մեկի՝ Նաջի-բեյի միտքը, որը 1914 թվականի սեպտեմբերին կուսակցության կենտրոնական կոմիտեի կողմից հատուկ ուղարկվել էր Վան՝ արևելյան վիլայեթներում Ռուսաստանի դեմ ագիտացիա մղելու և հայերին հավատ ներշնչելու նրանց հանդեպ Թուրքիայի ունեցած բարյացակամ վերաբերմունքի նկատմամբ։

Հայկական տարբեր քաղաքական կուսակցությունների ու խմբերի ներկայացուցիչների հետ ունեցած բանակցությունների ժամանակ Նաջի-բեյը շարադրեց երիտթուրքերի քաղաքական ծրագիրը, որը հանգում էր հետևյալին.

«Հզոր Գերմանիայի հետ դաշնակցած, երիտասարդ, վերածընված Թուրքիան կիսորտակի Ռուսաստանի ռազմական հզորությունը և նրան կշպրտի Կովկասյան լեռնաշղթայից այն կողմը՝ դեպի հյուսիս։ Նվաճելով Անդրկովկասը, Թուրքիան այն չի միացնի կայսրությանը, այլ կառանձնացնի, որպես երեք կիսաանկախ պետությունների մի ֆեդերացիա՝ Կոստանդնուպոլսի սուլթանի խնամակալության ներքո։ Հայաստանը կլինի այդ երեք պետություններից մեկը, որի կազմի մեջ կմտնի նաև «Թուրքահայաստանը»։

Նման կեղծ խոստումներով երիտթուրքերը ձգտում էին հասնել հայերի մասնակցությանը Ռուսաստանի դեմ մղվող պատերազմին։ Երիտթուրքերը ջանում էին հասնել այն բանին, որպեսզի հայերը Թուրքիայի սահմաններում կազմակերպեին իրենց կամավորական ջոկատները՝ թուրքական բանակին օժանդակելու համար, իսկ Անդրկովկասում՝ մասնակցություն ունենային մահմեդական ազգաբնակչության համընդհանուր ապստամբության նախապատրաստմանը։ Հայերը մերժեցին Նաջի-բեյի առաջարկները [1]։

Մեծ Թուրան ստեղծելու զառանցական նպատակների իրականացմանն էր ենթարկված թուրքական գլխավոր շտաբի կողմից մշակված պատերազմը վարելու ստրատեգիական պլանը, որի համաձայն թուրքական բանակի գլխավոր ուժերը պետք է ռուսական զորքերին հարված հասցնեին այն հաշվով, որ Անդրկովկասն արագ կերպով գրավվեր և, դրանով իսկ, ապահովվեր թուրքական զորքերի հետագա առաջխաղացումը մահմեդականներով բնակեցված Ռուսաստանի մյուս շրջանները, ինչպես նաև նրան հարևան երկրները։ Ընդ որում թուրքական զորքերն իրենց առաջխաղացման ընթացքում պետք է մահմեդական ժողովուրդների ապստամբություններ բարձրացնեին, որոնց վրա երիտթուրքական նվաճողները մեծ հույսեր էին դրել։

Թուրքիայի մյուս կարևոր ճակատը առաջին համաշխարհային պատերազմում դա Պաղեստինա-սիրիական ճակատն էր, որտեղից թուրքական ուժերը ձգտում էին կտրել Սուեզի ջրանցքը, ներխուժել Եգիպտոս և ամբողջ Հյուսիսային Աֆրիկա՝ Օսմանյան կայսրության նախկին տիրապետությունները գրավելու համար։

Միջագետքի ու Գալիպոլիի ճակատները թուրքական բանակի համար պաշտպանողական էին։

Թուրքիայի համար ռազմական գործողությունների կարևորագույն թատերաբեմը կովկասյան ճակատն էր։ Ինչպես երևում է մի փաստաթղթից, թուրքական կովկասյան բանակի կամպանիայի ստրատեգիական պլանը մշակվել էր պատերազմից շատ առաջ՝ թուրքական ու գերմանական շտաբների կողմից, և թուրքերը վաղուց էին նախապատրաստվում պատերազմին այդ ճակատում [2]։

Կարինում Ռուսաստանի գլխավոր հյուպատոս Ադամովը արդեն 1914 թվականի մարտին հաղորդում էր ռազմական մեծ պատրաստությունների մասին՝ Ռուսաստանի սահմանների մոտ, որտեղ շտապ կերպով զորքեր էին կենտրոնացվում, կուտակվում էին զենք, զինամթերք, տրանսպորտի միջոցներ և միաժամանակ լրացվում պարենի ու կերի պաշարները։ Կարինի վիլայեթում զորահավաքի եռանդուն նախապատրաստություն էր ծավալվել։ Թուրքական հրամանատարությունը պատրաստվում էր ռուսական սահմանի վրա

1 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ, 200, գ 53ա, թ. 59։

2 «Русские ведомости», 21, XII. 1914, № 294.

1 «Оборона Вана», М., 1917, стр. 8—9.

2 ЦГИА Груз. ССР, ф. 2с. оп. I, д 3599, л. 212.

կենտրոնացնել 300 հազար մարդ և այդ նպատակով նա ձեռնարկել էր ժողովրդական միլիցիայի կազմերի նախապատրաստմանը։

«Այսպիսով,— եզրակացնում էր Ադամովը,— Թուրքիան, անկասկած, նախապատրաստվում է... պատերազմի Ռուսաստանի դեմ...»։ Նրա ենթադրությամբ, «մոտիկ ապագայում սպասվելիք ռուս-գերմանական պատերազմի կապակցությամբ Թուրքիան, որպես Գերմանիայի դաշնակից, պարտավորվել էր կովկասյան սահմանի վրա դուրս բերել 300 հազարանոց բանակ՝ ռուսական ուժերի մի մասը իր վրա գրավելու և Անդրկովկաս ներխուժելու համար»[1]։

Ռուսաստանի ու Իրանի սահմանների վրա թուրքական զորքերի կենտրոնացումը շարունակվում էր 1914 թվականի գարնան ու ամռան ամիսների ընթացքում[2]։ Հենց որ համաշխարհային պատերազմը բռնկվեց, Ռուսաստանի դեմ ուղղված Թուրքիայի ռազմական պատրաստությունները տենդային բնույթ ընդունեցին։ Արդեն օգոստոսի սկզբին, Անդրկովկասին սահմանակից վիլայեթներում անցկացվեց պահեստային մասերի և նորակոչիկների զորահավաք։ Գերմանական սպաների ղեկավարությամբ շտապ կարգով մոբիլիզացվում ու ամրացվում էին Կարինի բերդերը[3]։ Թուրքական իշխանությունները բանակի կարիքների համար տեղի հայ ազգաբնակչությունից անհիմն կերպով բռնագրավում էին պարենամթերքի պաշարները[4]։ Օգոստոս ամսվա ընթացքում ռուսական սահմանի վրա կենտրոնացվեց մոտ 40 հազար թուրքական զինվոր[5]։

Արդեն հոկտեմբերի 10-ին թուրքական գլխավոր շտաբն ավարտել էր զորահավաքի անցկացումը։ Թուրքիայի զինված ուժերը բաղկացած էին չորս բանակից։ 1-ին բանակի մեջ մտնում էին 4 կորպուս. 1-ին կորպուսը կանգնած էր Ստամբուլում, 2-րդը՝ Ադրիանապոլսում, 3-րդը՝ Ռոդոստոյում և 4-րդը՝ Հալեպում։ Երկրորդ բանակի մեջ մտնում էր 2 կորպուս՝ 4-րդ (Զմյուռնիա) և 5-րդ (Անկարա)։ Այդ կորպուսները պետք է նեղուցները պաշտպաներին Ասիայի կողմից։

3-րդ բանակը, որի շտաբը գտնվում էր Կարինում, ուներ երեք կորպուս. 9-րդ (Կարին), 10-րդ (Երզնկա) և 11-րդ (Վան)։ 4-րդ

1 ЦГИА Груз. ССР, ф. 85с. д. 620, л. 45—48.
2 ЦГВИА, ф. 2000с, оп. I, д. 3827, л. 483: Տե՛ս նաև ЦГАВМФ, ф. 418, оп. I, д. 4047.
3 ЦГИА Груз. ССР, ф. 2с, оп. I, д. 3361, л. 74—76.
4 ЦГАВМФ, ф. 418, оп. I, д. 4047, л. 84.
5 ЦГВИА, ф. 2000с, оп. I, д. 3796, л. 94.

բանակը, որը կանգնած էր Սիրիայում, իր կազմում ուներ 3 կորպուս և մեկ դիվիզիա, որոնցից՝ 8-րդ կորպուսը գտնվում էր Դամասկոսում, 12-րդը՝ Մոսուլում, 13-րդը՝ Բաղդադում, իսկ 16-րդ դիվիզիան՝ Ադանայում, ինչպես նաև 6-րդ կորպուսի մեջ մտնող 22-րդ դիվիզիան, որը կանգնած էր Հեջազում[1]։ Բացի դրանից, Հեջազում էր տեղավորված նաև 21-րդ դիվիզիան։ 7-րդ կորպուսը կանգնած էր Եմենում[2]։

Հատուկ ուշադրություն էր դարձված Ռուսաստանին սահմանակից շրջաններում զորքերի թվի ավելացմանը։ Այդ նպատակով 9,10 և 11-րդ կորպուսներից յուրաքանչյուրում դիվիզիաների թիվը սովորական երկուսի փոխարեն հասցվեց երեքի։ 3-րդ բանակում ընդամենը հաշվվում էր 81 գումարտակ, 20 գնդացրային վաշտ, 58 մարտկոց՝ 232 արագաձիգ թնդանոթներով և հեծելազորային 35 էսկադրոն։ Թուրքական 3-րդ բանակի զինվորների ընդհանուր թիվը հասնում էր 190 հազարի։

Բացի առաջին գծի այս զորքերից, կազմավորվեցին քրդական գնդեր, որոնք հաշվում էին 15—20 հազար հեծյալներ՝ քրդական տարբեր աշիրեթներից (ցեղերից)։

3-րդ բանակի տեղաբաշխման շրջանում էին գտնվում նաև 95 պահեստային գումարտակներ՝ 15 հազարանոց ժանդարմերիայի ու 10 հազարի հասնող սահմանապահների հետ միասին։ Այդ գումարտակների ընդհանուր թիվը հասնում էր 90 հազար մարդու[3]։ Վերջապես, կովկասյան ճակատն ուժեղացնելու համար Թուրքական գլխավոր շտաբը Միջագետքից փոխադրեց հետևակային 2 դիվիզիա։ 1914 թվականի սկզբին անգլիական մամուլը հաղորդում էր, որ «Ռուսաստանի դեմ կովկասյան ճակատում կենտրոնացված թուրքական զորքերի թիվը հասնում է 300 հազարի»[4]։

Մնացած բանակներն իրենց հզորությամբ զգալիորեն զիջում էին 3-րդ բանակին։ Այսպես, 1-ին և 2-րդ բանակները միասին հաշվում էին 211 հազար մարդ, իսկ 4-րդը՝ 88 հազար, այսինքն՝ իրենց ընդհանուր թվով չէին գերազանցում 3-րդ բանակին։ Մինչև հոկտեմբերի սկզբները բանակ էր զորակոչված 1 միլիոն զինվոր[5]։

Շվեյցարական աղբյուրների տեղեկությունների համաձայն, պատերազմի մեջ մտնելու ժամանակ Թուրքիան իր բանակի շարքերում ուներ շուրջ 800 հազար զինվոր՝ չհաշված 200 հազար մարդ

1 Pomiankowski, S., 91.
2 Allen and Muratoff, p. 237.
3 ЦГВИА, ф. 2000, оп. I, д. 3860, л. 7—8.
4 ЦГАВМФ, ф. 418, оп. I, д. 4348, л. 123.
5 МОЭИ, серия III, т. VI, ч. I, № 363.

բանվորական գումարտակների շարքերում, որոնք կազմված էին գերազանցապես ոչ-մահմեդականներից։ Թուրքական զորքերը տեղաբաշխված էին հետևյալ կերպ. կովկասյան ճակատում՝ 300 հազար զինվոր, Գալիպոլիի ճակատում՝ 200 հազար, սիրիական ճակատում՝ 100 հազար, Արևելյան Թրակիայում և Ստամբուլի շրջանում՝ 100 հազար, Փոքր Ասիայում՝ 50 հազար և Միջագետքի ճակատում՝ 50 հազար մարդ [1]։

Օսմանյան բանակի ու նավատորմի արագ վարժեցման, զորահավաքի գործին օժանդակելու և տեխնիկական հատուկ մասերն ուժեղացնելու նպատակով 1914 թվականի օգոստոս-հոկտեմբեր ամիսների ընթացքում Գերմանիայից Թուրքիա փոխադրվեցին շուրջ 5 հազար գերմանական սպաներ, զինվորներ ու նավաստիներ։

Թուրքական բանակը հագեցվում էր գերմանական զենքով, որը մեծ չափերով գալիս էր Գերմանիայից։ Կայզերի կառավարությունն այդ նպատակի համար Թուրքիային հատուկ վարկ էր տրամադրել [2]։

Սակայն ստացված սպառազինությունը միանգամայն անբավարար էր բանակի շարքերը զորակոչված մոտ 1 միլիոն զինվորներին ապահովելու համար։ Խիստ զգացվում էր նաև պարենամթերքի ու հանդերձանքի պաշարների բացակայությունը։ Այդ առանձնապես նկատելի էր 3-րդ բանակի տեղաբաշխման շրջանում, ուր ձմռանը, լեռնային կլիմայի պայմաններում, զինվորները նույնիսկ տաք հագուստ չունեին։

Թուրքական բանակի ամենաթույլ տեղը նրա հրամանատարական կազմն էր։ Ինչպես վկայում է հայտնի ռազմական պատմաբան և կովկասյան ռազմաճակատի գործողությունների մասնակից Կորսունը, «Թուրքական բանակի ցածրաստիճան հրամանատարական կազմը 75 տոկոսով սակավ գրագետ էր, միջին կազմը 40 տոկոսով բաղկացած էր ենթասպաներից, որոնք հատուկ զինվորական կրթություն չունեին։ Ավագ և բարձր հրամանատարական կազմի սպաները, ունենալով ընդհանուր զինվորական կրթություն, շատ

[1] ЦГВИА, ф. 2000, оп. I, д. 3891, л. 4. Այլ տվյալներով, Թուրքական բանակը պատերազմի սկզբին բաղկացած էր մեկ միլիոն զինվորից, սակայն դրանցից միայն 600 հազարն էին ներկայացնում լավ կազմակերպված զորք (ЦГВИА, ф. 2000/с, оп. 1, д. 824, л. 192)։ Որոշ դիտորդների կարծիքով, Թուրքական բանակի ընդհանուր թիվը հասնում էր մեկ և կես միլիոն մարդու՝ ներառյալ 200 հազար պահեստի զորքերը, 300 հազար մարդ բանվորական գումարտակներում և 100 հազար անկանոն զորք, որը կազմված էր բեդուիններից ու քրդերից (ЦГВИА, ф. 2000/с, оп. 1, д. 804, л. 369; նույն տեղում ф. 2000, оп. 1, д. 3885, л. 54).

[2] ЦГВИА, ф. 2000, оп. I, д. 2003, л. 54—59.

թույլ էին նախապատրաստված ժամանակակից պատերազմում զորքերը ղեկավարելու, այն էլ՝ լեռնային պայմաններում» [1]։

Էնվերի անցնելը ռազմական մինիստրի պաշտոնին (1914 թ. փետրվարին), հենց սկզբից նշանավորվեց գեներալների ու շտաբային սպաների զանգվածային վտարումով՝ սահմանված տարիքին հասնելու պատրվակով։ Իրականում, սակայն, Էնվերին պարզապես հարկավոր էր ազատվել իրեն համար անհաճո սպաներից, որոնց ներկայությունը մինիստրությունում կամ բանակի բարձրաստիճան շրջաններում կարող էր վնասել նրա անձնական հեղինակությանը։ Հենց այն ժամանակ էլ Էնվերը վերացրեց բարձրագույն ռազմական խորհուրդը, որով փաստորեն ռազմական մինիստրը զերծ էր մնում ամեն տեսակի վերահսկողությունից։

1914 թվականի առաջին ամիսների ընթացքում բանակից վտարվեցին մոտ 1500 գեներալներ ու սպաներ։ Էնվերը նրանց փոխարինում էր ոչ թե ռազմական գործում պատրաստություն ունեցող, այլ միայն երիտթուրքական կուսակցությանը նվիրված մարդկանցով։ Նույնպիսի զտում երիտթուրքերի կողմից անցկացվեց նաև նավատորմում։ Այդ ձևով երիտթուրքական կլիկը ազատվում էր բանակում իրեն անհաճո տարրերից։ Երիտթուրքական կոմիտեի նախագահ Միդհաթ Շուքրին Կոմիտեի նիստերից մեկում ուղղակի հայտարարեց. «Ռազմական մինիստրի պորտֆելն ընդունելու ժամանակ Էնվեր-փաշայի առաջին հոգսն էր բանակը մաքրել, այսինքն հեռացնել այն սպաներին, որոնք զբաղվում էին քաղաքականությամբ և որոնց նվիրվածությունը երիտթուրքական կուսակցությանը նա կարող էր կասկածի տակ վերցնել» [2]։

Բանակի վերակազմությունն անցկացնելով, երիտթուրքական կոմիտեն ղեկավարվում էր երկրի զինված ուժերը ամբողջովին իր կամքին ենթարկելու ձգտումով։ Դրան հասնելու համար Էնվերը և ծովային մինիստր Ջեմալը, առանց նախապես մտածելու, բանակից ու նավատորմից վտարում էին փորձված սպաների, հատկապես բարձր հրամանատարական կազմից։ «Միասնություն և առաջադիմություն» կուսակցության մեջ ընդունվել չցանկացող սպաների հետապնդումը,— նշում էր թերթերից մեկը,— կիրառվում էր նաև բանակի հրամանատարական կազմի բարձրաստիճան սպաների նկատմամբ։ Ընդունակ և տաղանդավոր գեներալներն արձակվում էին կամ փոխադրվում ցածր պաշտոնների» [3]։

Կովկասյան ճակատում խոշոր ուժեր կենտրոնացնելով, Թուր-

[1] Комбриг Н. Корсун, Сарыкамышская операция, 1937, стр. 11.

[2] ЦГАВМФ, ф. 418, оп. I, д. 4288, л. 20—21.

[3] «Новое время», 5 (18) I, 1914, № 13584.

քական հրամանատարությունը հույս ուներ, որ թուրքերի թվական գերակշռության շնորհիվ հնարավոր կլինի ռուսական զորքերին ետ շպրտել նրանց գրաված դիրքերից և թուրքական բանակի համար ճանապարհ հարթել դեպի Անդրկովկասի խորքը։

Նախապատրաստվելով Անդրկովկաս ներխուժմանը, թուրքական հրամանատարությունը հույս ուներ ստանալու տեղի մահմեդական ազգաբնակչության օգնությունը, որը, նրա կարծիքով, մեծ դժվարություններ էր հարուցելու ռուսական զորքերին։ Սակայն երիտթուրքերի այդ հաշիվները սխալ դուրս եկան։

Էնվերը՝ Անդրկովկասի դեմ արշավանք կազմակերպելու գլխավոր նախաձեռնողն ու ոգեշնչողը, գտնում էր, որ այդ շրջանից ռուսական զորքերի դուրս վռնդումը անհրաժեշտ նախապայման կհանդիսանա Իրանին հակառուսական խմբավորման կողմը գրավելու և Ռուսաստանի մահմեդական ազգաբնակչության լայն շարժման վերելքի գործում։ Էնվերի կարծիքով, առանց Օսմանյան կայսրության սահմաններից դուրս գտնվող մահմեդականների այդ աջակցության, անհնարին կլիներ իրագործել թուրքերի «ազգային իղձերը»։ «Ուստի,— ասում էր թուրքական վիցե-գեներալիսսիմուսը,— պետք է փորձել Ռուսաստանին դուրս շպրտել Կովկասից։ 300—350-հազարանոց բանակը կարող է ռուսներին ճզմել այդ ճակատում»։ Թուրքական հրամանատարությունը ենթադրում էր, որ ռուսական զորքերին Կովկասյան լեռնաշղթայից այն կողմը շպրտելով կարելի կլինի ամրացնել լեռնանցքերը և դրանք դարձնել անանցանելի մինչև 1915 թվականի գարնանը, երբ ռուսները կկարողանան Հյուսիսային Կովկասում կենտրոնացնել խոշոր ուժեր»[1]։ Սակայն պատերազմի առաջին խսկ ամիսներին արկածախնդրական այդ ծրագրերը դեն շպրտվեցին կովկասյան ռազմաճակատում կռվող ռուսական զորքերի կողմից։

Ռուսական զորքերի հրամանատարությանը քաջ հայտնի էր Ռուսաստանին սահմանակից շրջաններում թուրքական խոշոր ուժերի կենտրոնացման մասին։ Ուստի նա համապատասխան միջոցներ ձեռնարկեց։ 1914 թվականի օգոստոսին կազմվեց կովկասյան բանակը՝ երկրամասի փոխարքա գեներալ Վորոնցով-Դաշկովի հրամանատարությամբ։ Այդ բանակի մեջ էին մտնում կովկասյան 1-ին կորպուսը, թուրքեստանյան 2-րդ կորպուսը, 60-րդ դիվիզիան, 2-րդ և 3-րդ կուբանյան բրիգադները, 2-րդ և 4-րդ կովկասյան կազակային դիվիզիաները, կազակային 2 գունդ, սակրավոր 4 գումարտակ և սահմանապահ 4 գումարտակ։ Նոյեմբերի սկզբին, կովկասյան բանակի ընդհանուր թիվը հասնում էր 153 գումարտակի, 175 հարյուրակի, 12 ինժեներական վաշտի, 350 դաշտային թնդանոթի և բերդային հրետանու 5 գումարտակի[1]։ Բացի դրանից, կովկասյան բանակին աջակցություն էին ցույց տալիս հայկական և վրացական կամավորների ջոկատները։ Սազոնովի ասելով, 1914 թվականի հոկտեմբերի վերջին Կովկասում կար 200 հազար զինվոր[2]։

Ինչպես տեսնում ենք, թվական կազմով կովկասյան բանակը զգալիորեն զիջում էր թուրքականին, բայց դրա փոխարեն գերազանցում էր հակառակորդին իր հրամանատարական կազմի պատրաստականության աստիճանով՝ բոլոր օղակներում, զորքերի մարտական ուսուցումով, ինչպես և հրետանիով նրանց հագեցված լինելով, կապի միջոցներով և բժշկական սպասարկման ու մատակարարման լավ դրվածքով։

Ինչ վերաբերում է Թուրքիայի դեմ մղվող պատերազմում «ցարիզմի հետապնդած պլաններին, որի մասին խոսվեց վերևում, Լենինը գրում էր, որ Ռուսաստանը կռվում է... Հայաստանի... և Կոստանդնուպոլսի համար»[3]։

1915 թվականին Նիկոլայ II-ին ներկայացված գլխավոր շտաբի բացատրական զեկույցում՝ «Ռուսաստանի սահմանները 1914—1915 թթ. պատերազմից հետո (նկատառումներ Ռուսաստանի պահանջների վերաբերյալ հաշտություն կնքելու դեպքում)», ընդգծվում էր, որ «չնայած Թուրքիայի դեմ վարած 11 պատերազմներին, չնայած այն բանին, որ թուրքերը հատկապես 1878 թվականին լիովին ջախջախվեցին, Ռուսաստանը չհասավ իր կենսական շահերի բավարարմանը (ընդգծված է փաստաթղթում—Ե. Ս.). Նեղուցները մնացին Ռուսաստանի տիրապետությունից դուրս, Կովկասի հետ սահմանը անապահով մնաց, Սև ծովը չվերածվեց ռուսական ներքին ծովի... Դրանց պատճառները մյուս տերությունների և, հատկապես, Անգլիայի ու Ֆրանսիայի մրցակցությունն էր, որոնք վախենում էին Ռուսաստանի տնտեսական ու քաղաքական ուժեղացումից։ Ուստի և այդ տերությունները խափանում էին Ռուսաստանի ելքը Սև ծովից և պահպանում Թուրքիայի գոյությունը»[4]։

---

1 ЦГВИА, ф. 2000, оп. I, д. 3891, л. 14–22. Այենն ու Մուրատովը սխալվում են պնդելով, թե իբր թուրքական հրամանատարությունը պատերազմի նախօրյակին ռազմական գործողությունների ծավալման պլան չուներ։ Տե՛ս Allen and Muratoff, p. 222։

1 Генерал-майор Корсун Н. Г., Первая мировая война на Кавказском фронте, М., 1946, стр. 22.

2 Տե՛ս Адамов, «Константинополь и проливы», т. I, док. № XVII.

3 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 23, էջ 159։

4 ЦГИАМ, ф. 543, оп I, д. 751, л. 173—174.

Խոսելով այնուհետև Ռուսաստանի պլանների մասին Բալկաններում, գլխավոր շտաբն անհրաժեշտ էր գտնում այնպիսի դիրք գրավել, որ Բուլղարիային, Սերբիային, Ռումինիային ու Հունաստանին ձեռնտու լիներ մտերմանալու Ռուսաստանի հետ և, միաժամանակ, վտանգավոր՝ նրա թշնամիների կողմն անցնելը։

«Այդ դրությանը կարելի է հասնել միայն այն դեպքում,— ասվում էր զեկույցում,— եթե Ռուսաստանն իր տիրապետությունների մի մասով ինքը դառնա բալկանյան տերություն։ Կոստանդնուպոլսի ու նեղուցների, ինչպես և նրանց եվրոպական ու ասիական ափերին հարող տերիտորիաների գրավումն էլ հենց կհասցնի XX դարի Ռուսաստանի համար կարևոր այդ նպատակին։ Մարմարի ծովը կդառնա ներքին ռուսական ծով...» [1]։

Այսպիսով, ակներև է, որ եթե Օսմանյան կայսրությունը ձգտում էր 1914—1918 թվականների պատերազմում հասնել Ռուսաստանի նկատմամբ իր նվաճողական պլանների իրականացմանը, ապա ցարական ինքնակալությունն էլ այդ պատերազմում իր ագրեսիվ նպատակներն էր հետապնդում Թուրքիայի նկատմամբ։ Սակայն Ռուսաստանը շահագրգռված չէր այն բանում, որպեսզի Օսմանյան կայսրությունը հարի գերմանա-ավստրիական խմբավորմանը։ Ցարական կառավարությունն ամեն կերպ աշխատում էր Թուրքիային գրավել Անտանտի կողմը, իսկ այդպիսի փորձերի ձախողման դեպքում՝ ամեն ինչ անել, որպեսզի թուրքերը չեզոք մնան։ Ռուսաստանի նման դիրքը բացատրվում էր ռազմա-ստրատեգիական նկատառումներով.

Ռուսաստանին ձեռնտու չէր Արևելյան Եվրոպայում Գերմանիայի դեմ ուղղված իր հիմնական ուժերը մասնատել։ Օսմանյան կայսրության մասնակցությունը պատերազմին գերմանական խմբավորման կողմում Ռուսաստանին կստիպեր պատերազմ մղել միաժամանակ կովկասյան թատերաբեմում, որը, ինչ խոսք, չէր կարող չանդրադառնալ նրա համար հիմնական ճակատի վրա։ Ահա թե ինչու ցարական ինքնակալությունը, չնայած Թուրքիայի նկատմամբ ունեցած իր նվաճողական պլանների առկայությանը, տվյալ մոմենտին չէր ցանկանում պատերազմել նրա հետ։ Իսկ Օսմանյան կայսրությունը, որը վաղուց էր պատրաստվում պատերազմի, ելնելով իր նվաճողական, պանթուրքական պլաններից, որոշել էր անսպասելիորեն հարձակման անցնել կովկասյան ճակատում՝ օգտվելով այն բանից, որ ռուսական բանակի հիմնական ուժերը

1 ЦГИАМ, ф, 543, оп. I, д. 751, л. 210—211.

զբաղված էին ռազմական գործողությունների եվրոպական թատերաբեմում [1]։

Թուրքական գլխավոր շտաբը տեղյակ էր, որ ռուսական զորքերի հրամանատարությունը հիմնական ուշադրությունը դարձնում էր արևմտյան ճակատին՝ դիտելով այն որպես ամենակարևորը Ռուսաստանի համար, քանի որ հենց այստեղ էր վճռվելու իր ամենավտանգավոր ու ամենաուժեղ հակառակորդի՝ կայսերական Գերմանիայի հետ մղվող գոտեմարտի ելքը։ Ուստի և այստեղ էին կենտրոնացված ռուսական բանակի հիմնական ուժերը, այդ թվում և կովկասյան ռազմական օկրուգի սահմաններում տեղաբաշխված զորքերի զգալի մասը։ Դրանով է բացատրվում, որ զորքերի ընդհանուր թվով ռուսական կովկասյան բանակը շատ էր զիջում թուրքական ուժերին։

Ռուսական կովկասյան բանակի զորքերը բաժանված էին 5 խմբի։

Առաջին խումբը բաղկացած էր երեք ջոկատից՝ Սարիղամիշի, Օլթիի և Կաղզբվանի։ Երկրորդ խումբը բաժանված էր Երևանյան, Մակուի և Ադրբեջանի ջոկատների։ Երրորդ խումբը, որը կազմված էր Ռիոնի և Ճորոխի ջոկատներից և Միխայլովյան (Բաթումի) ամրոցի կայազորից, պետք է պաշտպաներ ծովափը, ամրոցը և, միաժամանակ, բանակի աջ թևը։ Չորքերի չորրորդ խումբը, որը բաղկացած էր երեք ջոկատից՝ սահմանամերձ (ռուս-իրանական սահմանի վրա), Արդեբիլի և Ղազվինի (երկուսն էր Իրանում), վերահսկում էր իրանական Ադրբեջանը և պաշտպանում Էնզելի-Թեհրան խճուղին։ Հինգերորդ խումբն իրենից ներկայացնում էր բանակային ռեզերվ՝ Թիֆլիսի շրջանում։ Բացի դրանից, զորքերի մի մասն առանձնացված էր բանակի թիկունքը պաշտպանելու համար [1]։

Կովկասյան բանակի հրամանատարությունը իր զորքերն առանձին ջոկատներով ցրել էր ճակատի 720 կիլոմետր տարածության վրա՝ Սև ծովից մինչև ռուս-թուրքական և իրանական սահմանի կցվանքը, բավականաչափ ուժեր չկենտրոնացնելով գլխավոր՝ Կարինի ուղղության վրա այն դեպքում, երբ երկրորդական նշանակություն ունեցող երևանյան-ադրբեջանական ուղղության վրա նա ավելի շատ զորք էր կենտրոնացրել։

«Այն դեպքում, երբ թուրքերը հակազորաշարժի նպատակով կա-

1 Պատերազմի սկզբից ռուսական հրամանատարությունը Կովկասից պատերազմի եվրոպական թատերաբեմ փոխադրեց բանակային 2 կորպուս և կազակային 8 դիվիզիա (ընդամենը 71 գումարտակ, 152½ հարյուրակ և 35 մարտկոց)։ (Корсун Н. Г., Первая мировая война на Кавказском фронте, стр. 20).

2 Корсун Н. Г., Первая мировая война на Кавказском фронте, стр. 22.

ին-Քյոփրյու-քյոյ գոտում կարողացել էին կենտրոնացնել իրենց ուժերի կեսից ավելին, ռուսները ի վիճակի էին նրանց հակադրելու իրենց մարտունակ զորքի միայն 33 տոկոսը։ Այսպիսով, թուրքական զորքերի ստրատեգիական կենտրոնացումն առաջին բախումներին նախապատրաստվելու տեսակետից արված էր ավելի նպատակասլաց կերպով, քան ռուսների մոտ։ Դա անխուսափելիորեն պետք է անդրադառնար առաջին հանդիպման ելքի վրա» [1]։

Նոյեմբերի 2-ին թուրքական զորքերը, ղեկավարվելով Էնվեր-փաշայի պլանով [2], *անցան հարձակման և խոշոր ուժերով ներխուժեցին Բաթումի մարզը։ Աջարիայի վրա թուրքական հրամանատարությունը պատերազմի հենց սկզբից բացառիկ ուշադրություն էր դարձնում։ Այնտեղ ուղարկված թուրքական լրտեսներն ու էմիսարները ջանում էին ազդել վրացի-մահմեդականների կրոնական զգացմունքների վրա՝ նրանց մեջ Թուրքիայի նկատմամբ համակրանք առաջ բերելու նպատակով։ Նրանք բնակչությանը զենք էին բաժանում և փորձում էին նրան հրահրել զինված ելույթների՝ ռուսական զորքերի թիկունքում։*

Հակառակորդի գերակշռող ուժերի ճնշման տակ ռուսական զորքերը ստիպված էին նահանջել և թուրքերը նոյեմբերի սկզբին գրավեցին Արդվինն ու Արդանուշը։ Ռուսական զորքերը նահանջեցին դեպի Աջարիս-ծղալի գետը՝ Բաթումից ոչ հեռու։ Թուրքական զորքերի հետագա առաջխաղացման հետևանքով Աջարիայի վարչական շրջանները, նրա ներքին և վերին հատվածները զրկվեցին խճուղու միջոցով Բաթումի հետ հաղորդակցությունից։ Շարունակելով հարձակումը, թուրքական զորքերը ձգտում էին Կարսի մոտ դուրս գալ կովկասյան բանակի գլխավոր ուժերի թիկունքը՝ Սարիղամիշի շրջանում։

Մինչդեռ, ռուսական զորքերի Սարիղամիշի ջոկատը, գեներալ Բերխմանի հրամանատարությամբ, կտրվելով իր հիմնական բազայից, մտավ Արևմտյան Հայաստանի տերիտորիան և հասավ մինչև Քյոփրյու-քյոյ (Կարինից 35 կմ. հեռավորության վրա)։ Նոյեմբերի 6-ին ռուսական զորքերը հանդիպեցին թուրքական 3-րդ բանակին՝ Հասան Իզեթ-փաշայի հրամանատարությամբ և համառ

---

1 Корсун Н. Г., Первая мировая война на Кавказском фронте стр. 24.

2 *Էնվերի պլանով, 3-րդ բանակի հիմնական ուժերը պետք է ճեղքեին ռուսական կովկասյան բանակի Սարիղամիշի խմբի աջ թևը և շրջանցող խոր զորաշարժի միջոցով դուրս գային նրա թիկունքը՝ Կարսից արևելք՝ հիշյալ խումբն ամբողջովին շրջապատելու համար։*

մարտերից հետո նոյեմբերի 7-ին գրավեցին Քյոփրյու-քյոյը։ Այդ կետը պաշտպանող թուրքական երկու դիվիզիաները փախուստի մատնվեցին [1]։

Քյոփրյու-քյոյի գրավումը, որը կատարվեց Բերխմանի նախաձեռնությամբ, չէր մտնում կովկասյան բանակի հրամանատարության պլանի մեջ, որովհետև ռուսական ուժերը նախապատրաստված չէին հետագա առաջխաղացման՝ Կարինի ուղղությամբ։ Օգտվելով այն բանից, որ Սարիղամիշի ջոկատը կտրվել է իր բազայից, թուրքական հրամանատարությունը Քյոփրյու-քյոյի շրջանում կենտրոնացրեց 9-րդ և 11-րդ կորպուսների խոշոր ուժեր և ձգտում էր ռուսական զորքերի աջ թևը շրջանցելով, օղակել նրանց։ Վերջիններս, կռահելով հակառակորդի այդ մտադրությունը, նոյեմբերի, 16-ին թողեցին Քյոփրյու-քյոյը և սկսեցին նահանջել դեպի սահմանը։ Հետապնդելով Սարիղամիշի ջոկատին, թուրքական զորքերը փորձում էին մտնել նրա թիկունքը՝ հետագա նահանջի ճանապարհը կտրելու համար։

Ռուսական զորքերի կողմից Քյոփրյու-քյոյի թողնելը երիտթուրքական շրջաններում ու մամուլում մեկնաբանվեց, որպես Ռուսաստանի դեմ մոտալուտ հաղթանակի նախագուշակ։ Այսպես, Ստամբուլում լույս տեսնող «Թանին» թերթը նոյեմբերի 27-ին իր էջերում զետեղած «Վերջապես, հաղթողները» վերնագրով հոդվածում գրում էր. «Թուրքական պանծալի զորքերի հաղթանակը... ոչ միայն քաջության, այլև արվեստի բարձրագույն մի նմուշ է... Մենք գիտենք, որ տանելով խոշոր հաղթանակ՝ առաջին լուրջ հաղթանակը քառասուն տարի հետո, մեր խիզախ զորքերը դեն շպրտեցին ռուսական բանակը և իրենց փայլուն հաջողությամբ սրբեցին նախորդ պարտությունների ամոթանքը։ Արարիչը մեզ երջանկություն է պարգևել՝ այդ մեծ հաջողությունը տեսնելու համար և մենք հավատում ենք, որ կապրենք մինչև այն օրը, երբ թշնամին վերջնականապես կոչնչացվի» [2]։

Սակայն այդ ցնծությունը, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, միանգամայն անժամանակ էր։

Էնվերին թվում էր, որ մոտեցել է կովկասյան բանակն իր հիմնական բազայում՝ Սարիղամիշ-Կարսում, լրիվ ոչնչացնելու իր պլանի իրագործման ժամանակը, որից հետո Անդրկովկասի նվաճումը թուրքերի համար առանձին դժվարություն չէր ներկայացնի։ Այդ պատճառով էլ Էնվերը 9-րդ, 10-րդ և 11-րդ կորպուսների հիմ-

---

1 Jollivet G. Six mois de Guerre, août 1914—février 1915, Paris, p. 155.

2 ЦГАВМФ, ф. 418, оп. I, д. 424, л. 175.

նական ուժերը կենտրոնացրեց Կարին-Սարիղամիշ ուղղության վրա։ 3-րդ բանակի հրամանատար Հասան Իզեթ-փաշան, սակայն, ավելի զգաստ էր գնահատում իր ուժերի մարտունակությունը։ Նա անհնարին էր համարում դաժան ձմռան և ճանապարհների բացակայության, ինչպես նաև բանակի անպատրաստ լինելու և ձմռան հանդերձանքի ու պարենի պակասության պայմաններում սկսել այն խոշոր օպերացիան, որ մտադրվել էր իրականացնել Էնվեր-փաշան։ Այն ժամանակ վերջինս անմիջապես հրամանատարությունից հեռացրեց Հասան Իզեթ-փաշային և նոյեմբերի վերջին գալով ռազմաճակատ, անձամբ գլխավորեց 3-րդ բանակը։ Բանակի շտաբի պետ նշանակվեց Լիման ֆոն Սանդերսի ռազմական միսիայի անդամ գեներալ-լեյտենանտ Բրոնսարտ ֆոն Շելենդորֆը, իսկ օպերատիվ մասի պետ՝ նույն միսիայի անդամ մայոր Ֆելդմանը։

1914 թվականի դեկտեմբերի 22-ից մինչև 1915 թվականի հունվարի 18-ը թուրքական 3-րդ բանակի և Կովկասյան բանակի միջև շարունակվող համառ մարտերը առաջին համաշխարհային պատերազմի պատմության մեջ հայտնի են որպես Սարիղամիշի օպերացիա, որը վճռական ազդեցություն ունեցավ ռազմական գործողությունների հետագա ընթացքի վրա՝ ռուս-թուրքական ճակատում։

Սարիղամիշի օպերացիային մասնակցող թուրքական բանակը հաշվում էր 90 հազար մարդ, մինչդեռ կովկասյան բանակի ուժերը 64 հազարից չէին գերազանցում [1]։ Հրաման տալով հարձակում սկսել Սարիղամիշի վրա, Էնվերն ամբողջ հույսը դրել էր թուրքական զորքերի թվական գերակշռության վրա։ Գերմանական գեներալները չառարկեցին այդ պլանի իրագործմանը, թեև Լիման ֆոն Սանդերսը Էնվերին հայտնեց իր կասկածը նրա ձեռնարկման հաջողության վերաբերյալ [2]։ Բայց գերմանացիների համար այնքան կարևոր չէր թուրքերի հաղթանակ տանելը համաշխարհային պատերազմի այս երկրորդական ճակատում, որքան կարևոր էր թուրքական հարձակման փաստն ինքնին, որը, նրանց հաշիվներով, պետք է ռուսներին ստիպեր Կովկաս տեղափոխել Արևմտյան ճակատում գտնվող իրենց ուժերի մի մասը։ Ուստի և Վանգենհայմը, և գերմանական կառավարությունը չէին առարկում թուրքական վիցե-գեներալիսսիմուսի պանթուրանական նվաճողական ձեռնարկումների դեմ [3]։

1 Կորսունը գտնում է, որ այդ օպերացիայի ժամանակ թուրքերը գրեթե մեկ և կես անգամ գերազանցում էին հետևակում և ունեին որոշ գերակշռություն հրետանիում։ Տե՛ս Н. Г. Корсун, Сарыкамышская операция, стр. 29.

2 Liman von Sanders, S. 52.

3 Pomiankowski, S. 98.

Այդ հարձակման հիմնական նպատակը, մինչև Բրոնսարդ ֆոն Շելենդորֆի գալը կովկասյան ճակատ (որը 3-րդ բանակի շտաբի պետի պաշտոնն էր գրավում),— ինչպես գրում էր գերմանական փոխ-գնդապետ Գյուզեն,— դա անակնկալ հարձակման միջոցով Սարիղամիշի գրավումն էր։ Այնուհետև թուրքական զորքերը պետք է Կարսին հարվածեին ճակատից (Սարիղամիշի կողմից) և թիկունքից՝ Օլթիի ուղղությամբ առաջխաղացող զորքերի ուժերով։ Էնվերը ենթադրում էր, որ ռուսական զորքերը, առանց մարտն ընդունելու, կնահանջեն։ «Այդ կարծիքը երևակայական էր,— գրում է Գյուզեն,— և, ինչպես ավելի ուշ պարզվեց, ռուսները չէին էլ մտածում այդպիսի նահանջի մասին»։ Այնուհետև Գյուզեն նշում է, որ թուրքական 3-րդ բանակը ի վիճակի չէր հաջող կերպով անցկացնելու այնպիսի մասշտաբի մի օպերացիա, որը մտադրվել էր իրականացնել Էնվերը [1]։ Նկարագրվող իրադարձությունների անմիջական մասնակցի այս վկայությունը մի ավելորդ անգամ համոզում է մեզ, որ իր զավթողական պլաններով արբեցած, ռազմական մինիստրը՝ Թուրքիայի այն ժամանակվա դիկտատորը, հաշվի չէր առնում իր սեփական զորքերի վիճակը և, որ գլխավորն է, թերագնահատում էր հակառակորդի ուժերը։

Հարձակման նախօրյակին Էնվերը շրջագայում էր ճակատում, ճգնելով ոգեշնչել սոված ու ցրտահարված զինվորներին։ «Զինվորներ,— գրում էր Էնվերը նրանց ուղղված դիմումի մեջ,— ես ձեզ բոլորին այցելեցի։ Տեսա, որ դուք ոտաբոբիկ եք, իսկ ձեր ուսերին շինելներ չկան։ Սակայն մեր դիմաց կանգնած թշնամին վախենում է մեզնից։ Շուտով դուք կսկսեք հարձակվել, կմտնեք Կովկաս։ Այնտեղ դուք կգտնեք ամեն տեսակի մթերքներ և հարստություն։ Մահմեդական ողջ աշխարհը հույսով է նայում ձեր վերջին ճիգերին» [2]։

Դեկտեմբերի 22-ին թուրքական զորքերը սկսեցին հարձակումը։ Մեր խնդիրը չէ հանգամանորեն նկարագրել Սարիղամիշի ամբողջ օպերացիան։ Նշենք միայն ամենագլխավորը։ Երկու կողմերն էլ համառորեն կռվում էին դաժան ձմռան և լեռնային ռելեֆի ծանր պայմաններում։ 10-րդ կորպուսի զորքերը, որոնք մեծ չափով գերազանցում էին նրանց դեմ կանգնած Օլթիի ռուսական ջոկատին (հետևակը՝ ավելի քան վեց անգամ, հրետանին՝ երեք անգամ), առաջ էին շարժվում Օլթիի ուղղությամբ։ Օլթիի ջոկատի հրամանատար գեներալ Իստոմինը, զգալով շրջապատման վտանգը, նահան-

1 Güze. Büyük harpte Kafkas cephesindeki muharebeler, „Askeri mecmuan Tarih kısmı". 1. I. 1931, № 20, s. 40.

2 Տե՛ս Корсун Н. Г., Сарыкамышская операция, стр. 33.

չի հրաման տվեց։ Ջոկատը նահանջում էր, համառ դիմադրություն ցույց տալով հակառակորդին։ Ռուսական զորքերի պլանաչափ նահանջը ապահովեց Օլթիի (մասնավորապես հայ ազգաբնակչության) ժամանակին էվակուացիան, ինչպես և զինամթերքի, հանդերձանքի, պարենի և թանկարժեք իրերի տեղափոխումը։ Թուրքական զորքերը դեկտեմբերի 23-ին մտան Օլթի։ Չնայած այդ հաջողությանը, թուրքական զորքերը չկարողացան իրականացնել էնվերի կողմից նրանց առաջ դրած խնդիրը՝ Օլթիի ջոկատի շրջապատումը։

Հմտորեն կազմակերպելով իր ջոկատի նահանջը, Իստոմինը հասկանում էր, որ այդ նահանջը մերկացնում է ռուսական զորքերի Սարիղամիշի խմբի աջ թևը՝ նրան կանգնեցնելով շրջապատման վտանգի առաջ։ Այդ մասին նա բազմիցս հաղորդել էր կովկասյան բանակի շտաբին։ Սակայն Սարիղամիշի խմբի հրամանատար գեներալ Բերխմանը այդ բանին պատշաճ նշանակություն չէր տալիս[1]։ Ի վերջո Բերխմանը հեռացվեց զորքերի ղեկավարությունից և նրա տեղը նշանակվեց գլխավոր հրամանատարի օգնական գեներալ Մրշլևսկին։ Վերջինս վերախմբավորեց զորքերը, ուժեղացրեց պաշտպանական գծերը, և դրանով իսկ թշնամուն հակահարված տալու հնարավորություն ստեղծեց։

Դեկտեմբերի 25-ին էնվերը 9-րդ կորպուսի զորքերին հրաման տվեց հարձակվել Սարիղամիշի վրա։

Զորքերն առաջ էին շարժվում լեռնային կածաններով՝ մինչև ծնկները թաղված ձյան մեջ։ Այդ ժամանակ ճակատ էկան օժանդակ ուժեր՝ երկու հետևակային գնդեր։ Բացի դրանից, երիտթուրքական կուսակցության կողմնակիցներից կազմակերպվեցին պարտիզանական ջոկատներ և ճակատային գծի միջով ուղարկվեցին ռուսական բանակի թիկունքը՝ կապի գծերը փչացնելու, Կարս-Սարիղամիշ երկաթուղագիծը շարքից հանելու և ապստամբություն բարձրացնելու համար[2]։

Նոր ժամանած գնդերը փոխադրվեցին Օլթիի ուղղության վրա և Իստոմինի ջոկատը հակառակորդի գերակշռող ուժերի ճնշման տակ ստիպված էր նահանջել դեպի Մերդենեկ։

Մինչդեռ, էնվերը ուժեղ բռունցք ստեղծեց՝ Սարիղամիշը գրավելու համար։ Զգալով սպառնացող վտանգը, Մրշլևսկին ուժեղացրեց Սարիղամիշի պաշտպանությունը՝ նոր զորամասեր փոխադրելով այդ շրջանը։

Դեկտեմբերի 26-ի երեկոյան, երբ սկսվեց Սարիղամիշի ճա-

2 Allen und Muratoff, p. 255.

2 Корсун Н., Сарыкамышская операция, стр. 56.

կատամարտը, ռուսական ուժերը հաշվում էին 7 3/4 գումարտակ, 7 հարյուրակ՝ 6 թնդանոթով։ Թուրքական զորքերը բաղկացած էին 18 գումարտակից[1]։

Էնվերը հավատացած էր, որ Սարիղամիշը պաշտպանող ռուսական զորքերը հրետանի չունեն, այդ պատճառով էլ հույս ուներ հեշտությամբ հաղթանակ տանել։ Սակայն երբ դեկտեմբերի 26-ին 9-րդ կորպուսի զորքերը սկսեցին հարձակումը Սարիղամիշի վրա, նրանց դիմավորեցին հրետանային ուժեղ կրակով։ Դա էնվերի համար միանգամայն անսպասելի էր։ Մեծ զոհերի գնով թուրքերը դեկտեմբերի 26-ի կեսօրին դրավեցին Սարիղամիշի մոտ գտնվող բարձունքը, սակայն քաղաք մտնել նրանց չհաջողվեց։ Տեսնելով իր զորքերի ծանր վիճակը, 9-րդ կորպուսի հրամանատար Իզեթ-փաշան որոշեց սպասել 28-րդ դիվիզիայի գալուն, որը մոտեցավ կորպուսի զորքերին դեկտեմբերի 28-ին։

Հարձակման ընթացքում թուրքական զորքերը հսկայական կորուստներ էին կրում։

Մանրամասն նկարագրելով ռազմական գործողությունները, Գյուզեն նշում է, որ մթերքների բացակայության պատճառով զինվորներն ուտում էին անձեռնմխելի պաշարները։ Ցունենալով ձմեռվա հագուստ, թուրքական զինվորները տառապում էին սառնամանիքից. ցուրտը հասնում էր 36 աստիճանի։ Շատ զինվորներ, այլևս անկարող լինելով դիմանալ ցրտին ու զրկանքներին, փախչում էին ճակատից։ Դասալիքների թիվը օրեցօր ավելանում էր։ Գյուզեն վկայում է, որ զորքերի մեջ լրիվ բացակայում էր հարձակողական թափը։ Նա գրում է, որ երբ ինքը փորձեց հարձակման տանել 17-րդ դիվիզիան, դիվիզիայի զինվորներից մեկը վիրավորեց նրան ձեռքից։ «Ավելի լավ չէր զինվորների տրամադրությունը 29-րդ դիվիզիայի զորամասերում,— շարունակում է Գյուզեն։ Թեև այդ դիվիզիան գտնվում էր էնվերի անմիջական ազդեցության տակ, նա հրաժարվում էր առաջ շարժվել։ Թուրքերի մոտ այլևս հույս չէր մնացել, թե իրենց հետագա հարձակումը կարող է հաջողություն ունենալ»[2]։

Ի վերջո 9-րդ կորպուսի 25 հազար զինվորներից Սարիղամիշի վրա շարժվելու մեկ շաբաթվա ընթացքում (մինչև դեկտեմբերի 26-ը) մնաց 10 հազար մարդ. գրեթե ողջ հրետանին ճանապարհին ցաքուցրիվ էր եղել[3]։

1 Корсун Н., Сарыкамышская операция, стр. 63

2 Güze, s. 41—45.

3 Allen and Muratoff, p. 267.

Սարիղամիշի տակ տեղի ունեցած արյունահեղ ճակատամարտից հետո թուրքական զորքերի վիճակի մասին թուրքական 9-րդ կորպուսի նախկին հրամանատարը իր հուշերում գրում էր հետևյալը. «Մարդիկ թրջված, թեթև կոշիկներով, դեկտեմբերի 25-ին հաստ ձյան միջով անցնելով մեծ տարածություն, ցրվեցին գիշերելու՝ Մալազգիրտի հարթավայրի շրջանում ռուսական զորասյան հետ մարտի բռնվելուց հետո. դրանցից շատերը գիշերը ցրտահար եղան։ Սառնամանիքից սևացած ասքյարների դիակները դեկտեմբերի 26-ի առավոտյան ցույց էին տալիս բացօթևանների դասավորությունը՝ լայն շրջաններ կազմելով հանգած խարույկների շուրջը։ Նույն առավոտյան հայտնի դարձավ, որ ճանապարհին ետ են մնացել և գիշերվա ընթացքում ցրտահար են եղել 29-րդ հետևակային դիվիզիայի կեսից ավելին»[1]։

Չնայած դեկտեմբերի 26-ի ճակատամարտում կրած մեծ կորուստներին և Սարիղամիշի գրավման պլանի ձախողմանը, Էնվերը սպասում էր 10-րդ կորպուսի զորամասերի մոտենալուն, որոնք գործում էին Օլթիի և Արդահանի ուղղությամբ։ Մինչդեռ այդ կորպուսը շարունակում էր հարձակում ծավալել։ Դեկտեմբերի 25-ին թուրքերը գրավեցին Արդահանը։ Իստոմինի Օլթիի ջոկատը, որը խիստ թուլացել էր, նահանջեց Մերդենեկից։ Օլթիի շրջանում ստեղծված դրությունից ու Իստոմինի անվճռականությունից անհանգստացած, Մրշլևսկին ստիպված էր նրան փոխարինել Գաբաևով, որը կանգնեցրեց Օլթիի ջոկատի հետագա նահանջը և անհրաժեշտ միջոցներ ձեռք առավ հակահարված տալու հակառակորդին, որը ձգտում էր առաջանալ դեպի Կարսի մարզի խորքերը։ Դեկտեմբերի 29-ին թուրքերի հարձակումը կասեցվեց, և Օլթիի ջոկատը Մերդենեկի շրջանում հակահարձակման անցավ։

Սակայն այդ մոմենտին Գաբաևն իր ջոկատով կանչվեց Կարս։ Տեղում թողնելով փոքրաթիվ մի առաջակալ՝ Իստոմինի հրամանատարությամբ, Գաբաևը շարժվեց դեպի Կարս։ Գաբաևի ջոկատի փոխադրումը բացատրվում էր Սարիղամիշի վրա թուրքական զորքերի նոր խոշոր հարձակմամբ, որին նրանք ձեռնարկեցին դեկտեմբերի 29-ին։ Հակառակորդի այդ մտադրության մասին Մրշլևսկին իմացավ շնորհիվ այն բանի, որ դեկտեմբերի 27-ին գերի էր վերցվել թուրքական 28-րդ դիվիզիայի շտաբի պետը, որի մոտ գտնվեցին Էնվերի հրամանները, որոնցում մանրամասնորեն նկարագրվում էր Սարիղամիշի վրա հարձակվելու պլանը։ 9-րդ կորպուսի զորքերը պետք է գրոհեին Սարիղամիշի վրա, իսկ 10-րդ կորպուսն առաջ-

[1] Տե՛ս Корсун Н. Г. Сарыкамышская операция, стр. 63.

զրանք էր ստացել կտրել նրան Կարսից[1]։ Այդ տեղեկությունները հնարավորություն տվեցին նախապատրաստվել հակառակորդի գրոհը ետ մղելու։ Սարիղամիշի պաշտպանությունն ուժեղացնելու նպատակով դեկտեմբերի 29-ին այդ շրջանը փոխադրվեցին 21 գումարտակ, 20 հեծյալ հարյուրակ, 44 թնդանոթ, 64 հաստոցային գնդացիր[2]։ Հակառակորդի ուժերը բաղկացած էին 52 գումարտակից՝ ոչ-լրիվ կազմով։

Դեկտեմբերի 29-ին թուրքական զորքերը Էնվերի անձնական հրամանատարությամբ նոր հարձակում սկսեցին։ Երկյուղով բռնված Մրշլևսկին պատրաստվում էր նահանջել՝ ուժերը պահպանելու համար։ Ամենակրիտիկական պահին նա լքեց ճակատը և մեկնեց Թիֆլիս։ Սարիղամիշի պաշտպանության հրամանատար նշանակվեց գեներալ Պրժևալսկին, որը, 1-ին կուբանյան պլաստունյան բրիգադի գլուխն անցած, դեկտեմբերի 28-ին մոտեցավ Սարիղամիշին։ Պրժևալսկին ակտիվ գործողությունների կողմնակից էր։ Նրա ղեկավարությամբ թուրքական զորքերի կատաղի հարձակումները ետ մղվեցին։ Դեկտեմբերի 30-ի գիշերը Էնվերը վերսկսեց հարձակումը։ Թուրքական զորքերին հաջողվեց ներխուժել Սարիղամիշ։ Սկսվեց սվինամարտը։ Թուրքերը հսկայական կորուստներ էին տալիս։ 11-րդ կորպուսի 17-րդ դիվիզիան կորցրեց իր մարտունակությունը։ 28 և 29-րդ դիվիզիաներում մնացել էր ընդամենը 3 հազար մարդ։ Համառ մարտերից հետո նախաձեռնությունն անցավ ռուսների ձեռքը։ Հակառակորդը Սարիղամիշի բարձունքներից դուրս շպրտվեց։ Ռուսական զորքերը հակահարձակման անցան և թուրքական 9-րդ կորպուսն իր շտաբի հետ միասին կտրեցին նրա հիմնական ուժերից։ Կորպուսի անձնակազմի մոտ 80 տոկոսը զոհվել էր սառնամանիքներից։ 40 հազար զինվորներից բաղկացած այդ կորպուսն ամբողջովին ոչնչացվեց։ Նրա հրամանատար գեներալ Իզեթ-փաշան շտաբի հետ միասին գերի հանձնվեց[3]։ Միևնույն ժամանակ 10-րդ կորպուսի զորքերը, որոնք գործում էին Սարիղամիշից հյուսիս ընկած շրջանում, ռուսական զորքերի հարվածների տակ նահանջեցին դեպի լեռները։

Թուրքերի կորուստներն այն աստիճան մեծ էին, որ Սարիղամիշի տակ նրանց ջախջախումից հետո շատ դիվիզիաներից ու գնդերից գրեթե ոչինչ չէր մնացել։ «Սարիղամիշի ողբերգությունը—

[1] *Allen* and *Muratoff*, p. 368. Կորսունի կարծիքով, Մրշլևսկին անհնարին էր համարում պաշտպանել Սարիղամիշը և կովկասյան բանակը փրկելու համար գերադասեց նահանջել։ Տե՛ս Корсун, Сарыкамышская операция, стр. 72—78.

[2] БСЭ, 2-е изд., т. 38, стр. 125.

[3] Price, p. 113.

գրել է թուրքական 29-րդ դիվիզիայի հրամանատար Արիֆ Բայտը-նը,—ավարտվեց 3-րդ բանակի 2 ընտիր կորպուսների լրիվ ոչնչացումով»[1]։

1918 թվականին Մոսկվայում կայացած թուրքական ձախ սոցիալիստների կոնֆերանսում, խոսելով Սարիղամիշի օպերացիայի մասին, զեկուցողը՝ Ջևվդեթը նշեց, որ «հարձակվող բանակի մի զգալի մասը զոհվեց ցրտից, քաղցից և հագուստի բացակայությունից։ 88-րդ գնդի տխուր ճակատագրի մասին կարող էին պատմել այն 160 երջանիկ զինվորները, որոնք մտան Սարիղամիշ։ Թուրքական բանակի նման կրիտիկական պայմաններում ռուսները սկսեցին իրենց հակահարձակումը։ Բնական է, որ գնդերն ու դիվիզիաները խառնվեցին իրար, ոչ ոք չէր էլ մտածում պետերից ստացվող հրամանների կատարման մասին։ Նահանջի առաջն առնելու համար, հրամանատարները կարգադրում էին կրակել զինվորների վրա, մի խոսքով, ստացվեց սարսափելի մի իրարանցում...»[2]։

Թշնամուն հետապնդելու ընթացքում ռուսական զորքերը գերի վերցրին ավելի քան 5 հազար թուրքական զինվոր։ Նրանց ձեռքն ընկավ նաև 14 թնդանոթ և մեծ քանակությամբ պարեն[3]։

Կովկասյան բանակը շարունակում էր նեղել թուրքական զորքերին՝ Օլթիի ուղղությամբ։ 1915 թվականի հունվարի 3-ին Իստոմինի զորքերը թուրքերին դուրս շպրտեցին Արդահանից՝ գերի վերցնելով 900 զինվոր։ Հակառակորդը ծանր կորուստներ կրեց։ Իստոմինը շարունակում էր հարձակումը Արդանուչ-Արդահանի գծի վրա, իսկ Կալտինի գլխավորած ջոկատը սկսեց հետապնդել թուրքերին Մերդենեկ-Օլթիի ուղղությամբ։ Հունվարի 12-ին ռուսական զորքերը, արյունահեղ մարտերից հետո, թուրքերին շպրտեցին Օլթիից այն կողմը և, շարունակելով հետապնդել նրանց, հունվարի 15-ին մաքրեցին Ենի-քյոյը։ 11-րդ կորպուսի ջախջախված զորամասերը, 9-րդ կորպուսի մնացորդների հետ միասին, կովկասյան բանակի աջ թևի անհաղթահարելի ճնշման տակ դուրս շպրտվեցին Ճորոխի հովտից և փախուստի դիմեցին Տրապիզոնի ուղղությամբ։ Սակայն Բաթումի մարզը լրիվ չմաքրվեց թուրքական զորքերից։ Դժվարամատչելի հատվածում՝ Արդվինից հարավ-արևմուտք, թուրքական զորքերի մնացորդները շարունակում էին պահել իրենց դիրքերը։

[1] Arif Baytın, Ilk dünya harbinde Kafkas cephesi 29 tümen ve 3 alay sancağı (Hatıralar). Istanbul, 1946, s. 121.

[2] Архив ИМЛ при ЦК КПСС, ф. 17, оп. 1, д. 90, л. 10.

[3] Jollivet Gaston, p. 166. Կորսունի տվյալներով, գերի վերցվեց 3500 թուրքական զինվոր։ Տե՛ս Н. Г. Корсун, Сарыкамышская операция, стр. 143.

Սարիղամիշի ուղղությամբ ճակատը պահող 11-րդ և 10-րդ կորպուսներից մնացած զորքերը համախմբելով, էնվերը վերջին ջանքերը գործադրեց Բարդիզի շրջանում (Սարիղամիշից հյուսիս-արևմուտք, հակահարձակման անցնելու համար։ Սակայն ռուսական կովկասյան բանակի զորամասերի ճնշման տակ թուրքական զորքերը ետ շպրտվեցին՝ մեծ կորուստներ կրելով։ Համոզվելով, որ Սարիղամիշի համար մղվող մարտը վերջնականապես տանուլ է տրված, էնվերը 3-րդ բանակի թշվառ մնացորդները (մոտ 13 հազար մարդ) հանձնեց գնդապետ Հաֆիս Հաքքը-բեյին և ինքը, հավիվ խուսափելով գերի ընկնելուց, գաղտագողի լքեց ջախջախված զորքերին։

Հունվարի 11-ին ռուսական կովկասյան բանակի զորամասերը գրավեցին Բարդիզը և շարունակեցին հետապնդել ջախջախված 10-րդ կորպուսի մնացորդներին։ 11-րդ կորպուսի զորքերը փորձում էին կասեցնել ռուսական զորքերի բուռն գրոհը։ Հունվարի 17-ից սկսած Կարակուրգանի շրջանում 3 օր անընդհատ համառ մարտեր էին մղվում, որոնք ավարտվեցին 11-րդ կորպուսի ջախջախումով և նրա անկանոն փախուստով՝ Կարինի ուղղությամբ։

Սարիղամիշի և Կարակուրգանի տակ տեղի ունեցած ճակատամարտերի մասնակից մի ռուս սպա պատմում է, որ կրած պարտությունից հետո թուրքերը ոչ թե նահանջում, այլ բառի բուն իմաստով փախչում էին՝ առանց շունչ առնելու, մի քանի օր, դեն նետելով այն ամենը, ինչ վերցրել էին իրենց հետ և ինչ որ խանգարում էր փախուստին. զենք, հանդերձանք, զումակներ, հրետանի, սայլեր, ձիեր, զինապաշար և սննդամթերք, դաշտային դեղատներ և այլն։ Նույնիսկ թեթև վիրավորված սպաները, այդ թվում բարձրաստիճան շտաբային սպաները, թողնված էին դաշտերում և մարտերի վայրում բախտի քմահաճույքին։ Աշխատելով փրկվել, թուրքերը ցրիվ եկան լեռներում ու կիրճերում, ընտրելով դրա համար ամենակարճ ճանապարհները։ Նրանք մագլցում էին լեռները, ժայռերն ու լեռնաշղթաները, թողնելով այնտեղ փոքրաթիվ վերջապահ զորքեր՝ հետապնդող ռուսական զորքերին թեկուզ ժամանակավորապես կանգնեցնելու համար։ «Մեր զինվորները,—գրում է այնուհետև նույն ականատեսը, — նրանց ետևից հասնելու, մարտը պարտադրելու և վերջնական հարված հասցնելու համար գործադրում էին բոլոր ջանքերը. նրանք կրնկակոխ հետևում էին թուրքերին՝ հնարավորություն չտալով նրանց ուշքի գալ, նրանց վրա սպանիչ կրակ տեղալով հրացաններից ու գնդացիրներից. հաճախ նրանց սվիններով ու ձեռնամարտի միջոցով դուրս էին շպրտում կիրճերից ու ձորերից, որտեղ նրանք պատսպարվում

էին։ Այդ մարտերում մեր զինվորների ցուցաբերած արիությունն ու քաջությունը դժվար է նկարագրել։ Բոլորը հերոսներ դարձան, իրենց անօրինակ կերպով դրսևորելով»[1]։

Թուրքական զորքերի կողմից նահանջի ժամանակ թողած հանդերձանքի ու զինանյութերի պաշարները վկայում էին այն մասին, որ էնվեր-փաշայի հարձակման պլանը վաղուց էր մշակված[2]։

Սարիղամիշի տակ ռուսական զորքերի տարած հաղթանակը առաջին համաշխարհային պատերազմի պատմության մեջ մտավ որպես նրա ամենափայլուն էջերից մեկը։ Դաժան ձմռան պայմաններում հակառակորդի գերակշռող ուժերի ջախջախումը բացատրվում էր ոչ միայն կովկասյան բանակի բացառիկ տոկունությամբ ու մարտական վարժվածությամբ։ Այստեղ դեր խաղաց նաև ռուսական բանակի ընդհանուր գերազանցությունը՝ հրամանատարական կազմի պատրաստվածությունը, մարտական տեխնիկային տիրապետելու և լեռնային բարդ պայմաններում մանևրելու հմտությունը, կանոնավոր մատակարարման ապահովման և թիկունքի ծառայության լավ վիճակը։

Թուրքական զորքերի պարտությանը նպաստեց ձմռան պայմաններում ռազմական գործողություններին նրանց կատարյալ անպատրաստ լինելը, ինչպես նաև Արևմտյան Հայաստանում ճանապարհների բացակայությունը։ Այն դեպքում, երբ անատոլիական երկաթուղիները մինչև հազար կիլոմետր չէին հասնում կովկասյան սահմանին, ռուսական զորքերը կարող էին օգտվել մինչև Կարս ու Բաթում հասնող երկաթուղագծերով, որոնք Թուրքիայի սահմանից երկու-երեք օրվա ճանապարհի հեռավորության վրա էին գտնվում։ Իսկ թուրքական բանակը ճանապարհների բացակայության պատճառով ժամանակին և անհրաժեշտ քանակությամբ պարեն, հագուստ ու զինամթերք չէր ստանում, մի հանգամանք, որը խիստ նվազեցնում էր նրա մարտունակությունը։

Սարիղամիշի ճակատամարտում թուրքական զորքերի կրած պարտությունը ուժեղագույն ազդեցություն ունեցավ կովկասյան ճակատում ռազմական գործողությունների հետագա ողջ ընթացքի վրա՝ նախադրյալներ ստեղծելով 1915 թվականին Արևմտահայաստանում ռուսական զորքերի հաջող հարձակման համար։ Բացի այդ, Սարիղամիշի ճակատամարտը թուրքական հրամանատարությանը ստիպեց մյուս ճակատներից կովկասյան ճակատ փոխադրել զգալի

1 ЦГИА Груз. ССР, ф. 2, оп. I, д. 3599, л. 24.

2 Նույն տեղում, գ. 3187, թ. 20—21։

քանակությամբ զորքեր, որը հեշտացրեց անգլիացիների գործողությունները Միջագետքում և Սուեզի ջրանցքի գոտում։

Էնվերի արկածախնդրությունը թանկ նստեց թուրք ժողովրդի վրա։ 3-րդ բանակի 90 հազար զինվորներից Սարիղամիշի տակ մղված մարտերում 78 հազար մարդ սպանվել, ցրտահարվել, քաղցից ու հիվանդություններից մահացել կամ գերի էին ընկել։ Ստամբուլում խստորեն արգելված էր խոսել կամ գրել այդ աղետի մասին[1]։

Գյուզեի տվյալներով ճակատից փախել էին 12 հազար դասալիքներ[2]։ Մոտ 20 հազար համեմատաբար թեթև վիրավորված զինվորներ մահացան այն պատճառով, որ բժշկական օգնությունը լրիվ բացակայում էր[3]։ Ռուսների կորուստներն էին՝ 20 հազարից ավելի սպանված, վիրավոր ու հիվանդ և 8 հազարից ավելի ցրտահարված[4]։

1914—1918 թվականների պատերազմի պատմությունը հետազոտողներից մեկի՝ անգլիական պատմաբան Ջոն Բաչընի կարծիքով, էնվերը «անհաջողություն կրեց իր անհեռատեսության պատճառով։ Ձյան և մառախուղի մեջ երեք շաբաթ տևող համառ պայքարի ընթացքում զոհվեց 50 հազարից ոչ պակաս զինվոր... Սարիղամիշի տակ տեղի ունեցած ճակատամարտից հետո Կովկասից Ռուսաստանին սպառնացող վտանգը վերացավ»[5]։

9-րդ կորպուսի շտաբի պետ Շերիֆ-բեյ Քյոփրյուլյուն իր հուշերում գրում է. «...Ահա այսպիսի գնով էր էնվերը փորձում նվաճել Կարսի ու Արդահանի շրջանները, պրոպագանդել պանիսլամիզմը և իրականացնել պանթուրքիզմի իդեալը»[6]։

Թուրքիայի պաշտոնական պատմության մեջ՝ «Թարիհում» Սարիղամիշի տակ թուրքական զորքերի կրած պարտության մեղքն ամբողջովին բարդվում է գերմանական հրամանատարության վրա։

1 Liman von Sanders, S. 54—55։ Գրեթե նույն տվյալները՝ 80 հազար սպանված և 18 հազար փրկված (որոնցից 15 հազարը 11-րդ կորպուսից էին) բերվում են Ալլենի և Մուրատովի կողմից։ Տե՛ս Allen and Muratoff, p. 284. Մեվլան-զադե Ռիֆաթի տվյալներով, թուրքական բանակի կորուստները Սարիղամիշի տակ կազմում էին 75 հազար (տե՛ս Մեվլան-զադե Ռիֆաթ, էջ 144—145)։ Ժամանակակից թուրք պատմաբանները ևս խոստովանում են, որ Սարիղամիշի օպերացիայի ժամանակ 3-րդ բանակը գրեթե ամբողջովին ոչնչացվեց։ Տե՛ս Bayur Y. H. Türk inkilâbı tarihi, C. III, Kısım 3. Ankara, 1957, s. I.

2 Cüze, s. 46.

3 ЦГВИА, ф. 2000, оп. I, д. 3862, л. 91.

4 Корсун Н. Г. Сарыкамышская операция, стр. 142.

5 Buchan John, History of the War, London, 1916, p. 176.

6 Տե՛ս Н. Г. Корсун, Сарыкамышская операция, стр. 127.

«Ջրանցքի (Սուեզի—Ե. Ս.) և Սարիղամիշի ողբերգություններ-ը խոշոր սխալներ են, որ թույլ են տվել գերմանացիները՝ հետապնդելով իրենց սեփական շահերը։ Չնայած այդ վրիպումներին, օսմանյան բանակն ամենուրեք արիաբար մարտնչում էր թշնամու դեմ» [1]։

Այսպիսով, ժամանակակից Թուրք պատմագրությունը իր պաշտպանության տակ է վերցնում երիտթուրքական կլիկին, որն իր ավանտյուրիստական քաղաքականությամբ անհամար աղետներ բերեց թուրք ժողովրդին։

Ինչպե՞ս ընդունվեց Սարիղամիշի տակ թուրքական զորքերի ջախջախման լուրը Գերմանիայում։

Այդ կապակցությամբ Պոմյանկովսկին գրում էր. «Գերմանացիները որոշակի կերպով հաշվի էին առնում, որ կայսրության արևելքում թուրքերի խոշոր հարձակողական գործողությունները, որոնք կոչված էին կյանքում կիրառելու Էնվեր-փաշայի պանթուրանական ռազմական նպատակները, պետք է հանգեցնեին Թուրքիայի ռազմական հզորության զգալի թուլացմանը... Գերմանիայի համար դա ավելի շուտ առավելություն էր, քան թերություն։ Գերմանիայի կարևորագույն ռազմական նպատակներից մեկը դա Բեռլինից Բաղդադ և ավելի հեռուն՝ դեպի Հնդկաստան տանող ճանապարհ բացելն էր, իսկ դրա համար հարկավոր էր ոչ թե ուժեղ, այլ, ընդհակառակը, թույլ Թուրքիա։

Թուրքական պարտություններն ու կորուստները ջուր էին լցնում գերմանական քաղաքականության ջրաղացին՝ որոշ չափով նույնիսկ օգտակար հանդիսանալով, որովհետև նրանք մեծացնում էին Թուրքիայի կախումը Գերմանիայից և հեշտացնում գերմանական ուժերի ներգրավումը Թուրքիա» [2]։

Ցանկանալով հանգստացնել երիտթուրքերին և, միաժամանակ, հարթել այն անբարենպաստ տպավորությունը, որ ստեղծվել էր Գերմանիայի դաշնակցի կրած պարտությունից, գերմանական «Reichspost» թերթը 1915 թվականի հունվարի 29-ին գրում էր. «Թուրքական բանակի գործողություններն արդեն հասել են իրենց գլխավոր նպատակին՝ նրանք շեղեցին զգալի թվով ռուսական ուժեր և դյուրացրին կենտրոնական տերությունների խնդիրը։ Դա Թուրքիայի համար ամենից ավելի կարևորն է, քանի որ Կովկասի ճակատագրի հարցը կվճռվի ոչ թե այնտեղ, այլ գլխավոր՝ եվրոպական թատերաբեմում» [3]։ Կայսերական Գերմանիայի համար կարևոր էր, որպեսզի թուրքերը շարունակեին կռվել Կովկասյան ճակատում՝ դրանով իսկ շեղելով ռուսական ուժերը Արևմտյան ճակատից։ Կկարողանա՞ արդյոք թուրքական բանակը հաստատուն մնալ այդ պայքարում. այս հարցը գերմանական իմպերիալիստների համար երկրորդական նշանակություն ուներ։ Իսկ առայժմ Բեռլինում կարող էին իրենց թուրք դաշնակիցներին մխիթարել ոչինչ չարժեցող խոստումով՝ պատերազմի հաղթական ավարտից հետո նրանց հանձնել ողջ Կովկասը։ Սակայն, ինչպես մենք կտեսնենք ստորև, պատերազմի վերջին՝ 1918 թվականին, գերմանական կառավարությունը, առաջնորդվելով սեփական գաղութարարական նպատակներով, դեմ էր երիտթուրքերի կողմից Կովկասի գրավմանը։

1 „Tarih", C. III, s. 308.

2 Pomiankowski, S. 99.

3 Տե՛ս ЦГИА Груз. ССР, ф. 2 с, д. 3187, л. 29.

***

Ռուսաստանի դեմ պատերազմի հենց սկզբից թուրքական հրամանատարությունը նախատեսել էր Կովկաս ներխուժել ոչ միայն հիմնական՝ Սարիղամիշ-Կարս ուղղությամբ, այլև Իրանական Ադրբեջանի կողմից։ Ստրատեգիական պլանի համաձայն, թուրքական զորքերը, ռազմական գործողությունները սկսելուն պես, պետք է գրավեին Ուրմիայի գավառը և այնտեղ բազաներ ստեղծեին՝ հետագա հարձակողական գործողությունների համար՝ Խոյ-Ջուլֆա-Բաքու և Սուլդուզ-Սոուջ-բուլաղ ուղղություններով։ Թուրքական հրամանատարությունը համոզված էր, որ իրանական իշխանությունները և տեղական քուրդ շեյխերը աջակցություն ցույց կտան և նրանց օգնությամբ կհաջողվի հարավային Ադրբեջանի բնակչությանը ոտքի հանել այնտեղ գտնվող ռուսական զորքերի դեմ [1]։ Այդ պատճառով էլ թուրքական զավթիչները գտնում էին, որ առանց հատուկ ջանք գործադրելու կկարողանան իրագործել Իրանի տերիտորիայից Անդրկովկաս ներխուժելու իրենց պլանը։

Սակայն այդ մտահղացումը չէր համապատասխանում թուրքական հրամանատարության տրամադրության տակ գտնվող իրական ուժերին։ Քանի որ զորքերի մեծ մասը հարձակման էր նետված Բաթումի մարզի և Սարիղամիշի վրա, դեպի Իրան արշավանքի համար թուրքերը շատ աննշան ուժեր կարողացան առանձնացնել։ Բացի դրանից, հարավային Ադրբեջանի բնակչությունը, որն այնքան շատ էր տուժել թուրքական ներխուժումներից, հատկապես 1905—1912 թթ., լավ էր հիշում և չէր թաքցնում իր թշնաման-

1 ЦГВИА, ф. 2000/с, оп. 1, д. 749, л. 354.

ը Թուրքական զավթիչների նկատմամբ։ Թուրքերին հաջողվեց փոքրաթիվ ուժերով գրավել Թավրիզը, Ուրմիան և Դիլմանը միայն շնորհիվ այն բանի, որ Սարիղամիշի օպերացիայի ամենադժվարին պահին ռուսական զորքերի ջոկատը Զեռնոզուբովի հրամանատարությամբ հյուսիսային Իրանից փոխադրվեց կովկասյան ճակատ [1]։

Այդ կապակցությամբ Ստամբուլում լույս տեսնող թերթերը կեղծ լուրեր էին տարածում այն մասին, որ իրանական Ադրբեջանից ռուսական զորքերի դուրս բերումը իբր թե թուրքական բանակի հետ ունեցած բախումների ժամանակ նրանց կրած «պարտության» հետևանքն էր։

Թուրքերի մուտքն Ադրբեջան ուղեկցվում էր խաղաղ բնակիչների՝ հայերի, ասորիների, քրդերի կողոպուտով ու սպանություններով։

Թուրքական ռազմական իշխանությունները գնդակահարում էին գյուղացիներին, բանվորներին, արհեստավորներին, առևտրականներին՝ չխնայելով ո՛չ կանանց, ո՛չ ծերերին, ո՛չ էլ մանուկներին։ Բնական է, որ թուրքական զավթիչների այդ գազանությունները համընդհանուր ատելություն ու զայրույթ էին առաջ բերում։

Թուրքական ներխուժողներն ու գերմանական գործակալները իրենց կողմն անցած 6 հազար իրանական ոստիկանների օգնությամբ 1914—1915 թվականների ձմռան ընթացքում ռուսական ու անգլիական հյուպատոսություններին դուրս մղեցին Իսպահանից, Քերմանշահից ու Համադանից։

Իրանական կառավարությունը զգալի չափով կորցրել էր վերահսկողությունը երկրի նկատմամբ։ Ոչ միայն Իրանի հյուսիսային մասը, այլև ողջ հարավը, բացառությամբ Պարսից ծոցի առափնյա շրջանի, փաստորեն գտնվում էր թուրքական զավթիչների ու գերմանական գործակալների գերիշխանության ներքո, որոնք իրենց ձեռքն էին վերցրել հաղորդակցության բոլոր ճանապարհներն ու հեռագրական գծերը։

1 Վորոնցով-Դաշկովին ուղղված նամակում Սազոնովն առարկում էր իրանական Ադրբեջանից ռուսական զորքերի դուրս բերելու դեմ։ Արտաքին գործերի մինիստրը մատնանշում էր այդ քայլի անբարենպաստ հետևանքները՝ ռուսական ազդեցության թուլացումն Իրանում (ЦГВИА, ф. 2000/с, оп. 1, д. 749, л. 376)։ Կովկասյան բանակի հրամանատարը այդ միջոցառման անհրաժեշտությունը փաստարկում էր «ստրատեգիական ճակատի կրճատման» և Անդրկովկասի սահմանը թուրքերի գերակշռող ուժերի սպառնալիքից պաշտպանելու նպատակով իրանական Ադրբեջանում գտնվող ռուսական ջոկատն օգտագործելու պահանջով (ЦГВИА, ф 2000/с, оп. 1. д. 749, л. 420, 444)։

Թուրքական զորքերը պատրաստվում էին Անդրկովկաս ներխուժել հարավային Ադրբեջանի տերիտորիայից։ Այդ սպառնալիքը կանխելու համար կովկասյան բանակի հրամանատարությունը Սարիղամիշի տակ թուրքերին ջախջախելուց հետո որոշել էր Իրան փոխադրել իր տրամադրության տակ եղած ուժերի մի մասը։ 1915 թվականի գարնանը թուրքական զորքերը ջախջախվեցին ու դուրս շպրտվեցին թուրք-իրանական սահմանից այն կողմը։ Այդ գործում ռուսական բանակին էական օգնություն ցույց տվեց հարավային Ադրբեջանի բնակչությունը (հայերը և ադրբեջանցիները)։ Սակայն թուրքերը շարունակում էին գրավել Իրանի հարավային շրջանները։ Այդ կապակցությամբ Սազոնովը 1915 թվականի դեկտեմբերին գերագույն գլխավոր հրամանատարի շտաբի պետին խնդրեց ավելացնել Իրանում գտնվող զորքերի թիվը «այն չափով, որքան անհրաժեշտ է այդ կողմից հնարավոր որևէ կարգի ճակատագրական պատահականություններից ապահովելու համար, չթուլացնելով հանդերձ մեր դրությունը թուրքական ճակատում» [1]։

Զեզոք Իրանը վերածվեց երկու հակամարտ խմբավորումների պայքարի թատերաբեմի։ 1915 թվականի հոկտեմբերին ռուսական գերագույն հրամանատարությունը գեներալ Բարաթովի էքսպեդիցիոն զորամասը էնզելիի վրայով փոխադրեց Իրանի հարավային շրջանները։ Ետ մղելով թուրքերին, Բարաթովի զորքերը գրավեցին Համադանը, Քերմանշահը, Քաշենը, Կումը և, հետապնդելով թշնամուն, մոտեցան Իսպահանին։

1916 թվականի ապրիլին Կուտ-էլ-Ամարայում անգլիական զորքերի կրած պարտության հետևանքով, երբ 13 հազար անգլիացիներ անձնատուր եղան թուրքերին, Անգլիայի դիրքերը հարավային Իրանում նկատելիորեն թուլացան։ Միայն մեծ ջանքերի գնով անգլիացիներին հաջողվեց 1916 թվականի վերջին վերականգնել իրենց նախկին վերահսկողությունը Իրանի հարավային շրջանների վրա։

Այսպիսով, 1917 թվականի սկզբին Իրանի տերիտորիայի մեծ մասն ընկավ Անգլիայի ու Ռուսաստանի տիրապետության տակ։ Երկրի արևմուտքում ընկած շրջանների միայն մի աննշան մասը շարունակում էին իրենց ձեռքում պահել թուրքական զորքերը։

1 МОЭИ, серия III, т. IX, № 580. Տակավին 1915 թվականի հոկտեմբերին Գրեյը դիմեց Սազոնովին Իրանում գտնվող ռուսական զորքերի թիվն ավելացնելու խնդրանքով, որը պետք է դյուրացներ անգլիական հրամանատարության կողմից միջագետքում նախաձեռնվելիք հարձակման իրականացումը։ Տե՛ս МОЭИ, серия III, т.IX, № 70.

Նման դրությունն անփոփոխ մնաց մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը։

***

Իրենց նվաճողական պլաններն իրականացնելու գործում երիտթուրքական գավթիչները մեծ հույսեր էին կապում սուլթանի կողմից 1914 թվականի նոյեմբերի 11-ին հայտարարված «սրբազան պատերազմի»՝ ջիհադի, հետ։ Պոմյանկովսկու կարծիքով «սրբազան պատերազմի ելնելու՝ սուլթան-խալիֆի կոչը երիտթուրքերի գլխավոր միջոցն էր նրանց երևակայական պանիսլամական ու պանթուրքական ռազմական նպատակներին հասնելու գործում»[1]։

Տակավին նախքան Թուրքիայի պատերազմի մեջ մտնելը, Ստամբուլում կազմվել, օտար լեզուներով թարգմանվել ու տպագրվել էր հատուկ մի կոչ՝ այլ երկրների մահմեդական ազգաբնակչության շրջանում տարածելու համար, ուր ասվում էր, որ մահմեդականները պետք է անհապաղ «սրբազան պատերազմ» հայտարարեն «անհավատներին»՝ «քրիստոնեական լծից» մահմեդական տիրապետությունները, այդ թվում և Կովկասը, ազատագրելու նպատակով։ Այդ կոչում, որը վերնագրված էր՝ «Սրբազան պատերազմը պարտադիր է», մասնավորապես ասված էր. «Յուրաքանչյուր մահմեդական... ներկայումս իրեն պետք է ռազմիկ համարի։ Ամեն մի մահմեդական, որն ընդունակ է զենք կրելու, պետք է պատրաստ լինի մասնակցելու սրբազան պատերազմին»։ Այնուհետև այդ կոչում մատնանշվում էր, որ հարկավոր է անգլիացիներից ազատագրել Հնդկաստանը, Եգիպտոսը, Սուդանը, հոլանդացիներից՝ Ճավան, ֆրանսիացիներից՝ Ալժիրը, Մարոկկոն և Թունիսը։ «Մեծ Սիբիրը, մեծ Թուրքեստանը, Խիվան, Բուխարան, Կովկասը, Ղրիմը, Կազանը, Աստրախանը, կազակների հողերը տեռորի են ենթարկված մեր կրոնի դաժան թշնամիների կողմից... Ուստի և այդ երկրների իսկական մահմեդականները պետք է անհապաղ սրբազան պատերազմ հայտարարեն ստոր անհավատների դեմ...»։ Կոչն ավարտվում էր Ղուրանից բերված մի քաղվածքով, որտեղ ասված էր հետևյալը. «Սպանեք նրանց, ովքեր միասնական աստծո հետ մեկտեղ հանդուրժում են ուրիշ աստվածների գոյությունը, սպանեք ամենուրեք, որտեղ նրանց կգտնեք, բռնեք դրանց, կանգնեցրեք, դարանակալեք նրանց բոլոր ճանապարհների վրա»։

Անգլիայի, Ֆրանսիայի ու Ռուսաստանի դեմ աշխարհի բոլոր

1 Pomiankowski, S. 96.

մահմեդականներին «սրբազան պատերազմի» կոչող այս թուղթիկը կազմվել էր ոչ առանց Գերմանիայի դրդման, որը գտնում էր, որ այդպիսի պատերազմի հռչակումը Անտանտի համար լուրջ դժվարություններ կստեղծի։ Սակայն այդ հաշիվները սխալ դուրս եկան։ Բեռլինում ակնհայտորեն գերագնահատեցին մահմեդական աշխարհի վրա սուլթան—խալիֆի ունեցած ազդեցությունը[1]։ Տակավին պատերազմից առաջ «սրբազան պատերազմի» կազմակերպման մեջ թուրքերին օգնելու նպատակով, գիտական ճանապարհորդների անվան տակ Հյուսիսային Աֆրիկա և Փոքր Ասիայի տարբեր շրջաններն ուղարկվեցին գերմանական գործակալներ։ Նրանց խնդիրն էր կապեր հաստատել տեղի մահմեդական ազգաբնակչության հետ։ Այդ գործով էին զբաղվում նաև Լիման ֆոն Սանդերսի կողմից գլխավորվող գերմանական ռազմական միսիայի անդամները՝ երկրի զանազան նահանգները կատարած իրենց շրջագայությունների ժամանակ։

Թուրքիայի պատերազմի մեջ մտնելուց անմիջապես հետո Բեռլինում աշխարհագետ Օպենհայմի ղեկավարությամբ ստեղծվեց հանձնաժողով, որի խնդիրն էր մահմեդականներին դրդել ապրստամբության Անտանտի տերությունների դեմ։ Այդ նպատակն էին հետապնդում, օրինակ, տարբեր երկրներից Բեռլին եկած մահմեդականների համար կարդացվող դասախոսությունները։ Դրանցում ասվում էր այն մասին, որ իսլամ դավանող ժողովուրդների ճակատագիրը կախված է այն բանից, թե կկարողանա՞ն արդյոք նրանք օգտվել պատերազմից՝ Անգլիայի, Ֆրանսիայի ու Ռուսաստանի դեմ ապստամբելու համար, որպեսզի հասնեն քաղաքական անկախության՝ «իսլամի հովանավորի ու խալիֆի դաշնակցի»՝ գերմանական կայզերի օգնությամբ։ Ինչպես նշվում էր մի փաստաթղթում, այն մահմեդականներին, որոնք համաձայնվում էին մասնակցություն ունենալ Անտանտի դեմ զինված ելույթներին, «գերմանացիները տալիս են մեծ քանակությամբ դրամ, ոսկու դեզեր են խոստանում՝ նրանց դավադրական աշխատանքի բարեհաջող կատարման դեպքում, նրանց հանգամանալից հրահանգներ են տալիս...»։

Այդ նպատակով 1914 թ. Բեռլին եկան Թուրքիայում բնակվող նախկին ռուսահպատակներ Աբդուլ-Ռաշիդ էֆենդի Իբրահիմովը և Ահմեդ-բեկ Աղաևը։ Նրանք զբաղվում էին Ռուսաստանի մասին կանխակալ, կեղծ լուրերի տարածմամբ՝ մահմեդականների մեջ նրա հանդեպ թշնամական զգացմունքներ առաջ բերելու նպատակով[2]։

1 Pomiankowski, S. 94—95.

2 ЦГИА Груз. ССР, ф. 2с, д. 3166, л. 25.

«Սրբազան պատերազմին» նախապատրաստվելու ուղղությամբ գործադրված ջանքերը, սակայն, ապարդյուն անցան։ Անտանտի դեմ զինված պայքարի ելնելու կոչերը, որոնցով Ստամբուլի մոլեռանդները դիմում էին մահմեդականներին, լիակատար անհաջողություն կրեցին Արևելքում։ Սուլթան-խալիֆի վերը հիշատակված կոչին արձագանքեցին միայն մի քանի հազար ֆանատիկոսներ՝ Տրիպոլիտանիայում ու Լիբիայում։ Ինչ վերաբերում է Ասիայի ու Աֆրիկայի երկրների մահմեդական ազգաբնակչությանը, վերջինս լրիվ անտարբերություն հանդես բերեց նրա նկատմամբ։

Նկարագրվող դեպքերի ժամանակակից ֆրանսիացի Շարլ Ֆրանսին նշում էր, որ սրբազան պատերազմին մասնակցելու կոչը ոչ մի ներգործություն չունեցավ և չհուզեց մահմեդական աշխարհը [1]։ Նույն բանն էր արձանագրում ամերիկյան «The Atlantic Monthly» ամսագիրը, որտեղ նշվում էր հետևյալը. «Միավորված իսլամի կողմից տարվող սրբազան պատերազմի գաղափարը խայտառակ կերպով ձախողվեց։ Այդպիսի պատերազմը մեծ հանդիսավորությամբ էր հռչակվել սուլթան-խալիֆի կողմից։ Սակայն մահմեդական աշխարհը չարձագանքեց այդ կոչին։ Արաբներն ու հնդիկ մահմեդականները կռվում էին թուրքերի դեմ» [2]։

Նույնիսկ երիտթուրքական կուսակցության աչքի ընկնող գործիչներից մեկը՝ Մեվլան-զադե Ռիֆաթը ստիպված էր խոստովանել, որ հայտարարված սրբազան պատերազմը ազդեցություն չունեցավ ոչ միայն աշխարհի մահմեդական ժողովուրդների վրա, այլև բուն Օսմանյան կայսրությունում [3]։

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին երիտթուրքերը մեծ ջանքեր էին գործադրում, որպեսզի ամենից առաջ իրենց կողմը թեքեն թուրքական սահմաններին մոտ գտնվող շրջանների մահմեդական ազգաբնակչությանը։ Այդ պատճառով էլ Կովկասի ազգաբնակչությունը այն առաջնակարգ օբյեկտներից էր, որը գրավում էր երիտթուրքական ղեկավարների ուշադրությունը։

Կովկասյան մահմեդականներին Օսմանյան կայսրության կողմը գրավելու համար, երիտթուրքական գործակալները լայնորեն կիրառում էին զանազան կոչերի ու թռուցիկների տարածումը։ Փաստաթղթերից մեկում ասվում էր, որ «Ռուսաստանի հետ պատերազմը թուրքերի ընդհանուր, վաղեմի ցանկությունն է։ Որպեսզի

1 Charles Francis, La guerre 1914—1915. Paris, 1915, p. 197—198.

2 „The Atlantic Monthly", Oktober, 1923.

3 Մեվլան-զադե Ռիֆաթ, էջ 114։

մահմեդականները կարողանան օգտվել բարենպաստ պահից, անհրաժեշտ է Կովկասն ու նրա մահմեդական բնակիչներին նախապատրաստել զինված ապստամբության... Դրա համար անհրաժեշտ է բանավոր ու տպագիր պրոպագանդայի ճանապարհով մահմեդական ազգաբնակչությանը բացատրել, որ Գերմանիայի ու Թուրքիայի հաղթանակի դեպքում, ինչում կասկած լինել չի կարող, Կովկասը լիակատար ինքնավարություն կստանա... Անհրաժեշտ է հենց այժմ նախապատրաստել սահմանակից շրջաններում բնակվող մահմեդականներին, նրանց մեջ ատելություն առաջ բերել Ռուսաստանի նկատմամբ» [1]։

Թուրքական զորքերի ներխուժումը Բաթումի ու Կարսի նահանգները ուղեկցվում էր տեղական ազգաբնակչության մեջ կոչերի տարածումով, որոնցում առաջարկվում էր ապստամբություն բարձրացնել և ռուսների դեմ «սրբազան պատերազմ» մղել [2]։ Ստամբուլում տպագրված այդպիսի կոչերից մեկում, որը գտնվել էր Բաթումի նահանգում, աղդարարվում էր. «Մահմեդականներ, Կովկասյան լեռները մերն են, դա ձեզ հայտնի է, և ալլահի ձայնը արձագանքում է այդ լեռներում։ Ներկայումս, դուք, Կովկասի մահմեդականներ, ամենից ավելի եք պարտավոր մյուս մահմեդականների օրինակով ապստամբել թշնամու դեմ...» [3]։

Թուրքական օկուպացիոն իշխանությունների կողմից Արդվինում հրապարակված թռուցիկում ասվում էր հետևյալը. «Մեր քաջ զինվորները պետք է տիրանան մեր հնադարյան կալվածին՝ Կովկասին... Երիտասարդ Թուրքիայի սահմանադրությունը (խոսքը 1876 թվականի սահմանադրության մասին է, որը վերականգնվել էր 1908 թվականին՝ երիտթուրքական հեղափոխության ժամանակ— Ե. Ս.) որոշել է իր վաղեմի հայրենիքն ազատագրել խարդախ բռնակալից՝ ռուսական միապետությունից» [4]։

Թուրքական զորքերի մուտքը Բաթումի ու Կարսի մարզերը՝ 1914 թվականի վերջին, ուղեկցվում էր երիտթուրքերի կողմից լրտեսներ ու դիվերսանտներ ուղարկելով Անդրկովկասի տարբեր շրջանները և այնտեղ մինչ այդ ստեղծված գործակալական ցանցի գործունեության աշխուժացումով [5]։ Ոստիկանական դեպարտամենտի՝ 1915 թվականին վերաբերող տեղեկությունների համաձայն, «Միասնություն և առաջադիմություն» կուսակցության կոմիտեն ամեն կերպ

1 ЦГИА Груз. ССР, ф. 2 с, д. 3187, л. 7.

2 Նույն տեղում, թ. 119։ Տե՛ս նաև գ. 3917, թ. 5—7։

3 ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 3862, л. 500.

4 ЦГИА Груз. ССР, ф. 2с, оп. I, д. 3193, л. 167—169.

5 ЦГАОР Груз. ССР, ф. 3, д. 812, л. 93.

աշխատում էր Կովկասում տարածել պանթուրքական գաղափարներ [1]։

Պատերազմի տարիներին Բաքվում անլեգալ կերպով հրատարակվում էր թուրքերեն լեզվով «Բասիրեթ» թերթը, որը պանթուրքական ագիտացիա էր տանում և մահմեդականներին կոչ անում ապստամբություն բարձրացնել Ռուսաստանի դեմ։ Բաքվում էլ հենց թուրքական գործակալները հիմնել էին հատուկ կազմակերպություն [2]։ Ռազմական գաղտնի տեղեկություններ հավաքելու նպատակով այդ կազմակերպության մասնակիցները շրջագայում էին Անդրկովկասում։ Ձեռք բերած տվյալները նրանք անմիջապես ուղարկում էին Թուրքիա։ Նույն այդ կազմակերպությունը թուրքական էմիսարների օգնությամբ ջանում էր կովկասյան մահմեդականների մեջ ատելություն բորբոքել Ռուսաստանի դեմ, կեղծ լուրեր էր տարածում Արևմտյան ճակատում ռուսական բանակի պարտության մասին, պրոպագանդում էր Ռուսաստանի և հատկապես Կովկասի բոլոր մահմեդականների ապստամբության անհրաժեշտությունը, որպիսի ճանապարհով «հնարավոր կլիներ» աջակցություն ցույց տալ Գերմանիային՝ «իսլամի անկեղծ դաշնակցին ու հովանավորին»։

Բացի երիտթուրքերից, Անդրկովկաս լրտեսներ ուղարկելով էին զբաղված նաև գերմանական ու ավստրիական հետախուզությունները, որոնք իրենց գործակալներին ապահովում էին չեզոք տերությունների, գլխավորապես ամերիկյան ու շվեյցարական անցագրերով [3]։

Ալեքսանդրապոլի կայազորի պետը 1915 թվականի հունվարի 19-ին հաղորդում էր, որ Կարսի մարզի Ակ-Բաբայի տեղամասում գործում է անլեգալ մի կոմիտե, որը զբաղված է թուրքական բանակի համար զենք, դրամ, տաք հագուստ ու պարեն հայթայթելով [4]։

Թուրքական առանձին լրտեսներ ներթափանցում էին ռուսական բանակի թիկունքը։ Այսպես, թուրքական սպա Ջելդեթը փորձում էր Երևանում ու նրա շրջակայքում բնակվող մահմեդականներին զինված ելույթների մղել։ Նա զբաղված էր նաև տեղագրական տվյալներ հավաքելով [1]։

Միաժամանակ, թուրքական գործակալները մզկիթներում ագիտացիա էին մղում՝ հօգուտ Թուրքիայի։ Այդ գործին եռանդուն մասնակցություն ունեին տեղական խաները՝ Միրզա Հուսեյնը, Բյուլուկ-խանը, Աղա-խանը և Մուսա-խանը։

Կովկասյան բանակի շտաբում 1915 թվականի սկզբին ստացված տեղեկություններով «...նրանք ագիտացիա են տանում, կապ են պաշտպանում թուրքերի հետ և ունևոր մահմեդականներին հրամայում են հաց և գարի գնել թուրքերի համար, որոնք նրանց ասելով, այսօր-վաղը պետք է տիրանան երկրամասին» [2]։

Թուրքական հետախույզներին ու լրտեսներին հաջողվում էր իրենց համար գործակալներ հավաքագրել հիմնականում Անդրկովկասի մահմեդական ազգաբնակչության բեկական ու խանական խավերից։ Ինչ վերաբերում է աշխատավոր մահմեդականներին, բազմաթիվ փաստաթղթերը անհերքելիորեն վկայում են այն մասին, որ հակառուսական պրոպագանդան նրանց մեջ արձագանք չէր գտնում։ Այսպես, Երևանի նահանգապետը 1915 թվականի հունվարի 4-ին հաղորդելով Ասադ Քերբալայի, Ալի-օղլու և Հյուսեյնբեկ Մենուրի խաների լրտեսական աշխատանքի մասին՝ հօգուտ Թուրքիայի, ընդգծում էր. «Ընդհանուր առմամբ, մահմեդականները շարունակում են իրենց միանգամայն կոռեկտ պահել...» [3]։

Թիֆլիսի նահանգային վարչության պետը 1915 թվականի մայիսին զեկուցում էր հետևյալը. «Պանիսլամիզմի գաղափարները Ելիզավետպոլի նահանգի մահմեդականության շրջանում ոչ մի հաջողություն չունեն, ըստ որում նրանց ահռելի մեծամասնությունը նույնիսկ մոտավոր գաղափար չունի պանիսլամիզմի մասին» [4]։

Մի այլ փաստաթղթում նշվում էր, որ թուրքական կառավարության բոլոր ջանքերը՝ կյանքում կիրառելու «ջիհադը»՝ մահմեդական աշխարհի «սրբազան պատերազմը» Ռուսաստանի դեմ, ողբալի անհաջողություն են կրում» [5]։ Այդ մասին էր գրում նաև 1915 թվականի գարնանը Թիֆլիսում հրատարակվող «Կավկազ» թերթը [6]։

Մահմեդական երկրներում լիազորագրված ռուսական հյուպատոսները հաղորդում էին, որ սրբազան պատերազմի թուրքական պրոպագանդան հաջողություն չունեցավ [7]։

1 ЦГИА Груз. ССР, ф. 13/2с, оп. I, д. 3171, л. 86.

2 Այդ մասին մանրամասն հաղորդում էր Ստամբուլում լույս տեսնող հայկական «Վերջին լուր» թերթը 1914 թվականի հոկտեմբերի 17 (30)-ի համարում։ Տվյալները թերթը վերցրել էր երիտթուրքական «Sabah» թերթից։

3 ЦГАОР Аз. ССР, ф. 25, оп. 2, д. 1187, л. 103.

4 ЦГИА Груз. ССР, ф. 2с, д. 3602, л. 17.

1 ՀՍՍՌ Կենտրոնական պետական պատմական արխիվ, ֆ. 200, գ. 223, թ. 8։

2 ЦГИА Груз. ССР, ф. 2с, д. 3602, л. 180.

3 Նույն տեղում, ց. 1, գ. 3719, թ. 1։

4 Նույն տեղում, գ. 3602, թ. 95։

5 Նույն տեղում, գ. 3187, թ. 7։

6 Տե՛ս «Кавказ», 30/IV 1915, № 97.

7 ЦГИА Груз. ССР, ф. 2с, д. 3166, л. 36.

Նույնիսկ Էնվեր-փաշան ստիպված էր ընդունել, որ իր կլիկի կողմից հայտարարված «սրբազան պատերազմը» ձախողում է կրել։ Այդ կապակցությամբ թուրքական զորքերին ուղղված իր կոչում նա հետևյալ չարամիտ հայտարարությունն արեց. «Մեր հավատակիցները, որոնց օգնության վրա դուք իրավունք ունեիք հույս դնելու, մեծամասնությամբ անարժան գտնվեցին մահմեդականի անվանը և մարգարեի անեծքը կախված է նրանց գլխին։ Սակայն դա չպետք է շփոթեցնի ձեզ, իմ քաջ զինվորներ։ Երբ նրանք մեր ձեռքում կլինեն, այնժամ կզգան մեր ատելությունը։ Կովկասի ու Վոլգայի, Ալժիրի, Թունիսի ու Մարոկկոյի մահմեդականները կրովում են ոչ միայն Գերմանիայի ու Ավստրիայի դեմ... Նրանք համարձակվեցին մեր՝ իրենց եղբայրների դեմ հանդես գալու։ Ուստի և մահ նրանց, ոչ մի գթություն։ Ոչնչացրեք, սպանեք նրանց ամենուրեք, որովհետև նրանք մեր բոլոր թշնամիներից էլ վատ են» [1]։

Էնվերի մերձավորագույն զինակիցներից մեկը՝ Քյազրմ Կարաբեքիր-փաշան նշում էր. «չնայած մեր կողմից սրբազան պատերազմի հայտարարմանը, ապստամբությունը, որի վրա մենք հույս էինք դրել, չէր բռնկվում» [2]։

Անկասկած է, որ մահմեդական զանգվածները չհետևեցին երիտթուրքական ագրեսորներին, որոնք ամեն կերպ փորձում էին խաղալ իսլամ դավանող ժողովուրդների կրոնական զգացմունքների վրա։ Դրանում թուրքական ներխուժողները շատ շուտով համոզվեցին նրանց կողմից գրավված Բաթումի ու Կարսի մարզերի ազգաբնակչության վարվելակերպի հիման վրա։

Որոշ պատմաբաններ ծայրահեղորեն գերագնահատում են գերազանցորեն տեղական ազգաբնակչության ունևոր խավերին պատկանող առանձին անձերի՝ թուրքական զորքերի կողմն անցնելու նշանակությունը։ Այսպես, Կորսունը, նկարագրելով թուրքերի ներխուժումն Աջարիա 1914 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին, գրում է, որ այն «ուղեկցվում էր Բաթումի մարզի հարավային մասի աջարական բնակչության համընդհանուր ապրստամբությամբ...» [3]։ Մինչդեռ, արխիվային փաստաթղթերը հերքում են այդ պնդումը։ Բաթումի մարզի ռազմական նահանգապետը, օրինակ, հաղորդում էր, որ բնակչությունը «իր ճնշող մեծամասնությամբ չէր համակրում թուրքական ներխուժմանը... Նա ամեն կերպ աշխատում էր ապացուցել իր հավատարմությունը

1 Տե՛ս ЦГИА Груз. ССР, ф. 2с, д. 3166, л. 18.
2 Kâzım Karabekir, s. 490.
3 Корсун Н. Г., Сарыкамышская операция, стр. 16.

կառավարությանը»։ Նույն հաղորդման մեջ նշվում էր, որ տեղի բնակիչների ամբողջ աջակցությունը հակառակորդին արտահայտվում էր սոսկ այն բանում, որ նրանք հարկադրված էին թուրքերին մատակարարել պարեն ու անասնակեր [1]։

Տեղական մահմեդական ազգաբնակչությունից թուրքական զավթիչների կողմն էին անցնում բեկերը և թուրքական լրտեսների ու էմիսարների քարոզներով խաբված հետամնաց, մոլեռանդորեն տրամադրված տարրերը։

1914 թվականի վերջին ռուսական իշխանությունների դեմ ապստամբեցին Աջարիայի մի խումբ բեկեր։ Թուրքանպաստ պրոպագանդիստները, այդ թվում Մահմուդ-էֆենդի Կիրիթլի-օղլին և Շուքրի-էֆենդին հրոսակներ էին կազմում՝ Աջարիա ներխուժած թուրքական զորքերին աջակցություն ցույց տալու համար։ Նրանք ջանում էին աջարացիներին համոզել, որ «Թուրքիայի ու Ռուսաստանի միջև ծագած պատերազմը իսլամի համար «սրբազան» է և ամեն մի թուրք պետք է եռանդուն պայքար մղի գյաուրների դեմ» [2]։

Թուրքական զորքերի կողմից Բաթումի մարզն օկուպացնելու շրջանում նրանք վրացերեն լեզվով բազմաթիվ թռուցիկներ էին տարածում՝ ուղղված «վրացի մահմեդականներին ու աջարացիներին» [3]։

Դրանցից մեկում, առաջին հաջողություններով արբեցած, թուրքական զավթիչները գրում էին. «Մահմեդական դրոշը նորից ծածանվում է Կովկասյան լեռների գագաթին... Խալիֆը ձեզ իր ողջույնն է հղում և հրավիրում մասնակցելու սրբազան պատերազմին... Դուք, կովկասյան մահմեդականներդ, պետք է ապստամբվեք ռուսների դեմ և նրանց հետ սրբազան պատերազմ սկսեք... արգելակեք ռուսական զորքերի շարժման ուղին՝ Ռուսաստանի կենտրոնից։ Դրա համար անհրաժեշտ է վնասել երկաթուղու գծերը, քանդել կամուրջները, հեռագիրն ու հեռախոսը։ Չեթեներ կազմեք և նետվեցեք թշնամու վրա, գնդակոծության տակ պահեք նրան, ոչնչացրեք նրա պարենը և աջակցություն ցույց տվեք ձեզ օգնելու նպատակով Թուրքիայից ժամանող չեթեչիներին, կատարեք նրանց պահանջները և միավորվեք նրանց հետ, որովհետև նրանք ձեր ազատագրության համար իրենց արյունն են թափում և զոհաբերում իրենց կյանքը։

Հարյուր հազարանոց բանակն անցել է սահմանը և կռվի նետվել՝ ձեզ օգնելու համար։ Նա Կովկասը նորից կազատի գյաուրների

1 ЦГИА Груз. ССР, ф. 2с, д. 3561, л. 12—14.
2 Նույն տեղում, թ. 37։
3 Նույն տեղում, գ. 3193, թ. 140։

(անհավատների) ձեռքից, որից հետո Կովկասը նորեն կվերածնվի...

Հերոս Շամիլի զավակներ, գրոհեք թշնամուն և ոչնչացրեք նրան։ Ռուսներին հաղթելը ձեզնից է կախված։ Այս օրվանից թող ծածանվի մարգարեի դրոշը Կովկասի հողի վրա...» [1]։

Սակայն Կովկասի ժողովրդական զանգվածները, որոնք լավ էին հիշում ենիչերիների արյունոտ բռնակալությունը, քաջ գիտակցում էին, որ թուրքական զավթիչներից ոչինչ չի կարելի սպասել, բացի քայքայումից ու վերադարձից դեպի միջնադարյան բարբարոսություն։ Ուստի միանգամայն բնական էր, որ թուրք ագրեսորների նման կոչերն ու խոստումները ազդեցություն չունեցան Կովկասի մահմեդական ազգաբնակչության լայն խավերի վրա։

Շուտով համոզվելով, որ իրենց պրոպագանդան լիովին ձախողվել է, թուրքական զավթիչները փորձում էին տեղի ազգաբնակչությանը զինել հարկադրական միջոցների օգնությամբ։ «Թուրքական զորքերի կողմից Քեղի գյուղը գրավելուց հետո,— ասվում է մի փաստաթղթում,— պետն իր մարդկանց ուղարկեց շրջակա բոլոր գյուղերը՝ բնակչությանն առաջարկելու անձնատուր լինել, թուրքական սուլթանին իրենց հպատակությունը հայտնել և Ռուսաստանի դեմ մղվող պայքարում նրան օգնություն ցույց տալ, որի համար նրանք սպառազինություն կստանան» [2]։

Իրենց պրոպագանդայի ազդեցության տակ ընկած փոքրաթիվ մահմեդականներից թուրքական զինվորական իշխանությունները չետնիկական (պարտիզանական) ջոկատներ էին կազմում։ Նրանց, ովքեր չէին վճռում չետնիկ անդամագրվել, քշում էին զենքի ուժով [3]։ Այսպես կոչված չետնիկական ջոկատները ինքնուրույն չէին գործում, այլ ուղարկվում էին առաջավոր դիրքեր, իսկ հաճախ օգտագործվում էին թուրքերի կողմից դաշտային ամրությունների կառուցման աշխատանքներում։ Նրանց հրամանատարները թուրքական սպաներ էին կամ տեղական բեկեր։

Այդպիսի ջոկատները շատ չէին և, հասկանալի է, նրանք չէին կարող քիչ թե շատ էական դեր խաղալ կովկասյան ճակատի ռազմական գործողություններում։

Թուրքական ձախ սոցիալիստների կոնֆերանսում (որը տեղի ունեցավ Մոսկվայում 1918 թ. հուլիսին) կարդացած «պատերազմի ազդեցությունը Թուրքիայի կյանքի վրա» վերնագրով իր զեկուցման մեջ Ջեվդեթը նշում էր, որ Անդրկովկասում թուրքական բանակի հարձակման ժամանակ գրավված շրջանների ազգաբնակչությունը հրաժարվում էր միանալ նրան։ Տեղական բնակչության մի աննշան մասը միայն, այն էլ իր կամքին հակառակ, սպառազինվեց թուրքերի կողմից։ Թուրքական նվաճողները անխնա կերպով բռնագրավում էին այն անձանց ունեցվածքը, ովքեր հրաժարվում էին հանդես գալ ռուսական բանակի դեմ [1]։

Անդրկովկասից թուրքական զորքերին վռնդելուց հետո ցարական իշխանությունները հատուկ հետաքննություն էին կատարում՝ պարզելու համար, թե թուրքական օկուպացիայի շրջանում տեղի մահմեդական ազգաբնակչությունը ինչպես է պահել իրեն։ Այդ նպատակով տեղերը ուղարկվեցին պաշտոնական անձինք, որոնք բարենպաստ եզրակացության հանգեցին։

Այսպես, գեներալ-լեյտենանտ Պորշինը 1915 թվականի նոյեմբերի 17-ին հաղորդում էր, որ «մարզի բոլոր լեռնական-մահմեդականների, աջարացիների ընդհանուր դավաճանություն չի եղել. միայն առանձին հանցավոր անձինք, որոնց թիվը չէր անցնում երկու հարյուրից, դավաճանել են» [2]։

Այդ նույն կապակցությամբ Բաթումի մարզի ռազմական նահանգապետ գեներալ-մայոր Ռոմանովսկու զեկուցագրում ընդգծվում էր, որ «աջարացիները նվիրված են Ռուսաստանին, նրանք դավաճաններ չեն, միայն առանձին անձինք ապականում են աջարացու ազնիվ նվիրվածությունը» [3]։

Աջարացիների անմեղսակից լինելը ապացուցվեց նաև 1915 թվականի հոկտեմբերին Բաթումում կազմակերպված դատական պրոցեսի ժամանակ, երբ դատարանը դավաճանության մեջ մեղադրանքը չապացուցված համարեց [4]։

Կովկասյան թերթերում հրապարակված մի շարք փաստեր վկայում են այն մասին, որ 1914 թվականի վերջին թուրքական զորքերի կողմից գրավված շրջաններում բնակվող վրացի-մահմեդականները թուրքերին դիմադրություն էին ցույց տալիս և իրենց պաշտպանության տակ վերցնում տեղի հայ ազգաբնակչությանը։ Այսպես, Թիֆլիսի մամուլում նշվում էր, որ երբ «նոյեմբերին թուրքական հրոսակները ներխուժեցին Իմերխևի և Շավշեթի... 18 գյուղերի բնակիչները՝ հիշված մարզերի վրացի մահմեդականները, ոչ միայն խանգարեցին թուրքական ասքյարների ներխուժմանը իրենց

1 ЦГИА Груз. ССР, ф .2с, д. 3193, л. 112—113.
2 Նույն տեղում, թ. 77։
3 ЦГИА Груз. ССР, ф. 2с, д. 3197, л. 38.

1 Архив ИМЛ при ЦК КПСС, ф. 17, оп. 1, д 90, л. 10.
2 ЦГИА Груз. ССР, ф 2с, оп. 1, д. 3193, л. 221—224.
3 Նույն տեղում, թ. 215—219։
4 «Кавказское слово», 15.X 1915, № 227.

գյուղերը, այլև թույլ չտվեցին, որ վնաս հասցվի նահանգի միակ հայկական՝ Փխիկուր գյուղի բնակչությանը։ Սպառնալիքները և Թուրքերի կողմից Կարսի ու Բաթումի գրավման մասին կեղծ լուրերը ոչնչի չհանգեցրին, և Իմերխևի բնակչությունը հավատարիմ մնաց իր որոշմանը։ Իմերխևցիները հաճախ էին ետ մղում Փխիկուր գյուղի վրա Թուրքերի ձեռնարկած հարձակումները... Իմերխևցիները հայտարարեցին, որ միայն իրենց ու իրենց երեխաների ու կանանց դիակների վրայով Թուրքերը կարող են հասնել մինչև Փխիկուր»։

«Այսպիսով,— եզրակացնում էր հոդվածի հեղինակը,— իմերխևցիները պաշտպանեցին հայերին ամբողջ չորս ամիս, մինչև որ ռուսական զորքերը չգրավեցին Շավշեթն ու Իմերխևը։ Փխիկուր գյուղի հայ բնակչությունը փրկված էր» [1]։

Ականատեսներից մեկը, նկարագրելով Թուրքական զորքերի գազանությունները Արդանուշում ու Արդվինում, նշում էր, որ տեղի Թուրքերի մեջ քիչ չէին այնպիսիները, որոնք իրենց կյանքը վտանգի ենթարկելով, պաշտպանում էին հայերին [2]։

Մենք նշեցինք, որ պատրաստվելով ներխուժել Անդրկովկաս, երիտթուրքերը մեծ հույսեր էին կապում այստեղ բնակվող քրդերի հետ։ Սակայն այդ հույսերն էլ չարդարացան։ Այսպես, Կարսի մարզի զինվորական նահանգապետը 1914 թվականի դեկտեմբերի 5—6 հաղորդում էր, որ Արդվինի օկրուգի քրդերը վռնդեցին Թուրքական էմիսարներին և պատրաստ են դիմադրություն ցույց տալ Թուրքական զորքերին [3]։

Թուրքական զորքերի կողմից օկուպացիայի ենթարկված Անդրկովկասի շրջանները քայքայվել էին։ Առանձնապես տուժեց քրիստոնյա ազգաբնակչությունը՝ հայերը, հույները, ասորիները։ Արդվին, Արդանուշ քաղաքները մերձակայքի շրջանների հետ միասին, և մինչև Ուրմիա ու Սոուջբուլախ ընկած ամբողջ տարածությունը կողոպտված էին։ Հայկական, հունական և ասորական գյուղերի բոլոր տղամարդկանց Թուրքերը սպանել էին, իսկ կանայք ու նույնիսկ դեռատի աղջիկները գերեվարվել էին կամ անարգվել [4]։

Արդանուշի ու Արդվինի գրավման առաջին իսկ օրից Թուրքական զորքերը հայերի զանգվածային ջարդ կազմակերպեցին։ Պատահականությամբ փրկված հայերին հաջողվեց փախչել [5]։

1 «Закавказская речь», 19.V.1915.
2 «Кавказское слово», 28.III.1915, № 69.
3 ЦГИА Груз. ССР, ф .2с, д. 3561, л. 7—8.
4 «Кавказское слово», 3.III.1915, № 39.
5 «Русское слово», 7.II.1915, № 30.

Արդահանի օկրուգից Թիֆլիս ժամանած պետական դումայի նախկին անդամ Զախար-բեկ Աջարսկին հաղորդում էր հետևյալը. «Արդահանի օկրուգն այլևս գոյություն չունի. ամեն ինչ թալանված է, բնակչության մեծամասնությունը սրի է քաշված... դուք կարող եք շրջել տասնյակ գյուղեր և ոչ մի տեղ կենդանի արարածի չեք հանդիպի, միայն դիակներ, դիակներ ու դիակներ... Ովքեր կարողացան փախչել, այժմ գտնվում են Ախալքալաքում, Շավշեթում և Պասխավսկի տեղամասում, սակայն այստեղ շատ քչերը փրկվեցին, մեծ մասամբ դրանք կանայք ու երեխաներ էին... բայց եթե դուք իմանայիք, թե ինչքան մարդ ճանապարհին ցրտահարվեց... ուղղակի սարսափելի է... օկրուգի այն գյուղերը, որոնք պատերազմից առաջ շատ հարուստ էին, այժմ, ինչպես ժանտախտից հետո, բոլորովին դատարկվել են։ Մերիյամ, Խելավան, Սեքերեկ, Ուր, Պանգիս, Օլչակի, Սազարա, Սարդարա, Կերմակ, Դաղագյուլ, Ռեվազ, Շեդեվան, Զիկովա, Կեվդեդաման, Ալաբա և շատ ուրիշ գյուղերում բոլոր տղամարդիկ, սրի են քաշվել... անասունները քշվել են, տները՝ քար ու քանդ արվել» [1]։

Սակայն Թուրքական զորքերը Բաթումի ու Կարսի մարզերում երկար չմնացին։ Սարիղամիշի օպերացիայում Թուրքական 3-րդ բանակի գլխավոր ուժերի ջախջախումը նպաստեց այդ մարզերի արագ մաքրմանը Թուրքական զավթիչներից։ Թուրքերին Անդրկովկասի սահմաններից դուրս վռնդելու գործում մեծ դեր խաղաց երկրամասի ազգաբնակչության, այդ թվում կամավորների դրուժինաների (որոնք կռվում էին ռուսական զորքերի հետ կողք-կողքի) կողմից կովկասյան բանակին ցույց տված անմիջական օգնությունը։

***

1915 թվականի սկզբին կովկասյան ճակատի ռազմական գործողություններն արդեն ընթանում էին Արևմտյան Հայաստանի տերիտորիայում։ Ռուսական կովկասյան բանակը առաջ էր շարժվում դեպի Անատոլիայի խորքը։

Տակավին պատերազմի սկզբին, կովկասյան բանակի 4-րդ կորպուսի զորամասերը, որոնք գործում էին Երևանի ուղղության վրա, մտան Բայազետի ու Ալաշկերտի հովիտները։ Նրանք, այդպիսով, պետք է ապահովեին ռուսական զորքերի ձախ թևը, որը գործում էր գլխավոր՝ Կարս—Կարինի ուղղությամբ։ Սարիղամիշի

1 «Кавказское слово», 31.XII 1914 ,1/13, 1.1915 ,№ 89.

տակ թուրքական զորքերի ջախջախումից ու Արևմտահայաստանում ռուսական բանակի հաջող հարձակումից հետո, 4-րդ կորպուսի զորամասերի գործողություններն ավելի աշխուժացան։ Ռուսական հրամանատարությունն ուժեղացրեց նրանց ձախ թևը՝ Վանա լճի ու Մուրդ-սուի ուղղությամբ հետագա առաջխաղացումն ապահովելու համար։ Կովկասյան բանակի անընդմեջ հարվածների տակ թուրքական զորքերն անկանոն ձևով նահանջում էին դեպի Մուշ և Բաղեշ, ճանապարհին թալանելով հայկական գյուղերը, ոչնչացնելով նրանց բնակիչներին։ Հետապնդելով հակառակորդին, ռուսական զորքերը 1915 թվականի փետրվար-մայիս ամիսներին գրավեցին Մանազկերտը, Բաշկալան, Շատախը, Ղոթուրը, Արճեշը, Վանը։

4-րդ կորպուսի զորամասերի դեմ խոշոր ուժեր կենտրոնացնելով (89 գումարտակ)՝ Աբդուլ-Քերիմ-փաշայի հրամանատարության ներքո, թուրքական հրամանատարությունը հակահարձակման կարգադրություն արեց։ Թուրքական զորքերի թվական զգալի գերազանցության պատճառով 4-րդ կորպուսը ստիպված էր նահանջել դեպի Ալաշկերտի հովիտը։ Հուլիսի վերջին օժանդակ ուժեր ստանալով, 4-րդ կորպուսի զորամասերն իրենց հերթին անցան հակահարձակման և, թուրքերին ետ շպրտելով, նորից դուրս եկան Վանա լճի ափը։ Շուտով Արևմտյան Հայաստանի ամբողջ հարավ-արևելյան մասը մաքրված էր թուրքական զորքերից։ Այժմ արդեն Կարս-Կարինի ուղղությամբ գործող զորքերի ձախ թևը, որտեղից նախապատրաստվում էր հարձակում Կարինի վրա, լիովին ապահովված էր։

Սկզբում այդ հարձակումը ծրագրվում էր ձեռնարկել 1916 թվականի գարնանը։ Սակայն Գալլիպոլի թերակղզում դեսանտ հանելու օպերացիան, որը կազմակերպել էր Չերչիլը, կատարելապես ձախողվեց և անգլիական հրամանատարությունը ստիպված իր զորքերը 1916 թվականի հունվարին փոխադրեց Սալոնիկի ճակատը։ Այդ պատճառով էլ կովկասյան բանակի հրամանատարությունը որոշում ընդունեց Կարինի վրա ձեռնարկվելիք հարձակումն արագացնել։ Հարկավոր էր կանխել թուրքական 5-րդ բանակի զորամասերի ժամանումն Արևելյան Անատոլիա՝ Գալլիպոլիի թերակղզուց։

Սև ծովում ռուսական նավատորմի գերակշռությունը հեշտացնում էր ծովային ճանապարհով նոր ուժերի տեղափոխումը կովկասյան ճակատ։ 1916 թվականի հունվարի 11-ին կովկասյան բանակը հարձակման անցավ ամբողջ ճակատով։ Ռուսական զորքերը հարձակվում էին երեք ուղղությամբ. Օլթիի՝ թուրքական 11-րդ կորպուսի ձախ թևը շրջանցելու նպատակով, Կարս—Կարինի և Ալաշկերտի։ Ալաշկերտի ուղղությամբ առաջխաղացող զորքերի

վրա խնդիր էր դրված Վանա լճի շրջանում գործող հակառակորդի ուժերը կտրել Կարինը պաշտպանող զորամասերից։

Կարս—Կարինի ուղղությամբ գործող աջ թևի զորամասերի հանկարծակի հարվածով թուրքական ուժերը շպրտվեցին դեպի Թորթում լիճը։ Միևնույն ժամանակ Ալաշկերտի ուղղությամբ հարձակվող զորքերը թուրքերին ստիպեցին նահանջել դեպի Մուշ (Վանա լճից դեպի արևմուտք)։

Կենտրոնական ուղղության վրա ռուսական զորքերը հունվարի 16-ին հասան մինչև Քյոփրյու-քյոյ։ Այստեղ, համառ կռիվներից հետո, ջախջախվեցին թուրքական երեք դիվիզիաներ, որոնց մնացորդները փախան դեպի Կարին։

Կովկասյան բանակի այդ հարձակման հետևանքով թուրքական 11-րդ կորպուսը մեծ կորուստներ կրեց։ Հատկապես շատ էր սպանվածների ու վիրավորների թիվը։ 4 հազար թուրքական զինվորներ գերի վերցվեցին։ Նահանջի ճանապարհին թուրքական զորքերը թողեցին իրենց հրետանու, զինամթերքի մեծ մասը։ Քյոփրյու-քյոյի տակ կրած պարտությունից հետո թուրքական ուժերն այլևս չկարողացան լուրջ դիմադրություն ցույց տալ դեպի Կարին շտապող ռուսական զորքերին։ Կովկասյան բանակի անընդհատ հարձակումը թուրքական հրամանատարությանը ո՛չ ժամանակ, ո՛չ էլ հնարավորություն էր տալիս ի մի հավաքելու անկանոն նահանջի ժամանակ լեռներում ու անտառներում ցրված զորքերին։ Միևնույն ժամանակ ռուսական նավատորմը Սև ծովում՝ Տրապիզոնի մոտ, ոչնչացրեց հակառակորդի 163 առագաստանավ, բեռնված ռազմական հանդերձանքով ու պարենով[1]։

Ռուսական զորքերը Կարինի վրա հարձակվում էին կենտրոնացված՝ հյուսիսից, արևելքից ու հարավից։ Կարինի ամրոցը պաշտպանող 100 հազար թուրքեր չկարողացան այն իրենց ձեռքում պահել՝ զինանյութերի ու պարենի բացակայության պատճառով[2]։ Առաջ շարժվելով խոր ձյան միջով, 40 աստիճան սառնամանիքի պայմաններում, ռուսական զորքերը կռվով վերցնում էին մի ամրոցը մյուսի ետևից։

Հնգօրյա գրոհից հետո նրանք փետրվարի 16-ին ներխուժեցին Կարին և գրավեցին բերդը։ Գերի հանձնվեցին 235 սպա և 12866 զինվոր։ Որպես ավար ռուսների ձեռքն ընկան 323 հրանոթ և հսկայական քանակությամբ զինամթերք ու պարեն։ Կարինի ամբողջ օպերացիայի ժամանակամիջոցում՝ հունվարի 11-ից մին-

1 Buchan, p. 93.
2 Նույն տեղում։

չև փետրվարի 17-ը, թուրքերը կորցրին միայն սպանվածներով 60 հազար մարդ։ Այդ օպերացիայի ժամանակ ռուսները կորցրին, սպանված ու վիրավոր 16735 զինվոր և 400 սպա։ Ընդամենը կովկասյան բանակը կորցրեց իր կազմի 10 տոկոսը, իսկ թուրքական 3-րդ բանակը՝ 66 տոկոսը [1]։

Կարինի գրավումը ռազմաստրատեգիական մեծ նշանակություն ուներ։ Լեռնային հովտի կենտրոնում ընկած Կարինի բերդը ամբողջ Արևմտահայաստանին տիրանալու բանալին էր։ Բացի դրանից, Կարինի հովիտը կենտրոնական դիրք էր գրավում Անդրկովկասից դեպի կենտրոնական Անատոլիան գնացող ամենակարճ և ամենազլխավոր օպերացիոն գծի վրա։ Սև ծովի ափից, Անատոլիայից, Սիրիայից ու Միջագետքից եկող բոլոր հիմնական ուղիները խաչաձևվում էին Կարինի հովտում, որին տիրելով հնարավոր էր դառնում վերահսկել այդ բոլոր ուղիների հանգուցակետը։ Ռուսական բանակի գլխավոր շտաբի բնութագրումով «Կարինի բերդը միակ կետն է ամբողջ ասիական Թուրքիայում, որը միաժամանակ պաշտպանում է և՛ Անատոլիան, և՛ Սիրիան, և կարգավորում ստրատեգիական շարժումը դեպի Միջագետք։ Ընդհուպ մինչև Բոսֆորը այդպիսի մի ուրիշ կետ այլևս գոյություն չունի» [2]։

Կարինի անկումն ըստ էության նշանակում էր, որ Թուրքիան կորցնում է Արևմտյան Հայաստանը, իսկ կենտրոնական Անատոլիան՝ սպառնալիքի տակ ընկնում։ Ուստի և թուրքական կառավարությունն ամեն կերպ աշխատում էր բնակչությունից թաքցնել Կարինի գրավումը ռուսական զորքերի կողմից։ Թերթերին արգելված էր որևէ բան գրել այդ մասին։ Սակայն ճակատից ուղարկված զինվորների նամակներից Թուրքիայում շուտով իմացան Կարինի անկման մասին։ Այդ լուրն ամենուրեք մեծ խուճապ առաջ բերեց։ Բնակչությանը հանգստացնելու համար երիտթուրքերը փորձում էին նսեմացնել այդ կորուստի նշանակությունը։ Կառավարական մամուլը պնդում էր, որ թուրքական զորքերը նահանջել են «ստրատեգիական նկատառումներով» և «ավելի նպաստավոր դիրքեր» գրավելու համար։

Թերթերը փորձում էին «հաստատել», թե իբր բանակը «պահպանել է իր բոլոր ուժերը, որովհետև ռուսական ու թուրքական

1 Комбриг Н. Корсун, Эрзерумская операция, М., 1938, стр. 126; նույնի, Первая мировая война на Кавказском фронте, стр. 54—55, տե՛ս նաև Buchan, p. 96.

2 ЦГВИА, ф. 2000, оп. I, д. 3885, л. 21.

զորքերի միջև ոչ մի խոշոր ճակատամարտ տեղի չի ունեցել... Թուրքերն անհրաժեշտ չգտան Կարինը պաշտպանել» [1]։

Սակայն այդ կեղծ հայտարարությունները չէին կարող ոչ ոքի խաբել։ 1915 թվականի փետրվարին Ստամբուլում հակակառավարական խոշոր ցույց տեղի ունեցավ, որը ցրվեց ոստիկանության կողմից, իսկ նրա մասնակիցներից շատերը ձերբակալվեցին [2]։ Աթենքում Ռուսաստանի զինվորական գործակալն իր զեկուցագրերից մեկում նշում էր, որ դժգոհությունը երիտթուրքական ռեժիմից գնալով աճում է։ «Երիտթուրքական կառավարության ու գերմանացիների հանդեպ թշնամական վերաբերմունք, անկասկած, կա և այն ավելի ու ավելի է ուժեղանում,— հաղորդում էր նա Պետրոգրադ։ Բացի դրանից, իրենք՝ երիտթուրքերն ու գերմանացիները փոխադարձաբար մեղադրում են իրար, ում վրա է ընկնում Կարինի անկման մեղքը... Թուրքերը,— ասվում էր այնուհետև,— մեղադրում են գերմանացիներին՝ այդ նրանք այնքան վատ ամրացրին բերդը, որ նա շատ արագ գրավվեց, իսկ գերմանացիներն ասում են, որ եթե այնտեղ իրենց վրա դրվեր գլխավոր հրամանատարությունը (ինչի հետ թուրքերը չհամաձայնվեցին), Կարինը մինչև այժմ էլ կմնար Թուրքիայի ձեռքում» [3]։

Կարինի տակ կրած պարտությունը և Կարինի բերդի անկումը, որը թուրքական բանակի հիմնական բազան էր կովկասյան ճակատում, թուրքական հրամանատարությանը ստիպեցին Սիրիայում, Միջագետքում և նեղուցների գոտում գտնվող ուժերի մի մասը փոխադրել այդ շրջանը։ [4] Բուլղարիայի մասնակցությունը պատերազմին կենտրոնական տերությունների ու Թուրքիայի կողմում՝ 1915 թվականի հոկտեմբերին և Գալլիպոլիի թերակղզում անգլիական դեսանտ հանելու օպերացիայի ձախողումը [5] ազատում էր

1 АВПР, ф. «Политархив», д. 4656, л. 10.

2 Տե՛ս „Daily Telegraph", 25, II 1916.

3 ЦГВИА, ф. 2000/с, оп. I, д. 824, л. 367—368.

4 Նույն տեղում, թ. 342։

5 Ռուսական բանակի հաջողությունները կովկասյան և արևելյան ճակատներում անհանգստություն առաջ բերին Անգլիայում ու Ֆրանսիայում, որոնք երկյուղ էին կրում այն բանից, որ ռուսները կարող են մոտենալ Կոստանդնուպոլսին ու նեղուցներին՝ միաժամանակ Անատոլիայից ու Բալկաններից։ Դրանով պետք է բացատրել Գալլիպոլի թերակղզում Անգլիայի ու Ֆրանսիայի կողմից ձեռնարկված հարձակումը, որը նպատակ ուներ գրավել Դարդանելը, Ստամբուլն ու Բոսֆորը՝ նախքան Ռուսաստանը կհասցներ դրանք անեքսիայի ենթարկել։ 1916 թվականի գարնան ու ամռան ամիսների ընթացքում Գալլիպոլի թերակղզում ու Դարդանելի շրջանում արյունահեղ մարտեր էին մղվում, որոնց հետևանքով անգլո-ֆրանսիական զորքերը կորցրին 266 հազար մարդ, իսկ թուրքական զորքերը՝ 218 հազար։

Դարդանելի ափերին մղվող դաժան ու արյունահեղ մարտերի օրերին Անգլիա-

արևելյան Թրակիայում ու նեղուցների գոտում տեղաբաշխված թուրքական 2-րդ բանակի ուժերը, որոնք 1916 թվականի գարնանն ու ամռանը փոխադրվեցին Մուշի ու Բաղեշի շրջանը։ 1916 թվականի փետրվար—հունիս ամիսների ընթացքում կովկասյան ճակատ ուղարկվեց ընդամենը 250 հազար մարդ և մեծ քանակությամբ թնդանոթներ ու մարտական զանազան տեխնիկա[1]։

Թուրքական ուժերը կովկասյան ճակատում համալրվելուց հետո հաշվում էին 282 գումարտակ, 72 էսկադրոն և քրդական ջոկատներ, որոնք ընդգրկում էին շուրջ 10 հազար մարդ։

Ռուսական կովկասյան բանակի մեջ էին մտնում 183 գումարտակ, 49 դրուժինա, 6 կամավորական դրուժինա և հեծելազորային 175 հարյուրակ։ Ընդամենը 207 հազար սվին և 23 հազար սուր[2]։

Ավարտելով զորքերի կենտրոնացումը, թուրքական բանակը 1916 թվականի հունիսի 22-ին հարձակման անցավ։ Նրան հաջողվեց ճեղքել ճակատը կովկասյան բանակի աջ թևում (Տրապիզոնի ուղղությամբ)։ Բայց շուտով՝ հուլիսի 2-ին, թուրքերի շարժումը կասեցվեց և ռուսական բանակն իր ձախ թևում, թուրքեստանյան 2-րդ կորպուսի ուժերով, անցավ հակահարձակման։ Հուլիսի 16-ին ռուսական զորքերը մտան Բայբուրթ։ Մեծ կորուստներ կրելով, թուրքերը ստիպված էին նահանջել։ Նախաձեռնությունն այժմ անցավ կովկասյան բանակի կողմը։ Հարձակվելով ամբողջ ճակատով, նրա զորամասերը մոտենում էին Երզնկային։ Այդ առաջխաղացմանը մեծ օգնություն ցույց տվեց Պրիմորիե ջոկատը։ Վերջինս իր հարձակումն սկսելով Բաթումի մարզից Սև ծովի ափի երկայնքով, Ռիզե քաղաքի մոտ դեսանտ հանած ռուսական նավատորմի գործուն աջակցության շնորհիվ, ապրիլի 16-ին գրավեց Տրապիզոնը՝ մի շատ կարևոր նավահանգիստ Սև ծովի ափին, որն օգտագործվեց ծովային կարճ ճանապարհով զորքեր տեղափոխելու կով-

---

յի, Ֆրանսիայի ու Ռուսաստանի դիվանագետների միջև սուր պայքար էր գնում այն հարցի շուրջ, թե դաշնակիցներից որ մեկը պետք է տեր դառնա թուրքական նեղուցներին ու Ստամբուլին։ 1915 թվականի աշնանը Արևելյան ճակատում ռուսական զորքերի, իսկ Գալլիպոլի թերակղզում անգլո-ֆրանսիական զորքերի կրած պարտությունից հետո, երբ վերջիններս 1915 թվականի դեկտեմբեր — 1916 թվականի հունվարին հանվեցին թերակղզուց և էվակուացվեցին Սալոնիկ, ռազմական սպառնալիքը վերացավ և դաշնակիցները կարծես թե, «հանգստացան», քանի որ այժմ նրանցից և ոչ մեկը ուղղակիորեն չէր սպառնում Ստամբուլին ու նեղուցներին։ Թուրքական նեղուցների ու մայրաքաղաքի հետագա ճակատագիրը կախված էր պատերազմի ելքից։

1 ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 3885, л. 83 об; ф. 2000/с, оп. 1, д. 824, л. 328—329.

2 Նույն տեղում, գ. 3892, թ. 36, գ. 3891, թ. 248։

կասյան բանակը և զինամթերք մատակարարելու նրան։ Պրիմորիեի ջոկատի առաջխաղացումը հարավ-արևմտյան ուղղությամբ թուրքական 3-րդ բանակին խանգարեց ետ մղելու կովկասյան բանակի աջ թևի գրոհը Երզնկայի վրա։

Կոմբինացված հարվածներով կովկասյան 5-րդ և թուրքեստանյան 2-րդ կորպուսի զորամասերը հուլիսի 25-ին գրավեցին Երզնկան։ Թուրքական 3-րդ բանակը վերստին ծանր պարտություն կրեց։ 17 հազարից ավելի մարդ դերի ընկավ։ Երզնկայի գրավումը ռուսական զորքերի կողմից նշանավորում էր ամբողջ Արևմտահայաստանի կորուստը։ Երկյուղելով ռուսական զորքերի հետագա առաջխաղացումից դեպի երկրի խորքը՝ Սրվազի և Անգորայի ուղղությամբ, թուրքական հրամանատարությունը լարեց բոլոր ուժերը՝ կասեցնելու կովկասյան բանակի հետագա առաջխաղացումը։ Այդ նպատակով թուրքական բոլոր ռեզերվները հավաքվեցին Արևելյան Անատոլիայում։ Բավական է նշել, որ Օսմանյան կայսրության բոլոր զինված ուժերի 54 տոկոսը 1916 թվականին գործում էր կովկասյան ճակատում, որը թուրքական բանակի համար առաջվա պես շարունակում էր մնալ որպես համաշխարհային պատերազմի հիմնական ճակատ։

Գերմանա-թուրքական հրամանատարությունը չկարողացավ կազմակերպել 3-րդ և 2-րդ բանակների միաժամանակյա հարձակումը։ 2-րդ բանակը հարձակման անցավ շատ մեծ ուշացումով՝ օգոստոսի 3-ին, երբ 3-րդ բանակն արդեն ջախջախվել էր Երզնկայի օպերացիայում։ Այդ հանգամանքը զգալիորեն օգնեց կովկասյան 1-ին և 4-րդ կորպուսների զորքերին՝ ետ մղելու հակառակորդի 2-րդ բանակի հարձակումը, որը նպատակ ուներ կովկասյան բանակի ձախ թևի վրա գրոհելով ճեղքել ռուսական ճակատը հյուսիս-արևմտյան ուղղությամբ և շրջանցելով Կարինը հարավ-արևելքից դուրս գալ կովկասյան բանակի թիկունքը։ Համառ կռիվները, որ ծավալվել էին այդ օրերին երկու կողմերի միջև, հաճախ վերջանում էին սվինամարտով։ Այդ կռիվները շարունակվեցին 39 օր։ Թուրքական զորքերը չկարողացան ընդդիմադրել և նահանջեցին։ 1916 թվականի ամռան կռիվների ընթացքում թուրքական 2-րդ և 3-րդ բանակները կորցրին 60 հազար մարդ, իսկ կովկասյան բանակը՝ 21 հազար։

Կովկասյան բանակի զորամասերի հակահարձակումը թուրքական 2-րդ և 3-րդ բանակների արյունաքամ եղած զորքերին ստիպեց նոր նահանջի ճամփան բռնել։

Այսպիսով, 1915 թվականի նոյեմբեր-դեկտեմբերին և ամբողջ 1916 թվականի ընթացքում տեղի ունեցած մարտերի հետևանքով

կովկասյան բանակը կատարեց իր հիմնական առաջադրանքը՝ Անդրկովկասի ապահովումը թուրքական զորքերի ներխուժումից և Արևմտահայաստանի նվաճումը [1]։

Թուրքական հրամանատարության հետագա փորձերը՝ ռուսական զորքերին դուրս մղելու Արևմտահայաստանում նրանց գրավված դիրքերից, ձախողվեցին։

Երկարատև ու քայքայիչ պատերազմը զգալիորեն թուլացրեց ինչպես թուրքական զորքերի, այնպես էլ ռուսական կովկասյան բանակի մարտունակությունը։ Չնայած այդ բանին, կառավարող երիտթուրքական կլիկը, ինչպես և ցարական կառավարությունը, ոչնչի առջև կանգ չէին առնում իրենց ռազմական նպատակների իրականացմանը հասնելու համար։

Պատերազմի չորրորդ տարում տնտեսական անկումն ու քայքայումը Ռուսաստանում այն աստիճան խորացան, որ ռուսական զորքերը բոլոր ճակատներում մեծ զրկանքներ էին կրում։ Արևմտյան ճակատում ռուսական զորքերի կրած պարտությունները նպաստում էին հեղափոխական շարժումների ուժեղացմանը, որոնք ի վերջո հանգեցրին փետրվարյան բուրժուա-դեմոկրատական հեղափոխությանն ու ինքնակալության տապալմանը։ Ցարիզմի անկումից հետո իշխանության գլուխ անցած բուրժուա-կալվածատիրական ժամանակավոր կառավարությունը, ժողովրդական զանգվածների ցանկությանը հակառակ, հայտարարեց, որ ինքը հվատարիմ է մնում դաշնակիցներին և շարունակեց իմպերիալիստական պատերազմը։ 1917 թ. հունիսին Արևմտյան ճակատում Կերենսկու ձեռնարկած հարձակումը կատարյալ ձախողում կրեց։

Միջագետքում անգլիացիների ռազմական գործողություններին աջակցելու նպատակով կովկասյան բանակի հրամանատարությունը հարձակման նետեց Բարաթովի էքսպեդիցիոն կորպուսը։ Այդ կորպուսի զորքերը, հաջող մարտերից հետո, փետրվարի վերջին—մարտի սկզբին գրավեցին Համադանը, Քերմանշահը, Բիջարը, իսկ մարտի 23-ին՝ Սպահանը։ Անգլիական զորքերը, շարժվելով Բաղդադի ուղղությամբ, փետրվարի 23-ին գրավեցին Կուտ-էլ-Ամարան։ 20 հազար թուրքական զինվորներ ու սպաներ գերի հանձնվեցին անգլիացիներին։ Կուտ-էլ-Ամարայի տակ կրած պարտությունից հետո թուրքական զորքերը փախուստի դիմեցին։ Մարտի 11-ին անգլիացիները մտան Բաղդադ։ 1917 թվականի ապրիլի 2-ին անգլիական զորքերը հանդիպեցին գեներալ Բարաթովի զորամասերի հետ Կըզել-Ռաբաթում [2]։

[1] Корсун Н. Первая мировая война на Кавказском фронте, стр. 77
[2] Адамов Е. А. Раздел Азиатской Турции, стр. 83.

Միջագետքի ճակատում անգլիացիների տարած հաղթանակները, ինչպես և Պաղեստինի ու Սիրիայի արագ գրավումը նրանց կողմից 1918 թվականի աշնանը բացատրվում էր գլխավորապես նրանով, որ նախապատրաստվելով Անդրկովկասի նվաճմանը (ինչպես նշվեց վերևում), թուրքական հրամանատարությունը շարունակում էր խոշոր ուժեր պահել Արևմտյան Հայաստանում։

Ռուսական կովկասյան բանակը 1917 թվականի կեսերից արդեն ի վիճակի չէր հարձակում զարգացնել։ Պատերազմի մի քանի տարիների ընթացքում կովկասյան բանակի զինվորները հսկայական զրկանքներ ու դժվարություններ էին կրել։ Կովկասյան ճակատի թիկունքի աշխատանքը կազմալուծվել էր։ Ամենուրեք իշխում էր ինքնահոսը, թափթփվածությունը, զորահրամանատարների անպատասխանատվությունը։ Զորքերի մատակարարումը սպառազինությամբ չավ ից դուրս վատ հիմքերի վրա էր դրված։ Բանակին պակասում էին ոչ միայն բարդ տեսակների սպառազինություն, այլ նույնիսկ հրացաններ։ Ճակատի պահեստային գնդերը միայն 55 տոկոսով էին զինված անհրաժեշտ զենքով [1]։ Զափազանց վատ վիճակում էր նաև ճակատը պարենով մատակարարելու գործը։

1917 թվականի հունիսին Ալեքսանդրապոլի կայազորի պետը իր զորամասերից մեկից ստացավ հետևյալ բովանդակությամբ հեռագիրը. «Բրիգադային կոմիտեն առաջարկում է ձեռք առնել վճռական միջոցներ... որպեսզի ջիբրաիլյան ջոկատի զինվորները քաղցից չմահանան» [2]։ Կարինում գտնվող զինվորները գրում էին. «Կովկասյան ճակատը և, մասնավորապես, մենք, մոռացված ենք աստծո և մարդկանց կողմից։ Հաց, պաքսիմատ, հագուստ չկա։ Մարդիկ տառացիորեն սովահար են լինում։ Մեզ առաջ են քշում, զրկելով ամենաանհրաժեշտ բաներից» [3]։

Կովկասյան ճակատի զինվորները տրտունջից անցնում էին ակտիվ բողոքի։ Աճում էր դասալքությունը, շատ հաճախ նրանք լքում էին դիրքերը։ Կովկասյան բանակի զորամասերից մեկի զինվորական պատգամավորների սովետի նախագահ էսեր Անիսիմովը 1917 թվականի մարտին ժամանակավոր կառավարության կոմիսարին խնդրում էր ձեռք առնել արտակարգ միջոցներ՝ դասալքության դեմ պայքարելու համար [4]։ Անդրկովկասի քաղաքներում ու գյուղերում մեծ թվով դասալիքներ էին թաքնվել։ Տեղական իշխանու-

[1] ЦГАОР Груз. ССР, ф. 1, оп. 5, д. 430, л. 41.
[2] ЦГАОР Груз. ССР, ф. 1, оп. 5, д. 6, л. 211.
[3] Նույն տեղում, թ. 41։
[4] Նույն տեղում, ф. 41, д. 169, л. 1.

թյունների զեկուցագրերից մեկում ասված էր, որ Երևանը լեփ-լեցուն է դասալիքներով [1]։

Ինչ վերաբերում է թուրքական բանակին, ապա վերջինս երկրում տիրող տնտեսական ու ֆինանսական քայքայվածության ու ռազմաճակատներում կրած պարտությունների հետևանքով 1917 թվականին մեծ դժվարություններ էր կրում։ Բանակը կազմալուծվում էր։ Պատերազմի դեմ տարերային բողոքն իր արտահայտությունն էր գտնում զանգվածային դասալքության ու զինվորական ծառայությունից ուղղակի խուսափելու մեջ։

Զանգվածային դասալքությունը թուրքական բանակում գոյություն ուներ տակավին 1914 թվականի ամռանն ու աշնանը՝ նրա զորահավաքի շրջանում։ Այսպես, Ադամովը Կարինից հաղորդում էր, որ Արևելյան Անատոլիայի վիլայեթներում 1914 թվականի հոկտեմբերի վերջին հաշվվում էր մոտ 50 հազար դասալիք։ Այդ կապակցությամբ «գերմանական ռազմական հրամանատարության պնդումով ռազմա-դաշտային դատարաններին հրաման էր տրված, այդ չարիքի առաջն առնելու նպատակով, դատի տրված բոլոր փախստականների նկատմամբ մահվան դատավճիռ կայացնել» [2]։

Պատերազմի տարիներին, դարձյալ գերմանական հրամանատարների նախաձեռնությամբ, Թուրքիայում դաժան միջոցներ էին ձեռք առնվում դասալքության դեմ պայքարելու համար։ Իգնատեր՝ Ռուսաստանի զինվորական գործակալը Ֆրանսիայում, 1915 թվականի նոյեմբերին տեղեկացնում էր, որ «թուրքական աղբյուրների համաձայն, թուրքական դասալիքների թիվը Փոքր Ասիայում մեծ է... Թուրքիայում կարգադրություն է արված, որով դասալիքներին 27 օր ժամանակ է տրվում՝ մերձավորագույն հրամանատարությանը ներկայանալու համար։ Այդ ժամկետը լրանալուց հետո ամուսնացած դասալիքները կհամարվեն բաժանված իրենց կանանցից։ Բոլոր դասալիքների գույքը կբռնագրավվի։ Այդ միջոցառումն անց է կացված գերմանական սպաների ցուցումով» [3]։

Դասալքության դեպքերն առանձնապես շատ էին զորքերի տեղաշարժերի ժամանակ։ Մի զեկուցագրից երևում է, որ առանձին զորամասեր ճանապարհին կորցնում էին իրենց կազմի 1/10 մասը [4]։ Թուրքական շատ զորամասեր, մինչև կհասնեին իրենց նշանակման

1 ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 517, թ. 14—15։
2 ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 3860, л. 608.
3 Նույն տեղում, գ. 6753, թ. 3։
4 Նույն տեղում, գ. 3891, թ. 168—169։

վայրը, խիստ նվազում էին։ Այսպես, Ուրֆայի գունդը 1916 թվականի սկզբին սկսեց իր երթը 1800 մարդուց բաղկացած, իսկ մայրաքաղաք հասցրեց ընդամենը 400 հոգու։ Դիարբեքիրից դուրս եկած զումարտակի կազմում կար 900 զինվոր, այնինչ Կարին հասնելու պահին մնացել էին ընդամենը 240 հոգի [1]։ Երբեմն դասալքում էին ամբողջ զորամասեր։ Այսպես, 1916 թվականի գարնանը ուժեղ զայրույթը համակել էր Այվալիկ քաղաքի կայազորին։ Մշտապես քաղցից տառապող զինվորները փախել էին լեռները։ Նրանց ետևից ուղարկվել էր մի ջոկատ՝ գերմանական սպաների հրամանատարությամբ [2]։

1916 թվականի նոյեմբերին Թուրքիայից ստացված մի նամակում ասվում էր, որ դասալքությունը թուրքական բանակի շարքերում տարածված է ոչ միայն զինվորների, այլև սպաների մեջ՝ ընդհուպ մինչև զումարտակների ու գնդերի հրամանատարները [3]։

Խոսելով թուրքական 3-րդ բանակի թվական կազմի կրճատման մասին, Պոմյանկովսկին նշում էր, որ այդ բանը բացատրվում էր գլխավորապես զինվորների զանգվածային դասալքությամբ։ 1916 թվականի ամռանը այդ բանակի թիկունքում գտնվում էին 50 հազարից ավելի դասալիքներ [4]։ 1917 թվականի գարնանը Թուրքիայում հաշվում էին 100 հազարից ոչ պակաս դասալիքներ, որոնց մեծ մասը բանակների թիկունքում մարոդյորությամբ էր զբաղված [5]։

Թուրքական բանակի վրա գերմանական զինվորականների կատարած անսահմանափակ վերահսկողությունը, գերմանական սպաների արտոնյալ վիճակը, նրանց կոպիտ ու գոռոզ վարքը, այս բոլորը ուժեղ դժգոհություն էին առաջ բերում թուրքական սպայական կազմի մեջ, վիրավորում էին նրանց ազգային զգացմունքները։ Թուրքական սպաները բողոքում էին այն բանի դեմ, որ գերմանական հրամանատարները բարձր ռոճիկ էին ստանում, այն դեպքում, երբ թուրք սպաների ցածր ռոճիկը մշտապես ուշացնում էին։ Այդ մասին խոսվել էր 1915 թվականի հունվարին կայացած Ստամբուլի կայազորի թուրք սպաների գաղտնի ժողովում, որին ներկա գտնվողները տեղում բռնվեցին ոստիկանության կողմից և պատժվեցին [6]։

1 АВПР, ф. «Политархив», д. 4665, л. 2.
2 Նույն տեղում, գ. 4658, թ. 25։
3 ЦГИА Груз. ССР, ф. 2с, оп. 1, д. 4670, л. 22.
4 Pomiankowski, S. 225.
5 АВПР, ф. «Политархив», д. 3891, л. 460.
6 ЦГИА Груз. ССР, ф. 2, оп. 1, д. 3599, л. 97.

Թուրք սպաների բողոքը գերմանացիների ճնշման դեմ բանակում հաճախ ավելի սուր բնույթ էր ընդունում, երբեմն գործը հասնում էր մինչև արյունահեղ ընդհարումների։ Այսպես, «Թան» թերթը 1916 թվականի հունվարի 20-ին հաղորդում էր գերմանական ու թուրքական սպաների միջև Ստամբուլում տեղի ունեցած ընդհարման մասին, որի ժամանակ երկու կողմերից էլ շատերը վիրավորվել էին [1]։ Անգլիական «Դեյլի տելեգրաֆ» թերթը 1916 թվականի հունվարի 24-ին գրում էր, որ Ստամբուլում հայտնաբերվել էր թուրք սպաների դավադրություն։ Դավադիրները նպատակադրվել էին կոտորել բոլոր գերմանական հրամանատարներին։ Այդ դավադրության մասնակիցների մեծ մասը մահապատժի ենթարկվեց [2]։

Ստամբուլից ուղարկված զեկուցագրերից մեկում հաղորդվում էր կովկասյան ճակատամարտում գտնվող 5-րդ դիվիզիայում ծագած խռովության մասին, որը ճնշելիս սպանվել էին 40 հոգի, իսկ շատերը՝ վիրավորվել։ Նույն տեղում նշվում էր, որ «հրամանատարական կազմի բարձրաստիճան թուրք սպաները պատշաճ պատրվակով ձգտում են ազատվել գերմանացիների հետ համագործակցելուց՝ նրանց ուղարկելով այլ զորամասեր» [3]։

Այդ շրջանում Թուրքիայից ստացվող տեղեկությունները վկայում էին այն մասին, որ պատերազմի ձգձգվելուն զուգընթաց գնալով ուժեղանում էր դժգոհությունը բանակում երիտթուրքական կուսակցության տիրապետությունից ու երկրում գերմանական զինվորականների տեր ու տնօրինությունից [4]։ Այդ դժգոհությունը հաճախ իր արտահայտությունն էր գտնում այն բանում, որ թուրք զինվորներն ուղղակի հրաժարվում էին ենթարկվել իրենց գերմանացի հրամանատարներին և արյունալի դատաստան էին տեսնում վերջիններիս հետ։ Այդ մասին էր հաճախակի հաղորդում, մասնավորապես, Բեռլինում Ռուսաստանի զինվորական գործակալ գեներալ Գոլովինը [5]։

Մի փաստաթղթում, որը վերաբերում է 1915 թվականի հունիսի 30-ին, հաղորդվում էր այն մասին, որ «բոլոր անհաջողություններում թուրքական զորքերը մեղադրում են գերմանացիներին... զինվորների ու գերմանական սպաների միջև հաճախ բախումներ են տեղի ունենում։ Մի տեղում 10 թուրքեր ուղղակի լքեցին դիրքերը, որի համար նրանք բոլորը գնդակահարվեցին գերմանացիների կողմից։ Տեսնելով այդ բանը, թուրքական սպան ու նրա զինվորները տեղ-

1 АВПР, ф. «Политархив», «Осведомительный отдел», д. 237, л. 51.
2 Նույն տեղում, թ. 59։
3 ЦГИА Груз. ССР, ф. 2с, оп. 1, д. 3599, л. 157.
4 Նույն տեղում, գ. 3187, թ. 27։
5 ЦГВИА, ф. 2000, оп. 2, д. 3891, л. 314, 540.

նուտեղը սպանեցին այդ գերմանացիներին... Չաթալջայի դիրքերում ,որտեղ զորքերի հրամանատարն էր Սանդերս Լիման-փաշան, զինվորները խռովություն բարձրացրին» [1]։

1916 թվականի մայիսին վերաբերող զեկուցագրերից մեկում ասվում էր, որ «թուրքական բանակի սպայության շրջանում ավելի ու ավելի է ուժեղանում դժգոհությունը գերմանական սպաներից, որոնք և իրականում հանդիսանում են բանակի տերերը։ Վերջերս եղել են դեպքեր, երբ բարձրաստիճան հրամանատարները հրաժարվել են ենթարկվել գերմանացիների կարգադրություններին» [2]։

Ռուսաստանի զինվորական գործակալը Հունաստանում 1915 թվականի սեպտեմբերի 26-ին հաղորդում էր. «Գերմանացիների հանդեպ դժգոհությունը զորքերում համընդհանուր է. կարգապահությունը պահպանվում է բացառապես ամենադաժան միջոցների շնորհիվ, բայց, այնուամենայնիվ, լինում են խռովության դեպքեր, ինչպես այդ եղավ օրերս 5-րդ բանակի երեք գնդերում. բանակին հանգստացնելու համար այնտեղ եղավ գահաժառանգը։ Այդ ժամանակ մահվան դատապարտվեց ավելի քան 70 սպա։ Նման անկարգություններ տեղի ունեցան նաև 4-րդ կորպուսի գնդերում» [3]։

Երբեմն գործը հասնում էր բարձր հրամանատարական կազմին պատկանող գերմանացիների սպանությանը։ 1916 թվականի մարտի 29-ի զեկուցագրում հաղորդվում էր հետևյալը. «Մարտի 12-ին, ամրացված դիրքերը շրջելու ժամանակ սպանվեց Սվազի խմբի հրամանատար ֆոն Մյուտցները և նրան ուղեկցող գնդապետ Սուդիբեյը։ Սպանությունը կատարվել էր թուրքական երկու սպաների կողմից՝ 35 ցածրաստիճան զինվորականների համաձայնությամբ» [4]։

Այդ դեպքի կապակցությամբ ռուսական զինվորական գործակալը Հունաստանում գրում էր. «Հենց այդ սպանությունը բացեց 2-րդ, 3-րդ և 4-րդ կորպուսների սպաների դավադրությունը։ 132 մարդ ձերբակալվեց, դրանցից 57-ը կախվեցին։ Մայիսի 1-ից սկսած դավադիրները իբր սպանել են գերմանական 38 սպա, որոնցից 8-ը Կովկասում, 4-ը՝ մայրաքաղաքում» [5]։

1916 թվականի մարտին Բուրսայի կայազորի զորքերի մեջ բռնկվեց ապստամբություն, որը նույնպես ուղղված էր գերմանա-

1 ЦГИА Груз. ССР, ф. 2с, оп. 1, д. 3599, л. 96.
2 Տե՛ս А. Д. Новичев, Экономика Турции в период мировой войны, М.—Л., 1935, стр. 127.
3 Նույն տեղում, էջ 128։
4 Նույն տեղում։
5 Նույն տեղում։

կան սպանների դեմ[1]։ Ավելի մեծ թափի ապստամբություն սկսվեց Զմյուռնիայում, ուր զինվորները անասելի զրկանքներ էին կրում և ատելությամբ էին լցված դեպի գերմանացիները[2]։

Երկրի աղետալի վիճակը, որը վեր էր ածվել գերմանական իմպերիալիզմի մի գաղութի, ճակատներում կրած պարտությունները և բանակի արագ քայքայումը՝ այս բոլորը չէր մտահոգում երիտթուրքական կլիկին։ Երիտթուրքերը շարունակում էին հուսադրել իրենց, որ գերմանական զենքն ի վերջո հաղթանակ կտանի Եվրոպայում և որ կայսերական Գերմանիայի օգնությամբ հնարավոր կլինի հասնել իրենց զավթողական նպատակների իրականացմանը։ Ուստի և, արհամարհելով երկրի ազգային շահերը, երիտթուրքական ղեկավարները ամեն կերպ աշխատում էին խանգարել Թուրքիայի դուրս գալուն պատերազմից և նույնիսկ փորձում էին աշխուժացնել նրա ռազմական ջանքերը։

1 АВПР, ф. «Политархив», д. 4656, л. 30.
2 Նույն տեղում։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՀԱՅԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՈՉՆՉԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ԿՈՂՄԻՑ 1915—1916 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Վերը խոսվեց այն մասին, որ երիտթուրքական ղեկավարները պատրաստ էին ամեն մի հանցագործության՝ հաղթահարելու համար այն բոլոր խոչընդոտները, որոնք խանգարում էին Անդրկովկասի նկատմամբ նրանց զավթողական պլանների իրականացմանը։ Նրանց կարծիքով, այդ նպատակին հասնելու ճանապարհին կանգնած գլխավոր արգելքը հայ ժողովուրդն էր։

Ինչպես բազմիցս հայտարարել են երիտթուրքական կուսակցության գործիչները, մահմեդական աշխարհի մեջ «սեպի նման խրված» հայերը խանգարում էին Օսմանյան կայսրության հետ Անդրկովկասի ու Ռուսաստանի այլ շրջանների մահմեդական ազգաբնակչության «միավորմանը»։

Այսպես, երիտթուրքերի օրգանը հանդիսացող «Իկդամ» թերթը տակավին 1914 թվականի փետրվարին առաջարկում էր բոլոր հայերին Արևելյան Անատոլիայից աքսորել Միջագետք, իսկ նրանց տեղը մահմեդականներ բերել[1]։

Ըստ երիտթուրքերի պարագլուխների, «Հայաստանը խանգարում էր մահմեդականների միասնությանն ու թուրքական միության ստեղծմանը՝ թուրքական ռասան Կովկասի, Պարսկաստանի ու Կենտրոնական Ասիայի նրան ազգակից բնակչության հետ միավորելու ճանապարհով»[2]։

Բաթումի կոնֆերանսում (որի մասին կխոսվի ստորև) Օսման-

1 ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 38, л. 83.
2 Poidebard A. La lutte pour la route des Indes. Notes de voyage de Paris à Tiflis par Bagdad, Paris, 1923, p. 229.

յան կայսրության ներկայացուցիչ Վեհիբ-փաշան, 1918 թվականի մայիսին, Հայաստանի տերիտորիան սահմանափակելու իր պահանջը «հիմնավորելով», դիմեց հայկական պատվիրակությանը հետևյալ խոսքերով. «Դուք տեսնում եք, որ ճակատագիրը մղում է Թուրքիային արևմուտքից դեպի արևելք։ Մենք հեռացանք Բալկաններից... բայց մենք պետք է տարածվենք դեպի արևելք։ Այնտեղ է մեր արյունը, մեր կրոնը, մեր լեզուն։ Դա տարերային հակում է։ Մեր եղբայրները Բաքվում են, Դաղստանում, Թուրքեստանում ու Ադրբեջանում։ Մենք պետք է ճանապարհ հարթենք դեպի մեր եղբայրները, և դուք, հայերդ, մի կանգնեք մեր ճանապարհին» [1]։

Հայկական ջարդերի կազմակերպիչներից մեկը՝ դոկտոր Բեհաեդին Շաքիրը, նույն կոնֆերանսում հայտարարեց. «Հայերը մեր պանիսլամական ու պանթուրքական սրբազան գաղափարների ճանապարհին են կանգնել, և մենք անխուսափելիորեն բախվում ենք նրանց հետ։ Դա բարձր է, դուրս է մեր անձնական զգացմունքներից ու տրամադրություններից։ Մենք ստիպված ենք մեր ճանապարհին տարերայնորեն ոչնչացնել այն ամենը, ինչ որ արգելք է հանդիսանում մեր սրբազան ազգային իդեալներն ի կատար ածելու համար» [2]։

«Երիտթուրքերի պատկերացումը հայերի մասին, որպես մի տարրի, որը թուրքերին խանգարում է իրականացնել թուրք-թաթարների հետ միախառնվելու իրենց երազները (թաթարների տակ հասկացվում էին ադրբեջանցիները—Ե. Ս.),— հաղորդում էր պատերազմի ժամանակ կովկասյան բանակի շտաբի սպաներից մեկը,— նպաստում էր այն բանին, որ Թուրքիայի սահմանադրական կառավարություններից և ոչ մեկը չէր վերացնում հայերին ոչնչացնելու լոզունգը։ Նույն այդ լոզունգն ընդունեց և Գերմանիան, որն ուժգնորեն դրդում է թուրքերին դեպի այդ քայլը, որովհետև նրան ձեռնտու է Ռուսաստանի հարավում ունենալ թուրք-թաթարական հոծ պատնեշը» [3]։ Ավելի ուշ, այդ մասին գրել է նաև անգ-

1 Տե՛ս «Заря Востока», 24.11 1925, № 812.
Թալեաթ-փաշայի սպանողի՝ Սողոմոն Թեյլիրյանի դատավարության ժամանակ, որը տեղի ունեցավ Բեռլինում՝ 1921 թվականի հունիսին, Լեպսիուսը հայտարարեց, որ պանթուրքական ու պանիսլամական կայսրություն ստեղծելու գաղափարը պատկանում է երիտթուրքական կոմիտեին և, առաջին հերթին, Էնվեր-փաշային։ Տե՛ս Դատավարություն Թալեաթ-փաշայի։ Սղագրական զեկուցում, Վիեննա, 1921, էջ 97։

2 «Заря Востока», 24. II 1925, № 809. Այս բացեիբաց հայտարարությունները արվել էին թուրքական պատվիրակության կողմից կազմակերպված ճաշկերույթի ժամանակ։ Երիտթուրքերը, որոնք այդ շրջանում իրենց զգում էին որպես պրոբության տերեր, առանց քաշվելու խոսում էին իրենց քաղաքականության նպատակների ու մեթոդների մասին։

3 ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 3851, л. 11.

լիական նվաճողների կողմից Ստամբուլում 1920—1922 թվականներին լույս տեսնող «Նյու օրիենտ» թերթը, որտեղ Հայաստանի մասին զետեղված հոդվածներից մեկում նշվում էր հետևյալը.

«Այդ երկիրը գտնվում է հենց այն ճանապարհի վրա, որը տանում է դեպի Կովկաս և Կենտրոնական Ասիա, ուր ձգտում էին երիտթուրքերը։ Ահա այս հանգամանքն ավելի, քան թշնամանքի զգացումը, այն բանի պատճառը դարձավ, որ մեծ պատերազմի շրջանում թուրքերը ձգտում էին ոչնչացնել հայ ժողովրդին» [1]։

Երիտթուրքերի հաշիվներով, Արևմտահայաստանի ու Կիլիկիայի հայ ազգաբնակչության ոչնչացումը ոչ միայն պետք է ապահովեր Անդրկովկասի նվաճումը նրանց կողմից, այլև վերացնելու էր այն հարմար պատրվակը, որն օգտագործում էին Անտանտի տերությունները՝ Թուրքիայի ներքին գործերին միջամտելու համար։

Սկզբունքորեն երիտթուրքական կլիկը տակավին համաշխարհային պատերազմից առաջ որոշել էր ոչնչացնել Թուրքիայում բնակվող բոլոր հայերին [2]։ Այժմ օգտվելով ռազմական իրադրությունից, երիտթուրքերը ձեռնարկեցին հայկական հարցի «լուծմանը», որը, Ջեմալ-փաշայի խոսքերով, «երկրի ներքին կյանքի կարևորագույն հարցն էր» [3]։

Հենց որ Օսմանյան կայսրությունը պատերազմի մեջ մտավ, երիտթուրքական կոմիտեն ձեռնամուխ եղավ երկրի հայ ազգաբնակչության զլխովին ոչնչացման պլանի մանրամասն մշակմանը։

1 Տե՛ս ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 241 բ, թ. 681։

2 1915 թվականի գարնանը տեղական իշխանություններին հղած Թալեաթ-փաշայի գաղտնի զեկույցում ասվում էր. «Թեև հայկական տարրի ոչնչացումը որոշվել էր ավելի վաղ, սակայն հանգամանքները թույլ չտվեցին կատարելու այդ սրբազան գործը»։ (Տե՛ս The Memoirs of Náim Bey. Turkish Official Documents relating to the Deportations and Massacres of Armenians. London, 1920, p. 7)։ Նայիմ-բեյը աքսորված հայերի Հալեպի կոմիտեի գլխավոր քարտուղարն էր։ Նրա ձեռքով էին անցնում երիտթուրքական կառավարության պաշտոնական հրամաններն ու կարգադրությունները՝ հայերին աքսորելու ու ոչնչացնելու մասին։ Նրա հուշերում հրապարակվել են թուրքական կառավարության ու երիտթուրքական «Միասնություն ու առաջադիմություն» կոմիտեի իսկական փաստաթղթերը, որոնք վերաբերում են հայերի աքսորի կազմակերպմանն ու նրանց ոչնչացմանը։ Երիտթուրքական կուսակցության համագումարում ընդունված ծրագրում ուղղակի ասված էր. «Վաղ թե ուշ հարկ կլինի անցկացնել բոլոր թուրքահպատակների լրիվ օսմանիզացիա։ Սակայն պետք է պարզ լինի, որ այդ բանին երբեք հնարավոր չի լինի հասնել համոզման ճանապարհով և հարկ կլինի զենքի ուժը կիրառել»։ (Տե՛ս Lepsius, Bericht über die Lage des armenischen Volkes in der Türkei. Potsdam. 1916, S. 220)։

3 «Записки Джемаль-паши», стр. 80.

Այն մշակվել ու հաստատվել էր հայերի ջարդի կազմակերպիչ Թալեաթ-փաշայի ղեկավարությամբ կայացած երիտթուրքական կոմիտեի գաղտնի խորհրդակցության ժամանակ։

Այդ խորհրդակցության ընթացքի և ընդունած որոշումների մասին մանրամասն գրում է իր հուշերում խորհրդակցության մասնակից Մեվլան-զադե Ռիֆաթը։ Նրա վկայությամբ, խորհրդակցության ժամանակ, հիմնական զեկուցողը երիտթուրքական կոմիտեի անդամ դոկտոր Նազիմն էր։ «Եթե 1909-ի մեր Ադանայի և այլ վայրերու մեջ կատարել տվածին նման տեղական ջարդերով պիտի գոհանանք... օգուտի տեղ վնասը անպայման է»— ցինիկորեն հայտարարեց Նազիմը։ «Այս ժողովին մեջ քանիցս խոսած եմ և հիմա կկրկնեմ. եթե այս մաքրագործումը ընդհանուր և վերջնական չպիտի ըլլա, օգուտի տեղ վնասը անպայման է, պետք է, որ հայ ազգը արմատախիլ ըլլա, մեր հողին վրա անհատ մը անգամ չմնա, հայ անունը մոռացվի։ Հիմա պատերազմի մեջ ենք, ասկե հարմար առիթ չի գտնվիլ, մեծ պետությանց միջամտությունը և թերթերու բողոքի ձայնը նկատելի իսկ չի կրնա ըլլալ, ըլլա նույնիսկ, խնդիրը կատարված իրողություն մը կդառնա և կփակվի։ Այս անգամվան գործողությունը բնաջնջումի գործողություն մը պիտի ըլլա, հայերու մեկ անհատ մը իսկ չմնալու պայմանով բնաջնջումը հարկ է»[1]։

Կոմիտեի մի այլ անդամը՝ խոջա Հասան Ֆեհմին իր ելույթում ասաց. «...Մեկ անհատ մը իսկ չմնալու պայմանով բնաջնջումը օրինական է... ասացվածին համաձայն, ծեր, երեխա, կին անկարող նկատի չառնվիր և բոլորը կբնաջնջվին։ Ես բնաջնջումի դյուրին ձև մը կխորհիմ. հիմա պատերազմի մեջ ենք, հայերու զենք վերցնելու կարող երիտասարդները պատերազմի առաջին գիծը կղրկենք, հոն՝ դիմացեն ռուսներուն, իսկ ետևեն՝ մեր կողմեն մասնավոր կերպով ղրկված ուժերուն կրակի մեջ կառնենք և կբնաջնջենք. իրենց տունը մնացող տկար ու ծերերը, կին ու երեխաներն ալ կհրամայենք և մեր հավատացյալները կմաքրեն, ինքներնին կկողոպտեն... այս ձևը հարմար կտեսնվի»[2]։

Ամփոփելով բոլոր ելույթները, Ջավիդը իր ելույթում ասում է, որ հայերին իսպառ բնաջնջելու անհրաժեշտությունը բխում է կառավարության ազգային քաղաքականությունից. «Հայերու մեկ անհատ իսկ չմնալու պայմանով բնաջնջումը մեր ազգային քաղաքականության տեսակետին որչափ որ ստիպողական պետք մըն է, նույնչափ ալ Թուրքին տնտեսական իշխանությունը հիմնելու համար կարևոր է...»։

Մեվլան-զադեն այնուհետև հիշում է, որ այդ գաղտնի նիստի վերջում «Թալեաթի հրամանին վրա քվեները հավաքվեցան և դասավորվեցան։ Արդյունքը՝ մեկ անհատ մը իսկ չմնալու պայմանով հայերուն բնաջնջման մասին միաձայնություն գոյացած ըլլալը հասկցվեցավ»[1]։

«Այս որոշման գործադրությունը,— գրում է Մեվլան-զադեն,— Իթթիհաթ վե Թերաքի կուսակցությունը հանձնարարել էր ոճրագործներից ու մարդասպաններից բաղկացած մասնավոր մի կազմակերպության, իսկ նրա ղեկավարությունը՝ «Եռյակ գործադիր հանձնախումբ» անվան տակ՝ դոկտոր Նազիմին, դոկտոր Բեհաեդին Շաքիրին և կրթական նախարար Շուքրիին»[2]։

Ղեկավարվելով այդ որոշմամբ, երիտթուրքական կառավարությունը 1915 թվականի ապրիլի 15-ին տեղական իշխանություններին հայերի ոչնչացման մասին հրահանգ ուղարկեց։ Այն ստորագրված էր ներքին գործերի մինիստր Թալեաթի, ռազմական մինիստր Էնվերի և երիտթուրքական կոմիտեի քարտուղար դոկտոր Նազիմի կողմից։

Հիշյալ հրահանգում ասվում էր, որ կառավարությունն ու «Միասնություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեն, որևէ տեղ և որևէ ձևով հայկական հարցի առաջ քաշումը կանխելու համար և «օգտվելով պատերազմի ընձեռած հնարավորությունից, որոշել են վերջնականապես վերացնել այն՝ ոչնչացնելով այդ խորթ տարրը՝ հայերին, մեր կողմից տրված գաղտնի հրահանգի համաձայն նրանց աքսորելով Արաբիայի անապատները»։

«Հայերուն իրենց բնակավայրեն հանելով,— ասվում էր այնուհետև հրահանգում,— բանակին չի կարենալ սպառնալու և երկրին խաղաղությունը չի կարենալ խանգարելու համար ուրիշ վայրեր ղրկվիլը քաղաքային և զինվորական իշխանությանց կողմե տեսնված ստիպողական պետքին համաձայն իբր կանխամիջոց կառավարության կողմե որոշված ըլլալուն, այս որոշումին շուտափույթ գործադրության շատ մեծ պետք կա. իրականության մեջ իր գոյությունը պաշտպանելու համար պատերազմի դաշտերուն վրա իր հազարավոր զավակները զոհող և այս պահուն առանց ցեղի և կրոնի խտրության իր բոլոր հպատակներին իր հայրենիքին հանդեպ

1 Մեվլան-զադե Ռիֆաթ, նշվ. աշխ., էջ 159—160։

2 Նույն տեղում, էջ 164—165։

1 Մեվլան-զադե Ռիֆաթ, նշվ. աշխ., էջ 165—166։

2 Նույն տեղում, էջ 148։

ամեն ժամանակ ավելի աջակցություն ակնկալող կառավարության մը զինքը ներսեն զբաղեցնող և կրնակեն զարնելու աշխատողներուն հանդեպ այս որոշման հանգիլը և միևնույն ժամանակ գործադրության մեջ չի թերանալը շատ բանական և օրինական իրավունքն է, ըստ այնմ հարկ եղածին լուրջ կերպով գործադրությունը կը հրահանգվի»[1]։

Երիտթուրքական կառավարությունն իր բարբարոսական ծրագրի իրականացումը սկսեց 1914 թվականի աշնանը թուրքական բանակ զորակոչված հայերի ոչնչացումով[2]։ Հայ զինվորները զինաթափ արվեցին։ Նրանցից 1914—1915 թվականների ձմռանը կազմվեցին բանվորական գումարտակներ, որոնց օգտագործում էին ճանապարհների կառուցման և քաղաքային աշխատանքներում։ 1915 թվականի ապրիլին հաշվվում էին շուրջ 120 այդպիսի գումարտակներ, որոնք բաժանված էին դրուժինաների։ Սրանցից յուրաքանչյուրում կար 300—500 մարդ, որոնք աշխատում էին սառնամանիքի սարսափելի պայմաններում։

«Թուրքական կանոնավոր գնդերը,—գրում է Գիբոնսը,—որոնք առանձնացված էին հայկական հեղափոխությունը ճնշելու համար, անսպասելիորեն հարձակվում էին այդ դրուժինաների վրա, որոնք խաղաղ աշխատում էին բրիչներով, լինգերով ու բահերով և մինչ նրանք ուշքի կգային՝ գնդակոծում էին բոլորին։ Եթե որևէ մեկը փորձում էր դիմել փախուստի, նրան հետապնդում էին հեծյալ թուրքերը և սրախողխող անում կամ գնդակահարում»[3]։ Այդ եղանակով 1915 թվականի գարնանը սպանվեցին մոտ 6 հազար հայ զինվորներ, որոնք աշխատում էին Կարին-Երզնկա, Դիարբեքիր-Ուրֆա և Դիարբեքիր-Խարբերդ ճանապարհների շինարարության վրա[4]։

Հայ զինվորներին ոչնչացնելուց հետո երիտթուրքերը հաշվեհարդար տեսան հայ ականավոր գործիչների հետ, այդ թվում մեջլիսի պատգամավորների ու հայ մտավորականության խոշորագույն

1 Մեվլան-զադե Ռիֆաթ, էջ 197—198։

2 Բանակ էին կանչված 20-ից մինչև 45 տարեկան բոլոր հայ տղամարդիկ։ Չնայած այդ բանին, թուրքական իշխանությունները շարունակում էին հայ զինվորների ընտանիքներից գանձել զինվորական հարկը՝ նրանց մոտ եղած մթերքի պաշարների 1/3-ի չափով, ընդ որում այդ հարկը շատ կարճ ժամանակվա ընթացքում գանձվում էր մի քանի անգամ։ Դրա հետևանքով հայ ազգաբնակչությունը դատապարտված էր սովի ու մահվան։

3 Гиббонс Герберт Адамс, Последние избиения в Армении. Факты и ответственность, Пер. с англ. П., 1916, стр. 12—13.

4 «Документы и материалы», л. 236.

ներկայացուցիչների հետ, որոնց բողոքի ձայնը թուրքական գազանությունների դեմ կարող էր հնչել սահմանից այն կողմը։

Միայն Կոստանդնուպոլսում ապրիլի 24-ի՝ լույս 25-ի գիշերը ոստիկանությունը ձերբակալեց 235 անվանի հայ մտավորականների, իսկ հաջորդ մի քանի օրվա ընթացքում՝ ևս մի քանի հարյուր մարդ։ Նրանք բոլորը՝ շուրջ 600 հոգի, գազանաբար սպանվեցին ճաքսորի ճանապարհին՝ իրենց նշանակված վայրը՝ Անգորա, Կոնյա և Դիարբեքիր չհասած։ Լեպսուսի վկայությամբ, միայն 8 հոգու հաջողվեց փրկվել մահից[1]։ Նույն ճակատագրին արժանացավ հայ մտավորականությունը երկրի այլ քաղաքներում։

Այդ արյունոտ չարագործությունների կազմակերպիչ Թալեաթ փաշան, փորձելով արդարացնել իրեն, իր հուշերում պնդում է, որ Ստամբուլում ձերբակալված հայերը իբր թե ինքնագլուխ «գնդակահարվել են ոստիկանների կողմից, որոնք պետք է նրանց հասցրնեին Անգորա՝ ռազմա-դաշտային դատարանին հանձնելու համար»[2]։ Մինչդեռ, գերմանական դեսպանության հարցումին Թալեաթի տված պատասխանից պարզորոշ կերպով երևում է, որ հայ գործիչները ոչնչացվեցին հենց թուրքական կառավարության ուղղակի հրամանի համաձայն։ Հիշյալ պատասխանում Թալեաթը գրում էր, որ «ժամանակը հարմար է (ի նկատի ուներ պատերազմը—Ե. Ս.) մայրաքաղաքից բոլոր կասկածելի անձանց հեռացնելու համար»[3]։

Ակներև է, որ քաղաքներից «կասկածելի» անձանց արտաքսումը պարզապես մի քող էր, որը պետք է հեշտացներ հայ ժողովրդի ականավոր ներկայացուցիչների նկատմամբ երիտթուրքերի ծրագրած գազանային հաշվեհարդարը։

Մեվլան-զադեն ուղղակի գրում է, որ երիտթուրքական կառավարությունը Ստամբուլից և այլ քաղաքներից հեռացնելով հայ գործիչներին, ճանապարհին նրանց բոլորին սպանում էր[4]։

Ստամբուլի զոհված հայ գործիչների թվում էր ականավոր գրող, հրապարակախոս, իրավաբան ու հասարակական գործիչ Գրիգոր Զոհրապը[5]։

Արաբական ազգային-ազատագրական շարժման գործիչներից

1 Lepsius J. Deutschland und Armenien 1914—1918. Sammlung diplomatischer Aktenstücke. Potsdam, 1919, S. XX.

2 Talât Paşanın hatıraları, s. 74

3 Lepsius J., S. XIX—XX.

4 Մեվլան-զադե Ռիֆաթ, նշվ. աշխ., էջ 146։

5 Զոհրապի կյանքի ու ստեղծագործության մասին տե՛ս Մինաս Հյուսյան, Գրիգոր Զոհրապ, կյանքը և ստեղծագործությունը, Երևան, 1957։

մեկը՝ շեյխ Ֆայիզ-էլ-Ղուսեյնը իր հուշերում Զոհրապի մասին գրում է հետևյալը. «Ամբողջ աշխարհը գիտի այն մասին, թե ով էր Կոստանդնուպոլսի հայ պատգամավորը, որի անունը սահմանադրության հռչակումից հետո փառաբանում ու ողջունում էին։ Նա փայլում էր որպես հռետոր, իր գիտելիքներով ու իմաստությամբ։ Նա բարձր կրթության տեր մարդ էր, իրավունքի հարցերի գիտակ և ոչնչի առաջ կանգ չէր առնում, երբ խոսքը գնում էր ազգային շահերի պաշտպանության մասին» [1]։

Հայ ականավոր երգիծաբան ու հրապարակախոս Երվանդ Օտյանը մանրամասն նկարագրում է Զոհրապի սպանությունը։ «Զազրելի չարագործությունը,— գրում է Օտյանը,— կատարվեց Ուրֆայից մի քանի ժամվա ճանապարհի հեռավորության վրա։ Թուրք պաշտոնյաների խումբը, էնվերի ազգական Խալիլ-բեյի գլխավորությամբ (որը հետագայում Բաղդադի բանակի գլխավոր հրամանատար նշանակվեց), հարձակվեց կառքի վրա և գազանաբար սպանեց Գրիգոր Զոհրապին» [2]։

Թուրք ջարդարարների զոհը դարձան նաև մեծատաղանդ բանաստեղծներ Վարուժանը, Սիամանթոն և շատ ուրիշ անվանի գործիչներ [3]։ Հանճարեղ Կոմիտասը, պատահաբար փրկվելով մահից և ականատեսը դառնալով հայ ժողովրդի մեծագույն այդ ողբերգության, ընդմիշտ կորցրեց բանականությունը։

Արևմտահայ ժողովրդի ամենաառաջավոր ու լուսավորված գործիչների ոչնչացումով թուրք իշխանություններն իրենց համար դյուրացրին հայերի բնաջնջման հրեշավոր ծրագիրի իրագործումը։

Երիտթուրքական կոմիտեի վերոհիշյալ որոշման հիման վրա 1915 թվականի ապրիլի սկզբին Արևմտահայաստանի ու Կիլիկիայի վիլայեթները հայերին զինաթափելու վերաբերյալ հրամաններ ուղարկվեցին, որն ուղեկցվում էր ամեն տեսակի ծայրահեղություններով, արյունալի ընդհարումներով ու զանգվածային ձերբակալություններով։ Զգալով վերահաս բռնությունների վտանգը, հայերի մի մասը զենքը ձեռքին փախավ անտառներն ու լեռները։

Այդ հրահանգը կիրառելուց մի քանի շաբաթ անց Ստամբուլից երկրորդ հրամանը ստացվեց՝ հայերին աքսորել Միջագետք այն տեղերից, «որոնք գտնվում են ռուսական զորքերի սպառնալիքի

1 Ֆայիզ-էլ Ղուսեյն. Ջարդերը Հայաստանի մեջ (Ականատեսի վկայություններ)։ Թարգմանեց ֆրանսերենից Գր. Պասմաչյան, Գահիրե, 1960, էջ 9—10։

2 «Наше время», 27.IV 1919.

3 Մանրամասն տե՛ս Թուրքահայ աղետը։ Պատմական փաստաթղթեր, Ս. էջմիածին, 1919, էջ 9—22։

տակ», քանի որ «քրիստոնեական ազգաբնակչությունը համակրում է Ռուսաստանից եկող զորքերին»։

Թալեաթ-փաշան իր հուշերում հայերի աքսորման մասին գրում է, որ այդ աքսորը պարզապես «նախազգուշական ռազմական միջոցառում էր» [1]։ Իսկ պատերազմի տարիներին նա գերմանական դեսպանության աշխատակիցներից մեկին ցինիկորեն հայտարարել էր, որ «կառավարությունն օգտվում է համաշխարհային պատերազմի իրադրությունից վերջնականապես ազատվելու իր ներքին թշնամիներից՝ քրիստոնյաներից (առաջին հերթին ի նկատի ուներ հայերին—Ե. Ս.), չվախենալով օտարերկրյա տերությունների դիվանագիտական միջամտությունից» [2]։

Այս խոստովանությունը լրիվ մերկացնում է երիտթուրքական կուսակցության վերնախավի ու կառավարության հանցավոր արարքը՝ երկրի հայ ազգաբնակչության զանգվածային բնաջնջումը։ Երիտթուրքական «եռյակի» մյուս անդամների՝ էնվերի [3] ու Ջեմալ-փաշայի [4] անհիմն պնդումները, իհարկե, ոչ ոքի չեն կարող մոլորության մեջ գցել։

Հայերի դեմ ուղղված դաժան ռեպրեսիաներն արդարացնելու նպատակով, Ջեմալ-փաշայի նախաձեռնությամբ, սկսեց տարածվել մինչև վերջը կեղծ այն վերսիան, թե իբր «հայերն ապստամբություններ էին սարքում, որոնք կկազմալուծեին մեր կովկասյան բանակի թիկունքը, որն իր հերթին, կարող էր հանգեցնել նրա լրիվ ոչնչացմանը» [5]։

Անգլիական պառլամենտի անդամ Բրայսը 1916 թվականին իր հրատարակած փաստաթղթերի ժողովածուում [6] բազմաթիվ փաստեր է բերում, որոնք անառարկելիորեն վկայում են այն մասին, որ հայերի աքսորն ու ջարդերը երիտթուրքերի կողմից սկսվեցին այն վիլայեթներում, որոնք գտնվում էին ռազմական գործողությունների գոտուց հարյուրավոր կիլոմետր հեռավորության վրա և որտեղ խոսք անգամ չէր կարող լինել հայերի որևէ ապըս-

1 Talât Paşanın hatıraları, s. 75.

2 Lepsius J., S. XXVI.

3 1915 թվականի օգոստոսի 10-ին էնվերը Լեպսիուսին հայտարարել էր. «Ես պատասխանատվություն չեմ կրում այն ամենի համար, ինչ կատարվում է երկրի ներսում»։ Տե՛ս Lepsius, S. XXVI.

4 Джемаль-паша, стр. 235.

5 Նույն տեղում, էջ 236։

6 The Treatment of Amenians in the Ottoman Empire, Documents presented to Viscount Grey of Falodon Secretary of State for Foreign Affairs by Viscount Bryce. With a preface by Viscount Bryce. No 31 (1916), London.

տամբության մասին։ Նույն բանն է հաստատում Մանդելշտամը գրելով հետևյալը. «Հակառակ թուրքական կեղծ հաղորդումներին, ո՛չ մի հայկական հեղափոխություն կամ ապստամբություն չի եղել»[1]։

Հայերի աքսորումը նախ սկսվեց Կիլիկիայից 1915 թվականի ապրիլի 8-ին, այսինքն՝ նախքան Վանի հայերի հայտնի ինքնապաշտպանությունը, որը հետագայում վկայակոչում էին երիտթուրքական դահիճները, փորձելով արդարացնել իրենց զազրելի չարագործությունները։

Թուրքական կառավարությունն այն ժամանակ մի այլ կեղծիք էլ հորինեց, այն է, որ իբր գոյություն ուներ հայերի համընդհանուր դավադրություն, որի նպատակն էր ապստամբություն բարձրացնել հենց այն պահին, երբ Օսմանյան բոլոր զինված ուժերը կենտրոնացված կլինեին կայսրության սահմանների վրա։

Հայերի զինաթափումն ու աքսորը,— փարիսեցիորեն պնդում էին երիտթուրքերը,— կանխեցին այդ վտանգը։ Կառավարական շրջանները համառորեն լուրեր էին տարածում, թե իբր անմիջապես «հայկական հեղափոխություն» կբռնկվի, հենց որ դաշնակիցները սկսեն դեսանտ հանել Կիլիկիայում ու Դարդանելում։

«Պետք է ասել,— արդարացիորեն նկատում է Բրայսը,— որ Կիլիկիայում ոչ մի նման բան չի եղել, իսկ Դարդանելում դեսանտ իջեցվեց, սակայն դրան այդպես էլ չհետևեց «հեղափոխությունը»։ Իրականում, դժվար է պատկերացնել, թե ինչ կարող էին անել հայերը, երբ բոլոր տղամարդիկ գտնվում էին բանակում»[2]։

Թուրքական կառավարությունը բացի հայերի աքսորի մասին վերոհիշյալ հրահանգից, վիլայեթների իշխանություններին հղեց Թալեաթի ստորագրությամբ մի գաղտնի կարգադրություն՝ Արևմտահայաստանի ու Կիլիկիայի հայ ազգաբնակչության ոչնչացման մասին՝ հաշվի չառնելով ո՛չ սեռը, ո՛չ էլ տարիքը։ Այնտեղ ասված էր, որ «կառավարությունն իր վրա է վերցնում ամբողջ պատասխանատվությունը և հրամայում է չխնայել անգամ օրորոցի երեխաներին»։ Նույն հրահանգում խստորեն նախազգուշացվում էր տեղական իշխանություններին, որ նրանք թույլ չտան հայերին պաշտպանելու. «Որոշ անգիտակից մարդիկ չեն հասկանում կառավարության բարձր քաղաքականությունը, որը պնդում է այդ միջոցառումների անցկացման վրա... Ուրիշ տեղերում կիրառված անուղղակի միջոցների՝ խստության, շտապողականության, ճանապարհի

1 Mandelstam, p. 242.

2 Viscount Bryce, p. 627—629.

դժվարությունների փոխարեն կարելի է ապահով կերպով կիրառել ուղղակի միջոցները։

Այն պաշտոնյաներին, որոնք նշանակված են այդ գործին, ասեք, որ նրանք կարող են իրագործել մեր իսկական նպատակը, առանց վախենալու որևէ պատասխանատվությունից։ Բարեհաճեցեք ամեն շաբաթ թվական հաշվետվություններ ներկայացնել ձեր գործունեության մասին»[1]։ «Թվական հաշվետվության» տակ Թալեաթը հասկանում էր սպանված կամ աքսորված հայերի ընդհանուր թվի վերաբերյալ յուրաքանչյուր վիլայեթից ստացվող տեղեկությունները։

Թալեաթն ինքը անձամբ տեղական իշխանություններին հրահրում էր հայերի նկատմամբ ամենադաժան միջոցները ձեռնարկել։ Այդ մասին վառ կերպով վկայում է հետևյալ շրջաբերականը, որը թուրքական ներքին գործերի մինիստրը ուղարկել էր վալիի (նահանգապետի—Ե. Ս.) անունով. «Մեզ լուրեր են հասել այն մասին, որ առանձին պաշտոնյաներ զինվորական դատարանին են հանձնված հայտնի ժողովրդի (այսինքն՝ հայերի—Ե. Ս.) նկատմամբ դաժանություն գործադրելու մեղադրանքով։ Եթե դա նույնիսկ մի հասարակ ձևականություն լինի, այն չպետք է թուլացնի մյուս պաշտոնյաների եռանդը։ Այդ պատճառով էլ կարգադրում եմ թույլ չտալ, որ նման հետաքննություններ կատարվեն»[2]։

Մի այլ հրահանգում նշվում էր, որ «եթե ուշադրություն դարձնել «հայտնի մարդկանց» կողմից ներկայացվող բողոքների վրա անձնական բնույթի տարբեր հարցերի շուրջ, ապա ոչ միայն նրանց դեպի անապատ աքսորելը կձգձգվի, այլև հիմք կստեղծվի մի շարք այնպիսի գործողությունների, որոնք ապագայում կարող են քաղաքական դժվարություններ հարուցել։ Անհրաժեշտ է համապատասխան կարգադրություններ անել պաշտոնյաներին»[3]։

Հենց այդ ժամանակ էլ կառավարության կողմից ցուցում էր արված, որ կառավարական բարձրաստիճան պաշտոնյաների անունով փոստով ու հեռագրով ստացվող բողոքները «պետք է ընդունվեն, բայց տեղ չհասցվեն»[4]։

Այդպիսի միջոցներով երիտթուրքական կառավարությունը ձգտում էր օր առաջ և առանց դրսի միջամտության Արևմտյան

1 The Memoirs of Naim Bey, Turkish Official Documents relating to the Deportations and Massacres of Armenians, p. 16.

2 Նույն տեղում, էջ 17։

3 Նույն տեղում, էջ 18։

4 Նույն տեղում։

Հայաստանն ու Կիլիկիան լրիվ մաքրել իրենց հիմնական բնակիչներից՝ հայերից։

Այդ չարանենգ պլանը նախապատրաստվել էր ու վաղօրոք մանրամասն մշակվել։ Հայերի աքսորն ու զանգվածային ջարդը միևնույն եղանակով և միաժամանակ իրականացվեցին կայսրության ավելի քան 50 վայրերում։ Տեղական իշխանությունները մեծագույն ճշտությամբ էին կատարում Թալեաթի բոլոր կարգադրությունները[1]։ Այսպես, 1915 թվականի ապրիլ-մայիս ամիսներին տեղահան արվեցին Կիլիկիայի հայերը, հունիս-հուլիսին՝ Արևմտյան Հայաստանի (Կարին, Տրապիզոն, Վան, Բաղեշ, Խարբերդ, Սրվաս), օգոստոս-սեպտեմբերին՝ Անկարայի, Ադափազարի, Բուրսայի, Ջեբել-Մուսայի, Ուրֆայի և Այնթափի հայերը։ Ադրիանապոլսից հայերն աքսորվեցին հոկտեմբերին, Կեսարիայից՝ նոյեմբերին։ Մանդելշտամը նշում է, որ երկրի «մաքրագործումը» հայ ազգաբնակչությունից տևեց 1915 թվականի ապրիլի 8-ից մինչև նոյեմբերի 6-ը[2]։

Տեղական իշխանություններն առաջին հերթին հաշվեհարդար էին տեսնում տղամարդկանց նկատմամբ։ Սովորաբար, 15-ից մինչև 70 տարեկան բոլոր հայ տղամարդիկ կանչվում, հավաքվում էին մի տեղում և այնուհետև քշվում քաղաքից կամ գյուղից դուրս և գնդակահարվում էին ժանդարմների կողմից։

Անգլիայի համայնքների պալատում 1915 թվականի հոկտեմբերի 6-ին արտասանած իր ճառում լորդ Բրայսը պատմեց Տրապիզոնի հայերի զանգվածային ոչնչացման մասին. «Կոստանդնուպոլսից,— ասաց նա,— հրաման էր ստացվել սպանել Տրապիզոնի բոլոր հայերին։ Շատ մահմեդականներ փորձում էին փրկել իրենց հարևան հայերին՝ թաքցնելով նրանց իրենց տներում։ Սակայն թուրքական իշխանություններն անգութ էին։ Բոլոր հայերին, նրանց, ովքեր պատսպարվել էին իրենց մահմեդական հարևանների մոտ և մնացածներին, հավաքեցին մի տեղ և, քշելով քաղաքի փողոցներով, դուրս բերեցին ափ, ուր նրանց նստեցրին նավերը, տարան բաց ծովը և այնտեղ ջուրը նետեցին։ Քաղաքի գրեթե ամբողջ հայ բնակչությունը (8-ից 10 հազար մարդ)... ոչնչացվեց»[3]։

Տրապիզոնի հայերի ողբերգական ճակատագրի մասին հաղորդում էր նաև Ստամբուլում Իտալիայի դեսպան Գառոնին։ Նա

1 Toynbee Arnold J., Armenian Atrocities. The Murder of a Nation, London—New-York, 1915, p. 29.

2 Mandelstam, p. 283—284. Տե՛ս J. Lepsius, S. XXV.

3 Տե՛ս Toynbee, p. 10—11.

ևս հաստատում էր, որ հայերին ձերբակալելու հրամանը տրվել էր կառավարության ու «Միասնություն և առաջադիմություն» կոմիտեի կողմից։ Մահմեդական ազգաբնակչությունը փորձում էր ընդդիմանալ դրան, ապաստարան տալով հայերին։ Սակայն ամեն ինչ իզուր էր։ Զօգնեց նույնպես Տրապիզոնում գտնվող չեզոք տերությունների հյուպատոսների բողոքը, որոնք փորձում էին փրկել գոնե կանանց ու երեխաներին։ Գառոնիի վկայությամբ, Տրապիզոնի շուրջ 14 հազար հայերից փրկվեց ոչ ավելի, քան 100 մարդ[1]։

1915 թվականի մայիսի սկզբին սկսվեց հայերի աքսորը անատոլիական վիլայեթներից ու Կիլիկիայից դեպի Միջագետքի շրջանները՝ Բաղդադի երկաթուղուց հարավ։ «Մայիսից մինչև հոկտեմբեր,— գրում է Գիբոնսը,— Օսմանյան կառավարությունը սիստեմատիկորեն կիրառում էր կյանքում մի պլան, որն ավելի դժոխային էր, քան ամենասարսափելի ջարդը։ Ամբողջ Փոքր Ասիայով մեկ հրամաններ էին ուղարկվում հայ ազգաբնակչությանը Միջագետք աքսորելու մասին։ Հրամանները միանգամայն որոշակի էին ու շատ մանրամասը։ Ոչ մի գյուղ, անգամ աննշան, չէր մոռացվել։ Մունետիկները բարձրաձայն կարդում էին հայերին արված կարգադրությունը՝ այսինչ ժամին պատրաստ լինել ճանապարհվելու՝ անհայտ ուղղությամբ։ Բացառություն չէր արվում ո՛չ հիվանդների, ո՛չ ծերերի, ո՛չ էլ հղի կանանց համար»։ «Ճանապարհ ընկնելու համար,— գրում է այնուհետև Գիբոնսը,— տրվում էր երկու օրից մինչև 6 ժամ ժամանակ։ Արգելվում էր իրենց հետ վերցնել որևէ իր, տնային կենդանիներ, և նույնիսկ անձնական հագուստ»[2]։

Հայերին աքսորելուց հետո, նրանց տներն ու ամբողջ ունեցվածքը բռնագրավվում էին ու բաժանվում մահմեդականներին։ Հարուստ հայերին հաճախ թույլատրվում էր բարձր վճարով սայլակ կամ ձի վարձել, որոնք սակայն խլվում էին նրանցից՝ քաղաքից կամ գյուղից դուրս գալուց անմիջապես հետո, այնպես որ, ինչպես աղքատներին, նույնպես և հարուստներին մնում էր միայն այն, ինչ նրանք կարող էին իրենց հետ վերցնել։ Թուրք ազգաբնակչությանն արգելված էր հայերին մթերքներ վաճառել կամ նրանցից իրեր գնել, ուստի և տեղահանված հայերն ի վիճակի չէին իրենց ապահովել ճանապարհի համար անհրաժեշտ պաշարներով։

Առաջին միջոցառումն այն եղավ, որ տղամարդկանց բաժանեցին կանանցից, իսկ ընտանիքի անդամներին՝ իրարից։

Աքսորից առաջ ամենագեղեցիկ կանանց ու աղջիկներին բռնի

1 Տե՛ս ЦГИА Груз. ССР, ф. 2с, д. 3599, л. 178.

2 Гиббонс Герберт-Адамс, стр. 13—14.

կերպով առանձնացնում էին՝ մեծահարուստ թուրքերի հարեմներն ուղարկելու համար։ Կանանց, ծերերի ու երեխաների հոծ զանգվածները քշվում էին թուրք ժանդարմների ու ասքյարների կողմից Անատոլիայի լեռնանցքներով, կիզիչ արևի ճառագայթների տակ [1]։

Հազարավոր հայեր ճանապարհին մահանում էին սովից, ծարավից, ուժասպառությունից։ Նրանց, ովքեր այլևս անկարող էին առաջ շարժվել, անմիջապես սվինահար էին անում կամ գնդակահարում։ Ճանապարհի որոշ բաժիններում՝ Քեմախ-Բողազի մոտ՝ Եփրատի ափին և Երզնկայի ու Խարբերդի միջև ընկած տարածության վրա զանգվածային գնդակահարություններ տեղի ունեցան։ Այն ճանապարհը, որով անցնում էին տեղահանված հայերը, նրանց համար դարձավ մահվան ճանապարհ։ Ականատեսներից շատերը, ինչպես և այդ դեպքերի մասին գրած հեղինակները, իրավացիորեն նշում էին, որ այդ աքսորը, ըստ էության, Թուրքիայի հայ ազգաբնակչության քողարկված ոչնչացումն էր։

«Տեղահանումը,— ասվում է փաստաթղթերից մեկում,— սոսկ մի պատրվակ և, միաժամանակ, մի նոր մեթոդ էր թուրքական կառավարության ձեռքին, որը վաղուց էր մշակել հայերի բնաջնջման ծրագիրը։ Բացահայտ կոտորածի ու ջարդերի փոխարեն, այժմ հայերին ոչնչացնում են աքսորի ճանապարհով» [2]։

Նույնիսկ էրցբերգերը՝ Գերմանիայի կաթոլիկական կենտրոնի կուսակցության առաջնորդը, որը հաճախ էր հանդես գալիս երիտթուրքական կլիկի պաշտպանությամբ, այս անգամ անկարող եղավ հերքել եղած հրեշավոր փաստերը։ Երիտթուրքական ղեկավարներին ուղղված իր գրության մեջ (1916 թ. փետրվարին) նա գրում էր. «Երկրի խորքից, ազգությամբ ոչ հայ ականատեսներից ստացվող հաշվետվություններն այն աստիճան սարսափելի են, որ դրանք հնարավոր չէ արտահայտել թղթի վրա։ Կարելի էր ենթադրել, որ աքսորն ավելի մեղմ պատժիչ միջոց է, քան սպանությունները։ Իրականում, սակայն, մեկը մյուսից շատ քիչ է տարբերվում։ Այն դեպքում, երբ համընդհանուր ջարդի ժամանակ ոմանց հաջողվում է փախչել, թաքնվել կամ փրկվել լեռներում, տեղահանման պայմաններում կյանքը պահպանելու հույսը չափազանց աննշան է։ Մարդկանց քշում են նշանակման վայրերը շաբաթներով ու ամիսներով, ինչպես անասունների... խեղճերը մահանում են զանգվածներով՝ սովից ու համաճարակից։ Երբ նրանք տեղ են հասնում, այնտեղ էլ նրանց չեն թողնում մնալ, քշում են մի տեղից մյուսը, հանգիստ չտալով»։ Վերջում էրցբերգերը Թալեաթին ու Էնվերին հետևյալ խորհուրդն էր տալիս. «Թուրքական կառավարության շահերը պահանջում են, որ արդեն պատերազմի ժամանակ ձեռք առնվեն մի շարք միջոցառումներ, որոնք կարող են հանգստացնող ներգործություն ունենալ՝ Անտանտի մամուլի կողմից ներկայացվող մեղադրանքների առջև...» [1]։

Ինչպես տեսնում ենք, էրցբերգերին քիչ էր մտահոգում հայերի ճակատագիրը։ Ամենից առաջ նա ձգտում էր հասնել այն բանին, որպեսզի երիտթուրքերն ազատվեն Անտանտի մեղադրանքներից։

Լեպսիուսը, որը հանդես էր գալիս նկարագրված դեպքերի ականատեսի դերում, Թելլերյանի դատի ժամանակ համոզիչ կերպով ցույց տվեց, որ հայերի աքսորի վերաբերյալ Թալեաթի հեռագրում ուղղակի պարզաբանվում էր, որ «աքսորը նշանակում է ոչնչացում»։ Աքսորատեղին հասավ հայերի միայն 10 տոկոսը,— ընդգծում էր Լեպսիուսը։ Մնացածները սպանվեցին կամ մահացան սովից ու անտանելի տանջանքներից [2]։

Այս բոլոր փաստերը համոզիչ կերպով վկայում են այն մասին, որ հայերի զանգվածային արտաքսումը Արևմտյան Հայաստանից, Կիլիկիայից ու Օսմանյան կայսրության այլ շրջաններից ամենևին էլ չէր բխում ռազմական անհրաժեշտությունից ու անվտանգության պահանջից, ինչպես պնդում էին հետագայում Թալեաթը, Էնվերն ու Ջեմալը՝ իրենց սեփական անձը արդարացնելու նպատակով, այլ, պարզապես, հայերի ֆիզիկական բնաջնջման եղանակներից մեկն էր։

Ականատեսներն ամբողջ աշխարհին պատմեցին թուրքական իշխանությունների կողմից աքսորված հայերի նկատմամբ գործադրված անմարդկային՝ հրեշավոր չարագործությունների մասին։ Կոմպոզիտոր Ռոմանոս Մելիքյանը, որն այցելել էր Արևմտյան Հայաստան՝ հայերի տված կորուստների թիվը պարզելու համար, հաղորդում էր. «Մուրադ-չայ գետի հովտում, ինչպես նաև Վանա լճի ու Խոշափ-չայ գետի ափերին և Արաքսի վերնահոսանքում ես տեսա հայերի անհամար քանակությամբ դիակներ, գերազանցապես կանանց ու երեխաների, որոնց ջուրն ափ էր շպրտել։ Նրանց

1 «Документы и материалы», л. 333—337 (Թարգմանություն շվեյցարական «Բազելյան լուրեր» թերթից, 16.9. 1916)։ Տե՛ս նաև Charles Woods. The Cradle of the War. Boston, 1918, p. 71.

2 ЦГИА Груз. ССР, ф. 2с., д. 3599, л. 154.

1 Эрцбергер М., Германия и Антанта, М.—П., 1923, стр. 83.

2 Դատավարություն Թալեաթ-փաշայի, էջ 90։

կենդանի նետում էին ջուրը թուրքական ասքյարները, երբ բոլորին Կարինի վիլայեթից քշում էին Միջագետք»։

Զանգվածային ջարդի պատմությունը և հատկապես 1915 թվականի մայիսից մինչև հուլիսն ընկած ժամանակամիջոցում հայերի կրած կորուստներն ուսումնասիրող անձանց հաշվումներով, միայն Բաղեշի ու Կարինի վիլայեթի մի մասում թուրքերը սրի էին քաշել 136 հազար հայերի [1]։ Երբ ռուսական զորքերը գրավեցին Կարինը, քաղաքին մոտ նրանք հայտնաբերեցին 12 մեծ փոսեր, որոնք լցված էին ողջ-ողջ թաղված հայերի դիակներով։ Իսկ Մուշում, շատ տների մեջ ռուս զինվորները գտան երեխաների հարյուրավոր դիակներ։ Եփրատի ափերը լեփ-լեցուն էին հայերի դիակներով [2]։

Գերմանական միսիոներների պաշտոնական օրգանը հանդիսացող «Allgemeine Missionszeitschrift» թերթում զետեղված հոդվածում պատմվում էր այն մասին, որ աքսորավայրի ճանապարհին շատ հայ կանանց կապում էին երեխաների հետ և Եփրատի բարձրադիր ափից նետում գետը։ «Այն երեխաները, որոնք ի վիճակի չէին բավականաչափ արագ քայլել, տեղնուտեղը սպանվում էին։ Երեք հազար կանանց տարան անապատի խորքը և այնտեղ գնդակահարեցին։ Վերջապես 50 ոստիկաններ շուրջ 600 կանանց ու երեխաների հարկադրեցին նավ նստել Տիգրիս գետի վրա, հետո նրանց բոլորին ջուրը նետեցին...» [3]։

Անգլիական թերթերից մեկում 1915 թվականի նոյեմբերի 27-ին տպագրված իր հոդվածում Բրայսը, բերելով բազմաթիվ փաստաթղթեր, նշում էր հետևյալը. «Յուրաքանչյուր նոր փաստ, յուրաքանչյուր նոր վկայություն ավելի են մեծացնում սարսափը՝ հաստատելով անհավատալի իրողությունը։ Այդ չարագործությունները ֆանատիզմի արդյունք չեն։ Միևնույն բանը հաստատում են իրար հետ կապ չունեցող տարբեր աղբյուրներ»։ Այնուհետև նա գրում էր, որ իր տրամադրության տակ եղած տեղեկությունների համաձայն, սկսած 1915 թվականի օգոստոսի 1-ից Հալեպ էին ժամանել շուրջ 20 հազար հայեր, որոնք բոլորն էլ աքսորվեցին անապատ։ «Ճանապարհին երեխաներին խլում էին մայրերից և ջարդուփշուր անում նրանց՝ քարերին խփելով կամ կենդանի գլորում անդունդներն ու գետերը։ Իսկ այն տեղը, ուր քշել-հավաքել էին հայերին, վերջիններս ամեն օր հազարներով մեռնում էին քաղցից,

1 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 2000, գ. 95, թ. 128։
2 ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 1162, թ. 190—193։
3 АВПР, ф. «Политархив», д. 4656, л. 108.

վարակիչ հիվանդություններից։ Իսկ նրանց, ում հաջողվում էր փրկվել, ավելի ուշ սպանում էին ժանդարմները»։ «Սառնարյուն ու զգույշ մարդկանց խոսքերով,— նշում էր Բրայսը,— մինչև օգոստոսի 14-ը սպանվեցին 500 հազարից ավելի հայեր» [1]։

Կովկասյան բանակի շտաբին կից գտնվող ավագ քահանա Բեկգուլյանցը եղել էր Երզնկայում՝ ռուսական զորքերի կողմից քաղաքը գրավելուց հետո։ Ականատեսների պատմածների հիման վրա նա գրում էր, որ Երզնկայի հայ բնակիչներին մայիսի 28-ին սկսեցին աքսորել Քեմախ (քաղաքից 50 կմ. դեպի հարավ-արևմուտք)։ Ճանապարհին, Քեմախու ձորում, հայերին սպանում էին ու թաղում վաղօրոք պատրաստված փոսերում կամ ուղղակի նետում Քեմախի կամուրջից» [2]։

Քեմախի ձորում հայերի զանգվածային սպանության մասին հաղորդում էր նաև Կարինում գերմանական հյուպատոս Ռիխտերը, նշելով, որ հունիսի 10-ից մինչև 14-ը 86-րդ հեծելազորային բրիգադի կողմից այդ ձորում գնդակահարվել են 20-ից 25 հազար տեղահանված հայեր՝ գերազանցապես կանայք ու երեխաներ։ Այդ հանցագործությունը կատարվել էր Երզնկայից մի քանի ժամվա ճանապարհի հեռավորության վրա։ Երզնկայում գտնվող 3-րդ կորպուսի հրամանատարությունը ոչ միայն տեղյակ էր այդ դեպքի մասին, այլև ինքն էր թույլատրել, որ կանոնավոր զորքերը մասնակցություն ունենային քաղաքի հայ ազգաբնակչության ոչնչացման գործին [3]։

«Եթե մինչև հունիսի վերջը,— գրում էր Լեպսիուսը,— կարող էր այն տպավորությունը ստեղծվել, որ այդ միջոցառումները կսահմանափակվեն ստրատեգիական տեսակետից վտանգ ներկայացնող շրջաններով (Կիլիկիա, Կարին), ապա հունիսի վերջին կառավարությունն իր վրայից վերջնականապես նետեց քողը։ Այդ նույն ժամանակ Արևելյան Անատոլիայի բոլոր վիլայեթներում, ինչպես նաև կենտրոնական գավառներում, որոնք պատերազմի թատերաբեմից հարյուրավոր կիլոմետր հեռավորության վրա էին գտնվում, սկսվեց հայերի զանգվածային տեղահանությունը, որն ուղեկցվում էր նրանց ունեցած ամբողջ գույքի բռնագրավումով, տղամարդկանց սպանությամբ ու երիտասարդ կանանց առևանգումով»։

«Այժմ այլևս ոչ մի կասկած չկար,— եզրակացնում էր Լեպսիուսը,— որ խոսքը ոչ թե կայսրության անվտանգության նպա-

1 ЦГИА Груз. ССР, ф. 2с, д. 3198, л. 101.
2 ЦГИАМ, ф. 13159, оп. 1, д. 50, л. 11—13.
3 Lepsius, S. XXIV.

տակին ուղղված ռազմական միջոցառումների, այլ հայ ժողովրդի ծրագրված ոչնչացման մասին էր»[1]։

Կարինի վիլայեթի ամբողջ հայ ազգաբնակչությունը խմբերի էր բաժանվել և հսկողության տակ ուղարկվել հեռավոր ճանապարհ՝ դեպի աքսորավայրը։

«Այդ դժբախտ մարդիկ,— ասված է մի փաստաթղթում,— հանձնված էին ոստիկաններին, որոնք պետք է նրանցից ազատվեին՝ինչ գնով էլ լիներ այդ։ Հենց որ տեղահանվածները դուրս եկան իրենց վիլայեթի սահմաններից, տղամարդկանց առանձնացրին կանանցից, տարան ձորը և գնդակահարեցին։ Կենդանի մնացած կանանց ու երեխաներին ուղարկեցին Տեր-Զոր և Մոսուլ։ Ճանապարհին զինվորները կողոպտում էին նրանց, վաճառում, սպանում հրացանի կոթով»[2]։

Եփրատի ջրերն այնպիսի մեծ քանակությամբ դիակներ էին տանում, որ դրանք տեղ-տեղ կուտակվելով ամբարտակ էին առաջացնում՝ խանգարելով գետի ազատ ընթացքին։ 1915 թվականի հունիսի 10-ին Դիարբեքիրի գերմանական հյուպատոս Հոլշտայնը հաղորդում էր, որ մի քանի օր անընդհատ Եփրատ գետով լողում էին մարդկանց դիակներ ու մարմինների առանձին կտորներ[3]։

Ահա ինչ էր գրում աքսորված հայերի մասին Խարբերդի ամերիկյան հյուպատոսը 1915 թվականի հուլիսի 11-ին. «Հունիս ամսի առաջին օրերին Խարբերդ եկան Կարինի ու Երզնկայի շրջաններից տեղահանված հայերի առաջին խմբերը՝ ցնցոտիների մեջ, սովատանջ, հիվանդ վիճակում։ Նրանք ճանապարհին էին եղել շուրջ երկու ամիս՝ գրեթե առանց ուտելիքի ու ջրի։ Նրանց, ինչպես անասունների, խոտ տվեցին։ Վերջիններս այն աստիճան սովահար էին եղել, որ ագահությամբ նետվեցին այդ կերի վրա։ Սակայն ղաբիթները (սպաները) նրանց քշեցին մահակի հարվածներով՝ տեղն ու տեղը գետին փռելով մի քանի հոգու»[4]։

Կարինի վիլայեթից Մոսուլ աքսորված 30 հազար հայերից տեղ հասան ընդամենը 4—5 հազ. հոգի, կանայք ու երեխաներ, որոնք թափառում էին փողոցներում՝ հաց մուրալով։ Մութն ընկնելուն պես կարելի է դիտել, թե ինչպես քաղաքի բոլոր փողոցներն ու

[1] Lepsius, S. XXIV.
[2] La voix d'Armenie, № 7, 1918, p. 216.
[3] Lepsius J., S. XXII.
[4] Анри Барби, В стране ужаса Мученица Армения. Тифлис, 1919, стр. 42.

հրապարակները, ուր խմբվել էին տարբեր տեղերից եկած շուրջ 30 հազար սովից հյուծված, տանջված կանայք ու երեխաներ՝ ծածկված ցնցոտիներով։ Շուտով զինվորները նրանց քշեցին ավելի հեռու՝ անապատային շրջանները, ուր նրանք մեռնում էին քաղցից ու հիվանդություններից։ Կարինի վիլայեթի ամբողջ հայ ազգաբնակչությունից կենդանի էր մնացել ընդամենը 2 հազար մարդ[1]։

Պատերազմից առաջ Կարինում բնակվող 18 հազար հայերից ռուսական զորքերի քաղաք մտնելու ժամանակ կենդանի էին մնացել 120 հոգի, գերազանցապես կանայք ու երեխաներ։ Կարինի վիլայեթի մեջ մտնող գյուղերում և ոչ մի հայ չէր մնացել։

Ինչպես Կարինի, այնպես էլ մյուս վիլայեթների հայերի ողջ ունեցվածքը աճուրդով վաճառքի էր հանված, իսկ ստացված գումարը՝ հանձնված գանձարան։ Հայերի տները, տնտեսությունն ու հողը տեղական իշխանությունները բաժանեցին Վանից, Մանազկերտից ու Թորթումից տեղափոխված թուրքերին։

Եթե Կարինի հայերն աքսորվեցին ու ոչնչացվեցին դեպի Մոսուլ տանող ճանապարհին, ապա Բաղեշի, Մուշի, Սղերդի ու Դիարբեքիրի վիլայեթներում բնակվող հայերը կառավարության հատուկ հրամանի համաձայն սրի քաշվեցին տեղում։

Այդ չարագործությունն իրագործվում էր Վանից եկած մահմեդական վերաբնակիչների օգնությամբ, որոնց մեջ երիտթուրքերն ատելություն էին սերմանել դեպի հայերը և կոչ էին անում ոչընչացնել նրանց՝ ամբողջ ունեցվածքին տիրանալու նպատակով։ Ականատեսի խոսքերով «կառավարությունն ամբողջ մի բանակ էր ստեղծել, որը կազմված էր ամենադաժան մարդասպաններից... Սրանց կանգնեցրել էին բոլոր ճանապարհների վրա՝ հայերի փախուստը խանգարելու համար։ Նրանց զինել էին և հանձնարարել թալանելու բոլոր քրիստոնյաներին»։

Թուրքական իշխանությունները հայերի արյունոտ ջարդ կազմակերպեցին նաև Բաղեշում։ Հունիսին թուրքական զորքերն անսպասելիորեն շրջապատեցին քաղաքը։ Հայերին արգելեցին դուրս գալ իրենց թաղամասերից։ «Այնուհետև սկսվեց ջարդը,— գրում է ականատեսներից մեկը։ Քաղաքի ամբողջ հայաբնակ մասը սպանդանոցի վերածվեց։ Սպանելով բոլոր տղամարդկանց, թուրքերն հրապարակ դուրս բերին կանանց ու երեխաներին ու քշեցին

[1] La voix d'Armenie, 1918, № 7, p, 217. Այդ մասին մանրամասն տե՛ս Bryce, p. 222—237; Lepsius, S. XII—XIII.

նրանց Սղերդ։ Ճանապարհին նրանց բոլորին կոտորեցին ու թաղեցին փոսերում»[1]։

Թուրքական մի սպայի պատմածից երևում է, որ Բաղեշի հայերի մեծ մասը ոչնչացվեց քաղաքի ամրոցից դուրս։ Դիակները նետվում էին թուրք զինվորների կողմից վաղօրոք փորված փոսերը։ Բաղեշի վիլայեթի իշխանությունները «հայերին քշում էին ծղոտով լցված կալերը, դռները ծղոտապատում և հրկիզում։ Հայերը խեղդվում էին ծխի մեջ ու տեղում մահանում։ Սակայն մեծ մասը զոհվում էր գնդակից, դաշույններից»։ Ժանդարմները մի ուրիշ մեթոդ էլ էին կիրառում։ Նրանք պարաններով կապում էին կանանց ու երեխաներին իրար հետ ու մեծ բարձրությունից գլորում անդունդը[2]։

Սղերդ քաղաքում թուրքերը խնայեցին 100 հայ արհեստավորների, նրանց հարկադրելով աշխատել թուրքական բանակի համար։ Բաղեշում տեղական իշխանությունները մահից ազատեցին 15 հայ հացթուխների ու նրանց ընտանիքի անդամներին՝ ստիպելով, սակայն, մահմեդականություն ընդունել։ Մի քանի հարյուր հայեր թաքնվեցին լեռներում[3]։

Բաղեշը գրաված ռուսական զորքերի ու հայ կամավորների առջև սարսափելի մի տեսարան բացվեց։ Վիլայեթի գյուղերում ու բուն Բաղեշում հայտնաբերվեցին մարդկային բազմաթիվ կմախքներ ու ոսկորներ։ Բոլոր ջրհորները, որտեղ տեղական բնակիչները սովորաբար պահում էին իրենց մթերքի պաշարները, լցված էին մարդկանց ոսկորներով։ Բաղեշի շուրջ 18 հազար հայ բնակիչներից կենդանի էին մնացել մահմեդական կրոնը ընդունած մոտ 300—400 կանայք ու երեխաներ։

Նույն ճակատագրին արժանացան նաև Մուշի վիլայեթի հայերը։ Պատերազմի հենց սկզբին տեղական իշխանությունները հայ ազգաբնակչությունից խլեցին ցորենի բոլոր պաշարներն ու 30 հազար ոչխար, որից հետո հայերին ստիպեցին իրենց այդ ունեցվածքը հասցնել մինչև թուրքական զորքերի տեղաբաշխման վայրը։ Եվ քանի որ բոլոր աշխատունակ տղամարդիկ զորակոչված էին կամ թաքնվում էին լեռներում, բեռները ստիպված էին կրել ծերերը, կանայք ու երեխաները՝ ցրտի ու սառնամանիքի պայմաններում։ «Նրանցից ոչ ոք ետ չվերադարձավ»,— հաղորդվում էր «Кавказское слово» թերթում[4]։

1 ЦГИА Груз. ССР, ф. 2с, д. 3599, л. 185.
2 „La voix d' Armenie", 1918, № 7, p. 271.
3 ЦГИА Груз. ССР, ф. 2с, д. 3665, л. 8.
4 «Кавказское слово», 28.II. 1915, № 48.

Մուշում բնակվում էին 25 հազար հայեր, որոնք կազմում էին քաղաքի բնակչության մեծամասնությունը։

Մուշի վիլայեթում 300 հայկական գյուղ կար, յուրաքանչյուրում միջին թվով 500 ընտանիք։ Երբ ռուսական զորքերը հայ կամավորների հետ միասին մտան Մուշ, այնտեղ ոչ մի հայ չէր մնացել։

Մուշի հայերի ոչնչացման պատմությունը համառոտակի հետևյալն է։ 1915 թվականի հուլիսի սկզբին Ստամբուլից Մուշ ուղարկվեց 20 հազար զինվոր, հրետանու հետ միասին։ Շրջապատելով քաղաքը, զորքերը հուլիսի 11-ին սկսեցին գնդակոծել քաղաքի հայկական թաղամասերը, որոնք այնուհետև լրիվ կողոպտվեցին զինվորների կողմից։ Հայերի տները հրկիզում էին։ Կենդանի մնացածներին քշեցին Ուրֆա։

Հայկական 20 գյուղերի բնակիչներին՝ շուրջ 5 հազար մարդ, հավաքեցին Սուրբ Կարապետ եկեղեցում և այնտեղ բոլորին սպանեցին։ Մուշի վիլայեթից 4 հազար հայեր փախան լեռները և սկսեցին համառ դիմադրություն ցույց տալ թուրքական զորքերին[1]։

Մամուր-ուլ-Ազիզ վիլայեթում հայերի նկատմամբ ձեռնարկված արյունոտ ռեպրեսիաները սկսվեցին 1915 թվականի հունիսի լույս 23-ի գիշերը։ Հայ ազգաբնակչությունը տեղահանվեց և այնուհետև ոչնչացվեց։ Նույն ճակատագրին արժանացան Սրվասի վիլայեթում բնակվող հայերը, ուր նրանց թիվը հասնում էր 160 հազարի։ Միայն երկու շաբաթվա ընթացքում հիշյալ վիլայեթում սպանվեցին շուրջ 5 հազար հայեր, իսկ նրանց գույքը բռնագրավվեց։ Սրվասում ապրող 25 հազար հայերից կենդանի մնացին 125 ընտանիք, բաղկացած բացառապես ծերերից ու երեխաներից։

Ականատեսները պատմում էին Դիարբեքիրի հայերի հրեշավոր բնաջնջման մասին։ Հայերին ողջ-ողջ նետում էին ջրհորները կամ փոսերը և հողածածկ անում։ Շատերին խեղդեցին Տիգրիս գետում։

Հայերին ոչնչացնելուց հետո նրանց ողջ ունեցվածքը՝ կահույքը, սպիտակեղենը, խանութներում ու կրպակներում գտնված բոլոր ապրանքները կուտակվում էին եկեղեցիներում կամ ուրիշ խոշոր շենքերում։ Իշխանություններն ապրանքների իրացման հատուկ կոմիտեներ էին ստեղծել, որոնք վաճառքի էին հանում հայերի ունեցվածքը։ Ստացված ամբողջ գումարը մտնում էր պետական գանձարանը։ Հայերին պատկանող կանխիկ դրամն ու թանկարժեք թղթերը հավաքվում էին ժանդարմերիայի պետի կամ վալիի մոտ և այնուհետև ուղարկվում Ստամբուլ[2]։

1 Մուշի դեպքերի մասին մանրամասն տե՛ս Bryce, p. 89—99։
2 The Memoirs of Naim Bey, p. 49.

Թուրքական իշխանություններն արյունոտ դատաստան տեսան ոչ միայն Արևելյան Անատոլիայում ու Արևմտահայաստանում, այլև Փոքր Ասիայի արևմտյան վիլայեթներում ու Թրակիայում բնակվող հայերի նկատմամբ։ Այսպես, Անգորայում ապրող 800 հայեր աքսորվեցին Կեսարիա։ Ճանապարհին, ձորում, նրանց վրա հարձակվեցին դարան մտած ժանդարմները և բոլորին կոտորեցին։ Հազարավոր հայ կանայք, երեխաների հետ միասին, Թրակիայից ու Արևմտյան Անատոլիայից աքսորվեցին Կոնյա, ուր նրանք մնալով անապաստան, բաց երկնքի տակ, ամեն օր հարյուրներով մահանում էին սովից ու համաճարակից [1]։

Թուրքական իշխանությունների համար զգալիորեն ավելի բարդ էր հայերի ոչնչացման իրենց չարանենգ պլանն իրականացնել Կիլիկիայում։ Երիտթուրքերն ամենից ավելի վախենում էին Զեյթունում (Ադանայի վիլայեթ) բնակվող հայերից, որոնք դարեր տևող իրենց համառ պայքարի շնորհիվ կարողացել էին կիսաանկախ վիճակում մնալ՝ հաղթականորեն ետ մղելով թուրքական զորքերի հարձակումները [2]։

Թուրքական իշխանությունները գիտեին, որ զեյթունցիներին ընկճելն այնքան էլ հեշտ գործ չէ, ուստի և որոշեցին դիմել խորամանկության։ Նրանք բանակցությունների մեջ մտան Կիլիկիայի կաթողիկոս Սահակի հետ և վերջինիս համոզեցին առաջարկել զեյթունցիներին զենքը հանձնել։ Դրա դիմաց իշխանությունները խոստացան նրանց «հանգիստ թողնել»։ Սահակը համաձայնվեց դրա հետ՝ հույս ունենալով այդ ձևով փրկել իր հայրենակիցներին։ Զեյթունցիները ունկնդրեցին կաթողիկոսի խորհրդին, սակայն զենքը հանձնելուց անմիջապես հետո տեղական իշխանությունները բոլոր զեյթունցիներին աքսորեցին։ Աքսորված հայերի հողերի վրա նրանք բնակեցրին Մակեդոնիայից եկած մուհաջիրներին (մահմեդական գաղթականներին) [3]։

Կիլիկիայից Միջագետքի անապատներն աքսորված հայերի ընդհանուր թիվը կազմում էր մոտ 27 հազար մարդ [4]։

Հայերին գլխովին չաքսորեցին միայն երկու քաղաքներից՝ Ստամբուլից ու Զմյուռնիայից։ Դա բացատրվում էր նրանով, որ այդ քաղաքներում էին գտնվում չեզոք տերությունների բաղմաթիվ

1 The Memoirs of Naim Bey, p. 49.

2 Այդ մասին մանրամասն տե՛ս Մ. Գ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850—1870 թթ., Երևան, 1955։

3 Bryce, p. 468—469.

4 Նույն տեղում, էջ 472։

ներկայացուցիչները։ Արևմտահայաստանի, Կիլիկիայի և այլ տեղերի հայերին ոչնչացնելու իրենց ծրագիրը մինչև վերջ իրականացնելու համար երիտթուրքերը ձգտում էին համաշխարհային հասարակական կարծիքից թաքցնել իրենց չարագործությունները, որպեսզի կանխեն օտարերկրյա պետությունների միջամտությունը։

Զանգվածային ջարդերից ու աքսորից բացի, հայերին մեջտեղից վերացնելու մեթոդներից մեկն էլ նրանց բռնի թրքացումն էր։ Շատ շրջաններում հայերը, իրենց կյանքը փրկելու համար, ընդունում էին մահմեդական դավանանքը։ Սրվասում, այն հայերին, որոնք համաձայնվում էին մահմեդականություն ընդունել, առաջարկվում էր երեխաներին հանձնել իշխանություններին, իսկ իրենց՝ մեկնել նշանակված շրջանները։ Խարբերդում հայ տղամարդկանց հավատափոխ լինելուն իշխանությունները չհամաձայնվեցին, իսկ կանանցից պահանջեցին, որ իսլամի դավանանքին անցնելու արարողությանը ներկա գտնվի որևէ մահմեդական, որը պատրաստ կլինի ամուսնության մեջ մտնելու դավանափոխ կնոջ հետ։ Հայ կանանցից շատերը, սակայն, գերադասում էին վերջ տալ իրենց կյանքին՝ նետվելով Եփրատի ջրերը։

Սեբաստիայի՝ Սամսուն, Քերասուն և այլ քաղաքների հայերը, որոնք իշխանությունների ճնշման տակ մահմեդականություն էին ընդունել, աքսորվեցին երկրի խորքը, թեև թուրքական իշխանությունները խոստացել էին այդ բանը չանել [1]։

Սամսունում գերմանական փոխ-հյուպատոս Կիխգոֆը 1915 թվականի հունիսի 4-ին հաղորդում էր. «Կառավարական մարմինները մոլեռանդ թուրքերին ու քրդերին ուղարկում էին բոլոր հայկական տները՝ մահմեդական կրոն ընդունելու օգտին պրոպագանդա մղելու նպատակով՝ ամենածանր հետևանքներով սպառնալով նրանց, ովքեր հավատարիմ կմնային իրենց կրոնին» [2]։

Բաղեշում ապրող 18 հազար հայերից իսլամի դավանանքին անցնելով՝ փրկվեցին 300—400 կանայք ու երեխաներ։

Ստամբուլի հայ պատրիարք Զավեն Եղյանը 1916 թվականի հունվարին հաղորդում էր, որ հայկական շատ ընտանիքներ իրենց կյանքը փրկելու համար ստիպված էին դավանափոխ լինել։ Այդ ձևով մահմեդականություն ընդունեցին 1000 ընտանիք՝ Կեսարիայի, 800 ընտանիք՝ Սեբաստիայի շրջանի և 1000 ընտանիք՝ Խարբերդի նահանգի հայերից։ Բանակ զորակոչված հայերի ընտանիքները ուղարկվում էին մահմեդական գյուղերը, ուր նրանց բռնի ուժով ստի-

1 «Документы и материалы», л. 236—237.

2 Lepsius, S. XXXV.

պում էին հրաժարվել իրենց կրոնից։ Բանակում գտնվող հազարավոր հայեր,— գրում էր այնուհետև Զավեն Եղյանը,— «մահվան սպառնալիքի տակ ստիպված են մահմեդականություն ընդունել։ Զինվորներին ու սպաներին կրոնափոխ անելու նպատակով, հատուկ կարգադրություններ են իջեցվել նույնիսկ բանակային կորպուսներին» [1]։

Միջագետք աքսորվելու ճանապարհին տասնյակ հազարավոր երիտասարդ հայուհիներ վաճառվեցին թուրքական ու քրդական հարեմներին։ Ծնողներից խլված հազարավոր հայ մանուկներ ուղարկվեցին այսպես կոչված կառավարական որբանոցները, ուր նրանք դաստիարակվում էին մահմեդական ոգով, թուրք երեխաների հետ մեկտեղ։

Դժվար է ճշգրիտ կերպով որոշել այն հայերի թիվը, որոնց պատերազմի տարիներին բռնի կերպով պարտադրեցին մահմեդական դավանանք ընդունել։ Աղբյուրները տարբեր տվյալներ են հաղորդում։ Սակայն մեր տրամադրության տակ եղած նյութերը համադրելով, կարելի է ասել, որ այն ժամանակ մահմեդական կրոնն ընդունեցին մոտ 200 հազար հայեր, գերազանցապես կանայք ու երեխաներ [2]։

Հեշտ չէ որոշել նաև ջարդերի ու աքսորի հետևանքով զոհված հայերի ստույգ թիվը։ Բերենք տարբեր աղբյուրներից և հեղինակներից Թուրքիայում հայերի ընդհանուր թվին վերաբերող մի շարք տվյալներ։ Կ. Պոլսի հայկական պատրիարքարանի արժանահավատ տվյալներով Թուրքիայում կար 2 միլիոն 660 հազար հայ ազգաբնակչություն, որից Արևմտյան Հայաստանում՝ 1 միլիոն 630 հազար [3]։ ՍՍՌՄ արտաքին գործերի մինիստրության արխիվում պահպանված «Հայերի ընդհանուր թիվը աշխարհում 1914 թվականին» աղյուսակում նշված է, որ Օսմանյան կայսրությունում հայերի թիվը կազմում է 2 միլիոն 26 հազար, որից Արևմտյան Հայաստանում՝ 1 միլիոն 403 հազար [4]։ Հայտնի պատմաբան Մորգանի տվյալներով հայերի թիվը Օսմանյան կայսրությունում պատերազմի նախօրյակին կազմում էր 2 միլիոն 380 հազար [5]։

Ֆրանսիական հայտնի ժուռնալիստ Մորիս Պեռնոն իր «Թուր-

1 «Документы и материалы», л. 244.

2 Այդ թիվը մեջ է բերում և Նանսենը։ Տե՛ս F. Nansen, l' Arménie et le Proche Orient, Paris, 1928, p. 355.

3 Population arménienne de la Turquie avant la guerre. Statistiques établies par le Patriarcat arménien à Constantinople. Paris, 1920, p. 9.

4 Տե՛ս АВП СССР, ф. 132, оп. 2, л. 101, д. 3, л. 36—48.

5 Jacgnes de Morgan, Histoire du peuple armenien, Paris, 1919, p. 297

քական հարցը» խորագրով գրքում նշում է, որ հայերի ընդհանուր թիվը Օսմանյան կայսրությունում հասնում էր 2 միլիոն 500 հազարի [1], ֆրանսիական հայտնի իրավագետ Ռոլեն-Ժեկմենի տվյալներով՝ 2 միլիոն 400 հազարի [2], ռուսական աշխարհագրական ընկերության կովկասյան բաժանմունքի տվյալների համաձայն՝ 2 միլիոն 300 հազարի [3]։

Այսպիսով, բերված տվյալները ցույց են տալիս, որ առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Օսմանյան կայսրությունում հայերի թիվը կազմել է մոտ 2 միլիոն 500 հազար։

Չնայած մինչև առաջին համաշխարհային պատերազմը տեղի ունեցած հայկական ջարդերին ու արտագաղթերին, հայերը կազմում էին Արևմտյան Հայաստանի ազգաբնակչության հարաբերական մեծամասնությունը, որը երևում է հետևյալ տվյալներից. 1912 թվականին նրանք վեց վիլայեթներում կազմում էին բնակչության 38,9%, մինչդեռ թուրքերը՝ 25,4%-ը, քրդերը՝ 23,9%-ը, հույները, ասորիները, չերքեզները, չեչենները, պարսիկները և այլք՝ 11,8%-ը [4]։

Ինչպես հայերի ընդհանուր թվի մասին գոյություն ունեն տարբեր տվյալներ, այնպես էլ 1915—1916 թվականներին զանգվածային ջարդերի ու աքսորի հետևանքով նահատակ եղած հայերի վերաբերյալ տվյալները տարբեր են։ Այսպես, ըստ Լեպսիուսի տվյալների, պատերազմի տարիներին զոհվել է մոտ մեկ միլիոն մարդ, քանի որ այդ ժամանակ Թուրքիայի ամբողջ հայ ազգաբնակչությունից կենդանի էր մնացել ընդամենը 800 հազար մարդ։ Դրանցից 200 հազար հոգի մնում էին Թուրքիայում, մոտ 200 հազար հոգի, գերազանցապես կանայք ու երեխաներ, բռնի կերպով մահմեդականություն էին ընդունել, 250 հազար մարդ փախել էր Անդրկովկաս և 200 հազար հոգի տառապում էին Միջագետքի ու

1 M'aurice Pernot, La question Turque, Paris, 1923, p. 207.

2 М. Г. Ролен-Жекмен, Армения, армяне и трактаты. Пер. с франц. Տե՛ս «Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году». М., 1896, стр. 8.

3 Տե՛ս «Известия Кавказского отдела императорского русского географического общества», Тифлис, 1914, т. 22, вып. 2, стр. 125. 1914 թվականին 4,47 մլն. կազմող հայերի ընդհանուր թվից 2 մլն. 26 հազար մարդ (45,4%) բնակվում էր Օսմանյան կայսրության սահմաններում, 2 մլն. 54 հազար (45,9%)՝ ռուսական կայսրությունում և 390 հազար մարդ (8,7%)՝ այլ երկրներում։ Տե՛ս Հայկական ՍՍՌ Ատլաս, Երևան—Մոսկվա, 1961, էջ 58։

4 «Современник», XI, 1914, № 194, стр. 188.

Սիրիայի համակենտրոնացման ճամբարներում [1]։

Այդ տեղեկությունների համաձայն, երիտթուրքերը ոչնչացրին Օսմանյան կայսրությունում բնակվող հայ ազգաբնակչության մոտ 55 տոկոսը [2]։ Անգլիական «Morning Post» թերթը 1916 թվականի ապրիլի 10-ի համարում հենվելով չեզոք տերությունների դիվանագետների հաղորդումների վրա, նշում էր, որ թուրքական իշխանությունների կողմից սպանվել են մեկ միլիոնից ավելի հայեր [3]։

Անգլիական «Կապույտ գրքի» հաշվումների համաձայն, 600 հազար հայերի հաջողվել էր փախչել արտասահման, 600 հազարը սպանվել էին և 600 հազար հոգի՝ մնացել իրենց տեղերում։ Սակայն շատ հայեր զոհվել են աքսորում, այդ պատճառով էլ անհնարին է ճշգրիտ որոշել բոլոր զոհերի թիվը [4]։

Վերջերս ԱՄՆ-ում հրատարակված հայտնի պատմաբան-միջազգայնագետ Ջորջ Լենցովսկու գրքում նշվում է, որ «1915—16 թթ. տեղահանվեցին մոտ 2 միլիոն հայեր, որոնցից 600 հազարը սպանվեցին» [5]։

«Անվիճելի ու պարզ է այն փաստը,— հայտարարեց գերմանական փաստաբաններից մեկը,— որ մի քանի ամսվա ընթացքում 1 միլիոն 800 հազար հայերից 1 միլիոն 400 հազարը աքսորվեցին և նրանցից 1 միլիոնը սպանվեց» [6]։

Հիմնվելով գերմանական հյուպատոսների տվյալների վրա, որոնք Ստամբուլի գերմանական դեսպանությանը պարբերաբար տեղեկություններ էին հաղորդում հայերի ջարդի ու աքսորի մասին, Մանդելշտամը գրում է, որ սպանվել են 1 միլիոն հայեր։ Սպանվածների և քաղցից ու հիվանդություններից մահացածների կեսը կանայք ու երեխաներ էին [7]։

Ամենից ավելի ամբողջական պատկերացում զոհերի ընդհանուր թվի մասին տալիս են այն տվյալները, որոնք բերվում էին Վիլհելմ II-ի կառավարությանն ուղղված հայկական ազգային խորհրդի դիմումի մեջ, որտեղ նշվում էր հետևյալը. Կիլիկիայում ու Հյուսիսային Իրանում բնակվում էին 248 հազար հայեր, որոնցից միայն 4 հազար հոգու էր հաջողվել փրկվել, մնացածներն աքսորվել էին ու սպանվել։ Արևմտյան Հայաստանում հայ ազգաբնակչությունը կազմում էր 1 միլիոն 58 հազար մարդ, որից 240 հազարը փրկվեցին, իսկ 818 հազարն աքսորվել ու սպանվել էին։ Արևմտյան Անատոլիայի 337 հազար հայ ազգաբնակչությունից 310 հազարը սպանվեցին կամ աքսորվեցին։ Ստամբուլի 194 հազար հայերից 30 հազար մարդ արտասահման փախավ։ Թուրքիայի տերիտորիայից ու Հյուսիսային Իրանից թուրքական իշխանությունների կողմից աքսորվեցին ու ոչնչացվեցին 1 396 350 հայեր [1]։

Ի մի բերելով եղած բոլոր տվյալները, կարելի է վստահորեն ասել, որ 1915—1916 թվականների ընթացքում երիտթուրքական կառավարության կողմից ձեռնարկված հայաջինջ գործողությունների հետևանքով մեկուկես միլիոն հայեր արտաքսվեցին այն տերիտորիաներից, որտեղ նրանք բնակվում էին դարերից ի վեր։ Նրանցից 1 միլիոնից ավելի մարդ սպանվեց կամ մահացավ սովից ու համաճարակից Միջագետքի ճանապարհին ու բուն աքսորավայրում։ Տարագրության մեջ գտնվող սակավաթիվ հայերը, որոնց հաջողվել էր կենդանի մնալ, բնակություն հաստատեցին Սիրիայում, Միջագետքում, Եգիպտոսում. մասամբ էլ գաղթեցին եվրոպական երկրները, ԱՄՆ և Հարավային Ամերիկա։ Այդպիսի արյունոտ, գազանային եղանակով երիտթուրքերը «լուծեցին» հայկական հարցը։ Մաքրելով Արևմտյան Հայաստանն ու Կիլիկիան հայ ազգաբնակչությունից, երիտթուրքական կառավարող շրջանները «վերացրին» այն «խոչընդոտը», որը, նրանց կարծիքով, խանգարում էր պանթուրքական ծրագրերի և, մասնավորապես, Անդրկովկասի նկատմամբ իրենց զավթողական պլանների իրականացմանը։

---

1 Lepsius J., S. LXV.

2 «Документы и материалы», л. 246.

3 АВПР, ф. «Политархив», д. 4657, л. 71. Այդ թիվը բերում է նաև Լեոն։ (Տե՛ս «Անցյալից», էջ 333)։

4 Mandelstam, p. 284.

5 Lenzowski George, The Middle East in the World Affairs, New-York, 1953, p. 48-49.

6 Տե՛ս Դատավարություն Թալէաթ-փաշայի, էջ 146։

7 Mandelstam, p. 428.

---

1 ՍՄԿՊ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 1162, թ. 170—193։ Հայկական ՍՍՌ Ատլասի տվյալներով, երիտթուրքական կառավարության դահիճների կողմից սպանված հայերի թիվը անցնում էր մեկ միլիոնից (էջ 58)։ Հայկական ջարդերի անմիջական կազմակերպիչները ամեն կերպ աշխատում են նվազեցնել զոհերի թիվը։ Այսպես, Մեվլան-զադե Ռիֆաթը իր հուշերում նշում է, որ Օսմանյան կառավարությունը արևելյան վիլայեթներից աքսորել է մեկուկես միլիոն հայերի, որոնցից, սակայն, 600 հազար հոգի են սպանվել կամ մահացել քաղցից ու հիվանդությունից Միջագետքի աքսորի ճանապարհին։ Տե՛ս Մեվլան-զադե Ռիֆաթ, էջ 219։

***

Փաստաթղթերը վկայում են այն մասին, որ թուրք ժողովուրդը ոչ միայն անմասնակից էր երիտթուրքական կլիկի կողմից անցկացվող հայերի ոչնչացման քաղաքականությանը, այլև փորձում էր հակազդել դրան և օգնություն ցույց տալ հայերին։

Զավեն պատրիարքը, մանրամասն խոսելով հայկական կոտորածների հետ կապված իրադարձությունների մասին, գալիս է այն եզրակացության, որ «ոչ թե հասարակ ժողովուրդն է հարձակում գործել խաղաղ բնակչության վրա, այլ ինքը, կառավարությունը, որն իր ծրագիրը անց էր կացնում զինվորների, ոստիկանների, ժանդարմերիայի ու ավազակախմբերի օգնությամբ։ Հրամանը տրված էր կենտրոնից, և նրա իրագործումն ամենուրեք անողոք էր» [1]։

Մի փաստաթղթում մատնանշվում էր, որ «չնայած կառավարության կողմից հայերի հանդեպ նման վերաբերմունքին, թուրք ազգաբնակչությունը նրանց նկատմամբ թշնամանք չի տածում։ Եթե ինքը կառավարությունը քրիստոնյաների ջարդեր չկազմակերպի, ապա հիմք չկա այդ բանը սպասել բնակչության կողմից» [2]։

Գիբոնսը, որը ուղևորություններ էր կատարում Թուրքիայի տարբեր շրջանները, այդ կապակցությամբ գրում էր հետևյալը. «անձնական հարաբերությունները թուրքերի և հայերի միջև բոլորովին էլ վատ չէին։ Թուրքերն ի բնե մոլեռանդ ժողովուրդ չեն։ Թուրքերի կողմից հայերի նկատմամբ կիրառվող հալածանքներն ու ջարդերը ոչ մի կերպ չի կարելի դիտել (ինչպես այդ սխալ կերպով անում էր եվրոպացիների ու ամերիկացիների մեծ մասը) որպես հետևանք այդ երկու ժողովուրդների դարավոր թշնամանքի՝ կրոնական հողի վրա։ Այդ գազանությունները ոչ մի կերպ չի կարելի բացատրել նաև այն բանով, որ իբր հայերը վաշխառուներ էին, որոնք անողոքաբար շահագործում էին պարզամիտ թուրքերին։ Վերջին բացատրության վրա հատկապես պնդում էին այն անձինք, որոնք ուզում էին ինչ գնով էլ լինի արդարացնել կատարված չարագործությունները։ Չէ՞ որ հայտնի է,—շարունակում էր Գիբոնսը,— որ ջարդերը տեղի էին ունենում ոչ միայն խոշոր կենտրոններում, ուր իսկապես ապրում էին մեծ թվով ունևոր հայեր, այլև միակերպ ու զարմանալիորեն պլանավորված կարգով կազմակերպվում էին նաև այնպիսի գյուղերում, որտեղ հայերը և տգետ էին, և աղքատ» [1]։

Գիբոնսի այս վկայությունը խոսում է այն մասին, որ թուրքական կառավարությունը որոշել էր իսպառ բնաջնջել բոլոր հայերին՝ անկախ նրանց դասակարգային պատկանելությունից։

Առանձին տեղերում թուրք ազգաբնակչությունը փորձում էր խանգարել իրենց հետ կողք-կողքի բնակվող հարևան հայերի տեղահանմանը։ Այսպես, օրինակ, 1915 թվականի հուլիսին, երբ Ստամբուլից հրաման ստացվեց հայերին Միջագետք աքսորելու մասին, Կարինում բնակվող թուրքերը փորձեցին խանգարել դրա իրագործմանը [2]։

1915 թվականի հոկտեմբերի 6-ին անգլիական պառլամենտի նիստում արտասանած իր ճառում Բրայսը մատնանշում էր, որ երբ Տրապիզոնի թուրքերը իմացան հայերին ոչնչացնելու վերաբերյալ կառավարության կողմից տրված հրամանի մասին, մահմեդական ազգաբնակչության մեծամասնությունը աշխատում էր փրկել հարևան-հայերին՝ թաքցնելով նրանց իրենց տներում։ Սակայն կառավարական գործակալները շատ անողոք էին. նրանք փնտրում-գտնում էին հայերին, տանում քաղաքից դուրս և այնտեղ սպանում կամ խեղդում ծովում[3]։ Թուրքերից մի քանիսը նույնիսկ զենքը ձեռքին կռվել են իշխանությունների դեմ՝ լեռները փախած հայերի հետ մեկտեղ։ Նրանք բոլորը արժանացան նույն ճակատագրին, ինչպոր հայերը՝ սպանվեցին։

Նկարագրվող իրադարձությունների ականատես ամերիկացի Սքիփիոնը, որը երկար տարիներ ապրել է Թուրքիայում, արդարացի կերպով նշում է, որ այն, ինչ որ կատարվեց հայերի հետ 1915—1916 թվականներին, տեղի ունեցավ փոքրաթիվ մի խմբի կամքով, և ոչ թե ամբողջ թուրք ժողովրդի համաձայնությամբ։ Շատ հայեր,— գրում է նա,— փրկվեցին իրենց հարևան-թուրքերի շնորհիվ, որոնք նրանց թաքցնում էին իրենց տներում ոստիկանական ուժեղ հետապնդման պայմաններում, վտանգի ենթարկելով իրենց կյանքը [4]։

Պետք է նշել, որ ոչ բոլոր թուրք պաշտոնյաներն էին մասնակցություն ունենում այն անմարդկային գործողություններին, որ

---

1 «Документы и материалы», л. 241.
2 ЦГИА Груз. ССР, ф. 2с, д. 3187, л. 162—163.

1 Гиббонс Герберт-Адамс, стр. 23.
2 ЦГИА Груз. ССР, ф. 2с, оп. 1, д. 3599, л. 137.
3 Toynbee, s. 40—41.
4 Lynn Scipio, My thirty years in Turkey, New Hampshire, 1935, p. 113.

նրանցից պահանջում էին երիտթուրքական ղեկավարները։ Վերջ խոսվեց կառավարության այն կարգադրության մասին, որտեղ հատուկ նշված էր, որ պաշտոնական կամ մասնավոր այն անձինք, որոնք կփորձեն պաշտպանել կամ ապաստանել որևէ հայի, կդիտվեն որպես «հայրենիքի ու կրոնի թշնամիներ» և դրան համապատասխան կպատժվեն»[1]։

Չնայած այդ նախազգուշացմանը, թուրքական պաշտոնյաներից շատերը հրաժարվում էին դահճի դեր կատարել։ Զավեն պատրիարքը նշում էր, որ հայկական ջարդ կազմակերպելու մասին թուրք վալիի հրամանը չկատարելու համար երեք կայմակամ գընդակահարվել էին[2]։

Թուրքական իշխանությունների կատարած չարագործությունների ականատեսներից մեկը գրում էր, որ երբ Դիարբեքիրում հրապարակվեց հայերին ոչնչացնելու վերաբերյալ հրամանը, երկու կայմակամ հեռագրեցին վալիին, որ իրենց խիղճը թույլ չի տալիս հանցագործության դիմելու և, նրանք գերադասում են հրաժարական տալ։ Նրանց հրաժարականը ընդունվեց, սակայն երկու պաշտոնյաներն էլ գաղտնի կերպով սպանվեցին[3]։

Հալեպի նահանգապետը՝ Ջելյալ-բեյը Թալեաթից ստանալով հայերին ոչնչացնելու հրամանը, հեռագրեց Ստամբուլ հետևյալը. «Ես այս նահանգի նահանգապետն եմ և չեմ ցանկանում նրա դահիճը դառնալ»։ Ջելյալ-բեյն անմիջապես պաշտոնազրկվեց. նրա տեղը նշանակվեց Բեքիր Սամի-բեյը[4]։

Մեզ արդեն ծանոթ Նայիմ-բեյն իր հուշերում ընդգծում է, որ Տեր-Զորի (Հալեպի վիլայեթ) նոր նահանգապետն ամեն ինչ անում էր, որպեսզի մի փոքր մեղմացնի աքսորված հայերի տառապանքները։ Կենտրոնական իշխանությունների հրամաններին հակառակ, նա հայերին չքշեց ավելի հեռու՝ դեպի անապատների խորքը, այլ նրանց տեղ հատկացրեց՝ վրաններ խփելու համար և հնարավորություն ստեղծեց զբաղվելու արհեստներով ու առևտրով։ Հայերը բացեցին դերձակատներ ու կոշկակարական արհեստանոցներ, նպարավաճառանոցներ ու կանաչեղենի խանութներ, կառուցեցին մի քանի փուռեր։ Աքսորված հայերի մեջ մեծ թվով ճարտարապետներ ու շինարարներ կային։ Նրանց օգնությամբ Տեր-Զորում

1 Տե՛ս Մեվլան-զադե Ռիֆաթ, էջ 197—199։

2 «Документы и материалы», л. 242.

3 Նույն տեղում, թ. 299։ Այդ մասին տե՛ս նաև Լեպսիուսի ճառը. «Դատավարություն Թալեաթ-փաշայի», էջ 91—92։

4 The Memoirs of Naim Bey, p. 8.

մեծ հիվանդանոց կառուցվեց։ Բայց հենց որ Ստամբուլում տեղեկացան այն մասին, որ նահանգապետը հայերի հետ շատ մեղմ է վարվել, վերջինս անհապաղ հեռացվեց պաշտոնից։ Նրա տեղը նշանակվեց դահճապետներից մեկը՝ Վանի նախկին նահանգապետ Ջեվդեթ-բեյը[1]։ Մոտ 200 հազար հայեր, որոնք տարբեր տեղերից հավաքվել էին Տեր-Զորում, մաս-մաս ուղարկվեցին Մոսուլ, ուր նրանք բոլորը զոհվեցին ոստիկանների գնդակներից, քաղցից ու հիվանդություններից։

Ադանայի վալին, գալով Ռես-ուլ-Աին և տեղեկանալով, որ այնտեղ մոտ 50 հազար հայ է հավաքվել, հրամայեց բոլորին ոչնչացնել։ Սակայն տեղի կայմակամ Յուսուֆ Զիյա-բեյը հրաժարվեց կատարել նրա կարգադրությունը, որի համար շուտով հեռացվեց պաշտոնից։ Նրա տեղը նշանակված նոր կայմակամը՝ Քերիմ-բեյը մարտի 17-ին սկսեց արտաքսել Ռես-ուլ-Աինում բնակություն հաստատած հայերին։ Ճանապարհին, Ջուրջիբ գետի ափին ու Շադաթի մոտերքում, նրանք բոլորը սրի քաշվեցին[2]։

Տեղեկանալով, որ աքսորված հայերի մի մասը կանգ է առել Հալեպում, Թալեաթը հրամայում է քաղաքը մաքրել այդպիսիներից, և հայերին քշում են դեպի անապատների խորքը։ Ճանապարհին ուղեկցող պահակախումբը, ղեկավարվելով հատուկ հրամանով, աքսորյալներին չէր տալիս ո՛չ ուտելեղեն, ո՛չ էլ խմելու ջուր՝ ձգտելով այդ եղանակով հնարավորին չափ նվազեցնել նրանց թիվը։ Սակայն երիտթուրքական ղեկավարները դժգոհ էին այն բանից, որ հայերի ոչնչացումը, նրանց կարծիքով, չափազանց դանդաղ էր կատարվում։ «Մահացածների վերաբերյալ մեկշաբաթյա ամփոփագիրը,— նշվում էր Ստամբուլից ստացված մի գրության մեջ,— որը մեզ հաղորդվել է վերջին մի քանի օրվա ընթացքում, անբավարար է... Ոչ մի մարդ պատասխանատվության չի կանչվի աքսորված հայերի նկատմամբ դաժան վերաբերմունքի համար»[3]։

Երբ ներքին գործերի մինիստրությանը լուրեր էին հասնում, որ այս կամ այն վայրում առանձին հայեր կենդանի են մնացել, կամ չեն աքսորվել Միջագետքի անապատները, դրան անմիջապես հետևում էր Թալեաթի հրամանը՝ մնացած հայերի հետ հաշվեհարդար տեսնելու մասին։ Այսպես, Հալեպի նահանգապետը Թալեաթից ստացել էր հետևյալ բովանդակությամբ հեռագիրը. «Չնայած

1 The Memoirs of Naim Bey, p. 20—21.

2 Նույն տեղում, էջ 24—27։

3 Նույն տեղում, էջ 39։

այն բանին, որ ամենից առաջ անհրաժեշտ է ոչնչացնել հայ հոգևորականությանը, մեզ տեղեկություններ են հասել, որ առանձին հոգևոր անձինք ուղարկվել են այնպիսի կասկածելի վայրեր, ինչպես Սիրիան ու Երուսաղեմը։ Նման զիջումներն աններելի գանցառություններ են։ Աքսորը նրանց համար պետք է նշանակի միայն ոչնչացում։ Ես խորհուրդ եմ տալիս գործել դրան համապատասխան»[1]։

***

Շատ դեպքեր են եղել, երբ ջարդերի այդ սարսափելի օրերին հայկական ընտանիքները փրկություն են գտել իրենց հարևան քրդերի մոտ՝ ստանալով վերջիններիս աջակցությունը։ Այսպես, մի փաստաթղթում ասված է, որ քրդական Բոշքի և Միրաղի գյուղերում հաստատված հայ ընտանիքները ջարդերից ու կողոպուտից փրկվել են քրդերի շնորհիվ, որոնք օր ու գիշեր պաշտպանում էին նրանց թուրքերից[2]։ Նկարագրելով հայերի ողբերգական վիճակը, թերթերից մեկը նույնպես մատնանշում էր, որ առանձին տեղերում քրդերն իրենց մոտ թաքցնում էին հայերին[3]։

Այդ օգնության վառ ապացույցներից մեկը քրդերի մոտ պատսպարվող հայերի նամակն է՝ Բաղեշը գրված ռուսական զորքերի հրամանատարին։ 1916 թվականի ապրիլի 12-ի թվակիր այդ նամակում ասված էր հետևյալը.

«Մենք, ներքոստորագրյալներս, խուսափելով ջարդերից ու ողջողջ այրվելու վտանգից, ահա 11 ամիս է, ինչ գտնվում ենք սարերում՝ քրդական աշիրեթների մոտ, ուր, գրեթե մերկ ու քաղցած, ապրում ենք սարսափելի աղքատության մեջ։ Մեր կենդանի մնալու համար մենք պարտական ենք այդ քրդերին, որոնք մեզ փրկելու համար արհամարհում էին բոլոր վտանգները։ Իսկապես, երբ թուրքական կառավարությունը իմացավ մեր փախուստի մասին, նա քրդական «աղաների» մոտ պաշտոնյաներ ու զափթիներ (սպաներ) ուղարկեց՝ նրանց իր կողմը թեքելու և այդ ճանապարհով մեզ թուրքերին հանձնելու։ «Աղաները» հրաժարվեցին դրանից։ Այն ժամանակ նրանց մոտ ուղարկվեցին մոլլաներ ու շեյխեր, որոնք հիմնվելով զուրանի վրա, նույնպես մեր պաշտպաններին խորհուրդ էին տալիս սպանել մեզ, սակայն նրանք հաջողություն չունեցան»։

1 The Memoirs of Naim Bey, p. 42.
2 ЦГИА Груз. ССР, ф. 2с, д. 3196, л. 80.
3 «День», 13.7.1916.

«Դրանից հետո,— ասվում էր այնուհետև նամակում,— թուրքական իշխանությունները զորքեր ուղարկեցին քրդերի դեմ, բայց քրդերը հայերի հետ միասին ետ մղեցին թուրքերին։ Թուրքական զորքերի կողմից շրջապատված հայերն ու քրդերը կտրվեցին հարևան շրջաններից։ Բոլոր պաշարները սպառվել էին։ Քրդերն իրենց հաշվին կերակրում էին հայերին՝ վաճառելով իրենց ամբողջ գույքը և ի վերջո ընկնելով նույնպիսի աղետալի վիճակի մեջ, ինչ-որ հայերը։ Սարսափելի մի սով սկսվեց։ Հայերը խնդրում են, որպեսզի Բաղեշը գրված ռուսական զորքերը իրենց օգնության հասնեն»։ Նամակի վերջում բերվում էր քրդերի կողմից փրկված հայ ընտանիքների ցուցակը։ Այսպես, քրդերը փրկել էին 60 ընտանիք Գարբյու գյուղից, 50 ընտանիք՝ Սելենդ գյուղից, 55՝ Զերդո գյուղից, 30՝ Արդեր գյուղից, 100-ից ավելի ընտանիքներ՝ Խարբ, Զրդութ ու Զուման գյուղերից և 45 ընտանիք՝ Գուցգյոզ գյուղից։ Բացի դրանից, Հացո գյուղի մոտ 400 ընտանիքներ ապաստան գտան քրդական Ասի բնակավայրում[1]։

Առանձնապես զգալի էր Դերսիմի քրդերի կողմից ցույց տրված օգնությունը, որոնք վաղուց ի վեր հայերի բարեկամներն էին համարվում։ 1915—1916 թվականների արյունոտ իրադարձությունների ժամանակ նրանք հազարավոր հայերի կյանքը փրկեցին։ Դերսիմի քրդերն իրենք ատում էին թուրքական տիրապետությունը և Երզնկայի վրա ռուսական բանակի հարձակման ժամանակ գենքը ձեռքին դուրս եկան թուրքական զորքերի դեմ և իրենց պարտիզանական անընդմեջ գործողություններով խանգարում էին թուրքական բանակին, քանդում ճանապարհները, կազմալուծում թիկունքի աշխատանքը և շոշափելի հարվածներ հասցնում թուրքերին։ Ապրստամբ դերսիմցիները կապ հաստատեցին ռուսական բանակի ու հայկական կամավորական ջոկատների հետ։ Քրդական գնդերից մեկի հրամանատար դերսիմցի Մուստաֆա Վեֆանը Երզնկայի տակ տեղի ունեցած մարտերի ժամանակ իր զորամասի հետ միասին անցավ ռուսական զորքերի կողմը։ Անդրադառնալով հայերին ու ռուսական բանակին Դերսիմի քրդերի ցույց տրված օգնությանը, դոկտոր Նուրի Դերսիմին գրում էր, որ Երզնկայի շրջանի քրդական գյուղերը պատերազմի ժամանակ խզել էին իրենց բոլոր կապերը թուրքերի հետ։ Երզնկայի շրջանի ռուսական զորամասերի հրամանատար Լյախովի համաձայնությամբ քրդական մարզերում՝ Եփրատից դեպի արևելք ու հարավ ընկած տերիտորիայի վրա, ինչպես և Դերսիմում, քրդական ինքնավարության օրգաններ էին ստեղծ-

1 Анри Барби, стр. 54—57.

վել։ Նուրի Դերսիմիի ասելով, Դերսիմը փաստորեն թոթափել էր թուրքական լուծը և ինքնուրույնություն ձեռք բերել[1]։ Այնուհետև Դերսիմին նշում է, որ երիտթուրքական կառավարությունը քրդական գնդերի՝ «համիդիեների» օգնությամբ, որոնք գերազանցապես կազմված էին հարավային Քրդստանի խաբված քրդերից, հետագայում արյան մեջ խեղդեցին դերսիմցիների ապստամբությունը[2]։

Քրդական հեծելազորը՝ «համիդիները», երիտթուրքական կառավարության կողմից օգտագործվում էին հայերի դեմ։ Այդ բանը նրանց հաջողվեց շնորհիվ եռանդուն կեղծով տարվող հակահայկական ագիտացիայի, որը քրդական զորամասերում անց էր կացվում կառավարության գործակալների կողմից։ Երիտթուրքերը կեղծ լուրեր էին տարածում այն մասին, որ իբր հայերը Ռուսաստանի հետ գաղտնի համաձայնագիր են կնքել, որի համաձայն ռուսները պարտավորվել էին օգնել հայերին՝ նվաճելու Արևմտյան Հայաստանն ու Քրդստանը։ Ընդ որում, երիտթուրքերը փորձում էին ահաբեկել քրդերին, որ հայերը նրանց կոչնչացնեն[3]։

Քրդերին հայերի դեմ գրգռելը երիտթուրքական դահիճների, ինչպես և նրանց նախորդի՝ արյունոտ սուլթան Աղբուլ-Համիդի համար հայկական հարցը «լուծելու» սիրված մեթոդներից էր։ Սակայն երիտթուրքերի կողմից քրդերի նկատմամբ անշեղորեն անցկացվող ասիմիլյացիայի քաղաքականությունը հանդիպում էր վերջիններիս դիմադրությանը։ Զգալով իրենց սպառնացող թրքացման վտանգը, քրդերն իրենց մեծամասնությամբ թշնամաբար էին տրամադրված երիտթուրքերի նկատմամբ, ուստի և չէին պաշտպանում Թուրքիայի հայ ազգաբնակչության դեմ ձեռնարկված դաժան ռեպրեսիաները։

***

Հայերից շատերը երիտթուրքական դահիճների ձեռքից ազատվեցին արաբ ժողովրդի լայն զանգվածների ցույց տրված օգնության շնորհիվ։

Արաբների ազգային-ազատագրական շարժման գործիչներից մեկը գրում էր. «Դիարբեքիր կատարած ուղևորության ժամանակ իմ ճանապարհն անցնում էր արաբական ցեղերի միջով, որոնց մոտ

1 Dr. Nuri Dersimi, Kürdistan Tarihinde Dersim, Halep, 1952, s. 13.

2 Նույն տեղում, էջ 114։

3 Arshak Safrastian, p. 75.

ես հանդիպում էի շատ հայ տղամարդկանց ու կանանց։ Նրանք հայերի հետ շատ լավ էին վարվում՝ չնայած կառավարության այն հրամանին, որ նրանց սպանելը «խստագույն մի պարտականություն» է։ Ես չեմ նկատել և ոչ մի դեպք, որ արաբները սպանած լինեին հայերին կամ բռնաբարած նրանց կանանց։ Ընդհակառակը, ես լսել եմ, որ լաստանավերի վրա գտնվող արաբները իրենց կյանքը մեծ վտանգի ենթարկելով, ջրից հանում էին խեղդվող հայ կանանց և... խնամում նրանց այնքան ժամանակ, մինչև վերջիններս վերականգնում էին իրենց ուժերը»[1]։ Փարիզում լույս տեսնող «l'Arménie» թերթը 1917 թվականին հաղորդում էր, որ հայ գաղթականները Միջագետքի անապատներում թափառական կյանք են վարում և արաբների մոտ պաշտպանություն են գտնում թուրքական իշխանություններից։

Միջագետքի հայերին արաբ ազգաբնակչության կողմից ցույց տրված աջակցության մասին պատմում են նաև հենց իրենք՝ այն հայերը, որոնց հաջողվել էր փրկվել մահից։ 1952 թվականին Փարիզում հրատարակված «1915, Աղետ և Վերածնունդ»[2] խորագիրը կրող իրենց հիշողություններում այդ հայերը, նկարագրելով աքսորի ճանապարհին իրենց կրած անմարդկային տառապանքներն ու զրկանքները, երախտագիտությամբ են նշում իրենց հանդեպ արաբների ցուցաբերած բարեկամական վերաբերմունքը։ Արաբները ապաստան տվեցին ծնողներից զրկված բազմաթիվ հայ մանուկների։

Հայերի նկատմամբ երիտթուրքական իշխանությունների գործադրած բռնությունները զայրույթ ու բողոք առաջ բերին արաբ ժողովրդի ամենատարբեր խավերում։ Պատահաբար կենդանի մնացած հայերից մեկը բերում է հետևյալ բնորոշ փաստը. թուրք ժանդարմները 70 հայ մանուկների լաստանավ նստեցրին և առանց ղեկը վարողի բաց թողեցին Եփրատի ջրերը՝ ջրվեժի մոտ։ Լաստանավը շուռ եկավ, և բոլոր երեխաները խեղդվեցին։ Անօգնական այդ մանուկների կործանմանն ականատես արաբները դիմեցին Հալեպի թուրքական իշխանություններին՝ պահանջելով պատժել դահիճներին։ Արաբների զայրույթը այն աստիճան խորն էր, որ թուրքական իշխանությունները ստիպված էին կախաղան հանել

1 «Документы и материалы», л. 300.

2 «1915, Աղետ և Վերածնունդ», Փարիզ, 1952։ Երկրորդ հատորը, որը լույս տեսավ 1955 թ. «Տեր Զոր» խորագրի տակ, նույնպես գրվել է հայ գաղթականների կողմից, որոնք ներկայումս էլ ապրում են Տեր-Զորում և Միջագետքի այլ շրջաններում։

լաստանավը ուղեկցող ոստիկանին[1]։ Լինում էին դեպքեր, երբ արաբները հարձակվում էին հայերին ուղեկցող ոստիկանների վրա, ազատում քաղցից հյուծված կանանց ու երեխաներին ու թաքցնում նրանց իրենց տներում[2]։ Բազմաթիվ ականատեսներ նշում են, որ արաբներն անձնազոհաբար պաշտպանում էին աքսորված հայերին, նրանց ապաստան տալիս, կերակրում, կաշառում հայերին փնտրող ժանդարմներին։ Վտանգի ենթարկելով սեփական կյանքը, արաբները գիշերով հայերին տեղափոխում էին ապահով վայրեր։ Արաբները հայերին աշխատանք էին տալիս, որպեսզի նրանք կարողանան կերակրել իրենց ընտանիքները։ Հալեպում, Դամասկոսում, Բաղդադում և այլ քաղաքներում հայերը, տեղի արաբ ազգաբնակչության շնորհիվ, բացում էին արհեստանոցներ, մանր կրպակներ, տեղավորվում զանազան աշխատանքի։ Այդ եղանակով աքսորված հայերի մի մասին հաջողվեց կենդանի մնալ՝ չնայած թուրքական իշխանությունների կողմից կիրառվող բռնություններին ու հալածանքներին։

«Եթե չլիներ արաբ ազնիվ ժողովրդի մարդասիրությունը, Սիբիայի ու Միջագետքի հայերի մեծ մասը գոյություն չէր ունենա»[3],— գրում է իր նամակում 1915 թվականի աղետի առաջին վկաներից մեկը՝ Ա. Թորոսյանը։

Թուրքական իշխանությունները չկարողացան լրիվ ոչնչացնել աքսորված հայերին նաև այն պատճառով, որ թուրքական բռնակալական լծի դեմ արաբ ժողովրդի մղած երկարամյա համառ պայքարի հետևանքով արաբական մի շարք նահանգներ փաստորեն անկախություն էին ձեռք բերել։ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Թուրքիան իր գերիշխանությունը պահպանում էր միայն Արևմտյան Արաբիայում (Հեջազ և Ասիր)։ Արաբական թերակղզու մնացած մասում Օսմանյան կայսրության տիրապետությունը զուտ ձևական բնույթ ուներ[4]։ Իսկ Օսմանյան կայսրության պատերազմի մեջ մտնելուց շատ չանցած արաբները ղենքի դիմեցին՝ երիտթուրքական ասիմիլյատորների լուծը վերջնականապես թոթափելու համար։

1 «1915, Աղետ և վերածնունդ», էջ 59—60։

2 Նույն տեղում, էջ 72։

3 Տէր-Զօր։ Հեղինակ՝ Աղետեն վերապրողներ։ Փարիզ, 1955, էջ 28։

4 Лазарев М. С., Политика Англии в центральной и юго-западной Аравии в годы первой мировой войны. «Краткие сообщения Института востоковедения АН СССР, XXXV. Международные отношения и колониальная политика», М., 1959, стр. 19.

❋❋❋

Երիտթուրքերին հաջողվեց հայերին կոտորել և վերացնել հայկական հարցը մասամբ էլ եվրոպական տերությունների գրաված դիրքի պատճառով։ Կայսերական Գերմանիան՝ Թուրքիայի դաշնակիցը, պատերազմում շահագրգռված էր, որպեսզի Արևմտահայաստանի բուն ազգաբնակչությունը՝ հայերը, քշվեն իրենց հայրենիքից, քանի որ, գերմանական գաղութարարների կարծիքով դա կարող էր նպաստել Մերձավոր արևելքում իրենց նվաճողական նպատակների իրականացմանը։

Վիլհելմ II-ը Արևմտյան Հայաստանը համարում էր կարևոր հենակետ՝ Գերմանիայի գաղութային էքսպանսիայի ճանապարհին։ Նա իր դիվանագետներին ասում էր. «Հայ ժողովուրդը շատ կենսունակ ժողովուրդ է և կանգնած լինելով Արևելքի մեր պատմական ուղիների վրա, հատուկ ուշադրություն է պահանջում մեր դիվանագիտությունից»[1]։

Գերմանական իմպերիալիստները երկյուղ էին կրում, որ պատերազմի ժամանակ հայկական ազատագրական շարժումը կարող է օգտագործվել Անտանտի կողմից Թուրքիայի դեմ պայքարում, մի հանգամանք, որը կարող էր հանգեցնել Գերմանիայի դաշնակցի ռազմական ջանքերի թուլացմանը։ Բացի դրանից, հայերին Միջագետք, Բաղդադի երկաթուղու տրասսայի շրջանն աքսորելը ևս համապատասխանում էր Գերմանիայի շահերին, քանի որ երկաթուղու շինարարությունը ավարտելու համար նա ձեռք կբերեր էժան բանվորական ուժ։

Միևնույն ժամանակ, գերմանական ժողովրդի մեջ Թուրքիայի՝ որպես Արևելքում Գերմանիայի դաշնակցի, հեղինակությունը պահպանելու համար, կայզերի կառավարությունն ամեն կերպ աշխատում էր թաքցնել Թուրքիայի հայ ազգաբնակչության ոչնչացումն ու տեղահանումը։ Ստամբուլի գերմանական դեսպանությունը լկտիորեն ժխտում էր հայերի զանգվածային բնաջնջման փաստերը, հայտարարելով, որ Օսմանյան կայսրության մեջ իբր տեղ գտած գազանությունները մաքուր երևակայության արգասիք են[2]։

Պատերազմից հետո Լեպսիուսը գրեց, որ պատերազմի տարիներին արգելված էր գերմանական մամուլում նյութեր զետեղել կամ որևէ ձևով հիշատակել Թուրքիայում հայերի նկատմամբ գործադրված բռնությունների մասին։ 1915—1916 թվականներին

1 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 53ա, թ. 14։

2 Տե՛ս Toynbee, p. 111.

գտնվելով Ստամբուլում, Լեպսիուսին, շնորհիվ իր անձնական կապերի, հաջողվեց հավաքել բազմաթիվ նյութեր, որոնք բնութագրում էին թուրքական իշխանությունների կողմից անցկացվող հայաջինջ քաղաքականությունը։ Այդ նյութերի հիման վրա նա 1916 թվականին լույս ընծայեց իր հայտնի «Հաշվետվություն հայ ժողովրդի վիճակի մասին Թուրքիայում»[1] գիրքը։ Գերմանական դրաքննությունը, սակայն, չթույլատրեց նրան այդ հաշվետվությունը տարածել գրախանութների միջոցով։ Այդ պատճառով էլ,— գրում է Լեպսիուսը,— «ես միայն կարողացա իմ հաշվետվությունը բաժանել վստահելի անձանց»[2]։

Չնայած դաժան դրաքննությանը, երիտթուրքերի կողմից հայ ազգաբնակչության ոչնչացման մասին լուրերը ներթափանցեցին նաև Գերմանիա։ Մի խումբ գերմանական առաջադեմ գործիչներ հանդես եկան կոչով, որով դիմում էին կայսերական կառավարությանը՝ վերջինիս առաջարկելով ներգործել երիտթուրքական ղեկավարների վրա՝ հայերի զանգվածային ոչնչացմանը վերջ դնելու նպատակով։ Հիշյալ կոչը բռնագրավվեց գերմանական իշխանությունների կողմից[3]։

1916 թվականի հունվարի 11-ին թուրքական գազանությունների մասին հարցումով ռայխստագում հանդես եկավ Կարլ Լիբկնեխտը։ Նա հասկացնել տվեց, որ դրանց պատասխանատվությունը ընկնում է նաև կայզերի կառավարության վրա, քանի որ ամբողջ աշխարհին հայտնի է, որ գերմանական սպաներն ու գեներալները տեր ու տնօրինություն են անում Թուրքիայում[4]։ Սակայն Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության ձախ թևի առաջնորդի բողոքը չէր կարող փոխել կուսակցության աջ և ցենտրիստական ղեկավարության ընդհանուր դիրքը, որն ինչպես այս հարցում, այնպես էլ պատերազմի վերաբերյալ բոլոր հարցերում, պաշտպանում էր իր երկրի իմպերիալիստներին։

Արևմտահայերի զանգվածային ոչնչացման լուրը կայծակնային արագությամբ տարածվեց ամբողջ աշխարհով մեկ՝ ամենուրեք առաջ բերելով բուռն զայրույթ և կտրուկ բողոքներ։ Նույնիսկ հայ ժողովրդի դահիճներից մեկը՝ Ջեմալ-փաշան հետագայում ստիպված էր խոստովանել, որ «հայ գաղթականների նկատմամբ 1915

1 Lepsius J. Bericht über die Lage des armenischen Volkes in der Türkei, Potsdam, 1916.

2 Lepsius, Deutschland nnd Armenien... S. V.

3 «Армянский вестник», 1916, № 1, стр. 5.

4 Verhandlungen des Reichstags. XIII Legislaturperiode. Bd. 306, Berlin, 1916, S. 512—513, տե՛ս նաև Spartakusbriefe. Berlin, 1958, S. 97.

թվականին կատարված հանցագործությունը միանգամայն արդարացի կերպով զարհուրանք առաջ բերեց ամբողջ աշխարհում»[1]։

Գերմանիայի պաշտոնական շրջանները այլևս անկարող էին թաքցնել կամ հերքել հայերի դեմ թուրքական իշխանությունների գործադրված բռնությունները։ Ուստի նրանք փոխեցին իրենց տակտիկան և այժմ փորձեցին նվազեցնել այդ չարագործությունների մասշտաբները։ Գերմանական մամուլը, հակառակ իրականության, պնդում էր, որ Օսմանյան կայսրության արևելյան վիլայեթներում «սպանվել են միայն խռովարարները, որոնք բռնվել են հանցանքի վայրում՝ արյունից կարմրած ձեռքերով, կամ էլ մերկացվել թուրքական կառավարության հանդեպ դավաճանության մեջ. ինչ վերաբերում է կանանց ու երեխաներին, նրանց ոչ ոք ձեռք չի տվել...»[2]։

Շատ երկրներում, առաջին հերթին Անտանտի երկրներում, Գերմանիային հրապարակայնորեն մեղադրում էին երիտթուրքական գազանությունները խրախուսելու և դրանց իրականացմանն անմիջականորեն մասնակցություն ունենալու մեջ[3]։ Հիմնվելով ականատեսների ցուցմունքների վրա, Գիբոնսը գրում էր, որ Վանում, օրինակ, գերմանական սպան անձամբ ղեկավարում էր հայկական խաղաղ բնակավայրերի, գյուղերի վրա տեղացող թուրքական հրետանու կրակը, իսկ գերմանական հյուպատոսները Թուրքիայում ամեն կերպ պաշտպանում էին հայերի դեմ ուղղված ոեպրեսիաները[4]։ «Temps» թերթը 1917 թվականի դեկտեմբերի 17-ին հաղորդում էր, որ գերմանացիները ոչ միայն հրահրում էին թուրքերին հայերի դեմ, այլև անմիջական մասնակցություն ունեցան այդ չարագործություններում։ Ջեյթունում գերմանական հյուպատոսը հայերին համոզեց զենքը հանձնել, որից հետո ժանդարմները սրի քաշեցին անզեն հայերին[5]։ Նույնանման փաստեր է բերում նաև Բրայսը։ Հալեպում հայերի ոչնչացումը իրականացվում

1 «Записки Джемаль-паши», стр. 236.

2 Տե՛ս Гиббонс Герберт-Адамс, стр. 13.

3 Անտանտի երկրներում այն ժամանակ բարձրացված պրոպագանդիստական կամպանիան հաջողություն ունեցավ և Գերմանիային բարոյա-քաղաքական զգալի վնաս հասցրեց։ Այդ բանն ընդունում էին նաև գերմանական ներկայացուցիչները Թուրքիայում։ Այսպես, Վանգենհայմը 1915 թ. օգոստոսի 12-ին հաղորդում էր Բեթման-Հոլվեգին, որ «հասարակական կարծիքն արդեն այն համոզմունքին է, որ Գերմանիան մասնակցություն է ունեցել հայկական չարդերում»։ Տե՛ս Lepsius, S. 126.

4 Гиббонс, Герберт Адамс, стр. 27.

5 АВПР, ф. «Политархив», д. 237, л. 31.

էր գերմանական հյուպատոսի ներկայությամբ։ Գերմանացիները նպաստեցին հայերի ջարդին նաև Դորթ-Յոլում [1]։

Գերմանական դեսպան Վանգենհայմը մեծ վեզիր Սաիդ Հալիմին հասցեագրված 1915 թվականի հուլիսի 4-ի հուշագրում իր հավանությունն էր հայտնում Արևելյան Անատոլիայից հայերին արտաքսելու միջոցառումներին, որոնք «թելադրվում են ռազմական նկատառումներով և օրինական պաշտպանության մի միջոց են» [2]։

Բնական է, որ հավանություն տալով այդ դաժանություններին, գերմանական դիվանագետը հետագայում հրաժարվում էր որևէ ձևով հանդես գալ հայերի պաշտպանությամբ։ Երբ Թուրքիայում ամերիկյան դեսպան Մորգենթաուն դիմեց նրան, խնդրելով օգտագործել երիտթուրքերի վրա իր ունեցած հսկայական ազդեցությունը՝ հայկական ջարդերին վերջ դնելու համար, Վանգենհայմը երկերեսանիորեն պատասխանեց, որ «Գերմանիան չի կարող միջամտել Թուրքիայի ներքին գործերին» [3]։

Նույնպիսի աջակցություն էին ցույց տալիս երիտթուրքական դահիճներին հայ ժողովրդի բնաջնջման գործում Գերմանիայի շատ ուրիշ պաշտոնական ներկայացուցիչներ։ Ստամբուլում գերմանական ծովային կցորդ Գումմանը, որը Վիլհելմ II-ի սիրեցյալներից էր, բացահայտորեն արդարացնում էր հայկական կոտորածները, ասելով, որ «Թուրքերը միանգամայն ճիշտ են վարվում հայերի հետ» [4]։ Իսկ Ամերիկայի Միացյալ Նահանգներում Գերմանիայի դեսպան Բերնզդորֆը հայտարարեց, որ այն, ինչ տեղի է ունեցել Թուրքիայում, պետք է դիտել որպես «հայկական ապստամբությունը ճնշելու միանգամայն օրինական գործողություն» [5]։

Գերմանիայի բուրժուական մամուլը ևս անմիջապես գործածության մեջ առավ Թուրքիայում իբր նախապատրաստվող հայկական ապստամբության վերաբերյալ Օսմանյան կառավարության կողմից տարածվող մինչև վերջը ստահոդ վերսիան։ Գերմանիայի կառավարող շրջանների գլխավոր օրգաններից մեկը հանդիսացող «Deutsche Tageszeitung» թերթը հրապարակեց հետադիմական հայտնի հրապարակախոս կոմս Ռեվենտլովի հոդվածը, որտեղ վերջինս գրում էր, որ հայերի զանգվածային տեղահանումը «անհրաժեշտ քայլ է ու Թուրքիայի սեփական գործը»։ Մոտ 1 միլիոն սպան-

1 Bryce, p. 26.
2 Lepsius, S. XXVIII.
3 Toynbee, p. III, տե՛ս նաև Mandelstam, p. 301.
4 Тарле Е. В., Соч., т. V, стр. 402.
5 Гиббонс, стр. 27.

ված հայերը նրա կողմից անառարկելիորեն անվանվեցին «ապըստամբներ» ու «արյունարբուներ» [1]։

Մյուս ազդեցիկ թերթերից մեկը՝ «Frankfurter Zeitung»-ը զայրույթով դատապարտում էր երիտթուրքական դահիճների արարքները խարազանող հակաթուրքական ելույթները անգլիական պառլամենտում։ «Ինչ կանեին անգլիացիներն ու ֆրանսիացիները,— գրում էր թերթը,— եթե նրանց մեջ ապրող որևէ մի ժողովուրդ լրտեսություն աներ հօգուտ իրենց թշնամու»։ Այնուհետև թերթը ճգնում էր ապացուցել, որ գերմանացիները «խաղաղեցնում են եռացող ու խռովահույզ Անատոլիայի ազգային ոգին և այդ ճանապարհով պաշտպանում անմեղներին» [2].

Գերմանիայի իմպերիալիստական շրջանների մունետիկ Ֆրիդրիխ Նաումանը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հրատարակած իր «Միջին Եվրոպան» խորագիրը կրող գրքում գրում էր հետևյալը. «Հայկական հարցը դա Թուրքիայի ներքաղաքական գործն է։ Քրիստոնեությունը խոչընդոտ է հանդիսանում Օսմանյան կայսրության համար։ Հայկական հարցը Թուրքիայի համար կենաց և մահու հարց է»։ Եվ այնուհետև. «Քրիստոնեական Գերմանիան կարող է միայն խղճալ հայերին, ուրիշ ոչինչ։ Նա չի կարող հայերի համար հանդես գալ իր դաշնակցի դեմ։ Իր իսկ շահերից ելնելով, Գերմանիան չպետք է թուլացնի Թուրքիային»։

Համաշխարհային պատերազմում Գերմանիայի կրած պարտությունից հետո բուրժուական գործիչները ամեն կերպ ջանում էին հաստատել Օսմանյան կայսրության հայ ազգաբնակչության զանգվածային բնաջնջման գործում Գերմանիայի անմեղսակից լինելը։ Այսպես, Էրցբերգերն իր հուշերում պնդում է, որ իբր Գերմանիան ամեն ինչ արեց 1915—1916 թվականների հայկական ջարդերը կանխելու համար, սակայն թուրքական կառավարությունը չունկընդրեց նրա խորհուրդներին։ «Գերմանական կայսրությունը,— գրում է Էրցբերգերը,— պատասխանատվություն չի կրում Հայաստանի տխուր իրադարձությունների համար» [3]։

Մինչդեռ, Լեպսիուսը համաշխարհային պատերազմից հետո վերահրատարակեց մեր կողմից հիշատակված «Հաշվետվություն հայ ժողովրդի վիճակի մասին Թուրքիայում» գիրքը, լրացնելով այն Թուրքիայի գերմանական դեսպանության ու հյուպատոսների

1 ЦГИА Груз. ССР, ф. 2с, оп. 1, д. 3198, л. 89.
2 Նույն տեղում, թ. 106։
3 Эрцбергер, стр. 84.

կազմած զեկուցագրերի նոր նյութերով, որոնք առաջներում անմատչելի էին նրա համար։ Նշված գրքում Լեպսիուսը մեղադրում էր Կայզերի կառավարությանը Թուրքիայի հայ ազգաբնակչության ճակատագրի հանդեպ ցուցաբերած անտարբեր վերաբերմունքի համար [1]։

Հայկական հարցում Գերմանիայի գրաված դիրքն արդարացնելու նպատակն էին հետապնդում նաև Թալեաթ-փաշայի սպանության մեջ մեղադրվող Սողոմոն Թեյլերյանի դատավարության ժամանակ հանդես եկած մի քանի վկաների ելույթները։ Հիշյալ դատավարության ժամանակ, որը տեղի ունեցավ Բեռլինում 1921 թվականի հունիսին, Լիման ֆոն Սանդերսը պնդում էր, որ երիտթուրքերը մեղավոր չեն հայկական ջարդերում։ Արևելյան Անատոլիայից հայերին գլխովին աքսորելու վերաբերյալ թուրքական կառավարության 1915 թվականի մայիսի 20-ի հրամանը,— հայտարարեց Սանդերսը,— «թելադրված էր ռազմական ու քաղաքական անհրաժեշտությամբ, սակայն այդ հրամանի կատարումը շատ վատ մարդկանց ձեռքն ընկավ»։

Նա ի նկատի ուներ թուրքական ժանդարմերիան, որը, նրա խոսքերով ասած, բաղկացած էր «ծույլերից ու քուրդ ավազակներից»։ Ջանալով «հաստատել» հայ ժողովրդի դահիճ Թալեաթ-փաշայի անմեղսակից լինելը, Սանդերսը փորձում էր հավատացնել, որ նա Թալեաթի ստորագրությամբ հայերի ջարդերին ու աքսորին վերաբերող և ոչ մի հրաման չի տեսել։ Նույն այդ դատավարության ժամանակ Լիման ֆոն Սանդերսը ճգնում էր ապացուցել, որ գերմանական կառավարությունը և Թուրքիայում նրա դիվանագիտական ու ռազմական ներկայացուցիչները «ներածի չափով» ամեն-ինչ անում էին, հայերի վիճակը թեթևացնելու համար [2]։

Գերմանական որոշ պատմաբաններ ևս այն շրջանում բացահայտորեն արդարացնում էին հայերի զանգվածային ջարդերը։ Այսպես, Վալտեր Լիրաուն թուրքահայերի ապրած մեծ ողբերգության մեղքը բարդում էր հայերի վրա, հախուռն կերպով նրանց մեղադրելով թուրք գյուղացիության «անխիղճ շահագործման» մեջ և դրանում հենց տեսնելով Թուրքիայի գյուղատնտեսության անկման գլխավոր պատճառը։ Հայերի նկատմամբ գործադրված հրեշավոր գազանությունները նա բացատրում էր իսլամի էությամբ՝ ֆանատիզմով ու «հերոսական դաղափարով»՝ «դու պետք է տարածես քո հավատը հրով ու սրով» [3]։

1 Lepsius J., S. V.

2 Տե՛ս Դատավարություն Թալէաթ-փաշայի, էջ 98—100։

3 Лирау Вальтер, стр. 11.

***

Իսկ ինչպե՞ս վերաբերվեցին հայերի հանդեպ թուրքական կառավարողների ձեռնարկված վայրագություններին Անտանտի տերությունները։

Երբ ամբողջ աշխարհով մեկ տարածվեց Օսմանյան կայսրությունում կազմակերպված հայերի հրեշավոր ջարդի լուրը, Անգլիայի, Ֆրանսիայի ու Ռուսաստանի կառավարությունները, որոնց բանակներում կռվում էին 200 հազարից ավելի հայեր, 1915 թվականի մայիսի 11-ին հրապարակայնորեն հայտարարեցին Բարձր Դռանը, որ բոլոր այդ հանցագործությունների պատասխանատվությունը իրենք վերագրում են թուրքական կառավարության բոլոր անդամներին, ինչպես նաև տեղական իշխանությունների այն ներկայացուցիչներին, որոնք մեղավոր են հայերի զանգվածային ջարդերում [1]։

Թուրքական կառավարությունն իրեն հատուկ ցինիկությամբ 1915 թվականի հունիսի 3-ի իր պատասխան նոտայում անապացույց «հերքում» էր հայերի ոչնչացման փաստերը և պնդում, որ հայերը հալածանքների չեն ենթարկվել։ Իսկ եթե տեղ են գտել առանձին «ծայրահեղություններ», ապա նրանք թելադրված են եղել այն բանով, որ հայկական ազգաբնակչությունը, հրահրվելով Ռուսաստանի, Անգլիայի ու Ֆրանսիայի կողմից, պատրաստվում էր ապստամբության, և կառավարությունը «ստիպված էր վճռական միջոցներ ձեռք առնել» այն կանխելու համար։ Այդ պատճառով էլ ձերբակալվեցին հայկական շարժման ղեկավարները, որոնք կապ էին պահպանում Անտանտի գործակալների հետ։

Հայերի նկատմամբ կիրառված դաժան ռեպրեսիաներն արդարացնելու նպատակով թուրքական կառավարությունը նոր սուտ հորինեց այն մասին, որ «հայկական անկարգությունները» ճնշելու ժամանակ գտնվել են հեղափոխական դրոշակներ, ռումբեր, ռուսական զենք ու փաստաթղթեր, որոնք իբր ապացուցում էին, որ շարժումը խրախուսվում էր Թիֆլիսում, Փարիզում ու Լոնդոնում գտնվող կոմիտեների, ինչպես նաև Անտանտի երկրների կառավարությունների կողմից։ Վերջում սուլթանական կառավարությունն ընդգծում էր, որ «այդ բոլորի համար պատասխանատու են դաշնակից կառավարությունները, որոնք խրախուսել են հայերի հեղափոխական շարժումները» [2]։ Բացի դրանից, իր կողմից թխած

1 Տե՛ս МОЭИ, серия III, т. VII, ч. 2, стр. 400, док. 724, стр. 488, док. 797, стр. 490, док. 799.

2 ЦГВИА, ф. 2000/с. оп. I, д. 3877, л. 94. Թուրքական նոտայի լրիվ տեքստը տե՛ս Մեվլան-զադե Ռիֆաթ, էջ 204—211։

փաստաթղթերից Թուրքական կառավարությունը 1916 թ. Ստամբուլում հրատարակեց մի ժողովածու՝ «Հայկական կոմիտեների նպատակներն ու ապստամբական շարժումը սահմանադրության հռչակումից առաջ և հետո» [1], որտեղ այն պնդումն էր անցկացվում, թե իբր «հայկական տարրը» Թուրքիայում ինչպես սահմանադրությունից առաջ, այնպես էլ հետո «արտոնյալ» վիճակում էր գտնվում, Հայերը, սակայն, ասված էր այնուհետև այդ շինծու «փաստաթղթում», «չկարողացան գնահատել սուլթանի բարյացակամ վերաբերմունքը իրենց նկատմամբ և Թուրքիայի համար ամենադժվարին պահին սկսեցին խոչընդոտներ ու դժվարություններ հարուցել Թուրքիայի ներքին ու արտաքին դրությանը։ Նման կեղծ մեղադրանքներով էին արդարացվում հայերի դեմ Թուրքական իշխանությունների ձեռնարկած դաժան միջոցառումները։

Անտանտի Թղթե բողոքները, իհարկե, ի վիճակի չէին կանգնեցնելու երիտթուրքական դահիճներին, կամ որևէ չափով սահմանափակելու նրանց հանցավոր գործունեությունը Թուրքիայի հայ ազգաբնակչության ոչնչացման ուղղությամբ։ Անհետևանք մնացին նաև Ստամբուլում ԱՄՆ-ի այն ժամանակվա դեսպան Մորգենթաուի՝ հայերին պաշտպանելու նպատակով միջամտելու փորձերը։ Ի պատասխան նրա բողոքների, Թալեաթը անվրդով կերպով հայտարարել էր. «Մեզ մեղադրում են այն բանում, որ մենք տարբերություն չենք դնում անմեղ ու մեղավոր հայերի միջև. դա բացարձակապես անհնարին էր, որովհետև այսօրվա անմեղները կարող են վաղը մեղավոր դառնալ»։ Երիտթուրքական կուսակցության առաջնորդի այդ հայտարարության առիթով սովետական ականավոր պատմաբան, հանգուցյալ ակադեմիկոս Ե. Վ. Տարլեն արդարացի կերպով հետևյալ դիտողությունն է արել. «Որ հայ ժողովուրդն ամբողջովին կոչնչացվի, դրանում Թալեաթ-փաշան լրիվ համոզված էր, և նրա մեղքը չէ, որ այնուամենայնիվ մի քանի հարյուր հազար հայեր պատահականորեն կենդանի են մնացել աշխարհում»։ «Չարժե այդպես վիճել,— ասել էր մի առիթով Թալեաթ-փաշան ամերիկյան դեսպանին։ Մենք արդեն վերացրել ենք հայերի երեք քառորդին։ Նրանց այլևս չեք հանդիպի ո՛չ Բաղեշում, ո՛չ Վանում, ո՛չ էլ Կարինում» [2]։

Թալեաթի ցինիզմի ու հրեշավոր լկտիության մասին է վկայում նրա դիմումը Մորգենթաուին հետևյալ խնդրանքով. իրեն «ծանություն» մատուցել և ներգործել ամերիկյան ապահովագրական ընկերությունների վրա, որտեղ նրա զոհերից շատերը ապահովագրել էին իրենց կյանքը. «Քանի որ գրեթե բոլոր հայերը արդեն մեռել են՝ չթողնելով ժառանգներ, հետևաբար, նրանց հարստությունը պետք է ստանա Թուրքական կառավարությունը, այն պետք է օգտվի այդ գումարներից» [1]։

Չնայած այս բոլորին, պատերազմից հետո ամերիկյան մամուլի որոշ օրգաններ փորձում էին արդարացնել հայերի նկատմամբ երիտթուրքերի կատարած չարագործությունները։ Այսպես, «The Atlantic Monthly» հանդեսը զետեղել էր հոդված, որտեղ, մասնավորապես, գրված էր հետևյալը. «Որքան էլ սարսափելի ու դաժան լինեն հայերի, հույների և մյուս այլազգիների զանգվածային արտաքսումները Թուրքիայից, որոնք տեղի են ունեցել նախկինում, անօգուտ կլիներ ժխտել, որ նման տեղահանումներն ու բռնությունները հիմք են ունեցել»։ Օսմանյան կայսրության կողմից XVI—XVII դարերում նվաճված հին հայկական հողերը հիշյալ հոդվածի հեղինակը համարում էր ի սկզբանե Թուրքական տերիտորիաներ։

«Շնորհիվ Թուրքերի հանդուրժողության, հայերին Թույլատրված էր դարերով ապրել Թուրքիայում։ Ո՛չ Թուրքական պետականությունը, ո՛չ էլ մահմեդական կրոնը չկարողացան նրանց ասիմիլյացիայի ենթարկել... Թող ինչ-որ կամենում են ասեն այն եղանակների մասին, որոնց դիմում էին Թուրքերը այդ ժողովուրդներից ազատվելու համար (ի նկատի ունեին հայերին ու հույներին— Ե. Ս.), այնուամենայնիվ փաստ է, որ ո՛չ մի տիրապետող ազգ վերջին հաշվով չի հանդուրժի, որպեսզի իր հողի վրա ապրող իրեն խորթ ժողովուրդները... ընդդիմադրեն ասիմիլյացիային...»։

Ամբողջ աշխարհի առաջադեմ հասարակայնությունը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին անարգանքի սյունին էր գամում երիտթուրքական մարդասպաններին և իրենց կառավարություններից պահանջում վճռական քայլերի դիմել՝ Թուրքահայերին պաշտպանելու համար։

«Քաղաքակիրթ աշխարհը,— գրում էր անգլիական հայտնի բուրժուական պատմաբան Թոյնբին,— չի կարող Թույլատրել, որպեսզի այդ հանցագործությունները շարունակվեն» [2]։

Ռուսաստանի, եվրոպական ու ամերիկյան երկրների պարբերական մամուլում հաճախ հոդվածներ ու հաղորդումներ էին զե-

1 „Ermeni komiteferinin âmal ve hareketi ihtilâlyesi ilâni meşrutiyetten evvel ve sonra". Istanbul, 1332 (1916).

2 Տե՛ս Е. В. Тарле, т. V, стр. 402.

1 Տե՛ս Е. В. Тарле, т. V, стр. 402.

2 Toynbee Arnold, Nationality and the War. London, 1915.

տեղվում արևմտահայերի վիճակի մասին։ Դրանցում լայնորեն լուսաբանվում էին Թուրքական իշխանությունների չարագործությունները։ Բողոքի բազմամարդ ցույցերում ելույթ էին ունենում ականավոր հասարակական ու պետական գործիչներ, որոնք զայրույթով դատապարտում էին Թուրքիայի կառավարողներին ու նրանց գերմանական գործակիցներին, որոնք արյան մեջ խեղդեցին ամբողջ Արևմտահայաստանը։

Տակավին 1914 թվականին, Թուրքիայի ու Ռուսաստանի միջև ռազմական գործողությունները սկսվելուց հետո, նոյեմբերի 3-ին, Մոսկվայում կայացավ խաղաղասիրական «Общество мира» կազմակերպության ընդհանուր ժողովը, որտեղ ելույթ ունեցած հռետորները մատնանշում էին Թուրքիայի հայ ազգաբնակչությանը սպառնացող մեծ վտանգի մասին։ Ժողովն իր ընդունած որոշման մեջ Անտանտի երկրների կառավարություններին կոչ էր անում միջոցներ ձեռնարկել Թուրքիայում բնակվող հայերի անվտանգությունն ապահովելու համար։ Որոշման մեջ ընդգծվում էր Ռուսաստանի առանձնահատուկ դերը, որ նա պետք է իրենից կախված ամեն բան անի՝ «չեզոք տերությունների ներկայացուցիչների միջոցով, ապահովելու ազգաբնակչության ճակատագիրը հայկական վիլայեթներում, ուր խաղաղ ժամանակներում ևս պարբերաբար հայերի ջարդեր էին կազմակերպվում»։

Այդ որոշումն ուղարկվեց Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրին և Բեռնի խաղաղության միջազգային բյուրոյին [1]։

Ռուս առաջադեմ հասարակայնությունը իր սրտին մոտ ընդունեց հայ ժողովրդի մեծագույն ողբերգությունը։ Ռուս մտավորականության ականավոր ներկայացուցիչները՝ Մ. Գորկին, Վ. Բրյուսովը, Յու. Վեսելովսկին, Ն. Մառը, Ի. Բունինը և շատ ուրիշներ իրենց բողոքի ձայնը բարձրացրին Թուրքիայում հայերի նկատմամբ գործադրվող անլուր գազանությունների դեմ։ Իրենց բազմաթիվ դասախոսություններում, հոդվածներում և հրապարակային ելույթներում նրանք ռուս հասարակության լայն շրջաններին ծանոթացնում էին հայ ժողովրդի հնադարյան ու հարուստ մշակույթին, նրա փառավոր պատմությանը։

1915 թվականի վերջին և 1916 թվականի սկզբին հայ ժողովրդի անշահախնդիր բարեկամ Վալերի Բրյուսովը Կովկասում, իսկ այնուհետև Մոսկվայում ու Պետրոգրադում կարդաց մի շարք դասախոսություններ Հայաստանի պատմության ու նրա պոեզիայի մասին։ Պատմության վերաբերյալ նրա դասախոսությունները վերամշակված ձևով հրատարակվեցին 1918 թվականին «Летопись исторических судеб армянского народа» գրքում։ Հիշյալ գրքում ռուս ականավոր բանաստեղծն ու փայլուն գիտնականը համոզիչ կերպով ցույց էր տալիս, որ հայ ժողովրդի ճակատագիրը սերտորեն կապված է ռուս մեծ ժողովրդի ճակատագրի հետ։ Վ. Բրյուսովի խմբագրությամբ ու նրա առաջաբանով 1916 թվականին լույս տեսավ «Поэзия Армении» ստվարածավալ ժողովածուն։

Նույն, 1916 թվականին, Մաքսիմ Գորկու նախաձեռնությամբ լույս տեսավ «Сборник армянской литературы» գիրքը։ Բացի դրանից, ռուս հասարակության լայն խավերին հայ ժողովրդի մշակույթին ու պատմությանը, նրա հասարակական-քաղաքական ու ազգային կյանքին, կարիքներին ու պահանջներին ծանոթացնելու նպատակով 1916 թվականին սկսեցին լույս տեսնել ռուսերեն լեզվով երկու հանդես՝ «Армянский вестник» Մոսկվայում և «Армяне и война» Օդեսայում։ Հիշյալ պարբերականներում գործոն մասնակցություն ունեին Մաքսիմ Գորկին, Վալերի Բրյուսովը, Ի. Բունինը, ակադեմիկոս Ա. Վեսելովսկին, Յու. Վեսելովսկին, պրոֆեսոր Ն. Մառը, պրոֆեսոր Մ. Կավալևսկին, պրոֆեսոր Ա. Կրիմսկին, Ֆ. Սոլոգուբը և ուրիշներ։ Հայ հասարակական ու մշակութային գործիչներից այդ ամսագրերում հանդես էին գալիս Մարիետա Շահինյանը, Ա. Կ. Ջիվիլեգովը, Ս. Կարա-Մուրզան, պրոֆեսոր Լեոն, Հովհաննես Թումանյանը, Ալ. Շիրվանզադեն։

Ռուս գրականության ու գիտության խոշորագույն ներկայացուցիչների ելույթները հայերի պաշտպանությամբ թնավորում էին հայ ժողովրդին, նրա մեջ հավատ ներշնչում իր լավագույն ապագայի նկատմամբ։ Միևնույն ժամանակ Ռուսաստանի առաջավոր գործիչների հուժկու ձայնը հնչում էր որպես հզոր մի բողոք ընդդեմ երիտթուրքական ջարդարարների հայաջինջ, բարբարոսական քաղաքականության, որպես հայ ժողովրդին օգնության հասնելու մի կոչ՝ ուղղված ամբողջ մարդկությանը։

Ռուսաստանի մի շարք խոշոր քաղաքներում և, հատկապես, Կովկասում, ստեղծվեցին Արևմտահայաստանից փախած գաղթականներին (որոնց թիվը 300 հազար մարդուց ավելի էր) օգնություն ցույց տալու կոմիտեներ։ Ռուս և մյուս ժողովուրդների եղբայրական օգնության շնորհիվ հայ գաղթականները փրկվեցին քաղցից մահանալու վտանգից։

Հայ ժողովրդի պաշտպանությամբ ակտիվորեն հանդես եկավ նաև Ֆրանսիայի ու Անգլիայի հասարակայնությունը։ 1916 թվականի ապրիլի 9-ին Սորբոնի համալսարանի մեծ դահլիճում հրավիրվեց նիստ, որին ներկա էր ավելի քան 3 հազար մարդ։ Նիստը

[1] «Армянский вестник», 1916, стр. 2.

ղեկավարում էր Ֆրանսիայի պատգամավորների պալատի նախագահ Պոլ Դեշանելը։ Հայ ժողովրդի՝ հնադարյան մշակույթի կրողի, պաշտպանությամբ հանդես եկան լուսավորության մինիստր Պենլևեն և գրող Անատոլ Ֆրանսը։ Նրանք անարգանքի սյունին գամեցին երիտթուրքական դահիճներին և կայսերական Գերմանիային, որը նույնպես լրիվ պատասխանատվություն էր կրում հայ ժողովրդի ողբերգության համար [1]։

Հայ ժողովրդի տխուր ճակատագրի նկատմամբ հանդես եկած այդ մեծագույն կարեկցանքի ու համակրանքի պայմաններում 1916 թվականի մայիսին Փարիզում կազմակերպվեց «Ֆրանսիա-Հայաստան» կոմիտեն, որի կազմի մեջ մտան գիտնականներ ու քաղաքական գործիչներ՝ ֆրանսիական ակադեմիայի անդամ էտյեն Լամին, Ֆրանսիայի ինստիտուտի անդամներ Ռաֆայել Ժորժ Լեվին և Շլյումբերգը, ականավոր լեզվաբան Մեյեն, լուսավորության մինիստր Բուրգինյոնը։ Կոմիտեի գլխավոր քարտուղար ընտրվեց Ռենեգե Շավանը — «Revue France-Etrangère» ամսագրի դիրեկտորը [2]։

Հենց այդ ժամանակ էլ տարբեր երկրների հասարակական կազմակերպությունները հատուկ թռուցիկներ էին տարածում, որոնք կոչ էին անում ժողովուրդներին օգնության հասնել հայերին՝ երիտթուրքական դահիճների ձեռներին։ Այդպիսի կոչերից մեկում ասված էր, որ հայերի բնաջնջումը Թուրքիայում կատարվում է կառավարության հրամանով և որոշակի պլանով, որ սուլթան Աբդուլ-Համիդի սկսած գործն այժմ շարունակվում է ավելի անխնա ու չարանենգ միջոցների օգնությամբ։ 250 հազար հայերի, որոնց մեջ շատ որբ երեխաներ կային, հաջողվեց փախչել Ռուսաստան։ Նրանց ապաստանելու հիմնական ծանրությունն ընկած էր կովկասահայերի վրա։ Նշելով, որ գաղթականների դրությունը խիստ ծանր է, հիշյալ փաստաթղթում կոչ էր արվում օգնություն ցույց տալ հայ գաղթականներին, որոնք «փրկվել են մեթոդիկ ոչնչացումից» [3]։ Այդ կոչը ստորագրել էին Անատոլ Ֆրանսը, Վիկտոր Բերարը, Ֆերդինանդ Բյուիսոնը, Գուստավ Էրվեն, պրոֆեսոր Սիլյեն և ֆրանսիական հասարակայնության մի շարք այլ հայտնի ներկայացուցիչներ։

Անգլիական պառլամենտի նիստերում հաճախ ելույթներ էր ունենում Բրայսը, հրապարակելով Արևմտահայաստանում թուրքական գազանությունները մերկացնող բազմաթիվ փաստաթղթեր։ 1915 թվականի նոյեմբերի 16-ին համայնքների պալատի անդամ Ա. Ուիլյամսը կառավարությունից պահանջեց միջոցներ ձեռնարկել հայ գաղթականներին օգնություն ցույց տալու համար։ Այդ պահանջը պաշտպանեց Իռլանդիայի ազգային կուսակցության առաջնորդ Օ՝ Կոնները [1]։

1915 թվականի նոյեմբերին Լոնդոնում, քաղաքագլխի նախագահությամբ, տեղի ունեցավ բազմամարդ միտինգ, որտեղ որոշում ընդունվեց հայ գաղթականների օգտին հանգանակություն անցկացնել։ Միտինգում ելույթ ունեցան Բրայսը, արքեպիսկոպոս Բյոնը, պառլամենտի անդամ Օ՝Կոնները [2]։ Հայ ժողովրդի պատմությունը, հայ գրականությունն ու արվեստն ուսումնասիրելու նպատակով տակավին 1913 թվականին Լոնդոնում ստեղծված «Հայկական միության» օգնությամբ անգլիական հասարակայնությունը կազմակերպեց անգլո-հայկական կարմիր-խաչ և արևմտահայ գաղթականներին օգնելու ֆոնդ։ «Հայկական միության» նախագահ էմիլիա Ռոբինզոնը 1915 թվականին մի գրքույկ հրատարակեց, որտեղ նա, բողոքելով երիտթուրքերի կողմից Արևմտյան Հայաստանում կատարվող գազանությունների դեմ, կոչ էր անում Անգլիային միջամտելու։ Նրա հայրը՝ Ջոն Ռոբինզոնը, որը «Դեյլի նյուս» թերթի խմբագիրն էր, անգլիական մամուլում հանդես էր գալիս հայերին օգնություն ցույց տալու կոչերով։

1916 թվականին Լոնդոնում, Բրայսի առաջաբանով, լույս տեսավ հայ գրականության կլասիկների մի մեծ ժողովածու։ Այդ գրքի վաճառքից ստացված ամբողջ գումարը հանձնվեց հայ գաղթականների օգնության ֆոնդին [3]։

Այդ ժամանակ էլ հենց Անգլիայում լույս տեսավ «Կապույտ գրքի» մի մեծ հատորը, որն իրենից ներկայացնում էր մեր կողմից մեջ բերված Բրայսի հավաքած ու պառլամենտին ներկայացրած փաստաթղթերի ժողովածուն։

Այդ փաստաթղթերը մանրամասն նկարագրում էին Օսմանյան կայսրության հայ ազգաբնակչության նկատմամբ թուրքական իշխանությունների գործադրած զարհուրելի բռնություններն ու չարագործությունները։

Պետք է նշել, որ Անտանտի երկրների կառավարությունները հասարակայնության արտահայտած զայրույթն ու նրա բազմաթիվ

---

1 «Армяне и война», 1916, № 6, стр. 89.
2 Նույն տեղում։
3 ЦГИА Груз. ССР, ф. 2, д. 3198, л. 102.

1 ЦГИА Груз. ССР, ф. 2, д. 3198, л. 9.
2 Նույն տեղում, թ. 98։
3 «Армяне и война», 1916, № 6, стр. 89

բողոքներն օգտագործեցին, որպես պրոպագանդայի միջոց՝ ընդդեմ Թուրքիայի ու Գերմանիայի։ «Քանի դեռ կանգուն էր, ուժեղ ու հաղթական Գերմանիան, հայկական սարսափները նրա հակառակորդներին հարկավոր էին՝ նրան վարկաբեկելու, նրան բարոյապես ստորացնելու, նրան բարբարոսության կողմնակից և հովանավոր ցույց տալու, իսկ իրենց՝ նահատակ ազգերի պաշտպան և ազատարար հայտարարելու համար։ Բայց հենց որ Գերմանիան ջարդվեց և այլևս ոչ ոքի երկյուղ ներշնչել չէր կարող՝ իսկույն մոռացվեց հայն էլ, իր տառապանքն ու արյունն էլ» [1]։

Հայ ժողովուրդն իր երկարամյա դառը փորձով համոզվեց, որ եվրոպական տերություններից որևէ իրական օգնություն ստանալու նրա հույսերն իզուր են, ուստի և թուրքական իշխանություններից կրած դաժան հալածանքների օրերին նա ամենից առաջ հույսը դնում էր ինքն իր վրա։ Չնայած այն բանին, որ թուրքական կառավարությունը նախօրոք փորձում էր զինաթափ անել խաղաղ հայ բնակչությանը, մի շարք վիլայեթներում հայերը հերոսական դիմադրություն ցույց տվին ժանդարմներին ու թուրքական կանոնավոր զորքերին։

«Չնայած թուրքական կառավարության կեղծ հաղորդումներին,— գրում էր Մանդելշտամը,— ոչ մի հայկական հեղափոխություն կամ ապստամբություն չի եղել։ Հայերը զենք վերցրին միայն այն ժամանակ, երբ նրանց սպառնում էր ջարդը» [2]։ Հետագայում այդ բանը ստիպված էր խոստովանել Մեվլան-զադե Ռիֆաթը, մատնանշելով, որ ամենուրեք կազմակերպվող հայկական ջարդերը հայերին ստիպեցին առանձին տեղերում դիմել ապստամբության՝ ինքնապաշտպանության նպատակով [3]։

Տակավին նախքան հայերին զինաթափելը, վերջիններիս մի մասը, զգալով, որ թուրքերը պատրաստվում են իրենց սրի քաշել, զենքը ձեռքներին փախան լեռներն ու անտառները, որտեղից հարձակումներ էին գործում թուրք ջարդարարների վրա, ազատում իրենց մայրերին, քույրերին ու եղբայրներին։

Բոլորին հայտնի է Վանի հայ ազգաբնակչության հերոսական

1 Լեո, Անցյալից, էջ 347։

2 Mandelstam, p. 242.

3 Մեվլան-զադե Ռիֆաթ, էջ 147։

պայքարը թուրքական զորքերի դեմ։ Վանի ինքնապաշտպանությանը, բացի քաղաքի հայ բնակիչներից, մասնակցում էին նաև մոտ 17 հազար գյուղացիներ, որոնք, փրկվելով ջարդից, ապաստան էին գտել Վանում։ Թուրքական իշխանությունները վաղուց էին պատրաստվում ոչնչացնելու Վանի նահանգում ապրող հայերին, որոնց թիվը հասնում էր 250 հազար մարդու, դրանցից 22 հազարը՝ Վանում։ Տակավին 1915 թվականի փետրվարին Վանի նահանգապետը՝ Ջևդեթ-փաշան (Էնվեր-փաշայի փեսան), որը միաժամանակ իրանական սահմանի երկայնքով տեղադրված թուրքական զորքերի գլխավոր հրամանատարն էր, վերադառնալով Իրան կատարած արշավանքից, ժողովներից մեկում հայտարարել էր. «Հայերի ու ասորիների հետ մենք հաշիվ տեսանք Ադրբեջանում (խոսքը Իրանական Ադրբեջանի մասին է—Ն. Ս.), Վանի հայերի հետ պետք է նույն ձևով վարվել» [1]։

Այդ նպատակով նա Կարինից լրացուցիչ զորքեր տեղափոխեց։

Ապրիլի կեսերին Արճեշում, Շատախում, Հայոց-Ձորի շրջանի գյուղերում և Վանի վիլայեթի այլ հայաբնակ վայրերում թուրքական զորքերն ու ժանդարմերիան ձեռնամուխ եղան զանգվածային կոտորածների։

Վանի ինքնապաշտպանության մասնակից Մելքոնյանը, պատմելով տեղի ունեցած դեպքերի մասին, մեջ էր բերում մի հայ ծերունու խոսքերը. «Եթե Վանա լիճը թանաք դառնար, իսկ Աբաղնիի հովիտը՝ թուղթ, որի վրա սկսեին գրի առնել ամեն ինչ, ապա գրանք բավական չէին լինի մեր ամբողջ վիշտը նկարագրելու համար» [2]։

Վանի նահանգի հայկական շատ գյուղերի բնակիչներ համառ դիմադրություն էին ցույց տալիս թուրք բարբարոսներին։ Կենդանի մնացած գյուղացիները կռիվներ մղելով նահանջեցին Վան և քաղաքի բնակիչների հետ միասին սկսեցին եռանդուն կերպով նախապատրաստվել ինքնապաշտպանության։ Ապրիլի 20-ին թուրքական զորքերը հարձակվեցին քաղաքի վրա, սակայն հայերի զինված ջոկատները ետ մղեցին նրանց գրոհը։ Համառ մարտեր սկսվեցին թուրքերի գերակշռող ուժերի և քաղաքի վատ զինված պաշտպանների միջև [3]։ Այդ կռիվները շարունակվեցին մինչև մայիսի 17-ը։ Հայերը ռազմամթերք չունեին, նրանք լրիվ մեկուսացված էին արտաքին աշխարհից և ոչ մի օգնություն չէին ստանում։

1 Տե՛ս «Документы и материалы», стр. 178.

2 Հայկ. ՍՍՌ կենտր. պետական պատմական արխիվ, ֆ. 200, գ. 95, թ. 93—97։

3 Տե՛ս «Армяне и война», 1916, № 2—3, стр. 40—41.

իրենց կազմակերպվածության, հնարամտության ու հմտության շնորհիվ Վանի պաշտպանները կարողացան կազմակերպել թուրքական հրոսակների հարձակումից քաղաքի պաշտպանության համար անհրաժեշտ ամեն տեսակի զենքերի պատրաստումը։

Այսպես, հրացանները հավաքելու ու նորոգելու համար իր հմտությամբ հայտնի վարպետ Նաղոն զենքի արհեստանոց ստեղծեց։ Մի այլ արհեստանոցում շատախցի վարպետ Պողոսի ղեկավարությամբ հրացանի ագուստներ էին պատրաստվում։ Պարկուճի պատրաստման ու փամփուշտի ձուլման արհեստանոցում աշխատում էին 70 հոգի։ Հատուկ արհեստանոցում պատրաստում էին ձեռքի նռնակներ և ձուլում փոքր թնդանոթներ։ Այստեղ էլ ձուլվեց պղնձե երեք հրանոթ։ Ապստամբները ստեղծեցին նաև անծուխ վառոդի պատրաստման արհեստանոց [1]։

Պաշտպանական կառույցներ ստեղծելու նպատակով քարգործ վարպետների ու հողափորների հատուկ խումբ ստեղծվեց, բաղկացած մոտ հազար մարդուց։ Բժիշկ Փանոսյանի ղեկավարությամբ կազմակերպվեց բժշկա-սանիտարական ջոկատ։ Ինտենդանտական բաժինը տնօրինում էր պարենի պահեստները, հասարակական փրոները, հագուստի ու կոշկեղենի արհեստանոցները։

Եվ, վերջապես, Վանի պաշտպանները հիմնեցին բյուրո, որն արձանագրում էր դեպքերը, կազմում և տարածում ամենօրյա հաղորդագրություններ։ Քաղաքի պաշտպանության գործը ղեկավարելու համար ստեղծվել էր շտաբ, որի մեջ գործուն մասնակցություն ունեին նկարիչ Փանոս Թերլեմեզյանը, Գրիգոր Բուլղարացին և Արմենակ Եգարյանը [2]։ Քաղաքի հայաբնակ թաղամասը՝ Այգեստանը, շտաբի կողմից բաժանված էր առանձին շրջանների՝ հրամանատարների գլխավորությամբ։

Պաշտպանության շտաբը կազմավորեց հրաձգային գումարտակներ, ինժեներական ջոկատ, ոստիկանական ջոկատ՝ քաղաքի ներսում կարգ ու կանոնին հետևելու համար, վիրակապության կայան և հիվանդանոց։

Քաղաքի պաշտպանների մեջ իշխում էր խստագույն կարգապահությունն ու կազմակերպվածությունը. առանց դրա նրանք չէին կարողանա ամբողջ մեկ ամիս համառ դիմադրություն ցույց տալ հակառակորդին։ Քաղաքի պաշտպանության շտաբում օրագիր էր պահվում, որտեղ գրի էին առնվում օրվա իրադարձությունները։ Այդ օրագրի մեջ գրանցվում էին նաև Վանը պաշտպանող զինված

1 «Оборона Вана», М., 1917, стр. 26—27.

2 Նույն տեղում։

ուժերին ուղղված հրամանները, որոնցից մեկում ասված էր հետևյալը. «Խստիվ արգելվում է մտնել տները և թալանով զբաղվել։ Մեղավորները մահվան կդատապարտվեն»։ Մի այլ հրամանում նշվում էր. «Ջոկատներում խստիվ արգելվում է ողելից խմիչքների օգտագործումը... Որտեղ որ գտնվեն այդպիսի խմիչքներ, դրանք պետք է անհապաղ ուղարկվեն պարենի մատակարարման կոմիտեին» [1]։

Հայկական թաղամասերի մուտքի մոտ զանազան ամրություններ էին ստեղծվել, իսկ քաղաքի ծայրամասերը շրջապատվել էին խրամատներով։

Կատաղի կռիվների ժամանակ մարտիկներին ոգևորելու համար դպրոցական նվագախումբը մարսելիեզ և հայկական ժողովրդական երգեր էր նվագում։ Թուրքական զորքերի հրամանատար Ջևդեթ-փաշան, չդիմանալով այլևս, մի անգամ նույնիսկ բացականչել էր. «Նրանք ինձ կգժվացնեն իրենց երաժշտությամբ» [2]։

Ականատեսները պատմում են, որ Վանի բոլոր բնակիչները համակված էին մի գաղափարով՝ լավ է մեռնել, քան թե անձնատուր լինել թուրք դահիճներին։ Նրանք, ովքեր զենք ունեին, գնում էին կռվելու թշնամու դեմ, իսկ մնացածները վերցնելով բահեր, քլունգներ ու լինգեր, ամրություններ էին կառուցում։ Մարտերին հաճախ մասնակցում էին աղջիկներ, անչափահաս պատանիներ։ Կանայք խնամում էին հիվանդներին ու վիրավորներին, պահում երեխաներին, կերակուր պատրաստում և մարտիկների համար հագուստ կարում։

Վանի պաշտպանությունը տևեց շուրջ մեկ ամիս։ Թշնամու բոլոր գրոհները ետ մղվեցին համառ կերպով մարտնչող հայերի կողմից։ Չնայած քաղաքի համարյա չդադարող հրետանային գնդակոծմանը (Վանի վրա արձակվեց մոտ 16 հազար արկ), թուրքերին չհաջողվեց ընկճել նրա պաշտպանների ոգին։ Թուրքական հրետանու կողմից քանդված ամրությունները գիշերները վերստին վերականգնվում էին։ Ռազմական գործողությունները արտասովոր կատաղի բնույթ ընդունեցին։ Կարևոր դիրքերը հաճախ ձեռքից-ձեռք էին անցնում։ Թուրքերի կրակը չէր դադարում և ոչ մի բոպեով, սակայն հայերի դիմադրությունը կոտրել նրանց այդպես էլ չհաջողվեց։

Հերոսական սխրանքներ էին կատարում պատանիները։ Նրանք, օրինակ, ուշադրություն դարձրեցին այն բանի վրա, որ թուր-

1 ЦГИА Груз. ССР, ф. 2 с, д. 3196, л. 103.

2 Տե՛ս Анри Барби, стр. 75.

քերի կողմից նետված նռնակների մի մասը չի պայթում և, բաժանվելով փոքրաթիվ խմբերի, սկսեցին չպայթած նռնակները հավաքել։ Բացի դրանից, տղաների յուրաքանչյուր խումբ իր տեղամասում հետևում էր ընկնող արկերին և գետնին հասնող ընկած արկերին անմիջապես նրանք վրա էին հասնում և մի ակնթարթում անջատելով պատրույգը, լիցքահանում և իրենց ավարը հանդիսավոր կերպով տանում զենքի պահեստը [1]։

Թուրքական զորքերի համար օրհասական պահին ժամանեց գերմանական մի սպա և իր վրա վերցրեց հրամանատարությունը։ Նա բոլոր թնդանոթները հավաքեց մի բարձունքի վրա՝ իր զինվորների հարձակումը հրետանային կրակով պաշտպանելու համար։ Վանի վրա այս վերջին գրոհը ձեռնարկվեց մութ գիշերին։ Հրետանային կրակի պաշտպանության ներքո զինվորները սողալով առաջ շարժվեցին, իսկ հետո սրընթաց կերպով գրոհի նետվեցին։ Սակայն քաղաքի պաշտպաններն իրենց տեղում էին. նրանք թշնամուն ետ շպրտեցին։ Թուրքերն շտապ կերպով նահանջեցին՝ կռվի վայրում բազմաթիվ դիակներ թողնելով։ «Ես այդպիսի դիմադրության չէի սպասում»,— խոստովանեց գերմանական սպան, որը և շուտով հեռացավ Վանից [2]։

Մայիսի 16-ին թուրքերը վերջին անգամ գնդակոծեցին քաղաքը։ Հաջորդ գիշերը թուրքական զորքերը հանկարծակի սկսեցին խուճապահար նահանջել։ Մայիսի 19-ին ռուսական կովկասյան բանակի զորամասերը հայ կամավորների հետ միասին մտան Վան՝ ցնծությամբ դիմավորվելով քաղաքի հերոսական պաշտպանների կողմից։ Ռուսական զորքերը քաղաք մտան հենց այնպիսի ժամանակ, երբ քաղաքի պաշտպանների հացի ու ռազմամթերքի բոլոր պաշարները սպառվել էին։

Այսպիսով, Վանի բնակչության հերոսական ինքնապաշտպանության շնորհիվ, նրան հաջողվեց փրկվել կոտորածից։ Վանի հայերի ապստամբությունը Լեպսիուսը իրավացիորեն համարում է «ինքնապաշտպանության քայլ»։

Թուրքական կառավարությունը գիտեր,— նշում է Լեպսիուսը,— որ այդ «ապստամբությունը հրահրվել էր վալիի՝ Ջևդեթ-բեյի կողմից և ոչ մի առնչություն չուներ ռուս-թուրքական ռազմական գործողությունների հետ» [3]։

Վանում արագ կերպով կյանքն իր հունի մեջ էր մտնում։ Սակայն այդ կանոնավոր ընթացքը երկար չշարունակվեց։ Տևական կռիվների հետևանքով ռուսական զորքերի ռազմական պաշարները սպառվել էին։ Երկյուղելով թուրքերի նոր հարձակումից ու շրջապատման վտանգից, կովկասյան բանակի զորամասերը ստիպված եղան 1915 թվականի հուլիսի 2-ին թողնել Վան։

Վանի անսպասելի լքումը ռուսական զորքերի կողմից քաղաքի բնակչությանը դժվարին կացության մեջ դրեց։ Բոլոր հայերը ստիպված էին անմիջապես թողնել քաղաքը։ Սկսվեց խուճապ։ Փոխադրական միջոցները չէին բավարարում, ուստի և բնակիչների հոծ զանգվածները ստիպված էին մեծ մասամբ ոտքով շարժվել դեպի հյուսիս՝ ռուսական սահմանը։ Քաղաքում հրդեհներ սկսվեցին։ Հեռանալով քաղաքից, հայերը հրկիզում էին տներն ու գույքը։

Թուրքերի կողմից Արճեշը գրավելուց հետո, Վանից դեպի հյուսիս տանող ճանապարհը կտրվեց և գաղթականների մի մասը ստիպված էր շարժվել դեպի Արևելք՝ Իրանական Ադրբեջան։ Նրանց մեծ մասին, այնուամենայնիվ, հաջողվեց լեռնային կածաններով անցնել Անդրկովկաս։

Վանից մինչև ռուսական սահմաններն ընկած ճանապարհին զոհվեց մոտ 40 հազար մարդ։ Առանձին տեղերում, դիակների կուտակումը ճանապարհներին արգելակում էր շարժումը։

Կարսի, Իգդիրի ու Ջուլֆայի վրայով Անդրկովկաս փախան Վանի վիլայեթի 210 հազար հայեր։ Այդ թվի 55 տոկոսը կազմում էին կանայք, 35 տոկոսը՝ երեխաները։ Տղամարդիկ ընդամենը 10 տոկոսն էին կազմում, որից 5 տոկոսը ծերունիներ էին [1]։

Ռուսական զորքերի ետ քաշվելուց հետո թուրքերը Ջևդեթ-փաշայի գլխավորությամբ մտան Վան, բայց մի քանի օր հետո կովկասյան բանակը նորից հարձակման անցնելով, թուրքերին վռնդեց Վանից ու վերստին տիրացավ քաղաքին։ Վանում գտնվելու այդ կարճատև ժամանակամիջոցը արյունարբու Ջևդեթ-փաշան օգտագործեց այն մի քանի հարյուր հայ երեխաներին ու կանանց սրի քաշելու համար, որոնք չէին հասցրել հեռանալ քաղաքից։ Նա այրեց կանգուն մնացած տները և քաղաքը հիմնովին կողոպտեց։ Վան մտած ռուսական զորքերը հայտնաբերեցին թուրքական գազանությունների թարմ հետքեր։ Փողոցներում թափված էին կանանց ու երեխաների դիակներ։ Իսկ Բերկրիից մինչև Ջանիկ ընկած ճանապարհին սփռված էին հայ գաղթականների հազարավոր դիակներ [2]։

---

[1] «Оборона Вана», стр. 33.
[2] Анри Барби, стр. 75—76.
[3] Lepsius J., S. XV.

[1] Анри Барби, стр. 101—102.
[2] «Кавказское солво», 2. IX. 1915, № 198.

Այնուամենայնիվ, իրենց հերոսական ինքնապաշտպանության շնորհիվ, Վանի վիլայեթի հայ ազգաբնակչության մի զգալի մասին հաջողվեց փրկվել և հանգրվան գտնել Ռուսաստանում ու Իրանական Ադրբեջանում։

Թուրքական զորքերին համառ դիմադրություն ցույց տվեցին նաև հարևան՝ Մուշի վիլայեթի հայերը։ Այստեղ թուրքական զորքերը հայկական բնակավայրերի վրա իրենց հարձակումները սկսեցին հուլիսին։

Հայերը, թեև նախապատրաստվել էին ինքնապաշտպանության, ի վիճակի չեղան երկարատև դիմադրություն ցույց տալ թշնամու գերակշռող ուժերին։ Առանձին գյուղերում զինված հայերը մի քանի օր համառ կերպով դիմադրում էին մինչև վերջին փամփուշտը՝ ետ մղելով թուրքական ջոկատների գրոհները։ Գիշերն ապստամբները ճեղքեցին թուրքերի շղթան և բնակիչների մի մասի հետ նահանջեցին դեպի Սասնա սարերը, ուր, ամրանալով Բերդակ լեռան վրա, շարունակեցին իրենց պայքարը թուրք ջարդարարների դեմ [1]։

Հայկական գյուղերի բնակչության դիմադրությունը կոտրելով, թուրքական զորքերն աստիճանաբար մոտենում էին Մուշ քաղաքին։ Նրանք Մուշի և Սասունի միջև ընկած բոլոր հաղորդակցության ճանապարհները կտրեցին։ Մուշի հայ բնակչությունը համառ դիմադրություն ցույց տվեց թուրքական զորքերին։ Պատսպարվելով եկեղեցիներում և քարե տներում, քաղաքի հայերը չորս օր՝ հուլիսի 11-ից մինչև 14-ը մարտնչում էին թուրքերի դեմ, սակայն, ինչպես նկարագրում է Բրայսը, թուրքական թնդանոթները, որոնք ղեկավարվում էին գերմանական սպաների կողմից, խարխլեցին հայերի դիրքերը։ Հայ մարտիկները պաշտպանվում էին մինչև վերջին շունչը։ Մուշի վիլայեթի 59 հազար հայերից փրկվեցին միայն 9 հազար հոգի, որոնք փախան Սասուն և այնտեղ, լեռներում, շարունակում էին իրենց հերոսական պայքարը [2]։

Սասունում, Մուշից դեպի հարավ-արևմուտք ընկած այդ փոքր լեռնային մարզում, ապրում էին շուրջ 30 հազար հայեր։ Անառիկ լեռների դաժան պայմաններն ավելի էին ամրապնդել սասունցիների ազատաշունչ ոգին։ Տեղեկանալով, որ Արևմտահայաստանի մյուս շրջաններում ապրող իրենց եղբայրները զոհվել են, սասունցիները ի մի համախմբվեցին և երդվեցին դիմակայել մինչև վերջին ուժերը։ Մի քանի ամսվա ընթացքում մոտ 30 հազարանոց

1 ЦГИА Груз. ССР, ф. 2 с, д. 3599, л. 181.

2 Տե՛ս Bryce, p. 82.

թուրքական բանակը ապարդյուն փորձում էր ներխուժել Սասուն, որի ամբողջ հայ ազգաբնակչությունը, այդ թվում նաև կանայք ու երեխաները, քաջաբար մարտնչում էր թշնամու դեմ։ Զենք չունեցողները պաշտպանվում էին բահերով, քարերով, ինչով որ պատահեր։ Համոզվելով, որ ուղղակի գրոհներն իրենց նպատակին չեն հասնում, թուրքական հրամանատարությունը որոշեց պաշարել Սասունը և կտրելով նրան արտաքին աշխարհից, սովահար անելով վերցնել այդ անառիկ մարզը։ Թուրքական հրետանին անդադար գնդակոծում էր սասունցիների դիրքերը։ Պաշտպաններն ուժասպառ էին եղել։ Ամեն օր տասնյակ մարդիկ մահանում էին քաղցից։ Երբ թուրքական զորքերը սկսեցին իրենց վերջին գրոհը, սասունցիները փամփուշտ այլևս չունեին, վառոդի պաշարները ևս սպառվել էին։ Ըստ էության թուրքական հրոսակները ներխուժեցին ոչ թե սասունցիների ճամբարը, այլ հսկայական մի գերեզմանոց։ Կենդանի մնացած սակավաթիվ հայերը սրի քաշվեցին։ «Երիտասարդ կանայք,—ասված է փաստաթղթերից մեկում,—թուրքերի ձեռքը չընկնելու համար նետվում էին բարձրաբերձ ժայռերից՝ իրենց հետ անգունդը տանելով կրծքի երեխաներին» [1]։ Ահա այսպիսի ողբերգական վախճան ունեցավ սասունցիների հերոսական դիմադրությունը։

Վերը ասվեց այն մասին, որ Զեյթունի ազատասեր հայ ազգաբնակչությունը Կիլիկիայի կաթողիկոս Սահակի հորդորումներին ունկնդրելով, ինչպես նաև ներքին անհամաձայնությունների պատճառով, հավատաց թուրքական իշխանությունների կեղծ խոստումներին և դիմադրություն ցույց չտվեց նրանց։ Բայց երիտասարդության մեծ մասը փախավ լեռները, ուր նա միացավ թուրքական բանակից մինչ այդ դասալքված և այնտեղ թաքնված հայերի հետ։ Ռազմավարային զենքով զինված, նրանք հարձակումներ էին գործում թուրքական զորքերի վրա։ Այնթաբի ամերիկյան հիվանդանոցի դիրեկտորի վկայությամբ, հայ ապստամբները հաճախ լեռներից ցած էին իջնում՝ Զեյթունից քշված հայերի քարավաններն ազատելու։ Երեք անգամ նրանք կարողացել էին հաջողության հասնել։ Զինված պայքարը Զեյթունում շարունակվում էր շուրջ երեք ամիս։ Մայիսի վերջին թուրքական զորքերը ամբողջովին գրավեցին Զեյթունը՝ ոչնչացնելով տեղում մնացած բոլոր հայերին։

Հայ ժողովրդի անհավասար հերոսական պայքարի ամենանշանակալից ու ամենափառահեղ էջը հայերի ինքնապաշտպանությունն էր Մուսա լեռան վրա (Ադանայի վիլայեթ), որին և նվիրված է

1 ЦГИА Груз. ССР, ф. 2 с, д. 3198, л. 101.

ավստրիական հայտնի գրող Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» նշանավոր վեպը [1]։

Այդ հերոսամարտի համառոտ պատմությունը հետևյալն է.

1915 թվականի հուլիսի 13-ին, թուրքական իշխանությունները Անտիոքի ծովախորշի մերձակայքում գտնվող հայկական վեց գյուղերի բնակիչներին հրամայեցին վաճառել իրենց ամբողջ ունեցվածքը և պատրաստվել ճանապարհ ընկնելու դեպի աքսորավայրը՝ Միջագետք։ Ի պատասխան դրան, հայերը որոշեցին դիմադրել մինչև արյան վերջին կաթիլը։ Մոտ 5 հազար հոգի՝ տղամարդիկ, կանայք ու երեխաներ իրենց պատկանող անասունների հետ բարձրացան ծովափից վեր գնացող անառիկ ու ժայռոտ Մուսա լեռը։ Տղամարդկանցից շատ քչերը միայն զենք ունեին։ Ընդամենը նրանց մոտ կար 150 հին հրացան , 200 որսորդական հրացան, 50 ատրճանակ և 200 դաշույն։ ,

Մուսա լեռան գագաթին տենդագին արագությամբ լավ ամրացված մի ճամբար հիմնվեց։ Խրամատներ փորվեցին, ճանապարհներն ու արահետները փակվեցին, լեռան մատույցները շրջապատվեցին փշալարերով։ Ահռելի ժայռաբեկորներից բարիկադներ կանգնեցվեցին։ Մուսալեռցիները պաշտպանության կոմիտե ընտրեցին։

Հուլիսի 21-ին թուրքական զորքերը, որոնք իրենց շարքերում հաշվում էին մոտ 7 հազար զինվոր, սկսեցին հարձակումը Մուսա լեռան վրա։ Վաղ առավոտից մինչև ուշ գիշեր թուրքերը ամեն կողմից գրոհում էին լեռան բարձունքը՝ փորձելով ճեղքել հայերի պաշտպանությունը և մտնել նրանց ճամբարը։ Հաճախ գործը հասնում էր ձեռնամարտերի։ Հայերի հիմնական զենքը հսկայական ժայռաբեկորներն էին, որ նրանք բարձունքից նետում էին թուրքական զինվորների վրա։

Այդ անօրինակ պաշտպանության մասնակիցներից մեկը պատմում է հետևյալ դեպքի մասին. թուրքական հրանոթն իր կրակով մեծ վնասներ էր պատճառում հայերին։ Պաշտպանական կոմիտեն որոշեց լռեցնել նրան։ Եվ ահա լավագույն հրաձիգներից մեկը ճարպկորեն ընդհուպ մոտեցավ թուրքական դիրքերին և դիպուկ կրակոցներով սպանեց շորս հրետանավորների՝ դերի վերցնելով մարտկոցի հրամանատարին։ Այդ խիզախ մարտիկը թուրքական թնդանոթը շարքից դուրս բերեց [2]։

Մի առավոտ, թուրքական զորքերը սկսեցին հարձակվել դեպի

1 Werfel Franz, Die vierzig Tage des Musa Dagh, Berlin, 1956.
2 Տե՛ս Անրի Բարբի, стр. 64.

Մուսա լեռան գագաթը տանող բոլոր լեռնանցքներով միաժամանակ։ Պաշտպանության կոմիտեն տակտիկական սխալ թույլ տվեց՝ իր ուժերը ցրելով բոլոր ուղղությունների վրա։ Թուրքերն օգտվեցին դրանից և իրենց հիմնական հարվածը կենտրոնացրին գլխավոր անցման տեղում։ Պաշտպաններն այլևս չհասցրին իրենց ուժերը մոտեցնել և կենտրոնացնել թուրքական զորքերի հիմնական հարվածի դեմ. թուրքերն արդեն առաջ էին շարժվել և գրավել մի շարք կարևոր բարձունքներ։ Թուրքերն այնքան էին հավատացած իրենց հաղթանակում, որ նրանք որոշեցին գիշերն անցկացնել անտառում, իսկ լույսը բացվելուն պես անցնել լեռան պաշտպաններից իրենց բաժանող ձորի միջով և վերջ տալ բոլորին։

Թուրքերի այդ վրիպումը փրկեց մուսալեռցիներին։ Գիշերը նրանք շրջապատեցին թուրքական զորքերին և, կրակ բացելով, ամեն կողմից գրոհի նետվեցին։ Այդ անսպասելի հարձակումից հանկարծակիի եկած թուրքերը խուճապահար փախուստի դիմեցին։ Լուսադեմին ամբողջ անտառը մաքրված էր թուրքական զինվորներից։ Որպես ավար հայերի ձեռքն ընկան թուրքերի կողմից թողնված զենքն ու ռազմամթերքը։ Թուրքերը տվեցին 200 սպանված [1]։

Այդ պարտությունից հետո թուրքական հրամանատարությունը զենքի կոչեց շրջակա թուրքական գյուղերի բոլոր տղամարդկանց։ Թուրքական զորքերի ընդհանուր թիվն աճեց մինչև 20 հազար մարդու։ Մուսա լեռը ցամաքից շրջապատվեց խիտ օղակով։ Թուրքերը փորձեցին այն սովահարությամբ վերցնել։ Մթերքի պաշարները վերջանալու վրա էին։

Մուսա լեռան պաշտպանների դրությունն օրհասական էր դառնում։ Մնում էր փրկության միակ ուղին՝ Միջերկրական ծովով։ Այդ մասում ափի զառիթափ լինելու և մոտակայքում նավահանգստի բացակայության պատճառով թուրքերը չէին կարող Մուսալեռը շրջափակել ծովից։

Պաշտպանության կոմիտեն կազմեց մի նամակ՝ երեք օրինակով և տվեց դրանք երեք լավագույն լողորդների, որոնք պետք է հսկեին անցնող նավերին և մոտեցող նավ նկատելուն պես լողալով հասնեին և նամակը հանձնեին նավապետին։ Այդ նամակում Մուսա լեռան պաշտպանները խնդրում էին փրկել իրենց ընտանիքներին, իսկ իրենց զենք ու պարեն տալ՝ հակառակորդի դեմ պայքարը շարունակելու համար։

Սակայն օրերն անցնում էին, իսկ հորիզոնի վրա և ոչ մի նավ

1 Տե՛ս Անրի Բարբի, стр. 64.

չէր երևում։ Այդ ժամանակամիջոցում կանայք մի հսկայական սպիտակ դրոշակ պատրաստեցին, որի վրա անգլերեն լեզվով գրված էր. «Քրիստոնյաներն աղետ են ապրում, փրկեցեք մեզ»։ Նրանք կարեցին նաև մի դրոշակ՝ կարմիր խաչը մեջտեղում։ Դրոշակներն ամրացվեցին երկու բարձր ծառերի կատարներին։

Մուսա լեռան պաշտպանության 53-րդ օրը ափին մոտ երևաց մի նավ, դա ֆրանսիական «Cuihen» ռազմանավն էր։ Մի քանի կտրիճ մուսալեռցիներ լողալով հասան նավին և հայերի խնդրանքը հաղորդեցին նավապետին։ Վերջինս այդ մասին տեղեկացրեց էսկադրայի հրամանատարին։ Շուտով ափին մոտեցավ ֆրանսիական «Ժաննա դ'Արկ» շոգենավը՝ մի քանի ռազմանավերի ուղեկցությամբ։ Կենդանի մնացած հայերը նետվեցին դեպի ափը։ Ծովի կողմից կրակի պաշտպանության տակ Մուսա լեռան բոլոր պաշտպաններին իրենց ընտանիքների հետ միասին (ընդամենը 4 հազար 58 մարդ) հաջողվեց շոգենավ փոխադրել։ Սեպտեմբերի 14-ին նրանք հասան Պորտ-Սաիդ, ուր և մշտական բնակություն հաստատեցին [1]։

Այսպես, չենթարկվելով Միջագետք աքսորվելու վերաբերյալ թուրքական կառավարության հրամանին, ուր նրանց տանջալից մահ էր սպասում, Մուսա լեռան հայերը փրկվեցին՝ շնորհիվ իրենց խիզախության ու տոկունության։

Հայկական ազգաբնակչությունը թուրք բռնակալներին զինված դիմադրություն էր ցույց տալիս նաև Անատոլիայի այլ շրջաններում։

Այսպես, Շապին-Կարահիսարում 4 հազար հայեր հրաժարվեցին զենքը հանձնել իշխանություններին և տեղահանվել Միջագետք։ 1915 թվականի հունիսի 12-ից մինչև հուլիսի 3-ը նրանք համառ մարտեր էին մղում թուրքական 10-րդ կորպուսի զորամասերի դեմ։ Ապստամբներին հաջողվեց գրավել քաղաքի միջնաբերդը, որտեղ նրանք 12 օրվա ընթացքում ետ էին մղում թշնամու հարձակումները։ Թուրքական հրամանատարությունը ստիպված էր Երզնկայից ու Սվազից օժանդակ ուժեր փոխադրել, որից հետո թուրքական զորքերը շրջապատեցին քաղաքը և սկսեցին թնդանոթներից անդադար գնդակոծել միջնաբերդը։ Շապին-Կարահիսարի պաշտպանները գիշերվա խավարում փորձ արեցին ճեղքել թուրքական շղթան, սակայն այդ բանը նրանց չհաջողվեց և բոլոր ապստամբները զոհվեցին [2]։

---

[1] Bryce, p. 512—520, Toynbee, p. 32, Lepsius, S. XI.

[2] Guze, Büyük harpte Kafkas cephesindeki muharebeler. Տե՛ս „Askeri Mecmuanın Tarih kısmı". Sayı 20. İstanbul, 1931, s. 64—65.

Պակաս հերոսական չէր և հայերի պայքարը Ուրֆա քաղաքում, ուր նրանք նույնպես մերժեցին թուրքական իշխանությունների պահանջը՝ զենքը հանձնել և թողնել իրենց հայրենի բնակատեղիները։ Ուրֆայի դեմ հատուկ զորամասեր բերվեցին Հալեպից։ Երիտթուրքական «եոյակի» անդամներից մեկի՝ Ջեմալ-փաշայի հրամանով, որն այդ ժամանակ Սիրիայում գտնվող թուրքական զորքերի հրամանատարն էր, Ուրֆան քարուքանդ արվեց հրետանային կրակով։ Քաղաքի ամբողջ հայ ազգաբնակչությունը սրի քաշվեց։

Այսպիսով, կարելի է հետևյալ եզրակացության հանգել. այն վայրերում, ուր հայերը զենքի էին դիմում՝ իրենց կյանքը փրկելու համար, նրանք զգալիորեն ավելի քիչ տուժեցին, քան այն դեպքում, երբ նրանք հնազանդվելով իրենց ճակատագրին, անտրտունջ կատարում էին թուրքական պաշտոնյաների կարգադրությունները։

Արևմտահայաստանի տարբեր վիլայեթներում և Կիլիկիայում հայերի իրարից անջատ ինքնապաշտպանության վերը բերված փաստերը, որոնք թուրքական կառավարությունն իր ժամանակին որակեց որպես Անտանտի գործակալների կողմից հրահրված համընդհանուր մի ապստամբություն, վկայում են այն մասին, որ Թուրքիայի հայ ազգաբնակչությունը երբեք էլ համաձայնված ընդհանուր գործողությունների ու ապստամբության պլան չի ունեցել, թեև թուրքական պաշտոնական շրջաններն առաջին համաշխարհային պատերազմի տարիներին և թուրք ռազմական գործիչներն ու պատմաբանները՝ մեր օրերում պնդում են հակառակը, զուր փորձեր անելով երիտթուրքական կառավարողների վրայից վերցնելու հայերի զանգվածային կոտորածների և իրենց հայրենիքից արտաքսելու պատասխանատվությունը։

***

Ժամանակակից Թուրքիայի պաշտոնական պատմագրությունը փորձում է արդարացնել երկրի հայ ազգաբնակչության նկատմամբ 1915—1916 թվականներին երիտթուրքերի կողմից կիրառված դաժան ռեպրեսիաները։ Դրանով է բացատրվում, օրինակ, հայ ժողովրդի դահիճներից մեկի՝ Թալեաթի հուշերի հրատարակումը 1946 թվականին։ Մոլի շովինիստ Ջահիդ Յալչընը Թալեաթ-փաշայի հուշերին կցած իր առաջաբանում գրում է, որ Օսմանյան կայսրության նախկին մեծ վեզիրը «հերքում է» անարդարացի այն մեղադրանքները, որոնք բարդվում էին երիտթուրքերի վրա առաջին համաշխարհային պատերազմի տարիներին։ «Այդ գիրքը,— ընդ-

գծում է Յալչընը,— «Միասնություն և առաջադիմություն» կուսակցությունն արդարացնող մի փաստաթուղթ է»[1]։

Յալչընը գովերգում է Թալեաթի ցնդաբանությունը, որի իրական նպատակն էր շարամիտ կեղծիքի միջոցով արդարացնել երիտթուրքական կուսակցության ու նրա կառավարության գործունեությունը։ Իրեն հատուկ ցինիկությամբ Թալեաթը խեղաթյուրում է հայկական հարցում երիտթուրքական կառավարության վարած իսկական քաղաքականությունը, որին նա իր հուշերում առանձին բաժին է հատկացրել։ Եվ դա միանգամայն բացատրելի է. լինելով այդ տարիներին ներքին գործերի մինիստրը, նա ավելի, քան երիտթուրքական պարագլուխներից որևէ մեկը, մեղսակից էր հայերի արյունոտ ջարդերում։ Վերը արդեն նշվեց, որ Թալեաթը հայերի զանգվածային ջարդերի պլանի հեղինակն էր և անձամբ ստորագրում էր բոլոր այն հրամանները, որոնք տեղական իշխանություններին պարտադրում էին այդ ռեպրեսիաները կյանքում իրականացնել։

Իր հուշերում Թալեաթը վերստին կրկնում է հայերի ապստամբության վերաբերյալ հորինված մինչև վերջը ստահոդ վերսիան։ Նա գրում է. «Հենց որ սկսվեց պատերազմը, Մուշի, Բաղեշի ու Վանի վիլայեթներում հայերի ապստամբություններ բռնկվեցին» և անամոթաբար պնդում, որ երբ ղլխավոր շտաբը հայերին «տեղահան անելու» օրենք նախապատրաստեց, ինքը «նորից դրա դեմ դուրս եկավ»[2]։

Հիմնական խնդիրը, որն իր առջև դրել էր Թալեաթը, ձեռնարկելով իր հուշերը գրելուն, դա նրա ձգտումն էր «ապացուցելու», որ «Միասնություն և առաջադիմություն» կուսակցության գործիչների վերաբերյալ թուրքական դատարանի ընդունած որոշումները սխալ էին, որովհետև, նրա կարծիքով, «մի շարք անձինք (Թալեաթն առաջին հերթին ի նկատի ուներ իրեն, Էնվերին ու Ջեմալին—Ե. Ս.) անարդարացի դատապարտվել են, թեև նրանց անմեղսակցությունը հաստատող ակնհայտ ապացույցներ կային»[3]։

Նույն նպատակով էր գրել իր հուշերը նաև Ջեմալ-փաշան[4], որը նույնպես նենգափոխում է հայկական հարցի ամբողջ պատմությունը։ Ջանալով արդարացնել թուրքական կառավարության գա-

1 Talât Paşanın hatıraları, s. 1

2 Նույն տեղում, էջ 63։

3 Նույն տեղում, էջ 76։ Համաշխարհային պատերազմում Թուրքիայի կրած պարտությունից հետո Ստամբուլի դատարանը երիտթուրքական կուսակցության պարագլուխներին հեռակա կարգով մահվան էր դատապարտել՝ որպես պատերազմի հանցագործների։

4 Джемаль-паша, Записки 1913—1919 гг., Тифлис, 1923.

վանային չարագործությունները, Ջեմալ-փաշան հայերի ապրած բոլոր դժբախտությունների մեղքը բարդում է Ռուսաստանի վրա[1]։ Հայկական ջարդերը նա բացատրում է հենց հայերի վարքով։ Նրա խոսքերով, հայերը «հրահրում» էին ապստամբություններ, որոնք «կազմալուծում էին մեր կովկասյան բանակի թիկունքը, մի բան, որ կարող էր հանգեցնել նրա կատարյալ ոչնչացմանը»[2]։

Երիտթուրքական կառավարության ղեկավար գործիչներից մեկը՝ Մեվլան-զադե Ռիֆաթը, իր հուշերում մեջ բերելով մեծ քանակությամբ փաստաթղթեր, վեր է հանում ամբողջ ճշմարտությունը հայկական ջարդերում, ձգտելով ցույց տալ, որ ինքն անձամբ մասնակցություն չի ունեցել հայերի բնաջնջման վերաբերյալ երիտթուրքական կոմիտեի ու կառավարության ընդունած որոշումներին[3]։

Վերը հիշված Նամիկ-բեյն իր հուշերում բերում է երիտթուրքական կոմիտեի ու կառավարության բազմաթիվ որոշումներ ու հրամաններ, որոնց գերակշռող մեծամասնությունը ստորագրվել կամ անմիջականորեն առնչվում են ներքին գործերի մինիստր Թալեաթի հետ։

Մեվլան-զադե Ռիֆաթի, Նամիկ-բեյի, Բրայսի, Լեպսիուսի, Սմանդելշտամի և մյուսների հուշերից բերված փաստաթղթերը, ինչպես և արխիվային հարուստ նյութերը համոզիչ կերպով մերկացնում են երիտթուրքական «տրիումվիրատի» պնդումների սնանկությունը։

Փաստերի նենգափոխման մեջ ժամանակակից թուրք պատմաբանները ետ չեն մնում Թալեաթից ու Ջեմալից։ Այդ տեսակետից բնորոշ են այնպիսի շովինիստների «աշխատությունները», ինչպիսիք են Էսատ Ուրասը, Յուսուֆ Հիքմեթ Բայուրը, Սադրի Մաքսուդի Արսալը, Թեվֆիկ Բրյիքլրօղլուն, Ահմեդ Էմին Յալմանը և ուրիշներ։ Սրանք բոլորը կաշվից դուրս են գալիս, «հաստատելու» համար, որ ոչ-մահմեդական բոլոր ժողովուրդները, այդ թվում և հայերը, Օսմանյան կայսրությունում միշտ էլ ապրել են լավագույն պայմաններում և օգտվել ամեն կարգի քաղաքական իրավունքներից, ուստի և նրանց հարկ չկար պայքարելու իրենց ազատագրման համար։ Արհամարհելով պատմական հայտնի փաստերը, որոնք անհերքելիորեն վկայում են թուրքական սուլթանների վարած ասիմիլյատորական վայրագ քաղաքականության մասին,

1 Джемаль-паша, Записки 1913—1919 гг., Тифлис, 1923, стр. 197.

2 Նույն տեղում, էջ 236։

3 Տե՛ս Մեվլան-զադե Ռիֆաթ, էջ 117։

թուրք բուրժուական պատմաբանները պնդում են, որ թուրքերը երբեք ամբողջ մի ազգի նկատմամբ բռնություն չեն գործադրել, որ թուրքական կառավարողներն իրենց կրոնը բռնի չեն պարտադրել Օսմանյան կայսրության տիրապետության տակ ընկած ժողովուրդներին [1]։

Էսատ Ուրասն, օրինակ, անդրադառնալով 1915—1916 թվականների դեպքերին, առանց ամաչելու գրում է, որ թուրքերի կողմից 600—800 հազար կամ նույնիսկ մեկ միլիոն հայեր սպանելու մասին եղած տեղեկությունները ընդհանուր ոչինչ չունեն իրականության հետ։ Ընդհակառակը,— պնդում է պատմության սույն կեղծարարը,— հայերի կողմից սպանված մահմեդականների թիվն ավելի մեծ է [2]։ Հեղինակը փաստաղուրկ կերպով հերքում է հայ ազգաբնակչության ոչնչացման վերաբերյալ թուրքական կառավարության կողմից նախապես մշակված ծրագրի առկայությունը։

Հիքմեթ Բայուրը, Ահմեդ Էմին Յալմանը և թուրք մյուս հեղինակները խուսափում են որևէ ձևով հիշատակել անգամ վերը բերված փաստաթղթերը, որոնք անհերքելիորեն վկայում են այն մասին, որ երիտթուրքական կլիկը մինչև վերջը հանցավոր է հայերի զանգվածային ջարդերում։ Դրա փոխարեն նրանք հաճախ են դիմում սուլթանական կառավարության ու երիտթուրքական կուսակցության ղեկավարների կողմից 1915—1916 թվականներին սարքած փաստաթղթերին։ Մասնավորապես, նրանք վկայակոչում են Թալեաթի պատասխանն Անտանտի տերությունների նոտային՝ հայկական կոտորածների վերաբերյալ։ Հիշյալ պատասխանում թուրքական կառավարությունը բավականին անշնորհք ձևով փորձում էր համաշխարհային հասարակական կարծիքից թաքցնել հայ ժողովրդի այդ մեծագույն ողբերգությունը։

Էսատ Ուրասն ու Հիքմեթ Բայուրը չեն քողարկում իրենց ոգևորությունը Թուրքիայի պրեմիեր-մինիստր Դամադ Ֆերիդ-փաշայի ելույթից, որը 1919 թվականի հոկտեմբերի 19-ի իր ճառում երիտթուրքերի նախկին կառավարությանը մեղադրել էր հայկական ջարդեր կազմակերպելու մեջ և դրանք որակել որպես բարբարոսական գործողություններ [3]։

«Պատերազմի տարիներին,— ասել էր իր ճառում Դամադ Ֆերիդ-փաշան,— ամբողջ քաղաքակիրթ աշխարհը ցնցվեց իբր թուրքերի կողմից կատարված հանցագործությունների մասին տեղեկություններից։ Ես հեռու եմ այն բանից, որպեսզի շղարշ նետեմ այն արարքների վրա, որոնք ողջ մարդկությանը ստիպեցին ցնցվել սարսափից։ Առավել նվազ չափով եմ ես հակված թեթևացնելու այդ մեծ դրամայի մասնակիցների մեղավորության չափը։ Ես իմ առջև այլ նպատակ եմ դնում. փաստերը ձեռքիս ցույց տալ ամբողջ աշխարհին, թե ում վրա է ընկնում իսկական պատասխանատվությունը այդ սարսափելի հանցագործությունների համար...» «Պետք է, սակայն, ժխտել ամեն մի փորձ,— ասել էր այնուհետև Դամադ Ֆերիդը,— կատարվածը բացատրելու ռասայական կոնֆլիկտով կամ կրոնական ֆանատիզմի պոռթկումով» [1]։

Հիքմեթ Բայուրը զայրույթ է հայտնում Դամադ Ֆերիդ-փաշայի այդ հայտարարության առթիվ։ Նա գրում է, որ թուրքական կառավարության ղեկավարը իր հիմարության պատճառով Փարիզի հաշտության կոնֆերանսում «բազմաթիվ սխալներ» է թույլ տվել։ Այսպես, հունիսի 17-ի նիստում խոսելով հայերի տեղահանման մասին, նա, Բայուրի ասելով, «անհրաժեշտ չհամարեց հիշատակել այն մասին, որ պատերազմի ժամանակ հայերը փորձում էին ապստամբություն բարձրացնել և դրանով վտանգի տակ դնել մեր բանակի թիկունքը, որ նրանք սկսեցին հանցագործություններ կատարել»։ Բայուրը դժգոհ է նաև այն բանից, որ Դամադ Ֆերիդ-փաշան «այդ տեղահանումը որակել էր որպես Օսմանյան կառավարության վայրենի կամայականություն» [2]։

Իր մի ուրիշ աշխատության մեջ, հետևանքը որպես պատճառ ներկայացնելով, Հիքմեթ Բայուրը գրում է, որ երիտթուրքերի կողմից կիրառված պատժիչ միջոցառումները թելադրվում էին հայերի ապստամբությամբ Վանում, Բաղեշում ու Շատախում [3]։ Այնուհետև նա նշում է, որ «մեր ժամանակվա թշնամիների պնդումները հայերին աքսորելու կամ սպանելու մասին կեղծիք են։ Իրականում հայերի համընդհանուր ապստամբություն է բռնկվել թուրքական բանակի ամենակրիտիկական պահին» [4]։ Այնուամենայնիվ, Բայուրը խոստովանում է, որ «հայկական ապստամբության» ճնշման

---

1 Sadri Maksudi Arsal, Ikinci Türk Tarih kongresi, s. 1062, 1074, 1092.

2 Esat Uras, s. 617.

3 Նույն տեղում, էջ 668։

1 Տե՛ս Ллойд Джордж. Правда о мирных договорах, т. 2, М., 1957, стр. 200—202. Նույն ճառը բերում է նաև Էսատ Ուրասը։ Տե՛ս Esat Uras, s. 688.

2 Bayur Yusuf Hikmet, Türk inkilâbı tarihi, c. III, kısım 3. Ankara, 1957, s. 3.

3 Bayur Yusuf Hikmet, Türkiye Devletinin dış siyasası, Istanbul, 1938, s. 37.

4 Նույն տեղում, էջ 4։

ձևը «պատմության շատ տխուր էջերից է»։ Սակայն նա իր ընթերցողներին մխիթարում է նրանով, որ այդ իրադարձությունները այնպիսի լայն չափեր չընդունեցին, ինչպիսին այդ եղել է հրեական ազգաբնակչության նկատմամբ՝ հիտլերականների կողմից օկուպացիայի ենթարկված եվրոպական երկրներում։ Երիտթուրքերի կողմից ձեռք առնված միջոցառումները Հիքմեթ Բայուրը բնութագրում է որպես հարկադրված քայլեր, որոնց նրանք ստիպված էին դիմել պետությունը փրկելու համար [1]։ Այդ պատճառով էլ նա զայրանում է նրանց վրա, ովքեր սուլթանական կառավարության կողմից հայերի տեղահանումը 1914—1918 թվականների պատերազմի ժամանակ բռնության ակտ են համարում [2]։

«Թուրքական հեղափոխության պատմությունը» գրքում Բայուրը հենվում է էսադ Ուրասի ստահոդ պնդումների վրա, այն է՝ թե իբր երիտթուրքական կառավարությունը հանցանք չունի հայկական ջարդերում։ Նա գրում է, որ թուրքական կառավարությունը վաղ օրոք իմանալով Անտանտի երկրների օգնությամբ նախապատրաստվող հայերի ապստամբության մասին, որոշեց նրանց սահմանին մոտ գտնվող շրջաններից հեռացնել և այդ նպատակով նրանց տեղափոխեց Միջագետք։ Սակայն աքսորի ճանապարհին «անպատասխանատու պաշտոնյաների, ոստիկանների ու քրդական հրոսակների գործողությունների հետևանքով մեկ միլիոն աքսորված հայերի մոտ կեսը զոհվեց»։ Բայուրի ու էսադ Ուրասի «համոզմամբ», երիտթուրքական կառավարությունը մեղավոր չէ որ այդ հայերը զոհվեցին [3]։

Թուրք մյուս պատմաբանը՝ Թևֆիք Բրյիքլրօղլուն նույնպես նենգափոխում է պատմական փաստերը։ Ամերիկյան պատմաբան Ֆիշերի «Մերձավոր արևելքի պատմություն» [4] գրքի մասին գրած իր գրախոսականում նա մինչև վերջը պաշտպանում է հեղինակի այն թյուր կարծիքը, որ իբր Վանի ու Կարինի վիլայեթներում բնակվող հայերը 1915 թվականին զենքի դիմեցին հատկապես ռուսական զորքերին օգնելու համար։ Վանում, հորինում են Ֆիշերն ու Բրյիքլրօղլուն, հայկական կառավարություն կազմվեց և այդ հանգամանքը թուրքական հրամանատարությանը հարկադրեց Արևելյան Անատոլիայի հայկական ազգաբնակչությանը տեղահանել և ուղարկել Միջագետք [5]։

1 Baur Yusuf Hikmet, Türkiye Devletinin dış siyasası s. 6.
2 Նույն տեղում, էջ 64։
3 Նույն տեղում, էջ 7—9։
4 Fisher S. N. The Middle East. A History, New-York, 1959.
5 Belleten (Türk Tarih Kurumu), cilt XXIV, sayı 94, Ankara, 1960, s. 326—327.

Իսկ Ահմեդ Էմին Յալմանը, փորձելով հերքել Մանդելշտամի այն համոզիչ պնդումը, որ հայերի մտքում անգամ չի եղել ապըստամբություն բարձրացնել թուրքական կառավարության դեմ և որ նրանք զենքի դիմեցին միայն այն ժամանակ, երբ նրանց անխուսափելի մահ էր սպառնում, գրում է հետևյալը. «Հայերի վարքագիծը լիովին արդարացնում էր նրանց աքսորելը» [1]։ Սակայն իր գրքի մի այլ տեղում նա ակամայից խոստովանում է հայկական հարցում երիտթուրքերի հետապնդած իսկական նպատակների մասին։ «Հայերին արտաքսելը,— գրում է նա,—...նշանակում էր հայկական փոքրամասնության վերացումը Թուրքիայում։ Ֆիզիկական լրիվ բնաջնջման կողմնակիցները մատնանշում էին, որ հայկական խիտ ազգաբնակչությունը արևելյան շրջաններում վտանգ է ներկայացնում Թուրքիայի բուն գոյությանը, ուստի և հարկավոր է վերացնել այդ վտանգը... Մենք գիտենք,— ասում էին նրանք,— որ... մեր նկատմամբ ատելություն առաջ կբերենք և մեղադրանք կհարուցենք մեր հասցեին։ Բայց մենք հույս ենք տածում, որ հեռավոր ապագայում, այնուամենայնիվ, կճանաչվեն մեր անձնական զոհաբերությունները, որոնք արվեցին հանուն մեր ազգային գործի շահերի» [2]։

Ժամանակակից թուրք շովինիստները՝ էսատ Ուրասը, Հիքմեթ Բայուրը, Ահմեդ Էմինը և մյուսները երիտթուրքական դահիճների չարագործությունները արդարացրին շատ ավելի վաղ, քան վերջիններս ենթադրում էին։

***

Այսպիսով, բերված փաստերն անհերքելիորեն ապացուցում են, որ Արևմտյան Հայաստանի հայերի բնաջնջման պլանը իթթիհատականների կողմից մշակված է եղել նախքան առաջին համաշխարհային պատերազմը և անմիջականորեն կապված էր Կովկասի, Պովոլժիեի, Ղրիմի, Միջին Ասիայի և թուրքալեզու ժողովուրդներով բնակեցված ռուսական կայսրության այլ շրջանների նկատմամբ ունեցած նրանց պանթուրքական նվաճողական ձգտումների հետ։

Օսմանյան կայսրության պատերազմի մեջ մտնելու առաջին ամիսներին կովկասյան ճակատում թուրքական բանակի կրած պարտությունը երիտթուրքերի կառավարությունը օգտագործեց

1 Emin Ahmed, p. 215.
2 Նույն տեղում, էջ 152։

սահմանամերձ շրջանները «անհարազատ» տարրերից մաքրելու քողի տակ սկսեց իրագործել Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի և Օսմանյան կայսրության այլ վայրերի հայությանը զանգվածային աքսորի ու ֆիզիկական բնաջնջման ենթարկելու իր նախկին պլանը։

Հայերի աքսորը իրենց բուն հայրենիքից՝ Արևմտյան Հայաստանից, Կիլիկիայից և այլ հայաբնակ վայրերից դեպի Միջագետքի հեռավոր ավազուտ անապատները, ոչ այլ ինչ էր, քան Օսմանյան կայսրության ողջ հայության ֆիզիկական բնաջնջման քաղաքականության իրագործում։

Իթթիհատական ջարդարարների կողմից այդ հրեշային ու վայրագ պլանի իրագործման արդյունքը եղավ այն, որ Արևմտյան Հայաստանն ու Կիլիկիան բոլորովին դատարկվեցին հայությունից։ Նահատակվածների թիվը մեկ միլիոնից ավելի էր։ Թուրք բարբարոսներին հաջողվեց իրենց հայաջինջ քաղաքականությունը իրագործել Թուրքիայի դաշնակից կայսերական Գերմանիայի հովանավորությամբ։

Անտանտի պետությունները, որոնց բանակներում մարտնչում էին 200 հազարից ավելի հայեր՝ հանուն Արևմտյան Հայաստանը թուրքական բռնակալությունից ազատագրելու, բացի թուրքական կառավարությանը ուղղված բողոքի նոտայից, ոչ մի վճռական քայլի չդիմեցին ջարդերը կանխելու համար։ Անտանտի կառավարությունների այդ վերաբերմունքը դեպի հայ ժողովրդի ողբերգությունը, ավելորդ անգամ ապացուցեց, որ նրանք երբեք էլ չեն եղել հայերի շահերի «պաշտպաններ», ինչպես իրենց ձևացնում էին ամեն անգամ, երբ հարկավոր էր թուրքական կառավարության վրա ճնշում գործադրել՝ Թուրքիայի նկատմամբ իրենց պլաններն իրագործելու համար։

ԳԼՈՒԽ VI

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Արևմտյան Հայաստանից ու Օսմանյան կայսրության այլ շրջաններից հայկական ազգաբնակչության վտարումը և նրա անմարդկային բնաջնջումը կործանարար կերպով անդրադարձավ երկրի վիճակի վրա։ Թուրքիան զրկվեց աշխատասեր ու տաղանդավոր հայ ժողովրդից, որը կարևոր դեր էր խաղում նրա տնտեսական ու մշակութային կյանքում։ Չնայած թուրք բռնակալների ազգային դաժան ճնշմանը, հայերը Թուրքիայում զարգացրին արդյունաբերությունը, առևտուրը, հողագործությունն ու մշակույթը։ Կայսրության այնպիսի քաղաքներում, ինչպիսիք էին Ստամբուլը, Զմյուռնիան, Կարինը, Վանը և այլն, արդյունաբերությունն ու առևտրական ձեռնարկությունները հիմնականում հայերի ձեռքում էին։ Հայերը հայտնի էին որպես արծաթագործներ, մետաքսի ու գործվածքի մշակման վարպետներ։ Թուրքական գորգերը, որոնցով հիանում էր ողջ Եվրոպան, գրեթե ամբողջությամբ հայերի ձեռքի արտադրանքն էին հանդիսանում։

Նույնպիսի առաջատար դեր, ինչ որ տնտեսության մեջ, հայերը խաղում էին նաև թուրքերի մշակութային կյանքում։ «Երաժիշտները, երգիչներն ու դերասանները Թուրքիայում մեծ մասամբ հայեր էին։ Կոստանդնուպոլսի ճարտարապետական գեղեցկությունները գերազանցապես հայ տաղանդավոր մարդկանց գործեռն են. Սուլեյմանիե հոյակապ մզկիթը ճարտարապետ Սինանի ստեղծագործությունն է, որը հայկական ծագում ուներ։ Հայ ճարտարա-

պետներ Բալյանները կառուցել են Բեյլերբեյի, Ջրգանայի ու Դոլմաբախչեի պալատները, հայերի ձեռքով է բարձրացվել Յըլդըզ-Քյոշք պալատը»[1]։ Կոստանդնուպոլսում, Զմյուռնիայում և այլ քաղաքներում գրեթե բոլոր տպարանները, որտեղ տպագրվում էին թուրքերեն լեզվով գրքեր և պարբերականներ, նույնպես պատկանում էին հայերին։

Հայերը թերթեր, ամսագրեր ու գրքեր էին հրատարակում նաև հայատառ թուրքերենով և այդ գրականությունը կարդացվում էր ոչ միայն այն հայերի կողմից, որոնք չէին տիրապետում իրենց մայրենի լեզվին (իսկ այդպիսիների թիվը քիչ չէր), այլև շատ թուրքերի կողմից, որոնց համար հայկական այբուբենը յուրացնելն ասհամեմատ ավելի դյուրին էր, քան արաբականը։

Առանձնապես մեծ էր հայերի դերը արևելյան վիլայեթներում, ուր նրանք մեծ մասամբ զբաղվում էին հողագործությամբ և հայտնի էին որպես հմուտ խաղողագործներ ու մեղվաբույծներ։

Արտադրության բնագավառը, առևտուրն ու ֆինանսները հայկական վիլայեթներում գրեթե ամբողջությամբ գտնվում էին հայերի ձեռքում։ Այսպես, Սվազի (Սեբաստիա) վիլայեթում, որտեղ հայերը կազմում էին բնակչության 35%-ը, 9800 արհեստավորներից ու մանր առևտրականներից 6800-ը հայեր էին. 153 արդյունաբերական ձեռնարկություններից 130-ը պատկանում էին հայերին, 166 խոշոր ներմուծող-վաճառականներից 141-ը հայեր էին, արտահանող 150-ից 125-ը՝ նույնպես հայեր. 37 դրամատերերից 32-ը հայեր էին[2]։

Հայկական բոլոր վիլայեթներում բժիշկների 60 տոկոսը և վաճառականների 58 տոկոսը հայեր էին։

Արևելյան շրջաններում, լեռնարդյունաբերության մեջ զբաղված բանվորների երեք քառորդը ազգությամբ հայեր էին[3]։

Անգամ այս ոչ-լրիվ տվյալները ցույց են տալիս, որ հայ ազգաբնակչության բնաջնջումն ու աքսորը չէին կարող չհանգեցնել խոր հետևանքների Թուրքիայի և, հատկապես, նրա արևելյան վիլայեթների տնտեսական ու մշակութային կյանքում։ Հայտնի է, որ հայկական վիլայեթները, ջարդի հետևանքով զրկվելով իրենց հիմնական ազգաբնակչությունից, անցած կես դարի ընթացքում իրենք

1 Анри Барби, стр. 119.

2 Թվական տվյալները քաղված են Ա. Ջիվիլեգովի հոդվածից, տե՛ս А. Джевелегов, Будущее Турецкой Армении, «Армянский сборник», М., 1916. стр. 163.

3 Firuz Kazemzadeh, The Struggle for Transcaucasia, p. 8.

զարգացման մեջ ոչ միայն առաջընթաց ոչ մի քայլ չարեցին, այլ, ընդհակառակը, նկատելի կերպով ետ մնացին՝ առաջին համաշխարհային պատերազմին նախորդող ժամանակաշրջանի համեմատությամբ։

***

Պատերազմի տարիներին դառը փորձություններ կրեց նաև թուրքական դաժան լծի տակ ընկած արաբ ժողովուրդը։

Երկարատև ու ծանր պատերազմը քայքայեց Օսմանյան կայսրության արաբական նահանգների տնտեսությունը։ Օգտվելով պատերազմական իրադրությունից, երիտթուրքական քաղաքացիական ու զինվորական իշխանությունները թալանում էին արաբ ազգաբնակչությանը՝ նրանից շնչին գներով բռնագանձելով տնդի վերջին պաշարները, իսկ բանակի կարիքների համար՝ բանող անասունները։ Ինչպես խոստովանում է Ջեմալ-փաշան, միայն մեկ ամսվա ընթացքում Սուեզի առաջին արշավախմբի համար արաբներից խլվեց 14 հազար ուղտ[1]։ Բնակչության ամենաաշխատունակ մասին բանակ զորակոչելու, բանող անասունները բռնագրավման ենթարկելու հետևանքով դաշտերն անմշակ էին մնում։ Մշակման համար պիտանի հողերի միայն 50 տոկոսն էր օգտագործվում։

Թուրքական զինվորական իշխանությունները արաբ ազգաբնակչությունից չափից դուրս բարձր հարկեր էին գանձում։

Հումքի ու բանվորական ուժի պակասության պատճառով արդյունաբերական ձեռնարկություններն ու բազմաթիվ արհեստանոցները փակվում էին։ Թղթե լիրան արժեքազրկվում էր։ Լայնորեն տարածված էր սպեկուլյացիան։ Ապրանքների գներն անընդհատ աճում էին։

Այս բոլորը խիստ բացասաբար անդրադարձավ արաբ աշխատավոր զանգվածների վիճակի վրա. հազարավոր մարդիկ մահանում էին քաղցից ու համաճարակից։ Բավական է նշել, որ պատերազմի տարիներին Սիրիայի ու Լիբանանի ազգաբնակչությունը նվազեց 40 տոկոսով[2]։

Երիտթուրքական իշխանությունների կողմից լայն չափերով կիրառվող կողոպուտն ու թալանը և արաբական վիլայեթներում

1 Джемаль-паша, стр. 123.

2 Այդ մասին տե՛ս «Великий Октябрь и народы Востока», М., 1957, стр. 370.

նրանց կողմից անցկացվող շովինիստական քաղաքականությունը արաբ ժողովրդի մեջ առաջ բերին անզուսպ զայրույթ թուրք կեղեքիչների դեմ։

Օգտվելով պատերազմից, երիտթուրքական կառավարողները ամեն ինչ անում էին արաբների ազգային-ազատագրական շարժումը ճնշելու համար, սակայն արաբ ժողովուրդն ավելի համառ կերպով սկսեց պայքարել թուրքական արյունոտ լուծը վերջնականապես թոթափելու համար։

Պատերազմի տարիներին արաբ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումը, որն ընդգրկել էր Օսմանյան կայսրության արաբական բոլոր նահանգները, նոր, ավելի հուժկու թափ ստացավ։

Էնվեր-փաշան խոստովանում է, որ Ջեմալ-փաշայի նշանակումը Սիրիայում տեղաբաշխված թուրքական 4-րդ բանակի հրամանատարի պաշտոնում հիմնականում բացատրվում էր նրանով, որ արաբ հեղափոխականների ծավալած գործունեությունը արտակարգ լարված վիճակ էր ստեղծել այդ շրջանում։ 1914 թվականի դեկտեմբերին գալով Սիրիա և տեղում ծանոթանալով արաբական վիլայեթներում ստեղծված իրադրության հետ, Ջեմալ-փաշան ստիպված էր խոստովանել, որ արաբական մարզերը վառոդի նման ամեն րոպե կարող են պայթել կայծից՝ եթե ձեռք չառնվեն ամենախիստ միջոցներ[1]։

Իր անսահմանափակ իշխանությունը հաստատելով Սիրիայում, Լիբանանում ու Պաղեստինում, Ջեմալը վերացրեց գլխավոր խորհուրդները և քաղաքացիական դատարանները։ Դպրոցներում ու վարչական հիմնարկներում արգելվում էր արաբերեն լեզուն օգտագործել։ Արաբական բոլոր ընդդիմադիր թերթերն արգելվեցին։

«Քաղաքական կյանք Սիրիայում այլևս գոյություն չունի։ Ջեմալ-փաշան ինքնակալական իշխանություն է հաստատել»[2],— գրում էր ռուս դիտորդը 1916 թվականի օգոստոսին։ Ջեմալի հրամանով ձերբակալում և հաճախ առանց դատ ու դատաստանի կախում էին արաբ մտավորականության ականավոր ներկայացուցիչներին և ազգային-ազատագրական շարժման գործիչներին։ Բեռնում ռուսական դեսպանորդ Վ. Ռ. Բախերխատը 1916 թվականի հունիսի 2(15)-ի հեռագրում հաղորդում էր արտաքին գործերի մինիստրությանը, որ վերջին շրջանում սիրիացիների նկատմամբ կիրառվող մահապատիժներն ու աքսորը չեն դադարում և դրանք անխուսափելիորեն հուզումներ առաջ կբերեն արաբական ամբողջ աշխարհում և կուժեղացնեն ատելությունը երիտթուրքերի նկատմամբ։ «Ուշադրության արժանի է նաև այն, որ գլխավոր դերն այդ հետապնդումներում պատկանում է Ջեմալ-փաշային»,— ավելացնում էր նա վերջում[1]։ Միայն մի օրվա ընթացքում՝ 1916 թվականի մայիսի 6-ին, Դամասկոսում ու Բեյրութում կախվեցին 22 հայտնի գործիչներ։ Դամասկոսում կախվածների թվում էին մեջլիսի պատգամավորներ Ռիվշտի-բեյ Շամհանը, Աբդել-Համիդ ալ-Զոհրաբին, Դամասկոսի երևելի գործիչներ Շեֆիգ-բեյ ալ-Մուայեդը, հայտնի հեռատոր Շաուքի-բեյ Ասալին, բանաստեղծներ Աբդուլ Վահաբ ալ-Մըլենը, Ռեֆրզ Սելլումը և այլն։ Իսկ Բեյրութում մահապատժի ենթարկվեցին բանաստեղծ Օմար Համդը, Մուհամեդ ալ-Շանթին, «Ալ-Մուֆիթ» թերթի հրատարակիչ Աբդուլ-Համիդ ալ-Արասին, «Ֆաթա ալ-Արաբ» թերթի հրատարակիչ Էմիր Արիֆը, հայտնի հրապարակախոս Ահմեդ Թաբբարան, փիլիսոփա Էմին Լութֆին և ուրիշներ։

Բացի հիշված անձերից, ինչպես նշում է Մեվլան-զադե Ռիֆաթը, քիչ չէր նաև Օսմանյան կայսրության տարբեր շրջաններում կախված կամ ծածուկ գնդակահարված արաբ գործիչների թիվը։ Միայն Սիրիայում, մինչև 1916 թվականի ամառը, Կահիրեի «Մուքթամ» թերթի տվյալներով, մահվան էին դատապարտվել 816 մարդ՝ նրանց ամբողջ գույքի բռնագրավումով[2]։

Թուրքական իշխանությունները, արդեն ունենալով Արևմտյան Հայաստանից հայ ազգաբնակչությանը գլխովին տեղահանելու փորձը, արաբական նահանգներում ևս սկսեցին կիրառել դանգվածային աքսորի քաղաքականությունը, ընիկ արաբներին հեռացնելով իրենց բնակավայրերից՝ դեպի Տեր-Զօրի անապատային շրջանները։ 1916 թվականի սկզբներին Բեյրութից ու լեռնային Լիբանանից հիշյալ վայրերն ուղարկվեցին 4 հազարից ավելի արաբ ընտանիքներ, իսկ Դամասկոսից և Սիրիայի այլ քաղաքներից՝ շուրջ 5 հազար ընտանիք։ Նույն տարվա գարնանը միայն Բեյրութից աքսորվեց 400 ընտանիք։ Աքսորյալների շարժական ամբողջ գույքը կողոպուտի ենթարկվեց, իսկ նրանց պատկանող հողերը բռնագրավվեցին թուրքական իշխանությունների կողմից։ Մի սիրիացի արաբի ասելով, այդ ռեպրեսիաները սպառնում էին «լրիվ ոչնչաց-

1 Джемаль-паша, стр. 117.

2 Տե՛ս Лазарев М. С., стр. 74—75.

1 Տե՛ս «Раздел Азиатской Турции», № 338.

2 Տե՛ս Лазарев М. С., стр. 89. Տե՛ս նաև Ֆայէզ էլ Ղոսէյն. Ջարդերը Հայաստանի մեջ (ականատեսի վկայություններ), ֆրանսերենից թարգմանեց Գր. Գասմաճեան, Գահիրե, 1960, էջ 47։

նել երկրի բնիկներին»[1]։ Իր գազանությունների մասին Ջեմալը հետագայում ցինիկորեն գրում էր հետևյալը. «Անհնազանդ արաբները, որոնք իրենց ուժը զգացնել էին տալիս տակավին Դամասկոսում իմ կողմից հաստատված ռեժիմի շնորհիվ, չհամարձակվեցին բացահայտորեն զենքի դիմել»[2]։

Լիբանանցի պատմաբան Զեյնեն, խոսելով արաբական վիլայեթներում գործադրված բռնությունների մասին, գրում է. «...Չափազանցություն չի լինի ասել, որ Ջեմալ-փաշայի կառավարման շրջանն այն որոշիչ գործոններից մեկն էր, որը արաբ մահմեդականների առաջնորդներին օգնեց վճռականություն հանդես բերել և մեկընդմիշտ հիմնավորապես խզել բոլոր կապերը թուրքական կայսրության հետ։ 1916 թվականի մայիսի 6-ի մահապատիժներից հետո արաբական նացիոնալիզմն ուժեր հավաքեց և գործուն դարձավ։ Արաբական քաղաքական անկախությունն ու արաբական ազգային ինքնուրույնությունը շոշափելի իրականություն և բացարձակ անհրաժեշտություն դարձան...»[3]։

Արաբ մտավորականության, ինչպես և ժողովրդական ու ազգային գործիչների նկատմամբ թուրքական իշխանությունների կատարած չարագործությունները համընդհանուր զայրույթ առաջ բերին արաբական բոլոր վիլայեթներում։ Թեև զանգվածային բռնությունների, մահապատժի ու աքսորի ճանապարհով թուրքական իշխանություններին հաջողվեց կանխել Սիրիայում, Լիբանանում, Պաղեստինում և Իրաքում նախապատրաստվող համընդհանուր ապստամբությունը, այնուհանդերձ, արաբներն անցան պարտիզանական պատերազմին, որը հատկապես մեծ թափ ստացավ Հեջազում ծագած ապստամբությունից հետո[4]։

Թուրքական իշխանությունները և, մասնավորապես, արաբական նահանգների դիկտատոր Ջեմալ-փաշան, վաղուց գիտեին Հեջազում հասունացող ապստամբության մասին։ Այդ կապակցությամբ ինքը՝ Ջեմալ-փաշան նշում է, որ նա ձգտում էր հնարավոր ամեն բան անել հարկադրելու համար Հեջազի կառավարիչ շերիֆ Հուսեյնին հրաժարվել արաբների ապստամբություն բարձրացնելու մտքից։ Սակայն այդ ուղղությամբ Ջեմալի գործադրած բոլոր ջանքերն ապարդյուն անցան, քանի որ նա ի վերջո կանգնեցվեց ապստամբության փաստի առաջ[1]։ Ապստամբ արաբների առաջնորդ՝ Մեքքայի կառավարիչ Հուսեյնը իրեն հռչակեց արաբական բոլոր երկրների թագավոր։

Դիմելով արաբներին, նա կոչ էր անում ապստամբել Էնվերի, Թալեաթի ու Ջեմալի բռնապետության դեմ։ Հիշյալ կոչում թվարկվում էին արաբական ազգային-ազատագրական շարժման գործիչների նկատմամբ թուրքական իշխանությունների կողմից գործադրված բոլոր բռնությունները։ Կոչն ավարտվում էր հետևյալ խոսքերով. «Այն օրվանից, երբ մենք էմիր դարձանք, մեր բոլոր դիտավորություններն ուղղված էին արաբների ազատագրմանը։ Մենք մեր ուժերից կախված ամեն ինչ արեցինք այդ նպատակին հասնելու համար։ Հանուն դրա մենք բարեկամական հարաբերությունների մեջ մտանք ամենահեղինակավոր ու ամենազորեղ արաբների հետ։ Այդ ուղղությամբ մեր հանդես բերած համառության ապացույցն է նաև այն, որ մենք ասորական արշավախումբ պատրաստեցինք և ուղարկեցինք նրան թուրքերի հրահրանքով էմիր Իբն էլ-Սաուդի վրա հարձակված էմիր Իբն էլ-Ռեստրիդի զորքերի դեմ կռվելու համար»[2]։

Անգլիան ու Ֆրանսիան արաբների ապստամբությունն օգտագործեցին թուրք-գերմանական ուժերի դեմ՝ Միջագետքի ու սիրիական-պաղեստինյան ճակատում։

Անգլիան տակավին 1914 թվականի նոյեմբերից, այսինքն՝ գերմանա-ավստրիական խմբավորման կողմում Օսմանյան կայսրության պատերազմի մեջ մտնելու պահից, բանակցություններ սկսեց Հեջազի կառավարչի հետ, նպատակ ունենալով վերջինիս «թեքել դեպի թուրքական տիրապետության տապալումը։ Ըստ որում Անգլիան Հուսեյնին առաջարկում էր օգնություն և նրա ապագա անկախության երաշխիքներ»[3]։

Մեծ Բրիտանիայի ու Մեքքայի շերիֆ Հուսեյն բեն-Ալիի միջև տեղի ունեցած երկարատև բանակցություններից հետո 1915 թվականի հոկտեմբերին կնքվեց գաղտնի համաձայնագիր, որով ապագա անկախ արաբական պետությունը պետք է տարածվեր հարավում մինչև Հնդկական օվկիանոս, հյուսիսում՝ մինչև Ալեքսանդրետի ծովածոցը, արևմուտքում՝ մինչև Միջերկրական ու Կարմիր ծովերը և արևելքում՝ մինչև Պարսից ծոցը։

Ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, անգլիական գաղութարարները ամենևին էլ մտադիր չէին պատերազմի

1 Տե՛ս Лазарев М. С. էջ 47:
2 Джемаль-паша, стр. 153.
3 N. Z. Zeine, Arab-Turkish relations and the Emergence of Arab Nationalizm, Beirut, 1958, p. 103—104. Տե՛ս М. С. Лазарев, стр. 91—92 Примечание.
4 Մելքան-զադե Ռիֆաթ, էջ 249—251։

1 Տե՛ս Джемаль-паша, стр. 134—135.
2 Տե՛ս նույն տեղում, էջ 183—184։
3 Готлиб В. В., стр. 72.

հաղթական ավարտից հետո արաբներին անկախություն պարգևել։ Այդ մասին են վկայում նաև Անգլիայի ու Ֆրանսիայի, իսկ այնուհետև Ռուսաստանի միջև տեղի ունեցած գաղտնի բանակցությունները՝ Օսմանյան կայսրության և, մասնավորապես, նրա արաբական տերիտորիաների հետպատերազմյան բաժանման մասին։ Բանակցությունները սկսվեցին 1915 թվականի դեկտեմբերին՝ Լոնդոնում։ Անգլիայի ներկայացուցիչն էր մերձավոր արևելյան հարցերի գծով էքսպերտ Մայքլ Սայքսը, Ֆրանսիայինը՝ Բեյրութի նախկին գլխավոր հյուպատոս Ժորժ Պիկոն։ Բանակցությունները վերհանեցին այն խոր հակասությունները, որոնք առկա էին Անգլիայի ու Ֆրանսիայի միջև արաբական տերիտորիաների բաժանման հարցում։ Երկար սակարկությունից հետո 1916 թվականի փետրվարին Անգլիայի ու Ֆրանսիայի միջև կնքվեց կոմպրոմիսային մի համաձայնագիր, որով դաշնակիցների կողմից պատերազմը շահելու դեպքում հարավային Միջագետքում (Բաղդադի հետ միասին) հաստատվելու էր անգլիական տիրապետությունը։ Ներքին Միջագետքն ընկնում էր անգլիական ազդեցության գոտու մեջ, Արևմտյան Սիրիան, Լիբանանը. Կիլիկիան, Այնթաբը, Ուրֆան, Մարդինը, Դիարբեքիրը և Խաքյարիի մարզը հանձնվում էին Ֆրանսիային։ Արևելյան Սիրիան ու Մոսուլի վիլայեթը կազմելու էին Ֆրանսիայի ազդեցության ոլորտը, իսկ Պաղեստինը հանձնվում էր դաշնակիցների համատեղ կառավարմանը [1]։

1916 թվականի փետրվարին ռուսական կովկասյան բանակը արագ թափով առաջ շարժվելով, մոտեցավ Միջագետքի ու Սիրիայի սահմաններին։ Երկյուղ կրելով այն բանից, որ ռուսական զորքերը հեշտությամբ կարող են ներխուժել արաբական երկրները, Անգլիան ու Ֆրանսիան որոշեցին այդ երկրների բաժանման մասին ընդունած իրենց որոշումները համաձայնեցնել Ռուսաստանի հետ։ 1916 թվականի գարնանը վերը հիշատակված Սայքսը և Պիկոն Պետրոգրադում բանակցությունների մեջ մտան ցարական կառավարության ներկայացուցիչների հետ։ Տևական բանակցությունների արդյունքը եղավ այն, որ ցարական կառավարությունը, ստանալով Անգլիայի ու Ֆրանսիայի ներկայացուցիչների համաձայնությունը՝ պատերազմի հաղթական ավարտից հետո ձեռք բերել ամբողջ Արևմտյան Հայաստանը, իր ստորագրությունը դրեց Սայքս-Պիկոյի պայմանագրի տակ [1]։

1917 թվականի օգոստոսից անգլո-ֆրանս-ռուսական պայմանագրին միացավ և Իտալիան, որը Թուրքիայի դեմ պատերազմի մեջ էր մտել Անտանտի պետությունների կազմում։ Նախքան այդ պայմանագրին միանալը, բանակցությունների ժամանակ Իտալիան պահանջում էր, որ պատերազմի հաղթական ավարտից հետո իրեն անցնի փոքրասիական թերակղզու ամբողջ հարավային մասը՝ Կիլիկիայի Ադանա և Մերսին քաղաքներով։ Բայց քանի որ Կիլիկիան անցնելու էր Ֆրանսիային, ապա Իտալիային՝ պատերազմին Անտանտի կողմում մասնակցելու համար որպես հատուցում տրվեց Անատոլիայի հարավ-արևմտյան մասը. Զմյուռնիան, Այդին, Կոնյա և Ադալիա քաղաքներով։

Նշված պայմանագիրը կնքվեց արաբ ժողովրդից գաղտնի. այն լրիվ չեղյալ էր հայտարարում Անգլիայի ու Մեքքայի կառավարիչ Հուսեյնի միջև մինչ այդ ստորագրված համաձայնագրի պայմանները։ Դա, սակայն, անգլիական գաղութարարներին չխանգարեց հանդես գալու արաբ ժողովրդի շահերի «պաշտպաններին» դերում՝ նրանց պայքարը գերմանա-թուրքական ուժերի դեմ օգտագործելու նպատակով։ Այդ ուղղությամբ լայն գործունեություն ծավալեցին անգլիական հետախույզներ Լոուրենսը, Վիլսոնը և ուրիշներ։ Նրանք բեդուիններից կամավորական ջոկատներ էին կազմում և անձամբ ղեկավարում մարտերը։ Թուրքական բանակի դեմ արաբական անկանոն զորամասերի ծավալած ռազմական գործողություններին աջակցություն էր ցույց տալիս տեղի արաբ ազգաբնակչությունը։

Հեջազում ծագած ապստամբությունը լայն արձագանք գտավ նրա սահմաններից դուրս՝ Սիրիայում, Լիբանանում, Իրաքում, Եգիպտոսում և արաբական այլ երկրներում։ Ամենուրեք ուժգին ագիտացիա էր մղվում Հեջազի ապստամբներին նյութական օգնություն ցույց տալու և կամավորական ջոկատներ ուղարկելու օգտին։ Հեջազը դարձել էր արաբների ազգային-ազատագրական պայքարի դրոշը։ Խոսելով այդ ապստամբության մասին, գերմանական գեներալ Ֆալկենհայնը նշում էր, որ ապստամբության լուրը «արագորեն տարածվեց Արաբական թերակղզու սահմաններից շատ հեռու՝ հուզումներ առաջ բերելով Սիրիայի արաբ ազգաբնակչության շրջանում, ինչպես նաև Սիրիական անապատի բեդուինների մեջ։ Այդ ապստամբությունը, որը կրոնական գունավորում էր ստացել,

---

1 Սայքս-Պիկոյի համաձայնագրի մասին մանրամասն խոսվում է Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր Սազոնովին ուղղված՝ անգլիական ու ֆրանսիական դեսպանությունների հուշագրում։ Տե՛ս «Раздел Азиатской Турции», № XXV.

1 Տե՛ս «Раздел Азиатской Турции», протоколы особого совещания и записка морского и военного министра — XCII, XCVII, XCVIII, XCIX.

վերջնականապես ապացուցեց, որ այսպես կոչված «սրբազան պատերազմի» լոզունգի հռչակման միջոցով ամբողջ աշխարհի մահմեդական բնակչությանը անգլիացիների դեմ դուրս բերելու Թուրքիայի փորձը, ընդհանուր առմամբ վերցրած, սխալ էր»[1]։ Արաբների պայքարը Հեջազում, Իրաքում, Սիրիայում, Պաղեստինում և Լիբանանում, որն Անգլիայի ու Ֆրանսիայի կողմից օգտագործվում էր այդ երկրներից Թուրքիային վռնդելու և իրենց տիրապետությունը հաստատելու համար, թուրքական իշխանություններին առավել մեծ չափով գրգռեց արաբների դեմ։ Հայտարարվեց մարդկանց թուրքերը կախում էին, համակենտրոնացման ճամբարներ ուղարկում, խաղաղ բնակչության զանգվածային ջարդեր կազմակերպում։ Պաղեստին-սինայի ճակատում անգլիական զորքերի առաջխաղացման կապակցությամբ Ջեմալ-փաշան ԱՄՆ-ի ու Իսպանիայի հյուպատոսներին հայտարարել էր, որ «եթե դաշնակիցներն առաջ շարժվեն, իսկ սիրիացիներն իրեն դավաճանեն, ապա ինքը ամբողջ երկիրը կրակի կտա, սրի կքաշի բոլոր բնակիչներին և երկիրը մոխրի կվերածի»[2]։

Սակայն Ջեմալի վայրագություններն ի վիճակի չէին կանգնեցնել արաբներին, որոնք պայքարում էին իրենց համար այնքան ատելի թուրքական լծի դեմ։ Երիտթուրքական կառավարողներին չօգնեց նաև այն, որ նրանք հաճախակի լրացուցիչ զորքեր էին ուղարկում արաբական երկրները, որովհետև արաբները պարտիզանական պատերազմ էին մղում և թուրքական զորամասերի վրա հանկարծակի հարձակումներով լուրջ պարտությունների էին մատնում նրանց։

Պատերազմի տարիներին արաբ ժողովրդի մղած պայքարը էական դեր խաղաց թուրք-գերմանական զորքերին Միջագետքի ու Սիրիա-պաղեստինյան ճակատներում վերջնականապես ջախջախելու և շուրջ չորս դար տևած թուրքական տիրապետությունից արաբական երկրներն ազատագրելու գործում։

***

Պատերազմի տարիներին Օսմանյան կայսրության էկոնոմիկայի հիմքը՝ գյուղատնտեսությունը, հիմնովին քայքայվել էր։ Թուրքական բանակ էր զորակոչված մոտ 3 միլիոն մարդ, այսինքն

1 Фалькенгайн Э., Верховное командование 1914—1918 гг. и его важнейших решениях, М., 1923, стр 237.

2 ЦГВИАЛ, ф. 2000, д. 3891, л. 310. Տե՛ս М. С. Лазарев, стр. 178—179.

չորակոչի ենթակա տարիքի գրեթե բոլոր տղամարդիկ[1]։ Բեռնում Ռուսաստանի դեսպանորդ Մանդելշտամը 1916 թվականի մայիսին հաղորդում էր, որ Փոքր Ասիայի գյուղերում աշխատունակ տղամարդ գրեթե չի մնացել՝ բացի սակավաթիվ հարուստ գյուղացիներից, որոնք բանակից ազատվելու համար փրկագին են տվել։ Քաղաքներում, ուր հարուստներն ավելի շատ էին, մեծ էր նաև ազատված տղամարդկանց թիվը[2]։

Բնակչության արտադրող մասին բանակ զորակոչելու հետևանքով գյուղատնտեսությունը զրկվեց բանվորական ձեռքերից։ Բանակի կարիքների համար գյուղացիներից բռնագրավում էին ձիերը և գրեթե ամբողջությամբ՝ խոշոր եղջերավոր անասունները։ Թուրքական պաշտոնական տվյալների համաձայն, պատերազմի վերջին Անատոլիայում ձիերի թիվը հաշվվում էր 300 հազար՝ պատերազմի նախօրյակին եղած 2 միլիոնի համեմատությամբ, կովերինը՝ 2 մլն. 6—7 մլնի փոխարեն, գոմեշներ ու եզներ 1913 թվականին կային 2,7 մլն. գլուխ, իսկ 1919 թվականին դրանցից մնացել էր ընդամենը 378 հազար գլուխ։ Նույն տարիներին ջորիների թիվը 145 հազարից նվազել էր մինչև 85 հազար, էշերինը՝ 13 մլն. 737 հազարից մինչև 825 հազար, ուղտերինը՝ 314 հազարից մինչև 95 հազար[3]։ Այծ ու ոչխար, գառների հետ միասին, 1913 թվականին կար 18.722 հազար գլուխ, իսկ 1919 թվականին՝ 11.200 հազար։ Եթե 1913 թվականին անգորական այծեր Թուրքիայում հաշվվում էին 2 մլն. 39 հազար գլուխ, իսկ սովորական այծեր 14,428 հազար, ապա 1919 թվականին բոլորը միասին կազմում էր ընդամենը 2065 հազար գլուխ[4]։

Այսպիսով, պատերազմի վերջին Թուրքիայի գյուղատնտեսությունը զրկվել էր բանող ուժից, որի հետևանքով գյուղացիների դաշտերի մեծ մասը մնում էր անմշակ։ Եթե պատերազմից առաջ Թուրքիայում մշակվում էր 60 հազար դենյում հող, պատերազմի վերջին մշակվող ցանքատարածությունները կրճատվեցին ավելի քան 2 անգամ՝ մինչև 25 հազար դենյումի չափով[5]։ Որոշ վիլայեթներում (Ուրֆա, Դիարբեքիր, Հալեպ) նախկինում մշակվող ցանքատարածությունների միայն 15 տոկոսն էր օգտագործվում[6],

1 ЦГВИАЛ, ф. 2000, д. 3891, л. 310. Տե՛ս М. С. Лазарев, стр. 179—179

2 Emin Ahmed, p. 252.

3 Նույն տեղում։

4 Mears Eliot Grinnell, Modern Turkey. New-York, 1924. p. 285.

5 ЦГВИА, ф. 2000, оп. I, д. 3891, л. 350.

6 АВПР, ф. «Политархив», д. 4656, л. 33.

Եթե վերցնենք առանձին տեխնիկական կուլտուրաները, ապա հետևյալ պատկերը կստացվի. բամբակի դաշտերը 1918 թվականին կազմում էին 1913 թվականի բոլոր ցանքատարածությունների միայն 8 տոկոսը [1]։ Մախախոտով զբաղեցված տարածությունը, ինչպես և ծխախոտի բերքը կրճատվել էին ավելի քան 2/3-ով [2]։ Նույնիսկ գերմանացի հեղինակներից մեկը՝ Մյուլմանը, որն ամեն կերպ աշխատում է գունազարդել Թուրքիայի տնտեսական վիճակը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, ստիպված էր խոստովանել, որ ցանքատարածությունների կրճատման ու բերքատվության անկման հետևանքով բնակչությունը մշտապես սովի էր մատնված [3]։

Աղետալի այդ կացությունից դուրս գալու նպատակով թուրքական կառավարությունը 1916 թվականին պարտադիր գյուղատնտեսական պարհակ մտցրեց, որի հիման վրա գյուղական ազգաբնակչությունը՝ 16-ից մինչև 60 տարեկան, պարտավոր էր հողը մշակել։ Այդ պարհակից խուսափողների համար սահմանված էր տուգանք և նույնիսկ ազատազրկություն՝ մինչև երեք ամիս ժամանակով։ Բացի դրանից, դաշտային աշխատանքների համար գյուղատնտեսական հատուկ գումարտակներ էին կազմակերպվել։ Թուրքական գյուղերն էին ուղարկվում Գերմանիայից ու Ավստրո-Հունգարիայից ստացված գյուղատնտեսական մեքենաներ։ Միջոցներ էին ձեռք առնվում առանձին կուլտուրաների և, հատկապես, բամբակի արտադրանքն ավելացնելու համար։ Այդ նպատակով Գերմանիայից մասնագետ գյուղատնտեսներ էին հրավիրվել։ Կառավարությունը գյուղատնտեսական բանկի միջոցով սկսեց փոխատվություններ բաց թողնել՝ գյուղատնտեսությունը վարկավորելու համար։

Այդ միջոցառումներից ամենից առաջ օգտվեց գյուղական վերնախավը։ Զինվորական ծառայությունից փրկագնվելով, խոշոր հողատերերն ու կուլակները իրենց ձեռքը գցեցին պատերազմի գնացած գյուղացիների հողակտորները։ Հողի ավելցուկները նրանք վարձով տալիս էին հողազուրկ գյուղացիներին՝ նրանց դարձնելով կիսարարներ։ Բացի դրանից, գյուղական հարուստները մեծ գումարներ էին ստանում բանակին սննդամթերք ու անասնակեր մատակարարելուց։

1 Emin Ahmed, p. 117.

2 Istatistik yıllıgı, 1931—1932, cilt 5, s. 157.

3 Mühlmann C. Das Deutsche-Türkische Waffenbündnis im Weltkriege, Leipzig, 1940, S. 187.

Հողից զրկված և հարկերի տակ տքնող թուրք գյուղացիությունը տառապում էր ֆեոդալա-վաշխառուական ծանր շահագործումից։ «Ժողովուրդը,— ասված էր մի փաստաթղթում,— տանջահար է լինում ուժից վեր ծանր ռազմական հարկերի բեռան տակ. բնակչությունը վերջնականապես քայքայվել է մշտական հարկադիր բռնագանձումներից» [1]։ «Թուրքական գյուղացուց,— ասված էր Թուրքիայում ստացված հաղորդումներից մեկում,— խլում են վերջին ձին, ջորին, էշը, ուղտը, սայլը՝ բանակի կարիքների համար։ Դրա հետևանքով գյուղացիները զրկված են ոչ միայն քաղաքների, այլև հարևան գյուղերի հետ հաղորդակցություն պահպանելու հնարավորությունից... Բանող անասունի բռնագրավումն այնպիսի չափեր է ընդունել, որ ամբողջ մարզերում գյուղացիները ստիպված են հողը վարել՝ մարդկանց լծելով» [2]։

Կառավարությունը գյուղական բնակչությունից բռնագանձել էր ցորենի, գարու, բրնձի, աղի, շաքարի ու թեյի վերջին պաշարները։ Իշխանությունները գյուղացիներից տարել էին նույնիսկ սերմացուն։ Բոլոր այդ մթերքները ուղարկվում էին Գերմանիա և Ավստրո-Հունգարիա։ Թե ինչպիսի ահռելի չափեր էին ընդունում բռնագանձումները Թուրքիայում այդ տարիներին, երևում է Մոլլա-Սուլեյման գյուղի (որն ուներ 200 տուն) բնակիչների ներկայացրած ցուցակից։ Տակավին զորահավաքի շրջանում իշխանությունները գյուղից տարել էին հետևյալը. 24 սայլ՝ եզների հետ միասին և առանձին էլի 30 եզներ, 24 ձի, 4 հազար փութ ցորեն, 2,5 հազար փութ գարի, 18 հազար փութ չոր խոտ, 110 զույգ գուլպա, 23 փութ յուղ, 2 հազար գլուխ ոչխար և 200 կով։ Թուրքիայի պատերազմի մեջ մտնելուց հետո հիշյալ գյուղի բնակիչներից, ինչպես և այլ գյուղերից, բռնագանձվեցին մթերքի եղած բոլոր պաշարները և բանող անասունը [3]։

Նույնիսկ երիտթուրքական առանձին գործիչներ հետագայում ստիպված էին խոստովանել, որ գյուղացիների մոտ մնացած բերքը վերցվում էր չնչին գնով՝ իբր բանակի կարիքների համար, և գյուղացին ինքը պարտավոր էր այդ բերքը տեղափոխել ռազմական պահեստները, իսկ փողի դիմաց նա ստանում էր մի տեղեկանք, որը ոչ մի բանի համար պետքական չէր» [4]։

1 ЦГИА Груз. ССР, ф. 2с., д. 3187, л. 79.

2 «Кавказское слово», 5. XI.1915, № 28.

3 «Каспий», 25. X 1914, № 239. Այդ բռնագանձումների մասին մանրամասն տե՛ս Н. Арсеньев, Очерки современной Турции. «Новый Восток», 1922, № 2, стр 153.

4 Տե՛ս Մ ե վ լ ա ն - զ ա դ ե Ռ ի ֆ ա թ, էջ 286։

1918 թվականի հունիսին, Թուրքական ձախ սոցիալիստների կոնֆերանսում կարդացած իր զեկուցման մեջ՝ «Պատերազմի ազդեցությունը Թուրքիայի տնտեսական կյանքի վրա», Ջեվդեթը նշեց, որ «ռազմական կարիքների պատրվակի տակ կառավարությունը բռնագրավեց առաջին անհրաժեշտության բոլոր սննդամթերքները՝ քաղցի ու մահվան դատապարտելով թշվառ կանանց ու երեխաներին» [1]։

Միխաիլ Վասիլևիչ Ֆրունզեն, որը 1921 թվականի նոյեմբերի վերջից մինչև 1922 թվականի հունվարը գտնվելով Թուրքիայում, եղավ նրա շատ շրջաններում, գրում էր, որ ամենուրեք աչքի էր գարնում տնտեսական մեծագույն փլուզումն ու ամայացումը։ Երկարատև պատերազմն իր ամբողջ ծանրությամբ «ընկնում է Թուրք ազգաբնակչության ուսերին... գյուղերում համարյա ոչ մի տղամարդ չի մնացել, նրանք բոլորը գտնվում են ճակատում կամ սպանվել են։ Աշխատում են ծերերը, կանայք կամ անչափահասները. նյութական միջոցները սպառվել են, բանող անասուն չկա, չկան փոխադրական միջոցներ։ Ամայի հողատարածություններ կազմում են 50 տոկոսից ավելի» [2]։ Իր օրագրի մի այլ տեղում Ֆրունզեն նշում է հետևյալը. «Պատերազմից բոլորը հոգնել են և անչափ քայքայվել...» [3]։

Սովի ու հակասանիտարական պայմանների հետևանքով Օսմանյան կայսրությունում մոլեգնում էին վարակիչ հիվանդությունները։ Պատերազմի տարիներին սովից ու համաճարակից Փոքր Ասիայում մահացել էր շուրջ 2,5 մլն. մարդ։ Վարակիչ հիվանդություններն առանձնապես տարածված էին արևելյան վիլայեթներում։ Դա բացատրվում էր նրանց հետամնացությամբ, որն ավելի էր խորանում այդ տերիտորիայի ավերումով՝ ռազմական գործողությունների ծավալման հետևանքով։ Արևելյան վիլայեթների բնակչության 72 տոկոսը հիվանդացել էր բծախտով, 14 տոկոսը տառապում էր խրոնիկական դողէրոցքով, իսկ տասնմեկ հոգուց մեկը՝ հիվանդ էր սիֆիլիսով [4]։

Թուրքիայից ստացած հաղորդումներից մեկում ասվում էր, որ Կարինում յուրաքանչյուր օր բծախտից մահանում է 100—150

1 Центральный партийный архив ИМЛ при ЦК КПСС, ф. 17, оп. 1, д. 90, л. 37.

2 Фрунзе М. В. Соч., т. I, М., 1929, стр. 358.

3 Նույն տեղում, էջ 308։ Թուրքիայի գյուղատնտեսության վրա պատերազմի ունեցած կործանարար ազդեցության մասին մանրամասն տե՛ս А. Д. Новичев. Экономика Турции в период мировой войны, Л.—М., 1935, стр. 16—34.

4 Emin Ahmed, p. 81.

մարդ, իսկ հիվանդանոցում վիրավորները մահանում են՝ չստանալով անհրաժեշտ բժշկական օգնություն [1]։

Թուրքիայի մարդկային կորուստները պատերազմում հսկայական էին։ Պատերազմի տարիներին բանակ էր զորակոչվել 2 մլն. 350 հազար մարդ, որից 550 հազարը զոհվեցին կռվի դաշտում, 391 հազար հոգի վիրավորվել էին և 480 հազար մարդ՝ գերի ընկել։ Դա կազմում էր բանակ կանչվածների 62,84 տոկոսը [2]։

Մեզ ավելի ճշգրիտ են թվում թուրքական տվյալները, որոնց համաձայն Օսմանյան կայսրությունը պատերազմի չորս տարիների ընթացքում կորցրել էր 2,5 մլն. մարդ։ Դրանցից 1 միլիոնը մահացել է վերքերից ու հիվանդություններից, 500 հազարը՝ սպանվել պատերազմի դաշտում և մոտ 900 հազարը՝ վիրավորվել [3]։

Այդ տարիներին էական փոփոխություններ տեղի ունեցան նաև Թուրքիայի արդյունաբերության մեջ, պատերազմը նրան մեծ վնաս հասցրեց։ Ամենից ավելի տուժեցին այն ճյուղերը, որոնք կապված էին արտահանման հետ՝ ծխախոտի, բրդի, մետաքսի հումքի մշակման։ Այսպես, բրդե մանվածքի արտադրանքը կրճատվեց 5 անգամ, մետաքսահումքինը՝ 3 անգամ։

Թուրքիայի սևծովյան ափը ռուսական նավատորմի կողմից բլոկադայի ենթարկելու հետևանքով խանգարվեց քարածխի արտահանումը Զոնգուլդակի քարածխային ավազանից, որը հանգեցրեց այն բանին, որ ածխի հանույթը կրճատվեց ավելի քան 4 անգամ՝ 327 հազար տոննայից (1913 թ.) մինչև 186 հազար տոննայի (1918 թ.) [4]։

Սակայն այդ տարիներին էլ կազմակերպվեցին արդյունաբերության նոր ճյուղեր, որոնք սպասարկում էին ճակատին։ Նոր ձեռնարկությունները կառուցվում էին ոչ թե Ստամբուլում, Զմյուռնիայում և նավահանգստային մյուս քաղաքներում, որոնք գտնվում էին Անտանտի զորքերի հարվածների տակ, այլ կենտրոնական Անատոլիայում։ Զուտ թուրքական արտադրական ձեռնարկությունների աճին նպաստում էր նաև այն, որ պատերազմի տարիներին եվրոպական երկրներից ապրանքների ներմուծումը Թուրքիա գրեթե դադարել էր։ Օգտվելով պատերազմական իրադրությունից, կառավարությունը մաքսային տուրքերը բարձրացրեց ներմուծվող ապ-

1 ЦГВИА, ф. 2000, оп. I, д. 3862, л. 219.

2 «Мировая война в цифрах», М.—Л., 1934, стр. 22.

3 Emin Ahmed, p. 255.

4 Türkiye Cümhuriyet Merkez Bankası, üç Aylık Bülten, № 67—68, Ankara, 1948, s. 139. Այդ մասին տե՛ս նաև Istatistik yıllıgı, 1931—1932, c. 5, s. 223.

բանքների գնի 30 տոկոսի չափով և հայտարարեց, որ կապիտուլյացիաների ռեժիմը վերացվում է[1]։ *Այս միջոցառումներով մեծ հարված էր հասցվում անգլո-ֆրանսիական կապիտալի դիրքերին Օսմանյան կայսրությունում։*

Պատերազմի տարիներին նկատելի փոփոխություններ տեղի ունեցան նաև Թուրքիայի արտաքին առևտրի մեջ։ Այդ մասին պատկերացում են տալիս հետևյալ տվյալները[2].

Տարիներ	*Ներմուծումը ոսկի լիրայով*	*Արտահանումը ոսկի լիրայով*
1913	*41.749.000*	*21.436.000*
1914	*22.927.000*	*11.487.000*
1916	*2.210.000*	*3.405.000*
1917	*15.077.000*	*13.970.000*
1918	*21.276.000*	*24.889.000*

Ինչպես երևում է բերված թվերից, պատերազմի նախօրյակին ներմուծումը գերազանցում էր արտահանմանը գրեթե կրկնակի չափով, որը բացատրվում էր օտարերկրյա ապրանքների լայն հոսքով Օսմանյան կայսրություն։ Դրա հետևանքով էլ հենց ազգային տնտեսությունը չէր կարող արագ թափով զարգանալ։ Թուրքիայի արտաքին առևտրական բալանսն այն ժամանակ պասսիվ էր, մի բան, որ խիստ բացասաբար էր անդրադառնում երկրի ֆինանսական դրության վրա։ Պատերազմի տարիներին Օսմանյան կայսրության արտաքին առևտրական կապերը պետությունների մեծ մասի հետ խզվելու և մաքսատուրքերի խիստ բարձրացման կապակցությամբ արտահանումը սկսեց գերակշռել ներմուծմանը։ Ինչպես արտաքին, այնպես էլ ներքին առևտուրը անցավ Անատոլիայի արագ թափով աճող ազգային բուրժուազիայի, ինչպես և հողատերերի ձեռքը, որոնք ռազմական մատակարարումների սպեկուլյացիայի միջոցով խոշոր հարստություն դիզեցին։

Ստամբուլի հրապարակախոսներից մեկը գրում էր, որ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին «Միասնություն և առաջադիմություն» կուսակցությունը վարում էր տնտեսական այն-

1 *Կապիտուլյացիաների ռեժիմը չեղյալ էր համարվել տակավին 1914 թվականի հոկտեմբերի 1-ին։ Տե՛ս* МОЭИ, серия III, т. VI, ч. I, стр. 234 (прим. 4—5).

2 Sureyya Şevket, Cihan iktisadiyatında Türkiye, Ankara, 1931 s. 92.

պիսի քաղաքականություն, որը նպատակ ուներ թուրքական ազգային բուրժուազիային գերիշխող դիրք ապահովել երկրի էկոնոմիկայում և այսպիսով վերջ տալ հունական ու հայկական բուրժուազիայի տիրապետությանը[1]։ *Նման քաղաքականության հետևանքով պատերազմի տարիներին Անատոլիայում առաջ եկան մի շարք արդյունաբերական ու առևտրական ձեռնարկություններ, որոնք նոր մաքսային տուրքերով ու ռազմական իրադրությամբ պաշտպանված էին օտարերկրյա մրցակցությունից։ Հենց այդ ժամանակ էլ արագորեն աճեց ու ամրացավ թուրքական ազգային առևտրական բուրժուազիան, որը հսկայական շահույթներ ստացավ ռազմական մատակարարումների ճանապարհով։*

Այդ բանին մեծապես նպաստում էին կառավարության կողմից ստեղծված զանազան մոնոպոլիաները։ Այսպես, օրինակ, պատերազմի տարիներին հիմնվեց մոնոպոլ մի ընկերություն, որը պետք է մթերքներ հասցներ մայրաքաղաքին։ Ստամբուլի մատակարարումը ապահովվելու էր Ռումինիայից ստացվող ապրանքներով[2]։ *Բացի դրանից, գերմանացիները Ստամբուլում ստեղծել էին կոոպերատիվ ընկերություն, որն իրենց առաջին անհրաժեշտության որոշ առարկաներ էր մատակարարում։ Ինչպես Ստամբուլի մատակարարման թուրքական ընկերությունը, այնպես էլ գերմանական կոոպերատիվ ընկերությունը մատակարարում էին միայն պաշտոնյաներին ու գերմանացիներին։ Մայրաքաղաքի մնացած բոլոր բնակիչները պետք է բավարարվեին սովաբաժնով։*

Ստամբուլի բնակիչների հոծ զանգվածները վաղ առավոտից հերթի էին կանգնած փուռերի մոտ՝ իրենց սև ու դժվարամարս բլիթը ստանալու համար։ Ութ հոգուց բաղկացած ընտանիքն օրական ստանում էր ընդամենը մեկ կիլոգրամ հաց։ Քայքայված գյուղական շրջաններից եկած հսկայական թվով կանայք ու երեխաներ, մթերային քարտեր չունենալու պատճառով, ողորմություն էին անում։

Ստամբուլում ստեղծվեցին նաև այլ մոնոպոլիաներ՝ տեքստիլ, գործվածքեղենի, առևտրի, ծխախոտի և նրա արտահանման, ազգային ընկերություն և այլն։ Հիշյալ մոնոպոլիաների գործոն մասնակիցներն էին «Միասնություն և առաջադիմություն» կուսակցության ղեկավարները՝ Թալեաթ-փաշան, Ջեմալ-փաշան, Ջավիդ-բեյը, Կարա-Քեմալը, Հյուսեյն Ջահիդ-բեյը, Իսմայիլ Հաքքը և

1 Архив Груз. филиала ИМЛ при ЦК КПСС, ф. 13, оп. I, д. 19, л. 11—20.

2 Mühlmann C., S. 187.

ուրիշներ, որոնք որպես խոշոր բաժնետերեր, հսկայական շահույթներ էին ստանում։

Խոսելով Թուրքիայում մենաշնորհային ընկերությունների ստեղծման և նրանցում երիտթուրքական գործիչների և, առաջին հերթին, կառավարության անդամների, նրանց ազգականների ու բարեկամների խաղացած դերի մասին, Պոմյանկովսկին մեջ է բերում էնվերի խոսքերը, որն «անկեղծ զրույցի ժամանակ, առանց կարմրելու, ասաց ինձ. առևտրից ստացված շահույթը մենք չենք ցանկանում թողնել վաճառականներին, ինքներս ենք ստանում»[1]։

Հարստանալու իրենց տենչը բավարարելու մեջ մենաշնորհներն անցնում էին ամեն մի սահման։ Այսպես, օրինակ, 1916 թվականի պարենային ապրանքների մենաշնորհը սննդամթերքների գինը միանգամից բարձրացրեց 300 տոկոսով։ Պատերազմի տարիներին պարենային ապրանքների գներն աճեցին հետևյալ չափերով. հացինը՝ 37 անգամ, սուրճինը՝ 70 անգամ, բրնձինը՝ 30 անգամ, մակարոնինը՝ 32 անգամ, կարտոֆիլինը՝ 27 անգամ, լոբունը՝ 21 անգամ, նավթինը՝ 107 անգամ[2]։ 1917 թվականի վերջին կյանքը, 1914 թվականի համեմատությամբ, թանկացել էր 20 անգամ[3]։ Գների հսկայական աճի և, միաժամանակ, առաջին անհրաժեշտության ապրանքների խիստ անբավարար լինելու հետևանքով, քաղցի ու համաճարակի հողի վրա քաղաքներում զգալի չափով շատացան մահացության դեպքերը։

Թեև իշխանությունները գյուղացիներից խլում էին ցորենի բոլոր պաշարները, սակայն տրանսպորտը չէր ապահովում հացի փոխադրումը քաղաքները և դրա կարիքը զգացող գյուղական շրջանները։ Երկրի ամենից ավելի հարուստ ու կուլտուրապես զարգացած շրջանների բնակչությունը արդեն 1915—1916 թվականներից հաց չէր ստանում և սովի էր դատապարտված։ Ականատեսի վկայությամբ, առաջին անհրաժեշտության առարկաների գները այն աստիճան բարձրացան, որ «բնակչության չքավորագույն դասակարգերն ընդհանրապես ի վիճակի չէին որևէ բան ձեռք բերել»[4]։

Ինչ վերաբերում է քաղաքային բնակչության փոքրաթիվ ունևոր վերնախավին ու «Միասնություն և առաջադիմություն» կոմիտեի հետ սերտ կապերի մեջ գտնվող անձանց, ապա նրանք, օգտվելով պատերազմական իրադրությունից, անզուսպ սպեկուլյացիայի ճանապարհով հարստություն էին դիզում ժողովրդական զանգվածների աղետալի վիճակի հաշվին։

1 Pomiankowski, S. 180.
2 Emin Ahmed, p. 147—148.
3 ЦГВИА, ф. 2000, оп. I, д. 3859, л. 1—6.
4 Pomiankowski, S. 179—180.

Երկրի խորքում ընկած շրջաններում սկսեցին առաջ գալ արդյունաբերական ու առևտրական ձեռնարկություններ, որոնք փոխարինում էին պատերազմի տարիներին փակված օտարերկրյա ընկերություններին։ Հիշյալ ձեռնարկությունները զբաղված էին այնպիսի ապրանքների արտադրությամբ ու վաճառահանմամբ, որոնց ներմուծումն արտասահմանից դադարեցված էր։ Այսպիսով, ի հակակշիռ Ստամբուլի բուրժուազիայի, որն ուռճանում էր գերազանցապես սպեկուլյատիվ գործառնությունների միջոցով, սկսեց աճել ու իր դիրքերն ամրապնդել անատոլիական բուրժուազիան, որը սերտորեն կապված էր ներքին շուկայի հետ և շահագրգռված էր ներքին ազգային առևտրի ու արդյունաբերության զարգացմամբ։

Քառամյա պատերազմն աղետալի ազդեցություն ունեցավ Օսմանյան կայսրության ֆինանսական վիճակի վրա։ Վերը նշվեց, որ պատերազմի մեջ ներգրավվելու ժամանակ Թուրքիայի պետական պարտքը հասել էր ահռելի մի թվի՝ 148,5 մլն. թուրքական ոսկե լիրայի։ Հետագա չորս տարիների ընթացքում Թուրքիայի արտաքին ու ներքին պարտքն ավելացավ 465,7 մլն. լիրայով[1]։

«Երբ պատերազմը հայտարարվեց,— ասել էր իր ճառում Թուրքիայի ֆինանսների մինիստր Ջավիդ-բեյը,— մեր ֆինանսական դրությունը շատ ծանր էր... Այդ ժամանակ մեր ռազմական ծախսերը հավասար էին ամսական կես միլիոն լիրայի»։ Հետագայում,— Ջավիդ-բեյի ասելով,— այդ ծախսերն ամսական աճեցին մինչև 3 միլիոն ոսկե լիրայի[2]։ 1918 թվականի վերջին պատերազմի կարիքների համար ծախսված ընդհանուր գումարը հասավ ահռելի թվի՝ 1 միլիարդ ոսկե լիրայի[3]։

Պատերազմը վարելու հետ կապված տարբեր կարգի դժվարությունները Օսմանյան կայսրության նման տնտեսապես թույլ զարգացած երկրին անխուսափելիորեն լրիվ կախման մեջ էին դնում նրա դաշնակիցներից։ Վերը նշվեց, որ տակավին համաշխարհային պատերազմի առաջին օրերին Գերմանիան Թուրքիային 5 մլն. թուրքական ոսկե լիրայի չափով վարկ տրամադրեց՝ զորահավաքն

1 Տե՛ս Миллер А. Ф., Очерки новейшей истории Турции, М.—Л., 1948, стр. 70.
2 ЦГВИА, ф. 2000, оп. I, д. 3891, л. 356—358.
3 Шамсутдинов А. М., Октябрьская революция и национально-освободительное движение в Турции (1919—1922), сб. «Великий Октябрь и народы Востока», М., 1957, стр. 388.

ապահովելու համար։ 1915 թվականի գարնանը Թուրքիան Գերմանիայից ստացավ երկրորդ վարկը՝ 3552 հազար թուրքական ոսկե լիրա գումարի չափով, որը Ավստրո-Հունգարիայի կողմից տրամադրված 2109 հազար լիրայի հետ միասին օգտագործվեց նույն թվականին 5670 հազար լիրա արժողությամբ բաց թողնված թուրքական վարկատոմսերի առաջին սերիան երաշխավորելու նպատակով։ Հետագա տարիներին բաց թողնվեց ևս վեց սերիա՝ 139 մլն. լիրա ընդհանուր գումարով։

Թուրքիայի ու Գերմանիայի միջև տեղի ունեցած համաձայնությամբ վերջինս երաշխավորում էր պատերազմից հետո պաշտպանել թուրքական թղթե լիրան այն չափով, ինչ որ գերմանական թղթադրամները։ Այդ նպատակով Գերմանիան պարտավորվեց յուրաքանչյուր տարի Թուրքիային հատկացնել 3,5 մլն. լիրա ոսկով՝ համապատասխան քանակությամբ թղթե լիրա շրջանառությունից հանելու համար։ Սակայն ոչ Գերմանիայի խոստումը՝ պատերազմից հետո թղթադրամները փոխարինել ոսկով և ոչ էլ երիտթուրքական կառավարության պարտավորությունը՝ Գերմանիայի օգնությամբ պահպանել թղթադրամի կուրսը, վստահություն առաջ չբերին բնակչության մեջ, և թուրքական թղթե լիրայի արժեքն արագորեն սկսում էր ընկնել։ Այդ բանը հաստատեց ինքը՝ ֆինանսների մինիստր Ջավիդ-բեյը, խոստովանելով, որ թղթե վալյուտայի գինը նվազել է 200—300 տոկոսով, իսկ որոշ դեպքերում՝ նույնիսկ 400 տոկոսով։

Ջավիդ-բեյի հաշվումների համաձայն, թուրքական ամբողջ պարտքը Գերմանիային պատերազմի ժամանակ հավասար էր 252,6 մլն. լիրայի։ Այդ գումարի կեսից ավելին Թուրքիան ստացել էր ոչ թե ոսկով, այլ սպառազինությամբ և տարբեր բնույթի ռազմական մատակարարումների ձևով [1]։ 1918 թվականի մարտի 9-ին մեջլիսի նիստում արտասանած իր ճառում Ջավիդ-բեյը նշեց, որ պատերազմի տարիներին Թուրքիան իր դաշնակիցներից ստացել է փոխառություններ 900 մլն. դոլար ընդհանուր գումարով (դրանից Ավստրո-Հունգարիային բաժին էր ընկնում ընդամենը 45 մլն. դոլար)։ Այդ ամբողջ գումարից 585 մլն. դոլար ծախսվել էր բուն Գերմանիայում՝ զենքի և ռազմական այլ գույքի գնման վրա [2]։

Այսպիսով, փոխառումների ընդհանուր գումարի 2/3-ը մնացել էր պարտապանների ձեռքում և այն ծառայում էր գերմանական ռազմական մոնոպոլիաների հարստացմանը։

1 ЦГВИА, ф. 2000, оп. I, д. 3891, л. 356—358.

2 Мирный С., К вопросу об определении стоимости мировой войны для Турции. «Новый Восток», № 3, 1923, стр. 472.

Պատերազմի ընթացքում Թուրքիան գնալով ավելի մեծ կախման մեջ էր ընկնում կայսերական Գերմանիայից։ Թուրքական բոլոր մինիստրություններում նստած էին գերմանական խորհրդատուներն ու մասնագետները, որոնք և փաստորեն ղեկավարում էին նրանց։ Բանակում ու նավատորմում հրամանատարական կարևոր պաշտոնները գտնվում էին գերմանական սպաների ձեռքին՝ Լիման ֆոն Սանդերսի և ֆոն դեր Գոլցի գլխավորությամբ։ Պատերազմի վերջին Թուրքիայում էին գտնվում 800 գերմանական սպաներ և 18 հազար զինվորներ [1]։

«Գերմանիան այս rոպեիս,— գրում էր Վ. Ի. Լենինը 1917 թվականի հունվարին,— Թուրքիային վերածել է իր բե՛ ֆինանսական, բե՛ ռազմական վասալի» [2]։

Պատերազմի ամբողջ ծանրությունը, նրա բերած զրկանքներն ու հոգսերը ամենից առաջ բաժին էին ընկնում աշխատավոր զանգվածներին։ Պատերազմի հետևանքով կրած տառապանքներն ու աղետները թուրք ժողովրդի մեջ զայրույթ ու բողոք էին առաջ բերում երիտթուրքական կլիկի քաղաքականության ու գերմանական զինվորականության ճնշման դեմ, որոնք երկիրն ավերման հասցրին և անհամար զոհերի պատճառ դարձան։

1916 թվականի մարտի 1-ին Թուրքիայից ստացված հաղորդումներից մեկում նշվում էր, որ երիտթուրքերը գնալով կորցնում են իրենց ոտքի տակի հողը, որ նրանց դեմ բարձրանում է ժողովրդական ցասման ահեղ ալիքը։ «Ցարգրադում (Ստամբուլում— Ե. Ս.) կառավարության դեմ ազմկալից ցույց տեղի ունեցավ։ Ժողովուրդը կտրուկ ձևով դատապարտում էր երիտթուրքերին ու կառավարությանը, գտնելով, որ նրանք երկիրը դեպի վերջնական կործանում են տանում»։ Այնուհետև ընդգծվում էր, որ Օսմանյան կայսրության մեջ ծավալվող իրադարձությունները լուրջ անհանգստություն են պատճառել Բեռլինի կառավարող շրջաններին։ «Գերմանացիներն իրենց կողմից հնարավոր ամեն ինչ անում են Ցարգրադում իշխանությունը գրավելու համար՝ հույս ունենալով այդ ձևով վերջ դնել այն լուրջ կամպանիային, որ ներկայումս ձեռնարկվել է երիտթուրքերի դեմ» [3]։

1916 թվականի մարտի 31-ին Բուխարեստից ստացված նա-

1 Larcher M. La guerre turque dans la guerre mondiale. Paris, 1926 p. 613.

2 Լենին, Երկեր, հ. 23, էջ 235։

3 АВПР, ф. «Политархив», д. 4656, л. 25.

մակում պատմվում էր Ստամբուլում մոլեգնող սովի մասին։ «Ամեն օր տասնյակ մարդիկ մահանում են ուժասպառությունից։ Ծերերի, կանանց ու երեխաների քսան հազարանոց ամբոխը Բարձր Դռան շենքի առաջ վիթխարի մի ցույց գումարեց՝ պահանջելով հաց տալ բնակչությանը։ Կանչվեցին զորքեր, որոնք մխրճվեցին ամբոխի մեջ՝ տրորելով կանանց ու երեխաներին։ Ամբոխի միջից գոռում էին «Կորչե՛ն դավաճանները՝ Էնվերն ու Թալեաթը» [1]։

Մի դանիացի, որն այդ տարիներին Թուրքիայում էր բնակվում, 1916 թվականին վկայում էր, որ «պատերազմի նկատմամբ նախկինում եղած անտարբեր վերաբերմունքն ամբողջովին անհետացել է։ Խմորումները բանակում և մտավորականների շրջանում հեղափոխական բնույթ են կրում և զսպվում են լոկ երկաթյա ռեժիմի շնորհիվ։ Մայրաքաղաքում կատարյալ քաոս է տիրում։ Ջանգվածային ձերբակալություններն ու մահապատիժները սովորական երևույթ են։ Կենսամթերքներն անհավանական չափով թանկացել են։ Զուսնոր դասակարգերը տառապորեն սովի են մատնվել, ժամանակ առ ժամանակ բռնկվող խռովությունները ճնշվում են զենքի ուժով։ Յըլդըզ-Փյոշքի առջև հաց պահանջող կանանց մի քանի ցույց տեղի ունեցավ» [2]։

Ականատեսներից մեկը, որն այցելել էր երկրի մի շարք շրջանները, 1916 թվականի փետրվարին գրում էր, որ Օսմանյան կայսրության ամբողջ տարածության վրա՝ սկսած մայրաքաղաքից և վերջացրած ամենահեռավոր ծայրամասերով, բնակչությունը հուզված է։ Դժգոհությունը երիտթուրքական ռեժիմից օրեցօր ավելի է ուժեղանում։ Խուլ տրտունջն արագորեն փոխարինվում է բացահայտ զայրույթով։ Բնակչությունը ծայրահեղորեն հոգնել է պատերազմից և այլևս չի հավատում նրա բարեհաջող վախճանին։ Այդ հողի վրա արդեն բազմիցս խոշոր անկարգություններ են եղել, որոնք ճնշվել են զենքի ուժով։ Առանձնապես մեծ թափ ստացան այն հուզումները, որոնք առաջ եկան Կարինի՝ անկումից հետո։ Դրանցում մասնակցում էին տասնյակ հազարավոր մարդիկ [3]։ 1917 թվականի հունվարի 14-ի թվակիր մի հաղորդման մեջ նշվում էր, որ Թուրք ժողովրդի մեջ գոյություն ունի «շատ ուժեղ զգացմունք Կոմիտեի («Միասնություն և առաջադիմություն» կուսակցության ղեկավար օրգանի—Ե. Ս.) և երկիրն ու ժողովրդին շահագործող ներկա սիստեմի դեմ» [4]։

1 АВПР, ф. «Политархив», д. 4656, л. 96.
2 ЦГИА Груз. ССР, ф. 2с, оп, I, д. 3599, л. 195
3 АВПР, ф. «Политархив», д. 4656, л. 24.
4 ЦГВИА, ф. 2000, оп. I, д. 3891, л. 314.

Երկրով մեկ և զորամասերում տարածվում էին թռուցիկներ, որոնք ուղղված էին երիտթուրքերի ու գերմանացիների դեմ։ Ընդանցում բնակչությանը կոչ էր արվում հանդես գալ Էնվերի, Թալեաթի կլիկի ու գերմանացիների դեմ։ Այդպիսի թռուցիկներից մեկում ասված էր. «Էնվերն ու Թալեաթը Թուրքիան վերածեցին Գերմանիայի վասալ մի պետության, որը (Գերմանիան) նրանից անշեղորեն ու մեթոդիկ ձևով վերջին հյութերն է քամում» [1]։

Անատոլիայի տարբեր շրջաններում հաճախակի երևույթ էին դառնում ժողովրդական զանգվածների զինված ելույթները [2]։ Ապստամբների հիմնական մասը կազմում էին դասալիք զինվորները։ Վերջիններիս կողմից ստեղծված պարտիզանական ջոկատների մեջ ընդգրկվում էին նաև հարյուրավոր գյուղացիներ։

1915 թվականին ապստամբություն բռնկվեց Այդընի վիլայեթում։ Նույն տարում տեղի ունեցան գյուղացիների խոշոր ելույթներ Անատոլիայի հյուսիսային ու հարավային շրջաններում։ Պատերազմը ձգձգվելուն զուգընթաց դասալքությունը բանակի շարքերից գնալով աճում էր, իսկ պարտիզանական շարժումը, որն ուղղված էր աշխատավոր գյուղացիությանը անխնա կեղեքող կալվածատերերի ու տեղական իշխանությունների դեմ, ավելի ու ավելի լայն թափ էր ստանում։

Երիտթուրքական վերնախավի կողմից տարվող քաղաքականության սնանկությունն ակներև էր դառնում նաև երկրի շահագործող դասակարգերի շատ ներկայացուցիչների համար։ Պառլամենտական շրջաններում, բանակի սպայության մեջ և նույնիսկ սուլթանի ամենամերձավոր պաշտոնյաների մոտ աճում էր դժգոհությունը երիտթուրքական «եռյակից», և առաջին հերթին, Էնվերից, որին համարում էին մեղավոր Օսմանյան կայսրության աղետալի վիճակի, նրա գլխին թափված ամեն տեսակի դժբախտությունների համար։ Այդ կապակցությամբ Ստամբուլում պատերազմի տարիներին կազմակերպվեցին մի շարք դավադրություններ, որոնք նպատակ ունեին վերնախավային հեղաշրջման ճանապարհով իշխանությունից հեռացնել երիտթուրքական կլիկին և դրանով Թուրքիայի համար հնարավորություն ստեղծել պատերազմից դուրս գալու համար։

1916 թվականին տեղի ունեցած այդպիսի դավադրություններից մեկը, որին մասնակցում էին թուրք և արաբ սպաները, ինչպես նաև թուրքական մեջլիսի մի շարք անդամներ, գլխավորեց Յուսուֆ

1 АВПР, ф. «Политархив», д. 4662, л. 100.
2 Ahmed Bedevi Kuran, s. 375—376.

Իզեդդինը։ Վերջինս սուլթանին խնդրեց խզել կապերը գերմանացիների հետ և վերջ դնել Էնվերի, Թալեաթի ու Ջեմալի կործանարար քաղաքականությանը։ Սակայն դավադրությունը բացվեց գերմանական լրտեսների կողմից և շատ արագ լիկվիդացվեց։ Յուսուֆ Իզեդդինը զոհվեց խորհրդավոր հանգամանքներում [1]։ Վերնախավի ընդդիմադրությունը, որը կտրված էր ժողովրդական զանգվածներից և այդ պատճառով անհաջողություն էր կրում ամեն ագամ, երբ փորձում էր անցնել ակտիվ գործողությունների, երիտթուրքական պարագլուխների համար մեծ վտանգ չէր ներկայացնում։ Լրտեսական լայն ցանցի և արագ ու դաժան միջոցների օգնությամբ երիտթուրքական եռյակը առանց լուրջ ջանքերի, նրանց սաղմնավորման շրջանում իսկ ճնշում էր այդպիսի շարժումները։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության ազդեցության տակ թուրքական բանակի քայքայումն ավելի լայն չափեր ընդունեց, իսկ պարտիզանական շարժումը Թուրքիայում նոր թափ առավ։ Հոկտեմբերի ազատարար գաղափարները, սովետական ժողովրդի խորտակիչ հակահարվածը օտարերկրյա ներխուժողներին ու սպիտակգվարդիական հակահեղափոխությանը ոգեշնչում էին Թուրքիայի աշխատավոր զանգվածներին պայքարելու իրենց ներքին ու արտաքին թշնամիների դեմ։ 1917 թվականի վերջին և 1918 թվականի սկզբին երկրում առանձնահատուկ ուժով ծայր առավ գյուղացիական զանգվածների շարժումը, որն այնպիսի չափեր ընդունեց, որ դա խանգարում էր զորակոչի անցկացմանը [2]։ Գյուղացիների ելույթները վառ արտահայտված դասակարգային բնույթ էին կրում։

«Մահմեդական գյուղացիությունը որոշակիորեն զինվում է Թուրքիայի կառավարության դեմ,— գրում էր Ստամբուլում լույս տեսնող «Սաբահ» թերթը 1917 թվականի նոյեմբերի 12-ին։ Մեզ համար բոլորովին անհասկանալի է, թե որտե՞ղից են գալիս բոլշևիկյան այդ գաղափարները, ո՞վ է աշխատավոր զանգվածների մեջ տանում այդ վնասակար ագիտացիան, ինչո՞ւ է դաշնակիցներին անվստահություն հայտնելու դրոշի տակ մղվող պրոպագանդան ուղղված թուրքական կառավարության դեմ»։

Պանթուրքական և հետադիմական գրող Հալիդե Էդիպը, որն ատելությամբ էր լցված հասարակ ժողովրդի նկատմամբ, հետաքրքիր խոստովանություն է անում. «Զմյուռնիայի լեռներում,— գրում է նա,— հրոսակները (այդպես է նա անվանում պարտիզանական ջոկատները— Ե. Ս.) մշտական բախման մեջ էին օսմանյան կառավարության հետ... կողոպտում էին հարուստ վաճառականներին, սպանում կառավարական պաշտոնյաներին ու ոստիկաններին, սակայն համակրում խեղճ գյուղացիներին» [1]։

Անատոլիայի հյուսիսում գործում էին Սարը-էֆեի գլխավորած ապստամբների ջոկատները։ Ականատեսի պատմելով, Սարը-էֆեն հարուստներից խլում էր նրանց ամբողջ դրամը, ձիերը, բանող անասունները, հացահատիկը և այդ բոլորը բաժանում չքավորներին։ Նա գյուղացիական զանգվածների մեջ մեծ հեղինակություն ուներ [2]։

Լայն համբավ էր ձեռք բերել պարտիզանական այն խոշոր ջոկատը, որին գլխավորում էր բանակից դասալքած Դեմիրջի Մեհմետ-էֆեն։ Այդ ջոկատը գործում էր Այդընի, Օդեմիշի, Դենիզլիի, Իզմիրի և Կարա-Մյուրսելի շրջաններում [3]։ Դեմիրջիի ջոկատի գործողություններն Արևմտյան Անատոլիայում այնպիսի չափեր էին ընդունել, որ ժամանակակիցներից ոմանք դրանք համեմատում էին Ջելալիի ղեկավարությամբ միջին դարերում ծավալված հակաֆեոդալական խոշոր շարժման հետ [4]։

Պարտիզանական ջոկատներն իրենց վերահսկողության տակ էին վերցրել Բուրսայի գրեթե ամբողջ շրջանը և ակտիվ գործողությունների էին դիմում Իզմիր-Բանդըրմա երկաթուղագծի երկայնքով [5]։

Պարտիզանական շարժման մեծ թափի մասին էր վկայում նաև այն փաստը, որ կառավարությունը նրա դեմ պայքարելու համար խոշոր զինվորական միավորումներ էր դուրս բերել։

1918 թվականի հոկտեմբերի 1-ին «Պրավդա» թերթը հաղորդում էր, որ «Թուրքիայի ասիական գավառներում խռովություններ են տեղի ունենում, դրությունն այնտեղ սարսափելի է։ Կովկասի համար նախատեսված երկու դիվիզիա ուղարկվել է Փոքր Ասիա՝ այդ խռովությունները ճնշելու համար, բայց կասկածում են, թե կկարողանա՞ն արդյոք հաշիվ տեսնել այդ վիթխարի ապստամբության հետ»։

1 АВПР, ф. «Политархив», д. 4656, л. 27.

2 Larcher M., p. 126.

1 Halide Edib, Turkey faces West, London, 1930, p. 156.

2 Reşat Ebnis, Kilicimi sürüyorum (Sarı-efe şu daglara yaşlanır), Istanbul, 1930, s. 70.

3 Ibrahim Alaettin Govsa, Türk Meşhurları Ansiklopedisi, 1946, s. 100.

4 Der Neue Orient, Berlin, № 10, 1918, s. 488.

5 Emin Ahmed, p. 262.

Հեղափոխական խմորումների մեջ ներգրավվեցին նաև քաղաքի աշխատավորությունն ու մտավորականները, որոնք լավատեղյակ լինելով Ռուսաստանի հեղափոխական իրադարձություններին, իրենց անկեղծ համակրանքն էին արտահայտում դեպի Սովետական Ռուսաստանն ու նրա վարած քաղաքականությունը։

Թուրք դիվանագետներից մեկը նշում էր, որ «Ռուսաստանում կատարված հեղաշրջումից հետո, թուրք ուսանողները գնում էին բոլշևիկների լոգունգների ներքո, պահանջում խաղաղություն, հաց և համընդհանուր զինաթափում»։

1918 թվականին Ստամբուլում սկսեցին լույս տեսնել հեղափոխական բնույթի «Զինվորական չքավորություն», «Բոլշևիկ» ամսագրերը, իսկ Այդընում՝ «Զիվթչի» (գյուղացի) ամսագիրը։ Հիշյալ ամսագրերը թուրք ժողովրդին կոչ էին անում պայքարել հանուն նոր կյանքի, դաշինք կնքել բոլշևիկների հետ [1]։

Կոմինտերնի I կոնգրեսում արտասանած իր ճառում Մուստաֆա Սուբհին նշում էր, որ «Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, երբ Ստամբուլի համալսարանում քննարկվում էր այն հարցը, թե ո՞ւմ պետք է շնորհել Նոբելյան մրցանակ, թուրքական երիտասարդությունը, չնայած թուրք պրոֆեսորների ճնշմանը, այն շնորհեց ընկ. Լենինին... Հարգելի մեծ ուսուցիչ Լենինը իր գաղափարներով, ձգտումներով ու գործողություններով իրենից ներկայացնում է հեղափոխական մի ամբողջ աշխարհ, և թուրք երիտասարդությունն այդ ընտրությամբ ապացուցեց, որ ինքը կապված է հենց այդ աշխարհի հետ» [2]։

Երիտթուրքական կլիկը մահացու երկյուղ կրելով Օսմանյան կայսրության մեջ Հոկտեմբերյան հեղափոխության գաղափարների տարածումից, դաժան ռեպրեսիաների միջոցով փորձում էր խանգարել սովետական ժողովրդի հաղթական պայքարն ավետող լուրերի ներթափանցումը Թուրքիա։ Սակայն ոչ մի տեսակի միջոցառումներ չէին կարող խոչընդոտել հեղափոխական գաղափարների տարածմանը։ Նրանք նվաճեցին նաև թուրք աշխատավորների լայն զանգվածների համակրանքը։ Ահա ինչ է գրում այդ առիթով հայտնի թուրք բանաստեղծ Նազիմ Հիքմեթը. «Անատոլիայի ամեն մի փոքր քաղաք, ամեն մի աննշան գյուղ լցված էր ռուսական հոկտեմբերի մասին լուրերով» [3]։

---

1 Хейфец А. Н., Великий Октябрь и угнетенные народы Востока, М., 1959, стр. 60.

2 «Известия», 6.III.1919.

3 «Известия», 5. VII. 1951.

Հոկտեմբերյան հեղափոխության գաղափարները համակեցին նաև Սովետական Ռուսաստանում գտնվող թուրք նախկին ռազմագերիներին։ Այդ բանը ցայտուն կերպով երևաց 1918 թվականին՝ թուրքական ձախ սոցիալիստների կոնֆերանսում, որին ներկա էին զինվորական շինել հագած բանվորների, գյուղացիների ու մտավորականների կողմից ընտրված պատգամավորները։

Կոնֆերանսը բացեց Մուստաֆա Սուբհին։ Իր ճառում նա նշեց, որ կոնֆերանս են ժամանել «17 թուրք սոցիալիստ պատվիրակներ Ռուսաստանի այն տեղերից, ուր հավաքված են թուրք ռազմագերիները։ Ներկա կոնֆերանսի նպատակն է,— ասաց այնուհետև Սուբհին,— սոցիալիստական խմբերի կազմակերպման և թուրք սոցիալիստների միջև սերտ կապեր ստեղծելու ճանապարհով թուրք պրոլետարիատին ներգրավել ինտերնացիոնալ շարժման մեջ...

Այս կոնֆերանսին մասնակցում են ոչ միայն հեղափոխական-մտավորականներ, ինչպես դա նախկինում էր, այլև ճնշված դասակարգերի՝ գյուղացիների ու բանվորների ներկայացուցիչները։ Ահա թե ինչու կարելի է ասել, որ հեղափոխական ոգին Թուրքիայում թափանցել է հասարակության ստորին խավերը» [1]։

Բոլշևիկյան կուսակցության Կենտրոնական կոմիտեին ուղղված թուրք սոցիալիստ-կոմունիստների կուսակցության Կենտկոմի 1918 թվականի օգոստոսի 17-ի դիմումի մեջ ասվում էր. «Հաջողությամբ ավարտելով իր աշխատանքը, կոնֆերանսը որոշակիորեն կանգնեց Մարքսի պատգամներն իրականում կյանքում կիրառելու հողի վրա՝ խզելով դրանով իսկ հարաբերությունները սոցիալիստ համաձայնողականների հետ» [2]։

Կոնֆերանսում ստեղծվեց Թուրքական կոմունիստական կազմակերպությունների կենտրոնական բյուրո (ԹԿԿԿԲ) Մուստաֆա Սուբհիի գլխավորությամբ։ Կենտրոնական բյուրոն հրատարակում էր «Ենի դյունյա» («Նոր աշխարհ») թերթը, որը մեծ դեր խաղաց Հոկտեմբերյան հեղափոխության գաղափարները մահմեդական ժողովուրդների մեջ տարածելու գործում։

«Նա,— ասվում էր հիշյալ թերթի մասին ադրբեջանական կոմունիստների ամսագրում,— ծնված լինելով... ռուսական մեծ հեղափոխությամբ, գնում է կարմիր բանակի ետնից, ամբողջ արևելքով մեկ տարածելով... Սովետական Ռուսաստանի ազատարար

---

1 Архив ИМЛ при ЦК КПСС, ф. 17, оп. 1, д. 90, л. 6.

2 Նույն տեղում, թ. 21։

գաղափարները»[1]։ Թուրքական կոմունիստական կազմակերպությունների կենտրոնական բյուրոն ու «Նոր դյունյա» թերթը համախմբում էին թուրք նախկին ռազմագերիներին, Թուրքիա էին ուղարկում մեծ քանակությամբ քաղաքական գրականություն, և բացատրական աշխատանք տանում թուրքական նավերի վրա գտնվող նավաստիների շրջանում։ Իր ելույթներից մեկում Մուստաֆա Սուբհին պատմեց այն մասին, որ «Թուրքիայից Օդեսա ժամանած երկու ընկերներ հաղորդում են, թե ինչպիսի մեծ հաջողություն ունի այնտեղ մեր գրականությունը և որ բոլշևիզմի ազդեցությունը գնալով աճում է։ Սամսունի, Տրապիզոնի ու Կարինի շրջաններում բնակչության ու զորքի մեջ հեղափոխական կոմունիստական բջիջներ էին կազմակերպվում։ Այդ ընկերների միջոցով ստացված տեղեկությունները հաստատվում են հեռագրական վերջին հաղորդագրություններով՝ կառավարության դեմ 3-րդ բանակի ապստամբության մասին Անատոլիայում»[2]։

Թուրք սոցիալիստ-կոմունիստների կողմից տարածվող բրոշյուրներում ու թերթիկներում մերկացվում էր երիտթուրքական վերնախավի նվաճողական քաղաքականությունն Անդրկովկասի նկատմամբ, ժողովրդական զանգվածներին կոչ էր արվում վերջ տալ երիտթուրքերի հանցավոր ռեժիմին։

«...Մենք,— ասում էր Սուբհին,— որոշել էինք դուրս գալ այն հոսանքի դեմ, մարդկանց այն խմբի դեմ, որոնք համախմբվել էին թուրքական իմպերիալիզմի շուրջը։ Երբ թուրք գեներալները մտադրվել էին թուրքական բանակն ուղարկել Կասպից ծովի ափերն ու Թուրքեստանը գրավելու, թուրք հեղափոխականները համարձակորեն բարձրացրին իրենց դրոշը և հանդես եկան թուրք գեներալների ավանտյուրիստական ձգտումների դեմ»[3]։

Ինչպես թուրք ժողովրդի, այնպես էլ Արևելքի բոլոր կեղեքված մահմեդական ժողովուրդների համար հսկայական նշանակություն ունեցավ Սովետական Ռուսաստանի կառավարության 1917 թվականի դեկտեմբերի 3-ի դիմումը «Ռուսաստանի և Արևելքի աշխատավոր բոլոր մուսուլմաններին»։ Պատմական այդ փաստաթղթում ՌՍՖՍՌ կառավարությունը հայտարարում էր. «...Ոչ թե Ռուսաստանից ու նրա հեղափոխական կառավարությունից է ձեզ սպասում ստրկացում, այլ եվրոպական իմպերիալիզմի գիշատիչներից, նրանցից, որոնք ներկայումս պատերազմ են մղում ձեր երկրների բաժանման համար...

Ժամանակ մի կորցնեք և ձեր ուսերից գցեք ձեր հողերի դաշավոր նվաճողներին։ Այլևս մի տվեք նրանց թալանելու ձեր հայրենի օջախները։ Դուք ինքներդ պետք է դառնաք ձեր երկրի տերերը։

Դուք ինքներդ պետք է ձեր կյանքը կառուցեք ձեր ցանկացած ձևով... ձեր ճակատագիրը ձեր սեփական ձեռքերում է»[1]։

Ինչպես հիշյալ դիմումը, այնպես էլ հաշտության մասին դեկրետը, որով սովետական կառավարությունն առաջարկում էր հաշտություն կնքել՝ առանց անեքսիաների ու կոնտրիբուցիաների, թուրքական կառավարության համար հնարավորություն էին ստեղծում դուրս գալ պատերազմից և, այդպիսով, երկիրը փրկել ռազմական աղետից, որի ուրվականն արդեն 1917 թվականին կախվել էր Օսմանյան կայսրության վրա։

Սակայն սուլթանական Թուրքիայի հետադիմական կառավարողները, իրենց գավթողական ձգտումներով տարված, շարունակում էին արհամարհել երկրի ազգային շահերը և ջանում էին հնարավոր բոլոր միջոցներով ձգձգել հանցավոր պատերազմը։ Դեռ ավելին, երիտթուրքական ղեկավար շրջանները հույս ունեին Ռուսաստանի ժողովուրդների խաղաղության հասնելու կամքը, իմպերիալիստական սպանդին ամենաարագ կերպով վերջ դնելու ամուր վճռականությունն օգտագործել իրենց հանցավոր նպատակների համար և, հենվելով կայսերական Գերմանիայի վրա, երիտասարդ սովետական հանրապետությանը պարտադրել թալանչիական հաշտություն՝ նրանից հափշտակելով Օսմանյան կայսրությանը սահմանակից Անդրկովկասի շրջանները։

1 «Коммунист», Баку, орган ЦК и БК АКП(б), 29, VII. 1920, № 48.

2 «Жизнь национальностей», 5. X. 1919, № 38 (45).

3 «Первый конгресс Коммунистического Интернационала». Протоколы, М., 1933, стр. 244.

1 «Документы внешней политики СССР», т. I, М., 1957, № 18.

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԱԴՐԵՍԻԱՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ 1918 ԹՎԱԿԱՆԻՆ

Ինչպիսի՞ն էր իրադրությունն Անդրկովկասում և կովկասյան էակատում թուրքական ներխուժման նախօրյակին։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակից հետո վրացական մենշևիկների, դաշնակների և մուսավաթականների հակահեղափոխական կուսակցությունները Սովետական Ռուսաստանից Անդրկովկասը անջատելու և երկրամասում հեղափոխական շարժումները ճնշելու նպատակով 1917 թվականի նոյեմբերի 15 (28)-ին ստեղծեցին իրենց կառավարությունը, այսպես կոչված Անդրկովկասյան կոմիսարիատը՝ մենշևիկ Ե. Գեգեչկորու գլխավորությամբ։ Այդ կառավարությունը ստեղծվեց Թիֆլիսում՝ Անգլիայի, Ֆրանսիայի ու ԱՄՆ-ի հյուպատոսների գործուն մասնակցության շնորհիվ։ ԱՄՆ-ի հյուպատոս Սմիթը Անդրկովկասի հակահեղափոխական մարմինների կազմավորումից առաջ հեռագրում էր պետական քարտուղար Լանսինգին. «Ես նոյեմբերի 24-ին ներկա կլինեմ Անդրկովկասյան կառավարություն կազմակերպելու հարցի շուրջ հրավիրվող խորհրդակցությանը։ Այդ կառավարությունը կմիանա Հարավային ֆեդերացիային[1] և կմերժի զինադադարը կամ սեպարատ հաշտությունը։ Անհրաժեշտ է նրան ֆինանսական օգնություն ցույց տալ... Այդ հարցը մեզ համար շատ կարևոր է»[1]։

Անդրկովկասյան կոմիսարիատի իշխանությունը հաստատվելուց անմիջապես հետո սկսվեցին բանվոր դասակարգի հեղափոխական կազմակերպությունների հետապնդումներն ու ազգամիջյան կռիվները։ 1917 թվականի նոյեմբերին անդրկովկասյան կոնտրռևոլյուցիան ստեղծեց ազգային խորհուրդներ, որոնց ղեկավարությունն ամբողջովին անցավ բուրժուա-ազնվականական մտավորականության ու հետադիմական զինվորականների ձեռքը։ Անդրկովկասյան բոլշևիկների ղեկավար Ստ. Շահումյանը այդ կապակցությամբ գրում էր. «Անդրկովկասի ներսում՝ ըստ ազգությունների սահմանագծվելու քաղաքականությունը, ազգային տերիտորիաների վերաբերյալ վեճերը, ազգային գնդերի ստեղծումը և դրանով իսկ մինչ այդ եղբայրական կովկասյան բանակի ընտանիքի մեջ երկպառակություն մտցնելը,— այս բոլորը, փոխանակ բոլոր ազգությունների դեմոկրատիայի միավորման՝ հանուն ռևոլյուցիայի և սոցիալիզմի ընդհանուր մեծ գաղափարների, ստեղծեց ազգային մեկուսացման, թշնամանքի մթնոլորտ, և հող է պատրաստել Անդրկովկասում արդեն անխուսափելի ազգային պատերազմների համար»[2]։

Հանդես գալով այդ օրերին Բաքվում, ականավոր բոլշևիկ Նարիման Նարիմանովը նշում էր, որ բանվորա-գյուղացիական հեղափոխության հաղթանակից հետո Կովկասի ունևոր դասակարգերը իրենց համար վտանգ զգալով որոշեցին անջատվել Ռուսաստանից։ Նրանք «ինքնորոշվեցին» և ստեղծեցին իրենց «վայ կառավարությունը»՝ Անդրկովկասյան կոմիսարիատը։ «Մեր կովկասյան կեղծ սոցիալիստներն ու սոցիալ-նացիոնալիստները,— ասում էր այնուհետև Նարիմանովը,— զենք դառնալով բեկերի, կալվածատերերի ու կապիտալիստների ձեռքում, գնացին նրանց ետևից։ Եվ Ան-

1 Հարավ-Արևելյան ֆեդերացիան կամ Հարավ-Արևելյան միությունը ստեղծվել էր 1917 թվականի նոյեմբերին Դոնի, Կուբանի ու Թերեքի հակահեղափոխական կազմակերպության կողմից՝ սովետական իշխանության դեմ պայքարելու նպատակով։ Նրա կազմակերպման մեջ գործուն մասնակցություն ունեցավ վերը հիշատակված Սմիթը, որը Դոնի, Կուբանի, Աստրախանի և Ուրալի կազակական զորքերի լիազորների հետ կնքեց մի համաձայնագիր, որով երաշխավորվում էր ԱՄՆ-ի աջակցությունը կազակական պետության ստեղծման գործում։

1 „Papers relating to the foreign relations of the U.S. 1918, Russia", Washington, 1932, vol. II, p. 592. Անգլիայի ու ԱՄՆ-ի ագրեսիվ պլանների մասին Անդրկովկասում տե՛ս Е. А. Токаржевский, Из истории иностранной интервенции и гражданской войны в Азербайджане, Баку, 1957; Д. Е. Енукидзе, Крах империалистической интервенции в Закавказье, Тбилиси, 1954; Г. Галоян, Борьба за Советскую власть в Армении, Москва, 1957; Е. К. Саркисян, Англо-американская интервенция в Закавказье в 1918—1920 гг и борьба народов Закавказья за свое освобождение. «Известия» АН Арм. ССР, № 3, 1953, стр. 35—48 и др.

2 Ստ. Շահումյան, Երկեր, հ. 3, Հայպետհրատ, Երևան, 1958, էջ 107։

դրրկովկասյան կոմիսարիատի ողջ քաղաքականությունն արդեն հող է նախապատրաստել ազգային երկպառակության համար մեզ մոտ՝ Կովկասում»[1]։

Կոմիսարիատի երկամսյա տիրապետության հետևանքով Անդրկովկասի տնտեսությունը կատարյալ քայքայման էր հասցվել։ Դադարեցվեց հացի ներմուծումը Հյուսիսային Կովկասից, ընդհատվեց երկաթուղային կապը Բաքվի ու Թիֆլիսի միջև։ Ամբողջ Անդրկովկասում, գյուղացիական զանգվածները, այլևս չհավատալով իրենց հող տալու՝ կոմիսարիատի կեղծ խոստումներին, ապստամբում էին և առանձին տեղերում յուրովի լուծում հողային հարցը։ Հսկայական ծավալ ընդունեցին մահմեդական գյուղացիների ելույթները Ելիզավետպոլի նահանգում, ուր ապստամբները կոտորեցին կալվածատերերին և նրանց հողերը իրար միջև բաժանեցին։

Գյուղացիական խոշոր ապստամբություններ տեղի ունեցան նաև Վրաստանում ու Հայաստանում։ Ամենուրեք գյուղացիները ինքնադատաստան էին տեսնում իշխանների ու կալվածատերերի նկատմամբ։ Կոմիսարիատի իշխանությունների ռեպրեսիաներն ի վիճակի չէին կասեցնելու գյուղացիական զանգվածների պայքարը հողի համար։

Չնայած հալածանքների ու հետապնդումների մթնոլորտին, Անդրկովկասի բոլշևիկները համառ աշխատանք էին տանում գյուղացիների ու բանվորների շրջանում։ Նրանք համախմբում էին աշխատավորներին՝ տեղի հակահեղափոխական ուժերին հակահարված տալու համար։

1917 թվականի վերջին և 1918 թվականի սկզբին տեղի ունեցան ժողովրդական զանգվածների մի շարք ելույթներ Կոմիսարիատի ու «ազգային խորհուրդների» դեմ։ Բոլշևիկների նախաձեռնությամբ գումարվում էին բանվորների, գյուղացիների ու զինվորների ցույցեր ու ժողովներ, որոնցում ընդունվում էին Անդրկովկասյան կոմիսարիատի քաղաքականությունը դատապարտող որոշումներ։ Շատ տեղերում ժողովների մասնակիցները պահանջում էին իշխանությունը հանձնել սովետներին։

1917 թվականի հոկտեմբերի 27-ին Ալեքսանդրապոլի բոլշևիկների կողմից գումարվեց աշխատավորների ու 39-րդ հետևակային դիվիզիայի ընդհանուր ժողով, որտեղ հանդես եկան բոլշևիկյան գործիչներ Բ. Ղարիբջանյանը և Պ. Արվելաձեն։ Նշելով Հոկտեմբերյան հեղափոխության մեծագույն նշանակությունը, նրանք ժողովրդական զանգվածներին կոչ էին անում պայքարել սովետական

1 «Известия Бакинского Совета», 26. I. 1918, № 20.

իշխանության համար։ Նոյեմբերի 10-ին տեղի ունեցավ Ալեքսանդրապոլի աշխատավորների ու զինվորների հինգհազարանոց ցույցը, որտեղ ընդունվեց որոշում՝ դատապարտել անդրկովկասյան հակահեղափոխականությանը և աջակցություն ցույց տալ Ռուսաստանում հաղթանակած սովետական իշխանությանը։ 1918 թվականի հունվարին Քութայիսում, Ճիաթուրայում ու Սաչխերում կայացած զանգվածային ցույցերի ժամանակ բոլշևիկյան որոշումներ ընդունվեցին[1]։

1918 թվականի հունվարի 9-ին Հաղպատի բոլշևիկյան ժողովը ընդունեց որոշում, որտեղ ասված էր, որ նա ճանաչում է Ռուսաստանի ժողովրդական կոմիսարների սովետի իշխանությունը և բոլոր հնարավոր միջոցներով կնպաստի Հոկտեմբերյան հեղափոխության լոզունգները կյանքում իրականացնելու գործին։ Հիշյալ որոշման մեջ ընդգծվում էր, որ համաձայնողական ու հակահեղափոխական կուսակցությունների բլոկը՝ հանձինս Անդրկովկասյան կոմիսարիատի, ի վիճակի չէ հօգուտ չքավոր գյուղացիության ու բանվոր դասակարգի լուծելու գյուղացիական ու ազգային հարցերը[2]։

Անդրկովկասի բանվորական ու գյուղացիական զանգվածները երես էին դարձնում համաձայնողական կուսակցություններից և անցնում բոլշևիկների կողմը։ 1917 թվականի դեկտեմբերի 19-ին (1918 թ. հունվարի 1-ին) Թիֆլիսում կայացած բանվորական ու զինվորական դեպուտատների սովետների երկրամասային երկրորդ համագումարին մասնակցող Անդրկովկասի ու Հյուսիսային Կովկասի արդյունաբերական կենտրոնների պատվիրակները, անվստահություն հայտնելով Անդրկովկասյան կոմիսարիատի հենարանը հանդիսացող մենշևիկներին, էսեռներին ու ազգայնական մյուս կուսակցություններին, լքեցին համագումարը և հրավիրեցին Արևելյան Անդրկովկասի ու Հյուսիսային Կովկասի սովետների արտակարգ համագումար։ Այդ համագումարի բոլոր պատգամավորները միահամուռ կերպով դատապարտեցին ինչպես Անդրկովկասյան կոմիսարիատի, այնպես էլ Թիֆլիսի ու Քութայիսի նահանգների պաշտպանողական սովետների քաղաքականությունը։ Համագումարը ճանաչեց Ռուսաստանի ժողովրդական կոմիսարների սովետի իշխանությունը։ «Կովկասյան խոշորագույն պրոլետարական սովետները, Բաքվի, Գրոզնու, Եկատերինոդարի, Նովորոսիյսկի և այլն.—

1 «История гражданской войны в СССР», т. 3. М., 1958, стр. 88.
2 «Кавказский рабочий», 21. 1. 1918, № 15.

գրում էր «Պրավդան»,— ընթանում են բոլշևիզմի դրոշի ներքո և չեն ճանաչում Անդրկովկասյան կոմիսարիատը»[1]։

Մինչդեռ, Անդրկովկասի հակահեղափոխական ուժերը հնարավոր բոլոր միջոցները գործադրեցին երկրամասը հեղափոխական Ռուսաստանից անջատելու համար։ Այդ նպատակը հետապնդող առաջին արտաքին քաղաքական ակտը դա Անդրկովկասյան կոմիսարիատի ու կովկասյան ռազմաճակատի հակահեղափոխական հրամանատարության կողմից 1917 թվականի դեկտեմբերի 5-ին (18) Երզնկայում թուրքերի հետ սեպարատ հաշտության կնքումն էր[2]։ Դրանով իսկ Անդրկովկասյան կոմիսարիատը չէր ճանաչում Սովետական Ռուսաստանի և Կենտրոնական տերությունների միջև 1917 թվականի դեկտեմբերի 2-ին (15-ին) Բրեստ-Լիտովսկում կնքված զինադադարը, որի պայմանները տարածվում էին նաև կովկասյան ռազմաճակատի վրա։

Թուրքական բանակի գերագույն հրամանատարությունը համաձայնվեց կնքել Երզնկայի զինադադարը բացառապես Անդրկովկասի նկատմամբ իր զավթողական պլաններն իրականացնելու համար։ Թուրք նվաճողներին անհամեմատ ավելի հեշտ էր իրենց նպատակներն իրականացնել Անդրկովկասը Սովետական Ռուսաստանից անջատված լինելու պայմաններում։ Անդրկովկասյան կոմիսարիատը, հանդես գալով ինքնուրույն պետության անունից, դրանով իսկ օժանդակում էր թուրք զավթիչներին, որոնք օգտագործեցին այդ նախադեպը՝ կովկասյան հակահեղափոխական իշխանությունների ներկայացուցիչների հետ իրենց ունեցած հետագա բանակցությունների ժամանակ։ Այսպես, էնվեր-փաշան, դիմելով Անդրկովկասյան կոմիսարիատին հաշտության պայմանագիր կնքելու շուրջ բանակցություններ վարելու առաջարկով, հիմնվում էր կովկասյան հրամանատարության կողմից առանձնացված հանձնաժողովի նախագահ գեներալ Վիշինսկու հայտարարության վրա, որ վերջինս արել էր Երզնկայի զինադադարը կնքելու ժամանակ, այն է՝ կովկասյան բանակը բանակցությունների մեջ է մտնում «Կովկասյան անկախ կառավարության» անունից։

Երզնկայի զինադադարի համաձայն, ռազմական գործողությունները դադարեցվում էին կովկասյան ռազմաճակատի բոլոր հատվածներում. ստեղծվում էր դեմարկացիոն գիծ, որն անցնում էր կովկասյան բանակի առաջավոր գծի ու թուրքական զորքերի միջև։

1 «Правда», 5. 11. (231). 1918, № 17.

2 Զինադադարի մասին համաձայնագրի լրիվ տեքստը տե՛ս «Документы внешней политики СССР», т. I, М., 1957, д. № 30.

Այդ դեմարկացիոն գիծն օրինական էր համարվում մինչև վերջնական հաշտությունն կնքելը։ Ընդ որում վերապահություն էր արվում, որ դեմարկացիոն գծի խախտումը կողմերից որևէ մեկի կողմից, կարող է հետևել միայն ռազմական գործողությունների սկսվելուց 14 օր առաջ արված նախազգուշացումից հետո միայն[1]։

Երզնկայի զինադադարի համաձայն, Արևմտյան Հայաստանը շարունակում էր մնալ կովկասյան բանակի կողմից օկուպացված գոտում։

Սովետական կառավարության դիրքը Արևմտահայաստանի նկատմամբ, որտեղից նա պատրաստվում էր դուրս բերել իր զորքերը՝ վերջնական հաշտություն կնքելուց հետո, երևում էր ՌՍՖՍՌ ժողովրդական կոմիսարների սովետի կողմից 1917 թվականի դեկտեմբերի 29-ին (1918 թ. հունվարի 11-ին) ընդունված «Թուրքահայաստանի» մասին դեկրետից, որտեղ ասված էր, որ սովետական կառավարությունը «պաշտպանում է Ռուսաստանի կողմից օկուպացված «Թուրքահայաստանի» հայերի ազատ ինքնորոշման՝ ընդհուպ մինչև անկախ պետություն ստեղծելու իրավունքը»։ Հիշյալ դեկրետն իրականացնելու նպատակով Ռուսաստանի ժողկոմսովետը անհրաժեշտ էր համարում զորքերի դուրս բերումը «Թուրքահայաստանի» սահմաններից և դրա փոխարեն հայկական ժողովրդական միլիցիայի ստեղծումը՝ տեղի ազգաբնակչության անձնական ու գույքային անվտանգությունն ապահովելու համար։ Բացի դրանից, ժողկոմսովետը պահանջում էր, որ հնարավորություն ստեղծվի գաղթական ու վտարանդի հայերին, ինչպես և պատերազմի տարիներին թուրքական իշխանությունների կողմից դեպի երկրի խորքը քշված հայ ազգաբնակչությանը վերադառնալ «Թուրքահայաստան»։ Վերջապես այդ դեկրետը նախատեսում էր «Թուրքահայաստանում ժամանակավոր ժողովրդական կառավարության ստեղծումը՝ դեմոկրատական հիմունքներով ընտրված հայ ժողովրդի պատգամավորների խորհրդի ձևով։

Ռուսաստանի ժողկոմսովետը կովկասյան գործերի արտակարգ կոմիսար Ստեփան Շահումյանին հանձնարարեց ամեն կերպ աջակցել գաղթական հայերի և պատերազմի տարիներին բռնի կերպով քշված հայերի վերադարձը «Թուրքահայաստան»։

Այդ դեկրետով ռուսական զորքերի էվակուացիան «Թուրքահայաստանից» պետք է կատարվեր միայն Ստեփան Շահումյանի կող-

1 «Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии», Тифлис, 1919, стр 19.

մից կազմված խառը հանձնաժողովի ցուցումից հետո[1]։ «Թուրքա-Հայաստանի» մասին դեկրետի միջոցով սովետական կառավարությունը ձգտում էր կանխել այդ տերիտորիայի գրավումը թուրքական զավթիչների կողմից։ Սակայն այդ դեկրետի իրականացմանը խանգարեց անդրկովկասյան կոմիսարիատի դավաճանական, սեպարատիստական քաղաքականությունը և նրան ենթարկված կովկասյան բանակի հակահեղափոխական հրամանատարությունը։

Հայտարարելով բանակի զորացման մասին և զենքի տակ թողնելով միայն ազգային զորամասերը, Անդրկովկասյան կոմիսարիատը փաստորեն ձեռնամուխ եղավ թուրքա-կովկասյան ռազմաճակատի վերացմանը։ Դրանով իսկ անդրկովկասյան հակահեղափոխական ուժերը ձգտում էին հնարավորին չափ կարճ ժամկետում ազատվել հեղափոխականորեն տրամադրված բանակից՝ բոլորովին հաշվի չառնելով նախքան վերջնական հաշտություն կնքելը ռազմաճակատը պահելու անհրաժեշտությունը։

«Ռուսական բանակը, որն ավելի ու ավելի էր ուժեղացնում բանվորա-գյուղացիական հեղափոխության լոզունգները,— ասվում էր Հայաստանի կոմպարտիայի Կենտկոմի զեկուցման մեջ,— մահացու վտանգ էր ներկայացնում Անդրկովկասի տիրապետող կոալիցիայի համար»[2]։

Հոկտեմբերյան հեղափոխության առաջին իսկ օրերից կովկասյան բանակի զինվորները ճանաչեցին սովետական իշխանությունը, և Անդրկովկասը Ռուսաստանից անջատելուն դեմ դուրս եկան։

Այսպես, 1917 թվականի նոյեմբերի 23-ին Ալեքսանդրապոլի կայազորի զինվորները 39-րդ հետևակային դիվիզիայի զինվորների հետ մեկտեղ, շուրջ 5000 մարդ, հավաքվելով ցույցի, միաձայն ընդունեցին հետևյալ որոշումը. «Միակ իշխանությունը, որը մեզ կայուն խաղաղություն, հող և ազատություն է երաշխավորում, դա սովետների իշխանությունն է ի դեմս նոր բանվորա-գյուղացիական կառավարության։ Այդ իշխանությունը սաբոտաժի ենթարկելու կամ տապալելու ամեն մի փորձ, ում կողմից էլ դա լինի, կհանդիպի մեր վճռական հակահարվածին»։ Ցույցի մասնակիցներն իրենց ելույթներում անարգանքի սյունին գամեցին Անդրկովկասյան կոմիսարիատին, որը ձգտում էր քայքայել ճակատը և այն անջատել հեղափոխական բանվորա-գյուղացիական իշխանությունից։ Որոշման մեջ ընդգծվում էր, որ Կովկասում չի կարող ստեղծվել այլ իշխանություն, բացի սովետական իշխանությունից[3]։

1 «Документы внешней политики СССР», т. I, М., 1957, д. № 43.
2 ЦГАОР, ф. 1318 (Наркомнац), д. 32, л. 25.
3 «Кавказский рабочий», 30. XI. 1917, № 212.

Նոյեմբերի 25-ին Սարիղամիշում կայացած Ելիզավետպոլի գնդի 156-րդ վաշտի ընդհանուր ժողովը իր որոշման մեջ ճանաչում էր որպես օրինական, արդարացի և աշխատավոր ժողովրդի շահերին համապատասխանող՝ բանվորա-գյուղացիական կառավարությունը։ Ժողովը պահանջում էր անհապաղ վերընտրել Կովկասյան երկրամասային սովետի հակահեղափոխական կազմը, որտեղ տիրապետող դիրք էին գրավում բուրժուազիայի գործակալները։ Զինվորները միահամուռ կերպով հայտարարեցին. «Զենք ճանաչում Անդրկովկասյան կոմիսարիատ կոչված Անդրկովկասի ժամանակավոր անջատ կառավարությունը»[1]։

Սարիղամիշի կայազորի զինվորները 1917 թվականի դեկտեմբերի 1-ի ժողովում որոշում ընդունեցին մինչև վերջը աջակցություն ցույց տալ Ռուսաստանի սովետական իշխանությանը, որը կանգնած է կեղեքված բանվորների ու գյուղացիների շահերի պաշտպանության դիրքերում, կոչ էին անում տապալել անդրկովկասյան հակահեղափոխական իշխանությունները և երկրամասում հաստատել սովետական կարգեր[2]։

Կովկասյան բանակի հրամանատար գեներալ Օդիշելիձեն ռազմաճակատի գլխավոր հրամանատար Պրժևալսկուն հաղորդում էր, որ կովկասյան 4-րդ և 6-րդ կորպուսների, ինչպես և Տրապիզոնի ամրացված շրջանի զինվորները բոլշևիկյան տրամադրություններով են համակված։ Հեղափոխական խմորումներ առաջ եկան նաև 4-րդ Թուրքեստանյան կորպուսի զորամասերում[3]։ Իր զեկուցագրում կովկասյան ռազմաճակատի Կարինի հատվածի հրամանատար գեներալ Էնգելը նշում էր, որ «զորքերում գերակշռում են բոլշևիկները»[4]։ Կովկասյան բանակի զինվորները, որոնք ղեկավարվում էին բոլշևիկների կողմից, գնալով ավելի վճռականորեն էին հանդես գալիս հակահեղափոխական անդրկովկասյան կոմիսարիատի դեմ։ Նման տրամադրություններն իրենց արտահայտությունը գտան նաև 1917 թվականի դեկտեմբերին Թիֆլիսում գումարված կովկասյան բանակի Երկրային 2-րդ համագումարում։ Բոլշևիկներն այնտեղ ներկայացված էին ամենամեծ ֆրակցիայով, որը հաշվում էր 160 պատգամավոր։ Մենշևիկյան, դաշնակցական ու աջ-էսեռական պատգամավորները, Գեգեչկորիի գլխավորությամբ, բոլոր միջոցները գործադրեցին բոլշևիկներին ետին պլան մղելու հա-

1 «Кавказский рабочий», 30. XI. 1917, № 212.
2 Նույն տեղում, 21 դեկտեմբերի 1917, № 226։
3 «История гражданской войны», т. III, стр. 89.
4 «Материалы секретариата главной редакции «История гражданской войны», ф. 2, д. 11, л. 37.

մար։ «Սակայն այս բոլոր անվայել միջոցները,— գրում էր Ստ. Շահումյանը,— որոնց միշտ էլ դիմում են մեռնող պարտիաները, պաշտպանողական-համաձայնողական բլոկին չփրկեցին ձախողումից։ Համագումարը այնուամենայնիվ անցավ բոլշևիկների հաղթանակի նշանաբանով... Ընդունվեցին նույնպես բոլշևիկների բանաձևերը ռազմաճակատի թուրք-հայկական հարցի... մասին»[1]։ Համագումարն արտահայտվեց Ռուսաստանի սովետական իշխանությունը ճանաչելու և ժողովրդական կոմիսարների սովետի բոլոր դեկրետներն իրականացնելու օգտին։ Համագումարում ընտրվեց նոր Երկրային սովետ, որտեղ մեծամասնությունը պատկանում էր բոլշևիկներին և ձախ էսեռներին՝ բոլշևիկ Գ. Կորգանովի գլխավորությամբ։

Կովկասյան ռազմաճակատի զինվորական զանգվածների վրա բոլշևիկների ազդեցության ուժեղացումը, որն ակներև դարձավ հիշյալ համագումարում, մեծ երկյուղ պատճառեց Անդրկովկասյան կոմիսարիատին ու բանակի հրամանատարությանը։ Կովկասյան բանակի հեղափոխականորեն տրամադրված զինվորների կողմից իրենց իշխանությանը սպառնացող վտանգից խուսափելու միակ ելքը անդրկովկասյան հակահեղափոխական ուժերը տեսնում էին բանակն արագ զորացրելու մեջ։ Կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատար գեներալ Պրժևալսկին «ճակատում սննդամթերքի հարցերում ստեղծված ծայրահեղորեն դժվարին վիճակի» պատրվակով տակավին 1917 թվականի դեկտեմբերի 1-ին հրաման տվեց՝ զորացրել հինգ տարբեր տարիների զորացման ենթակա զինվորներին[2]։ Այդ մասնակի զորացրումը մեծ չափով կազմալուծեց կովկասյան բանակը։ Ուրիշ տարիքի զինվորները նույնպես ձգտում էին ժամ առաջ լքել ճակատը և տուն վերադառնալ։ Բուրժուական ու համաձայնողական կուսակցությունների կողմից գլխավորվող Անդրկովկասյան կոմիսարիատն ու ազգային խորհուրդները օրհասական այդ պահին 4 տարվա պատերազմից հյուծված զինվորական զանգվածներին կոչ էին անում թողնել ամեն ինչ և վերադառնալ տուն՝ ազգային զորամասեր կազմելու համար։ Այդ ծուղակն ընկան շատ զինվորներ, որոնք տենչում էին վերադառնալ տուն և անցնել խաղաղ աշխատանքի։ Դրա հետևանքով սկսվեց զինվորների զանգվածային փախուստը ռազմաճակատից, որը հանգեցրեց բանակի քայքայմանը։ Զորքերի մեջ երկպառակություն առաջ եկավ, որը երբեմն բացահայտ թշնամանքի բնույթ էր ընդունում։ Զինվորներն ինքնագլուխ կերպով բաժանում էին իրար մեջ ռազմական գույքը։ Այս բոլորն ուղեկցվում էր ռուսական զինվորների մեկուսացմամբ։ Անդրկովկասյան կոմիսարիատի կողմից անցկացվող բանակի «ազգայնացման» դավաճանական կուրսը կործանարար հետևանքներ ունեցավ։

Բնութագրելով կովկասյան բանակի հրամանատարության և Անդրկովկասյան կոմիսարիատի գործողությունները, Ստ. Շահումյանը գրում էր. «Գեներալ Պրժևալսկու հրամանը, որը գրված է Անդրկովկասյան կոմիսարիատի թելադրանքով, նացիոնալիստ-սեպարատիստների թելադրանքով, ոչ միայն մերկացնում է ճակատը արտաքին թշնամու առջև, այլև աննախադեպ անարխիա է ստեղծվում երկրի ներսում։

Ռուսական միասնական զորքի ցրումը և ազգային կորպուսների ստեղծումը հարվածում է ոչ միայն ռուսական հեղափոխությանը, այլև թղթախաղի վրա է դնում կովկասյան ժողովուրդների գոյությունն իսկ»[1]։

Կովկասյան բանակի հեղափոխական երկրային սովետը բանակի քայքայման ու ճակատի մերկացման դեմ դուրս եկավ։ 1917 թվականի դեկտեմբերի 28-ին կովկասյան բանակի բոլոր զինվորներին և զինվորական բոլոր սովետներին ու կոմիտեներին ուղղված իր կոչում նա գրում էր. «Զորքերի կամայական լուծումով, զորացրումով ու գնդերի ազգայնացումով նրանք (մենշևիկները, աջ էսեռները, դաշնակները, մուսավաթականները— Ե. Ս.) լիակատար անկազմակերպվածություն մտցրին բանակի շարքերում»[2]։

Ճակատից սկսեցին ետ կանչել ուկրաինացիներին, լեհերին, հայերին, վրացիներին՝ ազգային գնդեր կազմավորելու համար։ Բոլոր ռուս զինվորներին առաջարկվեց տուն վերադառնալ։ Այն զինվորները, որոնք չէին ցանկանում ենթարկվել հակահեղափոխական հրամանատարության և Անդրկովկասյան կոմիսարիատի հրամաններին, բռնի ուժով զինաթափվում էին։ Այդ ձևով զինաթափվեցին Թիֆլիսի օդաչուների դպրոցի ունկնդիրները, իսկ դաշնակների կողմից գրավվեց Ալեքսանդրապոլի հրետանային պահեստը։ Անհաջող փորձեր արվեցին նաև զինաթափելու Ղարաքիլիսայի մարտկոցները և Կարսի հրետանին։ «Նացիոնալիզմը Կովկասում և ճակատի մերկացումը» հոդվածում Ստ. Շահումյանը անարգանքի սյունին էր գամում վրացական մենշևիկներին, դաշնակներին, ադրբեջանական մուսավաթականներին՝ Անդրկովկասը Սովետական

1 Ստ. Շահումյան, Երկեր, հ. 3, էջ 46—47։
2 ЦГАОР Груз. ССР, ф. 41, д. 45, л. 79.

1 «Бакинский рабочий», 24. XII. 1917, № 110.
2 Նույն տեղում, 5 հունվարի 1918, № 3։

Ռուսաստանից անջատելու նրանց քաղաքականության, անդրկով կասյան ժողովուրդներին ըստ առանձին ազգությունների բաժանելու և ազգային զորամասեր կազմելու համար։

«Կովկասյան նացիոնալիզմի ամենացավալի հետևանքը ռազմաճակատի կազմալուծումն է,— գրում էր Ստ. Շահումյանը 1917 թվականի դեկտեմբերին։— Բնական է, որ քանի դեռ հաշտություն չի կնքվել, զորքերը պետք է պաշտպանեն ռազմաճակատը, սակայն կովկասյան նացիոնալիստների ստեղծած մթնոլորտում կա՞ն արդյոք ուժեր, որոնք կարողանային ռուս զորամասերին իրենց դիրքերում պահել»[1]։

Ստեփան Շահումյանը կանխագուշակում էր, որ «Թուրքահայաստանից» կովկասյան բանակի հեռանալը կարող էր ողբերգական հետևանքներ ունենալ հայ ազգաբնակչության համար։ Ուստի նա զինվորներին կոչ էր անում մնալ իրենց դիրքերում և ճակատը պահել մինչև վերջնական հաշտություն կնքելը։ «...մեր բանակը,— գրում էր Շահումյանը,— չպետք է ենթարկվի նացիոնալիստների պրովոկացիային։ Մեր գիտակից ընկեր զինվորները պետք է բացատրեն զորքերին, որ ժողովրդական մասսաները, որ գյուղացիական չքավորությունը, որին նրանք տեսնում են իրենց շուրջը, մեղք չունեն Անդրկովկասյան կոմիսարիատի պարագլուխների դավաճանության մեջ։ Գյուղացիները՝ հայերը, քրդերը, մուսուլմանները, որոնք ապրում են այդ երկրում, և նրանք, որոնք կհանդիպեն ետ քաշվող զորամասերի անցման ճանապարհին, նույնպիսի եղբայրական վերաբերմունքի են արժանի մեր կողմից, ինչպես և ռուս գյուղացիները, ձեր հայրերը, ձեր կանայք ու քույրերը։ Մենք մերկացնելու ենք կովկասյան պաշտպանողականների նացիոնալիստական ու կոնտրռևոլյուցիոն քաղաքականությունը, մենք նրանց նշավակելու ենք այն արհամարհանքով, որին նրանք արժանի են, բայց չպետք է թույլ տալ, որ նրանց փոխարեն տուժեն ժողովրդական մասսաներն այնտեղ— գրավված վայրերում, և այստեղ՝ Անդրկովկասում»[2]։

Անդրկովկասի բոլշևիկները արտակարգ բոլոր միջոցները ձեռնարկում էին, որպեսզի կովկասյան բանակի զինվորներին համոզեին չլքել ճակատը։ Բոլշևիկյան կոչերից մեկում ընդգծվում էր, որ անհրաժեշտ է պահպանել, չմասնատել բանակը մինչև սովետական իշխանության վերջնական ամրապնդումը։ Ազգային զորամասերի կազմավորումն այդ կոչում գնահատվում էր որպես դավաճանություն, որովհետև նրանք հակառևոլյուցիայի ձեռքում զենք էին դառնալու՝ ազգային թշնամանքը բորբոքելու համար։ Հիշյալ կոչում պահանջվում էր սերտ կապեր հաստատել կովկասյան բանակի և Պետրոգրադի սովետական կառավարության միջև[1]։

Կորգանովի կողմից գլխավորվող կովկասյան բանակի ռազմառևոլյուցիոն կոմիտեն զորքերին բացատրում էր, որ չպետք է ենթարկվել ճակատը լքելու վերաբերյալ դավաճանական հրամանին։ Ռազմաճակատում քաղաքական աշխատանք ծավալելու նպատակով կազմակերպվեցին ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեներ. Արևելա-պարսկական շրջանինը՝ Էնզելի քաղաքում, Ուրմիայինը՝ Ջուլֆայում, Վանինը՝ Շահթախթի կայարանում, Կարին-Երզնկայի շրջանինը՝ Սարիղամիշում, Տրապիզոնի շրջանինը՝ Տրապիզոնում։

«Բոլոր զորամասերը և խոշոր ռազմական միավորումները, ինչպես և կայազորները,— ասվում էր կովկասյան բանակի ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեի 1917 թվականի դեկտեմբերի 29-ի հրամանում,— հիմնում են համապատասխան անուններ կրող ռազմառևոլյուցիոն կոմիտեներ։ Ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեներին է հանձնարարվում վարելու ամբողջ ընթացիկ քաղաքականությունը զորամասերում և ռազմական միավորումներում։

Կովկասյան բանակի ռազմա-ռևոլյուցիոն բարձրագույն օրգանն է հանդիսանում Հեղափոխական երկրամասային սովետը, իսկ նրա կատարողական օրգանը՝ կովկասյան բանակի ռազմառևոլյուցիոն կոմիտեն»[2]։

Չնայած բոլշևիկների կողմից ընդունված բոլոր եռանդուն միջոցառումներին, նրանց չհաջողվեց կանխել ռազմաճակատի քայքայումը, որի ամբողջ մեղքն ընկնում էր Անդրկովկասյան կոմիսարիատի ու հակահեղափոխական հրամանատարության վրա։

Վրացական մենշևիկների պարագլուխներից մեկը՝ Ռամիշվիլին, իր հրապարակային ելույթներից մեկում՝ 1918 թվականի մարտի 1-ին լկտիորեն պնդում էր, որ իբր ճակատի մերկացման մեջ մեղավոր են բոլշևիկները[3]։

Համառուսաստանյան Կենտգործկոմի նիստում 1918 թվականի փետրվարի 23-ին կարդացած իր զեկուցման մեջ Լենինը, բնութագրելով բանակի ծանր դրությունը, նշում էր հետևյալը. «...Թուր-

1 Ստ. Շահումյան, Երկեր, հ. 3, էջ 34։

2 Նույն տեղում, էջ 38—39։

1 «Кавказский рабочий», 30. XI. 1917, № 212.

2 Архив Азерб. филиала ИМЛ при ЦК КПСС, ф. 276, оп. 3, д. 61, л. 18.

3 «Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии», № 45.

ժուական մամուլի և նրան օգնող կամ սովետական իշխանությանը թշնամի պարտիաների մեջ վրա բարդացած այն զրպարտությունները, թե մենք, բոլշևիկներս, իբրև թե քայքայում էինք զորքը,— անհեթեթություն են»[1]։ Իբրև ապացույց, Լենինը մեջ է բերում զորքերի մեջ տարածված բոլշևիկյան կոչը, որտեղ ասվում էր. «Ոչ մի բունտ, մենք դեպի այդ չենք կոչում, մենք հրավիրում ենք ձեզ դեպի կազմակերպված քաղաքական գործողություններ. ձգտեցե՛ք, որքան կարելի է, ավելի կազմակերպված պահել ձեզ»[2]։

«Այն ամենը, ինչ որ հնարավոր էր անել,— ասում էր այնուհետև Լենինը,— այդ ցսված, անշափ հոգնած բանակը պահելու համար, այն ամենը, ինչ որ հնարավոր էր անել նրան ավելի ուժեղ դարձնելու համար, արվեց»[3]։

Մերկացնելով հակահեղափոխական կուսակցությունների ու Անդրկովկասյան կոմիսարիատի դավաճանական վարքագիծը, Ստ. Շահումյանը գրում էր. «Դուք գրավել եք այնպիսի դիրք, որը ձեզ կխորտակի. դա անխուսափելիորեն կհանգեցնի ռազմաճակատը բացելուն։ Բանակը,— ասում էինք մենք,— ձեր նացիոնալիստական քաղաքականությունից դժգոհ՝ տարերայնորեն, անկազմակերպ կերպով կհորդի ռազմաճակատից և կորբի ու կհեղեղի ձեզ։ Այժմ այդ բոլորը արդարացավ»[4]։

Երբ զորքերի զանգվածային հեռացումը ճակատից իրականություն դարձավ, հակահեղափոխական կուսակցություններն ու Անդրկովկասյան կոմիսարիատը սկսեցին կեղծ լուրեր տարածել, թե իբր բոլշևիկները իրենց ագիտացիայով ռուսական զորքերին գրգռում են տեղական ազգաբնակչության դեմ, իսկ զինվորների կողմից ճակատի լքումը բոլշևիկների քայքայիչ գործունեության հետևանքն է։ «Բանակին գրգռում և ռազմաճակատից շարժում են ոչ թե մեր «ագիտացիան»,— պատասխանում էր զրպարտիչներին Ստ. Շահումյանը,— ոչ թե մեր խոսքերը ձեր նացիոնալիզմի մասին, այլ ձեր նացիոնալիստական գործերը»[5]։ Բնութագրելով Անդրկովկասյան կոմիսարիատի գործունեությունը, նա ընդգծում էր. «Այդ քաղաքականությունը և այդ դավաճանական վերաբերմունքը նպաստեցին ռազմաճակատի մերկացմանը, ռուսաստանյան ռեսպուբլիկայի՝ ռազմաճակատում գտնվող միլիարդանոց հարստության կողոպուտին և է՛լ ավելի ծանր կացություն ստեղծեցին Կովկասում»։

1 Լենին, Երկեր, հ. 27, էջ 32—33։
2 Նույն տեղում, էջ 33։
3 Նույն տեղում։
4 Ստ. Շահումյան, Երկեր, հ. 3, էջ 34։
5 Նույն տեղում, էջ 36։

«Զինվորի շինել հագած, զինված, ռևոլյուցիային նվիրված կես միլիոն ռուս գյուղացիներ, որոնք կարող էին անգնահատելի ծառայություններ մատուցել կովկասյան գյուղացիությանն ու պրոլետարիատին կոնտրռևոլյուցիոն տարրերի դեմ նրանց մղած պայքարում, հայտարարվեցին ավելորդ «եկվորներ», որոնց աշխատում էին որքան կարելի է շուտ հեռացնել Կովկասից[1]։

Նույնիսկ հայկական բուրժուական առանձին թերթեր, նշելով ճակատի մերկացման աղետալի հետևանքները Անդրկովկասի համար, ստիպված էին խոստովանել, որ ստեղծված դրության պատասխանատվությունը ընկնում է Անդրկովկասյան կոմիսարիատի վրա։ Այսպես, հայ լիբերալների հին օրգաններից մեկը՝ «Մշակ» թերթը 1917 թվականի դեկտեմբերի 17-ի առաջնորդողում, որը վերնագրված էր «Գործել և ոչ թե հուսահատվել», գրում էր. «Դժբախտաբար, Անդրկովկասում գոյություն չունի հեղինակավոր, գործուն, եռանդուն, երկրի հանդեպ իր պատասխանատվությունը գիտակցող իշխանություն։ Կա միայն նրա ստվերը։ Այդ իշխանությունը, որը միակողմանի քաղաքականություն է վարում, ընդունակ չէ հասկանալու մոմենտի կարիքները և զբաղվելու երկրի սոցիալական վերափոխման հարցերով։ Ճակատի մերկացման մեջ ոչ փոքր չափով պատասխանատու է նաև Անդրկովկասյան կոմիսարիատը»։

Անդրկովկասյան կոմիսարիատի ու կովկասյան բանակի հրամանատարության հանցավոր գործողությունները հանգեցրին այն բանին, որ զորամասերի քայքայումն ու բարոյալքումը շարունակվում էին ավելի արագ տեմպերով։ «Միայն սովետական իշխանությունը,— նշում էր ադրբեջանական բոլշևիկների օրգան «Բակինսկի ռաբոչի» թերթը,— կարող է դադարեցնել կովկասյան ռազմաճակատի մերկացումը, որը լայն չափեր է ընդունել Անդրկովկասյան կոմիսարիատի հանդեպ կովկասյան բանակի անվստահության հետևանքով»[2]։

Ճակատը լքող զորքերի փոխարեն Անդրկովկասյան կոմիսարիատը խոստանում էր ազգային զորամասեր դուրս բերել։ Սակայն նրանց կազմակերպումը չափազանց դանդաղ էր ընթանում։ Դա բացատրվում էր անդրկովկասյան իշխանությունների հակահեղափոխական քաղաքականությամբ, որը մեծ դժգոհություն էր առաջ բերել երկրամասի ժողովրդական լայն զանգվածների մեջ։

Ահա թե ինչ էր ասվում այդ կապակցությամբ զինվորական դեպուտատների սովետի գործադիր կոմիտեի անդամի նամակում,

1 Ստ. Շահումյան, Երկեր, հ. 3, էջ 109։
2 «Бакинский рабочий». 30. XII. 1917, № 116.

որն ուղղված էր ազգությունների ժողովրդական կոմիսարիատին. «Սկսեցին ստեղծել ազգային զորամասեր, բանակ գնացողների թիվը քիչ էր, ուստի և սկսվեց հարկադիր զորահավաքը։ Ժամանակին չներկայացող մարդկանց ձերբակալում էին և ուղարկում համապատասխան ազգային զորամասերը»[1]։

Հրամանատարները հաճախ էին հաղորդում այն մասին, որ զինվորները հրաժարվում են մտնել ազգային զորամասերի մեջ։ Այսպես, 4-րդ կորպուսի հրամանատարը 1917 թվականի դեկտեմբերի 25-ին կովկասյան ռազմաճակատի շտաբին հեռագրում էր հետևյալը. «Հայերը, բոլշևիկների ազդեցության տակ, հրաժարվում են գնալ հայկական ստորաբաժանումները։ Հրամանատարական կազմն ի վիճակի չէ պայքարելու դրա դեմ, և հեղինակությամբ չի օգտվում։ Նկատելի է բացորոշ արհամարհական վերաբերմունք դեպի սպաները»[2]։

Համադանի կայազորի զինվորները 1917 թվականի դեկտեմբերի 8-ին կայացած ցույցի ժամանակ միաձայն որոշեցին չմտնել նոր կազմակերպվող ազգային զորամասերի մեջ։

«Մենք, վրացիներս, հայերս, օսերս և իմերեթցիներս՝ Համադանի կայազորի զինվորներս,— ասվում էր ընդունված որոշման մեջ,— երեք հարյուր հոգով հավաքվելով ցույցի և քննարկելով ազգային գնդեր ստեղծելու վերաբերյալ գեներալ Պրժևալսկու հեռագիրը, միաձայն որոշեցինք բողոքել ազգային գնդեր կազմավորելու և մարդկանց ըստ ազգությունների բաժանելու դեմ։ Մենք ցանկանում ենք միասին լինել ռուսների հետ, ինչպես դա առաջներում էր, ուստի և չենք ենթարկվում գեներալ Պրժևալսկու հրամանին, և չենք ճանաչում բուրժուական անդրկովկասյան կոմիսարիատը, որը մեզ բաժանում է ազատ Ռուսաստանից։ Մենք ճանաչում ենք միայն Ժողովրդական կոմիսարների սովետի և բանվորական, զինվորական ու գյուղացիական սովետների իշխանությունը...

Խնդրում ենք բոլոր վրացի, հայ, իմերեթցի, օս ընկերներին միանալ մեր կոչին»[3]։

Մերկացնելով ճակատը և քայքայելով բանակը, Անդրկովկասյան կոմիսարիատը միաժամանակ ձգտում էր զինաթափել հեռացող զինվորներին, որպեսզի այդ ճանապարհով կարողանա զինել նորաստեղծ ազգային զորամասերը։ Կովկասյան բանակի ռազմահեղափոխական կոմիտեն այն զորամասերին, որոնք մեկնում էին գերազանցապես Կուբանի ու Թերեքի մարզերը՝ Հյուսիսային Կովկասում հակահեղափոխական ուժերի դեմ պայքարելու համար, կոչ էր անում չհանձնել զենքը և ռազմամթերքը։ Հեռանալով ռազմաճակատից, ռուսական զորքերը իրենց հետ տանում էին մարտական զենքեր, որի կարիքն այնքան զգում էր երիտասարդ Սովետական Ռուսաստանը, որն անհավասար պայքար էր մղում ներքին սպիտակգվարդիականների ու արտաքին ինտերվենցիայի դեմ։ Կովկասյան բանակի հրամանատար գեներալ Օդիշելիձեն հեռագրում էր Պրժևալսկուն, որ բանակում «փսիխոզի նոր ձև է երևան եկել՝ բոլոր ոչ շարքային զորամասերն ու ջոկատները միահամուռ կերպով զենք են պահանջում։ Դա հիմնավորվում է այն բանով, որ Անդրկովկասյան կառավարությունն անջատվել է Ռուսաստանից և քանի որ զենքը ռուսական է, ուստի այն պետք է փոխադրել Ռուսաստան»[1]։

Բոլշևիկորեն տրամադրված զինվորներին զենքը ձեռքին Սովետական Ռուսաստան վերադառնալու հնարավորությունից զրկելու և այդ զենքով նոր կազմակերպված ազգային զորամասերը զինելու նպատակով, Անդրկովկասի կոմիսարիատը գաղտնի որոշում էր ընդունել՝ հանձնարարել Գյանջայի մուսուլմանական ազգային կոմիտեին զինաթափ անել թուրքական ռազմաճակատից վերադարձող ռուսական զինվորական էշելոնները։ Համաձայն այդ որոշման, և վրացական մենշևիկների պարագլուխ Նոյ Ժորդանիայի գաղտնի ցուցումով Գյանջայի մուսուլմանական ազգային կոմիտեն, որն ամբողջովին բաղկացած էր բեգերից ու խաներից, բացահայտորեն հավաքեց մոտ 10 հազար մարդիկ, զինեց նրանց և դուրս հանեց կուտակված ռուսական զինվորների էշելոնների դեմ՝ Շամխոր, Դալլյար, Խաչմաս, Աղստաֆա կայարաններում։

Մուսավաթական հորդաներին (ղեկավարներն էին Ասլան բեգ Սաֆիքյուրդինսկին, դոկտոր Խադատ բեգ Ռուստամբեգովը) օգնության հասավ Անդրկովկասի կոմիսարիատի կողմից ուղարկված զրահապատ գնացքը՝ Ափխազավայի գլխավորությամբ։ 1920 թվականի հունվարի 9-ին նրանք անսպասելիորեն երկաթուղու ուղղությամբ հարձակվեցին ռուսական զորքերի էշելոնների վրա և գաղանաբար գնդակահարեցին Շամխոր կայարանում վագոններում նստած հազարավոր զինվորների։ Երկաթուղագիծը ծածկվել էր զինվորների դիակներով։ Էշելոնների ամբողջ զինամթերքը և զենքը

1 ЦГАОР, ф. 1318, д. 40, л. 50.

2 ՍՄԿՊ Կենտկոմին կից Մլ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 670, թ. 1։

3 «Кавказский рабочий», 21. I. 1918, № 15.

1 ЦГАОР Груз. ССР, ф. 9, д. 9, л. 283.

մուսավաթական հորդաները խլեցին։ Այդ արյունալի ընդհարումները կրկնվեցին Թիֆլիս, Գյանջա տանող երկաթուղագծի այն կայարաններում, որտեղ կուտակվել էին ռուսական զինվորների էշելոնները և շարունակվեցին մինչև հունվարի 12-ը։

«Մեծագույն ոճրագործություն է կատարվել ռուս բանակի դեմ»[1],— գրել է այդ օրերին Ստ. Շահումյանը։

Անդրկովկասի կոմիսարիատը և ազգայնական կուսակցությունները Շամխորի արյունալի դեպքերով լրիվ մերկացրին իրենց։ Ստ. Շահումյանը իր «Ճշմարտությունը Ելիզավետպոլի իրադարձությունների մասին» հոդվածում ուղղակի նշում է, որ «Ելիզավետպոլի դեպքերի մեղավորների թվում նախ և առաջ պետք է անվանվի... նոյ Նիկոլաևիչ Ժորդանիան։ Երկրային Կենտրոնի պրեզիդիումը նրա նախագահությամբ որոշեց՝ զինաթափ անել մեկնող էշելոնները ու նրանց հաշվին զինել ազգային գնդերը։ Նրա ստորագրությամբ է հեռագիր ուղարկվել Ելիզավետպոլի ու մուսուլմանական ազգային կոմիտեին Շամխորի մոտ կուտակված էշելոնները զինաթափ անելու մասին։ Նա, Նոյ Ժորդանիան դելեգացիաներ էր ուղարկում Թիֆլիսից՝ էշելոնները զինաթափ անելու նույն հանձնարարությամբ»[2]։ «Այն մեղադրանքը, որ մենք նետում ենք Ժորդանիայի երեսին,— շարունակում է Շահումյանը,— տարածվում է մենշևիկների ամբողջ պարտիայի, Երկրային Կենտրոնի, Անդրկովկասյան կոմիսարիատի վրա, ուր պարոններ Ջիբենկելին ու Գեգեչկորին՝ սերտ և բացահայտ բլոկ կազմած մուսուլման բեգերի ու խաների հետ, ամեն ինչ անում են, որպեսզի կործանեն ռևոլյուցիան»[3]։

Վրացական մենշևիկների, մուսավաթականների ու դաշնակցականների կողմից անցկացվող հակահեղափոխական դավաճանական գիծը ջուր էր լցնում երիտթուրքական շովինիստների ջրաղացին և Անդրկովկասը դնում թուրք զաթիվչների սպառնալիքի տակ։

***

Օսմանյան կայսրության կառավարող շրջանները որոշեցին օգտվել կովկասյան ռազմաճակատում և ամբողջ Անդրկովկասում ստեղծված իրադրությունից՝ թուրքերի կողմից 1914—15 թվականների ձմռանը ձախողված արշավանքը վերսկսելու համար։

1 Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, Երևան, 1948 թ., էջ 545։
2 Նույն տեղում, էջ 538։
3 Նույն տեղում, էջ 541։

Անդրկովկասում 1918 թվականի թուրքական ինտերվենցիայի մասնակիցներից մեկը՝ գնդապետ Բերքուքը, նշում է, որ այդ արշավանքի նպատակն էր գրավել ողջ Կովկասը, Իրանը և Միջին Ասիան։ Բացի դրանից, նրա վկայությամբ, Անդրկովկաս բարեհաջող ներխուժման դեպքում երիտթուրքական դեկավարները հույս ունեին խուսափել ժողովրդական ցասման պոռթկումից երկրի ներսում, ինչպես և վերականգնել իրենց կորցրած հեղինակությունը, «գեշնչելով բանակին ու ժողովրդին։ Նա գրում է. «Համաշխարհային պատերազմի ժամանակ մենք լայնածավալ ու արժեքավոր տերիտորիաներ կորցրեցինք։ Ինչպես այդ կորուստների, այնպես էլ հոգնածության ու անտարբերության հետևանքով բոլորին համակել էր անհոգությունն ու հուսահատությունը։ Նման դրությունն այն աստիճան վտանգավոր ու աղետալի էր, որ դա կարող էր հանգեցնել մեր ուժերի կատարյալ քայքայմանն ու կործանմանը։ Կովկասյան արշավանքը մասնակիորեն թեթևացնում էր այդ իրավիճակը։ Բանակը նորից ոգևորություն ապրեց։ Բոլորի մոտ երևացին իրենց ազգային իղձերն իրականացնելու հույսեր»[1]։

Բոլշևիկների հանդեպ տածած կույր ատելությունը և Ռուսաստանում սոցիալիստական հեղափոխության հաջողությունների նկատմամբ ունեցած վախը երիտթուրքական վերնախավին նույնպես մղում էին դեպի հանցավոր ավանտյուրան Անդրկովկասում[2]։

Ստամբուլի կառավարական շրջաններում հայտարարում էին, որ այն ժամանակ, երբ ԱՄՆ-ը, Անգլիան ու Ճապոնիան նպատակադրվել էին տիրանալ սովետական Հեռավոր Արևելքին ու Սիբիրին, թուրքերին առաջին հերթին հետաքրքրում է Ռուսաստանի մահմեդական ազգաբնակչությունը[3]։ Անդրկովկասում թուրքական ագրեսիայի ոգեշնչող էնվեր փաշան պարծենում էր, որ «Թուրքիան Ասիայում կխաղա այն դերը, ինչ որ Գերմանիան Եվրոպայում»[4]։

Այդ նպատակին հասնելու համար էնվեր փաշան տակավին 1917 թվականի դեկտեմբերին պատերազմի նոր պլան կազմեց, որը նախատեսում էր թուրքական բանակի հիմնական ուժերը կենտրոնացնել կովկասյան ռազմաճակատում։

Քանի որ զորահավաքի համար անհրաժեշտ մարդկային ռեսուրսներն արդեն սպառվել էին, Անդրկովկասում իրենց էքսպանսիան շարունակելու միակ հնարավորությունն այն էր, որ թուրքերը

1 Miralay Berkuk, s. 35.
2 Տե՛ս նույն տեղում, էջ 26։
3 Lepsius J. Der Todestag des armenischen Volkes. Potsdam, 1919, S. 312.
4 „Cebil-ul-reşad", № 363, s. 247.

մերկացնեին մնացած ճակատները և այնտեղ գտնվող մարտունակ զորքերը տեղափոխեին կովկասյան ռազմաճակատ։

Կովկասյան ճակատում թուրքական զորքերի կենտրոնացման հետևանքով Սիրիայի, Պաղեստինի և Իրաքի օսմանյան բանակներն այլևս անկարող էին լուրջ դիմադրություն ցույց տալ անգլիացիների ուժերին։ Լիման ֆոն Սանդերսի տվյալների համաձայն, անգլիական հետևակային զորամասերը թվական տեսակետից գերակշռում էին թուրքականին 3—4 անգամ, իսկ հեծելազորում՝ 10 անգամ։ Նույնպիսի հարաբերակցություն գոյություն ուներ և հրետանիում։

Խախտելով Բրեստի ու Երզնկայի զինադադարների պայմանները, թուրքական նվաճողները 1918 թվականի փետրվարի կեսերին հարձակման անցան կովկասյան ամբողջ ճակատով։ Այդ ուխտադրուժ գործողությունն արդարացնելու համար թուրքական գերագույն հրամանատարությունը վկայակոչում էր մահմեդական ազգաբնակչության նկատմամբ հայերի գործադրած մտացածին «բռնությունները»։

Թուրքական զորքերի հրամանատար Վեհիպ-փաշան կովկասյան բանակի հրամանատար Օդիշելիձեին 1918 թվականի փետրվարի 9-ին ուղղված հեռագրում հայտարարեց, որ «հայկական բռնությունները» թուրքական զորքերին ստիպեցին անցնել դեմարկացիոն գիծը՝ տեղի օսմանյան մահմեդականներին փրկելու ու պաշտպանելու, կարգ ու կանոն ու հանգստությունը վերականգնելու նպատակով։ Այդ գործողությունները ընդհանուր ոչինչ չունեին թշնամական գործողությունների հետ՝ ռուսական զորքերի դեմ»[1]։

Երիտթուրքական կառավարողներին հատուկ կեղծավորությամբ Վեհիպ-փաշան հեռագրում էր ռուսական բանակի հրամանատարին. «Բարեկամաբար և սրտանց հավատացնում եմ Ձեզ, որ Երզնկայի ժամանակավոր պայմանագիրը պահպանում է իր ուժը՝ բացի դեմարկացիոն գծին վերաբերող պարագրաֆից, որը ռուսական զորքերի հեռանալուց հետո ինքնին կորցնում է իր նշանակությունը։ Այդ օպերացիան կատարվում է միայն անհրաժեշտությունից և մարդասիրության ու քաղաքակրթության պարտքի զգացումից ելնելով»[2]։

Կովկասյան ռազմաճակատի զորքերի գլխավոր հրամանատար գեներալ Լեբեդինսկին[3] անմիջապես հերքեց Վեհիպ-փաշայի կեղծ

1 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 19, թ. 5—6։

2 «Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии», № 32.

3 1918 թվականի հունվարի 5-ին Լեբեդինսկին այդ պաշտոնում փոխարինեց գեներալ Պրժևալսկուն։

փաստարկները «հայկական բռնությունների» վերաբերյալ և հայտարարեց նրան, որ կովկասյան բանակի՝ ըստ ազգային հատկանիշի վերակազմությունից հետո բոլոր զորամասերը, որ ազգությանն էլ նրանք պատկանելիս լինեն, պետք է դիտել որպես ռուսաստանյան հանրապետության լիիրավ զինվորական ստորաբաժանումներ[1]։ Դրանով իսկ Լեբեդինսկին թուրքական հրամանատարությունը հասկացնել էր տալիս, որ չնայած ռուսական զորքերի ետ քաշվելուն, թուրքերը ճակատում մնացած հայկական ու վրացական զորամասերը պետք է դիտեն որպես ռուսական զորքեր։ Ուստի և թուրքական հարձակումը նա գնահատում էր որպես Երզնկայի զինադադարի բացահայտ խախտում։ Սակայն Լեբեդինսկու նախազգուշացումը չկասեցրեց թուրքական զորքերի հարձակումը, որոնք փետրվարի 12-ին անցան դեմարկացիոն գիծը։

Հարձակման նախօրյակին թուրքերի ուժերը բաղկացած էին 1914—17 թվականներին ռուսների կողմից ջախջախված 3-րդ և 2-րդ բանակների մնացորդներից։ 3-րդ բանակը կանգնած էր Երզնկայից դեպի արևմուտք՝ Տիրեբոլուի և Քեմախի միջև։ Չնայած այն բանին, որ թուրքական զորքերի վիճակն այդ ժամանակ մյուս ճակատներում բառացիորեն հուսահատական էր, թուրքական հրամանատարությունը Անդրկովկասի նկատմամբ իր զավթողական պլաններն իրականացնելու նպատակով շարունակում էր ուժեղացնել 3-րդ բանակը։ Վերջինիս միացվեցին 2-րդ բանակի մնացորդները՝ 5-րդ և 21-րդ դիվիզիաները, որոնք միավորվել էին 4-րդ կորպուսի մեջ. այս վերջինը կանգնած էր Դիարբեքիրից դեպի հյուսիս-արևելք։ Պետք է նշել, որ այդ ճակատում գրեթե մեկ տարի տևող դադարի հետևանքով թուրքական զորքերը կարողացան մի փոքր սթափվել նախկինում իրենց հասցված պարտություններից։

Ընդամենը թուրքական հրամանատարությունը դուրս բերեց հինգ դիվիզիա, չհաշված քրդերի զինված ջոկատները, որոնք գործում էին հայկական զորամասերի թիկունքում։ Թուրքական զորքերի դեմ կանգնած էին հայկական ու վրացական ազգային զորամասերը, որոնք փոխարինել էին ճակատը թողած ռուսական զորքերին։

Տակավին 1917 թվականի մայիսին հայ բուրժուազիայի պարագլուխները ձեռնամուխ եղան ազգային զորամասերի ստեղծմանը։ Այդ նպատակով Պետրոգրադ ուղարկվեցին հատուկ ներկայացուցիչներ, որոնք պետք է Կերենսկու կառավարությունից խնդրեին,

1 «Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии», № 33.

որ նա հայ զինվորներին ետ կանչեր ուրիշ ճակատներից՝ կովկասյան ռազմաճակատ ուղարկելու համար։ Վեց ամսվա ընթացքում Կովկասում հաջողվեց հավաքագրել 35 հազար զինվոր, որոնց միացան նաև կամավորները։ Այս զորքերից կազմավորվեց Հայկական կորպուսը, կովկասյան դիվիզիայի նախկին հրամանատար, ռուսական բանակի գեներալ Թոմաս Նազարբեկյանի (Նազարբեկովի) գլխավորությամբ։ Կորպուսի կոմիսար նշանակվեց դաշնակցական կուսակցության ղեկավարներից մեկը՝ Դրո Կանայանը։ Հայկական կորպուսը բաղկացած էր երեք դիվիզիաներից. առաջին դիվիզիայի հրամանատարն էր գեներալ Արեշյանը։ Այդ դիվիզիան բաղկացած էր 4 գնդից և 1 հրետանային բրիգադայից, որն իր մեջ ընդգրկում էր վեց մարտկոց։ Երկրորդ դիվիզիայի հրամանատարն էր գնդապետ Սիլիկյանը (Սիլիկով)։ Այդ դիվիզիան առաջինից ավելի ուժեղ էր, քանի որ նրա տրամադրության տակ էր դրված հեծելազորային բրիգադան՝ երկու գնդից բաղկացած, յուրաքանչյուրում 400 մարդ։ Արևմտահայերից կազմավորված երրորդ դիվիզիայի հրամանատարն էր ժողովրդական հերոս գեներալ Անդրանիկը։ Այդ դիվիզիայի մեջ էին մտնում Երզնկայի, Խնուսի, Վանի և Զեյթունի գնդերը։ Բացի դրանից, Լոռիում, Շուշիում, Ախալքալաքում ու Ղազախում կային 2-ական գումարտակից բաղկացած տեղական զորամասեր, իսկ Նուխիում, Ախալցխայում ու Իգդիրում՝ 1-ական գումարտակ։

Հայկական կորպուսի հետ միասին թուրքական զորքերի դեմ կռվում էին երեք հարյուր ռուս սպաներ, որոնք կազմել էին առանձին գումարտակ։

1917 թվականի դեկտեմբերին կազմավորված վրացական ազգային զորամասերը իրենց շարքերում հաշվում էին 10 հազար մարդ և տեղաբաշխված էին Քութայիսի, Ախալցխայի ու Բաթումի շրջաններում։ Վրացական զորքերի հրամանատարն էր գեներալ Գաբաևը։

Ինչպես հայկական, այնպես էլ վրացական զորամասերի կազմը շատ թույլ էր պատրաստված։ Եվ այդ զորքերը կոչված էին կասեցնելու թուրքական մեծաթիվ բանակի հարձակումը շուրջ 700 կմ. երկարությամբ ձգվող ճակատում՝ սկսած սևծովյան ափից (Տրապիզոնի շրջանում), ամբողջ Արևմտյան Հայաստանով մինչև թուրք-պարսկական սահմանը։

Մուսավաթական «վայրենի դիվիզիան», որն ավելի առաջ էր ստեղծվել ռուսական հրամանատարության կողմից, տեղափոխվեց Ադրբեջան և փոխանակ օգնելու հայկական ու վրացական զորամասերին՝ ետ մղելու թուրքական բանակի հարձակումը, նա, ադրբեջանական ազգային մյուս զորամասերի հետ մեկտեղ, պատրաստվում էր աջակցություն ցույց տալ թուրք զավթիչներին։

Թուրքական հարձակման հաջողությանը նպաստում էր հայկական և վրացական զորամասերի միջև համաձայնեցված գործողությունների կատարյալ բացակայությունը։ Ազգային բանակներից յուրաքանչյուրը թուրքերին դիմադրություն էր ցույց տալիս միայն իր տերիտորիայի վրա, այդ պատճառով էլ թուրքերը շատ արագ մոտեցան Երզնկային։ Նախքան Երզնկայի անկումը, գեներալ Օդիշելիձեն զորքերին հրամայեց թուրքերի գերակշռող ուժերի հարձակման դեպքում նահանջել՝ առանց նրանց հետ մարտի բռնվելու։

Հարձակվող թուրքերի դեմ կանգնած էր հիմնականում հայերից բաղկացած գնդապետ Մորելիի Երզնկայի ջոկատը, որն իր թվական կազմով զգալիորեն զիջում էր թուրքերի առաջին կովկասյան կորպուսին (5-րդ և 36-րդ դիվիզիաները), որը շարժվում էր Երզնկայի ուղղությամբ՝ Քյազրմ Կարաբեքիր-փաշայի հրամանատարությամբ։ Մորելիի ջոկատը դաժան սառնամանիքի պայմաններում մարտերով նահանջում է դեպի Երզնկա, ճանապարհին կորցնելով իր անձնակազմի գրեթե կեսը։ Նահանջող հայկական ջոկատների վրա թիկունքից հարձակվում էին քրդերի ջոկատները՝ մեծ կորուստներ պատճառելով նրանց։ Թուրքական հրամանատարությանը հաջողվել էր Դերսիմի քրդերի հետամնաց մասին կաշառել և դրդել հայերի դեմ։ Դրամական խոստումներով գայթակղված քրդերից թուրքական հրամանատարությունը կազմել էր միլիցիա, որը թուրքական զորքերին օգնեց գրավելու Երզնկան ու Կարինը [1]։

Թուրքական զորքերը Երզնկա մտան 1918 թվականի փետրվարի 13-ին։ Հայկական ջոկատները նահանջեցին դեպի Կարին։ Նրանց թիկունքում գործող քրդական ջոկատների կողմից կամուրջները քանդելու պատճառով հայկական զորքերը ստիպված էին թողնել ամբողջ գումակը, լեռնային հրանոթները և գնդացիրները։ Նահանջող զորքի առջևից գնում էին հայ գաղթականները, որոնցից շատերը ուժեղ ցրտի հետևանքով ճանապարհին սառչում էին։

Թուրքական զորքերի սրընթաց առաջխաղացումը հեշտանում էր գեներալ Օդիշելիձեի դավաճանության պատճառով։ Վերջինս թուրքական հետախույզի միջոցով Վեհիպ-փաշային ուղարկել էր գաղտնի նամակ, որտեղ նրան հասկացնել էր տալիս, որ ռուսական զորքերը շուտով կլքեն ռազմաճակատը [2], մի բան, որին նա

1 Nuri Dersimi, s. 117.
2 ՀՍՍՌ ԿԳԳԱ, ֆ. 200, գ. 99, թ. 42—44։

ինքը՝ Օդիշելիձեն ամեն կերպ նպաստում էր։ Գեներալ Օդիշելիձեն այդ նույն ժամանակ ցրեց պորուչիկ Ժամկոչյանի լեռնային մարտկոցը, որը կազմ-պատրաստ էր թուրքերի դեմ հանդես գալու համար, իսկ մյուս լեռնային մարտկոցի կազմին հրամայեց նահանջել Սարիղամիշի շրջանը։ Նա հայկական զորամասերին կարգադրեց Երզնկայից ու Կարինից նահանջելու ժամանակ «չոչնչացնել պարենամթերքի պաշարները, չպայթեցնել պահեստները, այլ այդ բոլորը պահպանել և հանձնել թուրքերին՝ Կարինում մնալու ցանկություն հայտնած մարզի կոմիսար Գլատովի միջոցով, որը... այն կպահի իրեն մոտ և հաշտություն կնքելուց անմիջապես հետո կվերադարձնի Ռուսաստանին»[1]։ Դավաճանական այս կարգադրության հետևանքով թուրքական հրամանատարության ձեռքն ընկավ հսկայական արժեք ներկայացնող ռազմամթերք ու պարեն։

Երզնկայի գրավումից հետո թուրքերի առաջին կովկասյան կորպուսի զորամասերը, հետապնդելով նահանջող հայկական զորքերին, փետրվարի 26-ին գրավեցին Մամախաթունը, որն ընկած էր Երզնկայի ու Կարինի միջև։ Միաժամանակ հարձակման անցավ երկրորդ թուրքական կովկասյան կորպուսը՝ Շեվքեթ-փաշայի հրամանատարությամբ։ Նա շարժվում էր Գյումուշհանե—Բայբուրթ—Տրապիզոնի ուղղությամբ, ուր գործում էին վրացական ազգային զորամասերը։ Փետրվարի 17-ին թուրքերը գրավեցին Տրապիզոնը։ Այդ նույն ժամանակ Վան-Բայազետ ուղղությամբ իր հարձակումն էր ծավալում 4-րդ կովկասյան կորպուսը՝ Ալի Իզեթ-փաշայի հրամանատարությամբ[2]։

Թուրքական զորքերի առաջխաղացումը դեպի Արևմտահայաստանի խորքը իրենց հաշտության պայմանագիր կնքելու կողմնակից ձևացնող թուրք դիվանագետներին չէր խանգարում մատի վրա խաղացնելու Անդրկովկասյան կոմիսարիատին՝ հաշտության բանակցությունների ժամանակ վերջինիս իրենց պայմանները թելադրելու համար։ Հայտնի է, որ 1918 թվականի հունվարի 14-ին կովկասյան բանակի հրամանատար գեներալ Օդիշելիձեին ուղղված նամակում Վեհիպ-փաշան հաղորդում էր, որ էնվերը կցանկանար իմանալ, թե «ի՞նչ ճանապարհով հնարավոր կլինի վերականգնել

1 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 99, թ. 42—44։

2 Թուրքական զորքերի հարձակումը և նրանց ռազմական գործողությունները նկարագրում է Քյազրմ Կարաբեքիր-փաշան Կարինի ամերիկյան ռազմական միսիայի ղեկավար գեներալ Հարբորդին ներկայացված 1919 թ. սեպտեմբերի 25-ի իր զեկուցագրում։ Տե՛ս "Birinci Kafkas kolordusunun 334 senesindeki harekâti ve meşhudati hakkında general Harbord riyasetindeki Amerika Heyetine takdim edilen rapor sureti", Erzurum, 1335 (1919), s. 1—2.

հարաբերությունները կովկասյան անկախ կառավարության հետ և ինչպիսի՞ առաջարկներ կանի վերջինս երկու երկրների միջև խաղաղ հարաբերությունները վերականգնելու նպատակով»[1]։ Թուրքական հրամանատարությունը գերադասում էր գործ ունենալ ներքին հակասություններից զրկված անդրկովկասյան թույլ իշխանությունների, քան թե ամրացող ու հաղթանակող սովետական պետության հետ։

Էնվերի առաջարկությունը քննարկվեց Անդրկովկասյան կոմիսարիատի նիստերում։ Զգալով իր անօգնականությունը թուրքական ներխուժման սպառնալիքի հանդեպ, Անդրկովկասյան կոմիսարիատը ջանում էր ցույց տալ, թե իբր ինքը սերտորեն կապված է ռուսական կայսրության նախկին այն շրջանների (Ուկրաինա, Հյուսիսային Կովկաս և այլն) հետ, որոնք տեղական հետադիմական ուժերի ժամանակավոր հաղթանակի շնորհիվ նույնպես անջատվել էին Սովետական Ռուսաստանից։ Հունվարի 28-ին Անդրկովկասյան կոմիսարիատը պատասխանեց Վեհիպ-փաշային, որ ինքը պատրաստ է սկսելու հաշտության բանակցություններ՝ երկու կողմերի միջև վերջնական հաշտություն կնքելու համար։ Սակայն նա անհրաժեշտ է գտնում իր գործողությունները համաձայնեցնել Ռուսաստանում գոյություն ունեցող այլ կառավարությունների կարծիքների հետ, որոնք, ինչպես և Անդրկովկասի կառավարությունը, շահագրգռված են խաղաղություն հաստատելու մեջ[2]։

Միաժամանակ Անդրկովկասյան կոմիսարիատի նախագահ Ե. Պ. Գեգեչկորին հեռագրեր ուղարկեց Ուկրաինայի կենտրոնական ռադայի նախագահին և Հարավ-Արևելյան միության նախագահին, որոնցում նա տեղեկացնում էր վերջիններիս էնվեր փաշայի առաջարկության մասին։ Գեգեչկորին խնդրում էր նրանց շտապ կերպով Թիֆլիս ուղարկել իրենց ներկայացուցիչներին՝ փետրվարի 14-ին նշանակված կոնֆերանսում հաշտության բանակցություններ սկսելու վերաբերյալ թուրքական հրամանատարության առաջարկները քննարկելու համար։ Ուկրաինական ռադայից պատասխան չստացվեց, իսկ Հարավ-Արևելյան միությունից միայն Կուբանի կառավարությունը պատասխան ուղարկեց, որտեղ ասվում էր, որ նախատեսվող կոնֆերանսի հրավիրման ժամկետը իրեն հարմար չէ[3]։ Ուստի և կոմիսարիատի փետրվարի 14-ի նիստում Թուրքիայի հետ

1 «Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии», № 15.

2 Նույն տեղում, №№ 23, 24, 25։

3 Նույն տեղում, № 37։

հաշտության բանակցությունների մեջ մտնելու հարցը քննարկվում էր առանց Ռադայի և Հարավ-Արևելյան միության ներկայացուցիչների մասնակցության։ Այդ նիստում որոշվեց Վեհիպ-փաշային հաղորդել, որ Անդրկովկասյան կառավարությունը պատրաստ է սկսելու հաշտության վերաբերյալ բանակցությունները, ընդ որում «հաշտության հիմնական դիրեկտիվներն ու պայմանները կմշակվեն Անդրկովկասյան սեյմի կողմից, որպես ամբողջ Անդրկովկասի ներկայացուցչական օրգանի, որը կհավաքվի Թիֆլիսում փետրվարի 23-ին»[1]։

Անդրկովկասյան կոմիսարիատի նախաձեռնությամբ փետրվարի 23-ին Թիֆլիսում հրավիրվեց Անդրկովկասյան սեյմ, որտեղ բացի սովետական կառավարության կողմից ցրված Հիմնադիր ժողովի Անդրկովկասի պատվիրակներից, ներկա էին Անդրկովկասյան կոմիսարիատի անդամները և վրացական մենշևիկների, դաշնակների, մուսավաթականների և հակահեղափոխական այլ կուսակցությունների ու խմբերի ներկայացուցիչները։ Սեյմը հրավիրելով, Անդրկովկասի սնանկացած կոմիսարիատը ձգտում էր այդ ճանապարհով փրկել վրացական ազնվականների, հայ բուրժուազիայի և աղրբեջանական խաների ու բեկերի խարխուլ իշխանությունը։

«Անդրկովկասյան սեյմի հրավիրման շուրջը» հոդվածում Ստ. Շահումյանը գրում էր.

«Կոմիսարիատի անժողովրդականությունը, ժողովրդի լայն խավերի կողմից նրա հանդեպ տածած ատելությունն այժմ արդեն անկասկած է և ահա խորամանկ պպ. Ժորդանիան, Գեգեչկորին և Ս.—ն դիմեցին պաշտպանողականների համար սովորական միջոցի՝ ժողովրդական զանգվածների նոր հիմարացմանը՝ իրենց իրական գոյությունը երկարաձգելու համար։ Այդ պարոնները գիտեն, որ մանր բուրժուական զանգվածները տակավին որոշ պատրանքներ են տածում Հիմնադիր ժողովի ու նրա անդամների նկատմամբ։ Հենց այդ պատրանքներն են կազմում այն հողը, որի վրա այժմ ցանկանում են հենվել պարոնայք պաշտպանողականները՝ բեկերի ու աղալարների հետ դաշինք կազմած»[2]։ Սեյմի բացման օրը ՌՍԴԲՊ Կովկասյան երկրային կոմիտեն Անդրկովկասի աշխատավորությանը ուղղած իր կոչում Անդրկովկասյան սեյմը բնութագրեց որպես մենշևիկների, դաշնակների, մուսավաթականների և ազգայնական այլ կուսակցությունների հակահեղափոխական բլոկի օրգան, որը ոչնչով չի տարբերվում Անդրկովկասյան կոմիսարիատից։

1 «Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии». № 37.

2 Шаумян С. Г., Избранные произведения, т. 2, стр. 172.

Հիշյալ կոչում մասնավորապես ասվում էր. «Սեյմն իրենից ներկայացնում է մի նոր կեղծիք, ժողովրդի մի նոր խաբեություն, մահմեդական բեկերի ու խաների, վրացական իշխանների և հայ բուրժուազիայի ցանկությունը բավարարող և ռևոլյուցիան Անդրկովկասում ճնշելու մի նոր միջոց»[1]։

Իր գոյության առաջին իսկ օրից սեյմը հարձակում գործեց Անդրկովկասի հեղափոխական կազմակերպությունների վրա։ Հակառևոլյուցիայի զինված ուժերը կրակ բացեցին Ալեքսանդրյան այգում հավաքված Թիֆլիսի բանվորների վրա, որոնք իրենց բողոքի ձայնն էին բարձրացրել Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու քաղաքականության դեմ։

Ստ. Շահումյանը նշում է, որ հեղափոխական Ռուսաստանից Անդրկովկասի անջատումը «հարկավոր է միայն խաներին ու բեկերին։ Այդ անջատումը առաջին վճռական քայլն է դեպի Թուրքիային ենթարկվելը, որը և այժմ շարժվում է առաջ, դեպի Կովկաս»[2]։ Հակահեղափոխական սեյմը, որը չէր ճանաչվել ժողովրդական զանգվածների կողմից և նրանց աջակցությունը չէր ստանում, ազգայնական կուսակցությունների երկպառակություններից թուլացած, ի վիճակի չէր լուրջ դիմադրություն կազմակերպելու հարձակվող թուրքական ագրեսորների դեմ։ Ուստի և սեյմը հենց առաջին նիստում Թուրքիայի հետ հաշտություն կնքելու մասին որոշում ընդունեց, մի բան, որին թուրքական նվաճողները ամեն կերպ ձգտում էին հասնել սկսած Երզնկայի զինադադարի կնքման պահից՝ թեև նրանց պատվիրակները Գերմանիայի ու Ավստրո-Հունգարիայի ներկայացուցիչների հետ մեկտեղ 1917 թվականի դեկտեմբերի 15-ից Բրեստ-Լիտովսկում հաշտության բանակցություններ էին վարում սովետական կառավարության հետ։

Հանդիպման վայր առաջարկվեց Տրապիզոնը։ Այդ քաղաքի ընտրությունը բացատրվում էր նրանով, որ Տրապիզոնն այն ժամանակ գտնվում էր վրացական զորքերի ձեռքում և սեյմի պարագլուխները կարծում էին, որ թուրքերի հետ բանակցությունները ոչնչով կաշկանդված չեն լինի։ Սեյմի որոշումը Վեհիպ-փաշային հաղորդվեց Օդիշելիձեի միջոցով։ Սեյմի պատվիրակությունը Տրապիզոն պետք է մեկներ մարտի 2-ին։ Սեյմի կողմից նրան տրված հրահանգների համաձայն, պատվիրակությունը պետք է ձգտեր վերականգնել մինչև պատերազմի հայտարարումը Ռուսաստանի և Թուրքիայի միջև գոյություն ունեցած պետական սահմանները, ինչ-

1 Архив Груз. фил. ИМЛ при ЦК КПСС, ф. 33, л. 220.

2 Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, Երևան, 1948, էջ 556։

պես և հասներ Արևելյան Անատոլիայի և, մասնավորապես, «Թուրքահայաստանի» ինքնորոշմանը՝ թուրքական պետականության շրջանակներում։

Մինչդեռ Տրապիզոնի կոնֆերանսի բացման պահին ստեղծված ռազմական ու քաղաքական իրադրությունը ռազմաճակատում ու Անդրկովկասում բացահայտորեն թուրք զավթիչների օգտին էր։ Թուրքական զորքերն առանց կանգ առնելու շարունակում էին հարձակումն ամբողջ ճակատով։ Նրանց առաջխաղացմանը զուգընթաց աճում էր թուրք նվաճողների ախորժակը և թուրքական ներկայացուցիչները կոնֆերանսում մեկը մյուսի ետևից նոր պահանջներ էին առաջ քաշում։ Անդրկովկասյան հակառևոլյուցիայի ռազմական տկարությունը, երկպառակություններն ու գզվրտոցը սեյմում, մուսավաթական կուսակցության պարագլուխների դավաճանությունը, որոնք թուրքական գործակալության դեր էին խաղում, այս բոլորը հենց սկզբից կանխորոշում էր սեյմի պատվիրակության փորձերի ձախողումը՝ բանակցությունների ժամանակ հասնելու իրենց կողմից առաջադրված հաշտության պայմանների իրականացմանը։

Սեյմի պատվիրակության Տրապիզոն մեկնելու օրը Բրեստ-Լիտովսկից ստացվեց Սովետական Ռուսաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսարի տեղակալ Լ. Կարախանի ռադիոհեռագիրը, որը կոմիսարիատին տեղյակ էր պահում այն մասին, որ նախքան հաշտության պայմանագրի ստորագրումը ռազմական գործողությունները դադարեցնելու սովետական առաջարկի մերժումը գերմանացիների կողմից ՌՍՖՍՌ կառավարությանը հարկադրում է համաձայնվել նոր պայմանների հետ. «Մենք որոշել ենք,— հաղորդում էր Կարախանը,— ստորագրել պայմանագիրը... փետրվարի 21(8)-ի [1] պայմանների ամենալուրջ փոփոխությունից հետո ան-

1 Խոսքը գերմանական նոր վերջնագրի մասին է, որն անհամեմատ ավելի ծանր պայմաններ էր առաջարկում, քան սովետական կառավարությանը փետրվարի 21(8)-ին ներկայացված պայմանները։ Բրեստ-Լիտովսկի կոնֆերանսի եզրափակիչ նիստում՝ 1918 թվականի մարտի 3-ին սովետական հաշտության պատվիրակության կողմից հրապարակված դեկլարացիայում՝ հօգուտ Թուրքիայի Անդրկովկասի տերիտորիայի ոչնչով չարդարացված անջատման կապակցությամբ, ասվում էր. «Կովկասում, բացահայտորեն խախտելով հենց իրեն՝ գերմանական կառավարության կողմից ձևակերպված փետրվարի 21(8)-ի վերջնագրի պայմանները և հաշվի չնստելով Արդահանի, Կարսի ու Բաթումի մարզերի ազգաբնակչության իսկական կամքի հետ, Գերմանիան Թուրքիայի օգտին խլում է այդ մարզերը, որոնք երբեք նվաճված չեն եղել թուրքական զորքերի կողմից»։ Տե՛ս «Документы внешней политики СССР», т. I, док. № 77. Բրեստ-Լիտովսկի կոնֆերանսի ժամանակ թուրքական պատվիրակությունը, ինչպես նշում է Մարիոտը, ցանկանում էր ստանալ ավելին, քան 1877—78 թվականների պատերազմից

գամ՝ ինքնորոշման ձևի տակ Արդահանի, Կարսի և Բաթումի մարզերը Ռուսաստանից խլելու պայմանով» [1]։

Անդրկովկասյան սեյմի նախագահ մենշևիկ Ն. Չխեիձեն անմիջապես հրապարակայնորեն բողոքարկեց Բրեստի հաշտության պայմանները։ Նա հայտարարեց, որ «Անդրկովկասին ու նրա սահմաններին վերաբերող ամեն մի պայմանագիր, որը կնքված կլինի առանց իմքնուրույն Անդրկովկասյան կառավարության կամքի ու հավանության, կհամարվի զրկված միջազգային նշանակությունից ու պարտադիր ուժից, քանի որ Անդրկովկասը երբեք չի ճանաչել բոլշևիկյան իշխանությունն ու ժողովրդական կոմիսարների սովետը» [2] (ընդգծումները մերն են—Ե. Ս.)։

Սեյմի մարտի 11-ի նիստում որոշում ընդունվեց, որ Անդրկովկասը գործում է որպես միանդամայն ինքնուրույն քաղաքական միավոր և մերժում է Բրեստի պայմանագիրը։ Այսպիսով, Անդրկովկասի ձևական «ինքնուրույնությունը» պաշտպանելու համար երկրամասի հակահեղափոխական կուսակցությունների ղեկավարները, բոլորովին արհամարհելով ժողովրդական զանգվածների շահերը, կանգնեցին բախտախնդիր քաղաքականության ուղու վրա, որը ջուր էր լցնում թուրք զավթիչների ջրաղացին։ Անդրկովկասյան սեյմի կողմից այն ժամանակ բռնած դիծը միայն հեշտացնում էր Անդրկովկասում ինտերվենցիա կազմակերպելու թուրքական հրամանատարության խնդիրը։ Ինչպես հետագայում խոստովանում էր սեյմի պատվիրակության անդամներից մեկը՝ Խատիսովը, Կարախանի հեռագիրը ստանալուց հետո, «մենք տատանվում էինք՝ մեկնել, թե ոչ, սակայն մենք վերջ ի վերջո զգացինք, որ մեր ուղևորությունն անհրաժեշտ է, թեև գլխի էինք ընկնում, որ հարկավոր է հաղթողի գթասրտությանը հանձնվել» [3] (ընդգծումը մերն է— Ե. Ս.)։

Բրեստի հաշտության պայմանագիրը կնքելուց հետո Տրապիզոնի բանակցությունները կարող էին ձեռնտու լինել միայն թուրք ագրեսորներին, քանի որ սեյմի պատվիրակությունը ո՛չ իրավական և ո՛չ էլ ռեալ ուժ ուներ՝ թուրքերին ստիպելու ընդունել հաշտության պայմանագրի ցանկալի պայմանները։ Ինչպես տեսանք, այդ բանը հասկանում էին նույնիսկ պատվիրակության անդամները՝ նախքան Տրապիզոն մեկնելը։

հետո հաստատված սահմաններն էին։ Դրանով էր բացատրվում թուրքական զորքերի հարձակումը դեպի Անդրկովկասի խորքը։ Տե՛ս J. A. Marriot, p. 495.

1 «Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии», № 47.

2 Նույն տեղում, № 51։

3 «Заря Востока», 1. II. 1925, № 79.

Անդրկովկասյան կառավարության նախագահ Գեգեչկորին ուղղակի հայտարարեց. «Մենք Թուրքիային պատերազմ հայտարարեցինք Բրեստ-Լիտովսկի խայտառակ պայմանագիրը ձախողելու համար» [1]։ Անդրկովկասյան հակառևոլյուցիան ամենից առաջ ձգտում էր իշխանությունն իր ձեռքում պահել՝ թեկուզ երկրամասը Օսմանյան կայսրության տիրապետության տակ ընկնելու գնով։ «Մենշևիկ Ա. Չխեիձեի խոսքերի համաձայն, —գրում էր այն ժամանակ «Պրավդան»,— ավելի լավ է Թուրքիայի, քան սովետների իշխանությունը» [2]։ Խոսելով Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու հետևանքների մասին, «Զարյա Բասիի» թերթը խոստովանում էր, որ Անդրկովկասը կանգնած է երկընտրանքի առջև. բոլշևիկների տիրապետություն կամ թուրքական ներխուժում։ Սեյմը առանց տատանվելու գերադասեց երկրորդը [3]։

Սեյմի հաշտության պատվիրակությունը բաղկացած էր քառասուն հոգուց։ Այն գլխավորում էր Ա. Ի. Չխենկելին։ Դաշնակցական կուսակցության պատվիրակների խումբը գլխավորող Ա. Խատիսովը նշում էր, որ հաշտության պատվիրակության նման մեծաքանակ կազմը վառ կերպով վկայում էր նրա ներսում տարբեր կուսակցությունների ներկայացուցիչների միջև գոյություն ունեցող սուր հակասությունների առկայության մասին։ Նման դրությունը թուրքերի հետ նրա վարած բանակցությունների ժամանակ թուլացնում էր սեյմի պատվիրակության դիրքերը և, ինչ խոսք, այն օգտագործվեց թուրքերի կողմից՝ իրենց օգտին։ «Երբ մենք եկանք Տրապիզոն,— գրում էր Խատիսովը,— թուրքական թերթերը շարախնդությամբ սրամտում էին. «Եթե ժամանել է ռազմական ջոկատ, ապա այն սակավաթիվ է, իսկ եթե դա հաշտության պատվիրակություն է՝ չափազանց մեծ է»» [4]։

Թուրքական պատվիրակության կազմում կային յոթ հոգի։ Նրա նախագահն էր Հուսեին Ռաուֆ-բեյը՝ ծովային դեպարտամենտի շտաբի պետը։ Մարտի 14-ին բացելով «հաշտության» կոնֆերանսը, Հուսեին Ռաուֆ-բեյը ճոռոմ խոսքերով «բացատրում» էր Օսմանյան կայսրության հատուկ միսիան Անդրկովկասում։ «Թուրքիայի պատերազմները Ռուսաստանի դեմ 200 տարվա ընթացքում,— հայտարարեց նա,— պաշտպանական բնույթ էին կրում մեր երկրների համար։ Մեր ընդհանուր ճակատագրերը ավելի ու ավելի էին կապվում իրար։ Այդ ընդհանուր փառահեղ պատմության ընթացքում Թուրքիան դժբախտաբար չէր կարող կատարել իր պատմական պարտքը՝ Անդրկովկասին օգնություն ցույց տալու գործում, այնուամենայնիվ, մեր կողմից ապրած դարաշրջանը ապացուցեց... մեր ճակատագրերի միավորման անհրաժեշտությունը։ Մենք գրտնում ենք, որ մեզ բաժանող խոչընդոտի խորտակումը արտակարգ կարևորություն ունեցող մի երևույթ է, որովհետև այն կապերը, որոնք կապում են մեզ, միայն պատմական ու աշխարհագրական հարաբերություններ չեն, այլ, ավելի շուտ, ազգակցական» [1]։

Այսպիսով, խեղաթյուրելով իրական պատմությունը, Հուսեին Ռաուֆ-բեյը փորձում էր ապացուցել անցյալում անդրկովկասյան ու Օսմանյան կայսրության ժողովուրդների ճակատագրերի պատմական ընդհանրությունը։ Անդրկովկասի «միավորումը» Թուրքիայի հետ, որի մասին խոսում էր նա, կարող էր նշանակել միայն թուրք ասիմիլյատորների կողմից անդրկովկասյան ժողովուրդների կլանում։

Ավելի ուշ, Հուսեին Ռաուֆ-բեյը Տրապիզոնի կոնֆերանսում ունեցած իր ելույթներից մեկում հայտարարեց. «Ռուսաստանի քաղաքական սահմանները պետք է ետ տարվեն Կովկասյան լեռնաշղթայից այն կողմը, և Ռուսաստանն այլևս չի կարող որևէ պահանջ ներկայացնել Անդրկովկասի նկատմամբ... Ներկայումս հնարավոր է հարցի լուծման երկու եղանակ. կամ Թուրքիան կգրավի Անդրկովկասը ընդհուպ մինչև Սև ու Կասպից ծովերի ափերը, կամ Թուրքիայի խնամակալության ներքո կկազմավորվեն բուֆերային տիպի անդրկովկասյան զանազան պետություններ» [2]։

Թուրքական զորքերի հաջող առաջխաղացումը գլխապտույտ առաջ բերեց Օսմանյան կայսրության կառավարողների մոտ։ Տրապիզոնի կոնֆերանսի վերջին նիստում Ռաուֆ-բեյը բարձրագոչ հայտարարեց. «Մենք ցանկանում ենք, որ Թուրքիան Արևելքի գլուխն անցնի» [3]։

Ամբողջ կոնֆերանսի ընթացքում թուրքերը, տեսնելով անդրկովկասյան պատվիրակության կատարյալ անօգնականությունը, նրանց թելադրում էին՝ իրենց պայմանները։ Սեյմի պատվիրակները խղճուկ մի խաղալիք դարձան Ռաուֆ-բեյի ձեռքում։ Անդրկովկասյան պատվիրակության դրությունն ավելի էր վատթարանում այն պատճառով, որ նրա Տրապիզոն ժամանելու պահին քաղաքն

1 «Демократическое правительство Грузии и английское командование», Тифлис, 1928, стр. 85.
2 «Правда», 28. 6. 1918, № 130.
3 ЦГАОР, ф. 1318, оп. 1, д. 619, л. 32.
4 «Заря Востока», 5. XI. 1925, № 796.

1 Նույն տեղում, գ. 318, թ. 37։
2 Նույն տեղում, գ. 23, թ. 101։
3 ՀՍՍՌ ԿՊԳԱ, ֆ. 200, գ. 7, թ. 183—184։

արդեն դրավված էր թուրքական զորքերի կողմից։ Անդրկովկասյան պատվիրակության նիստում (մարտի 21-ին) խատիսովը, որն իրեն զգում էր որպես թուրքերի գերի, հայտարարեց, որ Տրապիզոնում հետագա բանակցությունները շարունակելու համար անմիտ պայմաններ են ստեղծվել։ Դաշնակցական այդ խղճուկ ղեկավարը, համեմատելով իրեն Բիսմարկի հետ, ասում էր. «Ոչ ես, ոչ իմ նախորդ Բիսմարկը երբեք այդպես չեն վարվել. ինչպե՞ս ես կարող եմ որևէ բանակցություններ վարել, եթե ես այստեղ նստած եմ որպես մի տիկնիկ, որին սուրճ են խմացնում և... որը լրիվ կտրված է աշխարհից... Ես գտնում եմ, որ նման պայմաններում այլևս անհնարին է շարունակել բանակցությունները և անհրաժեշտ է դուրս գալ այդ դժոխային պայմաններից»[1]։ Իսկ Չխենկելին անդրկովկասյան պատվիրակության համար ստեղծված դրությունը բնութագրում էր որպես բանտի պայմաններ[2]։

Կոնֆերանսի առաջին իսկ նիստում Ռաուֆ-բեյը հասկացնել տվեց, որ թուրքական կառավարությունը Անդրկովկասը չի ճանաչում որպես ինքնուրույն պետություն և սեյմի պատվիրակներին առաջարկեց հայտարարություն անել, թե ո՞րն է անդրկովկասյան հանրապետության քաղաքական ու վարչական ձևի էությունը։

Իր պատասխանում անդրկովկասյան պատվիրակությունը նշեց, որ «Ռուսաստանում կատարված բոլշևիկյան հեղաշրջումից հետո Անդրկովկասում ստեղծվել է նոր ինքնուրույն կառավարություն, և Անդրկովկասը փաստորեն իրենից ներկայացնում է մի պետություն, որն արդեն մտել է միջազգային հարաբերությունների ոլորտը, քանի որ այն իր բողոքն է հայտնել Բրեստի պայմանագրի դեմ, որը կնքված է եղել առանց նրա գիտության, թեև անդրկովկասյան կառավարությունը տակավին չի հայտարարել իր անկախության մասին և նոտիֆիկացիա չի ներկայացրել տերություններին»։

Թուրքական պատվիրակությունը հայտարարեց, որ ինքը չի կարող Անդրկովկասը ճանաչել որպես ինքնուրույն պետություն, ուստի և ուժի մեջ է համարում Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանները՝ այն մասում, որը վերաբերում է Կովկասին։ Ընդ որում, Ռուաֆ-բեյը ընդգծեց, որ «ներկա բանակցությունների մեջ մտնելը չի հետապնդում որևէ այլ նպատակ, քան տնտեսական ու առևտրական հարաբերությունների հիմքի նախապատրաստումը և դրանց գործնական ու տեխնիկական մանրամասների մշակումը, որոնք դուրս են մնացել Բրեստ-Լիտովսկի պայմանագրի պարտա-

1 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 23, թ. 95—97։

2 Նույն տեղում, թ. 100—101։

վորությունից»։ Թուրքական պատվիրակությունը ցանկություն հայտնեց, որպեսզի Անդրկովկասը հայտարարի իր անկախության ու կառավարման ձևի մասին՝ մինչև որ սկսված բանակցությունները կավարտվեն»[1]։

Այսպիսով, թուրքերը մի կողմից պահանջում էին անհապաղ իրագործել Բրեստի հաշտության՝ Բաթումի, Կարսի ու Արդահանի մարզերին վերաբերող պայմանները, որոնց ճակատագիրը պետք է կանխորոշվեր հանրաքվեի միջոցով։ Այս դեպքում նրանք Անդրկովկասը դիտում էին որպես Սովետական Ռուսաստանի բաղկացուցիչ մասը։ Մյուս կողմից՝ թուրքերը պահանջում էին Անդրկովկասն անկախ հայտարարել, որպեսզի կարողանային իրենց համար հող նախապատրաստել Բրեստի հաշտության պայմանների կոպիտ խախտման և Անդրկովկասի նկատմամբ իրենց զավթողական պլաններն իրականացնելու համար։ Այդպիսին էր թուրքական դիվանագիտության երկդիմի ու խարդախ տակտիկան Տրապիզոնի կոնֆերանսում։

Ինչ վերաբերում է Թուրքիայի հետ հաշտության համաձայնագիր կնքելու պայմաններին, որոնք սեյմի կողմից առաջադրված էին որպես հիմք Տրապիզոնի բանակցությունների համար, թուրքերը դրանց մասին լսել անգամ չէին ուզում։ Նրանք հենց սկզբից մերժեցին սեյմի պատվիրակության կողմից առաջադրված «Արևելյան Անատոլիայի (հասկացվում էր առաջին հերթին ինքնավարության շնորհում Արևմտյան Հայաստանին— Ե. Ս.) ինքնորոշման մասին» կետը, գնահատելով այն որպես միջամտություն Օսմանյան կայսրության ներքին գործերին։

«Հայաստանի ինքնորոշման հարցը,— հայտարարեց Հուսեին Ռաուֆ-բեյը,— պետք է հանվի, որովհետև Թուրքիան չի կարող հանդուրժել նրա քննարկումը Անդրկովկասի պատվիրակության հետ տարվող բանակցությունների ժամանակ»։ Սեյմի պատվիրակներն անմիջապես զիջեցին և Արևելյան Անատոլիայի ինքնորոշման հարցը հանվեց կոնֆերանսի օրակարգից։ Դրանից հետո սեյմի պատվիրակները փորձ արեցին այն փոխարինելու հայ գաղթականներին հայրենիք վերադառնալու թույլտվության հարցով, սակայն այդ հարցը ևս մերժվեց թուրքական պատվիրակության կողմից։

Այսպիսով, անդրկովկասյան պատվիրակության կողմից ներկայացված համաձայնագրի պայմանները թուրքերը մերժեցին։

Մինչդեռ, Տրապիզոնի կոնֆերանսում խոր տարաձայնություններ առաջ եկան անդրկովկասյան պատվիրակության անդամների

1 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 7, թ. 178—181։

միջև։ Պատվիրակության կողմից հրավիրված խորհրդակցություններում, որոնք երբեմն շարունակվում էին վաղ առավոտից մինչև ուշ երեկո, տաք վեճեր էին գնում։ Անդրկովկասի ազգություններից յուրաքանչյուրի ներկայացուցիչները փորձում էին թուրքերի տերիտորիալ պահանջները բավարարել իրենց հարևանների հաշվին։ Այսպես, օրինակ, վրացական մենշևիկները համաձայնվում էին թուրքիային զիջել Կաղզվանի ու Կարսի նահանգները, որոնք հիմնականում բնակեցված էին հայերով։ Դաշնակներն իրենց կողմից պահանջում էին թուրքիային տալ Արդվինի, Օլթիի ու Բաթումի մարզերը, որտեղ ավելի շատ աջարացիներ ու վրացիներ կային։ Իսկ մուսավաթականները, երիտթուրքերի այդ հավատարիմ ծառաները, պնդում էին, որ անհրաժեշտ է բավարարել թուրքական պատվիրակության ներկայացրած բոլոր պահանջները։

Մուսավաթական պատվիրակները բացահայտորեն աջակցում էին թուրք զավթիչներին։ Այսպես, Խաս-Մամեդովը հարձակվում էր պատվիրակության այն անդամների վրա, որոնք գտնում էին, որ թուրքական զորքերի առաջխաղացումը նպատակ ունի գրավել ողջ Անդրկովկասը։ Նա հայտարարեց. «Թուրքական զորքերի առաջխաղացումը և նրանց կողմից վիճելի մարզերի գրավումը պետք է դիտել ոչ թե որպես դրանց նվաճում, այլ կարգ ու կանոնի վերականգնում... Հեռացած ռուսական զորքերին փոխարինող կովկասյան ազգային զորամասերը թուրքերի կողմից դիտվում են որպես չեթնիկներ (պարտիզաններ), քանի որ Անդրկովկասը տակավին կազմում է Ռուսաստանի մի մասը»[1]։ Մուսավաթականները փաստորեն երիտթուրքերի գործակալներն էին հանդիսանում և նրանք ամեն կերպ նպաստում էին թուրքական զորքերի առաջխաղացմանը։

Մուսավաթական Ադրբեջանի առաջին ազգային ժողովի նախագահ Մահմեդ Էմին Ռասուլ-զադեն «Ադրբեջանական հանրապետությունը» խորագիրը կրող իր գրքում ուղղակի նշում էր, որ թուրքիան աշխարհի մահմեդականության կենտրոնն է, թուրքալեզու բոլոր ժողովուրդների հույսն ու ապավենը։ Խոսելով Տրապիզոնի կոնֆերանսում մուսավաթական պատվիրակների խնդիրների մասին, նա շեշտում է, որ նրանց ցուցում էր տրված թուրքական պատվիրակության անդամների հետ ունեցած իրենց զրույցների ժամանակ բացատրել վերջիններիս, թե ինչպիսի դժվարությունների է հանդիպել Ադրբեջանը և որ նա թուրքիայի աջակցության կարիքն ունի՝ այդ դժվարությունները հաղթահարելու համար։ «Բոլորը հույս էին դրել թուրքիայի վրա։ Միակ ուժը, որն ի վիճակի էր փրկելու ազգը այդ ծանր դրությունից՝ դա թուրքիան է։ Այդ եղբայրական ազգը կգա և մեզ կփրկի թշնամու ձեռքից»։ Այնուհետև Ռասուլ-զադեն մեծ գոհունակությամբ նշում էր, որ թուրքերն ունկընդրեցին իրենց եղբայրների՝ մուսավաթականների ձայնին և նրանց օգնության եկան։ «Կարճ ժամանակվա ընթացքում ամբողջ Ադրբեջանում, բացի Բաքվի նահանգից (ուր հաստատված էր Բաքվի Կոմունայի իշխանությունը— Ե. Ս.), լրիվ վերականգնվեց կարգ ու կանոնը»[1]։

Անդրկովկասյան պատվիրակության նախագահ Ա. Ի. Չխենկելին մարտի 21-ի նիստում ընդունելով հաշտության վերաբերյալ իրենց առաջ քաշած պայմանների կատարյալ ձախողումը, հայտարարեց, որ «գոյություն չունի միասնություն ո՛չ Անդրկովկասում, ո՛չ էլ սեյմում։ Ես կրկնում եմ, որ մեր թուլությունը միասնության բացակայության մեջ է։ Մեր պատվիրակությունը կոլեկտիվ կարծիք չունեցավ»[2]։ Նույն բանն էր խոստովանում նաև Խատիսովը. «Մեզ կործանում է ոչ թե թուրքերի ուժը, այլ ներքին համերաշխության ու համախմբվածության բացակայությունը»[3]։

Այդ բոլորը քաջ հայտնի էր Հուսեին Ռաուֆ-բեյին։ Թուրքական կողմը մեծ հաջողությամբ օգտագործեց այդ հանգամանքը բանակցությունների ժամանակ։ Նա ամեն կերպ ձգձգում էր բանակցությունները, որովհետև ժամանակն աշխատում էր թուրքերի օգտին։ Շարունակելով թելադրել հաշտության իրենց պայմանները, թուրքերը նախօրոք գիտեին, որ սեյմի պատվիրակները ոչինչ ի վիճակի չեն հակադրելու իրենց։ Ամենագլխավոր փաստարկը թուրքերի մոտ՝ ուժն էր։ Տրապիզոնի բանակցությունների ժամանակ նրանք շարունակում էին իրենց հարձակումը ամբողջ ճակատով։ «Բոլոր դեպքերում,— վկայում էր Խատիսովը,— թուրքերի վարքագիծը միևնույնն էր՝ միաժամանակ և՛ բանակցություններ վարել, և՛ պատերազմ մղել՝ ամբողջովին իրենց կամքը պարտադրելու համար»[4]։

Տակավին Տրապիզոնի կոնֆերանսի բացման նախօրյակին, ճակատի գլխավոր՝ Երզնկա—Կարին ուղղությամբ առաջին կովկասյան կորպուսի զորամասերը մոտեցան Կարինին։ Մարտի 12-ի գի-

1 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 7, թ. 140—141։

1 ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 11, գ. 29, թ. 581—582։
2 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 7, թ. 95—97։
3 Նույն տեղում, թ. 116—126։
4 «Заря Востока», 5. XI. 1925, № 796.

շերը թուրքական զորքերը գրոհով վերցրին քաղաքը։ Հայկական զորամասերը ետ մղվեցին հակառակորդի գերազանցող ուժերի կողմից, և թուրքերը մտան հրդեհի բոցերով բռնկված քաղաքը, որտեղ նրանց ձեռքն ընկան մեծ քանակությամբ թնդանոթներ և ռազմամթերք։

Կարինի գրավումից հետո թուրքական առաջին կովկասյան կորպուսը առաջ էր շարժվում Սարիղամիշի ուղղությամբ։ Մարտի 17-ին հիշյալ կորպուսի զորամասերը գրավեցին Քյոփրյու-քյոյը և Թորթումը, որոնք ընկած էին Կարինից դեպի արևելք և հյուսիս-արևելք, և հասան սահմանին։ Հայկական զորամասերը ապրիլի 5—6-ին թողեցին Սարիղամիշը և նահանջեցին դեպի Նովոսելիմ՝ այնտեղ ամրանալու և թուրքական զորքերի առաջխաղացումը դեպի Կարս կասեցնելու համար։ Թուրքական 37-րդ դիվիզիան Տրապիզոնը գրավելուց հետո շարունակում էր առաջ շարժվել Սև ծովի ափի երկայնքով դեպի Բաթում։ 4-րդ կովկասյան կորպուսը 12-րդ դիվիզիայի հետ միասին հարձակվում էր Մանազկերտի ուղղությամբ։ 5-րդ դիվիզիան ապրիլի 7-ին գրավեց Վանը և նույնպես մոտեցավ սահմանին, իսկ ապրիլի 9-ին թուրքական զորքերը, անցնելով սահմանը, մտան Օլթի [1]։

Անդրկովկասյան կառավարությունն ու սեյմը, շարունակելով իրենց հակահեղափոխական քաղաքականությունը, չէին կարող հենվել աշխատավոր զանգվածների վրա՝ թուրք ներխուժողներին հակահարված տալու համար։ Ավելին, հույսը դնելով Տրապիզոնի հաշտության բանակցությունների հաջողության վրա, Անդրկովկասյան սեյմը իր հրամաններով լոկ նպաստում էր վրացական ու հայկական զորամասերի կազմալուծմանն ու բարոյալքմանը։

Այնինչ, թուրքական հրամանատարությունը, կազմակերպելով իր զորքերի սրընթաց հարձակումը, նպատակադրվել էր սեյմի պատվիրակությանը կանգնեցնել կատարված փաստի առջև՝ գրավելով Անդրկովկասի մի շարք մարզերը։ Վերջապես, ապրիլի 6-ին թուրքական կողմը անդրկովկասյան պատվիրակությանը ներկայացրեց վերջնագիր՝ պահանջելով 48 ժամվա ընթացքում ճանաչել իրենց կողմից առաջ քաշված հաշտության պայմանները, այսինքն՝ Թուրքիային զիջել Բաթումի, Կարսի ու Արդահանի մարզերը։

Ապրիլի 8-ին տեղի ունեցավ կոմիսարիատի ու սեյմի բոլոր ֆրակցիաների ներկայացուցիչների համատեղ նիստ, որտեղ քննարկվում էր թուրքական վերջնագրին ներկայացվելիք պատասխանի նախագիծը։ Որոշվեց Թուրքիային զիջել Օլթիի ամբողջ շրջանը,

1 Allen and Muratoff, p. 44.

Արդահանի մարզի հարավային մասը, Կարսի մարզի հարավ-արևմտյան շրջանները և Կաղզվանի մարզի արևմտյան մասը։ Բացի դրանից, պատրաստակամություն էր հայտնվում թուրքերի հետ համաձայնագիր կնքել հայկական հարցի վերաբերյալ՝ թուրքական պատվիրակության համար ընդունելի պայմաններով [1]։ Այդ պատասխանը, որն ըստ էության նշանակում էր սեյմի լրիվ, անվերապահ կապիտուլյացիան թուրք նվաճողների առջև, նույն օրը ուղարկվեց Ռաուֆ-բեյին։

Այդ ժամանակամիջոցում թուրքական զորքերն արդեն հասցրել էին գրավել Արդահանը և Բաթումից 8 կմ. հեռավորության վրա էին գտնվում։ Իսկ հիմնական ուղղության վրա առաջին կովկասյան կորպուսի զորամասերը մոտենում էին Կարսին։

Թուրքերից պատասխան չստանալով, Չխենկելին ապրիլի 8-ին հեռագրեց Թիֆլիս՝ Բրեստի պայմանագիրը ճանաչելու անհրաժեշտության մասին։ Նա հավատացած էր, որ թուրքական կառավարությունը չի ընդունի այն պայմանները, որոնք հենց նոր սեյմը ընդունել էր։ Նա գիտեր, որ թուրքական զորքերն արդեն գրավել են այն տերիտորիաները, որոնք անդրկովկասյան կառավարությունը համաձայնվել էր զիջել Թուրքիային։ Իր հեռագրի պատասխանը չստանալով, Չխենկելին, օգտվելով իր արտակարգ լիազորություններից, ապրիլի 10-ին պատասխանեց թուրքական վերջնագրին (որի ժամկետն արդեն անցել էր), որ անդրկովկասյան պատվիրակությունը «ընդունում է Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը և պատրաստ է նրա հիման վրա շարունակել հետագա բանակցությունները» [2]։

Ապրիլի 13-ին Ռաուֆ-բեյը հաղորդեց Չխենկելուն, որ թուրքական կառավարությունը տեղեկանալով այն մասին, որ անդրկովկասյան պատվիրակությունը ճանաչում է Բրեստի պայմանագիրը, անհրաժեշտ է համարում իր դաշնակիցների մասնակցությունը բանակցություններին և Անդրկովկասի կողմից իր անկախության հայտարարումը [3]։

Դա նշանակում էր, որ գրավելով Արդահանի, Կարսի ու Բաթումի մարզերը՝ ի խախտումն Բրեստի հաշտության պայմանների, որոնք նախատեսում էին հիշյալ շրջաններում հանրաքվեի անցկացումը՝ նրանց ապագա պետական պատկանելիության հարցը որո-

1 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 7, թ. 178—181։

2 «Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии», № 77.

3 Նույն տեղում, № 81։

շելու համար, թուրքերն արդեն ձգտում էին, որպեսզի Անդրկովկասը հռչակի իր «անկախությունը»՝ հետագայում նրա նվաճումը դյուրացնելու նպատակով։

Բրեստի հաշտությունը ճանաչելու հարցը քննարկվեց սեյմի նիստում ապրիլի 13-ին։ Երկար վիճաբանություններից ու դատարկ ճառերից հետո (վրացական մենշևիկների պարագլուխ Ծերեթելու հայտարարության ոգով՝ «Մենք կկարողանանք մեր սահմաններից այն կողմ նետել թշնամուն և նրանից ազատագրել մեր հողերը»), որոշվեց հետևյալը. «Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Անդրկովկասի սահմանների վերաբերյալ Թուրքիայի ու Անդրկովկասի միջև հաշտության համաձայնություն չի կայացվել, անդրկովկասյան պատվիրակությանը առաջարկվում է անհապաղ մեկնել Թիֆլիս»[1]։

Այնինչ, թուրքական զորքերը, շարունակելով իրենց հարձակումը, արդեն մոտեցել էին Բաթումին։ Ապրիլի 12-ին Վեհիպ-փաշան Բաթումի պարետին վերջնագիր ներկայացրեց մինչև ապրիլի 13-ի ժամը 4-ը քաղաքը հանձնելու մասին։ Նշված ժամկետում պատասխան չստանալով, ապրիլի 14-ին թուրքական 37-րդ դիվիզիայի զորամասերը հարձակում գործեցին Բաթումի վրա։ Ամրոցի պարետ գեներալ Գեդևանովը, առանց մարտն ընդունելու, որոշեց հանձնել քաղաքը, թեև նա իր տրամադրության տակ ուներ 10 հազար զինվոր և 100 թնդանոթ։ Անկասկած է, որ եթե չլիներ Գեդևանովի դավաճանությունը, Բաթումը կարելի էր պահել՝ առավել ևս որ սեծովյան նավատորմը նրան առաջարկեց իր օգնությունը։ Թուրքերին կամովին գերի հանձնվեցին Գեդևանովը և վրացական առաջին դիվիզիայի հրամանատար գեներալ Արթմելաձեն՝ իրենց շտաբներով։ Բաթումը գրավելուց հետո թուրքական զորքերը գրավեցին Աբաստումանը և շարունակեցին իրենց հարձակումը Քութայիսի ու Թիֆլիսի նահանգներում։

Թուրքական զավթիչներին հակահարված տալու գործը կազմակերպելու փոխարեն, ժողովրդական զանգվածների կամքին հակառակ և թուրքական զավթիչների պահանջով, ապրիլի 22-ին Անդրկովկասը հռչակվեց ֆեդերատիվ «անկախ» հանրապետություն։

Ռուսաստանից Անդրկովկասի անջատման հարցը սեյմում քննելու ժամանակ առանձին պատգամավորներ, կանխատեսելով այդ քայլի կործանարար հետևանքները, այդ որոշման դեմ դուրս եկան։ Այսպես, էսեռ Թումանովը ուղղակի հայտարարեց. «Պետք է անկեղծորեն խոստովանել, որ Անդրկովկասի «անկախության» գաղա-

1 «Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии», № 83.

փարը գալիս է թուրք իմպերիալիստներից... այդ հարցը Անդրկովկասի կենաց ու մահվան հարցն էր։ Ինչո՞ւ դուք չեք դիմում հանրաքվեի օգնությանը։ Հավատացա՞ծ եք արդյոք դուք, որ եթե այդ հարցը վճռվեր ազատ քվեարկության ճանապարհով, ժողովուրդը չէր ասի՝ «չեմ ցանկանում այն անկախությունը, որը գալիս է թուրքական սուլթանի մահակի տակից... անկախություն, որը հռչակված է այնպիսի պայմաններում, ինչպիսին ներկայումս գոյություն ունի Անդրկովկասում, դա նշանակում է անցում դեպի Թուրքիայի կողմից լրիվ ստրկացմանը։ Անդրկովկասը չափազանց թույլ տնտեսական ուժեր ունի, որպեսզի կարողանար ներկայումս իր սեփական կողմնորոշումն ունենալ։ Անդրկովկասն անկախ հռչակելը ոչ այլ ինչ է, եթե ոչ կողմնորոշում դեպի Թուրքիան և այդ փաստը դուք ոչ ոքից չեք կարողանա թաքցնել»[1]։

Այս համոզիչ ինքնամերկացումը բացահայտում է սեյմի դավաճանության հրեշավոր բնույթը։ Սակայն սեյմի մեծամասնությունը հավատարիմ մնաց իր հակազգային քաղաքականությանը։ Սովետական Ռուսաստանի հանդեպ տածած ատելությունը և վախը Անդրկովկասում գնալով աճող հեղափոխական շարժումից նրան մղում էին դեպի դավաճանություն՝ երկրամասի հանձնումը թուրք ներխուժողների կողոպտմանը։

Սովետական կառավարությունը կտրուկ բողոք հայտնեց անդրկովկասյան հակառևոլյուցիայի այդ ապօրինի քայլի դեմ։ Մոսկվայում Թուրքիայի դիվանագիտական ներկայացուցչի և Ստամբուլում Սովետական Ռուսաստանի ներկայացուցչի բացակայության պատճառով ՌՍՖՍՌ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատը Մոսկվայում գերմանական դեսպան Միրբախին ուղղված 1918 թվականի մայիսի 15-ի նոտայում իր բողոքը հայտնեց Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու դեմ։ Հիշյալ փաստաթղթում նշվում էր, որ «Անդրկովկասի շատ վայրերում այսպես կոչված Անդրկովկասյան կառավարության իշխանությունը բոլորովին չի ճանաչվում և ընդհանրապես ամբողջ Անդրկովկասում նրա դեմ են արտահայտվում ժողովրդական լայն զանգվածները»։ Ի հաստատումն այդ բանի, նոտայում բերվում էին մի շարք կոնկրետ տրվյալներ. «Թիֆլիսի և Քութայիսի նահանգներում բնակչությունը բազմիցս բողոք է հայտնել Ռուսաստանից անջատվելու դեմ։ Սուխումում, Փոթիում, Քութայիսում, Գորիում, Թիֆլիսում, Դուշեթում և վրացական այլ քաղաքներում ու ավաններում կայացած

1 «Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии», № 99.

հսկայական ցույցերում ընդունվում են որոշումներ, որոնք դատապարտում են սեյմին՝ ապօրինի կերպով իշխանությունն իր ձեռքը վերցնելու համար և պահանջում են հանրաքվե անցկացնել։ Այդ որոշումներում ընդգծվում է, որ սեյմի անդամները Համառուսաստանյան գործադիր ժողովի մեջ էին ընտրվում հեղափոխության նվաճումներն ամրապնդելու համար և որ նրանք չունեին և չէին կարող ունենալ որևէ լիազորություններ Ռուսաստանից անջատվելու հարցի վճռման մեջ։ Հայկական գյուղերն ու քաղաքները ավելի մեծ համառությամբ են պահանջում հանրաքվե անցկացնել՝ պնդելով այն բանի վրա, որպեսզի իրենց պատվիրակները հեռանան սեյմից... Բաքուն սեյմի անդամների խմբին հայտարարեց ուղուրպատորներ, նույն ոգով արտահայտվեցին Լենքորանը, Ալյաթը, Դերբենտը, Պետրովսկը, Հաջիկաբուլը, Քյուրդամիրը և ընդհանրապես ամբողջ Արևելյան Անդրկովկասը՝ ընդհուպ մինչև Ելիզավետպոլ»[1]։

Անդրկովկասի «անկախության» հռչակման մասին նոր կառավարության նախագահ Չխենկելին շտապ կերպով հեռագրեց Վեհիպ-փաշային. «Անդրկովկասն արդեն հայտարարվել է անկախ ֆեդերատիվ հանրապետություն, որի մասին հայտնված է տերություններին։ Ուստի կատարված է նաև այն պայմանը, որի մասին ասվում է օսմանյան պատվիրակության 1918 թվականի ապրիլի 13-ի դեկլարացիայում» (ընդգծումը մերն է— Ե. Ս.)։

Այդ նույն հեռագրում Չխենկելին հաղորդում էր, որ կառավարությունը հավանություն է տալիս անդրկովկասյան հաշտության պատվիրակության ապրիլի 10-ի դեկլարացիային՝ Բրեստի հաշտությունը ճանաչելու վերաբերյալ և առաջարկում է վերսկսել հաշտության բանակցությունները՝ Թուրքիայի հետ ամենաարագ ժամկետում հաշտություն կնքելու համար[2]։

Մինչդեռ անդրկովկասյան հակահեղափոխության պարագլուխները նիստեր էին գումարում և թուրք զավթիչներին ձեռնտու որոշումներ ընդունում, վերջիններս անգործության չէին մատնված։ Նրանք շարունակում էին իրենց ինտերվենցիան դեպի Անդրկովկասի խորքը։ Կարսի ուղղությամբ թուրքական զորքերը Քյազրմ Կարաբեքիր-փաշայի հրամանատարությամբ հաղթահարելով հայկական զորամասերի համառ դիմադրությունը, որոնք մի քանի անգամ ետ էին մղել թուրքերի գրոհները, մոտենում էին Անդրկովկասի դարպասին՝ Կարսին։ Կարսի բերդը լավ էր ամրացված։ Այն

1 «Документы внешней политики СССР», т. I, № 179.

2 «Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии», № 102.

պաշտպանում էին հայկական կորպուսի 6 հազար մարտիկներ. թեև թուրքական ուժերը կրկնակի չափով գերազանցում էին Կարսի կայազորի զորքերին[1], վերջինս ի վիճակի էր մեկ ամիս պաշտպանել ամրոցը[2]։

Հաշվի առնելով այդ դժվարությունները և հենվելով սեյմի կողմից Բրեստի պայմանագիրը ճանաչելու վրա, թուրքական հրամանատարությունը անդրկովկասյան կառավարությունից անհիմն կերպով պահանջեց առանց մարտի հանձնել նաև ամբողջ Կարսի մարզը։ Ի պատասխան Վեհիպ-փաշայի այդ վերջնագրին, Չխենկելին հայկական կորպուսի հրամանատարությանը կարգադրեց դիմադրություն ցույց չտալ և Կարսի էվակուացիայի պայմանների շուրջ թուրքական հրամանատարության հետ բանակցությունների մեջ մտնել։ Չխենկելին աղերսում էր Վեհիպ-փաշային մեկ ամիս ժամանակ հատկացնել Կարսից զորքերը դուրս բերելու, քրիստոնեական բնակչությունը էվակուացնելու և ռազմական գույքն ու նյութական այլ արժեքները քաղաքից փոխադրելու համար[3]։ Սակայն թուրքական հրամանատարությունը ցանկանում էր Կարսը գրավել այնտեղ եղած բոլոր հարստությունների և ռազմական գույքի հետ միասին։ Ապրիլի 25-ին Քյազրմ Կարաբեքիր-փաշայի զորքերը Կարսի մատույցներից երկու կիլոմետր հեռավորության վրա էին գտնվում։

Անդրկովկասյան կառավարության կապիտուլյանտական այդ կարգադրությունը կաղմալուծեց Կարսի պաշտպանների շարքերը։ Ապրիլի 25-ին քաղաքն առանց կռվի հանձնվեց թուրքերին։ Կարսի մարզային կոմիսար Զամոևը երկու օր հետո քաղաքը թողնելու հանգամանքների մասին հեռագրում էր հետևյալը. «Մեր բոլորիս համար անսպասելի և չափազանց կարճ ժամկետում Կարսի ամրոցի հանձնումը՝ Թիֆլիսից ստացված կարգադրության համաձայն, հանգեցրեց այն բանին, որ Անդրկովկասի այդ պատվարը պաշտպանելու համար լավ նախապատրաստված ազգաբնակչությունը ստիպված էր բառացիորեն ամեն ինչ թողնել և ապրիլի 25-ի երեկոյան ժամը 5-ին լքել Կարսը։ Քաղաքը բռնկված էր հրդեհի բոցերով, այրվում էին լավագույն շենքերը։ Բնակչության նահանջի տեսարանը աննկարագրելի է»[4]։

1 Кадышев А. Б., Интервенция и гражданская война в Закавказье, М., 1960, стр. 53.

2 «Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии», № 123.

3 Նույն տեղում։

4 Նույն տեղում։

Բնական է, որ Անդրկովկասի կառավարության կողմից Կարսի հանձնումը Թուրքերին առաջ բերեց ժողովրդական զանգվածների բուռն զայրույթը։ Իր հուշերում Խատիսովը խոստովանում էր, որ Կարսի հանձնումը ուժեղ դժգոհություն առաջ բերեց։ «Ժողովրդի մեջ առաջ եկած հուզմունքը չեզոքացնելու համար,—վկայում է նա,— մենք որոշեցինք հետաքննություն անցկացնել, իմանալու համար, թե ինչքան ժամանակ Կարսը կարող էր պաշտպանվել, եթե չլիներ հանձնվելու վերաբերյալ հրամանը»։ Ինքնարդարացման նպատակով դավաճանները որպես էքսպերտ հրավիրեցին կովկասյան բանակի շտաբի պետ գեներալ Լևանդովսկուն։ Վերջինս պնդում էր, թե իբր Կարսի դրությունը ապրիլի 24-ին անհուսալի էր, նրա ժամերը հաշվված էին։ «Քանի որ հասարակայնությանը շարունակում էր հուզել Կարսի անկման հարցը,— հաղորդում է այնուհետև Խատիսովը,— կառավարությունը 1918 թվականի մայիսի 5-ին մանրամասն և փաստական մի հաղորդում հրապարակեց, որտեղ ներկայացվում էին բոլոր այն հանգամանքները, որոնք Կարսի հանձնման պատճառ էին հանդիսացել» [1]։

Այդ հաղորդման մեջ, որը կազմվել էր կառավարության ղեկավար Չխենկելու կողմից, բացի ընդհանուր ֆրազներից, չի բերված և ո՛չ մի կոնկրետ փաստարկ, որը կարողանար արդարացնել Բաթումն ու Կարսը առանց կռվի Թուրքերին հանձնելը։ Այսպես, օրինակ, Բաթումի կապիտուլյացիայի վերաբերյալ ասվում է, որ մարտի 13-ին Տրապիզոնում անդրկովկասյան պատվիրակության նախագահ Չխենկելին «երկու անգամ հեռագրել է Բաթում՝ ներքին գործերի մինիստրին այն մասին, որ Բաթումի մատույցների կամավոր էվակուացիան ինքն անհրաժեշտ է համարում մի շարք նկատառումներից ելնելով» [2], որոնք այդպես էլ անհայտ մնացին։ Նման ընդհանուր ֆրազներով Չխենկելին փորձում էր «հիմնավորել» Կարսի հանձնումը Թուրքերին։

Կարսը թողնելուց հետո հայկական զորամասերը նահանջեցին դեպի Ալեքսանդրապոլ։ Ճանապարհին, չնայած Թուրքերի հետ ապրիլի 25-ին կնքված զինադադարին, նրանք անսպասելիորեն ենթարկվեցին հակառակորդի հարձակմանը, որը նրանց հաջողվեց ետ մղել։

Կարսի ու շրջակայքի ամբողջ քրիստոնեական ազգաբնակչությունը (188 հազար մարդ), որը հիմնականում բաղկացած էր հայերից, վախենալով նոր ջարդից, զորքերի հետ միասին թողեց քաղաքը։

Թուրք նվաճողների նպատակադրումը ժամանակին ճիշտ կերպով բացահայտել է ականավոր բոլշևիկ Սարգիս Կասյանը իր «Ո՞ւր է ելքը» գրքույկում, շեշտելով, որ «տաճկական զինվորական իմպերիալիզմը ձգտում էր ամբողջապես կլանել Հայաստանը հայ արյան ծովի վրա» [1]։ Դրա ապացույցն էր Թուրք զավթիչների հետագա առաջխաղացումը Հայաստանի և Անդրկովկասի խորքերը։

Շարունակելով իրենց զավթողական քաղաքականությունը, Թուրքերը ոչ միայն խախտեցին Բրեստ-Լիտովսկի պայմանագրի 4-րդ հոդվածի պայմանները և գրավեցին Կարսի, Արդահանի, Արդվինի ու Բաթումի շրջանները, այլև գրավեցին ուրիշ մարզեր։ Թուրքական զավթիչների կողմից այդ մարզերի գրավումը ուղեկցվում էր հայ ազգաբնակչության նկատմամբ նոր գազանային շարագործություններով և ազգային երկպառակություն բորբոքելով։ Այդ պայմաններում, Թուրքական իշխանությունների հսկողության տակ, կազմակերպված հանրաքվեն կոպիտ խեղկատակության վերածվեց։

Սովետական Ռուսաստանը, որն այն ժամանակ դժվարին պայքար էր մղում օտարերկրյա ինտերվենտների ու ներքին սպիտակգվարդիականության դեմ, ի վիճակի չէր զինված աջակցություն ցույց տալ Անդրկովկասի ժողովրդական զանգվածներին՝ Թուրք նվաճողների հարձակումը ետ մղելու համար։ Սովետական Ռուսաստանի կենտրոնական նահանգների և Անդրկովկասի միջև ընկած տերիտորիան այն ժամանակ գտնվում էր սպիտակգվարդիականների հսկողության տակ։ Սակայն սովետական կառավարությունը բազմիցս իր բողոքն է հայտնել Թուրք զավթիչների կողմից հայ ժողովրդի նկատմամբ գործադրված գազանությունների, ինչպես նաև Բրեստ-Լիտովսկի պայմանագրի՝ Անդրկովկասին վերաբերող հոդվածները խախտելու առթիվ։

1918 թվականի սեպտեմբերի 20-ին սովետական կառավարության նոտայում մերկացվում էին Թուրքական ներխուժողների խարդախ մեթոդները, որոնք ձգտում էին ցույց տալ, թե իբր Կարսը, Արդահանն ու Բաթումը միացվել են Թուրքիային՝ տեղի ազգաբնակչության ազատ կամքի արտահայտման հետևանքով։ Սովետական կառավարության նոտայում ընդգծվում էր, որ «Բրեստ-Լիտովսկի պայմանագրի 4-րդ հոդվածը նախկինում ռուսական

1 «Заря Востока», 15. XI. 1925, № 205.

2 «Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии», № 144.

1 Ս. Ատենյան (Ս. Կասյան), Ո՞ւր է ելքը, Երևան, 1919, էջ 18։

ռեսպուբլիկայի կազմի մեջ մտնող Կարսի, Արդահանի ու Բաթումի մարզերի ազգաբնակչությանը իրավունք էր վերապահում նոր կարգ հաստատել իր հարևան պետությունների և հատկապես Թուրքիայի հետ համաձայնեցված։

Նշված մարզերի ճակատագիրը, նրանց միջազգային իրավական դրությունը պետք է որոշվեր այդ մարզերի ազգաբնակչության ազատ ինքնորոշման ճանապարհով։ Մինչդեռ, պայմանագիրը կնքելուց անմիջապես հետո, այդ մարզերը գրավվեցին Թուրքական ռազմական ուժերի կողմից և նրանց նկատմամբ կիրառվեց ռազմական օկուպացիայի ռեժիմ, որն ուղեկցվում էր խաղաղ ազգաբնակչության անթույլատրելի կողոպուտով ու բռնություններով։ Միաժամանակ Թուրքական ադմինիստրացիա մտցնելու հետ մեկտեղ կատարվեց 19 տարեկանից բարձր տղամարդկանց հարկադիր հավաք։

Ազգաբնակչությունը, որի կամքի ազատ արտահայտմամբ միայն պետք է հաստատվեր նոր կարգը, նախապես տեռորի էր ենթարկվել և դրվել այնպիսի պայմանների մեջ, որ երեք մարզերի բնակչությանը տրված իրավունքը վեր էր ածվում բացահայտ ծաղրի նրանց նկատմամբ։ Ընտրության նախօրյակին անվանի քաղաքացիները, որոնց ազդեցությունը կարող էր լինել ոչ հօգուտ Թուրքիայի, արտաքսվում էին քաղաքից, ձերբակալվում, իսկ շատ դեպքերում՝ նույնիսկ գնդակահարվում։ Քվեարկությունը տեղի էր ունենում Թուրքական իշխանությունների բացահայտ վերահսկողության ներքո... Նման պայմաններում քվեարկության արդյունքները չէին կարող չկանխորոշվել։

Ռուսաստանից խլված մարզերի ազգաբնակչության նկատմամբ գործադրված բռնությունը համարելով պայմանագրի 4-րդ հոդվածի էական խախտում, սովետական կառավարությունը սույնով հայտարարում է, որ նա չի կարող համաձայնվել Կարսի, Արդահանի, Բաթումի մարզերի ազգաբնակչության այսպես կոչված կամքի արտահայտության հետևանքների հետ և գտնում է, որ այդ ազգաբնակչության իրավունքը՝ իրենց մարզերում նոր կարգ հաստատելու, չի օգտագործված և նշված մարզերի նոր իրավիճակի հարցը բաց է մնում»[1]։

Իր պատասխան նոտայում Թուրքական կառավարությունը ամեն կերպ աշխատում էր «արդարացնել» իր գործողությունները։ ՌՍՖՍՌ կառավարությունը 1918 թվականի հոկտեմբերի 10-ի նոտայում նորից մատնանշում էր, որ Թուրքիան Կարսի, Արդահանի

1 «Документы внешней политики СССР», т. I, № 346.

ու Բաթումի մարզերը գրավել է ապօրինի կերպով՝ ի խախտումն Բրեստի հաշտության պայմանագրի 4-րդ հոդվածի։

Հիշյալ փաստաթղթում ասված էր. «Այն հարցը, թե սովետական կառավարությունը արդյոք բոլոր մանրամասներով իրագործել է Բրեստի պայմանագրի որոշումը Կարսի, Բաթումի ու Արդահանի մարզերը Թուրքական իշխանություններին հանձնելու մասին, զբաղված է ամեն մի իմաստից թեկուզ այն պատճառով, որ Թուրքական ռազմական ուժերը, հաշվի չնստելով պայմանագրային պարտավորությունների հետ, ժամանակից շուտ և ռուսական իշխանությունների հետ համաձայնության չեկած, սկսեցին ներխուժել Կարսի, Բաթումի և Արդահանի մարզերը, որտեղ նրանք դաշանաբար սկսեցին հաշվեհարդար տեսնել տեղական ազգաբնակչության հետ»[1]։

Թուրքական զորքերը ոչ միայն տեռորի էին ենթարկել Կարսի, Արդահանի ու Բաթումի շրջանների ազգաբնակչության հիմնական մասին, այլև ռեպրեսիվ միջոցներ ձեռնարկեցին տեղի մահմեդական ազգաբնակչության այն խավի դեմ, որը հանրաքվեի նախօրյակին պատրաստվում էր Թուրքիային միանալու դեմ քվեարկել։ Սովետական կառավարության նոտայում այդ մասին ասվում էր հետևյալը. «Տեղական մահմեդական ազգաբնակչության ներկայացուցիչները դիմել են ռուսական կառավարությանը լուրջ հիմնավորված և բազմաթիվ փաստական նյութով խարսխված բողոքներով՝ ժողովրդական կամքի արտահայտման այն անթույլատրելի խեղաթյուրման առթիվ, որն իրենից ներկայացնում էր այդ մարզերի դժբախտ ազգաբնակչության այսպես կոչված քվեարկությունը՝ իրենց ապագա ճակատագրի հարցով»[2]։

Այս փաստաթղթերն ու նյութերը անհերքելիորեն վկայում են այն մասին, որ Կարսի, Արդահանի և Բաթումի տերիտորիաները 1918 թվականին փաստորեն գրավվեցին ուղղակի անեքսիայի հետևանքով, որը Թուրքիայի կողմից Բրեստ-Լիտովսկի պայմանագրով ստանձնած պարտավորությունների կոպիտ խախտում էր նշանակում։

Բնական է, որ սովետական կառավարությունը հենց այն ժամանակ էլ հայտարարեց, որ նա չի ճանաչում Թուրք զավթիչների կողմից Կարսի, Արդահանի ու Բաթումի մարզերում անցկացրած հանրաքվեի արդյունքները և դրանց միացումը Թուրքիային անօրինական է համարում։

1 «Документы внешней политики СССР», т. I, № 363.
2 Նույն տեղում։

Այսպիսով, չնայած անդրկովկասյան սեյմի և նրա կառավարության կեղծ պնդումներին, որ իբր «Սովետները Թուրքերին զիջեցին Կարսը, Արդահանն ու Բաթումը», բացարձակորեն անվիճելի է, որ անդրկովկասյան հակահեղափոխական կառավարությունն ինքը այդ մարզերը առանց որևէ դիմադրության հանձնեց Թուրքիային։

***

Ներքին պայքարով ու երկպառակություններով ջլատված անդրկովկասյան կառավարությունը, որը հենարան չուներ երկրի ներսում, ի վիճակի չէր դիմադրություն կազմակերպել դեպի Անդրկովկասի խորքը առաջխաղացող Թուրք զավթիչներին։ Ուստի, Թուրքիայի հետ շուտափույթ հաշտության պայմանագիր կնքելու նպատակով, նա որոշեց վերսկսել Տրապիզոնում ընդհատված բանակցությունները։ Այդ բանակցությունները վերսկսվեցին Բաթումում՝ 1918 թվականի մայիսի 11-ին։ Թուրքական պատվիրակությունը գլխավորում էր արդարադատության մինիստր Խալիլ-բեյը։ Անդրկովկասյան պատվիրակությունը գլխավորում էր այսպես կոչված Անդրկովկասյան ֆեդերացիայի կառավարության նախագահ Չխենկելին։ Թուրքերի համար անսպասելի կերպով կոնֆերանս ժամանեց և գերմանական պատվիրակությունը գեներալ ֆոն Լոսովի գլխավորությամբ՝ Անդրկովկասում կայսերական Գերմանիայի շահերը պաշտպանելու պատճառաբանությամբ։ Կոնֆերանսի աշխատանքներին մասնակցում էին նաև Թուրքական նվաճողների գործակալությունը հանդիսացող Հյուսիսային Կովկասի հակահեղափոխական ուժերի ներկայացուցիչները, որոնք ձգտում էին Հյուսիսային Կովկասը միացնել Օսմանյան կայսրությանը։ ՌՍՖՍՌ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի մայիսի 15-ի վերը հիշատակված նոտայում նշվում էր, որ առանց Սովետական Ռուսաստանի ներկայացուցիչների Բաթումի կոնֆերանսը իրավասու չէ վճռելու տերիտորիալ հարցերը, քանի որ այսպես կոչված Անդրկովկասյան կառավարությունը, որը հայտարարել է Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու մասին, չի ճանաչվել Ժողովրդական կոմիսարների սովետի կողմից։ «Պնդելով Բաթումում ընթացող բանակցություններին ռուսական կառավարության պատվիրակների մասնակցության վրա,— ասվում էր այնուհետև նոտայում,— Ժողովրդակա ն կոմիսարիատը ընդգծում է, որ դրանով ամենևին էլ չի նախատեսվում ռուսական կառավարության կողմից այսպես

կոչված Անդրկովկասյան կառավարության ճանաչումը, դեռ ավելին՝ առանց նրա մասնակցության կնքված պայմանագիրը նա իրեն համար պարտադիր չի գտնի ճանաչելու»[1]։ Այս նոտային պատասխան չհետևեց։ Թուրքիայի կառավարողները շարունակում էին իրենց պայմանները թելադրել անդրկովկասյան հակառևոլյուցիայի պարագլուխների ողորմելի խմբին, որն առանց դիմադրության Անդրկովկասի ժողովուրդներին դնում էր Թուրք ներխուժողների հարվածի տակ։

Բաթումի կոնֆերանսի առաջին իսկ նիստում անդրկովկասյան պատվիրակության նախագահը հայտարարեց, որ սկսվող բանակցությունները պետք է դիտել որպես Տրապիզոնի բանակցությունների ուղղակի շարունակությունը, և որ դրանց հիմքում՝ օսմանյան պատվիրակության մարտի 21-ի դեկլարացիայի և անդրկովկասյան պատվիրակության ապրիլի 10-ի պատասխանի համաձայն, պետք է դրվի Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը։ Բայց Խալիլ-բեյը տեղնուտեղը և ամենավճռական ձևով մերժեց անդրկովկասյան պատվիրակության կողմից առաջարկված բանակցություններ վարելու հիմքը։ Նա հայտարարեց, որ օսմանյան կառավարությունը այլևս չի կարող դեկավարվել Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմաններով, քանի որ Անդրկովկասն արդեն ինքնուրույն պետություն է, որը ճանաչվել է Թուրքիայի կողմից՝ մայիսի 27-ին, ուստի և Բրեստ-Լիտովսկի պայմանները չեն կարող տարածվել նրա վրա։ Թուրքական պատվիրակությունը ընդգծում էր, որ Տրապիզոնի կոնֆերանսից հետո շատ բան է փոխվել և Թուրքական կառավարությունն այլևս չի կարող սահմանափակվել տերիտորիալ այն ձեռքբերումներով, որոնք նախատեսված էին Բրեստ-Լիտովսկի պայմանագրով։

Այդ ժամանակամիջոցում Թուրքական զորքերը հեշտությամբ գրավելով Բաթումի ու Կարսի մարզերը, 1918 թվականի մայիսին ներխուժեցին Թիֆլիսի ու Երևանի նահանգները։ Այդ հաջողությունը ոգեշնչում էր էնվերին՝ կրկնելու 1914 թվականի ձախողված իր արշավանքը, որը նպատակ ուներ Օսմանյան կայսրությանը միացնել ամբողջ Կովկասը և Իրանական Ադրբեջանը, ներթափանցել Անդրկասպյան երկրամասը և այնուհետև Աֆղանստան, Հարավային Իրան և Հյուսիսային Հնդկաստան՝ այդ երկրների մահմեդական ազգաբնակչությանը անգլիացիների դեմ ապստամբության կոչելու համար։

Բաթումի կոնֆերանսի ընթացքում ամենից ավելի ցայտուն

1 «Документы внешней политики СССР», т. I, № 179.

կերպով դրսևորվեցին Թուրքիայի կառավարող վերնախավի նվաճողական ձգտումները։ Բաթումի բանակցությունների ժամանակ թուրքական հրամանատարությունը շարունակում էր իրականացնել էնվերի վերը հիշատակված պլանը, որի արագ իրագործման համար թուրքական պատվիրակությունը մայիսի 14-ին վերջնագիր ներկայացրեց՝ պահանջելով թուրքական զորքերի հրամանատարությանը տրամադրել Ալեքսանդրապոլ—Երևան—Ջուլֆա երկաթուղագիծը։ Այդ լկտի պահանջը «հիմնավորվում» էր Իրանում անգլիացիների գործողություններին հակազդելու նպատակով զինված ուժեր փոխադրելու «անհրաժեշտությամբ»։ Մինչդեռ իրականում դա նշանակում էր ամբողջ Հայաստանը հանձնել թուրքական նվաճողների հոշոտմանը։

Անդրկովկասյան պատվիրակությունը բողոքով պատասխանեց այդ պահանջին։ Բայց նա, իհարկե, չէր կարող կասեցնել թուրքական հորդաների առաջխաղացումը, որոնք հարձակման անցան Ալեքսանդրապոլի վրա՝ Բաթումի վերջնագիրը ներկայացնելուց անմիջապես հետո։ Մայիսի 15-ի առավոտյան թուրքական զորքերը Ալեքսանդրապոլի շրջանում անսպասելիորեն հարձակում գործեցին հայկական կորպուսի վրա։

Հայկական կորպուսի հրամանատար գեներալ Նազարբեկովը թուրքերի կողմից Ալեքսանդրապոլի գրավման մասին իր հաղորդման մեջ մատնանշում էր, որ թուրքական զորքերը ամենաանամոթ կերպով խախտեցին զինադադարը և, առանց որևէ նախազգուշացման հարձակման անցնելով, մայիսի 15-ին գրավեցին Ալեքսանդրապոլը։ Թուրքերի ուխտադրուժ հարձակումը կազմալուծեց հայկական զորամասերի շարքերը և նրանք սկսեցին անկանոն ձևով նահանջել՝ հակառակորդին թողնելով մարտական ողջ տեխնիկան և պարենի բոլոր պաշարները։ Ալեքսանդրապոլի ջոկատի մեջ մրտնող զինվորներից շատերը փախան Թիֆլիս [1]։

Ալեքսանդրապոլի ջոկատի հրամանատարի հաշվետվության համաձայն, քաղաքը հանձնելուց հետո, զինվորների զանգվածային դասալքության հետևանքով ճակատում զորքեր գրեթե չէին մնացել։ 1-ին, 4-րդ, 7-րդ և 8-րդ հրաձգային գնդերը լքել էին իրենց զիրքերը։ Դրանցից յուրաքանչյուրում հաշվվում էին ընդամենը 20—40 հոգի։ Հրաձգային 3-րդ և Կարսի ամրոցի գնդերում կար ընդամենը 100 զինվոր [2]։ Սուրմալուի և Էջմիածնի գավառների ազգաբնակչությունը թուրքերի կողմից Ալեքսանդրապոլը գրավելուց հետո շտապ կարգով էվակուացվում էր։

1 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 19, թ. 19—50։

2 Նույն տեղում, թ. 44—48։

Ալեքսանդրապոլի անկումից հետո, երբ հայկական զորքերը ետ քաշվեցին Արփաչայից ու երկաթուղագծից այս կողմը, հայկական կորպուսի զորքերը կենտրոնացան երեք գլխավոր ուղղությունների վրա՝ Լոռվա, Ղարաքիլիսայի ու Երևանի։ Նազարբեկովի բնորոշմամբ, հայկական զորամասերի վիճակը չափազանց ծանր էր։ Բանակում իշխում էր կատարյալ անկազմակերպվածությունը։ «Իմ տրամադրության տակ դրված կորպուսի ամենասպառնալից հարցը,— հաղորդում էր Նազարբեկովը,— ներկայումս զորքերի ապահովումն է ամեն տեսակի պարենով։ Էվակուացիան ժամանակին կազմակերպելու անհնարինության, գաղթականների կուտակման և Կարսում ու Ալեքսանդրապոլում շարժական կազմի անբավարար լինելու, ինչպես և այդ երկու կետերում թուրքերի կողմից հսկայական պաշարներ գրավելու հետևանքով, կորպուսի տրամադրության տակ մնացած մարտական, իրային, պարենային ու ֆուրաժային պաշարները բոլորովին աննշան են։ Մեր զորքերը գրեթե հասել են հնարավոր նահանջի ծայրահեղ կետերին, հարկ է ընդունել, որ մեր դրությունը, առանց դրսից եկող օգնության, անելանելի է, պատերազմի հետագա շարունակումը թուրքերի հետ անհնարին է դառնում» [1]։

Այս բոլորը քաջ հայտնի էր թուրքական զավթիչներին, որոնք մայիսի 26-ին Բաթումում գտնվող անդրկովկասյան հանրապետության պատվիրակությանը նոր վերջնագիր ներկայացրեցին։ Ինչպես և նախկինում, թուրքական հրամանատարությունը պատրվակ գտավ իր ագրեսիվ նոր գործողությունները արդարացնելու համար։ Երբ նա ցանկանում էր գրավել Ալեքսանդրապոլը և մինչև Ջուլֆա գնացող ամբողջ երկաթուղին, նա որպես պատրվակ մատնանշում էր դեպի Իրան՝ անգլիացիների դեմ զորքեր փոխադրելու անհրաժեշտությունը։ Բայց հենց որ թուրքերը հասան այդ նպատակին, ոչ մի թուրք զինվոր չուղարկվեց Իրան։ Գրավելով Հայաստանի տերիտորիայի մեծ մասը, թուրքերն այժմ ձգտում էին նվաճել ողջ Անդրկովկասը և Հյուսիսային Կովկասը։ Հետագա ինտերվենցիայի համար որպես պատրվակ նրանք այժմ հորինեցին հեքիաթ այն մասին, թե «հարյուր հազարավոր թուրքեր ու մահմեդականներ Բաքվում ու նրա շրջակայքում կրում են անխիղճ ավազակների՝ այսպես կոչված հեղափոխականների արյունոտ լուծը» [2]։ Իրենց հավատակիցներին «փրկելու» համար թուր-

1 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 19, թ. 21—25։ Ամբողջ Հայաստանի զավթմանը թուրք ագրեսորների կողմից խանգարեցին Սարդարաբադի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի համաժողովրդական հերոսամարտերը, որոնց մասին կխոսվի ստորև։

2 Նույն տեղում, գ. 11, թ. 32։

քական վերջնագրում առաջ էր քաշվում Անդրկովկասի երկաթուղային ողջ ցանցը թուրքական զորքերի տրամադրության տակ դնելու պահանջը և Օսմանյան կայսրության ու անդրկովկասյան հանրապետության միջև ընկած սահմանի նոր «ճշտման» անհրաժեշտությունը։

«Սահմանների ուղղման» տակ ենթադրվում էր Օսմանյան կայսրությանը անհապաղ միացնել Նախիջևանի գավառը՝ ներառյալ Օրդուբադը, Շարուր-Դարալագյազի գավառի կեսը, Սուրմալուի ամբողջ գավառը, Էջմիածնի գավառը, Երևանի գավառի կեսը, Ալեքսանդրապոլի գավառի մեծ մասը՝ Ալեքսանդրապոլ քաղաքով և Ախալքալաքի ողջ նահանգը։ Այս վերջնագրին պատասխանելու համար թուրքական պատվիրակությունը Բաթումում 72 ժամ ժամանակ տվեց՝ սկսած մայիսի 26-ի երեկոյան ժամը 8-ից։

Թուրքական նոր վերջնագիրը մահացու հարված էր Անդրկովկասյան սեյմին։ Այստեղ սուր պայքար բորբոքվեց վերջնագրին պատասխան տալու հարցում։ Մուսավաթականները գտնում էին, որ պետք է այն անհապաղ ընդունել, դաշնակները լրիվ մերժում էին թուրքական պահանջները, իսկ վրացական մենշևիկները ձգտում էին Թուրքիայի հետ իրենց համար ձեռնտու հաշտության պայմանների հասնել հայկական տերիտորիաների հաշվին։ Այդ տարաձայնությունները երևան եկան Բաթումի կոնֆերանսի հենց սկզբում։ Տակավին թուրքերի կողմից նոր վերջնագիր ներկայացնելուց առաջ սեյմի պատվիրակության տարբեր ֆրակցիաները իրարից գաղտնի սեպարատ բանակցություններ էին վարում Խալիլ-բեյի հետ։

Սեյմի արտաքին ու ներքին քաղաքականության սնանկության հետևանքով վերջինս ստիպված էր մայիսի 26-ին ընդունել որոշում, որտեղ ասված էր հետևյալը. «Քանի որ պատերազմի ու խաղաղության հարցում անդրկովկասյան անկախ հանրապետությունը ստեղծած ժողովուրդների (այսինքն՝ սեյմում ներկայացված կուսակցությունների— Ս. Ս.) միջև ի հայտ եկան արմատական տարաձայնություններ, որոնց հետևանքով անհնարին է դառնում Անդրկովկասի անունից հանդես եկող մեկ հեղինակավոր իշխանության ելույթը, սեյմը հաստատում է Անդրկովկասի մասնատման փաստը և իր լիազորությունները ցած է դնում» [1]։

1 «Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии», № 162. Վրացական ազգային խորհուրդը մայիսի 26-ին Վրաստանը հռչակեց «անկախ հանրապետություն»։ Մայիսի 28-ին Թիֆլիսում գտնվող Հայկական կենտրոնական ազգային խորհուրդը Հայաստանը նույնպես հռչակեց «անկախ հանրապետություն» և դաշնակցական կառավարությունը հունիսի 17-ին մեկնեց Երևան։ Մայիսի 27-ին մուսավաթականները Ադրբեջանը հայտարարեցին «անկախ հանրապետություն», որի կառավարությունը հաստատվել էր Գյանջայում (Կիրովաբադ)։

Օգտվելով Անդրկովկասի անջատումից և առանձին հանրապետությունների հանդես գալուց, թուրքական զորքերը շարունակում էին իրենց հարձակումը Հայաստանի ու Վրաստանի տերիտորիայում։

Վրացական մենշևիկները Վրաստանն անջատ հանրապետություն հռչակեցին լոկ այն պատճառով, որպեսզի կարողանան Թուրքիայի հետ սեպարատ բանակցություններ սկսել։ Այդ կապակցությամբ Նոյ Ժորդանիան ցինիկորեն հայտարարեց, որ «եթե հայերը խեղդվում են, ապա վրացիները պարտավոր չեն նրանց հետ միասին խեղդվել... Վրաստանը սովոր չէ թուրքերի տիրապետության տակ գտնվել, իսկ հայերը ընտելացել են դրան, և եթե մահմեդականներն անջատվում են Անդրկովկասից, Վրաստանը կգնա նրանց ետևից» [1]։

Այս արտահայտությունը խիստ բնորոշ է. նա վկայում է այն մասին, որ Անդրկովկասի ազգայնական կուսակցությունների՝ մենշևիկների, դաշնակների ու մուսավաթականների միջև ո՛չ մի համերաշխություն ու միասնություն չկար։ Նրանցից յուրաքանչյուրը ձգտում էր փրկվել իր հարևանի հաշվին։ Վրացական մենշևիկները հույս ունեին թուրքական զավթիչներից ազատվել՝ ամբողջ Հայաստանը նրանց հանձնելու միջոցով։

Ստ. Շահումյանը բանվորների, զինվորների և նավաստիների Բաքվի սովետի և Բաքվի գավառի մուսուլմանական գյուղացիության դեպուտատների համագումարի միացյալ հանդիսավոր նիստում 1918 թվականի մայիսի 29-ին արտասանած իր ճառում անարգանքի սյունին գամեց վրացական մենշևիկներին՝ նրանց դավաճանական վարքագծի համար.

«Վրաստանի անկախության հայտարարումը վկայում է մենշևիկների նոր ոճրագործության մասին։ Դա ռևոլյուցիոն ելք չէ ստեղծված դրությունից։ Դա դավաճանության մի նոր փորձ է հանդեպ Վրաստանի հարևան հայ ժողովրդի,— աներևակայելի, անամոթ դավաճանություն։ Նրանք ծանր վիճակ ստեղծեցին Անդրկովկասում ու այժմ լվանում են իրենց ձեռքերը» [2]։

Թուրքական նվաճողներն ամենևին էլ մտադիր չէին բավարարվել միայն Հայաստանի գրավումով, որի վրա հույս էին դրել վրացական մենշևիկները։ Էնվերը գտնում էր, որ նրան առանց դժվա-

1 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 23, թ. 101։

2 Ստ. Շահումյան, Երկեր, հ. 3, էջ 221։

ության կհաջողվի հափշտակել ողջ Կովկասը, այդ թվում և Վրաստանը։ Չնայած Չխենկելու (որն արդեն սեյմի պատվիրակության նախագահը չէր, այլ գլխավորում էր Վրաստանի մենշևիկյան կառավարության պատվիրակությունը) հայտարարությանը այն մասին, որ մայիսի 26-ի վերջնագիրը հնարավոր չէ կիրառել այդ նորաստեղծ կառավարության նկատմամբ, Խալիլ-բեյը պնդում էր, որ վերջնագիրը վերաբերում է Անդրկովկասի ազգայնական բոլոր կառավարություններին՝ ներառյալ Վրաստանը և նա համաձայնվեց վերջնագրի ժամկետը երկարաձգել միայն 24 ժամով։ Խալիլ-բեյի ու Չխենկելու միջև տեղի ունեցած երկարատև գրագրությունից հետո մենշևիկյան կառավարության նախագահ Ն. Ռամիշվիլին մայիսի 31-ի նոտայում հայտարարեց, որ Վրաստանն ընդունում է թուրքական վերջնագիրը։

1918 թվականի հունիսի 4-ին Բաթումում երկու կողմերի միջև կնքվեց պայմանագիր «հաշտության ու բարեկամության մասին»։ Այդ պայմանագրի համաձայն, մենշևիկյան կառավարությունը ճանաչում էր Խալիլ-բեյի կողմից մայիսի 26-ին ներկայացված վերջնագրի մեջ նշված սահմանները՝ Անդրկովկասի ու Օսմանյան կայսրության միջև։ Դա նշանակում էր, որ Ռուսաստանի ու Թուրքիայի միջև հաստատվում է այն պետական սահմանը, որը գոյություն ուներ մինչև 1829 թվականի Ադրիանապոլսի հաշտության պայմանագիրը։ Այսպիսով, բացի Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը խաղտելով զավթած տերիտորիաներից, վրացական մենշևիկները Օսմանյան կայսրությանը զիջեցին Ախալքալաքի ու Ախալցխայի գավառները՝ բացի Ացխուրի, Աբասթումանի ու Զեքարի շրջաններից։

Այդ նույն օրը՝ հունիսի 4-ին Օսմանյան կայսրության ու մենշևիկյան Վրաստանի միջև կնքված լրացուցիչ պայմանագրով վերջինս պետք է անհապաղ ձեռնարկեր իր զորքերի մեծ մասի զորացրմանը։ Նույնիսկ այն աննշան զինված ուժերը, որոնք Վրաստանին թույլ էր տրվում պահել, վերջինս պետք է զինվորական կայազորների միջև բաշխեր ըստ թուրքական հրամանատարության հայեցողության։ Ընդ որում, Վրաստանի սահմանների «պաշտպանությունը» թուրքական հրամանատարությունն իր վրա էր վերցնում։ Վրաստանի կառավարությունը համաձայնվում էր այն բանի հետ, որպեսզի թուրքական բանակը ամեն կարգի ռազմական փոխադրումներ ու զորքերի տեղափոխումներ կատարի Վրաստանի երկաթուղագծերով։ Այդ փոխադրումները «ապահովելու» համար զբաղեցրած կայաններում թույլատրվում էր թուրքական զորքերի ներկայությունը։

Այդ նույն լրացուցիչ պայմանագրի հիման վրա վրացական կառավարությունը պարտավորվում էր «պատշաճ վիճակում պահել ճանապարհները, շարժական ու անշարժ կազմը, արագ կերպով նորոգել բոլոր վնասվածքները, որոնք կարող էին առաջ գալ պատահական ձևով կամ կանխամտածված» [1]։

Այս ստրկացուցիչ համաձայնագրերը ստորագրելով, վրացական մենշևիկները փաստորեն երկիրը դնում էին քաղաքական ու տնտեսական լրիվ կախվածության մեջ Օսմանյան կայսրությունից և վերածում այն երիտթուրքական զավթիչների պլացդարմի՝ Բաքուն գրավելու և այնտեղ սովետական իշխանությունը վերացնելու համար։ Պետք է նշել, որ այդ բանին բացահայտորեն ձգտում էին հենց իրենք՝ վրացական մենշևիկները։

Թուրքական վերջնագիրը ընդունվեց նաև նորակազմ դաշնակցական կառավարության կողմից։ Թուրքական զավթիչները Հայաստանի վրին փաթաթեցին նոր, առավել ծանր պայմաններ։ Հունիսի 4-ին Բաթումում թուրքական ու դաշնակցական կառավարության պատվիրակությունների միջև կնքված «հաշտության և բարեկամության» պայմանագրի համաձայն, բացի Բրեստ-Լիտովսկի պայմանագրի խախտումից հետո զավթած մարզերից, Թուրքիան խլում էր իր օգտին նաև այն տերիտորիաները, որոնք պայմանագիրը կնքելու ժամանակ գրավված էին թուրքական զորքերի կողմից։

Երևանի նահանգից Թուրքիային անցան Սուրմալուի ողջ գավառը, Ալեքսանդրապոլի ու Էջմիածնի գավառների մեծ մասը և Երևանի ու Շարուր-Դարալագյազի գավառների փոքր մասը։ «Անկախ» Հայաստանի տերիտորիան կազմելու էր 9000 քառ. կմ. տարածություն՝ լեռնային ու ամայի շրջաններում (Նոր Բայազետի շրջանը՝ բացառությամբ Բասարգեչարի հարավ-արևելյան մասի, Երևանի, Էջմիածնի ու Ալեքսանդրապոլի շրջանների մի մասը)։ Այդ տերիտորիայի վրա բնակվում էին 230 հազար հայ, 80 հազար մահմեդականներ (դրանցից՝ 5000 քրդեր), 5000 եզդիներ և 6000 այլազգիներ, ընդամենը՝ 321 հազար մարդ։ Այսպիսով, հայկական ազգաբնակչությունը այդ փոքրիկ «անկախ» Հայաստանում կազմում էր Կովկասի ողջ հայ ազգաբնակչության ընդամենը 1/8 մասը [2]։ *Ընդ որում, այդ տերիտորիայի վրա հավաքվել էին գաղթականներ, որոնց թիվը գերազանցում էր տեղի ազգաբնակչությանը։ Նրանք չունեին ապաստարան, ոչ էլ գոյության որևէ միջոց և*

---

1 «Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии», № 176.

2 *ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 1277, թ. 14։*

սովամահության եզրին էին գտնվում։ Արևմտյան Հայաստանից Անդրկովկաս փախած գաղթականների ընդհանուր թիվը կազմում էր 300 հազար մարդ։

Այսպիսով, թուրքական զավթիչները Անդրկովկասից պոկեցին 38 հազար քառ. կմ տարածություն՝ մեկ միլիոն 250 հազար ազգաբնակչությամբ։ Դրանից Վրաստանը կորցնում էր 10 հազար քառ. կմ. տերիտորիա՝ 350 հազար ազգաբնակչությամբ, Հայաստանը՝ 28 հազար քառ. կմ.՝ 900 հազար ազգաբնակչությամբ։ 38 հազար քառ. կմ. տարածությունից 12 հազար 421 քառ. կմ. կազմող տերիտորիան՝ 655 հազար ազգաբնակչությամբ Օսմանյան կայսրությանն էր անցնում Բաթումի պայմանագրերով։ Ընդամենը երիտթուրքերը Անդրկովկասից հափշտակեցին նրա տերիտորիայի 20,6 տոկոսը և ազգաբնակչության 18,5 տոկոսը [1]։

Սակայն այդքանն էլ չբավարարեց թուրք զավթիչներին։ Ինչպես վերը նշվեց, նրանք ծրագրել էին նվաճել ողջ Անդրկովկասը և Հյուսիսային Կովկասը։ Այն բանից հետո, երբ թուրքերին հաջողվեց Բաթումում վրացական մենշևիկներին ու դաշնակներին պարտադրել վերը հիշատակված ստրկացուցիչ համաձայնագրերը և դրանց հիման վրա Անդրկովկասի գլխավոր երկաթուղագծերը իրենց ձեռքն առնել, թուրքական նվաճողները գտնում էին, որ ողջ երկրամասի գրավումը արդեն հեշտ իրականացվելիք մի խնդիր է դառնում։ Ուստի և թուրքական զորքերը շարունակում էին շարժվել դեպի Անդրկովկասի խորքը՝ երկու ուղղություններով՝ Ալեքսանդրապոլ—Ղարաքիլիսա—Թիֆլիս և Ղարաքիլիսա—Դիլիջան—Աղստաֆա—Բաքու։

***

Անդրկովկասի նկատմամբ երիտթուրքերի նվաճողական պլանները չէին համընկնում նրանց դաշնակիցների՝ գերմանական իմպերիալիստների մտադրությունների հետ։ Վերջիններս իրենք էին ձգտում իրենց տիրապետությունը հաստատել Վրաստանում ու Ադրբեջանում, իրենց ձեռքը գցելով, այդպիսով, վրացական մանգանն ու պղինձը և Բաքվի նավթը, որի կարիքն այնքան սուր կերպով զգում էր Գերմանիայի ռազմական արդյունաբերությունը։

1 Завриев Д. С., К новейшей истории северо-восточных вилайетов Турции. Тбилиси, 1947, стр. 70—71.

Հենց դրանումն էր կայանում Թիֆլիսում գերմանական ներկայացուցիչ գնդապետ Կրես ֆոն Կրեսենշտեյնի հիմնական խնդիրներից մեկը [1]։

Քառամյա պատերազմի հետևանքով գերմանական էկոնոմիկայի ուժեղ քայքայման ու գերմանական ռազմական մեքենայի նկատելի թուլացման պայմաններում Բեռլինում արտակարգ կարևոր նշանակություն էին տալիս Անդրկովկասի հումքային ռեսուրսների օգտագործման խնդրին։ Հենց այդ պատճառով էլ ողջ Կովկասը նվաճելու երիտթուրքական պարագլուխների ձգտումը ամենևին էլ ձեռնտու չէր նրանց գերմանական դաշնակիցներին։ Դրանով էր բացատրվում Գերմանիայի ու Թուրքիայի միջև Անդրկովկասի նկատմամբ տարվելիք քաղաքականության հարցում ծագած դիվանագիտական այն սուր պայքարը, որը բռնկվեց հատկապես Բաթումի կոնֆերանսում։

Բաթումի կոնֆերանսում գերմանական ներկայացուցիչ Լոսովի ներկայությունը, Թուրքիայի ու անդրկովկասյան կառավարության միջև ընթացող բանակցություններին իբր որպես միջնորդ հանդես գալու նպատակով, բացատրվում էր հենց նրանով, որ Գերմանիան ցանկանում էր Թուրքիային խանգարել իրականացնելու Անդրկովկասի նկատմամբ մշակված պլանները։ Որ այդ հանգամանքը, իրոք, ձեռնտու էր Վրաստանի այն ժամանակվա կառավարողներին, անմիջապես նշեց Նոյ Ժորդանիան. «Գերմանական պատվիրակության ժամանումը Բաթում,— ասաց նա 1918 թվականի մայիսի 25-ի իր զեկուցման մեջ,— թուրքերի համար տհաճ մի անակնկալ էր, որոնք Անդրկովկասի հետ բանակցությունները դիտում էին որպես իրենց մասնավոր գործը» [2]։

Բաթումի կոնֆերանսում գերմանական պատվիրակությունը ձգտում էր թուրքերի տերիտորիալ հավակնությունները սահմանափակել Բրեստ-Լիտովսկի պայմանագրի Անդրկովկասին վերաբերող հոդվածներով։ Թուրքական բանակի գլխավոր շտաբի պետի տեղակալ ֆոն Սեկտին մայիսի 15-ին ուղարկած իր հեռագրում

1 Կրես ֆոն Կրեսենշտեյնը մինչև 1918 թվականի վերջը Պաղեստինում գործող բանակի հրամանատարն էր։ Մյուլմանի բնորոշմամբ, նա Օսմանյան կայսրությունում 4 տարվա ռազմական ծառայության ընթացքում «բացի ռազմական հրմտությունից, հանդես բերեց նաև դիվանագիտական ականավոր կարողություններ» (Mühlmann C., Das Deutsche-türkische Waffenbündnis im Weltkriege, Leipzig. 1940, S. 197). Ուստի Լյուդենդորֆը Կրես ֆոն Կրեսենշտեյնին ուղարկեց Թիֆլիս, որտեղ նա եռանդուն գործունեություն ծավալեց գերմանական ազդեցությունն Անդրկովկասում ուժեղացնելու ուղղությամբ։

2 «Борьба» 26. V. 1918 г.

Լյուդենդորֆը նրան առաջարկում էր «Էնվեր-փաշային անհապաղ կերպով ետ պահել այն պահանջներից, որոնք Բրեստ-Լիտովսկի պայմանագրով սահմանված տերիտորիաներից այն կողմն են անցնում» [1]։

Գերմանացիները պարզորոշ կերպով ցանկանում էին իրենց ազդեցության տակ պահել Անդրկովկասի այն տերիտորիաները, որոնք տակավին նվաճված չէին թուրքերի կողմից։ Սակայն թուրքական պատվիրակությունը, ղեկավարվելով Էնվեր-փաշայի ցուցումներով, Բաթումի կոնֆերանսում շարունակում էր պնդել ողջ Անդրկովկասը թուրքական զորքերի կողմից օկուպացիայի ենթարկելու պահանջի վրա [2]։ Բացի Անդրկովկասի նկատմամբ ունեցած սեփական զավթողական ձգտումներից, գերմանական բանակի գլխավոր հրամանատարության բացասական վերաբերմունքը Կովկասը նվաճելու Էնվերի պլանի նկատմամբ բացատրվում էր սովետական կառավարության կտրուկ բողոքներով։ Վերը մեջ բերվեց 1918 թվականի մայիսի 15-ի ՌՍՖՍՌ Արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի նոտան։ Անկասկած է, որ մայիսի 15-ին ֆոն Սեկտին տրված հրահանգը զգալի չափով թելադրված էր սովետական կառավարության դիվանագիտական այդ ելույթով։

Բացի դրանից, թուրքական խոշոր ուժերի ներխուժումն Անդրկովկաս նկատելիորեն թուլացնում էր գերմանա-թուրքական զորքերի դիրքերը այլ ճակատներում՝ Միջագետքում, Սիրիայում ու Իրանում, ուր անգլիացիների ու արաբ աբստամբների ճնշումը գնալով ուժեղանում էր։ Մայիսի 20-ին Լյուդենդորֆը նորից հեռագրեց Սեկտին. «Ես կրկնում եմ իմ պահանջը՝ այն է, որ թուրքերը իրենց ուշադրությունը դարձնեն Պարսկաստանի ու Միջագետքի վրա» [3]։ Սակայն երիտթուրքերը բացահայտ անհնազանդություն էին հանդես բերում։ Ամբողջովին կլանված լինելով իրենց մեծապետական, զավթողական պլաններով, նրանք ուշադրություն չէին դարձնում Բեռլինից եկող բողոքների վրա։ Բաթումի կոնֆերանսում Գերմանիայի ներկայացուցիչ Լոսովը հաղորդում էր Լյուդենդորֆին, որ «թուրքերը հատկապես ձգտում են դեպի Բաքվի ու Վլադիկավկազի կողմը, ցանկանում են նվաճել ողջ Կովկասը» [4]։ Հետագայում Լյուդենդորֆը իր հիշողություններում, ոչ առանց դառնության, գրում էր հետևյալը. «Էնվեր-փաշան ու թուրքական կառավարությունը ա-

1 Mühlmann C., S. 198.

2 Ստ. Շահումյան, Երկեր, հ. 3, էջ 221։

3 Mühlmann C., S. 198.

4 Նույն տեղում, էջ 199։

վելի շատ մտածում էին Կովկասում իրենց պանիսլամական նպատակների իրականացման, քան Անգլիայի հետ պատերազմելու մասին։ Այդ պատճառով մենք ակամայից հակասության մեջ գտնվեցինք այն նպատակների հետ, որոնք հետապնդում էին թուրքերը...» [1] (ընդգծումը մերն է— Ե. Ս.)։

Մայիսի 25-ին Լյուդենդորֆը ստիպված էր նորից դիմել ֆոն Սեկտին, կոչ անելով նրան «իր ազդեցությունն օգտագործել, որպեսզի Թուրքիան դադարեցնի իր հետագա ռազմական գործողություններն Անդրկովկասում»։ Այնուհետև, հիշատակելով Ուրմիա լճի արևմուտքում թուրքական 6-րդ դիվիզիայի և Միջագետքում՝ թուրքական 6-րդ բանակի պարտության մասին, Լյուդենդորֆը նախազգուշացնում էր, որ եթե թուրքական կառավարությունը իր քաղաքական ու տնտեսական ձգտումներից ելնելով հապաղի պաշտպանելու իր սեփական տերիտորիան և «մեզ համար դժվարություններ հարուցի Կովկասում, որտեղից մենք կարող էինք հանդես գալ անգլիացիների դեմ, ապա նա չպետք է հուսա, որ մենք կարող ենք մեր հաշվին հետագայում նրան վերադարձնել իր սեփական տերիտորիան» [2]։

Այդ պահանջներին Էնվեր-փաշան պատասխանում էր կեղծ բացատրություններով, որ իբր թուրքական զորքերի առաջխաղացումն Անդրկովկասում անհրաժեշտ է բոլշևիզմի ազդեցության տարածման վտանգը կանխելու, ինչպես նաև երկրամասի մահմեդականների նկատմամբ հայկական «դաժանություններին» վերջ դնելու համար, մի բան, որին Թուրքիան չի կարող «անտարբեր» նայել [3]։ Ըստ որում թուրքական վիցե-գեներալիսիմուսը գերմանա-թուրքական հարաբերությունների սրման ամբողջ մեղքը բարդում էր գերմանական բանակի գլխավոր հրամանատարության վրա։

Զափազանց կտրուկ ու սպառնալից տոնով Լյուդենդորֆը գրում էր Էնվեր-փաշային հետևյալը. «Չեմ ցանկանում ձեզնից թաքցնել իմ զարմանքը այն կապակցությամբ, որ իբր գերմանական հրամանատարությունն է դարձել Կովկասում ծագած տարաձայնությունների պատճառը։ Թուրքիան իրեն ինքնուրույն ձևով է պահում՝ ուշադրություն չդարձնելով դաշնակիցների և Բրեստում կնքված պայմանագրի այն հոդվածների վրա, որոնք վերաբերում են Անդրկովկասին։ Գերմանիան արդեն մատնանշել է նման գործողությունների հետևանքները... և եթե Թուրքիան չհարգի Բրեստի պայմա-

1 Людендорф, Мои воспоминания о войне 1914—1918 гг. т. 2, М., 1924, стр. 187—188.

2 Mühlmann C., S. 198—199.

3 Նույն տեղում, էջ 199։

նագրով գծված սահմանները, Գերմանիան իրեն կվերապահի հետագա գործողությունների ազատությունը։ Գերմանիան չի ճանաչում Թուրքիայի ու անդրկովկասյան պետությունների միջև կնքված այն պայմանագրերը, որոնք ստորագրվել են՝ շրջանցելով Գերմանիային, Ավստրիային ու Բուլղարիային»[1]։

Էնվերը ոչ մի զիջողականություն հանդես չբերեց, ուստի և Լյուդենդորֆը Բաթումի կոնֆերանսից ետ կանչեց գերմանական ներկայացուցիչներին։ Բեռլինում ոչ միայն չէին ուզում ճանաչել երիտթուրքական կառավարության կողմից Հայաստանին ու Վրաստանին պարտադրված համաձայնագրերը, այլև վրացական մենշևիկներին ու դաշնակներին ամեն կերպ դրդում էին հրաժարվել դրանք վավերացնելուց։ Բաթումի կոնֆերանսում հայկական հաշտության պատվիրակության նախագահ Համո Օհանջանյանը, որը Բեռլին էր ուղարկվել գերմանական կառավարության հետ բանակցություններ վարելու նպատակով, այնտեղից հաղորդում էր Երևան հետևյալը. «Գերմանիան արդեն պաշտոնապես տեղեկացրել է Թուրքիային, որ նա Բաթումի պայմանագիրը չեղյալ է համարում, հետևապես ո՛չ մի խոսք չի կարող լինել նրա վավերացման մասին (Հայաստանի կողմից— Ե. Ս.)»[2]։

Ոչ Լյուդենդորֆի հեռագրերը, ոչ էլ ստեղծված դրության լրջությունը հիշեցնող դիմումները թուրքական հրամանատարությանը, ի վիճակի չէին խանգարելու թուրքերին՝ նվաճելու ողջ Անդրկովկասը։ Հինդենբուրգը ստիպված էր միջամտելու այդ կոնֆլիկտին։ Հունիսի 9-ին ուղարկված հեռագրում նա էնվերից կատեգորիկ կերպով պահանջում էր դատարկել Անդրկովկասի այն տերիտորիաները, որոնք թուրքական զորքերը գրավել էին ի խախտումն Բրեստ-Լիտովսկի պայմանագրի և Միջագետք ու Հյուսիսային Պարսկաստան փոխադրել Անդրկովկասում գտնվող թուրքական բոլոր ուժերը[3]։

Սակայն այս պահանջն էլ մերժվեց Ստամբուլի կառավարող շրջանների կողմից։ «Առաջին անգամ,— վկայում է Մյուլմանը,— գերմանա-թուրքական քառամյա եղբայրության ընթացքում հարաբերությունների խզման վտանգ առաջացավ՝ Կովկասում տարվելիք քաղաքականության հարցերում առկա հակասությունների պատճառով։ Կովկասում գտնվող գերմանական ու թուրքական զորքերը իրար նկատմամբ թշնամաբար էին տրամադրված։ Եղան փոխադարձ հրաձգության դեպքեր, գերմանական պահակները գերի վերցվեցին թուրքերի կողմից։ Գործը բացահայտ խզման ու պատերազմի չհասավ միայն փոխադարձ զիջումների շնորհիվ, որը բացատրվում էր պատերազմի մյուս ճակատներում ստեղծված լարված իրադրությամբ[1]։

Հունիսի վերջին երրորդ բանակի գլխավոր հրամանատար Վեհիբ-փաշան ետ կանչվեց և նրա տեղը նշանակվեց Էսադ-փաշան, որը գեներալ Լիման ֆոն Սանդերսի հրամանատարության ներքո կռվել էր Գալիպոլիի թերակղզում և սերտորեն համագործակցել այնտեղ գերմանական սպաների հետ։ Սակայն այս միջոցառմամբ դաշնակիցների միջև պառակտման վտանգը չվերացվեց, այլ միայն որոշ ժամանակով հետաձգվեց։ Գերմանացիները, ինչպես և նախկինում, ձգտում էին իրենց ձեռքը գցել Անդրկովկասի նավթային հարստությունները։ Իսկ թուրքերը բացահայտորեն աչք էին դրել Բաքվի վրա, թեև նրանք խոսքով հայտարարում էին, որ հրաժարվել են այդ քաղաքի նկատմամբ ունեցած հավակնություններից[2]։

Թուրքական հրամանատարությունը, հենվելով Կովկասում կենտրոնացված իր ուժերի հսկայական թվական գերակշռության վրա՝ գերմանական փոքրաթիվ զորքերի նկատմամբ (առ 1918 թվականի օգոստոսի 20-ը Վրաստանում հաշվվում էին ընդամենը 214 գերմանական սպաներ ու 5050 զինվորներ)[3], շարունակում էր զարգացնել իր հարձակումը Գյանջա—Բաքու ուղղությամբ։ Գերմանացիները ըստ հնարավորին ձգտում էին եթե ոչ ուղղակի խոչընդոտել, ապա գոնե ժամանակավորապես կասեցնել թուրքերի առաջխաղացումը դեպի Բաքու։

Թուրքական ռազմական պատմաբանները հետագայում բազմիցս մեղադրել են գերմանացիներին այն բանի համար, որ նրանք 1918 թվականին, թուրքերի Անդրկովկաս ներխուժման ժամանակամիջոցում, վերջիններիս խոչընդոտներ են հարուցել։ Այսպես, այդ ինտերվենցիայի մասնակից գնդապետ Ռյուշտյուն իր աշխատության մեջ մանրամասն նկարագրելով թուրքական 5-րդ դիվիզիայի հարձակումը Բաքվի վրա, մատնանշում է հետևյալը.

«Գերմանացիները մեր դաշնակիցները չէին իրենց կովկասյան քաղաքականության մեջ։ Նրանք կովկասյան գործերում օսմաններին համար հատուկ դժվարություններ էին ստեղծում և մեր դեմ գրգռում Կովկասի ժողովուրդներին՝ վրացիների գլխավորությամբ»։

---

1 Mühlmann C. S. 200.

2 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 16, թ. 39—55։

3 Mühlmann C., S. 201—202.

1 Mühlmann C., S. 205.

2 Նույն տեղում։

3 Նույն տեղում, էջ 210։

«Գերմանիան,— գրում էր այնուհետև Ռյուշյուն,— չէր ցանկանում օսմանների ձեռքում տեսնել Կովկասի ամենահզոր ու նավթով հարուստ քաղաքը՝ Բաքուն»[1]։ Նա ընդգծում էր, որ «Գերմանիան իսկապես Կովկասում ինքնուրույն՝ Թուրքիայից անջատ քաղաքականություն էր վարում։ Այդ ինքնուրույնությունը նա հանդես բերեց իր հավատարիմ դաշնակիցների՝ օսմանների համար վերին աստիճանի աննպաստ ու ծանր ժամանակ։ Նա խանդարում էր օսմանյան զորամասերի, ռազմական հանդերձանքի, առանձին սպաների և այլ անձնավորությունների անցմանը Բաթում—Թիֆլիս—Գյանջա երկաթուղագծով։ Արշավանքը դեպի Բաքու որոշ ժամանակով հետաձգվեց գերմանացիների անհագուրդ ագահության պատճառով»[2]։

Զուսնենալով բավարար ուժեր Բաքվի գրավման գործում թուրքերից առաջ անցնելու համար, գերմանական գլխավոր հրամանատարությունը նոր ճնշման դիմեց։ Օգոստոսի 4-ին Լյուդենդորֆը հեռագրում էր Էնվեր-փաշային, որ եթե նա անմիջապես չդադարեցնի թուրքական զորքերի հարձակումը Բաքվի վրա և նրանք նախկին դիրքերին չվերադառնան, ապա գերմանական հրամանատարությունը ստիպված կլինի կայզերին խնդրել, որ նա գերմանական ներկայացուցիչներին ետ կանչի թուրքական բանակի գլխավոր հրամանատարությունից։ «Ես,— շարունակում էր Լյուդենդորֆը,— չեմ հանդուրժի, որպեսզի թուրքական պատասխանատու անձանց բացահայտորեն ուխտադրուժ վարքագծի պատճառով Ռուսաստանի հետ նոր պատերազմի վտանգ առաջ գա»[3]։

Գերմանական ռազմամոլները իսկապես երկյուղ էին կրում արագորեն ամրապնդվող երիտասարդ սովետական հանրապետության հետ բախվելու վտանգից, որը, ինչպես տեսանք, վճռականորեն բողոքեց գերմանական իմպերիալիզմի կրտսեր պարտնյորների՝ թուրքական նվաճողների կողմից Անդրկովկասում ձեռնարկված ինտերվենցիայի դեմ։ Սակայն, երբ 1918 թվականի հուլիսին արևմտյան ճակատում Անտանտի զորքերը վճռական հարձակման անցան և համաշխարհային պատերազմի գլխավոր ռազմաճակատում Գերմանիայի համար օրհասական վիճակ ստեղծվեց, գերմանական գլխավոր հրամանատարությունը որոշեց չսրել կոնֆլիկտը իր թուրքական դաշնակցի հետ։

1 Mira ay Rüstü, Büyük harpte Baku yolları ıda Kafkas piyade fırkası. Տե՛ս „Askeri mecmuanın tarih kısmı". Istanbul, 1934, sayı 34, s 221.

2 Նույն տեղում, էջ 41։

3 Mühlmann C., S. 207.

Երբ Հյուսիսային Պարսկաստանից ժամանած անգլիական ուժերը, օգտվելով էսեռների, մենշևիկների ու դաշնակների դավաճանությունից, օգոստոսի 4-ին գրավեցին Բաքուն, գերմանական հրամանատարությունն անմիջապես փոխեց իր տակտիկան։ Լյուդենդորֆի հրամանով Կրես ֆոն Կրեսենշտեյնի տրամադրության տակ Ուկրաինայից Սև ծովով Կովկաս փոխադրվեց մեկ հեծելազորային և մեկ հետևակային բրիգադա։ Սեպտեմբերի կեսերին այդ օժանդակ ուժերի մեծ մասը ժամանեց Վրաստան[1]։ Ընդամենը՝ Թիֆլիսում մինչ այդ գտնվող 5 հազարանոց ջոկատի հետ միասին այդ ժամանակ Վրաստանում կային շուրջ 15 հազար գերմանական զինվորներ[2]։

Սեպտեմբերի 15-ին Լյուդենդորֆը Կրես ֆոն Կրեսենշտեյնին արձակեց հետևյալ հրամանը. «Անհրաժեշտ է գրոհ նախապատրաստել Բաքվի դեմ և զեկուցել պատրաստ լինելու մասին... Թուրքական զորքերի կամ Ադրբեջանի զորքերի մասնակցությունը պետք է լինի միայն այն չափով, ինչ չափով որ դա անհրաժեշտ է հաջողությունն ապահովելու համար»[3]։

Մինչ գերմանացիները զբաղված էին այդ պատրաստություններով, թուրքական զորքերը, արհամարհելով իրենց դաշնակցի պահանջները, շարունակում էին հարձակումը։ Սեպտեմբերի 15-ին թուրքերը մտան Բաքու և գերմանական գլխավոր հրամանատարությունն, այդպիսով, կանգնեցվեց կատարված փաստի առջև[4]։ Բաքվի գրավումը թուրքերի կողմից, որի մասին կխոսվի ստորև, ծանր հարված էր Գերմանիայի հետապնդած շահերին Անդրկովկասում։ Զախողվեցին Բաքվի նավթին տիրանալու վերջին հույսերը։ Մյուլմանը հաստատում է, որ 1918 թվականի աշնանը «նկատելի դարձավ թուրքական հրամանատարության նվազ բարեկամական վերաբերմունքը Կովկասում գտնվող իրենց գերմանական դաշնակիցների նկատմամբ։ Նուրի-փաշան (Բաքուն օկուպացրած թուրքական զորքերի հրամանատարը—Ն. Ս.) մերժեց գեներալ ֆոն Կրեսի առաջարկը՝ աջակցել ռազմական շինարարության գործին Բաքվում»։ Թուրքերը,— բողոքում էր Մյուլմանը,— բոլորովին հաշվի չէին նստում գերմանական պլանների հետ Բաքվում[5]։

Անդրկովկասում Թուրքիայի ու Գերմանիայի միջև առկա խոր

5 Mühlmann C., S. 210.

2 «История гражданской войны в СССР», т. 3, М., 1958, стр. 238.

3 Mühlmann C., S. 210.

4 Նույն տեղում։

5 Նույն տեղում։

հակասությունների մասին դաշնակցական կառավարության ներկայացուցիչը 1918 թվականի սեպտեմբերին Ստամբուլից հաղորդում էր Երևան հետևյալը. «Գերմանիայի ու Թուրքիայի ուղիներն Անդրկովկասում խաչաձևվում են և իրարից բաժանվում։ Նրանք, կոմս Շուլենբուրգի արտահայտությամբ, դաշնակիցներ, բայց և միևնույն ժամանակ մրցակիցներ» են [1]։

Գերմանա-թուրքական պայքարն Անդրկովկասում տիրապետություն հաստատելու համար՝ իր ժամանակին լայն արձագանք գտավ՝ ինչպես թուրքական, այնպես էլ գերմանական մամուլում։ Թուրքական մամուլը իր դժգոհությունն էր հայտնում Անդրկովկասում Գերմանիայի վարած քաղաքականությունից։ Այսպես, Ստամբուլում լույս տեսնող «Վաքթ» թերթը գրում էր. «Մեր գլխավոր նպատակը Անդրկովկասի սահմանների պահպանումն է, Ռուսաստանի ու մեր միջև այնպիսի ամուր պատնեշի ստեղծումը, որը կարողանար կատարել բուֆերի դեր՝ ի դեմս նորաստեղծ անդրկովկասյան անկախ պետությունների։ Եթե մեր դաշնակից Գերմանիան չուզղի իր կողմից թույլ տրված սխալը, ապա այն ժամանակ Թուրքիան ուժեղագույն պետություն դարձնելու վերաբերյալ նրա տված երաշխիքները դատարկ խոսքեր կմնան» [2]։ Ավելի ուշ, այդ նույն թերթը հաստատում էր, որ «Գերմանիան, ըստ երևույթին, մտադիր է մի հարվածով խորտակել այն վստահությունը, որ նրա կողմից ստեղծվել էր երկար տարիների ընթացքում» [3]։

Երիտթուրքերի օրգանը հանդիսացող «Իգդամ» թերթը 1918 թվականի սեպտեմբերի 11-ին գրում էր. «Թուրքիան, որը ծանր զոհաբերություններ է կատարել հանուն ընդհանուր գործի, իրավունք ունի պահանջելու՝ այս անգամ դաշնակիցների շահերը հաշվի չառնելով, պաշտպանել իր սեփական շահերը Կովկասում»։

«Զաման» թերթը «Մեր խաղաղ քաղաքականությունը Կովկասում» վերնագիրը կրող հոդվածում կշտամբում էր դաշնակիցներին այն բանի համար, որ նրանք խոչընդոտներ էին հարուցում թուրքերին՝ Կովկասի նկատմամբ նրանց պլաններն իրականացնելու գործում։ Հոդվածի հեղինակը նշում էր. «Հարկ չկա, որ Թուրքիան տարվի իր դաշնակիցների մոլորություններով։ Նա պետք է ամեն հնարավոր բան անի Կովկասը գրավելու համար...» [4]։

«Պրավդա» թերթն այն ժամանակ մատնանշում էր, որ Կովկասում գերմանական ու թուրքական քաղաքականության միջև առկա տարաձայնությունները «միևնույն ժամանակ ապացուցում են, թե որչափով անկայուն են Կովկասի վերաբերյալ ընդունված առանձին համաձայնագրերը» [1]։

Հայ լիբերալ բուրժուազիայի ձայնափողը հանդիսացող «Մշակ» թերթը գրում էր, որ «Թուրքերի ու գերմանացիների միջև հարաբերությունները բարեկամական չեն։ Գերմանացիներն արհամարհական վերաբերմունք ունեն դեպի թուրքերը, իսկ թուրքերը զգում են, որ գերմանացիները խանգարում են իրենց հաջողություններին և նավթի պատճառով իրենց թույլ չեն տալիս գրավել Բաքուն» [2]։

Գերմանական «Նյուս պարկեր դանտես ցայտունգ» թերթը գրում էր, որ Թուրքիան ձգտում է իր տիրապետությունը տարածել Սև ծովի հյուսիս-արևելյան շրջանների վրա՝ ընդհուպ մինչև Կասպից ծովը։ «Նա այնտեղ ուժեր փոխադրեց Սիրիայից ու Միջագետքից,— նշում էր թերթը։— Նույն շրջանն ուղարկվեցին նաև Ռուսաստանի հետ կնքված հաշտությունից հետո ազատ մնացած զորամասերը... Թուրքիան պետք է փոխի իր քաղաքականությունը։ Չի՞ մտածում նա արդյոք, որ մենք մեզ վրա կվերցնենք Սիրիան ու Միջագետքը ետ նվաճելու բեռը, որպեսզի նրան հնարավորություն տանք շարունակել իր նվաճումները այլ մարզերում» [3]։

Բեռլինի «Տագեսցայտունգ» թերթը հաստատում էր հետևյալը. «Ոչ ոք Գերմանիայում հավանություն չի տալիս թուրքերի առաջխաղացմանը Կովկասում» [4]։

«Շտուտգարտ տագեբլատ» թերթը գերմանա-թուրքական հարաբերությունների կապակցությամբ գրում էր. «Եթե մենք, որպես Թուրքիայի պաշտպաններ, դեմ դուրս եկանք Օսմանյան կայսրության մասնատմանը, մենք այդ բանն արեցինք Բաղդադի երկաթուղու հարցում մեր շահագրգռվածությունից ելնելով։ Թուրքական պետական գործիչները պետք է իմանան, որ Թուրքիայի համար ամենավտանգավոր ճակատները Պաղեստինի ու Միջագետքի ճակատներն են և որ անհրաժեշտ է նորից ետ նվաճել Տրիպոլին, Եգիպտոսը և Բասրայի ծոմածոցը։ Սակայն Թուրքիան իր հայացքն ուղղել է Կովկասի ու Սև ծովի կողմը, իսկ այժմ, անդրկովկասյան հանրապետությունների հողերը գրավելուց հետո, ներկայացնում է

1 Архив Грузинского филиала ИМЛ при ЦК КПСС, ф. 2, д. 358, л. 15.
2 Տե՛ս Газ. «Грузинская республика», 18. X. 1918 г.
3 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 536, թ. 286—287։
4 Տե՛ս «Кавказское слово», 12. X. 1918 г., № 194.

1 «Правда», 7. VIII. 1918 г., № 167.
2 «Մշակ», 21.9.1918, № 191։
3 Տե՛ս «Кавказское слово», 12. X. 1918 г., № 194.
4 ЦГАОР, ф. 1318, д. 619, л. 30.

նոր պահանջներ՝ Ղրիմի, Թավրիզի և Ուրմիա լճի շրջանի նկատմամբ... Գերմանիան մտադիր չէ պաշտպանելու բոլոր այն ցանկությունները, որոնք կարող են առաջ գալ մեր դաշնակիցների մեջ...» [1]։

Վերը բերված փաստերը ցույց են տալիս, որ 1918 թվականի ամռանն ու աշնանը գերմանական իմպերիալիստների ու երիտթուրքական պարագլուխների միջև առկա էին սուր տարաձայնություններ Անդրկովկասին տիրապետելու համար մղվող պայքարի, ինչպես նաև Մերձավոր ու Միջին Արևելքի ռազմաճակատներում պատերազմը վարելու հարցերում։ Ուստի և միանգամայն անհիմն են սովետական առանձին պատմաբանների պնդումներն այն մասին, որ Բաքվի գրավումը թուրքական զորքերի կողմից տեղի ունեցավ «գերմանական իմպերիալիզմի հանձնարարությամբ», իսկ Էնվեր-փաշան ու Նուրի-փաշան լոկ «գերմանական իմպերիալիզմի կամակատարներն էին» [2]։

***

Անդրկովկասի կառավարողների հակահեղափոխական գործունեության հետևանքով Անդրկովկասը մի մասն ընկավ Թուրքիայի տիրապետության տակ։ Նրանք գերադասեցին Անդրկովկասը հանձնել գերմանա-թուրքական ներխուժողների հոշոտմանը, միայն թե կարողանան ճնշել աշխատավոր զանգվածների հարաճուն հեղափոխական պայքարը, անջատել նրանց Սովետական Ռուսաստանից, որը բազմիցս իր միջնորդությունն էր առաջարկել, մասնավորապես Տրապիզոնի ու Բաթումի բանակցությունների ժամանակ։ Սեյմում մուսավաթականների պարագլուխներից Ուսուբեկովը իր մի ճառում բացեիբաց ասում էր. «Ոչ միայն մեզ՝ ադրբեջանական թուրքերիս մոտ, այլև Անդրկովկասի ամբողջ տերիտորիայում տիրող

1 Տե՛ս «Кавказское слово», 12. IX. 1918, № 194.

2 Токаржевский Е. А., Бакинские большевики—организаторы борьбы против германо-турецких интервентов в Азербайджане в 1918 г. Труды Азербайджанского филиала ИМЛ при ПК КПСС, вып. VI, Баку, 1947, стр. 183. Այդ նույն տեսակետն են պաշտպանում այլ հեղինակներ։ Տե՛ս А. М. Эльчибекян, «Великая Октябрьская революция и победа Советской власти в Армении», Ереван, 1957, стр. 77 և Н. Н. Колесникова, «Из истории борьбы за Советскую власть в Баку», Баку, 1958, стр. 4. Ցավոք, նույն սխալ տեսակետն իր արտահայտությունն է գտել «История гражданской войны в СССР» գրքում։ Տե՛ս հ. 3, էջ 237։

ահավոր անիշխանությունը (ի նկատի ունի հեղափոխական շարժումները— Ե. Ս.) չի կարող ճնշվել մեր սեփական ուժերով. դրությունն էլ ավելի է սաստկանում, քանի որ Արևելքից հարձակում են գործում բոլշևիկները՝ մեր դարավոր թշնամիների հետ դաշնակցած՝ ավերածություն ու վերջնական ոչնչացում բերելով թուրք ժողովրդին։ Իրերի նման դրության, մեր այդպիսի անպաշտպանության ժամանակ մենք ուրիշ ելք չունենք, քան դիմելու օտար միջամտությանը։ Տվյալ դեպքում մենք կարող ենք ուրախ լինել հանգամանքների այն երջանիկ դասավորության համար, որ այստեղ եկող արտաքին ուժը՝ Թուրքիան, մեզ բարեկամ ու եղբայրական ուժ է» [1]։

Դրանով էր հենց բացատրվում անդրկովկասյան կառավարության դավաճանական ու կապիտուլյանտական քաղաքականությունը Բաթումի կոնֆերանսում և թուրքական զավթիչներին ամեն կարգի հնարավորությունների ընձեռումը՝ դեպի Բաքու շարժվելու և այնտեղ սովետական իշխանությունը տապալելու համար։

Հեղափոխական շարժման պատվարն Անդրկովկասում Բաքու քաղաքն էր, որտեղ տակավին 1917 թվականի հոկտեմբերի 31-ին (նոյեմբերի 13-ին) սովետական իշխանություն էր հռչակվել։ Սակայն Բաքվի սովետը լիիշխան դիրք չէր գրավում քաղաքում, քանի որ նրա հետ կողք-կողքի շարունակում էին գործել քաղաքային դուման, մուսավաթական ու դաշնակցական ազգային խորհուրդները, որոնք ունեին իրենց զինված ուժերը և հակահեղափոխական մարմինները։ «Այդ բոլոր հակահեղափոխական ուժերի առկայությունը,— գրում էր Ա. Ի. Միկոյանը,— որոնք խմբավորվել էին տարբեր ուղղություններում, արտակարգ չափով դժվարացնում էին դրությունը Բաքվում, Բաքվի սովետին հնարավորություն չէին տալիս ամրանալու։ Պարզ է, որ Բաքվում սովետական իշխանությունը ամրապնդելու համար հարկավոր էր խափանել այդ կուսակցությունների հակահեղափոխական գործունեությունը» [2]։

Մուսավաթական կուսակցությունը և մահմեդական ազգային խորհուրդը, որն իր ձեռքն էր վերցրել իշխանությունը Գյանջայում և Բաքվի նահանգի մի շարք շրջաններում, ստանալով Անդրկովկաս ներխուժած թուրքական զավթիչների անմիջական աջակցությունը, որոշել էին տապալել սովետական իշխանությունը Բաքվում

1 Տե՛ս Ставровский Ал. Закавказье после Октября. Взаимоотношения с Турцией в первой половине 1918 г., М.—Л., 1925, стр. 50—51.

2 «Бакинская организация большевиков в 1917—1918 гг.», տե՛ս «Бакинский рабочий», № 57, 14 марта 1923 г.

և թուրքական հորդաների համար ճանապարհ հարթել Ադրբեջանի և ողջ Անդրկովկասի գրավման համար։ Ժողովրդական կոմիսարների սովետին ուղղված իր նամակում Ս. Շահումյանը, խոսելով մուսավաթականների և հակահեղափոխական այլ տարրերի գործունեության մասին, գրում էր. «Եթե նկատի ունենանք նրանց քաղաքական նպատակները—Անդրկովկասի անջատումը Ռուսաստանից և ենթարկումը թուրքական հովանավորությանը—պարզ է, որ նրանց հաղթանակը Բաքվում կտաներ դեպի Անդրկովկասի կորուստը Ռուսաստանի համար»[1]։

Բաքվի բոլշևիկները քաղաքում սովետական իշխանության հաստատման առաջին իսկ օրերից եռանդուն աշխատանք էին տանում իրենց զինված ուժերը կազմակերպելու ուղղությամբ՝ մուսավաթական հրոսակախմբերի ելույթները սովետական իշխանության դեմ կանխելու համար։ Սովետական ուժերի և մահմեդական հակահեղափոխական ուժերի միջև զինված բախումն անխուսափելի դարձավ։

Բախումների համար առիթ ծառայեց Բաքվի սովետական իշխանության պահանջը՝ զինաթափ անելու մահմեդական «վայրենի դիվիզիան», որի զինվորները «էվելինա» նավի վրա գնդակահարել էին կարմիրբանակայիններին։ Այդ պահանջը բավարարելու փոխարեն, Բաքվի տարբեր տեղերում արյունալի ընդհարումներ տեղի ունեցան սովետական զորքերի (որոնց հարեցին կասպիական նավատորմի նավաստիները, ավիացիոն պարկը, հայկական ազգային զորամասերը) և մահմեդական ազգային խորհրդի զինված ուժերի միջև, որոնց թվում էին նաև Նարգին կղզու (Բաքվից հարավարևելք) գերությունից փախած թուրքական սպաներն ու ասքյարները։

Երկու կողմից քաղաքային մարտերին, որոնք շարունակվում էին 1918 թվականի մարտի 30-ից մինչև ապրիլի 1-ը, մասնակցություն ունեցավ 20 հազարից ավելի մարդ։

Բաքվի սովետի կողմում մարտնչում էին հայկական կամավորական ջոկատները, դաշնակցական զորամասերը և մոտ 4 հազար հայ զինվորներ, որոնք եկել էին ռուս-գերմանական ու պարսկական ճակատներից։ Դեպի Թիֆլիս ու Երևան գնացող ճանապարհները մուսավաթական հրոսակախմբերի կողմից փակված լինելու պատճառով, նրանք խմբվել էին Բաքվում, զրկված լինելով գոյության միջոցներից։ Իրենց այդ ողբերգական ճակատագրում հայ զինվորները մեղավորներ էին համարում մուսավաթականներին ու մահմեդական «վայրենի դիվիզիային», որոնք նրանց խանգարում էին վերադառնալու իրենց հայրենի օջախները՝ Հայաստան ու Վրաստան։

Ուստի այդ զինվորները, որոնք մասնակցում էին քաղաքացիական պատերազմին, գտնվելով դաշնակների ազդեցության տակ, փորձում էին այդ պատերազմին մասամբ ազգային կոտորածների բնույթ տալ։

Միայն բոլշևիկների և նրանց զինված ուժերի՝ կարմիր գվարդիայի (որը բաղկացած էր հայ բանվորներից, ռուսներից ու մահմեդականներից) համառ պայքարի շնորհիվ ազգային պատերազմի հրդեհը տարածվելու վտանգը արագ կերպով վերացվեց։ Նավթահոտերը պահպանելու համար բանվորները ինտերնացիոնալ ջոկատներ կազմակերպեցին։

Քաղաքացիական պատերազմի ընթացքում մուսավաթական հրոսակախմբերն ու «վայրենի դիվիզիան» ջախջախվեցին, իսկ նրանց մնացորդները դուրս շպրտվեցին Բաքվից։

Երեք օր տևող արյունալի կռիվներում երկու կողմից զոհվածների թիվը կազմում էր երեք հազարից ավելի մարդ։

Մարտյան կռիվներում մուսավաթական հակահեղափոխական ուժերի ջախջախման հետևանքով ամբողջ իշխանությունը Բաքվում և նրա շրջակայքում կենտրոնացավ Բաքվի սովետի ձեռքում։

Հետապնդելով մուսավաթական ջախջախված հրոսակախմբերին, սովետական զորքերը գրավեցին Լենքորանը, Շամախին, Շամախու, Ղուբայի ու Սալյանի գավառները։ Մուսավաթական այն ջոկատները, որոնց հաջողվել էր փրկվել հետապնդումից, այդ և մյուս գավառներում սովետական իշխանության դեմ պարտիզանական պատերազմ էին մղում։ Նրանք շարքից դուրս էին բերում երկաթուղագծերը, պայթեցնում կամուրջները, հարձակվում ռուսական ու հայկական գյուղերի վրա՝ սպանելով ու կողոպտելով խաղաղ ազգաբնակչությանը։

Ջախջախված մուսավաթական ուժերը կենտրոնացել էին Գյանջայում և թուրքական գործակալների օգնությամբ պատրաստվում էին նոր արշավանք սկսել Բաքվի սովետական իշխանության դեմ։ Մուսավաթական հակահեղափոխական ուժերին անմիջական նյութական ու ռազմական օգնություն էր ցույց տալիս նաև անդրկովկասյան սեյմը։ Ապրիլի 1-ին Սեյմի նիստում հատուկ քննարկվում էին Բաքվում տեղի ունեցած մարտյան իրադարձությունները։ Սեյմի մուսավաթական ֆրակցիայի անունից հանդես եկած Սաֆիքյուրդսկին պահանջում էր, որպեսզի անհապաղ ինքնապաշտպանական միջոցառումներ ձեռնարկվեին և բոլշևիզմը վերացվեր։

[1] Ս. Շահումյան, Երկեր, հ. 3, էջ 144։

Սեյմի հետագա նիստերից մեկում որոշվեց ռազմական ու ներքին գործերի մինիստրներին առաջարկել բոլոր միջոցները ձեռք առնել Բաքվի իրադարձություններին շուտափույթ կերպով վերջ դնելու համար՝ Բաքուն գրավելու միջոցով։ Այդ նպատակով Գյանջա՝ մուսավաթական հրոսակներին ուղարկվեց Անդրկովկասյան սեյմի զրահապատ գնացքը՝ վրացական իշխան Մաղալովի հրամանատարությամբ։ «Վայրենի դիվիզիան» վերազինելու և ամրացնելու համար Սեյմը միջոցներ ու սպառազինություն տրամադրեց։

Բաքվի սովետական իշխանության դեմ շարժվում էին նաև Հյուսիսային Կովկասի հակահեղափոխական ուժերը, որոնք նույնպես ղեկավարվում էին թուրքական իմպերիալիզմի գործակալների կողմից։ Այդ զորքերը Խուրդալանի տակ ապրիլի 7-ին և 8-ին տեղի ունեցած համառ մարտերում ջախջախվեցին Բաքվի սովետի ուժերի կողմից։ Զարգացնելով իրենց հարձակումը, սովետական զորամասերը գրոհով վերցրեցին Պետրովսկը և Թեմիլ-խան-Շուրան։ Իմամ Գոցինսկին փախավ, իսկ նրա հրոսակախմբերը ցիր ու ցան եղան։ Գյանջայի կողմից մահմեդական զորքերի երկու նոր էշելոններ շարժվեցին, որոնց հաջողվեց գրավել Հաջիկաբուլ կայարանը, որտեղ «կուտակվում են մուսուլմանների տեղական բանդաները։ Խոշոր ուժեր են կուտակվում նաև Բաքվից հարավ, Սալյանում, ուր եկել էր վայրենի դիվիզիան հրետանիով Լենքորանից» [1]։

Քաղաքացիական պատերազմի դժվարին պայմաններում բանվորների, զինվորների ու նավաստիների պատգամավորների Բաքվի սովետը 1918 թվականի ապրիլի 25-ի իր նիստում կազմեց կառավարություն՝ Բաքվի ժողովրդական կոմիսարների սովետ։ Ժողկոմսովետի նախագահ ընտրվեց Անդրկովկասի բոլշևիկների ղեկավար և Անդրկովկասում Սովետական Ռուսաստանի իշխանության ներկայացուցիչ Ստեփան Շահումյանը։ Բաքվի Ժողկոմսովետի կազմի մեջ մտան Ադրբեջանի բոլշևիկների ականավոր ղեկավարներ Ա. Ջափարիձեն, Ի. Ֆիոլետովը, Մ. Ազիզբեկովը, Գ. Կորգանովը, Յա. Զևինը, Մ. Վեզիրովը և ուրիշներ։

Բաքվի սովետական իշխանությունը Անդրկովկասի հեղափոխական բոլոր ուժերին համախմբեց Սեյմի ու համաձայնողական սովետների դեմ։ Նա մերկացնում էր վերջիններիս հակահեղափոխական էությունը և Անդրկովկասի աշխատավորներին մատնացույց անում փրկության միակ ուղին՝ երկրամասում սովետական իշխանության հաստատումը և միավորումը Սովետական Ռուսաստանի հետ։ Բաքվում սովետական իշխանության հաղթանակի առաջին իսկ օրերից Մոսկվայի հետ սերտ կապ էր հաստատվել։ Ստ. Շահումյանը մշտական նամակագրություն ուներ Լենինի հետ և նրանից ցուցումներ էր ստանում։

Չնայած այն բանին, որ հակահեղափոխական ուժերի և թուրք-մուսավաթական հորդաների շարունակվող արշավանքի հետևանքով ամենուրեք սովն ու ավերվածությունն էին իշխում, Բաքվի պրոլետարիատը ուժ ու եռանդ չխնայելով պայքարում էր նավթի հանույտարիատը ուժ ու եռանդ չխնայելով պայքարում էր նավթի հանույթի ավելացման և նրա արտահանման համար՝ Սովետական Ռուսաստանին վառելիքով ապահովելու նպատակով։ Նավթի արտահանումը Բաքվից Սովետական Ռուսաստան ավելացավ օրական 700 հազար փթից մինչև մեկ միլիոն 400 հազար փութ։ 1918 թվականի գարնան ու ամռան ընթացքում Ռուսաստան արտահանվեց 80 միլիոն փթից ավելի նավթ։ Բաքվի սովետական իշխանության օգնությունը Սովետական Ռուսաստանին վառելիքով հսկայական դեր խաղաց ինտերվենցիայի ու ներքին հակահեղափոխական ուժերի դեմ մղվող պայքարում։ Այն աշխուժացրեց պատերազմի հետևանքով ավերված երկրի տնտեսությունը։

Բաքվի սովետական իշխանությունը, քաղաքացիական պատերազմի կրակում ղեկավարվելով Լենինի ցուցումներով, եռանդուն գործունեություն ծավալեց սոցիալիստական միջոցառումները կյանքում կիրառելու համար։ Ազգայնացվեցին բանկերը, նավթային ու ձկնարդյունաբերությունը, առևտրական նավատորմը։ Ժողկոմսովետը դեկրետ հրատարակեց խաների ու բեկերի հողերը բռնագրավելու և դրանք աշխատավոր գյուղացիությանը հանձնելու, 8-ժամյա բանվորական օր սահմանելու մասին և այլն։

Հիշյալ սոցիալիստական վերափոխումները կյանքում իրականացնելու և Ադրբեջանում ու ամբողջ Անդրկովկասում սովետական իշխանության հաղթական երթն ապահովելու համար Բաքվի Ժողկոմսովետը զինված մեծ ուժերի կարիք ուներ։

«Սովետական իշխանության վերջնական հաղթանակի համար,— ասված է Բաքվի Ժողկոմսովետի դեկլարացիայում,— այդ իշխանությունը ամբողջ Անդրկովկասում տարածելու և վերը նշված միջոցառումները կյանքում կիրառելու համար անհրաժեշտ է շարունակել հաղթականորեն սկսված քաղաքացիական պատերազմը, իսկ դրա համար ամենից առաջ անհրաժեշտ է ունենալ ուժեղ կարմիր բանակ։ Այդ բանակը ստեղծելու աշխատանքը սկսված է, հարկավոր է, որպեսզի այն այսուհետև ևս շարունակվի մեծ եռանդով» [1]։

1 Ստ. Շահումյան, Երկեր, հ. 3, էջ 145։

1 «Бакинский рабочий», № 72 за 1918 г.

Բաքվի սովետի զինված ուժերի կազմակերպումը, որը սկսվել էր տակավին մարտյան իրադարձություններից առաջ, քաղաքացիական պատերազմի օրերին լայն թափ ստացավ։

Մուսավաթական հրոսակախմբերի ջախջախումից հետո, որոնց թիկունքին էին կանգնած Ադրբեջանում քողարկված էքսպանսիայից բացահայտ հարձակման անցած թուրքական զորքերը, Բաքվի սովետական իշխանությունը բոլոր միջոցները ձեռք առավ իր զինված ուժերն ամրապնդելու և թուրք-մուսավաթական հորդաների արշավանքը հաջողությամբ ետ մղելու համար։ Սովետական իշխանության համար Բաքվում ստեղծված նոր իրադրության կապակցությամբ Ա. Միկոյանը գրում էր. «Մայիսի սկզբին Բաքվի պրոլետարիատի առջև մի նոր սպառնալից վտանգ ստեղծվեց՝ թուրքերի առաջխաղացումն Անդրկովկասում և արշավանքի նախապատրաստումը Բաքվի դեմ։

Բանակի կազմակերպման և Բաքվի պաշտպանության հարցերը հիմնականն էին այն ժամանակ։ Հապճեպ կերպով միջոցներ ձեռք առնվեցին»[1]։ Բաքվի բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավարները քաղաքի արդյունաբերական ձեռնարկություններում և այլ կազմակերպություններում, ինչպես և Բաքվի շրջաններում, եռանդուն գործունեություն էին ծավալել բանվորներին, սովետական կազմակերպությունների աշխատակիցներին ու նախկին ճակատայիններին Կովկասյան կարմիր բանակի շարքերը ներգրավելու համար։ Պատասխանելով բոլշևիկների կոչին, բանվորներն ու աշխատավոր գյուղացիությունը զանգվածաբար մտնում էին կարմիր բանակի շարքերը։ Այսպես, միլիոնատեր Թաղիևի տեքստիլ ֆաբրիկայի 500 ադրբեջանցի բանվորներ իրենց պատրաստակամությունը հայտնեցին մեկնելու ճակատ և զենքը ձեռքներին պաշտպանելու սովետական Բաքուն։ Սաբունչիի «Ռունո» նավթահանքում կարմիր բանակի մեջ անդամագրվեց նավթագործ բանվորների ամբողջ երրորդ հերթափոխը։ Կասպիական նավաշինարարական գործարանում կարմիր բանակի շարքերն ընդունվածների թիվը կազմում էր բանվորների կեսից ավելին[2]։

Այդ օրերին «Իզվեստիա Բակինսկովո սովետա» թերթը գրում էր.

«Ճակատում Կովկասյան կարմիր բանակի հանդես գալուց հետո բանվորների և սովետական կազմակերպությունների ու հիմնարկների աշխատակիցների մեջ սաստիկ հուզմունք է տիրում, բոլորը ձգտում են դեպի կարմիր բանակի շարքերը, կռվի այս վճռական օրերին բոլորը ցանկանում են նրա գործուն մասնակիցները լինել...

Շատերը մեկնեցին ճակատ, մյուսներին... դժվարությամբ է հաջողվում պահել իրենց տեղերում»[1]։

Կարմիր բանակի շարքերն էին ընդունվում նաև Ադրբեջանի այն շրջանների աշխատավոր գյուղացիները, որտեղ հաղթանակել էր սովետական իշխանությունը։ Այսպես, օրինակ, Շամախու գավառում գյուղացիները կարմիրբանակային ջոկատ կազմակերպեցին, որը հաշվում էր շուրջ 1000 մարտիկ։ Նման ջոկատներ կազմակերպվեցին նաև Սալյանի, Ղուբայի, Լենքորանի և այլ գավառներում։ Գյուղացիներից կազմված կարմիրբանակային ջոկատները զենքի, հանդերձանքի ու զինամթերքի խիստ կարիք ունեին, նրանք բավարարված չէին նաև հրամանատարական կազմով։ «Սովետական զորքերի կազմակերպումը,— ասում էր Գ. Կորգանովը,— մեծապես դժվարանում էր զենքի անբավարար լինելու պատճառով. այն մենք ստանում էինք մասամբ զորացրված ջոկատներից, մասամբ Աստրախանից, մի փոքր էլ Տաշքենդից։ Ցկնվորների գրեթե կեսն անզեն է»[2]։

Կամավորական հիմունքներով հապճեպ կերպով ստեղծված կարմիրբանակային այդ ջոկատները, որոնց մեջ հիմնականում ընդգրկված էին բանվորները, սովետական ծառայողներն ու աշխատավոր գյուղացիները, խիստ անբավարար էին թուրքական կանոնավոր և լավ զինված զորքերի դեմ պայքարելու համար։ Քաղաքացիական պատերազմով զբաղված Սովետական Ռուսաստանը, որը Հյուսիսային Կովկասը Դենիկինի ու Կրասնովի հակահեղափոխական ուժերի կողմից գրավված լինելու պատճառով անջատված էր Անդրկովկասից, հնարավորություն չուներ իր ուժերի չափով օգնություն ցույց տալ Բաքվի կոմունային։ Մինչև հունիսի կեսերը Բաքուն Սովետական Ռուսաստանից ոչ մի զինված օգնություն չէր ստանում։ Իսկ թուրքական զավթիչների ու նրանց գործակալների՝ մուսավաթական հրոսակախմբերի դեմ մղված համառ պայքարի օրերին Աստրախանի միջով Ռուսաստանից ստացված օգնությունը խիստ անբավարար էր Բաքուն պահելու համար։ Ուստի Բաքվի ժողովրդական կոմիսարների սովետը ստիպված էր Բաքվի

---

1 «Бакинская организация большевиков 1917—1918 гг.», տե՛ս «Бакинский рабочий», № 57, 14 марта 1923 г.

2 Տե՛ս Искандаров М. С., Из истории борьбы коммунистической партии Азербайджана за победу Советской власти, Баку, 1958, стр. 257.

1 «Известия бакинского совета», № 142, 20 мая 1918 г.

2 ЦГАКА, ф. 1, оп. 2, д. 8с, лл. 417—419.

սովետի կողմում մարտյան կռիվներին մասնակցած հայկական ազգային զորամասերը ևս մտցնել կովկասյան կարմիր բանակի կազմի մեջ։ Բաքվի կոմունայի զինված ուժերի 70 տոկոսից ավելին կազմում էին հայկական զորամասերը։ Հրամանատարական կազմի մի զգալի մասը դաշնակցական սպաներն էին, որոնց կցված էին բոլշևիկ կոմիսարներ։

Խոսելով Բաքվի սովետական իշխանության կողմում հայկական զինված ուժերի մասնակցության պատճառների մասին, նախկին կովկասյան ճակատի գլխավոր շտաբի պետի տեղակալ գեներալ Ղորղանյանը գրում էր, որ չնայած ներքին քաղաքականության հարցերում հայկական ղեկավար շրջանների հայացքների տարբերությանը, վերջիններս Բաքվի և նրա շրջանների պաշտպանության գործում բոլշևիկներին դիտում էին որպես իրենց դաշնակիցներ. «Հայերը,— գրում է Ղորղանյանը,— տերիտորիալ հավակնություններ չունեին, այլ միայն սահմանափակվում էին Բաքվի մարզի պաշտպանությամբ, քանի որ Բաքուն թուրք-թաթարների կողմից գրավվելու դեպքում հայկական խաղաղ ազգաբնակչությունը անխուսափելիորեն կոչնչացվեր։ Բացի դրանից, թշնամական ուժերի մի մասի զբաղված լինելը Բաքվի ճակատում հեշտացնում էր Հայաստանի ռազմական ընդհանուր դրությունը» [1]։

Բաքվի ժողկոմսովետի զինված ուժերի ընդհանուր թիվը հունիսի կեսերին կազմում էր մոտավորապես 15 հազար մարդ։

Մուսավաթական կուսակցության պարագլուխները անհամբերությամբ սպասում էին թուրքական հորդաների Գյանջա գալուն, որպեսզի նրանց օգնությամբ ոչնչացնեին Բաքվի սովետական իշխանությունը։

Այդ տեսակետից վերին աստիճանի բնորոշ է մուսավաթական կուսակցության ականավոր գործիչներից մեկի՝ Ռասուլ Զադեի անկեղծ խոստովանությունը։ Վերջինս խոսելով Սեյմի կազմալուծման և «ինքնուրույն» հանրապետություններ ստեղծվելու մասին, գրում էր, որ Թուրքիայի ու Ադրբեջանի միջև կնքված Բաթումի պայմանագրի չորրորդ հոդվածի հիման վրա «Ադրբեջանական հանրապետությունը իրավունք ուներ Թուրքիայից պահանջել ռազմական օգնություն երկրի անվտանգությունն ու կարգ ու կանոնը վերականգնելու համար։ Այդ նույն հոդվածի հիման վրա ես, Ադրբեջանի ազգային խորհրդի անունից և Մեհմեդ Հասան բեյը՝ արտաքին գործերի մինիստրության անունից, դիմեցինք թուրքական կառավարությանը ռազմական օգնություն ցույց տալու պահանջով» [1]։

Վրացական մենշևիկների պարագլուխները ցնծագին դիմավորեցին թուրքական ինտերվենցիան Ադրբեջանում։ Թուրքական զորքերի Բաքվին մոտենալու օրերին Վրաստանի մենշևիկյան կառավարության ռազմական մինիստր Գեորգաձեն ճաշկերույթի ժամանակ արտասանած իր ճառում նրանց հաջողություն մաղթեց [2]։

Թուրքերի կողմից Ադրբեջանի արագ նվաճմանը և Բաքվում սովետական իշխանության տապալմանը խոչընդոտեցին Հայաստանի ժողովրդական զանգվածների 1918 թվականի մայիսի երկրորդ կեսի Սարդարաբադի, Բաշ Ապարանի և Ղարաքիլիսայի հերոսական ճակատամարտերը (այդ մասին կխոսվի ստորև)։ Այդ պայքարի հետևանքով թուրքական զորքերը ետ շպրտվեցին Սարդարաբադից և նրանց կողմից Երևանի գրավման վտանգը վերացավ։ Այդ պարտությունը որոշ ժամանակով նաև ուշացրեց թուրքական արշավանքն Ադրբեջանի վրա։ Իրենց այդ հաղթանակով Հայաստանի ժողովրդական զանգվածներն օգնեցին Բաքվի կոմունային՝ մուսավաթական բանդաների դեմ նրա մղած պայքարում, ինչպես նաև սովետական իշխանության հաղթանակին Ադրբեջանի մի շարք շրջաններում։

Երևանի մատույցներում կրած ծանր պարտությունից հետո ուշքի գալով, թուրքական զավթիչները հունիսի սկզբներին սկսեցին Ալեքսանդրապոլից Ղարաքիլիսայի, Դիլիջանի, Ղազախի ու Աղըստաֆայի վրայով զորքեր փոխադրել Գյանջա։ Նախքան թուրքական զորքերի Գյանջա գալը, մայիսի 27-ին, այնտեղ ժամանեց թուրքական բանակի շտաբը Էնվերի խորթ եղբայր Նուրի-փաշայի գլխավորությամբ։

Նուրի-փաշայի Գյանջա գալու կապակցությամբ նույն Ռասուլ Զադեն գրում էր, որ «գտնվելով բոլշևիկների հարձակման վտանգի տակ, Գյանջան Նուրի-փաշային ընդունեց որպես երկնքից իջած իր փրկարար հրեշտակի» [3]։

Թուրքական զավթիչները արտաքուստ ձևացնում էին, որ իբր իրենք «եղբայրակից ադրբեջանցիներին պաշտպանում են» բոլշևիկյան սպառնալիքից, իրականում, սակայն, նրանք ձգտում էին գաղութացնել ոչ միայն Ադրբեջանը, այլև ողջ Կովկասը։

---

1 General G. Korganoff. La participation des Armeniens à la guerre mondiale sur le front du Caucase (1914—1918). Paris, 1927, p. 180—181.

1 Տե՛ս Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 11, ց. 31, թ. 7։

2 «Правда», 1/X—1918 г., № 210.

3 ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 11, ց. 29, թ. 577։

Ստամբուլում գերմանական դեսպան Բերնսդորֆը 1918 թվականի հունիսին դաշնակցական պարագլուխներ Ահարոնյանի ու Խատիսովի հետ ունեցած զրույցի ժամանակ, խոսելով Բաքվի վրա Թուրքական արշավանքի նպատակների մասին, ուղղակի հայտարարեց, որ Թուրքիան ձգտում է Բաքուն գրավել իր, և ոչ թե Ադրբեջանի համար, որի մասին նա հայտարարել է մուսավաթական կառավարության ղեկավարներին։ Բաքվի հետ մեկտեղ նա ձգտում է գրավել ողջ Ադրբեջանը։ Այդ դեպքում Թուրքիան կտարածվի մինչև Վլադիկավկաս [1]։

Թուրքական զավթիչների այդ ծրագրի իրականացմանը խանգարեց Բաքվում և Ադրբեջանի մի շարք շրջաններում հաղթանակած սովետական իշխանությունը։ Հենց այդ պատճառով էլ Թուրքական հրամանատարությունը Բաքվի դեմ էր կենտրոնացրել մյուս ռազմաճակատներից փոխադրած լավագույն դիվիզիաները։

Անդրկովկասում իր զավթողական պլաններն իրագործելու համար Էնվերը Ադրբեջան փոխադրեց Գալիպոլիի, Միջագետքի ու ռումինական ճակատներից 5-րդ, 9-րդ, 11-րդ և 15-րդ դիվիզիաները։ Դրանք Թուրքիայի ընտիր զորամասերն էին։ Հիշյալ դիվիզիաները Ադրբեջան եկան Օրդուբադի [2] ու Բաթումի վրայով։ Այդ չորս դիվիզիաները մտան կովկասյան առաջին Թուրքական կորպուսի մեջ, որը հետագայում՝ ուժեղացնելու նպատակով, կցվեցին նաև 36-րդ և 10-րդ դիվիզիաները։ Թուրքական կովկասյան առաջին կորպուսի բոլոր վեց դիվիզիաները բավարար չափով հագեցված էին հրետանիով, որ ռուսական զորքերը թողել էին Կարինում, Կարսում և ամրացված այլ կետերում։ Բացի նշված դիվիզիաներից, Ադրբեջան փոխադրվեցին նաև Բաթումի ճակատի զորքերը թվով 5 հազար մարդ, որոնց Թուրքական հրամանատարությունը ներշնչում էր, թե իբր «ճանապարհը դեպի տուն ընկած է միայն Բաքվի վրայով» [3]։ Թուրքական բոլոր ուժերի ընդհանուր թիվը 20 հազարից ավելի էր։

Բացի այդ զորքերից, Թուրքական հրամանատարության տրամադրության տակ էր գտնվում նաև «իսլամի բանակը», որը Թուրքական հորդաների կողմից կազմակերպվել էր նախկին «վայրենի դիվիզիայի» մնացորդներից և Ադրբեջանի գրավված շրջանների այն բնակիչներից, որոնց նրանք բռնի կերպով էին բանակ զորակոչել։

Թուրքական զորքերի փոխադրումը Ադրբեջան և դրանց կենտրոնացումը Գյանջայի շրջանում ավարտվեց հունիսի առաջին կեսին, և Թուրքական հրամանատարությունը կարգադրություն արեց Բաքվի վրա ընդհանուր հարձակում ծավալելու մասին։

Թուրք-մուսավաթական ուժերի հրամանատարն էր գեներալ Նուրի-փաշան, որի շտաբը գտնվում էր Գյանջայում։ Նրա թելադրանքով մահմեդական ազգային խորհուրդը հունիսի 17-ին լուծարքի ենթարկվեց, և դրա փոխարեն կազմավորվեց մուսավաթական տիկնիկային կառավարությունը՝ խաների ու բեկերի ներկայացուցիչ Խան-Խոյսկու գլխավորությամբ։

Խան-Խոյսկու կառավարության ողջ գործունեությունը ուղղված էր մահմեդական ազգային զորամասեր կազմակերպելու և Թուրք հորդաների հետ մեկտեղ սովետական Բաքվի վրա հարձակում նախապատրաստելու նպատակին։

Նախքան Թուրք-մուսավաթական զորքերի Բաքվի վրա հարձակման անցնելը, Բաքվի կոմունայի զինված ուժերը, թվով 10 հազար մարդ, հունիսի 10-ին հանդես եկան կենտրոնական ճակատում և սկսելով հարձակումը Հաջիկաբուլից, զարգացրին այն Գյանջայի ուղղությամբ։ Կարմիր զորքերի հրամանատար նշանակվեց Բաքվի ժողկոմսովետի ռազմա-ծովային գործերի կոմիսար Գ. Կորգանովը, որն իր ամբողջ ուժերը նվիրաբերեց կովկասյան կարմիր բանակ ստեղծելու գործին։ Կորգանովը անմիջականորեն ղեկավարում էր ռազմական գործողությունները։ Կովկասյան կարմիր բանակի առաջին կորպուսի հրամանատար նշանակվեց գնդապետ Կազարովը, իսկ կորպուսի շտաբի պետ՝ ցարական բանակի նախկին գնդապետ դաշնակ Ավետիսովը։

Կարմիր բանակի մարտական ջոկատները համառ մարտերում թշնամուն ետ շպրտեցին և հունիսի 11-ին գրավեցին Սաղրլիի երկաթուղային կայարանները, իսկ հունիսի 12-ին՝ Քյուրդամիրը։

Նահանջող Թուրքական զորամասերը բաց արեցին շլյուզները և գրեթե ողջ շրջապատը ողողվեց ջրով։ Այս հանգամանքը որոշ ժամանակով կասեցրեց սովետական զորքերի առաջխաղացումը կենտրոնական ճակատում։

Հուլիսի 17-ին Անդրկովկասից վերադարձած Վահան Տերյանը Հայկական գործերի կոմիսարիատում զեկուցեց Բաքվի ճակատում

---

1 Տե՛ս ՀՍՍՌ ԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 13, թ. 9—20։

2 Իրանից Օրդուբադի վրայով Գյանջա փոխադրված Թուրքական զորքերը, որոնց գլխավորում էր Քյազիմ-փաշան, հաշվում էին 7 հազար մարդ լրիվ սպառազինությամբ և 40 թնդանոթներով (տես «Հորիզոն», 1918 թ. № 104)։

3 Տե՛ս Документы фонда «Истории гражданской войны в СССР», т. 11, д. 102, стр. 42—48։ Ֆրանսիական ռազմական պատմաբան Լարշեի տվյալների համաձայն Թուրքական զինված ուժերի մեջ մտնող 45 դիվիզիաներից Թուրքական հրամանատարությունը 1918 թվականի ապրիլին 10 դիվիզիա փոխադրել էր Անդրկովկաս։ Տե՛ս Larcher, p. 592—593։

տիրող դրության մասին։ Խոսելով ռազմա-ստրատեգիական դրության մասին, Տերյանը նշեց, որ սովետական զորքերի մղած կռվի վայրը «մալարիայի բոն է, բուժանձնակազմի ու դեղորայքի հրկայական պակաս է զգացվում։ Այդ բոլորի հաղթահարումը անասելի դժվարությունների հետ է կապված» [1]։

Աջ թևում սովետական զորքերի մի ջոկատ հաջող կերպով առաջ շարժվելով, Շամախի—Աքսու—Գյոքչայ—Խոլդան խճուղու վրա մի շարք գյուղեր ազատագրեց, ջախջախելով թուրքերի, մուսավաթականների ու վրացական մենշևիկների շուրջ 3 հազար հոգուց բաղկացած միացյալ զինված ուժերը։ Ճակատային գիծն անցնում էր Շամախուց հյուսիս։ Ձախ թևի պաշտպանական գիծն անցնում էր Քուռ գետով։

Այդ օրերին Ստեփան Շահումյանը Լենինին ուղարկած հեռագրում հաղորդում էր.

«Մեր զորքերի տրամադրությունը կայտառ է, կարգ ու կանոն օրինակելի է, նավատորմը հերոսաբար կպաշտպանի սովետական իշխանությունը, բանվորների տրամադրությունը, չնայած գրեթե երեք ամսվա քաղցին, խիստ բարձր է, կկռվեն մինչև վերջին հնարավորությունը» [2]։

Շարունակելով իրենց հարձակումը, սովետական զորքերը հունիսի 16-ին հայկական Կարմարյան գյուղի մոտ բախվեցին թուրքական կանոնավոր զորամասերի հետ։ Յոթժամյա արյունահեղ մարտից հետո թուրքական զորքերը, որոնց թիվը հասնում էր մոտ 2 հազարի, ջախջախվեցին և Կարմարյան։ Նոր ուժեր փոխադրելով, թուրքերը հունիսի 17-ին անցան հակահարձակման, բայց նորից ջախջախվեցին և ետ շպրտվեցին Գյոքչայ։ Արյունահեղ մարտում թուրքական զորքերը ռազմի դաշտում թողեցին 500-ից ավելի սպանված ու վիրավոր։ Կարմարյանի տակ թուրքական զորքերի կրած պարտությունն այն աստիճան շոշափելի էր, որ կովկասյան թուրքական 5-րդ դիվիզիայի շտաբի պետ Ռյուշտյուն հետագայում իր հուշերում այդ մասին ստիպված էր գրել հետևյալը. «Հունիսի 17-ին կրած մեր պարտությունը բանակի հրամանատարության վրա ճնշող տպավորություն գործեց» [3]։

Թուրքական հորդաների ջախջախումը Կարմարյանի տակ ոչ նվազ ծանր տպավորություն գործեց նաև մուսավաթական կառավարության ղեկավարների վրա։ Այսպես, արտաքին գործերի մի-

1 «Правда», № 149, 19/VII—1918 г.

2 Ս տ. Շ ա հ ու մ յ ա ն, Երկեր, հ. 3, էջ 333։

3 Miralay Rəştü, s. 233.

նիստր Գաջինսկին գրում էր Ստամբուլ՝ Ռասուլ Զադեին. հետևյալը.

«Մեր դրությունը ռազմաճակատում բոլորովին լավ չէ. չենք կարողանում առաջ շարժվել։ Բոլշևիկները հոյակապ կերպով են կռվում, շատ ռումբեր ունեն... այս բոլորի մասին ես մանրամասն հեռագիր եմ ուղարկել, խնդրել եմ պնդել, որ էնվերը շուտափույթ կերպով ևս մեկ դիվիզիա ուղարկի, հակառակ դեպքում ամեն ինչ կկորցնենք, Բաքուն մենք չենք ստանա և Թուրքիայի հեղինակությունը կընկնի։ Եթե ուզում եք իմանալ, արդեն սկսել է ընկնել» [1]։

Թուրքական հրամանատարությունը, օգտվելով այն բանից, որ Բաթումի պայմանագրերի համաձայն երկաթուղիները դրվել էին նրա տրամադրության տակ, արագ կերպով նոր զորամասեր փոխադրեց Ադրբեջան, որի հետևանքով հունիսի 25-ին թուրքական զորքերի թիվը Գյանջայի ուղղությամբ հասնում էր 15 հազարի՝ չհաշված մուսավաթական ջոկատները։ Այդ ժամանակ կովկասյան կարմիր բանակի թիվը, մարտերում կրած կորուստներից հետո, 15 հազարից նվազել էր մինչև 8 հազար։

Թուրքական զորքերի թվական գերակշռությունը թուրքական հրամանատարությանը հնարավորություն տվեց նախաձեռնությունն իր ձեռքը վերցնել և Գյոքչայի ու Քյուրդամիրի շրջանում հակահարձակման անցնել։ Հունիսի 27-ից 30-ը Գյոքչայի տակ համառ կռիվներ էին տեղի ունենում։ Այդ մարտերի հետևանքով հակառակորդը իր գերազանց ուժերով նեղեց սովետական զորքերի ձախ թևին և ստիպեց նրան նահանջել Աքսուի ուղղությամբ։ «Գյոքչայի տակ մղված 4-օրյա մարտերն ավարտված են,— գրում էր Կորգանովը Բաքվի ժողկոմսովետին ուղարկած իր զեկուցագրում,— մի շարք անբարենպաստ հանգամանքների պատճառով, մեր զորքերը, որոնք ճակատային դիրք էին գրավել, նահանջեցին դեպի Կարմարյան։ Հակառակորդը դուրս եկավ շրջապատման դրությունից, որը նրան ջախջախում էր սպառնում և, իր հերթին, սկսեց շրջապատել մեզ... կռիվը շատ համառ էր, գործը հասնում էր սվինամարտի։ Սարսափելի շոգից նեղվելով, ջուր հասցնելու հնարավորությունից զրկված, զինվորները հասնում էին մինչև ուշաթափության աստիճան, սակայն խիզախորեն պաշտպանում էին իրենց դիրքերը՝ միաժամանակ գրոհի նետվելով։ Միայն մի զորամաս ձախ թևում, հառակորդի մեծաթիվ հեծելազորը շրջանցելու պահին, նահանջեց և դրանով իսկ ազդեց ողջ ճակատի վրա։ Կորուստները երկու կող-

1 Труды Азербайджанского филиала ИМЛ, т. 6, стр. 115.

մից էլ զգալի են։ Հակառակորդի շարքերում կանոնավոր թուրքական զորամասեր են»[1]։

Կովկասյան առաջին կարմիր կորպուսի զորամասերի պարտությունը Գյոքչայի տակ բեկում առաջ բերեց ռազմական գործողությունների հետագա ընթացքի մեջ՝ Բաքվի ճակատում։ Կարմիր բանակը հարձակումից անցավ պաշտպանության։ Նախաձեռնությունն իր ձեռքը վերցնելով, թուրքական հրամանատարությունը, օգտվելով իր տրամադրության տակ եղած ուժերի ու սպառազինության քանակական գերազանցությունից, շարունակում էր հարձակումը Բաքվի վրա։ Քայլ առ քայլ, վերին աստիճանի ծանր պայմաններում ընթացող համառ մարտերում, թուրքական զորքերը դանդաղորեն ետ էին մղում սովետական ջոկատներին։ Հրետանին ուժեղացնելով շնեյդերյան թնդանոթներով և բուլղարական ճակատից ժամանած նոր գնդերով, թուրքական զորքերը գրոհեցին Քյուրդամիրի վրա։ Այդ դժվարին օրերին Բաքվի սովետական իշխանությունը ստիպված էր ընդունել թուրքական նվաճողների դեմ համատեղ պայքար մղելու վերաբերյալ գնդապետ Բիչերախովի կողմից արված առաջարկը։ Բիչերախովի կազակական ջոկատը[2], որը բաղկացած էր 1500 լավ զինված մարտիկներից, հուլիսի 5-ին գալով Հյուսիսային Իրանից, ավելի իջավ Ալյաթում և հուլիսի 7-ին հանդես եկավ Քյուրդամիրի ճակատում։ Հուլիսի 6-ին Բիչերախովը իր վրա վերցրեց հրամանատարությունն աջ թևում։

Զախ թևի և կենտրոնի հրամանատարությունն առաջվա պես իր վրա վերցրեց Կորգանովը։

Հարձակվելով Քյուրդամիրի վրա, թուրքական զորքերը համադիմադրության հանդիպեցին սովետական ջոկատների կողմից և

1 «Известия бакинского Совета», 2 июля, 1918 г.

2 Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո ռուսական բանակը հեռացավ Հյուսիսային Իրանից։ Օգտվելով դրանից, անգլիական զորքերը գրավեցին Հյուսիսային Իրանը և սկսեցին նախապատրաստվել հակասովետական ինտերվենցիայի՝ Բաքվի դեմ։ Այդ նպատակով անգլիական հրամանատարությունը օգտագործեց ռուսական զորքերի այնտեղ մնացած ջոկատը՝ Բիչերախովի հրամանատարությամբ, որը անցել էր ծառայության անգլիացիների մոտ։ Հյուսիսային Իրանում անգլիական զորքերի հրամանատար գեներալ Դենստերվիլի հանձնարարությամբ Բիչերախովը կապվեց Բաքվի ժողկոմսովետի հետ և իր «ծառայություններն» առաջարկեց թուրքական զորքերի դեմ համատեղ պայքարում, ընդսմին հավատացնելով, որ ինքը ճանաչում է սովետական իշխանությունը և ենթարկվում Բաքվի ժողկոմսովետի զինված ուժերի հրամանատարությանը։ Իրականում, սակայն, Բիչերախովը անգլիացիների գործակալը դուրս եկավ։ Նա պետք է նպաստեր անգլիացիների կողմից Բաքվի գրավմանը։

12-ժամյա դաժան մարտից հետո ետ շպրտվեցին, կրելով մեծ կորուստներ։

Քյուրդամիրի տակ տեղի ունեցած կռվին մասնակցեցին Մոսկվայից ուղարկված զրահակիրներն ու ինքնաթիռները, որոնք վճռական դեր խաղացին թշնամուն հակահարված տալու գործում։

Հյուսիսային ճակատում, Ղուբան հուլիսի 6-ին պաշարվել էր եզդիների կողմից։ Շուրջ 8 ժամ կռիվներ էին մղվում. ի վերջո, հակառակորդը ետ շպրտվեց, և Ղուբայի շուրջ եղած դիրքերը գրավվեցին կարմիր բանակի ուժերի կողմից։

Նոր լրացուցիչ ուժեր ստանալով, թուրքական զորքերը վերջին հարձակման անցան Քյուրդամիրի վրա և երեք օր տևող արյունահեղ մարտերից հետո հուլիսի 10-ին գրավեցին Քյուրդամիր կայարանը։ Թուրքերի մի քանի ստորաբաժանումներ, որոնք առաջ էին շարժվում երկաթգծի ուղղությամբ, մոտեցան Քերար կայարանին, մյուսները, անցնելով Աքսուի այն կողմը, դուրս եկան Շամախու խճուղին, որը նրանց առջև ուղիղ ճանապարհ էր բացում դեպի Բաքու։

Թուրք-մուսավաթական հորդաներին օգնում էին տեղական հակահեղափոխական տարրերից կազմված հրոսակախմբերը, որոնք շարքից դուրս էին բերում երկաթուղագծերը, թիկունքից անակնկալ հարձակումներ գործում կարմիր բանակի զորամասերի վրա և այլն։

Հուլիսի 13-ին Շահումյանը հեռագրում էր Լենինին.

«Դրությունը ռազմաճակատում վատանում է։ Միայն մեր ուժերը բավական չեն։ Անհրաժեշտ է լուրջ օգնություն Ռուսաստանից... Սպասում եմ շտապ ռազմական օգնության և Ձեր ղեկավար ցուցումներին, անհապաղ ուղարկեցե՛ք»[1]։

Բաքվի սովետական իշխանության պաշտպանության հարցով մտահոգված, Սովետական Ռուսաստանի կառավարությունը Վ. Ի. Լենինի գլխավորությամբ բոլոր միջոցները ձեռք էր առնում երկրի այդ կարևորագույն արդյունաբերական ու հեղափոխական կենտրոնն ամրապնդելու համար, թեև այդ ժամանակ Սովետական Ռուսաստանի դրությունը շատ ծանր էր. նա պատերազմ էր մղում ինչպես ինտերվենցիայի, այնպես էլ ներքին հակահեղափոխական ուժերի դեմ։ 1918 թվականի հուլիսին Լենինը ծովային գործերի ժողովրդական կոմիսարիատին ուղարկել է հետևյալ գրությունը. «Շատ եմ խնդրում բոլոր միջոցները ձեռք առնել Կասպից ծովը ամեն հարմար տիպի ռազմական ու ծովային նավեր փոխադրելու համար»։

1 Ս. Շահումյան, Երկեր, հ. 3, էջ 351։

1918 թվականի հունիս-հուլիս ամիսների ընթացքում Սովետական Ռուսաստանի կառավարությունը Բաքու ուղարկեց մեծ քանակությամբ զենք, ռազմամթերք, դրամ, պարեն։ Հունիսին Բաքուն Սովետական Ռուսաստանից 15 վագոն հաց ստացավ, հուլիսի երկրորդ կեսին՝ 180 վագոն մթերք, 28 հազար տուփ պահածոներ և շատ ուրիշ ապրանքներ [1]։ Հունիսի 23-ին Մոսկվայից ստացվեցին զրահակիր մեքենաներ, իսկ մինչ այդ՝ 13 ինքնաթիռ։ Հուլիսի 20-ին Բաքու ժամանեց Պետրովի լավ զինված ջոկատը (շուրջ 800 զինվոր), որը հանվել էր ուկրաինական ճակատից և օգնության ուղարկվել Բաքվի պրոլետարիատին։ Կասպից նավատորմի համար մեծ քանակությամբ սպառազինություն ստացվեց։ Հուլիսի կեսերին Բաքուն 300 վագոն ռազմամթերք ստացավ։ Այդ օրերին Ստ. Շահումյանը ասում էր. «Ռուսաստանը մինչև այժմ ոչինչ չի խնայել և այժմ էլ ուժ չի խնայում...։ Սովետական Ռուսաստանը հսկայական միջոցներ է տրամադրում մեզ» [2]։

Սակայն դեպի Բաքու տանող ճանապարհները գտնվում էին հակահեղափոխական ուժերի ձեռքում, այդ պատճառով էլ սովետական կառավարությունից ուղարկված ոչ բոլոր զորամասերը, սպառազինությունն ու պարենն էին հասնում նշանակման վայրը՝ Բաքու։ Հիմնական ուղին Կասպից ծովն էր։ Այստեղից էր հնարավոր միայն, մեծ դժվարություններ հաղթահարելով, Բաքվի սովետական իշխանությանը ռազմական օգնություն հասցնել։

Այդ ժամանակ թուրքական զորքերը, համալրվելով նոր ուժերով և առանց որևէ արգելքի զենք ու ռազմական հանդերձանք ստանալով Բաթումի ու Ալեքսանդրապոլի վրայով, սովետական զորքերին ետ մղեցին Քյուրդամիրի ու Շամախու ուղղությամբ։ Կենտրոնական՝ Քյուրդամիրի ուղղությամբ սովետական զորքերը հակառակորդի գերակշռող ուժերի ճնշման տակ ստիպված էին նահանջել Քերարից մինչև Հաջիկաբուլ, իսկ Շամախու ուղղությամբ նրանք համառ պայքարից հետո թողեցին Մատրասա գյուղը և նահանջեցին դեպի Շամախի քաղաքը։

Շամախու շրջանում տեղի ունեցած կռիվների մասին երրորդ բրիգադի կոմիսար Ա. Ի. Միկոյանը գրում էր. «Հուլիսի 20-ին հակառակորդը մեծ ուժեր կենտրոնացնելով Մատրասա գյուղի վրա, գրավեց Ալթաու լեռը, Քերքենդի բարձունքները և, շարժվելով շրջանցման օղակով Հաջիդարինի բարձունքների վրա, ձգտում էր կտրել դեպի Մարազան տանող ճանապարհը... զորամասերի նահանջը մինչև Շամախի ընթանում էր լրիվ կարգապահության պայմաններում։ Շամախուց նահանջը շարունակվում էր ամբողջ գիշեր թափվող տեղատարափի անձրևի տակ, մարդիկ ու ձիերը բոլորովին ուժասպառ էին եղել, զրահակիրը խրվեց-մնաց տեղում...» [1]։

Սովետական զորքերի վիճակն ավելի էր վատթարանում նրանով, որ կրիտիկական այդ օրերին էսեռները, մենշևիկներն ու դաշնակները ճակատում ու թիկունքում ագիտացիա էին մղում անգլիացիներին հրավիրելու օգտին՝ թուրքերի դեմ իրենց «օգնելու» պատրվակով։

Այդ ագիտացիան կազմալուծում էր մտցնում սովետական զորքերի մեջ։ Կարգապահությունն ընկավ, դասալիքների թիվը մեծացավ։ Կռվի ամենաթեժ պահին, երբ բոլորովին նահանջի անհրաժեշտություն չկար, երրորդ բրիգադի հրամանատար դաշնակ Համազասպը նահանջի հրաման արձակեց։ Նույն բրիգադի կոմիսար Ա. Ի. Միկոյանը ամեն ինչ արեց զորքերի նահանջը կանգնեցնելու համար, սակայն Համազասպը իր դավաճանական գործն արեց։ «Չնայած իմ ջանքերին,— հեռագրում էր Միկոյանը,— Համազասպի հրամանով գումակը հեռացավ, իսկ նրա ետևից աստիճանաբար շարժվեց նաև հետևակը։ Մեղավորները պետք է դատի տրվեն» [2]։

Համազասպի դավաճանական այդ հրամանը կազմալուծում էր նաև սովետական մնացած զորքերի շարքերը։

«Մեր զորքերի հիմնական կոնտինգենտը,— հեռագրում էր Շահումյանը Լենինին,— հայկական զորամասերը, որոնք սկզբից խիզախորեն մարտնչում էին, այժմ բարոյալքված են հրամանատարական կազմի մի մասի վախկոտության և անգլիական ագիտացիայի շնորհիվ։ Անհրաժեշտ են թարմ ուժեր Ռուսաստանից և քաղաքականապես վստահելի հրամանատարական կազմ։

Խնդրում եմ շտապել» [3]։

ՌԿ(բ)Պ Բաքվի կոմիտեն և Բաքվի ժողկոմսովետը դիմեցին բանվորներին ու բոլոր աշխատավորներին ճակատ մեկնելու և թուրք զավթիչներից Բաքուն պաշտպանելու կոչերով։ Այդ կոչերում նշվում էր, որ կարմիր բանակի ստեղծման ժամանակ, պատշաճ ստուգման բացակայության հետևանքով, նրա շարքերն էին մտել քաղաքականապես անվստահելի և սովետական իշխանությանը

1 «Большевики в борьбе за победу социалистической революции в Азербайджане». Документы и материалы 1917—1919 гг., Баку, 1957 г., стр. 567.

2 Ստ. Շահումյան, Երկեր, հ. 3, էջ 382։

1 «Известия бакинского Совета», № 44, 23 июля 1918 г.

2 Նույն տեղում։

3 «Красный архив», №№ 4 и 5 (89—90), 1938 г., стр. 24.

ընվիրված հրամանատարներ, որոնք դժվարին պահին լքում էին ճակատը։

Այդ կոչերում Բաքվի սովետական իշխանության ղեկավարները, դիմելով Ադրբեջանի աշխատավորությանը, նրանց կոչ էին անում չհուսահատվել ժամանակավոր անհաջողություններից ճակատում և հույս էին ներշնչում թուրքական հորդաների դեմ ձեռք բերվելիք հաղթանակի նկատմամբ։ Բանվորներին ու կարմիրբանակայիններին ուղղված Բաքվի ժողովրդական կոմիսարների սովետի հուլիսի 24-ի դիմումի մեջ ասվում էր. «Վայրենի Թուրքիան մեր դեմ է շարժել իր զորքերը։ Ձենք վերցնելով, Բաքվի պրոլետարիատը այդ զորքերի դեմ դուրս եկավ և մի շարք հերոսական մարտերում ապացուցեց, որ ինքը կարող է կռվել ու մեռնել հեղափոխության համար, զենքը վայր չդնել և անձնատուր չլինել ատելի թուրք բռնակալներին» [1]։

Սովետական իշխանության կոչով Բաքվի պրոլետարիատն իր ուժերի մի մասն առանձնացրեց ճակատի համար։ Սակայն այդ ուժերն անբավարար էին թուրք-մուսավաթական զորքերին հակահարված տալու համար, որովհետև վերջիններս թվական զգալի գերակշռություն և բավարար չափով սպառազինություն ունեին։

Օգտվելով ճակատում տիրող ծանր դրությունից, մենշևիկները, աջ էսեռներն ու դաշնակները քայքայիչ աշխատանք էին տանում Բաքվի սովետում և զորքերի մեջ։ Նրանք պահանջում էին, որ անհապաղ Հյուսիսային Իրանից Բաքու հրավիրվեն անգլիական զորքերը՝ «թուրքերի դեմ իրենց օգնելու համար»։ Այդ դժվարին պայմաններում Բաքվի բոլշևիկները ստիպված էին պայքար մղել թուրքական զորքերի դեմ ճակատում և անգլիական իմպերիալիզմի գործակալության դեմ՝ թիկունքում։

Ստ. Շահումյանը Բաքվի սովետի արտակարգ նիստում 1918 թվականի հունիսի 25-ին ունեցած իր ելույթում մերկացնելով անգլիական իմպերիալիզմի վրա հենվելու դավաճանական գիծը, մատնանշում էր. «Մեր առջև ծառացած է քաղաքի և ռևոլյուցիայի պաշտպանության հարցը։ Դրա համար մենք պետք է գտնենք բոլոր միջոցները... Մենք այնքան էլ ահեղ և ուժեղ թշնամի չունենք մեր առջև, որ չկարողանանք մեր ուժերով ու միջոցներով դնել պաշտպանության հարցը... ես հրավիրում եմ ձեզ հանել անգլիացիների հրավիրման հարցը և քննարկել Սովետական Ռուսաստանի հետ միասին մեր ընդհանուր ջանքերով ռազմաճակատը պաշտպանելու հարցը» [2]։

1 «Известия бакинского Совета», 24 июля 1918 г.

2 Ստ. Շահումյան, Երկեր, հ. 3, էջ 381—382։

Այդ նույն նիստում ելույթ ունեցան Ջափարիձեն, Ազիզբեկովը, Ձևինը և Բաքվի մյուս կոմիսարները, որոնք մերկացրին ըստ էության անգլիական իմպերիալիզմի գործակիցները դարձած մենշևիկների, էսեռների ու դաշնակների վարքագիծը։

Բաքվի սովետի 1918 թվականի հունիսի 25-ի նիստում խոսելով էսեռա-մենշևիկյան-դաշնակցական բլոկի հաղթանակի պատճառների մասին, Ա. Ի. Միկոյանը ընդգծում էր, որ «մի քանի ամսվա ընթացքում Բաքվի պրոլետարիատը տառապում էր քաղցից, մենշևիկներն ու էսեռները նրա մեջ անվստահություն ու վախ էին ներշնչում իր ուժերի նկատմամբ, իսկ Բաքվի հայերը սարսափելի երկյուղ էին կրում, որ քաղաքը թուրքերի կողմից գրավվելու դեպքում իրենք անխուսափելիորեն ֆիզիկական ոչնչացման կենթարկվեն։ Այդ բոլոր հանգամանքները, ինչպես նաև անգլիական իմպերիալիստների կողմից լարած որոգայթները, Բաքվի պրոլետարիատին նախապատրաստեցին Բաքվի սովետի 1918 թվականի հուլիսի 26-ի նիստում ճակատագրական որոշման ընդունումը (ճիշտ է աննշան մեծամասնությամբ՝ 259 ձայն, ընդդեմ 236-ի)՝ անգլիացիներին Բաքու հրավիրելու վերաբերյալ... Մեր կուսակցությունը այդ կրիտիկական րոպեներին փոքրամասնության մեջ մնաց։ Բանվորական լայն զանգվածները վճռական ու վտանգավոր կահին չհետևեցին ավանգարդին, սակայն այդ ավանգարդը՝ մեր բոլշևիկյան կազմակերպությունը, իր անսասան հավատարմությունը պահպանեց բանվոր դասակարգի նկատմամբ» [1]։

Անգլիացիներին հրավիրելու վերաբերյալ Բաքվի սովետի ընդունած որոշումը վերջնականապես բարոյալքեց կարմիր բանակը և կազմալուծեց նրա թիկունքը։ Չնայած Բաքվի սովետական իշխանության կողմից ձեռք առնված բոլոր հնարավոր միջոցներին, թուրք-մուսավաթական զորքերի հարձակումը Բաքվի վրա չհաջողվեց կասեցնել։ Հակառակորդի գերազանցող ուժերի ճնշման տակ կարմիր զորամասերը ստիպված էին նահանջել դեպի Բաքու՝ հուլիսի 18-ին թողնելով Շամախին ու Հաջիկաբուլը, հուլիսի 22-ին՝ Ալյաթը, հուլիսի 28-ին՝ Բալաջարը։ Հուլիսի 31-ին ճակատն ընդհուպ մոտեցավ Բաքվին։

Քաղաքում խուճապ սկսվեց։ Թուրքերի կողմից գրավված շրջաններից, մասնավորապես Շամախու շրջանից, Բաքու եկած հայ գաղթականները ավելի ուժեղացրին քաղաքում տիրող իրարանցումը։

Տակավին հուլիսի 30-ին Բաքվում ստացվեց թուրքական զոր-

1 «Бакинский рабочий», № 57, 14 марта 1923.

քերի հրամանատար Շեվքեթ-փաշայի կոչը՝ քաղաքը հանձնելու պահանջով։ Թուրքական հրամանատարությունը ադրբեջանական ազգաբնակչության մեջ տարածում էր թռուցիկներ, որտեղ ազդարարվում էր հետևյալը. «Մենք բարբարոսներ չենք, բայց մենք գալիս ենք ձեզ բարբարոսներից փրկելու»[1]։

Թուրքական դահիճների այդ ձևերը վաղուց հայտնի էին այն ժողովուրդներին, որոնք երբևիցե ստիպված էին եղել իրենց մաշկի վրա զգալու թուրքական ասքյարների արյունոտ կրունկը։

Սովետական Ռուսաստանի կառավարությունը բազմիցս իր բողոքն է հայտնել Անդրկովկասում թուրք-գերմանական զորքերի ձեռնարկած ագրեսիայի դեմ։ Դեպի Բաքու թուրքական զորքերի առաջխաղացման կապակցությամբ ՌՍՖՍՌ կառավարությունը հուլիսի 25-ին բողոքի երկու նոտաներ է ուղարկել Մոսկվայում Գերմանիայի ժամանակավոր ներկայացուցիչ Ռիցլերին։ Հիշյալ նոտաներում ասվում էր հետևյալը. «Մենք ամենաեռանդուն կերպով բողոքում ենք Բրեստի պայմանագրի այդ խախտման և սովետական կառավարությանը մշտապես հավատարիմ Բաքվի մարզի վրա այդ հարձակման դեմ... անհրաժեշտ է անհապաղ դադարեցնել հարձակումը։ Բաքվին լուրջ վտանգ է սպառնում»[2]։

Թեև գերմանական կառավարությունը խոստացավ թուրքերին ստիպել դադարեցնելու հարձակումը, այդ ուղղությամբ ո՛չ մի կոնկրետ միջոցառում չձեռնարկվեց։ Թուրքական զորքերը շարունակում էին առաջ շարժվել, ետ մղելով սովետական ուժերին։

Կարմիր զորամասերի նահանջին նպաստում էր նաև Բիչերախովի դավաճանությունը։ Վերջինս կրիտիկական պահին՝ հուլիսի 30—31-ին, մերկացնելով ռազմաճակատի աջ թևը, իր ջոկատով և հրետանիով քաշվեց Սումգայիթ, իսկ այնտեղից՝ Պետրովսկ։ Ճակատը, որը Բաքվից ընդամենը 15 կմ. հեռավորության վրա էր գտնվում, բոլորովին մերկացավ։ 1600 սվիններից մնացել էին ընդամենը երկու հարյուրը և նույնքան էլ՝ Պետրովի ջոկատից։ Իսկ հայկական զորամասերը, որոնց թիվը 3 հազարից ավելի էր, դաշնակցական ղեկավարության հրամանով լքեցին իրենց դիրքերը, թեև այդ երեք հազար հայ զինվորները ի վիճակի էին թշնամուն ետ շպրտելու։ ««Դաշնակցություն» պարտիայի ներկայացուցիչները,— գրում էր Ստ. Շահումյանը,— հենց իրենց մանրբուրժուական կիսատպռատությամբ ու վախկոտությամբ բարոյալքեցին հակա-

1 Տե՛ս «Документы внешней политики СССР», т. I, док. 306, стр. 429.

2 Նույն տեղում, док. 284, 285, стр. 410.

[illegible] հրամայր կարգով հավաքելու ընդունակ զորքերը...»[1]։

Այդ վախկոտության վառ օրինակ էր դաշնակ Ավետիսովի հուլիսի 30-ի հրամանը, որտեղ ասվում էր, որ Բաքուն այլևս անհնարին է պաշտպանել, ուստի և պետք է սպիտակ դրոշ բարձրացնել և քաղաքը հանձնել հակառակորդին։

Բաքվի Ժողկոմսովետը որևէ կարգի հաշտության բանակցություններ վարելու դեմ արտահայտվեց և բոլոր զորամասերին կոչ արեց շարժվել դեպի ճակատ։ Հուլիսի 30-ի գիշերը Ժողկոմսովետը հանդես եկավ բանվորներին ուղղված մի դիմումով, որտեղ նա կոչ էր անում բոլորին զենք վերցնել և քաղաքը պաշտպանել թշնամուց։

Թեև Բաքվի Ժողկոմսովետը հնարավոր բոլոր ջանքերը գործադրեց եղած ուժերը թուրքերի դեմ դուրս բերելու համար, անգլիական իմպերիալիստների գործակալությունը՝ ի դեմս մենշևիկների, էսեռների ու դաշնակների, շարունակում են ագիտացիա ծավալել հօգուտ անգլիական զորքերի հրավիրման, համարելով այն միակ միջոցը Բաքուն թուրքական արշավանքից պաշտպանելու գործում։

«Բաքվի Ժողովրդական կոմիսարների սովետը,— ասում էր Ստեփան Շահումյանը,— կրկնակի դավաճանության փաստի առջև էր կանգնած։ Նա չէր կարող անգլիական իմպերիալիզմի հետ համաձայնության մեջ մտնել այնպես, ինչպես չէր կարող հաշտության բանակցությունների մեջ մտնել գերմանա-թուրքական իմպերիալիզմի հետ։ Նա կարող էր դիմել միայն պրոլետարիատին՝ նրան ոտքի հանելու համար, սակայն ակներև է, որ աջ կուսակցությունների ու բանակի հրամանատարական կազմի այդպիսի վարքագծի պայմաններում արդեն ուշ է, որ այդ այլևս չի փրկի Բաքուն հակառակորդի ներխուժումից»[2]։

1918 թվականի հուլիսի 31-ին, Բաքվի սովետի նիստում, Ժողկոմսովետը վայր դրեց իր լիազորությունները։

Այսպիսով, Բաքվի սովետական իշխանության անկման գործում վճռական դեր խաղաց թուրքական արշավանքը, որի հիմնական նպատակը սովետական իշխանության տապալումը և Ադրբեջանի, ինչպես նաև ողջ Կովկասի, զավթումն էր։ Թուրքական նվաճողների հաջողությանը նպաստեց մենշևիկների, էսեռների ու դաշնակների դավաճանությունը, այն, որ նրանք մերկացրին ճակատը

1 Ստ. Շահումյան, Երկեր, հ. 3, էջ 398։

2 Տե՛ս «Большевики в борьбе за победу социалистической революции в Азербайджане», Документы и материалы 1917—1918 гг., Баку, 1957, стр. 618.

և Բաքու հրավիրեցին անգլիական ինտերվենտներին, որոնց հիմնական նպատակը ևս Բաքվում սովետական իշխանության վերացումն էր և ամբողջ Ադրբեջանը Սովետական Ռուսաստանի դեմ մղվող պայքարում իրենց հենակետ դարձնելը։

Բաքվի կոմունայի անկումից հետո իշխանությունը քաղաքում անցավ էսեռների, մենշևիկների ու դաշնակների հակահեղափոխական բլոկի ձեռքը, որը կազմեց «Յենտրոկասպիի դիկտատուրայի» հակահեղափոխական կառավարությունը։ Վերջինս անմիջապես Բաքու հրավիրեց անգլիացիներին։ Ստ. Շահումյանը «Նոր իշխանության կերպարանքը» վերնագրով հոդվածում գրում էր. ««Նոր» իշխանությունը, հանձինս և՛ մենշևիկ Սադովսկու, և՛ դաշնակ Մելիք-Յոլչյանի, բացեիբաց հայտարարում է, որ անգլիացիներին հրավիրել է ոչ թե բնակչությունը թուրքերի վայրագությունից փրկելու և ոչ էլ Բաքուն Ռուսաստանի համար փրկելու նկատառումով... այլ որպեսզի Ռուսաստանին Անգլիայի և Ֆրանսիայի հետ միասին քաշեն նոր պատերազմի մեջ ընդդեմ Գերմանիայի և Ավստրիայի։

Նրանք ձեր՝ Բաքվի բանվորներիդ, առաջ դնում են նույն քաղաքական նպատակները, որոնց ձգտում էին Գուչկովները, Միլյուկովներն ու Կերենսկիները» [1]։

Մենշևիկների, դաշնակների ու էսեռների քայքայիչ այդ գործունեությունը, նրանց կողմից ճակատի մերկացումը խիստ ձեռնտու էր թուրքական զավթիչներին, որոնք օղակել էին Բաքուն և արդեն գրավել Շիխովո, Բիբի-Էյբաթ և Ուլչի Վարոտա բարձունքները։ Կրիտիկական այդ պահին, երբ թվում էր, որ այլևս անհնարին է քաղաքը պաշտպանել հակառակորդից, բոլշևիկների կոչով քաղաքը պաշտպանելու համար ոտքի ելան Բաքվի բանվորները։ Բանվորական ջոկատները, արագ զինվելով, կռվում էին թուրքական հորդաների դեմ քաղաքի մատույցներում։ Բաքվի պրոլետարիատի, կոմունիստների ու սովետական ապարատի աշխատողների անձնազոհ ու հերոսական պայքարի շնորհիվ թուրք-մուսավաթական զորքերին չհաջողվեց ներխուժել քաղաք։

Բաքվի պաշտպանության գործում մեծ դեր խաղացին սովետական զորքերը և, հատկապես, Պետրովի ջոկատը, որի մարտիկները Պետրովյան հրապարակից հրետանային դիպուկ կրակով խանգարում էին թուրքական զորքերին առաջխաղալու Ուլչի Վարոտայի շրջանում և Բիբի-Էյբաթի կողմից։ Պետրովի ջոկատի հրետանին երկու օր տևող անընդհատ կրակով կասեցրեց հակառակորդի հարձակումը։ Օգոստոսի 6-ին թուրք-մուսավաթական զորքերը

1 Ստ. Շահումյան, Երկեր, հ. 3, էջ 402։

դուրս շպրտվեցին իրենց գրաված դիրքերից և ստիպված եղան նահանջել Բալաջարիից այն կողմ։ Օգոստոսի 5—6-ին տեղի ունեցած կռիվների ընթացքում հակառակորդը մեծ կորուստներ կրեց։

Բաքվի տակ օգոստոսի 5—6-ին թուրքական զորքերի կրած պարտության մասին այդ կռիվների անմիջական մասնակիցներից մեկը՝ գնդապետ Ռյուշտյուն իր հուշերում գրում էր հետևյալը.

«Հրետանային, գնդացրային ու հրացանային ուժեղ կրակի պաշտպանության տակ հակառակորդը հակահարձակման անցավ և 10-րդ ու 13-րդ գնդերի զինվորներին ստիպեց նահանջել։ Հակառակորդի կրակը ոչնչացնելու համար հրետանային զորամասերը ավարար չափով ռումբեր չունեին իրենց տրամադրության տակ։ Մեր կրած կորուստները զգալի էին... Այդպիսով, 1918 թվականի օգոստոսի 5-ին հյուսիսային խմբի ձեռնարկած հարձակումը ետ մղվեց հակառակորդի կողմից... զինվորները հոգնել էին, կորուստները գնալով մեծանում էին, բարոյական վիճակը խախտվել էր։ Դիվիզիայի հրացանների թիվը կրճատվել էր 50 տոկոսով» [1]։

Բաքվի տակ թուրք-մուսավաթական զորքերի կրած պարտությունը ժամանակավորապես կասեցրեց նրանց նոր հարձակումը։ Ժամանակ էր հարկավոր Միջագետքի ճակատից ռազմական նոր ուժեր փոխադրելու համար։ Հիշյալ ճակատում Անտանտի զորքերը, արաբ ապստամբների հետ միասին, մի շարք լուրջ հարվածներ հասցրեցին թուրքական զորքերին։

Գերմանական հրամանատարությունը ծայրահեղ չափով դժգոհ էր էնվերից, որը թուրքական լավագույն դիվիզիաները Սիրիայի ու Միջագետքի ճակատներից փոխադրել էր կովկասյան ռազմաճակատ։ Թուրքիայի դաշնակից Գերմանիան չէր ցանկանում, որպեսզի էնվերը Սիրիայի ու Միջագետքի ճակատները թուլացնելու գնով ուժեղացնի կովկասյան ռազմաճակատը և գրավի Բաքուն, որը հենց ինքը Գերմանիան էր ձգտում նվաճել։ Չնայած գերմանական հրամանատարության բազմաթիվ բողոքներին, էնվերը, Անդրկովկասում իր զավթողական պլաններն իրականացնելու ձգտումով տարված, շտապ կարգով նոր զորքեր տեղափոխեց Բաքվի ճակատ՝ գերմանական զորքերի կողմից Բաքվի գրավումը կանխելու համար։

Այդ կապակցությամբ Լյուդենդորֆը գրում էր. «Գերագույն հրամանատարությունը ձեռնամուխ եղավ Բաքվի վրա գրոհ նախապատրաստելու գործին և այդ նպատակով հեծելազորային մի բրիգադ և մի քանի գումարտակ ուղարկեց... Նուրին Բաքուն գրավեց ավելի շուտ, քան մենք հասցրեցինք զորքեր փոխադրել, իսկ

1 Rüştü, s. 85.

այնուհետև, Բուլղարիայում տեղի ունեցած իրադարձությունները մեզ ստիպեցին այդ զորամասերն ուղարկել Ռումինիա»[1]։

Ստեղծված իրադարության պայմաններում, երբ Բաքվի համար կռվում էին իմպերիալիստական երկու խմբավորումներ՝ թուրք-գերմանական և Անտանտի, օգոստոսի 10-ին բոլշևիկյան կազմակերպության պարտիական կոնֆերանսում որոշում ընդունվեց կարմիր բանակի ջոկատները, սովետական ու պարտիական աշխատողներին քաղաքից դուրս բերելու մասին։ Խոսելով Բաքուն թողնելու պատճառների մասին, Ստ. Շահումյանը մատնանշում էր.

«Մենք չէինք կարող լինել ոչ այն մարդկանց թվում, ովքեր անձնատուր են լինում թուրքական փաշաների ողորմածությանը, փրկում են իրենց կաշին, բոլշևիկներին ու ռուսական զորքերին մատնելով թուրքական բանդաների ձեռքը՝ հոշոտելու, և ոչ էլ նրանց թվում, ովքեր, չնայած հայրենասիրության վերաբերյալ կեղծավոր ֆրազներին, պատրաստ են Բաքուն հանձնել անգլիացիներին։ Մենք որոշեցինք փրկել Ռուսաստանի սովետական իշխանությանը հավատարիմ ռևոլյուցիոն զորքերը, որպեսզի, սպասելով Աստրախանից եկող զորքերին, նրանց հետ միասին կռիվ հայտարարենք երկու ճակատում՝ թուրքական ու անգլիական իմպերիալիզմին և պաշտպանենք Բաքուն ռևոլյուցիոն Սովետական Ռուսաստանի համար»[2]։

Օգոստոսի 14-ին Պետրովի ջոկատը և սովետական ուրիշ զորքեր Շահումյանի, Ջափարիձեի, Ֆիոլետովի, Ազիզբեկովի, Կորգանովի և Բաքվի մյուս կոմիսարների գլխավորությամբ, 17 նավերով, լրիվ սպառազինությամբ և ռազմական հանդերձանքի անհրաժեշտ պաշարով դուրս եկան Բաքվից՝ Աստրախանի ուղղությամբ։ Ժիլովո կղզուց ոչ շատ հեռու օգոստոսի 16-ին նրանց վրա հարձակվեցին «Ցենտրոկասպիի» կառավարության «Աստրաբադ», «Արդահան» և «Գյոքթեփե» ռազմանավերը և կտրուկ կերպով պահանջեցին ետ վերադառնալ Բաքու։ Կոմիսարները կատեգորիկ կերպով հրաժարվեցին կատարելու այդ պահանջը, որից հետո նրանց նավերի վրա կրակ բացեցին։ Դրանից հետո Բաքվի սովետական նավատորմը ստիպված էր տեղի տալ։ Հենց որ սովետական նավերը հասան Բաքու, Բաքվի կոմիսարները ձերբակալվեցին և նետվեցին Բայիլովի բանտը, իսկ սովետական զինված ջոկատները, թվով 3 հազարից ավելի մարդ, զինաթափ արվեցին և աքսորվեցին Աստրախան։

Այդ դավաճանությամբ «Ցենտրոկասպիի դիկտատուրայի» մենշևիկները, էսեռներն ու դաշնակները փաստորեն դյուրացրին Բաքվի գրավումը թուրքական զորքերի կողմից։

«Ցենտրոկասպիի» կառավարության հուսադրումներն այն առթիվ, որ անգլիացիներին հրավիրելով Բաքու, նրանց օգնությամբ կհաջողվի թուրքերին ետ մղել, խաբեություն էին լոկ, որովհետև էնզելիից եկած անգլիական փոքրաթիվ զորքերը (մոտ 1000 մարդ), գեներալ Դենստերվիլի գլխավորությամբ, անկարող էին քիչ թե շատ լուրջ դիմադրություն ցույց տալ թուրքերին։ Անգլիական իմպերիալիստները ամենևին էլ մտահոգված չէին Բաքվի պաշտպանությամբ, ինչպես այդ փորձում էին ներկայացնել քաղաքի աշխատավորությանը մենշևիկները, էսեռներն ու դաշնակները։

Բաքուն գրավելու համար բավարար ուժեր չունենալով, անգլիացիները նախքան Բաքու գալը իրենց հյուպատոս Մակ-Դոնելի միջոցով սերտ կապ էին հաստատել մենշևիկների, էսեռների ու դաշնակների հետ և վերջիններիս օգնությամբ, Բաքուն թուրքական զորքերից պաշտպանելու քողի տակ, սովետական իշխանության անկումից հետո փաստորեն դարձան քաղաքի տերերը։

Առաջին գործը, որին ձեռնարկեցին անգլիական գաղութարարները Բաքու գալուց հետո, դա ոչ թե ճակատի պաշտպանությունն էր, այլ բենզինի արտահանումը՝ էնզելի, այնտեղից Միջագետքում գտնվող անգլիական բանակին հասցնելու համար։

Որ անգլիական իմպերիալիստները իսկապես չէին նպատակադրվել Բաքու քաղաքը պաշտպանել թուրքական արշավանքից, դա երևում է նաև «Ցենտրոկասպիի դիկտատուրայի» հակահեղափոխական իշխանության ժամանակաշրջանում Բաքվի սովետի գործկոմի քարտուղարի վկայությունից։ Վերջինս Ֆունտիկովի գործի քննության ժամանակ[1] դատարանում հայտարարել էր, որ «Ցենտ-

---

1 Людендорф Э., Мои воспоминания о войне 1914—1918 гг., стр. 219—220.

2 Ստ. Շահումյան, Երկեր, հ. 3, էջ 398։

1 Թուրքական հորդաների կողմից Բաքուն գրավելու նախօրյակին (սեպտեմբերի 15-ին), Ա. Միկոյանի գլխավորությամբ, մի խումբ բոլշևիկների հաջողվեց բանտարկված Բաքվի կոմիսարներին ազատել և «Թուրքմեն» նավով ճանապարհել դեպի սովետական Աստրախան։ Սակայն նավի հրամանատարությունը փոխեց ուղղությունը դեպի Կրասնովոդսկ, որտեղ իշխում էին անգլիական իմպերիալիստները և էսեռները, որոնք Բաքվի կոմիսարներին նորից բանտ նետեցին։ Անդրկասպյան էսեռական կառավարության պարագլուխներ Ֆ. Ֆունտիկովը, Ս. Դրուժկինը, Վ. Կունը անգլիական հրամանատարության ներկայացուցիչ Տիգ-Ջոնսոնի հետ միասին սեպտեմբերի 19-ին Կրասնովոդսկի բանտից դուրս տարան Բաքվի 26 կոմիսարներին և հաջորդ օրը նրանց հրամանով Ախչա-Կումա ու Պերե-

ռոկասպիի դիկտատուրայի» նիստերից մեկում, որին մասնակցում էին անգլիական ռազմական միսիայի ներկայացուցիչները, Սադովսկին անգլիացիներին հետևյալ հարցն էր տվել. «Որտե՞ղ է ձեր իրական օգնությունը զորքով, որ դուք խոստացել էիք մեր պատվիրակներին Էնզելիում։ Անգլիական ներկայացուցիչը պատասխանել էր, որ իրենք երբեք ոչ մի տեղ, և ոչ ոքի նման օգնության խոստում չեն տվել և նույնիսկ ծիծաղելի կլիներ մտածել, որ մենք կարող էինք Միջագետքից այստեղ զորքեր տեղափոխել» [1]։

«Ցենտրոկասպիի» կառավարության և նրա տերերի՝ անգլիացիների կարճատև տիրապետության շրջանում ամենուրեք քաղցն էր մոլեգնում։ Իրենց վաստակած դրամով բանվորները ոչինչ չէին կարողանում գնել և նրանք հրաժարվեցին աշխատանքի դուրս գալ։ Քաղաքի կյանքը դադարել էր։ Բաքվի ազգաբնակչությունը բոլորովին կորցրեց հավատը «Ցենտրոկասպիի» կառավարության նկատմամբ, որն իր հակահեղափոխական գործունեությամբ, անգլիացիների հետ սերտ դաշինքի մեջ մտած, վերջնականապես մերկացրել էր իրեն Բաքվի աշխատավոր զանգվածների շրջանում։ Ուստի բնական է, որ երբ թուրքական զորքերը, այլ ռազմաճակատներից ժամանած նոր թարմ ուժերի միջոցով ամրացնելով իրենց դիրքերը, անցան հարձակման, «Ցենտրոկասպիի» կառավարության ողորմելի ուժերը և անգլիական զավթիչները չկարողացան նրանց էական դիմադրություն ցույց տալ։

Նոր կառավարության հիմնական զորքերը հայկական ջոկատներն էին, որոնց գլխավորում էր գեներալ Բագրատունին։ Ռազմաճակատում կային նաև անգլիական զինվորներ գեներալ Դենստերվիլի հրամանատարությամբ, որը խնայում էր իր զինվորներին և շատ սակավ դեպքերում էր թողնում մարտերին մասնակցելու։

Սովետական Ռուսաստանի կառավարությունը, մտահոգված Բաքվում ստեղծված իրադրությամբ, օգոստոսի 19-ին մեկ անգամ ևս իր վճռական բողոքը հայտնեց գերմանական ու թուրքական կառավարություններին, որոնք բազմիցս խախտել էին Բրեստի պայմանագրի կետերը, ինչպես նաև Բաքվի վրա հարձակումը դադարեցնելու վերաբերյալ բազմիցս տրված իրենց հավաստիացումները [2]։

վալ կայարանների միջև ընկած ավազուտներում գազանաբար սպանեցին։ Նրանց թվում էին Ստեփան Շահումյանը, Այլոշա Ջափարիձեն, Մեշագի Ազիզբեկովը, Գրիգորի Կորգանովը, Վանյա Ֆիոլետովը և ուրիշներ։

1 Партархив Азерб. филиала ИМЛ, ф. 303, оп. 1, д. 23, л. 33.

2 *Տե՛ս* «Документы внешней политики СССР», т. I, документ № 306 стр. 628—629.

Սովետական կառավարությունն ամեն ինչ անում էր Բաքուն թուրքական զավթիչների ներխուժումից փրկելու համար։ Նա նույնիսկ համաձայնվեց Գերմանիայի պահանջի հետ, այն է՝ Բրեստ-Լիտովսկի լրացուցիչ պայմանագրի (որը կնքվել էր 1918 թվականի օգոստոսի 27-ին) մեջ հատուկ կետ մտցնել, որի համաձայն Սովետական Ռուսաստանը համաձայնվում էր, որպեսզի Գերմանիան Վրաստանին ճանաչի որպես ինքնուրույն պետական մարմին, և Ռուսաստանը Գերմանիային տրամադրի Բաքվի նավթի հանույթի մեկ քառորդը։ Այդ հարկադիր զիջումների դիմաց Գերմանիան խոստանում էր թույլ չտալ, որպեսզի թուրքերը գրավեն Բաքուն [1]։

Սակայն ինչպես միշտ, այս անգամ էլ գերմանական ռազմամոլները, հավատարիմ մնալով իրենց նվաճողական քաղաքականությանը, գործնական ոչ մի քայլի չդիմեցին թուրքական զորքերի հարձակումը դադարեցնելու համար։ Հարկ է նշել, որ թուրքական բանակի շարքերում գերմանական բազմաթիվ հրահանգիչներ կային։

1918 թվականի օգոստոսի վերջին թուրք-մուսավաթական զորքերը, որոնք համալրվել էին Միջագետքի ու Սիրիայի ռազմաճակատներից ժամանած ուժերով, անցան հարձակման և ամսի 29-ին գրավեցին «Գրյազնի Վուլկանի» ամրացված դիրքերը։ Լեռը պաշտպանող անգլիական վաշտը ետ շպրտվեց հակառակորդի կողմից։

Սեպտեմբերի 1-ին թուրքական զորքերը հարձակում գործեցին Բաքվի ուժերի աջ թևի վրա և գրավեցին Բինագադը, Դրզայա և Մահմեդլի գյուղերը, որի հետևանքով Բաքուն ցամաքից լրիվ շրջապատվեց հակառակորդի ուժերի կողմից։ Այժմ կապը արտաքին աշխարհի հետ կարող էր պահպանվել միայն Կասպից ծովով։

Սեպտեմբերի 13-ի առավոտյան թուրք-մուսավաթական զորքերը քաղաքի արվարձաններում անցան հարձակման։ Մինչև ուշ գիշեր համառ մարտեր էին տեղի ունենում, որոնց հետևանքով հակառակորդը ետ շպրտվեց իր նախկին դիրքերը։ Սակայն ձախ թևում թուրքական զորքերին սեպտեմբերի 13-ին հաջողվեց, ճեղքելով պաշտպանությունը, հասնել Ալչի Վարոտային և ամրանալ այնտեղ։ Թուրքական զորամասերը հարձակման անցան նաև կենտրոնական թևում, որտեղ Բաքվի պաշտպանողական ուժերը սպառել էին իրենց բոլոր պաշարները և այլևս ի վիճակի չէին շարունակելու կռիվը։

Թուրքական զորքերի այդ ճնշումը բավական եղավ, որպեսզի

---

1 *Տե՛ս* «Документы внешней политики СССР», т. I, документ № 306, стр. 443—444.

գեներալ Դենստերվիլը, բոլորովին հաշվի չնստելով «Ցենտրոկասպիի» տիկնիկային կառավարության հետ, կռվի ամենատագնապալից պահին իր ջոկատը հաներ ճակատից՝ առանց հայկական ուժերի հրամանատարությանը տեղյակ պահելու այդ մասին։ Գեներալ Դենստերվիլը այդ նահանջը հիմնավորում էր այն բանով, որ Բաքվի ճակատագիրն արդեն կանխորոշված էր և այլևս անհնարին էր պաշտպանել քաղաքը [1]։

Սեպտեմբերի 14-ի երեկոյան անգլիական զորքերը նավ նստելով ետ վերադարձան էնզելի։

«Ցենտրոկասպիի դիկտատուրայի» էսեռա-մենշևիկյան-դաշնակցական ղեկավարները, իրենց դաշնակից անգլիացիների «պաշտպանությունից» հիասթափված, Դենստերվիլին ուղղած նամակում ցավով նշում էին հետևյալը. «Դժբախտաբար մենք սխալվեցինք. ամբողջ այդ ժամանակվա ընթացքում՝ մինչև սեպտեմբերի 3-ը (մեկ ամսից ավելի) դուք Բաքու փոխադրեցիք ընդամենը հազարից մի փոքր ավելի մարդ 16 թնդանոթով և որոշ քանակությամբ տեխնիկական նյութերով... Ձեր զորքերը ոչ թե ավելացրին, այլ նույնիսկ նվազեցրին Բաքվի պաշտպանների ուժերը, որովհետև մենք կարող էինք զգալիորեն համալրել նրանց շարքերը, եթե մենք ընդունեինք բոլշևիկների կուսակցության պայմանները» [2]։

Գեներալ Դենստերվիլը նույնիսկ անհրաժեշտ չգտավ պատասխանելու այդ նամակին։ Սովետական իշխանության դավաճանները Բաքվում հիասթափվեցին իրենց անգլիական «բարերարներից», սակայն արդեն ուշ էր. թուրք-մահմեդական հորդաները Բաքվի մատույցներում էին գտնվում։

Անգլիացիներից հետո, սեպտեմբերի 15-ի առավոտյան շտապ կարգով լցվեցին նավերը և հեռացան «Ցենտրոկասպիի դիկտատուրայի» սնանկացած կառավարության անդամները՝ իրենց զորքերի մնացորդների հետ միասին։ Քաղաքում անիշխանություն էր տի-

1 Գեներալ Գ. Ղորղանյանի վկայությամբ, Դենստերվիլը տակավին սեպտեմբերի սկզբին գտնում էր, որ Բաքուն այլևս անհնարին է փրկել և առաջարկում էր թուրքական հրամանատարության հետ բանակցություններ սկսել քաղաքը հանձնելու վերաբերյալ։ Նա այդ ժամանակ արդեն ուզում էր իր զորքերը հանել ճակատից։ Սակայն գեներալ Բագրատունին խանգարեց այդ բանին և որոշում ընդունեց շարունակել պայքարը։

2 Սովետական Ռուսաստանը առաջարկեց կազմել կոալիցիոն կառավարություն և միաժամանակ իր օգնությունը՝ անգլիացիներին Բաքվից հեռացնելու պայմանով։ Տե՛ս Деистервиль, Британский империализм в Баку и в Персии в 1917—1918 гг., (воспоминания), перевод с английского, Тифлис, 1925 г., стр. 255.

ռում, Բաքվի պաշտպանության մասին այլևս ոչ ոք չէր մտածում։

Սեպտեմբերի 14-ի գիշերը սկսվեց Բաքվի ռմբակոծումը։ Քաղաքի ծայրամասերում մարտերը դեռ շարունակվում էին։ Հրետանային կրակով թուրքերը գնդակոծում էին նավահանգիստը, ուր քաղաքի բնակիչները պատրաստվում էին նավ նստել։ Նավթի ու բենզինի պահեստները պայթեցվեցին, ամբողջ ծովափը կրակի բոցի մեջ էր։

Սեպտեմբերի 15-ի առավոտյան քաղաքում խուճապն ավելի մեծացավ։ Հազարավոր հայեր խմբվել էին նավահանգստում, ուր այլևս ոչ մի նավ չկար։ «Հայերը,— գրում էր 1918 թվականի սեպտեմբերի 21-ի համարում «Պրավդա» թերթը,— շփոթության մեջ ընկած, նետվում էին ռուսական ընտանիքները։ Նրանց պահում են նկուղներում, տանիքներում՝ ուրիշ փրկություն չկա։ Փախչել հնարավոր չէ, թուրքերը գրավեցին քաղաքի բոլոր արվարձանները։ Ջեմբելիքենդում ասքյարները արդեն թալանում են տները։ Բիբիէյբաթում վառվում էին նավթահանքերը և նավթային հրդեհի սև քուլաները երկինք էին բարձրանում»։

Սեպտեմբերի 15-ին թուրքական զորքերը մուսավաթական հրոսակախմբերի հետ մեկտեղ ներխուժեցին Բաքու։ Հաջորդ օրը ամբողջ քաղաքն անցավ նրանց ձեռքը։

Բնորոշ է այն, որ Բաքվի գրավման առաջին օրն իսկ կովկասյան ռազմաճակատի թուրքական բանակի գլխավոր հրամանատարը պաշտոնապես հայտարարեց, որ Ադրբեջանը բնակեցնող բոլոր քաղաքացիները, անկախ ազգությունից ու դավանանքից, թուրքական ռազմական իշխանությունների կողմից միևնույն վերաբերմունքին կարժանանան, որոնք հավասար չափով կպաշտպանեն բոլոր քաղաքացիների կյանքը, ունեցվածքն ու իրավունքները [1]։

Այս հանդիսավոր ու պաշտոնական խոստումները, ինչպես և թերթերում տպագրված նույնանման հաղորդումներն ու հոդվածները հայերի նկատմամբ լոկ անհրաժեշտ դիվանագիտական մի պրիոմ էր, որն այնքան բնորոշ էր թուրքական դահիճներին։ Այդ ձևով նրանք փորձում էին ճշմարտությունը թաքցնել արտաքին աշխարհից։ Իրականում, սակայն, հայտնի է, որ թուրքական զորքերի կողմից Բաքվի գրավումը ուղեկցվում էր հայերի զանգվածային ջարդերով, որոնք շարունակվում էին երեք օր անընդհատ։ Հազարավոր տներ կողոպտվեցին ու հրկիզվեցին։ Փողոցներում անհամար քանակությամբ դիակներ էին թափված։ Սրի էին քաշում անխտիր բոլոր հայերին՝ տղամարդկանց, կանանց, երեխաներին,

1 Տե՛ս ՀՍՍՌ ԿԳԳԱ, ֆ. 200, գ. 145, թթ. 13—18։

27 — 2423

ծերերին, առողջներին ու տկարներին, նույնիսկ ծծկեր երեխաներին։ Չորս օր անընդհատ, գիշեր-ցերեկ, տասնյակ բեռնատար մեքենաներ ու հարյուրավոր սայլեր քաղաքից դուրս էին բերում սպանվածների դիակները։

Ջանգվածային կոտորածների հետքերը ծածկելու համար դիակների մեծ մասը Սալյանիի զորանոցների շրջակայքում հրկիզվեց։

Եղած տվյալների համաձայն, Բաքվում զոհված հայերի թիվը հասնում էր 30 հազարի։

«Պրավդա» թերթը 1918 թվականի սեպտեմբերի 21-ին «Բաքվի ողբերգությունը» վերնագրով հոդվածում մանրամասն նկարագրելով խաղաղ հայ ազգաբնակչության ոչնչացումը թուրք-մուսավաթական դահիճների կողմից, ընդգծում էր, որ թուրքական ու մուսավաթական զինվորները հայերի կոտորածը սկսեցին քաղաքի արվարձաններում՝ Էրմենիքենդում և Սև քաղաքում, ուր հայ ազգաբնակչությունը լրիվ ոչնչացված է։ Այնուհետև ջարդերը տարածվեցին քաղաքի կենտրոնական փողոցներում։ Հազարավոր թուրք զինվորներ վխտում էին քաղաքում, ներխուժում տագնապով ու սարսափով համակված տները, սպանում դաշույններով, ատրճանակներով, գնդակահարում տեղնուտեղը փողոցում, վայր նետում բարձրահարկ շենքերի վերին հարկերից։

Ռուս ընտանիքները նույնպես տուժեցին։ Թուրքերը նրանց մեղադրում էին հայերի նկատմամբ կարեկցանք հանդես բերելու և նրանց ապաստանելու մեջ։

Հաջորդ օրը առավոտյան հավաքեցին քաղաքի փողոցներում թափված դիակները և մեքենաներով դուրս տարան։ Մյուս օրը առավոտյան ջարդը վերսկսվեց։

Թուրքական իշխանությունները, ցնծություն ապրող թուրք սպաները, ռեստորաններում հարբեցողությամբ զբաղված փաշաները (Նուրի-փաշան, Նազիմը և մյուսները) դիտավորյալ կերպով անգործունեության էին մատնված և ոչ մի փորձ չէին անում գազանություններին վերջ դնելու համար»։

«Այդ ժամանակ,— ասվում էր այնուհետև հոդվածում,— շքեղ լույսերով ողողված միլիոնատեր Գաջինսկու տանը Բաքվի բուրժուազիան մեծարում էր Նուրի-փաշային և թուրքական սպաներին»։

Հրեշավոր այդ ջարդին զուգընթաց, թուրքական զորքերը, ինչպես նաև մուսավաթական հրոսակները, խաղաղ քաղաքացիների գույքի նույնպիսի հրեշավոր թալան կազմակերպեցին։ Կողոպուտի ժամանակ հաճախ տարբերություն չէին դնում հայերի և մյուս ազգությունների միջև։

Հայերի կողմից լքված բնակարաններից, որոնց տերերը կամ սպանված էին, կամ թաքնվել էին ուրիշների մոտ կամ էլ փախել էին քաղաքից, օր ու գիշեր, շրջապատի բնակչության աչքի առջև, բեռնատար մեքենաներով ու սայլերով թուրքական ու մուսավաթական իշխանությունները դուրս էին բերում տնային բոլոր իրերը։ Այդ կողոպուտը սիստեմատիկ կերպով շարունակվում էր ամբողջ երկու ամիս, մինչև թուրքական զավթիչների դուրս վտարումը Անդրկովկասից։

«Մարդասպաններն ու կողոպտիչները,— գրում է ականատեսներից մեկը,— բացեիբաց հայտարարում էին, որ քաղաքը 3 օրով ամբողջովին իրենց տրամադրության տակ է դրված։ Գազանային ջարդերը երբեմն այնպիսի դաժանությամբ էին կատարվում, որ նույնիսկ դժվար էր հավատալ, որ այդպիսի վայրագություն հնարավոր է» [1]։

Այսպիսով, Բաքվում հայերի նկատմամբ կիրառված դաժանությունները երիտթուրքական հայաջինջ քաղաքականության շարունակությունն էին հանդիսանում։

Մուսավաթական կառավարության ղեկավար, ադրբեջանական ժողովրդի անիծյալ թշնամի Խան-Խոյսկին ցնծագին կերպով իր երախտագիտությունը հայտնեց թուրքական զորքերի հրամանատար Նուրի-փաշային «Ադրբեջանի մայրաքաղաքը գրավելու համար»։ Նա արևելյան ռազմաճակատի հրամանատար Խալիլ-փաշային շնորհավորեց «թուրքական աշխարհի երկրորդ Ստամբուլը հանդիսացող խոշոր կենտրոնը գրավելու կապակցությամբ» [2]։

Ադրբեջանական նավթարդյունաբերողների ու բեկերի խոսափողը՝ «Կասպի» թերթը Թուրքիան ու նրա «փառապանծ բանակը» համարելով միակ ուժը, որն ընդունակ է ամբողջ աշխարհի մահմեդականներին «ազատագրել տարբեր կեղեքիչներից», գրում էր, որ ինքը «ամեն կերպ կաջակցի նրա հերոսական հաղթարշավին այդ ուղղությամբ, առավել ևս, որ թուրքական բանակը գալով Կովկաս, դրանով իսկ ապացուցեց իր անսահման անշահախնդրությունը, մեծագույն զոհաբերություններ կատարելու իր պատրաստակամությունը և լոյալ վերաբերմունքը՝ մեր հայրենիքը բնակեցնող բոլոր ժողովուրդների նկատմամբ» [3]։

Երիտթուրքական դահիճների գործողությունների փառաբանմանը և փաստերի նենգափոխմանն էր նվիրում իր էջերը նաև մու-

---

1 ՀՍՍՌ ԿԳԳԱ, ֆ. 200, գ. 145, թթ. 13—18։
2 Տե՛ս «Тифлисский листок», 18/IX—1918 г., № 189.
3 Տե՛ս ՀՍՍՌ ԿԳԳԱ, ֆ. 200, գ. 53բ, ց. 1, թթ. 276—277։

սավաթական «Ադրբեջան» թերթը։ Թուրքական զավթիչների ու մուսավաթական դահիճների չարագործությունները արտաքին աշխարհից թաքցնելու համար հիշյալ թերթը Բաքվի հայերի զանգվածային ջարդը որակեց որպես «որոշ ծայրահեղություններ», որոնք իբր թե «անհապաղ դադարեցվել էին» թուրքական հրամանատարության կողմից։ «Կարգը վերականգնվեց և շուտով հանգստություն տիրեց քաղաքում»,— գրում էր մուսավաթականների խոսափողը [1]։

Գոյություն ունեցող փաստաթղթերը, սակայն, ինչպես ցույց տրվեց, բոլորովին հակառակն են վկայում։ Բերենք ևս մի փաստ։ Ականատեսներից մեկի՝ Իրանում սովետական միսիայի աշխատակցի ՌԿ(բ)Պ Կենտկոմին ներկայացրած զեկուցման մեջ տրվում էր Բաքվի թուրքական օկուպացիայի հետևյալ նկարագիրը. «Բաքվում թուրքական բաշիբոզուկների տնօրինության շրջանում քաղաքը սարսափելի մի տեսք ուներ. սպանություններին, կողոպուտներին, բռնություններին վերջ չկար։ Բանվորական բոլոր կազմակերպությունները ցրվեցին... մի խոսքով, թուրքական փաշաների երկամսյա տիրապետությունը ադրբեջանական խաների հետ մեկտեղ, համատարած բռնությունների, կողոպուտի ու սպանությունների մի շրջան էր։ Չեղյալ հայտարարվեցին ոչ միայն սովետական իշխանության, այլև ժամանակավոր կառավարության բոլոր դեկրետներն ու որոշումները» [2]։

Բաքվի գրավումը թուրքական զորքերի կողմից և մուսավաթական հրոսակախմբերի հետ մեկտեղ կատարված բռնությունները անհամատեղելի էին Բրեստ-Լիտովսկի պայմանագրի հոդվածների հետ։ Ուստի և Սովետական Ռուսաստանը (որը բազմիցս հանդես էր եկել Անդրկովկասում թուրքական զավթիչների ինտերվենցիայի դեմ) 1918 թվականի սեպտեմբերի 20-ի իր նոտայում հայտարարեց Բրեստ-Լիտովսկի պայմանագրի Թուրքիային վերաբերող հոդվածների չեղյալ լինելու մասին. «Օսմանյան կառավարությունը,— ասված էր հիշյալ նոտայում,— անցած կես տարվա ընթացքում, չնայած սովետական կառավարության բազմաթիվ բողոքներին, անընդհատ խախտում էր Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը։ Այժմ, վերջապես, ի լրումն այդ բոլորի, նա գրավեց և սարսափելի ավերման ենթարկեց ռուսական հանրապետության կարևորագույն քաղաքներից մեկը... Օսմանյան կառավարությունը,— ասվում էր նոտայի վերջում,— դրանով ցույց տվեց, որ

1 «Азербайджан», 25 сентября 1918 г., № 4.
2 ЦГАОР СССР, ф. 130, оп. 3, д. 184, лл. 11—16.

Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը Ռուսաստանի և Թուրքիայի միջև այլևս գոյություն չունի» [1]։

Գրավելով Բաքուն, թուրքական զավթիչները շարունակեցին իրենց հարձակումը Հյուսիսային Կովկասի ուղղությամբ, որտեղ վաղուց ի վեր հաստատված նրանց գործակալությունը, լեռնականների հակահեղափոխական ուժերի հետ մեկտեղ, տակավին օգոստոսի երկրորդ կեսին գրավել էր Հարավային Դաղստանը։

Թուրքական դիվիզիան գեներալ Յուսուֆ Իզեթ-փաշայի գլխավորությամբ, առաջ շարժվելով երկաթգծի ուղղությամբ, հոկտեմբերի 6-ին անսպասելիորեն հարձակվեց Դերբենդ քաղաքի վրա, որը գտնվում էր Բաքվի ռազմաճակատը լքած Բիչերախովի ջոկատների ձեռքում։ Չկարողանալով դիմադրել թուրքական զորքերի գրոհին, Բիչերախովը ստիպված էր նահանջել դեպի հյուսիս։ Հոկտեմբերի 24-ին թուրքական հորդաները և Դաղստանի հակահեղափոխական ջոկատները համառ կռիվներից հետո գրավեցին Թեմիրխան-Շուրան։ Նոյեմբերի 8-ին թուրքական զորքերը նվաճեցին Բիչերախովի վերջին ամրացված կետը՝ Պետրովսկ նավահանգիստը։

Թուրքական զավթիչների հետ միասին Թիֆլիսից ժամանած լեռնային «կառավարությունը» Դաղստանում իշխանությունը իր ձեռքը վերցրեց։ Սակայն ինչպես Ադրբեջանում, Դաղստանում ևս տեր ու տնօրինություն էին անում թուրքական նվաճողները։

«...Այսպես կոչված լեռնային կառավարությունը (կամ «Օրիանտ» հյուրանոցի կառավարությունը),— գրում էր Ս. Մ. Կիրովը,— «խաղաղության ու բարեկամության» պայմանագրով Հյուսիսային Կովկասը վաճառելով Վեհիբ-փաշային, հեղափոխական Դաղստանի դեմ ուղղված թուրք ասքյարների սվինների օգնությամբ հաստատվեց Շուրայում՝ քայլելով լեռնական-հեղափոխականների գիակների վրայով...» [2]։

Դաղստանը զավթելուց հետո թուրքական հորդաները և լեռնային կառավարության հրոսակախմբերը շարունակեցին հարձակումը Թերեքի սովետական հանրապետության դեմ։

Շնորհիվ Ռուսաստանի հարավի արտակարգ կոմիսար Սերգո Օրջոնիկիձեի եռանդուն գործունեության, Թերեքի աշխատավոր զանգվածները ջախջախիչ հակահարված հասցրին թուրքական զավթիչներին ու լեռնականների հրոսակախմբերին։

Հյուսիսային Կովկասի աշխատավորների հիմնական զանգվածը գնում էր բոլշևիկների ետևից, և նրանք խոչընդոտեցին թուր-

1 «Документы внешней политики СССР», т. I, док. № 346, стр. 490—492.
2 «Пролетарская революция», № 2, 1940 г., стр. 205—206.

քական նվաճողներին՝ շարժվելու դեպի երկրի խորքը։ Այդպիսով վերջ տրվեց թուրքերի հետագա նվաճումներին Կովկասում։

Ադրբեջանում, ինչպես և Հայաստանում, թուրքական զավթիչները գաղութարարական-ոստիկանական ռեժիմ հաստատեցին և ամեն կերպ ձգտում էին ոչնչացնել այն ամենը, ինչ որ ժողովրդական զանգվածներին հիշեցնում էր սովետական իշխանության, բոլշևիկների մասին։ «Վրա են հասնում թուրքական հորդաների տիրապետության մռայլ օրերը,— գրում էր այն ժամանակ Ա. Ի. Միկոյանը։— Բաքվի բոլշևիկյան կազմակերպությունը նորից ջախջախվեց։ Հեղափոխական պայքարի ամբողջ ժամանակաշրջանում կարելի է միայն բացառիկ մոմենտներ նշել, երբ Բաքվի պրոլետարիատը չի ունեցել իր բոլշևիկյան կազմակերպությունը։ Այդ մոմենտներից մեկը թուրքերի տիրապետության առաջին շրջանն էր, երբ սեպտեմբերից մինչև դեկտեմբերը ներառյալ մեզ մոտ գոյություն չուներ Բաքվի բոլշևիկյան կազմակերպություն... տասնյակ լավագույն առաջնորդներ գնդակահարվեցին, մյուս տասնյակները տառապում էին բանտերում... միայն առանձին բոլշևիկներ ո՛չ մի բոպե չէին դադարեցնում պայքարը թշնամու դեմ» [1]։

Հաղորդելով թուրքական գազանությունների ու թալանի մասին Բաքվում, «Պրավդա» թերթը մատնանշում էր, որ քաղաքը գրավելուց անմիջապես հետո թուրքերը սկսեցին առաջին հերթին որսալ բոլշևիկներին, որոնք նրանց մեջ հատուկ ատելություն էին առաջ բերում։ Թուրք ոստիկանների կողմից բանվորների շրջանում կատարվող բազմաթիվ խուզարկություններն ու ձերբակալությունները նպատակ ունեին կանխել պրոլետարիատի ապստամբությունը թուրքական տիրապետության դեմ [2]։

Թուրքական զավթիչների գումակի հետ Բաքու ժամանեց մուսավաթական «կառավարությունը», որը ստեղծվել էր 1918 թվականի հունիսին Գյանջայում մոլի նացիոնալիստ Խան-Խոյսկու գլխավորությամբ՝ թուրքական սվիններ հովանավորության ներքո։ Այդ տիկնիկային կառավարությունը ոչ մի իրական իշխանություն չուներ և կատարում էր լոկ թուրքական հրամանատարության կամակատարի դերը։

Թուրքական զավթիչները տեր ու տնօրինություն էին անում Ադրբեջանում, ինչպես իրենց սեփական գաղութում։ Նրանք ամբողջովին իրենց ձեռքը վերցրին երկրի տնտեսության կարևորագույն ճյուղերը՝ Բաքվի նավթարդյունաբերությունը, կասպիական

1 ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 11, ց. 16, թ. 21։
2 «Правда», 24. XI. 1918 г., № 225.

նավատորմիղը, երկաթուղային տրանսպորտը, այն ամենը, ինչ որ չհասցրեցին, կամ չկարողացան թալանել և արտահանել նրանց նախորդները՝ անգլիական իմպերիալիստները։ Թուրքերը Ադրբեջանից միլիոնավոր փութ նավթ և զանազան նավթամթերքներ, պղինձ, բամբակ, բրինձ, հաց և գյուղատնտեսական այլ ապրանքներ էին արտահանում։

Բազմաթիվ փաստաթղթերը վկայում են այն տառապանքների մասին, որոնք կրեցին այդ ամիսների ընթացքում Ադրբեջանի աշխատավորները, վեր են հանում թուրք գաղութարարների կողմից կիրառված անկարգությունները, բռնություններն ու թալանը։ Թուրքական զավթիչների բոլոր այդ չարագործությունները եզակի ու պատահական գործողություններ չէին, այլ հանդիսանում էին այն միջոցառումների մշակված մի սիստեմը, որը գործադրվում էր երիտթուրքական ղեկավարների և Անդրկովկասում թուրքական զորքերի հրամանատարության կողմից։

Ահա թե ինչ էր ասվում 1918 թվականի նոյեմբերի 12-ին մուսավաթական կառավարությանն ուղարկված Ղարաբուլախ գյուղի գյուղացիների խնդրագրում. «Ղարաբուլախ գյուղի բնակչությունը շատ ծանր օրեր է ապրում։ Նախ և առաջ չքավոր բնակչությունը զոհվում է, տառապում սպաների, ֆելդֆեբելների ու օսմանյան կառավարության վարչական պաշտոնյաների կրնկի տակ։ Բնակչությունից խլվում են կահ-կարասին ու պարենը... դիտավորյալ կերպով զրպարտում են գյուղացիներին, ծեծում, բանտարկում, իսկ հետո կաշառք ստանալով՝ ազատում նրանց... չկա ոչ մի բան, որը մեզ կարողանար պաշտպանել կամայականությունից։ Ի սեր աստծո, օգնեցե՛ք մեզ։ Չէ՞ որ մենք կարող ենք զոհվել» [1]։

Մուսավաթական կառավարության արտաքին գործերի մինիստրը զեկուցում էր, որ «Մուղանում գտնվող Քարթանալը գյուղում կար 1084 փութ ցորեն, 1288 փութ գարի և 1213 փութ դարման, որոնք պահվում էին հիշյալ գյուղի գյուղացիների մոտ, սակայն 1918 թվականի օգոստոսին երևացին թուրքական զորքերը և ուշադրություն չդարձնելով գյուղացիների բողոքներին, բանտարկելու սպառնալիքի տակ նրանցից խլեցին այդ մթերքները»։ Այնուհետև նշվում էր, որ թուրքական զորքերի կողմից պատճառված վնասների հատուցման վերաբերյալ ստացվող անհամար բողոքները «ադրբեջանական կառավարությունը ի վիճակի չէ և պարտավոր չէ բավարարել» [2]։

1 Архив Азерб. филиала ИМЛ при ЦК КПСС, ф. 12, д. 35, л. 26.
2 ЦГАОР Аз. ССР, ф. 62с, оп. 1, д. 114, л. 2—3.

Գյոքչայի գավառի գյուղացիների բողոքում նշվում էր, որ այն բանից հետո, երբ 1918 թվականի հունիսին թուրքերը գրավեցին ամբողջ գավառը, մահմեդական ազգաբնակչությունը հալածանքների է ենթարկվում թուրքական սպաների կողմից։ Անհամար բողոքները ոչ մի բանի չեն հանգեցնում։ «Իվանովկա գյուղի պարետ Ահմեդը ազգաբնակչության հետ դաժանորեն վարվեց,— ասվում էր այդ բողոքներից մեկում։— Նա խոշոր ու մանր եղջերավոր անասունները խլեց ոչ միայն Իվանովկա գյուղի, այլև մերձակա գյուղերի բնակիչներից»[1]։ Մի այլ բողոքում Իվանովկա գյուղի բնակիչները գրում էին. «Մահմեդ էֆենդին, հրոսակներ ստեղծելով, թալանում էր շրջակայքի գյուղերը... Գյուղի բնակիչներից շատերին նա ծեծում էր, խլում նրանց անասունները...»[2]։

Թուրքական հրամանատարությունը բռնի կերպով բանակ էր զորակոչում տեղի մահմեդական ազգաբնակչությանը։ Այդ բանը զայրույթ առաջ բերեց Ադրբեջանի ազգաբնակչության շրջանում[3]։

Թուրքական զավթիչների կամայականությունները հաստատում էին նաև մուսավաթական կառավարության պաշտոնյաները։ Պարենային մինիստրության լիազորված անձը Ելիզավետպոլից հեռագրում էր. «Թուրքական ժանդարմները, լիազորված լինելով փաշայի կողմից, ստուգում են գնացքները, կողոպտում ժողովրդին, ծեծում կանանց։ Մեզ հետ չեն ուզում հաշվի նստել։ Այդպիսի պայմաններում մենք չենք կարող աշխատել»[4]։

Ֆինանսների մինիստրը հաղորդում էր, որ թուրքական իշխանությունները բռնի ուժով Օրդուբադի փոստ-հեռագրական գրասենյակից տարել էին տոկոսաբեր թղթեր՝ 20890 ռ. 25 կոպեկ արժողությամբ[5]։

Ներքին գործերի մինիստրին ուղղված հեռագրում ասվում էր, որ Ուջառը կայարանի թուրքական պարետը տեղի գործարանի կառավարչից խլեց բանալիները և նրան քշեց գործարանից[6]։

Ագդամի աքցիզային վարչության հսկիչը հեռագրում էր այն մասին, որ թուրքերը իրենց ձեռքը գցեցին քաղաքի միակ գործարանը, այն շարքից հանեցին և դրանով մեծ վնաս հասցրին գանձարանին[7]։

1 ЦГАОР Аз. ССР, ф. 62с, оп. I, д. 69, л. 22.
2 Նույն տեղում, թ. 23։
3 «Тифлисский листок», I. X. 1918 г., № 209.
4 ЦГАОР Аз. ССР, ф. 82с, оп. 2, д. 23, л. 1—2.
5 Նույն տեղում, թ. 31։
6 Նույն տեղում, գ. 31, թ. 75։
7 Նույն տեղում, թ. 65—66։

Թուրքերը տեր ու տնօրինություն էին անում ինչպես Բաքվի, այնպես էլ Ադրբեջանի մյուս քաղաքների ձեռնարկություններում։ Նավթային «Վոստոկ» ընկերության մի խումբ անդամներ բողոքում էին առևտրի ու արդյունաբերության մինիստրին, որ «...ավելի քան մեկ ամիս է, ինչ գործարանում նստած են ասքյարները, և մենք չգիտենք, թե ովքե՞ր են նրանք և ո՞ւմ հրամանով են վերցնում նավթն ու յուղը»[1]։

Մի այլ փաստաթղթում նշվում էր, որ թուրքական հրամանատարության կարգադրությամբ «Մանթաշով և Կ°» ընկերության լիազորներին թույլ չեն տալիս լինել ֆիրմայի նավթամուղի կայանում, որտեղ գտնվում են ապրանքային պահեստները։ Այդ կարգադրությունը խափանում է ձեռնարկության արտադրական գործունեությունը[2]։

Թուրքերը թալանում էին ոչ միայն արդյունաբերական ձեռնարկությունները, քաղաքային ու գյուղական հիմնարկները, այլև լազարեթները։ Այսպես, նրանք Ելիզավետպոլի լազարեթներից արտահանեցին այնտեղ եղած ամբողջ գույքը[3]։

Մուսավաթական կառավարությունը կատարում էր թուրքական զավթիչների վարձկանների ամոթալի դերը, անհրաժեշտ չհամարելով գոնե արտաքուստ պահպանել Ադրբեջանի անկախության ֆիկցիան։ Այդ մասին են վկայում մուսավաթական մի շարք պաշտոնյաների զեկուցագրերն ու բողոքները։ Այսպես, Շուշի քաղաքի նահանգապետը հեռագրում էր Բաքու հետևյալը. «Շուշու թուրքական նահանգապետը ամբողջ իշխանությունը վերցրել է իր ձեռքը և ոչ ոքի չի ճանաչում։ Գավառային վարչությունն ամբողջովին վերացված է»[4]։

Գյանջայի նահանգապետ գնդապետ Վեքիլովը 1918 թվականի դեկտեմբերի 7-ին հաղորդում էր, որ «Գյանջա քաղաքում բնակվող թուրքական յուզբաշին՝ ոստիկանական ջոկատի պետ Հուսեյն Թաքսինը, ամեն կարգի դիմումներ ու բողոքներ է ընդունում ինչպես քաղաքի, այնպես էլ գավառի բնակիչներից, մի բան, որը չի մտնում նրա իրավասության մեջ, որոշումներ է կայացնում այդ առթիվ, որոնք ի կատար են ածվում հենց նրա կողմից. այն անձինք, որոնք նրա կողմից մեղավոր են ճանաչվում, տույժի են ենթարկվում... Յուզբաշիի նման միջամտությունը ուրիշի պարտականություններին

1 ЦГАОР Аз. ССР, ф. 82 с., оп. 2, д. 23, л. 77.
2 Նույն տեղում, թ. 67։
3 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 53, թ. 328։
4 Նույն տեղում, թ. 21։

ստեղծում է երկիշխանություն, վարկաբեկում նահանգապետի իշխանության հեղինակությունը»[1]։

Փոստի ու հեռագրի մինիստրը բողոքում էր, որ «նորոգված կառավարական հեռագրաթելերը կտրտվում են թուրքերի կողմից և նրանց մեջ դրվում հեռախոսներ։ Բացի դրանից, թուրքական զինվորական պաշտոնյաները խոչընդոտներ են հարուցում գծերի ու հեռագրաթելերի նորոգման աշխատանքներին»[2]։

Այդ ձևով էին գործում թուրք զավթիչները նաև երկաթուղագծերում։ Գնացքները նրանք բաց էին թողնում իրենց սեփական հայեցողությամբ, հաճախ կանգնեցնում էին դրանք և խուզարկություն կատարում՝ ուղևորներից խլելով նրանց մոտ եղած թանկարժեք իրերը։ Մաքսատան պաշտոնյաներից մեկը 1918 թվականի դեկտեմբերի 19-ին հաղորդում էր, որ իր կողմից կանգնեցվել է Վրաստան գնացող մարդատար գնացքը։ «Մաքսատան մեր ներկայացուցիչները,— նշում էր նա,— գնացք բարձրացան ուղևորներին ու նրանց իրերը ստուգելու համար։ Նրանք տեսան, որ բացի իրենցից, վագոն ներս մտան իրենց անծանոթ թուրք զինվորականները և չվստահելով մեր ստուգմանը, սկսեցին նորից ստուգել ուղևորներին»։ Այնուհետև նամակում մատնանշվում էր, որ մաքսատան ծառայողները թուրք սպաներին բողոք հայտնեցին, սակայն վերջիններս «ոչ մի ուշադրություն չդարձրեցին այդ բանի վրա և ասքյարները իրենց ֆելդֆեբելի (բաշչաուշ) գլխավորությամբ սկսեցին ինքնուրույն կերպով վերստին ստուգել ուղևորների իրերը։ Այսպիսով, ստուգման ամբողջ նախաձեռնությունն անցավ թուրք ֆելդֆեբելին, որը ինքնագլուխ կերպով կարգադրություններ էր անում՝ բոլորովին արհամարհելով մաքսատան վերահսկողության ֆունկցիաները... ուղևորները իրենց դժգոհությունն էին հայտնում մաքսատան պաշտոնյաներից այն իմաստով, որ մենք խրախուսում ենք թուրք ասքյարների անկարգությունները»[3]։

Թուրքական զորքերը բացահայտորեն թալանում էին «իրենց եղբայրներին» (այդպես էին նրանք անվանում Ադրբեջանի մահմեդական բնակիչներին)։ Զավթիչները պարենի ու կողոպտված գույքի հսկայական պաշարներ կուտակեցին, որոնք սակայն չհասցրեցին դուրս բերել երկրից՝ 1918 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին իրենց խուճապահար փախուստի պատճառով։

Շամախու գավառապետի 1919 թվականի փետրվարի 20-ի զեկուցագրի համաձայն, թուրքերը Շամախու ամբարում թողեցին 10 հազար փութ ցորեն, իսկ Մադրասի ամբարում՝ 16 հազար փութ ցորեն և 12 հազար փութ գարի[1]։ Ղուբայի գավառում թուրք զավթիչները չհասցրեցին արտահանել 400 փութ գարի[2]։ Ուջառի կայարանում թուրքերը թողեցին 1050 փութ ցորեն և 2200 փութ գարի[3]։

Այս տվյալները վկայում են այն մասին, որ թուրքական հրամանատարությունը ազգաբնակչությունից պարեն էր բռնագրավում ոչ միայն բանակի ընթացիկ կարիքները բավարարելու, այլև թալանված ապրանքները Թուրքիա արտահանելու նպատակով։

Ադրբեջանի բնակչությունը շարունակում էր սովամահ լինել նաև թուրքական զորքերի հեռանալուց հետո, քանի որ մուսավաթական կառավարությունը թուրքերի կողմից թողնված ողջ պարենը 1919 թվականի փետրվարին հանձնեց ռազմական մինիստրությանը[4]։

Թուրքական զավթիչներն իրենց ցանկացած ձևով դատ ու դատաստան էին տեսնում Ադրբեջանի ազգաբնակչության նկատմամբ՝ բոլորովին արհամարհելով մուսավաթական իշխանություններին։

Այսպես, Գյանջայի մարզային դատարանի դատախազը տեղեկացնում էր, որ Ղազախի գավառային բանտում թուրքերը կալանքի տակ են պահում առանց որևէ հիմքի ձերբակալված մահմեդականներին։ Թուրքական պարետը ուշադրություն չդարձրեց կալանավորներին ազատելու վերաբերյալ մուսավաթական իշխանությունների բողոքի դիմումներին[5]։

Թուրքերը ձերբակալվածներին անասելի տանջանքների էին ենթարկում։ Մուսավաթական կառավարության ղեկավարին հասցեագրված մի դատախազի զեկուցագրում նշվում էր, որ «Գյանջայի բանտում գտնվող կալանավորները շղթայակապված էին, փակված առանձին մենախցերում։ Նրանք զրկված էին բակում զբոսնելու հնարավորությունից... ենթարկվում էին տանջալից ու դաժան խոշտանգումների։ Նրանցից յուրաքանչյուրին մտրակով ու մահակով հարվածներ էին հասցնում մի քանի հարյուր անգամ... այդ պատիժները կիրառվում էին սիստեմատիկ կերպով՝ ամեն օր. ի միջի այլոց, ոմանց ծեծում էին հատկապես անողոք կերպով, ստիպելով

1 ЦГАОР Аз. ССР, ф. 82 с, оп. 2, д. 23, л. 25
2 Նույն տեղում, թ. 60։
3 Նույն տեղում, թ. 72։

1 ЦГАОР Аз. ССР, ф. 334с, оп. I, д. 36, л. 12—13
2 Նույն տեղում, թ. 16—17։
3 Նույն տեղում, թ. 24։
4 Նույն տեղում, ֆ. 82, ց. 2, գ. 54, թ. 4։
5 Նույն տեղում, ֆ. 95с, ց. 2, գ. 11, թ. 100։

նրանց իրենց վրա վերցնել զանազան հանցագործություններ կատարելու մեղքը...»[1]։

Մամուլի հաղորդման համաձայն, 1918 թվականի հուլիսին պատրաստվում էր Ստամբուլ մեկնելու «ադրբեջանական քաղաքացիների պատվիրակությունը», որպեսզի «Թուրքական կառավարությանը խնդրի միջոցառումներ ձեռնարկել թուրքական ասքյարների կողմից ադրբեջանական հանրապետության քաղաքացիների նկատմամբ գործադրվող բռնությունների դեմ»։ Եվլախ կայարանի բնակչությունը իր ներկայացուցիչներն ուղարկեց Նուրի-փաշայի մոտ, որոնք իրենց բողոքը հայտնեցին այն բանի դեմ, որ ասքյարները բռնաբարում են կանանց և ծեծում տղամարդկանց։ Թուրք զինվորները հաճախ մտնում էին խաղաղ բնակիչների տները և նրանցից պահանջում պարգևատրում «ադրբեջանական ազգը գյաուրներից ազատագրելու համար»[2]։

Ջավթիչների անսքող կամայականությունները մուսավաթական կառավարության արդարադատության մինիստրին ստիպեցին Ադրբեջանում գտնվող թուրքական զորքերի գլխավոր հրամանատարին տեղյակ պահել Գյանջայում, Ղազախում և Ադրբեջանի այլ քաղաքներում ու շրջաններում տիրող թուրքական ինքնիշխանության մասին[3]։ Բնական է, որ նման դիմումները ոչ մի ազդեցություն չէին գործում թուրքական հրամանատարության վրա։

Ադրբեջանցիների նկատմամբ անօրինականություն ու բռնություններ գործադրելով, թուրքական ջավթիչները միևնույն ժամանակ կեղծավորաբար նրանց անվանում էին իրենց «արյունակից եղբայրներ», որ եկել են նրանց «ազատագրելու բոլշևիզմի սպառնալիքից»։ Վերը հիշատակված թուրք ռազմական պատմաբան գնդապետ Բերքուքը գրում էր. «Մեր կառավարությունը... խոստացել էր ճանաչել ու հաստատել այդ ժողովուրդների անկախությունը...»[4] (ի նկատի ուներ Ադրբեջանի ու Հյուսիսային Կովկասի մահմեդական ազգաբնակչությանը— Ե. Ս.)։ Այդ «անկախության» տակ թուրք նվաճողները հասկանում էին Կովկասի ուղղակի միացումը Թուրքիային։

Իրենց իսկական նպատակները քողարկելու համար երիտթուրքերը տակավին 1918 թվականի մայիսին մուսավաթական կուսակցության մեջ եղած իրենց գործակալներին ցուցում տվեցին՝ սկսեր

1 ЦГАОР Аз. ССР, ф. 100с, оп. 2, д. 33, л. 18—19.
2 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 53ա, թ. 18—19։
3 ЦГАОР Аз. ССР, ф. 95, оп. 2, д. 33, л. 18—19.
4 Berkuk, s. 31.

կամպանիա հանուն «անկախ Ադրբեջանի»։ Բաթումի կոնֆերանսում գտնվող մուսավաթական պատվիրակության կողմից էնվեր-փաշայի անունով ուղարկված նամակում նշվում էր հետևյալը. «Չնայած Անդրկովկասի մահմեդական ազգաբնակչությունն ունեցողհատվածը Թուրքիային լրիվ միացնելու վերաբերյալ մեր խնդրանքին, մեզ փաստարկելով բացատրեցին, որ Թուրքիայի «մեծ քաղաքականությունը» պահանջում է, որպեսզի մենք առայժմ անկախ ու ուժեղ լինենք... Մենք ընդունեցինք այդ ցուցումները՝ գիտակցելեն համաձայնվելով դրանց հետ»[1]։ Եթե երիտթուրքական ղեկավարները «մեծ քաղաքականության» նպատակներից՝ այսինքն՝ ամբողջ Կովկասը գրավելու խնդրից ելնելով, միաժամանակ քողարկում էին իրենց նվաճողական ձգտումները, ապա թուրք զինվորականները, իրենց երևակայական հաջողություններից արբեցած, առանց քաշվելու խոսում էին Անդրկովկասում կատարված ինտերվենցիայի իսկական պատճառների մասին։

Նազըմ-փաշան, որը նախորդել էր Նուրի-փաշային Անդրկովկասում թուրքական զորքերի հրամանատարի պաշտոնում, Գյանջայի գրավումից հետո տեղի բնակիչներին հայտարարեց հետևյալը. «...Իր կրոնակից ու ազգակից ժողովուրդների հետ միավորվելու Թուրքիայի վաղեմի երազանքը, վերջապես, իրականացավ... Այժմ զինաթափվե՛ք, հրացաններն այլևս հարկավոր չեն խաղաղ ազգաբնակչությանը։ Իմ ասքյարները ձեր հանգստությունը կապահովեն»[2]։

1918 թվականի թուրքական արշավանքի մասնակից գնդապետ Ռյուշտյուն Թուրքիայի ու մուսավաթականների միջև Բաթումում կնքված պայմանագրի կապակցությամբ գրում է, որ այդ փաստաթղթով նախատեսվում էր «թուրքական օգնություն Ադրբեջանին՝ բոլշևիկների դեմ պայքարելու համար»[3]։

Այդ «միսիայի» իրագործումը, ինչպես տեսանք, ուղեկցվում էր սարսափելի ջարդերով ու կողոպուտով, որը, սակայն, թուրքական ջավթիչներին չէր խանգարում աղմկելու այն մասին, որ իրենք «օգնում են մահմեդականներին ազատագրվելու ռուսական լծից»։ Պահպանվել են թուրքական հրամանատարության մի շարք թռուցիկներ, որոնցում նա Անդրկովկասի գրված շրջանների ազգա-

1 Տե՛ս «Труды Азербайджанского филиала ИМЛ при ЦК КПСС», VIII, Баку, стр. 70.
2 Տե՛ս «Бакинский рабочий», 29. VI. 1918 г.
3 Rüştü, Büyuk harpte Bakû yollarında 5 Kafkas piyade fırkası. Տե՛ս „Askeri mecmuanın tarih kısmı", Istanbul, 1934, Sayı 34, s. 7.

բնակչությանը փարիսեցիորեն կոչ էր անում «հնազանդության ու հպատակության»։

Այսպես, Զանգեզուրում գտնվող թուրքական զորքերի պարետի՝ Իզեթ-բեյի 1918 թվականի օգոստոսի 1-ի կոչում մատնանշվում էր, որ տեղական մահմեդականները երկար ժամանակ գտնվում էին ցարիզմի անտանելի ճնշման տակ և որ այժմ, թուրքերի օգնությամբ, նրանց հաջողվեց «ազատագրվել»։ «Մենք,— ասվում էր հիշյալ կոչում,— եղբայրական ձեռք ենք մեկնում ձեզ, վերցրեք այն։ Եթե մենք իրար ձեռք մեկնենք, մենք ճանապարհ կբանանք դեպի անսահման երջանկությունը։ Ծառայակամությունն ու հեզությունը սիրո են արժանի» [1]։

Ստամբուլում լույս տեսնող «Թասֆիրի էֆքյար» թերթը 1918 թվականի մարտի 6-ի համարում գրում էր, որ Թուրքիայի միակ ձգտումն է միավորվել իր եղբայրակիցների՝ կովկասյան թուրքերի հետ և ազատել նրանց «դարավոր լծից»։

Այսպիսով, թուրքական ռազմամոլները խոսելով Կովկասի մահմեդական բնակչությանը իբր ցույց տրված «օգնության» մասին, գործնականում ձգտում էին վերացնել սովետական իշխանությունը Բաքվում և նվաճել ողջ երկրամասը։

Թուրքական զավթիչների նվաճողական պլանները մուսավաթականները պաշտպանում էին ամբողջովին։ 1918 թվականի հուլիսի սկզբին մուսավաթական կառավարությունը իր հավատարմության զգացմունքներն արտահայտելու համար հատուկ պատվիրակություն ուղարկեց Ստամբուլ։ Այդ պատվիրակության ղեկավար Ռասուլ-զադեն էնվերի ներկայությամբ սուլթանին խնդրեց իր «բարձր հովանավորության» տակ վերցնել ինչպես Ադրբեջանը, այնպես էլ բոլոր մահմեդական ժողովուրդներին, ստեղծել հզոր մահմեդական պետություն Թուրքիայի՝ մահմեդական աշխարհի կենտրոնի գլխավորությամբ [2]։

Մուսավաթական կուսակցության մյուս պարագլուխը՝ Ալի Մուրադ-բեյ Թոփչիբաշևը, որը նույնպես մտնում էր պատվիրակության կազմի մեջ, ստրկամտորեն գրում էր. «Աստծո ողորմածությամբ ինձ հաջողվեց հասնել նպատակիս՝ տեսնել բոլոր մահմեդականների խալիֆին ու թուրքերի փադիշահին... Մենք, ադրբեջանական թուրքերս, միշտ կլինենք և ցանկանում ենք ապրել բոլոր մահմեդականների խալիֆի՝ օսմանների փադիշահի ողորմածությամբ...» [3]։

1 ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 1256, թ. 43։
2 ЦГАОР Аз. ССР, ф. 211с, оп. 1, д. 30, л. 1—2.
3 Նույն տեղում։

Անդրկովկասի մահմեդական ժողովուրդները մերժեցին թուրքական զավթիչների և նրանց ուղղակի գործակալների՝ մուսավաթականների պանթուրքական պլանները։ Թուրքական զորքերի ներխուժումը Անդրկովկասի սահմանները շատ կարճ ժամանակում երկրամասի ազգաբնակչությանը բացահայտեց զավթիչների իրական մտադրությունները։ Օրեցօր աճում էր Անդրկովկասի ժողովուրդների ատելությունը թուրք կեղեքիչների նկատմամբ։ Այդ բանը հետագայում խոստովանել են նույնիսկ թուրքական ինտերվենցիայի մասնակիցները։ Այսպես, Բերքուբը նկարագրելով թուրքական 5-րդ դիվիզիայի արշավանքն Անդրկովկասում, նշում էր, որ նրա վիճակը ծայրահեղորեն դժվար էր։ Նրա խոսքերով, այդ դիվիզիան «շատ դառը բոպեներ անցկացրեց արյունալի ու դաժան մարտերի հետևանքով, որ նա մղում էր Ադրբեջանում՝ մնալով առանց ռազմամթերքի ու սպառազինության» [1]։

Անդրկովկասի մահմեդական ժողովրդական զանգվածները թուրքական զավթիչներին ատում էին նույն ձևով, ինչ որ երկրամասի մյուս ժողովուրդները։ Այդ մասին էր վկայում, մասնավորապես, թուրքական երրորդ բանակի հրամանատար Վեհիպ-փաշայի գաղտնի հրամանը իրեն ենթարկվող զորքերին, որտեղ նա պահանջում էր «բարձրացնել Թուրքիայի քաղաքական հեղինակությունը Անդրկովկասի մահմեդականների աչքում, որոնք գնալով ավելի թշնամաբար են տրամադրվում թուրքերի նկատմամբ» [2]։

***

Անդրկովկասում թուրքական ինտերվենցիայից հատկապես տուժեց հայ ազգաբնակչությունը։ Անդրկովկասի բոլոր գրաված շրջաններում երիտթուրքերը շարունակում էին կիրառել հայ ժողովրդի բնաջնջման իրենց քաղաքականությունը։ Տրապիզոնի կոնֆերանսում, ի պատասխան Արևմտյան Հայաստանին ինքնավարություն տալու վերաբերյալ անդրկովկասյան պատվիրակության ներկայացրած պահանջին, թուրքական ներկայացուցիչները լկտիորեն հայտարարեցին. «Այնտեղ հայեր չկան և չեն լինի, որովհետև այն տեղերում, որով անցնում է թուրք զինվորը, հայեր չեն մնա» [3]։

Երիտթուրքերը այդպես էլ վարվում էին։ Արդահանի շրջանը

1 Berkuk C., s. 19.
2 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 53a, թ. 78։
3 Նույն տեղում, գ. 38, թ. 103։

գրավելու ժամանակ տեղի բնակչությունից ու գաղթականներից նրանց կողմից ոչնչացվեց մի քանի հազար հայ։ «Հաշվեհարդար տեսնելով տղամարդկանց հետ,— պատմում էր այդ չարագործությունների վկաներից մեկը,— թուրքերը մեզ լրիվ կողոպտեցին և մերկացնելով մինչև ներքնաշապիկը, ուղարկեցին Ախալքալաք, ուր մենք՝ մի քանի հազար կանայք ու երեխաներ, գնում էինք ոտքով ամբողջ մի ամսվա ընթացքում, տառապելով սովից ու ցրտից»[1]։

Մի այլ ականատես գրում է, որ Արդահանի վրա թուրքերի հարձակման ժամանակ շրջակայքի բոլոր հայկական գյուղերը հրկիզվել էին, իսկ նրանց բնակիչները՝ գնդակահարվել։ Թուրքերը կրակին էին մատնում ամբողջ գյուղեր՝ նախօրոք առանձնացնելով գեղեցիկ աղջիկներին ու կանանց, որոնց բռնաբարելուց հետո, նույնպես սպանում էին։ Արդահանը գրավելուց անմիջապես հետո թուրքերը ձեռնարկեցին հայ ազգաբնակչության գլխովին բնաջնջմանը[2]։

Կարսի մարզում թուրքական զորքերի ներխուժումը նույնպես ուղեկցվում էր հայերի ջարդերով ու նրանց գույքի բռնագրավմամբ։ «Ամբողջ մարզում ներկայումս չի մնացել և ոչ մի կենդանի հայ,— հաղորդում էր ականատեսը։— Թուրքական զորքերի հարձակման ժամանակ Արդահանի ու Օլթիի մարզերից հայերի փախուստի բոլոր ճանապարհները փակվել էին... ուստի և այդ մարզերի ամբողջ հայ ազգաբնակչությունը մնաց տեղում և սրի քաշվեց»[3]։

Սովետական կառավարությունը իր բողոքի ձայնը բարձրացրեց երիտթուրքերի կողմից կիրառվող գազանությունների դեմ։ 1918 թվականի ապրիլի 13-ին Թիֆլիսի գերմանական դեսպանին ուղարկվեց ՌՍՖՍՌ արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Գ. Վ. Չիչերինի և նրա տեղակալ Լ. Մ. Կարախանի հեռագիրը՝ «Թուրքական զորքերի Հայաստան շարժվելու և Գերմանիայի պատասխանատվության մասին», որտեղ ասված էր հետևյալը.

«Թուրքական բանակը առաջ է շարժվում դեպի Բաթում, Կարս, Արդահան, ավերելով երկիրը և ոչնչացնելով գյուղացիական բնակչությանը։ Հայերի հետագա ճակատագրի համար պատասխանատվությունն ընկնում է Գերմանիայի վրա, որովհետև նրա պընդմամբ էլ հենց ռուսական զորքերը դուրս բերվեցին հայկական մարզերից, և այժմ Գերմանիայից է կախված թուրքական բանակի ետ պահումը վրեժի ու չարության հողի վրա ծագող սովորական էքսցեսներից։ Դժվար է հաշտվել այն մտքի հետ, որ մի այնպիսի կուլտուրական պետություն, ինչպիսին Գերմանիան է, որը հնարավորություն ունի ազդելու իր դաշնակից Թուրքիայի վրա, թույլ կտա, որ իր կամքից անկախ այս համաշխարհային պատերազմի մեջ քաշված հայ ժողովրդի համար Բրեստի հաշտության պայմանագիրը ծառայի անթիվ թշվառությունների աղբյուր։ Ուստի սովետը հավատացած է, որ Դուք ձեռք կառնեք միայն ձեզանից կախված անհրաժեշտ միջոցները, ազդելու թուրքական իշխանության վրա՝ խաղաղ բնակչության ոչնչացումը, ինչպես այդ տեղի ունեցավ Արդահանում, կանխելու նպատակով»[1]։

Ստանալով նոտան, գերմանական կառավարությունը ոչինչ չձեռնարկեց թուրք ջարդարարների կողմից հայերի նկատմամբ կիրառվող չարագործություններին վերջ դնելու համար։ Թուրքական զորքերը շարունակում էին անխնա կերպով կոտորել խաղաղ հայ ազգաբնակչությանը։

Կարսի մերձակայքի ու Կաղզվանի շրջանի հայ ազգաբնակչությունը հասցրեց պատսպարվել Կարսում։ Քաղաքի անսպասելի հանձնումը թուրքերին (1918 թվականի ապրիլի 24-ին) այնտեղ խուճապ առաջ բերեց։ Կարսի հայ և ռուս բնակչությունը, թողնելով իր ամբողջ գույքը, փախավ Ալեքսանդրապոլ[2]։ Սակայն թուրքերը այստեղ էլ արյունալի ջարդ կազմակերպեցին։ Ահա թե ինչ էր հաղորդում «Կավկազսկոյե սլովո» թերթի թղթակիցը. «Քաղաքում սարսափելի մի բան էր կատարվում. դա միայն կարելի է զգալ, սակայն հնարավոր չէ նկարագրել։ Կանայք հիստերիկայի մեջ էին... նրանցից շատերը, միայն ներքնաշապիկով, գրկած երեխաներին, թողնելով ամեն ինչ, փախչում էին... Ալեքսանդրապոլը ընկավ գիշերվան մոտ»[3]։

Գրավելով Ալեքսանդրապոլը, թուրքական զավթիչները քաղաքից դուրս տարան պարենի բոլոր պաշարները, անասունները, կոտրեցին[4]։ Թուրքական զորքերի ձեռքն ընկան կովկասյան բանակի թիկունքի խոշորագույն պահեստները, որոնցում պահվում էին հրասայական քանակությամբ ռազմամթերք ու զինվորական հանդեր-

1 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 53а, թ. 78։
2 Նույն տեղում, թ. 85, 91։
3 «Документы и материалы», л. 281.

1 «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում»։ Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, ՀՍՍՌ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1960, էջ 211—212։
2 «Документы и материалы», л. 390.
3 «Кавказское слово», 8 VI. 1918 г., № 116.
4 «Աշխատավոր», 18.6.1918, № 86։

ձանք՝ մոտավորապես մի քանի միլիոն ոսկի ռուբլի արժողությամբ [1]։

Ալեքսանդրապոլի հայրենակցական վարչության նախագահի 1918 թվականի դեկտեմբերի 1-ի զեկույցում թվարկվում էին այն ծանր կորուստներն ու ավերածությունները, որոնք թուրքերը պատճառել էին Ալեքսանդրապոլին ու նրա գավառին։ Արթիկ, Բաշգյուղ, Ղփչաղ, Արխվալի գյուղերը ամբողջովին թալանվել էին։ Արթիկում ջարդի ժամանակ սրի էին քաշվել բոլոր տղամարդիկ, բռնաբարվել ու գերի տարվել գյուղի կանայք։ Այդ նույն բախտն էր վիճակվել Զուխան, Իլխիաբի, Թոմառտաշ, Հոռոմ և մի շարք այլ գյուղերի բնակիչներին։

«Ընդհանրապես, Ալեքսանդրապոլի շրջանի ավելի քան 120 բարեկարգ ու բազմամարդ, հարուստ ու ծաղկող հայկական գյուղերից և ոչ մեկը զերծ չմնաց թուրքական սրի ու յաթաղանի ավերիչ ու կործանարար գործողությունից... Հայկական գյուղերի ծաղկուն ողջ երիտասարդությունը,— ասվում էր այդ փաստաթղթում,— աշնան տերևների նման, իր դիակներով ծածկեց սարերի գագաթներն ու լանջերը։ Բոլոր այդ գյուղերում թուրքերը հին ասորացիաներին հատուկ դաժանություն հանդես բերեցին» [2]։

Հայերի զանգվածային ջարդեր տեղի ունեցան նաև Ղարաքիլիսայում, Լոռի-Փամբակի, Ախալքալաքի ու Ախլցխայի գավառների ամբողջ տերիտորիայում՝ ամենուրեք, որտեղ երևում էին թուրքական զորքերը։ Ղարաքիլիսայում թուրքական զորքերի գազանությունների մասին փաստաթղթերից մեկում ասվում է. «...Տրված գաղտնի հրամանի համաձայն, սկսվեց հայ ռազմագերիների ու խաղաղ բնակիչների գլխովին կոտորածը... հայ գերիներին, որոնք իրար հետ կապված էին պարաններով, խմբերով տանում էին մերձավոր անտառը։ Գնդակահարում էին տասնյակ ու հարյուրավոր սպաների ու զինվորների։ Միաժամանակ, հենց գյուղի ներսում, սրի էին քաշում նրա բոլոր հայ բնակիչներին։ Շատ ընտանիքներ լրիվ ոչնչացվել են։ Տղամարդիկ գյուղում գրեթե չեն մնացել» [3]։

Թուրքական զավթիչները Ղարաքիլիսայից ու շրջակայքի գյուղերից արտահանեցին ամբողջ հացահատիկը, անասունները, եկեղեցիներից ու հիմնարկներից կողոպտված թանկարժեք իրերը։ «Թուրքական իշխանությունները,— հաղորդում էր Թիֆլիսի «Բարբա» թերթը,— բնակչությունից խլում են հացահատիկն ու անասունները՝ դրանց դիմաց ինչ-որ պարտաթղթեր տալով։ Բերքի մեկ քառորդը թուրքերը վերցնում են առանց որևէ վճարի, ասելով՝ այդ հասնում է մեզ շարիաթի համաձայն» [1]։

Ախալքալաքի գավառում թուրքական զորքերի կողմից ավերվեցին 62 հայկական գյուղեր։ Քաղաքի ու գյուղի բնակիչները, թողնելով իրենց ամբողջ գույքը, թաքնվեցին անտառներում և պարտիզանական պայքար սկսեցին թուրք նվաճողների դեմ [2]։

1914—1918 թվականների համաշխարհային պատերազմում հայ ժողովրդին պատճառած վնասները որոշելու նպատակով կազմված հանձնաժողովի զեկուցագրում նշվում էր, թե ինչպիսի խժդժություններ էին կատարել թուրքական զորքերը Լոռի-Փամբակի գավառում։ Անհավասար մարտում ջախջախելով պայքարի ելած տեղական բնակչությանը, թուրքերը ներխուժեցին Ջալալօղլի (Ստեփանավան) և այնտեղ սարսափելի ջարդ կազմակերպեցին։ Զավթիչները գավառից դուրս տարան մթերքի բոլոր պաշարներն ու անասունները։

«Երբ բնակչությունը ետ վերադարձավ Ջալալօղլի,— գրում էր ականատեսներից մեկը,— այն իրենից ներկայացնում էր ինչ-որ մեռյալ քաղաք, ուր միայն շների հաչոցն էր լսվում» [3]։

Հայաստանի գրաված շրջաններից թուրքերը քշեցին տարան բոլոր պատանիներին ու աշխատունակ տղամարդկանց։ Նրանց մեծամասնությունը ճանապարհին զոհվեց գազանային տանջանքներից, միայն շատ քչերը փրկվեցին։ Համաշխարհային պատերազմում Թուրքիայի կրած պարտությունից հետո ետ վերադառնալով, նրանք պատմում էին, որ իրենց օգտագործում էին տաժանակիր աշխատանքներում, լծում էին սայլերին, քշում մետաղյա մտրակներով։ Հայերի մեծամասնությունը չէր կարողանում տանել թուրքական աքսորի անմարդկային պայմանները և զոհվում էր խոշտանգումներից ու քաղցից։

Դժվար է որոշել աքսորված հայերի ընդհանուր թիվը։ Բավական է նշել, որ միայն Ալեքսանդրապոլի գավառից թուրքական զինվորական իշխանությունները Թուրքիա քշեցին 6 հազարից ավելի մարդ, իսկ Շիրակից ու Փամբակից՝ 8 հազար մարդ։ Ետ վերադարձավ նրանց միայն $^1/_{12}$ մասը [4]։ Այդ դեպքերի ականատեսներից մեկը պատմում էր, թե ինչ վիճակում էին վերադառնում

---

1 ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 20, գ. 81, թ. 1։
2 «Документы и материалы», л. 352—355.
3 Նույն տեղում, թ. 347։

1 «Борьба», 21. VI. 1918 г., № 123.
2 «Документы и материалы», л. 357.
3 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 95, թ. 36։
4 Նույն տեղում, թ. 22, 128։

թուրքական գերության մեջ գտնվող հայերը. «Նրանց բոլորի մարմինները պատված էին ծեծից առաջ եկած վերքերով։ Հյուծված, նրանք հազիվ էին ոտքի վրա կանգնում, նրանց վրա նույնիսկ հագուստ չկար, և իրենց մարմնի մերկությունը նրանք ծածկում էին մեծ գոգնոցի ձև ունեցող քաթանի մի կտորով։ Վերադարձածներից շատերը մահանում էին ուժասպառությունից» [1]։

Զգտելով Արևելյան Հայաստանի գրաված շրջանները մաքրել բուն ազգաբնակչությունից, թուրքական իշխանությունները հայերի ֆիզիկական ոչնչացման հետ մեկտեղ կիրառում էին նաև Արևմտյան Հայաստանում նրանց կողմից անցկացվող մեթոդը՝ կենդանի մնացած հայերին զրկելով գոյության տնտեսական հիմքերից։

Այդ բոլոր չարագործությունները տարերային բնույթ չէին կրում, դրանք չի կարելի որակել որպես մարդոյորություն կամ թուրքական զինվորների կողմից հանդես բերված սանձարձակություն. Խոսքը նախապես մշակված ծրագրի մեթոդիկ իրականացման մասին է։ Թուրքական հրամանատարությունը հետապնդում էր որոշակի, գիտակցորեն առաջադրված նպատակ՝ ոչնչացնել հայ ազգաբնակչության առավել աշխատունակ մասը և քայքայել նրա տնտեսական ուժերը։

Սարգիս Կասյանը, քաջ տեղյակ լինելով թուրք զավթիչների ու չարդարարների չարագործություններին Անդրկովկասի և, հատկապես, Հայաստանի նրանց կողմից գրավված շրջաններում, գրել է. «Գերմանո-տաճկական իմպերիալիզմը, սակայն, ոգևորված իր ժամանակավոր հաղթանակով, դարձնում է ինչպես Անդրկովկասը, այնպես էլ Հայաստանը իր գաղութը։ Տաճկական իմպերիալիզմը եվրոպական իմպերիալիզմից տարբերվում է նրանով, որ նա գերազանցորեն զինվորական է և որպես այդպիսին՝ նա ոչ թե հետզհետե է քամում նվաճված, բռնագրավված երկրի հյութերը, կաթիլ-կաթիլ ծծում ժողովրդի արյունը... ո՛չ, տաճկական իմպերիալիզմը թալանի և ավերածության, ջարդի և կոտորածի է մատնում երկիրը հենց առաջին մոմենտից։ Հայաստանի հողը ոռոգում է արյունով, դաշտերն ու ձորերը ծածկում դիակներով։ Հարյուր հազարավոր կին ու երեխաներ տեղահան են լինում և մերկ ու սոված ապաստան որոնում զանազան նույնիսկ հեռավոր տեղերում։ Թալանչիները հավաքում տանում են ոչ միայն բարեկեցության և շքեղության իրերն ու առարկաները, այլև ամենավերջին հացահատիկն ու անասունը։ Քանդում տանում են ոչ միայն հանրային շինարարությունների մասերը, այլև մասնավոր տների կահ-կարասիքը, ծածկոցն ու փեղկերը։ Երկիրն ամբողջապես ավերվում, թալանվում է, ծայր աղքատության մատնվում...» [1]։

Թուրքական կառավարության կարգադրությամբ, Հայաստանի գրավված շրջաններում բնակչությունից կանոնավոր կերպով գանձվում էր տասանորդը (աշարը)՝ բոլոր հացամթերքների, անասնակերի ու ծղոտի $^1/_8$-ի չափով, ինչպես նաև մուբայաթ հարկը, որը, ի տարբերություն աշարի, գանձվում էր դրամով՝ բերքի $^2/_8$-ի չափով։ Հարկերի կանոնավոր ու ժամանակին գանձման համար թուրքական իշխանությունների առջև պատասխանատու էին գյուղական ավագները (մուխտարները) և քահանաները։ Այն անձինք, որոնք թաքցնում էին իրենց բերքը, պատժվում էին հատուկ ձևով՝ բռնագրավվում էր նրանց ամբողջ հացը [2]։

Հիշյալ հարկերի վճարումը այն պայմաններում, երբ թուրքական զորքերը ոչնչացրել էին ցանքերի մեծ մասը, գյուղական բնակչությանը զրկում էր վերջին կտոր հացից։ Եթե ցանքերը ոչնչանում էին տարերային աղետների հետևանքով, գյուղացիները, միևնույն է, պարտավոր էին վճարել աշարը, սակայն արդեն դրամով՝ բերքը չհնձած հաշվելու հիման վրա։

Հարկերի գանձումը թուրքերի կողմից ուղեկցվում էր ամեն տեսակի բռնություններով։ Հարկահավաքները՝ մուխտարներն ու բաշմուխտարները, գյուղ էին գնում ասքյարների հետ և բռնագրավում ամբողջ բերքը։ Այդ կամայականությունից խուսափելու համար գյուղացիները ստիպված էին կաշառք տալ։ Գանձված հարկերը գյուղացիները պարտավոր էին իրենց սայլերով տեղափոխել մուխտարի կողմից նշված վայրը [3]։

Դաշնակցական կառավարության՝ Ալեքսանդրապոլում գտնվող հյուպատոսին հասցեագրված բազմաթիվ նամակներում հայ գյուղացիները գանգատվում էին թուրքական իշխանություններից, որոնք հարկերը հավաքելու պատրվակով տանում էին բառացիորեն ամեն ինչ։ Մահմուդջուղ գյուղի գյուղացիության 1918 թվականի հոկտեմբերի 4-ի դիմումի մեջ նշվում էր, որ թուրքական թալանի հետևանքով «դաշտերը մնացին գրեթե անմշակ, մենք կարողացանք միայն $^1/_{10}$ մասը ցանել... գյուղում իշխում է սովը։ Այժմ մեզնից պահանջում են աշար և մուբայաթ՝ բոլոր ցանքսերի $^3/_8$ մասը։ Մինչդեռ, ստացված հացահատիկը չի բավարարում նույնիսկ գարնան սերմնացանի համար։ Եթե ղեկավարությունը ուշադրություն չդարձնի... մենք կմահանանք քաղցից»։ Մի այլ փաստաթղթում

1 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 95, թ. 22։

1 Ս. Ատենյան (Ս. Կասյան), Ո՞ւր է ելքը, Երևան, 1919, էջ 19—20։

2 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 38, թ. 128։

3 Նույն տեղում, գ. 26, թ. 11։

նշվում էր, որ Ղարաքիլիսայի շրջանում թուրքական պաշտոնյաները աշարի ու մուբայաթի պատրվակով հայերից խլում են ամբողջ հացահատիկը, կարտոֆիլը, գարին՝ նրանց տալով պարտաթղթեր և հանգստացնելով այն խոստումներով, որ հաշվարքը կկատարվի Ալեքսանդրապոլում [1]։

Թուրքական զինվորական իշխանությունները հարկման էին ենթարկում նույնիսկ քաղաքի ազգաբնակչությանը՝ անշարժ գույքի 6 տոկոսի չափով [2]։ Կարսի, Ալեքսանդրապոլի, Ղարաքիլիսայի բնակիչները, որոնք թուրքերի կողմից կողոպտվել էին օկուպացիայի առաջին իսկ օրերին, ի վիճակի չէին այդ հարկը վճարելու։

Թուրքական զավթիչները պետական գանձարանի սեփականություն հայտարարեցին այն հայերի գույքը, որոնք մահից փրկվելու համար ստիպված էին եղել փախչել՝ լքելով իրենց ողջ ունեցվածքը։ Քանի որ այդպիսիք ճնշող մեծամասնություն էին կազմում, թուրքերը կարողացան սեփականացնել Հայաստանի քաղաքային բնակչությանը պատկանող հսկայական արժեքները։

Հայերի բնաջնջման քաղաքականությունը թուրքական ռազմական իշխանությունները իրականացնում էին նաև Ադրբեջանի գրավված շրջաններում։ Երբ 1918 թվականի սեպտեմբերի 15-ին թուրքական զորքերը ներխուժեցին Բաքու, որի մասին խոսվեք վերևում, նրանք անմիջապես ձեռնամուխ եղան զանգվածային թալանին ու բարբարոսական ոչնչացմանը. քանդվում-ավերվում էին մասնավոր բնակարանները, հիմնարկները, լաբորատորիաները, խանութները, դեղատները։

Նույնպիսի դաժանություն էին հանդես բերում թուրքական զորքերը նաև Ադրբեջանի գրավված մյուս շրջաններում։ Դրավելով Արեշի գավառի հայկական գյուղերը՝ Դավաուլուն, Քենդեքը, Մազուրդին, Արենիբազարը, Խալավաթը, թուրքերն ազգաբնակչությունից պահանջեցին անմիջապես մահմեդականություն ընդունել, սպառնալով, որ հրաժարվելու դեպքում նրանց բոլորին կգնդակահարեն։ Ականատեսի խոսքերով «Քենդեք, Մահմեդաբերդ ու Դավաուլու գյուղերի հայերը զզվանքով մերժեցին թուրքերի առաջարկը, իսկ Մազուրդի գյուղի հայերը, շրջապատված լինելով թուրքերի կողմից, ստիպված էին մահմեդականություն ընդունել։ Քենդեքցիները, գավաուլուեցիները և մահմեդաբերդցիները տուժեցին, որովհետև նրանք չէին ցանկանում անձնատուր լինել» [3]։ Հիշյալ գավա-

1 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 536, թ. 86։
2 Նույն տեղում, գ. 38, թ. 24։
3 Նույն տեղում, թ. 53—54։

ի հայ բնակիչների դիմումում նշվում էր, որ թուրքական զորքերի երևալուն պես, նրանք «սկսեցին սպանել ու սրի քաշել բացառապես բոլոր հայերին, կենդանի թողնելով միայն գեղեցիկ կանանց» [1]։

Հայկական այլ գյուղերում թուրքական զավթիչները ոչնչացրին երիտասարդությանը, իսկ մնացած բնակչությունը գերի տարան՝ նախապես ընտրելով գեղեցիկ կանանց ու աղջիկներին։ Այն հայերը, որոնք հասցրել էին թաքնվել լեռներում, զինված պայքար սկսեցին թուրք ջարդարարների դեմ։

1 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 140, թ. 129։

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ՁԱՎԹԻՉՆԵՐԻ ԴԵՄ

Անդրկովկասի աշխատավոր զանգվածները իրենց դառը փորձից համոզվեցին, որ թուրքական զավթիչների դուրս քշումը երկրամասի ազատագրման նախնական պայմանն է հանդիսանում նրանց գործակալությունից՝ մուսավաթականներից և ազգայնական մյուս կուսակցությունների՝ մենշևիկների ու դաշնակների տիրապետությունից։ Միայն այդ ճանապարհով Անդրկովկասի ժողովուրդները կարող էին հասնել սովետական իշխանության հաղթանակին ու Սովետական Ռուսաստանի հետ սերտ միավորմանը։

Միակ կուսակցությունը, որն Անդրկովկասի աշխատավորներին կոչ էր անում պայքարի ելնել թուրք-գերմանական զավթիչների դեմ, դա բոլշևիկյան կուսակցությունն էր։ Բոլշևիկները հետևողականորեն մերկացնում էին մուսավաթականների դավաճանական գործողությունները, ցույց տալիս, որ նրանք օտարերկրյա ինտերվենտների անմիջական գործակիցներն են։ Միաժամանակ, բոլշևիկները մերկացնում էին մենշևիկների ու դաշնակների կործանարար քաղաքականությունը, վեր հանում նրանց, ինչպես նաև մուսավաթականների հանցանքը Անդրկովկասի ժողովուրդներին բաժին ընկած բոլոր աղետներում ու դժբախտություններում։

ՌՍԴԲ(բ)Պ Կովկասյան երկրային կոմիտեի կողմից 1918 թվականի ապրիլի 13-ին ընթացիկ մոմենտի առթիվ ընդունված որոշման մեջ ասվում էր. «Թուրքական քայքայված իմպերիալիզմը հարձակման է անցել գերմանական իմպերիալիզմի հետ համաձայնության եկած։ Երկյուղելով, որ հեղափոխությունը կարող է տարածվել Թուրքիա, կարող է արձագանք գտնել տանջված, սովյալ ու մերկ թուրք ժողովրդի սրտերում, կարող է ազատագրել կեղեքված ու նրա լծի տակ տքնող ժողովուրդներին, թուրքական գիշատիչ փաշաները կենսականորեն շահագրգռված են ոչ միայն բեկական հակառևոլյուցիայի վերջնական հաղթանակում Անդրկովկասում, որն աջակցություն է գտնում ազգայնական կուսակցությունների՝ ներառյալ մենշևիկների կողմից, այլև Կովկասում սոցիալիստական հեղափոխական շարժումը կանգնեցնելու և Ռուսաստանի բանվորա-գյուղացիական հանրապետությունը ջախջախելու ու ոչնչացնելու մեջ։

Այդ գիշատիչները բեկական ավազակախմբերի հետ դաշինք կազմած ցանկանում են հրով ու սրով անցնել ամբողջ տարածությունը և թիկունքից հարձակվել ռուսաստանյան մեծ սոցիալիստական հեղափոխության վրա՝ ճակատը արևմտյան իմպերիալիզմի հետ միավորելու և սոցիալիզմը վերջնականապես խեղդելու համար» [1]։

Այսպիսով, բոլշևիկները թուրք-գերմանական ինտերվենցիան Անդրկովկասում դիտում էին որպես Սովետական Ռուսաստանը ջախջախելու ու վերացնելու իմպերիալիստական տերությունների ընդհանուր մտահղացման մի մասը։

ՌՍԴԲ(բ)Պ Կովկասյան երկրային կոմիտեն 1918 թվականի ապրիլի 18-ին դիմելով աշխատավոր զանգվածներին, կոչ էր անում բոլոր ուժերն ուղղել թուրքական նվաճողների դեմ. «Եկել է վճռական ժամը. առավել ուժեղ թշնամին կանգնել է Կովկասում սովետական իշխանության համար մղվող մեր պայքարի շեմքին։

Ընկերնե՛ր, բանվորնե՛ր, գյուղացինե՛ր ու զինվորնե՛ր, հեղափոխական պարտքի ու պատվի լրիվ գիտակցությամբ՝ բոլորս դիմենք զենքի։

Քարտեզի վրա է դրված բոլոր հեղափոխություններից մեծագույնի բախտը։ Մահ կամ հաղթանակ» [2]։

Անդրկովկասի աշխատավորների հիմնական զանգվածը գնում էր կոմունիստների ետևից, որոնք մերկացնում էին թուրք-գերմանական զավթիչների իսկական մտադրությունները։

Այդ օրերին Ա. Ի. Միկոյանը կանխատեսելով թուրք բարբարոսների ձեռնարկած արշավանքի աղետալի հետևանքները, գրում էր, որ «թուրքական արշավանքը դեպի Անդրկովկասի խորքը և նրա նվաճումը կհանգեցնի ոչ միայն սովետական կարգերի խոր-

1 «Бакинский рабочий», 14. IV. 1918, № 65.

2 ՍՄԿՊ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 2, թ. 28։

տակմանն ու սև, դաժան ռեակցիայի հաղթանակին, այլև երկրի վրայից կսրբի ամեն տեսակի կուլտուրայի բոլոր հետքերը և հիանալի Կովկասը կվերածվի մոխրի ու փլատակների։ Թուրքերի հաղթանակը Անդրկովկասի ժողովուրդներին մի քանի հարյուրամյակ ետ կշպրտի»[1]։

Օտարերկրյա ինտերվենտներին հակահարված տալու գործում հսկայական դեր խաղաց բոլշևիկների կողմից ղեկավարվող Բաքվի սովետը։ Նա լայն պրոպագանդա ծավալեց, ինչպես նշվեց վերևում, երկրամասի աշխատավորների շրջանում, որոնց կոչ էր անում պայքարի ելնել թուրքական նվաճողների դեմ։ Բաքվի սովետի նիստում 1918 թվականի հունիսի 7-ին ընդունված որոշման մեջ ասվում էր. «Լսելով Անդրկովկասում քաղաքական դրության վերաբերյալ զեկուցումը և Թիֆլիսից ստացված ռադիոհեռագիրը հաշտություն ստորագրելու մասին, և մենշևիկների ու դաշնակների համաձայնությունը թուրքական զորքերին թույլ տալ շարժվելու դեպի Բաքու, բանվորների, կարմիրբանակայինների, նավաստիների ու գյուղացիների պատգամավորների Բաքվի սովետը հաստատում է Անդրկովկասյան սեյմի հանցավոր քաղաքականության վերաբերյալ իր նախկին որոշումները և դատապարտում է որպես դավաճանների պպ. Չխեիձեին, Չխենկելուն, Քաջազնունուն և մյուսներին...

Բանվորների, կարմիրբանակայինների, նավաստիների ու գյուղացիների պատգամավորների Բաքվի սովետը իր հաստատուն համոզմունքն է հայտնում այն առթիվ, որ պրոլետարիատի միահամուռ աջակցության դեպքում մեր բանակին կհաջողվի ոչ միայն պաշտպանել Բաքու քաղաքը՝ հեղափոխության միակ օջախը մեր երկրամասում, այլև հաղթականորեն առաջ շարժվել և Անդրկովկասի ողջ պրոլետարիատի ու գյուղացիության հետ դաշինք կնքած երկրամասը փրկել ոչ միայն թուրքերի ու մուսավաթականների, այլև դավաճանական կուսակցությունների՝ Թիֆլիսի մենշևիկների ու դաշնակների լծից, Անդրկովկասում հաստատել սովետական իշխանություն և միավորվել հեղափոխական Ռուսաստանի հետ»[2]։

Բոլշևիկների ջանքերի շնորհիվ ամբողջ Անդրկովկասում ժողովրդական զանգվածները պայքարի էին ելնում ինտերվենտների դեմ։ «Կովկասի լեռներն ու ձորերը, դաշտերն ու մարգագետինները,— գրում էր Բաքվի «Տեղեկատու» թերթը,— կդառնան թուրքական ասքյարների ու գերմանական յունկերների գերեզմանը։

1 «Известия Бакинского Совета», 21. V. 1918, № 94.

2 «Бакинский рабочий», 9. VI. 1918, № 108.

Անդրկովկասի աշխատավորները զգոն են, նրանց կատաղությունը մեծ է, ատելությունը՝ անսահման։ Ուրեմն, լավ գիտցեք, որ ամեն մի պրոլետար, կին թե տղամարդ, ծեր թե պատանի, պատրաստ է մեռնելու իր ազատության համար...»[1]։

Օտարերկրյա զավթիչներին դիմադրություն ցույց տալու հիմնական եղանակը այդ շրջանում պարտիզանական պատերազմն էր։ Պարտիզանական ջոկատները անակնկալ հարձակումներով ոչնչացնում էին թշնամու պահեստները, սպառազինությունը, պարենի ամբարները, շարքից հանում երկաթուղագծերը, հարձակում գործում ռազմական կայազորների վրա, ոչնչացնում սպաներին ու զինվորներին։

Պարտիզանական պատերազմը լայն ծավալ գտավ Հայաստանում։ ՌԿ(բ)Պ Ալեքսանդրապոլի կոմիտեի դիմումի մեջ աշխատավորներին կոչ էր արվում մտնել կարմիր գվարդիայի շարքերը՝ թուրքական ինտերվենտների դեմ պայքարելու համար։ «Վրա է հասել վճռական ժամը,— ասված էր հիշյալ կոչում...— Հեղափոխական պարտքի ու պատվի լրիվ գիտակցությամբ մենք պետք է մեկնենք ճակատ»[2]։

«Ամենուրեք Կովկասում,— հաղորդում էր «Լյա վուա դը լ'Արմենի» ամսագիրը,— հայերը կազմակերպում են ջոկատներ՝ թուրքական զորքերի դեմ պայքարելու համար»[3]։

Բանվորների, զինվորների ու նավաստիների Բաքվի սովետի և Բաքվի գավառի մահմեդական գյուղացիության պատգամավորների համագումարի միացյալ հանդիսավոր նիստում սեյմի քաղաքականության և Անդրկովկասի դրության մասին 1918 թվականի մայիսի 29-ին արտասանած իր ճառում Ստ. Շահումյանն ընդգծում էր, որ Անդրկովկասյան սեյմի դավաճանական քաղաքականության հետևանքով ստեղծված կրիտիկական դրությունը «դրդում է հայ գյուղացիներին զենքը ձեռքին դուրս գալ ու տապալել իրենց անամոթ ղեկավարներին՝ դաշնակցականներին, որոնք խայտառակ կերպով դավաճանել են նրանց։ Նրանց ձեռքին կար մոտ 30 հազար հայ ճակատային զինվոր։ Այդ ուժով հրաշքներ կարելի էր գործել։ Ես էլ չեմ խոսում զինված գյուղացիության հսկայական մասսայի մասին, որը մենակ կարող էր հաշիվ տեսնել թե՛ թուրքերի և թե՛ Անդրկովկասի բոլոր կոնտրռևոլյուցիոն ուժերի հետ։ Եթե հայ գյու-

1 «Տեղեկատու», № 43, 1918։

2 ՍՄԿՊ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 752, թ. 1—2։

3 „La voix de l'Arménie„, 15.X. 1918, № 10, p. 354.

գացիների գլուխ անցած լինեին ոչ թե Չխենկելիից ու Ժորդանիայից ոչնչով չտարբերվող դավաճաններ, այլ իսկական ռևոլյուցիոներներ, ապա ժողովուրդը նման խայտառակ վիճակի չէր հասնի»[1],

Մերկացնելով դաշնակներին, որոնք փորձում էին արդարացնել իրենց կապիտուլյացիան Թուրքերի առջև, Շահումյանն ասում էր.

«...Օբյեկտիվ պայմաններն այնպես էին դասավորվել, որ Անդրկովկասում կար հսկայական զինված ուժ, որը պատրաստ էր դուրս գալու թույլ Թուրքիայի դեմ։ Միմիայն հայկական ուժերը բավական էին Թուրքերի հետ հաշիվ տեսնելու, սակայն դուք (դիմելով դաշնակներին—Ս. Ս.) մենշևիկների ու մուսավաթականների հետ կազմալուծեցիք զորքերի շարքերը, ոչ թե այն զորքերի, որոնք երեք տարվա պատերազմից հետո հաշտության էին ծարավի, այլ այն հայկական զորքերի, որոնք պատրաստ էին մեռնել և պահել իրենց երկիրը։ Դուք այլասերեցիք այդ զորքերը,— ահա թե ոքն է ձեր ոճրագործությունը»[2]։

Չնայած Հայաստանի գրաված շրջաններում Թուրքական զավթիչների կողմից հաստատված տեռորի ռեժիմին, հազարավոր մարդիկ թաքնվելով լեռներում ու անտառներում, անընդհատ հարձակումներ էին գործում թշնամու վրա և ջլատում նրա ուժերը։

Հայաստանի շատ վայրերում Թուրքական ջարդարարների գազանությունները ազգաբնակչության մեջ դիմադրության տարերային պոռթկումներ էին առաջ բերում։ Այսպես, Շիրվանջուկ գյուղում, երբ Թուրք զինվորները գյուղացիներից պահանջեցին անվճար մթերքներ տալ իրենց, նրանք այդ բանը կատարեցին։ Սակայն, երբ ասքյարները գյուղացիներից պահանջեցին իրենց հանձնել գեղեցիկ կանանց ու աղջիկներին, այդ հրամանը գյուղի բնակիչները վճռականորեն հրաժարվեցին կատարել։ Այն ժամանակ Թուրքական ասքյարները կրակ բացեցին գյուղացիների վրա, որին ի պատասխան վերջիններս զենք վերցրին և դիմելով պաշտպանության, սպանեցին Թուրքական 6 զինվոր։ Կենդանի մնացած ասքյարները փախան Ալեքսանդրապոլ և կատարվածի մասին տեղեկացրին զինվորական իշխանություններին։ Շիրվանջուկ ուղարկվեց պատժիչ արշավախումբ, որը կազմակերպված հակահարված ստացավ տեղի և մերձակա գյուղերի բնակիչների կողմից։ Թեժ մարտում երկու կողմից էլ մեծ թվով սպանվածներ ու վիրավորներ կային[3]։

Ալեքսանդրապոլում գտնվող Թուրքական իշխանություններին

1 Ս տ. Շ ա հ ու մ յ ա ն, Երկեր, հ. 3, էջ 224—225։

2 Նույն տեղում, էջ 229։

3 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 95, թ. 104։

կից դաշնակցական կառավարության ներկայացուցիչը հաղորդում էր, որ Ալեքսանդրապոլի շրջանից դաշնակցական զորքերի հեռանալուց հետո մի շարք գյուղերի երիտասարդությունը զենք էր վերցնում ու զինված դիմադրություն ցույց տալիս Թուրքական զավթիչներին[1]։

Ալեքսանդրապոլի շրջանի Թուրքական պարետ Մեհմեդ Թեջիրը իր գաղտնի հրամանում նշում էր, որ հայկական Արթիկ, Շիրվանջուկ, Մահիուջուկ գյուղերի բնակչությունը «զինվորական օրենքների ամենայն խստությամբ պատժվեց»՝ Թուրքական զորքերի դեմ զինված ելույթներ ունենալու համար։ Նա իր ենթականերից պահանջում էր ազգաբնակչությանը նորից տեղեկացնել այն մասին, որ Թուրքերի դեմ զենք բարձրացրած բոլոր գյուղերը անհապաղ կոչնչացվեն[2]։

Հայ գյուղացիների համառ պայքարի մասին վկայում էր ինքը՝ Կարաբեքիր-փաշան. «Ալեքսանդրապոլից դեպի հարավ, Շիրվանջուկի ու Մահմուդջուղի շրջաններում, գյուղական բնակչությունը, ոչնչացնելով Թուրքական պահեստները և սպանելով դրանք հսկող զինվորներին, զենքը ձեռքին անցավ սարերը»[3]։

Թուրքական զավթիչներին հայ ժողովուրդը հերոսական դիմադրություն ցույց տվեց Սարդարաբադի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի ճակատամարտերում։

1918 թվականի մայիսի 15-ին գրավելով Ալեքսանդրապոլը, Թուրքերը հավատացած էին, որ իրենց կհաջողվի մի քանի օրվա ընթացքում գրավել ողջ Հայաստանն ու Վրաստանը, քանի որ Ալեքսանդրապոլի անկումը վերջնականապես քայքայեց հայկական զորքերը, որոնք նույնիսկ չհետապնդվելով հակառակորդից, լքեցին իրենց շարքերը և անկարգ ամբոխով փախան թիկունք, թողնելով բոլոր ռազմամթերքների ու ուտելիքների պաշարները։

Հայկական կորպուսի հրամանատար գեներալ Նազարբեկովը կազմալուծված զորքերով, ինչպես նշվեց վերևում, նահանջեց դեպի Դիլիջան և այնտեղից հեռագրեց Թիֆլիս՝ հայկական Ազգային խորհրդին, որ իր տրամադրության տակ ընդամենը 300 զինվոր կա և ինքը գտնում է, որ այսուհետև Թուրքերին դիմադրելը անհնարին է և անիմաստ։

Նույն կարծիքին էր նաև Երևանի զորաբաժնի հրամանատար

1 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 38, թ. 85—95։

2 Նույն տեղում, թ. 126։

3 K a r a b e k i r P a ş a, Birinci Kafkas Kolordusunun 334 senesindeki harekâti ve meşhudatı hakkında general Harbord riyasetindeki Amerika heyetine takdim edilen rapor süreti, Erzurum, 1335 (1919), s. 9.

գեներալ Սիլիկյանը։ Նա Ազգային խորհրդին ուղղած իր հեռագրում նշելով Երևանի զորաբաժնի ողբերգական դրության մասին, շեշտում էր, որ զորքերին ղեկավարելը այլևս անհնարին է դառնում։ Դրությունն այնպիսին է, որ պետք է անհապաղ վերջնական հաշտություն կնքել թշնամու հետ [1]։

Նույն տեսակետին էին նաև հայկական Ազգային խորհուրդը ու նրա ներկայացուցիչները Բաթումի կոնֆերանսում և դաշնակցական պարտիայի ղեկավարությունը։ Այդ մասին է վկայում դաշնակցական պարտիայի պարագլուխներից մեկը՝ Սիմոն Վրացյանը։ «Դիմադրությունը,— գրում է նա,— շատերին թվում էր անհնար և անիմաստ։ Հաղթության վստահություն չէին ներշնչում և մինչև այդ բանակից հասնող տեղեկությունները. զորավար Սիլիկյանի հաղորդագրությունները մռայլ գույներով էին ներկայացնում զորամասերի դիմադրական կարողությունը» [2]։

Եվ բոլորովին պատահական էր դաշնակցական պարագլուխների համար (որոնք հրաժարվել էին դիմադրելու թշնամու առաջխաղացմանը դեպի Երևան), երբ հանկարծ կատարվեց «Սարդարաբադի հրաշքը», ինչպես Վրացյանը [3] անվանում է Սարդարաբադի հերոսամարտը։

Վրացյանը ստիպված է ընդունել, որ այդ «հրաշքը» կատարվեց դաշնակների համար անսպասելի կերպով։ «...Կատարվում է հրաշքը՝,— գրում է նա,— մեկը այն հրաշքներից, որոնք գալիս են բոլորովին չսպասված և փրկում անհույս համարված կացությունը... Եվ Արարատյան դաշտի ժողովուրդը մի մարդու պես ոտքի է կանգնում» [4]։

Ակամայից հարց է ծագում, եթե ժողովուրդն էր մի մարդու պես ոտքի ելել թուրք զավթիչների դեմ, այն դեպքում, երբ նրա ղեկավարները՝ դաշնակցականները հաշտվել էին Երևանը թշնամուն հանձնելու մտքի հետ, ապա ինչո՞ւմն էր կայանում դաշնակցական պարագլուխների դերը Սարդարաբադի, Բաշ-Ապարանի, Ղարաքիլիսայի ժողովրդական հերոսամարտերում, որոնք նրանք վերագրում էին իրենց, որպես ժողովրդի «առաջնորդների»։ Դիմենք փաստերին։

Թուրքական զորքերը Ալեքսանդրապոլը գրավելուց հետո հա-

1 Տե՛ս ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 121, ց. 1, գ. 35, թ. 1—14։

2 Ս. Վ ր ա ց ե ա ն, Հայաստանի հանրապետությունը, Փարիզ, 1928 թ., էջ 118։

3 Տե՛ս Վրացեան, նույն տեղում, և նրա առաջնորդող հոդվածը՝ «Սարդարաբադի հրաշքը»՝ «Հուսաբեր» թերթի 1962 թվականի հունիսի 5-ի համարում։

4 Ս. Վ ր ա ց ե ա ն, նշված գիրքը, էջ 118։

ժոզված լինելով, որ իրենք այլևս լուրջ դիմադրության չեն հանդիպի, առաջ էին շարժվում երեք ուղղություններով՝ Ալեքսանդրապոլ—Երևան, Ալեքսանդրապոլ—Ղարաքիլիսա—Թիֆլիս և Ղարաքիլիսա—Դիլիջան—Ղազախ—Գյանջա—Բաքու։

Հարձակվելով Երևանի ուղղությամբ, թուրքական զորքերը երկաթուղու ընթացքով մայիսի 21—22-ին գրոհեցին Սարդարաբադի վրա։ Հայկական զորքերը դիմեցին նահանջի, համարելով, որ այլևս թուրքերի առաջխաղացումը դեպի Երևան անհնարին է կանխել։ Մայիսի 21-ի մարտերում սպանված թուրք սպայի գրպանում գտած հրամանից երևում էր, որ Սարդարաբադի շրջանում գրոհի է անցել 108-րդ թուրքական հետևազորային գունդը՝ բաղկացած 3 հազար ասքյարներից [1]։

Դաշնակցական զորքերի փախուստի և թուրքերի սրընթաց հարձակման այդ օրհասական պահին, իրենց հայրենիքի և Երևանի պաշտպանության համար տարերայնորեն ոտքի ելավ Երևանի և շրջակա գյուղերի ողջ հայ բնակչությունը։ Զինվելով ինչով հնարավոր էր, նրանք, զորամասերի հետ միասին, Սարդարաբադի տակ անցան հակագրոհի, որը թուրք ջարդարարների համար բոլորովին անսպասելի էր։ Այդ ժողովրդական հերոսամարտի շնորհիվ, մայիսի 23—24-ին, թվով գերազանցող թուրք զավթիչները ետ շպրտվեցին Սարդարաբադից [2]։

Ժողովրդական զանգվածների հանդես բերած հերոսության ու տոկունության շնորհիվ Երևանն ու նրան հարող շրջանները փրկվեցին թուրքական զավթիչների արյունոտ լծի տակ ընկնելու վտանգից։

Ֆրանսիացի կապիտան Պուադեբարը, նկարագրելով Սարդարաբադի հերոսամարտը, նշում է, որ հայկական զորամասերը այնպիսի ուժով գրոհեցին թուրքերի վրա, որ կատարելապես ջախջախեցին նրանց և հետապնդեցին մինչև Ալեքսանդրապոլի բարձունքները [3]։

Սարդարաբադի հաղթանակը ամենուրեք ընդհանուր ոգևորություն առաջ բերեց։ Երևանում ազգաբնակչությունը հանուն հայրենիքի փրկության ամեն ինչ զոհաբերում էր։ Կանայք ուտելիք, ծրխախոտ, վիրակապեր էին պատրաստում։ Թիկունքից սայլերով ռազմամթերք էին հասցնում ռազմադաշտ։ «Դասալիքները ինքնակամ ներկայանում և զորքի մեջ էին մտնում։ Մեծ քանակությամբ

1 Տե՛ս ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 121, ց. 1, գ. 35, թ. 1—14։

2 Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 132, թ. 940—941։

3 Poiddebard, p. 223.

կամավորներ են գրվում և գնում ճակատ։ Զորքի տրամադրությունը բարձր է»[1]։

Մայիսի 26-ի հաղորդման մեջ գեներալ Սիլիկյանը շեշտում է, որ «Դիլիջանում ժողովրդի և գաղթականության տրամադրությունը փոխվում է դեպի լավը։ Զորքն ու ժողովուրդը պատրաստակամություն են հայտնում կռվել և պաշտպանել իրենց իրավունքները։ Ղազախում ծեր զինվորներն ու գյուղացիներն անգամ զորամասեր են կազմում ու պատրաստվում են կռվելու»[2]։

Սարդարաբադում տարած ժողովրդական փայլուն հաղթանակից հետո միայն Նազարբեկյանը Դիլիջանից մայիսի 26-ին դիմեց «Ի լուր համայն հայության» կոչով, որում նա արդեն ոչ թե պահանջում էր անհապաղ հաշտություն կնքել թշնամու հետ, այլ, ոգևորված ժողովրդի համառ պայքարից, նշում էր, որ «Երևանի քաջարի զորամասը, վանելով հակառակորդի հարձակումները, ինքը դիմեց առաջխաղացման և երկօրյա կռվի մեջ ետ շպրտեց թուրքերին ու ներկայումս հետապնդում է նրանց։

Երևանի զորամասի հաջողությունը ոգևորել է Ալեքսանդրապոլի զորաբաժնի զինվորներին, որոնք արագությամբ վերադարձան ճակատ մի ցանկությամբ՝ հաղթել կամ մեռնել»[3]։

Սարդարաբադի հերոսական հաղթանակը ընդհանուր ոգևորություն առաջ բերեց Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի ուղղություններում։

Թուրքական հրամանատարությունը Սարդարաբադի թեժ կռվի ժամանակ՝ մայիսի 23-ին 36-րդ դիվիզիայի ողջ մարտական կազմը ուղղեց Բաշ-Ապարանի գծի վրա, փորձելով Երևանի վրա գրոհել նրա հյուսիսից և դուրս գալ Սարդարաբադի շրջանում հակահարձակման անցած հայկական զորամասերի թիկունքը՝ կտրելով նրանց Երևանից։ Թուրքական զորքերի այդ մտադրությունը խափանելու համար Սարդարաբադի ճակատից շտապ կերպով ուժեր տեղափոխեցին Բաշ-Ապարանի ճակատ, ուր կատաղի մարտերը շարունակվեցին մինչև մայիսի 29-ը։ Թուրքական զավթիչները զբաղեցրեցին ջարդվեցին և ետ շպրտվեցին դեպի Դյուզբյանդ գյուղը՝ Բաշ-Ապարանից արևմուտք[4]։ Կռվի դաշտում թշնամին թողեց 200 դիակ, և բավականին զենք ու զինամթերք։ «Զորքի տրամադրությունը,—

1 «Մշակ» 26(13) մայիսի, 1918, № 96, գեներալ Սիլիկովի հաղորդումից։ Տե՛ս նաև «Бакинский рабочий», 9. VI. 1918, № 96.

2 «Հորիզոն», 1918 թ. մայիսի 26։

3 «Մշակ», 1918 թ. մայիսի 28(15), № 97։

4 Տե՛ս Gen. Korganoff, p. 169.

հաղորդում էր Սիլիկովը,— գերազանցորեն բարձր է, ներկայումս զորքերը բռնում են ուժեղ դիրք։ Դասալիքները մասսայաբար իրենց հրացաններով ու փամփուշտներով վերադառնում են ռազմաճակատ»[1]։

Բնակչությունը քայքայված բանակի զինվորների ու սպաների հետ միասին Ղարաքիլիսայի տակ մայիսի 25-ից 28-ը տևած արյունահեղ մարտերում կարողացավ կասեցնել թուրքական զավթիչների գրոհը նաև այդ ուղղությամբ։ Մայիսի 28-ին ամբողջ ճակատի վրա թուրքական զորքերը խուճապի մատնված նահանջում էին՝ ռազմադաշտում թողնելով մեծ թվով սպանվածներ և զինամթերք։

Պրոֆ. Լեոն իր հուշերում անդրադառնալով Սարդարաբադի և Ղարաքիլիսայի ճակատամարտերին, գրում է, որ թուրքերի հարձակման հետևանքով Երևանի համար ստեղծված «կրիտիկական ռոպեին ժողովրդական երկու գրոհ հասկացնում էին չափ ու սահման կորցրած օսմանցիներին, թե նրանք այնքան էլ ամենակարող չեն այս փոքրիկ ազգությունների մեջ (խոսքը հայերի և վրացիների մասին է— Ե. Ս.)։ Մի գրոհը սկսվում է Երևանից և նրա շրջակա գյուղերից տարերային հոսանքով դեպի Սարդարաբադ, ուր թուրք զորքերը ջարդվում են և ետ քաշվում։ Մյուս գրոհը Դիլիջանից է սկսվում։ Ալեքսանդրապոլից նահանջած մի քանի թնդանոթաձիգ հաց օֆիցերներ փորձում են դիմել ղազախեցի քաջարի գյուղացիներին, որոնք տաքանալով խրախուսանքներից, լավայի պես դիմում են դեպի Ղարաքիլիսա, նույնիսկ առանց զենքի, ճանապարհին իրենց հետ քշելով-տանելով պատահած գյուղերը։ Իսկ հրացաններ և փամփուշտներ նրանք գտնում էին Կարսի և Ալեքսանդրապոլի փոխբստականների սայլերում», որոնք «լցրել էին Փամբակի ձորը։ Կազմվելով ու կազմակերպվելով իբրև զորք՝ օֆիցերների ղեկավարության տակ, այդ բազմությունը մի ճակատամարտ է տալիս օսմանյան բանակին, որը տևում է երեք օր»[2]։

Թուրքական ինտերվենտների դեմ ոտքի ելան նաև Փամբակի, Դիլիջանի ու Ղազախի գավառների գյուղացիները, որոնց միացան Կարսից, Ալեքսանդրապոլից և Արևմտյան Հայաստանից գաղթած հայերի մի մասը։ Երևանի, Բաշ-Ապարանի, Ղարաքիլիսայի և Դիլիջանի շրջանների բնակչության և այդ շրջաններում կուտակված գաղթականների ընդհանուր թիվը հասնում էր մինչև 500 հազարի։ Մարդկային այս հոծ զանգվածին կործանում էր սպառնում, եթե

1 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 121, ց. 1, գ. 35, թթ. 1—14։ Տե՛ս նաև «Бакинский рабочий», № 109 (225), 10. VI. 1918.

2 Լեո, Անցյալից, էջ 399—400։

Թուրքերին հաջողվեր գրավել Փամբակն ու Ղարաքիլիսան, որտեղ կենտրոնացել էր գաղթականների հիմնական մասը։

«Մշակ» թերթը հետևյալ կերպ էր նկարագրում Ղարաքիլիսայի տակ տեղի ունեցած դեպքերը. «Ղարաքիլիսայի ու շրջակա գյուղերի գյուղացիները տեղեկանալով այն մասին, որ Թուրքերը ցանկանում են հարձակվել Ղարաքիլիսայի վրա, բոլորը, ինչպես մեկ մարդ, որոշեցին զոհվել, բայց անձնատուր չլինել։ Մնացած հայ զինվորները, միանալով տեղի գյուղացիների հետ, բոլոր միջոցները ձեռք առան թշնամուն կանգնեցնելու համար։ Մարտական զորամասերի մեջ մտան նույնիսկ ծերերն ու անչափահասները...»[1]։ «Տրամադրությունն այն աստիճան բարձր էր, որ մարտիկները կռվի էին գնում երգելով»[2]։ Հակառակորդի տրամադրության տակ կային 10 հազար զինվոր, 70 թնդանոթ ու 40 գնդացիր։ Հայկական զորախմբերը հաշվում էին 7 հազար զինվոր՝ ընդամենը 10 թնդանոթով և 20 գնդացրով[3]։ Տարերայնորեն կազմակերպված այդ զորախմբերը մեծ հաջողությամբ ետ էին մղում Ջավադ-բեյի հրամանատարության տակ գտնվող թուրքական զորքերի գերազանցող ուժերի կատաղի հարձակումները։ Այնուհետև, անցնելով հարձակման, հայկական զորքերը հակառակորդին Ղարաքիլիսայից ետ շպրտեցին։

Ղարաքիլիսայի հերոսամարտի մասին Բաթումի բանակցությունների ժամանակ Կովկասում թուրքական զորքերի հրամանատար Վեհիբ-փաշան ինչ-որ առիթով խոստովանեց, որ թուրքերը մեծ կորուստներ տվին այդ ճակատամարտում։ «Դա բացառիկ ճակատամարտ էր այս պատերազմի պատմության մեջ,— ասաց Վեհիբ-փաշան։ Ղարաքիլիսայի տակ հայերը ցույց տվեցին, որ նրանք կարող են աշխարհի լավագույն զինվորները լինել»[4], իսկ Կարաբեքիր-փաշան այդ ճակատամարտի մասին գրում էր հետևյալը. «Մայիսի 26-ին 2-րդ կորպուսի 11-րդ դիվիզիան հաջողություն չունեցավ Ղարաքիլիսայի շրջանում, որտեղ հայերը ավելի ուժեղ գտնվեցին։ Թուրքական դիվիզիան չորս կիլոմետր նահանջեց և այդ նահանջի ժամանակ հարձակման ենթարկվեց կացիններով զինված գյուղացիների կողմից»[5]։

Բերված փաստերը ցույց են տալիս, որ Սարդարաբադում,

1 «Մշակ», 1918 թ., № 104։
2 Նույն տեղում, № 94։
3 Տե՛ս «Кавказское слово», № 108, 1918 г.
4 Տե՛ս ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 11, թ. 63։
5 Karabekir Paşa, s. 9.

Բաշ-Ապարանում և Ղարաքիլիսայում թուրք ջարդարարների դեմ էր դուրս եկել հայ ժողովուրդը՝ գյուղացիությունը, քաղաքի բնակչությունը, բանակի զինվորները, սպաները։ Հայ ժողովրդի պայքարին ակտիվ մասնակցում էին նաև ճակատում մնացած ռուսական բանակի զորամասերը։ Թուրք զավթիչների դեմ մղած պայքարում առաջին դիրքերում էին գտնվում հայ կոմունիստները և սպարտակեաները։ Սարդարաբադի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի հերոսամարտերը հայ ժողովրդական զանգվածների համառ կամքի և հաղթելու կարողության փայլուն դրսևորումն էին, մի բան, որին բոլորովին չէին սպասում ո՛չ դաշնակցական պարտիայի պարագլուխները, ո՛չ Ազգային խորհուրդը և ո՛չ էլ Բանակի գլխավոր հրամանատարությունը։

Հայ ժողովրդական զանգվածների տարած հաղթանակի մասին տեղյակ չէր Բաթումում հայկական պատվիրակությունը, որը շտապում էր պայմանագիր կնքել Թուրքերի հետ։ Թուրք պատվիրակությունը, որը քաջ տեղյակ էր Հայաստանում իրենց զորքերի կրած պարտություններին, ջանում էր որքան կարելի է շուտ պայմանագիր կնքել, որպեսզի կասեցներ հայերի առաջխաղացումը դեպի Ալեքսանդրապոլ և Կարս։

Թուրքական զորքերին հասցրած պարտությունն այնքան ծանր էր, որ հետագայում Վեհիբ-փաշան խոստովանել էր, որ «կպատրաստվեինք ետ քաշվել, լքել Ալեքսանդրապոլը, նույնիսկ Կարսը, հայ ժողովրդի դիմադրության առաջ»[1]։

Երևանի զորամասերի ընդհանուր հրամանատար Սիլիկյանը մայիսի 29-ին հայ ժողովրդին դիմեց կոչով, ուր նա նշում էր, որ հայերի ջախջախիչ հարվածներից Թուրք զորքերը ամբողջ ճակատով նահանջում են և հայկական զորամասերի սրբազան խնդիրն է շարունակել հետապնդել թշնամուն, ազատագրել Ալեքսանդրապոլն ու Կարսը և այդ դեպքում միայն Թուրքերի հետ բանակցության մեջ մտնել՝ հաշտություն կնքելու համար։

Հաղթանակի այդ պայմաններում Սարդարաբադի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի հերոսները, ետ մղելով թշնամու պատահական հարձակումները, հետապնդում էին նրան Ալեքսանդրապոլի ուղղությամբ։ Սակայն հայկական զորամասերի առաջխաղացումը խափանվեց դաշնակցական պարագլուխների կողմից Բաթումում Թուրքական պատվիրակության հետ հունիսի 4-ին ստորագրված ստրկացուցիչ պայմանագրով։ Ռազմաճակատի այդ լարված պա-

1 Տե՛ս Մ. Ավետյան, Հուշամատյան զոր. Անդրանիկ, Փարիզ, 1954 թ., էջ 193։

հին Դիլիջանից ստացվեց Նազարբեկյանի հեռագիրը Բաթումում կնքած հաշտության մասին, որի համաձայն հայկական զորամասերը պետք է ետ քաշվեին ոչ միայն այն տերիտորիաներից, որ նրանք ազատագրել էին հերոսական մարտերի օրերին, այլև այն, որոնք թուրքերի կողմից երբեք գրավված չէին եղել, ինչպես Ղամարլուն, Երևանի և Էջմիածնի շրջանների որոշ մասերը։ Բացի այդ, Բաթումի պայմանագրի 5-րդ հոդվածի համաձայն, թուրք ջարդարարների կողմից հռչակված «անկախ» հայկական հանրապետության կառավարությունը պարտավորվել էր «գործուն կերպով հակազդել, որպեսզի ոչ մի բանդա չկազմավորվի և չգինվի իր տերիտորիայի սահմաններում, ինչպես և՝ զինաթափել և ցրել բոլոր բանդաները, որոնք կփորձեն թաքնվել այնտեղ»[1]։

Թուրքերի հետ պայմանագրի կնքման լուրը խոր զայրույթ առաջ բերեց ամբողջ ճակատում և թիկունքում։ Ռազմաճակատից զինվորները իրենց բողոքի ձայնն էին բարձրացնում Բաթումի պայմանագրի կնքման դեմ։ «Աշխատանք» թերթի հունիսի 8-ի համարում «Գործող բանակեն» հաղորդման մեջ ասված է. «Իմանալով հաշտության կնքման մասին, մենք միաձայնությամբ կհայտարարենք.— ո՛չ Թիֆլիսը, ո՛չ ալ Բաթումը լիազորված չեն հաշտու անունեն վերջնական բանակցություն վարելու թուրքերու հետ։ Հաշտության պայմանների կատարումը ամոթալի և ստորացուցիչ են հայերու համար։ Ինչ եղրակացության ալ որ հանգեն այս կամ այն ազգային կազմակերպությունները, քանի դեռ հայ ժողովրդի ֆիզիկական գոյությանը կսպառնա ահավոր վտանգը, մենք զենքը չենք թողներ և կկռվենք մինչև մեր արյան վերջին կաթիլը։ Կորչի ամոթալի հաշտությունը»։

Այդ օրերին Երևանում Ազգային խորհրդի շենքի առջև տեղի էին ունենում քաղաքի և շրջակա գյուղերից եկած գյուղացիների ցույցեր, որտեղ ցուցարարները պահանջում էին չճանաչել Բաթումի պայմանագիրը և շարունակել պայքարը թուրք զավթիչների դեմ։ Սակայն, դաշնակ պարագլուխները, հակառակ թուրքական նվաճողների դեմ ոտքի ելած ժողովրդի պահանջին՝ շարունակել պայքարը, կարգադրեցին զենքը վայր դնել և ընդունել Բաթումում թուրքերի կողմից թելադրված պայմանները։

Չնայած պատմական փաստերի իրողությանը, դաշնակ պարագլուխներից Ս. Վրացյանը մեզ ծանոթ աշխատության մեջ հանրահայտ փաստերը նենգափոխելու միջոցով փորձում է «հաստատել» դաշնակցականների Բաթումում կնքված պայմանագրին մեղսակից չլինելը։ Վրացյանը, նշելով, թե ինչ հուսահատություն առաջ բերեց Երևանում ու բանակի մեջ պայմանագրի կնքման լուրը, գրում է. «Ազգային խորհուրդն ալեկոծվում էր... ոմանք առաջարկում էին հաշտվել կացորեն և ընդունել Բաթումի դաշնագրի պայմանները, ուրիշները—գլխավորապես, դաշնակցականները—պահանջում էին չեղյալ համարել զոր. Նազարբեկյանի հեռագիրը հաշտության մասին, զորքի ընդհանուր հրամանատար նշանակել զոր. Սիլիկյանին և շարունակել պայքարը»[1]։

Ակամայից հարց է ծագում, իսկ ովքե՞ր էին Սարդարաբադի հերոսամարտի օրերին Բաթումում բանակցություններ վարում թուրք ջարդարարների հետ և ովքե՞ր ստորագրեցին այդ ստրկացուցիչ պայմանագիրը։ Երկար որոնումների մեջ չընկնենք, նշենք միայն պայմանագրի տակ եղած ստորագրությունները՝ Ա. Խատիսով, Ռ. Քաջազնունի և Մ. Բաբաջանով։ Իսկ ո՞ւմ թելադրանքով նրանք ստորագրեցին այդ պայմանագիրը, եթե ոչ Թիֆլիսի ազգային խորհրդի, որի ղեկավարությունը նույնպես գտնվում էր դաշնակցականների ձեռքում։ Վրացյանը փորձում է դաշնակցականների պարագլուխներից վերցնել Բաթումի խայտառակ պայմանագրի կնքման պատասխանատվությունը[2] և իրենց գործունեությանը վերագրել Սարդարաբադի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի ժողովրդական հերոսամարտերը։

Բայց ինչպես ասում են, փաստերը համառ բաներ են, և Վրացյանը ու նրա նմանները որքան էլ ուզենան, նրանց չի հաջողվի խեղաթյուրել պատմական իրողությունը, հանրահայտ դեպքերը, որոնց մասնակիցներից շատերը դեռ կենդանի են և չեն մոռացել նույն Վրացյանի կառավարության կողմից 1920 թվականի դեկտեմբերի 2-ին Ալեքսանդրապոլում քեմալական զավթիչների հետ է՛լ ավելի ստրկացուցիչ պայմանագրի կնքումը։ Եվ այդ այն պահին, երբ Վրացյանի կառավարությունը տապալվել և նոյեմբերի

1 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 11, թթ. 99—100։

1 Ս. Վ ր ա ց ե ա ն, նշվ. աշխ., էջ 122։

2 Վրացյանը իր «Սարդարաբադի հրաշքը» հոդվածում, որը գրել է հրթի հրատարակելուց մոտ 35 տարի հետո, «մոռացել է», որ 1928 թվականին հրատարակած «Հայաստանի հանրապետությունը» գրքում փորձել էր դաշնակցական ղեկավարներին դուրս բերել որպես Բաթումի պայմանագրի կնքման հակառակորդների։ Նա հիշյալ հոդվածում, հակասելով իր գրքում առաջ քաշած թեզին, փաստորեն արդարացնում է պայմանագրի կնքումը։ «Բաթումում,— գրում է նա,— ստորագրված էր հաշտության դաշնագիր Օսմանյան կայսրության և Հայաստանի հանրապետության միջև։ Պետք էր վար դնել զենքերը... մոխիրների և տառապանքի միջից ծնունդ էր առնում Մանուկ Հայաստանը։ Փոքր, հյուծված, «անձև քաոսի և ավերակների կույտ», բայց Հայաստանի հանրապետություն» (ընդգծումները Վրացյանինն է)։ («Հուսաբեր», 5 հունիսի 1962 թ.)։

29-ին արդեն Հայաստանում հաղթանակել էին սովետական կարգերը և Վրացյանի կառավարությունը այն տապալելու համար Հայաստանը դրեց քեմալականների արյունոտ կրնկի տակ, որի մասին կխոսենք սույն աշխատության եզրափակման բաժնում։

Չնայած դաշնակցական ղեկավարների կապիտուլյանտական քաղաքականությանը, հայ ժողովրդի հերոսական դիմադրությունը թուրքական հրամանատարությանը ստիպեց հրաժարվել Երևանի գրավման մտադրությունից և Բաքվի վրա արշավելու համար ժամանակավորապես դադարեցնել զորքերի փոխադրումը Ալեքսանդրապոլ—Ջուլֆա երկաթուղով։ Հայ ժողովրդի հերոսական պայքարը թուրք զավթիչների դեմ Սարդարաբադում, Բաշ-Ապարանում և Ղարաքիլիսայում իր բնույթով ազգային-ազատագրական համաժողովրդական պայքար էր։

Թուրքական զավթիչները ստիպված էին էական փոփոխություններ մտցնել Հայաստանի նվաճման իրենց ծրագրի մեջ։

Այդ հարցի վերաբերյալ Թուրքիայի կառավարական շրջաններում ուժեղ վիճաբանություններ առաջ եկան։ Հաշվի առնելով այն, որ հայերը ավելի համառ դիմադրություն կարող են ցույց տալ, որոշ մինիստրներ առաջարկում էին հրաժարվել հարձակողական հետագա գործողություններից Հայաստանում։ Նրանք առաջին հերթին անհրաժեշտ էին համարում գրավել Բաքուն, տապալել այնտեղ սովետական իշխանությունը և Կովկասում իրագործել իրենց պանթուրքական պլանները։ Նրանց թվում էր, որ Ադրբեջանը նվաճելուց հետո Հայաստանի մնացած շրջանների գրավումը կապված չի լինի առանձին դժվարությունների հետ։ «Մենք հայերին մատների վրա կխաղացնենք այնքան ժամանակ, քանի դեռ մեզ զինվորներ են հարկավոր ճակատի համար,— ասում էր Վեհիբ-փաշան,— իսկ հետո քրդերի ու թաթարների օգնությամբ նրանց կստիպենք խեղդվել այն տոպրակում, որի մեջ նրանք նստած են»[1]։ «Տոպրակի» տակ Վեհիբ-փաշան հասկանում էր փոքրիկ Հայաստանը, որի «անկախությունը», երիտթուրքական պարագլուխների համաձայնությամբ, դաշնակների կողմից հռչակվեց 1918 թվականի մայիսի 28-ին՝ Բաթումի կոնֆերանսի ժամանակ։

Երիտթուրքերի համաձայնությունը՝ ստեղծելու «ինքնուրույն» Հայաստան, ինչպես տեսնում ենք, հարկադրված քայլ էր, որին նրանք ստիպված էին դիմել՝ հանդիպելով հայ ժողովրդի կատաղի հակահարվածին։ «Անկախության» հռչակումը սոսկ տակտիկական մի մանևր էր, որի օգնությամբ Էնվերը հույս ուներ մոտիկ ապագայում թուրքերի համար դյուրացնել Հայաստանի մնացած մասի նվաճումը[1]։

Բաթումի համաձայնագրի ստորագրման ժամանակ թուրքական պատվիրակության ղեկավար Խալիլ-բեյը հայտարարեց. «Օսմանյան կայսերական կառավարությունը մեծ հանգստությամբ էր իշխում իր զգացմունքների վրա և հանձնարարեց ինձ ստորագրել հայկական կառավարության գոյությունը ճանաչող փաստաթուղթը»[2]։

Դաշնակցական ղեկավարները, որոնք վաղուց էին երազում հայկական «անկախ» պետության տերը դառնալ, ցնծությամբ ընդունեցին թուրք ջարդարարների այդ «առատաձեռնությունը»։ Դաշնակցական պատվիրակության նախագահ Խատիսովը խանդավառված էր այն մտքից, որ Հայաստանը դառնում է «անկախ» պետություն, իսկ ինքը՝ նրա բախտը տնօրինողներից մեկը։ Իր պատասխան ճառում Խատիսովը ասաց. «Այսօր հայերը ազգային ինքնուրույն գոյության իրավունք նվաճեցին և անկախ պետությունների ընտանիքի մեջ մտան... այդ մեծ օրը հանդիսավոր մի տարեթիվ է հայերի պատմության մեջ։ Մենք ցանկանում ենք, որպեսզի օսմանյան կայսրության ու հայկական հանրապետության միջև հաստատվի կայուն խաղաղություն և հավիտենական բարեկամություն...»[3]։

Դաշնակցական ղեկավարները սողում էին երիտթուրքական գործիչների առջև։ Ստամբուլում դաշնակների ներկայացուցիչ՝ Ա. Ահարոնյանը 1918 թվականի սեպտեմբերի 6-ի նամակում իր կառավարությանը խորհուրդ էր տալիս ամեն հնարավոր բան անել երկու երկրների միջև «բարեկամական հարաբերություններ» պահպանելու համար, միաժամանակ ընդգծելով, որ «հայ ժողովուրդը երբեք չպետք է մոռանա այն մասին, որ օսմանյան կառավարության մոտ է ծագել անկախ Հայաստանի ստեղծման գաղափարը և նա ինքն է ճանաչել նրան»[4]։ Միաժամանակ Ահարոնյանը պահանջում էր ամենախիստ միջոցները ձեռք առնել այդ ժամանակ բռնկ-

1 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 11, թ. 79։

1 Այդ բանը անուղղակի կերպով հաստատում են Էնվերի այն խոսքերը, որ նա ասել էր 1918 թվականին Ստամբուլում դաշնակցական կառավարության ներկայացուցիչներին. «Թուրքական մինիստրները 2 շաբաթ մտածում էին՝ ստեղծել թե՞ չստեղծել Հայաստան և, վերջապես, որոշեցին ստեղծել, որովհետև այդպես ավելի ձեռնտու էր ինչպես հայերին, այնպես էլ թուրքերին»։ «Զանգ», 1918, № 58 (74)։

2 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 74, թ. 40—41։

3 Նույն տեղում։

4 Նույն տեղում, գ. 35, թ. 34։

ված հայկական ապստամբությունները լիկվիդացնելու համար, որովհետև թուրքական կառավարությունը հաճախ բողոքում էր այդ բանի դեմ[1]։

Ստամբուլից Երևան ուղարկված իրենց մի այլ հաղորդման մեջ Ահարոնյանն ու Խատիսովը գրում էին այն մասին, որ թուրքերը բողոքել են Անդրանիկի կողմից գլխավորվող հայկական կամավորական ջոկատների[2] գործողությունների դեմ։ Դաշնակցական պարագլուխները պահանջում էին անհապաղ դադարեցնել հակաթուրքական ելույթները[3]։

Սակայն բոլոր այդ միջոցառումները ի վիճակի չէին կասեցնելու ժողովրդական զանգվածների հերոսական դիմադրությունը թուրքական զավթիչներին։ Հետևելով Սարդարաբադի, Բաշ-Ապարանի ու Ղարաքիլիսայի հերոս պաշտպանների օրինակին, Հայաստանի աշխատավորները շարունակում էին պարտիզանական պայքար մղել՝ հսկայական վնասներ հասցնելով թուրքական զավթիչներին։

Թուրքական օկուպացիոն զորքերի հրամանատարությունը, հենվելով Թուրքիայի ու Հայաստանի միջև Բաթումում կնքված հաշտության պայմանագրի 5-րդ հոդվածի վրա, դաշնակցական կառավարությունից ու դաշնակցական բանակի հրամանատար գեներալ Նազարբեկովից պահանջում էր հայերի զինաթափում և պարտիզանական ջոկատների (որոնց երիտթուրքերը անվանում էին «հրոսակներ») մարտական գործողությունների դադարեցում[4]։

Այսպես, Քյազիմ Կարաբեքիր-փաշան դաշնակներին բողոք էր ներկայացրել այն առթիվ, որ չնայած մինչև Ջուլֆա գնացող երկաթուղին թուրքերին է տրամադրվել, Աղամզալու, Իմամշալու և Քյուլչիսարա գյուղերի գյուղացիները անընդհատ գնդակոծում էին այդ երկաթուղագիծը հսկող հեծելազորային թուրքական խմբի զինվորներին։

Էնվեր-փաշան Լոսովի անունով ուղարկված հեռագրում հաղորդում էր, որ «Երևանի գծի վրա մինչև այժմ գործում են հրոսակախմբեր, որոնք խանգարում են թուրքական առաջխաղացմանը դեպի Ջուլֆա»[5]։

1918 թվականի հունիսին Քյազիմ Կարաբեքիր-փաշան Ալեքսանդրապոլում բողոքում էր դաշնակցական կառավարության ներկայացուցիչներին. «Երևանից դեպի հարավ հայերը հարձակումներ են գործել մեր զորքերի վրա, որոնց հետևանքով զոհվել են մեր բանակի հսկայական թվով զինվորներ ու սպաներ»[1]։ Այդ նույն ժամանակ արված մի այլ հայտարարության մեջ նա դաշնակներին մատնանշում էր հետևյալը. «Հունիսի 5-ի առավոտյան հայկական զինված ուժերը, որոնց կազմում կային 80 հեծելազորայիններ ու 400 հետևակ զինվորներ՝ մեկ ղնդացրով, հարձակում գործեցին Սարդարաբադի մոտ՝ Գեչերլուում գտնվող մեր զորքերի վրա»[2]։

Դաշնակներին ուղղված 1918 թվականի հուլիսի 10-ի իր դիմումի մեջ Քյազիմ Կարաբեքիրը նշում էր, որ թուրքական զորքերը, շարժվելով դեմարկացիոն գծի երկայնքով, տեղական ազգաբնակչության կողմից համառ դիմադրության են հանդիպում[3]։ Նա դաշնակցական բանակի հրամանատար Նազարբեկովին տեղեկացնում էր, որ Ղամարլուի ու Շախթախթիի միջև ընկած շրջանում զինված հայերը հարձակում գործելով թուրքական հետախույզների վրա, նրանց լրիվ զինաթափ էին արել[4]։

Պարտիզանական ջոկատները պայթեցնում էին երկաթգծի կամուրջներն ու երկաթուղու պաստառները, զառիվայրից գլորում թուրքական էշելոնները։ Դաշնակներին ուղղած բողոքում Քյազիմ Կարաբեքիր-փաշան գրում էր. «Ջուլֆայի կողմն ուղարկված օսմանյան գնացքի Նախիջևան հասնելու օրը լսվում էին պայթյուններ երկաթգծից դեպի հարավ ու արևմուտք ընկած ուղղությամբ։ Հետաքննությունից պարզվեց, որ երկաթուղու ճանապարհին ընկած բոլոր կամուրջները պայթեցված են»[5]։

Թուրքական հրամանատարության հաղորդման համաձայն, հունիսի 17-ին էջմիածին կայարանի շրջակայքում երևացին հայկական զինված ջոկատներ, որոնք հրաձգություն սկսեցին[6]։ Այդ նույն ժամանակ Համամլու գյուղի բնակիչները զինված հարձակում գործեցին թուրքական հեծելազորային էսկադրոնի վրա։ Մարտի ընթացքում սպանվեցին մեկ սպա և 23 հեծյալներ։

Ղամարլուի շրջանի բնակչությունը հրաժարվեց կատարել զենքը հանձնելու և Բաթումի պայմանագրի համաձայն Թուրքիային անցած տերիտորիան մաքրելու թուրքական հրամանատարության

1 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 74, թ. 17։

2 Այդ ջոկատները 1914—1918 թվականների պատերազմի ժամանակ ռուսական բանակի կազմում կռվում էին կովկասյան ճակատում։

3 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 35, թ. 17։

4 Նույն տեղում, գ. 20, թ. 160։

5 Նույն տեղում, գ. 53a, թ. 113։

1 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 20, թ. 74։

2 Նույն տեղում, թ. 152։

3 Նույն տեղում, թ. 48։

4 Նույն տեղում, գ. 14, թ. 93։

5 Նույն տեղում, թ. 131։

6 Նույն տեղում, թ. 163։

պահանջը, չնայած այն պարտադրանքին, որ չհնազանդվելու դեպքում բոլոր հայկական գյուղերը կոչնչացվեն [1]։

Հունիսի 28—29-ին ապստամբվեցին Սարդարաբադի ու Ալեքսանդրապոլի միջև ընկած գյուղերի բնակիչները։ Հարձակվելով թուրքական պահեստների պահակախմբի վրա, նրանք սպանեցին բոլորին և ոչնչացրին պահեստները։ Հայ գյուղացիները հաճախ հարձակումներ էին գործում Բաշ-Ապարանի ու Էջմիածնի շրջաններում գտնվող թուրքական զորքերի վրա [2]։

Անգլիական «Դեյլի տելեգրաֆ» թերթը 1918 թվականի հոկտեմբերի 7-ին հաղորդում էր, որ Հայաստանում բռնկված պարտիզանական պատերազմի բոցը կաշկանդել է թուրքական զորքերի խոշոր ուժեր, որոնք կարող էին օգտագործվել մյուս ռազմաճակատներում։

Բերված փաստերը վկայում են այն մասին, որ հայ ժողովրդական զանգվածները, հակառակ դաշնակցական կառավարության կամքին, չէին ընդունում Բաթումի ստրկացուցիչ պայմանագիրը և հանուն հայրենիքի ազատագրման պայքար էին մղում թուրք զավթիչների դեմ։

Ժողովրդի դժգոհությունը դաշնակների քաղաքականությունից, թուրքական ինտերվենտների առջև նրանց ստորաքարշությունից, չէր կարող բացասաբար չանդրադառնալ դաշնակցական բանակի մարտունակության վրա։ Բանակն արագ կերպով քայքայվում էր, նրա շարքերը լքող զինվորները կազմում էին պարտիզանական ջոկատներ և գյուղացիական ջոկատների հետ միասին շարունակում էին պայքարը թուրք գաղութարարների դեմ։ Այդ կապակցությամբ թուրքական զորքերի հրամանատար Էսադ-բեյը 1918 թվականի հունիսի 3-ին դաշնակցական կառավարությանը բողոք ներկայացրեց, որտեղ նշվում էր, որ երբ երիտթուրքական զորամասերը Բաթումի պայմանագրի հիման վրա փորձեցին գրավել Նախիջևանը, Ջուլֆան, Ուլուխանլուն ու Ղամարլուն, նրանք ենթարկվեցին հայ ապստամբական ջոկատների հարձակմանը՝ կրելով մեծ կորուստներ [3]։ Մի փոքր ավելի ուշ Էսադ-բեյը հատուկ գրություն ուղարկեց դաշնակցական զորքերի հրամանատար Նազարբեկովին այն կապակցությամբ, որ հունիսի 14-ին հայ պարտիզանները Ուլուխանլուից դեպի հարավ հարձակվել էին թուրքական ջոկատի վրա և սպանել 22 ասքյարի [4]։ Հայ ժողովրդի պայքարը թուրքական

1 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 20, թ. 173։
2 Նույն տեղում, գ. 627, թ. 40։
3 Նույն տեղում, գ. 79, թ. 60։
4 Նույն տեղում, գ. 33, թ. 5։

զավթիչների դեմ այնպիսի լայն թափ ստացավ, որ այդ մասին ստիպված էին գրել նույնիսկ թուրքական թերթերը։ Այսպես, Ստամբուլում լույս տեսնող «Թանին» թերթը 1918 թվականի հունիսի 1-ին հաղորդում էր, որ «հայերի հրոսակախմբերը... կռվում են թուրքական զորքերի դեմ։ Այդ հրոսակախմբերը, զինված լինելով հրանոթներով ու գնդացիրներով, գործում են Երևանի, Ելիզավետպոլի, Բաքվի ու Շիրվանի շրջաններում» [1]։

Թուրք ջարդարարների դեմ մղված հերոսական պայքարի պատմության մեջ վառ էջ գրեցին Լոռվա շրջանի գյուղացիական զանգվածները։ Այդ շրջանում հայտարարվեց բոլոր տղամարդկանց զինակոչ՝ թուրքերի դեմ պայքարելու համար։ 1918 թվականի մայիսի 22-ին Ջալալօղլիում կայացավ հիշյալ շրջանի հայկական բոլոր գյուղերի ներկայացուցիչների արտակարգ ժողով, որտեղ որոշում ընդունվեց կռվել մինչև վերջին ուժերը։

Մայիսի 24-ի լուսաբացին Ջալալօղլուի ու Ջիբուխլու գյուղի միջև ճակատամարտ սկսվեց թուրքական զորքերի ու հիշյալ ջոկատների միջև։ Թուրքերը ստիպված էին նահանջել, սակայն դաշնակցական զորքերի նահանջը Համամլուից ու Ղարաքիլիսայից թուրքական հրամանատարությանը հնարավորություն տվեց ազատ մնացած ուժերը կենտրոնացնել Ջալալօղլուի վրա և մայիսի 26-ի առավոտյան ապստամբներին ետ մղել։ «Մտնելով Ջալալօղլի,— գրում էր ականատեսներից մեկը,— թուրքերը գնդակահարեցին բոլոր այն տղամարդկանց, որոնք չէին հասցրել հեռանալ գյուղից... Թուրքերը ավերեցին իրենց ճանապարհին ընկած հայկական Յարմսախլու, Բզովդալ, Ղշլաղ, Դարաբազ և այլ հայկական գյուղերը, հրկիզելով դրանք և սրի քաշելով բնակիչներին» [2]։

Կովկասյան բոլշևիկների ականավոր ղեկավարներից մեկը՝ Ֆ. Կ. Օրջոնիկիձեն, որը հսկայական ջանքեր գործադրեց հայ ժողովրդին վերջնական կործանումից փրկելու համար, 1918 թվականի հոկտեմբերի 12-ին հեռագրում էր Լենինին. «Հայաստանի գրությունը ողբերգական է. Երևանի նահանգի երկու գավառների մի պատառ տարածության վրա կուտակվել են 600 հազար գաղթականներ, որոնք զանգվածներով մեռնում են սովից ու խոլերայից։ Դրված գավառներում թուրքերը սրի են քաշել բնակչության կեսին։ Բնակչությունը համառ դիմադրություն է ցույց տալիս (ընդ-

1 Մեջ է բերվում ըստ „La voix de l'Arme'nie", № 13—14, 1918, p 498—499.
2 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 20, թ. 131։

գծումը մերն է— Ե. Ս.)։ Հայ ազգաբնակչությունը օգնություն է սպասում Սովետական Ռուսաստանից»[1]։

Սովետական Ռուսաստանը Անդրկովկասից անջատված էր օտարերկրյա ինտերվենտների ու սպիտակգվարդիականների խիտ մի օղակով։ Ուստի և Անդրկովկասի ժողովուրդներին օգնություն ցույց տալու համար Սովետական Ռուսաստանի կառավարությունը ստիպված էր դիմելու դիվանագիտական ներգործության միջոցներին։

Կայսերական Գերմանիայի կառավարությանն ուղղված Սովետական Ռուսաստանի կառավարության 1918 թվականի ապրիլի 12-ի բողոքի նոտայում մատնանշվում էր, որ թուրքական զորքերի հարձակումը կովկասյան ռազմաճակատում ուղեկցվում է հայ ազգաբնակչության զանգվածային կոտորածներով ու նրա գույքի կողոպտումով։ «Այն պայմանագիրը, որ մենք ստիպված էինք ստորագրել Բրեստում,— ասվում էր հիշյալ նոտայում,— Արդահանի, Կարսի ու Բաթումի նահանգների ազգաբնակչությանն էր թողնում որոշելու հիշյալ նահանգների բնակչության ճակատագիրը։ Այդ նահանգներում տեղի ունեցած դեպքերը վկայում են, որ տասնյակ տարիների ընթացքում կիրառվող հայ ժողովրդի բնաջնջման քաղաքականությունը շարունակվում է և ներկայումս...

Թուրքական զորքերի կողմից այժմ գրավված մարզերում հայ ազգաբնակչության նկատմամբ կիրառվող սարսափների պատասխանատվությունը ընկնում է գերմանական կառավարության վրա, որի ուղղակի օգնության շնորհիվ Թուրքիան իր ձեռքում պահեց այդ մարզերը»[2]։

Սովետական կառավարությունը միաժամանակ միջոցներ էր ձեռք առնում թուրքական զավթիչների դեմ հայ ժողովրդի մղած պայքարում նրան ուղղակի աջակցություն ցույց տալու համար։ Սովետական մարմինները օժանդակում էին Ռուսաստանի տարբեր շրջաններում բնակվող հայերից կամավորական ջոկատներ ստեղծելու գործին։ Այդ ջոկատները զանազան ճանապարհներով փոխադրվում էին Հայաստան։ Ազգությունների ժողովրդական կոմիսարիատի հատուկ դեկրետով սովետական բոլոր կազմակերպությունների վրա պարտականություն էր դրվում խոչընդոտներ չհարուցել հայկական կամավորների առաջ շարժվելուն, որոնք կոչված էին պաշտպանել իրենց հայրենիքը թուրքական կեղեքիչներից[3]։

1 Орджоникидзе Г. К., Статьи и речи, т. I, М., 1956, стр. 45.

2 «Документы внешней политики СССР», т. I, № 127.

3 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. Հայաստանի գործերի կոմիսարիատի Սարատովի բաժանմունք, ց. 6, թ. 1։

Այդ ջոկատների կազմում կային նաև ռուս կարմիրգվարդիական կամավորներ[1]։

Հայկական կամավորական ու պարտիզանական ջոկատների հետ միասին թուրքական զորքերի դեմ կռվում էին նաև զորացրված բազմաթիվ ռուս կամավորներ՝ կովկասյան բանակի անձնակազմի նախկին մարտիկներն ու հրամանատարները։ Այսպես, Կարսի տակ հերոսաբար մարտնչում էր գնդապետ Եֆրեմովի ռուսական կամավորական ջոկատը[2]։

Թիֆլիսի «Զարյա Ռոսսիի» թերթը 1918 թվականի հունիսին գրում էր, որ 250 սովետական զինվորներ օգնեցին հայերին Նախիջևանի շրջակայքում ջախջախելու թուրքական ջոկատին[3]։

Հայ ժողովրդի զինված պայքարը, որն աջակցություն էր գտնում Սովետական Ռուսաստանի կողմից, հսկայական վնասներ հասցրեց թուրքական զավթիչներին։ Այդ պայքարը միաժամանակ ուղղված էր Հայաստանի դաշնակ կառավարողների դեմ, որոնց անհեռատես քաղաքականության հետևանքով Հայաստանի մեծ մասն ընկավ թուրք գիշատիչների լծի տակ։

***

Թուրքական ինտերվենտների դեմ համառ պայքար էին մղում նաև Ադրբեջանի աշխատավոր զանգվածները։

«Ադրբեջանում,— գրում էր «Իզվեստիա» թերթը,— թուրքական ռեժիմը, որը վերականգնել էր սուլթանի ամենավատթար կարգերը, առաջ էր բերում թաթարների ապստամբություն՝ կառավարության ու թուրքերի դեմ»[4]։ Ադրբեջանի գրեթե բոլոր շրջաններում պարտիզանական շարժում էր ծավալվում թուրքական զավթիչների ու նրանց գործակալների՝ մուսավաթականների դեմ։ Այդ պայքարն առանձնապես լայն թափ ստացավ Գյանջայի գավառում Զեղամի, Դոլյարի ու Թոուզի շրջաններում։ Ոստիկանական պրիստավը 1918 թվականի նոյեմբերին Զեղամից հաղորդում էր, որ բազմաթիվ գյուղացիներ համաձայնվել են աջակցություն ցույց տալ պարտիզաններին։ Նրանց օգնության եկան Դոլյարից 40-ից

1 «Известия Совта рабочих, красноармейских,, матросских и крестьянских депутатов Бакинского района», 1918, № 112.

2 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 45, գ. 42, թ. 27—37։

3 ЦГАОР, ф. 1318, оп. 1, д. 619, л. 17.

4 «Известия», 15.X.1918.

ավելի գյուղացիներ՝ զենքը ձեռքներին։ Պրիստավի վկայությամբ, իր տեղամասի ամբողջ տարածության վրա «ապստամբության էին նախապատրաստվում և գաղտնի կերպով զինված ջոկատներ ստեղծվում» [1]։

Թուրքական զավթիչներին ու մուսավաթական իշխանություններին մահացու վախ էր պատճառել պարտիզանական այն ջոկատը, որը գլխավորում էր ադրբեջանական ժողովրդի փառապանծ հերոս Քերբալայ Ասքերը։ Հիշյալ ջոկատը գործում էր Գյանջայի գավառում։ Գյանջայի գավառապետը նախազգուշացնում էր նահանգապետին, որ եթե շտապ միջոցներ ձեռք չառնվեն՝ Քերբալայ Ասքերի ջոկատը ոչնչացնելու համար, ապա «նրա հեղինակությունն ու ժողովրդականությունը զանգվածների մեջ, նրա ազդեցությունը բնակչության վրա կաճեն ահռելի չափերով»։ Վախենալով տեղական ազգաբնակչության միահամուռ ապստամբությունից, գավառապետը խնդրում էր նահանգապետից օգնության համար դիմել Նուրի-փաշային՝ որպեսզի վերջինս հրդեհի առաջ գալն ու վերահաս աղետը կանխելու համար նրա տրամադրության տակ լայն լիազորություններով օժտված ռազմական մի ջոկատ ուղարկի՝ Քերբալայ Ասքերին ոչնչացնելու համար» [2]։

Ադրբեջանի բնակչության մեջ ուժեղ զայրույթ առաջ բերեց տեղական երիտասարդության հարկադիր զինակոչը թուրքական բանակի շարքերը։ Այդ կապակցությամբ մեծ հուզումներ առաջ եկան [3]։ Զինակոչիկները չէին ենթարկվում հրամանին և աշխատում էին ամեն կերպ խուսափել բանակ կանչվելուց։

Թուրքական զավթիչների գործողությունները 1918 թվականի սեպտեմբերի վերջին բուռն ելույթների հանգեցրին Գյանջայի ազգաբնակչության շրջանում։ Շատ զինակոչիկներ թուրքական ռազմական իշխանություններից թաքնվում էին անտառներում։

Զաքաթալայի նահանգապետի հաղորդման համաձայն, մթերքների բռնագանձումը, հարկադիր զինակոչը և անասելի ծանր հարկերը ծայրահեղ դժգոհություն էին առաջ բերել ազգաբնակչության մեջ։ Գյուղացիական ելույթները կանխելու համար նահանգապետին հաջողվեց հասնել այն բանին, որ Նուրի-փաշան թուրքական զորքեր ուղարկեց՝ «կարգ ու կանոն հաստատելու համար»։ Այնուհետև հաղորդման մեջ ասվում էր, որ թուրքական սպաների

1 Մեջ է բերվում ըստ Токаржевский, Е. А., стр. 202.

2 ЦГАОР Аз. ССР, ф. 894, оп. 2, д. 9, л. 255. Այս փաստաթուղթը օգտագործված է նաև Տոկարժևսկու կողմից։ Տե՛ս էջ 174։

3 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 536, թ. 283։

ինքնակամ գործողությունները, նրանց կողմից գյուղացիներին նյութական մեծ վնասներ հասցնելը, ինչպես նաև «ասքյարներ հավաքագրելու ընթացքում սպաների կողմից վերին աստիճանի կտրուկ միջոցների կիրառումը, հանգեցրին այն բանին, որ կատաղած բնակչության մի մասը պատրաստվում էր հարձակվել ամրոցի վրա, զրավել այն և զինաթափ անելով թուրքական ասքյարներին, վրեժ լուծել սպաներից»։ Երբ դեկտեմբերի սկզբին թուրքական զորքերը «ստեղծված ռազմական հանգամանքներից ելնելով» թողեցին Զաքաթալան, բնակչությունը հարձակվեց թալանված մթերքներով ու զույգով բեռնված թուրքական գումակի վրա։ Նույն այդ նահանգապետի վկայությամբ, «թուրքերը իրենց համար վերին աստիճանի աննպաստ տպավորություն թողեցին» [1]։

Թուրքական զավթիչների դեմ պայքարում էր նաև Ադրբեջանի հայ ազգաբնակչությունը։ Այն տեղերում, ուր հայերին հաջողվել էր փրկվել բնաջնջումից, նրանք պարտիզանական պայքար էին մղում թուրքական զորքերի դեմ։ Արեշի ու Նուխայի հրեշավոր ջարդերի ժամանակ փրկված հայերը, փախչելով լեռները, ապստամբական գործողություններ սկսեցին՝ մեծ վնաս հասցնելով թուրքերին [2]։ Նուխայի գավառի հայկական գյուղերում հայտակարգով ստեղծում էին ապստամբական ջոկատներ, որոնք կատաղի դիմադրություն էին ցույց տալիս թուրքերի ու մուսավաթականների կամայականություններին [3]։ Այդ ջոկատների մեջ էին մտնում նաև Բաքվից ու Դյանջայից փախած հայերը [4]։

Թուրքական զավթիչներին ու նրանց մուսավաթական գործակալներին առավել համառ դիմադրություն ցույց տվեց Ղարաբաղի բնակչությունը, որտեղ հայերը մեծամասնություն էին կազմում։ Ղարաբաղ մտած թուրքական դիվիզիայի հրամանատար Ջավադ Ջամիլ-բեյը բնակչությունից պահանջեց ճանաչել թուրքական իշխանությունը՝ սպառնալով ոչնչացնել բոլոր այն գյուղերը, որոնք չեն ենթարկվի թուրքերին։ Այդ վերջնագիրը ամենուրեք մերժվեց։ Բնակչությունը չվախեցավ լավ զինված թշնամու թվական գերակշռությունից և միահամուռ կերպով ոտքի ելավ պայքարի։ Թուրքական զորքերը ստիպված էին մարտով վերցնել ամեն մի բնակելի կետ [5]։ Սկսվեց Ղարաբաղի հայ գյուղացիության փառապանծ էպոպեան թուրքական նվաճողների դեմ։

1 ЦГАОР Аз. ССР, ф. 82с, оп. 2, д. 39, л. 53.

2 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 71, թ. 38։

3 Նույն տեղում, գ. 95, թ. 24։

4 Նույն տեղում, գ. 217, թ. 15։

5 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 251, թ. 94—95։

Այդ իրադարձությունների կապակցությամբ Ջավանշիրի գավառի հարյուրավոր գյուղացիներ հետագայում վկայում էին. «Երբ սեպտեմբերին թուրքական զորքերը շարժվեցին Շուշու վրա, մենք միահամուռ կերպով որոշեցինք կռվել մինչև արյան վերջին կաթիլը, ոչ մի պատրվակի տակ չզինաթափվել, անձնատուր չլինել բարբարոսներին, որոնք գլխովին բնաջնջում էին իրենց ձեռքն ընկած հայերին՝ հաշվի չառնելով ոչ սեռը, ոչ էլ տարիքը, կողոպտելով նրանց ունեցվածքը, ավերելով մշակութային օջախները, դրանք կրակի մատնելով...» [1]։

Ծավալված մարտերի ընթացքում թուրքերին հաջողվեց ընկճել հայերի անջատ-անջատ ջոկատների դիմադրությունը և գրավել Ասքերանի շրջանի հայկական ութ գյուղեր։ Այնուհետև թուրքական զորքերը սեպտեմբերի 25-ին ներխուժեցին Շուշի։ Քաղաքի գրավումն ուղեկցվում էր զանգվածային կոտորածներով։ «Հաստատվեց մի այնպիսի ռեժիմ,— գրում էր ականատեսներից մեկը,— որը ստիպում էր երազել Նիկոլայի ժամանակների ռեժիմի ամենամռայլ օրերի մասին։ Յուրաքանչյուր փողոցի վրա կախաղաններ էին պատրաստել։ Հայ բնակիչները տեռորի էին ենթարկված» [2]։

Թուրքական հրամանատարությունը ձգտում էր թշնամություն սերմանել Ադրբեջանում բնակվող հայերի ու տեղի մահմեդական ազգաբնակչության միջև։ Առանձին դեպքերում այդ բանը նրան հաջողվում էր, սակայն ադրբեջանական գյուղացիության հիմնական զանգվածը չենթարկվեց թուրքական զավթիչների ու մուսավաթականների պրովոկացիաներին և անձնազոհ կերպով օգնում էր իր հարևան հայերին։ Ղարաբաղի հայերի 7-րդ համագումարի նախագահը, նկարագրելով թուրքական ներխուժումը, ընդգծում էր, որ «սովյալ հայկական Ղարաբաղը մահից փրկվեց հարևան թաթարների շնորհիվ, որոնք, ուշադրություն չդարձնելով տնտեսական բոյկոտին, փաշաների իշխանության կողմից կիրառող պատիժներին ու տուգանքներին, գիշեր-ցերեկ հաց էին կրում և վաճառում այն հայերին՝ հաճախ նրանց ապառիկ վաճառելով կամ անվճար տալով»։ Խոսելով այնուհետև Շուշիում տեղի ունեցած իրադարձությունների մասին, նա մատնանշում էր, որ «ադրբեջանցիները գրանցում մասնակցություն չունեցան»։ Նրա խոսքերով, այդ փաստը վկայում էր այն մասին, որ «ժողովրդական զանգվածների մեջ ազգային խոր հակամարտություն գոյություն չունի» [3]։

1 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 251, թ. 22—23։
2 Նույն տեղում, գ. 70, թ. 46։
3 Նույն տեղում, գ. 251, թ. 94—96։

Շուշու անկումը չբարոյալքեց հայ ապստամբներին, որոնք շարունակում էին խոչընդոտել թուրքերին՝ ներթափանցելու դեպի մարզի խորքը։ Մարդակերտ գյուղի մոտ տեղի ունեցած համառ ճակատամարտում հայկական ջոկատները ջարդեցին թուրքերին և ստիպեցին նրանց նահանջել՝ դրանով իսկ խանգարելով թուրքական զորքերին ամբողջովին գրավել Ղարաբաղը [1]։

Հետաքրքրական է նշել, որ Ղարաբաղի դեպքերը Նուրի-փաշային ստիպեցին Ադրբեջանի հայերին ուղղված հատուկ կոչ հրապարակել, որտեղ Նուրի-փաշան նրանցից պահանջում էր դադարեցնել պայքարը և միաժամանակ բողոքում, որ զինված հայկական ջոկատները Ղազախի գավառի սահմանի վրա պարտիզանական պատերազմ են մղում այդտեղով անցնող թուրքական զորքերի էշելոնների դեմ [2]։

Այդ շրջանում մուսավաթականների ու օտարերկրյա ինտերվենտների դեմ Ադրբեջանում ծավալված ժողովրդական զանգվածների մղած պայքարի մասին Գ. Կ. Օրջոնիկիձեն գրում էր. «Թուրքական ռեժիմը, որի հովանավորության ներքո վերականգնվել են սուլթանի ժամանակվա ամենավատթար կարգերը, առաջ բերեց թաթարների ապստամբություն կառավարության ու թուրքերի դեմ» [3]։

***

Վրաստանի գրավված շրջաններում ևս թուրքական զավթիչները գաղութարարական-ոստիկանական ռեժիմ հաստատեցին։

Կովկասյան մամուլը զետեղում էր հոդվածներ, որոնցում նկարագրվում էին թուրքական զավթիչների անկարգությունները։ Այսպես, «Տիֆլիսսկի լիստոկ» թերթը 1918 թվականի հունիսի 27-ին գրում էր. «Թուրքական զորքերի հեռանալուց հետո Օգուրգեթը իրենից ներկայացնում է ամբողջովին ավերված մի տեսարան։ Այն քաղաքացիները, որոնք աստիճանաբար վերադառնում են իրենց հարազատ օջախները, տեղում գտնում են իրենց տների միայն մերկ պատերը։ Եգիպտացորենի պաշարները, տնային կահ-կարասին, թոչուններն ու այն ամենը, ինչ որ թողնվել էր թուրքերի հարձակման ժամանակ, ոչնչացվել է... իրենից որևէ արժեք ներկայացնող ամեն բան արտահանվել է կամ ոչնչացվել... կողոպտված է միլիո-

1 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 251, թ. 31։ Տե՛ս նաև «Азербайджан», 17. XII. 1918, № 62։
2 «Азербайджан», 19.IX.1918, № 2.
3 ЦГАОР, ф. 130, д. 569, л. 36.

նի հասնող գույքը, այդ թվում և Զվանիի պետական թեյի պլանտացիայի անշարժ ողջ գույքը...»։ Մի այլ թերթ՝ «Սաքարթվելոս ռեսպուբլիկան» 1918 թվականի սեպտեմբերի 8-ին հաղորդում էր, որ «գյուղերը սարսափելի վիճակում են գտնվում. թուրքերը բռնի կեպով վերցնում են ալյուրը, հացահատիկը, գարին, յուղը, պանիրը»՝ բնակչությանը տառացիորեն ոչինչ չթողնելով։

Վրաստանի աշխատավորները բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավարությամբ համառ պայքար էին մղում թուրքական զավթիչների և, միաժամանակ, մենշևիկյան կառավարողների դեմ. Արևմտյան Անդրկովկասի ՌԿ(բ)Պ կոմիտեի կոչում (1918 թ. ապրիլ) մատնանշվում էր, որ «Թուրքիայի ներխուժումը իրենից ներկայացնում է արտաքին կոնտրռևոլյուցիայի հարձակումը հեղափոխական Ռուսաստանի վրա՝ բանվորների ու գյուղացիների նկատմամբ տապալված դասակարգերի իշխանությունը վերականգնելու նպատակով։ Դա նշանակում է փոքր ազգերի կլանումը ուժեղների կողմից...»։ Կոմիտեն կոչ էր անում «այնտեղ, որտեղ հնարավոր է, վճռական պայքար մղել և այդ պայքարը հաջողությամբ կպսակվի, եթե մենք պարտության մատնենք ներքին կոնտրռևոլյուցիային, որն անհամբերությամբ է սպասում թուրքերի գալուն...»[1]։

«Ամբողջ Վրաստանում բարձրանում է հեղափոխական շարժման ալիքը,— ասված էր Բաքվի կոմունայի ռազմածովային գործերի ժողովրդական կոմիսար Կորգանովի հրամանում։—Վրացական գյուղացիները, զգալով թուրքական սվինների կողմից վերջնականապես ստրկացվելու վտանգը, արդեն հասկացել են, որ մենշևիկները կործանում են բանվորա-գյուղացիական հեղափոխության գործը»[2]։

«Պրավդա» թերթը հաղորդում է, որ հուլիսի 13-ին Աբխազիայի Գուդաուտի շրջանում խոշոր ապստամբություն բռնկվեց, որն ուղղված էր թուրքական նվաճողների ու վրացական իշխանների դեմ։ Թուրքական ջոկատը զինաթափ արվեց ապստամբների կողմից։ Կարճ ժամանակվա ընթացքում ապստամբությունը տարածվեց Բորչալուի գավառում, Հարավային Օսեթիայում ու Գորիի շրջանում։ Մցխեթից մինչև Կազբեկ գյուղն ընկած ողջ ճանապարհը գրավված էր ապստամբ գյուղացիների կողմից։ Հուլիսի 20-ին բռնկվեց Գուշեթի գյուղացիների խոշոր ապստամբությունը։ Գյուղացիներին հաջողվեց ետ շպրտել թուրքական ու մենշևիկյան զորքերին[3]։

1 ЦГАОР Груз. ССР, ф. 13, д. 8, л. 9.
2 Նույն տեղում, թ. 12։
3 «Правда», 18.VII.1918, № 148.

1918 թվականի թուրքական արշավանքի մասնակից գնդապետ Իյուշյուն ստիպված էր խոստովանել, որ Վրաստանի ազգաբնակությունը թշնամաբար էր վերաբերվում թուրքական զորքերին[1]։

Այդ ժամանակ Վրաստան ներխուժած գերմանական զորքերը ևս իրենց կողմից գրավված շրջաններում հաստատեցին այնպիսի կարգեր, որոնք շատ քիչ բանով էին տարբերվում թուրքական ռեժիմից։ Գերմանական ինտերվենցիային նպաստեցին հենց իրենք՝ վրացական մենշևիկները, որոնք տակավին 1917 թվականի վերջին գերմանական ռազմամոլների հետ գաղտնի բանակցություններ էին վարում Անդրկովկասը Սովետական Ռուսաստանից անջատելու և Վրաստանի նկատմամբ Գերմանիայի խնամակալությունը հաստատելու վերաբերյալ։

Վրաստանում գնալով աճող հեղափոխական շարժումը սպառնում էր տապալել մենշևիկների տիրապետությունը, ուստի և վերջիններս իրենց իշխանությունն ամրապնդելու նպատակով 1918 թվականին նորից փորձեցին նախապես ստանալ գերմանական իմպերիալիստների աջակցությունը։

Բաթումի կոնֆերանսի ժամանակ Վրացական ազգային խորհուրդը 1918 թվականի մայիսի 14-ին դիմեց գերմանական պատվիրակության ղեկավար Լոսովին, նրանից խնդրելով օգնություն ցույց տալ «ներքին կարգ ու կանոնը հաստատելու և անարխիայի դեմ պայքարելու համար»[2]։ Լյուդենդորֆը ողջունեց գերմանական խնամակալություն հաստատելու հարցով մենշևիկների դիմումը։ Նրա խոսքերով, «մենշևիկները գերմանացիներին հնարավորություն էին տալիս Թուրքիայից անկախ իրենց ձեռքը գցել կովկասյան հումքը և ազդեցություն ունենալ Թիֆլիսով անցնող երկաթուղու շահագործման վրա»[3]։

Ինչպես արդեն նշվեց, գերմանացիները դեպի Անդրկովկաս էին ձգտում գլխավորապես ստրատեգիական հումքին և, առաջին հերթին, Բաքվի նավթին տիրանալու համար։ Սակայն հենց այստեղ նրանց ցանկությունները բախվեցին թուրքերի հակազդեցությանը, որոնք իրենք էին ձգտում միանձնյա տիրապետություն հաստատել Անդրկովկասում։ Այդ կապակցությամբ Լյուդենդորֆը գրում էր. «Որ մենք... չէինք կարող հենվել Թուրքիայի վրա, այդ բանը մի անգամ ևս նա հաստատեց իր վարվելակերպով՝ Բաթումում։ Նա իր ձեռքը գցեց բոլոր հայտնաբերված մթերքները։ Բաքվի նավթը մենք

1 Miralay Rüştü, s. 19.
2 ЦГАОР Груз. ССР, ф. 153, л. 67.
3 Людендорф, т. 2, стр. 188.

կարող էինք ստանալ միայն այն դեպքում, եթե մենք հույս դնեինք միայն մեր սեփական ուժերի վրա»[1]։ Այստեղից երևում է, որ գերմանական զորքերի փոխադրումը Վրաստան, որը տեղի ունեցավ վրացական մենշևիկների նախաձեռնությամբ, ինքնանպատակ չէր հանդիսանում։ Գերմանական ռազմամոլները հույս ունեին Վրաստանի տերիտորիայի միջով ներխուժել Բաքու։

Վրացական մենշևիկների համագործակցությունը գերմանական իմպերիալիզմի հետ սպառնում էր Անդրկովկասը լիովին անջատել Ռուսաստանից և երկրամասը վերածել օտարերկրյա զավթիչների մի գաղութի, նրանց փոխադարձ կատաղի պայքարի մի թատերաբեմի։

Կտրուկ կերպով բողոքելով վրացական մենշևիկների դավաճանական հակազգային քաղաքականության դեմ, սովետական կառավարությունը Վրաստանի արտաքին գործերի մինիստրին ուղղած 1918 թվականի հուլիսի 1-ի իր նոտայում մատնանշում էր. «Ժորդանիայի կառավարությունն ինքը Վրաստան հրավիրեց գերմանական իմպերիալիզմի ռազմական ուժերին և նրանց ձեռքին հլու գործիք էր հանդիսանում։ Նա օգնում էր նրան իր տիրապետությունը դեպի հյուսիս տարածելու համար, նա նրա համար բացում էր սովետական իշխանության համար պայքարող հյուսիս-կովկասյան լեռնականների ճանապարհներն ու մարզերը»[2]։

Այդ նույն ժամանակ Ուկրաինայի գրաված շրջաններից Փոթի փոխադրվող գերմանական զորքերը, որոնց թիկունքը այդ նավահանգստում ապահովում էր սուզանավերի նավատորմիղը, 1918 թվականի սեպտեմբերի կեսերին սկսեցին առաջ շարժվել դեպի Վրաստանի խորքը՝ Թիֆլիսի ուղղությամբ[3]։ Ավելի առաջ, այդ նույն թվականի ամռանը՝ Թիֆլիսում կենտրոնացվել էին թնդանոթային ու ավիացիոն ստորաբաժանումներ և զանազան տեխնիկական զորամասեր[4]։ Գերմանացիները հզոր մի արշավախումբ էին պատրաստում՝ Բաքուն գրավելու համար։ Միաժամանակ, գերմանական իմպերիալիստները ձգտում էին հենց Վրաստանի գրավման փաստից իրենց համար հնարավորին չափ մեծ օգուտ քաղել։

«Գերմանական կառավարությունը,— խոստովանում էր մենշևիկյան «Բարբա» թերթը,— իր զորքերն ուղարկելով Վրաստան, իր սեփական նպատակներն էր հետապնդում, ձգտում էր պաշտպանել

1 Людендорф, т. 2, стр. 219.
2 ЦГАОР Груз. ССР, ф. 13, д. 81, л. 23.
3 «Германские оккупанты в Грузии в 1918 г.», стр. 112—113.
4 «Борьба», 1918, № 149.

ու ապահովել իր պետության շահերը... Միամտություն կլիներ սպասել, որ Գերմանիան անշահախնդիր աջակցություն ցույց տա վրացական սոցիալ-դեմոկրատիային... գերմանական քաղաքականությունը հենվում է ոչ թե անշահախնդիր համակրանքի վրա դեպի այս կամ այն կուսակցությունը, այլ հաշվի է առնում նրանց տեսակարար կշիռը։ Այսպիսով, ամեն ինչ հանգում է Վրաստանում Գերմանիայի ունեցած շահերի հարցին»[1]։

«Գերմանացիները,— նշում էր այդ նույն թերթը,— Վրաստան եկան ոչ թե սոցիալ-դեմոկրատների կամ նոցիոնալ-դեմոկրատների համար, այլ մանգանի, պղնձի, անտառանյութի ու երկրամասի այլ բնական հարստությունների համար»[2]։

Գերմանական ռազմամոլները Վրաստանն իրենց գաղութի վերածելով, տեր ու տնօրինություն էին անում այնտեղ՝ հաշվի չնստելով մենշևիկյան իշխանությունների հետ։ Վրաստանի բոլոր քաղաքներում ու գավառներում գերմանական ջոկատներ կային, որոնք զինաթափ անելով ազգաբնակչությանը, դաժան կերպով ճնշում էին երկրամասում ծայր առած հեղափոխական շարժումը։ Գերմանացիների պատժիչ գործողություններին հավանություն էին տալիս մենշևիկյան իշխանությունների պաշտոնյաները։ Այսպես, Թիֆլիսի նահանգային կոմիսարը Բորչալուի գավառային կոմիսարին «բացատրում էր», որ գերմանական ռազմական ջոկատը իրավունք ունի զինաթափելու բնակիչներին «ինքնուրույն կերպով», այսինքն՝ առանց տեղական իշխանություններին հայտնելու[3]։ Կոդինի կոմիսարը 1918 թվականի հուլիսի 10-ին հաղորդում էր, որ գյուղ «ժամանեց 50 հոգուց բաղկացած գերմանական ջոկատը... որը բնակչությանը հայտարարեց, որ եթե որևէ մեկը չբերի և չհանձնի զենքը, ապա իրենք կոչնչացնեն ամբողջ գյուղը... զինվորներն իրենք սկսեցին խուզարկել տները և վերցնել այն ամենը, ինչ նրանց ձեռքն էր ընկնում...»[4]։

Թիֆլիսի արվարձանային շրջանի կոմիսարի 1918 թվականի հուլիսի 15-ի զեկուցագրում նկարագրվում էին գերմանական զորքերի բարբարոսական գործողությունները Բելայա Կլյուչի շրջանում։ Գերմանական զինվորները «զինաթափ էին անում մի շարք գյուղեր... ընդ որում զինաթափման ընթացքում գյուղացիների նկատմամբ կիրառվում էին ամենակտրուկ միջոցները. կանանց ու

1 «Борьба», 1918, № 206.
2 Նույն տեղում, № 96։
3 ЦГАОР Груз. ССР, ф. 28, д. 206, л. 2.
4 «Германские оккупанты в Грузии в 1918 г.», № 27.

տղամարդկանց ծեծում էին մահակներով... ներխուժում էին տները և այնտեղ խուզարկություն կատարում։ Գյուղացիները տեռորի են ենթարկված։ Գերմանացիները բոլորովին հաշվի չեն նստում վարչության հետ և հայտարարում են, որ իրենք գործում են վրացական կառավարության հետ համաձայնեցված և այդ մասին հայտնի է բոլորին։ Ես ինքս ականատես եմ եղել այն բանին, թե ինչպես գերմանացիները զենքը թաքցնելու համար ոտքերով ծեծում էին գյուղացիներին մինչև այն աստիճան, որ նրանք անզգա վայր էին ընկնում... խոշտանգված գյուղացիները, չկարողանալով տանել նման տանջանքները, մահանում էին»[1]։ Գերմանական զորքերի բարբարոսական գործողությունների վերաբերյալ նույնանման բողոքներ էին ստացվում նաև Վրաստանի այլ շրջաններից։

Գերմանական զավթիչները գյուղացիներից խլում էին ամբողջ բերքը, բնակչությանը հարկում դրամական տուրքերով, և դրանք չվճարելու դեպքում նրանցից խոշոր տուգանքներ էին գանձում։ Փաստաթղթերից մեկը վկայում է այն մասին, որ «գալով Սարվանի (Բորչալու) գյուղը, գերմանական ջոկատը պահանջեց երեք ժամվա ընթացքում իրեն վճարել 150 հազար ռուբլի... սպառնալով հակառակ դեպքում հրկիզել ողջ գյուղը[2]։ Մի այլ փաստաթղթում խոսվում էր այն մասին, որ գերմանական զինվորները Կոսալարի շրջանում բռնի կերպով գյուղացիներից գանձել էին 2600 խուրձ չկալսած ցորեն[3]։ Գերմանական զորքերի կողմից Վրաստանում կատարված նման անկարգությունների վերաբերյալ բազմաթիվ փաստեր կան։ Այսպես, գերմանական ջոկատը Մուխրանի գյուղի բնակիչների վրա 35 հազար ռուբլի գումարով կոնտրիբուցիա էր նշանակել։ Միայն Վարանցովկայի (Դուշեթի գավառ) գյուղական համայնքից գերմանացիները դուրս տարան 38 հազար ռուբլու արժեքությամբ կողոպտված գույք[4]։

«Էրթոբա» մենշևիկյան թերթը ստիպված էր հաղորդել, որ Վրաստանի տարբեր ծայրամասերից հսկայական քանակությամբ բողոքներ են ստացվում, որոնցում բնակիչները իրենց զայրույթն են հայտնում գյուղերում տեղաբաշխված գերմանական զորքերի կոպիտ վերաբերմունքի դեմ։ Գերմանական զինվորները «իրենց ուժով դատաստան են տեսնում, ոչնչացնում վրացական, հայկական

1 ЦГАОР Груз. ССР, ф. 206, д. 28, л. 24.
2 Նույն տեղում, թ. 10.
3 «Германские оккупанты в Грузии в 1918 г.», стр. 23.
4 Նույն տեղում

կամ թաթարական գյուղերը... զորքն ինքն է դատաստան տեսնում և տուգանքներ գանձում։ Բազմաթիվ դեպքեր են եղել, երբ նույնիսկ կոմիսարի միջամտությունը չի կարողացել վրացական գյուղացիներին փրկել ֆիզիկական վիրավորանքից[1]։

Միևնույն ժամանակ գերմանական նվաճողները ուժ էին գործադրում՝ Վրաստանի շահագործող դասակարգերի շահերը պաշտպանելու համար։ Զենքի օգնությամբ գերմանացիները գյուղացիներին ստիպում էին վարձակալության վճարը մուծել կալվածատերերին։ Այսպես, Գորիի գավառի կալվածատերերը դիմեցին Թիֆլիսում գտնվող գերմանական միսիայի ղեկավար Կրես ֆոն Կրեսենշտեյնին, բողոքելով այն գյուղացիների դեմ, որոնք 1917 թվականի բերքի դիմաց վարձակալության վճարը չէին մուծել։ Նրանք գրում էին, որ իրենք չեն կարող մեկնել իրենց կալվածքները՝ հասանելիք գումարները ստանալու համար, որովհետև երկյուղ են կրում իրենց կյանքի համար[2]։ Բորչալուի գավառի խոշոր հողատերերը վարձակալության վճարը գանձում էին գյուղացիներից գերմանական պատժիչ ջոկատների աջակցությամբ[3]։ Պահպանվել է կալվածատեր Դավիթ Քելբերաշվիլու դիմումը գերմանացիներին, որտեղ նա գրում է, որ Էրթիսի գյուղի գյուղացիները գրավել են իր հողերը, իսկ «իր մարդիկ» քշվել են մրգի այգուց և այնտեղ գտնվող տանից։ «Այդ կապակցությամբ ես արդեն երկու անգամ դիմել եմ վրացական կառավարությանը,—ասվում էր հիշյալ բողոքագրում։— Նա վերականգնել է իմ իրավունքները, սակայն հենց որ պաշտոնյաները հեռացան, իմ մարդիկ նորից դուրս վռնդվեցին... այժմ ես օգնություն եմ խնդրում գերմանական կայսերական պատվիրակությունից»[4]։

Այսպիսով, գերմանական զավթիչները ձգտում էին Վրաստանում վերականգնել նախկին ճորտատիրական կարգերը և անողոքաբար ճնշել վրաց գյուղացիության դասակարգային պայքարը։

Սակայն Վրաստանի գյուղացիական զանգվածները ոտքի էին ելնում պայքարի գերմանացիների կողմից հաստատված ոստիկանական-գաղութարարական ռեժիմի ու մենշևիկյան լծի դեմ։ Այսպես, Բելայա Կլյուչի շրջանի ազգաբնակչությունը, գերմանական զորքերի վերաբերմունքից զայրացած, հայտարարեց, որ ինքը «զեն-

1 «Германские оккупанты в Грузии в 1918 г.», № 70.
2 «Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии», № 191.
3 «Германские оккупанты в Грузии в 1918 г.», № 46.
4 Նույն տեղում, № 52։

քի ուժով կպաշտպանի իր պատիվը և ազատ գյուղացու իր անունը»[1]։

Սեպտեմբերի 14-ին Կրես ֆոն Կրեսենշտեյնը մենշևիկյան կառավարության ներքին գործերի մինիստրին հաղորդում էր, որ ինքը պատրաստ է «գերմանական զորքեր տրամադրել՝ Արախլո և Կիզիլսլո գյուղերում չարիքը արմատախիլ անելու համար... Ես գտնում եմ... որ հանցագործություններ երևան բերելու դեպքում անհրաժեշտ է ռազմական միջոցառումներ ձեռնարկել՝ ելույթներ ունենալու հակված բնակչությանը սարսափեցնող օրինակ տալու համար»[2]։

Մենշևիկյան կառավարության արտաքին գործերի մինիստրին ուղղած Կրես ֆոն Կրեսենշտեյնի օգոստոսի 29-ի գրության մեջ վերջինս պահանջում էր Փոթիի, Նովոսենակի, Զուգդիդիի և Անաքալայի շրջանները «մաքրել քաղաքականապես անվստահելի տարրերից» և այդ նպատակով նա առաջարկում էր գերմանական զորքերին օգտագործել։ Նա գրում էր. «Ավազակախմբերը (այդպես էին գերմանացիները կոչում գյուղացիների պարտիզանական ջոկատները— Ե. Ս.) և բոլշևիկները... անընդհատ խանգարում ու խոչընդոտում են հաղորդակցությանը... Ես ծայրահեղորեն անհրաժեշտ եմ համարում, որպեսզի շուտափույթ կերպով այդ շրջանը հիմնովին մաքրվի ու զինաթափ արվի... Ես պատրաստ եմ վրացական գլխավոր հրամանատարի տրամադրության տակ դնել Փոթիում, Նովոսենակիում ու Օչեմչիրեում գտնվող գերմանական զորքերը»[3]։

Գերմանական զավթիչների ու նրանց մենշևիկյան գործակալների դեմ պայքարի ելան նաև Դուշեթի գավառի, Մինգրելիայի, Լեչխումիի, Ռաչի, Վերին ու Ներքին Իմերեթիայի, Գուրիայի, Գորիի, Թելավի ու Սիգնախի գավառների գյուղացիները[4]։

Գորիի գավառային կոմիսարը 1918 թվականի հունիսի 26-ին հեռագրում էր Թիֆլիս, որ խմորումները գյուղացիների մեջ գնալով աճում են։ Կարելի շրջանում գաղտնի ժողովներ են գումարվում։ Ապստամբները քանդում են երկաթուղագծերը։ Կոմիսարը խնդրել է արագացնել ջոկատի ուղարկումը՝ ապստամբությունը ճնշելու համար[5]։

1 «Германские оккупанты в Грузии в 1918 г.», № 30.

2 Նույն տեղում, № 62։

3 Նույն տեղում, № 30։

4 «Борьба за победу Советской власти в Грузии». Документы и материалы (1917—1921), № 312.

5 ЦГАОР Груз. ССР, ф. 28, д. 66, л. 14.

Տագնապալից լուրեր էին ստացվում նաև Վրաստանի մյուս մարզերի մենշևիկյան իշխանություններից։ Քութայիսի նահանգային կոմիսարը օգոստոսի 10-ին հաղորդում էր, որ գյուղացիական ապստամբությունները Սաչխերի, Լեչխումի և այլ շրջաններում լայն թափ են ստացել և կառավարական զորքերը համառ մարտեր են մղում ապստամբների դեմ, որոնք նեղել էին մենշևիկյան կանոնավոր զորամասերին։ «Սուխումն ու Զուգդիդին,— գրում էր նա,— կտրված են մեզնից։ Այդ ճակատում ապստամբները խոշոր ուժեր են կենտրոնացնում և այստեղ մենք օժանդակ ուժերի կարիք ունենք։ Ընդհանրապես, զորքերը բոլոր ճակատներում ծայրահեղ չափով ուժասպառ են եղել և անհրաժեշտ է նրանց փոխարինել և զորքերն ուժեղացնել Զուգդիդիի ճակատում, որովհետև ապստամբությունը կարող է տարածվել նաև մյուս գավառներում»[1]։

Խոշոր ապստամբություն բռնկվեց նաև Դուշեթի գավառում։ Ապստամբության համար առիթ ծառայեց մենշևիկյան կառավարության 1918 թվականի հունիսի 15-ի հրամանը՝ բնակչությանը զինաթափ անելու մասին։ 4 հազար զինված գյուղացիներ երկու օրվա ընթացքում համառ պայքար էին մղում կառավարական զորքերի դեմ, որն ավարտվեց վերջիններիս կատարյալ ջախջախումով։ Մենշևիկյան կառավարության լիազոր Ն. Կախիանին գրում էր, որ հունիսի 19-ին զինված գյուղացիները, ղեկավարվելով բոլշևիկների կողմից, լայն օղակով շարժվեցին Դուշեթի վրա, տիրացան քաղաքին և գրավեցին պետական բոլոր հիմնարկները, ռազմական ու մասնավոր պահեստները»[2]։ Ապստամբությունը ճնշելու համար մենշևիկյան կառավարությունը դիմեց Կրես ֆոն Կրեսենշտեյնին՝ նրանից խնդրելով գերմանական զորամասեր ուղարկել Դուշեթի գավառը։

Շուտով, հունիսի վերջերին, ապստամբեցին նաև Թիանեթի գավառի գյուղացիները, որոնց դեմ պայքարելու համար Թիֆլիսից անմիջապես ուղարկվեցին մենշևիկյան ու գերմանական զորքեր։ Մենշևիկյան իշխանությունների խնդրանքով գերմանական ջոկատ ուղարկվեց նաև Բելայա Կլյուչի շրջանը, ուր նույնպես գյուղացիական ելույթներ էին սկսվել[3]։

Գերմանական զավթիչների ու նրանց մենշևիկյան գործակիցների համատեղ գործողությունները ի վիճակի չէին ճնշելու Վրաստանի գյուղացիական զանգվածների պայքարը, որն օրեցօր ավելի

1 ЦГАОР Груз. ССР, ф. 24, д. 213, л. 1.

2 Նույն տեղում, ֆ. 408, գ. 51, թ. 170—172։

3 Նույն տեղում, ֆ. 11, գ. 715, թ. 1։

լայն թափ էր ստանում։ Ռուսաստանի հարավի արտակարգ կոմիսար Սերգո Օրջոնիկիձեն 1918 թվականի սեպտեմբերի 10-ին հեռագրում էր Լենինին. «Վրաստանում գյուղացիների ապստամբությունը շարունակվում է. գերմանացիները մասնակցություն են ունենում ապստամբությունների ճնշմանը...» [1]։

Սովետական կառավարությունը 1918 թվականի հունիսի 1-ի նոտայում անարգանքի սյունին էր գամում վրացական մենշևիկների հակահեղափոխական քաղաքականությունը։ Հիշյալ նոտայում, մասնավորապես, ասվում էր. «Հենվելով գերմանական սվինների վրա, Ժորդանիայի կառավարությունը պատժիչ ջոկատներ էր ուղարկում և արյան մեջ խեղդում ժողովրդական շարժումները Վրաստանում» [2]։

***

Անդրկովկասի ժողովրդական զանգվածների կողմից օտարերկրյա զավթիչներին ցույց տրված հերոսական դիմադրությունը և, միաժամանակ, երկրամասում ծավալված հեղափոխական շարժման վերելքը իրենց ներգործությունն ունեցան թուրքական զորքերի բարոյական վիճակի վրա։ Քառամյա ծանր պատերազմից հյուծված թուրքական զինվորները ձգտում էին օր առաջ տուն վերադառնալ։ Թուրքական զորամասերում գնալով ավելի լայն տարածում էին գտնում Հոկտեմբերյան հեղափոխության գաղափարները։ Սովետական մամուլում այն ժամանակ հաղորդվում էր, որ «թուրքական բանակի զինվորները գաղտնի կերպով անլեգալ գրականություն են ստանում։ Կարգապահությունը լրիվ բացակայում է։ Բոլշևիզմը արագ ընկալվում է թուրք զինվորների կողմից» [3]։ «Իզվեստիա» թերթը իր համարներից մեկում նշում էր. «Կոմունիստների գործունեությունը թուրքական զորքերի շրջանում՝ Անդրկովկասում ծավալվում է հաջող կերպով» [4]։

1918 թվականի աշնանը դասալքությունը թուրքական բանակի շարքերում զգալիորեն ուժեղացավ [5]։ Բնութագրելով թուրքական զորքերի վիճակը 1918 թվականի աշնանը, Լիման ֆոն Սանդերսը

1 Серджоникидзе Г. К., Статьи и речи, т. I, М., 1956, стр. 43.
2 ЦГАОР Груз. ССР, ф. 13, д. 81, л. 23.
3 «Жизнь национальностей», 17.XI.1918.
4 «Известия». 31.X.1918.
5 «Աշխատավոր», 7. VIII. 1918, № 101։

գրում էր. «Դասալիքների թիվը... վերջին շաբաթների ընթացքում ամենուրեք նկատելի չափով մեծացել է... 8-րդ բանակում դասալիքների թիվը օգոստոսի 15-ից մինչև սեպտեմբերի 14-ը կազմել է մոտ 1100 մարդ» [1]։ Այնուհետև նա մատնանշում էր. «Թուրքերը հոգնել են պատերազմից և չեն ցանկանում կռվել։ Դասալիքներն իրենց հետ ոչ միայն հրացաններ ու ձեռքի նռնակներ, այլև... գընդացիրներ էին տանում» [2]։

Անդրկովկասում գտնվող թուրքական օկուպացիոն զորքերի շրջանում ագիտացիոն մեծ աշխատանք էին տանում թուրք կոմունիստները, որոնք մերկացնում էին երիտթուրքական կլիկի նվաճողական պլանները։

Երիտթուրքերի կողմից Թուրքիայի պարտության նախօրյակին Անդրկովկասում ձեռնարկված կողոպտչական ինտերվենցիան վերջնականապես հյուծեց Օսմանյան կայսրությանը։ Զախողվեցին Կովկասի գրավման պլանները և Անդրկովկասի նվաճման միջոցով Հոկտեմբերյան հեղափոխության ազդեցության տարածումը Թուրքիայում խանգարելու փորձերը։ Օսմանյան կայսրության կառավարողների կողմից ձեռնարկված կովկասյան արկածախնդրությունը, որը կատարվեց թուրք ժողովրդի կամքին հակառակ, ամբողջ աշխարհի առջև մերկացրեց երիտթուրքական պարագլուխների վարած քաղաքականության ագրեսիվ էությունը։ Այդ արկածախնդրությունը միայն արագացրեց Թուրքիայի վերջնական ջախջախումը առաջին համաշխարհային պատերազմում։

Թուրքական զորքերի ներխուժումն Անդրկովկաս ծայրահեղ չափով վատթարացրեց թուրքական զորքերի վիճակը Միջագետքի ու Սիրիա-պաղեստինյան ճակատներում, որովհետև թուրքական լավագույն դիվիզիաները, ինչպես նշվեց վերևում, փոխադրվել էին կովկասյան ռազմաճակատ։ 1918 թվականի սեպտեմբերի կեսերին և ամբողջ հոկտեմբեր ամսվա ընթացքում Անտանտի երկրների զորքերը արաբ ապստամբների հետ մեկտեղ մի շարք խոշոր պարտություններ հասցրին թուրքական 4-րդ, 7-րդ և 8-րդ բանակներին՝ նրանց ետ շպրտելով Միջագետքից, Պաղեստինից ու Սիրիայից։

Միջագետքի ու Սիրիա-պաղեստինյան ճակատներում թուրքական զորքերի ջախջախումից առաջ դաշնակիցների զորքերը սեպտեմբերի 15-ին ճեղքեցին թուրք-բուլղարական ճակատը Մակեդոնիայում և Բուլղարիային ստիպեցին անձնատուր լինել։ Դաշնակից-

1 Liman von Sanders, S. 340.
2 Նույն տեղում, էջ 335։

ների զորքերի համար ճանապարհը դեպի թուրքական մայրաքաղաքն արդեն մաքրված էր։ Երիտթուրքական կառավարողները, որոնք երկիրը հասցրել էին ռազմական լիակատար աղետի, ստիպված էին թողնել կայսրության սահմանները։

1918 թվականի հոկտեմբերի 30-ին Անտանտի երկրների ու Օսմանյան կայսրության միջև Մուդրոսում ստորագրվեց զինադադար, որով վերջինս լիակատար կապիտուլյացիայի ենթարկվեց հաղթողների առջև։



Դանանապետ Թալէաթի այս ծածկագիր հեռագիրը կը հրատարակեն բնաջնջել նոյնիսկ մանուկները...

Ցեղասպանի ոճրագործ Մեհմեդ Սալիմը ամենայն հիմարությամբ — դիակներ դարձրեցնելով նոր ցավերի դատապարտյալ ժողովուրդների նկատմամբ իրենց ագրեսիվ պլանները քո-

ների զորքերի համար ճանապարհը դեպի թուրքական մայրաքա-

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

XX դարի սկզբին հետամնաց, կիսաֆեոդալական Օսմանյան կայսրությունը իրենից ներկայացնում էր մի պետություն, որը շատ ուժեղ կախման մեջ էր գտնվում արևմուտքի իմպերիալիստական տերություններից։ Նրան բզկտող ներքին խոր հակասությունները հանգեցրին 1908—1909 թվականների բուրժուական վերնախավային հեղափոխության հաղթանակին, որի հետևանքով իշխանության գլուխ անցավ երիտթուրքական «Միասնություն և առաջադիմություն» կուսակցությունը։

Երիտթուրքական հեղափոխությունը չլուծեց ո՛չ ագրարային և ո՛չ էլ ազգային հարցերը։ Նա ի վիճակի չեղավ նույնպես երկիրն ազատագրել գաղութային կախվածությունից։ Ֆեոդալա-բռնապետական բիրտ լծի տակ հեծող օսմանյան բազմազգ պետության ժողովուրդները ենթարկվում էին ավելի սաստիկ հալածանքների։ Այդ քաղաքականության իրականացման մեջ երիտթուրքերը գերազանցեցին նույնիսկ արյունոտ սուլթան Ադբուլ-Համիդին։

Երիտթուրքերի կողմից անցկացվող հետադիմական ներքին քաղաքականությունը, նրանց մեծապետական շովինիստական ուղղությունը դիմադրության էին հանդիպում թուրք աշխատավոր զանգվածների և իրենց ազգային-ազատագրության համար մարտնչող ոչ-թուրք ժողովուրդների՝ արաբների, ալբանացիների, քրդերի, մակեդոնացիների, հայերի և մյուսների կողմից։

Երիտթուրքական պարագլուխները պանիսլամիզմի ու պանթուրքիզմի հետադիմական դոկտրիններն օգտագործեցին արտաքին քաղաքականության ասպարեզում՝ իսլամ դավանող և թուրքալեզու ժողովուրդների նկատմամբ իրենց ագրեսիվ պլանները քո-

զարկելու համար։ Նույն նպատակն էր հետապնդում պատերազմ։ Նախօրյակին Կովկասում թուրքական գործակալության կողմից ծավալված ագիտացիան։ Երիտթուրքերի նվաճողական քաղաքականության գլխավոր օբյեկտը Անդրկովկասն էր, որովհետև վերջինս կանգնած էր Հյուսիսային Կովկասի, Պովոլժիեի ու Միջին Ասիայի նվաճման նրանց պլանների իրականացման ճանապարհին։

Օսմանյան կայսրության մասնակցությունը առաջին համաշխարհային պատերազմին՝ կենտրոնական տերությունների կողմում, հակասում էր երկրի ազգային շահերին և բացատրվում էր նրանով, որ իշխանության գլուխ կանգնած հետադիմական ուժերը, որոնք արտահայտում էին թուրք կալվածատերերի ու բուրժուազիայի շահերը, ձգտում էին կայսերական Գերմանիայի օգնությամբ հասնել իրենց սեփական զավթողական նպատակների իրականացմանը։ Գերմանական իմպերիալիստները, ձևականորեն հավանություն տալով երիտթուրքերի զավթողական մտահղացումներին, պատերազմի տարիներին Թուրքիային օգտագործում էին որպես թնդանոթի միս, ստրատեգիական էժանագին հումք ու գյուղատնտեսական մթերքներ մատակարարող, ինչպես նաև կարևորագույն ռազմաստրատեգիական հենակետ։

Համաշխարհային պատերազմին Օսմանյան կայսրության մասնակցությունը հանգեցրեց նրա էկոնոմիկայի հիմքը հանդիսացող գյուղատնտեսության քայքայմանը, գյուղացիության սնանկացմանն ու ֆինանսական կրախին։ Պատերազմի ընթացքում Թուրքիայի գաղութային կախվածությունն է՛լ ավելի ուժեղացավ, և նա վերածվեց գերմանական իմպերիալիզմի ռազմական ու ֆինանսական վասալի։

Թուրքիայի կառավարող շրջանները օգտվեցին պատերազմի ընձեռած հնարավորությունից՝ հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջման իրենց վաղեմի ծրագիրն իրականացնելու համար։ Ավելի քան մեկ միլիոն խաղաղ հայ ազգաբնակչության, այդ թվում կանանց, ծերերի ու երեխաների, գազանային ոչնչացումը, որն իրագործվեց ճակատամերձ գոտուց նրանց տեղահանելու պատրվակի տակ, իրականում հանդիսանում էր ողջ Կովկասի նվաճման պանթուրքական պլանի բաղկացուցիչ մասը։ Երիտթուրքական պարագլուխների այդ արյունոտ հանցագործության համար բարոյա-քաղաքական պատասխանատվություն են կրում նաև նրանց դաշնակիցները՝ գերմանական իմպերիալիստները։

Երիտթուրքական կլիկի համար ռազմական գործողությունների հիմնական թատերաբեմը կովկասյան ճակատն էր։ Դեպի Անդրկովկասի խորքը ինչ գնով էլ լինի առաջ շարժվելու համար թուրքական հրամանատարությունը այդ ճակատում էր կենտրոնացրել օսմանյան բանակի ամենակենսունակ ու թվով գերակշռող մասը։ Սակայն Անդրկովկաս ներխուժելու փորձերը, որոնք ձեռնարկվեցին նրա կողմից 1914—1915 թվականների աշնանն ու ձմռանը, ավարտվեցին թուրքական զորքերի ջախջախումով։ Պատերազմի ամբողջ ընթացքը կովկասյան ռազմաճակատում ակներևորեն ցույց տվեց երիտթուրքական զավթիչների նվաճողական ծրագրերի անիրագործելիությունը և, միաժամանակ, վեր հանեց նրանց քաղաքականության արկածախնդրական բնույթը։

Երիտթուրքական էքսպանսիոնիստները հաշվի չառան պատերազմի տխուր դասերը կովկասյան ռազմաճակատում 1914—1917 թվականներին, ինչպես նաև երկրի տնտեսության ու ֆինանսների աղետալի վիճակը, որն առաջ էր եկել եռամյա պատերազմի ու ռազմական մի շարք պարտությունների հետևանքով։ Նրանք թեթևամտորեն մերժեցին առանց անեքսիաների ու կոնտրիբուցիաների հաշտություն կնքելու վերաբերյալ սովետական կառավարության առաջարկը, որն ամբողջովին համապատասխանում էր Թուրքիայի ազգային շահերին և թուրք ժողովրդի իղձերին։ Երիտթուրքական կուսակցության պարագլուխները և երկրի ռազմամոլ շրջանները շարունակում էին հետևել Կովկասի նկատմամբ իրենց մշակած ագրեսիվ պլաններին։ Նրանք օգտվելով 1918 թվականի սկզբին Ռուսաստանում ստեղծված իրադրությունից, մասնավորապես, կովկասյան ռազմաճակատից ռուսական բանակի հեռացումից՝ ձեռնարկեցին նոր արշավանք։

Եթե Անդրկովկասի նկատմամբ երիտթուրքերի զավթողական նպատակները պատերազմի առաջին իսկ տարում ձախողվեցին ռուսական բանակի հարվածների ներքո, ապա 1918 թվականին դրանք չիրականացան՝ Անտանտի պետությունների տարած հաղթանակների և Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի աշխատավոր զանգվածների հերոսական պայքարի շնորհիվ։ Անդրկովկասի ժողովուրդները այդ պայքարը մղում էին ներքաղաքական ու միջազգային ծանր պայմաններում։ Դա մի ժամանակաշրջան էր, երբ իմպերիալիստական հակամարտ խմբավորումները ձգտում էին նվաճել Անդրկովկասը, նրա հումքի կարևորագույն աղբյուրները և, առաջին հերթին, նավթը, միաժամանակ ստրատեգիական հենակետ ձեռք բերել՝ Սովետական Ռուսաստանի դեմ ինտերվենցիան շարունակելու համար։

Սովետական Ռուսաստանի աշխատավորության հերոսական դիմադրությունը օտարերկրյա ինտերվենտներին ու ներքին հակահեղափոխական ուժերին ոգեշնչում էր Անդրկովկասի աշխատա-

վորներին՝ թուրքական զավթիչների դեմ նրանց մղած անհավասար պայքարում։ Սովետական Ռուսաստանի օգնության և Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի ժողովուրդների անձնուրաց ջանքերի շնորհիվ հաջողվեց Անդրկովկասն ազատագրել թուրքական և օտարերկրյա այլ զավթիչներից։

Համաշխարհային պատերազմում Օսմանյան կայսրության կրած պարտության հիմնական պատճառներից մեկը երիտթուրքական էքսպանսիոնիստների կողմից անցկացվող հակասովետական, նվաճողական քաղաքականությունն էր։

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին իմպերիալիստական տերությունները Թուրքիայի բաժանման վերաբերյալ մի շարք համաձայնագրեր կնքեցին։ 1919 թվականի Փարիզի խաղաղության կոնֆերանսում մշակվեցին Օսմանյան կայսրության մասնատման մանրամասն պլաններ։ Թուրք ժողովրդին սպառնում էր լիակատար գաղութային ստրկացման ճակատագիրը։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը թուրք ժողովրդին փրկեց վերջնական կործանումից։ Հենց նրա հաղթանակի և Ռուսաստանում սովետական իշխանություն հաստատելու շնորհիվ էր, որ ճեղքվեց իմպերիալիստական ճակատը և կործանիչ հարված հասցվեց Օսմանյան կայսրության նկատմամբ Անգլիայի, Ֆրանսիայի ու ԱՄՆ-ի գաղութարարական պլաններին։

***

Սովետական կառավարության կողմից թուրք ժողովրդին՝ նրա ազգային-ազատագրական պայքարի օրհասական պահին ցույց տրված օգնության շնորհիվ էր միայն, որ հնարավոր դարձավ թուրք ժողովրդի հաղթանակը ինտերվենտների դեմ։

Սակայն, չնայած Սովետական Ռուսաստանի կողմից Թուրքիային ցույց տրված ռազմական, ֆինանսական ու բարոյական անշահախնդիր օգնությանը, քեմալական կառավարությունը, օգտվելով Անդրկովկասում ստեղծված իրադրությունից, ըստ էության շարունակում էր երիտթուրքական զավթիչների քաղաքականությունը։ Մենք այստեղ կանգ չենք առնում Մուստաֆա Քեմալի կողմից գրելխավորվող ազգային պատերազմի նկարագրության վրա, այլ կփորձենք կոնկրետ փաստերի հիման վրա վեր հանել քեմալականների կողմից տարվող ազգային պատերազմի էությունը արևելյան, ավելի ճիշտ՝ կովկասյան ճակատում, քանի որ այն ոչնչով չէր տարբերվում 1918 թվականին ձեռնարկված երիտթուրքական ագրեսիայից։ Աշխատությունն ավարտված չէր լինի, եթե մենք այն սահմանա-

փակեինք 1918 թվականի երիտթուրքական արշավանքի շարադրանքով։ Քեմալականների կողմից կովկասյան ճակատում մղվող ագրեսիվ պատերազմի էությունը լուսաբանելն անհրաժեշտ է նաև այն պատճառով, որ ժամանակակից թուրք պատմագրության մեջ նենգափոխվում են այն իրադարձությունները, որոնք կապված են 1920—1921 թվականների սովետա-թուրքական հարաբերությունների, Անդրկովկասում ձեռնարկված քեմալական ագրեսիայի, Անդրկովկասի սովետական հանրապետությունների նկատմամբ քեմալականների վարած քաղաքականության և մի շարք այլ հարցերի հետ։ Այդ հարցերի լուսաբանումը հնարավորություն կտա վեր հանել քեմալականների բուն քաղաքականությունը, որոնց իդեալականացրել են և շարունակում են իդեալականացնել սովետական առանձին թուրքագետներ։

Սովետական առանձին թուրքագետ պատմաբանների աշխատություններում քեմալականների հաղթանակը Անտանտի ուժերի դեմ բացատրվում է իբր թե քեմալականների կողմից հանդես բերած հերոսությամբ և այն վախով, որ Անգլիան տածում էր մահմեդական այլ երկրներում և, հատկապես, Հնդկաստանում աճող հեղափոխական շարժման հանդեպ։ Մինչդեռ քեմալականների հաղթանակին նպաստող ամենակարևոր հանգամանքը Սովետական Ռուսաստանի գոյության փաստն էր։ Նրա դեմ էին Անտանտի պետություններն ուղղել իրենց հիմնական ուժերը։ Անտանտը թուրքական ճակատը դիտում էր որպես ռազմական գործողությունների երրորդական նշանակություն ունեցող մի թատերաբեմ։ Հայտնի է, որ Թուրքիայի դեմ կռվում էին ոչ թե անգլիական, այլ հունական զորքերը։ Անգլիան հույս ուներ, որ քեմալականների հետ հաշիվ կտեսնեն հույներն իրենք և այդ իսկ պատճառով իր ամբողջ ուժերը դուրս էր բերել Սովետական Ռուսաստանի՝ համաշխարհային հեղափոխության հիմնական օջախի դեմ։ Անտանտի իմպերիալիստները ամեն կերպ աշխատում էին համաձայնության գալ քեմալականների հետ՝ Ռուսաստանի դեմ համատեղ ռազմական գործողություններ ձեռնարկելու հարցում։

Թեև քեմալականները չէին խորշում այդ բանից և պատրաստ էին վերջնականապես գլորվել իմպերիալիստական տերությունների՝ Անգլիայի, Ֆրանսիայի ու ԱՄՆ-ի լագերը, սակայն վերջիններիս կողմից Թուրքիայի նկատմամբ ձեռնարկված ագրեսիան թուրքական ազգային բուրժուազիայի ղեկավարներին ստիպեց դիվանագիտական հարաբերություններ հաստատել Սովետական Ռուսաստանի հետ՝ Արևելքում իրենց թիկունքն ապահովելու և ինտերվենտների դեմ պայքարը շարունակելու համար։

1920—1921 թվականների սովետա-թուրքական հարաբերությունների մասին թուրքական ռազմական ու քաղաքական գործիչներն ու պատմաբանները շատ են գրել։ Նրանցից շատերը, որոնք անմիջականորեն մասնակցություն են ունեցել 1920—1921 թվականների թուրք-սովետական բանակցություններին, բացահայտորեն կեղծում են փաստերը, աղավաղում պատմական իրականությունը, ձգտում են ցույց տալ, որ իբր Սովետական Ռուսաստանն ավելի, քան Անկարայի կառավարությունը, կարիք ուներ Թուրքիայի հետ բարեկամական հարաբերություններ հաստատելու։ Դրանով նրանք ձգտում են նսեմացնել նյութական ու բարոյական այն մեծ օգնությունը, որ սովետական ժողովուրդը ցույց տվեց թուրք ժողովրդին նրա ազգային-ազատագրական պատերազմի տարիներին։

Գեներալ Ալի Ֆուադ Ջեբեսոյը իր հիշողություններում անդրադառնալով Սովետական Ռուսաստանի ներքին դրությանը, գրում է, որ «ռուսները, իրենց ներքին կառուցվածքը կարգավորելու համար դեռ որոշ ժամանակ օտարերկրացիների, առանձնապես մահմեդականների կարիքը կզգան։ Ժամանակ շահելու համար նրանք կփորձեն օգտագործել մահմեդական աշխարհի երկրներում Թուրքիայի ունեցած հեղինակությունը։ Հետևաբար, Ռուսաստանում իրենց իշխանությունն ամրապնդելու համար նրանք ուժեղ կերպով ...Թուրքիայի օգնության կարիքն ունեին։ Բացի դրանից, նրանք հաշվի էին առնում այն հնարավորությունը, որ Թուրքիան կարող էր խաղալ նույն դերը, ինչ որ Դենիկինը, միգուցե՝ առավել վտանգավոր։ Բոլոր այս պատճառներով նրանք ձգտում էին մեզ հետ լավ հարաբերությունների մեջ լինել»[1]։

«Ռուսները,— գրում է այնուհետև Ջեբեսոյը,— ջանում էին իրենց ներկայացնել որպես մեր բարեկամների ու դաշնակիցների, ցանկանում էին ժամանակ շահել՝ ուժեր հավաքելու համար, իսկ այնուհետև, երբ մենք նրանց այլևս պետք չէինք գա, թուլացնել մեզ նյութապես ու ռազմական ասպարեզում և, այդպիսով, հեշտությամբ իրականացնել իրենց նպատակները»[2]։

Իր հիշողությունների մի այլ բաժնում Ջեբեսոյն իր այն հարցին, թե «ինչո՞ւ էին ռուսները օգնում Թուրքիային», հետևյալ պատասխանն է տալիս. «Ռուսները նույնպես գտնում էին, որ Թուրքիան պետք է մասնակցություն ունենա իրենց պլաններում և իրենց օգնություն ցույց տա»[1], որովհետև «բոլշևիկները ցանկանում էին Թուրքիան դարձնել մի հենակետ՝ հեղափոխությունն այլ երկրներում տարածելու և կենտրոնական կազմակերպությունների օգնությամբ արևմտյան երկրներում պրոպագանդա մղելու համար»[2]։ Դատողություններ անելով սովետական ղեկավարների հետ թուրքական պատվիրակության (որի կազմում էր նաև ինքը) ունեցած առաջին հանդիպումների մասին, Ջեբեսոյը հաստատում է այն աստիճանի, որ նույնիսկ չի տեսնում տարբերություն ցարական Ռուսաստանի քաղաքականության ու բոլշևիկների կողմից անցկացվող քաղաքականության միջև[3], անտեսում այն ճշմարտությունը, որ վերջիններս սովետական կարգերի հաստատման առաջին իսկ օրերից հրաժարվեցին ցարիզմի նվաճողական քաղաքականությունից և անշահախնդիր օգնություն ցույց տվեցին թուրք ժողովրդին։

«Ինչպես և ցարական կառավարությունը,— գրում է Ջեբեսոյը,— սովետական կառավարությունը չէր հրաժարվում նեղուցներին տիրանալու, մինչև Ալեքսանդրետ հասնելու և Հնդկաստան թափանցելով այնտեղ Անգլիայի հետ բախվելու ձգտումներից, նա առաջվա պես սպասում էր հարմար առիթի»[4]։

Այդ նույն տեսակետն է պաշտպանում նաև հայտնի թուրք պատմաբան Յուսուֆ Հիքմեթ Բայուրը, որը ոչ պակաս շափով աղավաղում է սովետա-թուրքական հարաբերությունների պատմությունը։ Իր «Թուրքիայի արտաքին քաղաքականությունը» վերնագրով գրքում նա ևս պնդում է, որ իբր սովետական կառավարությունը Կովկասում իր թիկունքն ապահովելու համար ամեն կերպ ձգտում էր Թուրքիային իր կողմը գրավել[5]։ Ըստ որում Բայուրը լռության է մատնում այն փաստը, որ քեմալական կառավարությունն ինքը շահագրգռված էր նորմալ հարաբերություններ հաստատելու Սովետական Ռուսաստանի հետ։ Որ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությունն ինքը փնտրում էր Սովետական Ռուսաստանի օգնությունն ու աջակցությունը, դա երևում է նաև 1920 թվականի ամռանը Մուստաֆա Քեմալի արած հայտարարությունից. «Այդ մենք ինքներս էինք փնտրում բոլշևիկներին և մենք նրանց գտանք...»։

1 «Ալի Ֆուադ Ջեբեսոյի քաղաքական հուշերը», մաս 2։ Տե՛ս «Վաթան» թերթը, 1954 թ., 6 ապրիլի։ Ալի Ֆուադ Ջեբեսոյը մինչև 1920 թվականի նոյեմբերը արևմտյան ռազմաճակատի հրամանատարն էր։ Նոյեմբերին Ջեբեսոյը նշանակվեց քեմալական Թուրքիայի դեսպան Մոսկվայում։ Թուրքական մեջլիսի նախագահ Ֆյազըմ Կարաբեքիրի մահից հետո նա 1948 թվականի սկզբին փոխարինեց նրան այդ պաշտոնում։

2 Նույն տեղում, 7 ապրիլի, 1954 թ.։

1 «Ալի Ֆուադ Ջեբեսոյի քաղաքական հուշերը», մաս 2, «Վաթան», 18 փետրվարի, 1954 թ.։

2 Նույն տեղում, 17 փետրվարի, 1954 թ.։

3 Նույն տեղում, 16 մարտի, 1954 թ.։

4 Նույն տեղում, 16 մարտի, 1954 թ.։

5 Yuşuf Hikmet Bayur, Türkiye devletinin dış siyasası, İstanbul, 1938, s. 64.

«Մենք Ռուսաստանի հետ բարեկամներ ենք, որովհետև Ռուսաստանը ավելի շուտ, քան որևէ մեկ ուրիշը, ճանաչեց մեր ազգային իրավունքները և հարգանքով վերաբերվեց մեր նկատմամբ։ Նման պայմաններում, ինչպես այսօր, այնպես էլ վաղը, և ընդհանրապես, միշտ, Ռուսաստանը կարող է վստահ լինել Թուրքիայի բարեկամության մեջ»[1]։

Թուրքական նոր կառավարության ղեկավար Մուստաֆա Քեմալ-փաշան ճիշտ կողմնորոշվելով միջազգային բարդ իրադրության մեջ, առաջին իսկ օրերից դիմեց սովետական կառավարությանը՝ նրանից խնդրելով օգնություն ցույց տալ Թուրքիային և դիվանագիտական հարաբերություններ հաստատել նրա հետ։

Սակայն Քեմալի կողմից գլխավորվող բուրժուա-կալվածատիրական կառավարությունը դիմելով Սովետական Ռուսաստանի օգնությանը ինտերվենտների դեմ պայքարելու համար, միևնույն ժամանակ շարունակում էր երիտթուրքերի էքսպանսիոնիստական քաղաքականությունը և պատրաստվում էր նվաճելու ողջ Հայաստանը, Վրաստանը, Ադրբեջանը և Հյուսիսային Կովկասը։ Չնայած Անդրկովկասի նկատմամբ քեմալականների վարած ագրեսիվ քաղաքականությանը, սովետական կառավարությունը, մեծապես շահագրգռված լինելով Մերձավոր ու Միջին Արևելքի երկրներում ստեղծված դրությամբ և հաշվի առնելով այդ երկրների, մասնավորապես Թուրքիայի, աշխարհագրական դիրքը, չէր կարող անտարբեր մնալ ինտերվենտների դեմ թուրք ժողովրդի մղած պայքարի նկատմամբ։ Անգլիական «Օբսերվեր» և «Մանչեստեր գարդիան» թերթերի թղթակից Ֆարբմանին տված ինտերվյուի մեջ Վ. Ի. Լենինը Մերձավոր Արևելքի երկրների նկատմամբ Սովետական Միության վարած քաղաքականությանն անդրադառնալով, նշում էր. «Մեր մերձավորարևելյան քաղաքականությունը Ռուսաստանի և նրա հետ ֆեդերացիայի մեջ գտնվող մի շարք պետությունների ամենաիրական և անմիջական կենսական շահի գործն է»[2]։ Ուստի, երբ անգլիական ու հունական ինտերվենտները սկսեցին սպառնալ Թուրքիայի անկախությանը, սովետական կառավարությունը հաստատուն կերպով հանդես եկավ թուրք ժողովրդի պայքարի պաշտպանությամբ։ Մուստաֆա Քեմալի դիմումի կապակցությամբ ուղարկված իր պատասխան նամակում սովետական կառավարությունը ընդգծում էր, որ «ինքը աշխույժ հետաքրքրությամբ հետևում է հերոսական այն պայքարին, որ թուրք ժողովուրդը մղում է իր անկախության համար, և

1 „Правда", 4. III. 1955 г.

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 33, էջ 456։

Թուրքիայի համար ծանր այս օրերին նա երջանիկ է հաստատելու բարեկամության այն կայուն հիմքը, որը պետք է կապի թուրք և ռուս ժողովուրդներին»[1]։ Սովետական կառավարության կողմից Անկարայի կառավարության ճանաչումը և Սովետական Ռուսաստանի պատրաստակամությունը՝ թուրք ժողովրդին նյութական օգնություն ցույց տալու, ոգեշնչեցին նրան ազգային անկախության համար մղվող պայքարում։ Երբ 1920 թվականի հուլիսի 8-ին Մեջլիսի նիստում արտասանած իր ճառում Մուստաֆա Քեմալը հրապարակեց սովետական կառավարության պատասխանը Անկարայի կառավարության դիմումին, ամբողջ դահլիճը ծափահարում էր, լսվում էին «բռավո» բացականչություններ[2]։

1920 թվականի մայիսի 11-ին քեմալական կառավարությունը Մոսկվա ուղարկեց հատուկ պատվիրակություն արտաքին գործերի մինիստր Բեքիր Սամի-բեյի գլխավորությամբ՝ պայմանագիր կնքելու շուրջ նախնական բանակցություններ վարելու համար։ Պատվիրակության կազմում էին տնտեսության մինիստր Յուսուֆ Քեմալ-բեյը, գնդապետ Իբրահիմ Թալի-բեյը, փոխգնդապետ Սեյֆի-բեյը և Ալի Ֆուադ Ջեբեսոյը։ «Բեքիր Սամի-բեյի պատվիրակության հիմնական խնդիրը,— գրում է Ջեբեսոյը,— կայանում էր նրանում, որպեսզի Սովետական Ռուսաստանի հետ կնքվեր բարեկամական պայմանագիր և ապահովվեր մեզ օգնություն դրամով և զանազան ռազմամթերքներով, որի կարիքը մենք ունեինք»[3]։

Հուլիսի 19-ին ժամանելով Մոսկվա, թուրքական պատվիրակությունը մի շարք հանդիպումներ ունեցավ արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Գ. Վ. Չիչերինի և նրա տեղակալ Լ. Մ. Կարախանի հետ։ Պատվիրակությունը զրույց ունեցավ նաև Վ. Ի. Լենինի հետ։ Այդ բանակցությունների ժամանակ երևան եկան Անկարայի կառավարության ագրեսիվ պլանները Անդրկովկասի նկատմամբ։

Բանակցությունների հենց սկզբից Սովետական Ռուսաստանի կառավարությունը ձգտում էր հասնել այն բանին, որպեսզի Թուրքիայի ու Անդրկովկասի միջև սահմանի հարցը արդարացի կերպով լուծվի։ Անկարայի կառավարությանն ուղղած արդեն առաջին նա-

1 „Правда", 9. VI. 1920 г.

2 Տե՛ս „Atatürk'ün söylev ve demeçleri" I, T. B. M. Meclisinde ve C. H. P. Kurultaylarında (1919—1938), cilt I, Istanbul, 1945, s. 60.

3 «Ալի Ֆուադ Ջեբեսոյի քաղաքական հուշերը», Տե՛ս «Վաթան» թերթը, 9 մարտի, 1954 թ.։

մակում [1] Գ. Վ. Չիչերինը ընդգծում էր այդ հարցի կարևորությունը։ Հիշատակելով Թուրքահայաստանին, Քրդստանին, Լազիստանին, Բաթումի մարզին ու Արևելյան Թրակիային իրենց բախտն անձամբ տնօրինելու ապթիվ ապրիլի 26-ի Քեմալի նամակում տրված խոստման մասին, սովետական կառավարությունը ընդգծում էր, որ դրա տակ ինքը «բնականաբար ենթադրում է այդ տեղերում ազատ հանրաքվեի անցկացում՝ գաղթականների և վտարանդիների մասնակցությամբ, որոնք իր ժամանակին իրենցից անկախ պատճառներով ստիպված են եղել թողնել իրենց հայրենիքը և որոնք պետք է վերադարձվեն հայրենիք» [2]։

Դա առանձնապես կարևոր էր Արևմտահայաստանի բախտը որոշելու համար և լիովին համընկնում էր «Թուրքահայաստանի» վերաբերյալ դեկրետի հիմնական կետերի հետ, որի մասին խոսվեց վերևում։ Իր հայտարարության մեջ սովետական կառավարությունը որոշակիորեն հասկացնել էր տալիս, որ հիշյալ շրջանների ճակատագիրը կորոշի ինքը ժողովուրդը՝ խաղաղ ճանապարհով, առանց կողմնակի միջամտության։ Ելնելով դրանից, Սովետական Ռուսաստանի կառավարությունը Մոսկվայի բանակցությունների ժամանակ առաջ էր քաշում հին թուրքական սահմանի այնպիսի ճշգրտում (ռեկտիֆիկացիա), որի հետևանքով մահմեդական բնակչությամբ գերակշռող հողերը անցնեին Թուրքիային, իսկ այն հողերը, որտեղ մինչև 1914 թվականը եղել էր հայկական մեծամասնություն՝ անցնեին Հայաստանին։

Սակայն տվյալ դեպքում էլ ազգագրական հարցի կոմպրոմիսային լուծման փորձերը հաջողություն չունեցան։ Ավելին։ Բեքիր Սամի-բեյը թուրքական սահմանի ճշգրտման շուրջ Չիչերինի հետ ունեցած իր զրույցներն օգտագործեց, որպեսզի Անկարա վերադառնալուց հետո Թուրքիային տրամադրի Սովետական Ռուսաստանի դեմ [3]։

Այս բոլորը վկայում է այն մասին, որ Մոսկվայի բանակցությունները հաջողությամբ չպսակվեցին Անկարայի կառավարության զավթողական ձգտումների պատճառով և ոչ թե սովետական ղեկավարների մեղքով, ինչպես փորձում են հաստատել թուրք հեղինակները։ Այսպես, օրինակ, նույն Ալի Ֆուադ Ջեբեսոյը իր հուշերում խոսելով 1920 թվականի Մոսկվայի բանակցությունների մասին,

1 Դա Մուստաֆա Քեմալի 1920 թվականի ապրիլի 26-ի նամակի պատասխանն էր։ Տե՛ս «Документы внешней политики СССР», т. II, № 372, Госполитиздат, М., 1958.

2 Նույն տեղում, № 372։

3 Նույն տեղում։

ջանում է քողարկել քեմալականների ագրեսիվ պլանները և իրերի վիճակն այնպես ներկայացնել, որ իբր Անկարայի կառավարության տերիտորիալ պահանջները միանգամայն օրինական էին և վերաբերում էին բացառապես թուրքական հողերին։

«Անկարայի կառավարությունը,— գրում է Ջեբեսոյը,— չուներ որևէ թշնամական մտադրություն իր հարևան երկրների նկատմամբ և չէր հետապնդում այլ նպատակ, քան իր անկախության և ազատության հասնելը՝ ազգային սահմանների շրջանակներում» [1] (ընդգծումը մերն է—Ե. Ս.)։ Մյուս թուրք հեղինակները նույնպես կեղծելով պատմական փաստերը, Մոսկվայի բանակցությունների ձախողման մեջ փորձում են մեղադրել սովետական կառավարությանը [2]։ Այսպես, Թեվֆիկ Բրյիքլրօղլուն գրում է, որ «1920 թվականի օգոստոսի 24-ին Մոսկվայում ստորագրված բարեկամության նախնական համաձայնագրի չկնքման հիմնական պատճառն այն էր, որ սովետները նպատակադրվել էին մեր արևելյան վիլայեթների հողերը տալ դաշնակցական հայերին» [3]։

Մոսկվայի բանակցությունների ժամանակ երևան եկավ ոչ միայն այն, որ քեմալականները հրաժարվում են տերիտորիալ հարցերը արդարացի կերպով լուծելու վերաբերյալ նախկինում արված իրենց հայտարարություններից, այլև նրանց բացորոշ հարձակողական մտադրություններն Անդրկովկասի նկատմամբ [4]։

Այդ մասին է վկայում նաև քեմալական կառավարության 1920 թվականի հուլիսի 8-ի նոտան դաշնակցական կառավարությանը, որտեղ ընդգծվում էր, որ երկու կառավարությունների միջև, որպես հարաբերությունների հիմք, ծառայում է Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը և նրան լրացնող Բաթումի պայմանագիրը [5]։

Հունիսի 28-ին պատասխան նոտայում դաշնակցական կառավարությունը մատնանշում էր, որ Անկարայի կառավարության հու-

1 Տե՛ս Ե. Սարգսյան, Ռ. Սահակյան, Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության ննդգափոխումը թուրք պատմագրության մեջ։ Հայպետհրատ, Երևան, 1963, էջ 56։

2 Տե՛ս նույն տեղում, էջ 57։

3 Նույն տեղում։

4 Ֆրանսիացի մի հեղինակ, որը 1919—1921 թվականներին ճանապարհորդություն էր կատարել Մերձավոր Արևելքի երկրներում ու Անդրկովկասում, գրում էր, որ Անդրկովկասի նվաճման պլանը քեմալականների կողմից կազմվել էր 1919 թ. և այդ նույն թվականից էլ նրանք սկսել էին իրականացնել այն։ Տե՛ս Poidebard, La Lutte pour la route des Indes. Notes de voyage: de Paris a Tiflis par Bagdad, Paris, 1923, p. 267.

5 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200 գ, 402, թ. 18։

լիսի 8-ի նոտայում բերված փաստարկներն անհիմն են, քանի որ Բրեստ-Լիտովսկի և Բաթումի դաշնագրերը կնքված են սուլթանի կառավարության կողմից, որին քեմալական կառավարությունը չի ճանաչում։

«Այն հանգամանքը,— ասվում էր այնուհետև նոտայում,— որ Դուք իբրև հիմք եք ընդունում Բրեստ-Լիտովսկի և Բաթումի դաշնագրերը, որոնք հիմնովին չեն ճանաչում կենսունակ Հայաստանի գոյությունը, ի մեծ ցավ, զրկում է մեզ Ձեզ հետ համաձայնության գալու ամեն հույսից, քանի դեռ Դուք կշարունակեք ղեկավարվել գերմանական կայսերական և սուլթանական իմպերիալիստական կառավարությունների ձգտումներով, որոնք իրենց արտահայտությունն են գտել այդ դաշնագրերում...»։ Նոտայի վերջում ասվում է. «Հայաստանը մտադիր չէ քայլեր անել նախկին ռուս-տաճկական սահմաններն անցնելու համար. նամանավանդ նա իրավունք ուներ հուսալ, որ Տաճկաստանը չպիտի միջամտի այն հարցերին, որոնք վերաբերվում են Հայաստանի ներքին գործերին, և այս տեսակետից Ձեր պահանջը՝ Օլթիի շրջանը, որը կազմում է Հայկական հանրապետության անվիճելի մասը, հայկական զորամասերից մաքրելու մասին, և հիշյալ շրջանում Ձեր ասքյարների հարձակողական շարժումները բոլորովին անըմբռնելի և անթույլատրելի են»[1]։

Սակայն քեմալական կառավարությունը շարունակում էր առայ քաշել իր տերիտորիալ պահանջները՝ հենվելով Բրեստ-Լիտովսկի և Բաթումի պայմանագրերի, ինչպես նաև Չիչերինի 1920 թվականի հունիսի 3-ի նամակին տրված պատասխանի վրա[2]։

Ինչպես տեսնում ենք, դեռ նախքան Մոսկվայի բանակցությունները, Անկարայի կառավարությունը ՌՍՖՍՌ կառավարությանը և դաշնակցական կառավարությանը հասկացնել էր տալիս, որ տերիտորիալ հարցում նա ղեկավարվելու է Բրեստ-Լիտովսկի և Բաթումի պայմանագրերի հոդվածներով։ Մինչդեռ հայտնի է, որ հիշյալ պայմանագրերը իրավական ուժ չունեին, որովհետև Բրեստի պայմանագիրը չեղյալ էր հայտարարվել Սովետական Ռուսաստանի կառավարության կողմից տակավին 1918 թվականի սեպտեմբերի 20-ին, իսկ Բաթումի պայմանագիրը չէր վավերացվել ո՛չ Օսմանյան կայսրության մեջլիսի, ո՛չ էլ դաշնակցական հանրապետության պառլամենտի կողմից։ Սակայն Անկարայի կառավարությունը, Անդրկովկասի նկատմամբ զավթողական նպատակներ հետապնդելով, կառչում էր հիշյալ պայմանագրերի մեռյալ կետերից և Մոսկվայի բանակցությունների ժամանակ ջանում էր օրինականացնել իր տերիտորիալ հավակնությունները։

1 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 402, թ. 19։

2 Տե՛ս «Документы внешней политики СССР», т. II, № 372.

Քեմալականների էքսպանսիոնիստական քաղաքականությունը Անդրկովկասի նկատմամբ դրսևորվեց տակավին 1920 թվականի սկզբին։ Այդ մասին է, մասնավորապես, վկայում Քեմալի կողմից գլխավորվող ներկայացուցչական կոմիտեի նիստերից մեկում ընդունված հետևյալ որոշումը. «Արևելյան ճակատում անցկացնել պաշտոնական կամ ոչ-պաշտոնական զորահավաք և սկսել զորքերի կենտրոնացումը՝ կովկասյան արգելքը թիկունքից վերացնելու համար»[1]։

Քեմալական զորքերի պատերազմական միջոցառումների մասին հետաքրքիր փաստաթղթեր են պահպանվել Հայկական ՍՍՌ-ի կենտրոնական պատմական արխիվում։ Դրանցից մեկում ասվում է, որ թուրքերը ձեռք էին առել հետևյալ միջոցները. 1. սահմանապահ 15-րդ բանակի գնդերը (17, 28, 29 և 36) կենտրոնացրել էին Բարդուսի և Օլթիի շրջանում։ Հայտարարվում էր ընդհանուր զինակոչ՝ մինչև 40 տարեկան հասակը։ Ձեռք էին առնված խիստ միջոցներ դասալքության դեմ և ամեն կերպ հաջողեցրել էին իրենց հիշյալ գնդերի սվինների թիվը հասցնել 1000—1100-ի՝ յուրաքանչյուրում։ Չորս գնդերում բոլոր սվինների թիվը, այսպիսով, հասնում էր 4—4,5 հազարի։

2. Թորթումի և Նարիմանի շրջանի մահմեդականներից կազմել էին երկու տեղական գումարտակներ՝ ընդամենը 2 հազար կովողներ։

3. Ուղարկել էին ագիտատորներ և սպաներ Օլթիի շրջանի քրդերի և թուրքերի մեջ, որոնց հաջողվել էր շրջանի հյուսիսային մասերում կազմակերպել մի քանի չեթեներ՝ ընդամենը մինչև 1000 մարդ։

Վերջապես, հավաքված զորքերի ամբացման համար Էրզրումից Բարդուս էր ուղարկվել մի գումարտակ Էրզրումյան ժանդարմներ՝ թվով մինչև 400 հոգի։

Այսպիսով, վերոհիշյալ ձևով թուրքերի ընդհանուր թիվը միայն Բարդուսի և Օլթիի շրջանում հասնում էր մինչև 4,5 հազար կանոնավոր և 3—3,5 հազար անկանոն զորքի»[2]։

Իր ժամանակին քեմալականների հարձակման ծրագրերը մեր-

1 Кемаль-Мустафа, Путь новой Турции, т. 3, стр. 313.

2 Հայկ. ՍՍՌ պետական կենտրոնական պատմական արխիվ, ֆ. 200, ց. 1, գ. 467, թ. 19։

կացրել է ֆրանսիական «Le Journal d' Orient» թերթը՝ իր 1920 թվականի հոկտեմբերի 19-ի համարում զետեղված «Ինչպես քեմալականները որոշեցին հարձակվել Հայաստանի վրա» վերնագրով հոդվածում, որտեղ ասված էր հետևյալը. «Քեմալականները փընտրելով մի որևէ զղայացունց ավանտյուրա, որը նրանց հնարավորություն կտար բարձրացնել Անատոլիայի բնակչության խիստ բարոյալքված ոգին, Անկարայում հղացան Մուստաֆա Քեմալի անձնական նախաձեռնությամբ մի ընդհանուր հարձակում Հայաստանի վրա, որի մասին Կոստանդնուպոլսի պետական մարմիններն, անկասկած, արդեն տեղյակ էին։ Պոլսում չգիտեին միայն, թե ինչպիսի՞ նախապատրաստություն էր նախորդել այդ հանկարծակի որոշմանը։ Սեպտեմբերի 7-ին 15-րդ կորպուսի հրամանատար Քյազրմ Կարաբեքիրը էրզրումից գալիս է Անկարա, որտեղ հաջորդ օրն իսկ Մուստաֆա Քեմալի նախագահությամբ հրավիրվում է Զինվորական բարձրագույն խորհրդի նիստ, որին ներկա էին գեներալներ Ահմեդ Ֆեվզին, Մուհաեդդինը, Ալի Ֆուադը և Նուրեդդինը, ինչպես նաև գլխավոր շտաբի պետ գնդապետ Իսմեթ բեյը։

Գեներալ Քյազրմ Կարաբեքիրը հայտարարեց, որ մի ընդհանուր հարձակում Հայաստանի դեմ անհրաժեշտ է...

Խորհուրդն, այն ժամանակ, հարցրեց նրան, թե արդյո՞ք իր զորքերը բավարար են և ինքը վստա՞հ է, որ քեմալական բանակներին լիակատար հաջողություն կապահովվի։

Քյազրմ Կարաբեքիրն ասաց, որ նա իր տրամադրության տակ ունի չորս դիվիզիա, որոնցից երկուսը՝ Ռեմզիի հրամանատարության ներքո։

Այս դիվիզիաներից յուրաքանչյուրը՝ բաղկացած 8—9 հազար մարդուց, ստանալու էր նաև թուրքական ու քրդական անկանոն ուժերի օժանդակությունը։ Ըստ Քյազրմի, արևելյան ճակատի թուրքական հրետանին թեև դեռ անկազմակերպ, բայց բավարար էր լինելու։

Այնուամենայնիվ Մուստաֆա Քեմալի համար մի հարց դեռևս մնում էր մութ, այն է՝ Հայաստանի նկատմամբ ագրեսիայի դեպքում Վրաստանի գրավելիք դիրքը, որը, ինչպես հայտնի է, ուներ թվով փոքր, բայց շատ լավ կազմակերպված բանակ» (ընդգծումները մերն են—Ե. Ս.)։

Այնուհետև ասվում էր, որ այդ նպատակով Յուսուֆ Քեմալ բեյի գլխավորությամբ մի գաղտնի միսիա է ուղարկվում Թիֆլիս, որտեղ վերջինս հանդիպումներ ունենալով վրացական խորհրդի նախագահ Նոյ Ժորդանիայի և արտաքին գործերի մինիստր Գեգեչկորիի հետ, ստանում է նրանց այն հավաստիացումը, որ «հայքեմալական ընդհարման դեպքում Վրաստանը կհայտարարի իր խիստ չեզոքությունը...» [1]։

Ուստի պատահական չէ, որ երբ հունական բանակը ընդհուպ մոտեցել էր Անկարային, քեմալականները, իրենց ագրեսիվ պլանների իրականացման ձգտումով տարված, իրենց հիմնական ուժերը կենտրոնացրել էին արևելյան ճակատում՝ Անդրկովկասի դեմ, սպասելով, ինչպես խոստովանում էր Կարաբեքիր-փաշան, «ամենահարմար ժամանակի» Հայաստանի վրա հարձակվելու համար [2]։ Որ քեմալականների համար արևելյան ճակատը իրոք հիմնական ճակատ էր, երևում է նաև Մուստաֆա Քեմալի խոստովանությունից, որը մեջլիսի նիստում արտասանած իր ճառում մեջ էր բերել թուրք պատմաբան Ջեվդեթ Քերիմի՝ «Անկախության համար մղված թուրքական պայքարի մասին» դասախոսությունից հետևյալ հատվածը.

«Անատոլիայի ղեկավարները, ելնելով քաղաքական ու ռազմական նկատառումներից, դրությունն արևելքում (կովկասյան ճակատում— Ե. Ս.) ավելի լուրջ էին համարում։ Քանի որ հույների ու ֆրանսիացիների դեմ սկզբնական շրջանում պաշտպանական խնդիրներ էին դրված, ուստի այդ ճակատներում մենք ռազմական աննշան ուժերով ձգտում էինք բոլոր միջոցներով խոչընդոտել հակառակորդի հետագա առաջխաղացմանը... իսկ ճիմնական ուշադրությունը դարձվում էր արևելյան նակատին, որովհետև այստեղ հաջողության հասնելու դեպքում պետք է ոչնչացվեին հայկական բանակը և հայկական պետությունը, որոնք թարախապալարի նման դեռ մնում էին մեր երկրի մարմնի վրա...» [3] (ընդգծումը մերն է—Ե. Ս.)։

Բավական է նշել, որ Ինոնյուի առաջին ճակատամարտի ժամանակ հունական զորքերի թիվը հասնում էր 60 հազարի, որոնց դեմ թուրքական հրամանատարությունը դուրս էր բերել ընդամենը 15 հազար զինվոր։ Մինչդեռ թույլ և սակավաթիվ դաշնակցական զորքերի դեմ քեմալականները դուրս էին բերել 50 հազարանոց բանակ։

Նույնիսկ Էնվերն ու Թալեաթը, որոնք Թուրքիայի ջախջախումից հետո փախել էին Գերմանիա, քաջ գիտեին այդ պլանների մասին և այնտեղից խորհուրդներ էին տալիս նոր Թուրքիայի կառավա-

---

1 Տե՛ս Հայկական ՍՍՌ պետական կենտրոնական պատմական արխիվ, ֆ. 200, ց. 1, գ. 443, թ. 36—37։

2 Տե՛ս Cemal Kutay, Karabekir Ermenistanı nasıl yok etti?, Istanbul, 1956, s. 36.

3 Кемаль-Мустафа, Путь новой Турции, т. III, М., 1934, стр. 314.

ղողներին, որոնց դիտում էին որպես իրենց քաղաքականության անմիջական շարունակողների։

«Թանկագին Կարաբեքիր-փաշա,— գրում էր Թալեաթը Բեռլինից ուղարկած իր նամակում,— եթե ռազմական պատրաստությունները լրիվ են, անցիր հարձակման։ Կասկած չկա, որ արևելքում ձեռք բերվելիք հաղթանակը արևմտյան ճակատի և ամբողջ աշխարհի վրա խորին մի հետք կթողնի» [1]։

Ավելորդ չէ նշել, որ Թալեաթը, նախքան Կարաբեքիրին գրելը, զրույց էր ունեցել այդ ժամանակ նույնպես Բեռլինում գտնվող էնվերի հետ՝ Հայաստանի դեմ նախապատրաստվող հարձակման շուրջ և լրիվ հավանություն ստացել վերջինիս կողմից [2]։

Արխիվային նյութերից երևում է, որ Մոսկվայի բանակցությունների օրերին Թուրքիայի Ազգային մեծ ժողովի նիստերում մի քանի անգամ քննարկվել է ամբողջ Կովկասը գրավելու հարցը։ Անկարայից ստացված հաղորդումներից մեկում կարդում ենք. «Վերջին ժամանակներս Անկարայում հաճախ տեղի են ունենում Ազգային մեծ ժողովի նիստեր, որտեղ ներկա էին Կոստանդնուպոլսի կառավարության ներկայացուցիչները։ Ժողովի աշխատանքն ընթանում է պանիսլամական ոգով։ Նկատվում են ձգտումներ՝ գրավելու Բաթումը և Բաքուն։ Ազգային ժողովում մասնակցում էին Դաղստանի ներկայացուցիչները, որոնք արտահայտվեցին Դաղստանը Թուրքիային միացնելու օգտին։ Քեմալականների կողմից գործակալներ էին ուղարկվում Դաղստան և Բաքու» [3]։

Քեմալականների զավթողական պլանների մասին բացորոշ կերպով խոսում էր մուսավաթականների պարագլուխներից մեկը՝ Ռասուլ Զադեն, տակավին 1920 թվականի ապրիլի 8-ին։ «Թուրքիան իր առջև խնդիր է դնում,— նշում էր նա,— ստեղծել հարավ-արևմտյան Ադրբեջան՝ Երևանի ու Թիֆլիսի նահանգի մի մասի (Ախլցխայի ու Ախալքալաքի գավառները) և Ադրբեջանական հանրապետության տերիտորիայի մասերից, այն բանից հետո, երբ Ադրբեջանին կմիացվեն հարավ-արևմտյան Ադրբեջանը և Աջարիան, Թերեքի, Դաղստանի, Ղարաբաղի, պարսկական Ղարադաղի, Թավրիզի, Մարագի մահմեդական ազգաբնակչությունը։ Այսպիսով, պետք է ստեղծվի մեծ Ադրբեջան՝ Թուրքիայի խնամակալության ներքո» [4]։

1 *Մեջբերումն արվում է Ե. Սարգսյանի, Ռ. Սահակյանի «Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ» գրքից, էջ 43։*

2 *Տե՛ս նույն տեղում։*

3 ЦГАКА, ф. 109, оп. 3, д. 298, л. 28.

4 *ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 66, գ. 318, թ. 76։*

Անդրկովկասում իր զավթողական պլաններն իրականացնելու համար Անկարայի կառավարությունը որոշել էր առաջին հերթին գրավել ամբողջ Հայաստանը, որպեսզի անմիջական տերիտորիալ կապ ունենա Ադրբեջանի հետ և նման ձևով կարողանա իրականացնել թուրքալեզու ժողովուրդներից ֆեդերացիա ստեղծելու իր պանթուրքական պլանները՝ թուրք էքսպանսիոնիստների գլխավորությամբ։ Այդ պլանների մասին են վկայում նաև Կարինի ու Սվազի կոնգրեսները։ Կարինի կոնգրեսի ժամանակ (1919 թ. հուլիսի 23—օգոստոսի 6) ընդգծվում էր ոչ թե իմպերիալիստական տերությունների ինտերվենցիայի վտանգը Թուրքիայում, այլ «հայերի չար մտադրություններն ու բռնությունները»։ Սվազի կոնգրեսում (1919 թ. սեպտեմբերի 4—11) ընդունվեց հատուկ որոշում, որտեղ ասված էր, որ քեմալականները վճռական պայքար կմղեն ամեն մի շարժման դեմ, որն իր առջև նպատակ է դրել անկախ Հայաստանի ստեղծումը։ 1919 թվականի նոյեմբերի 17-ի հեռագրում Մուստաֆա Քեմալը գրում էր. «Ինչպես հետևում է Սվազի ու Կարինի կոնգրեսների որոշումներից, ազգը ոչ մի թիզ հող չի զիջի Հայաստանին» [1]։

Ոգևորվելով այն բանից, որ կովկասյան հակահեղափոխական ուժերը Անդրկովկասն անջատել էին Սովետական Ռուսաստանից, քեմալականներն ամեն կերպ ձգտում էին գրավել ողջ Կովկասը։

Այն ժամանակ, երբ Մոսկվայում բանակցությունները շարունակվում էին, Անկարայի կառավարությունը որոշակիորեն իր ուժերը նախապատրաստել էր Անդրկովկասի վրա հարձակվելու համար։ Հիքմեթ Բայուրի խոստովանությունից պարզվում է, որ Անկարայի կառավարությունը վաղուց էր որոշել հարձակում ձեռնարկել Անդրկովկասի դեմ, սակայն այնտեղից անգլիական զորքերի էվակուացիայի ուշացումը զսպում էր թուրքերին։ «Եթե այդպիսի ժամանակ,— գրում է Բայուրը,— հայ-թուրքական պատերազմ ծագեր, անգլիական զորքերը կարող էին մնալ Կովկասում և գործնական օգնություն ցույց տալ հայերին։ Ուստի ամենից բանականն այն էր, որ մենք որոշ ժամանակ սպասեինք։ Սակայն երկրի արևելյան մասում մենք զորահավաք անցկացրինք և նախապատրաստեցինք արևելյան ճակատի ստեղծումը» [2]։ *Ալի Ֆաուդ Ջեբեսոյի խոստովա-*

1 Кемаль М. Путь новой Турции, т. II, стр. 120. *Այդ մասին խոսվում է նաև Մուստաֆա Քեմալի 1919 թվականի օգոստոսի 19-ի ծածկահեռագրում, որն ուղարկված էր Ալի Ֆուադին։ Տե՛ս* Ali Fuat Cebesoy, Milli mücadele hatıraları, Istanbul, 1953, s. 139—140.

2 Yusuf Hikmet Bayur, Türkiye devletinin dış siyasası, Istanbul, 1938 s., 65.

նությամբ, Կարաբեքիր-փաշայի զորքերը պատրաստ էին Հայաստանի վրա հարձակվելու տակավին 1920 թվականի մայիսին և եթե գլխավոր հրամանատարությունը համաձայնվեր Կարաբեքիրի՝ Հայաստանի դեմ պատերազմը մայիսին [1] սկսելու առաջարկության հետ, պատերազմն արևելյան ճակատում շատ արագ կավարտվեր և կովկասյան ճակատից ազատված զորամասերը օգնության կհասնեին արևմտյան ճակատին [2]։

Ինքը Մուստաֆա Քեմալը իր ճառում ընդգծել է, որ «Ազգային մեծ ժողովը երեք վիլայեթների (խոսքը Կարսի, Բաթումի և Արդահանի մասին է—Ե. Ս.) հարցի կապակցությամբ լիազորել է մինիստրների խորհրդին օկուպացնել դրանք՝ հենց որ հնարավորություն ստեղծվի։ Այսպիսով, հունիսի 6-ին մեր կողմից արևելյան բանակին հրաման տրվեց պատրաստվել հարձակման» [3]։ Իսկ արևմտյան ռազմաճակատի հրամանատար Ալի Ֆուադին ուղարկած Մուստաֆա Քեմալի 1920 թվականի սեպտեմբերի 14-ի նամակում ուղղակի ասված էր. «Հայերի հետ սկսել բարենպաստ պատերազմ այն հաշվով, որպեսզի Ադրբեջանը միացվի Թուրքիային» [4]։

Այս բոլորը վկայում է այն մասին, որ քեմալականները, շարունակելով երիտթուրքերի նվաճողական քաղաքականությունը, վաղուց էին պատրաստվում գրավելու ողջ Անդրկովկասը։

Այսպիսով, Թուրքիայի ազգային-ազատագրական պատերազմի նույնիսկ ամենածանր օրերին՝ 1920 թվականի հունիսին, երբ հունական զորքերը ձեռնարկել էին խոշոր հարձակում արևելյան Թրակիայում ու Անատոլիայում, գրավել Ադրիանապոլիսը, Բրուսան, Բալըքեսիրը, Էրեգլին և մի շարք այլ քաղաքներ, Անկարայի կառավարությունը իր հիմնական ուժերը կենտրոնացրել էր արևելյան ճակատում՝ Հայաստանի սահմանի վրա։ Այդ մասին ներկայումս բացեիբաց գրում են մի շարք թուրք հեղինակներ՝ պրոֆ. Էնվեր Զիյա Կարալը [5], գեներալ Ալի Ֆուադ Ջեբեսոյը [6], ռազմական դրպ-

1 Ներևելյան ճակատի հրամանատար Կարաբեքիր-փաշան տակավին 1920 թվականի ապրիլին հեռագրում էր իր կառավարությանը հետևյալը. «Շուտով պիտի ավետեմ, որ Հայաստանը սրբված է աշխարհի քարտեզից»։

2 Այդ մասին մանրամասն տե՛ս Ե. Սարգսյան, Ռ. Սահակյան, Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության ննդգափոխումը թուրք պատմագրության մեջ, էջ 49—50։

3 „Atatürk'ün söylev ve demeçleri". Cilt 1, s. 90.

4 General Ali Fuat Cebesoy, s. 474.

5 Prof. Enver Ziya Karal, Turkiye Cumhuriyeti tarihi (1918—1953), Istanbul, 1958, s. 97.

6 General Ali Fuat Cebesoy, Moskova hatıraları, Istanbul, 1955, s. 61.

բոցներում պատմություն ավանդող Թահսին Յունալը [1] և ուրիշներ։

Ինչպես թուրք հեղինակների խոստովանությունները, այնպես էլ քեմալականների կողմից ազգային-ազատագրական պատերազմի հենց սկզբից տարվող քաղաքականությունը հաստատում են, որ քեմալական շարժումը իր ծագման առաջին իսկ օրից հակասական բնույթ ուներ։ Մի կողմից այդ շարժումը հակաիմպերիալիստական, ազգային-ազատագրական բնույթ ուներ և ուղղված էր արևմտյան իմպերիալիզմի դեմ, իսկ մյուս կողմից՝ նա ընդունեց նվաճողական, իմպերիալիստական բնույթ Անդրկովկասի նկատմամբ [2]։

Թուրք հեղինակները այդ զավթողական պատերազմը հրամցնում են որպես ազգային-ազատագրական պատերազմ, իսկ Հայաստանում քեմալական ագրեսիայի հետևանքով ձեռք բերված տերիտորիալ նվաճումները համարում են ազգային-ազատագրական պատերազմի ճակատում տարած իրենց առաջին հաղթանակը։ Ջեմալ Քութայը այդ կապակցությամբ գրում է. «Եթե Կարաբեքիրը արևելքում հաղթանակ չտաներ, ի՞նչ կլիներ մեր ազգային կռվի բախտը» [3]։

Այնինչ Սարգիս Կասյանը տակավին 1919 թվականին բնութագրելով քեմալական շարժումը, որը նոր էր սկիզբ առել, ընդգծել է. «Մուստաֆա-քեմալական շարժումը, որին քեմալականները անվանում են «ազգային»... դա տաճիկ պորտաբույծ փաշաների, տրզրուկ պաշտոնյաների և զանազան թալանչիների ձգտումն է պահ-

1 Tahsin Ünal, 1700 den 1958e kadar Turk siyasi tarih, Ankara 1958, s. 270.

2 Վերջերս լույս տեսած «Վսեմիրնայա իստորիայի» 8-րդ հատորում «Մերձավոր և Միջին Արևելքի ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը» բաժնում, Մուստաֆա Քեմալ-փաշայի կողմից գլխավորվող թուրք ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը լուսաբանելիս բոլորովին անտեսվում է քեմալական շարժման հակասական բնույթը։ «Անատոլիայի քաղաքական ու ռազմական գործիչների մեջ,—կարդում ենք 8-րդ հատորում,—կային Քեմալի թաքնված և նույնիսկ բացահայտ թշնամիներ, որոնք կողմնակից էին կոմպրոմիսի իմպերիալիստների հետ։ Նրանք ցանկանում էին թուրքական ազգային շարժումը շեղել իմպերիալիստական ինտերվենցիայի դեմ պայքարից և ուղղել այն դեպի շովինիստական հոնը՝ կովկասի ժողովուրդների դեմ» (էջ 452)։ Այսպիսով, 1920 թվականին հայ-թուրքական պատերազմի սանձազերծման ամբողջ մեղքը բարդելով թուրքիայի Ներսում Քեմալի հակառակորդների, ինչպես նաև Անտանտի իմպերիալիստների ու դաշնակների վրա, դրանով իսկ անտեսվում է այն փաստը, որ թուրքական նացիոնալիստները ունեին իրենց սեփական զավթողական պլանները (տե՛ս էջ 452—454)։

3 Տե՛ս Ե. Սարգսյան, Ռ. Սահակյան, Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության ննդգափոխումը թուրք պատմագրության մեջ, էջ 51։

պանել իրենց անբաժան գերիշխանությունը... Տաճկաստանում, նրանց շարժումն է դեպի Անդրկովկաս»[1]։

Վ. Ի. Լենինը 1920 թվականի հոկտեմբերի 9-ին ՌԿ(բ)Պ Մոսկվայի կազմակերպության ակտիվի խորհրդակցությունում կարդացած «Ռեսպուբլիկայի ներքին և արտաքին դրության մասին» զեկուցման մեջ, Անդրկովկասի նկատմամբ քեմալականների նվաճողական ձգտումների մասին ասել է հետևյալը. «Վերջերս Թուրքերը սկսեցին հարձակումը Հայաստանի վրա՝ նպատակ ունենալով գրավել Բաթումը, իսկ այնուհետև, հնարավոր է, և Բաքուն։ Հասկանալի է, որ մենք այդ հարցում պետք է մաքսիմալ զգուշություն հանդես բերենք»[2]։

Վ. Ի. Լենինը ուշի-ուշով հետևելով քեմալականների առաջխաղացմանը Անդրկովկասում և նրանց հետապնդման նպատակներին, 1920 թվականին սովետների 8-րդ համագումարում (դեկտեմբերի 21-ի) տված իր զեկուցման եզրափակման խոսքում, անդրադառնալով սովետա-թուրքական հարաբերությունների հարցին. կապված հայ-թուրքական պատերազմի հետ, ուղղակի նշել է, որ «Թուրքական հարձակումը Հայաստանի վրա նախորոշված էր մեր դեմ»։ Այնուհետև բնութագրելով քեմալականներին, Վլադիմիր Իլյիչը շեշտել է, որ Թուրքիայում իշխանության գլուխն են «կանգնած կադետները, օկտյաբրիստները, նացիոնալիստները, որոնք պատրաստ են ծախելու մեզ Անտանտին»[3]։

Քեմալականների ագրեսիայի ու նրա հակասովետական բնույթի և Թուրքական զորքերի Անդրկովկասի մի շարք շրջանները զավթելու մասին ժամանակին հաղորդել է նաև մենշևիկյան Վրաստանում ՌՍՖՍՌ լիազոր ներկայացուցիչ Ս. Մ. Կիրովը Չիչերինին ուղղված հեռագրում։

Թեև քեմալականները կեղծավորաբար հավաստիացնում էին, որ իրենք բարեկամաբար են տրամադրված Սովետական Ռուսաստանի նկատմամբ, Ս. Մ. Կիրովը նրանց գործողություններում տեսնում էր նրանց խարդախ գործերը, նրանց հակասովետական մտադրությունները[4]։ Քեմալականների նվաճողական քաղաքականության մասին Չիչերինին գրում էր նաև Հայաստանում ՌՍՖՍՌ կառավարության լիազոր ներկայացուցիչ Բ. Վ. Լեգրանը. «Քանի գեռ Թուրքերը շարունակում են իրենց քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ, նրանց ընդհանրապես չի կարելի հավատալ, այդ բանը պետք է անպայման հաշվի առնվի»։ «Թուրքերի նվաճողական նացիոնալիստական ձգտումների առկայությունը Կարսի—Ալեքսանդրապոլի նկատմամբ,— նշում էր այնուհետև Լեգրանը,— միգուցե և Արդահանի—Աջարիայի ու Բաթումի նկատմամբ, քիչ թե շատ չափով անկասկած է»[1]։

Քեմալականներն առաջ էին շարժվում Նախիջևանի ուղղությամբ։ «Հունիսի վերջին Բայազետի թուրքական դիվիզիան, որը հաշվում էր շուրջ 9 հազար սվիններ, Ջավիդ-բեյի գլխավորությամբ սկսեց օկուպացնել Նախիջևան—Ջուլֆա—Օրդուբադի շրջանը»,— գրում էր 11-րդ բանակի հրամանատար Մ. Կ. Լևանդովսկին։ Մերկացնելով թուրքական զորքերի զավթողական նպատակները, Լևանդովսկին կարմիրբանակային զորամասերին հրամայեց կանխել թուրքերի հետագա առաջխաղացումը[2]։

Պատմական դեպքերը նենգափոխելու գործում թուրք հեղինակները հասել են այն աստիճանի, որ քեմալականների ագրեսիվ գործողությունները և ուրիշի տերիտորիաների զավթումը դիտում են որպես ներդրում Անդրկովկասում սովետական իշխանության հաղթանակի գործում։ Այսպես, Թեվֆիկ Բըյիքլըօղլուն Թուրքիայի պատմության ընկերության կողմից հրատարակվող «Բելլեթեն» ամսագրի 1961 թվականի հուլիսյան համարում ցինիկորեն գրում է. «Ներքին կռիվներով ու Լեհաստանի դեմ պատերազմով խիստ զբաղված լինելու ժամանակամիջոցին Կովկասում՝ Ադրբեջանում, Հայաստանում ու Վրաստանում, Սովետական Ռուսաստանի ուժերը թույլ ու քայքայված էին, և այդ պետությունների ու ժողովուրդների սովետականացումն այս ճակատում հնարավոր էր դարձել միայն թուրքական օգնության շնորհիվ»[3] (ընդգծումը մերն է— Ե. Ս.)։ Սակայն ինչո՞ւմն էր կայանում քեմալական Թուրքիայի օգնությունը։ Արդյոք նրանո՞ւմ, որ իրենց զավթողական պլաններն իրականացնելու նպատակով Քյազըմ Կարաբեքիր-փաշան իր բա-

1 Ս. Ատենյան (Ս. Կասյան), Ո՞ւր է ելքը, էջ 49։

2 «Ленинский сборник», XXXVI, Госполитиздат, М., 1959, стр. 131.

3 Տե՛ս жур. «Коммунист», М., 1963 г., № 6, стр. 8.

4 ЦПА ИМЛ, ф. 80, оп. 23, д. 5, л. 1. Տե՛ս Мнацаканян, Посланцы Советской России в Армении, Ереван, 1959, стр. 92, 97.

1 АВП СССР, ф. 32, д. 7, л. 100, 104. Տե՛ս А. Мнацаканян, стр. 115.

2 ЦПА ИМЛ, ф. 80, оп. 4, д. 83, л. 60—61. Տե՛ս А. Мнацаканян, стр 129—130.

3 Türk Tarih Kurumu, „Belleten". Cilt XXV, Temmuz, 1961, sayı 99, s.488. Զարմանալի է, որ սովետական առանձին հեղինակներ տուրք են տալիս նման հակագիտական, մինչև վերջը կեղծ պնդումներին։ Տե՛ս Хейфец А. Н. Влияние Великой Октябрьской социалистической революции на угнетенные народы Востока. Сборник «Великий Октябрь и народы Востока», М., 1957, стр. 56; Кузнецова С. И. Установление советско-турецких отношений. М., 1961, стр. 16 և ուրիշներ։

32 — 2423

նակով 1920 թվականի սեպտեմբերի 28-ին ներխուժեց Արևելյան Հայաստան և, առաջ շարժվելով դեպի երկրի խորքը, ամայի դարձրեց ամբողջ շրջաններ, ոչնչացնելով խաղաղ հայ ազգաբնակչության։ Եվ արդյոք նրանո՞ւմ, որ քեմալական զորքերի գազանությունները ոչնչով չէին տարբերվում երիտթուրքական դահիճների շարագործություններից։

Քյազիմ Կարաբեքիրի հորդաների կատարած գազանությունների մասին մեծ քանակությամբ արխիվային նյութեր են պահպանվել։ Բերենք դրանցից միայն մի քանիսը։ Ռումինական քաղաքացի Վ. Իենեսկուն 1921 թվականի հունվարի 27-ի իր նամակում, որն ուղղված էր Հայկական ՍՍՌ ներկայացուցչությանը մենշևիկյան Վրաստանում, հաղորդում էր, որ նա 1920 թվականի հոկտեմբերի 30-ին գերի էր վերցվել թուրքերի կողմից և մեկ ամիս հետո ազատվելով, ժամանել էր Կարս։ Այնուհետև նա գրում էր. «...ես թուրք բժիշկ Նուրի-բեյից իմացա, որ քաղաքում սպանվել են 8 հազար հայեր (կանայք, երեխաներ ու տղամարդիկ), սակայն իմ դիտումներով սպանվածների թիվը պետք է լինի 10—12 հազարից ոչ պակաս։ Տները ամբողջովին կողոպտված են... Ալեքսանդրապոլից մինչև Նալբանդ կայարանը, ամեն ինչ գտնվում է թուրքերի ձեռքում և այդ շրջանում... ոչնչացվել է 140 հայկական գյուղ և գլխովին սրի են քաշվել 18-ից մինչև 45 տարեկան բոլոր տղամարդիկ։ Մի խոսքով, այդ շրջաններում մնացած հայերի, ինչպես և գերիների դրությունը հուսահատական է։ Շատ գերիներ սառչում են և շատերը մահանում քաղցից» [1]։

Մի այլ փաստաթղթում, որտեղ մանրամասն նկարագրվում էր Կարսի գրավումը թուրքական զորքերի կողմից, ասվում էր, որ քաղաքում և նրա շրջակա գյուղերում կողոպուտն ու խաղաղ հայ ազգաբնակչության կոտորածը շարունակվում էին երկու շաբաթ։ Սպանվածների թիվն անհամար էր։ «Գրավելով Կարսը, թուրքերն անմիջապես ձեռնամուխ եղան այնտեղից Սարիղամիշ ու Կարին փոխադրելու այն ամենը ինչ որ իրենից արժեք էր ներկայացնում. զենք, արկեր, մեքենաներ գործարաններից ու արհեստանոցներից, տնային կահ-կարասի և այլն» [2]։

«Ալեքսանդրապոլի ու Կարսի շրջանների ազգաբնակչությունը տնտեսապես ամբողջովին քայքայված է թուրքերի կողմից։ Այդ տեղերից թուրքերը արտահանել են եղած ամբողջ հացը, բրինձը, լոբին և սննդի բոլոր պաշարները։ Անասուն բոլորովին չի մնացել՝

1 «Документы и материалы», л. 395—397.

2 ЦГАКА, ф. 109, оп. 3, д. 241, л. 12.

ո՛չ կով, ո՛չ ձի, ո՛չ ոչխար, ամեն ինչ քշվել-տարվել է Կարինի ուղղությամբ։

Տնտեսական մահացու այդ սիստեմին զուգահեռ, թուրքերը հիշյալ մարզերը ոտք դնելու առաջին իսկ օրից ձեռնամուխ եղան անխնա կոտորածներին, որոնք շարունակվում են մինչև այսօր։ Կարսի ու Ալեքսանդրապոլի շրջանների մի քանի տասնյակ գյուղերի հայ ազգաբնակչությունը սրի է քաշվել...» [1]։

Գ. Կ. Օրջոնիկիձեն Ավիսին ու Բեկզադյանին ուղղված 1920 թվականի դեկտեմբերի 16-ի հեռագրում խոսելով թուրքական գազանությունների ու թալանի մասին, հաղորդում էր, որ «Ալեքսանդրապոլից ստացվում են մեծ քանակությամբ հեռագրեր, որոնց համաձայն թուրքերը դուրս են բերում բառացիորեն ամեն ինչ» [2]։

Կապի աշխատող Կոստանաշվիլին Սովետական Վրաստանի արտաքին գործերի մինիստրությանը ներկայացրած հուշագրում մանրամասն նկարագրելով թուրքերի կողմից Ալեքսանդրապոլի գրավումը, ընդգծում էր. «Թուրքերը հանեցին բոլոր հեռագրային սարքավորումները, կտրեցին քաղաքը ամբողջ աշխարհից և ձեռնամուխ եղան իրենց հրեշավոր պլանի իրագործմանը՝ մի ամբողջ ժողովրդի ոչնչացման ծրագրին։ Քաղաքից դեպի գյուղ և գյուղից դեպի քաղաք տանող բոլոր ճանապարհները փակվեցին, ոչ մի բան բաց չէր թողնվում։ Քաղաքում սննդամթերք չկար։ Այստեղից մի հետևություն՝ բնակչությանը սովամահ անել։ Թուրքերի համար արդյունքները փայլուն էին. չքավոր բնակչությունը և գաղթականները մահանում էին հարյուրներով։ Դիակները հավաքելու համար փոխադրական միջոցները չէին բավարարում... Տեղական իշխանությունների կողմից ստեղծված հանձնաժողովի մոտավոր հաշվումների համաձայն, քաղաքի և Ալեքսանդրապոլի գավառի օկուպացման շրջանում բնակչության կորուստները հետևյալն են. տղամարդիկ՝ 30 հազար սպանված, 20 հազար վիրավոր, 16 հազար գերի ընկած, 10 հազար սովից մահացած։ Կանայք՝ 15 հազար սպանված, 5 հազար վիրավոր, 3 հազար գերի տարված, հազար հոգի սովից մահացած։ Երեխաներ՝ 5 հազար սպանված, 3 հազար վիրավոր, 10 հազար քաղցից մահացած» [3]։

Սովետական Հայաստանի ժողկոմսովետի նախագահ Ա. Մյասնիկյանը ՌՍՖՍՌ արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Գ. Վ.

1 ЦГАКА, ф. 109, оп. 3, д. 364, л. 25.

2 Архив Института марксизма-ленинизма при ЦК КПСС, ф. 85, оп. 14, д. 51, л. 8.

3 Политический архив МИД СССР, инв. № 53351, л. 14.

Չիչերինին ուղղած հեռագրում, 1921 թվականի հունիսին, տեղեկացնում էր, որ Ալեքսանդրապոլից թուրքական զորքերի հեռանալուց հետո քաղաքի շրջակայքում հայտնաբերվել էին կանանց ու երեխաների հազարավոր դիակներ։ «Հետաքննող հանձնաժողովը այժմ վերջացրել է իր աշխատանքները, որի արդյունքների մասին հաղորդում ենք Ձեզ ի գիտություն... Հանձնաժողովը Աղբուլաղի ու Ջաջուռի շրջաններում հաշվել է 12050 դիակ, որից 80 տոկոսը 5-ից մինչև 12 տարեկան երեխաներ են. երիտասարդ կանանց և աղջիկների բազմաթիվ դիակներ կան»։ Այնուհետև ասվում էր, որ Ալեքսանդրապոլի հանձնաժողովի հավաքած տվյալների համաձայն, թուրքերի կողմից սրի մատնվածների ընդհանուր թիվը կազմում է 60 հազար, որից տղամարդիկ՝ 30 հազար, կանայք՝ 15 հազար, երեխաներ՝ 5 հազար, աղջիկներ՝ 10 հազար։ Վիրավորների թիվը՝ 38 հազար, որոնցից տղամարդիկ՝ 20 հազար, կանայք՝ 10 հազար, գեռատի աղջիկներ՝ 5 հազար, երեխաներ՝ 3 հազար, գերի քշված տղամարդիկ՝ 18 հազար, որոնցից կենդանի է մնացել ընդամենը 2 հազար մարդ, մյուսները մեռել են սովից, ցրտից կամ սրի են քաշվել»[1]։

Կարելի է բազմաթիվ նման փաստաթղթեր բերել, սակայն բերված փաստերն էլ ակնառու կերպով ցույց են տալիս թուրքական զորքերի հարձակման նպատակներն Անդրկովկասում, թեև քեմալական ղեկավարները իրենց նվաճողական քաղաքականությունը քողարկում էին Անտանտի դեմ պայքարելու լոզունգով, իսկ Հայաստանի՝ «Անտանտի դաշնակցի», դեմ պատերազմը ներկայացնում էին, որպես Անտանտի իմպերիալիզմի դեմ մղվող պայքար։ Քեմալական պարագլուխները Հայաստանի վրա թուրքական զորքերի հարձակումից առաջ հայտարարեցին, որ Անկարայի կառավարության զորքերը կռվում են Անտանտի գործակալների՝ դաշնակների դեմ «հայ ժողովրդին դաշնակների լծից ազատագրելու համար»։ Այսպես, օրինակ, արևելյան ռազմաճակատի հրամանատար Քյազըմ Կարաբեքիր-փաշան թուրքական բանակի հարձակումից առաջ Հայաստանի ազգաբնակչությանն ուղղված հատուկ կոչ արձակեց, որտեղ նշվում էր, որ «քեմալականների հարձակման նպատակն է ինչպես քրիստոնեական, այնպես էլ մահմեդական խեղճ բնակչությանը փրկել այն դաշնակներից, որոնք թալանում են նրան և ցանկանում ստեղծել անհնարինը»[2]։

Թիֆլիսում Անկարայի կառավարության ներկայացուցիչ Քյազըմ-բեյը, այն բանից հետո, երբ Հայաստանը քայքայված էր, իսկ բնակչության մեծամասնությունը սրի քաշված թուրքական զորքերի կողմից, ցինիկորեն հայտարարեց. «Մենք հեռու ենք Հայաստանը ոչնչացնելու մտքից։ Մենք ցանկանում ենք ինքնուրույն դեմոկրատական Հայաստան։ Հայաստանը կհաստատի, որ ոչ մի դաժանություն չի թույլատրվել մեր կողմից գրավված մարզերում»[1]։

Քեմալականների դեմագոգիայի ծայրահեղ արտահայտություններից էր 1920 թվականի հոկտեմբերի 23-ին «Անատոլիայի գործակալության» դիմումը համաշխարհային հասարակական կարծիքին։ Անկարայի կառավարության անունից ֆրանսերեն լեզվով տարածվող այս «փաստաթղթում» քեմալականները «պարզաբանումներ» էին տալիս «թուրքական ազգայնական ուժերի և հայկական հրոսակների միջև Կովկասում տեղի ունեցող կռիվների կապակցությամբ (ընդգծումը մերն է,— Ե. Ս.)։ Նենգափոխելով իրական դեպքերը, քեմալական կառավարությունը հիշյալ «դիմումի» մեջ «պաշտոնական» վիճակագրական տվյալներ էր բերում Կարսի և այլ շրջաններում թուրք-մահմեդական ազգաբնակչության նկատմամբ հայերի կողմից իբր գործադրված «դաժանությունների», «199 գյուղերի հրկիզման» մասին և այլն։ Ամբողջովին շինծու այդ հայտարարության վերջում Անկարայի կառավարությունը փորձում էր համաշխարհային հասարակական կարծիքին համոզել այն բանում, որ «թափված արյան պատասխանատվությունն ընկնում է միայն և միայն հայերի վրա»[2]։

Ժամանակակից թուրք պատմաբանները քեմալական կառավարության կողմից 1920—21 թվականներին վարած ագրեսիվ քաղաքականության քողարկման գործում ետ չեն մնում վերը նշված քեմալական գործիչներից։ Այսպես, մեզ արդեն ծանոթ պատմաբան Թեֆիկ Բըյիքլըօղլուն, կեղծելով պատմական դեպքերը, փորձում է արդարացնել 1920 թվականի աշնանը Անդրկովկասում ձեռնարկած թուրքական արշավանքը՝ ներկայացնելով այն, որպես խաղաղասիրական մի քայլ. «1920 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին դաշնակցական Հայաստանի դեմ սկսած մեր կարճատև ռազմական գործողությունները նպատակ ունեին այդ շրջանում խաղաղություն ու անդորրություն հաստատել և մեր «ազգային ուխտը» իրականացնել»[3]։

1 АВП СССР, ф. 132, оп. 4, папка 6, д. 14, л. 52.

2 Архив Института марксизма-ленинизма при ЦК КПСС, ф. 85, оп. 14, д. 21, л. 1.

1 Архив Института марксизма-ленинизма при ЦК КПСС, ф. 85, оп. 14, д. 29, р. 5.

2 ՀՍՍՌ պետական կենտրոնական պատմական արխիվ, ֆ. 200, ց. 1, գ. 867, թ. 41։

3 „Belleten", Temmuz, 1961, s. 489.

Հայաստանը և Անդրկովկասն ամբողջությամբ փրկվեցին թուրքական զորքերի կողմից օկուպացվելու վտանգից միայն շնորհիվ Սովետական Ռուսաստանի կառավարության վճռական բողոքների։ Հայաստանի վրա քեմալական զորքերի արշավանքից առաջ, սովետական կառավարությանը հայտնի էին Անդրկովկասի նկատմամբ քեմալականների ունեցած զավթողական պլանները, ուստի և նա իր միջամտությամբ ձգտում էր կանխել պատերազմը քեմալական Թուրքիայի ու դաշնակցական Հայաստանի միջև։ Հայտնի է, որ 1920 թվականի հունիսին Հայաստանի դեմ նախապատրաստվող քեմալական հարձակումը հետաձգվեց հենց Սովետական Ռուսաստանի միջամտության շնորհիվ [1]։ Դաշնակցական կառավարության արտաքին գործերի մինիստրին ուղղած Չիչերինի 1920 թվականի հունիսի 15-ի հեռագրում ուղղակի ասվում էր, որ «բացառապես սովետական կառավարության խաղաղասիրական ձգտումների ազդեցության տակ թուրք նացիոնալիստները դադարեցրին իրենց սկսած զորակոչը, որը նպատակ ուներ նոր հարված հասցնել հայ ժողովրդին... Սովետական Ռուսաստանը կշարունակի ընթանալ ամեն մի ազգության աշխատավոր մասսաների նկատմամբ անաչառ բարեկամական վերաբերմունքի այդ նույն ուղիով, և հայ ժողովուրդը կարող է հույս դնել նրա մշտական բարեկամական վերաբերմունքի ու նրա ուժերի սահմաններում՝ նրա օգնության վրա՝ հայ ժողովրդին սպառնացող նոր արյունալի աղետները կանխելու համար» [2]։

Սովետական կառավարության հաստատուն դիրքը Անկարայի ղեկավար շրջաններին ստիպեց հետաձգել Հայաստանի վրա ծրագրվող հարձակումը։ Այդ մասին Մուստաֆա Քեմալը ասել է մեջլիսի նիստում արտասանած իր ճառում, որտեղ նա ընդգծել է, որ սովետական կառավարությունը կատեգորիկ կերպով դեմ է թուրքական զորքերի հարձակմանը Հայաստանի վրա և որ այդ պատճառով իրենք՝ քեմալականները հուլիսի 20-ին ստիպված եղան որոշում ընդունել արևելյան բանակի հարձակողական պատրաստությունները դադարեցնելու մասին [3]։

Իրականում, սակայն, քեմալականները չէին հրաժարվել իրենց զավթողական մտադրություններից, նրանք միայն հարմար առիթի էին սպասում Անդրկովկասի նկատմամբ վաղուց ծրագրված իրենց պլաններն իրականացնելու համար։

Երբ քեմալականները դաշնակցական զորքերի կողմից Օլթիի շրջանում ձեռնարկած գործողությունները որպես առիթ օգտագործելով հարձակվեցին Հայաստանի վրա և սկսեցին առաջ շարժվել դեպի Անդրկովկասի խորքը, սովետական կառավարությունը ավելի վճռական միջոցների դիմեց. նա պատրաստ էր զինված օգնություն ցույց տալ Հայաստանին։ Այդ մասին է վկայում ՌՍՖՍՌ կառավարության ներկայացուցիչ Լեգրանի հայտարարությունը դաշնակցական կառավարությանը 1920 թվականի նոյեմբերի 19-ին, որտեղ ասված էր. «Ես արդեն մատնանշել եմ ձեր դիվանագիտական ներկայացուցչին Թիֆլիսում, որ եթե Հայաստանի կառավարությունը դիմի Սովետական Ռուսաստանին ռազմական օգնություն ստանալու հարցով, այդ օգնությունը ցույց կտրվի» [1]։

Այս բոլորը վկայում է այն մասին, որ Սովետական Ռուսաստանի կառավարությունը իր պատրաստակամությունն էր հայտնում զինված օգնություն ցույց տալու Հայաստանին, և եթե դաշնակ կառավարողները համաձայնվեին ստանալ այդ օգնությունը, հայ ժողովուրդը կխուսափեր տասնյակ հազարավոր նոր զոհերից և նոր տերիտորիալ կորուստներից։ Սակայն հայ ժողովրդի ոխերիմ թշնամին՝ դաշնակցությունը գերադասեց Հայաստանը դնել թուրք զավթիչների կրնկի տակ՝ հույս ունենալով վերջիններիս օգնությամբ երկարաձգել իր տիրապետությունը։

Իրենց զավթողական պլանների իրականացման ձգտումով տարված, քեմալականները մերժեցին ՌՍՖՍՌ կառավարության բազմաթիվ առաջարկները միջնորդության և թուրքական զորքերի առաջխաղացումն Անդրկովկասում դադարեցնելու վերաբերյալ [2]։ Անկարայի կառավարությունը, օգտվելով այն բանից, որ դաշնակները մերժել էին Սովետական Ռուսաստանի օգնությունը, շարունակում էր իր ավերիչ հարձակումը դեպի Հայաստանի խորքը։

Ինչպես հայտնի է, հայ-թուրքական պատերազմն ավարտվեց Ալեքսանդրապոլի ստրկացուցիչ պայմանագրով, որն Անկարայի կառավարությունը կապել էր արդեն տապալված դաշնակցական կառավարության հետ՝ 1920 թվականի դեկտեմբերի 2-ին, այսինքն, Հայաստանում սովետական իշխանություն հռչակվելուց հետո։ Այդ պայմանագիրը փաստորեն միակողմանի գործողություն էր

---

1 «Документы внешней политики СССР», т. 2, док. № 372, стр. 725, приложения.

2 «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», էջ 353։

3 „Atatürkün söylev ve demeçleri", cilt I, s. 90.

1 Մեջ է բերվում ըստ А. Кадышев, Интервенция и гражданская война в Закавказье, стр. 324.

2 Տե՛ս «Документы внешней политики СССР», т. III, №№ 173, 258.

Թուրքիայի կողմից, որովհետև այն չվավերացվեց ո՛չ Հայաստանի կողմից, ո՛չ էլ ճանաչվեց ՌՍՖՍՌ կառավարության կողմից։

Ալեքսանդրապոլի պայմանագրով Թուրքիային էր անցնում Հայաստանի գրեթե ողջ տերիտորիան, բացի Երևանի ու Սևանա լճի շրջաններից։ Նախիջևանի, Շարուրի, Շախթախթիի շրջանները հայտարարվում էին, որպես «ժամանակավորապես» Թուրքիայի պաշտպանության տակ գտնվող տերիտորիաներ։ Փաստորեն Թուրքիայի խնամակալությունը հաստատվում էր նաև ձևականորեն Հայաստանին թողնված տերիտորիայի նկատմամբ։

Այդ բանը հաստատելու համար բավական է մեջ բերել պայմանագրի առանձին հոդվածները[1]։ Այսպես, Ալեքսանդրապոլի պայմանագրի 4-րդ հոդվածի համաձայն, Հայաստանը պարտավորվում էր վերացնել պարտադիր զինվորական ծառայությունը երկրում, իսկ նրա կանոնավոր զորամասերի ընդհանուր թիվը չպետք է գերազանցեր 1500 զինվորից՝ ութ հրանոթով և 20 գնդացրով։ 5-րդ հոդվածով, վերը նշված պայմանների կատարման վերահսկողությունը դրվում էր Թուրքիայի հատուկ քաղաքական ներկայացուցչի, կամ Երևանում թուրքական հյուպատոսի վրա։ Պայմանագրի 12-րդ հոդվածը Հայաստանի բոլոր երկաթուղիները և հաղորդակցության այլ ճանապարհները դնում էր թուրքական իշխանությունների վերահսկողության տակ։ 13-րդ հոդվածով Թուրքիան իրավունք էր ստանում իր զորքերը մտցնել և ռազմական բնույթի միջոցառումներ ձեռնարկել Հայաստանի տերիտորիայում։ Այսպիսով, Հայաստանի ինքնուրույնությունից մնում էր միայն նրա ստվերը։ Հայաստանը վեր էր ածվում սովորական մի թուրքական նահանգի։

Անկարայի կառավարությունը ամեն կերպ ձգտում էր Ալեքսանդրապոլի թալանչիական պայմանագիրը ուժի մեջ թողնել նաև Հայաստանում սովետական կարգեր հաստատելուց հետո։ Այս միտքը հաստատելու համար բազմաթիվ փաստերից բերենք միայն մեկը։ Անկարայի կառավարության արտաքին գործերի մինիստր Բեքիր Սամի-բեյը Սովետական Հայաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Ա. Բեկզադյանին ուղարկած 1921 թվականի փետրվարի 5-ի նոտայում ցինիկորեն գրում էր. «Մենք գտնում ենք, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրն իր մեջ մարմնավորում է ոչ թե բռնություն, այլ արդարություն և որ նրա կիրառումն անհրաժեշտ է Կովկասում կայուն խաղաղություն հաստատելու համար»[1]։

Թուրքական զավթիչները երկար ժամանակ կառչում էին Ալեքսանդրապոլի պայմանագրից, որտեղ չէին պահպանված նույնիսկ ամենատարրական իրավական հիմքերը, և համառորեն հրաժարվում էին Ալեքսանդրապոլի շրջանն ազատել օկուպացիոն զորքերից, որոնք շարունակում էին թալանել ու ամայացնել հայկական գյուղերն ու Ալեքսանդրապոլ քաղաքը։

Ինչպես Սովետական Հայաստանի, այնպես էլ Սովետական Ռուսաստանի կառավարությունները իրենց նոտաներում բազմիցս մատնանշել են Հայաստանի գրավված շրջաններում թուրքական զավթիչների կողմից թույլ տրված անկարգությունների մասին։ Նրանք քեմալականներից պահանջում էին հեռանալ Ալեքսանդրապոլի շրջանից։ Սովետական Հայաստանի կառավարությունը 1920 թվականի դեկտեմբերի 10-ի նոտայում նշում էր, որ «իր տրամադրության տակ են բազմաթիվ տվյալներ, որոնք վկայում են այն մասին, որ չնայած նոր հանգամանքներին, թուրքական հրամանատարության կողմից Հայաստանի գրավված մարզերում ձեռք են առնվում այնպիսի գործողություններ, որոնք չեն կարող բացատրվել այլ կերպ, քան այն բանով, որ Հայաստանի նկատմամբ շարունակվում է թշնամանքի նախկին անհաշտ քաղաքականությունը...»[2]։

ՌՍՖՍՌ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարը Անկարայի կառավարությանը 1920 թվականի դեկտեմբերի 19-ին ուղարկած նոտայում պահանջում էր, որպեսզի «թուրքական բանակը անհապաղ մաքրի Ալեքսանդրապոլի օկրուգը և բոլոր այն կետերը, որոնք ընկած են Կարսի մարզից դեպի հյուսիս և արևելք, որոնց օկուպացիան, սակայն, մեր կարծիքով, չպետք է կանխորոշի թուրք-հայկական վերջնական սահմանը»[3] (ընդգծումը մերն է — Ե. Ս.)։

Սովետական Ռուսաստանի կառավարությունը շարունակում էր քեմալականներից համառորեն պահանջել վերջիններիս կողմից ազատելու Հայաստանի գրաված շրջանները և վերջ դնելու այնտեղ կատարվող թալանին ու անկարգություններին։ Օրջոնիկիձեին ուղարկված ՌՍՖՍՌ արտաքին գործերի ժողկոմատի 1921 թվականի փետրվարի 3-ի հեռագրում ասվում էր, որ պետք է թուրքական կա-

1 Պայմանագրի լրիվ տեքստը տե՛ս проф. Ю. В. Ключников и проф. А. В. Сабанин, Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, ч. III, в. II, М. 1929, стр. 71—73.

1 «Документы внешней политики СССР», т. III, стр. 487.

2 Նույն տեղում, № 217։

3 Նույն տեղում, № 229։

ռավարությանը նախազգուշացնել Հայաստանի գրավված շրջաններում կողոպուտին ու չարագործություններին վերջ դնելու անհրաժեշտության մասին։ «Մենք այդ բանին շատ մեծ նշանակություն ենք տալիս,— ասվում էր հեռագրում։ Կրկնվե՞լ է արդյոք Ալեքսանդրապոլը մաքրելու վերաբերյալ պահանջը» [1]։

Անկարայի կառավարողները ոչ միայն մտադիր չէին իրենց զորքերը դուրս բերել Ալեքսանդրապոլի շրջանից, այլև, օգտվելով վրացական մենշևիկների իշխանության թուլությունից, և նրանց հետ գործարքի մեջ մտնելով, ջանում էին իրենց տերիտորիալ հավակնությունները շարունակել նաև Վրաստանի հաշվին։ Քեմալական կառավարությունը 1921 թվականի հունվարի 17-ին ճանաչեց մենշևիկյան Վրաստանին։ Փետրվարի 5-ին Անկարա մեկնեց Վրաստանի դիվանագիտական միսիան՝ Ս. Մդիվանու գլխավորությամբ։ Մենշևիկները, Անտանտի երկրների թելադրանքով, Թուրքիայի հետ բանակցությունների մեջ մտան՝ Անտանտի հովանավորության ներքո Թուրքիայի, Վրաստանի և Անդրկովկասի բոլոր տապալված հակահեղափոխական կառավարություններից ու Հյուսիսային Կովկասի լեռնականներից հակասովետական բլոկ ստեղծելու նպատակով։

Մենշևիկյան «Գրուզիա» թերթը հիացմունքով նշելով Ս. Մդիվանու միսիայի ուղարկումը Թուրքիա, գրում էր հետևյալը. «Ներկայումս միջազգային պայմանները նպաստավոր են այն բանի համար, որպեսզի Ս. Մդիվանին բարիդրացիական հարաբերություններ հաստատի Թուրքիայի հետ. Անտանտը պատրաստվում էր փոխել Սևրի պայմանագիրը և դա կարագացնի Ռուսաստանի ու Թուրքերի շահերի պատմական հակադրությունը Կովկասում։ Այդ հակադրության հետևանքը կլինի Ադրբեջանի, Դաղստանի ու Հայաստանի վերականգնումը և այդ պետությունների կոնֆեդերացիան՝ Թուրքիայի տիրապետության ներքո» [2]։ Դա նշանակում էր, որ Կովկասի հակահեղափոխական կուսակցությունները Թուրքական սվինների օգնությամբ ձգտում էին ոչնչացնել սովետական իշխանությունը Ադրբեջանում, Հյուսիսային Կովկասում և Հայաստանում՝ Անդրկովկասի տերիտորիայի մի մասը Թուրք զավթիչներին զիջելու գնով իշխանությունն իրենց ձեռքում պահելու համար։

1921 թվականի փետրվարին Լոռում բռնկված ապստամբությունը ծավալվեց նաև Վրաստանի մի շարք շրջաններում։ Մենշևիկյան զորամասերը անցնում էին ապստամբների կողմը։ Մենշևիկյան սնանկացած կառավարությունը հույս ուներ Թուրքական զավթիչների և Հայաստանում ավանտյուրա բարձրացրած դաշնակցական հրոսակների օգնությամբ խեղդել հեղափոխությունը Վրաստանում։ Նոյ Ժորդանիան Հայաստանում հակահեղափոխական հեղաշրջման օրերին, երբ 1921 թվականի փետրվարի 18-ին դաշնակները գրավեցին Երևանը, խնդրում էր Վրացյանից «Թիկունքից հարվածել բոլշևիկներին»։ Իսկ Վրացյանը մենշևիկներին տեղեկացնում էր իր սխրագործությունների մասին և նրանցից հանդերձանք ու պարեն խնդրում [1]։

Դաշնակները, նախքան փետրվարյան հեղաշրջումը, կապված էին քեմալականների հետ։ Հայտնի է, որ Երևանում Թուրքական հյուպատոս Բայաեդին-բեյը անմիջական մասնակցություն ուներ հեղաշրջման կազմակերպմանը։ Նրա օգնական Հուսեյն-էֆենդին մասնակցում էր կռվին դաշնակների հետ միասին և Երևանը գրավելուց հետո նրա ասքյարները դաշնակ մաուզերիստների հետ խուզարկում էին տները և ձերբակալում կոմունիստներին։ Բայաեդին-բեյը էջմիածնում կայացած միտինգում, դիմելով դաշնակցական պարագլուխներին, ասել էր. «Մենք պատրաստ ենք բոլոր ուժերով օգնել ձեզ։ Ես այժմ մեկնում եմ Իգդիր, որպեսզի այնտեղից Նախիջևանի վրայով զորամասեր ուղարկեմ բոլշևիկների դեմ ապստամբություն բարձրացնելու համար։ Դուք միայն վերականգնեք Մարգարի կամուրջը, և մենք եղած բոլոր ուժերով կսկսենք օգնել ձեզ» [2]։ Դաշնակցական ավանտյուրայի ժամանակ հանդես գալով Երևանում, նա ասել էր. «Հայե՛ր, դուք միք վախենա, մենք ձեզ օգնության կհասնենք, զենք և ամեն տեսակի ռազմամթերքներ կըտանք»։ Փետրվարի 28-ին, երբ դաշնակցական հրոսակախմբերը գրավեցին Երևանը, թուրքական կառավարության ներկայացուցիչը դաշնակների կողմից կազմակերպված միտինգում բոլշևիկների դեմ հանդես եկավ մի նողկալի ճառով և թուրքական զորքերի կողմից շնորհավորելով դաշնակներին «իսկական մեծ տոնի առթիվ», նշեց. «Նրանք (թուրքական զորքերը— Ե. Ս.) հավաստիացնում և երդվում են, որ անհրաժեշտության պահին նրանք բոլորը Անդրկովկասում կհամախմբվեն։ Շնորհավորում եմ ձեզ նաև այն բանի համար, որ Թիֆլիսն արդեն մեր ձեռքում է գտնվում, իսկ Բաքվում ապստամբություն է... Շատ շուտով մենք Ախալցխայի վրայով մեր

---

1 Տե՛ս С. И. Кузнецова. Крах труцекой интервенции в Закавказье в 1920—1921 гг. «Вопросы истории», № 9, 1951, стр. 151.

2 «Грузия», 29.XII.1920 г.

1 «Борьба за победу Советской власти в Грузии», Документы и материалы (1917—1921), Тбилиси, 1958, № 672

2 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 40, գ. 31, թ. 2։

զորքերը կփոխադրենք Բաքու՝ մեր եղբայրներին ազատագրելու համար...»[1]։

Այս բոլորը վկայում է այն մասին, որ Անկարայի կառավարությունը իր ներկայացուցիչների միջոցով համախմբում էր Անդրկովկասի հակահեղափոխական ուժերին և նրանց օգնությամբ ձգտում ոչնչացնել սովետական իշխանությունը Հայաստանում և Ադրբեջանում, խեղդել հեղափոխական շարժումը Վրաստանում՝ ամբողջ Կովկասը նվաճելու նպատակով։ Անտանտի երկրները, ինչպես վերը նշվեց, ձգտում էին Անկարայի կառավարության զավթողական նպատակներն օգտագործել Սովետական Ռուսաստանի դեմ Կովկասում մեծ ճակատ բացելու համար, սակայն Թուրքիայի, Անտանտի ու անդրկովկասյան հակահեղափոխության հակասովետական պլանները ձախողվեցին կարմիր բանակի դեպի Կովկաս հաջող առաջխաղացումով և Վրանգելի զորքերի ջախջախումով։

Այդ բոլորը զգաստացուցիչ ներգործություն ունեցավ Թուրքական զավթիչների վրա։ Նրանք որոշեցին վերսկսել 1920 թվականի օգոստոսին ընդհատված Մոսկվայի բանակցությունները, որոնց խզման պատճառը Անդրկովկասի նկատմամբ քեմալականների ծրագրած զավթողական պլաններն էին։ Օգտվելով դաշնակների փետրվարյան ավանտյուրայի հետևանքով Երևանում սովետական իշխանության ժամանակավոր անկումից, Անկարայի կառավարությունը տերիտորիալ հարցերում նորից հանդես եկավ Բրեստ-Լիտովսկի ու Ալեքսանդրապոլի պայմանագրերը ուժի մեջ թողնելու պահանջով։ Թուրքական պատվիրակությունը վճռականորեն հրաժարվեց բանակցություններ վարել Սովետական Հայաստանի պատվիրակության հետ, որը ժամանել էր Մոսկվա հաշտության կոնֆերանսին մասնակցելու համար։ Դրա հետևանքով հայկական պատվիրակությունը մասնակցություն չունեցավ կոնֆերանսին։

Սովետական Ռուսաստանի կառավարության վճռական ու հաստատուն դիրքը Անկարայի ներկայացուցիչներին ստիպեց հրաժարվել Բրեստ-Լիտովսկի և Ալեքսանդրապոլի պայմանագրերից ու արդեն 1921 թվականի մարտի 10-ին համաձայնություն կայացվեց Թուրքիայի և անդրկովկասյան սովետական հանրապետությունների միջև՝ սահմանի վերաբերյալ։ Թուրքական պատվիրակությունը պարտավորվում էր իր կառավարությունից պահանջել անհապաղ

1 ՀԱՍՌ ԿՊՊԱ, ֆ. 40, գ. 31, թ. 2—3։

մաքրել այն տերիտորիաները, որոնք ընկնում էին սահմանված գծից այն կողմը[1]։

Սակայն Անկարայի կառավարող շրջանները Թուրքական պատվիրակության կողմից Մոսկվայում ստորագրված պայմանագիրը ի կատար ածելու փոխարեն, իրենց էմիսարների ու գործակալների միջոցով Անդրկովկասի մահմեդական ազգաբնակչության շրջանում հակասովետական ագիտացիա էին տանում՝ ձգտելով նրան ոտքի հանել սովետական իշխանության դեմ Հայաստանում ու Ադրբեջանում։ Նկատվում էր քեմալականների բացորոշ ձգտումը՝ գրավելու Նախիջևանի ամբողջ շրջանը, որ արդեն հաստատվել էր սովետական իշխանություն։ Սովետական Հայաստանի պատվիրակության քարտուղարի զեկուցագրում, որը նա ուղարկել էր Մոսկվայից 1921 թվականի մարտի 7-ին, մատնանշվում էր, որ Նախիջևանում քեմալականները համառ պայքար էին մղում տեղի սովետական մարմինների դեմ։ Նրանք կարմիր բանակի շարքերն էին խցկում ասքյարների վերնազգեստ հագած իրենց սպաներին և զանազան կասկածելի տարրերի, որոնք ձգտում էին զորքերի մեջ անկարգություններ առաջ բերել՝ կարմիր զորամասերը մարտունակությունից զրկելու համար։ Դրա հետ մեկտեղ, քեմալականները ձգտում էին աննկատելի կերպով և անպաշտոն ձևով իրենց զորքերը մտցնել Նախիջևան։ Թուրքերի հիմնական նպատակն էր երկրամասում ստեղծել անարխիա և վարկաբեկել սովետական իշխանությանը տեղի ազգաբնակչության շրջանում։ «Այդ նպատակով,— ասվում էր այնուհետև զեկուցագրում,— սովետական կազմակերպություններում նստած բացահայտ ու գաղտնի գործակալների միջոցով նրանք կամայականորեն բռնագրավումներ ու ձերբակալություններ էին կատարում և այդ բոլորը՝ սովետական իշխանության անունից։ Ամբողջ շրջանում ուժգին, գրեթե բացահայտ հակասովետական ագիտացիա են մղում՝ բնակչությանը տենդորեն նախապատրաստելով ապստամբության»[2]։

Նախիջևանի այն ժամանակվա թուրքական ջոկատի հրամանատար գեներալ Վեյսալ Ունյուվաթը իր «Ութ ամիս բոլշևիկների հետ 1920—1921 թվականների անկախության համար մղած պատերազմի շրջանում» հուշերում, ցանկանալով արդարացնել Թուրքիայի հակասովետական գործողությունները, լկտիաբար խեղա-

1 ЦПА ИМЛ, ф. 85, оп. 16, д. 146, л. 3; д. 165, л. 12, 13; д. 208, л. 1. Տե՛ս С. И. Кузнецова. Установление советско-турецких отношений, М., 1961, стр. 47.

2 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 40, գ. 31, թ. 6։

թյուրելով պատմական իրողությունը, նշում է, որ իբր բոլշևիկները հարստահարում էին նախիջևանցիներին և իր հրամանատարության տակ գտնվող ջոկատը կոչված էր նրանց պաշտպանելու բոլշևիկների բռնություններից [1]։

Նույնանման քայքայիչ հակասովետական աշխատանք էին տանում քեմալականները նաև Անդրկովկասի մյուս շրջաններում։ Վրաստանում սովետական իշխանության հաղթանակից հետո (1921 թ. փետրվարի 25-ին), երբ կարմիր բանակի զորամասերի ու ապրստամբած ժողովրդի կողմից ջախջախված մենշևիկյան զորքերը սկսեցին նահանջել դեպի Բաթում, թուրքական զորքերը, որոնք փետրվարի 23-ին արդեն գրավել էին Արդահանն ու Արդվինը, շտապում էին գրավելու նաև Ախալքալաքը, Ախալցխան ու Բաթումը։

Այդ բոլորը արվում էր մենշևիկյան կառավարության համաձայնությամբ, որը, թաքնվելով Բաթումում, ձգտում էր հասնել այն բանին, որպեսզի Թուրքիան բախվի Սովետական Ռուսաստանի հետ։ Այդ ձևով մենշևիկները հույս ունեին երկարաձգել իրենց տիրապետությունը Վրաստանում։

Մարտի 11-ին թուրքական զորքերը սկսեցին օկուպացնել Բաթումը, Օզուրգեթիի ու Ախալցխայի գավառները։

Թուրքերի այդ ագրեսիվ գործողություններն Անդրկովկասում ուղեկցվում էին հակասովետական թունոտ ագիտացիայով։ Այսպես, «Իրավունքների պաշտպանության» կոմիտեի Տրապիզոնի վիլայեթային օրգանը հանդիսացող «Իստիկբալ» թերթը, որը Անկարայի կառավարության խոսափողն էր, պարբերաբար զետեղում էր հոդվածներ՝սովետական քաղաքականության դեմ Անդրկովկասում և, հատկապես, Վրաստանում ու Ադրբեջանում։ Թերթը տպագրում էր զանազան զրպարտություններ սովետական իշխանության կողմից մահմեդական ազգաբնակչության նկատմամբ իբր գործադրվող բռնությունների ու ռեպրեսիաների, պարենի ու թանկարժեք իրերի բռնագրավման ու Ռուսաստան արտահանելու, մահմեդական կրոնը վարկաբեկելու մասին և այլն։ 1921 թվականի փետրվարին ու մարտին «Իստիկբալ»-ը պահանջում էր Բաթումը միացնել «Մայր հայրենիքին՝ Թուրքիային»։ Թերթի մի շարք առաջնորդողներ վերնագրված էին՝ «Բաթումը մերն է», «Բաթումը զուտ թուրքական քաղաք է», «Թուրքերը պատրաստ են միահամուռ կերպով պայքարել Բաթումի համար՝ ում հետ էլ որ լինի» և այլն [2]։

---

1 Veysel Ünavat, İstiklâl harbinde bolşeviklerle sekiz ay 1920—1921. İstanbul, 1948, s. 73.

2 *Մեջ է բերվում ըստ* Юст К, Анатолийская печать. Тифлис, 1922, стр. 39.

Մոսկվայի կոնֆերանսն ավարտվեց Սովետական Ռուսաստանի ու Թուրքիայի միջև 1921 թվականի մարտի 16-ին բարեկամության ու եղբայրության պայմանագրի ստորագրմամբ։ Մոսկվայի պայմանագրի համաձայն, Ալեքսանդրապոլի գավառը, Ալեքսանդրապոլ քաղաքի հետ միասին, անցնում էր Սովետական Հայաստանին, իսկ Ախալցխան, Ախալքալաքն ու Բաթումը՝ Սովետական Վրաստանին։ Սակայն թուրքական նվաճողները, չբավարարվելով այն բանով, որ Կարսի, Կաղզվանի, Արդահանի, Օլթիի, Արդվինի մարզերը և Սուրմալուի գավառը, որոնք գրավվել էին նրանց կողմից, անցան Թուրքիային (24.997 ք. կմ. տարածությամբ և 572 հազար ազգաբնակչությամբ), ի խախտումն Մոսկվայի պայմանագրի պայմանների, համառորեն չէին ցանկանում ազատել Ալեքսանդրապոլի գավառը և, միաժամանակ, ձգտում էին գրավել Ախալցխայի ու Ախալքալաքի գավառներն ու Բաթումի մարզը։

1921 թվականի ապրիլի 11-ին Բաքվի սովետի նիստում Գ. Կ. Օրջոնիկիձեն, պատասխանելով այն հարցին, թե ինչո՞վ էր բացատրվում Կարսի, Արդահանի ու Արդվինի զիջումը քեմալականներին, պատասխանեց հետևյալը. «...Այստեղ մենք ստիպված էինք հաշվի նստել կատարված փաստի հետ։ Դաշնակներն արդեն համապատասխան պայմանագրեր էին կնքել, թուրքերը գրավել էին իրենց հանձնված մարզերը և Մոսկվայում մեզ հետ վարած բանակցությունների ժամանակ վճռականորեն հրաժարվում էին վերադարձնել այն մեզ։ Այդ բանի համար թուրքերի հետ բախվել մենք չէինք ցանկանում։ Դա ձեռնտու կլիներ միայն Անգլիային ու Ֆրանսիային» [1]։

Մոսկվայի պայմանագրի ստորագրման օրը՝ 1921 թվականի մարտի 16-ին, թուրքական զորքերի հրամանատար Քյազիմ Կարաբեքիր փաշան դիմեց 11-րդ կարմիր բանակի հրամանատար Գեկկերին՝ նրանից պահանջելով մաքրել Ախալքալաքի ու Ախալցխայի գավառները և Բաթումի մարզը, պատճառաբանելով, որ դրանք Վրաստանի մենշևիկյան կառավարությունը Անտանտի համաձայնությամբ հանձնել է Թուրքիային [2]։ Ի պատասխան Կարաբեքիրի այդ լկտի պահանջի, Գեկկերը, հիմնվելով 1921 թվականի մարտի 16-ի սովետա-թուրքական պայմանագրի վրա, 11-րդ բանակի զորամասերին հրամայեց գրավել նշված գավառներն ու Բաթումը։ Բաթումի գրավումը կարմիր բանակի կողմից կանխելու համար

---

1 *Տե՛ս* газ. «Коммунист», Баку, 13 апреля 1921 г., № 84.

2 ЦГАКА, ф. 196, оп. 4, д. 675, л. 363. *Տե՛ս* А. Б. Кадышев, Интервенция и гражданская война в Закавказье, стр. 414.

Թուրքական զորքերը շտապ կարգով փորձեցին գրավել ամբողջ քաղաքը։ Այդ մասին հանգամանորեն խոսվում է Բաթումի նախկին պարետ գեներալ Պուրցելաձեի զեկուցագրում, որտեղ նկարագրվում է, թե ինչպես Քյազրմ Կարաբեքիրի զորքերը, սկսած մարտի 11-ից, շարժվեցին դեպի Բաթում և մարտի 17-ին գրավեցին այն։ Մենշևիկյան Վրաստանում Անկարայի կառավարության դիվանագիտական ներկայացուցիչ Քյազրմ-բեյը, որը մենշևիկյան կառավարության հետ միասին Թիֆլիսից փախել էր Բաթում, նույն օրը Բաթումի մարզը հայտարարեց միացված Թուրքիային, իսկ իրեն՝ քաղաքի գեներալ-նահանգապետ։ Մենշևիկյան իշխանություններին առաջարկվում էր 24 ժամվա ընթացքում թողնել Բաթումի մարզի սահմանները կամ հանձնել զենքը [1]։

Այդ բանը, սակայն, Քյազրմ-բեյին չխանգարեց իր առաջին իսկ հրամանում, ի լուր ամենքի, հայտարարելու հետևյալը. «Վերջին ժամանակներս, վրացական կառավարության համաձայնությամբ, Բաթումի մարզը, Ախալքալաքի ու Ախալցխայի գավառները գրավվել էին մեր զորքերի կողմից։ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարության որոշման համաձայն, որը հիմնված է տարբեր ժամանակներում կնքված պայմանագրերով հաստատված մեր ազգային իրավունքների վրա, այդ մարզերը այսօրվանից վերադարձվում են մայր հայրենիքին և վարչական տեսակետից ենթարկվում են Թուրքական ազգային կառավարությանը» [2]։ Մենշևիկյան կառավարությանը ոչինչ չէր մնում անելու, քան այն, որ նա մարտի 18-ին, իր հետ վերցնելով Վրաստանի պետական բանկից կողոպտված արժեքները, իտալական նավով Բաթումից փախչելու արտասահման։

Մոսկվայի պայմանագրի պայմանները Թուրքական զորքերի կողմից ուխտադրուժ կերպով խախտելու կապակցությամբ Գ. Կ. Օրջոնիկիձեն 1921 թվականի մարտի 20-ի հեռագրում արևելյան ճակատի հրամանատար Քյազրմ Կարաբեքիրին նախազգուշացնում էր հետևյալը. «Վերջին իրադարձությունները մեծագույն վտանգի են ենթարկում այն համաձայնությունները, որոնց մենք հանգել ենք։ Իրականում ի՞նչ է նշանակում այն համաձայնությունը, եթե նա ամեն քայլափոխում խախտվում է. նման դեպքում, իզուր ենք ժամանակ կորցնում կոնֆերանսների վրա։ Ինչպե՞ս հասկանալ Ձեր պատվիրակության հավաստիացումները Մոսկվայում և Ազգային մեծ ժողովի լիազոր ներկայացուցիչ Ալի Ֆուադի հայտարարություններ մեր դաշինքի սրբազանության մասին, եթե դաշնակցային պայմանագիրը անմիջապես խախտվում է... Ես անհանդուրժելի եմ համարում երկու բնական դաշնակիցների միջև հանդիսավոր կերպով կնքված ձևական պայմանագրի դեմոնստրատիվ խախտումը՝ Ձեր զորքերի մուտքը Ախալքալաք, Ախալցխա ու Բաթում... Ձեր հպատակության տակ գտնվող անձանց կողմից Բրեստի պայմանագիրը վկայակոչելը ոչ միայն հիմնավորված չէ, այլև վիրավորական է մեզ համար» [1]։

Պարզ է, որ միայն զենքի ուժով էր հնարավոր Թուրք զավթիչներին դուրս շպրտել Վրաստանի տերիտորիայից։

Բաթումում գտնվող մենշևիկյան զորքերը՝ մոտ 4000 մարդ, անցան Բաթումի հեղկոմի կողմը և կռվի բռնվեցին Թուրքական զավթիչների հետ։ 11-րդ կարմիր բանակի՝ քաղաքին մոտենալու պահին Թուրքական զորքերն արդեն ջախջախվել էին, իսկ մարտի 21-ին Բաթումը ազատագրվեց Թուրքերից և քաղաքում վերջնականապես հաղթանակեց սովետական իշխանությունը։

Շարունակելով խախտել սովետա-Թուրքական պայմանագրի հոդվածները, քեմալական զորքերը չէին աղատում Ալեքսանդրապոլի գավառը, որը, Մոսկվայի պայմանագրի համաձայն, մնում էր Հայաստանի սահմաններում։ Դաշնակների ավանտյուրան լիկվիդացվել էր և ապրիլի 2-ին Երևանում նորից հաղթանակել էր սովետական իշխանությունը։ Այդ կապակցությամբ Գ. Վ. Չիչերինը Սովետական Ռուսաստանում Թուրքական դեսպան Ալի Ֆուադին ուղարկած 1921 թվականի ապրիլի 6-ի նոտայում պահանջում էր. «Քանի որ Ալեքսանդրապոլի ու Երևանի ամբողջ շրջանը նորից գտնվում է հայկական սովետական կառավարության ձեռքում, հասել է ժամանակը, որ Թուրքական զորքերը ետ քաշվեն Մոսկվայի պայմանագրով որոշված սահմանից այն կողմը, և մենք հաստատ հույս ենք տածում, որ Ձեզնից անհապաղ կերպով կստանանք հաղորդում այն մասին, որ հայկական տերիտորիայի էվակուացիան Թուրքական զորքերի կողմից ավարտված է» [2]։ Սակայն Անկարայի կառավարությունը, ամեն տեսակի դիվանագիտական խարդախություններով շարունակում էր իր զորքերը պահել Ալեքսանդրապոլի գավառում։ Արևելյան ճակատի հրամանատար Քյազրմ Կարաբեքիր-փաշան Սովետական Հայաստանի կառավարությանը հասկացնել էր տալիս, որ Թուրքական զորքերը կմնան Ալեքսանդրապոլում

1 ЦГАОР Груз. ССР, ф. 13с, д. 124, л. 26.

2 Նույն տեղում, թ. 27։

1 Газ. «Правда Грузии», 20 марта 1921 г., Тифлис, орган ЦК КП(б) Грузии.

2 «Документы внешней политики СССР», т. IV, М., 1960, № 34.

33—2423

և, եթե այդ պահանջվի, նրանք պատրաստ են պատերազմել Հայաստանի դեմ։ Այդ կապակցությամբ Չիչերինը ապրիլի 6-ին Կովկասյան ռազմաճակատի ռազմա-ռևոլյուցիոն խորհրդի անդամ Գ. Կ. Օրջոնիկիձեին հեռագրում էր հետևյալը. «Հաղորդում եմ նրան (Մոսկվայում Թուրքական դեսպան Ալի Ֆուադին—Ե. Ս.) Կարաբեքիրի խուլիգանության մասին, մատնանշելով, որ Թուրքիայի ու Սովետական Հայաստանի միջև պատերազմը կդիտվի որպես պատերազմ Թուրքիայի ու Սովետական Ռուսաստանի միջև»[1]։

Թուրք ռազմամոլները, չհրաժարվելով Անդրկովկասի նկատմամբ իրենց զավթողական ծրագրերից, շարունակում էին ամեն կարգի պատրվակներ հորինել՝ Հայաստանի գրավված շրջաններում թուրքական զորքերի գտնվելը արդարացնելու համար։ Թուրքական զավթիչների վարքագիծը մերկացնելով, Չիչերինը Ալի Ֆուադին ուղարկած ապրիլի 8-ի նոտայում նշում էր հետևյալը. «Չեմ կարող Ձեզնից թաքցնել, որ ես խորապես զարմացա Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարության ռազմական մինիստր Քեմալ Ֆեզի-փաշայի հայտարարության հետ ծանոթանալիս... Ռազմական մինիստրը հայտարարում է, մասնավորապես, որ արևելյան ռազմաճակատի թուրքական բանակը, մնալով Կովկասում, պետք է այնտեղ կատարի հավասարակշռության տարրի դեր։ Ինձ համար դժվար է հասկանալ, թե արևելյան ռազմաճակատի թուրքական բանակը ուրիշ ինչ ռազմական ուժի դեմ է նախատեսված հանդես գալու՝ Կովկասում ուժերի հավասարակշռություն պահպանելու համար։ Քանի որ այդ շրջանում մյուս միակ ռազմական ուժը սովետական հանրապետությունների միավորված կարմիր բանակն է, հետևություն է արվում, որ ռազմական մինիստրի կարծիքով, թուրքական բանակը պետք է հանդիսանա մի տարր, որը թշնամի է սովետական ուժերին և նպատակ ունի հակակշիռ ուժ հանդիսանալ նրանց ռազմական հզորությանը... Այդ նույն հայտարարության մեջ ռազմական մինիստրը հայտնում է, որ թուրքական զորքերի կողմից գրավված Հայաստանի տերիտորիան էվակուացիայի կենթարկվի Ալեքսանդրապոլի պայմանագիրը գործողության մեջ դնելուց հետո միայն»։ Նոտայի վերջում Սովետական Ռուսաստանի կառավարությունը վճռականորեն հայտարարում էր, որ «Ալեքսանդրապոլի պայմանագրի կիրառումը ցանկանալը հավասարազոր է Մոսկվայի պայմանագրի վերացմանը»[2]։

Չնայած այս վճռական բողոքներին, Անկարայի կառավարությունը շարունակում էր իր զորքերը պահել Ալեքսանդրապոլի գավառում։ Ապրիլի 8-ին Գ. Վ. Չիչերինը հեռագրում էր Օրջոնիկիձեին, որպեսզի նա Անկարայում ՌՍՖՍՌ ներկայացուցիչ Բ. Մդիվանու միջոցով թուրքական կառավարությունից պահանջի կյանքում կիրառելու Մոսկվայի կոնֆերանսում ընդունված նոր սահմանը և մաքրելու Ալեքսանդրապոլը[1]։ Սակայն թուրքական զորքերը ստիպված եղան տեղի տալ Սովետական Ռուսաստանի կառավարության կողմից ներկայացրած վերջնագրին միայն։ Ապրիլի 13-ին Գեկկեը ՌՍՖՍՌ կառավարության հանձնարարությամբ Քյազրմ Կարաբեքիրին ուղարկեց նոտա հետևյալ բովանդակությամբ։ «Տխուր թյուրիմացություններից խուսափելու համար, որոնք կարող են առաջ գալ մոտ օրերս, և որոնք կարող են շատ ծանր անդրադառնալ մեր բանակների բարեկամության ու դաշինքի վրա, խնդրում ենք Ձեզ անհապաղ կարգադրություն անել Ալեքսանդրապոլի նահանգը մաքրելու և թուրքական զորքերը Մոսկվայի պայմանագրով սահմանված գծից այն կողմ քաշելու։ Այն դեպքում, եթե զորամասերը դուրս բերելու մասին Ձեզնից լուր չստացվի, ես, ի մեծ ցավ, ստիպված կլինեմ հրամայել վերոհիշյալ շրջանը կարմիր զորքեր մտցնելու մասին, ըստ որում իմ վրայից վերցնում եմ ողջ պատասխանատվությունը այն դեպքերի համար, որոնք կարող են հաջորդել դրանից»[2]։

Այդ վերջնագրով Գեկկեը Անկարայի կառավարող շրջաններին հասկացնել էր տալիս, որ Սովետական Ռուսաստանի կառավարությունը ոչ մի բանի առջև կանգ չի առնի, եթե թուրքական զորքերը շարունակեն մնալ Սովետական Հայաստանի տերիտորիայում։ Թուրքական հրամանատարությունը ստիպված էր ապրիլի 22-ին իր զորքերը դուրս բերել Ալեքսանդրապոլից ու գավառից։

Թուրքերը հսկայական նյութական վնաս հասցրին Սովետական Հայաստանին, պայթեցրին Ալեքսանդրապոլի վառոդի պահեստները։ Թշնամական այս գործողությունների կապակցությամբ Սովետական կառավարությունը մայիսի 13-ի և 18-ի հատուկ նոտաներով իր բողոքը հայտնեց Անկարայի կառավարությանը[3]։

Թուրքիայի կառավարող շրջանների թշնամական վերաբերմունքը Անդրկովկասի սովետական հանրապետությունների նկատ-

1 «Документы внешней политики СССР», т. IV, М., 1960, № 35.

2 Նույն տեղում, № 39։

1 «Документы внешней политики СССР», т. IV, М., 1960, № 40.

2 Տե՛ս С. В. Хармандарян. Документы периода гражданской войны в Армении в 1921 г. «Известия» Академии наук Армянской ССР, общественные науки, № 2, за 1957 г., стр. 97—98.

3 Տե՛ս «Документы внешней политики СССР», т. IV, №№ 82 и 88.

մամբ ի հայտ եկավ նաև Թուրքիայի և անդրկովկասյան սովետական հանրապետությունների միջև պայմանագիր կնքելու հարցում։ Մոսկվայի պայմանագրի 15-րդ հոդվածի համաձայն, նախատեսվում էր նույնպիսի պայմանագիր ստորագրել Թուրքիայի և անդրկովկասյան հանրապետությունների միջև։ Սակայն քեմալական կառավարությունը ձգձգում էր այդ հասունացած հարցի լուծումը, պատճառաբանելով, որ անհրաժեշտ է պայմանագրեր կնքել անդրկովկասյան հանրապետություններից յուրաքանչյուրի հետ առանձին։ Դրանով իսկ նա ձգտում էր վերջիններիս պարտադրել իր պայմանները։ Անդրկովկասի սովետական հանրապետությունները Անկարայի կառավարությանը տեղյակ պահեցին, որ Թուրքիայի և անդրկովկասյան երեք հանրապետությունների միջև կնքվելիք պայմանագիրը պետք է մշակվի համատեղ կոնֆերանսում՝ Մոսկվայի պայմանագրի 15-րդ հոդվածի համաձայն։ Անդրկովկասյան հանրապետությունների և հատկապես Հայաստանի նկատմամբ Թուրքիայի թշնամական գործողություններին վերջ դնելու նպատակով ՌՍՖՍՌ կառավարությունը, հիմնվելով Մոսկվայի պայմանագրի վրա, պնդում էր, որ կարճ ժամանակում հաշտության կոնֆերանս հրավիրվի՝ Թուրքիայի և Հայաստանի, Ադրբեջանի ու Վրաստանի միջև հարաբերությունները նորմալացնելու համար։ Մինչդեռ Թուրքիան, օգտվելով պայմանագրի բացակայությունից, և մշտապես խախտելով Մոսկվայի պայմանագրի կետերը, որով փաստորեն նորմալացվել էին Թուրքիայի հարաբերությունները անդրկովկասյան հանրապետությունների հետ, վերջիններիս նկատմամբ թշնամական քաղաքականություն էր վարում և ամեն կերպ ձգձգում հաշտության կոնֆերանսի հրավիրումը։ Վերջապես, 1921 թվականի հուլիսին, երբ հունական զորքերը հարձակման անցան ամբողջ ճակատով և թուրքական բանակը ստիպված էր նահանջել Սակարիա գետից այս կողմը, քեմալականները ահեղ սպառնալիքի առջև գտնվելով, նորից ստիպված էին դիմել Սովետական Ռուսաստանի օգնությանը։ Այժմ քեմալականները իրենք էին խնդրում արագացնել կոնֆերանսի հրավիրումը՝ անդրկովկասյան սովետական հանրապետությունների ու Թուրքիայի միջև պայմանագիր կնքելու համար։ Այսպիսով, Մոսկվայի պայմանագրի ստորագրումից վեց ամիս հետո, 1921 թվականի սեպտեմբերի 26-ին Կարսում բացվեց կոնֆերանս անդրկովկասյան երեք սովետական հանրապետությունների ու Թուրքիայի միջև՝ Սովետական Ռուսաստանի ներկայացուցչի մասնակցությամբ։

Կոնֆերանսի առաջին իսկ նիստում Թուրքական պատվիրակությունը նորից առաջ քաշեց անդրկովկասյան հանրապետությունների ու ՌՍՖՍՌ կառավարության կողմից արդեն մերժված առաջարկը՝ յուրաքանչյուր հանրապետության հետ առանձին պայմանագիր ստորագրելու վերաբերյալ։ Հայաստանի, Ադրբեջանի ու Վրաստանի պատվիրակությունը այս անգամ էլ միահամուռ հակահարված տրվեց Թուրքական ներկայացուցիչներին, որոնք սեպտեմբերի 30-ի նիստում հանդես եկան պրովոկացիոն հարցով՝ «ինչպիսի՞ փոխհարաբերության մեջ են գտնվում Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի սովետական հանրապետությունները»։ Այդ կապակցությամբ Գ. Վ. Չիչերինը Թուրքիայի արտաքին գործերի մինիստր Յուսուֆ Քեմալ-բեյին 1921 թվականի հոկտեմբերի 3-ին ուղարկած նոտայում պաշտոնապես տեղեկացնում էր, որ «Ռուսաստանյան հանրապետության հետ դաշնակից Վրաստանի, Հայաստանի ու Ադրբեջանի սովետական հանրապետությունների կառավարությունները ռուսաստանյան կառավարությանը տեղյակ են պահել այն մասին, որ հիշյալ հանրապետությունները իրար հետ քաղաքական ու տնտեսական սերտ դաշինքի մեջ են գտնվում և նրանց վերաբերող քաղաքական ու տնտեսական բոլոր հարցերը լուծվում են համատեղ»[1]։ Միայն դրանից հետո, 1921 թվականի հոկտեմբերի 13-ին, Կարսում ստորագրվեց պայմանագիր «բարեկամության մասին» Ադրբեջանական ՍՍՌ-ի, Հայկական ՍՍՌ-ի ու Վրացական ՍՍՌ-ի միջև՝ մի կողմից և Թուրքիայի՝ մյուս կողմից։ Կարսի պայմանագրի հիմնական հոդվածները, այդ թվում տերիտորիալ հարցերին վերաբերող հոդվածները, համընկնում են Մոսկվայի պայմանագրի համապատասխան հոդվածների հետ։

Այսպիսով, Սովետական Ռուսաստանի կառավարության հետևողականորեն խաղաղասիրական քաղաքականության շնորհիվ, կնքվեցին Մոսկվայի ու Կարսի պայմանագրերը[2], որոնք վերջ դրեցին քեմալականների զավթողական ձգտումներին Անդրկովկասում։

Այսպես ուրեմն, Անդրկովկասում 1920—1921 թվականներին ձեռնարկած Թուրքական ագրեսիայի հետևանքով, որը երիտթուրքական ղեկավարների ձախողված արշավանքի շարունակությունն էր, Անդրկովկասից խլվեց շուրջ 25 հազար քառ. կմ. տարածությամբ մի տերիտորիա։ Այլ կերպ ասած, այն, ինչ որ չհաջողվեց իրականացնել երիտթուրքական զավթիչներին առաջին համաշխարհային

1 «Документы внешней политики СССР», т. IV, № 248.

2 Կարսի պայմանագիրը, քարտեզն ու հավելվածը, տե՛ս «Документы внешней политики СССР», т. IV, № 264.

պատերազմի տարիներին, մասամբ կիրառվեց կյանքում Թուրքիայի նոր կառավարողների կողմից։

Այդ մասին Ստամբուլի «Բոսֆոր» թերթը բացահայտորեն գրում էր, որ Անդրկովկասի նկատմամբ «Մուստաֆա Քեմալը շարունակում է էնվերի քաղաքականությունը»[1]։

Ադրբեջանում, Հայաստանում ու Վրաստանում սովետական կարգերի հաստատումը հնարավորություն ընձեռեց Սովետական Ռուսաստանի օգնությամբ կանխել թուրքական զավթիչների հետագա տերիտորիալ նվաճումները Անդրկովկասում։

---

1 Տե՛ս «Бюллетень Народного Комиссариата иностранных дел РСФСР», 1921, № 57, стр. 17.

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Ա

Աբդուլ-Համիդ—25-27, 32, 34, 40, 53-55, 57, 58, 62, 63, 66, 67, 72, 73, 87-89, 97, 99, 100, 128, 262, 276, 477
Աբդուլ-Համիդ ալ-Արասի—301
Աբդուլ-Համիդ ալ-Զոհրաբի—301
Աբդուլ Վահաբ ալ-Մրլեն—301
Աբդուլ-Քերիմ-փաշա—216
Աբդուլլա Սահիբ-օղլի—119
Աբդուրահիմ-էֆենդի—114
Ադամով—113, 121, 122, 141, 179, 180, 184, 224
Ազիզբեկով Մեշադի—392, 407, 442, 414
Ալի-օղլի—209
Ալլեն—10, 11, 199
Ալիմով Ա.—53
Ախունդով-Հասան Մոլլա-զադե—110
Ահարոնյան Ավ.—398, 455, 456
Ահմեդ—424
Ահմեդ-էխսան-էֆենդի—113
Ահմեդ Թաբբար—301
Ահմեդ Շերիֆ—61, 62
Ահմեդ-փաշա—58
Ահմեդ Ֆեյզի-փաշա—44
Աղա-խան—209
Աղան Ահմեդ-բեյ—71, 102, 107, 205
Ամիր Լյութֆի—110
Անատոլ Ֆրանս—276
Անդերս Էդգարդ—121-123, 125, 140, 141
Անդրանիկ—346, 456
Անիսիմով—223
Ասադ Քերբալայ—209
Ասալի Շաուքի-բեյ—301
Ասրֆ-բեյ—115
Ավետիսով—399, 409
Արաբ-խոջա—113
Արեշյան—346
Արթմելյանե—362
Արիֆ Բայտրն—196
Արսալ Սադրի Մաքսուդի—30, 291
Արվելյանե Պ.—328
Ափխազավա—341

Բ

Բաբան-զադե Իսմայիլ Հաքքը—82
Բաբայանով Մ.—453
Բագրատունի—414, 416
Բաթալ-փաշա—3
Բալյաններ—298
Բախերխատ Վ. Ռ.—300
Բայաեդին-բեյ—507
Բայազիդով—108
Բայուր Յուսուֆ Հիքմեթ—8, 30, 391, 295, 483, 493
Բարաթով—203, 222
Բարզանի—86
Բեկ—133

Բեկզուլյանց—245
Բեկզադյան Ա.—499, 504
Բեհաեդին Շաքիր—230, 233
Բենկենդորֆ—161
Բեսման-Հոլվեգ—143, 144, 267
Բերար Վիկտոր—276
Բերխման—188, 189, 192
Բերնզդորֆ—268, 398
Բերքուք—3, 8, 343, 428, 431
Բեքիր Սամի-բեյ—258, 485, 486, 404
Բիշերախով—402, 408, 421
Բիսմարկ—129, 356
Բյոռն—277
Բյուիսոն Ֆերդինանդ—276
Բյուլով—12, 142
Բյուլուկ-խան—209
Բոմպար—155
Բրայս—237, 238, 240, 244. 245, 257, 267, 276, 277, 284, 291
Բրյուսով Վ.—274, 275
Բրոնսարտ ֆոն Շելենդորֆ—133, 190, 191
Բուղարացի Գրիգոր—280
Բունին—274
Բուրգինյոն—276

Գ

Գաբաև—194
Գագարին—88
Գազի Մուխթար—75
Գաչինսկի—401, 418
Գառոնի—240, 241
Գասպրինսկի Իսմայիլ-բեյ—71, 108
Գեգեչկորի Ե.—326, 333, 342, 349, 350-353
Գեղևանով—362
Գեկկեր—511, 515
Գեորգաձե—397
Գիրոնս Հերբերտ Ադամս—234, 241, 256, 257, 267
Գիրոնս Հենեն—74
Գիրս—75-78, 115, 155, 158, 159, 165-167, 170
Գլադով—348
Գյուզե—191, 193, 199
Գյունա թայ Շեմսեդդին—30
Գոլոբորոդկո—50
Գոլովին—226
Գոց, ֆոն դեր—128, 129, 136, 317
Գոտիբ—12, 163, 169
Գորդլևսկի—178
Գորկի Մ.—274, 275
Գոցինսկի Նեչմեդին, Իմամ—108, 392
Գրեյ—160, 161, 163
Գուլկևիչ—78, 81
Գուման—268
Գուչկով—410
Գուստավ Էրվե—276
Գուրկո-Կրյաժին Վ. Ա.—157
Գևորգ 5-րդ—77

Դ

Դամադ Ֆերիդ-փաշա—292, 293
Դելկասե—161
Դեմիրջի Մեհմետ-էֆե—321
Դենիկին—395, 442
Դեննեթի Ա.—25
Դենստերվիլ—402, 413, 414, 416
Դերման Իոսիֆ—123
Դինգլեր—122, 123
Դրուժկին Ս.—413
Դևլյաթ-Կիլդեև—108

Ե

Եգարյան Արմենակ—280
Եղյան Ջավեն—251, 252, 256, 258
Եֆրեմով—461

Զ

Զախար-բեկ Աշարսկի—215
Զավրիև—77
Զեյնե—302
Զեքի Վեչեքի Դողան—30
Զիյա Գյոքալպ—72, 102
Զինովև Ռ.—33, 37, 40. 42-47, 51, 52, 57, 58, 73, 92, 93
Զոհրապ Գրիգոր—235, 236
Զևին Յա.—392, 407

Է

Էմին Լութֆի—301
Էմիր Արիֆ—301
Էնգել—333
Էնգելս Ֆ.—6
Էնիս-փաշա—34
Էնվեր-փաշա—9, 67, 96-98, 111, 130, 148, 149, 151, 152, 154-160, 162-164, 167-169, 175-178, 183, 184, 188, 189, 191-195, 197-209, 210, 230, 233, 236, 237, 243, 290, 300, 303, 314, 318-320, 330, 343, 348, 349, 372, 375, 380, 381, 382, 384, 388, 397, 398, 401, 411, 429, 430, 454-456, 491, 492, 518
Էսադ-բեյ (փաշա)—383, 458
Էտյեն Լամի—276
Էրցբերգեր—12, 13, 242, 243, 269

Թ

Թալեաթ-փաշա—9, 89, 96, 98, 148, 149, 151, 163, 164, 166-169, 175, 177, 230-233, 235, 237-240, 243, 258, 259, 270, 272, 289-292, 303, 313, 318-332, 491, 492
Թահիր-բեյ—119, 121, 122
Թահսին-փաշա—53, 54
Թաղիև—107, 394
Թեհլիրյան Սողոմոն—230, 270
Թերեմեզյան Փանոս—280
Թեքին Այփ—102, 175, 176
Թոյնբի—273
Թորոսյան Ա.—264
Թոփչիբաշև Ալի Մուրադ-բեյ—430
Թումանյան Հովհաննես—275
Թումանով—362
Թևֆիկ Բրյիքբոզլու—291, 294

Ժ

Ժամկոչյան—348
Ժյուլ Կամբոն—27
Ժորդանիա Նոյ—341, 342, 350, 375, 379, 444, 474, 490, 507

Ի

Իբն-էլ Ռեստրիդ, Էմիր—303
Իբն-էլ Սունուդ, Էմիր—303
Իբն-Սաուդ—19, 90-92
Իբրահիմով Արդուլ-Ռաշիդ էֆենդի—205
Իբրահիմ-բեյ—122
Իբրահիմ էդհեմ—114
Իբրահիմ էֆենդի Դալի-զադե—114, 115
Իբրահիմ Թաֆ-բեյ—485
Իբրահիմ-փաշա—35
Իգնատև—224
Ինեսկու Վ.—498
Իզեթ-բեյ—430
Իզեթ-փաշա—96, 193, 195
Իզեթ-փաշա Ալի—195, 348
Իզվոլսկի—161, 165
Իսմայիլ Հաքքի—114, 313
Իսմայիլ Ջելալ-բեյ—114
Իսմայիլ Սամ-օղլի Հասան-զադե—110
Իսմեթ-բեյ—490
Իստոմին—191, 192, 194, 196

Լ

Լամսդորֆ—41, 51, 52
Լանսինգ—326
Լարշե—398
Լերեդինսկի—344, 345
Լեգրան Բ. Վ.—496, 497
Լենին Վ. Ի.—49, 52, 53, 63, 95, 144, 185, 317, 322, 337, 338, 393, 400, 403, 405, 474, 484, 485, 496
Լենցովսկի Ջորջ—254
Լեո—375, 449
Լեպսիուս Ի.—139. 140, 230, 235, 237, 243, 245, 253, 265, 266, 269, 270, 282
Լյախով—261
Լիբկնեխտ Կարլ—266
Լիդդել-Հարտ—9, 153, 162
Լիման ֆոն Սանդերս—7, 12, 14, 132-134, 136, 140, 142-147, 164, 167-169, 172, 190, 205, 227, 270, 317, 344, 383, 474
Լիմպուս—165
Լեոնտև—96, 97, 134, 143, 155-157
Լիտտոն—140
Լիրաու Վալտեր—12, 267
Լոյդ Ջորջ—9, 21
Լյուիս—151
Լորան—17
Լոուրենս—305

Լյուդենդորֆ—12, 379-382, 384, 385, 411, 467
Լոսով ֆոն—370, 380, 456, 467
Լևանդովսկի Մ. Կ.—366, 497

Խ

Խալիլ-բեյ—174
Խալիլ-բեյ—236
Խալիլ-բեյ—164, 166, 167, 169, 370, 371, 374, 376, 455
Խալիլ-էֆենդի—114
Խալիլ-փաշա—419
Խան-Խոյսկի—399, 419, 422
Խաս-Մամեդով—358
Խատիսով Ա.—353, 354, 356, 359, 366, 398, 453, 455, 456
Խոխվեխտեր, ֆոն—88

Ծ

Ծերեթելի—362
Ծիթելաձե Սուլեյման—116

Կ

Կադեր, շեյխ—82
Կազաոով—399
Կալտին—196
Կախիանի Ն.—473
Կայզեր Ֆորժ—9, 10, 157
Կանայան Դրո—346
Կարլ Ավգուստ Լեներ—122
Կասյան Սարգիս—336, 367, 493
Կավալևսկի Մ.—275
Կարա-Մուրզա Ս.—275
Կարաբեքիր-փաշա Քյազրմ—8, 131, 148, 150, 161, 163, 176, 177, 210, 347, 348, 364, 365, 398, 450, 456, 457, 482, 490-492, 494, 495, 497, 498, 500, 511-515
Կարա-Քեմալ—313
Կարալ Էնվեր Զիյա—494
Կարախան Լ. Մ.—352, 353, 432, 485
Կերենսկի—222, 345, 410
Կիխգոֆ—251
Կիրով Ս. Մ.—421, 496
Կոկովցև—144, 145
Կոմիտաս—236
Կոստանաշվիլի—499
Կորգանով Գրիգորի—334, 337, 392, 395, 399, 401, 402, 412, 414, 466
Կորսուն—182, 195, 210
Կրասնով—395
Կրես ֆոն Կրեսենշտեյն—472, 473
Կրիմսկի Ա.—275
Կրուգլով Ռ.—40
Կուն Վ.—413
Կուրան Ահմեդ Բեդևի—95, 96, 151, 152

Հ

Հալիդե էդիպ—102, 320
Համազասպ—405
Հայրապետյան—129, 140
Հանի-բեյ—37
Հասան Իբրահիմ—110
Հասան Իզեթ-փաշա—188, 190
Հասան Ֆեհմի—232
Հարբորդ—348
Հաֆիս Հաքքը-բեյ—197
Հիլմի-բեյ—121
Հիլմի-փաշա—131
Հինդենբուրգ—382
Հիշամլ, էմիր—115
Հիքմեթ Նազիմ—322
Հյուսեին—305
Հյուսեին-բեկ—209
Հյուսեին-էֆենդի—507
Հյուսեին Թաքսին—425
Հյուսեին Զահրդ-բեյ—տե՛ս Յալչին
Հյուսեին Ռաուֆ-բեյ—354-356, 359, 361
Հոլշտայն—246
Հոստլեր—151

Ձ

Ձամոև—365

Ղ

Ղարիբջանյան Բ.—328
Ղորղանյան—396, 416

Մ

Մալետ—155
Մակ-Դոնել—413
Մահմեդ Ա ի Մաշաղի թաղի—110
Մահմեդ էմին Ռասուլ-զադե—358, 359
Մահմեդ Խաղ—62
Մահմեդ Ռահիմ-բեյ—115
Մահմեդ Ֆաթիհ—28
Մահմուդ-էֆենդի—114, 424
Մահմուդ-էֆենդի Կիրիթլի-օղլի—211
Մահմուդ-Մուխտար-փաշա—163
Մահմուդ Շևքեթ-փաշա—61, 94, 97, 129-132
Մաղալով—392
Մայքլ Սայքս—304
Մանդելշտամ—72, 74, 78, 152, 238, 240, 254, 278, 291, 295, 307
Մառ Ն.—274, 275
Մարիոտ—10, 162, 352
Մարքս, Կարլ—6, 323
Մաք-Կոլ—26
Մղիվանի Բ.—515
Մղիվանի Ս.—506
Մեզար Արքա ի Մակլյուդ-աղա—118
Մելիքյան Ռոմանոս—243
Մելքոնյան—279
Մեհմեդ էմին—102, 107
Մեհմեդ Թեֆիր—445
Մեհմեդ Հասան-բեյ—396
Մելե—276
Մեշկով Վ.—41
Միդհաթ Շուքրի—183
Միլերտ Ֆրից—123
Միլլեր Ա. Ֆ.—7, 155
Միլյուկով—410
Միկոյան Ա. Ի.—389, 394, 404, 405, 407, 413, 422, 441
Միրզա աղա Բաղուրի—115
Միրզա Հուսեին—209
Միրզա Հուսեին Ռաֆֆի-զադե—110
Մյասնիկյան Ա.—499
Մյուլման—12, 132, 308, 379, 382, 385
Մյուտցնեռ, ֆոն—227
Մրշաևսկի—192, 194, 195
Մոգիլևիչ Ա. Ա.—129
Մոլտկե—167
Մոլլա-զադե—119
Մորգենթաու—268, 272
Մորելի—347
Մորիս Պեռնո—252
Մուրարրաք իբն-Սաբախ—19, 41
Մուխտար-բեյ—97
Մուհանդին—490
Մուհամեդ-ալ-Շանթ—301
Մունիր-փաշա—131
Մուսա-խան—209
Մուստաֆա Վեֆան—261
Մուրադով—10, 11, 140, 184, 199
Մեվլան-զադե Ռիֆաթ—89, 168, 175, 199, 206, 232, 233, 235, 255, 278, 291, 301

Ց

Յազով—79, 137, 165
Յալման Ահմեդ էմին—8, 151, 166, 170, 291, 292, 295
Յալչին, Հյուսեին Զահիդ—289, 290, 313
Յահյա Մուհամմեդ իբն-Համիդ—43, 46
Յահյա Սայիդ—89
Յունալ Թահսին—495
Յուսուֆ Աքչուրա-օղլու—71, 102, 104, 107
Յուսուֆ Զիյա-բեյ—259
Յուսուֆ Իզեդին—319, 320
Յուսուֆ Իզեթ-փաշա—421
Յուսուֆ Քեմալ-բեյ—485, 490, 517

Ն

Նազարբեկով (Նազարբեկյան)—346, 373, 448, 452, 453, 456-458
Նազրմ—232, 233
Նազրմ-փաշա—96, 97
Նազրմ-փաշա—418, 429
Նազիմ-փաշա—33
Նազոն—280
Նաիմ-բեյ—231, 258, 291
Նաչի-բեյ—178, 179
Նաչիր Ազուրի-բեյ—47, 48
Նարիմանով Նարիման—327
Նաուման Ֆրիդրիխ—12, 469
Ներսիսյան Մ. Գ.—250

Նիկոլայի—133
Նիկոլայ II—143, 185
Նիյազի-բեյ—111
Նոտովիչ—158
Նորլեն Ա. բերտ—19
Նուրեդդին—490
Նուրի-բեյ—37
Նուրի-բեյ—492
Նուրի Դերսիմի—261, 262
Նուրիջանյան Ավիս—499
Նուրի-փաշա—385, 388, 397, 411, 418, 419, 428, 462, 465

Շ

Շահրազյան—140
Շահինյան Մարիետա—275
Շամխան Ռիզվանի-բեյ—301
Շահումյան Ստ. Գ.—327, 331, 334-336, 338, 341, 350, 351, 375, 390, 392, 393, 400, 403-406, 408-410, 412, 414, 443, 444
Շամի—107, 212
Շարլ Ֆրանսի—206
Շերիֆ-բեյ Քյոփրյուլյու—199
Շերիֆ Հուսեյն—302
Շեֆիզ-բեյ աղա Մուայեդ—301
Շիլկով—84
Շիրվանզադե Ալ.—275
Շմիտ—57
Շտրեմպել—133
Շուլենբերգ—121, 140, 386
Շլյումբերգ—276
Շուքրի—233
Շուքրի-էֆենդի—211
Շևքեթ-փաշա—348, 408

Չ

Չարքով—103
Չաոկ—28, 29
Չաոուկ Սուու Մահմուդ—171
Չեռնոբուրով—202
Չեռչի—216
Չիչերին Գ. Վ.—432, 485, 486, 488, 490, 500, 502, 513-515, 517
Չիսիմեն Ն.—442
Չխենկելի Ա. Ի.—342, 354, 356, 361, 364-366, 370, 376, 442, 444

Պ

Պատավիչինի Ի.—149, 168, 169
Պավլովիչ Մ.—7, 157
Պենրվեն—276
Պեշկով Ն.—27
Պետրով—404, 410, 412
Պիկո Ժորժ—304
Պոլ Դեշանել—276
Պոկրովսկի Մ. Ն.—154
Պոդոս—280
Պոմյանկովսկի—12, 131, 137, 200, 204, 225, 314
Պորշին—213
Պրժևալսկի—195, 334, 335, 340, 341
Պրոսեսոր—133
Պուատիերար—447
Պուանկարե—9
Պուրցելաձե—512

Ջ

Ջավադ—450
Ջավադ-բեյ—155, 167, 168, 175, 232, 313, 315, 316
Ջավադ Ջամի-բեյ—463
Ջավիդ-բեյ—497
Ջափարիձե Այոշա—392, 407, 412, 414
Ջերեսոյ Ա. ի Ֆուաղ—8, 482, 483, 485-487, 490, 493, 494, 512-514
Ջեմալ—321
Ջեյալ Նուրի—69-71
Ջեմալ-փաշա—38
Ջեյալ-բեյ—258
Ջեմալ-փաշա—9, 82, 98, 130, 131, 152, 155, 165, 168, 169, 175, 183, 221, 237, 243, 266, 289-291, 299-303, 306, 313, 320, 445
Ջիլարեթ-Ա.ի Բեդրխան—71, 72, 84
Ջիվիլեգով Ա. Կ.—275
Ջևահ—104
Ջևեթ—196, 212, 310
Ջևեթ—208
Ջևեթ-փաշա—259, 279, 281-283
Ջևդեթ Քերիմ—491

Ռ

Ռադոսլավով—166
Ռամիշվիլի Ն.—337, 376
Ռասուլ-Զադե—396, 397, 401, 430, 492
Ռաֆայել Ժորժ Լևի—276
Ռենդեզ Շովան—276
Ռեմզի—490
Ռեշադ (սուլթան Մեհմեդ V)—58
Ռեֆիզ Սելիմ—201
Ռեֆիկ-բեյ—141
Ռենենտով—268
Ռիզա-էֆենդի—114, 118
Ռիխտեր—245
Ռիցեր—408
Ռյուշտյու—8, 383, 384, 400, 411, 429, 467
Ռորինզոն Էմիլիա—277
Ռորինզոն Ջոն—277
Ռոլեն-Ժեկմեն—253
Ռոմանովսկի—213
Ռորրախ Պաուել—136-140
Ռուստամբեգով Խաղատ-բեգ—341

Ս

Սաբրի-բեյ—115
Սազոնովսկի—410, 414
Սազոնով—157, 161, 165, 170, 184, 202-204
Սաիդ Հալիմ-փաշա—148, 149, 157, 170, 175, 268
Սալթոնսկի Ուզուն-Հաջի—108
Սահակ—250, 285
Սամի-էֆենդի—118
Սալիդ—84, 85
Սալիդ Խուրդին—82
Սարը-էֆե—321
Սաֆիքյուրդինսկի Ասլան-բեգ—341, 391
Սաֆրասյան Ա. Խ.—16
Սեիդ Թահիր—19
Սելիմ Փուաղ—115, 126
Սելֆի-բեյ—485
Սիամանթո—236
Սիդնեյ Ֆեյ—9, 131, 146
Սիլիկյան (Սիլիկով)—346, 446, 448, 449, 451, 453
Սիլե—276
Սինան—297
Սեկտ, ֆոն—379, 380, 381
Սկրյաբին—35
Սմիթ—326
Սյու խեդրին—85
Սոդենշտեռն—133
Սվերբեև—145
Սուադուն-փաշա—41
Սուրմի Մուստաֆա—61, 322—324
Սուդիրեյ—227
Սու եյման-էֆենդի—171
Սուլեյման-փաշա—43
Սուխոմ ինով—135
Սուշոն—165, 168, 169
Սքիպիո—257

Վ

Վանգենհայմ—80, 129, 131, 140, 143, 148, 149, 164, 165, 267, 268
Վարուժան—236
Վերեր—133
Վեզիրով Մ.—392
Վեհիբ-փաշա—52, 230, 344, 347-351, 362, 364, 365, 383, 421, 450, 451, 454
Վեյսալ Ունյուվաթ—509
Վեսելովսկի Ա.—275
Վեսելովսկի Յու.—274, 275
Վեքիլով—425
Վիլհելմ II—143, 144, 148, 254, 265, 268
Վիլհելմ Վեյկման, ֆոն—123
Վիլսոն—305
Վիշինսկի—330
Վասով—59, 60
Վորոնցով-Դաշկով—111, 202
Վրանգել—508
Վրացյան Սիմոն—446, 452, 453, 507

Տ

Տարլե Ե. Վ.—67, 154, 157, 272
Տիրյան Վահան—399, 400
Տիգ-Ջոնսոն—413
Տոտոմյանց Վ.—55

ՈՒ

Ուիլյամս Ա.—277
Ուսուբեկով—388
Ուրաս էսադ—8, 28-31, 74, 291, 292, 294, 299

Փ

Փանոսյան—280
Փիրուզ Կազեմզադե—11

Ք

Քաչազնունի Ռ.—442, 453
Քելբերաշվիլի Դավիթ—471
Քեմալ-փաշա Մուստաֆա (Աթաթուրք)—71, 480, 483-486, 489-491, 493-495, 502, 518
Քեմալ Ֆեզի-փաշա—514
Քերբալայ Ասքեր—462
Քերիմ-բեյ—259
Քիշմիշև Ս.—24
Քյազրմ-բեյ—501
Քյամիլ-փաշա—26
Քյոփրյուլյու Ֆուադ—30, 71, 102 (դ-թ)
Քութայ Ջեմալ—495

Օ

Օդիշելիձե—333, 341, 344, 347, 348, 351
Օլֆերև—84
Օ'Կոննոր—277
Օհանջանյան Համո—382
Օմար Համդ—301
Օպենհայմ—204
Օուլով—89, 90
Օտյան Երվանդ—236
Օրջոնիկիձե Գ. Կ.—421, 459, 465, 474, 499, 505, 511, 512, 515

Ֆ

Ֆաիզ-էլ-Ղոսեին—236
Ֆալկենհայն—305
Ֆահրեդին—159
Ֆելդման—190
Ֆեհմի խոջա Հասան—232
Ֆերիդ-փաշա—38
Ֆերիկ-փաշա—տե՛ս Վեհիբ-փաշա
Ֆիշեր—294
Ֆիոլետով Վանյա—392, 412, 414
Ֆրանկենբերգ, Ֆոն—133
Ֆրանց Վերֆել—286
Ֆրանց-Ֆերդինանդ—147
Ֆրունզե Միխաիլ Վասիլևիչ—310
Ֆունտիկով Ֆ.—413

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ա

Աբաղնիի հովիտ—279
Աբասթուման—362
Աբասթումանի շրջան—376
Աբխա—44
Աբխազիա—6, 466
Աբու-խունտայի շրջան—87
Ադալիա—305
Ադանա—72, 74, 181, 232, 259, 305
Ադանայի վիլայեթ—74
Ադափազար—240
Ադեն—44, 48
Ադրբեջան—3, 4, 8, 57, 114, 115, 125, 177, 187, 230, 346, 359, 375, 378, 385, 390, 394-399, 401, 406, 409, 410, 417, 421-430, 438, 454, 461, 463-465, 479, 480, 484, 492-494, 497, 506, 508-510
Ադրիանապոլիս—180, 240, 376, 494
Ադրիանապոլսի վիլայեթ—93
Ազով—4
Աթենք—51, 52, 161, 219
Ալաշկերտ—215, 217
Ալաշկերտի հովիտ—215
Ալաբա—215
Ալբանիա—52
Ալբիստան—24
Ալեքսանդրապոլ (Լենինական)—223, 328, 329, 335, 336, 372, 373, 378, 397, 404, 433, 434, 437, 438, 443-445, 447-449, 451, 456, 458, 497, 500, 505, 506, 514
Ալեքսանդրապոլի գավառ—374, 377, 435, 499, 511, 513, 515
Ալեքսանդրապոլի շրջան—445, 498, 499
Ալեքսանդրապոլ-Երևան-Ջուլֆա երկաթուղի—372
Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղի—454
Ալեքսանդրետ—73, 303, 483
Ալժիր—113, 171, 204, 210
Ալյաթ—364, 402, 407
Ախալցխա—5, 376, 334, 346, 510, 511, 513
Ախալքալաք—5, 215, 432, 446, 510, 511, 513
Ախալքալաքի գավառ—376, 434, 435
Ախալքալաքի նահանգ—374
Ախչա-Կումա, կայարան—413
Ակ-Բարա—208
Աղամզալու—456
Աղբուլաղի շրջան—500
Աղդամ—424
Աղդաշ—106
Աղստաֆա—341, 378, 397
ԱՄՆ—9, 10, 151, 254, 255, 268, 272, 306, 326, 327, 343, 380, 481
Այբրն—305, 322
Այբրնի շրջան—321
Այբրնի վիլայեթ—319
Այնթաբ—240, 285, 304

Այվաղիկ—225
Անատոլիա—33, 79, 85, 105, 215, 218, 219, 241, 269, 288, 305, 313, 319, 321, 322, 324, 490, 491, 494
Անաքարալի շրջան—472
Անգլիա—9, 10, 12. 17—20, 26, 43, 47, 49, 66, 79, 80, 98, 104, 130, 145, 146, 151, 153, 157, 160-164, 170-172, 185, 203, 205, 219, 271, 275, 303—306, 326, 337, 343, 381, 410, 413, 414, 481, 483, 493, 511
Անդրկովկաս—3-9, 12-14, 25, 33, 78, 105-113, 115-123, 125, 126, 141, 142, 153, 172, 173, 177-180, 184, 187, 189, 201, 203, 208, 209, 212, 214, 218, 221, 223, 231, 253, 283, 324, 325-330, 332, 333, 335, 336, 339, 342, 343, 345, 349, 351, 352, 354-359, 362-363, 366, 367, 370, 371, 373-376, 378, 379, 381-385, 388-390, 392-395, 398, 399, 419, 431, 436, 441-443, 460, 467, 468, 475, 478-481, 484, 485, 487-489, 491, 493-497, 500-503, 506, 508-510, 515-518
Աննս—43
Անկարա (Անգորա)—180, 221, 235, 240, 250, 482, 485-488, 490-494, 501-506, 508, 510, 512-516
Անտիոք—73, 286
Աջարիա—116, 188, 210, 211, 492, 497
Աջարիա-ծղա ի, գետ—188
Ասի, գյուղ—261
Ասիական Թուրքիա—141
Ասիր—264
Ասիթի մարզ—44
Աստրախան—204, 326, 395, 412, 413
Ավստրիա—161, 176, 210, 382, 410
Ավստրո-Հունգարիա—49, 50, 79, 137, 148-150, 153, 168, 308, 309, 316, 351
Արաբական թերակղզի—18, 42, 90, 264, 305
Արարիա—19, 42, 46, 48, 91, 233
Արախո—472
Արարատ լեռ—100, 123
Արարատյան դաշտ—446
Արդահան—194, 196, 199, 215, 370, 432, 494, 497, 510
Արդահանի մարզ—352, 353, 357, 360, 361, 368, 369, 432, 511
Արդահանի նահանգ—460
Արդահանի շրջան—367, 431
Արդանուշ—188, 196, 214
Արդերիչ—187
Արդեր—261
Արդվին—188, 196, 207, 214, 510
Արդվինի մարզ—358, 511
Արդվինի շրջան—367
Արդվինի օկրուգ—214
Արենիբազար—438
Արեշ—463
Արեշի գավառ—438
Արթիկ—434, 445
Արխանգելսկ—159
Արխվա ի—434
Արճեշ—216, 283
Արփաչայ—373
Արևելյան Անատոլիա—75, 216, 221, 224, 229, 245, 250, 270, 294, 321, 352, 357
Արևելյան Անդրկովկաս—329, 334
Արևելյան Թրակիա—486, 494
Արևելյան Սիրիա—304
Արևմտյան Անատոլիա—255
Արևմտյան Անդրկովկաս—466
Արևմտյան Արաբիա—264
Արևմտյան Թրակիա—156, 182
Արևմտյան Հայաստան—7, 18, 24, 25, 28—30, 33, 55, 76-81, 138, 140-142, 153, 156, 160, 188, 198, 215, 216, 218, 221-223, 231, 236 238-240, 243, 250-253, 255, 262, 265, 268, 277, 284, 289, 295-297, 301, 331, 346, 352, 357, 431, 436, 486
Արևմտյան Սիրիա—304
Աղխուրիի շրջան—376
Աքսու—401
Աքրա—86
Աֆղանստան—105, 113, 175, 176, 371

Բ

Բաթում—108-110, 115, 119, 123, 187, 188, 198, 213, 214, 229, 360, 361, 366, 370-374, 376-380. 382, 389, 390, 398, 401, 404, 429, 432, 446, 450-453, 456-458, 467, 488, 492, 494, 496, 497, 510-513
Բաթում-Թիֆլիս-Դյանչա երկաթուղի—384
Բաթումի մարզ (նահանգ, շրջան)—119, 196, 201, 207, 210, 211, 213, 215, 220, 346, 352, 353, 357-360, 362, 367-369, 371, 460, 486, 511
Բաթարի—311, 407
Բաթքեսիր—494
Բալկաններ—19, 49, 52, 75, 117, 156, 161
Բալկանյան թերակղզի—158
Բաղդադ—19, 40, 41, 82, 87, 89, 90, 181, 200, 222, 236, 241, 394
Բաղդադի երկաթուղի—19, 20, 241, 265, 387
Բաղդադի վիլայեթ—43
Բաղեշ (Բիթլիս)—38, 78, 80, 84, 85, 141, 216, 220, 240, 247, 248, 251, 260, 272, 293
Բաղեշի վիլայեթ—34, 244
Բայազետ—215
Բայազետի գավառ—215
Բայբուրթ—220, 348
Բաշ-Ապարան—373, 397, 445, 448, 449, 451, 453, 454, 458
Բաշգյուղ—434
Բաշկալա—215
Բասրա—19, 48
Բասրայի ծոցածոց—387
Բասրայի վիլայեթ—40, 43
Բասարգեչարի շրջան—377
Բարդուսի շրջան—197, 489
Բաքու—102-111, 113, 218, 230, 337-339, 364, 373, 375, 377, 378, 380, 383-385, 387-399, 401-411, 413-422, 425, 430, 443, 447, 454, 458, 463, 466-468, 492, 496, 508, 511
Բաքվի խանություն—5
Բաքվի մարզ—396
Բաքվի նահանգ—389
Բելայա-Կլյուչ—469, 471
Բելգիա—160
Բելգրադ—51, 52, 160
Բերլին—79, 194, 124, 129, 139, 142-145, 148, 172, 200, 205, 230, 317, 379, 382, 387, 492
Բերոն—226, 274, 300, 307
Բելգրոթ—18, 60, 89, 93, 301
Բզովգա—459
Բիրի-Լյարմ—410, 417
Բիլեչիկ—73
Բինաղատ—415
Բիջար—222
Բոշքի գյուղ—260
Բոսֆոր—4, 60, 132, 142, 144, 152, 218, 219
Բորչալու—469
Բորչալուի գավառ—466, 471
Բրեստ-Լիտովսկ—330, 344, 351, 352, 354, 356, 357, 361, 362, 364, 365, 367, 369, 371, 377-382, 408, 414, 415, 420, 421, 433, 487, 488, 508, 513
Բուսրա (Բուսրա)—240, 321, 494
Բուլգարիա—49, 50, 95, 152, 156, 158, 159, 161, 166, 219, 382, 412, 475
Բուխարա—204
Բուխարեստ—317

Գ

Գալիպոլի թերակղզի—171, 182, 216, 219, 220. 383, 398
Գալիցիա—167
Գավառաս, գյուղ—438
Գաբրա, գյուղ—261
Գեթինգուրան (Սասունում)—32
Գեհենոս—457
Գերմանիա—10, 17, 19, 20, 49, 66, 79, 99. 104. 120, 121, 123, 125, 129, 130-141, 143, 145-157, 160, 161, 163-166, 168, 171, 172, 175, 176, 178. 181, 187, 200, 205, 207, 208, 210, 228, 230, 242, 265-269, 278, 292, 308, 309, 315-317, 319, 325, 342, 351, 352, 370, 378, 379,

382, 384-387, 389, 391, 396, 408, 410, 411, 415, 432, 433, 460, 668, 469, 473, 491
Գյանջա (Ելիզավետպոլ, Կիրովաբաղ)—5, 109, 110, 209, 328, 333, 341, 342, 364, 375, 383, 392, 397-399, 404, 422, 424, 425, 427-429, 447, 458, 463
Գյանջայի գավառ—461, 462
Գյոքչա (Ադրբեջանում)—106, 400-402, 424
Գյումյուշյան—93
Գորի—363
Գորիի գավառ—471, 472
Գորիի շրջան—466
Գրոզնի—329
Գուգարքի շրջան—466
Գուրա—4, 6
Գուցգյոզ—261

Դ

Դաղազյոլ—215
Դալլար—341
Դալովեր—119
Դաղստան—107, 176, 130, 421, 492, 506
Դաղստանի մարզ—106
Դամասկոս—18, 39, 88, 301, 302
Դարաբազ—459
Դարդանել—4, 19, 50, 142, 144, 152, 162, 163, 219, 236
Դենիզլիի շրջան—321
Դերբենտ—106, 364, 421
Դերբենտի խանություն—5
Դերսիմ—261, 262
Դրդայա, գյուղ—415
Դիարբեքիր—27, 78, 80, 84, 85, 141, 225, 234, 235, 246, 247, 249, 258, 262, 304, 345
Դիարբեքիրի վիլայեթ—34, 84, 307
Դիլիջան—378, 397, 445, 447-449, 452
Դիլման—202
Դյուզքանդ—448
Դնեպր—4
Դոդեկանեզ—117
Դոլլարի շրջան—461
Դոն—105, 326
Դորթ-Յոլ—268
Դուշեթ—363, 366
Դուշեթի գավառ—472, 473

Ե

Եգիպտոս—46, 48, 105, 107, 113, 153, 168, 169, 171, 175, 177, 179, 204, 255, 305, 387
Եկատերինոդար—329
Եմեն—40, 41, 43-48, 89, 181
Ենի-Քյոյ—196
Ենիկալե—4
Եվլախ, կայարան—428
Երզնկա (Երզինջան)—140, 180, 220, 221, 234, 241, 244, 246, 261, 288, 330, 331, 344-348, 351, 359
Երկաթ Փըշփուշ, լեռ (Սասունում)—32
Երուսաղեմ—47, 259
Եփրատ—242, 246, 251
Երևան—109, 114, 187, 208, 209, 215, 373, 382, 386, 390, 397, 445-449, 452-454, 456, 459, 507, 513
Երևանի գավառ—374, 377
Երևանի խանություն—5
Երևանի նահանգ—371, 377, 492
Երևանի շրջան—504

Զ

Զաբ, գետ—86
Զանգեզուր—430
Զաքաթալա—462, 463
Զեյթուն—24, 73, 250, 267, 285, 346
Զերդո, գյուղ—261
Զեքարի շրջան—376
Զմյուռնիա (Իզմիր)—60, 180, 228, 250, 297, 305, 311, 320
Զոնգուլդակ—311
Զուգդիդի—473
Զուգդիդիի շրջան—472

Է

Էգեյան ծով—60
Էգեյան կղզիներ—156
Էլ-Խասայի շրջան—90
Էլ-Կատրի—40
Էնզելի—187, 337, 413, 414, 416
Էնոս-Միդիա—161
Էպիրոս—161
Էջմիածին—372, 458, 507
Էջմիածնի գավառ—374, 377
Էջմիածնի կայարան—457
Էջմիածնի շրջան—452
Էրեգլի—494
Էրթիսի, գյուղ—471
Էրմենիքենդ—418

Թ

Թաիզ—44
Թաիզի սանջակ—43, 45
Թաիշի խանություն—5
Թավրիզ—140, 176, 202, 388, 492
Թելավի գավառ—472
Թեհրան—187
Թեմիր-խան-Շուրա—392, 421
Թեոդոսիա—129
Թերեք—326, 341, 421, 492
Թիանեթի գավառ—473
Թիֆլիս—106, 109, 110, 114, 115, 119, 121-123, 140, 187, 195, 209, 213, 215, 271, 326, 328, 329, 335, 342, 349, 350, 361-363, 365, 372, 374, 378-390, 432, 434, 445, 447, 452, 453, 467-469, 472, 473, 490, 501, 503, 507, 512
Թիֆլիսի նահանգ—362, 363, 371
Թիֆլիսի շրջան—489
Թոմառտաշ—434
Թորթում—247, 360
Թորթում լիճ—217
Թոուզի շրջան—461, 489
Թրակիա—250
Թունիս—171, 204, 210
Թուրան—168, 175-177
Թուրքեստան—230, 324

Ժ

Ժիռոնդ կղզի—412
Ժնև—47

Ի

Իգդիր—283, 346, 507
Իզմիր—46
Իզմիր-Բանդրմա երկաթգիծ—321
Իզմիրի շրջան—321
Լիբիա—206
Իլխիարի—434
Իմանշաու—436
Իմերեթիա—4
Իմերխևի—213, 214
Ինոնյու—491
Իսպահան—202, 203
Իսպանիա—306
Իվանովկա—424
Իտալիա—12, 20, 79, 89, 99, 240, 305
Իրան (Պարսկաստան)—3, 105, 168, 169, 176, 180, 184, 187, 201-203, 229, 279, 343, 372, 373, 398, 420
Իրանական Ադրբեջան—187, 200, 202, 203, 279, 283, 284, 371
Իրաք—40, 302, 305, 306, 344

Լ

Լազիստան—486
Լահյա նավահանգիստ—45
Լեմնոս կղզի—158, 160
Լենքորան—364, 391, 392
Լենքորանի գավառ—395
Լեչխումի գավառ—472
Լեչխումի շրջան—473
Լեռնային Սասուն—32, 33
Լիբանան—18, 19, 39, 47, 88, 300-302, 304, 305
Լոնդոն—161, 271, 304
Լոռվա շրջան—373, 459
Լոռի-Փամբակ—5
Լոռի-Փամբակի գավառ—434, 435, 449, 450

Խ

Խայվաթ, գյուղ—438
Խայլե—40
Խաչմազ—341
Խարբերդ—78, 80, 141, 240, 242, 246, 251
Խարբերդի վիլայեթ—34
Խաքյարի մարզ—304
Խիվա—204

Խնուս—346
Խոդեյդա նավահանգիստ—45
Խոդաչ-չայ—243
Խրարք, գյուղ—261
Խուրդաչա—392

Կ

Կազան—204
Կազրեկ, գյուղ—466
Կահիրե—46, 90, 301
Կաղրզվան—187
Կաղրզվանի մարզ—361, 511
Կաղրզվանի նահանգ—358
Կաղրզվանի շրջան—433
Կասպից ծով—324, 355, 387, 403, 404, 415
Կաստամոնուի վիլայեթ—34, 35
Կարակուրգան—197
Կարա-Մյուրսելի շրջան—321
Կարին (Էրզրում)—27, 33, 35, 37, 78, 80, 109, 113, 115, 117, 119, 121, 122, 125, 140, 141, 179, 180, 187, 189, 197, 216, 219, 222, 224, 225, 234, 240, 244, 245, 247, 257, 272, 279, 294, 297, 310, 218, 324, 333, 347, 348, 359, 398, 489, 493, 498, 499
Կարինի բերդ—34, 180, 217
Կարինի վիլայեթ—34, 244, 246, 247
Կարմարյան, գյուղ—400, 401
Կարմիր ծով—303
Կարս—114, 115, 119, 121, 122, 141, 188, 190, 194, 198, 199, 201, 214, 216, 217, 283, 335, 352, 353, 360, 361, 364-366, 370, 373, 398, 432, 438, 449, 451, 494, 497, 498, 505, 516, 517
Կարսի բերթ—372
Կարսի մարզ—119, 194, 208, 210, 215, 253, 357, 360, 361, 368, 369, 371, 432, 460
Կարսի նահանգ—207, 358
Կարսի շրջան—367, 433, 498, 505
Կարս-Մարիղամիշ երկաթգիծ—192
Կենտրոնական Անատոլիա—311
Կենտրոնական Ասիա—231
Կեսարիա—240, 250, 251
Կերմակ, գյուղ—215
Կերչ—4
Կրզրում-Միաբաթ—222
Կիլիսլո, գյուղ—472
Կիլիկիա—24, 72, 74, 231, 238, 240, 241, 243, 245, 250, 251, 255, 289, 296, 301, 305
Կիրենաիկա—89, 95, 177
Կոզի—469
Կոնյա—235, 250, 305
Կոսուարի շրջան—470
Կովկաս—3, 4, 6, 33, 99, 109, 110, 112, 113, 116-118, 120, 121-126, 143, 156, 160, 168, 169, 172, 175-178, 184, 185, 187, 190, 191, 200, 204, 206-208, 110-113, 220, 229, 231, 274, 295. 327, 328, 332, 333, 338, 339, 340, 346, 351, 355, 356, 371, 376, 377, 380-387, 395, 397, 402, 409, 422, 428, 429, 441-443, 454, 459, 465, 475, 478, 479, 483, 489, 492, 493, 495, 497, 503, 508, 514
Կովկասյան լեռնաշղթա—105, 178, 184, 207, 211
Կրասնովոդսկ—413
Կրետե, կղզի—117
Կուբան—326, 341
Կուբան, գետ—4
Կում—203
Կունֆուդա—44-45
Կուվեյտ—19, 40, 41, 48
Կուտ-էլ-Ամարա—203, 222
Կևդեզման, գյուղ—215

Հ

Հալեպ—18, 73, 180, 231, 244, 253, 259, 263, 267, 289
Հալեպի վիլայեթ—74, 307
Հաղպատ—329
Համադան—222, 340
Համամլու—457, 459
Հայաստան (Արևելյան)—3-5, 8, 25, 57, 76, 125, 140, 274, 328, 332, 367, 372, 373, 374, 375, 377, 382, 391, 397, 436, 443, 445, 451, 453-456, 458, 461, 462, 479, 484, 490, 492-494, 496-498, 500-504, 506, 507-509
Հայոց գյուղ—261
Հաջիկարուլ—364, 392, 399, 407
Հարավային Ամերիկա—255
Հարավային Դաղստան—421
Հարավային Իրան—371
Հարավային Միջագետք—304
Հարավային Քրդստան—262
Հարավային Օսեթիա—466
Հեջազ—40, 44-46, 89, 181, 264, 303, 305, 306
Հեռավոր Արևելք—343
Հյուսիսային Աֆրիկա—105, 175, 179, 205
Հյուսիսային Իրան (Պարսկաստան)—254, 382, 385, 402, 406
Հյուսիսային Կովկաս—5, 6, 9, 106-108, 126, 177, 184, 329, 341, 370, 373, 378, 392, 428, 478, 484, 506
Հյուսիսային Հնդկաստան—371
Հնդկաստան—53, 105, 113, 275, 200, 204, 481, 483
Հնդկական օվկիանոս—303
Հոռոմ—434
Հունաստան—34, 49, 95, 156, 161, 165, 166, 186, 227

Ձ

Ձեղամի շրջան—461
Ձրդուր, գյուղ—261
Ձուման—261

Ղ

Ղազախ—346, 397, 427, 428, 447, 449
Ղազախի գավառ—465
Ղազվին—187
Ղամարլու—457, 458
Ղամարուի շրջան—452
Ղարաբաղ—463-465, 492
Ղարաբաղի խանություն—5
Ղարաբուախ—423
Ղարաբիսա—373, 378, 397, 434, 438, 445, 447-451, 453, 454, 456, 459
Ղշլաղ—459
Ղոթուր—216
Ղրիմ—4-6, 106, 108, 177, 204, 295, 388
Ղրիմի խանություն—4
Ղուբա—403
Ղուբայի գավառ—391, 395, 427
Ղփչաղ, գյուղ—434

Ճ

Ճապոնիա—343
Ճավա—204
Ճիաթուրի—329
Ճորոխ—187, 196

Մ

Մազուրդին—438
Մալաթիա—111
Մալգա—193
Մակեդոնիա—46, 49-51, 55, 175, 475
Մակու—187
Մահմեդաբերթ—438
Մահմուդչուղ—437, 445
Մահոմեդլի—415
Մամախաթուն—348
Մամուր-ուլ-Ազիզի վիլայեթ—249
Մանազկերտ—216, 247, 360
Մառնա—167
Մադրաս—404, 427
Մարաղ—492
Մարազա—405
Մարաշ—24, 73
Մարդին—404
Մարզվան—28
Մարմարի ծով—60, 163, 186
Մարոկկո—113, 204, 210
Մեդինա—86
Մեծ Թուրան—179, 204
Մեծ Կաբարդիա—4
Մեծ Սիբիր—204
Մենգրելիա—4, 6
Մերդենեկ—192, 194, 196
Մերիյամ, գյուղ—215
Մերձավոր Արևելք—8, 10, 17, 20, 76, 90, 129, 132, 137, 172, 265, 388, 484, 487

Մերսին—305
Մերսինի ծովածոց—74
Մեքքա—303, 305
Միջագետք—18, 19 ,41, 42, 46, 87, 88, 90, 91, 179, 181, 199, 203, 218, 219, 222, 223, 229, 236, 241, 250, 252, 253, 255, 259, 263, 265, 285, 288, 294, 296, 304, 380-382, 387, 398, 411, 413-415, 475
Միջերկրական ծով—163, 287, 303
Միջին Ասիա—105, 106, 113, 136, 173, 175, 295, 343, 478
Միջին Արևելք—8, 388, 484
Միրաղի, գյուղ—260
Մյուրցշտեդ—50
Մոլլա-Սուլեյման, գյուղ—309
Մոսկվա—196, 212, 274, 275, 363, 393, 403, 404, 485-489, 492, 493, 508, 509, 511-515, 517
Մոսուլ—86, 141, 181, 246, 247, 259
Մոսուլի վիլայեթ—89, 304
Մուդրոս—476
Մուխրանի, գյուղ—470
Մուղան—423
Մուշ—24, 85, 141, 220, 244, 247-249, 284
Մուսա լեռ—285, 287, 288
Մուրադ-սու—216
Մցխեթ—466

Ց

Ցանինայի վիլայեթ—46
Ցասի—4
Ցարիմ, շրջան—43
Ցլղրզ—57

Ն

Նալբանդ, կայարան—498
Նախիջևան—177, 457, 458, 461, 507
Նախիջևանի գավառ—374
Նախիջևանի խանություն—5
Նախիջևանի շրջան—497, 504, 509
Նարգին, կղզի—390
Նարիմանի շրջան—489
Նեղդ—19, 40, 41, 89-91
Ներքին Իմերեթիա—472
Ներքին Միջագետք—304
Նովոսելիմ—360
Նովոսենակի շրջան—472
Նովորոսիյսկ—169, 329
Նոր Բայազետի շրջան—377
Նուխի—106, 346, 463

Շ

Շադաթ—259
Շախթախթ—337, 457
Շախթախթի շրջան—504
Շահ-ալի, երկաթուղային կամուրջ—123, 141
Շամախի—342, 391, 404, 405, 407, 426, 427
Շամախու գավառ—391, 395
Շամխոր—341, 403
Շապին-Կարահիսար—288
Շավշեթ—213-215
Շատախ—215, 293
Շարուրի շրջան—504
Շարուր-Դարալագյազի գավառ—374, 377
Շաքիի խանություն—5
Շեղևան, գյուղ—215
Շիխովո—410
Շիրակ—5, 435
Շիրվան—459
Շիրվանի խանություն—5
Շիրվանչուկ—444, 445
Շուշի—346, 425, 464, 465

Ո

Ոլչի Վարոտա—410, 415

Չ

Չաթալջա—96, 97, 227
Չարսանջաք—24
Չեմբերլիքենդ—417
Չեչենիա—107
Չեռնոգորիա—95
Չրրգանա—298
Չիբուխլու—459
Չիկովա, գյուղ—215
Չինաստան—105, 175
Չուխան, գյուղ—434

Պ

Պադեստին—91, 153, 179, 223, 230, 302, 304, 306, 344, 379, 475
Պանդիս, գյուղ—215
Պասխավսկ—215
Պարսկական Դարարաղ—492
Պետրոգրադ (Պետերբուրգ)—51, 105, 117, 142, 143, 145, 154, 158, 159, 161, 164, 170, 274, 304, 337
Պետրովսկ—364, 392, 409
Պերեվալ, կայարան—413
Պովոլժիե—175, 202, 295, 303, 478
Պորտ-Սաիդ—288

Ջ

Ջալալօղլի (Ստեփանավան)—435, 459
Ջանիկ—283
Ջաջուռի շրջան—500
Ջավանշիրի գավառ—464
Ջեբել-Մուսա—240
Ջեզիրեի շրջան—83
Ջուլֆա—337, 373, 383, 456, 458
Ջուլֆայի շրջան—497
Ջուրջիբ գետ—259

Ռ

Ռաչի գավառ—472
Ռես-ուլ-Աին—259
Ռիազա—40
Ռոդոստո—180
Ռումինիա—152, 156, 166, 186, 313, 412
Ռուսաստան—3-6, 9, 10, 12, 14, 18, 19, 33, 50, 51, 76-79, 81, 82, 89, 95, 96, 104-107, 109, 111, 113, 116, 120, 123, 124-126, 130, 134, 135, 141-143, 145-151, 153-160, 162-166, 169-173, 175, 178-181, 184-187, 199, 203, 205, 207, 208, 211, 213, 219, 220, 222, 224, 226, 227, 229, 230, 237, 262, 271, 273, 275, 284, 291, 304, 305, 322, 483
Ռևազ—215

Ս

Սաադա—45
Սարդարա—215
Սազարա—215
Սալյան—392, 418
Սալյանի գավառ—391, 395
Սալոնիկ—50, 60, 61, 104, 216, 220
Սակարիա, գետ—516
Սաղբրի, կայարան—399
Սամսուն—251, 324
Սամսունի վիլայեթ—34
Սամուրի օկրուգ—106
Սայդոն—39
Սանա—40, 43, 44
Սաչխեր—329
Սաչխերի շրջան—473
Սասուն—284
Սարաևո—147
Սարդարաբադ—373, 397, 445, 447-451, 453, 454, 456-458
Սարիղամիշ—114, 115, 122, 187-189, 190-195, 197-201, 203, 215, 333, 360, 498
Սարմսախլու—449
Սարվանի—470
Սելենդ—261
Սերբիա—95, 149, 186
Սեքերեկ—215
Սեբաստ (Սեբաստիա)—27, 60, 78, 80, 221, 227- 240, 249, 251, 259, 288, 393
Սեբազի վիլայեթ—34
Սիբիր—343
Սիգնախի գավառ—472
Սիիրթ, տե՛ս Սղերդ
Սիրիա—18, 19, 42, 46, 49, 88, 90, 91, 93, 179, 181, 218, 223, 254, 255, 259, 300-302, 304-306, 344, 380, 387, 411, 415, 475
Սիցիլիա—162
Սկութարիի վիլայեթ—46
Սղերդ—84, 247, 248
Սովետական Ադրբեջան—516-518
Սովետական Հայաստան—504, 509, 511, 513—518
Սովետական Ռուսաստան—322-327, 329-335, 337, 340, 341, 343, 351,

352, 354, 357, 358, 363, 367, 368, 370, 376, 386-388, 390, 392, 393, 395, 403-405, 408, 410, 412, 415, 420, 440-442, 460, 461, 467-479, 480-482, 484, 485, 493, 496, 497, 502, 505, 506, 508, 510, 511, 514-516, 518
Սովետական Վրաստան—499, 511, 516-518
Սորբոն—275
Սոուզբուլախ—214
Սոֆիա—52, 166, 167
Սպահան—222
Սվանեթիա—123
Ստամբուլ (Կոստանդնուպոլիս)—10, 27, 29, 33, 37, 40, 42, 51, 53, 54, 57, 60, 62, 72, 78-82, 85, 91, 96, 103, 109, 112, 113, 115, 117, 119, 128, 131, 132, 134, 135, 137, 138, 142—144, 147, 149, 152, 154, 156, 157, 160, 162-166, 168, 170, 172, 178, 180, 181, 189, 202, 204, 206-208, 219, 220, 225, 226, 235, 236, 240, 249-252, 254, 255, 257-259, 265, 266, 268, 272, 290, 297, 298, 311, 315, 317-320, 322, 363, 382, 386, 399, 401, 423, 430, 456, 459, 492, 518
Սուդան—204
Սուեզի ջրանցք—153, 168, 179, 199, 200, 299
Սուխում—363, 473
Սումգայիթ—408
Սուրմալու—372
Սուրմալուի գավառ—374, 377
Սևանա լիճ—304
Սևանա լճի շրջան—123, 504
Սևաստոպոլ—169
Սև ծով—4, 19, 60, 159, 168-170, 185, 187, 216-218, 220, 355, 360, 385, 387
Սև քաղաք (Բաքվի արվարձան)—418

Վ

Վալոնա—161
Վան—24, 25, 34, 38, 80, 84, 85, 105, 180, 216, 238, 240, 247-249, 257, 272, 278-283, 293, 294, 297, 337, 346, 360
Վանա լիճ—216, 217, 243, 279
Վանի վիլայեթ—34, 78, 141, 178, 284
Վարանցովկա—470
Վերին Իմերեթիա—472
Վիեննա—131, 230
Վլադիկավկազ—380, 398
Վոլգա—105, 210
Վրաստան—5, 6, 8, 57, 125, 328, 374-376, 378, 379, 382, 383, 385, 391, 397, 415, 445, 454, 465-471, 473, 479, 480, 484, 490, 491, 498, 506-508, 510, 512

Տ

Տաշքենդ—395
Տեր-Զոր—246, 258, 259, 301
Տզիտզուտ, գյուղ—38
Տիգրիս—24, 249
Տրապիզոն—27, 34, 60, 80, 109, 141, 196, 240, 241, 257, 324, 333, 337, 348, 351, 352, 354, 355, 357-360, 366, 370, 371, 388, 431, 510
Տրապիզոնի վիլայեթ—34, 346
Տրիպոլի—39, 89, 177, 387
Տրիպոլիտանիա—95, 206

Ր

Ռիզե—220

ՈՒ

Ուլուխանլու—458
Ուկրաինա—349, 385, 468
Ուջառը, կայարան—424
Ուր, գյուղ—215
Ուրալ—326
Ուրմիա—201, 202, 214, 337
Ուրմիա լիճ—381, 388
Ուրֆա—225, 236, 240, 289, 304
Ուրֆայի վիլայեթ—307

Փ

Փասին—121
Փարիզ—47, 54, 62, 90, 143, 161, 165, 271, 276, 293
Փխիկուր, գյուղ—214
Փոթի—363, 468
Փոթիի շրջան—472
Փոքր Ասիա—6, 19, 26, 45, 79, 84, 105, 138, 141, 142, 182, 205, 224, 241, 307, 310, 321
Փոքր Կաբարդիա—4

Ք

Քաշեն—203
Քեղի, գյուղ—212
Քեմախ—245
Քեմախ-Բողազ—242
Քենդեք—438
Քերասուն—251
Քերար—403, 404
Քերմանշահ—202, 203, 222
Քյոթեկ—34
Քյոփրյու-քյոյ—188, 189, 217, 360
Քյուլչիսարա—456
Քյուչուկ-Կայնարջա—4
Քյուրդամիր—106, 364, 399, 401-404
Քրդստան—18, 142, 262, 486
Քութայիս—329, 346, 363
Քութայիսի նահանգ—329, 362, 363, 473
Քուռ—400

Օ

Օդեմիշի շրջան—321
Օդեսա—275, 324
Օզուրգեթ—465
Օզուրգեթի գավառ—510
Օլթի—169, 187, 191, 192, 194, 196, 216, 358, 360
Օլթիի մարզ—432, 511
Օլթիի շրջան—360, 488, 489, 503
Օլչակի, գյուղ—215
Օշեմշիրի—472
Օրդուբադ—374, 398, 424
Օրդուբադի շրջան—497
Օքսֆորդ—151

Ֆ

Ֆրանսիա—9, 10, 12, 17, 18, 20, 48, 66, 79, 80, 92, 99, 130, 144, 146, 149, 153, 157, 160-162, 164, 170, 172, 185, 205, 219, 220, 271, 275, 276, 303-306, 326, 410, 480, 481, 511

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

Գլուխ առաջին—*Օսմանյան կայսրությունն I համաշխարհային պատերազմի նախօրյակին* 17

Գլուխ երկրորդ—*Թուրքական գործակալությունն Անդրկովկասում պատերազմի նախօրյակին* 101

Գլուխ երրորդ—*Օսմանյան կայսրության մուտքը պատերազմի մեջ* . 128

Գլուխ չորրորդ—*Կովկասյան ճակատը 1914—1917 թվականներին* . 174

Գլուխ հինգերորդ—*Հայերի ֆիզիկական ոչնչացման ծրագրի իրագործումը երիտթուրքերի կողմից 1915—1916 թվականներին* . 229

Գլուխ վեցերորդ—*Օսմանյան կայսրության ներքին դրությունը պատերազմի տարիներին* 297

Գլուխ յոթերորդ—*Օսմանյան կայսրության ագրեսիան Անդրկովկասում 1918 թվականին* 326

Գլուխ ութերորդ—*Անդրկովկասի ժողովուրդների պայքարը երիտթուրքական զավթիչների դեմ* 440

Եզրափակում 477

Անվանացանկ 519

Տեղանունների ցանկ 527

Երվանդ Ղազարի Սարգսյան

ԹՈՒՐՔԻԱՆ ԵՎ ՆՐԱ ՆՎԱՃՈՂԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ (1914—1918)

Խմբագիր՝ Վ. Ա. Հարությունյան
Գեղ. խմբագիր՝ Գ. Խուդիկյան
Տեխ. խմբագիր՝ Ե. Ախիրյան
Վերստ. սրբագրիչ՝ Վ. Վարոսյան

ՎՖ 09126 Պատվեր 2423 № Տիրաժ 15000

Հանձնված է արտադրության 10/VI 1964 թ.։
Ստորագրված է տպագրության 11/XII 1964 թ.։
Թուղթ՝ 60×90¹/₁₆, տպագր. 33,75 մամ., հրատ. 29,8 մամ.։
Գինը՝ 84 կոպ.։

ՀՍՍՌ Մինիստրների սովետի մամուլի պետական
կոմիտեի պոլիգրաֆարդյունաբերության գլխավոր
վարչության № 6 տպարան, Երևան, Թումանյան № 51։